R. GRAFFIN — F. NAU

PATROLOGIA ORIENTALIS

TOMUS VICESIMUS PRIMUS



PARIS
FIRMIN-DIDOT ET C[ie], IMPRIMEURS-ÉDITEURS
LIBRAIRIE DE PARIS, 56, RUE JACOB

1930

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le Dr G. BAYAN

VII

MOIS DE MÉHÉKI

A = Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 177 à fol. 203.
B = Édition de Constantinople, 1834.
L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

Մեհեկի Ա եւ Փետրուարի Է ։ Վկայութիւն հազար եւ երեք վկայիցն որ ի Նիկոմիդիա կատարեցան ։

Յորժամ հրամանաւ Մաքսիմիանոսի ամպարշտի թագաւորին սրբոյն Պետրոսի զԱղեկսանդրու հայրապետին գլուխն հատին, յայնժամ չորք զօրագլուխք հաւատացին ի Քրիստոս, եւ ամենայն ազգականօքն իւրեանց * մարտիրոսացան, եւ ընկալան * A fol. 177 v° b.
պսակս լուսեղէնս ի ձեռանէ Տեառն ։

Ժողովեցան չորք զօրագլխացն ծառայքն ի միասին վառեալք ի սէրն Քրիստոսի, գնացին ի Նիկոմիդիա քաղաքն առ Մաքսիմիանոս թագաւորն, ընտանեօք եւ զաւակօք, անձինք հազար եւ երեք, ընդ այր եւ ընդ կին եւ ընդ տղայ, եւ միաբան աղաղակեցին. Քրիստոնեայք եմք որպէս եւ տեարքն մեր որք ի քէն մեռան եւ ի Քրիստոսէ կենդանացան ։

Զայս լուեալ եպարքոսին տրտմեցաւ եթէ այնչափ անձինք ետուն զինքեանս ի մահ, եւ կոչեաց առաջի իւր եւ բազում խոստմունս արար, եւ ոչ կարաց մեկնել ի

1 վկայիցն] մարտիրոսացն B || 4 զԱղեկսանդրու] Աղեկսանդրի B — հայրապետին] զպատուական *add.* B — չորք] նախապետքն եւ *add.* B || 5 իւրեանց] եւ տամբն ընտանեօք *add.* B || 9 տղայ] զաւակս B.

1er MÉHÉKI, 7 Février.

Martyre des mille trois martyrs qui ont souffert à Nicomédie.

Lorsque sur l'ordre de l'empereur impie Maximien on eut tranché la tête à saint Pierre, patriarche d'Alexandrie, les quatre officiers crurent au Christ, furent * martyrisés avec tous leurs parents, et reçurent des couronnes lumi- * A fol. 177 v° b.
neuses des mains du Seigneur.

Les domestiques des quatre officiers, enflammés de l'amour du Christ, se rassemblèrent et se rendirent à la ville de Nicomédie, auprès de l'empereur Maximien, accompagnés de leurs femmes et de leurs enfants (au nombre de) mille trois personnes, hommes, femmes et enfants. Ils crièrent tous ensemble : « Nous sommes chrétiens, comme nos maîtres qui ont été mis à mort par toi et rendus à la vie (éternelle) par le Christ. »

Entendant cela, le préfet (ἔπαρχος) fut pris de chagrin à la vue de tant de personnes qui se vouaient à la mort; il les fit venir en sa présence et leur fit de nombreuses promesses, mais il ne put les détacher de la foi, de l'amour et

հաւատոց եւ ի սիրոյն յուսոյն Քրիստոսի ։ Հրամայեաց բազում զօրականաց եւ եղեալ սուր ի նոսա կոտորեցին առ հասարակ զամենեսեան, զծերս եւ զերիտասարդս, զկանայս եւ զմանկունս, որք հազար եւ երեք Փետրուարի Է. եւ ուրախութեամբ զընթացս մարտիրոսութեան կատարեցին ի Քրիստոս ։

Յայսմ աւուր երանելին Վէնդէմիանոս, աշակերտ սրբոյն Աւքսէնդի, կեցեալ յարգելական խցի ի լերինս աստուածահաճոյ վարուք, ամս քառասուն եւ երկու, հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, ի քարայրի խցին, ի ծունկսն անկեալ զաչս եւ զձեռսն յերկինս համբարձեալ աւանդեաց զհոգին ։ Եւ բազում նշանք լինին ի նշխարաց նորա ։

* B p. 67 a — [B * Ի սմին աւուր ճգնութիւն սուրբ հօրն Բեսարիոնի, եւ աշակերտի նորա Դուլասայ, եւ սուրբ հօրն Ղուկասու յԵքսինիկոս կղզին ։]

Մեհեկի Բ եւ Փետրուարի Ը ։ Վարք սրբոյն Պարթենիոսի Լամսակայ եպիսկոպոսի ։

* A fol. 178 r° a — * Քրիստոսի քահանայապետն Պարթենիոս էր ի ժամանակս Կոստանդիանոսի

1 յուսոյն *om.* B || 3 Փետրուարի Է] եւ Մեհեկի Ա *add.* B || 5 երանելին Վէնդէմիանոս աշակերտ] յիշատակ երանելոյն Վէնմէնդիանոսի աշակերտի B || 6 լերինս] խստամբեր կենօք եւ *add.* B || 7 հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս *om.* B || 8 համբարձեալ] տարածեալ B — զհոգին] առ Աստուած *add.* B || 9 նորա] ի փառս Քրիստոսի *add.* B.
12 սրբոյն] երանելոյն B || 12 Լամսակայ] Լամփսակայ B || 13 Քրիստոսի] Սուրբ B,

de l'espérance du Christ. Par son ordre, de nombreux soldats les tuèrent tous par le glaive, vieillards et jeunes gens, femmes et enfants, au nombre de mille trois personnes, le 7 février. Avec joie ils acceptèrent la palme du martyre pour le Christ.

En ce jour, le bienheureux Vindemianus, disciple de saint Auxence (*Aukhsenti*), après avoir vécu cloîtré dans une cellule de la montagne d'une façon agréable à Dieu, pendant quarante-deux ans, reposa en paix dans le Christ. Il rendit son âme dans la grotte qui lui servait de cellule, à genoux, les yeux et les mains élevés vers le ciel. Nombre de miracles sont opérés par ses reliques.

* B p. 67 a. — [B * En ce même jour, (commémoration) de l'ascétisme du saint père Bessarion et de son disciple Doulas, ainsi que du saint père Luc de l'île d'Égine [1] (*Eksinikos*).]

2 Méhéki, 8 Février.

Vie de saint Parthénius, évêque de Lampsaque.

* A fol. 178 r° a. — * Le pontife du Christ Parthénius vivait aux jours du grand empereur

1. Eksinikos du texte arménien, provient selon toute probabilité de l'expression ἐξ Αἰγίνης, appliquée par *Syn. Cp.*, éd. Delehaye, col. 449, l. 18, aux parents de Luc.

մեծի Թագաւորին ։ Սա էր որդի Քրիստափորի սարկաւագի Մելիտոյ եպիսկոպոսին, եւ զիր ամենեւին ոչ կամեցաւ ուսանիլ, բայց զամենայն աստուածահաճոյ վարս յանձին իւրում ստացաւ ։

Որսայր ձկունս ի լճէն եւ բաշխէր կարօտելոց ։ Եւ շնորհ առեալ նմա յԱստուծոյ եւ ողջացուցանէր զհիւանդս աղօթիւք եւ զդեւսն հալածէր ։ Եւ եպիսկոպոսն Մելիտոյ ձեռնադրեաց զՊարթենիոս քահանայ ։ Եւ ապա եղեւ քաջուսումն ի գիրս, ուսաւ զամենայն աստուածային պատուիրանս, եւ անհանգիստ պաշտամամբ մեծաւ երկիւղիւ ծառայէր Աստուծոյ ։

Եւ այր մի զորոյ ցուլն եղջերօքն զմի ակն եհան, եւ առեալ ի ձեռն իւր զակն գնաց մեծաւ հառաչմամբ առ սուրբն Պարթենիոս, եւ նորա առեալ զակն եդիր ի տեղի իւր եւ աղօթիւք ողջացոյց ։

Եւ կնոջ մի վէր էր ի ծածուկ տեղւոջ, գնաց առ նա եւ նորա աղօթեալ առ Աստուած ողջացոյց ։

Եւ խիստ շուն մի զերծեալ ի շղթայիցն փախեաւ ի վերայ թիկանց երանելոյն, եւ նորա փչեալ ի դէմս շանն առժամայն անկեալ սատակեցաւ ։

Եւ այլ բազում նշանս արար զոր տեսեալ Կիզիկի եպիսկոպոսապետին ձեռնա-

1 Մելիտոյ եպիսկոպոսին] Մելիտոպոլսի եպիսկոպոսարանին. եւ մինչեւ ծանուկ էր *add.* B || 4 առեալ] առաւ B || 5-16 Եւ եպիսկոպոսն ... Կիզիկի] Սոյն կոչեցեալ ի կարգ եկեղեցականս եղեւ քաջուսումն ի գիր եւ ուսաւ զամենայն աստուածային պատուիրանս, եւ ձեռնադրեցաւ քահանայ ի Փիլիպպուէ եպիսկոպոսէ Մելիտոյ, եւ անհանգիստ պաշտամամբ մեծաւ երկիւղիւ ծառայէր Աստուծոյ ։ Զոր տեսեալ Մաքողիոսի Կիզիկոյ B.

Constantin. Il était le fils de Christophe, diacre de l'évêque de Mélitène. Il n'avait jamais voulu apprendre les lettres, mais il avait acquis en sa personne toutes les qualités d'une vie agréable à Dieu.

Il prenait des poissons dans le lac et les distribuait aux nécessiteux. Il obtint de Dieu la grâce de guérir les malades par ses prières et de chasser les démons. L'évêque de Mélitène ordonna prêtre Parthénius. Dès lors il devint très érudit dans les lettres, apprit tous les commandements divins et servit Dieu sans relâche, officiant avec une grande crainte.

Un homme, à qui son taureau avait enlevé un œil d'un coup de corne, s'était rendu avec de grands sanglots auprès de saint Parthénius, tenant son œil dans la main. (Parthénius) prit l'œil, le remit à sa place et le guérit par ses prières.

Une femme qui avait une blessure dans ses parties intimes, alla le trouver, et fut guérie par les prières qu'il fit à Dieu.

Un mauvais chien, échappé de sa chaîne, sauta sur le dos du bienheureux; celui-ci souffla sur la gueule du chien, qui tomba et périt sur-le-champ.

Il accomplit bien d'autres miracles. Ce que voyant, l'archevêque de

դրեաց զնա եպիսկոպոս Լամսաակայ : Եւ եմուտ առ Կոստանդիոս թագաւորն եւ էառ հրաման եւ գնաց ի Լամսակս եւ աւերեաց զմնացեալ տաճար կռոցն, եւ արար եկեղեցի :

* A fol. 178 r° b. Եւ այր մի Տիւքանոս * անուն խորտակեցաւ ցեզանցն որ զբեռան սայլն տանէին եւ մեռաւ. եւ սուրբն Պարթենիոս աղօթիւք յարոյց զմեռեալն : Եւ սքանչելիքն այն լուր եղեն ընդ ամենայն աշխարհն, որ եւ սուրբն Կոստանդիանոս արքայ լուաւ, եւ մեծապէս փառաւորեաց զսուրբ Պարթենիոս :

Եւ կնոջ մի այսահարի ձեռն եդեալ առողջացոյց : Եւ յարքունի ներկանոցն դեւ բնակեցաւ եւ զներկն ապականէր, եւ զհանդերձ թագաւորին վատագոյն ներկէին, եւ յոյժ տանջէին եւ տուգանէին զներկիչսն : Եւ երթեալ սրբոյն հալածեաց զդեւն ի տեղւոջէ անտի, եւ ներկիչքն մեծաւ գոհութեամբ փառս ետուն Աստուծոյ :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ եպիսկոպոսն Հերակլեայ հիւանդացաւ, եւ էր գանձասէր յոյժ : Գնաց երանելին Պարթենիոս ի տեսութիւն եւ ասէ. Եթէ ոչ բաշխես զգանձս քո աղքատաց՝ ոչ ապրիս : Եւ յորժամ բաշխեաց զամենայն ողջացաւ :

Իպատիանոս սարկաւագն ասէ ցՊարթենիոս. Յոյժ տրտում է անձն իմ զի երաշտ եղեւ եւ արտորայքն իմ չորացան Ասէ սուրբն. Մի՛ տրտմիր, դու հանդերձեալ ես

1 Լամսաակայ] Լամսակայ B || 3 եկեղեցի] Աստուծոյ *add.* B || 4-11 Եւ այր մի... փառս ետուն Աստուծոյ *om.* B.

Cyzique le sacra évêque de Lampsaque (*Lamsaka*). (Parthénius) se rendit auprès de l'empereur Constantin, prit ses instructions et se rendit à Lampsaque; il détruisit le temple des idoles qui y restait encore et en fit une église.

* A fol. 178 r° b. Un homme, du nom de Tykhanos, * avait été broyé par des bœufs attelés à un chariot pesamment chargé et en était mort. Saint Parthénius par ses prières ressuscita ce mort. Ce miracle fut connu dans toutes les régions et parvint à la connaissance du saint empereur Constantin, qui glorifia grandement saint Parthénius.

Une femme possédée du démon fut guérie par l'imposition de ses mains. Un démon vint s'installer dans la teinturerie impériale, détériora les couleurs, et (les ouvriers) teignaient mal les vêtements de l'empereur, ce qui rendait les teinturiers sujets à des mauvais traitements et à des amendes. Le saint s'étant rendu à cet endroit en chassa le démon, et les ouvriers teinturiers rendirent grâces à Dieu avec beaucoup de satisfaction.

A cette époque l'évêque d'Héraclée vint à tomber malade. Il aimait beaucoup thésauriser. Le bienheureux Parthénius alla lui rendre visite et lui dit : « Si tu ne distribues pas ton argent aux pauvres, tu ne guériras pas. » Lorsque (l'évêque) eut tout distribué, il se trouva guéri.

Le diacre Hypatianus dit à Parthénius : « Je suis très triste parce qu'il a fait sec et mes champs sont détruits. » Le saint lui répondit : « Ne sois pas

եպիսկոպոս լինել. եւ զգոյշ լեր որ զաղքատս եւ զօտարս չմոռանաս, այսպէս ասէ Տէր. Արտորայքդ քո արտասցեն հազար մոդ ցորեան: Եւ եղեւ այնպէս:

Եւ այլ բազում սքանչելիս արարեալ սուրբն Պարթենիոս խաղաղութեամբ հանգեաւ ի Քրիստոս Փետրուարի Ը:

Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք եւ քահանայք եւ կրօնաւորք * եւ ժողովուրդք, եւ մեծաւ պատուով եւ սաղմոսիւք եւ օրհնութեամբ թաղեցին յեպիսկոպոսարանին իւրում ի Լամսակս: * A fol. 178 v° a.

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Տրիփենեայ:

Սրբուհին Տրիփենա գնաց ի տաճար կռոցն յաւուրս զոհամատոյց պղծոյ տօնին, եւ ուսուցանէր եւ արգելոյր զդիւապաշտսն ի զոհելոյ կռոցն եւ հաւատալ ի Քրիստոս: Սղոցեցին զնա եւ ոչ վնասեցաւ. ընկեցին ի հուր եւ անձրեւք շիջուցին զհուրն. ապա կապեցին ի վայրենի ցուլս եւ ցերկուս հերձաւ ի Կիզիկոն, ի Կեսարիոյ դատաւորէն: Եւ այնպէս ընկալաւ զպսակն կենաց ի Քրիստոսէ պսակողէն սրբոց:

3 արարեալ] արար B || 4 Փետրուարի Ը] եւ Մեհեկի Բ *add.* B || 7 Լամսակս] Լափսակայ B || 8 վկայութիւն սրբուհւոյն] յիշատակ սրբուհւոյ կուսին Տրիփոնի B || 10-12 եւ ուսուցանէր ... ցուլս] եւ աստուածային նախանձու շարժեալ՝ համարձակ կշտամբեաց զդիւապաշտ մոլորութիւն նոցա, եւ արգելոյր ի զոհելոյ կռոցն, եւ խրատէր զնոսա ճանաչել զԱստուած ճշմարիտ եւ հաւատալ ի Քրիստոս: Կալան զնա եւ տանջեցին յատամնաւոր մեքենայս եւ ի հուր. եւ ապա կապեցին յերկու վայրենի ցուլ B || 13 Եւ այնպէս ... սրբոց] Եւ այնպէս կատարեցաւ աղախինն Քրիստոսի B.

triste, car tu es appelé à devenir évêque; seulement prends garde de ne pas oublier les pauvres et les étrangers. Voici ce que dit le Seigneur : Tes champs produiront mille boisseaux (*mod*) de blé. » Et il en fut ainsi.

Saint Parthénius, après avoir accompli un grand nombre d'autres miracles, reposa en paix dans le Christ, le 8 février.

Des évêques, des prêtres, des religieux* et des fidèles s'assemblèrent en grand nombre et l'inhumèrent avec de grands honneurs, des psalmodies et des bénédictions dans son évêché de Lampsaque. * A fol. 178 v° a.

En ce jour, martyre de sainte Tryphaine.

Sainte Tryphaine (*Triphena*), s'étant rendue au temple des idoles dans les jours d'une fête aux immondes sacrifices, enseignait, défendait aux adorateurs des démons d'immoler aux idoles, et (les exhortait) à croire au Christ. On lui scia le corps et elle n'en fut pas blessée. On la jeta dans une fournaise, mais les pluies éteignirent le feu; ensuite on l'attacha par ordre du juge de Césarée à des taureaux sauvages qui la déchirèrent en deux à Cyzique. C'est ainsi qu'elle reçut la couronne de vie du Christ qui couronne les saints.

* B p. 67 a. [B * Տօն Զաքարիայի սուրբ մարգարէին ։

Սուրբ մարգարէն Զաքարիա էր մի յերկոտասան մարգարէիցն. եւ էր յազգէն Իսրայէլի, ի ցեղէն Ղեւեայ, որդի Բարաքեայ, եւ ի Գաղաադ ծնաւ յաշխարհն Հրէաստանի ։ Եւ եկն յերկիրն Քաղդէացւոց, եւ նշանս բազումս ի յուցումն ետ, եւ նախատեսութեամբ յոլով մարգարէացաւ անդ ։

Սա ասաց ընդ Յովսեդեկ թէ. Ծնանիցիս դու որդի եւ քահանայագործէ յԵրուսաղէմ յօրինակ ճշմարիտ քահանայապետին ։ Նոյնպէս եւ զՍաղաթիէլ օրհնեաց եւ ասաց թէ. Լինիցի է քեզ որդի եւ կոչեսցի անուն նորա Զօրաբաբէլ ։ Եւ Կիւրոսի թագաւորի ետ մարգարէութեամբ նշան թէ յաղթելոց է թշնամեաց իւրոց եւ Կրեսիոս Լիւդացւոց թագաւորին. եւ վասն պատարագին զոր մատուցանելոց էր յԵրուսաղէմ ընծայ Աստուծոյ, ասաց նմա յառաջ ։

Եւ վասն կատարման հեթանոսաց եւ վասն մարգարէիցն եւ քահանայիցն Հրէաստանի ետ նշան թէ վախճանելոց են, եւ տաճարն քակի եւ շաբաթքն ։ Եւ վասն գալստեանն Քրիստոսի եւ մխիթարութեանն եւ բառնալոյն կռոցն, եւ երկրորդ գալստեանն եւ թագաւորելոյն յաւիտեան եւ սկզբան հեթանոսաց ։ Զայսոսիկ մարգարէացաւ եւ այլ բազում. եւ ի ծերութիւն խորին հասեալ՝ հանգեաւ եւ թաղեցաւ մերձ ի գերեզման սրբոյ մարգարէին Անգէոսի ։]

* B p. 67 a. [B* Fête de Zacharie le saint prophète.

Le saint prophète Zacharie était l'un des douze prophètes. Il était de la nation d'Israël, de la tribu de Lévi, fils de Barachie. Il naquit en Galaad[1] dans le pays de Judée. Il vint au pays des Chaldéens, y opéra de nombreux miracles et y prophétisa bien des choses par sa prévoyance.

C'est lui qui dit à Josédec : « Tu enfanteras un fils, qui officiera comme prêtre à Jérusalem, comme image du vrai pontife. » De même c'est lui qui bénit Salathiel et lui dit : « Tu auras un fils et son nom sera Zorobabel. » Il donna un signe prophétique au roi Cyrus, (lui annonçant) qu'il vaincrait ses ennemis et Crésus, roi de Lydie. Il lui prédit également l'offrande qu'il offrirait à Dieu lors de son entrée à Jérusalem.

A propos de la fin des gentils, des prophètes et des prêtres de Judée, il donna un signe (annonçant) qu'ils auraient une fin, ainsi que le temple et les sabbats. Il (prédit) également la venue du Christ et la consolation (qu'Il apporterait), la destruction des idoles, la deuxième venue, le règne éternel et le commencement des gentils. Il prophétisa tout cela et beaucoup d'autres choses; puis, parvenu à une vieillesse avancée, il décéda et fut enterré près du tombeau du saint prophète Aggée.]

1. Cf. *Acta SS. Octob.*, XII, p. 451 E.

Մեհեկի Գ եւ Փետրուարի Թ ։ Յիշատակ սրբոյ վկային Նիկեփորոյ ։

Ի ժամանակս Վաղերիանոսի եւ Գաղերիոսի անօրէն արքայից, էր Նիկեփորոս այր աշխարհական ։ Եւ եղեւ ի սատանայէ թշնամութիւն Նիկեփորոյ ընդ սիրելւոյ իւրոյ քահանայի որոյ անուն էր Սապրիկոս, եւ առաքէր Նիկեփորոս զսիրելիս եւ աղաչէր զՍապրիկոս զի հաշտեսցի ընդ նմա եւ ոչ կամեցաւ. եւ ինքն երթեալ խնդրէր թողութիւն եւ հաշտութիւն, եւ նա ամենեւին ոչ կամեցաւ ։

Եւ ի ժամանակս հալածանաց քրիստոնէից կալան զքահանայն Սապրիկոս եւ որպէս քրիստոնեայ կապեցին եւ տարան առաջի դատաւորին. եւ բազում * խոստմամբք * A fol. 178 v° b.
եւ քաղցրութեամբ խրատ տայր եւ ողոքանօք ջանայր զի զոհեսցէ կռոցն, եւ ոչ կարաց տալ նմա ուրանալ զՔրիստոս ։ Հրամայեաց եւ բազում չարչարանօք տանջեցին զՍապրիկոս, եւ յորժամ ոչ հաւանեցաւ ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն, հրամայեաց դատաւորն հատանել զգլուխն ։

Եւ յորժամ տանէին զՍապրիկոս ի գլխատել, ընթացաւ Նիկեփորոս անկաւ յոտս նորա եւ ողբալով խնդրէր զթողութիւն. եւ նա ոչ կամեցաւ թողութիւն շնորհել կամ

1 Յիշատակ] Վկայութիւն B || 2 Գաղերիոսի] Գալիոսի B || 3 աշխարհական] եւ հաւատովք քրիստոնեայ *add.* B — ի սատանայէ] ի թերայրութենէ սատանայի B || 9-10 ջանայր... զՔրիստոս] խօսէր զի ուրասցի զՔրիստոս եւ զոհեսցէ, եւ ոչ կարաց հաւանեցուցանել B || 14 զթողութիւն] զհաշտութիւն B — կամ սէր առնել ընդ նմա] եւ հաշտիլ B.

3 MÉHÉKI, 9 Février.

Commémoration du saint martyr Nicéphore.

Nicéphore vivait aux jours des empereurs impies Valérius et Galérius. Il était laïc. Or il arriva que par le moyen du démon il y eut une brouille entre Nicéphore et un prêtre qu'il aimait, du nom de Sapricus. Nicéphore envoya ses amis prier Sapricus de faire la paix avec lui, mais celui-ci refusa. Alors étant allé lui-même, il lui demanda le pardon et la paix; mais (Sapricus) s'y refusa complètement.

A l'époque des persécutions des chrétiens on saisit le prêtre Sapricus, on l'attacha comme chrétien et on le conduisit devant le juge qui l'engagea avec
* force promesses et douceur, puis le supplia avec instance d'immoler aux * A fol. 178 v° b.
idoles, mais ne parvint pas à lui faire nier le Christ. Il ordonna alors de soumettre Sapricus à de multiples tortures, et comme celui-ci ne consentait pas à renier le Christ et à immoler aux idoles, le juge ordonna de lui trancher la tête.

Pendant que l'on conduisait Sapricus à l'endroit de l'exécution, Nicéphore accourut, se jeta à ses pieds et en sanglotant lui demanda pardon, mais

սէր առնել ընդ նմա, եւ ոչ յիշեաց թշուառականն զպատուէրսն Քրիստոսի. Եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա եւ ոչ Հայրն ձեր երկնաւոր թողու ձեզ զյանցանս ձեր :

Եւ յորժամ տարան ի տեղին կապեցին զաչսն եւ խոնարհեցուցին զպարանոցն զի հատցեն զգլուխն, ասէ Սապրիկիոս ցդահճսն. Թողէք զիս եւ ես զոհեմ աստուածոց ձերոց : Եւ բազում անգամ աղաչեաց զնա Նիկեփորոս զի ոչ ուրասցի զՔրիստոս. եւ ոչ լուաւ նմա, այլ կուրացոյց զնա ոխակալութիւնն եւ զրկեցաւ ի շնորհացն Աստուծոյ : Եւ որ այնչափ չարչարանացն համբերեաց յորժամ կամէր զպսակն յաղթութեան առնուլ խափանեաց սատանայ վասն անհաշտ խռովութեանն ընդ սիրելւոյն. եւ եղեւ ուրացող Քրիստոսի եւ յանցող պատուիրանաց նորա վասն ոխակալութեանն :

Եւ տեսեալ Նիկեփորոս եթէ ոչ դարձաւ ի Քրիստոս, ասէ ցդահճսն. Ես քրիստոնեայ եմ եւ խոստովանիմ զՏէր իմ Յիսուս Քրիստոս զոր դա * այժմ ուրացաւ. արդ զիմ զգլուխս հատէք վասն անուանն Քրիստոսի զոր պաշտեմն եւ երկիրպագանեմ. Ես կռոց ձերոց ոչ զոհեմ եւ ոչ երկիրպագանեմ :

* A fol. 179 r° a.

Եւ դահճքն առանց հրամանի դատաւորին ոչ իշխեցին առնել ինչ, այլ ազդեցուցին նմա. եւ զարմացաւ դատաւորն թէ որպէս Նիկեփորոս ինքնին մատնեաց զանձն իւր

13 Ես կռոց ... երկիրպագանեմ *om.* B.

(Sapricus) ne voulut pas lui pardonner ni faire la paix avec lui. Le malheureux ne se souvint pas du commandement du Christ : *Si vous ne pardonnez pas aux hommes, votre Père céleste ne vous pardonnera pas non plus vos offenses* [1].

Lorsqu'on eut conduit (Sapricus) à l'endroit, on lui banda les yeux et on lui fit courber le cou pour lui trancher la tête. Sapricus dit aux bourreaux : « Laissez-moi libre et j'immolerai à vos dieux. » Nicéphore le supplia à plusieurs reprises de ne pas renier le Christ, mais (Sapricus) ne l'écouta pas, car la vengeance l'avait aveuglé et il fut privé des grâces de Dieu. Et lui qui avait enduré tant de supplices et voulait obtenir la couronne de la victoire, le démon l'en détourna à cause de sa haine irréconciliable envers son ami, et il devint un renégat du Christ et transgresseur de ses commandements à cause de sa haine.

Nicéphore, voyant que (Sapricus) ne revenait pas au Christ, dit aux bourreaux : « Je suis chrétien et je confesse mon Seigneur Jésus-Christ que celui-là * (Sapricus) vient de renier. Tranchez-moi donc la tête pour le nom du Christ, que je sers et que j'adore ; je n'immole point à vos idoles et je ne les adore point. »

* A fol. 179 r° a.

Les bourreaux n'osèrent rien faire sans l'ordre du juge, mais ils le mirent au courant. Le juge fut surpris de ce que Nicéphore se fût livré à la mort de

1. Matth., vi, 15.

ի մահ ։ Եւ հրամայեաց զՍապրիկոս լուծանել եւ արձակել, եւ զՆիկեփորոսի զգլուխն հատանել ։ Եւ այնպէս բարի խոստովանութեամբ կատարեցաւ ի Քրիստոս սուրբն Նիկեփորոս Փետրուարի Թ ։

Յայսմ աւուր սուրբ վկայքն Քրիստոսի Բիքտորինոս եւ Վիքտորոս, Նիկիփորոս, Կղաւդիոս, Դիոդորոս, Սրապիոն եւ Պապիաս, բազում տանջանօք եւ սրով կատարեցան ի քաղաքին Կորնթացւոց, ի դատաւորէն Տերտիանեայ, առ Դեկոսի արքայիւ ։

Զսրբոյն Բիքտորինոսի հանին զաջոյ ակն, եւ ի մամուլս ջախջախեցին զմարմինն, եւ սրով հատին զամենայն մատունսն ոտիցն եւ ձեռացն ։

Եւ զսուրբն Վիքտորոս կապեցին ի չորս ցիցս զձեռս եւ զոտս, եւ հատին զլեզուն, եւ քերանօք քերթեցին զամենայն մարմինն ։

Եւ զսուրբն Նիկիփորոս պնդեցին ի մեքենայս մինչեւ հոսեաց արիւնն ի քթացն եւ ի բերանոյն եւ յականջացն, եւ ապա կախեցին զհերացն յարմաւենի ծառ ։

Եւ զսուրբն Կղաւդիոս խիստ տանջեցին, եւ կախեցին զգլխիվայր, եւ * աղբ ծխեցին * A fol. 179 r° b.
յերեսն. եւ արկին ի հոտոտելիսն քացախ խիստ, եւ ապա կտրեցին զձեռսն եւ զոտսն ։

Եւ զսուրբն Դիոդորոս յետ բազում չարչարանաց հրով այրեցին ։

Եւ զսուրբն Սրապիոն սրով գլխատեցին ։

2 հատանել] հատին B || 3 Փետրուարի Թ] եւ Մեհեկի Գ *add.* B || 4 աւուր] եօթն *add.* B || 7 ջախջախեցին] ջաղխեցին B || 9 զձեռս եւ զոտս] ի ձեռաց եւ յոտից B.

par lui-même. Il ordonna de délier et de libérer Sapricus et de trancher la tête à Nicéphore. C'est ainsi que saint Nicéphore fut exécuté en bonne confession pour le Christ; le 9 février.

En ce jour les saints martyrs du Christ Victorinus, et Victor, Nicéphore, Claude, Théodore, Sérapion et Papias, furent martyrisés par de nombreuses tortures et par le glaive dans la ville de Corinthe, par le juge Tertianus, sous l'empereur Dèce.

On enleva l'œil droit à saint Victorinus, et on brisa son corps dans une presse, on lui trancha par le glaive tous les doigts des mains et des pieds.

On attacha saint Victor (*Vikhtoros*) à quatre poteaux par les mains et les pieds, on lui coupa la langue et on lui écorcha tout le corps avec des ongles.

On pressa saint Nicéphore sous des machines jusqu'à ce que le sang lui eût jailli du nez, de la bouche et des oreilles; on le suspendit ensuite par les cheveux à un palmier.

On tortura cruellement saint Claude, on le suspendit la tête en bas, on lui jeta* des excréments au visage, on lui remplit les narines de vinaigre très * A fol. 179 r° b.
fort et on lui coupa ensuite les mains et les pieds.

Saint Théodore, après de nombreuses tortures, fut consumé par le feu.

On trancha la tête de saint Sérapion avec une épée.

Եւ զսուրբն Պապիաս բեւեռեցին ի փայտի, եւ կապեալ վիմաւ ընկեցին ի ծովն ։ Եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս ։

Մեհեկի Դ եւ Փետրուարի Ժ ։ Վկայութիւն երկուց քերցն Մարիամու եւ Մարթայի, եւ Լիկարիոնի ։

Մարիամ եւ Մարթա քորք էին միմեանց, եւ պարկեշտ վարուք ի միասին պահէին հաստատուն զհաւատսն Քրիստոսի եւ զկուսութիւնն ։

Եւ յաւուր միում դէպ եղեւ դատաւորին անցանել ընդ գեղն առաջի տանն յորում բնակէին կուսանքն, եւ ելեալ ի վերնատունն եւ ընդ պատուհանն խոնարհեցուցին զգլուխս իւրեանց եւ մեծաձայն բարբառով առեն ցդատաւորն․ Մեք քրիստոնեայք եմք եւ ի Քրիստոս ուղիղ խոստովանութեամբ դաւանեմք եւ հաւատամք ։ Եւ համբարձեալ դատաւորն զաչս իւր եւես զնոսա եւ ասէ․ Խնայեմ ի մանկութիւնդ ձեր եւ ողորմիմ զձեզ մահու մատնել ։

Ասեն սրբուհի կանայքն․ Վասն Քրիստոսի մահն կեանք են յաւիտենականք ։ Եւ իջուցին զնոսա ի վերնատանէն եւ տարան ի խաչ հանել ։

1 կապեալ վիմաւ] վիմով B.

4 Լիկարիոնի] կրօնաւորի *add.* B || 5 միմեանց] համազգաք B || 8 բնակէին] բնակեալ էին B — կուսանքն] աճ արկանելով քրիստոնէից եւ նոքա *add.* B || 10 դաւանեմք եւ *om.* B || 11 եւես զնոսա] եւ զթացեալ ի մանկութիւն նոցա *add.* B || 13 կանայքն] կուսանքն B — յաւիտենականք] եւ ոչ մահ ։ Եւ հրամայեաց դատաւորն *add.* B || 14 տարան] յետ ողոքանաց եւ սպառնալեաց առաքեաց B.

On cloua saint Papias à un poteau, et y ayant attaché une pierre, on le jeta à la mer. C'est ainsi qu'ils furent martyrisés dans le Christ.

4 MÉHÉKI, **10 Février**.

Martyre des deux sœurs Marie et Marthe, et de Lycarion.

Marie et Marthe étaient deux sœurs, vivant ensemble d'une vie honorable, conservant leur virginité avec une foi solide dans le Christ.

Un jour il arriva que le juge traversa le village et passa devant la maison où demeuraient les vierges; celles-ci, étant montées à l'étage supérieur, penchèrent leur tête hors de la fenêtre et crièrent à haute voix au juge : « Nous sommes chrétiennes, nous confessons le Christ d'une confession sincère et nous croyons en Lui. » Le juge, ayant levé les yeux, les aperçut et dit : « Je plains votre jeunesse et j'ai pitié de vous livrer à la mort. »

Les saintes femmes lui répondirent : « La mort pour le Christ, c'est la vie éternelle. » On les fit descendre de l'étage supérieur et on les emmena pour les crucifier.

Եւ պատանի մի կրօնաւոր սննդակից կուսանացն որոյ անուն էր Լիկարիոն, կացեալ առաջի դատաւորին ասէ. Եւ ես քրիստոնեայ եմ եւ որպէս տեսանես զիս այս զգեստիւս զօրական եմ ես Քրիստոսի եւ ծառայ, եւ քոյ աստուածոցդ * թշնամի : Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց եւ կախեցին զերեսեանն յերիս խաչս : * A fol. 179 v° a.

Եւ եկեալ մայր կուսանացն զիրկս արկանէր ոտից դստերացն, եւ պատուիրէր արտասուօք համբերել տանջանացն, եւ նոքա ի խաչին սաղմոսէին : Եւ երթեալ դահճացն սրով սպանին զերիս սուրբ վկայսն Քրիստոսի, զՄարիամ, զՄարթա եւ զԼիկարիոն ի Փետրուարի Ժ :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյ առաքելոյն Թադէոսի ի Հայս :

Աբգար թագաւորն Միջագետաց յՈւրհայ, էր ի ժամանակն յորում Քրիստոս մարմնով երեւեցաւ ի Հրէաստան : Եւ լուեալ զնշանսն զոր առնէր Քրիստոս եւ զբժշկութիւնսն եւ զսքանչելիսն՝ առաքեաց թուղթ առ Տէրն, եւ կոչեաց զնա ի քաղաքն իւր, զի էր հիւանդ անբժշկելի ցաւօք : Այսմ վկայ է աւետարանն Յովհաննու որ ասէ. Էին անդ ոմանք հեթանոսք, մատեան առ Փիլիպպոս եւ ասեն . Կամիմք զՅիսուս տեսանել . եւ Անդրէաս եւ Փիլիպպոս ածին առ Յիսուս զնոսա : Եւ Յիսուս ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ : ·

5 մայր] սուրբ *add.* B || 8 զԼիկարիոն] աբեղայն *add.* B — Փետրուարի Ժ] եւ Մեհեկի Դ *add.* B.

Un jeune religieux qui avait été élevé avec les vierges, dont le nom était Lycarion, se présenta au juge et dit : « Moi aussi, je suis chrétien, et tel que tu me vois habillé, je suis soldat du Christ et son serviteur, et je suis l'ennemi * de tes dieux. » Le juge irrité ordonna de les attacher tous les trois à trois croix. * A fol. 179 v° a.

La mère des vierges vint embrasser les pieds de ses filles en les exhortant avec larmes de résister aux supplices, tandis que celles-ci psalmodiaient sur la croix. Les bourreaux arrivèrent et frappèrent du glaive les trois martyrs du Christ Marie, Marthe et Lycarion, le 10 février.

En ce jour, martyre du saint apôtre Thaddée en Arménie.

Abgar, roi de Mésopotamie à Édesse, vivait à l'époque où le Christ dans la chair apparut en Judée. Ayant appris les miracles que le Christ opérait, ses guérisons et ses prodiges, il envoya un message au Seigneur, l'invitant à venir dans sa ville, car il était affligé d'une maladie incurable. L'évangile de Jean en témoigne en ces termes : *Il y avait là quelques gentils, qui s'approchèrent de Philippe et lui dirent : Nous voudrions voir Jésus. André et Philippe les conduisirent à Jésus. Jésus leur répondit : L'heure est venue où le Fils de l'homme sera glorifié*[1].

1. Jean, xii, 21-23.

Արդ ինքնին ոչ գնաց Տէրն, բայց թղթի զնա արժանի արար, եւ խոստացաւ յետ համբառնալոյն իւրոյ, առաքել յաշակերտացն եւ բժշկել զնա :

Իսկ յետ իջանելոյ Հոգւոյն սրբոյ Թովմաս մի յերկոտասանիցն, անուանեալն երկուորեակ առաքեաց զԹադէոս յՈւռհայ, զոր ոմանք ասեն եթէ երկուորակից

* A fol. 179 v° b. եղբայրն * էր : Սա եկեալ եմուտ ի տուն Տոբիայ եւ առնէր բժշկութիւն ի քաղաքին, եւ լուեալ Աբգարու ասէ. Նա է զոր խոստացաւ առաքել ինձ Քրիստոս : Յղեաց եւ կոչեաց զառաքեալն. եւ ընդ մտանել առաքելոյն ետես Աբգար նշան սքանչելի ի վերայ նորա, եւ զարհուրեալ անկաւ եւ երկիր եպագ նմա : Ձեռն եդ առաքեալն եւ բժշկեաց զնա, եւ զԱբդիու որ էր այր մեծ ի դուռն արքունի եւ զնա բժշկեաց ի չարաչար ցաւոց : Եւ զԱդդէ ոմն կերպասագործ որ էր հրէայ աշակերտ ձեռնադրեաց եպիսկոպոս նոցա : Եւ մկրտեաց զթագաւորն եւ զիշխանսն եւ զամենայն քաղաքացիսն :

Եւ գնաց ի Հայս թղթովքն Աբգարու, զոր ոչ ընկալաւ թագաւորն Հայոց Սանատրուկ, որ էր ազգական Աբգարու. այլ դուստր նորա միայն Սանդուխտ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ յառաքելոյն, եւ նահատակեցաւ ի հօրէն իւրմէ սպանեալ, որպէս եւ գրեալ է ի պատմութեան իւրում :

Իսկ յետ երից աւուրց կատարման սրբոյն Սանդխտոյ, երեւեցաւ Քրիստոս առաքելոյն Թադէոսի եւ ասէ. Քաջալերեաց, զի այսօր եկեսցես առ իս : Եւ պատմեալ զայս առաքելոյն՝ աշակերտացն իւրոց յարտասուս հարեալ :

Or, le Seigneur n'alla pas en personne (vers Abgar), mais Il daigna lui (répondre par) une lettre, en lui promettant de lui envoyer, après son Ascension, un de ses disciples pour le guérir.

Après la descente du Saint-Esprit, Thomas, l'un des Douze, surnommé Didyme (jumeau), envoya à Édesse Thaddée, que d'aucuns prétendent son

* A fol. 179 v° b. frère jumeau. * Celui-ci descendit à la maison de Tobie et opéra des guérisons dans la ville. Ce qu'ayant appris, Abgar dit : « C'est celui que le Christ m'a promis d'envoyer. » Il manda et fit appeler l'apôtre ; et aussitôt que l'apôtre fut introduit, Abgar vit un signe merveilleux sur sa personne ; il tomba, saisi de crainte, et se prosterna devant lui. L'apôtre lui imposa les mains et le guérit, ainsi qu'Abdiou, personnage considérable au palais royal, qu'il délivra de douleurs atroces. (Thaddée) leur sacra évêque un disciple, du nom d'Addaï, fabricant de tissus, lequel était Juif. Puis il baptisa le roi, les princes et tous les habitants de la ville.

(Thaddée) se rendit en Arménie avec une lettre d'Abgar ; mais le roi d'Arménie, Sanatrouk, qui était parent d'Abgar, ne le reçut pas. Seule sa fille Sandoukht crut au Christ et se fit baptiser par l'apôtre ; elle fut martyrisée et tuée par son père, ainsi qu'il est écrit dans son histoire.

Trois jours après l'exécution de sainte Sandoukht, le Christ apparut à l'apôtre Thaddée et lui dit : « Prends courage, car tu viendras à moi aujourd'hui. » L'apôtre l'ayant raconté à ses disciples, ils fondirent en larmes.

Եւ եկին երկու իշխանք հրամանաւ թագաւորին Սանատրկոյ, կապեցին զնա եւ ածին առ թագաւորն : Եւ ասէ թագաւորն ընդ առաքեալն. Ընդէ՞ր մոլորեցուցեր զչքնաղ դուստրն իմ եւ սպանանել ետուր ինձ : Պատասխանի ետ առաքեալն. Դուստրն քո փոխեցաւ * առ փեսայն իւր Քրիստոս, եւ պսակեցաւ անթառամ պսակօք : * A fol. 180 r° a.

Իսկ թագաւորն հրաման ետ ձգել զառաքեալն յարգելանոց գազանաց. եւ եկեալ գազանքն անկանէին եւ լիզուին զոտս նորա : Հրաման ետ թագաւորն վառել հուր եւ ձգել զնա ի ներքս, իսկ հողմն ուժգին ել եւ ցրուեաց զհուրն եւ մնաց սուրբն անքոյթ : Եւ հաւատացին ի Քրիստոս յաւուր յայնմիկ ոգիք չորեք հարիւր :

Ապա երկուցեալ թագաւորն հրաման ետ սրով սպանանել զնա : Իսկ առաքեալն օրհնեաց զհաւատացեալսն, եւ ետ նոցա առաջնորդ զոմն յաշակերտաց իւրոց Զաքարիա անուն եւ ասէ. Եկէք, տեսէք զկատարումն իմ :

Իսկ զինուորքն առեալ զերանելին հանին ի ձորակէն ի բարձրաւանդակ տեղի ի վիմամէջս : Եւ նա տարածեալ զձեռս իւր յաղօթս ասէ. Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի անտես առներ զվիճակս իմ, եւ մի թողուր մնալ զսա ի մոլորութիւն կռապաշտութեան, այլ լուսաւորեա՛ զսա ի դէպ ժամանակի գիտութեամբ հաւատոյ քոյ : Եւ ձայն եղեւ առ նա եւ ասէ. Կատարեմ զխնդրուածս քո, եւ դու եկ ի պատրաստեալ քեզ հանգիստն :

Յայնժամ դահճին եհան զսուրն եւ մինչդեռ ձգէր յառաքեալն՝ եհար Զեմեննոս

Sur l'ordre de Sanatrouk, deux princes arrivèrent pour lier (l'apôtre) et le conduire auprès du roi. Le roi dit à l'apôtre : « Pourquoi as-tu trompé ma charmante fille et me l'as-tu fait tuer? » L'apôtre lui répondit : « Ta fille a été transportée * auprès de son fiancé le Christ et a été couronnée de couronnes qui ne se flétriront pas. » * A fol. 180 r° a.

Le roi ordonna de jeter l'apôtre dans la cage des fauves, mais les fauves tombèrent à ses pieds et les léchèrent. Le roi donna l'ordre d'allumer un grand feu et de l'y jeter, mais un vent violent se leva, dissipa les flammes et le saint resta indemne. Ce jour-là quatre cents personnes crurent au Christ.

Alors le roi épouvanté ordonna de tuer (l'apôtre) par l'épée. L'apôtre bénit les fidèles, leur donna comme chef un de ses disciples de nom Zacharie et leur dit : « Venez assister à mon exécution. »

Les soldats se saisirent du bienheureux, le firent monter par un vallon sur un plateau élevé au milieu des rochers. Ayant étendu ses mains, le saint pria et dit : « Mon Seigneur Jésus-Christ, n'abandonne pas mon diocèse et ne le laisse pas demeurer dans l'erreur de l'idolâtrie, mais illumine-le, dans le temps favorable, par la connaissance de ta foi. » Une voix se fit entendre à lui, qui disait : « J'accomplirai tes vœux, mais toi, viens au repos qui t'est préparé. »

A ce moment, le bourreau ayant levé son glaive tandis qu'il en voulait

գեղջայր իւր եւ սպան ։ Եւ տրտմեցաւ առաքեալն զի էր նա այր բարի եւ հաւատացելոց պարմանից ։ Խոնարհեալ կալաւ զձեռանէ * նորա եւ ասէ․ Այր դու յանուն
* A fol. 180 r° b.
Յիսուսի Քրիստոսի արի ։ Եւ յարուցեալ օրհնեաց զԱստուած ։ Յայնժամ հաւատացին ոգիք իբրեւ եօթն հարիւր, զոր մկրտեաց առաքեալն եւ յանձն արար Զեմենտոսի ։

Եւ ապա կատարեցին զնա դահիճքն սրով, եւ բուրեաց հոտ անուշութեան, եւ լոյս ծագեալ յերկնից, եւ շարժումն եղեալ եւ պատառեալ վէմն՝ ընկալաւ յինքն զմարմինն առաքելոյն․ եւ հաւատացին յաւուրն յայնմիկ ոգիք երեք հազար եւ չորեք հարիւր ։ Եւ էր նոցա վերակացու Զաքարիա եւ Զեմենտոս ։

Եղեւ նահատակութիւն առաքելոյն Թադէոսի Փետրուարի Ժ ։

՚Ով լուսաւորիչ հոգւոց մերոց սուրբ առաքեալ Թադէոս, եկեղեցի Հայոց ի ձեռն քո մաղթէ գտանել ի Քրիստոսէ զմեծ ողորմութիւն ։

Գիւտ նշխարաց առաքելոյն Թադէոսի ։

Ես Կիւրակոս անարժան մինչդեռ էի յառանձնական կեանս իմ, ի լերինն որ էր

12 Գիւտ նշխարաց առաքելոյն Թադէոսի] Գիւտ նշխարաց սուրբ առաքելոյն Թադէոսի ։ Յետ կատարելոյ վկայական մահուամբ սուրբ առաքելոյն Թադէոսի ընդ Սանդխտոյ կուսին յԱրտազ գաւառի, մնացին մարմինք նոցա անծանօթ զամս բազումս ։ Եւ յաւուրս որդւոց եւ թոռանց որդւոյն Գրիգորի Լուսաւորչին յայտնեցան նշխարք նոցա սուրբ կրօնաւորին Կիրակոսի, որ հրաժարեալ յաշխարհէ խստամբեր վարուք ճգնէր ի լերին միում Արտազ գաւառի, որ մօտ էր ի տեղի կատարման Թադէոսի եւ Սանդխտոյ ։ Սա յաւուր միում մինչդեռ ի քուն եմուտ յետ աղօթիցն՝ ետես տեսիլ սքանչելի․ զոր եւ յարուցեալ պատմեաց այլոց կրօնաւորաց․ եւ բանք նորա են այս․ *add.* B || 13 էի *om.* B.

frapper l'apôtre, toucha son frère Zémentos et le tua. L'apôtre en fut attristé, car c'était un homme bon et dévoué aux soins des fidèles. Il se baissa, le prit
* A fol. 180 r° b.
par la * main et lui dit : « Homme, au nom de Jésus-Christ, lève-toi. » Il se leva et bénit Dieu. Sept cents personnes environ se convertirent alors que l'apôtre baptisa et confia à Zémentos.

Après quoi les bourreaux exécutèrent (l'apôtre) avec l'épée. Une odeur suave se répandit, une lumière jaillit du ciel, il se fit un tremblement de terre et le rocher s'entr'ouvrant accueillit intérieurement le corps de l'apôtre. Ce jour-là trois mille quatre cents personnes se convertirent. Leurs chefs furent Zacharie et Zémentos.

Le martyre de l'apôtre Thaddée eut lieu le 10 février.

O illuminateur de nos âmes, saint apôtre Thaddée, l'église arménienne souhaite de trouver auprès du Christ, par ton intercession, une grande miséricorde.

Découverte des restes de l'apôtre Thaddée.

Moi, l'indigne Cyriaque (*Kiurakos*), pendant que je menais la vie solitaire

առընթեր տեղւոյն յորում կային սուրբքն ամփոփեալ, տեսի լոյս, եւ ի մէջ լուսոյն աթոռ ոսկի յորում նստէր առաքեալն Թադէոս, եւ հինգ արք շուրջ զնովաւ, եւ աղջիկ մի լուսազգեաց ի միջոյ բլրոյն ելն եկաց առ նմա : Եւ տեսի այր մի սքանչելի որ ասէր ցիս . Մի երկնչիր, զի եցոյց Աստուած քեզ զսուրբս իւր : Եւ իմ զարթուցեալ յերկիւղէն փառս ետու Աստուծոյ եւ խնդրէի զստոյգն :

Իսկ յերկրորդ աւուրն տեսի զառաքեալն նովին կերպարանօքն եւ յերկիր անկայ . իսկ նա յարոյց զիս եւ ասէ . Եկ Կիւրակոս, եւ ցուցից քեզ զնշխարս իմ : Եւ եցոյց ինձ արձան * մի անտաշ յարեւմտից կողմանէ, եւ եկեղեցի մի փոքրիկ յարեւելս կոյս, * A fol. 180 vº a.
եւ ասէ . Աստ գտցես : Եւ ես յերկիւղէն ստացայ պահս զաւուրս եօթն, եւ ապա գնացի ի յարձանն յասացեալ տեղին, բրեցի եւ ոչինչ գտի . եւ ի տրտմութենէն ննջեցի : Եւ երեւեցաւ ինձ սուրբն եւ ասէ . Յաջակողմն բրեա եւ գտցես : Եւ զարթուցեալ բրեցի եւ գտի նշխարս ուստի բուրեաց հոտ անուշութեան : Եւ ես կարծեցի թէ առաքեալն իցէ :

Իսկ ի նմին գիշերի երեւեցաւ ինձ պատանի մի բարձրահասակ եւ ասէ . Զոր տեսերդ Իսրայէլ է, եւ որ ի վերայ՝ ես եմ Զաքարիա . իսկ յարձանդ որ ընդդէմ կայ գտանես զառաքեալն :

1 կային] էին B || 3 ելն *om.* B || 8 յարեւելս կոյս] յարեւելից B.

dans la montagne aux environs de l'endroit où se trouvaient recueillis les saints, j'aperçus une lumière, et au milieu de la lumière un trône d'or sur lequel était assis l'apôtre Thaddée. Cinq hommes l'entouraient. Une jeune fille revêtue de lumière s'avança du milieu de la colline et vint se placer à côté de lui. J'aperçus également un homme magnifique qui me dit : « N'aie pas peur, car Dieu t'a fait voir ses saints. » Je me réveillai de peur, rendis grâces à Dieu, et me mis à rechercher la vérité.

Le deuxième jour, j'aperçus l'apôtre sous les mêmes traits et je tombai à terre; mais il me releva et me dit : « Viens, Cyriaque, je te montrerai mes restes. » Il me fit voir * un bloc de pierre non poli du côté de l'ouest et une * A fol. 180 vº a.
petite église du côté de l'est et me dit : « Tu trouveras là. » Je fus saisi de crainte et jeûnai durant sept jours. Ensuite, je me rendis à la pierre à l'endroit désigné, je creusai et ne trouvai rien. Je m'endormis de tristesse. Le saint m'apparut et me dit : « Creuse du côté droit et tu trouveras. » Je me réveillai, je creusai et je trouvai les restes d'où émanait une odeur suave. Je crus que c'était l'apôtre.

La même nuit, m'apparut un jeune homme de haute taille qui me dit : « Celui que tu as vu c'est Israël, et celui qui est plus haut c'est moi Zacharie; tu trouveras l'apôtre à la pierre qui se trouve en face. »

Եւ դարձեալ երեւեցաւ ինձ սուրբն Սանդուխտ ըստ առաջին տեսլեանն. եւ հրաման ետ տարածել ինձ տատասկ եւ զնշխարսն ի վերայ դնել՝ որ լուցան իբրեւ ջահս : Եւ ես ասէի. Այրի տատասկն : Ասէ կոյսն. Ոչ՝ այլ լուսաւորի աշխարհս Հայոց սուրբ պարգեւօքն որ տուան նոցա: Արդ առ եւ բաշխեա ի բժշկութիւն հիւանդաց : Եւ ասէ. Ես եմ ի բլուրն ուր տեսեր զիս զառաջինն : Եւ յարուցեալ փառաւորեցի զԱստուած, եւ աղօթեցի եւ պահեցի ի Մարերոյ մինչեւ ի Նաւասարդի :

Եւ դարձեալ երեւէր ինձ առաքեալն եւ ասէր. Այսօր գտանես զխնդրելին քո : Եւ տանէր զիս ցուցանէր զտեղին : Եւ յարուցեալ գնացի Սամուէլիւ քահանայիւ ի նշանակեալ տեղին : Եւ մինչդեռ աղօթէաք եղեւ թնդիւն եւ պատառեցաւ վէմն, եւ
* A fol. 180 v° b. բուրեաց հոտ անուշութեան : Եւ * գտաք զառաքեալն ի մէջ վիմին յարեւելից կողմանէն, եւ մօտ յառաքեալն՝ նշխարք այլ սրբոցն. միոյն ընդ ուսն վարեալ շամփուրս երկաթի որ դեռ եւս կայր ի մարմինն, եւ միւսոյն լիսեռնքն ծակեալ, զորս ժողովեալ փառս տուաք Աստուծոյ :

Եւ յերրորդ աւուրն եկաք ի հանգստարան սրբոյն Սանդխտոյ. եւ մինչ յաղօթելն եղեւ շամանդաղ ի բլրին զերեք ժամ. եւ ապա տեսաք ի մէջ բլրին լոյս, եւ ի մէջ լուսոյն բազմութիւն լուսազգեստ մարդկան : Եւ բացաւ հանգիստն եւ բուրեաց հոտ

4 սուրբ *om.* B || 9 պատառեցաւ] բացաւ B || 10 վիմին] քարանձաւին B || 12 շամփուրս երկաթի] երկաթ B.

De nouveau m'apparut sainte Sandoukht, comme dans la première vision; elle m'ordonna d'étendre des épines, et de poser dessus les restes, qui éclairèrent comme des torches. Je lui dis : « Les épines brûlent. » La vierge me répondit : « Non, mais c'est le pays d'Arménie qui s'illumine par les saints présents qui lui sont donnés. Prends donc et distribue pour la guérison des malades. » Elle me dit encore : « Je me trouve dans la colline où tu m'as vue la première fois. » Je me levai et glorifiai Dieu, je priai et je jeûnai du mois de Mareri au mois de Navasard.

L'apôtre m'apparut de nouveau et me dit : « Tu trouveras aujourd'hui ce que tu désires. » Il me conduisit et me montra l'endroit. Je me levai et m'y rendis avec le prêtre Samuel à l'endroit indiqué. Pendant que nous priions, il se produisit un grand bruit, le rocher s'entr'ouvrit et une odeur suave se
* A fol. 180 v° b. répandit. * Nous trouvâmes l'apôtre dans le rocher du côté est, et près de l'apôtre les restes d'autres saints, dont l'un avait l'épaule traversée de broches de fer qui adhéraient encore au corps; un autre avait les chevilles trouées. Nous les recueillîmes en rendant grâces à Dieu.

Le troisième jour, nous arrivâmes au reposoir de sainte Sandoukht. Pendant que nous y priions, il y eut sur la colline une brume qui dura trois heures. Ensuite, nous aperçûmes une lumière sur la colline, et au milieu de

անուշութեան. եւ փարատեալ շամանդաղն, եւ երեւեցան նշխարքն, զորս առեալ բերաք եւ եդաք մերձ յառաքելոյն ։ Եւ եղեւ ի գիշերին լոյս ի վերայ նշխարացն, եւ նշխարքն թուեցեալք առ միմեանս հասանէին ։ Իսկ ի վաղիւն զատուցաք ի միմեանց, եւ եդաք ի դիրս պատշաճաւորս ։

Եւ ել համբաւն ընդ երկիրն Հայոց. որք գային ցնծութեամբ եւ առնուին բժշկութիւն իւրաքանչիւր ցաւոց ։

Կին մի կոյր ի ծնէ յՌշտունեաց՝ եկն եւ լուսաւորեցաւ ի նշխարաց սրբոցն, քանզի ասէր եթէ. Երեւեցաւ ինձ սուրբն Սանդուխտ ի գաւառն իմ եւ ասէր գալ աստ եւ բժշկել. եւ յորժամ եկի՝ ինքն եւ առաքեալն եդին զձեռս ի վերայ իմ, եւ բացան աչք իմ եւ տեսի ։ Եւ այլ բազում բժշկութիւնք լինին մինչեւ ցայսօր ի նշխարաց երանելեացն ։

* Մեհեկի Ե եւ Փետրուարի ԺԱ ։ Տօն սրբոյն Վլասայ Սեբաստիոյ եպիսկոպոսին ։ * A fol. 181 r° a.

Յաւուրս կռապաշտ արքային Լիկիանոսի սուրբն Վլաս եպիսկոպոսն վասն հալածանաց եւ երկիւղի անօրինացն՝ բնակէր յայրս ի լերինն Արտենի. եւ գնային առ

3-4 եւ նշխարքն թուեցեալք... պատշաճաւորս *om.* B || 7-10 Կին մի... եւ տեսի *om.* B. 12 Տօն սրբոյն] Վկայութիւն B || 13 Վլաս] Վլասիոս B || 13 — pag. [1066] l. 7. վասն հալածանաց... ի գայլոցն] որ զօրացուցիչ էր բաց նաճատակաց եւ այցելու բանտարգելոց, ըստ

la lumière un grand nombre d'hommes revêtus de lumière. Le tombeau s'ouvrit, une odeur suave se répandit; la brume se dissipa et les restes apparurent, que nous enlevâmes, portâmes et déposâmes près de l'apôtre. La nuit, une lumière jaillit sur les restes, qui s'étant soulevés (de terre) se rapprochèrent l'un de l'autre. Le lendemain, nous les séparâmes et les déposâmes dans des tombeaux convenables.

Le bruit se répandit dans toute la terre des Arméniens; ceux-ci accoururent avec joie et chacun trouva la guérison de ses maux.

Une femme aveugle de naissance (de la province) de Rechtounik s'y étant rendue recouvra la vue par les restes des saints. Elle disait : « Sainte Sandoukht m'est apparue dans ma province et me dit de venir ici pour y être guérie. Lorsque je suis arrivée, elle et l'apôtre m'imposèrent les mains, mes yeux s'ouvrirent et je vis. » Beaucoup d'autres guérisons ont lieu jusqu'aujourd'hui par les restes des bienheureux.

* 5 MÉHÉKI, **11 Février.** * A fol. 181 r° a.

Fête de saint Blaise, évêque de Sébaste.

Aux jours de l'empereur idolâtre Licinius (*Likianos*), le saint évêque Blaise (*Vlas*) vivait dans les grottes de la montagne d'Argée[1] à cause des persé-

1. Cf. *Acta SS. Feb.*, I, p. 337; arménien *Arténi.*

նա ամենայն վայրի երէք, եւ դնէր ձեռս ի վերայ եւ օրհնէր զնոսա : Էր սուրբն բժիշկ ուսեալ, եւ բազում հիւանդս ողջացուցանէր ոչ դեղօք այլ աղօթիւք. եւ եթէ փուշ որ կլանէր կամ ոսկր՝ եւ ի փողն արգելոյր, աղօթիւք հանէր : Եւ մինչեւ ցայսօր եթէ որ ոսկր կամ փուշ ձկան կլանէ եւ արգելու ի փողն, եւ յիշէ զանուն սուրբ Վլասայ՝ առժամայն փրկի ի նեղութենէն :

Եւ կնոջ մի աղքատի եւ այրւոյ էր խոզ մի զոր յափշտակեաց գայլ. եւ նա երթեալ առ եպիսկոպոսն աղաչէր, եւ նորա աղօթիւքն զերծաւ ի գայլէն :

Եւ ամբաստանեցին զնա առ Ագրիկողայոսի դատաւորի, եւ առաքեաց զօրականս եւ տարան առաջի նորա. եւ բազում հարցաքննութեամբ արարեալ՝ խոստովանէր համարձակութեամբ զանունն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Եւ հարին զսուրբն բրօք եւ արկին ի բանդ :

Եւ լուեալ այրի կնոջն՝ եզեն զխոզն, եւ եփեալ զգլուխն տարաւ ի բանդն, եւ այլ ի սերմանց. եւ եկեր սուրբն Վլասիոս եւ օրհնեաց զկինն եւ պատուիրեաց որ յետ մահուանն իւրոյ յաւուր յիշատակի նորա զնոյն արասցէ : Եւ ամենեքեան որք կատարեն

* A fol. 181 r° b. զյիշատակ Վլասայ եպիսկոպոսի * ամենայն բարութեամբ լցցին :

յորդորելոյ հաւատացելոց՝ խոյս ետ ի Սեբաստիոյ, եւ երթեալ բնակէր յայրի միում ի լերինն Արգենի վասն երկիւղի անօրինին. եւ երթային առ նա հիւանդք եւ ախտաժէտք՝ եւ աղօթիւք ողջացուցանէր : B || 9 եւ տարան առաջի նորա] եւ առեալ տանէին ի քաղաքն, եւ ընդ ճանապարհայն ի գիւղօրէից մատուցանէին առ նա զբազում հիւանդս, եւ ձեռն ի վերայ եդեալ բժշկէր զամենեսին. եւ կացուցին առաջի դատաւորին, B || 12-15 Եւ լուեալ ... բարութեամբ լցցին *om.* B.

cutions et de la crainte des impies. Toutes les bêtes sauvages venaient à lui; il posait sa main sur elles et les bénissait. Le saint était un médecin savant, il guérissait nombre de malades, non par des remèdes, mais par des prières. Si quelqu'un avait avalé une arête ou un os, qui restait dans la gorge, il les enlevait par la prière. Jusqu'aujourd'hui même, si quelqu'un avale un os ou une arête de poisson, qui lui reste dans la gorge, et fait mention du nom de saint Blaise, il est aussitôt délivré de la gêne.

Une femme pauvre et veuve possédait un porc, qu'un loup avait enlevé. Elle alla prier l'évêque, et par ses prières (le porc) fut délivré du loup.

On le dénonça au juge Agricolaos, qui envoya des soldats et le fit venir en sa présence. Après avoir été interrogé longuement, (Blaise) confessa avec hardiesse le nom de Notre-Seigneur Jésus-Christ.

On frappa le saint avec des bâtons et on le jeta en prison.

La veuve, l'ayant appris, tua le porc, fit cuire la tête et l'apporta à la prison avec, en plus, des légumes. Saint Blaise (*Vlasios*) mangea, bénit la femme, l'engageant de faire de même après sa mort, le jour de sa commémoration. Tous ceux qui accompliront la commémoration du saint évêque Blaise ver-

* A fol. 181 r° b. ront * tous leurs biens prospérer.

Եւ յետ աւուրց կացուցին առաջի դատաւորին, եւ զնոյն խոստովանութիւնն խոստովանեցաւ. եւ զկուռսն դեւս անուանէր, եւ զկռապաշտսն՝ դիւապաշտս : Եւ կախեցին զփայտէ եւ երկաթի քերչօք քերեցին զմարմին նորա, եւ իջուցեալ տարան ի բանդ : Գնացին զկնի նորա եօթն քրիստոնեայ կանայք, եւ արեամբ նորա օծանէին զերեսս եւ զանձինս իւրեանց : Եւ տեսեալ բանդապետացն տարան զնոսա առ դատաւորն. եւ նոքա միաբան խոստովանեցան զանունն Քրիստոսի : Եւ հրամայեաց թողուլ զնոսա, եւ նոքա երթեալ առին կուռս, արկին ի խորգ, կապեցին եւ ընկեցին ի խորս լճին : Եւ գնացին առ դատաւորն եւ ասեն. Տես զաստուածոց քոց զզօրութիւնն, եթէ կարո՞ղ են ելանել ի լճէն :

Եւ հրամայեաց դատաւորն դնել առաջի նոցա հուր եւ հալեալ կապար, եւ ճանկս երկաթի սուրս. եւ ի միւս այլ կողմանն կտաւս կերպասեայս փափուկս եւ մաքուրս, եւ ասէ. Զոր եւ կամիք ընտրեցէք : Եւ սուրբ կանայքն առին զկտաւսն եւ ընկեցին ի հուրն :

Եւ հրամայեաց կախել զնոսա եւ քերել զմարմինս նոցա. եւ փոխանակ արեանն կաթն բղխէր : Եւ արկին զնոսա ի հուր, եւ անվնասք մնացին : Եւ ապա հատին զեօթն սուրբ կանանցն զգլուխն :

5 բանդապետացն] բանդապահացն B || 8 ի խորս լճին] ի լիճն B || 11 սուրս] եւ սուսեր B || 12 կամիք] կամեսջիք B || 14 քերել] քերեցին B — եւ փոխանակ արեանն կաթն բղխէր] եւ արիւնն երեւէր իջանել սպիտակ իբրեւ զկաթն B || 15 եւ անվնասք մնացին *om.* B || 16 կանանցն] կուսանացն B.

Quelques jours après, on mit (Blaise) en présence du juge, et il renouvela la même confession, il appela les idoles des démons et les idolâtres des adorateurs de démons. On le suspendit à un arbre et on lui déchira le corps avec des ongles de fer; puis, l'ayant descendu, on le conduisit en prison. Sept femmes chrétiennes le suivirent et se frottèrent la figure et le corps de son sang. Ce que voyant, les geôliers les conduisirent au juge. Elles confessèrent unanimement le nom du Christ. (Le juge) ordonna de les laisser en liberté, mais elles allèrent s'emparer des idoles et les mirent dans un sac, qu'elles attachèrent et jetèrent au fond d'un lac. Elles se rendirent ensuite auprès du juge et lui dirent : « Regarde la puissance de tes dieux, sont-ils capables de sortir du lac? »

Le juge ordonna de placer devant elles du feu, du plomb fondu et des onglets de fer pointus, et d'un autre côté des étoffes précieuses et brillantes; il leur dit : « Choisissez ce que vous voulez. » Les saintes femmes prirent les étoffes et les jetèrent au feu.

(Le juge) ordonna de les suspendre et de leur déchirer le corps; mais au lieu de sang, il sortait du lait. On les jeta dans les flammes, mais elles ne furent point brûlées. On trancha ensuite la tête aux sept saintes femmes.

Եւ զսուրբն Վլասիոս ընկեցին ի գետն, եւ եկաց նստաւ ի վերայ ջրոյն որպէս ի կամրջի : Եւ ընթացան վաթսուն եւ ութ զօրականք զի հանցեն զնա, եւ խեղդեցան ամենեքեան ի ջուրն : Եւ սուրբն ել որպէս ի ցամաքէ :

* A fol. 181 v° a. Եւ հրամայեաց հատանել զգլուխ նորա : * Եւ երթեալ ի տեղին աղօթեաց յերկար, որ եթէ ոսկր որ կամ փուշ կլանէ եւ անկցի ի նեղութիւն եւ աղաչեսցէ զքեզ Աստուած ի լի սրտէ, եւ կոչեսցէ զիս յանուանէ յօգնականութիւն, փրկեա զնոսա ի նեղութենէն : Եւ էջ ամպ հովանի ի վերայ նորա, եւ ձայն յամպոյն որ ասէր . Կատարեցին խնդրուածք քո սիրելի ճգնաւոր իմ : Եւ ապա հատին զպատուական գլուխ սրբոյ եպիսկոպոսին Վլասայ :

Եւ եկն մի հաւատացեալ անուն Եղիսիա թաղեաց զմարմին նորա ի ներքոյ պարսպին Սեբաստիոյ քաղաքին Փետրուարի ԺԱ : Եւ բազում նշանք լինին ի տեղւոջն յայնմիկ :

Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Զոսիմեայ Սիրակուսայ եպիսկոպոսին, որ ի կենդանութեան իւրում առաքինի վարուք ճգնեցաւ, եւ յետ մահուանն բազում սքանչելիս արարեալ :

Մեհեկի Զ եւ Փետրուարի ԺԲ : Վարք երանելոյն Մարիամայ՝ որ Մարինոս անուանեցաւ :

Այր մի էր աշխարհական մեծատուն եւ բարեհամբաւ վարուք որոյ անուն էր

1-9 Եւ զսուրբն . . . Վլասայ] Եւ զսուրբն Վլասիոս ընկեցին ի գետն, եւ զօրութեամբն Աստուծոյ ընթացաւ ի վերայ ջրոյ որպէս ընդ ցամաք, եւ ել անվնաս : Եւ հրամայեաց զատաւորն եւ հատին զգլուխ նորա : B || 11 Փետրուարի ԺԱ] եւ Մեհեկի Ե *add.* B || 14 արարեալ] արար շնորհօքն Աստուծոյ B.

On jeta saint Blaise dans le fleuve, mais il se redressa et s'assit sur les eaux comme sur un pont. Soixante-huit soldats accoururent pour l'en retirer et tous se noyèrent dans les eaux. Le saint en sortit comme d'un terrain ferme.

* A fol. 181 v° a. (Le juge) ordonna de lui trancher la tête. * Lorsqu'il fut arrivé à l'endroit d'exécution, il pria longuement : « Quiconque aura avalé un os ou une arête et en sera gêné et te priera, ô Dieu, de tout son cœur en invoquant mon nom à son secours, délivre-le de sa gêne. » Un nuage descendit sur lui comme un dais, et une voix se fit entendre du nuage qui disait : « Tes prières seront exaucées, mon cher ascète. » On trancha ensuite la précieuse tête du saint évêque Blaise.

Une femme fidèle du nom d'Élise inhuma son corps sous les murailles de la ville de Sébaste, le 11 février. Beaucoup de miracles ont lieu en cet endroit.

En ce jour, commémoration du bienheureux Zosime, évêque de Syracuse, qui, de son vivant, eut une vie vertueuse d'ascète et fit beaucoup de miracles après sa mort.

6 MÉHÉKI, **12 Février**.

Vie de la bienheureuse Marie, qui fut appelée Marin.

Il y avait un homme marié, riche et de vie agréable (à Dieu), dont le nom

Ներքինէոս. եւ յետ վախճանի ամուսնոյն իւրոյ մնաց դուստր մի որոյ անուն էր Մարիամ: Ասէ ցնա հայրն. Տաց զքեզ առն եւ զամենայն ինչս իմ քեզ, եւ ես երթայց ի վանս եւ կեցուցից զոգի իմ: Ասէ Մարիամ. Զոգի քո կեցուցանես եւ զիմս կորուսանես: Եւ նա ասէ. Եւ զի՞նչ եւս ապա արարից զքեզ: Ասէ Մարիամ. Տար * զիս ընդ քեզ ի վանսն: Ասէ հայրն իւր. Որպէս մարթի, զի դու կին ես, եւ ես յարանց վանս երթամ: Ասէ Մարիամ. Գերծեա զգլուխ իմ, եւ զգեցո ինձ առն զգեստ, եւ Աստուած պահեսցէ զիս որ պահապան է յուսացելոց իւրոց: *A fol. 181 v° b.

Եւ հաճոյ եղեն բանքն նորա հօրն իւրոյ, եւ արար որպէս եւ ասացն. բաշխեաց զինչս իւր աղքատաց, եւ առեալ զդուստրն իւր առն զգեստիւք՝ գնաց յարանց վանսն, ետեալ զանձ, եւ միաբանեալ եղեն կրօնաւորք. եւ անուանեցաւ Ներքինէոս՝ Եւգինէոս, եւ Մարիամ՝ Մարինոս: Եւ աճէր եւ կրթէր Մարինոս ի վարս ճգնութեան:

Եւ յետ հինգ ամաց մեռաւ հայրն իւր կեցեալ աստուածահաճոյ վարուք: Եւ Մարինոս օր ըստ օրէ յաւելոյր ի ճգնութիւնն, եւ զարմանային կրօնաւորքն վասն չգալոյ մօրուացն, եւ ասէին եթէ ներքինի իցէ զի եւ բարակ նրբաձայն է: Ասէ հայրն. Ոչ՝ այլ ի խիստ ճգնութենէն է: Եւ էր Մարինոս շուտ ի բանս, եւ արագաջանեաց ի ծառայութիւն վանացն, եւ ամենեցուն հնազանդ եւ անտրտունջ եւ անխլեհեր յաշխատութիւնս:

2 քեզ *om.* B || 3 զոգի քո] զքո հոգին B || 4 եւս ապա *om.* B || 7 իւրոց] ի նա B || 9 առն զգեստիւք *om.* B || 10 միաբանեալ *om.* B || 14 հայրն] հայր վանացն B.

était Nerkhineus. Après la mort de son épouse, il ne lui restait qu'une fille du nom de Marie. Le père lui dit : « Je te marierai, je te donnerai tout ce que je possède et je me retirerai au couvent pour songer au salut de mon âme. » Marie lui répondit : « Est-ce que tu sauveras ton âme, en perdant la mienne? » Il lui dit : « Et que puis-je faire désormais de toi? » Marie lui répondit : * « Conduis-moi au couvent avec toi. » Son père lui dit : « Comment serait-ce possible, car tu es une femme, et moi je me retire dans un couvent d'hommes? » Marie répondit : « Rase-moi la tête et mets-moi des vêtements d'homme; Dieu me gardera, car Il garde ceux qui espèrent en lui. » *A fol. 181 v° b.

Ses propos plurent à son père; il fit comme elle avait dit et distribua ses biens aux pauvres. Puis, ayant pris sa fille habillée de vêtements d'homme, il se rendit au couvent des hommes, offrit une somme d'argent, et tous deux furent admis comme religieux. Nerkhineus fut appelé Eugène, et Marie fut appelée Marin (*Marinos*). Marin progressa et s'exerça dans la vie ascétique.

Cinq ans après, son père mourut, après une vie agréable à Dieu. Marin, de jour en jour, progressait dans l'ascétisme. Les religieux pourtant s'étonnaient de ne pas voir sa barbe pousser et ils se disaient : « C'est un eunuque, car il a la voix fluette. » Le prieur disait : « Non, mais cela provient du dur ascétisme. » Marin était prompt à la parole, alerte au service du couvent, obéissant envers tous, courageux, sans jamais se plaindre du travail.

Եւ ի միում աւուր առաքեաց հայր վանացն զՄարինոս եւ այլ երեք եղբարս կրօնաւորս ի բանս կարեւորս. եւ երթեալ ի ճանապարհին իջեւանեցան ի պանդոկի մի, եւ հանգեան զգիշերն անդ ։ Եւ ընդ առաւօտն յարուցեալ գնացին ուր առաքեցան եւ դարձան ի վանսն ։

* A fol. 182 r° a. *Եւ յայնմ զգիշերին իջեալ ի պանդոկին զօրական մի եւ * ննջեաց ընդ դուստր պանդոկապետին եւ յղացոյց ։ Եւ յորժամ գիտաց հայրն խոշտանգէր զնա խոստովանել թէ ով ննջեաց ընդ նա ։ Եւ նա ասէ. Մանկագոյն աբեղայն որ Մարինոսն կոչի ։*

Եւ յարուցեալ վաղվաղակի պանդոկապետն գնաց ի վանսն, եւ բարկութեամբ թշնամանէր զհայրն եւ զաբեղայսն՝ զխիժս եւ քրիստոսախաբիչս կոչէր եւ պոռնիկս ։ Ասէ հայրն. Զի՞նչ եղեւ քեզ չար ի մէնջ որ այդչափ թշնամանօք անարգես զմեզ, զի թէպէտ եւ ես մեղաւոր եմ՝ այլ կրօնաւորքս իմ հաճոյական ծառայք Աստուծոյ են ։

Ասէ պանդոկապետն. Ո՞ւր կայ խաբեբայն Մարինոս որ իջեւանեցաւ առ իս եւ ապականեալ յղացոյց զդուստրն իմ, եւ արար զիս նախատինս դրացեաց իմոց ։ Եւ առժամայն յուղարկեաց հայրն ի բան զՄարինոս, ասէ. Յորժամ եկեսցէ գանեցից եւ հանից ի վանացս ։ Եւ դարձաւ պանդոկապետն ի տուն իւր ։

Եւ եկեալ Մարինոս ի վանսն՝ ասէ ցնա հայրն. Ննջեցեր ընդ դուստր պանդոկա-

1 եղբարս] յեղբարցն B || 6 հայրն] պանդոկապետն B || 7 կոչի] անուանի B || 12 պանդոկապետն *om.* B || 13 դրացեաց] սիրելեաց B.

Un jour, le prieur du couvent envoya Marin avec trois autres frères religieux pour une commission urgente. Chemin faisant, ils descendirent dans une auberge et s'y reposèrent la nuit. Le lendemain matin, ils en repartirent pour se rendre où ils devaient aller et retournèrent au couvent.

* A fol. 182 r° a. Cette nuit-là, un soldat étant descendu à l'auberge * avait couché avec la fille de l'aubergiste et l'avait rendue enceinte. Lorsque son père l'apprit, il la tortura pour lui faire avouer qui avait couché avec elle. Elle répondit : « Le plus jeune des religieux, qui s'appelle Marin. »

L'aubergiste prit aussitôt le chemin du couvent, se mit à insulter avec colère le prieur et les religieux, les appelant des gens ignobles, qui trompent le Christ, des fornicateurs. Le prieur lui répondit : « Quel mal t'avons-nous fait pour que tu nous insultes si grossièrement? Bien que, moi, je sois un pécheur, mes religieux sont des serviteurs agréables à Dieu. »

L'aubergiste lui répondit : « Où est le faux Marin, qui est descendu chez moi, a violenté ma fille et l'a rendue enceinte, en me faisant la risée de mes voisins? » Le prieur envoya aussitôt chercher Marin et dit (à l'homme) : « Lorsqu'il sera arrivé, je le ferai battre et je le renverrai du couvent. » L'aubergiste retourna à sa maison.

Marin étant arrivé au couvent, le prieur lui dit : « Tu as couché avec la

դստերն, եւ արարեր զմեզ առակ եւ նախատինս ամենայն վանորէից եւ կրօնաւորաց ։ Եւ Մարինոս ընթացաւ անկաւ յոտս հօրն եւ ասէ. Մեղայ եւ չար գործեցի, արա զիս արժանի ապաշխարութեան ։ Եւ հայրն գանեաց զՄարինոս եւ եհան ի վանացն ։ Եւ նորա երթեալ նստաւ ի վերայ վիմի ընդդէմ դրան վանացն, եւ * արտասուալից ճգնութեամբ կատարէր զաղօթս իւր ։ Եւ երթեալ եղբարցն շինեցին ի վերայ վիմին նմա խուց ։ * A fol. 182 rº b.

Եւ յորժամ ծնաւ կինն առեալ պանդոկապետին զմանուկն տարաւ ի վանսն. եւ տեսեալ զՄարինոս արտաքոյ վանացն՝ ընկէց զտղայն ի գոգ նորա եւ ասէ. Առ զորդիդ քո զոր չարեօք սերմանեցեր եւ սնո՛ իբրեւ զչար ծառայ ։ Եւ ինքն դարձաւ ի տուն իւր ։

Իսկ Մարինոս առեալ զտղայն տանէր ի կանայս եւ տային ստինս ։ Եւ յորժամ եղեւ տարոյ միոյ մկրտեաց զնա եւ անուանեաց Սերապիոն . եւ յայնմհետէ խաշանց կաթն ջամբեցուցանէր, եւ այնպէս զերիս ամս սնուցանէր զմանուկն ։

Եւ ժողովեալ կրօնաւորացն ասեն ցհայրն. Եթէ Մարինոս ոչ մտցէ ի վանս մեք ամենեքեան ելանեմք ։ Եւ յարուցեալ հայրն գնաց առ Մարինոս եւ ասէ. Ոչ էիր արժանի մտանել ի վանս, այլ վասն աղաչանաց եղբարցն մուտ ի վանսն ։ Եւ

2 գործեցի] իբրեւ զմի ի մեղաւոր մարդկանէ *add.* B || 14 ասեն ցհայրն] առ հայրն ասեն B — մտցէ] մտանիցէ B || 16 մուտ ի վանս] մուտ յեկեղեցին B.

fille de l'aubergiste et tu nous as fait devenir un objet de dérision et d'insultes pour tous les couvents et les religieux! » Marin s'empressa de tomber aux pieds du prieur et dit : « Pardon, j'ai commis le mal, rends-moi digne de la pénitence. » Le prieur frappa Marin et le chassa du monastère. Il sortit s'asseoir sur une pierre en face de la porte du couvent et fit ses prières * avec larmes et plein d'ascétisme. Les frères vinrent lui construire une cellule au-dessus de la pierre. * A fol. 182 rº b.

Lorsque la femme eut enfanté, l'aubergiste prit l'enfant et le porta au couvent, et apercevant Marin hors du couvent, il jeta l'enfant dans son giron, en disant : « Prends ton fils que tu as semé dans le mal, nourris-le comme un mauvais serviteur. » Puis il retourna à sa maison.

Alors Marin prit l'enfant, et il le porta chez des femmes qui lui donnèrent le sein. Lorsqu'il eut un an, il le baptisa et le nomma Sérapion. Dès lors il le nourrissait avec du lait de brebis; il nourrit ainsi l'enfant pendant trois ans.

Les religieux s'étant rassemblés dirent au prieur : « Si Marinus ne rentre pas au couvent, nous en sortirons tous. » Le prieur alla trouver Marin et lui dit : « Tu n'étais pas digne d'entrer dans le couvent, mais sur les prières des frères, entre dans le couvent. » Marin se refusait en disant : « Laissez-moi,

Մարինոս ոչ կամէր, եւ ասէր. Թո՛ղ տուք ինձ զի չեմ արժանի ։ Եւ բռնադատեցին զնա եւ մուծին ի վանսն, եւ տուին նմա զանարգ եւ զծանր ծառայութիւն վանացն. եւ նա յօժարութեամբ եւ բարի կամօք կատարէր, սնուցանէր եւ զմանուկն ։

Եւ ի միում գիշերի տեսանէ յանուրջս այր մի լուսաւոր որ ասէր. Եկեսջիր ի հանգիստ քո, եւ առցես զպսակն զոր ցանկայիր ։ Եւ երթեալ ի խուցն իւր որ ի վէմին՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Փետրուարի ԺԲ ։ Եւ ոչ գիտացին մինչեւ

* A fol. 182 v° a. լայր պատանեակն. բացին զդուռն * եւ տեսին զերանելին վախճանեալ ։

Եւ երթեալ պատմեցին հօրն, եւ նա ասէ. Ոչ բարւոք ապաշխարեաց, եւ անարժան եմուտ յեկեղեցին. եւ հրամայեաց թաղել զնա ։ Եւ երթեալ եղբարցն զի պատեսցեն զնա որպէս օրէն էր կրօնաւորաց, եւ տեսին զի էր կին, եւ չորացեալ էին ստինքն որպէս խուխ ։ Զարհուրեցան յոյժ եւ ընթացեալ լալով առ հայրն եւ ասեն. Մեղար Աստուծոյ եւ անկար ի փորձութիւն, ընկեցեր եւ զմեզ ։

Եւ նա ասէ. Եւ զինչ է որդեակք ։ Եւ նոքա ասեն. Մարինոս կին մարդ է ։ Եւ ընթացեալ հայրն կոծէր զկուրծն եւ ծաղէր զգլուխն իւր ի վերայ մարմնոյն եւ զիրկս արկեալ ասէր. Թաղեցէք եւ զիս ընդ աղախնոյս Քրիստոսի, զի զոր ինչ ես գործեցի

6 Փետրուարի ԺԲ] եւ Մեհեկի Զ *add.* B || 7 բացին] բացեալ B || 8 երթեալ] գնացեալ B || 9 պատեսցեն] զգեցեն B || 11 ընթացեալ] ընթացան B || 14 հայրն] մեծաւ հառաչմամբ *add.* B.

car je ne suis pas digne. » Mais on l'obligea de rentrer au couvent; on lui donna à (faire) les besognes les plus répugnantes et les plus lourdes du couvent; et il les accomplissait avec joie et bonne volonté, en même temps qu'il nourrissait l'enfant.

Une nuit, il vit dans son rêve un homme lumineux, qui lui disait : « Tu viendras trouver ton repos et tu recevras la couronne à laquelle tu aspirais. » Étant entré dans la cellule (qui avait été construite) pour lui sur la pierre, il rendit son âme à Dieu, le 12 février. On ne s'en aperçut point jusqu'à ce

* A fol. 182 v° a. qu'on eut entendu les cris de l'enfant, on ouvrit la porte * et on trouva le bienheureux décédé.

On alla avertir le prieur, qui dit : « Il n'a pas fait une bonne pénitence, et il est rentré indignement à l'église. » Il donna l'ordre de l'enterrer. Les frères allèrent pour l'ensevelir comme il est de coutume chez les religieux, mais ils s'aperçurent que c'était une femme, ses seins étaient desséchés comme des brindilles sèches. Ils en furent épouvantés, accoururent en pleurant auprès du prieur et dirent : « Tu as péché contre Dieu, tu t'es laissé tomber en tentation, et tu nous y as fait tomber. »

Il leur répondit : « Qu'y a-t-il donc, mes fils ? » Ils lui dirent : « Marin est une femme. » Le prieur accourut, se frappa la poitrine, s'arracha les cheveux à la vue du corps et l'embrassa, en disant : « Enterrez-moi avec la

ընդ սա՝ թողութեան չեմ արժանի ։ Եւ ժողովեցան բազմութիւն քահանայից եւ կրօնաւորաց ի թաղումն մեծ ճգնաւորին Քրիստոսի ։ Եւ մինչդեռ աշխարհէր հայրն ի վերայ դագաղացն՝ յարուցեալ Մարինոս կանգնեաց զգլուխ իւր հոգի ոչ ունելով. կալեալ զաջոյ ձեռանէ հօրն համբուրեաց, եւ դարձեալ եդիր զգլուխն ։ Եւ ապա թաղեցին զնա սաղմոսիւք եւ օրհնութեամբ ։

Եւ յետ երից աւուրց դուստր պանդոկապետին այսահարեցաւ, եւ ուտէր զմարմինն իւր, եւ հերարձակ երթեալ անկաւ առաջի գերեզմանին, եւ խոստովանէր զմեղս իւր թէ որպէս զրպարտեաց զաղախինն Քրիստոսի. եւ առժամայն բժշկեցաւ ։

Իսկ մանուկն Սերապիոն * վարժեցաւ եւ եղեւ կրօնաւոր ընտիր, որ եւ հայր * A fol. 182 v° b
վանացն արժանաւորեցաւ լինել ։

Յայսմ աւուր տօն է Յակոբայ Ալփեայ Տեառն եղբօր, որդւոյն Յովսեփայ աստուածահօր ։

Մեհեկի Է եւ Փետրուարի ԺԳ ։ Վարք երանելոյն Մարտինոսի կրօնաւորի ։

Ծառայն Աստուծոյ Մարտինոս էր ի Կեսարիոյ Պաղեստինացւոց. եւ յորժամ եղեւ ութեւտասան ամաց եթող զծնօղսն եւ եղեւ կրօնաւոր ։ Գնաց ի լեառն եւ բնակեցաւ

2-4 ի թաղումն... եդիր զգլուխն *om.* B || 7 գերեզմանին] սրբոյն *add.* B.
13 Վարք... կրօնաւորի] Նախատօնակ քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յԵրուսաղէմ ի տաճարն ։ Եւ վարք սուրբ ճգնաւոր հօրն մերոյ Մարտինոսի կրօնաւորի եւ երկու կանանց B || 14 Մարտինոս] Մարտիանոս B — Պաղեստինացւոց] Պաղեստինեայ B.

servante du Christ, car je ne suis pas digne de pardon après tout ce que je lui ai fait. » Une multitude de prêtres et de religieux s'assembla pour l'inhumation du grand ascète du Christ. Pendant que le prieur sanglotait sur le cercueil, Marin se dressa, souleva sa tête inanimée, prit la main droite du prieur et la baisa, puis laissa retomber sa tête. On l'inhuma ensuite avec des psalmodies et des bénédictions.

Trois jours après, la fille de l'aubergiste fut possédée du démon; elle se mordait la chair, et les cheveux en désordre, elle vint se jeter devant la tombe, et confessa le péché qu'elle avait commis en calomniant la servante du Christ. Elle fut aussitôt guérie.

Le jeune Sérapion * grandit et devint un excellent religieux, qui fut digne * A fol. 182 v° b.
d'être élu prieur du couvent.

En ce jour, fête de Jacques d'Alphée, frère du Seigneur, fils de Joseph, le père du Seigneur.

7 MÉHÉKI, 13 Février.

Vie du bienheureux moine Martin.

Le serviteur de Dieu, Martin, était de Césarée de Palestine. Lorsqu'il eut atteint ses dix-huit ans, il quitta ses parents et se fit moine. Il se rendit à la

յայրի միում ամս հնգետասան, եւ խստակրօն ճգնութեամբն շնորհեցաւ նմա յԱստուծոյ բժշկութեան շնորհ եւ բժշկէր աղօթիւք զամենայն ցաւս հիւանդաց ։

Իսկ բարիատեացն սատանայ բազում փորձութիւնս յարուցանէր ի վերայ նորա ։ Եւ ի միում աւուր մինչդեռ աղօթէր, երեւեցաւ սատանայ ի կերպարանս վիշապի, եւ կամէր կործանել զայրն յորում բնակէր, եւ աղօթեալ երանելոյն՝ ամօթալից անյայտ լինէր ։ Եւ դարձեալ ի միւս այլ աւուր՝ եղեւ ի կերպարանս երիտասարդի եւ սպառնայր կորուսանել զնա ։ Եւ զկին մի պոռնիկ յարոյց ի գայթակղութիւն նմա . որոյ առեալ հանդերձս մեծագինս եւ ոսկի զարդարանք եդիր յաման, եւ ինքն պատառատուն եւ աղքատազգեստ լեալ՝ ի գիշերի գնաց մերձ յայրն, եւ աղաղակէր . Ողորմեաց ինձ
* A fol. 183 r° a. ծառայ Աստուծոյ * զանզի մոլորեցայ ի ճանապարհէն, եւ գազանք շուրջ պատեալ կամին ուտել զիս ։ Եւ նորա յարուցեալ եմոյծ զկինն յայրն, եւ ետ նմա արմաւս եւ ջուր, եւ ինքն եմուտ ի ներքսագոյն այրն ։ Եւ կինն եհան յամանէն զզարդսն՝ զգեցաւ եւ նստաւ զարդարեալ ։

Եւ ընդ առաւօտն ելեալ երանելոյն՝ ետես զկինն յայլ կերպս, կարծեաց եթէ դիւական երեւմունք են հարցանէր . Ով ես դու, կամ ուստի, եւ վասն որո՞յ եկիր ։ Ասէ կինն . Լուայ զքէն եւ ցանկացայ քեզ, եւ եկի զի ամուսնացայց քեզ ։ Եւ սկսաւ

1 շնորհեցաւ նմա] շնորհս էառ B || 2 բժշկութեան շնորհս *om.* B || 4-7 եւ ի միում աւուր ... կորուսանել զնա] եւ նա աղօթիւք յաղթէր ամենայնի B || 14 կերպս] կերպարանս B.

montagne, vécut dans une grotte pendant quinze ans, et par un ascétisme sévère il reçut de Dieu le don de guérison : il guérissait par ses prières tous les maux des infirmes.

Le démon, ennemi du bien, suscita bien des tentations contre lui. Un jour, tandis qu'il priait, le démon lui apparut sous les formes d'un dragon, cherchant à démolir la grotte qu'il habitait. Le bienheureux pria et le (démon) disparut honteusement. Un autre jour, il apparut sous les formes d'un jeune homme, qui menaçait de le faire périr. Il excita aussi une prostituée, afin qu'elle le scandalisât; celle-ci donc, ayant pris des vêtements riches et des bijoux d'or enveloppés dans un paquet, tandis qu'elle se revêtait d'habits déchirés et pauvres, se rendit la nuit près de la grotte en criant : « Aie pitié
* A fol. 183 r° a. de moi, serviteur de Dieu; * car je me suis égarée hors de mon chemin, et les bêtes sauvages qui m'entourent veulent me dévorer. » Il se leva et fit entrer la femme dans la grotte, il lui offrit des dattes et de l'eau, et se retira lui-même dans la partie la plus reculée de la grotte. La femme sortit de son paquet tous ses atours, s'habilla et s'assit toute parée.

Le matin, le bienheureux, s'étant levé, aperçut la femme transformée; il crut à une apparition diabolique et demanda : « Qui es-tu? D'où viens-tu? Et pourquoi es-tu venue? » La femme répondit : « J'ai entendu (parler) de toi, je t'ai désiré et je suis venue pour me marier avec toi. » Et la femme commença

կինն ի գրոց յիշեցուցանել նմա զԵնովքայ եւ որ զկնի արդարոցն թէ որպէս կանայս ունելով հաճոյ եղեն Աստուծոյ :

Ասէ Մարտինոս. Եւ որպէս ապրիմք զի ոչ գոյ իմ եւ ոչինչ : Ասէ կինն. Դու միայն անցոյ զփափաքս իմ, ես տունս գեղեցիկս ունիմ, եւ ծառայս եւ ինչս բազումս. եւ այլ բանս պատրողականս խօսէր եւ գիրկս արկեալ համբուրէր եւ փանէր ընդ ծածուկ մարմինն եւ խօսէր ծածուկ բանս եւ այլս՝ մինչեւ խախտեաց զայրն եւ եհան յահէն Աստուծոյ :

Եւ նա ասէ. Տեսից մի գուցէ եկեսցէ ոք յանկարծակի եւ գտցէ զմեզ ի մեղս : Եւ ելեալ արտաքոյ այրին կանգնեցաւ ի վերայ բարձր վիմի եւ նայէր ի ճանապարհն : Եւ մինչդեռ զաչս այսր եւ անդր ածէր՝ շրջեաց Աստուած զմիտս նորա զի մի կորիցէ այնչափ վաստակ ճգնութեանն զոր * ի մանկութենէ աշխատեցաւ. եւ սկսաւ լալ եւ * A fol. 183 r° b
աղօթել : Եւ իջեալ ի վիմէն եմուտ ի այրն, եւ ժողովեաց խռիւ այրեաց հրով, եւ մտեալ եկաց ի վերայ ոտիցն ի մէջ հրոյն բոկ, եւ այրեցաւ ամենայն մարմինն իւր, եւ ասէ ցանձն իւր. Տես Մարտինէ եթէ կարես համբերել անշէջ հրոյն՝ մերձեցիր ի կինդ :

Եւ տեսեալ կինն զոր արար Մարտինոս՝ զղջացաւ, եւ հանեալ զզարդն՝ ընկէց ի հուրն եւ այրեաց : Եւ կալեալ զոտից երանելոյն խոստովան եղեւ զմեղս իւր, եւ

4 անցոյ զփափաքս իմ] ամուսնացիր ընդ իս B || 5-6 եւ գիրկս ... եւ այլս *om.* B || 6 եհան Աստուծոյ] եւ յօժարեցոյց B || 16 այրեաց] վառեաց B — խոստովան եղեւ զմեղս իւր] խոստովանեցաւ լալով զյանցանս իւր B.

à lui rappeler, d'après les (saintes) Écritures, comment Énoch et les autres justes après lui, en prenant des femmes, se rendirent agréables à Dieu.

Martin répondit : « Comment vivrons-nous, puisque je ne possède absolument rien? » La femme dit : « Accomplis seulement mes désirs, car, moi, je possède de belles maisons, des domestiques et beaucoup de biens. » Elle ajouta d'autres propos trompeurs, et l'ayant pris dans ses bras, l'embrassait, toucha les parties cachées de son corps, lui disait des paroles furtives, etc., au point qu'elle l'ébranla de la crainte de Dieu.

Il lui dit alors : « Je vais voir, de peur que quelqu'un ne survienne à l'improviste et nous trouve dans le péché. » Étant sorti de la grotte, il monta sur un rocher élevé et scruta la route. Tandis qu'il promenait son regard de-ci de-là, Dieu lui retourna ses idées, de peur que ne se perdît tant de labeur ascétique, auquel il s'était appliqué * dès sa jeunesse, et il se mit à pleurer et * A fol. 183 r° b.
à prier. Il descendit du rocher, rentra dans la grotte, ramassa des herbes sèches, y mit le feu, et se plaça debout les pieds nus au milieu des flammes, et tandis que tout son corps brûlait, il se disait à lui-même : « Regarde, Martin ; si tu peux résister au feu éternel, approche de cette femme. »

Voyant ce que Martin avait fait, la femme eut un remords, et se dépouillant de ses ornements, elle les jeta dans le feu et les brûla. Puis, saisissant les

ուխտեաց որ ոչ դարձցի ի տուն իւր՝ այլ ուր եւ կամեսցի կեցուսցէ զհոգին իւր ։ Եւ նա յուղարկեաց զնա ի վանս ճգնաւոր կանանց. եւ անդ դադարեալ աստուածահաճոյ վարուք եւ մեծաւ ճգնութեամբ ամս հնգետասան՝ հանգեաւ արդարացեալ շնորհօքն Աստուծոյ, որ եւ ի գերեզման նորա բազում նշանք լինին ի նեղեալս եւ ի հիւանդս ։

Իսկ երանելոյն Մարտինեայ յետ եօթն ամսոյ վէրքն անձինն հրայրեացքն ողջացան. եւ երկեաւ այլ դադարել ի լերինն՝ զի մի դարձեալ փորձեսցէ զնա սատանայ, եւ ասէ. Գնացից յայնպիսի տեղի ուր անհնարին իցէ մարդոյ գալ առ իս ։

Եւ երթեալ ի ծովեզրն եգիտ նաւավար մի, հարցանէր եթէ իցէ՞ փոքր կղզի ի մէջ ծովուն անբնակ ։ Ասէ նաւավարն. Է վէմ սուր եւ անջուր՝ աւուր միոյ հեռի ի ցամաքէ ։ Եւ աղաչեաց զնաւավարն, եւ առեալ ի նաւն տարաւ զնա ի վէմն եւ ելեալ ի նաւէն
* A fol. 183 v° a. նստաւ ի վերայ վիմին, եւ ասէ. Ես այլ աստի ոչ գնացից եւ պատուիրեաց * նմա երիցս անգամ ի տարւոջն տանել նմա հաց եւ ջուր ։ Եւ այնպէս Մարտինոս առաւելագոյն ճգնէր քան զառաջինն ։

Եւ ոչ անդ թողլ ետ նմա սատանայ ի փորձանաց, այլ յորժամ շարժէր ծովն ի հողմոց՝ երեւեցուցանէր նմա զալիս ծովուն բարձր քան զինքն ի վերայ վիմին ։ Եւ այլ

1 իւր] նորա B || 2 յուղարկեաց] յղեաց B || 7 գնացից] երթից B || 14 — pag. [1077] l. 3 այլ յորժամ... յաղթեաց սատանայ] եւ նա աղօթիւք զօրանայր եւ համբերէր նեղութեանցն, եւ այնպէս եկաց ի վիմին ամս տասն B.

pieds du bienheureux, elle confessa ses péchés et promit de ne plus retourner à sa maison, mais de vivre là où il aurait décidé, pour le salut de son âme. (Martin) l'envoya au monastère des femmes ascètes, où elle mena une vie agréable à Dieu avec beaucoup d'ascétisme pendant quinze ans et reposa justifiée par les grâces de Dieu. Beaucoup de miracles ont lieu auprès de sa tombe en faveur des affligés et des malades.

Les plaies causées par la brûlure sur le corps du bienheureux Martin furent guéries après sept mois; il craignit alors de rester encore dans la montagne, de crainte que le démon le tentât de nouveau, et dit : « J'irai dans un endroit tel où il sera impossible à qui que ce soit de venir à moi. »

Il se rendit donc au bord de la mer, trouva un matelot, et lui demanda s'il n'y avait pas une petite île déserte au milieu de la mer. Le matelot lui répondit : « Il y a un rocher pointu et aride, à une journée de distance de la terre ferme. » Il pria le matelot, qui le prit dans sa barque et le conduisit au rocher. Ayant quitté la barque, il alla s'asseoir sur le rocher et dit : « Je ne
* A fol. 183 v° a. m'éloignerai plus d'ici, » et il* recommanda (au matelot) de lui apporter trois fois par an du pain et de l'eau. C'est ainsi que Martin s'appliqua à un ascétisme supérieur au premier.

Cependant, là non plus, le démon ne le laissa quitte de tentations; car lorsque la mer était soulevée par les vents (le démon) lui faisait apparaître les vagues de la mer plus hautes que lui au sommet du rocher. Il lui faisait voir

բազում երեւմունս երեւեցուցանէր, եւ նա աղօթիւք զօրանայր եւ համբերէր նեղութեանցն. եւ այնպէս արարեալ ի վիմին զամս տասն:

Եւ ապա միւս եւս այլ փորձութիւնս յարոյց սատանայ: Ի միում աւուր նաւ մի երթայր լի մարդով՝ արամբք եւ կանամբք, եւ ալեկոծեալ ի հողմոց զարկաւ նաւն ի վէմն, եւ հերձաւ ի բազում մասունս, եւ ամենեքեան որք ի նաւին էին կորեան. բայց միայն աղջիկ մի մատաղ՝ կալեալ զտախտակ մի նաւին, մերձ էր ի խեղդել. եւ մերձ լեալ ի վէմն աղաղակէր. Ողորմեա ինձ ծառայ Աստուծոյ, եւ մի թողուր զիս կորնչել: Եւ տեսեալ երանելւոյն զիտաց եթէ ի չարէն է փորձութիւնն, իջեալ ի ծովն եհան զկինն, եւ տարեալ զհացն եւ զջուրն որ մնացեալ էր եցոյց նմա, եւ եթէ որչափ կերիցէ եւ արբցէ յաւուրն՝ մինչեւ եկեսցէ նաւավարն. Երկու ամիսք անցեալ են, եւ յետ երկուց ամսոց այլ գալոց է, ասէ, նաւավարն, եւ հանցէ զքեզ ի ցամաք:

Եւ տեսանէ զկինն մանուկ եւ գեղեցիկ եւ ասէ. Անհնարին է խոտոյ եւ հրոյ ի միասին կեալ. եւ յաղօթս կացեալ արտասուօք՝ ընկէց զինքն ի ծովն: Եւ հրամանաւն Աստուծոյ երկու * դլփինք բարձին զնա եւ հանին ի ցամաքն. եւ եդեալ զծունկսն * A fol. 183 v° b.
յերկիր՝ գոհացաւ զԱստուծոյ եւ ասէ ցինքեան. Զինչ արարից զի ոչ ի լերինն եւ ոչ ի

6 մերձ] մօտ B || 8 եթէ ի չարէն է փորձութիւնն] զփորձանս չարին B || 9 զկինն] զաղջիկն B || 14 երկու դլփինք բարձին զնա] ալիք ջուրցն վարեցին զերանելին B || 15 ցինքեան] ցանձն իւր B.

encore d'autres apparitions, mais (Martin) se fortifiait par les prières et endurait les tribulations. Il vécut ainsi dix années sur le rocher.

Le démon lui suscita cependant une autre tentation. Un jour, passait un navire rempli de monde, hommes et femmes. Battu par les vents, le navire heurta le rocher et se brisa en un grand nombre de morceaux. Tous ceux qui se trouvaient dans le navire périrent à l'exception d'une toute jeune fille qui s'était cramponnée à une planche du navire et était sur le point de se noyer. Comme elle se trouvait près du rocher, elle criait : « Aie pitié de moi, serviteur de Dieu, et ne me laisse point périr. » Ce qu'ayant vu, le bienheureux comprit que c'était une tentation de l'esprit mauvais, il descendit à la mer, en retira la femme, lui apporta ce qui lui restait de pain et d'eau, le lui montra, en lui indiquant ce qu'elle devait manger et boire par jour jusqu'à l'arrivée du matelot. « Voilà déjà deux mois de passés ; d'ici deux mois, dit-il, le matelot reviendra et te déposera sur le rivage. »

Il vit que la femme était jeune et belle, et dit : « Il est impossible à l'herbe et au feu de vivre ensemble. » Et, s'étant mis à prier avec larmes, il se jeta à la mer. Par ordre de Dieu, deux * dauphins le soulevèrent et le dépo- * A fol. 183 v° b.
sèrent sur le rivage. (Martin) mit les genoux à terre, rendit grâces à Dieu et se dit à lui-même : « Que ferai-je, puisque le démon ne me laisse tranquille, ni

ձովու թողլ ես ինձ ստանալ. լաւ է ինձ կատարել զհրամանս Տեառն. Եթէ հալածեսցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք ի միւսն :

Եւ զայս ասացեալ սկսաւ փախչել եւ ասել. Փախիր, Մարտինէ, զի մի հասցէ քեզ փորձութիւն : Փախիր Մարտինէ, մի կայցես ի տեղւոջ զի մի ըմբռնեսցիս ի հաղթս որսողին : Եւ այնպէս փախստի կատարեալ զժամանակս կենաց իւրոց՝ ոչ ինչ բառնալով ինքեան ոչ հաց եւ ոչ գաւազան. եւ յորժամ լսէր զբարեպաշտ եւ զերկիւղած մարդոյ՝ առ նա հանգչէր ժամ մի կամ զիշերի կամ ցերեկի : Եւ զերկոտասան ամ փախստական լեալ հալածէր զանձն իւր որպէս թէ ոք թշնամի զհետ ընթանայ :

Եւ ընդ բազում քաղաքս անցեալ գնաց յԱթէնս, եւ երեւեցոյց Աստուած եպիսկոպոսին զգալուստ եւ զմահ երանելոյն : Եւ մտեալ յեկեղեցին աղօթեաց եւ գիտաց զմահ իւր, եւ անկեալ ի վերայ միոյ աթոռոյ եկեղեցւոյն, եւ աղաչեաց զսպասաւոր եկեղեցւոյն կոչել առ ինքն զեպիսկոպոսն : Եւ նա երթեալ ասէ. Աղուաշ աբեղա մի անկեալ ի վերայ աթոռոյ ասէ. Կոչեցէք առ իս զեպիսկոպոսն : Եւ յիշեաց զերազն
* A fol. 184 r° a. զոր ետես եպիսկոպոսն եւ ասէ. Աղուաշ դու ես՝ այլ նա ճշմարիտ ծառայ * Աստուծոյ է. եւ փութանակի գնաց առ նա :

3 զի մի հասցէ քեզ փորձութիւն *om.* B || 12 անկեալ] անկաւ B || 13-14 եւ նա երթեալ... զեպիսկոպոսն *om.* B.

à la montagne, ni à la mer? Mieux vaut accomplir les ordres du Seigneur : *Lorsqu'on vous poursuivra dans une ville, fuyez dans une autre* [1]. »

Ce disant, il se mit à fuir, en répétant : « Sauve-toi, Martin, pour que la tentation ne t'atteigne pas. Sauve-toi, Martin, ne reste pas dans un endroit pour que tu ne sois pas pris dans les filets du chasseur. » Il passa ainsi les jours de sa vie en vagabond, sans se munir de rien, ni de pain, ni de bâton. Lorsqu'il entendait parler d'un homme pieux et craignant Dieu, il se reposait une heure auprès de lui, soit de nuit soit de jour. Il remplit douze années de cette (vie) errante, se persécutant lui-même, comme si un ennemi lui courait après.

Après avoir traversé de nombreuses villes, le bienheureux se rendit à Athènes, où Dieu avait révélé à l'évêque son arrivée et sa mort. Il pénétra dans l'église, pria et connut l'heure de sa mort; il se laissa tomber sur un siège de l'église, pria le ministre de l'église de faire venir l'évêque. (Le desservant) alla dire : « Un moine fou tombé sur un siège dit : Appelez à moi l'évêque. » L'évêque se souvint du rêve qu'il avait eu et dit : « C'est toi
* A fol. 184 r° a. qui es fou, car celui-là est un vrai serviteur * de Dieu. » Et il s'empressa d'aller le trouver.

1 Matth., x, 23.

Եւ Մարտինոս կանգնել եւ գնալ առաջի ոչ կարաց, այլ զձեռս համբարձեալ ետ ողջոյնն, եւ ասէ ցեպիսկոպոսն. Օրհնեա՛ զիս տէր, եւ յանձնեա՛ զիս Աստուծոյ քանզի յոյժ նուաղեալ եմ ։ Եւ պատմեաց նմա զամենայն եղեալսն ի լերինն եւ ի ծովուն ։ Եւ եպիսկոպոսին աչքն լցան արտասուօք, անկաւ ի վերայ լանջաց նորա եւ ասէ. Մանաւանդ դու օրհնեա՛ զիս հայր սուրբ ։ Եւ նորա տարածեալ զձեռս իւր յերկինս ասէ. Տէր Յիսուս Քրիստոս ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ։ Եւ զայս ասացեալ՝ ժպտեալ երեսօք աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի Փետրուարի ԺԳ ։

Իսկ կինն որ ի ծովու վիմին մնաց՝ համբերեաց զերկու ամիսն. եւ յորժամ գնաց նաւավարն հացովն եւ ջրովն, ետես զկինն եւ երկեաւ, եւ սկսաւ վարել զնաւն յետս ։ Եւ կինն ձայնէր. Մի երկնչիր տէր իմ եւ եղբայր, եկեսջիր եւ պատմեցից քեզ զեղեալ գործն, զի ես եմ քրիստոնեայ ։

Եւ յորժամ մօտեցաւ, եհարց նաւապետն եթէ. Ո՞ւր իցէ աբեղայն որ ի վիմին էր ։ Եւ կինն պատմեաց նմա զամենայն եղեալսն ։ Եւ սկսաւ նաւավարն լալ, եւ ասէ ցկինն. * Էջ ի վիմէդ եւ մուտ ի նաւս եւ հանից զքեզ ի ցամաք, եւ երթիցես ի տուն քո եւ յազգականս քո ։ * A fol. 184 r° b.

Ասէ կինն. Մի տէր իմ, մի հաներ զիս ի վիմէս, այլ արա՛ առ իս ողորմութիւն, եւ

7 Փետրուարի ԺԳ] եւ Մեհեկի Է *add.* B || 11 ես եմ] ես կին եմ B || 12 վիմին էր] եւ զինչ եղեւ ասա ինձ *add.* B.

Martin ne put se redresser et aller au-devant (de l'évêque), mais il leva les mains, donna le salut et dit à l'évêque : « Bénis-moi, seigneur, et recommande-moi à Dieu, car je me sens très faible. » Et il lui raconta tout ce qui s'était passé à la montagne et à la mer. Les yeux de l'évêque se remplirent de larmes, il se pencha sur la poitrine (de Martin) et dit : « C'est plutôt à toi, père saint, de me bénir. » (Le bienheureux) étendit ses bras au ciel et dit : « Seigneur Jésus-Christ, je remets mon âme entre tes mains. » Ce disant, d'un visage souriant il rendit son âme à Dieu, le 13 février.

Quant à la femme qui était restée sur le rocher au milieu de la mer, elle attendit deux mois, et lorsque le matelot s'y rendit avec du pain et de l'eau, en y apercevant la femme, il eut peur et se mit à faire marcher la barque en arrière. Mais la femme cria : « Ne crains pas, mon seigneur et frère, viens et je te raconterai ce qui s'est passé, car je suis chrétienne. »

Lorsqu'il se fut approché, le matelot demanda : « Où est le moine qui vivait sur le rocher? » La femme lui raconta tout ce qui s'était passé. Le batelier se mit à pleurer et dit à la femme : * « Descends du rocher, prends place dans ma barque et je te déposerai sur le rivage, tu iras chez toi et auprès de tes parents. * A fol. 184 r° b.

La femme lui répondit : « Non, mon seigneur, ne me fais pas quitter le

զոր ինչ նմա բերէիր՝ բեր եւ ինձ, եւ ած առ իս զկին քո թէ ունիցիս, եւ աբեղայի խարգելէն պարեգօտ եւ մազեղէնս, եւ առցես զորս զգեցեալս եմ, եւ վարձս առցես յԱստուծոյ, զի առ Աստուած մի է այր եւ կին :

Եւ զայս լուեալ նաւավարին եւ տեսեալ զկնոջն փափաքումն ասէ . Արարից որպէս ասացերդ, դու զօրացիր եւ մի երկնչիր, այլ հաստատուն կաց սրտիւ եւ մտօք : Եւ տուեալ նմա զհացն եւ զջուրն դարձաւ ի տուն իւր, եւ առ զոր ինչ պատուիրեաց նմա եւ զկինն իւր եւ նաւեաց ի վէմն :

Եւ ելեալ կնոջն ողջոյն ետուն միմեանց եւ մերկացեալ զկանացի աշխարհական զգեստն՝ զգեցաւ իբրեւ այր զխորգն եւ զմազեղէնն . եւ պատուիրեաց նոցա զի տարցեն նմա այծենի եւ վուշ . Զի վաստակեցից, ասէ, եւ ձրի հաց ոչ կերայց : Եւ նոքա երթեալ արարին որպէս պատուիրեաց . Եւ այնպէս արարեալ կնոջն ի վիմին ի մէջ ծովուն ամս ութ մեծաւ ճգնութեամբ եւ առաքինի վարուք, եւ երկու ամսով յառաջ քան զգալ նաւավարին՝ հանգեաւ աղջիկն խաղաղութեամբ ի Քրիստոս :

Եւ ի կատարել երկուց ամսոցն գնաց նաւավարն կնաւն ի վէմն, եւ գտին զերանելին մեռեալ որպէս կենդանի ի քուն, ունելով ընդ ինքեան զհացն եւ զջուրն : Տեսին եւ լացին ուժգին, եւ ողջունեալ * զմարմինն իջուցին ի նաւն եւ տարան ի

* A fol. 184 v° a.

2 զգեցեալս եմ] եւ զգեցուցէ ինձ զխորգն եւ զմազեղէնն *add.* B || 16 տեսին *om.* B — տարան] եկին B.

rocher, mais fais-moi la charité de m'apporter ce que tu lui apportais, amène-moi ta femme si tu en as une, et une robe monastique, une tunique et un vêtement de poil et tu reprendras les effets que je porte et tu seras récompensé par Dieu, car devant Dieu l'homme et la femme ne font qu'un. »

Le batelier, après avoir écouté et vu les vœux de la femme, lui dit : « Je ferai comme tu viens de dire, prends courage et ne crains rien, sois ferme de cœur et d'esprit. » Il lui donna le pain et l'eau et retourna à sa maison, il prit ce qu'on lui avait recommandé et sa femme et s'embarqua pour le rocher.

Sa femme débarqua, (les deux femmes) se saluèrent mutuellement ; et puis (la solitaire) s'étant dépouillée des vêtements féminins mondains, se revêtit comme un homme de la bure et du vêtement de poil. Elle leur recommanda de lui apporter (du poil) de chèvre et du chanvre, « pour que je travaille, dit-elle, et ne mange point du pain gratuitement ». Ils partirent et firent ce qu'elle leur avait recommandé. Cette femme vécut sur le rocher au milieu de la mer huit années en grand ascétisme et d'une vie vertueuse et deux mois avant l'arrivée du batelier la jeune fille reposa en paix dans le Christ.

A la fin des deux mois, le batelier vint au rocher accompagné de sa femme ; ils y trouvèrent la bienheureuse défunte comme une vivante dans le sommeil, ayant auprès d'elle le pain et l'eau. A cette vue ils versèrent des larmes amères, et baisant * le corps, ils le descendirent dans la barque, le condui-

* A fol. 184 v° a.

ցամաք ի քաղաքն Կեսարիա Պաղեստինեայ, եւ պատմեցին եպիսկոպոսին զամենայն եղեալսն : Եւ մեծաւ պատուով եւ երգօք հոգեւորօք թաղեցին ի նշանաւոր տեղի. եւ բազում նշանք լինէին ի նեղեալս եւ ի հիւանդս :

Յայսմ աւուր տօն է առաքելոյն Մատաթեայ, որ փոխանակ Յուդայի համարեցաւ :

Մեհեկի Ը եւ Փետրուարի ԺԴ ։ Գալուստ Տեառն քառասնօրեայ ի տաճարն, ըստ Հայոց :

Յորժամ ծնաւ ըստ մարմնոյ Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ ի սուրբ կուսէն Մարիամայ, յետ ութ աւուր թլփատեաց զնա Յովսէփ, եւ ի լնուլ քառասուն աւուր առեալ Յովսէփ զՄարիամ եւ զմանուկն, զոր անուանեաց ի թլփատութեանն Յիսուս, որպէս ասաց նմա հրեշտակն, գայ յԵրուսաղէմ ի տաճարն ըստ օրինացն յանդիման առնել Տեառն : Եւ եբեր պատարագս զոյգս տատրակաց եւ երկուս ձագս աղաւնեաց :

Եւ ծերունի քահանայն Սիմէոն որ էր ամաց երեք հարիւր եւ յիսնից՝ կայր ի տաճարին, որ հրաման էր առեալ ի Հոգւոյն սրբոյ ոչ տեսանել զմահ մինչեւ տեսցէ զօծեալ Տեառն : Նա առեալ ի գիրկս իւր զՅիսուս ասաց . Արդ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր

2 եղեալսն] որպէս եղեւ B.

sirent à la terre ferme, à la ville de Césarée de Palestine, et racontèrent à l'évêque tout ce qui s'était passé. On l'enterra, avec de grands honneurs et des chants religieux, dans un endroit choisi, où de nombreux miracles eurent lieu sur les infirmes et les malades.

En ce jour, fête de l'apôtre Mathias, qui fut compté en remplacement de Judas.

8 MÉHÉKI, 14 Février.

Venue du Seigneur au Temple lorsqu'il eut quarante jours, selon les Arméniens.

Lorsque Jésus-Christ naquit selon la chair, à Bethléem, de la sainte vierge Marie, Joseph le fit circoncire huit jours après ; et lorsque les quarante jours furent accomplis, Joseph prit Marie et l'enfant, auquel il avait donné le nom de Jésus à la circoncision, ainsi que l'ange lui avait ordonné, et il vint au Temple à Jérusalem pour le présenter au Seigneur, selon la Loi. Il apporta pour offrir en sacrifice un couple de tourterelles et deux petits de colombes.

Or, le vieux prêtre Siméon, qui était âgé de trois cent cinquante ans et demeurait dans le Temple, avait reçu l'ordre de l'Esprit-Saint de ne point voir la mort jusqu'à ce qu'il eût vu l'oint du Seigneur. Il prit Jésus entre ses bras et dit : « *C'est maintenant, Seigneur, que, selon votre parole, vous laissez votre serviteur s'en aller en paix, car mes yeux ont vu votre salut, que vous avez préparé*

պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց, լոյս ի յայտնութիւն հեթանոսաց եւ փառք ժողովրդեան * քում Իսրայէլի :

* A fol. 184 v° b.

Եւ էին զարմացեալ Յովսէփ եւ Մարիամ ի վերայ բանիցն Սիմէոնի : Եւ օրհնեաց Սիմէոն զՄարիամ եւ զՅովսէփ, եւ ասէ ցՄարիամ վասն մանկանն. Ահա սա կայ ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի, եւ ի նշան հակառակութեան, եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր, եւ յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք : Եւ զայս ասացեալ վախճանեցաւ ծերն բազմամեայ ի տաճարին :

Եւ Աննա մարգարէուհի, դուստր Փանուէլի, յազգէ Ասերի, որ կացեալ էր ընդ առն իւրում ամս եօթն, յետ կուսութեանն եւ էր ամաց ութսուն եւ չորից, որ ոչ մեկնէր ի տաճարէն զցայց եւ զցերեկ այլ կայր պահօք եւ աղօթիւք. եւ սա ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զԱստուծոյ եւ խօսէր վասն մանկանն թէ. Սա է որդին Աստուծոյ զոր ասացին մարգարէքն, որ այժմ յայտնեալ երեւեցաւ փրկիչ մեզ :

Եւ գնացին Մարիամ եւ Յովսէփ հանդերձ մանկամբն ի Նազարէթ, եւ անտի փախեան յԵգիպտոս՝ զի մի սպանցէ Հերովդէս զմանուկն : Եւ կատարի տօն Տեառնընդառաջին Փետրուարի ԺԴ, ըստ Հայոց եւ ըստ Յունաց :

devant tous les peuples, pour être la lumière qui éclairera les nations et la gloire de * *votre peuple d'Israël*[1]. »

* A fol 184 v° b.

Joseph et Marie étaient dans l'admiration des choses que disait Siméon. Et Siméon bénit Marie et Joseph, et dit à Marie au sujet de l'enfant : « *Cet enfant est au monde pour la ruine et le salut d'un grand nombre en Israël, et en signe de contradiction ; quant à toi, un glaive transpercera ton âme ; et ainsi seront révélées les pensées cachées dans le cœur d'un grand nombre*[2]. » Après avoir dit cela le vieillard, rempli d'années, mourut dans le Temple.

La prophétesse Anne, fille de Phanuel, de la tribu d'Aser, qui n'avait vécu, depuis sa virginité, que sept ans avec son mari, et était âgée de quatre-vingt-quatre ans, qui ne quittait point le Temple nuit et jour et servait dans le jeûne et dans la prière, elle aussi, survenant à cette heure, se mit à louer le Seigneur et à dire de l'enfant : « C'est le Fils de Dieu, dont ont parlé les prophètes, qui maintenant s'est révélé et nous est apparu pour nous sauver. »

Marie et Joseph se rendirent avec l'enfant à Nazareth et de là s'enfuirent en Égypte, pour qu'Hérode ne tuât pas l'enfant. La fête de la Présentation du Seigneur a lieu le 14 février, selon les Arméniens et les Grecs.

1. Luc, II. 28-32. — 2. Luc, II, 34-36.

Յայսմ աւուր վկայութիւն Փաւստեայ կուսին ։

Ի ժամանակս Մաքսիմիանոսի կռապաշտ արքային ի քաղաքին Կիզիկոյ, էր Փաւստեա քրիստոնէից դուստր, եւ մնաց որբ երեքտասան ամաց ։ Եւ եղեւ զգաստ եւ պարկեշտ եւ պահօք եւ աղօթիւք ամրացուցանէր զկուսութիւնն, եւ մաքրութեամբ լնէր սրբոց պատուիրանաց ։

Լուաւ թագաւորն վասն նորա եւ առաքեաց զմի ի մեծ իշխանացն՝ որոյ * անուն էր Եւիլասիոս, ի Կիզիկոն քաղաքն առ կոյսն Փաւստեա, եւ հրամայեաց նմա որ եթէ դառնայ ի կուռսն, տարցէ զնա պատուով եւ փառօք առ ինքն, ապա թէ ոչ՝ խեղդեսցէ զնա ի ծովն ։ * A fol. 185 rº a.

Եւ երթեալ Եւիլասիոս ի Կիզիկոն, ետես զկոյսն զի եւս տղայ ․ կոչեաց առ ինքն եւ խրատ տայր աղաչանօք ուրանալ զՔրիստոս եւ պաշտել զկուռսն ։ Եւ ասէ կոյսն․ Ես կոյր եւ խուլ եւ համր աստուածս ոչ պաշտեմ, եւ հայր ունիմ յերկինս զՏէրն իմ Յիսուս Քրիստոս․ եւ ոչ կարեմ թողուլ զնա եւ կորուսանել զհայրենի ժառանգութիւն իմ ։

Եւ սկսաւ Եւիլասիոս սպառնալեօք ահացուցանել զնա ։ Եւ նա ասէ․ Մի

1 վկայութիւն] սրբուհւոյն *add.* B || 2 քաղաքին] քաղաքէն B || 3 քրիստոնէից] մեծատանց *add.* B || 5 պատուիրանաց] եւ բանիւ եւ օրինակաւ իւրով դարձուցանէր զբազումս յաստուածպաշտութիւն *add*, B || 6 իշխանացն] որ քուրմ էր կռոց *add.* B || 10 տղայ] տկար B.

En ce jour, martyre de la vierge Fausta.

Aux jours de l'empereur impie Maximien, vivait, dans la ville de Cyzique. Fausta, fille de parents chrétiens, devenue orpheline à l'âge de treize ans. Elle était honnête et pudique, fortifiant sa virginité par les jeûnes et les prières, et accomplissait avec vigilance les saints commandements.

L'empereur, ayant entendu parler d'elle, envoya un des grands princes, dont * le nom était Évilasius, à la ville de Cyzique auprès de la vierge Fausta, lui ayant ordonné que, si elle se convertissait aux idoles, il la lui conduisît avec honneurs et gloire, mais, dans le cas contraire, qu'il la noyât dans la mer. * A fol. 185 rº a.

Évilasius se rendit à Cyzique, vit que la vierge était encore une enfant, l'appela à lui et lui conseilla avec supplication de renier le Christ et d'adorer les idoles. La vierge lui répondit : « Je n'adore point des dieux aveugles, sourds et muets; j'ai pour père au ciel mon Seigneur Jésus-Christ; je ne peux point l'abandonner et perdre mon héritage paternel. »

Évilasius se mit à l'intimider par des menaces. Elle lui dit : « Ne me crois pas sotte; bien que par l'âge je sois une enfant, par le cœur et l'esprit je suis

համարիր զիս անխմայ, զի թէպէտ հասակաւ տղայ եմ այլ սրտիւ եւ մտօք կատարեալ եմ ։ Եւ հրամայեաց Եւիլասիոս եւ գերծին զամենայն հերս գլխոյն վասն նախատանաց աղջկանն, եւ ի կախաղանին հարկանէին բրօք ։ Եւ յանկարծակի եղեւ որոտումն եւ կայծակունք եւ բազումք այրեցան ։ Եւ երկեաւ Եւիլասիոս եւ ասէ ցկոյսն. Ասա ինձ ստոյգ վասն քո, տեսանեմ որ կախարդութիւն առնես ։ Ասէ Փաւստա. Որպէս պատկեր մարդոյ ոչ զգայ տանջանաց, նոյնպէս եւ մարմինս իմ ոչ վշտագնի ի չարչարանացդ, վասն զի հոգիս իմ հաստատուն է առ Աստուած ։

Եւ ապա բեւեռեցին զնա ի փայտեայ տապան եւ սղոցեցին, եւ յոյժ աշխատեցան դահիճքն եւ խորտակեցան սղոցքն, եւ ամենեւին վիրալին Քրիստոսի ոչ եղեւ խոց ։
* A fol. 185 r° b. Ընկեցին ի հուր եւ մնաց ամբողջ ։ Եւ ասէ * Եւիլասիոս. Յոյժ զարհուրիմ ընդ սքանչելի գործս քո ։ Եւ սկսաւ աղախինն Քրիստոսի պատմել նմա աստուածային պատուիրանացն վարդապետութիւնն, եւ դարձոյց զԵւիլասիոս ի գիտութիւն ճշմարտութեան, եւ հրամայեաց արձակել զսրբուհի կոյսն ի տանջանաց ։

Եւ մի ի ծառայիցն Եւիլասիոսի գնաց առ թագաւորն եւ ազդեցոյց նմա վասն քրիստոնեայ լինելոյ տեառն իւրոյ ։ Եւ առաքեաց զեպարքոսն Մաքսիմիանոս ի Կիզիկոն, եւ երթեալ հարցանէր ընդ Եւիլասիոս. Ով չարագլուխ, ո՞րպէս իշխեցեր թեթեւացուցանել զաստուածսն մեր, եւ լինել քրիստոնեայ ։ Ասէ Եւիլասիոս. Թէ

3 ի կախաղանի] կախեալ B || 4 այրեցան] մեռանեցան B || 7 չարչարանացդ] տանջանացդ B || 8 սղոցեցին] տանջեցին սղոցիւք B || 8-9 եւ յոյժ ... եղեւ խոց *om.* B || 10 եւ մնաց ամբողջ] եւ խնամօքն Աստուծոյ պահեցաւ կենդանի B || 14 Եւիլասիոսի] Եւիլասեայ B.

adulte. » Évilasius ordonna de lui raser tous les cheveux de la tête, comme une injure à sa qualité de jeune fille, puis on la suspendit à une potence et on la frappa à coups de bâtons. Mais il se produisit subitement des coups de tonnerre et des éclairs, et de nombreuses personnes furent brûlées. Évilasius prit peur et dit à la vierge : « Parle-moi franchement de toi-même, car je vois que tu te sers de magie. » Fausta répondit : « De même que la statue d'un homme ne ressent pas les supplices, de même mon corps n'est pas affligé par tes tortures, car mon âme est ferme en Dieu. »

On la cloua ensuite dans un cercueil de bois et on la scia; les bourreaux se fatiguèrent beaucoup, les scies se brisèrent, mais la martyre du Christ n'eut aucune plaie. On la jeta dans les flammes, mais elle resta indemne. Évilasius
* A fol. 185 r° b. * dit : « Je suis épouvanté de tes actes admirables. » La servante du Christ se mit à lui parler de la doctrine des préceptes divins et convertit Évilasius à la science de la vérité. Il ordonna de délivrer la vierge sainte des tortures.

Un des serviteurs d'Évilasius se rendit auprès de l'empereur et l'avertit que son maître était devenu chrétien. (L'empereur) envoya l'éparque Maximien à Cyzique, et celui-ci à son arrivée interrogea Évilasius : « O mauvaise tête, comment as-tu osé manquer de considération à nos dieux et te faire

եւ դու լուիցես Փաւստեայ՝ փութով ճանաչես զԱստուած կենդանի, եւ լինիցիս երանելի :

Եւ հրամայեաց կախել զԵւիլասիոս եւ սրով քերել զմարմինն եւ հրով այրել զխոցսն : Եւ նորա զաչսն յերկինս համբարձեալ աղաչէր զԱստուած փրկել ի տանջանացն : Եւ լուեալ սրբուհին Փաւստեա գոհացաւ զԱստուծոյ, եւ աղօթէր վասն Եւիլասիոսի : Կոչեաց եպարքոսն զՓաւստեա եւ ասէ. Ով փոքրիկ չարագլուխ, ո՞րպէս իշխեցեր զայնպիսի մեծ իշխան թագաւորին եւ դաստուածոց քահանայն կորզել ի մէնջ եւ մատուցանել Աստուծոյն քոյ : Ասէ Փաւստեա. Ակն ունիմ առ Աստուած որ եւ զքեզ իբրեւ զԵւիլասիոս կոչէ ի գիտութիւն ճշմարտութեան :

Ասէ եպարքոսն : Մի՛ համարիր զիս իբրեւ զնա : Եւ հրամայեաց կախել զերանելի կոյսն եւ բեւեռել զպճղունսն զփայտէ. եւ նա պահեցաւ անարատ : Եւ տեսեալ եպարքոսն * եթէ այնչափ տանջանքն ոչ յաղթեցին նմա, կոչեաց զդահիճսն եւ ընկեցին * A fol. 185 vº a. զերանելին ի մէջ առիւծուց եւ այլոց գազանաց, եւ ոչ մերձեցան ի նա, այլ մանաւանդ երկիր պագանէին եւ լիզուին զոտսն : Եւ դարձեալ արկին զաղախինն Քրիստոսի ի տապակ եռացեալ ձիթով, եւ զԵւիլասիոս ընդ նմա : Եւ յաղօթելն սրբոյ կուսին՝ հուրն 'շիջաւ, եւ տապակն իբրեւ զսառն ցուրտ եղեւ :

3 քերել] քերթել] B || 11-16 եւ նա պահեցաւ . . . ցուրտ եղեւ] եւ խծուցեալ ընկեցին ի մէջ գազանաց, եւ ոչ մերձեցան ի նա. եւ ապա արկին ի տապակ եռացեալ ձիթով եւ զԵւիլասիոս ընդ նմա, եւ յաղօթել սրբոյ կուսին՝ պահեցան կենդանի B.

chrétien? » Évilasius répondit : « Toi-même, si tu entendais Fausta, en hâte tu reconnaîtrais le Dieu vivant, et tu serais bienheureux. »

(L'éparque) ordonna de suspendre Évilasius, de lui taillader le corps avec un glaive et de lui brûler les plaies. Il éleva les yeux au ciel et pria Dieu de le délivrer des tortures. Sainte Fausta, en apprenant cela, rendit grâces à Dieu, et se mit à prier pour Évilasius. L'éparque fit appeler Fausta et lui dit : « O petite mauvaise tête, comment as-tu osé nous enlever un si grand prince de l'empereur et prêtre des dieux et l'offrir à ton Dieu? » Fausta répondit : « J'espère en Dieu, qu'il t'appelera toi aussi, comme Évilasius, à la science de la vérité. »

L'éparque lui dit : « Ne me crois pas comme lui. » Et il ordonna de suspendre la bienheureuse vierge et de lui clouer les chevilles à un arbre. Elle fut conservée intacte. L'éparque, voyant * que tant de supplices ne l'avaient * A fol. 185 vº a. point vaincue, fit venir des bourreaux et leur fit jeter la bienheureuse au milieu de lions et d'autres fauves, qui ne s'en approchèrent point, mais plutôt l'adorèrent et léchèrent ses pieds. On jeta ensuite la servante du Christ dans une chaudière d'huile brûlante et Évilasius avec elle. Sur les prières de la vierge sainte le feu s'éteignit et la chaudière devint froide comme glace.

Եւ տեսեալ Մաքսիմիանոս եպարքոսն զքանչելիսն եւ հիացեալ աղաղակեաց մեծաձայն եւ ասէ. Աստուած որ դասեցեր զԵւիլասիոս ընդ Փաւստեայ, դասաւորեա՛ եւ զիս ընդ երկոսեանն, եւ մի՛ բարկանար եւ մի՛ ոխս պահեր ինձ, որ այնչափ զսուրբս քո չարչարեցի եւ զսուրբ անուն քո բարկացուցի ։ Եւ եղեւ հնչիւն բազմութեան զաւրթնոցն երկնից, եւ լոյս մեծ ծագեաց ։ Եւ տեսեալ եպարքոսին զքանչելիսն աղաղակեաց եւ ասէ. Ընկա՛լ զիս Տէր ընդ սուրբս քո ։ Եւ մերձեցաւ ի տապակն յորում էին Եւիլասիոս եւ Փաւստեա, մերկացաւ եւ ասէ. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյ. եւ արարեալ զնշան սրբոյ խաչին զինքեան՝ անկաւ ի մէջ տապակին ։ Եւ ասէ Փաւստեա ուրախանալով. Գոհանամ զքէն Քրիստոս որ լուար աղախնոյս քո, եւ արարեր զիս որպէս որթ պտղաբեր ի մէջ այգեաց ։ Եւ ձայն եղեւ առ նա եւ ասէ. Եկայք որդեակք իմ, հանգերուք, զի կոչէ զձեզ հայրն ձեր երկնաւոր ։ Եւ յորժամ
* A fol. 185 v° b. լուան զբարբառն զայն ի մէջ տապակին աւանդեցին զհոգիս * իւրեանց առ Աստուած Փետրուարի ԺԴ ։

Յայսմ աւուր հանգեաւ մեծ ճգնաւորն եւ սքանչելագործն Օքսենտիոս յարգելական խցի, կեցեալ ամս բազումս ի լերինն որ կոչի Սուր, սկսեալ զառաքինի վարս ի Փոքր Թէոդոսէ թագաւորէն մինչեւ ի թագաւորութիւնն մեծին Լեւոնի ։

1 եւ հիացեալ *om.* B || 2 դասեցեր] դասաւորեցեր B || 7-9 եւ ասէ... ուրախանալով] եւ անկաւ ի մէջ տապակին, եւ յայժ ուրախ եղեւ Փաւստեա եւ ասէ B || 10-12 եւ ձայն եղեւ... տապակին *om.* B || 12 աւանդեցին] երեքեան *add.* B || 14 Սուր] մօտ ի Քաղկեդոն *add.* B.

L'éparque Maximien, voyant les miracles, s'écria à haute voix, émerveillé, et dit : « Dieu, qui as classé Évilasius (au rang) de Fausta, place-moi aussi avec eux; ne te mets pas en colère et ne me garde point rancune pour avoir torturé à tel point tes saints et avoir irrité ton saint nom. » Il se fit entendre des chœurs de nombreuses milices célestes et une grande lumière jaillit. L'éparque, ayant vu ce miracle, s'écria : « Reçois-moi, Seigneur, parmi tes saints. » Il s'approcha de la chaudière dans laquelle se trouvaient Évilasius et Fausta, se déshabilla et dit : « Au nom du Père, du Fils et du Saint-Esprit », fit le signe de la sainte croix sur sa personne et se jeta dans la chaudière. Fausta dit avec joie : « Je te rends grâces, Christ, d'avoir exaucé ta servante et de m'avoir faite comme le cep fructifère de la vigne. » Une voix se fit entendre à elle qui dit : « Venez, mes enfants, et reposez-vous, car votre Père céleste vous appelle. » Lorsqu'ils eurent entendu cette parole au milieu
* A fol. 185 v° b. de la chaudière, ils rendirent leurs âmes * à Dieu, le 14 février.

En ce jour reposa le grand ascète et thaumaturge Auxence dans sa cellule cloîtrée, après avoir vécu de nombreuses années dans la montagne appelée Sour [1]. Il avait débuté dans sa vie vertueuse sous l'empereur Théodose le Jeune (et vécut) jusqu'au règne de Léon le Grand.

1. *Sour* est la traduction du grec Ὀξεῖα, pour Πετρα ὀξεῖα, cf. J. Pargoire, *Mont Saint-Auxence* dans L. Clugnet, *Bibliothèque hagiographique orientale,* Paris, 1904, p. 20, n. 5.

Ի միում աւուր պատանի մի ետես հրեշտակս զի սաղմոսէին ընդ երանելոյն Օքսենտիոսի, եւ աղաւնի իջեալ յերկնից կերակրեաց զնա եւ պատուիրեաց նմա ոչ ումեք ասել զոր ետեսն. եւ նա երթեալ պատմեաց այլոց կրօնաւորացն, եւ առժամայն մեռաւ :

Եհաս երանելին մինչեւ ցՄարկիանոս թագաւորն, եւ յորժամ ժողովեաց զհարիւր եւ երեսուն եւ վեց եպիսկոպոսունսն, եւ արարին զչորրորդ սինհոդոսն, գրեցին առ երանելին զի ընկալցի զժողովն : Եւ նա ասէ. Եթէ զՆիկիոյ ժողովն ընդունին եւ զՆեստոր եւ զԵւտիքէս նզովեն, եւ զսուրբ Կոյսն աստուածածին խոստովանին զՄարիամ, ընդունիմ եւ ես զժողովն : Եւ յորժամ գրեցին նոքա յայնժամ եւ նա ընդունեցաւ զժողովն :

[B * Մեծահանդէս տօն է քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի տաճարն : * B p. 76 b.

Յորժամ ծնաւ ըստ մարմնոյ Տէր մեր Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ ի սուրբ կուսէն Մարիամեայ, յետ ութ աւուր թլփատեաց զնա Յովսէփ. եւ ի լնուլ քառասուն աւուրն՝ առեալ Յովսեփայ զՄարիամ եւ զմանուկն զոր անուանեաց ի թլփատութեանն Յիսուս որպէս ասաց նմա հրեշտակն, գայ յԵրուսաղէմ ի տաճարն ըստ օրինացն յանդիման առնել Տեառն : Եւ եբեր պատարագս զոյգս տատրակաց եւ երկուս ձագս աղաւնեաց :

1-10 ի միում աւուր... ընդունեցաւ զժողովն] Եհաս երանելին մինչեւ ցՄարկիանոս թագաւորն, եւ ընկալաւ շնորհս սքանչելեաց եւ մարգարէութեան. եւ էր անուն նորա յարգոյ առաջի թագաւորաց եւ ամենայն ժողովրդեան : Եւ կեցեալ առաքինութեամբ փոխեցաւ ի Քրիստոս, եւ եդաւ ի վանս իւր ի մատուռն զոր շինեաց B.

Un jour, un jeune homme avait aperçu des anges qui psalmodiaient avec le bienheureux Auxence. Une colombe, étant descendue du ciel, lui donna à manger et lui recommanda de ne dire à personne ce qu'il avait vu. Mais il le raconta à d'autres religieux et mourut sur-le-champ.

Le bienheureux parvint jusqu'à l'empereur Marcien et lorsque celui-ci convoqua les cent trente-six évêques, qui tinrent le quatrième concile, ils écrivirent au bienheureux d'accepter le concile. Il répondit : « S'ils acceptent le concile de Nicée et anathématisent Nestorius et Eutychès, s'ils confessent la sainte Vierge Marie mère de Dieu, j'accepte moi aussi le concile. » Et lorsqu'ils lui eurent écrit (dans ce sens), il accepta lui aussi le concile.

[B * Fête très solennelle de la Présentation au temple du Christ notre Dieu âgé de quarante jours. * B p. 76 b.

Lorsque Notre-Seigneur Jésus-Christ naquit selon la chair à Bethléem de la sainte Vierge Marie, Joseph le fit circoncire huit jours après, et lorsque les quarante jours furent accomplis, Joseph prit Marie et l'enfant, auquel il avait donné le nom de Jésus lors de la circoncision, selon ce que lui avait dit l'ange, et il vint à Jérusalem, au Temple, pour le présenter au Seigneur selon la Loi. Il apporta pour offrir en sacrifice *un couple de tourterelles et deux petits de colombes.*

Եւ ծերունին քահանայն Սիմէոն որ էր ամաց երեքհարիւր եւ յիսնից՝ կայր ի տաճարին, որ հրաման առեալ էր ի Հոգւոյն սրբոյ ոչ տեսանել զմահ մինչեւ տեսցէ
* B p. 77 a. զօծեալ Տեառն ։ Նա առեալ * զՅիսուս ի գիրկս իւր ասաց. Արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց ։

Աղաչէր Սիմէոն զորդին Աստուծոյ արձակել զնա որպէս եւ կապեալ էր ։ Եւ ի լսելն Մարիամու զարմանայր վասն նորա՝ լուեալ զորդւոյն իւրոյ զի ասէր թէ արարիչ է նորա, եւ մխիթարեցաւ հոգւով եւ մոռացաւ զտրտմութիւնն իւր ։ Արձակեա զիս ի կենացս երթալ քարոզել ննջեցելոցն զյոյս փրկութեանս որ եղեւ յայտնութեամբ քո. երթայց առաջի եւ քարոզեցից առաջին հարցն եւ վարդապետացն զփրկութիւնս քո ։

Եւ ասէ. Արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն ։ Զայս ասաց՝ զի ոչ ի սոսկ մանուկ հայէր, այլ հոգւոյ ականբ տեսեալ զիմանալի հուր աստուածութեանն խառնեալ եւ միաւորեալ ընդ այն ինչ ծնեալ մանկանն. վասն որոյ պաղատանս մատուցանէ իբրեւ առ տէր կենաց եւ մահու ասելով. Արդ արձակես զծառայս քո Տէր ։

Եւ զո՞ր արդեօք արձակումն ասիցէ աստ, զի ոչ թէ ի միոյ կապանաց արձակեցաք Քրիստոսի գալստեամբն՝ այլ եւ յերից, զոր Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն է

Le vieux prêtre Siméon, qui était âgé de trois cent cinquante ans, et résidait dans le Temple, avait reçu de l'Esprit-Saint l'ordre de ne point voir la
* B p. 77 a. mort jusqu'à ce qu'il eût vu l'oint du Seigneur. Il prit * Jésus entre ses bras et dit : « *C'est maintenant, Seigneur, que, selon votre parole, vous laissez votre serviteur s'en aller en paix, car mes yeux ont vu votre salut, que vous avez préparé devant tous les peuples.* »

Siméon priait le Fils de Dieu de le délivrer de ce dont il était lié. Marie, en l'écoutant, fut étonnée de l'entendre dire de son fils qu'il était son créateur, et elle fut consolée en son âme et oublia sa tristesse. « Délivre-moi de cette vie pour que j'aille prêcher aux morts l'espérance de ce salut qui a eu lieu par ta manifestation. J'irai de l'avant et je prêcherai aux patriarches et aux docteurs ton salut. »

Et il dit : « Vous laissez votre serviteur, Seigneur, s'en aller en paix, selon votre parole. » Il dit cela, parce qu'il ne considérait pas uniquement l'enfant, mais, par les yeux de l'âme, il voyait l'ardeur spirituelle de la divinité mêlée et unie à l'enfant à peine né. C'est pourquoi il offre ses supplications comme au seigneur de la vie et de la mort et dit : « C'est maintenant que vous laissez votre serviteur s'en aller, ô Seigneur. »

Mais de quel départ parle-t-il donc ici ? Car ce n'est pas d'un lien seulement que nous avons été délivrés par la venue du Christ, mais de trois, ce qu'on interprète du Père, du Fils et du Saint-Esprit. Le Père nous a délivrés des

իմանալ : Արձակեաց Հայր ի կապանաց անիծից օրինացն՝ յազատութիւն փառաց Որդւոյն իւրոյ : Արձակեաց Որդի յանիծիցն Ադամայ՝ իւրով գալստեամբն : Արձակեաց եւ Հոգին սուրբ ի հնութենէ մեղաց՝ նորոգելով զմեզ աւազանաւն :

Բայց կրկին ունի զտեսութիւն բանս արձակման. արձակեա՛ եւ արձակես : Արդ արձակեա՛ Տէր ասելով, ցուցանէ մաղթանս ծերոյն առ եկեալ փրկիչն՝ լուծանել զնա ի մարմնոյ կապանաց, իբր թէ ասէր. Այժմ յորժամ տեսի զքեզ մարմնով երեւեալ, լցաւ ցանկութիւն իմ. արդ * արձակեա՛ զիս ի բանտէ եւ ի * B p. 77 b.
կապանաց տաժանելի մարմնոյս՝ զոր արարչութեամբ առացեալ ծառայս քո գնալ յանքոյթ խաղաղութիւն, ի դասս նահապետացն եւ արդարոց, զի լցից եւ զնոցա ցանկութիւնն աւետարանելով զքո գալուստ :

Իսկ արձակես ասելով ոչ է մաղթանս այլ բանք գոհացողականք. որպէս թէ բերան եղեալ Սիմէոն ամենայն մարդկութեանս ասէր թէ առաքեցան մարգարէքն, իջին հրեշտակքն, եւ ոչ զօրեցին բառնալ զկապանս մեղաց մարդկային բնութեանս, քում եւեթ սպասէաք գալստեանդ. արդ այժմ յորժամ խոնարհեցար, հաւատալի է մեզ թէ արձակես զմեզ, նախ՝ ի մեղացն կապանաց, ապա յօրինացն ծառայութենէ որ ծերն է եւ անզօր ի ձրի արդարութիւն շնորհացն :

Եւ ասելովն ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի զոր յառաջագոյն խոստացար մար-

liens des malédictions légales dans la liberté de la gloire de son Fils. Le Fils nous a délivrés des malédictions d'Adam par sa venue. Le Saint-Esprit nous a délivrés de la vétusté des péchés en nous renouvelant par les fonts baptismaux.

Cependant ce mot de délivrance a deux significations : *délivre* et tu *délivres*. Or, en disant : Laisse-moi partir maintenant, Seigneur, il indique le vœu du vieillard à l'égard du Sauveur venu, la délivrance des liens de la chair, comme s'il disait : Maintenant que je t'ai vu apparaître dans la chair, tous mes vœux sont comblés; * délivre-moi maintenant de la prison et des * B p. 77 b.
liens de ce corps fatigant, que ton serviteur a reçu en vertu de la création, pour aller à la paix assurée dans les rangs des patriarches et des justes, afin que je comble aussi leurs vœux en leur annonçant ton avènement.

D'autre part, en disant : Vous me laissez aller, ce n'est pas un vœu mais une expression de satisfaction, comme si, devenu l'organe de toute l'humanité, Siméon disait : Les prophètes ont été envoyés, les anges sont descendus, mais ils n'ont pas pu détruire les liens des péchés de la nature humaine; nous attendions ta venue. Et maintenant que tu t'es humilié, nous pouvons croire que tu nous délivres, d'abord des liens du péché, ensuite de la servitude des lois, vieillie et impuissante, pour la justice gratuite de la grâce.

En disant : *selon votre parole, en paix,* (il entend) ce que vous aviez promis

գարէիւքն այժմ եկիր կատարել, առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի արեամբ խաչի քո :

Տեսին աչք իմ զփրկութիւնս քո : Մարմնոյ աչօք ետես զփրկիչն, իսկ հոգւոյ ակամբ ետես զփրկութիւն նորա զոր կատարելոց էր խաչիւն :

Զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեանն : Այսինքն ոչ Իսրայէլի միայն՝ այլ եւ ամենայն հեթանոսաց որք հաւատով կոչեցան որդիք Աբրահամու, եւ միաւորեալք ի Քրիստոս՝ եղեն մի հօտ միոյ հովուի : Զայս տեսեալ մարգարէն ձայնէր յառաջագոյն. Եցոյց Տէր զփրկութիւն իւր առաջի ամենայն ազգաց, եւ եթէ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ :

Եւ զի մի զՀրէայսն միայն կարծիցեն ասել ժողովուրդ, յաւել թէ. Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց : Լոյս՝ զայն յայտ առնէ զոր յետ խաչին եւ յարութեանն ծագելոց էր հեթանոսաց զաւետարանական վարդապետութիւնն. զոր Եսայիաս ի
* B p. 78 a. հեռուստ տեսեալ * աւետարանէր հեթանոսաց ժողովրդեանն, ասէ. Որ նստէիք ի խաւարի անգիտութեան, տեսէք զլոյս մեծ գիտութեան : Դարձեալ ցուցանէ թէ այնքան արդարացան հեթանոսք մինչ զի իբրեւ զարեգակն լուսաւոր եւ յայտնի եղեն յամենայն աշխարհ :

Եւ փառք ժողովրդեան քում Իսրայէլի : Փառք՝ որոց որդեգրութիւնն եւ աւետիքն

auparavant par les prophètes, maintenant vous êtes venu l'accomplir pour faire la paix au ciel et sur la terre par le sang de votre croix.

Mes yeux ont vu votre salut. Il a vu le Sauveur par les yeux du corps, mais par les yeux de l'âme il a vu son salut que celui-ci devait opérer par la croix.

Que vous avez préparé devant tous les peuples. C'est-à-dire non seulement à Israël mais à toutes les nations, qui furent appelées dans la foi les fils d'Abraham, et qui réunies dans le Christ formèrent un seul troupeau d'un seul pasteur. Ce que voyant, le prophète déclarait à l'avance : *Le Seigneur a montré son salut devant tous les peuples, tous les coins de la terre ont vu le salut de Dieu*[1].

Et pour que l'on ne croie pas que les Juifs seulement furent appelés « le peuple », il ajoute : lumière pour la révélation des nations. Par lumière, il entend ce qu'il devait manifester aux gentils, après la croix et la résur-
* B p. 78 a. rection, la doctrine évangélique. C'est ce qu'Isaïe, voyant de loin, * annonçait au peuple des gentils, en disant : *Vous qui demeuriez dans les ténèbres* de l'ignorance, *vous voyez la lumière*[2] de la grande science. Il montre également que les gentils furent justifiés à ce point qu'ils furent comme le soleil radieux et apparurent à toute la terre.

La gloire de ton peuple d'Israël. La gloire pour ceux à qui fut accordé

1. Is., LII, 10. — 2. Is., IX, 2.

եւ կտակարանն, յորոց եւ հարքն եւ մարգարէքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ : Եւ զի այսոքիկ փառք միայնոյ Իսրայէլի էին, լուր զինչ ասէ Բարուք. Աստուած մեր ընդ որում այլ ոք ոչ համարեցի, որ եգիտ զճանապարհս իմաստութեան եւ ետ զնա Յակոբայ ծառայի իւրոյ եւ Իսրայէլի սիրեցելոյ ի նմանէ. յետ այսորիկ յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ : Եւ զկնի սակաւուց խրատէ զԻսրայէլ զի մի կորուսցէ զփառսն :

Բայց թուի թէ մարգարէութիւն իմն է բանս, ասէ. Փառք ժողովրդեան քում Իսրայէլի : Նշանակելով թէ ի վերջին աւուրսն ի կատարած յաւիտենից, զի որպէս հեթանոսք յառաջագոյն, այսպէս եւ Իսրայէլ յայնժամ հաւատասցէ ի Քրիստոս, եւ կատարեսցին նոքա ի Նեռնէ անտի, եւ փառք եղիցի նոցա Քրիստոս : Եւ զայս յայտ առնէ նոցա Պօղոս ասելով. Յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ապա ամենայն Իսրայէլ կեցցէ :

Եւ էին հայր եւ մայր նորա զարմացեալք ի վերայ բանիցն որ խօսէին զնմանէ : Տակաւին եւս հայր անուանէ զՅովսէփ որ ոչինչ նպաստ էր ծննդեանն. եւ թէ էր աղագաւ ասացեալ է յառաջագոյն :

Զարմացեալ էին ասէ : Արդարանայ աստ ասացեալն թէ. Ով գիտաց զմիտս Տեառն կամ ո՞վ եղեւ նմա խորհրդակից : Զի թէ հայր եւ մայր նորա զարմացեալ էին

le titre de fils, les promesses et les testaments, les patriarches et les prophètes et le Christ d'après la chair. Et comme tout cela fut la gloire du seul Israël, écoute ce que dit Baruch : *Notre Dieu, qui n'a pas de concurrent, qui a trouvé la voie de la sagesse et l'a donnée à son serviteur Jacob et à Israël son bien-aimé, est apparu ensuite* à la terre et a *circulé parmi les hommes*[1]. Un peu plus loin (Baruch) conseille à Israël de ne pas perdre sa gloire.

Il semble que ces mots soient prophétiques, car il dit : *La gloire de ton peuple Israël*. Voulant signifier par là que dans les derniers jours, à la consommation du siècle, comme les anciens gentils, Israël croira alors aussi au Christ, qu'ils seront exécutés par l'antéchrist et que le Christ sera leur gloire. C'est ce que Paul leur signifia en disant : *Lorsque la totalité des nations sera rentrée, c'est alors, c'est alors que tout Israël vivra*[2].

Son père et sa mère étaient dans l'admiration sur les paroles qui étaient dites de lui. Il appelle encore père, Joseph, qui n'avait aucunement aidé à la naissance ; et pour quelles raisons? Cela a été dit plus haut[3].

Ils étaient dans l'admiration, dit-il. Ici, se justifie ce qui a été dit : *Qui a connu les desseins du Seigneur, et qui a été son conseiller*[4] ? Car, si son père et sa mère étaient émerveillés de l'incompréhensibilité de sa naissance, combien

1. Baruch, III, 37 sq. — 2. Rom , XI, 25 sq. — 3. L'explication est donnée sans doute dans une partie de l'homélie non reproduite à ce jour par le synaxaire. — 4. Rom., XI, 34.

ընդ անհասութիւն ծննդեան նորա. ապա որչափ յանդգնութիւն է զէութիւն նորա ի խոյզ եւ ի խնդիր արկանել : Եւ զարմանային ընդ * բանսն Սիմէոնի. զի ոչ այնքան յայտնի էր նոցա տակաւին իբրեւ ի տղայ ոք հայէին ի նա : Եւ զոր լուան ի հրեշտակէ անտի մարմնաւորապէս կարծէին թագաւորել նմա ի վերայ տանն Դաւթի :

* B p. 78 b.

Իսկ զայն թէ անբովանդակելի աստուածութիւնն բովանդակեալ է ի նմա անգիտանային նոքա. քանզի այս էր պատշաճ ծածկել զինքն ի նոցանէ զի կարող եւ բաւական լիցին բնակել ընդ նմա սնուցանել եւ կաթնաբոյծ առնել : Վասն որոյ իբրեւ լուան ի Սիմէոնէ որպէս առ Տէր եւ Աստուած զայսպիսի բարձրագոյն բանս խօսեցեալ, հիացան եւ զարմացան :

Եւ սկսանի մարգարէանալ նոցա, եւ ասէ ցՄարիամ մայր նորա. Ահա սա կայ ի կանգնումն եւ ի գլորումն բազմաց ի մէջ Իսրայէլի : Յիրացն արդեամբք կատարելոցն յայտնի է մարգարէութիւնս. վասն զի Քրիստոսի տնօրէնութեամբն բազումք կանգնեցան ի գլորմանէ անտի յանցուածոցն առաջին եւ յանհաւատութենէ յոր ընկղմեցան, եւ շնորհօքն Քրիստոսի հաստատեցան ի վերայ վիմին հաւատոյ :

Եւ ի նշան հակառակութեան : Յայտնի է այս՝ զի նշան է հակառակութեան ամենայն ազգաց որք ոչ դադարին ի լծակռիւն լինելոյ վասն նորա :

Եւ անդ էր Աննա մարգարէ դուստր Փանուէլի յազգէ Ասերայ, սա էր անցեալ

grande est l'audace de vouloir scruter et discuter son essence. Ils étaient émerveillés * des paroles de Siméon, car (Jésus) ne leur était pas suffisamment révélé, et ils le considéraient encore comme un enfant. D'après ce qu'ils avaient entendu de l'archange, ils croyaient que (l'Enfant) allait régner corporellement sur la maison de David.

* B p. 78 b.

Ils ignoraient que l'incommensurable divinité était condensée en lui; car il devait se cacher d'eux afin qu'ils puissent demeurer avec lui, le nourrir, lui donner le lait. C'est pourquoi lorsqu'ils entendirent Siméon lui adresser des paroles si élevées comme au Seigneur et à Dieu, ils en furent étonnés et dans l'admiration.

(Siméon) se mit à leur prophétiser et dit à Marie sa mère : *Voici que celui-ci est pour la ruine et le salut d'un grand nombre en Israël.* Cette prophétie est devenue évidente par l'accomplissement des choses dans la réalité, car par les actes du Christ beaucoup furent relevés de la chute dans les premières erreurs et de l'incrédulité où ils étaient plongés et par les grâces du Christ furent raffermis sur le rocher de la foi.

Et en signe de contradiction. Ce qui est évident, c'est que c'est un signe de contradiction pour toutes les nations, qui ne cessent pas de se quereller à son sujet.

Il y avait aussi une prophétesse, Anne, fille de Phanuel, de la tribu d'Aser; elle était fort avancée en âge, et n'avait vécu, depuis sa virginité,

զաւուրբք բազմօք կեցեալ ընդ առն ամս եօթն յետ կուսութեան իւրոյ, եւ էր այրի ամաց ութսուն եւ չորից որ ոչ մեկնէր ի տաճարէն զցայգ եւ զցերեկ, այլ կայր պահօք եւ աղօթիւք : Եւ սա ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏեառնէ, եւ խօսէր վասն մանկանն թէ. Սա է որդին Աստուծոյ, զոր ասացին մարգարէքն, եւ որ այժմ յայտնեալ փրկիչ երեւեցաւ մեզ :

Եւ գնացին Յովսէփ եւ Մարիամ հանդերձ մանկամբն ի Նազարէթ, եւ անտուստ փախեան յԵգիպտոս զի մի սպանցէ Հերովդէս զմանուկն :]

Մեհեկի Թ եւ Փետրուարի ԺԵ : Ննջումն է Սիմէոնի ծերունւոյն եւ հանգիստ Աննայի մարգարէուհւոյ, եւ Ասափայ մարգարէին :

Ասափ եւ Դիթոմ եւ որդիքն Կորխայ, եւ այլ բազում ոմանք դասագլուխք էին դասու երգեցողացն զոր կարգեաց Դաւիթ արքայ ի պաշտօն խորանին Տեառն զամենայն Ղեւտացիս՝ * դաս դաս բաժանեալ զնոսա ըստ աւուրց շաբաթուն, եւ ուսոյց նոցա զհարիւր եւ յիսուն սաղմոսս իւր : Եւ նոքա եղանակս կարգէին սաղմոսացն Դաւթի Հոգւոյն առաջնորդութեամբ, եւ ուսուցանէին դասուց իւրեանց, եւ այնպէս պաշտէին զպաշտօն Տեառն, զի ունէին եւ նոքա մասն մարգարէութեան՝ Ասափ եւ

* A fol. 186 r° a.

10 այլ բազում] այլք B.

que sept ans avec son mari. Elle était restée veuve et âgée (alors) de quatre-vingt-quatre ans, elle ne quittait point le Temple, servant (Dieu) nuit et jour dans le jeûne et dans la prière. Elle aussi, survenant à cette heure, se mit à louer le Seigneur et à parler de l'Enfant : « C'est le Fils de Dieu, dont les prophètes ont parlé et qui s'est révélé maintenant à nous comme sauveur. »

Joseph et Marie retournèrent avec l'Enfant à Nazareth et de là s'enfuirent en Égypte, pour qu'Hérode ne tuât point l'Enfant.]

9 MÉHÉKI, 15 Février.

Dormition du vieillard Siméon, et repos de la prophétesse Anne et du prophète Asaph.

Asaph et Idithun (*Diṭom*), et les fils de Coré (*Korḥ*) et beaucoup d'autres étaient les chefs des chœurs des chantres, que le roi David avait institués, pour le service du temple de Dieu, parmi les Lévites, * après les avoir séparés en plusieurs classes, selon les jours de la semaine, et auxquels il avait appris ses cent cinquante psaumes. Ceux-là organisèrent des airs pour les psaumes de David sous la conduite de l'Esprit, et ils les enseignaient à leurs classes, accomplissant ainsi le service du Seigneur, car Asaph et ses compagnons possédaient eux aussi une part de prophétie. C'est pourquoi on trouve sur les

* A fol. 186 r° a.

ընկերք իւր ։ Վասն որոյ գտանի ի վերնագիրս սաղմոսացն. Սաղմոս յԱսափ, որդւոցն Կորխայ, ի Դիթոմ, Մաղեթայ եւ այլք նման սոցին ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյ Ոնեսիմայ աշակերտին Պօղոսի ։

Այս սուրբ վկայս Ոնեսիմոս ծառայ էր Փիլիմոնի ի Հռոմ, յոր գրեաց սուրբն Պօղոս զթուղթն, եւ յետ մահուան տեառն իւրոյ Փիլիմոնի՝ աշակերտեցաւ Պօղոսի առաքելոյն եւ ընդ նմին քարոզէր զբանն Աստուծոյ ։

Եւ Հռոմայեցիքն կալան զՈնեսիմոս եւ տարան առ Տերտիւլոս եպարքոսն Հռոմայ, եհարց ցնա թէ. Դու ո՞վ ես կամ ուստի՞ եկիր, եւ քարոզես զայլ ոք աստուած զոր մեք ոչ պաշտեմք ։ Ասէ Ոնեսիմոս. Երբեմն ծառայ էի մարդոյ գնեալ արծաթով, եւ այժմ իցեմ ազատ եւ ծառայ Աստուծոյ, քանզի խոտորեցայ ի կռապաշտութենէ եւ ուղղեցայ ի բարեպաշտութիւն ։

Եւ այլ բազում բանս վարդապետութեան պատմեաց Տերտիւղոսի թերեւս դարձցի յաստուածգիտութիւն ։ Եւ նա առաւել եւս բորբոքեցաւ ի բարկութիւն եւ արկ զնա ի բանդ աւուրս ութն եւ ութ, եւ պատուիրեաց զի ոչ հաց եւ ոչ ջուր տացեն նմա,

2 ի Դիթամ] Իդիդումայ B — Մաղեթայ] Մայեղեթայ B || 9 պաշտեմք] ճանաչեմք B — արծաթով] արծաթոյ B || 12 բանս] աստուածային *add.* B.

titres des psaumes : Psaume d'Asaph, des fils de Coré, Idithun (*i Ditom*), de Maleth[1] et autres semblables à eux.

En ce jour, martyre de saint Onésime, disciple de Paul.

Ce saint martyr Onésime était un serviteur de Philémon à Rome, à qui saint Paul a écrit une épître. Après la mort de son maître Philémon, il se fit disciple de l'apôtre Paul et évangélisa avec lui la parole de Dieu.

Les Romains saisirent Onésime et le conduisirent auprès de Tertilus, préfet (ἔπαρχος) de Rome, qui l'interrogea : « Qui es-tu? ou : d'où viens-tu, toi qui prêches un Dieu étranger que nous n'adorons point? » Onésime lui répondit : « J'étais jadis le serviteur d'un homme ayant été acheté avec de l'argent, mais maintenant je suis libre et serviteur de Dieu, car je me suis éloigné de l'idolâtrie et je me suis dirigé vers la piété. »

Il adressa bien d'autres paroles de doctrine à Tertilus dans l'espoir de le convertir à la connaissance de Dieu. Mais celui-ci s'anima davantage de fureur et le fit jeter en prison pendant dix-huit jours et prescrivit de ne lui

1. *Mahelet*, mot hébreu contenu dans les titres des psaumes LII et LXXXVII, de signification douteuse et que les versions ont transcrit sans le traduire à la suite des Septante, ὑπὲρ μαελέθ.

որպէս զի մեռցի ։ * Եւ ի բանդին զբազումս դարձոյց ի հռոմայեցւոցն յաստուածպաշտութիւն, զորս հալածեաց եպարքոսն ի Հռոմայ. եւ զսուրբն Ոնեսիմոս տարաւ ի Հռոմայ ի Պատիլոս քաղաքն ։ Եւ անդ սկսաւ զբանն Աստուծոյ քարոզել, եւ զբազումս դարձոյց ի Քրիստոսի հաւատն ։ * A fol. 186 r° b.

Եւ հրամայեաց Տերտիւղոս, եւ զՈնեսիմոս ջարդեցին հաստ բրօք ուժգին չորք արք, եւ ապա ընկեցին յորսայս եւ խորտակեցին զոլոքսն եւ զբարձսն ։ Եւ աղօթելով սուրբն Ոնեսիմոս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Փետրուարի ԺԵ ։ Եւ կին մի քրիստոնեայ ի թագաւորական տոհմէ առեալ զմարմինն եդ յարծաթի տապան ։

[B* Յիշատակ ամենօրհնեալ սուրբ աստուածածնին Մարիամու ։ * B p. 80 b.

Ամենասուրբ ամենօրհնեալ տիրամայր աստուածածին կոյսն Մարիամ՝ յետ սքանչելապէս ծնանելոյն զբանն Աստուած, եւ տեսանելոյ զիրս սքանչելեաց հովուացն որք ի հրեշտակացն զարթեան, եւ զմոգուցն որ ի ձեռն աստեղն եկին, յորժամ լցան քառասուն աւուրք մաքրութեանն զոր պատուիրեաց Մովսէս բարձեալ զամենայնի բարձող Բանն Աստուծոյ մարմնացեալ՝ եած ի տաճարն յԵրուսաղէմ, եւ լուաւ զսքանչելի վկայութիւնն Սիմէոնի եւ զԱննայի, եւ օրհնեցաւ ի նոցանէ որպէս եւ յառաջ

1 մեռցի] ի սովոյ *add.* B — յաստուածպաշտութիւն] ի բարեպաշտութիւն B || 3 Պատիլոս] Պոտիլոս B || 5 ջարդեցին] ճալկեցին B || 7 Փետրուարի ԺԵ] եւ Մեհեկի Թ *add.* B || 8 տոհմէ] ազգէ B.

donner ni pain ni eau afin qu'il mourût. * (Onésime) convertit au culte de Dieu dans la prison nombre de Romains que le préfet fit expulser de Rome. Quant à saint Onésime, il le fit conduire de Rome à la ville de Pouzzoles (*Patilos*). Là (Onésime) se mit à prêcher la parole de Dieu et convertit nombre de personnes à la foi du Christ. * A fol. 186 r° b.

Tertilus donna des ordres et quatre hommes munis de gros bâtons brisèrent les os d'Onésime, puis ils le firent coucher sur le dos et lui brisèrent les chevilles et les jambes. Saint Onésime rendit son âme à Dieu en priant, le 15 février. Une femme chrétienne de la famille impériale prit le corps et le déposa dans un cercueil en argent.

[B* Commémoration de la toute bénie, sainte Marie mère de Dieu. * B p. 80 b.

La très sainte, la toute bénie mère du Seigneur, mère de Dieu, la vierge Marie, après avoir enfanté miraculeusement le Verbe de Dieu, et vu les faits prodigieux des bergers qui furent réveillés par les anges, et des mages qui vinrent (guidés) par l'étoile, lorsque furent accomplis les quarante jours de la purification selon la loi de Moïse, prit dans ses bras celui qui contient tout le verbe de Dieu incarné, et le conduisit au Temple à Jérusalem. Elle y entendit l'admirable témoignage de Siméon et d'Anne et fut bénie par eux ainsi qu'elle l'avait été auparavant par Élisabeth et par l'ange ; et elle augmenta de plus en

յԱղխաբեթէ եւ ի Հրեշտակէն, եւս քան զեւս յաւելոյր ի գոհութիւն՝ խնդութեամբ եւ բերկրեալ հոգւով մեծացուցանելով զԱստուած, եւ օրհնելով անդադար՝ փոխանակ ամենեցուն փրկութեանն զոր ի նմանէ հաճեցաւ տնօրինել :

Վասն որոյ եւ ամենայն օրհնաբանելի եւ տօնելի փրկագործ տնօրինականացն Քրիստոսի, զնոյն ինքն զսուրբ տիրամայրն կցորդ տօնի եւ օրհնաբանութեան ունի եկեղեցի սուրբ, երանելով նմա բարեբանութեամբ ընդ միածնին իւրոյ՝ Հաւրն եւ Հոգւոյն սրբով այժմ եւ միշտ եւ յաւիտեանս :

Յայսմ աւուր հանգիստ սուրբ ծերունոյն Սիմէոնի աստուածաբարձի :

Այս երանելի եւ աստուածաբարձ սուրբ ծերունիս Սիմէոն, հրաժարեալ յաւժամանակեայ աշխարհիս հեշտութեանց եւ ի զբաղանաց, եւ թողեալ զամենայն ինչս եւ զստացուածոց վայելս, եւ պարապեաց հանապազ մաքրութեամբ աղօթից եւ պահոց ի պաշտօն եւ ի քահանայութիւն տաճարին Աստուծոյ :

* B p. 81 a. Եւ իմացեալ զգալուստն Քրիստոսի մարգարէական հոգւով եւ հաւատացեալ նախասացն մարգարէիցն խնդրեաց ի Հոգւոյն սրբոյ մի տեսանել զմահ մինչեւ տեսցէ զՔրիստոսն Աստուծոյ : Եւ* սպասաւորէր առանց հեղգութեան ի տաճարն Աստուծոյ, եւ աղօթէր հանապազ վասն փրկութեան աշխարհի . եւ էր արդարեւ անմեղ եւ ամբիծ եւ լռակեաց եւ մաքուր յամենայն չարեաց : Վասն որոյ ազդեցութեամբն Աստուծոյ իմացաւ եթէ մի մեռցի մինչեւ տեսցէ զփրկութիւն աշխարհի որ է ինքն Քրիստոս :

plus ses actions de grâces, en glorifiant Dieu avec joie et ferveur d'âme, bénissant sans cesse celui qui pour la rédemption de tout le monde avait daigné se servir d'elle.

C'est pourquoi lors de toutes les fêtes et bénédictions des actes rédempteurs du Christ, la sainte Église fait participer à ces fêtes et bénédictions la sainte Mère du Seigneur, en la félicitant et la louant avec son fils unique, le Père et le Saint-Esprit, maintenant, toujours et dans les siècles.

En ce jour, repos du saint vieillard Siméon, qui prit Dieu entre ses bras.

Ce bienheureux saint vieillard Siméon qui prit Dieu entre ses bras, avait renoncé aux plaisirs et aux occupations de ce monde passager, avait abandonné toute jouissance des biens et richesses, et s'était consacré à une pureté continuelle dans les prières et les jeûnes pour le service sacerdotal au temple de Dieu.

* B p. 81 a. Ayant pressenti par l'esprit prophétique la venue du Christ, ayant cru aux prophètes qui l'avaient annoncé précédemment, il supplia le Saint-Esprit, (lui demandant) de ne point voir la mort jusqu'à ce qu'il eût vu le Christ de Dieu. Il* desservait le temple de Dieu sans paresse et priait continuellement pour le salut du monde. Il était réellement innocent, sans péché et sans tache, silencieux et pur de toute mauvaise action. C'est pourquoi, par l'influence de Dieu, il sentit qu'il ne mourrait point jusqu'à ce qu'il eût vu le salut de la terre, c'est-à-dire le Christ lui-même.

Արդ եւ կացեալ մինչեւ ի ժամանակ ծննդեանն Քրիստոսի, եւ յորժամ ածին զնա ի տաճարն առնել ըստ սովորութեան օրինացն, սա եկն հոգւովն ի տաճարն, եւ ծանուցեալ զանժամանակ աստուածութեանն մեծութիւն՝ ի ժամանակաւոր տղայական մարմինն՝ մարգարէական աչօք տեսանելով զնա Աստուած եւ ամենայնի տէր ։ Եւ բառնալով ի գիրկս զայն որ ի քերովբէս նստի եւ բառնայ զաշխարհ, խոստովանեալ դաւանեաց զնա տէր կենաց եւ մահու իշխան, լոյս աշխարհի, եւ փառք Հրէից եւ փրկութիւն հեթանոսաց ։

Եւ այնուհետեւ արհամարհեաց զմահ յորմէ նախ երկնչէր, զի ետես եկեալ զկեանքն եւ զլուծիչն մահու խնդրէր ի նմանէ արձակիլ ի մարմնոյն կապից, եւ աւետաւոր եւ նախագուշակ երթալ նախնի մեռելոցն ։ Եւ այնպէս գոհանալով օրհնէր զծնեալն, եւ բարեբանելով զծնօղն երջանիկ յետ բառնալոյ զաստուածորդին ի գիրկս եւ տալոյն զնա յամենօրհնեալ աստուածածինն, առժամայն աւանդեաց զհոգին յայտ արարեալ եթէ յաղագս այնորիկ մնայր մինչեւ ցայնժամ զի զպարտական սպասաւորութիւնն զայն լցցէ ․ զոր իբրեւ կատարեաց՝ վաղվաղակի փոխեցաւ յաստեացս ։

Նաեւ զի ծանուցեալ ճշմարտապէս եւ կատարելապէս զնա Աստուած եւ Տէր ամենայնի, ոչ կարաց յամել եւ ժուժալ առաջի նորա հողանիւթ այս մարմնով զոր հնացոյց դատակնիքն այլ անդէն լուծաւ ․ յայտնելով թէ զոր խնդրեաց ի տղայոյն

Il vécut donc jusqu'à la naissance du Christ, et lorsqu'on eut conduit celui-ci au Temple pour accomplir les usages d'après la Loi, il vint au Temple, guidé par l'Esprit ; et reconnaissant la grandeur de la divinité intemporelle dans ce corps temporaire d'enfant, il le reconnut, avec des yeux prophétiques, Dieu et Seigneur de toutes choses. Il éleva dans ses bras celui qui est assis sur les chérubins et soulève la terre, l'avoua et le confessa maître de la vie, arbitre de la mort, lumière du monde, gloire des Juifs et salut des gentils.

A partir de ce jour, il méprisa la mort qu'il appréhendait jusqu'alors, car il avait vu arriver la vie, celui qui délie la mort, et il le pria de le délier des liens de la chair, afin d'aller vers les anciens morts pour les évangéliser et les avertir. C'est pourquoi il bénissait le nouveau-né avec actions de grâces en même temps qu'il louait la bienheureuse Mère, et après avoir soulevé le Fils de Dieu dans ses bras et l'avoir rendu à la toute bénie Mère de Dieu, il rendit l'âme aussitôt, manifestant qu'il était resté jusqu'à ce moment pour accomplir le service du devoir, et aussitôt que (ce devoir) eut été accompli il trépassa de cette vie.

Ce fut aussi parce que (Siméon) l'ayant reconnu en toute vérité et parfaitement Dieu et Seigneur de tout, il ne pouvait plus retarder et résister en sa présence avec ce corps formé de terre, que la malédiction avait vieilli et qui fut dissous aussitôt ; voulant signifier par là que ce qu'il avait demandé à

* B p. 81 b. իբրեւ յԱստուծոյ էառ ի կարող տուողէն առժամայն, որ նորոգեալս * ի փառաւորական յաւերժական կեանս՝ ի փառս նորին Քրիստոսի եւ Հօր եւ սուրբ Հոգւոյն յաւիտեան :

Յիշատակ է ընդ նմին եւ Աննայի մարգարէուհւոյ՝ դստերն Փանուէլի, զորմէ յիշատակէ աւետարանիչն որ եւ սա ծանուցեալ յառաջ զմերձ լինել գալստեանն Քրիստոսի, ոչ մեկնէր ի տաճարէն. այլ պահօք եւ աղօթիւք ժուժկալեալ մեծաւ ճգնութեամբ ութսուն եւ չորս ամս, այրիութեամբ զսրբութիւն պահելով՝ մնայր նմա :

Որով եւ արժանի եղեւ եւ սա տեսանել զՏէրն մեր Քրիստոս, եւ խոստովանեցաւ զնա Աստուած ճշմարիտ, եւ առէր ամենեցուն յայտնապէս թէ սա է Քրիստոսն որ գալոց էր. սա է Տէր տաճարիս եւ հրեշտակ ուխտին զոր կամիք : Եւ այսպէս արժանահաւատ վկայութեամբ ամենեցուն պատմելով զփրկութենէն աշխարհի, յետ կատարման տնօրինական նուիրանացն ի տաճարն Փրկչին՝ փոխեցաւ եւ նա յաստեացս խաղաղութեամբ փառաւորելով զԱստուած :]

Մեհեկի Ժ եւ Փետրուարի ԺԶ : Տօն է սրբոյ առաքելոյն Յուդայի :

Առաքեալն Քրիստոսի Յուդա Յակոբեան, որդի էր Յովսեփայ որ անուանեցաւ հայր Քրիստոսի, եւ այս Յուդա է Ղեբէոսն՝ որ անուանեցաւ Թադէոս, որպէս ցուցանեն

13 Տօն է] եւ յիշատակ *add.* B.

* B p. 81 b. l'Enfant comme à Dieu, il l'avait obtenu aussitôt par le puissant donneur, qui l'avait transformé et rendu à la vie * glorieuse, pour la gloire du même Christ et du Père et du Saint-Esprit éternellement.

On commémore avec (Siméon) la prophétesse Anne, fille de Phanuel, pour laquelle l'évangéliste rapporte qu'elle aussi avait su à l'avance la prochaine venue du Christ. Elle ne quittait point le Temple et après avoir vécu quatre-vingt-quatre ans dans les jeûnes, les prières, et un grand ascétisme, conservant la sainteté par le veuvage, elle l'attendait.

Elle aussi fut digne de voir notre Seigneur le Christ, et elle le confessa vrai Dieu en proclamant ouvertement à tout le monde qu'il était le Christ qui devait venir : « C'est lui le *Seigneur de ce temple et l'ange de l'alliance que vous désirez* [1]. » Après ce témoignage véridique, après avoir annoncé à tous le salut de la terre, aussitôt que les actes de la présentation du Sauveur au Temple furent accomplis, elle aussi trépassa en paix d'ici-bas en glorifiant Dieu.]

10 MÉHÉKI, 16 Février.

Fête du saint apôtre Jude.

L'apôtre du Christ Jude, de Jacques, était le fils de Joseph qui fut nommé le père du Christ. Ce Jude est Lebbée, qui fut nommé Thaddée, ainsi que l'in-

1. Mal., III, 1.

Մատթէոս եւ Մարկոս ։ Իսկ Ղուկաս եւ Յովհաննէս՝ Յուդա Յակոբեան զնա կոչեն, զի զատցի անունն ի Յուդայէ մատնչէ ։ Եւ են սոքա չորք եղբարք՝ Յակոբոս առաջին եպիսկոպոսն Երուսաղեմի, եւ Յովսէս, եւ Սիմոն, եւ Յուդա որ են ի թուոյ երկոտասանիցն ։

Եւ յետ Համբարձմանն Քրիստոսի, գնաց Սիմոն ի Պարս եւ ի Բաբելոն, եւ քարոզեաց նոցա․ եւ եկեալ յաշխարհն Հայոց՝ կատարեցաւ նահատակութեամբ ի տեղւոջն որ կոչի Ռուսթաւա ։

Իսկ սուրբ առաքեալն Յուդա Յակոբեան շրջեալ քարոզութեամբ յաշխարհն Մարաց եւ Պարսից եւ* Ելիմացւոց, եւ բազում նշանս եւ սքանչելիս արարեալ եւ զբազումս * A fol. 186 v° a.
աշակերտեալ, գրեաց նոցա զթուղթն կաթողիկեայց որ ըստ անուանն իւրում, եւ զգուշացոյց զնոսա յամենայն հերձուածոց որ լինելոց էին․ տայց եւ զկորուստ ամբարշտացն ըստ մարգարէութեանն Ենովքայ արդարոյ՝ եօթներորդին յԱդամայ ։

Եւ ինքն եկեալ ի վերին Հայս, պատահի անդ եւ Բարթողիմէոս առաքեալն ի բլուրն Արտաշատու, եւ ուրախացեալք անդ հոգւովն՝ կանգնեցին ի տեղւոջն խաչ ։ Եւ գնաց Բարթողիմէոս առ Սանատրուկ թագաւորն Հայոց եւ անդ նահատակեալ կատարի վասն զՔրիստոս քարոզելոյ ։

3 եպիսկոպոսն] պատրիարքն B || 15 նահատակեալ] նահատակութեամբ B.

diquent Matthieu et Marc. Mais Luc et Jean l'appellent Jude, de Jacques, pour distinguer son nom de celui de Judas, le traître. Ils étaient quatre frères : Jacques, le premier évêque de Jérusalem, José (*Yovsēs*), Simon et Jude qui était du nombre des douze.

Après l'ascension du Christ, Siméon se rendit en Perse et à Babylone et y prêcha; de là il se rendit au pays d'Arménie et y mourut en martyr à l'endroit appelé Roustava [1].

Quant au saint apôtre Jude, de Jacques, il parcourut en évangélisant les pays des Mèdes, des Perses, des* Élyméens [2], il y accomplit de nombreux * A fol. 186 v° a.
prodiges et miracles, fit de nombreux disciples, et leur écrivit l'épître catholique qui porte son nom, en les mettant en garde contre tous les schismes qui devaient avoir lieu, et leur annonçant la perte des impies selon la prophétie d'Hénoch le juste, le septième après Adam.

(Jude) se rendit dans la haute Arménie, et y rencontra l'apôtre Barthélemy sur la colline d'Artašat [3]; ils s'y réjouirent spirituellement et plantèrent une croix en cet endroit. Barthélemy alla trouver le roi d'Arménie, Sanatrouk, et là, mourut martyrisé pour avoir prêché le Christ.

1. Sur le nom du lieu où mourut saint Simon, Suanir, Swanyz ou Bindwinth — Nicophsia, cf. *Acta SS. Octob.*, XII, p. 428. — 2. Élam ou Susiane. — 3. *Artašou* dans la passion arménienne de saint Barthélemy.

Եւ կատարի տօն սրբոյ առաքելոյն Յուդայի Փետրուարի ԺԶ ։

Յայսմ աւուր վկայութիւն երկոտասան մարտիրոսացն Պամփիլեայ, Վաղենդիոսի, Պօղոսի, Պորփիւրիոսի, Սելեւկիոսի, Թէոդուլայ, Յուլիանոսի եւ հինգ եգիպտացւոցն ։

Այս սուրբ վկայքս Քրիստոսի էին յաւուրս Դիոկղետիանոսի անօրէն արքային ։ Պամփիլոս քահանայ էր Կեսարու Պաղեստինու եկեղեցւոյն, եւ յոյժ ուսեալ էր եկեղեցական գիրս եւ զարտաքին փիլիսոփայութեան հանճարս ։ Եւ Սելեւկոս էր ի Կամբատակիոյ գաւառէն քաջ զօրական լեալ ի պատերազմի ։ Զսոցա հատին զգլուխն ։

* A fol. 186 v° b. Եւ Վաղենդինոս էր սարկաւագ Երուսաղէմի * եկեղեցւոյն ։ Եւ Պօղոս էր Յամնիտացւոց քաղաքէն, զորս չարաչար տանջեցին եւ ապա զգլուխս նոցա հատին ։

ԶՊորփիւրիոս սնուցեալ էր սուրբն Պամփիլոս, եւ էր գրագիր եւ էր ամաց տասն եւ ութից. եւ երթեալ խնդրէր զմարմին տեառն իւրոյ եւ վարդապետին, եւ զայլոց սրբոցն զի թաղեսցէ ։ Եւ կալան զնա որպէս քրիստոնեայ, գզեցին զմարմին նորա եւ ընկեցին ի հրախառն մոխիր հնոցի եւ այնպէս չարչարանօք աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։

2 Պամփիլեայ] Պամփիլոսի քահանայի *add.* B || 3 Թէոդուլայ] Թէոդուլի քահանայի *add.* B || 4 Քրիստոսի *om.* B — յաւուրս] հալածանաց *add.* B || 8 Վաղենդինոս] Վաղէնտինոս B || 10 եւ էր] եւ ուսուցեալ B || 13 չարչարանօք *om.* B || 14 առ Աստուած *om.* B.

La fête du saint apôtre Jude a lieu le 16 février.

En ce jour, martyre des douze martyrs Pamphile, Valens (*Valentios*), Paul, Porphyre, Séleucus, Théodule, Julien et des cinq Égyptiens.

Ces saints martyrs du Christ vivaient aux jours de l'empereur impie Dioclétien. Pamphile était prêtre de l'église de Césarée de Palestine. Il était très versé dans les livres de l'Église et dans la philosophie profane. Séleucus était de la province de Cappodoce (*Kambatakioy*) et, comme militaire avait donné des preuves de bravoure pendant la guerre. On leur trancha la tête.

* A fol. 186 v° b. Valens (*Valentinos*) était diacre de * l'église de Jérusalem. Paul était de la ville de Yamnia[1]. On les tortura cruellement et ensuite on leur trancha la tête.

Porphyre avait été élevé par saint Pamphile; il était scribe et avait dix-huit ans. Il alla chercher le corps de son maître et docteur et ceux des autres saints aussi pour les inhumer. On le saisit comme chrétien, on déchira son corps et on le jeta dans un four de cendres enflammées. C'est dans de telles tortures qu'il rendit son âme à Dieu.

1. Arménien Յամնիտացւոց, *yamnitatzuotz*, sous l'influence de l'ethnique grec τῶν Ἰαμνιτῶν πόλις.

Եւ Թէոդուլոս երէց էր ծերունի. զնա խաչեցին եւ զոլորքն ջարդեցին, եւ այնպէս աւանդեաց զհոգին :

Յուլիանոս էր ի Կապադովկիոյ գաւառէն, եւ երթեալ մերձ ի մարմին սրբոցն՝ գիրկս արկեալ համբուրէր արտասուօք. եւ զնա կալեալ ընկեցին ի հուր եւ աւանդեաց զհոգին :

Իսկ հինգ եգիպտացիքն մտանէին ընդ դուռն քաղաքին Կեսարիոյ Պաղեստինեայ. հարցին զռնապանքն զնոսա, եւ նոքա զճշմարիտն խոստովանեցան եթէ. Քրիստոնեայք եմք : Կալան զնոսա եւ որպէս չարագործս կապեցին, եւ տարան առ Փիրմիլիանոս դատաւորն. եւ յոյժ զնոսա տանջանօք չարչարեաց, եւ հարցանէր զանուանն եւ զգաւառն. եւ նոքա զմարգարէիցն ասացին զանուանսն. Եղիա, Երեմիա, Սամուէլ, Դանիէլ, Եզեկիէլ, եւ գաւառ՝ զԵրուսաղէմ :

Եւ այնպէս եւ սոքա տանջանօք եւ հրով չարչարեցան, եւ հատին զգլուխս նոցա. եւ զմարմինս * սրբոցն պահեաց Աստուած ի թռչնոց եւ ի գազանաց՝ մինչեւ արք * A fol. 187 rº a.
երկիւղածք երթեալ ամփոփեցին եւ թաղեցին պատուով շինեալ եւ վկայարանս :

Կատարի տօն սրբոց վկայիցս՝ Փետրուարի ԺԶ :

[B * Ի սմին աւուր յիշատակ է սուրբ եպիսկոպոսին Մարութայ, եւ ամենայն * B p. 83 b.

1 ջարդեցին] խորտակեցին B || 7 զնոսա *om.* B || 9 տանջանօք չարչարեաց] հարուածովք տանջեաց B || 14 վկայարանս] սրբոցն *add.* B || 15 Կատարի ... Փետրուարի ԺԶ] Կատարեցան սուրբ վկայքն Քրիստոսի Մեհեկի Ժ եւ Փետրուարի ԺԶ B.

Théodule était un prêtre âgé. On le mit en croix et on lui brisa les chevilles; c'est ainsi qu'il rendit l'âme.

Julien était de la province de Cappadoce (*Kapadovkioy*). Étant survenu auprès des corps des saints, il les enlaça et les baisa avec larmes. On le saisit également et on le jeta dans les flammes. Il y rendit l'âme.

Quant aux cinq Égyptiens, ils entraient par la porte de la ville de Césarée de Palestine. Les gardiens les interrogèrent et ils avouèrent la vérité en disant : « Nous sommes chrétiens. » On les saisit, on les lia comme des malfaiteurs et on les conduisit auprès du juge Firmilianus, qui les fit soumettre à de cruelles tortures. Il leur demanda leurs noms et la patrie d'où ils étaient. Ils lui dirent les noms des prophètes : Élie, Jérémie, Samuel, Daniel, Ézéchiel et comme patrie, Jérusalem.

Ils furent martyrisés eux aussi de la même manière par les tortures et les flammes, et on leur trancha la tête. Dieu préserva les * corps des saints des * A fol. 187 rº a.
oiseaux et des bêtes féroces, jusqu'à ce que des hommes craignant Dieu, s'y étant rendus, les recueillirent et les inhumèrent avec honneur, et édifièrent des monuments commémoratifs.

La fête de ces saints a lieu le 16 février.

[B * En ce jour, commémoration du saint évêque Marouthа et de tous les * B p. 83 b.

սրբոցն զորոց զոսկերսն ժողովեաց ի Մարտիրոպօլիս երկու հարիւր եւ ութսուն հազարացն եւ այլոց բազմաց :]

Մեհեկի ԺԱ եւ Փետրուարի ԺԷ : Վկայութիւն Թէոդորոսի մեծի վկային Քրիստոսի, որ թարգմանի աստուածատուր, որոյ տօնն կատարի յաղուհացիցն :

Քաջ նահատակն Թէոդորոս էր ի ժամանակս ամբարիշտ թագաւորացն Մաքսիմիանոսի եւ Մաքսենտի, ի քաղաքէն Ամասիոյ, ի գեղջէն Հումէալոն : Նորա զօրական լեալ յարեւելից գաւառն ի գունդն որ կոչի Մարմարիտեաց, եւ որպէս քրիստոնեայ տարան զնա առ դատաւորն Վրենկաս՝ որ ասի պրեպոսիտոս, եւ ստիպէր զնա զոհել կռոցն :

Եւ լցեալ նա հոգւով սրբով ի մէջ գնդին եւ ասէ . Ես քրիստոնեայ եմ, եւ չհրամայեցին ինձ զոհել պղծելեաց : Եւ յայժ բռնադատէին զնա զգենուլ զպատերազմնութիւնն եւ զոհել : Ասէ Թէոդորոս . Ես զօրական եմ թագաւորին իմոյ Քրիստոսի, եւ այլում զօրական ոչ կարեմ լինել : Եւ բազում բանս վասն մարդանալոյն Քրիստոսի խօսեցաւ ընդ Վրենկայ : Եւ թողլ ետուն նմա զի ընդ մտօքն անկցի եւ զոհեսցէ :

3 Վկայութիւն] սրբոյն *add.* B || 4 յաղուհացիցն] առաջին շաբաթուն՝ շաբաթն օրն *add.* B.

saints dont il recueillit les ossements à Martyropolis : deux cent quatre-vingt mille et beaucoup d'autres.]

11 MÉHÉKI, **17 Février.**

Martyre du grand martyr du Christ Théodore dont le nom se traduit par « don de Dieu », dont la fête a lieu pendant le carême [1].

Le vaillant martyr Théodore vivait aux jours des empereurs impies Maximien (*Makhsimianosi*) et Maxence (*Makhsènti*); il était de la ville d'Amasia, du village de Houméalai (*Houmèalon*). Il était soldat, dans les provinces orientales, de la légion dite des Marmarites. Comme chrétien on le conduisit chez le juge Brincas (*Vrenkas*) dit Praepositus [2], qui l'obligea à immoler aux idoles.

(Théodore), rempli du Saint-Esprit, dit au milieu de la troupe : « Je suis chrétien, on ne m'a pas commandé d'immoler à des abominations. » On le contraignit violemment à revêtir son armure et à immoler. Théodore dit : « Je suis soldat de mon roi le Christ, et ne puis être soldat d'aucun autre. » Il dit à Brincas bien d'autres paroles au sujet du Christ devenu homme. On lui laissa le temps de revenir à de meilleurs sentiments et d'immoler.

1. *Yaĉouhatzitz,* abstinence de sel et pain; la fête de saint Théodore a lieu le premier samedi de carême. — 2. Du titre latin *praepositus* le traducteur arménien a fait un surnom.

Եւ ելեալ Թէոդորոս շրջէր ընդ ամենայն տեղիս, եւ ուսուցանէր ամենեցուն զճանապարհս փրկութեան : Եւ ի միում գիշերի առեալ հուր յորժամ ամենեքեան ննջէին եւ զտաճար Ռէայ մօր աստուածոցն հրկիզեաց : * Եւ տեսեալ ոմանք ի նոցանէ զոր *A fol. 187 r° b.
արար պատմեցին Բռնեբեկեայ, եւ կալեալ զսուրբն տարան առաջի նորա : Եւ ասէ . Ընդէ՞ր փոխանակ զոհի եւ կնդրուկս մատուցանելոյ աստուածուհւոյն՝ հրով այրեցեր : Ասէ Թէոդորոս . Զոր արարի ոչ ուրանամ . փայտ ժողովեցի եւ այրեցի քարինս զի կիր լինիցին : Եւ սկսան հարկանել ուժգին : Ասէ սուրբն Թէոդորոս . Ոչ են կարող տանջանք քո՝ որ եթէ այլ եւս յաւելուցուս՝ մեկնել զիս ի սիրոյ յուսոյն իմոյ Քրիստոսի :

Արկին զնա ի բանդ, եւ կնքեցին զդուռն, զի սովամահ լինիցի : Եւ Հոգին սուրբ կերակրէր զնա ի բանդին : Եւ երեւեցաւ նմա Տէր ի բանդին եւ ասէ . Քաջալերեաց Թէոդորէ, զի ես ընդ քեզ եմ : Եւ նա սկսաւ սաղմոսել : Եւ լսէին պահապանքն բարբառս բազմաց, ընթացան ի բանդն եւ գտին փակեալ եւ զմատանեկնիքն ողջ : Եւ լսէին ձայն սաղմոսաց, եւ նայէին ընդ ծերպս պատուհանին, եւ տեսին բազում ամբոխ զի սաղմոսէին ընդ սրբոյն . երկեան եւ գնացեալ պատմեցին դատաւորին :

Եւ նա երթեալ վաղվաղակի եգիտ զդուռն փակեալ եւ զմատանին ողջ . եւ լսէր

2 յորժամ ամենեքեան ննջէին] մինչդեռ ննջէին B || 4 զսուրբն *om.* B || 8 ի սիրոյ յուսոյն] ի սիրոյն B || 9 Եւ Հոգին... ի բանդին *om.* B || 10 երեւեցաւ] ի տեսլեան *add.* B || 12 զմատանեկնիքն] զմատանին B || 13 եւ լսէին ձայն սաղմոսաց *om.* B.

Théodore se mit à circuler en tous lieux et enseignait à tous la voie du salut. Une nuit il prit du feu et pendant que tout le monde dormait il incendia le temple de Rhéa, la mère des dieux. * Quelques-uns ayant vu ce qu'il *A fol. 187 r° b.
avait fait en avertirent Brincas, saisirent le saint et le conduisirent devant lui. Celui-ci lui dit : « Pourquoi, au lieu de sacrifier et d'offrir de l'encens à la déesse l'as-tu, brûlée? » Théodore lui répondit : « Je ne nie pas ce que j'ai fait, j'ai ramassé du bois, j'ai brûlé des pierres pour les réduire en chaux. » On se mit à le frapper brutalement. Saint Théodore dit : « Tes tortures, même si tu les augmentes, ne pourront pas m'éloigner de l'amour de mon espérance en le Christ. »

On le jeta dans une prison, dont on scella la porte pour qu'il mourût de faim. Le Saint-Esprit le nourrit dans la prison. Le Seigneur lui apparut dans la prison et lui dit : « Prends courage, Théodore, car je suis avec toi. » Il se mit à psalmodier. Les gardiens, entendant les voix de plusieurs personnes, accoururent à la prison, la trouvèrent fermée et les scellés intacts. Ils entendirent les voix des psalmodies, regardèrent par les trous de la fenêtre et aperçurent une multitude qui psalmodiait avec le saint. Ils eurent peur et allèrent avertir le juge.

Celui-ci, s'étant aussitôt rendu (à la prison), trouva la porte fermée et le scellé intact, et entendit les voix de beaucoup (de chanteurs); il crut que les

ձայն բազմաց, եւ կարծեաց եթէ քրիստոնեայք ժողովեցան առ նա : Հրամայեաց զօրականաց շուրջ պատել զբանդոյն, եւ մտեալ ի ներքս ոչ զոք տեսին բայց միայն զԹէոդորոս պնդեալ ի փայտի ոտան, եւ յաՀէն դողումն կալաւ զամենեսեան :

* A fol. 187 v° a. Եւ ընդ առաւօտն կացուցին զնա յատեան, եւ* ստիպէին զնա զոՀել կռոցն. եւ խոստանայր դատաւորն բազում պատիւս եւ պարգեւս, եւ լինել քաՀանայապետ կռոցն : Ասէ Թէոդորոս. Թէպէտ եւ զմարմինս իմ տանջես, եւ Հրոյ եւ գազանաց մատնես՝ մինչեւ լիցէ շունչս իմ առ իս՝ ոչ ուրացայց զՔրիստոսն իմ : Եւ կախեցին զնա եւ քերեցին զմարմինն մինչեւ բանալ կողիցն : Եւ սուրբն Թէոդորոս սաղմոսէր. ՕրՀնեցից զՏէր յամենայն ժամ, զամենայն սաղմոսն :

Եւ զարմացաւ բռնաւորն ընդ Համբերութիւն նորա, նեղէր ապա դեռ եւս զոՀել : Եւ սուրբն Համարձակութեամբ ասէր. Ոչ երկնչիս դու յԱստուծոյ որ ետ քեզ զայդ իշխանութիւնդ եւ բռնադատես զիս թողուլ զԱստուած եւ անշունչ քարանց երկիր պագանել : Ասէ դատաւորն. Ընդ ո՞վ կամիս լինել՝ ընդ մեզ եթէ ընդ Քրիստոսն քո : Եւ սուրբն ասէ խնդութեամբ. Ընդ Քրիստոսի էի եւ եմ եւ եղէց :

Եւ տեսեալ դատաւորին թէ ոչինչ կարաց առնել վկային Քրիստոսի, Հրամայեաց Հրով այրել զնա. եւ առժամայն դաՀիճքն բորբոքեցին Հուր, եւ նա լուծեալ զգօտին՝

1 զօրականաց] սուսերօք *add.* B || 2 զԹէոդորոս] զսուրբն Թէոդորոս B || 5 կռոցն *om.* B.

chrétiens s'étaient assemblés auprès du (saint). Il ordonna aux soldats de cerner la prison, mais ayant pénétré à l'intérieur ils ne virent personne, sauf le seul Théodore, les pieds attachés au billot. Un tremblement, causé par la peur, les saisit tous.

* A fol. 187 v° a. Au matin on le fit venir au tribunal et on * le pressa d'immoler aux idoles. Le juge lui promit bien des honneurs et des dons, et de le faire grand prêtre des idoles. Théodore lui répondit : « Bien que tu tortures mon corps, que tu me livres aux flammes et aux fauves, tant qu'il me restera du souffle, je ne renierai point mon Christ. » On le suspendit et on déchira son corps jusqu'à lui mettre les côtes à nu. Mais saint Théodore psalmodiait dans son entier le psaume *Je bénirai le Seigneur à tout instant*[1].

Le tyran fut surpris de sa patience, puis l'engagea à immoler. Le saint lui dit avec hardiesse : « Tu n'as donc pas peur de Dieu qui t'a donné cette autorité et tu me forces à quitter Dieu pour adorer des pierres inanimées? » Le juge lui répondit : « Avec qui veux-tu être, avec nous ou avec ton Christ? » Le saint lui répondit joyeusement : « Avec le Christ j'étais, je suis et je serai. »

Le juge, voyant qu'il n'avait pu rien faire au martyr du Christ, ordonna de le brûler au feu. Aussitôt les bourreaux allumèrent du feu et (Théodore),

1. Ps., XXXIII, 1.

մերկացաւ զհանդերձն, ելոյծ եւ զօղ ոտիցն, եւ արարեալ յինքն զնշան սրբոյ խաչին : Կապեցին զնա որպէս զխոյ պատարագի, եւ աղօթեաց առ Աստուած. Գոհանամ զքէն Քրիստոս որ արժանի արարեր զիս այսմ մասին լինել հաղորդ ընդ վկայսն քո : Եւ նայեցեալ յամբոխն ետես զընկեր իւր զԿղեոնիկոս զի լայր, եւ ասէ. Փութա՛ հասիր ինձ, եւ որպէս յապականացու* երկրիս ոչ թողաք զմիմեանս՝ նմանապէս եւ յանապական կեանս մի՛ որոշեսցուք : Եւ ընկեցին զսուրբ վկայն Քրիստոսի ի հուրն, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի Փետրուարի ԺԷ : * A fol. 187 v° b.

Եւ տեսին հաւատացեալ ժողովուրդն զհոգին իբրեւ զփայլակն զի ելանէր յերկինս : Եւ կին մի քրիստոնեայ Բարէանուն խնդրեաց զմարմին սրբոյն Թէոդորոսի եւ պատեաց մաքուր կտաւովք եւ անուշ իւղովք եւ խնկօք, հանգոյց ի փայտեայ տապան եւ պահեաց ի տան իւրում, եւ մեծապայծառութեամբ կատարեաց զյիշատակս նորա փառաւորելով զՔրիստոս :

1 արարեալ] արար B || 5 նմանապէս *om.* B || 7 Փետրուարի ԺԷ] եւ Մեհեկի ԺԱ *add.* B || 8 Եւ տեսին... յերկինս *om.* B || 11-12 եւ մեծապայծառութեամբ... զՔրիստոս] եւ յետ ժամանակի տարաւ ի գաւառն իւր որ կոչի Եւխայիտա՝ մերձ ի քաղաքն Ամասիայ եւ եդ ի հանգստի մեծաւ պատուով եւ զգուշութեամբ. եւ կատարեաց զյիշատակ սրբոյ վկային ամենայն հաւատացելովքն ի փառս եւ ի գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս B.

dénouant sa ceinture, se dépouilla de ses vêtements, délia les lacets de ses chaussures et fit sur lui-même le signe de la sainte croix. On l'attacha comme le bélier du sacrifice, tandis qu'il priait Dieu : « Je te rends grâces, Christ, de m'avoir rendu digne de prendre ma part avec tes martyrs. » Il jeta son regard sur la foule et aperçut son compagnon Cléonicus qui pleurait. Il lui dit : « Dépêche-toi à me rejoindre et de même que nous ne nous sommes point quittés sur cette terre * périssable, de même nous ne serons point séparés dans la vie incorruptible. » On jeta le saint martyr du Christ dans les flammes et il rendit son âme à Dieu, le 17 février. * A fol. 187 v° b.

Les fidèles rassemblés aperçurent son âme qui montait au ciel comme un éclair. Une femme chrétienne, au beau nom[1], demanda le corps de saint Théodore, l'enveloppa dans des linges propres avec de l'huile parfumée et de l'encens, le déposa dans un cercueil de bois et le conserva dans sa maison, et célébra avec grande solennité sa commémoration en glorifiant le Christ.

1. Les récits grecs nomment Εὐσεβία la sainte femme qui recueillit le corps de saint Théodore. L'expression arménienne բարէանուն « au beau nom », que le grand dictionnaire des Méchitaristes de Venise ne connaît pas en dehors de ce passage, correspond au mot grec φερωνύμος « dont le nom convient au caractère ». L'auteur de la vie métaphrastique voulait dire que Εὐσεβία était pieuse comme son nom l'indiquait. Le traducteur, qui ne lisait sans doute pas le nom de la femme dans l'exemplaire dont il se servit, puisqu'il l'a omis, s'est arrêté à une formule, qui tient de la transcription autant que de la traduction բարէ... = φερε...

Սքանչելի տեսիլն զոր եցոյց սուրբն Թէոդորոս ի Կոստանդինուպօլիս, վասն որոյ եւ ի քառասներորդ աւուրս պահոցն՝ առաջին շաբաթնօրն կատարի տօն սրբոյն Թէոդորոսի ։

Յաւուրս անօրէն եւ ամբարիշտ եւ ուրացող եւ պղծ թագաւորին Յուլիանոսի յորժամ մերձեցաւ քառասնօրեայ աւուրք պահոցն, պիղծ եւ գարշելի խորհուրդ առեալ ի սատանայէ Յուլիանոս կոչեաց զնմանողսն անաստուածութեան իւրոյ զեպարքոս քաղաքին եւ ասէ. Որչափ ջանս եդի վասն քրիստոնէից դարձուցանել զնոսա ի պաշտամունս մեր եւ ոչ կարացի ոչ պատուով եւ ոչ ընչիւք, ոչ սրով եւ ոչ մահուամբ ։ Եւ ի գիշերիս յայսմիկ աստուածքն մեր բարի խորհուրդ արկին ի սիրտ իմ, զոր եւ արարից, զի կամ ուրասցին զՔրիստոս եւ զոհեն կռոցն, կամ ի սովոյ մեռցին ։ Այժմ մերձեալ է * A fol. 188 r° a. պահքն իւրեանց, եւ * ամենայն անձն քրիստոնէի սրբութեամբ պահեն մինչեւ ի զատիկն իւրեանց, եւ զառաջին շաբաթն առաւելագոյն քան զայլ աւուրսն. արդ պատուէր տուր որ ոչ հաց եւ ոչ այլ ինչ կերակուր կամ ըմպելի հանցեն ի վաճառ՝ այլ զոր ես առաքեցից առ քեզ զայն տացես ի վաճառ ։ Հրամայեմ որ զհացն եւ զկերակուր եւ զըմպելի խառնեն ի ճարպոյ եւ յարենէ զոհիցն, զի կամ կերիցեն եւ զոհեսցեն ընդ մեզ աստուածոց մերոց, եւ կամ ի սովոյ մեռանիցին ։

Ասէ եպարքոսն. Ճշմարիտ որ սիրտ թագաւորին ի ձեռս աստուածոցն են, բարի եւ

2 շաբաթնօրն] շաբաթուն շաբաթնօրն B || 9 կռոցն] աստուածոց մերոց B.

Merveilleuse vision que fit voir saint Théodore à Constantinople, à cause de la fête de saint Théodore qui a lieu le premier samedi du carême des quarante jours.

Au temps de l'empereur impie, renégat et immonde, Julien, à l'approche du carême des quarante jours, Julien prit le conseil ignoble et immonde du démon et manda auprès de lui les partisans de son athéisme, dont l'éparque de la ville, et dit à celui-ci : « J'ai fait tant d'efforts pour convertir les chrétiens à notre culte et je n'ai réussi, ni par les honneurs, ni par les richesses, ni par le glaive, ni par la mort. Mais, cette nuit, nos dieux ont inspiré un bon conseil à mon cœur, et je vais le mettre à exécution : ou bien ils renieront le Christ et immoleront aux idoles, ou bien ils mourront de faim. Voici que leur * A fol. 188 r° a. carême approche * et tous les chrétiens jeûnent saintement jusqu'à leur pâque, et le premier samedi plus que les autres jours. Or, tu ordonneras qu'on ne mette en vente ni pain, ni aucune autre nourriture, ni boisson, mais, ce que je t'enverrai, tu le donneras à vendre. J'ordonne de mêler au pain, à la nourriture et aux boissons de la graisse et du sang des victimes (disant) : Ou bien ils en mangeront et immoleront avec nous à nos dieux, ou bien ils mourront de faim. »

L'éparque lui répondit : « Il est bien vrai que le cœur de l'empereur

ընդունելի եւ հաճոյական խորհուրդ խորհեցար : Եւ երթեալ եպարքոսին առժամայն զհրամայեալսն ի թագաւորէն կատարեաց. եւ ոչ ետ հանել ի վաճառ հաց կամ այլ ինչ կերակուր կամ ըմպելի՝ բայց միայն զոր առաքեաց պիղծ արքայն : Այլ Աստուած իւր ամենակարող զօրութեամբն զնորա չար խորհուրդն խափանեաց եւ ոչնչացոյց, եւ զիւր հաւատացեալսն փրկեաց ի զազրալից կերակրոցն :

Յառաջին պահոց գիշեր, երեւեցաւ մեծ վկայն Քրիստոսի սուրբն Թէոդորոս Կոստանդնուպօլսի պատրիարքին եւ ասէ. Ընդ առաւօտն ժողովեա առ քեզ զամենայն քրիստոնեայս եւ պատուիրեա նոցա որ ամենեւին ոչ հաց եւ ոչ կերակուր եւ ոչ ըմպելի գնեսցեն ի վաճառականաց, զի ամենայն ինչ ի ճարպոյ եւ յարենէ զոհից խառնեալ են, * այլ կերիցեն ի տան իւրեանց կերակուր : * A fol. 188 r° b.

Ասէ պատրիարքն. Որ մեծատունք են ունիցին ի տունս իւրեանց եւ կերիցեն. աղքատք որ միոյ աւուր կերակուր ոչ ունին զինչ ուտիցեն ի տունս իւրեանց : Ասէ սուրբն Թէոդորոս. Բաշխեա նոցա կոլիբայ եւ զայն կերիցեն : Ասէ պատրիարքն. Ոչ գիտեմ զինչ իցէ կոլիբայն : Ասէ սուրբն. Ցորեան եփեա եւ տուր նոցա եւ զայն կերիցեն· զի մեք յԵւքայիտայ եփեալ ցորենոյն կոլիբայ կոչեմք :

Ասէ պատրիարքն. Եւ դու ո՞վ իցես, տէր, որ այդպիսի խնամակալութեամբ եւ գթով

1 խորհուրդ] իմաստից *add.* B || 4 խափանեաց] ոչնչացոյց B || 12 ուտիցեն] կերիցեն B || 14 սուրբն] սուրբ վկայն B.

est entre les mains des dieux. Tu as médité un dessein bon, pratique et agréable. » L'éparque s'empressa aussitôt d'aller accomplir les ordres de l'empereur; il ne donna à vendre ni pain, ni aucune autre nourriture ou boisson, à l'exception de ce que l'immonde empereur lui avait fait parvenir. Mais Dieu par sa vertu toute-puissante entrava sa mauvaise pensée et l'annihila, et sauva ses fidèles des aliments immondes.

La première nuit du carême, le grand martyr du Christ, saint Théodore, apparut au patriarche de Constantinople et lui dit : « Au matin, rassemble tous les chrétiens et recommande-leur de ne rien acheter aux marchands, ni pain, ni aucune nourriture ou boisson, car tout est mélangé de graisse et de sang des victimes; * mais qu'ils mangent chez eux des choses (préparées) à la maison. * A fol. 188 r° b.

Le patriarche lui dit : « Les riches mangeront ce qu'ils ont dans leurs maisons, mais les pauvres qui n'ont que la nourriture d'un jour, que mangeront-ils chez eux? » Saint Théodore lui dit : « Distribue-leur du koliba, et ils le mangeront. » Le patriarche lui répondit : « Je ne sais pas ce que c'est que le koliba. » Le saint dit : « Fais cuire du blé, et donne-le-leur pour qu'ils le mangent; car nous, aux Euchaïtes, nous appelons koliba le blé cuit. »

Le patriarche lui répondit : « Et qui es-tu, seigneur, qui commandes le

հրամայես զփրկութիւն ժողովրդեանն Քրիստոսի ։ Ասէ սուրբն. Ես եմ Թէոդորոս վկայն Քրիստոսի, եւ ի Նմանէ առաքեցայ ազդեցուցանել քեզ ։ Եւ նոյնժամայն անյայտ եղեւ ։ Եւ ընդ առաւօտն կոչեաց զամենայն քրիստոնեայսն, եւ պատմեաց զամենայն երեւմունս եւ զասացեալսն ի սրբոյն Թէոդորոսէ, եւ արար որպէս հրամայեցաւն ։

Եւ գիտացեալ Յուլիանոսի՝ յամօթ լեալ հրամայեաց յետ դարձուցանել զպղծախառն կերակուրսն եւ զըմպելիսն, եւ ըստ սովորութեանն իւրեանց վաճառեցին հաց եւ կերակուր ։ Եւ ինքն յամօթոյն ի նաւ մտեալ ել ի քաղաքէն ։

Եւ ի շաբաթն օրն կատարեցին մեծապայծառութեամբ զտօն սրբոյն Թէոդորոսի բազում խնդութեամբ եւ գոհութեամբ ։ Եւ հրամայեաց պատրիարքն որ ամենայն քրիստոնեայք յամենայն ամի զառաջին * շաբաթն պահոցն տօն կատարեսցեն մեծ վկային Քրիստոսի սրբոյն Թէոդորոսի ։

* A fol. 188 v° a.

[B* Ի սմին աւուր յիշատակ Մարիամնի քեռն Փիլիպպոսի առաքելոյ, եւ Սոփրոնիոսի Երուսաղեմացւոյ, եւ սուրբ հօրն Սալամանոսի ճգնաւորի, եւ սքանչելագործ հօրն մերոյ Աւքսիվիու եպիսկոպոսի Կիպրացւոյ աշակերտին Մարկոսի աւետարանչի եւ գիւտ նշխարաց մեծին Մինասայ վկայի ։]

* B p. 86 a.

3 զամենայն երեւմունս] զերեւումն B. || 10 շաբաթն պահոցն] շաբաթու պահոցն շաբաթ օրն B.

salut du peuple du Christ avec tant de soin et de sollicitude? » Le saint lui dit : « Je suis Théodore, le martyr du Christ, et je suis envoyé par Lui pour t'inspirer. » Et il disparut aussitôt. Au matin (le patriarche) manda tous les chrétiens, leur raconta l'apparition et tout ce que saint Théodore lui avait dit; puis il fit comme il lui avait été ordonné.

L'ayant appris, Julien, rempli de honte, ordonna qu'on retournât les aliments et les boissons mélangés d'impuretés, et de mettre en vente selon la coutume du pain et des denrées alimentaires. Quant à lui, de honte, il s'embarqua sur un navire et quitta la ville.

Le jour du samedi on célébra avec grande solennité la fête de saint Théodore avec réjouissance et des actions de grâces; le patriarche ordonna que tous les chrétiens, chaque année, célébrassent, le samedi de la première * semaine de carême, la fête du grand martyr du Christ, saint Théodore.

* A fol. 188 v° a.

[B* En ce même jour, commémoration de Mariamnâ, sœur de l'apôtre Philippe, de Sophronius de Jérusalem, du saint père, l'ascète Salamanos (*Salamonos*), de notre père le thaumaturge Auxibios, évêque de Chypre, disciple de l'évangéliste Marc, et découverte des restes du grand martyr Ménas.]

* B p. 86 a.

Մեհեկի ԺԲ եւ Փետրուարի ԺԸ ։ Վկայութիւն Սադովկայ եպիսկոպոսին Սալիքայ քաղաքին ։

Ի ժամանակս Սաբուրհոյ հրապաշտ արքային Պարսից էր երանելին Սադոք եպիսկոպոսն Սալիքայ քաղաքի եւ Տիսփոնի ։ Ետես յանուրջս զսուրբ վկայն Քրիստոսի զՍիմէոն որ յառաջ քան զինքն եպիսկոպոս էր եւ մարտիրոսացաւ, որ ի վերայ սանդղոց կանգնեալ էր եւ կոչէր զնա եւ ասէր. Ել Սադոք աներկիւղ ի վեր ընդ սանդուղքս եւ եկեսցես առ իս ։

Եւ զարթուցեալ Սադոք գիտաց որ ի մարտիրոսութիւն կոչէր, եւ երթեալ երեւեցոյց զինքն արքային. եւ առժամայն կապեցին զնա եւ այլ քրիստոնեայս հարիւր եւ քսան եւ ութ անձն, ընդ այր եւ ընդ կին, որք առաջի արքային խոստովանեցան զանունն Քրիստոսի ։

Եւ եպիսկոպոսն Սադոք յանդիմանեաց անարգանօք զերկրպագօղսն արեգականն եւ հրոյ, եւ արքայն հրամայեաց զնոսա արկանել ի բանդ ։ * Եւ եղեն արգելական բանդին ամիսս հինգ, եւ նեղէին զնոսա տանջանօք եւ սովով, եւ ոչ կարացին զսուրբսն դարձուցանել ի հաւատն իւրեանց ։ Եւ հանին զհարիւր եւ քսան եւ ութ սուրբսն արտաքոյ քաղաքին եւ հատին զգլուխս նոցա ։ * A fol. 188 v° b.

1 Վկայութիւն... քաղաքին] Վկայութիւն սրբոյն Սադոքայ եպիսկոպոսին, եւ հարիւր քսան եւ ութ վկայիցն ընդ նմա B || 3 Սաբուրհոյ] Շապհոյ *add.* B || 4 Սալիքայ քաղաքի եւ Տիսփոնի] քաղաքին Սալէքայ եւ Տիսբոնի B — Քրիստոսի *om.* B || 6 ի վեր *om.* B || 13 եւ եղեն արգելական բանդին ամիսս հինգ *om.* B.

12 MÉHÉKI, **18 Février.**

Martyre de Sadoc, évêque de la ville de Séleucie.

Le bienheureux Sadoc (*Sadokh*) évêque de Séleucie (*Salikh*) et de Ctésiphon, vivait aux jours du roi des Perses Sapor, l'adorateur du feu. Il vit dans un rêve le saint martyr du Christ, Siméon, qui avait été évêque avant lui et avait été martyrisé, se tenant debout en haut d'un escalier, qui l'appelait et disait : « Monte sans crainte, Sadoc (*Sadokh*), au haut de l'escalier et viens à moi. »

Sadoc s'étant réveillé comprit qu'il était appelé au martyre, et alla se faire connaître au roi. On le lia aussitôt, ainsi que d'autres chrétiens au nombre de cent vingt-huit, hommes et femmes, qui confessèrent, en présence du roi, le nom du Christ.

L'évêque Sadoc blâma avec mépris les adorateurs du soleil et du feu, et le roi ordonna de les jeter tous en prison. *Ils furent retenus en prison pendant cinq mois; on les maltraita par des tortures et par la faim, mais (les païens) ne purent convertir les saints à leur religion. On fit sortir les cent vingt-huit saints hors de la ville, et on leur trancha la tête. * A fol. 188 v° b.

Եւ զերանելին Սադոք տարան ի քաղաքն Բիթլապատ, եւ անդ հատին զպատուական գլուխն իւր Փետրուարի ԺԸ :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Աղեկսանդրոսի Թեսաղոնիկեցւոյն :

Այս երանելի վկայս Քրիստոսի էր յաւուրս Մաքսիմիանոսի կռապաշտ արքային. եւ երթեալ կործանեաց զսեղանն յորում էին զոհքն, եւ հեղաւ ամենայն որ ինչ ի սեղանին էին, եւ կալեալ զնա տարան առ թագաւորն :

Եւ ասէ ցնա. Մատուցեալ երկի՛ր պագ եւ զոհեա՛ աստուածոցն : Ասէ սուրբն. Ես ուսայ միայնոյ Աստուծոյ արդարադատ թագաւորի երկիր պագանել, զի նա արար զմեզ, եւ զձեզ անէծ որ ոչ կամեցայք ճանաչել զարարողն ձեր : Եւ բարկութեամբ հրամայեաց Մինուկիանու դահճապետին հատանել զգլուխն սրբոյ վկային. եւ նորա վերացուցեալ զսուրն զի զարկցէ՝ եկաց շրտուցեալ եւ անմռունչ : Ասէ ցնա թագաւորն. Ընդէ՞ր կաս այր.... ար զօրական եւ ոչ հատանես (զգլուխ)ն : Ասէ Մինուկիանոս. Ով թագաւոր եղեւ գլուխս իմ որպէս լեառն, եւ եմ ի դողման, եւ ձեռս իմ իբրեւ
* A fol. 189 r° a. զփայտ սրովս * եւ ոչ կարեմ խոնարհեցուցանել :

2 Փետրուարի ԺԸ] եւ Մեհեկի ԺԲ *add.* B || 4 Քրիստոսի *om.* B || 7 ցնա] թագաւորն *add.* B || 8 պագանել] եւ պատարագս մատուցանել *add.* B || 9 զարարողն] զարարիչն ձեր B || 10 — p. [1111] l. 5 Մինուկիանու... յերկինս] եւ հատին զգլուխ սրբոյն Աղեկսանդրոսի Փետրուարի ԺԸ : Եւ տեսեալ թագաւորին սքանչելիս ի մահու նորա B.

On conduisit le bienheureux Sadoc à la ville de Beit Lapat et on y trancha sa précieuse tête, le 18 février.

En ce jour, martyre de saint Alexandre le Thessalonicien.

Ce bienheureux martyr du Christ vivait aux jours de l'empereur idolâtre Maximien. Il alla renverser l'autel sur lequel se trouvaient les victimes et fit tomber à terre tout ce qui se trouvait sur l'autel. On le saisit et on le conduisit à l'empereur.

Celui-ci lui dit : « Va, prosterne-toi et sacrifie aux dieux. » Le saint lui répondit : « J'ai appris à adorer le Dieu unique, roi juste, qui nous a créés et vous a maudits, vous qui n'avez point voulu reconnaître votre créateur. » (L'empereur) en colère ordonna au chef des bourreaux Minucianus de trancher la tête au saint martyr; mais ayant levé le glaive pour le frapper, (Minucianus) demeura glacé et sans voix. L'empereur lui dit : « Pourquoi restes-tu glacé, soldat, et ne tranches-tu (la tête)? » Minucianus lui répondit : « O empereur, ma tête est comme une montagne, je suis saisi d'un tremble-
* A fol. 189 r° a. ment et ma main (armée) de l'épée est comme de bois, * je ne peux pas l'abaisser. »

Եւ խնդրեաց սուրբն ջուր եւ լուաց զձեռս իւր եւ ասէ. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց ։ Եւ երթեալ այլ դահճին եհատ զգլուխն սրբոյն Աղեքսանդրոսի Փետրուարի ԺԸ ։

Եւ ետես թագաւորն չորս հրեշտակս սպիտակազգեստս, որ առին զհոգի սրբոյն Աղեկսանդրոսի եւ ելին յերկինս. եւ զղջացաւ զի եսպան զսուրբն Աղեքսանդրիոս ։ Կային առաջի նորա եւ այլ քրիստոնեայք կապեալք ։ Ասէ ցնոսա. Մի երկնչիք՝ զի ոչ մեռանիք ։ Եւ նոքա ասեն. Մեք կամիմք որ մեռանիմք, զի վասն Քրիստոսի մեռանելն՝ կեանք են. այլ աղաչեմք զքեզ որ ըստ իւրոյ արժանեաց մարտիրոսութեանն թաղեսցի եղբայրս մեր Աղեկսանդրոս ։

Ասէ թագաւորն. Զինչ լիցի մարտիրոսութիւնն ։ Ասէ Բեկտոր զօրականն. Որ վասն Քրիստոսի մեռանի մարտիրոս անուանեն, եւ ժողովին ամենայն քրիստոնեայք եւ թաղեն զնա. եւ աղաչեմք զքեզ որ գրես ի Թեսաղոնիկեցւոց քրիստոնեայս, զի որպէս եւ կամեսցին թաղեսցեն զնոսա ։

Եւ գրեաց առ նոսա հրաման զի զամենայն մարդ որ վասն Քրիստոսի մարտիրոսանայ՝ համարձակութեամբ եւ աներկիւղ թաղեսցեն ։ Եւ գնացին եղբարք երկիւղածք եւ առին զմարմին սուրբ վկային Աղեկսանդրոսի, եւ թաղեցին ըստ արժանեաց իւրոյ մարտիրոսութեանն բարի խոստովանութեամբ ի տեղւոջն որ կոչի Թորգիէ ։

12-15 եւ թաղեն զնա ... աներկիւղ թաղեսցեն] զի մեծաւ փառօք թաղեսցեն զնա ։ Եւ հրաման ետ թագաւորն եւ գնացին եղբարք երկիւղածք առին զմարմին սուրբ վկային Աղեկսանդրեայ B.

Le saint demanda de l'eau, se lava les mains et dit : « Saint, saint, saint, le Seigneur des armées. » Un autre bourreau s'approcha et trancha la tête à saint Alexandre, le 18 février.

L'empereur aperçut quatre anges revêtus de blanc qui s'emparèrent de l'âme de saint Alexandre et remontèrent au ciel ; il regretta d'avoir tué saint Alexandre. Il y avait devant lui d'autres chrétiens liés, et il leur dit : « N'ayez aucune crainte, vous ne mourrez pas. » Ils lui répondirent : « Nous voulons mourir, car mourir pour le Christ, c'est la vie. Mais nous vous prions que notre frère Alexandre soit inhumé selon les mérites de son martyre. »

L'empereur dit : « Qu'est-ce que le martyre? » Le soldat Victor (*Bektor*) lui répondit : « On appelle martyr celui qui meurt pour le Christ et tous les chrétiens se réunissent pour l'inhumer. Aussi nous vous prions d'écrire aux chrétiens de Thessalonique de l'inhumer comme ils l'entendent. »

(L'empereur) leur écrivit un décret, pour qu'ils inhumassent ouvertement et sans crainte quiconque aurait été martyrisé pour le Christ. Les frères pieux allèrent relever le corps du saint martyr Alexandre et l'inhumèrent selon le mérite de son martyre en bonne confession, à l'endroit appelé Thorgie[1].

1. A restituer Θρακῇ « en Thrace ».

* A fol. 189 r° b.

* Մեհեկի ԺԳ եւ Փետրուարի ԺԹ ։ Տօն է Ներսէսի Հայոց հայրապետին եւ Խադայ սարկաւագի ։

Յերրորդի ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէս, որ էր որդի Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի, զոր աստուածային ընտրութեամբն զանեալ տարան ի Կեսարիա, եւ առեալ զօծումն արքեպիսկոպոսութեան եւ քահանայապետութեան յարքեպիսկոպոսէն Եւսեբեայ դարձաւ ի Հայս. եւ զամենայն կարգս ուղղութեան նորոգեաց, եւ զոր ետես ի Յոյնս բարեպաշտութիւն ուր սնաւ ի մանկութեանն՝ ի Հայս զնոյնն կարգէր ։

Առաջին՝ զի հրամայեաց վանորայս շինել, եւ զկրօնաւորս ի լերինս բազմացոյց միաբանակեաց կենօք ։ Երկրորդ՝ զի զհիւրանոցս շինեաց ի ճանապարհս եւ յանբնակ տեղիս, եւ զհիւանդանոցս ի գեօղս եւ ի քաղաքս, եւ ետ գեօղս ի ծառայութիւն ։ Երրորդ՝ զի զբորոտս եւ զվտակս զարշութեամբ հալածէին Հայք ի լերինս, խափանեաց զայսպիսի հրէական խորութիւնս, եւ ետ ընդունել զնոսա ի հիւանդանոցս ։ Չորրորդ զի վասն ագահութեան հայրենեացն՝ ընդ ընդանիսն ամուսնանային իշխանքն,

1 Տօն... սարկաւագի] Վարք սուրբ հօրն մերոյ Ներսէսի Հայոց հայրապետի առաջնոյ, եւ Խադայ սարկաւագի B || 3 Յերրորդի] Յերկրորդում B || 5 Գրիգորի] Լուսաւորչին, կրթեալ եւ վարժեալ ի հոգեւոր եւ յարտաքին գիտութիւնս *add.* B || 6 արքեպիսկոպոսութեան եւ *om.* B || 7 ետես] տեսաւ B || 8 զնոյնն կարգէր] նորոգէր B || 10 զհիւրանոցս] եւ զհիւանդանոցս *add.* B.

* A fol. 189 r° b.

* 13 MÉHÉKI, 19 Février.

Fête de Nersès, patriarche des Arméniens, et du diacre Khad[1].

La troisième année du règne d'Archak, le grand Nersès devint le patriarche des Arméniens. Il était le fils d'Athénagène, fils de Houssik, fils de Verthanès, fils de saint Grégoire. Découvert par l'élection de Dieu, Nersès fut emmené à Césarée, où il reçut la consécration d'archevêque et de patriarche des mains de l'archevêque Eusèbe. Revenu en Arménie, il renouvela toutes les œuvres de justice et il établit en Arménie tout ce qu'il avait vu de piété chez les Grecs, parmi lesquels il avait passé sa jeunesse.

Premièrement il ordonna de construire des couvents et augmenta le nombre des religieux menant la vie cénobitique dans les montagnes. Deuxièmement il fit construire des hospices sur les chemins et dans les lieux déserts, des hôpitaux dans les villages et les villes et leur octroya des villages en servitude. Troisièmement, parce que les Arméniens repoussaient avec dégoût dans les montagnes les lépreux et les incurables, il défendit cette coutume juive, et les fit accueillir dans les hôpitaux. Quatrièmement, le saint abolit la coutume des princes de se marier entre parents par rapacité de patrimoine.

1. Cf. 11 Tré, 19 novembre, *P. O.*, XVI, p. 68-71.

զոր խափանեաց սուրբն ։ Հինգերորդ՝ զի անմխիթար լալին ի վերայ մեռելոցն հեթանոսական սովորութեամբ, զոր խրատեաւ դադարեցոյց ։ Զայսոսիկ եւ այլ կարգս բազումս յեկեղեցիս եւ ի քաղաքս ուղղեաց, եւ կացոյց * վերակացու հիւանդաց զԽադ * A fol. 189 v° a. պատուականն սարկաւագն իւր ։ Եւ էր տեսանել զՀայք նոր նորոգեալ նովաւ ։

Իսկ թագաւորն Արշակ ոչ գնայր ըստ կամաց երանելւոյն, յորոյ վերայ սուգ առնէր սուրբն Ներսէս, որպէս Սամուէլ ի վերայ Սաւուղայ. եւ որիշ ի նմանէ առնէր զբնակութիւնն ։ Եւ նա երկուցեալ ի թագաւորէն Յունաց ի Վաղեսէ՝ աղաչէր զմեծն Ներսէս հանդերձ իշխանօքն եւ եպիսկոպոսօքն գնալ առ թագաւորն ։ Իսկ սուրբն հաւանեալ գնաց, զոր ոչ հաւանեալ հերձուածող արքայն Վաղէս, այլ յանդիմանեալ ի հայրապետէն, հրաման ետ աքսորել զնա ի կղզի մի ուր կերակրեցան ի տեսչութենէն Աստուծոյ, զի ձկունքն իւրովի արտաքս գային, ի տեսչութենէն Աստուծոյ, ի ծովէ անտի եւ լինէին կերակուր նոցա զամիսս ութ ։

Եւ ի նմին ամի սատակեցաւ Վաղէս. եւ թագաւորեաց մեծն Թէոդոս, որ քակեաց զմեհեանս կռոցն զփակեալսն ի Կոստանդիանոսէ. եւ դարձոյց զամենայն հարս սուրբս զաքսորեալս ի մետաղս՝ ընդ որս եւ զմեծն Ներսէս պատուով եւ փառօք ։

Բայց նախ քան զգնալն իւր ի Հայք ձեռնադրեալ էր զԽադ սարկաւագն իւր որ

5 առնէր] առնոյր B || 9 հաւանեալ] ընկալաւ B || 10 կերակրեցան] կերակրեցաւ B || 11 ի տեսչութենէ Աստուծոյ *om.* B || 12 նոցա] նմա B.

Cinquièmement, il mit un terme par ses exhortations à la coutume profane de pleurer inconsolablement sur les morts. Il établit toutes ces réformes et d'autres encore dans les églises et les villes et institua * comme directeur * A fol. 189 v° a. des hôpitaux son vertueux diacre, Khad. On eut ce spectacle : l'Arménie complètement renouvelée par lui.

Le roi Archak ne se comportait pas selon la volonté du bienheureux, et saint Nersès en prenait le deuil à l'instar de Samuel sur Saül; et il avait établi sa résidence loin de lui. (Archak) craignant l'empereur des Grecs, Valens, pria le grand Nersès de se rendre auprès de l'empereur accompagné de princes et d'évêques. Ayant consenti, le saint alla, mais l'empereur hérétique, Valens, n'étant pas d'accord avec le (patriarche) et blâmé par lui, ordonna de l'exiler dans une île, où ils furent nourris par la providence de Dieu; car les poissons, par la providence de Dieu, sortaient d'eux-mêmes de la mer et leur servirent de nourriture durant huit mois.

Cette même année, Valens vint à mourir et ce fut le grand Théodose qui régna, lequel fit détruire les temples d'idoles que Constantin avait fait fermer; il fit rentrer avec honneur et gloire tous les saints pères exilés dans les mines, entre autres le grand Nersès.

(Nersès), avant de quitter le pays, avait sacré évêque en Arménie son

էր ի վերայ հիւանդանոցացն եպիսկոպոս. որ այնչափ փոյթ եւ առատ էր ի վերայ աղքատացն տեսչութեամբ մինչ զի հատեալ շտեմարանք նորա որ ի պէտս աղքա-
* A fol. 189 v° b. տացն, աղբիւրացաւ որպէս առ * Եղիայիւն եւ Եղիսէիւն :

Եւ էր սա ի յանդիմանութիւն Արշակայ ահաւոր եւ անհերքելի. այլ նա այպանէր զԽադ վասն հանդերձիւք պճնելոյ եւ ձիասիրութեան. եւ արհամարհեալ զայս՝ խարազնազգեստ եղեալ իշով շրջէր, եւ ի յանդիմանելոյ ոչ դադարէր, մինչեւ հրաման ետ բարկութեամբ քարշել զերանելին եւ քարկոծել :

Եւ ինքն Արշակ գնաց առ Պարսից արքայ Շապուհ, ի բարկութենէ նորա զանգիտացեալ անձամբ զանձն սպանանէր, ըստ նախամարգարէութեանն սրբոյն Ներսէսի :

Իբրեւ լուաւ սուրբն Ներսէս զչար գործս Արշակայ եւ զմահ նորին, խնդրեաց ի թագաւորէն Թէոդոսէ նստուցանել փոխանակ նորա զորդին իւր զՊապ թագաւոր որում հաւանեալ թագաւորն առաքեաց ընդ նոսա զօրս բազումս ի Հայս պատերազմել ընդ զօրս Պարսից, որք եկեալ արարին զհրամանն : Եւ ի խմբել մարտին՝ ել հայրապետն ի կատարս լերինն Նպատայ, եւ համբարձեալ զձեռս յաղօթս ըստ օրինակի նախամարգարէին Մովսէսի, անխոնարհելի պահելով մինչեւ պարտեցաւ երկրորդն

1 ի վերայ աղքատացն տեսչութեամբ] ի տեսչութիւն աղքատացն B || 8 զանգիտացեալ] զանգիտեալ B || 10 զչար գործս] զչարագործս B || 13 ընդ զօրս Պարսից] ընդ Պարսիկս B.

diacre Khad, qui était épitrope des hôpitaux, et qui eut tant de sollicitude et fut si large envers les pauvres dans ses fonctions que ses greniers ayant été vidés pour l'usage des pauvres, se remplirent (d'eux-mêmes),
* A fol. 189 v° b. comme au temps * d'Élie et d'Élisée.

(Khad) fit des remontrances énergiques et redoutables à Archak, mais celui-ci méprisait Khad à cause de son luxe pour ses vêtements et de son amour pour les chevaux. Renonçant à tout, Khad se mit à circuler à âne, vêtu de bure, et ne cessa pas de blâmer (le roi), jusqu'à ce que ce dernier, outré, ordonna de traîner le bienheureux et de le lapider.

Ce même Archak se rendit ensuite auprès du roi des Perses, Chapouh, mais effrayé de sa colère, il se suicida selon la prédiction de saint Nersès.

Lorsque saint Nersès eut appris les mauvaises actions et la mort d'Archak, il pria l'empereur Théodose d'établir roi à sa place son fils Pap. L'empereur, ayant consenti, expédia avec eux en Arménie de nombreuses troupes pour combattre les troupes persanes, lesquelles étant allées exécutèrent ses ordres. Lorsque la bataille fut engagée, le patriarche monta sur le sommet de la montagne de Nepat, éleva ses mains pour prier, suivant l'exemple du premier des prophètes Moïse, sans les abaisser jusqu'à ce que le deuxième Amalec fût vaincu. Après la victoire (les soldats) disaient : « Nous voyions

Ամաղէկ ։ Եւ յետ յաղթութեանն ասէին թէ. Տեսանէաք զհայրապետն Ներսէս որ երթայր առաջի եւ ձեռամբ ցուցանէր զթշնամին մեր ։

Եւ յետ խաղաղանալոյ երկրիս Հայոց ընէր փոյթութիւն մեծն Ներսէս եւ աղաչէր զթագաւորն * եւ զիշխանսն դառնալ ի հեթանոսական սովորութեանցն, եւ վկայ ունել * A fol. 190 rᵒ a. հաւատոյ զքրիստոնէական գործն ։ Եւ զի էր թագաւորն զազիր ի գործս պոռնկութեան անխտիր՝ ոչ զղջացաւ, այլ խորհեալ ի ծածուկ, դեղ մահու նիւթեաց. եւ կոչեալ ի ճաշ զսուրբ հայրապետն սիրոյ պատճառաւ՝ զնիւթեալն ի մախանաց դեղն խառնեալ ի բաժակ գինոյն արբոյց նմա ։

Իսկ նա զգացեալ ցաւն, յարուցեալ ի խորանէ թագաւորին եկն յեկեղեցին, եւ ետ ամենեցուն զհրաժարականն ողջոյն. եւ ապա բացեալ զբերանն իւր հոգւով մարգարէութեան նախապատմեաց զաւեր աշխարհին Հայոց եւ զբնջումն ազգին Արշակունեաց ։ Նաեւ եւ յաղագս գալստեան Նեռինն, եւ վասն վախճանի աշխարհիս. որպէս եւ գրեալ է ի կատարեալ պատմութեանն իւրում. յորոց կատարեցան յոլովք եւ կատարելոց է բովանդակն առ յապա ժամանակս ։ Եւ ապա ինքն աղօթեալ եւ բազմեալ ի քահանայապետականն յաթոռն աւանդեաց զհոգին իւր ի ձեռս Աստուծոյ ։ Որ կալաւ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ամս երեսուն եւ չորս ։

Իսկ երկու կրօնաւորք՝ մինն ասորի, որոյ անուն էր Շաղիտա եւ բնակէր յԱւիժ

5 զքրիստոնէական գործն] քրիստոնէութեան եւ զգործն B || 11 նախապատմեաց] նախ պատմեաց B || 13 յոլովք *om.* B || 16 եպիսկոպոսապետութեանն] քահանայապետութեանն B.

le patriarche Nersès qui marchait devant nous et de sa main nous montrait nos ennemis. »

Après que le pays d'Arménie fut pacifié, le grand Nersès s'employa et pria le roi* et les princes de se détourner des coutumes païennes et de témoigner de leur foi par des mœurs chrétiennes. Le roi en effet s'adonnait sans réserve à d'ignobles actes de fornication; mais il ne s'en repentit point, et même, après réflexion, il prépara en secret un poison mortel, invita le saint patriarche à dîner sous prétexte de lui manifester son attachement, et mêla dans son verre de vin le poison qu'il avait combiné par vengeance. * A fol. 190 rᵒ a.

(Le patriarche), ressentant des douleurs, quitta le pavillon du roi, se rendit à l'église et donna à tous le salut d'adieu; puis, ouvrant la bouche par esprit prophétique, il prédit la ruine du pays d'Arménie et la destruction de la race des Archakounis. Il parla également de la venue de l'antéchrist et de la fin du monde, ainsi que tout cela est écrit dans son histoire complète. De ces prédictions, la plupart se sont accomplies, et le reste s'accomplira dans les temps à venir. Ensuite, il se mit à prier, s'assit sur son trône patriarcal et rendit son âme entre les mains de Dieu. Il avait occupé le trône patriarcal durant trente-quatre ans.

Deux religieux, dont un Syrien, du nom de Chalita (*Šalita*), qui vivait dans

լերինն, եւ միւն յոյն՝ Եպիփան անուն որ բնակէր ի տեղի դիւացն ի միւս լերինն. տեսա
* A fol. 190 rº b. տեսանէին յիւրաքանչիւր տեղւոջէ աչօք բացօք ի տուընջեան ժամու յորում * փոխեցաւ սուրբն՝ զնոյն ինքն զՆերսէս ընդ ամպս յափշտակեալ, զի զունդք հրեշտակաց պար առեալ շուրջ պնդեալ տանէին զնա ի վեր, եւ դասք դասք յերկնից գային ընդ առաջ:

Զայս տեսեալ զարմացան յիւրաքանչիւր մենարանն: Այլ Շալիտա հմուտ էր գրոց, ծանեաւ եթէ փոխեցաւ հայրապետն, իսկ Եպիփան յոյն՝ կարծեաց մարմնով յափշտակեալ: Եւ իջեալ յիւրաքանչիւր լեռնէ՝ եկին յԵկեղեաց գաւառն, ի Թ՛իլն աւան, ի գերեզման սրբոյն, եւ պատմեցին զիւրաքանչիւր տեսիլն առաջի ամենեցուն:

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Աղեքսանդրոսի ի Պոնտիողինոյ :

Յաւուրս կռապաշտ արքային Մաքսիմիանոսի եւ Տիբերեայ դատաւորին, սուրբ վկայն Աղեքսանդրոս էր ի քաղաքէն Պոնտիողոնոյ մերձ ի Հռոմ: Եւ յոյժ նեղէր եւ բռնադատէր զնա Տիբերիոս զոհել կռոցն: Ասէ Աղեքսանդրոս. Ի մանկութենէ իմմէ

1 լերինն] լեառն B || 2 տեղւոջէ] որպէս *add.* B || 4 յառաջ] ընդ առաջ B || 7 յիւրաքանչիւր] յիւրեանց B || 8 սրբոյն] եւ պատահեալ միմեանց *add.* B — ամենեցուն] ընդ որ հիացեալ փառս ետուն Աստուծոյ *add.* B || 12 ի Պոնտիողոնոյ] Պոնտիողոնացւոց B || 11 յոյժ] յորժամ B.

la montagne du Lion, et l'autre Grec, du nom d'Épiphane, qui vivait à l'endroit des démons, dans l'autre montagne, aperçurent chacun de leur endroit, les
* A fol. 190 rº b. yeux ouverts, en pleine journée, à l'heure à laquelle* le saint trépassa, saint Nersès lui-même ravi au milieu de nuées, tandis que des groupes d'anges l'entouraient et le conduisaient vers les hauteurs, et ordre par ordre, (les anges) venaient du ciel à sa rencontre.

Ayant aperçu cela, (les deux religieux) eurent un ravissement dans leurs solitudes respectives. Chalita, qui était versé dans les Écritures, reconnue aussitôt que le patriarche avait trépassé; mais Épiphane, le Grec, crut que (le patriarche) avait été ravi avec son corps. Chacun d'eux étant descendu de sa montagne, ils se rendirent à la province d'Ekeleatz, au bourg de Thil, sur la tombe du saint, et se racontèrent mutuellement leur vision devant tout le monde.

En ce jour, martyre de saint Alexandre de Pouzzoles.

Aux jours de l'empereur idolâtre Maximien et du juge Tibère, le saint martyr Alexandre vivait à Pouzzoles (*Pontiolonoy*), près de Rome. Tibère le pressait beaucoup et le sommait d'immoler aux idoles. Alexandre lui dit : « Dès mon enfance j'ai entendu parler de Zeus et de Platon, vos dieux, qu'ils

ըսէր վասն Դիոսի եւ Պղուտոնի աստուածոց ձերոց որ եղբարք են եւ բնակեն * ի տարտարոսն. որում եւ դու իսկ կցորդ լինիս նոցա ի գեհենն հրոյն : * A fol. 190 v° a.

Եւ հրամայեաց կախել զսուրբն զձեռանէն ի բարձրաւանդակի, եւ կապեցին ծանր վէմ յոտսն. եւ երանելին ոչ դադարէր ի յանդիմանելոյ զդատաւորն վասն ունայն պաշտամանն իւրոյ : Եւ գնաց դատաւորն ի Կարտագէն քաղաքն, տարան եւ զկնի նորա զԱղեկսանդրոս, եւ անդ հրապարակաւ դատապարտեաց զճշմարիտ վկայն Քրիստոսի, եւ կախեցին եւ քերեցին զմարմինս նորա :

Եւ անտի տարան զսուրբն կապանօք ի Մարկիանուպօլիս, եւ անդ հրով այրեցին զերեսն եւ զգլուխն. եւ անտի տարան զնա ի Թիրակ, ի տեղի որ կոչի Դրիզիպարա. եւ յաղօթել սրբոյ վկային՝ հատին զգլուխ նորա Փետրուարի ԺԹ :

Մեհեկի ԺԴ եւ Փետրուարի Ի : Վկայութիւն սրբոյն Նեստորիսի եպիսկոպոսի :

Յաւուրս Դեկոսի ամբարիշտ արքային էր սուրբ եպիսկոպոսն Նեստորիոս ի Պերգեայ գաւառէն Պամփիւլացւոց. եւ կալաւ զնա Իրենարքոս իշխանն եւ տարաւ առ դատաւորն Եպպողիոս : Եւ մինչդեռ երթային ճանապարհայն՝ եղեւ շարժ մեծ, եւ

2 լինիս] են B || 6 զԱղեկսանդրոս] զսուրբն B || 8 զսուրբն] զնա B — անդ հրով *om.* B || 10 Փետրուարի ԺԹ] եւ Մեհեկի ԺԳ *add.* B.
12 ամբարիշտ] կռապաշտ B.

étaient frères et habitaient * le Tartare, tu es donc leur compagnon dans la géhenne de feu. » * A fol. 190 v° a.

(Le juge) ordonna de suspendre le saint par la main sur l'échafaud, et de lui attacher une pierre lourde à ses pieds. Le bienheureux ne cessait de réprouver le juge sur sa vaine religion. Le juge, se rendant à Carthagène, fit emmener Alexandre à sa suite, et là, il condamna publiquement le vrai martyr du Christ; on le suspendit et on lui déchira le corps.

De là on emmena le saint enchaîné à Marcianopolis, où on lui brûla la figure et la tête; de là on l'emmena en Thrace (*Thirak*), à l'endroit appelé Drisipara, et pendant que le saint martyr priait, on lui trancha la tête, le 19 février.

14 MÉHÉKI, 20 Février.

Martyre du saint évêque Nestor.

Aux jours de Dèce, l'empereur impie, le saint évêque Nestor (*Nestorios*) vivait à Pergè dans la province de Pamphylie. Le prince irénarque [1] le fit saisir et le conduisit au juge Pollion (*Eppolios*). Chemin faisant, il y eut un grand tremblement de terre et une voix du ciel se fit entendre (qui disait) :

1. Le traducteur arménien a peut-être pris « irénarque » pour un nom propre; il faut évidemment lui conserver sa valeur comme titre de fonctionnaire.

ձայն եղեւ յերկնից. Զօրացի՛ր Նեստորինէ եւ քա՛ջ լեր ։ Եւ ի դղրդմանէն երկեան իշխանն եւ զօրականքն ։ Եւ տարեալ կացուցին առաջի դատաւորին, եւ ծանուցին
* A fol. 190 v° b. նմա վասն հաւատոյ եպիսկոպոսին Նեստորի ։ * Հարցանէր եւ ստիպէր զնա զոհել կռոցն. եւ նա արարեալ յերեսն զնշան սրբոյ խաչին ասէ. Թէպէտ եւ զմարմինս իմ բազմաչարչար չարչարանօք տանջես եւ հրով այրես, ոչ ուրանայց զանուն Աստուծոյ իմոյ որ ի վեր է քան զամենայն անուն եւ զմիտս եւ զխորհուրդս ։

Եւ հրամայեաց դատաւորն եւ բեւեռեցին զերանելին ի խաչափայտի, եւ սրով բերեցին զմարմինն ։ Եւ նա ի խաչին պատուիրէր հաւատացեալ ժողովրդեանն հաստատուն կալ ի սէրն Քրիստոսի, եւ ոչ ուրանալ զվասն մեր խաչեալն Քրիստոս Աստուած. եւ աղօթեալ առ Աստուած աւանդեաց զհոգի իւր ի ձեռս հրեշտակաց Փետրուարի Ի ։

Եւ արք քրիստոնեայք իջուցին ի խաչէն զմարմինն սրբոյ վկային Նեստորիոսի, եւ եդին ի տեղի նշանաւոր. եւ բազում հիւանդք եւ ախտաժէտք բժշկէին առ տապանի սրբոյն ։

Յայսմ աւուր սուրբ նահատակն Աբդիոս ի Պարսիկս ի քաղաքն Ներգուլ, բազում

1 եւ ձայն... քաջ լեր *om.* B || 5 չարչարանօք տանջես] տանջանօք չարչարես B || 8 բերեցին] բերթեցին B — հաւատացեալ ժողովրդեանն] հաւատացելոցն B || 11 Փետրուարի Ի] եւ Մեհեկի ԺԴ *add.* B || 12 ի խաչէն *om.* B || 13 եդին] ի գերեզման *add.* B — բժշկէին] բժշկին B || 15 Ներգուլ] Երգուլ B.

« Prends courage, Nestor (*Nestoré*), et sois vaillant. » Le gouverneur et les soldats furent saisis de crainte. Ils l'emmenèrent devant le juge et lui décla-
* A fol. 190 v° b. rèrent la foi de l'évêque Nestor. * (Le juge) l'interrogea et le pressa d'immoler aux idoles. (Nestor) fit le signe de la sainte croix sur son visage et lui dit : « Quand bien même tu torturerais mon corps par toutes sortes de supplices, et le brûlerais au feu, je ne renierai point le nom de mon Dieu qui est au-dessus de tout nom, de toute pensée et de toutes considérations. »

Le juge ordonna de clouer le bienheureux sur une croix, et de lui taillader le corps avec un glaive. Mais lui, du haut de la croix, il engageait le peuple fidèle à être ferme dans l'amour du Christ et à ne pas renier le Christ, Dieu, crucifié pour nous; et en priant Dieu il rendit son âme entre les mains des anges, le 20 février.

Des hommes chrétiens descendirent de la croix le corps du saint martyr Nestor (*Nestoriosi*), et le déposèrent dans un endroit choisi. De nombreux malades et infirmes trouvèrent la guérison sur la tombe du saint.

En ce jour, le saint martyr Audo (*Abdios*), [1] dans la ville de Nergoul, en

1. Audo, suivant la prononciation moderne orientale, Abdas des Bollandistes, *Acta SS. Sept.* II, p. 528-532.

տանջանաց համբերեաց ի մոգպետէն վասն անուանն Քրիստոսի, եւ կիսամահ տարան ի տունն իւր, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած :

[B * Ի սմին աւուր յիշատակ սուրբ եպիսկոպոսին Յակոբայ Կիւրիու քաղաքի, եւ Կինդիու եպիսկոպոսին Պինիդեայ, եւ Եւտրոպիոսի, եւ Ենինայ սրբուհւոյ եւ այլոց :] * B p. 89 b.

Մեհեկի ժե եւ Փետրուարի Իա : Վկայութիւն Յակոբայ առաքելոյն որդւոյն Զեբեդեայ :

Յակոբոս առաքեալն Քրիստոսի որդի էր Զեբեդեայ, եղբայր Յովհաննու աւետարանչին. եւ յետ իջման * ամենասուրբ Հոգւոյն՝ եհաս վիճակ նմա երթալ ի Սպանիա : * A fol. 191 rº a. Եւ մինչ նա շրջէր յերկրին Հրէաստանի՝ բազումք հաւատացին նովաւ ի Քրիստոս, զի առնէր նշանս մեծամեծս եւ սքանչելիս : Եւ յանդիմանէր զՀրէայսն խստագոյն յօրինաց եւ ի մարգարէից. եւ նոքա խորհէին սպանանել զնա, բայց երկնչէին ի բազմութենէ հաւատացելոցն որ ընդ նմա շրջէին հանապազ վասն գիտոյից բժշկութեանն որ գործէին ի նմանէ :

Եւ մատնեցին զնա Հերովդիայ արքայի, եւ աղաչէին երագ սպանանել զնա : Եւ նորա կամեցեալ ընդ միտս մտանել Հրէիցն՝ վաղվաղակի եսպան զնա սրով եւ

1 տարան ի տունն իւր եւ] արարեալ տարան ընկեցին ի տունն իւր, եւ զկնի սակաւ ժամուց B. 5 Վկայութիւն ... Զեբեդեայ] Յիշատակ է սուրբ առաքելոյն Յակոբայ Զեբեդեանն B || 8 մինչ նա շրջէր] մինչդեռ շրջէր քարոզութեամբ B || 13 երագ] արագ B.

Perse, après avoir enduré bien des tortures pour le nom du Christ de la part du chef des mages, fut emporté à moitié mort dans sa maison et y rendit son âme à Dieu.

[B * En ce jour, commémoration du saint évêque Jacques de la ville de Cyr (*Kiriou*), et de l'évêque Cindeus de Pinidès; ainsi que d'Eutrope (*Eutropiosi*), de sainte Enine et d'autres.] * B p. 89 b.

15 MÉHÉKI, 21 Février.

Martyre de l'apôtre Jacques, fils de Zébédée.

Jacques, l'apôtre du Christ, était fils de Zébédée, frère de l'évangéliste Jean; après la descente * du Saint-Esprit, il lui échut en partage d'aller en Espagne. * A fol. 191 rº a. Pendant qu'il parcourait le pays de Judée, beaucoup crurent au Christ par lui, car il opérait de grands miracles et des prodiges. Il blâmait sévèrement les Juifs d'après la loi et les prophètes; aussi méditaient-ils de le tuer, mais ils n'osaient pas, à cause du nombre des fidèles qui circulaient avec lui journellement pour le service des guérisons qui s'opéraient par lui.

On le dénonça au roi Hérode en le priant de le mettre à mort au plus tôt. Celui-ci, voulant entrer dans les grâces des Juifs, le fit tuer promptement par le glaive et fit jeter son corps à la mer; mais les flots de la mer le déposè-

զմարմին նորա ընկէց ի ծովն. եւ ալիք ծովուն հանին զնա ի Սպանիա ի վիճակն իւր. եւ մերձեցեալ ի նա կաղաց, կուրաց բժշկեցան, եւ թաղեցին զնա պատուով եւ կատարէր մեծամեծ սքանչելիս ։

Եւ յորժամ եհաս անդ Պօղոս քարոզութեամբ՝ դարձոյց զնոսա ի հաւատս, եւ նա ասաց եթէ. Սա է առաքեալն ձեր ։ Եւ կատարի տօն կատարման առաքելոյն Յակոբայ Փետրուարի ԻԱ ։

Յայսմ աւուր վկայութիւն Թէոդորոսի Կիւրենայ եպիսկոպոսին ։

Յաւուրս Լիկիանոսի կռապաշտ արքային սուրբն Թէոդորոս եպիսկոպոս էր Կիւրենայ, ի կղզոջն Կիպրոսի. եւ մատնեցին զնա առ դատաւորն Սաբինոս. եւ կացեալ
* A fol. 191 r° b. առաջի յանդիմանեաց * զանաստուած մոլորութիւնն ։ Հարին զնա ուժգին արջառաջլօք, եւ նա եւս առաւել խայտառակէր զանմտութիւն դատաւորին ։ Եւ հրամայեաց կախել զնա զփայտէ եւ քերել զմարմին նորա, եւ ապա տարան ի բանդ ։

Եւ յորժամ տանէին ընդ մէջ քաղաքին՝ ուսուցանէր ժողովրդեանն ի բաց կալ

2-3 եւ մերձեցեալ ... սքանչելիս] եւ եցոյց անդ բազում նշանս բժշկութեան, զոր տեսեալ բնակչաց թաղեցին զնա պատուով B || 5 կատարման ... ԻԱ] տօն սուրբ առաքելոյն Յակովբայ Մեհեկի ԺԸ եւ Փետրուարի ԻԱ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ B || 7 Թէոդորոսի] սրբոյն Թէոդոտոսի B || 8 Թէոդորոս] Թէոդիտոս B || 9 Կիպրոսի] եւ վասն քարոզելոյն զՔրիստոս *add.* B || 10 մոլորութիւնն] վասն որոյ հրամայեաց եւ *add.* B || 11 հրամայեաց] եւ B || 12 տարան] հրամայեաց տանել B.

rent en Espagne, son diocèse. Les boiteux, les aveugles qui s'approchèrent de lui, trouvèrent la guérison, et on l'enterra avec honneur. De grands miracles eurent lieu.

Lorsque saint Paul y arriva pour prêcher, il les convertit à la foi et leur dit : « C'est votre apôtre. » La fête du martyre de l'apôtre Jacques a lieu le 21 février.

En ce jour, martyre de Théodore, évêque de Cyrène.

Aux jours de l'empereur idolâtre Licinius (*Likianos*), saint Théodore était évêque de Cyrène, dans l'île de Chypre[1]. On le dénonça au juge Sabinus.
* A fol. 191 r° b. Mis en sa présence, (Théodore) blâma * l'erreur athée. On le frappa brutalement avec des nerfs de bœuf, mais il ridiculisa avec plus de force la sottise du juge; celui-ci ordonna de le suspendre à un poteau et de lui déchirer le corps; puis on le jeta en prison.

Tandis qu'on l'emmenait à travers la ville, il enseignait au peuple de s'éloigner des idoles insensées, et il criait à haute voix disant : « Vous qui

1. Il s'agit de Cyrène en Libye, cf. *Acta SS. Julii*, II, 19 sq.; *Syn. Cp.* col. 796-798.

յանդգնայ կռոցն, եւ աղաղակէր մեծաձայն եւ ասէր. Որք տեսանէք զխոցս վիրացս՝ իմացարուք եւ զպսակն փոխարինացն յանանց կեանսն ։

Եւ յետ հինգ աւուր դարձեալ ստիպէին զծառայն Աստուծոյ զոհել կռոցն. եւ յորժամ ոչ հաւանեցաւ սուրբն՝ ջեռուցին զդագաղ երկաթի, եւ պառկեցին զնա ի վերայ՝ եւ այլ հուր բորբոքեցին ի ներքոյ ։ Եւ ոչ այնպէս յաղթեցին սրբոյ եպիսկոպոսին, եւ յոյժ զարմացաւ դատաւորն ։

Եւ ասէ սուրբն. Մի պակասեցուցաներ զհնարամտանս տանջանաց քո, զի որչափ առաւելուս ի չարչարանս՝ առաւել պատրաստի ինձ ուրախութեան հանգիստ ։ Եւ բազում խրատս տայր եւ ուսուցանէր դատաւորին եւ զօրականացն թերեւս դարձցին առ Աստուած ։

Իսկ դատաւորն առաւելապէս խստանայր՝ հրամայեաց եւ հարկին բեւեռս յոտսն եւ շրջեցուցանէին աստ եւ անդ. եւ նա ոչ դադարեցուցանէր զբարբառ իւր առ ի յուսուցանելոյ զժողովուրդն, եւ զբազումս դարձոյց ի հաւատս Քրիստոսի ։ Եւ դարձեալ արկին զնա ի բանդն, եւ եղեւ ի բանդին բազում ժամանակս, * եւ յոյժ վատնեցաւ ի խոցոյ վիրացն. եւ մտանէին քրիստոնեայքն առ նա եւ կտաւօք սրբէին զթարախ վիրացն ։ * A fol. 191 v° a.

Եւ մինչդեռ ի բանդին էր մեռաւ Լիկինիոս, եւ հաւատայ ի Քրիստոս մեծն Կոստանդիանոս արքայ, եւ հրամանս առաքեաց յամենայն քաղաքս եւ ի գաւառս

4 սուրբն *om.* B || 11 յոտսն] ի ներբանս ոտիցն B || 12 զբարբառ իւր առ ի *om.* B || 14 եղեւ] արար զնա կալ B.

voyez mes plaies et mes blessures, imaginez la couronne qui me sera accordée en échange dans la vie sans fin. »

Cinq jours après, on contraignit de nouveau le serviteur de Dieu d'immoler aux idoles; mais comme le saint n'y consentit point, on fit chauffer un cercueil en fer, on l'y étendit, et on ajouta du feu en dessous. Mais de cette façon même on ne put vaincre le saint évêque, et le juge en fut très surpris.

Le saint lui dit : « Ne diminue point tes ingénieuses tortures, car plus tu augmenteras les supplices, plus grand sera le repos de joie qui m'est préparé. » Il ajouta bien des conseils et des enseignements au juge et aux soldats dans l'espoir de les convertir à Dieu.

Mais le juge augmenta sa sévérité, et ordonna de lui enfoncer des clous dans les pieds et de le promener de-ci de-là; (le saint) ne cessa d'adresser la parole au peuple pour l'instruire, et il convertit nombre de personnes à la foi du Christ. On le jeta de nouveau en prison, où il resta de longs jours. * Les plaies de ses blessures s'envenimèrent gravement, et les chrétiens pénétraient jusqu'à lui pour essuyer avec des linges le pus de ses blessures. * A fol. 191 v° a.

Pendant qu'il était en prison, Licinius (*Likinios*) vint à mourir, et le grand empereur Constantin crut au Christ; il envoya des ordres à toutes les villes et

զի ազատեսցեն զամենայն քրիստոնեայս որ ի բանտի կապեալք էին. Հանին եւ զսուրբ եպիսկոպոսն Թէոդորոս ի բանտէն. եւ յոյժ տրտմեցաւ զի ոչ վախճանեցաւ ի տանջանսն ։

Եւ կեցեալ այլ եւս ամս երկուս՝ բարի ալեօք ննջեաց բարի մահուամբ ի Քրիստոս Փետրուարի ԻԱ ։ Եւ բազում նշանս արար ի կենդանութեանն իւրում, եւ առաւելապէս յետ մահուանն, եւ է բարեխօս վասն անձանց մերոց աստ եւ ի հանդերձեալ գալստեանն Քրիստոսի որում փառք եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս ։

Մեհեկի ԺԶ եւ Փետրուարի ԻԲ ։ Տօն սրբոյն Կոռնելիոսի հարիւրապետի ։

Սա էր ի Պաղեստինեայ Կեսարիոյ՝ ի գնդէն Իտալացւոց, եւ էր ծերացեալ ։ Եւ յաւուրս առաքելոցն սրբոց նախ ի հեթանոսաց սա հաւատաց ի Քրիստոս. եւ ետես զտեսիլն որ գրեալ է ի գիրս Գործոց Առաքելոց ։ Եւ խնդրեաց տեսանել զառաքեալն Պետրոս եւ լսել ի նմանէ զքարոզութիւն աւետարանին. եւ յորժամ ետես՝ բնակեցաւ առ նմա ։

Եւ եղեւ գնալ Պետրոսի եւ Տիմոթէի եւ Կոռնելիոսի յԵփեսոս, եւ վիճակեցին

2 Թէոդորոս] Թէոփիլոս B — զի] որ B || 4 այլ եւս *om.* B || — երկուս] յետ չարչարանացն *add.* B — բարի] երանելի B || 5 Փետրուարի ԻԱ] եւ Մեհեկի ԺԵ *add.* B || 6-7 եւ է բարեխօս . . . յաւիտեանս *om.* B.
9 Իտալացւոց] Իտալիկեցւոյ B.

provinces de rendre la liberté à tous les chrétiens qui se trouvaient enchaînés dans les prisons. On fit sortir de la prison le saint évêque Théodore qui s'attrista grandement de ne pas être mort dans les tortures.

Il vécut encore deux autres années et reposa dans une bonne vieillesse et une bonne mort dans le Christ, le 21 février. Il avait opéré beaucoup de miracles de son vivant et il en opéra davantage après sa mort. Il est notre intercesseur ici-bas et à la prochaine venue du Christ, à qui gloire et honneur, maintenant et éternellement.

16 MÉHÉKI, 22 Février.

Fête du saint centurion Corneille.

Il était de Césarée de Palestine, de la cohorte italienne. Il était vieux. Aux jours des saints apôtres, ce fut lui qui le premier des gentils crut au Christ, et il eut la vision qui est décrite dans les Actes des apôtres. Il demanda à voir l'apôtre Pierre et à entendre de lui la prédication de l'évangile. Lorsqu'il l'eut vu, il habita près de lui.

Il arriva que Pierre, Timothée et Corneille se rendirent à Éphèse, où ils se partagèrent les villes au sort. Le sort échut à Corneille de se rendre à la

զքաղաքսն. եւ անկաւ վիճակն Կոռնելիոսի գնալ նմա ի քաղաքն Եփեսիոն որ է * մերձ յԱբիդոս՝ քարոզել զբանն կենաց ։ Եւ երթեալ քարոզէր զՔրիստոս, եւ կացուցին զնա առաջի Դեմետրի իշխանի քաղաքին, եւ բազում սպառնալեօք ահացոյց եւ ոչ կարաց խոտորել զԿոռնելիոս ի հաւատոցն Քրիստոսի. այլ մանաւանդ նա ջանայր զիշխանն դարձուցանել յուղիղ հաւատն ։ * A fol. 191 v° b.

Ասէ Կոռնելիոս ցիշխանն. Եկ, երթիցուք ի տաճար աստուածոց քոց եւ տեսցուք թէ որչափ զօրութիւն ունին ։ Եւ առեալ իշխանին զկինն իւր զԵւանթիա եւ զորդին իւր գնացին զկնի Կոռնելիոսի ։ Եւ իբրեւ մտին ի տաճարն՝ ծունր եդ սուրբն եւ եկաց յաղօթս, եւ անկան բագինք կռոցն ։ Եւ յոյժ բարկացեալ իշխանն եւ առեալ զԿոռնելիոս տարաւ ի բանտ, եւ գանեաց զնա ուժգին ։ Եւ մնաց կինն եւ որդին ի տաճարն, եւ յանկարծակի եղեւ շարժ եւ կործանեցաւ տաճարն եւ արգել զնոսա ի ներքս ։

Եւ լուեալ իշխանին պատառեաց զհանդերձս եւ ընթացաւ ի տեղին, եւ հրամայեաց երեք հարիւր արանց հանել զհողն եւ զքարինսն, եւ տասն օր աշխատեցան եւ ոչ կարացին գտանել զնոսա ։

1 Եփեսիոն] Սկեփսիոն B || 2 եւ երթեալ քարոզէր զՔրիստոս եւ] եւ յերթալն եւ ի քարոզելն զՔրիստոս՝ ըմբռնեալ B || 8 եդ] եդեալ B || 9 Եւ յոյժ] Ընդ որ յոյժ B || 10-11 Եւ մնաց . . . ի ներքս] եւ կախեաց զնա զլխիվայր զգիշերն ողջոյն ։ Եւ յանկարծակի եղեւ շարժ եւ կործանեցաւ տաճարն եւ կին եւ որդի իշխանին որք մնացեալ էին ի տաճար անդր փակեալ արգելան ի ներքս B || 13 տասն օր *om.* B — աշխատեցան] յոյժ *add.* B.

ville de Skepsi [1], qui est * proche d'Abydos, pour y prêcher la parole de vie. Il s'y rendit et y prêcha le Christ. On le mit en présence du gouverneur de la ville, Démétrius, qui l'intimida avec beaucoup de menaces mais ne put le détourner de la foi du Christ, par contre Corneille s'efforça de convertir le gouverneur à la vraie foi. * A fol. 191 v° b.

Corneille dit au gouverneur : « Allons au temple de tes dieux et nous verrons quelle est leur puissance. » Le gouverneur prit avec lui sa femme Evanthia et son fils, et tous accompagnèrent Corneille. Lorsqu'on eut pénétré dans le temple, le saint se mit à genoux et pria; les autels des idoles s'écroulèrent. Le gouverneur, très irrité, saisit Corneille, l'emmena en prison et le fit battre brutalement. Sa femme et son fils étaient restés dans le temple, il se fit tout à coup un tremblement de terre, le temple s'écroula et les ensevelit.

Le gouverneur, l'ayant appris, déchira ses vêtements, accourut à l'endroit et ordonna à trois cents hommes d'en retirer la terre et les pierres; ils y travaillèrent durant dix jours mais ne purent découvrir (les victimes).

1. L'arménien a *Ephésion*, leçon banale substituée par quelque copiste à une transcription plus ou moins précise de Σκεψέων. Le détail « qui est proche d'Abydos » manque dans les sources grecques qui nous ont été accessibles; mais il est excellent, car Skepsi est en Troade, à peu de distance d'Abydos, aujourd'hui Avido, sur l'Hellespont.

Եւ խորհեցաւ սպանանել զԿոռնելիոս. եւ մի ոմն ի քրմացն ասէ ցիշխանն. Լուայ ես ի գիշերիս յայսմիկ ձայն յաւերածոյ տաճարին որ ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, որ ի ձեռն ծառային իւրոյ Կոռնելիոսի կեցոյց զմեզ յայսմ վտանգէ :

* A fol. 192 r° a. Եւ գնաց իշխանն ի բանտն, անկաւ յոտս * սրբոյն եւ աղաչէր երթալ եւ հանել զկինն եւ զորդին իւր : Ասէ Կոռնելիոս. Եթէ հաւատայք ի Քրիստոս՝ կատարին խնդրուածք քո : Եւ երթեալ ի տեղին՝ արար Կոռնելիոս զնշան սրբոյ խաչին, եւ ելին ամբողջ յաւերածէն, եւ աղաղակէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից : Եւ հաւատացին յաւուր յայնմիկ ընդ իշխանին ոգիք իբրեւ երեք հարիւր, որ հանէին զհողն եւ զքարինսն, եւ մկրտեցան ամենեքեան հաւատացեալք ի Քրիստոս :

Եւ արարեալ անդ Կոռնելիոս ամս երիս՝ դարձոյց զամենայն քաղաքն ի Քրիստոս, որ եւ ինքեանք երթային եւ կործանէին զբագինս կռոցն : Եւ այնպէս կատարեաց զընթացս իւր, ձայն եկեւ առ նա եւ ասէ. Եկեսջիր Կոռնելիոս, հանգիր ընդ արդարսն յարքայութեանն երկնից : Եւ գոհացեալ զԱստուծոյ աղօթեաց ցերկար վասն քաղաքին այնմիկ, եւ հանգեաւ խաղաղութեամբ Փետրուարի ԻԲ :

Եւ թաղեցին զնա Դեմետրիոս իշխանն եւ կինն իւր եւ որդին ի տապանին. եւ

1-3 Եւ խորհեցաւ... յայսմ վտանգէ *om.* B || 4 հանել] յաւերածոյն *add.* B || 5 խնդրուածք] խնդիրք B || 6 սրբոյ *om.* B || 8 ոգիք իբրեւ երեք հարիւր] երեք հարիւրքն B || 10 անդ] սուրբն *add.* B || 11-13 Եւ այնպէս... երկնից] Եւ հաստատեաց զեկեղեցիս եւ կարգեաց քահանայս եւ պաշտօնեայս, եւ իբրեւ կատարեաց զընթացս իւր B || 14 Փետրուարի ԻԲ] եւ Մեհեկի ԺԶ *add.* B || 15 ի տապանին] յիւրեանց տապանին B.

Le gouverneur médita alors de faire tuer Corneille, mais un des prêtres d'idoles lui dit : « J'ai entendu cette nuit une voix de dessous les décombres du temple qui disait : Grand est le Dieu des chrétiens qui, par l'entremise de son serviteur Corneille, nous a sauvés de tout danger. »

* A fol. 192 r° a. Le gouverneur se rendit aussitôt à la prison, se jeta aux pieds * du saint en le suppliant d'aller délivrer sa femme et son fils. Corneille lui dit : « Si vous croyez au Christ, tes vœux seront accomplis. » S'étant rendu à l'endroit, Corneille fit le signe de la sainte croix, et (les victimes) sortirent indemnes des décombres en criant : « Grand est le Dieu des chrétiens. » Ce jour-là, en même temps que le gouverneur, les trois cents hommes environ qui étaient employés à retirer la terre et les pierres, crurent et furent tous baptisés dans leur foi au Christ.

Corneille resta là trois ans et convertit toute la ville au Christ, de sorte que les habitants d'eux-mêmes allèrent démolir les temples des idoles. Ayant ainsi rempli sa vie, il entendit une voix qui disait : « Viens, Corneille, et repose-toi avec les justes dans le royaume des cieux. » Il rendit grâces à Dieu, pria longuement pour cette ville et reposa en paix, le 22 février.

Le gouverneur Démétrius, sa femme et son fils l'inhumèrent dans une

բուսաւ մորենի ի տեղւոջն եւ ծածկեաց զտապանն, եւ յանցանել ժամանակին անյայտ եղեւ տեղին ծածկեալ ի մորենոյն :

Եւ յետ բազում ամաց յաւուրս քրիստոնէութեան երեւեցաւ սուրբն ի տեսլեանն եպիսկոպոսին Սիղբանոսի, եւ երթեալ ի տեղին փորեաց զհողն եւ արմատախիլ արարեալ զմորենին՝ շինեաց ի վերայ տապանին եկեղեցի յանուն սրբոյն :

* Յայսմ աւուր ի խաչ սրով կատարեցաւ սուրբն Յիզտբուզիտ : * A fol 192 r° b.

Սա ազգաւ պարսիկ էր, եւ գնաց յաշխարհն Հայոց, մկրտեցաւ եւ անուանեցաւ Աստուածատուր : Եւ Պարսիկքն կալան զնա եւ արկին ի բանտ, եւ նա հաստատուն եկաց ի հաւատն Քրիստոսի, եւ ի խաչ բեւեռեցին վասն Քրիստոսի :

[B * Նստիլն Պետրոսի առաքելոյ յաթոռն Անտիոքայ առաջին պատրիարք զամս եօթն : * B p. 91 a.

Յետ վերանալոյ Տեառն մերոյ եւ Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի յերկինս մարմնով՝ եկն սուրբ առաքեալն Պետրոս ի քաղաքն Անտիոք, եւ քարոզեաց նոցա զսուրբ աւետարանն, եւ անուանեաց այլովք առաքելովք զաշակերտսն քրիստոնեայս :

2 ծածկեալ ի մորենոյն *om.* B || 4 Սիղբանոսի] Սեղբանոսի B || 6-9 Յայսմ աւուր... վասն Քրիստոսի] Ի սմին աւուր կատարեցաւ սրով սուրբ վկայն Յիզդբուզիտ եւ այլք ընդ նմա ի Հայք ի Պարսից B.

tombe; une ronce poussa en cet endroit, recouvrit la tombe si bien qu'avec le temps, l'emplacement en devint invisible, caché par le buisson.

Après de nombreuses années, aux jours du christianisme, le saint apparut dans une vision à l'évêque Silvain, qui se rendit au lieu dit, fit creuser la terre, arracher le buisson et construire sur la tombe une église au nom du saint.

* En ce jour, saint Yasdbuzit (*Yiztbouzit*) fut mis à mort sur une croix par le glaive. * A fol. 192 r° b.

Il était Persan de nationalité et s'était rendu au pays d'Arménie où il s'était fait baptiser et avait pris le nom de Dieudonné (*Astouadsatour*). Les Persans s'en saisirent et le jetèrent en prison, mais il demeura ferme dans la foi du Christ et il fut cloué à une croix pour le Christ.

[B * Intronisation de l'apôtre Pierre sur le siège d'Antioche (où il fut) le premier patriarche pendant sept ans. * B p. 91 a.

Après l'Ascension au ciel en son corps de notre Seigneur et Dieu Jésus-Christ, le saint apôtre Pierre se rendit à la ville d'Antioche, où il prêcha le saint évangile et nomma de concert avec les autres apôtres les disciples « chrétiens ».

Յետ պէս պէս նշանօք եւ բազմապատիկ սքանչելեօք զարմացուցանելոյ անդ աստուածային վարդապետութեամբն ժողովուրդս ի Յունաց եւ ի Հրէից բազումս, շինեաց անդ եկեղեցի եւ ուղղեաց սեղան եւ ձեռնադրեաց քահանայս եւ պաշտօնեայս ըստ զանազան կարգաց. եւ նստաւ անդ յաթոռ երիցութեանն պատրիարք Անտիոքայ զամս եօթն :

Եւ յետ այսորիկ թողու փոխանակ իւր զԵւոդիոս պատրիարք Անտիոքայ, եւ ինքն ապա անտի չոգաւ ի Հռոմ, եւ անդ հաստատեաց լինել պապ՝ կացեալ յաթոռն ամս քսան :

* B p. 91 b. Վասն որոյ զի առաջին նստիլն նորա յաթոռ վերակացութեանն յԱնտիոք եղեւ ԻԲ Փետրուարի, եւ սուրբ եկեղեցի վասն * յիշատակի պատուոյն Պետրոսի ընկալաւ անել զտօնս զայս՝ զառաջին կոլոյն եպիսկոպոս եւ պատրիարք Անտիոքայ զեօթն ամն, յորմէ նախ սկսան բարձրանալ առաջնորդք եկեղեցւոյ անուամբ եւ կարողութեամբ :

Եւ քանզի երեք անգամ տօնեմք յամենայն ամի մեծագոյն տօնս փառաւորապէս գլխաւորի առաքելոցն Պետրոսի. մի՝ զայս, եւ երկրորդ զկապանացն, եւ երրորդ՝ զխաչելութեանն, առ ի յոյս մեղաւորաց, եւ յօրինակ խնդութեան բարեգործաց : Զի թէպէտ երիցս ուրացաւ Պետրոս, երիցս կրկնեաց առ նա Քրիստոս տալով զհովուականն պատիւ եւ զսիրոյն վկայութիւն. որով երիցս նմա տօնելով յայտնի լինի զի թէ երիցս ոք ապաշխարէ՝ այսինքն է խորհրդով սրտի, բանիւ բերանոյ, եւ գործով

Après avoir, par de multiples miracles, de nombreux prodiges et sa divine doctrine, converti beaucoup d'habitants parmi les Grecs et les Juifs, il y construisit une église, dressa un autel et y ordonna des prêtres et des ministres de différents ordres. Il siégea sur le trône sacerdotal comme patriarche d'Antioche sept années.

Après quoi, il laissa Évodius à sa place patriarche d'Antioche, et de là se rendit à Rome, où il se fixa comme pape et siégea vingt ans.

* B p. 91 b. C'est parce que sa première installation sur le trône épiscopal d'Antioche avait eu lieu le 22 février, que la sainte Église a établi cette fête * en commémoration de l'honneur de Pierre, parce qu'il a été le premier évêque et patriarche d'Antioche pendant sept ans, et que de lui avait commencé l'ascension des prélats de l'Église en renom et en autorité.

Nous fêtons, en effet, trois fois chaque année et solennellement avec de grandes fêtes le chef des apôtres, Pierre; d'abord, ceci; en deuxième lieu, ses liens; et en troisième lieu, sa crucifixion, pour donner de l'espérance aux pécheurs et (proposer) un exemple à imiter aux hommes de bien. Car, bien que Pierre eût renié trois fois, le Christ lui répondit par trois fois en lui donnant l'honneur de pasteur et le témoignage de l'amour; c'est pourquoi lorsque nous le fêtons trois fois, il devient évident que quiconque fait trois fois pénitence, c'est-à-dire par la pensée de son cœur, par la parole de sa bouche

անձին, զեռապատիկ ընդունի արձակումն ի կապանաց մեղաց որ գործով, բանիւ եւ խորհրդով յանցանեմք : Նա եւ զի եւ Պետրոսի աթոռն յերիս մասունս աշխարհի պատուեցաւ, խորհրդապէս երիցս տօնի նմա, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս :]

Մեհեկի ԺԷ եւ Փետրուարի ԻԳ : Վկայութիւն սրբոյն Պողիկարպոսի Զմիւռնիոյ եպիսկոպոսի, որ է բազմապտուղ :

Յաւուրս սրբոց առաքելոցն հաւատացին եւ աշակերտեցան Քրիստոսի սուրբն Պողիկարպոս եւ սուրբն Իգնատիոս աստուածազգեացն ի ձեռն Յովհաննու առաքելոյ եւ աստուածաբան աւետարանչին : Եւ էր Պողիկարպոս այր բարի եւ լի Հոգւով սրբով, առնէր նշանս եւ արուեստս մեծամեծս : Եւ յետ վախճանի Բիւկոլոսի Զմիւռնիոյ եպիսկոպոսին զոր ձեռնադրեաց սուրբ առաքեալն Պօղոս, ձեռնադրեցաւ յաթոռ նորա սուրբն Պողիկարպոս, եւ եղեւ ջատագով ճշմարիտ հաւատոյ, եւ յանդիմանող հրէից եւ հեթանոսաց, եւ զբազումս դարձուցանէր յաստուածգիտութիւն :

Եւ յաւուր միում հուր անկաւ ի քաղաքն եւ շիջուցանել ոչ կարէին. գնաց երանելին եւ արարեալ զնշան խաչին եւ առժամայն շիջաւ :

6 որ է բազմապտուղ] Պողիկարպոս ի հայ լեզու բազմապտուղ թարգմանի B || 9 եւ աստուածաբան աւետարանչին] աւետարանչի եւ աստուածաբանի B || 10 առնէր ... մեծամեծս *om.* B || 10 Բիւկոլոսի] Բիւկողիոսի B || 14-15 Եւ յաւուր միում ... շիջաւ *om.* B.

et par l'action de sa personne, il reçoit la triple absolution des liens de ses péchés, que nous commettons par action, parole ou pensée. C'est aussi parce que le siège de Pierre a été honoré par les trois parties de la terre qu'on le fête trois fois par symbole, pour la gloire du Christ, notre Dieu éternellement.]

17 MÉHÉKI, 23 Février.

Martyre de saint Polycarpe, évêque de Smyrne, dont le nom se traduit « qui donne beaucoup de fruits ».

Aux jours des saints apôtres, saint Polycarpe et saint Ignace Théophore crurent au Christ et en devinrent les disciples par l'intermédiaire de l'apôtre et l'évangéliste théologien Jean. Polycarpe était un homme bon, rempli du Saint-Esprit et qui opérait des miracles et de grands prodiges. Après la mort de Boucolos (*Biukolosi*), évêque de Smyrne, que le saint apôtre Paul avait sacré, saint Polycarpe fut sacré sur son siège et il devint l'apologiste de la vraie foi, l'adversaire des Juifs et des gentils, dont il convertit un grand nombre à la connaissance de Dieu.

Un jour qu'un incendie s'était déclaré dans la ville, qu'on n'arrivait point à l'éteindre, le bienheureux survint, fit le signe de la croix, et (l'incendie) s'éteignit aussitôt.

Եւ եղեւ երաշտ եւ չորացան բոյսք եւ տունկք, եւ աղօթիւք սրբոյն տեղաց անձրեւ զերիս աւուրս եւ զերիս գիշերս. եւ եղեւ փրկութիւն քաղաքին եւ դարձեալ աղօթիւք դադարեցոյց զանձրեւն :

Էր յաւուրսն յայնոսիկ հալածումն քրիստոնէից ի Դեկոսէ ամբարշտէ, եւ բազումք մարտիրոսացան վասն անուանն Քրիստոսի : Եւ երկու աւուրբք յառաջ քան զկատարումն իւր տեսանէ յանուրջս որ բարձ զլխոյն այրեցաւ, եւ զարթուցեալ ասէ աշա-

* A fol. 192 v° a. կերտացն իւր. Եղբարք, ինձ պարտ է ի կենդանութեանս * իմում հրով այրել :

Եւ հասեալ հալածչացն գնաց զկնի նոցա : Եւ ձայն եղեւ առ նա յերկնից. Զօրացիր Պողիկարպէ եւ քաջ լեր զի ես ընդ քեզ եմ : Եւ կացեալ առաջի բդեշխին՝ տագնապէր եւ նեղէր զնա ուրանալ զՔրիստոս : Ասէ Պողիկարպոս. Ութսուն եւ վեց ամք են իմ որ ծառայեմ նմա եւ պաշտեմ զնա, եւ ոչ երբէք անցի զպատուիրանաւ նորա, եւ նա բազում բարութեանց արժանաւորեցոյց զիս, եւ որպէս կարեմ զնա հայհոյել որ իմ թագաւորն է :

Եւ բդեաշխն ողոքանօք խրատ տայր, եւ ոչ կարաց դարձուցանել զսուրբն ի կամս իւր : Եւ հրամայեաց հրով այրել զսուրբ վկայն Քրիստոսի : Եւ կապեցին զձեռս յետս, եւ նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս աղօթեաց առ Աստուած : Եւ ընկեցին զնա

2 եւ դարձեալ ... զանձրեւն *om.* B || 4 Էր] եղեւ B — ամբարշտէ] կռապաշտ արքայէ B || 6-7 տեսանէ ... այրել] այդ լինի նմա յանուրջս հրով կատարիլ, եւ զարթուցեալ ասէ աշակերտս իւր. Եղբարք առաջի կայ ինձ կենդանւոյն հրով այրիլ B || 8-9 Եւ ձայն ... քեզ եմ *om.* B || 9 կացեալ] եկաց B || 11 ամք են] ամ է B.

Il y eut une sécheresse, les herbes et les plantes se desséchèrent, mais par les prières du saint une forte pluie vint à tomber pendant trois jours et trois nuits, et ce fut le salut de la ville; c'est aussi par ses prières que la pluie cessa.

En ces jours il y eut une persécution des chrétiens par Dèce, l'impie, et beaucoup furent martyrisés pour le nom du Christ. Deux jours avant son martyre, (Polycarpe) vit dans un rêve que son oreiller brûlait. A son réveil il

* A fol. 192 v° a. dit à ses disciples : « Frères, il faut que de mon vivant * je sois brûlé. »

Il courut après les persécuteurs et les suivit. Une voix du ciel se fit entendre à lui : « Prends courage, Polycarpe, et sois vaillant, car je suis avec toi. » Mis en présence du gouverneur qui le pressait et le contraignait de mépriser le Christ, Polycarpe lui dit : « Il y a quatre-vingt-six ans que je le sers et que je l'adore, je n'ai jamais enfreint ses commandements, aussi m'a-t-il rendu digne de bien des bontés; comment pourrais-je le blasphémer, lui qui est mon roi ? »

Le proconsul le conseillait avec des (paroles) insinuantes, mais il ne put détourner le saint à ses desseins; et il ordonna de brûler au feu le saint martyr du Christ. On lui attacha les mains par derrière, mais il éleva ses mains

ի հուրն, և բոցն վերացաւ որպէս առագաստ նաւի ուռուցեալ ի հողմոյ, և արար կամար. և էր սուրբն ի ներքոյ որպէս ի վրանի, և բուրեաց ի հրոյն հոտ անոյշ: Եւ տեսեալ դահճացն որ ոչ այրեցաւ կարծեցին թէ կենդանի է, խորհեցան սրով սպանանել զնա, և տեսին զհոգի նորա որպէս զաղաւնի ելեալ ի մարմնոյն և վերանալ յերկինս, և հեղաւ արիւն ի մարմնոյն և շիջոյց զբոցն:

Եւ ասեն կռապաշտքն եթէ առնուն քրիստոնեայքն զմարմին դորա և որպէս զԱստուած պաշտեն. և ընկեցեալ ի հուրն այրեցին: Եւ երթեալ ի գիշերի արք հաւատացեալք ժողովեցին զմնացեալ ոսկերսն և եդին ի տեղի նշանաւոր:

* Սուրբ եպիսկոպոս և վկայ Քրիստոսի Պողիկարպոս երկոտասաներորդ մարտիրոս էր ի Զմիւռնիա քաղաքին, առ Դեկոսիւ արքայիւ և Ստրատիոյ բդեշխին և է բարեխօս առ Քրիստոս վասն տօնողացս: * A fol. 192 v° b.

1 նաւի] նաւու B || 2 և բուրեաց ի հրոյն հոտ անոյշ] որ և աւանդեաց զհոգին իւր առ Աստուած B || 4-5 և տեսին ... զբոցն] և խոցեցին զնետեալ մարմինն, և հեղաւ արիւն B || 7 և ընկեցեալ ի հուրն այրեցին] բորբոքեցին զհուրն և այրեցին զմարմին սրբոյն B || 11 տօնողացս] անձանց մերոց B.

au ciel et pria Dieu. On le jeta dans le feu, mais les flammes s'élevèrent comme les voiles d'un navire, gonflées par le vent, formèrent une coupole, et le saint se trouva en dessous comme dans une tente. Une odeur suave se dégagea des flammes. Les bourreaux, voyant qu'il n'était pas brûlé, crurent qu'il était vivant et méditèrent de le tuer par le glaive ; mais ils virent son âme, comme une colombe, sortir du corps et s'élever au ciel, tandis que le sang jaillissait du corps en éteignant les flammes.

Les idolâtres dirent alors que si les chrétiens s'emparaient de son corps, ils l'adoreraient comme un Dieu ; ils rejetèrent (son corps) dans les flammes et le brûlèrent. La nuit, des gens fidèles vinrent recueillir les restes des os et les inhumèrent dans un endroit choisi.

* Le saint évêque et martyr du Christ Polycarpe fut le quatorzième martyr de la ville de Smyrne, sous l'empereur Dèce et le proconsul Stratius. Il est l'intercesseur auprès du Christ pour nous qui célébrons sa fête. * A fol. 192 v° b.

Յայսմ աւուր սրբուհին Մելիտինի բազում չարչարանս կրեաց վասն անուանն Քրիստոսի, եւ ապա գլխատեցաւ ի քաղաքի Մարտինուպօլիս ի կռապաշտ դատաւորէն Անտիոքայ :

Յայսմ աւուր սուրբ վկայն Քրիստոսի Փիլիկտիմոն դարձոյց ի Քրիստոս զերկու թագաւորսն զԳրիգորիոս եւ զՄարիանոս, եւ զթագուհին Անատոլի եւ զդուստրն իւրեանց զսրբուհին Թէոդոսիա եւ այլ բազումս որք վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս :

* B p. 93 b. [B * Յայսմ աւուր յիշատակ աղախնոյն Քրիստոսի սրբուհւոյն Մելիտինեայ :

Էր սա ի քաղաքէն Մարտինուպօլսոյ յաւուրս Անտոնինոսի թագաւորին. եւ վասն զՔրիստոս քարոզելոյն ըմբռնեցաւ յամբարիշտ դատաւորէն Անտիոքայ, եւ յետ բանտարկութեան եւ քերանաց գլխատեցաւ ի նմին քաղաքի ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

Յայսմ աւուր վկայութիւն Աւագայ նոր վկայի : Սա էր ծննդեամբ Բաղէշեցի, եւ ի տիս տղայութեանն գնացեալ ի Սալամաստ քաղաք՝ աշակերտեալ էր պարսիկ ուրումն որ արուեստիւ էր քսակակար, կալով առ նմա ժամանակս ինչ յուսումն արուես-

4 զԳրիգորիոս] զԳորգոնիոս B — եւ զդուստրն իւրեանց զսրբուհին Թէոդոսիա եւ այլ բազումս] եւ զսուրբ կոյսն Թէոդոսիա B.

En ce jour sainte Mélitène (*Melitini*) endura beaucoup de tortures pour le nom du Christ, et fut ensuite décapitée dans la ville de Martinopolis [1] par le juge idolâtre Antiochus (*Antiokhay*).

En ce jour le saint martyr du Christ Philictimon convertit au Christ les deux rois Grégoire et Marianus, la reine Anatolie et leur fille sainte Théodosie et d'autres nombreuses personnes, qui moururent par le martyre pour le Christ.

* B p. 93 b. [B * En ce jour, commémoration de la servante du Christ sainte Mélitène.

Elle était de la ville de Martinopolis [2] aux jours de l'empereur Antonin, et pour avoir prêché le Christ, elle fut saisie par le juge impie Antiochus. Après avoir souffert la prison et eu le corps déchiré, elle fut décapitée dans la même ville pour la gloire du Christ, notre Dieu.

En ce jour, martyre d'Avag [3], le nouveau martyr. Il était né à Balesch, et dans son enfance, s'étant rendu à la ville de Salmas (*Salamast*), il était devenu le disciple d'un Persan, de son métier couseur de bourses, restant quelque temps auprès de lui pour apprendre le métier, tout en demeurant ferme dans

1. Il faut restituer Marcianopolis, d'après *Syn. Cp.* col. 51. La transformation de Marcianopolis en Martinopolis vient peut-être de ce que le pape Martin était fêté le même jour. — 2. Cf. *supra*. — 3. Voir la passion d'Avag de Selmas, dans Y. Manandian et H. Adjarian, Հայոց նոր վկաները, t. I Valaršapat, 1903, pp. 152-165.

տին, հաստատուն կալով ի քրիստոնէութեան խրում. յորմէ կարծիս առեալ են ոմանք յայլազգեաց թէ յայլազգութիւն դարձեալ իցէ մանուկն :

Եւ եղեւ յետ իբրեւ երեսուն ամաց տեսեալ զնա այր մի պարսիկ ի Բաղէշ քաղաքի պնդէր թէ. Դու յառաջագոյն այլազգի էիր ի Սալմաստ քաղաքի : Իսկ Աւագ ետ պատասխանի. Քրիստոնեայ էի եւ եմ՝ եւ եղէց ծառայ Քրիստոսի Աստուծոյ իմոյ օրհնելոյն ի բարձունս : Եւ այրն պարսիկ ազդեաց * ի քաղաքին՝ եւ զրոհ տուեալ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք այլազգեաց, եւ առեալ ածին զնա յատեան ամիրային, որ կոչէր Ամիր Շարաֆ. եւ հարցափորձ արարեալ գտին հաստատուն ի հաւատս Քրիստոսի : Եւ ամիրայն կամէր արձակել զնա, այլ կամելով հաճել զմիտս ամբոխին՝ յղեաց զնա յատեան դատաւորին. եւ նա համարձակ դաւանեցաւ զՔրիստոս Աստուած եւ զինքն ծառայ նորա : * B p. 94 a.

Եւ ինքն էր լցեալ Հոգւով սրբով, եւ լուսափայլէր տեսիլ նորա իբրեւ զհրեշտակի. եւ մինչդեռ ուրախ մտօք եւ զուարթ երեսօք ի բերան ունելով զխոստովանութիւնն՝ դաւանէր զՔրիստոս Տէր եւ Աստուած եւ արարիչ երկնի եւ երկրի, արք ժանտք եւ անողորմք կրճտելով զատամունս իւրեանց դիզան ի վերայ վկային Քրիստոսի, եւ հարին զգլուխ նորա, ոմանք փայտակոծիւ եւ այլք սրով եւ քարամբ, եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս Փետրուարի ԻԳ :]

son christianisme; ce qui fit croire à certains musulmans que l'enfant s'était converti à la religion musulmane.

Environ trente ans après, un Persan l'ayant vu dans la ville de Balesch lui dit avec insistance : « Tu étais auparavant musulman dans la ville de Selmas. » Avag lui répondit : « J'étais chrétien et je le suis; je resterai le serviteur du Christ, mon Dieu, qui est béni dans les hauteurs. » Le Persan répandit la nouvelle * dans la ville; de nombreux musulmans s'assemblèrent pour l'assaillir, et, l'ayant saisi, l'emmenèrent au tribunal de l'émir qui s'appelait Émir Scharaf; ils l'interrogèrent et le trouvèrent ferme dans la foi du Christ. L'émir voulait lui rendre la liberté, mais pour contenter l'opinion de la foule, il l'envoya au tribunal du juge. (Avag) y confessa avec hardiesse le Christ, Dieu, et (se déclara) lui-même son serviteur. * B p. 94 a.

Il était rempli du Saint-Esprit, son visage était resplendissant comme celui d'un ange, et tandis que d'un esprit joyeux et d'un visage sour'ant, ayant à la bouche la profession par laquelle il confessait le Christ, Seigneur et Dieu, créateur du ciel et de la terre, des hommes méchants et féroces, grinçant des dents, se jetèrent sur le martyr du Christ, le frappèrent à la tête, d'aucuns avec de gros bâtons, d'autres avec le glaive et des pierres, et c'est ainsi qu'il mourut dans le Christ, le 23 février.]

Մեհեկի ԺԸ եւ Փետրուարի ԻԴ : Գիւտ պատուական գլխոյն Յովհաննու մկրտչի Քրիստոսի :

Երկու կրօնաւորք գնացին յարեւելից յԵրուսաղէմ երկիր պագանել սուրբ տեղեացն, եւ երեւեցաւ նոցա յանուրջս Յովհաննէս Մկրտիչն եւ ասէ. Երթիջիք յապարանսն Հերովդիայ եւ ընդ հողովն գտանիջիք զգլուխն իմ, հանէք եւ առջիք : Զայս երկիցս եւ երիցս անգամ տեսեալ՝ գնացին եւ գտին զպատուեալն ի հրեշտակաց զգլուխն Մկրտչին, եւ եդին ի խորգ մազեղէն, եւ առեալ երթային ի գաւառն իւրեանց :

Եւ բրուտ մի յոյժ աղքատացեալ՝ եթող զտունն իւր եւ գնայր ընդ կրօնաւորսն, եւ
* A fol. 193 r° a. նոքա բարձին նմա զխորգն յորում էր տուփն, եւ ոչ ծանուցին նմա * զոր բարձեալ էին : Եւ յայտնեցաւ Մկրտիչն բրտին յերազի եւ ասէ. Զոր բարձեալդ ես՝ ա՛ռ եւ փախիր զի գլուխն իմ է, եւ ապրիս բարիոք : Եւ առեալ գաղտ փախեաւ եւ գնաց յԵմեսիա քաղաք՝ զոր այժմ Հէմս կոչեն, բնակեցաւ անդ եւ ապրէր առատապէս :

Եւ յորժամ եհաս նմա մեռանել՝ կնքեաց զտուփն զգուշութեամբ եւ ետ քեռն իւրում, եւ պատուիրեաց մեծ պատուով եւ փառօք պահել եւ ոչ բանալ մինչեւ իւքն Կարա-

1 պատուական] սուրբ B — Քրիստոսի] Սուրբ գլուխն Յովհաննու Մկրտչի գտեալ եղեւ ի քաղաքն Սեւաստի զոր Հերովդէս շինեաց ի Պաղեստին. եւ յորում գխնձոյս ուրախութեանն արար՝ անդ գտաւ գլուխ կարապետին յապարանն Հերովդէի որ եհատ զնա. եւ գտաւ հաճութեամբ եւ յայտնութեամբ նմին սուրբ նախընթացին, որ եւ զտեղին յոր կայր ընդ երկար եցոյց, եւ եղեւ այսպէս *add.* B || 3 մկրտիչն] Քրիստոսի *add.* B || 4 գտանիջիք] ի տուփ *add.* B || 7 գնայր] երթայր B.

18 MÉHÉKI, 24 Février.

Invention du chef précieux de Jean, le baptiste du Christ.

Deux religieux étant allés de l'Orient à Jérusalem pour vénérer les lieux saints, Jean-Baptiste leur apparut dans un rêve et leur dit : « Allez au palais d'Hérode et vous trouverez sous terre ma tête, vous la sortirez et la prendrez. » Ayant eu cette vision deux et trois fois, ils allèrent et découvrirent la tête du Baptiste, honorée des anges, la mirent dans un sac de poils et l'ayant prise s'en allèrent dans leur contrée.

Un potier, qui était devenu très pauvre, quitta sa maison et s'en fut avec les religieux. Ceux-ci le chargèrent du sac dans lequel se trouvait la boîte,
* A fol. 193 r° a. sans rien lui dévoiler * de ce dont ils l'avaient chargé. Le Baptiste se révéla au potier dans un rêve et lui dit : « Prends ce dont tu es chargé et enfuis-toi, car c'est ma tête, et tu vivras heureux. » Celui-ci la prit donc, se sauva en cachette et se rendit à la ville d'Émèse, appelée aujourd'hui Ḥams ; il s'y établit et vécut dans l'aisance.

Lorsqu'il fut sur le point de mourir, il scella la boîte avec précaution et la transmit à sa sœur en lui recommandant de la conserver avec grand honneur

պետն կամեսցի ։ Եւ դարձեալ կինն ի ժամ մահուան եդիր զտուփն կնքեալ ի սափոր, եւ անկաւ սափորն յետ մահուան նորա ի քահանայ ոմն որ էր արիոսի աղանդոյն, որոյ անուն էր Եւստաթէոս, եւ զբժշկութիւնն զոր առնէր սուրբ գլուխն՝ վաճառէր ագահութեամբ եւ փափկանայր կերակրովք ։

Եւ իբրեւ գիտացին ուղղափառք քաղաքին հալածեցին զԵւստաթէոս ի քաղաքէն. եւ Աստուծոյ հրամանաւն ծածկեցաւ սափորն յորում էր տուփն մինչեւ ի ժամանակս բարեպաշտ թագաւորացն Վաղենտիանոսի եւ Մարկիանոսի, եւ Ուրիանոյ Եմեսիոյ եպիսկոպոսին ։ Եւ երեւեցաւ յանուրջս Մարկեղոսի հօր վանացն ոմն՝ զի խթեաց ի կողն երիցս անգամ, եւ ասէ. Տուաւ քաղաքիս այսմիկ գանձ անկողոպտելի՝ գլուխն Յովհաննու Մկրտչին ։ Եւ աստղ առաջնորդեաց Մարկեղոսի մինչեւ ի տեղին ուր ծածկեալ էր սափորն, * եւ եռես զի հուր ելանէր ի տեղւոջէն ։ * A fol. 193 r° b.

Եւ յարուցեալ պատմեաց եղբարցն զտեսիլն, եւ գնացին առ Ուրիանոս եպիսկոպոսն, եւ նա առեալ զամենայն ուխտ եկեղեցւոյն՝ գնաց ի տեղին ուր աստղն եցոյց. փորեցին եւ գտին զծածկեալ սափորն յորում էր տուփն, եւ գտին զկնիք մատանւոյ բրտին, երկիր պագին եւ տարան մեծաւ փառօք յեկեղեցին, եւ գոհացան զԱստուծոյ եւ զՄկրտչէն ։

2 ոմն] մի B || 3 սուրբ] պատուական B || 9 ի կողն] զկողն B || 13 եցոյց] յանուրջսն *add.* B || 14 յորում էր տուփն *om.* B.

et vénération et de ne pas l'ouvrir jusqu'à ce que le Précurseur lui-même le voulût. La femme, à son tour, à l'heure de sa mort, mit la boîte scellée dans une cruche, et cette cruche échut, à sa mort, à un prêtre qui était du schisme d'Arius, et se nommait Eustathe, lequel se fit payer avec avarice les guérisons opérées par la sainte tête et se délectait dans la bonne chair.

Lorsque les orthodoxes de la ville vinrent à apprendre cela, ils chassèrent Eustathe de la ville, et, par l'ordre de Dieu, la cruche dans laquelle se trouvait la boîte demeura cachée jusqu'aux jours des pieux empereurs Valentin et Marcianus et d'Ourianus, évêque d'Émèse. Or, Marcellus, prieur du couvent, vit dans un rêve quelqu'un qui lui touchait le côté par trois fois en lui disant : « Un trésor, qui ne peut pas être volé, est offert à cette ville, c'est la tête de Jean-Baptiste. » Une étoile guida Marcellus jusqu'à l'endroit où se trouvait cachée la cruche, * et il aperçut des flammes qui jaillissaient de cet endroit. * A fol. 193 r° b.

A son réveil, il raconta la vision aux frères, et ils se rendirent auprès de l'évêque Ourianus; celui-ci, à son tour, se fit accompagner par tous les membres de l'église, et se rendit à l'endroit indiqué par l'étoile. Ils creusèrent et trouvèrent cachée la cruche dans laquelle se trouvait la boîte; ils trouvèrent aussi le sceau de l'anneau du potier, se prosternèrent, et l'emportèrent en grande pompe à l'église, en rendant grâces à Dieu et au Baptiste.

Եւ մի ոմն ի քահանայից անուն Մաղքոս, թերահաւատութեամբ արկ զձեռն ի սափորն, եւ այլ ոչ կարաց հանել մինչեւ ճշմարիտ հաւատաց, եւ ապա թոյլ ետ հանել զձեռն :

Եւ կատարեցաւ տօն Գիւտի սուրբ գլխոյն Յովհաննու Մկրտչին Փետրուարի ԻԴ :

* B p. 95 a. [B * *Յայսմ աւուր տօն է սուրբ առաքելոյն Մատաթիայի, որ էր յառաքելոցն երկոտասանից :*

Յորժամ Յուդա մատնիչն վաճառեաց զՏէրն մեր, եւ ետես զնա անմեղ դատապարտեալ ի մահ վասն իւրոյ մատնութեանն, ապա դարձեալ զղջացաւ վասն որոյ արարն, թիւր զղջումն, եւ դարձոյց զերեսուն արծաթն՝ ընկէց ի տաճարն, եւ ասաց. Մեղայ զի մատնեցի զարիւն արդար : Որոց պատասխանի ետուն Հրէայքն եւ ասեն. Մեզ չէ փոյթ դու գիտես : Եւ նորա որպէս անզգամ յամենայնի՝ յուսահատեալ գնաց ի տուն իւր եւ արկ զպարանոցաւն իւրով չուան եւ խեղդեցաւ, եւ պատառեցաւ ընդ մէջն եւ հեղաւ ամենայն փոր նորա :

* B p. 95 b. *Իսկ յորժամ ժողովեցան սուրբ առաքեալքն * ի միասին յետ Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մերձ Պենտեկոստէին, ետես սուրբ առաքեալն Պետրոս զի թիւ սուրբ առաքելոցն երկոտասանից պակասեաց վասն ազալմանն Յուդայի եւ ոչ*

1-2 *եւ մի ոմն . . . զձեռն] ուր եւ բազում նշանս եւ սքանչելիս արար յամենայն նեղեալս եւ յախտաժէտս : Իսկ ի թագաւորութեանն Միքայելի յորմէ ուղղափառութիւն եղեւ եւ Իգնատիոսի պատրիարքին բերեալ ի Կոստանդնուպօլիս եւ եդաւ ի վանսն Սաուդիու* B || 3 *գիւտի] պատուականն եւ* add. B || 3 *Փետրուարի ԻԴ] եւ Մեհեկի ԺԸ, որ է սպահապան եւ բժիշկ հիւանդաց եւ հալածիչ դիւաց շնորհօքն Քրիստոսի* add. B.

Un des prêtres, nommé Malchus, par incrédulité ayant mis la main dans la cruche, ne put plus la retirer jusqu'à ce qu'il eût cru en vérité ; il lui fut permis ensuite de la retirer.

La fête de l'invention du saint chef de Jean-Baptiste eut lieu le 24 février.

* B p. 95 a. [B * En ce jour, fête du saint apôtre Mathias (*Mataṭiayi*), qui était l'un des douze apôtres.

Lorsque le traître Judas eut livré Notre-Seigneur, et qu'il vit l'Innocent condamné à mort à cause de sa trahison, il regretta ce qu'il avait fait, (mais) d'un faux regret. *Il rapporta les trente pièces d'argent,* les jeta dans le temple *et dit : « J'ai péché en livrant un sang juste*[1]. » A quoi les Juifs répondirent : « *Que nous importe? Cela te regarde*[2]. » Alors lui, insensé comme toujours, rentra chez lui désespéré, passa une corde à son cou et *se pendit ; son corps s'entr'ouvrit et toutes ses entrailles jaillirent au dehors*[3].

* B p. 95 b. Lorsque les saints apôtres se réunirent ensemble * après l'Ascension de Notre-Seigneur Jésus-Christ aux approches de la Pentecôte, le saint apôtre Pierre, vu que le nombre des douze apôtres avait été diminué par la faute de

1. Matth., xxvii, 3. — 2. Matth., xxvii, 4. — 3. Act., i, 18.

պատշաճ համարեցաւ մնալ այնպէս. այլ պատուեաց զի ընտրեսցի այլ ոք մի ևս ի տեղի նորա, զի դարձեալ լրասցի երկոտասան թիւ առաքելոցն՝ առ ի քարոզել զհաւատս Երրորդութեանն ընդ չորս կողմանս աշխարհի :

Վասն որոյ և ասաց Պետրոս յայլ առաքեալսն. Եղբարք, պարտ է մեզ ընտրել զմի ոք ի տեղի առաքելութեանն Յուդայի՝ որ վկայեսցէ զՅարութիւն Տեառն մերոյ Քրիստոսի ընդ մեզ, զոր ինքն իսկ Տէրն մեր ասաց թէ. Դուք էք վկայք այսոցիկ, որք եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և ի Հրէաստան և ի Սամարիա մինչև ի ծագս երկրի : Աստի ոչ է իրաւացի վկայել նմա այլ ումեք յերկոտասանիցս կարգ՝ բայց այնմ որ տեսաւ և լուաւ : Արդ պարտ է ընտրել զմի ոք յայնցանէ որ ընդ մեզ էին, և տեսին զամենայն սքանչելիս նորա, և լուան նոքին ականջօք զխրատ վարդապետութեան Տեառն մերոյ :

Յայնժամ ընտրեցին և կացուցին առաջի՝ երկուս այրս յաշակերտացն, որոյ միոյն կոչէր անուն Յովսէփ արդար վասն սրբութեան նորա՝ որ Բարսաբայն կոչէր, որ էր եղբայր Յակոբայ փոքրկան, և Սիմոնի և Յուդայի զոր ոմանք Յովսէս անուանեն, և զսուրբն Մատաթիա՝ որ էր մի յեօթանասուն աշակերտացն :

Եւ անդէն ամենեքեան կացին յաղօթս առ Տէր և ասեն. Դու Տէր սրտագէտ՝ յայտնեա զմի ոք յերկոցունց աստի՝ թէ ո՞ է արժանի լինել զտեղի առաքելութեանն ի

Judas, ne jugea pas convenable qu'il en restât ainsi, et décida de faire élire un autre à sa place pour parfaire le nombre des douze apôtres pour prêcher la foi de la Trinité aux quatre coins de la terre.

C'est pourquoi Pierre dit aux autres apôtres : « Frères, il nous convient d'élire quelqu'un en remplacement de la prédication de Judas, qui puisse témoigner avec nous de la Résurrection de Notre-Seigneur Christ, ce que lui-même Notre-Seigneur a dit : Vous êtes témoins de ces choses, *vous serez mes témoins à Jérusalem, en Judée et à Samarie jusqu'aux limites de la terre*[1]. C'est pourquoi il n'est pas juste à quelqu'un d'autre de témoigner dans le rang des douze, en dehors de qui a vu et entendu. C'est pourquoi il faut élire un de ceux qui étaient avec nous, qui ont vu ses miracles et ont entendu de leurs propres oreilles les conseils de la doctrine de Notre-Seigneur. »

Ils choisirent alors et présentèrent deux hommes d'entre les disciples, dont l'un s'appelait Joseph le juste, à cause de sa sainteté, surnommé Barsaba, et qui était le frère de Jacques mineur, de Simon et de Jude, — que d'aucuns appellent José, — et saint Mathias, qui était l'un des soixante-dix disciples.

Aussitôt tous se mirent à prier le Seigneur et dirent : « *Toi, Seigneur, qui connais les cœurs, désigne l'un de ces deux*, qui soit digne de *remplir la place de*

1. Act., I, 8.

կարգ երկոտասանիցն, զոր Յուդա կորոյս վասն մեղաց իւրոց ։ Եւ իսկոյն արկին վիճակս, եւ ել վիճակն Մատաթիայ, եւ համարեցաւ ընդ մետասան առաքեալսն ։

* B p. 96 a. Եւ այնպէս սուրբ առաքեալն Մատաթիա * կարգեալ ընդ երկոտասանսն, եւ քարոզեաց ընդ ամենայն Հրէաստան եւ արար բազում սքանչելիս իբրեւ զայլ առաքեալսն ։ Եւ այնպէս քարոզեալ զաւետարանն Հրէից, որ եւ յոլով չարաչար կրեաց ի նոցանէ համբերեալ՝ բազումս դարձոյց ի Քրիստոս յԻսրայելէ. եւ ինքն հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։

Եւ սուրբն Յովսէփ ընկալաւ զկարգ քարոզութեանն եւ համբերեաց բազում հալածանաց ի Հրէից, որ եւ ետուն նմա թոյն մահաբեր եւ ոչ վնասեցաւ. եւ յետոյ եւ նա հանգեաւ խաղաղութեամբ ի Հրէաստան ։]

Մեհեկի ԺԹ եւ Փետրուարի ԻԵ ։ Վկայութիւն սրբուհւոյն Պերպետուայ եւ դստերն Փելեկիտաւրայ ։

Պատուական կին սա էր ի քաղաքէն Թուբրիտանիոյ, յԱփրիկեայ գաւառէն, քրիստոնեայ հաւատով, եւ ունէր դուստր ի ստեան ։ Եւ կացուցին առաջի հազարա-

12 դստերն] իւրոյ B — Փելեկիտաւրայ] Փիլիկատեայ B || 14 եւ կացուցին] որ եւ տարեալ կացուցին B.

l'apostolat, parmi le rang des douze que Judas perdit à cause de ses péchés. » *On tira au sort* aussitôt ; *et le sort échut à Mathias et il fut compté avec les onze apôtres*[1].

* B p. 96 a. C'est ainsi que le saint apôtre Mathias, * rangé parmi les douze, prêcha partout en Judée et opéra de nombreux miracles comme les autres apôtres. Il prêcha l'évangile aux Juifs, endura de cruelles souffrances de leur part et convertit au Christ beaucoup d'Israël. Puis, il reposa en paix dans le Christ.

Saint Joseph obtint le rang de la prédication, eut à souffrir de nombreuses persécutions de la part des Juifs ; ils lui donnèrent même un poison mortel, mais cela ne lui fit courir aucun danger. Lui aussi, plus tard, reposa en paix, en Judée.]

19 MÉHÉKI, 25 Février.

Martyre de sainte Perpétue et de sa fille Félicité.

Cette excellente femme était de la ville de Thuburbe (*Ṭoubritanioy*)[2], dans la province d'Afrique, de foi chrétienne ; elle avait une fille au sein. On la mit en présence du chiliarque avec quatre autres hommes que Perpétue avait

1. Act., I, 23-25. — 2. La leçon correcte du grec est Θουρβιτάνων πόλις, mais on trouve Θουβριτάνων dans le ms. de Jérusalem édité par P. Franchi de Cavalieri, *La passio SS. Perpetuæ et Felicitatis,* Rome, 1896, p. 107.

պետին ընդ այլ չորս այս զորս դարձուցեալ էր Պերպետուայ ի խաւարէ ի լոյս, որոց անուանքն են. Սատուրիւրոս, Ռեւկատոս, Սատորնիլոս, Սեկունդոս. եւ բազում խրատ տայր ողոքանօք եւ քաղցրութեամբ եւ ապա խստութեամբ եւ սպառնալեօք, եւ ոչ կարաց դարձուցանել զնոսա ի հաւատոյն Քրիստոսի. արկին զնոսա ի բանդ, եւ տեսին ի * տեսլեան զյաղթութիւն ընդդէմ սատանայի ։ * A fol. 193 v° a.

Ետես եւ աղախինն Քրիստոսի նեղ սանդուղս յերկրէ յերկինս պղնձիս, եւ յերկուս կողմանս սանդղոցն էին ցցեալ տանջանարանս, սուսերս, գեղարդունս, խոցիչս, շամփուրս, ծանկս, նետս, շանթս, տապակս, ատամնահանս, մամուլս, սղոցս, բեւեռս, եւ վիշապ մի ի ներքոյ սանդղոցն որ եւ արգելոյր զորս կամէին ի վեր ելանել ընդ սանդուղսն ։ Եւ վաղեաց տղայ դուստրն իւր ի գրկացն, եւ ել ի վեր ընդ սանդուղսն, եւ կոչէր զմայր իւր ելանել ։

Եւ զարթուցեալք պատմեցին միմեանց եւ գիտացին զբարի կատարումն մարտիրոսութեանն ։

Եւ ի վաղիւն կապեցին զսրբուհին Պերպետուա ի վայրենի ցուլ՝ ունելով զդուստրն իւր ի գիրկս, եւ այնպէս քարշելով ընդ քարս եւ ընդ վէմս եւ ընդ ծառս սատակեցին

2 Սատուրիւրոս] Սատուրիոս B || 6 Քրիստոսի] Պերպետուա *add.* B || 11 ելանել] տեսին եւ արքն զտեսիլս մարտիրոսութեան *add.* B.

convertis des ténèbres à la lumière et dont les noms sont : Satyre (*Satariuros*)[1], Revocatus (*Reukatos*), Saturnin (*Satornilos*), Secundus. (L'officier) les exhorta avec insistance et douceur, ensuite avec sévérité et menaces, mais il ne put les détourner de la foi du Christ. On les jeta en prison, et ils virent en* vision la victoire sur le démon. * A fol. 193 v° a.

La servante du Christ, elle aussi, vit une étroite échelle de cuivre dressée de la terre au ciel, et aux deux côtés de l'échelle étaient accrochés des instruments de torture, des glaives, des lances, des lames, des broches, des onglets, des flèches, des fers pointus, des poêles, des instruments pour arracher les dents, des presses, des scies, des clous, et il y avait un dragon au bas de l'échelle, qui empêchait ceux qui voulaient s'élever au moyen de l'échelle. Mais sa petite fille, s'échappant de ses bras, se mit à monter l'échelle et invitait sa mère à y monter aussi.

A leur réveil, (les saints) se racontèrent mutuellement (leurs songes) et ils comprirent leur bonne fin par le martyre.

Le lendemain on attacha sainte Perpétue, tenant sa fille dans ses bras, à un taureau sauvage, qui la traîna à travers les pierres, les rochers et les arbres. C'est ainsi qu'elles rendirent leur âme. On trancha la tête aux quatre

1. Satyre n'est pas mentionné au début de la passion, ni par le texte grec, ni par les mss. de la version latine, sauf l'*Ambrosianus*, ibid., p. 106 sq.

զհօղիս իւրեանց. եւ զչորս արանցն հատին զգլուխն՝ Փետրուարի ԻԵ, եւ այնպէս բարի խոստովանութեամբ կատարեցան ի Քրիստոս ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելւոյն սրբոյ եւ փառաւորեալ առն Աստուծոյ Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի ։

* B p. 96 b. [B * Յայսմ աւուր յիշատակ սրբոյն Աղեքսանդրոսի որ ի Թրակիա, եւ սուրբ հարցն Ասկղեպիոսի եւ Յակոբոսի եւ Տարասիոսի պատրիարքին Կոստանդնուպօլսի, եւ Մարկելլոսի եպիսկոպոսի ։]

Մեհեկի Ի եւ Փետրուարի ԻԶ ։ Տօն է Վարագայ խաչին ։

Սուրբ տիկնայքն Գայիանէ եւ Հռիփսիմէ ի գալն իւրեանց յերկիրն Հայոց՝ ունէին մասն ինչ ի Քրիստոսի խաչափայտէն, զոր տարաւ Պատրոնիկէ տիկինն յԵրուսաղեմէ
* A fol. 193 v° b. ի Հռոմ կինն Կղաւդիայ կայսեր ։ Եւ զի էր սուրբն Հռիփսիմէ թոռն * նորա՝ կապեցին զայն ի պարանոց նորա պահպանական կուսին ։

Եւ յորժամ եկին ի Տոսբ գաւառն, ի լեառն Վարագ, քահանայքն որ ընդ նոսա էին եւ ոմանք ի քերցն մնացին անդ ունելով զսուրբ խաչն ։ Եւ կացեալ ժամանակս

1 իւրեանց] առ Աստուած *add.* B || 1 Փետրուարի ԻԵ] եւ Մեհեկի ԺԹ *add.* B || 8 Տօն... խաչին] Յիշատակ է սուրբ կուսանացն Գայեանեայ եւ Հռիփսիմեայ. եւ տօն Վարագայ սուրբ խաչին B || 10 յԵրուսաղեմէ *om.* B || 13 եկին] հասին B.

hommes, le 25 février. C'est ainsi qu'en bonne confession ils moururent dans le Christ.

En ce jour, commémoration du bienheureux et glorieux homme de Dieu Jacques, évêque de Nisibe.

* B p. 96 b. [B * En ce jour, commémoration de saint Alexandre de Thrace et des saints pères Asclépius (*Asklipiosi*), Jacques, et Tarasius, patriarche de Constantinople, et de l'évêque Marcellius.]

20 MÉHÉKI, 26 Février.

Fête de la Croix de Varag.

Les saintes femmes Gaïanè et Rhipsimè, lorsqu'elles arrivèrent dans le pays d'Arménie, avaient avec elles une partie du bois de la croix du Christ, que l'impératrice Patronice (*Patronikè*), femme de l'empereur Claude, avait
* A fol. 193 v° b. apportée de Jérusalem à Rome. Comme sainte Rhipsimè était sa nièce, * on avait attaché au cou de la vierge, pour la protéger, ce (fragment de la sainte Croix).

Lorsqu'elles arrivèrent dans la province de Tosp, à la montagne de Varag, les prêtres qui étaient avec elles, ainsi que quelques sœurs, s'y arrêtèrent, ayant la sainte Croix. Ils y passèrent leur vie, en solitaires, et y moururent;

իւրեանց միայնակեցութեամբ՝ վախճանեցան անդէն. եւ մնաց սուրբ խաչն ի վերայ վիմի միոյ անգիտելի ի մարդկանէ, զի սուրբ տիկնայքն ի Վաղարշապատ կատարեցան նահատակութեամբ :

Եւ աշխարհն ի կռապաշտութեան էր եւ ոչ ոք գիտէր թէ ուր է. զի ի համբաւէ լուեալ էին թէ ի լեառն Վարագայ է : Եւ յետ բազում ժամանակաց յաւուրս Թոթկայ միայնակեցի, եւ ի հայրապետութեանն Ներսիսի Շինողի, եւ Վարդ պատրկի, մինչդեռ կային յաղօթս սուրբ միայնակեացքն Թոթիկ եւ Յովէլ աշակերտն իւր, յերրորդ ժամու լցաւ լեառն Վարագայ լուսով, եւ ձայնք հրեշտակաց լսելի լինէր որք օրհնէին զԱստուած անճառելի ձայնիւ : Եւ վերացեալ խաչն ի վիմէն՝ եւ լոյսն զկնի նորա, եւ եկն եմուտ յեկեղեցին եւ նստաւ ի վերայ սուրբ սեղանոյն. եւ եկեղեցին լցաւ լուսով եւ անուշահոտութեամբ, եւ եկաց մինչեւ յերեկոյն, եւ ապա անյայտ եղեւ :

Եւ ժողովեցան յամենայն կողմանց, եկին անդ եւ կաթողիկոսն Ներսէս եւ Վարդ պատրիկն. եւ կարգեցին ամ յամէ տօն յաւուր Ի Մեհեկի եւ ԻԶ Փետրուարի, ի փառս Քրիստոսի :

Յայսմ աւուր վկայութիւն Շուշանայ կրօնաւորի եւ մարտիրոսի :

* Յաւուրս Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային էր աղախինն Քրիստոսի Շուշան * A fol. 194 r° a.

2 միոյ *om* B — ի մարդկանէ] մարդկան B || 13 ամ . . . Փետրուարի] տօն սուրբ խաչին ամ յամէ, որ օր քսան էր Մեհեկի ամսոյ եւ քսան եւ վեց Փետրուարի B.

la sainte Croix demeura sur un rocher ignorée de tout le monde, car les saintes femmes (Gaianè et Rhipsimè, et leurs compagnes) avaient été martyrisées à Valarchapat.

Le pays était livré à l'idolâtrie et personne ne savait où était (la Croix), mais on avait entendu dire, par une rumeur, qu'elle se trouvait à la montagne de Varag. Longtemps après, aux jours du solitaire Totik, sous le patriarcat de Nersès le constructeur, et (du temps) du patricien Vard, pendant que les saints solitaires Totik et son disciple Yovêl étaient en prières, à la troisième heure, la montagne de Varag se remplit de lumière, des voix d'anges se firent entendre qui glorifiaient Dieu d'une voix inénarrable. La Croix se souleva du rocher avec une traînée de lumière après elle et vint pénétrer dans l'église, où elle se posa sur le saint autel. L'église fut remplie de lumière et d'une odeur suave. (La Croix) y resta jusqu'au soir, puis disparut.

On accourut de tous les côtés; le catholicos Nersès et le patricien Vard y vinrent également et ils établirent une fête (à célébrer) chaque année le 20 méhéki, 26 février, pour la gloire du Christ.

En ce jour, martyre de Susanne, religieuse et martyre.

* Aux jours de l'empereur impie Maximien, la servante du Christ Susanne * A fol. 194 r° a.

ի Պաղեստինոյ. հայրն կռապաշտ էր եւ մայրն ջհուտ ։ Եւ լուեալ զաստուածայինն պատուիրանաց աւետարանն ի Սեղբանայ եպիսկոպոսէն հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ եւ էր ամաց տասն եւ ութից ։

Եւ ի վախճանել ծնողացն վաճառեաց զամենայն ինչս իւր եւ ետ աղքատաց եւ ազատեաց զծառայսն իւր. եւ գերծեալ զգլուխն զգեցաւ զգեստ առն եւ գնաց յԵրուսաղէմ. եւ մտեալ յարանց վանս եւ իբրեւ զայր բնակեցաւ անդ, եւ ուսաւ զամենայն կարգ եւ զկանոն կրօնաւորութեան եւ անուանեցաւ Յովհաննէս, եւ կացեալ մեծ եւ առաքինի ճգնութեամբ ամս քսան անդ ։

Եւ կին մի հաւատաւոր ի քաղաքէն Ելեւթերուպօլեայ՝ գնաց ի վանսն եւ արար անդ աւուրս. եւ տեսեալ զՅովհաննէս՝ կարծեաց թէ այր է եւ տոփացաւ ի նա սատանայական ցանկութեամբ, եւ պատրողական բանիւք կամէր պոռնկել. եւ նորա յետ ընկեցեալ զնա ամօթալից դարձոյց ։ Եւ նա երթեալ առ Կղէոպաս եպիսկոպոսն պատմեաց նմա եթէ. Յովհաննէս աբեղայն բռնադատեաց զիս ի շնութիւն ։ Եւ առաքեաց եպիսկոպոսն եւ կոչեաց զՅովհաննէս աբեղայ. եւ նա յանձն էառ զմեղսն եւ հայցէր ապաշխարութեամբ թողութիւն յանցանացն ։

Եւ յորժամ կամեցան հանել զկրօնաւորութեան հանդերձն, զքեմն եւ զմազեղէնն

* A fol. 194 r° b. յանձնէն, * աղաչեաց զեպիսկոպոսն զի երկու սարկաւագուհիք ի սենեակ եկեղեցւոյն

1 հայրն ... ջհուտ] հօր հեթանոսի եւ մօր հրէի լեալ զաւակ B || 3 եւ էր] գոլով B || 4 ետ] բաշխեաց B || 7 կրօնաւորութեան] զգեցաւ եւ զքեմ աբեղայութեան *add.* B — կացեալ] ի վանսն *add.* B || 13 աբեղայն *om.* B || 16 հանդերձն *om.* B.

(*Sousan*) vivait en Palestine; son père était idolâtre et sa mère juive. Ayant entendu de l'évêque Silvain (*Selban*) l'évangile des commandements divins, elle crut au Christ et fut baptisée; elle avait dix-huit ans.

A la mort de ses parents, elle vendit tout ce qu'elle possédait, le distribua aux pauvres, rendit la liberté à ses domestiques, se fit raser la tête, revêtit des habits d'homme et se rendit à Jérusalem, où elle entra dans un couvent d'hommes et y résida comme homme; elle y apprit tous les règlements et les ordres de la vie religieuse, se fit appeler Jean et y vécut vingt ans d'un grand et vertueux ascétisme.

Une femme chrétienne de la ville d'Éleuthéropolis s'étant rendue au couvent, y séjourna quelques jours. Ayant aperçu Jean, elle crut que c'était un homme et s'en éprit d'une passion diabolique; par des paroles trompeuses elle l'engageait à forniquer; mais il se détourna après l'avoir repoussée honteusement. Elle s'en fut alors chez l'évêque Cléophas et lui raconta : « Le moine Jean m'a obligée à la fornication. » L'évêque envoya chercher le moine Jean, qui prit sur soi le péché et demanda l'absolution de la faute avec une pénitence.

* A fol. 194 r° b. Lorsqu'on voulut lui enlever l'habit religieux, le manteau et la bure, * il pria l'évêque de le faire dépouiller par deux diaconesses dans la chambre de

մերկացուցեն զնա ։ Եւ յորժամ մտին երկու կուսանքն մերկացուցանել զերանելին եւ տեսին զնա կնոջ բնութիւն. եւ լուեալ եպիսկոպոսն զարմացաւ յոյժ եւ ետ փառս Աստուծոյ, եւ ձեռնադրեաց զնա սարկաւագուհի, եւ առաքեաց ի կուսանաց վանս ։ Եւ տուաւ նմա շնորհս յԱստուծոյ եւ բժշկէր զամենայն ցաւս հիւանդաց ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկն դատաւորն Աղեքսանդրոս յԵլեւթերուպօլիս, եւ զոհս մատոյց կռոցն ։ Եւ լուեալ Շուշանայ գնաց ի տաճարն եւ զձեռս յերկինս տարածեաց եւ աղաչեաց զԱստուած, եւ անկան ամենայն բագինք կռոցն ։ Եւ կալեալ զնա կռապաշտիցն տարան առ դատաւորն Աղեքսանդրոս կապանօք եւ հատին զստինս նորա. եւ հրեշտակ Տեառն իջեալ կացոյց զստինս ի տեղի իւրեանց եւ ողջացոյց ։ Եւ տեսեալ դահճացն հաւատացին ի Քրիստոս այնու սքանչելեօք ։ Եւ առաքեաց դատաւորն եւ հատին զգլուխս նոցա ։

Եւ կապար հալեալ արկին ի բերան երանելւոյն Շուշանայ, եւ որպէս ջուր էջ յորովայնն. եւ ապա գան հարեալ արկին ի բանդ, եւ անդ յաղօթելն իւրում աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Փետրուարի ԻԶ ։

Եւ երթեալ եպիսկոպոսն ամենայն ուխտիւն, ջահիւք եւ ոստովք ձիթենեօք, տարան զմարմին սրբոյ կուսին եւ վկային Շուշանայ յեպիսկոպոսարանն, եւ թաղեցին պատուով յեկեղեցւոջն ։

1 մերկացուցանել] մերկացուցին B || 4 ցաւս հիւանդաց] հիւանդսն B || 9-11 եւ հրեշտակ ... զգլուխս նոցա *om.* B || 12-14 եւ որպէս ջուր ... Փետրուարի ԻԶ] եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մեհեկի Ի եւ Փետրուարի ԻԶ B.

l'église. Et lorsque les deux vierges furent entrées pour déshabiller le bienheureux, elles constatèrent son sexe féminin; ce qu'ayant entendu, l'évêque fut dans un grand étonnement et rendit gloire à Dieu; il l'ordonna diaconesse et l'envoya dans un couvent de femmes. Les grâces de Dieu lui furent accordées et elle guérissait tous les maux des malades.

A cette époque le juge Alexandre vint à Éleuthéropolis et offrit des sacrifices aux idoles. Susanne, l'ayant appris, se rendit au temple, éleva ses mains vers le ciel et pria Dieu; aussitôt tous les autels des idoles se renversèrent. Les idolâtres la saisirent et l'emmenèrent enchaînée au juge Alexandre. Ils lui coupèrent les seins, mais un ange du Seigneur étant descendu remit les seins en place et la guérit. Ayant vu cela, les bourreaux crurent au Christ à cause de ce miracle. Le juge envoya (des hommes) qui leur tranchèrent la tête.

On fit couler dans la bouche de la bienheureuse Susanne du plomb fondu, qui descendit comme de l'eau dans sa poitrine. Ensuite on la frappa et on la jeta en prison, où elle rendit son âme à Dieu en priant, le 26 février.

L'évêque et tout le clergé, avec des torches et des branches d'olivier, allèrent chercher le corps de la sainte vierge et martyre Susanne; ils la conduisirent à l'évêché et l'inhumèrent avec honneur dans l'église.

* A fol. 194 v° a. * Յայսմ աւուր զարգոյն Յանուարի զԲենեւենդայ եպիսկոպոսին եւ զիւր վեց սարկաւագացն հատին զջիլս ձեռացն եւ ոտիցն, եւ ապա զգլուխն, հրամանաւ Դիոկղետիանոսի ամբարիշտ արքայի :

Մեհեկի ԻԱ եւ Փետրուարի ԻԷ : Յիշատակ է Եղիշէի վարդապետի :

Երանելին Եղիշէ էր զինուորեալ Վարդանայ Հայոց զօրավարին, եւ էր դպրապետ. եւ տեսող լեալ ամենայն անցիցն որ անցին ընդ զօրսն հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ :

Եւ յետ նահատակութեան զօրացն հայոց թողեալ զզինուորութիւնն կրօնաւորեցաւ, եւ բնակէր ճգնութեամբ եւ խստակրօն վարուք յանապատի, պահոց եւ աղօթից պարապեալ՝ խոտաբուտ եւ գետնախշտի լեալ յաշխարհին Մոկաց եւ ի ծովեզրն : Եւ անդ գրեաց զպատմութիւն սրբոց Վարդանանցն, եւ զգիրս կանոնականս, եւ զմեկնութիւն արարածոցն, եւ զգիրս խաչելութեանն Քրիստոսի, եւ այլ գիրս օգտակարս : Եւ տուան նմա շնորհք բժշկութեան. եւ կացեալ յոլով ժամանակս՝ վախճանեցաւ աստուածահաճոյ վարուք ի Փետրուարի ԻԷ : Եւ ժողովեալ բազմութիւն քրիստոնէից թաղեցին զնա պատուով :

1 Յայսմ աւուր] Ի սմին աւուր B — զԲենեւենդայ] Բենեւանդայ B. || 4 Յիշատակ . . . վարդապետի] Վարք սրբոյն Եղիշէի վարդապետի Հայոց B || 12 արարածոցն եւ զգիրս *om.* B || 14 ի Փետրուարի ԻԷ] յամսեանն Մեհեկի ԻԱ B.

* A fol. 194 v° a. * En ce jour on coupa les nerfs des mains et des pieds, puis la tête, à saint Janvier, évêque de Bénévent, et à ses six diacres, sur l'ordre de l'empereur impie Dioclétien.

21 MÉHÉKI, **27 Février.**

Commémoration du docteur Élisée.

Le bienheureux Élisée était enrôlé sous le général arménien Vartan, dont il était le secrétaire. Il fut témoin oculaire de tout ce qui advint aux troupes arméniennes par le fait de Hasguerd, roi des Perses.

Après le martyre des troupes arméniennes, il quitta les armes et se fit religieux. Il vivait dans le désert en ascète, menant une vie très austère de jeûnes et de prières, se nourrissant d'herbes, couchant sur le sol dans le pays de Mogh et au bord de la mer. C'est là qu'il écrivit l'histoire des saints Vartaniens, et les écritures canoniques, les commentaires de la Genèse, les écrits sur la crucifixion du Christ, et d'autres ouvrages utiles. Des Grâces de guérison lui furent accordées, et il mourut après avoir vécu de longues années d'une vie agréable à Dieu, le 27 février. Une multitude de chrétiens s'étant assemblée l'inhuma avec honneurs.

Եւ իշխանն Մոկաց գնաց ի գերեզման նորա ուխտի պատճառաւ. եւ գաղտ հատեալ զգլուխ սուրբ վարդապետին, եւ առեալ ի գիշերի * փախստեայ անկաւ յաշխարհն իւր : * A fol. 194 v° b. Եւ մեծապէս պատուեցաւ առաջին բնակութիւն սրբոյն, զի ամենայն որ հաւատով երթան ի գերեզման նորա՝ կատարին խնդրուածք նորա եւ բժշկին յիւրաքանչիւր ցաւոց զօրութեամբն Քրիստոսի :

Յայսմ աւուր վկայութիւն Փիլիպպոսի առաքելոյն յերկոտասանիցն եւ սարկաւագացն որ էին ընդ սրբոյն Ստեփաննոսի նախավկային ։ Եւ Յովհաննու եպիսկոպոսի եւ Յակոբայ քահանայի :

Սոքա էին ի Պարսիկս ի ժամանակս Սաբուրիոսի հրապաշտ արքային Պարսից, ուսուցանէին ժողովրդեան զճշմարիտ բանն Աստուծոյ եւ մկրտէին յանունն Քրիստոսի :

Եւ ի միում գիշերի տեսանէ յանուրջս Յովհաննէս եպիսկոպոսն այր մի դահիճ եւ ի ձեռին սուսեր, եւ յեզր սուսերին պսակ. եւ ընթացաւ դահիճն առ եպիսկոպոսն եւ եդ զպսակն ի գլուխ նորա եւ ասէ. Առ զոր փափաքիդ :

Եւ յետ սակաւ աւուրց մատնեցան հրապաշտիցն, եւ հատին զգլուխս նոցա Փետրուարի ԻԷ. եւ կատարեցան բարի խոստովանութեամբ :

2 վարդապետին] Եղիշէի *add.* B — եւ առեալ ի գիշերի *om.* B || 9 ժամանակս] հալածանաց Շապհոյ *add.* B || 13 ի գլուխ] ի վերայ գլխոյ B || 14 հրապաշտիցն եւ] պէսպէս չարչարանօք *add.* B || 15 Փետրուարի ԻԷ] եւ Մեհեկի ԻԱ *add.* B — կատարեցան] ի Քրիստոս *add.* B.

Le prince de Mogh s'étant rendu à sa tombe, sous prétexte de pèlerinage, trancha secrètement la tête du saint docteur, la prit et se sauva* nuitamment * A fol. 194 v° b. dans son pays. La première demeure du saint fut grandement honorée, car tous ceux qui se rendent avec foi à sa tombe (voient) leurs vœux exaucés et trouvent la guérison de leurs douleurs particulières par la puissance du Christ.

En ce jour, martyre de l'apôtre Philippe, l'un des douze, et des diacres qui étaient avec le protomartyr saint Étienne; et (martyre) de l'évêque Jean et du prêtre Jacques.

Ces derniers vivaient en Perse aux jours de Sapor (*Sabourios*), roi des Perses, adorateur du feu; ils enseignaient au peuple la parole véritable de Dieu et baptisaient au nom du Christ.

Une nuit, l'évêque Jean vit en songe un bourreau qui tenait à la main une épée, et à la pointe de l'épée se trouvait une couronne. Le bourreau courut vers l'évêque et posa la couronne sur sa tête en disant : « Reçois ce que tu désires. »

Peu de jours après ils furent dénoncés aux adorateurs du feu; on leur trancha la tête, le 27 février; ils moururent en bonne confession.

* B p. 98 b. [B * Յայսմ աւուր վկայութիւն Փիլիպպոսի առաքելոյն, որ էր յեօթն սարկաւագացն, եւ ընկեր սրբոյն Ստեփաննոսի նախավկայի :

Սա քարոզեաց զՔրիստոս ի Հրէաստան եւ ի Սամարիա, մկրտեաց զեթովպացի ներքինին. ապա գնաց քարոզել զաւետարանն յԱսիա, եւ զբազումս լուսաւորեաց հաւատովն Քրիստոսի. եւ անդ չարչարանօք կատարեցաւ ի Քրիստոս :

* B p. 99 a. Ի սմին աւուր տօն է սուրբ եւ երանելի ճգնաւոր հօր մերոյ մեծին եւ * աստուածազգեցին Մարկիանու, որ ի Հռոմ յաւազանէն ընկալաւ զմեծն Կոստանդիանոս առաջին թագաւորն քրիստոնէից, յորժամ հաւատաց եւ բժշկեցաւ մկրտութեամբն. որ եւ կատարեցաւ վասն Քրիստոսի :

Յայսմ աւուր յիշատակ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ :

Սուրբ հայրն մեր եւ երանաշնորհ վարդապետն Գրիգոր էր ի Վասպուրական աշխարհէն Հայոց, որդի տեառն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, սնեալ եւ վարժեալ սրբութեամբ եւ իմաստութեամբ առ սոսա Անանիայ վարդապետի՝ առաջնորդի Նարեկայ վանիցն ի Ռշտունիս : Եւ ի նոյն վանս կրօնաւորեալ ձեռնադրեցաւ քահանայ, եւ կարգեցաւ վարժապետ միանձանց ի սուրբ վարս եւ յաստուածային գիտութիւնս :

Արար եւ մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի լուսաւոր բանիւք, եւ ճառս ներբողականս, զքարոզս եւ զմեղեդիս հոգելից հռետորութեամբ եւ խորին իմաստիւք : Եւ

* B p. 98 b. [B * En ce jour, martyre de l'apôtre Philippe qui était l'un des sept diacres et compagnon de saint Étienne, le protomartyr.

Celui-ci prêcha le Christ en Judée et à Samarie; il baptisa l'eunuque éthiopien, puis partit pour prêcher l'évangile en Asie; il éclaira beaucoup d'hommes par la foi au Christ et mourut là dans les tortures pour le Christ.

En ce jour, fête de notre bienheureux père, l'ascète, le grand Marcien, * revêtu de Dieu, qui à Rome reçut des fonts baptismaux le grand Constantin, le premier roi chrétien, lorsqu'il crut et trouva la guérison par le baptême; et qui ensuite mourut pour le Christ.

* B p. 99 a.

En ce jour, commémoration de saint Grégoire de Narek.

Notre saint père et bienheureux docteur Grégoire était de la province de Vaspourakan en Arménie, fils du seigneur Khosrow, évêque d'Antzewatzikh. Il avait été élevé et instruit dans la sainteté et dans la sagesse auprès du docteur Ananie, supérieur du couvent de Narek, en Rechtouni. Il se fit religieux dans le même couvent, fut ordonné prêtre et nommé professeur des moines pour la sainteté de la vie et les sciences divines.

Il fit le commentaire en termes lumineux du Cantique des cantiques de Salomon, il écrivit des panégyriques, des sermons et des cantiques pleins de rhétorique et de profondes pensées. Augmentant de jour en jour ses prières

որ քան զոր առաւելեալ ի մշտամռունչ աղօթս՝ յօրինեաց զհրաշալի գիրս աղօթից, որ յանուն տեղւոյն Նարեկ կոչի :

Եւ քանզի ամենայն փութով ջանայր ուղղել զխանգարեալ կարգաւորութիւնս եկեղեցւոյ՝ յաջաղկոտք ոմանք չարախօս եղեն զնմանէ առ եպիսկոպոսունս եւ իշխանս, եւ կոչէին զվարդապետն ճշմարտութեան՝ ծայթ եւ հերձուածող : Եւ նոքա ժողովեալ ի մի վայր առաքեցին զոմանս առ սուրբն զի ածեալ բերցեն զնա յատեան նոցա :

Եւ իբրեւ եկին արքն՝ գիտացեալ երանելւոյն եթէ կամին տանել զնա առ ի դատել, ասէ. Նախ կերիցուք հաց եւ ապա գնասցուք : Եւ ետ տապակել զերկուս աղաւնիս եւ եդ առաջի նոցա. եւ էր օրն ուրբաթ : Ընդ որ առաւել եւս գայթակղեցեալ՝ հաւատալ * զբանս զրպարտչացն համարեցին, եւ ասեն. Վարդապետ, ո՞չ է օրս ուրբաթ : Եւ սուրբն իբրեւ յանգէտս եղեալ ասէ. Ներեցէք եղբարք, չգիտութեամբ արարի : Եւ ցաղաւնիսն ասէ. Արի՛ք, գնացէք ի տեղիս եւ յերամս ձեր զի պահք է օրս : Եւ նոյնժամայն կենդանացան աղաւնիքն եւ թեւաւորեալ թռեան : * B p. 99 b.

Եւ տեսեալ զքանչելիսն այլեցան, եւ յարուցեալ անկան յոտս սրբոյն եւ խնդրէին զթողութիւն : Եւ գնացեալ պատմեցին զեղեալսն, եւ նոքա ահաբեկ եղեալ լռեցին :

Եւ խստակրօն եւ աստուածահաճոյ վարուք որպէս հրեշտակ ի մարմնի քաղաքավարեալ՝ փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս Փետրուարի ԻԷ : Զորոյ զսրբանեալ

incessantes, il composa l'admirable livre de prières qui porte le nom de la localité de Narek.

Et comme il s'employait avec tout son zèle à réformer les institutions de l'église tombées dans l'abandon, quelques jaloux le calomnièrent auprès des évêques et des princes en appelant le docteur de la vérité mécréant et schismatique. Ceux-ci se rassemblèrent en un certain endroit et envoyèrent des gens auprès du saint pour l'amener à leur tribunal.

Lorsque ces hommes arrivèrent, le bienheureux, sachant qu'ils voulaient l'emmener pour être jugé, leur dit : « Mangeons d'abord le pain, et ensuite nous partirons. » Il fit rôtir deux pigeons et les plaça devant eux. C'était un jour de vendredi. Très scandalisés de ce fait, ils s'imaginèrent que les accusations des calomniateurs étaient vraies * et dirent : « Docteur, n'est-ce pas vendredi, aujourd'hui ? » Le saint, feignant l'ignorance, leur répondit : « Excusez, frères, j'ai agi par ignorance. » Et il dit aux pigeons : « Levez-vous, retournez à votre place et à votre troupe, car il y a abstinence aujourd'hui. » Et aussitôt les pigeons revinrent à la vie, battirent des ailes et s'envolèrent. * B p. 99 b.

Témoins de ce miracle, (les envoyés) restèrent stupéfaits, ils se levèrent, tombèrent aux pieds du saint et lui demandèrent pardon. Ils s'en retournèrent raconter ce qui était arrivé, et tous, saisis de crainte, gardèrent le silence.

Après avoir mené une vie austère et agréable à Dieu, comme un ange dans un corps, il trépassa à son bien-aimé Christ, le 27 février. On inhuma le saint

մարմինն թաղեցին ի նոյն վանսն Նարեկայ՝ մերձ եկեղեցւոյն Սանդխտոյ կուսին. յորմէ բազում նշանք լինին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Մեհեկի ԻԲ եւ Փետրուարի ԻԸ ։ Վկայութիւն սրբուհւոյն Քարիտոնեայ ։

Կինս այս աղախին էր առն քաղաքացւոյ եւ բարեպաշտի ի Կիւրիկիոտոն քաղաքէն, եւ էր քրիստոնեայ ։ Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեաց Դիոկղետիանոս անօրէն
* A fol. 195 r° a. արքայն զդատաւոր * զԴոմետիանոս եւ լուաւ զՔարիտոնեայ եթէ քրիստոնեայ է եւ զբազումս դարձուցանէ ի կռոցն պաշտամանէ, գրեաց առ տէր նորա զի փութով անդ արձակեսցէ զաղախինն իւր ։

Եւ լուեալ նորա եհար զերեսն իւր եւ ճողեաց զմօրուսն, եւ զգեցաւ խորգ, եւ նստաւ ի վերայ մոխրոյ, եւ լայր զաղախինն իւր ։ Իսկ Քարիտոն մխիթարէր զնա եւ ասէր. Մի լար տէր իմ եւ մի սգար զիս, եւ վասն զիս տանելոյ մի տրտմիր, քանզի զոսկերս իմ բերցեն առ քեզ՝ եւ լինիցի գեղ ամենայն ցաւոց ։ Եւ նա ասէ. Յիշեա զիս առաջի երկնաւոր թագաւորին ։

Եւ յորժամ գնաց՝ եհարց դատաւորն. եւ նա պայծառ երեսօք եւ համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս ։ Եւ առժամայն գերծին զգլուխն եւ եդին կայծակունս ի

3 սրբուհւոյն] սրբուհւոյ կուսին B || 6 զՔարիտոնեայ] զՔարտինեայ B || 9 զգեցաւ] զգեցեալ B || 10 Քարիտոն] Քարտինէա B || 11 մի լար էր տիմ եւ մի սգար զիս] մի սգար տէր իմ եւ մի ողբար զիս B || 12 եւ լինիցի գեղ ամենայն ցաւոց *om.* B || 13 թագաւորին] Քրիստոսի *add.* B || 15 զգլուխն] զհերս գլխոյն B.

corps dans le même couvent de Narek, près de l'église de la vierge Sandoukht. De nombreux miracles y ont lieu pour la gloire du Christ, notre Dieu.]

22 MÉHÉKI, 28 Février.

Martyre de sainte Charitinè.

Cette femme était la servante d'un citoyen pieux de la ville de Korykos (*Kiurikioton*); elle était chrétienne. A cette époque, l'empereur impie Dioclétien
* A fol. 195 r° a. y envoya le juge * Dometianus, lequel, ayant appris que Charitinè était chrétienne et qu'elle détournait nombre de gens du culte des idoles, écrivit à son maître de lui envoyer promptement sa servante.

Celui-ci, à cette nouvelle, se frappa le visage, s'arracha la barbe, se revêtit d'un sac et s'assit sur de la cendre en pleurant sur sa servante. Charitinè (*Khariton*) le consolait et disait : « Ne pleure point, mon maître, et ne prends pas le deuil pour moi; ne t'attriste point de ce qu'on va venir m'emmener, car on t'apportera mes os, et ils serviront de remède pour toutes les douleurs. » Il lui répondit : « Souviens-toi de moi en présence du roi céleste. »

Lorsqu'elle fut arrivée, le juge l'interrogea, mais elle confessa le Christ d'un visage radieux et avec hardiesse. On lui rasa aussitôt la tête et on y

վերայ ։ Եւ յորժամ այրեցաւ գլուխն՝ հեղին ի վերայ քացախ, եւ հրացեալ շամփուրս հարին ի կողս նորա. եւ նա ի գոհանալոյ եւ ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր ։

Եւ ապա կապեցին վէմ մի մեծ յոտսն եւ ընկեցին ի ծովն. եւ լուծաւ վէմն եւ էջ ի խորս ծովուն, եւ վկայն Քրիստոսի գնայր ի վերայ ջրոյն որպէս ի ցամաքի ։ Եւ երթեալ առ դատաւորն ծաղր առնէր զկուռսն. եւ հրամայեաց եւ կապեցին յանիւ, եւ բոց վառեցին ի ներքոյ. եւ հրեշտակ Տեառն իջոյց զնա յանուոյն եւ զբոցն շիջոյց ։ Խլեցին զամենայն ատամունս * նորա, եւ զեղնգունս ձեռաց եւ ոտիցն. եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա ։ * A fol. 195 r° b.

Ապա հրամայեաց եւ արկին զնա ի պոռնկատուն զերիս աւուրս. եւ մտեալ առ նա ոմն պոռնիկ կամէր պոռնկել ընդ նմա, եւ նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս աղաչեաց զԱստուած վասն փրկութեան տեառն իւրոյ եւ վասն իւր զի փրկեսցի ի պղծութենէն ։ Եւ առժամայն աղախինն Քրիստոսի Քարիտոն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Փետրուարի ԻԸ ։

Եւ արկեալ զմարմինն ի քուրձ՝ ընկեցին ի ծով, եւ յետ երից աւուրց եհան ծովն ի ցամաք, եւ երեւեցաւ յանուրջս տեառն իւրոյ, եւ երթեալ եգիտ եւ թաղեաց պատուով մեծաւ ։ Եւ բազում նշանք լինին յոսկերացն առ հիւանդս եւ ախտաժետս եւ այսահարս ։

4 գնայր ... ողջացոյց զնա] ապրեցաւ ի ցամաք, եւ ծաղր առնէր զկուռսն ։ Եւ կապեալ զնա կապեցին յանիւ, եւ խանձատեցին ի հուր, եւ խլեցին զամենայն ատամունսն նորա եւ զեղնկունս ձեռաց եւ ոտիցն եւ հեղին ի վերայ գինի ի գոհեցին B || 9-13 զերիս աւուրս ... Փետրուարի ԻԸ] եւ յաղօթել նորա անդ՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մեհեկի ԻԲ եւ Փետրուարի ԻԸ B.

plaça des braises ardentes. Lorsque la tête fut brûlée, on y versa du vinaigre, et on lui enfonça dans les côtes des broches brûlantes, mais elle ne cessait de rendre grâces à Dieu et de Le glorifier.

On lui attacha ensuite une grosse pierre aux pieds et on la jeta à la mer; mais la pierre se détacha et descendit au fond de la mer; la martyre du Christ se promena sur les eaux comme sur la terre. Elle se rendit auprès du juge et railla ses idoles. Il ordonna de l'attacher à une roue et d'allumer du feu dessous, mais l'ange du Seigneur la descendit de la roue et éteignit les flammes. On lui arracha toutes les dents, * les ongles des mains et des pieds, mais l'ange du Seigneur la guérit. * A fol. 195 r° b.

(Le juge) ordonna ensuite de l'enfermer trois jours dans une maison de débauche : un fornicateur étant entré voulut forniquer avec elle, mais elle éleva ses mains au ciel, pria Dieu pour le salut de son maître et pour elle-même, afin d'être délivrée de l'acte immonde. Aussitôt la servante du Christ Charitinè rendit son âme à Dieu, le 28 février.

On mit son corps dans un sac et on le jeta à la mer. Trois jours après la mer le rejeta sur le rivage et elle apparut dans un songe à son maître, qui alla, la trouva et l'inhuma avec de grands honneurs. De nombreux miracles s'opèrent par ses ossements sur les malades, les infirmes et les possédés.

* B [B * Յիշատակ Կասիանի :

p. 100 a. Այս մեծ եւ նշանաւոր երեւելի եւ բազմահռչակ հայրս մեր Կասիանոս՝ էր ի մեծ քաղաքէն Հռովմայ. ունելով զկեանս մաքուր եւ անարատ՝ համահրեշտակ սրբութեամբ պայծառացեալ կրօնաւորեցաւ. եւ խստամբերութեամբ պահոց եւ անսուաղական ժուժկալութեամբ հաւասարեաց Եղիայի եւ Յովհաննու : Եւ օրինակաւ առաքինի վարուց իւրոց՝ բազմաց պատճառ եղեւ դարձի եւ փրկութեան. էառ եւ շնորհս սքանչելեաց. եւ եղեւ մեծ եւ երեւելի բանիւ եւ գործով, որպէս եւ գրեալ կայ ի կատարեալ պատմութեանն իւրում :

Ի սմին աւուր յիշատակ սքանչելեաց պատկերին Քրիստոսի որ ի Բիւրիտոն, զոր պատմէ սուրբն Աթանաս հայրապետ :

Բիւրիտոն քաղաք որ է մերձ ի սահմանս Տիւրոսի եւ Սիդոնի՝ էին ի նմա բազում Հրէայք բնակեալ խառն ընդ քրիստոնեայս : Եւ մի ոմն ի Հրէից խնդրէր տուն ի վարձու, եւ առեալ զկնի իւր զոմն սիրելի որ էր եւ նա Հրէայ, եւ գտին տուն մի դատարկ յորմէ քրիստոնեայ մի փոխեալ էր յայլ տուն, եւ մոռացեալ էր ի տունն կախեալ յորմն յարեւելից կողմանէ զտէրունական պատկերն Քրիստոսի :

Եւ յորժամ մտին Հրէայքն ի տունն եւ տեսին զպատկերն Յիսուսի՝ լցան նախանձու եւ բարկութեամբ, եւ գնացեալ պատմեցին քահանայապետին իւրեանց եւ այլոց
* B Հրէից. եւ փութանակի ժողովեցան ամենեքեան ի տունն * զի այպն արասցեն եւ
p. 101 a.

* B [B * Commémoration de Cassien.

p. 100 a. Ce grand, remarquable, célèbre et très réputé Cassien, notre père, était de la grande ville de Rome. Menant une vie pure et sans tache, semblable à un ange et orné de sainteté, il se fit religieux. Par l'austérité des jeûnes et l'endurance de la faim il égala Élie et Jean. Par l'exemple de sa vie vertueuse, il devint pour beaucoup cause de conversion et de salut. Il reçut aussi la grâce des miracles, et il fut grand et renommé en paroles et en actions, ainsi qu'il est écrit dans sa biographie complète.

En ce jour, commémoration des miracles de l'image du Christ qui se trouve à Beyrouth (*Biuriton*), racontés par le patriarche saint Athanase.

Dans la ville de Beyrouth, qui se trouve près des confins de Tyr (*Tiurosi*) et de Sidon, habitaient de nombreux Juifs mêlés à des chrétiens. Un certain Juif cherchait à louer une maison. Accompagné d'un de ses amis, également Juif, ils trouvèrent une maison vide qu'un chrétien avait quittée pour une autre maison et où il avait oublié, accrochée au mur, du côté de l'orient, une image de Notre-Seigneur le Christ.

Lorsque les Juifs eurent pénétré dans la maison et aperçu l'image de Jésus, ils furent remplis de jalousie et de rage et allèrent raconter cela à leur grand
* B prêtre et à d'autres Juifs. Aussitôt tous se rassemblèrent à la maison * pour
p. 101 a. se moquer et insulter (l'image). Le grand prêtre dit : « Cette image est celle

անարգեսցեն ։ Եւ ասէ քահանայապետն. Այս պատկեր Գալիլեացւոյն է, որպէս արարին հարքն մեր ընդ նա՝ արասցուք եւ մեք ընդ պատկերն իւր ։ Եւ հարկանէին եղեգամբ զգլուխն եւ ապտակէին զծնօտն, եւ թքանէին յերեսն, եւ սրով ծակեցին զձեռսն եւ զոտսն ։

Եւ ոմն որ դաժանագոյն էր ի նոսա խոցեաց զկողս պատկերին, եւ եղեւ շարժումն մեծ ի տանն եւ արհաւիրք ահլից եւ շշուկ մահու անկան զնոքօք, եւ հարան ամենեքին ի հարուածս սաստիկս ։

Ոմանց թիւրեցան երեսք յետս եւ ծամածռեցան բերանք նոցա, եւ ոչ կարէին խօսել ուղիղ ։ Այլոց շլացան աչք եւ խցան լսելիք նոցա, եւ իբրեւ կալեալք ի խաւարէ որմ զորմայն խարխափէին ։ Եւ կիսոցն գօսացան ձեռք եւ լուծան ջիլք ծնգաց նոցա եւ իբրեւ զմիակողմանիս այսր անդր դանդաչէին ։

Եւ նա ինքն քահանայապետն չարաչար հարուածովք պատուհասեալ աներեւոյթ զօրութեամբն Քրիստոսի՝ այլանդակ իմն երեւէր ։ Եւ ամենեքին առ հասարակ մոլեգնեալք եւ կատաղեալք զմիմեանս խածատէին, եւ չկարելով ելանել ի տանէն՝ զտեղեաւն զեռալ սկսան ։

Եւ ապա իբրեւ փոքր մի դիւրանայր նոցա տագնապ նեղութեանն, զղջացան ի սիրտս իւրեանց եւ ասեն ցմիմեանս. Գիտեմք զի վասն անարգանացն զոր արարաք պատկերին Յիսուսի՝ եկին հասան չարիքս այս ի վերայ մեր ։ Եւ առաքեցին զոմանս

du Galiléen, nous ferons de cette image ce que nos pères ont fait de lui. » Ils se mirent à le frapper sur la tète avec des roseaux, le souffletèrent sur les joues, lui crachèrent au visage et trouèrent ses mains et ses pieds avec une épée.

Puis l'un d'eux, qui était plus féroce que les autres, perça les côtes de l'image; il y eut alors un violent tremblement dans la maison et ils furent saisis par les affres de la peur et de la mort et tous furent affligés par des maux terribles.

Certains eurent le visage déformé et la bouche convulsionnée, ils ne purent plus parler correctement. D'autres eurent les yeux éblouis, les oreilles assourdies, et, comme enveloppés de ténèbres, ils allèrent à tâtons le long des murs. D'autres eurent les mains desséchées, les nerfs des genoux atrophiés et chancelaient de-ci de-là comme des paralysés.

Le grand prêtre lui-même, puni d'un fléau terrible par la puissance invisible du Christ, paraissait monstrueux. Tous également devenus furieux et enragés se mordaient les uns les autres et, ne pouvant sortir de la maison, se démenaient sur place.

Lorsque leur agitation angoissée se fut un peu calmée, ils se repentirent en leurs cœurs et se dirent l'un à l'autre : « Nous savons que c'est à cause des injures que nous avons faites à l'image de Jésus que ces malheurs nous

առ եպիսկոպոս քաղաքին պատմել նմա զաղէտս տարակուսանաց իւրեանց, եւ աղաչել զի եկեալ բժշկեսցէ զնոսա ։

Եւ նորա յարուցեալ գնաց զկնի նոցա ի տունն, եւ տեսեալ զնոսա յանհնարին հարուածս զթացաւ եւ ասէ. Գիտեմ զի անգիտութեամբ արարիք որպէս եւ հարքն ձեր. արդ եթէ բոլորով սրտիւ ձերով հաւատայք ի Քրիստոս, գտջիք * զբժշկութիւն հոգւոց եւ մարմնոց ձերոց. քանզի գթած է նա եւ ողորմած ի վերայ մեղաւորաց ։

* B p. 101 b.

Եւ ամենեքին աղաղակէին. Հաւատամք ի Քրիստոս եթէ Որդի է Աստուծոյ բարձրելոյ եւ Աստուած ճշմարիտ ։ Եւ անկանէին յոտս եպիսկոպոսին եւ խնդրէին զբժշկութիւն ։ Եւ եկաց նա յաղօթս, եւ բժշկեցան ամենքեան ։ Եւ գնացեալ ընդ նմա յեկեղեցին մկրտեցան ամենայն ընտանեօք եւ զաւակօք իւրեանց, եւ եղեւ ուրախութիւն մեծ քաղաքին այնմիկ եւ ժողովրդեան իւրեանց ։ Եւ զտունն յորում սքանչելագործ պատկերն էր՝ արարեալ եպիսկոպոսն եկեղեցի յանուն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մեծ պատուով հաստատեաց զպատկերն ի տեղւոջն իւրում. եւ բազում սքանչելիս արար եւ առնէ յեկեղեցւոջն յայնմիկ ։

Եւ յետ բազում ժամանակաց Յովհաննէս Զմշկիկ թագաւորն գնաց ի քաղաքն Հէմս, եւ էառ զՔրիստոսի Աստուծոյ մերոյ զպատուական կաղամարն եւ զհողաթափ սուրբ ոտիցն ։ Գնաց եւ ի Բիւրիտոն եւ էառ զԱստուծոյ զտէրունական պատկերն եւ տարաւ ի Կոստանդինուպօլիս ընդ այլ սրբութիւնսն փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին յաւիտեանս ։]

sont arrivés. » Ils envoyèrent des gens à l'évêque de la ville pour lui faire savoir leurs malheurs et leur embarras et le prier de venir les guérir.

Il les suivit à la maison et, voyant (les Juifs) dans d'affreuses punitions, il eut pitié d'eux et dit : « Je sais que vous avez agi inconsciemment ainsi que vos pères l'avaient fait; si donc vous croyez au Christ de tout votre cœur, vous trouverez * la guérison de vos âmes et de vos corps. Car (Dieu) est compatissant et miséricordieux envers les pécheurs. »

* B p. 101 b.

Tous se mirent à crier : « Nous croyons au Christ, qu'il est le Fils du Dieu très-haut et vrai Dieu. » Ils tombèrent aux pieds de l'évêque et implorèrent la guérison. Il se mit à prier et tous furent guéris. Ils se rendirent avec lui à l'église, se firent baptiser avec leurs femmes et leurs enfants et il y eut une grande joie dans cette ville et dans sa population. L'évêque fit de la maison où se trouvait l'image miraculeuse une église au nom de notre Sauveur Jésus-Christ et il rétablit avec grande pompe l'image à sa place, qui opéra et opère encore beaucoup de miracles dans cette église.

Longtemps après, l'empereur Jean Tgimiocès, s'étant rendu à Homs, prit le vénérable écritoire du Christ notre Dieu et les sandales de ses pieds sacrés. Il se rendit également à Beyrouth et prit l'image du Seigneur Dieu et l'emporta à Constantinople avec d'autres objets sacrés en glorifiant le Père, le Fils et le Saint-Esprit éternellement.]

Ամիս Մարտի աւուրս է ԼԱ ։

Մեհեկի ԻԳ եւ Մարտի Ա ։ Վարք եւ վկայութիւն սրբուհւոյն Եւդոկիայ ։

Կին այս՝ երանելին Եւդոկիա՝ պոռնիկ էր ի քաղաքէն Իլիուպօլեայ, ի սահմանս Փիւնիկեցւոց, յաւուրս Տրայանոսի կռապաշտ արքային ։ Եւ էր ի չար ախտ պոռնկութեան, եւ վասն * գեղեցկութեան նորա բազումք մտանէին առ նա. եւ ժողովեաց բազում ինչս եւ ստացուածս, եւ եղեւ մեծատուն յոյժ ։ * A fol. 195 v° a.

Եւ էր մերձակայ դրացի Գերմանոս ոմն ճգնաւոր կրօնաւոր, եւ ընթեռնոյր գիրս վասն ահեղ դատաստանին Քրիստոսի, եւ հատուցման ըստ գործոց ։ Եւ մինչդեռ նա յանկողնին իւրում անկեալ կայր եւ լսէր ուշադրութեամբ գրոցն, գիտացեալ Գերմանոսի գնաց առ նա եւ ուսոյց նմա զբանս փրկութեան ։ Եւ նորա փակեալ զսենեակն իւր՝ արգելաւ զեօթն օր, եւ լաց դառնապէս զմեղս իւր ։ Եւ յետ եօթն աւուր տեսանէ յանուրջս որ լոյս մեծ ծածկեաց զանձամբն, եւ այր մի սպիտակազգեստ կալեալ զձեռանէն եհան յերկինս ։ Տեսանէ եւ այր մի երկայն սեւադէմ՝ եւ կրճտէր զատամունս իւր եւ ասէր. Անիրաւես ընդ իս ով հրեշտակապետ, եթէ կամիս զդա կեցուցանել ա՛ռ զամենայն զոսկի զարդարանս եւ զհանդերձս իւր եւ պահեա՛ առ քեզ ։ Եւ ձայն եղեւ

3 Կին այս *om.* B || 11 արգելաւ] միայն *add.* B || 12 զձեռանէն] զձեռանէ նորա B.

Le mois de Mars a 31 jours.

23 MÉHÉKI, 1er Mars.

Vie et martyre de sainte Eudocie.

Cette femme, la bienheureuse Eudocie, était une prostituée de la ville d'Héliopolis, aux confins de la Phénicie, aux jours de l'empereur idolâtre Trajan. Elle s'était adonnée au mauvais vice de la prostitution, et beaucoup la fréquentaient à cause de sa * beauté : elle amassa nombre de biens et de propriétés, et devint très riche. * A fol. 195 v° a.

Il y avait comme proche voisin un certain Germain, religieux ascète, qui lisait des livres au sujet du terrible jugement du Christ et de la récompense selon les œuvres. Or, tandis qu'elle reposait dans son lit et écoutait attentivement les écrits, Germain, le sachant, se rendit auprès d'elle et lui enseigna les paroles du salut. Elle ferma la porte de sa chambre, s'y confina pendant sept jours et pleura amèrement ses péchés. Sept jours après, elle vit dans un songe qu'une grande lumière l'enveloppait, et un homme vêtu de blanc la prenant par la main l'élevait au ciel. Elle vit également un homme élancé, noir de figure, qui grinçait des dents et disait : « Tu me fais du tort, ô archange, en voulant la sauver; prends (plutôt) tous ses bijoux en or et ses vêtements et garde-les. » Mais une voix se fit entendre de la lumière qui

ի լուսոյն եւ ասէ. Այսպէս հաճեցաւ Աստուած յորդիս մարդկան, եւ ընդունի զորս ապաշխարեն զմեղս իւրեանց :

Եւ ընդ առաւօտն երթեալ առ եպիսկոպոսն Թէոդիտոս՝ մկրտեցաւ, եւ գնացին ի միասին ի տուն իւր, եւ գրեաց զամենայն ինչս իւր, քանզի բազում ունէր ոսկի, արծաթ, դիպակ եւ մեծագին պատմուճանս, զամենայն բաշխեաց աղքատաց, եւ մտեալ ի
* A fol. 195 v° b. կուսանաց վանս * զգեցաւ մի մաշեղէն, եւ մեծ ճգնութեամբ կեցեալ պահօք եւ աղօթիւք եւ յոտնկաց տքնութեամբ :

Եւ ոմն մի պոռնիկ յառաջին տռփողացն իւրոյ կամեցաւ զնա տեսանել, եւ զգեցեալ հանդերձս կրօնաւորի՝ գնաց առ նա, եւ սկսաւ յիշեցուցանել նմա զառաջին մեղսասէր ուրախութիւնն, եւ խրատ տայր թողուլ զճգնութեան վարս եւ ամուսնանալ : Եւ սաստեաց նմա երանելին Եւդոկիա, եւ առժամայն անկաւ այրն եւ մեռաւ : Եւ ի գիշերին յայնմիկ երեւեցաւ նմա հրեշտակն Տեառն եւ ասէ. Եւդոկիա, յարո զմեռեալն եւ ծանիր զզօրութիւնն Աստուծոյ : Եւ յորժամ զարթեաւ եւ աղօթեաց առ Աստուած՝ կենդանացաւ մեռեալն :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ թագաւորեաց Աւրելիանոս կռապաշտն, եւ երթեալ առաջին տռփողքն մատնեցին եթէ քրիստոնեայ եղեւ, եւ ունի զարքունի գանձ բազում յոյժ : Առաքեաց զօրականս առ նա, եւ նա զնոսա առժամայն մահացոյց : Գնաց եւ

8-15 Եւ ոմն մի... երթեալ] Ընդ աւուրսն ընդ այնոսիկ երթեալ B || 17 — p. [1153] l. 10 Առաքեաց... ի վախճանին *om.* B.

disait : « C'est ainsi que Dieu se complaît en les fils des hommes ; il accueille ceux qui font pénitence de leurs péchés. »

Au matin, elle alla trouver l'évêque Théodote (*Téoditos*) et se fit baptiser ; puis ils allèrent ensemble à la maison ; elle fit la liste de tout ce qu'elle possédait, car elle avait beaucoup d'or, d'argent, d'étoffes et des vêtements de grande valeur. Elle les distribua aux pauvres, entra dans un couvent de
* A fol. 195 v° b. femmes, * revêtit l'habit monastique et vécut avec grand ascétisme, dans les jeûnes et les prières et en veillant debout.

Un certain fornicateur, l'un de ses premiers amants, voulut la voir : se revêtant donc d'un habit de religieux, il se rendit auprès d'elle et se mit à lui rappeler les anciennes joies coupables ; il lui conseilla d'abandonner la vie ascétique et de se marier. La bienheureuse Eudocie le réprimanda et l'homme tomba aussitôt et mourut. Cette nuit-là, l'ange du Seigneur lui apparut et dit : « Eudocie, ressuscite le mort et reconnais la puissance de Dieu. » Lorsqu'elle se réveilla, elle pria Dieu et le mort ressuscita.

En ces mêmes jours, Aurélien l'idolâtre vint à régner. D'anciens amants allèrent lui dénoncer que (Eudocie) était devenue chrétienne et qu'elle conservait une grosse fortune royale. Il envoya des soldats auprès d'elle, mais elle les fit tomber morts aussitôt. Le fils de l'empereur alla aussi chercher

որդի թագաւորին, զի տարցէ զԵւդոկիա առ թագաւորն, եւ ի ճանապարհին անկեալ բեկան ոտքն, եւ ի գիշերին յայնմիկ մեռաւ ։ Եւ յորժամ ծանրացաւ ի տրտմութենէն թագաւորն ապա յորժամ լուաւ եթէ այլ մեռեալ յարոյց՝ գրեաց առ նա թուղթ աղերսանաց թերեւս կենդանացուցէ զորդի նորա ։ Եւ դարձեալ գրեաց * առ նա. Եթէ ստուգութեամբ հաւատաս ի Քրիստոս կատարին խնդրուածք քո ։ Եւ յորժամ դարձան թղթաբերքն՝ հանդիպեցան մահճացն յոր բարձեալ էին զմեռեալն եւ տանէին, եդին ի վերայ մեռելոյն զգրեալ թուղթն Եւդոկիայ, եւ առժամայն կենդանացաւ ։ * A fol. 196 r° a.

Եւ թագաւորն հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ ամենայն ընտանեօքն ։ Եւ որդին որ յարեաւ ի մեռելոց եղեւ եպիսկոպոս ։ Եւ քոյր նորա գնաց առ երանելին Եւդոկիա, եւ ճգնութեամբ եկաց առ նա մինչեւ ի վախճանն ։

Եւ դատաւորն Իլիուպօլեայ Դիոգինէս կռապաշտն՝ առաքեաց զօրականս զի տարցեն առ նա զերանելին Եւդոկիա ։ Եւ երեւեցաւ նմա Տէր եւ ասէ. Հաստատուն կաց ի հաւատս եւ քաջալերեաց Եւդոկիա, զի հանդերձեալ ես հանդիպիլ մարտիրոսութեան ։

Եւ ելեալ ի վանացն ած ընդ իւր մասն ի կենարար մարմնոյ եւ յարենէ Տեառն, եւ կացեալ առաջի դատաւորին խոստովանեցաւ զՔրիստոս պայծառ երեսօք, եւ ոչ խրատու եւ ողոքանաց լուաւ, եւ ոչ ի սպառնալեացն երկեաւ ։ Եւ նա հրամայեաց մերկացուցանել զնա եւ ի կախաղանին տանջել ։ Եւ յորժամ կամեցան զօրականքն

12 Եւ երեւեցաւ ... եւ ասէ] Եւ ազդեցաւ նմա յԱստուծոյ թէ B || 15 մարմնոյ եւ յարենէ Տեառն] եւ սուրբ օրհնաց մարմնոյ Քրիստոսի B || 18 — p. [1154] l. 12, զօրականքն ... մկրտեցան] պատժեցան ամենեքեան ։ Եւ երանելին Եւդոքսիա ընկալաւ յԱստուծոյ շնորհս սքանչելեաց եւ արար մեծամեծ նշանս, եւ որք տեսինն հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան B.

Eudocie pour la conduire auprès de l'empereur, mais il tomba chemin faisant et se brisa les pieds; il mourut la même nuit. L'empereur accablé de tristesse, ayant appris qu'elle avait ressuscité un autre mort, lui écrivit une lettre de supplication dans l'espoir qu'elle ressusciterait son fils. Elle* lui écrivit : « Si tu crois fermement au Christ, tes vœux seront exaucés. » S'en retournant, les courriers rencontrèrent la litière sur laquelle on portait le mort : ils posèrent sur le mort la lettre écrite par Eudocie, et il ressuscita aussitôt. * A fol. 196 r° a.

L'empereur crut au Christ et se fit baptiser avec toute sa famille. Le fils qui ressuscita des morts devint évêque. Sa sœur se rendit auprès de la bienheureuse Eudocie et vécut auprès d'elle dans l'ascétisme jusqu'à sa mort.

L'idolâtre Diogène, juge d'Héliopolis, envoya des soldats pour lui amener la bienheureuse Eudocie. Le Seigneur lui apparut et dit : « Reste ferme dans la foi et prends courage, Eudocie, car tu dois subir le martyre. »

En sortant du couvent elle prit avec elle une parcelle du corps et sang vivifiants du Seigneur, elle se présenta au juge et confessa le Christ le visage souriant. Elle n'écouta ni les conseils ni les supplications et ne craignit pas les menaces. Le juge ordonna de la déshabiller et de la torturer suspendue.

մերկացուցանել՝ գտին զմասն սուրբ օրհնացն, եւ առեալ ի ձեռս իւրեանց ետուն * A fol. 196 r° b. դատաւորին. եւ առժամայն զօրականքն * հրով կիզան եւ մեռան. եւ դատաւորն կիսայրեաց եղեալ՝ աղաղակէր դառնապէս: Եւ որք տեսին զքանչելիսն հաւատացին ի Քրիստոս, եւ աղաչեցին զսրբուհին զի կենդանացուցէ զհրով այրեցեալսն. եւ նորա աղօթեալ՝ յարեան ամենեքեան եւ հաւատացին ի Քրիստոս:

Եւ զկին մի մեռեալ որոյ անուն էր Ներփիրմինա աղօթիւք կենդանացոյց. եւ ինքն եւ այր իւր Դիոդորոս հաւատացին ի Քրիստոս:

Եւ ի շնչմանէ վիշապի մեռաւ երիտասարդ մի կնոջ այրւոյ միամօր որդի, եւ հրամայեաց երանելին Եւդոկիա Դիոդորոսի աղօթել առ Աստուած վասն մեռելոյն ի վիշապէն. եւ նա վստահացեալ ի սրբութիւնն Եւդոկիայ՝ աղաչեաց զԱստուած եւ յարեաւ մեռեալն, եւ վիշապն հերձեալ սատակեցաւ: Եւ բազումք ի հեթանոսաց հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան:

Եւ յետ Դիոգինեսի եկեալ դատաւոր Բիկենդիոս, եւ ազդեցին նմա վասն սրբուհւոյն Եւդոկիայ. առաքեաց զօրականս եւ հատին զգլուխ նորա ի Մարտի Ա եւ կատարեաց զընթացս իւր ապաշխարութեամբ եւ նահատակութեամբ, եւ շնորհս տուեալ նշխարացն բժշկել զամենայն ցաւս եւ զհիւանդութիւնս մարդկան:

14 Մարտի Ա] եւ Մեհեկի ԻԳ *add.* B.

Lorsque les soldats voulurent la déshabiller, ils trouvèrent la parcelle du saint sacrement, et la prenant dans leurs mains, la donnèrent au juge. Aussitôt les * A fol. 196 r° b. soldats furent brûlés par le * feu et moururent. Le juge, à demi brûlé, criait douloureusement. Ceux qui furent témoins de ce miracle crurent au Christ, et prièrent la sainte de ressusciter ceux qui avaient été brûlés par le feu. Elle pria, tous ressuscitèrent et crurent au Christ.

Elle ressuscita aussi par ses prières une femme nommée Nerfirmina[1]. Et celle-ci crut au Christ ainsi que son mari Théodore.

Un jeune homme, fils unique d'une veuve, était mort par le souffle d'un dragon; la bienheureuse Eudocie ordonna à Théodore de prier Dieu pour celui que le dragon avait tué. (Théodore) confiant en la sainteté d'Eudocie pria Dieu et le mort ressuscita, tandis que le dragon crevait, déchiré en deux. De nombreux infidèles crurent au Christ et se firent baptiser.

Après Diogène vint le juge Vincent (*Bikendios*); on l'avertit au sujet de sainte Eudocie. Il envoya des soldats pour lui trancher la tête, le 1er mars. Elle avait accompli sa vie en pénitence et en martyre. Des grâces furent accordées à ses restes pour guérir toutes les douleurs et les maladies des hommes.

1. Le synaxaire arménien de Constantinople, 1706, porte *Phermirninay*, pour *Firmina* (?).

[B * Վկայութիւն Սիմոնի Կիւրենացւոյ որ եբարձ զխաչն Քրիստոսի ։ *B p. 102 a.

Սուրբն Սիմոն Կիւրենացի գոլով այր արդար, եւ արդարավաստակութեամբ վաստակէր յագարակի եւ ապրէր. զոր կալեալ Հրէայքն մինչ գայր յագարակէ եւ եդին ի վերայ նորա զփայտ խաչին Քրիստոսի մինչեւ ի Գողգոթա բերել զկնի Քրիստոսի ։ Եւ անդ ապա տեսեալ Սիմոնի ի ժամ խաչելութեանն զզարմանսն որ եղեն՝ հաւատաց ի Քրիստոս գաղտ ի ժողովրդենէն ։

Եւ ոմն մի յազգականաց իւրոց երթեալ մատնեաց զնա առ Հրեայսն եւ առ քահանայապետսն, եւ նոքա կաշառեցին զՊիղատոս եւ խաչեցին զՍիմոն վասն անուանն Քրիստոսի ։ Եւ խոցեցին զերկոսին կողսն եւ հեղաւ յոյժ արիւնն. եւ աւանդեաց զհոգին բարի խոստովանութեամբ Մարտի Ա, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։]

Մեհեկի ԻԴ եւ Մարտի Բ ։ Տօն է Ամովսայ մարգարէին ։

Ամովս էր ի Թեկկիայ. եւ Ամասիա բազում անգամ կոշկոճէր զնա, յետոյ եւ սպան իսկ զնա * Ովսէ որդի նորա բակեղբ ջախջախեալ զծամեկս նորա. եւ ողջով եկն յերկիր իւր եւ յետ սակաւ աւուրց մեռաւ՝ եւ թաղեցաւ անդ ։ * A fol. 196 v° a.

12 Թեկկիայ] Թեկուայ, մարգարէացաւ վասն զալստեան Փրկչին յաշխարհ. յառաջագոյն ծանոյց զգերութիւն Իսրայելի յԱսորեստան եւ զՅուդայի ի Բաբելոն ։ Եւ ի մարգարէանալ նորա *add.* B || 12 Ամասիա] քուրմ Բեթելայ *add.* B.

[B * Martyre de Simon le Cyrénéen, qui porta la croix du Christ. * B p. 102 a.

Saint Simon le Cyrénéen était un homme juste, qui travaillait honnêtement ses champs et en vivait. Les Juifs le saisirent à son retour des champs et lui imposèrent de porter le bois de la croix du Christ, derrière le Christ, jusqu'au Golgotha. Simon ayant vu là, au moment de la crucifixion, les prodiges qui eurent lieu, crut au Christ en cachette du public.

Un de ses parents alla le dénoncer aux Juifs et au chef des prêtres, qui achetèrent Pilate et crucifièrent Simon pour le nom du Christ. On lui transperça les deux côtés, le sang coula abondamment, et il rendit son âme en bonne confession, le 1er mars, pour la gloire du Christ, notre Dieu.]

24 MÉHÉKI, 2 Mars.

Fête du prophète Amos.

Amos était de Thécué (*Tekiay*). Amasias le tortura bien des fois et finalement * Osée, son fils, le tua en lui brisant les tempes avec son sac de chasse. Respirant encore il fut emporté dans son pays et mourut peu de jours après. Il y fut enterré. * A fol. 196 v° a.

Յայսմ աւուր վկայութիւն Կոնոնոսի պարտիզպանի ։

Յաւուրս Դեկոսի անօրէն արքային՝ էր սուրբն Կոնոնոս ի Նազարեթէ Գալիլեացւոց, եւ գնաց ի քաղաքն Մանգնոյ Պամփիւլացւոց՝ բնակեցաւ ի տեղին որ կոչի Կարմենայ եւ եղեւ պարտիզպան ։

Եւ մինչդեռ արբուցանէր զպարտէզն իւր՝ եկին առ նա զօրականք Որոգենէս եւ Նաւոդորոս եւ այլք ընդ նոսա, ի Պօպլիոսէ դատաւորէն Պամփիւլացւոց եւ ասեն կեղծաւորութեամբ. Ողջոյն քեզ Կոնոնոս ։ Եւ նա ասէ. Ողջոյն եւ ձեզ որդեակք ։ Ասէ Որոգենէս. Կոչէ զքեզ դատաւորն ։ Ասէ Կոնոնոս. Զինչ կամի զիս դատաւորն, այր մի օտար գոլով իմ՝ մանաւանդ քրիստոնեայ. եթէ կամի կոչել՝ զիւր նմանեացն կոչեսցէ, եւ ոչ զիս զտառապեալ հողագործս՝ որ զիմ զաւուրն կերակուր մեծ ջանիւ վաստակիմ ։

Յայնժամ հրամայեաց Նաւոդորոս եւ կապեցին զԿոնոնոս յերիվարի իւրում եւ ի քարշ տարան առ դատաւորն. եւ ստիպէին զնա հայհոյել եւ ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Եւ նա յոգւոց հանեալ հայեցաւ յերկինս եւ աղօթեաց առ Աստուած, եւ ասէ ցդատաւորն. Ով ամբարիշտ, ո՞րպէս իշխեցեր զամենեցունց Աստուածն չար

8 զիս] յինէն B || 9 գոլով իմ *om.* B || 12 զԿոնոնոս] զերանելին Կոնոնոս B || 13 առ] առաջի B || 14 հայեցաւ] նայեցաւ B.

En ce jour, martyre de Conon (*Kononosi*) le jardinier.

Aux jours de Dèce, l'empereur impie, saint Conon (*Kononos*) vivait à Nazareth en Galilée. Il se rendit à la ville de Magydus[1] en Pamphylie, logea au lieu dit Carmena et se fit jardinier.

Pendant qu'il arrosait son jardin, les soldats Origène (*Orogenès*) et Naodoros (*Navodoros*) et d'autres avec eux vinrent le trouver de la part de Publius (*Poplios*), juge de Pamphylie, et lui dirent hypocritement : « Salut à toi, Conon. » Il leur répondit : « Salut aussi à vous, mes enfants. » Origène lui dit : « Le juge t'appelle. » Conon répondit : « Que me veut le juge? à moi, qui suis étranger, surtout chrétien? S'il veut appeler quelqu'un, qu'il appelle un de ses semblables et non moi pauvre cultivateur, qui gagne à grand'-peine ma nourriture quotidienne. »

Naodoros ordonna alors d'attacher Conon à son cheval et on l'entraîna auprès du juge. On le pressa de blasphémer, de renier le Christ et d'immoler aux idoles. Il soupira, leva les yeux au ciel, pria Dieu, et dit au juge : « O impie, comment oses-tu diffamer et blasphémer le Dieu de tous, et m'or-

1. Le ms. porte *Mangnoy* d'après une leçon Μανδῶν attestée par le ms. *S* de *Syn. Cp.* col. 511, l. 19, avec changement de դ en գ. La bonne leçon est attestée par les autres mss. de *Syn. Cp.*

համբուել եւ հայհոյել, եւ ինձ հրամայես * զնոյն առնել, յորոյ ձեռս է շունչ քո. այլ ինձ քաւ լիցի եւ ամենեցուն որ կարդան զանուն նորա ուրանալ, այլ մանաւանդ օրհնել եւ փառաւորել զՔրիստոս Աստուածն մեր : * A fol. 196 v° b.

Ասէ բռնաւորն. Չարչարեցից զքեզ բազում տանջանօք, յառիւծս ընկեցից, եւ ի խաչ հանից, եւ ի բորբոքեալ հուր արկից : Ասէ սուրբն Կոնոն. Անմտանաս ով դատաւոր, բանիւք միայն երկուցանես եւ կարծես հաւանեցուցանել զիս. ոչ հաւանիմ եւ ոչ լսեմ քեզ, քաւ լիցի :

Եւ նոյնժամայն երկաթի բեւեռս հարին յոտսն եւ ընթացուցանէին առաջի երիվարաց դատաւորին : Եւ հասեալ ի գեօղ մի յոյժ աշխատեցաւ սուրբն եւ նուաղեցաւ. եւ կրկնեալ զծունկսն իւր մինչդեռ աղօթէր՝ աւանդեաց զհոգին իւր որպէս նշխար ի ձեռս Աստուծոյ Մարտի Բ :

[B * Յայսմ աւուր վկայութիւն Սմբատայ սպարապետին Հայոց եւ երկուհարիւր եւ յիսուն վկայիցն որք կատարեցան ի Բուղայէ ամբարշտէ : * B p. 103 b.

Անօրէն իշխանն Իսմայելի Ջափար առաքեաց զօր բազում յաշխարհն Հայոց, եւ այր մի արիւնահեղ եւ աշխարհաւեր Բուղայ անուն զօրագլուխ նոցուն Թուրք ազգաւ :

Եւ եկեալ յերկիրն Հայոց առ ինքն կոչեաց խաբէութեամբ եւ երդմամբ զՍմբատ սպարապետն Հայոց յազգէ Բագրատունեաց զայր քաջ եւ աստուածապաշտ եւ զայլ

5 հանից] կախեցից B || 10 զծունկսն իւր] ծունր B || 11 Մարտի Բ] եւ Մեհեկի ԻԴ *add.* B.

donner * de faire de même, alors qu'il tient ton souffle entre ses mains? Loin de moi, et de tous ceux qui répètent son nom, (l'idée) de le renier! Au contraire, (quand nous prononçons son nom), c'est pour bénir et glorifier le Christ, notre Dieu. » * A fol. 196 v° b.

Le tyran lui répondit : Je te ferai subir nombre de tortures, je te jetterai aux lions, je te crucifierai et te jetterai dans un feu ardent. » Saint Conon lui dit : « Tu déraisonnes, ô juge; tu m'intimides seulement par des paroles et tu crois me persuader; je n'y consens point et je ne t'écoute point, loin de là. »

On lui cloua aussitôt des clous de fer aux pieds, et on le fit courir au-devant des chevaux du juge. Arrivé à un village, le saint, très fatigué, s'évanouit, plia les genoux, et pendant qu'il priait, il rendit son âme, comme une hostie, entre les mains de Dieu, le 2 mars.

[B * En ce jour, martyre du généralissime des Arméniens, Sembat, et des deux cent cinquante martyrs qui furent mis à mort par l'impie Boula. * B p. 103 b.

L'impie émir d'Ismaël Tchapar envoya de nombreuses troupes dans le pays d'Arménie et, comme chef des troupes, un homme sanguinaire et destructeur, nommé Boula, de nationalité turque.

Celui-ci, arrivé au pays d'Arménie, appela à lui par tromperie et sous serment le généralissime des Arméniens Sembat, de la race des Bagratounis,

նախարարս : Եւ իբրեւ չոգան առ նա ուխտեաց երդմանն իւրոյ եւ արար զնոսա ի կապանս. եւ առաքեաց զնոսա կապանօք ի Սամառա առ ամիրապետն իւրեանց Ջափար. եւ նա եդ զնոսա ի բանդի, եւ նեղէր ուրանալ զՔրիստոս եւ դառնալ յայլադաւանութիւն : Եւ ի սաստիկ տանջանացն եւ յանհնարին նեղութեանցն բազումք զրդուեցան եւ ելին ի հաւատոցն :

Իսկ սպարապետն Սմբատ համբերեալ չարչարանաց եւ տանջանաց՝ քաղցի եւ ծարաւոյ եւ գետնախշտութեան եւ արգելանաց անլուսից վեշտասան ամիս՝ եւ կատարեցաւ նահատակութեամբ : Եւ պատանի մի Միքայէլ անուն նախատէր յայտնապէս զօրէնս նոցա, եւ խոստովանէր զՔրիստոս Տէր եւ Աստուած, զնա ի նմին ժամու սրով սպանին : Եւ այր մի Կոն անուն՝ նոյնպէս խոստովանութեամբ կատարեցաւ :

Իսկ ամենաչարն Բուղայ գերեաց զաշխարհն Հայոց զարս եւ զկանայս եւ զմանկունս եւ նեղէր զնոսա զի ուրասցին զՔրիստոս : Եւ վկայք երկու հարիւր յիսուն համարձակութեամբ խոստովանեցան զանունն Քրիստոսի. յորոց վերայ սուր եդեալ կատարեցին զնոսա, եւ զայլ բազմութիւնն գերի վարեալ տարան ի Սամառա. եւ բազումք ի ճանապարհին մեռան ի սաստիկ տապոյն եւ ի փութապէս վարելոյն : եւ կատարի տօն սրբոյն Սմբատայ սպարապետի եւ այլոց սրբոց Մարտի Գ :]

homme courageux et pieux, ainsi que d'autres nobles. Lorsqu'ils se furent rendus auprès de lui, il renia son serment, les fit enchaîner, et les envoya liés à Samara, à leur émir Tchapar, qui les fit mettre en prison et les pressa de renier le Christ et se convertir à la religion musulmane. Nombreux furent ceux qui, ébranlés par les grandes tortures et les misères excessives, abandonnèrent la foi.

Mais le généralissime Sembat résista aux tortures et aux tourments, à la faim, à la soif, au repos sur le sol et à l'emprisonnement sans lumière, pendant seize mois; il mourut martyrisé. Un tout jeune homme, du nom de Michel, insulta ouvertement leur religion et confessa le Christ, Seigneur et Dieu, et fut tué sur-le-champ par l'épée. Un certain nommé Kon confessa pareillement et fut martyrisé.

Quant au très méchant Boula, il fit captifs en Arménie hommes, femmes et enfants, et les pressa de renier le Christ. Deux cent cinquante martyrs confessèrent avec hardiesse le nom du Christ, on les tua à coups d'épée; et on emmena le reste de la multitude en captivité à Samara. Beaucoup moururent en route par les grandes chaleurs et les marches précipitées. La fête du généralissime saint Sembat et des autres saints a lieu le 3 mars.]

Մեհեկի ԻԵ եւ Մարտի Գ ։ Վկայութիւն սրբոցն Եւտրոպիոսի, Կղէոնիկոսի եւ Բասիլիսկոսի ։

Այս երեք սուրբ վկայքս Քրիստոսի էին ի ժամանակս Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային, զօրականք ընկերակիցք եւ ազգականք միմեանց ։ Եւտրոպիոս եւ Կղէոնիկոս հօրաքեռ որդիք էին Թէոդորոսի մեծի վկային Քրիստոսի ։ Իսկ Բասիլիսկոս էր քեռորդի, եւ էին ի Կապադովկեցւոց երկրէն, եւ չարչարեցան ի միասին վասն անուանն Քրիստոսի երեքեանն ։

Զսուրբն Բասիլիսկոս արկին ի բանդ, ի քաղաքին Ամասիա, հրամանաւ * դատաւորին. եւ բազում սքանչելիս արարեալ ի բանդին՝ կատարեցաւ ի Քրիստոս ։ * A fol. 197 rº a.

Եւ զերկոսեանն կացուցին առաջի Ասկլիպադոտոսի Ամասիոյ դատաւորին, եւ հարցանէր նմա զոհել պիղծ աստուածոցն եւ շահին զկեանս իւրեանց եւ առնուլ պատիւս եւ ինչս ։ Եւ նոքա արհամարհեցին զխոստմունսն եւ անարգեցին զդատաւորն ։ Եւ դահիճքն հարկանէին կապարեայ կռանաւ զբերանն Եւտրոպիոսի. եւ ապա գանեցին զերկոսեանն ուժգին ։ Եւ յաղօթել սրբոցն լուծան ձեռք հարկանողացն, եւ Տէր երեւեցաւ ընդ սրբոյն Թէոդորոսի եւ առժամայն կապանքն լուծան եւ ողջ մարմնով կանգնեցան եւ ասեն ընդ մերձակայսն. Ահա թագաւորն մեր Քրիստոս երեւի ընդ

1 սրբոցն] սրբոց մարտիրոսացն B || 2 սուրբ *om.* B || 4 էին] սրբոյն *add.* B || 9 Ասկլիպադոտոսի] Ասկլիպիոդոտոսի B || 13-15 եւ յաղօթել ... ասեն] մինչեւ լուծան ձեռք հարկանողացն ։ Եւ տեսանէին զՏէրն ընդ սրբոյն Թէոդորոսի եւ ասեն B.

25 MÉHÉKI, 3 Mars.

Martyre des saints Eutrope, Cléonicus et Basiliscus.

Ces trois saints martyrs du Christ vivaient aux jours de Maximien, l'empereur impie; ils étaient soldats et parents. Eutrope et Cléonicus étaient les fils de la tante de Théodore, le grand martyr du Christ. Basiliscus était le fils de sa sœur. Ils étaient du pays de Cappadoce et furent torturés tous les trois ensemble pour le nom du Christ.

On jeta en prison saint Basiliscus dans la ville d'Amasia sur l'ordre * du juge. Il opéra bien des miracles dans la prison et mourut dans le Christ. * A fol. 197 rº a.

Les deux autres furent mis en présence d'Asclépiodote (*Asklipadotosi*), juge d'Amasia, qui leur demanda d'immoler aux dieux impurs et de sauver leur vie en recevant des honneurs et des biens. Ils méprisèrent les promesses et insultèrent le juge. Les bourreaux frappèrent la bouche d'Eutrope avec un marteau de plomb, et ensuite frappèrent brutalement les deux (saints). Pendant que les saints priaient, les mains de ceux qui frappaient défaillirent; le Seigneur apparut accompagné de saint Théodore, et aussitôt les liens tombèrent; ils se redressèrent le corps indemne et dirent aux assistants : « Voici que notre roi, le Christ, nous apparaît avec son bien-aimé Théodore, notre

սիրելւոյն իւրոյ Թէոդորոսի եւ մեր ազգակցի ։ Եւ ասէ ցնոսա Տէրն . Տեսանէի զչարչարանսն զոր կրէք եւ մնայի համբերութեանդ ձերոյ, եւ արդ եղէց ձեզ օգնական ։

Իսկ զօրականքն իբրեւ տեսին զսուրբն Թէոդորոս հաւատացին ի Քրիստոս եւ ասեն ցդատաւորն եթէ . Զխորհուրդ յարութեանն տեսաք աչօք մերովք ։ Եւ նոյնժամայն սրով կատարեցան ամենեքեան ի Քրիստոս ։

Եւ եդ դատաւորն առաջի Կլէոնիկոսի պարգեւս մեծագինս եւ հանդերձս, եւ ոսկի եւ արծաթ հարիւր եւ յիսուն լիտր, եւ ասէ . Միայն ասա բանիւք վասն ժողովրդեանդ
* A fol. 197 r° b. եթէ հաւանեցայ բանից դատաւորին ։ Իսկ սուրբն որպէս * զէշ անկեալ առաջի թռչնոց համարեցաւ զպարգեւսն, եւ զբանս դատաւորին արհամարհեաց ։

Եւ յորժամ գնաց դատաւորն բազմութեամբ ի տաճար կռոցն զոհս մատուցանել, աղօթեցին սուրբքն եւ եղեւ շարժ եւ անկաւ բագինն Արտեմիդեայ ։ Եւ ձայն եղեւ յերկնից . Ով Եւտրոպիէ, լսելի եղեն աղօթք քո, եղիցի ի տեղւոջս յայսմիկ եկեղեցի քրիստոնէից ։ Եւ հրամայեաց դատաւորն եռացուցանել ձիւթ եւ ձէթ՝ երկու կաթսայս, եւ հեղին ի վերայ թիկանց սրբոցն . եւ ի դահճացն այրեցան. վեց այր եւ սուրբքն ամբողջ մնացին . ապա երկաթի ճանկօք քերեցին զմարմինս նոցա ։ Ձայն եղեւ առ

1 սիրելւոյն] սրբոյն B || 1-2 եւ ասէ ցնոսա... օգնական *om.* B || 4 ցդատաւորն] մեծաւ բարբառով *add.* B || 5 ամենեքեան *om.* B || 6 հանդերձս] մեծագինս *add.* B — եւ ոսկի եւ արծաթ հարիւր եւ յիսուն լիտր] եւ դանձս ոսկւոյ եւ արծաթոյ B || 11-13 Եւ ձայն.. քրիստոնէից *om.* B || 14 եւ ի դահճացն... մնացին *om.* B || 15 — p. [1161] l. 1 Ձայն.... յաւիտենից *om.*

compatriote. » Le Seigneur leur dit : « Je voyais les tortures que vous enduriez, je contemplais votre patience et maintenant je serai votre aide. »

Lorsque les soldats aperçurent saint Théodore, ils crurent au Christ et dirent au juge : « Nous avons vu de nos yeux le mystère de la résurrection. » Ils furent mis à mort tous sur-le-champ par le glaive pour le Christ.

Le juge fit disposer devant Cléonicus des présents de grand prix, des vêtements, de l'or, de l'argent pour cent cinquante livres et lui dit : « Dis seulement en paroles (adressées) au peuple : j'ai consenti aux propos du juge. »
* A fol. 197 r° b. Mais le saint considéra ces présents comme * un cadavre tombé devant les oiseaux (de proie) et méprisa les propos du juge.

Lorsque le juge accompagné de la multitude, se rendit au temple des idoles pour y offrir des victimes, les saints prièrent : il y eut un tremblement et le sanctuaire d'Artémis s'écroula. Une voix du ciel se fit entendre : « O Eutrope, tes prières ont été exaucées, il y aura en cet endroit même une église de chrétiens. Le juge ordonna de faire bouillir dans deux chaudrons de la poix et de l'huile, qu'on versa sur le dos des saints; parmi les bourreaux six hommes furent brûlés, mais les saints demeurèrent intacts. On leur déchira ensuite le corps avec des ongles de fer. Une voix du ciel se fit entendre à eux qui dit :

նոսա յերկնից եւ ասէ. Որովհետեւ դուք ետուք զանձինս ձեր ի մահ վասն իմ՝ շնորհեցից ձեզ զկեանսն յաւիտենից :

Եւ հանեալ ի բանդէն բեւեռեցին ի խաչի : Եւ ձայն եղեւ առ նոսա յերկնից. Ով Եւտրոպիէ եւ Կլէոնիկէ, բարիոք ճգնեցարուք, ընկալարուք զպսակն արդարութեան : Եւ այնպէս աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած ի Մարտի Գ :

Եւ քրիստոնեայքն եդին զմարմինս նոցա մերձ յԱմասիա քաղաքին, ոչ ի միասին՝ այլ որիշ. զսուրբն Եւտրոպիոս ի Թերմայն, եւ զսուրբն Կլէոնիկոս ի Քտեմայն :

Յայսմ աւուր տօն Վարդանանց ի Հայք. է եւ ի Հրոտից Լ :

[B * Յայսմ աւուր վկայութիւն երկրորդ Ատոմայ, Վասակայ, Մլեհի, Գէորգեայ, եւ երկու հարիւր եւ յիսուն վկայիցն Հայոց եւ Սմբատայ սպարապետի որ ի Բուղայէ կատարեցան վասն Քրիստոսի :] * B p. 105 a.

* Մեհեկի ԻԶ եւ Մարտի Դ : Վարք սուրբ կրօնաւորին Մարկոսի : * A fol. 197 v° a.

Այս մեծ բարեսէր եւ աղքատասէր այրս Աստուծոյ Մարկոս մինչդեռ մանուկն էր, ուսաւ զամենայն հին եւ նոր կտակարանս պատուիրանացն Աստուծոյ, եւ եղեւ

2-4 Եւ ձայն... արդարութեան *om.* B || 5 Մարտի Գ] եւ Մեհեկի ԻԵ *add.* B.

« Puisque vous vous êtes livrés à la mort pour moi, je vous accorderai la vie éternelle. »

On les fit sortir de la prison et on les cloua à une croix. Une voix du ciel se fit entendre à eux : « O Eutrope et Cléonicus, vous avez bien combattu, recevez la couronne de justice. » Et ils rendirent ainsi leur âme à Dieu, le 3 mars.

Les chrétiens déposèrent leurs corps près de la ville d'Amasia, pas ensemble, mais séparément : saint Eutrope à Therma et saint Cléonicus à Ktéma[1].

En ce jour, en Arménie, fête des Vartaniens, elle se trouve aussi le 30 Hrotitz.

[B* En ce jour, martyre du deuxième Atom, de Vassak, de Mleh, de Kévork et des deux cent cinquante martyrs arméniens et du généralissime Sembat qui furent martyrisés par Boula pour le Christ.] * B p. 105 a.

*26 MÉHÉKI, 4 **Mars**. * A fol. 197 v° a.

Vie du saint religieux Marc.

Ce grand homme de bien et ami des pauvres, cet homme de Dieu, Marc, alors qu'il était enfant, avait appris tous les commandements de Dieu, de

1. Κτῆμα dans le grec, cf. H. Delehaye, *Les légendes grecques des saints militaires*, Paris, 1909, p. 213.

կատարիչ հրամանացն Տեառն, եւ արժանաւորեցաւ հոգեւորական շնորհաց ։ Եւ գրեաց ճառս զղջման եւ ապաշխարութեան եւ ի սուրբ մկրտութիւնն, եւ վասն հոգւոյ եւ մարմնոյ մարդկան եւ վասն կատարեալ կենցաղավարութեան, եւ ընդդէմ հերձուածողացն ։

Եւ յորժամ եղեւ քառասուն ամաց հրաժարեաց ի բազմազբաղ կենցաղոյս, եւ երթեալ բնակեցաւ ի ճգնաւորաց վանս զամս վաթսուն, եւ ամենեւին յերկիր ոչ եթուք, եւ անկան ամենայն ատամունք նորա ։

Պատմեաց մեզ աշակերտն իւր Պափնուտիոս եթէ. Ի միում աւուր նստէի առ դրանն խրճթի նորա եւ ունկն դնէի նորա աղօթիցն, եւ լուայ որ վիճէր ընդ անձին իւրում եւ ասէր. Զինչ աւելի կամիս ով աբեղայ, հարիւր ամաց եղեր եւ ճաշակեցեր ի գինւոյ եւ ի ձիթոյ. արդ այլ զինչ արարից քեզ շատակեր եւ որկորագահ աբեղայ ։ Ի բաց երթ յինէն սատանայ, ծերացար ընդ իս ի տկարութիւն մարմնոյ իմոյ, եւ ետու զմիտս իմ ի կամս քո, եւ հաղորդեցայ ի գինւոյ եւ ի ձիթոյ, միթէ այլ ինչ պարտիմ քեզ, ոչինչ գտցես յիս որ կողոպտես ։ Եւ դարձեալ անգոսնելով ասէր ցանձն իւր. Ով շատակեր

* A fol. 197 v° b. ալեւոր, ով որկրամոլ * աբեղայ, մինչեւ յերբ եղէց ընդ քեզ ։ Եւ ելեալ ի խրճթէն երանելին Մարկոս եւ նստաւ ի մէջ սրահին եւ աղօթէր ։ Եմուտ գազան մի ունելով ի գիրկս իւր զկորիւնն իւր կոյր ծնեալ, ընկէց զնա յոտս երանելոյն, եւ որպէս մարդ

1 Տեառն] օրինացն B || 6 եւ ամենեւին յերկիր ոչ եթուք *om.* B || 15 ալեւոր] ծերունի B || 15 — p. [1163] l. 9 եւ ելեալ ... Մելանեայ *om.* B.

l'Ancien et du Nouveau Testament, était devenu l'exécuteur des ordres du Seigneur et s'était rendu digne des grâces spirituelles. Il écrivit des homélies sur le repentir, la pénitence et le saint baptême, sur l'âme et le corps de l'homme, sur la vie parfaite, et contre les schismatiques.

Lorsqu'il fut âgé de quarante ans, il renonça à une vie très occupée, alla habiter un couvent des ascètes pendant soixante ans; il ne cracha jamais à terre et toutes ses dents tombèrent.

Son disciple Paphnuce (*Paphnotios*) nous a raconté : Un jour j'étais assis à la porte de sa cellule et je prêtais l'oreille à ses prières, je l'entendais discuter avec lui-même en disant : « Que veux-tu de plus, ô moine? Tu es arrivé à cent ans, tu as goûté au vin et à l'huile, que puis-je te faire de plus, moine gourmand et glouton? Loin de moi, Satan, tu as vieilli avec moi dans la faiblesse de mon corps, j'ai plié ma raison à ta volonté, j'ai participé au vin et à l'huile; est-ce que je te dois autre chose? tu ne trouveras rien chez moi à voler. » Il se réprimandait encore en se disant à lui-même : « Vieux gour-

* A fol. 197 v° b. mand,* moine glouton, jusqu'à quand serai-je avec toi? » Et le bienheureux Marc sortit de sa cellule, s'assit dans le cloître et se mit à prier. Un fauve entra ayant entre ses pattes un petit né aveugle, il le jeta aux pieds du bienheureux et se prosterna comme un homme. (Le saint) prit le petit animal, pria Dieu,

երկիր եդադ։ Եւ նորա առեալ զկորիւնն աղաչէաց զԱստուած, եւ թքեալ յաչս նորա առժամայն բացան եւ տեսին զլոյս։ Եւ առեալ գազանն զկորիւնն գնաց։ Եւ ի միւս այլ աւուրն եբեր գազանն մեծ խոյենի մորթ երանելոյն տուրս. եւ նա ոչ առ, եւ ասէ. Ոչ ինչ առնում ի քէն։ Եւ գազանն զծունկսն կրկնեալ յերկիր, եւ խոնարհեցուցեալ զգլուխն իւր յերկիր քծնելով երկրպագէր, եւ առեալ զմորթն եդ յոտս երանելոյն։ Եւ նա ասէ. Յանձն առ որ ամենեւին մարդոյ վնաս ոչ առնես, ոչ յոչխարսն եւ ոչ յարջառս, ոչ յայգիս եւ ոչ ի պարտէզս։ Եւ գազանն իմացաւ զպատուէրն որպէս մտաւոր, եւ զլխովն խոստանայր կատարել զհրամանն։ Յայնժամ առեալ զմորթն եւ յուղարկեաց աղախնոյն Աստուծոյ Մելանեայ։

Երանելին Մարկոս էր կարճահասակ եւ քարձ, եւ ի վեր ի շրթունսն ունէր սակաւ մի մօրուս եւ ի ներքոյ կլափանն. եւ ի բազում ճգնութենէն հեր գլխոյն ոչ աճէր։

Պատմեաց մեզ երանելի քահանայն Մակար մեծ սքանչելիս վասն երանելի հօր մերոյ Մարկոսի եթէ. Ամենեւին ի ձեռաց իմոց զպատուական օրէնսն ոչ առ, այլ ի ձեռաց հրեշտակին * եւ յամենայն տօնի ես տեսանէի աչօք իմովք թաթ ձեռին ի վերայ սրբոյ սեղանոյն, եւ առնոյր ի ձեռաց իմոց զօրէնսն, եւ արկանէր ի բերան Մարկոսի։ * A fol. 198 rº a.

Այլ վասն բազում ճգնութեանն եւ առաքինի վարուց նորա ո՞ կարէ պատմել, ի

12-16 պատմեաց մեզ ... բերան Մարկոսի *om.* B || 17 կարէ] բաւական է B.

cracha dans ses yeux qui s'ouvrirent aussitôt et virent la lumière. Le fauve reprit son petit et s'en fut. Le lendemain le fauve apporta au bienheureux une grande peau de mouton en guise de récompense, mais celui-ci ne l'accepta pas et lui dit : « Je ne reçois rien de toi. » Mais le fauve plia les genoux en terre, abaissa la tête jusqu'à terre, se prosterna avec caresses, prit la peau et la plaça aux pieds du bienheureux. Celui-ci lui dit : « Acceptes-tu de ne faire de tort à aucun homme, ni aux moutons, ni au bétail, ni aux vignes, ni aux jardins? » Le fauve saisit le commandement comme s'il était intelligent, et promit par un mouvement de tête d'exécuter l'ordre. Alors (Marc) accepta la peau et l'envoya à la servante de Dieu Mélanie.

Le bienheureux Marc était petit de taille et de barbe clairsemée : il avait un peu de poils à la lèvre supérieure, mais à l'inférieure il était glabre. A cause de son grand ascétisme les cheveux de sa tête ne poussaient point.

Le bienheureux prêtre Macaire (*Makar*) nous a raconté ainsi un grand miracle de notre frère Marc : « Il n'a jamais reçu de mes mains la sainte hostie, mais des mains d'un ange;* je voyais moi-même de mes propres yeux à toutes les fêtes une main qui s'avançait sur la sainte table, prenait de mes mains l'hostie et la mettait dans la bouche de Marc. » * A fol. 198 rº a.

Qui pourrait décrire son grand ascétisme, sa vie vertueuse? Nous savons

մեծամեծ սքանչելեաց նորա գիտեմք որ առաւել քան զբնութիւն մարդկան ջանայր հաճոյանալ Աստուծոյ ։ Եւ ի կատարել զհարիւր ամին բարի հանգստեամբն ննջեաց ի Քրիստոս ի Մարտի Դ ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Մակարայ անապատականին ։

Երանելին Մակար եգիպտացի էր ազգաւ, եւ ճգնաւոր խստակրօն, եւ զքառասուն օր եւ զգիշեր յոտն կալով աղօթեաց, եւ ի կիւրակէն միայն կոճ մի կաղամբ ուտէր, եւ զքառասուն օր եւ զգիշեր ոչ ննջեաց եւ յաղթեաց քնոյ ։

Սա գնաց ի դրախտն կախարդացն Փարաւոնի՝ Յաննէսի եւ Յամրէսի՝ զոր դեւքն ունէին, եւ ի վարել զնա դիւացն ընդդէմ. Մտանեմ, ասէ, տեսանեմ, եւ ոչ բնակեմ այլ ելանեմ ։ Եւ արար այնպէս ։

Սա ի պատերազմել պոռնկութեան դիւին՝ զկորիւն իժի արկ ի ծոց իւր եւ ոչ վնասեաց նմա ։ Սա գրեաց բազում խրատս ոգեշահս կրօնաւորաց ։ Հայրն Մակար ոչ
* A fol. 198 r° b. ծիծաղեցաւ զամենայն ժամանակս կենաց իւրոց, եւ յաւուր միում * ժողովեալ ամենայն դիւացն հնարս նիւթեցին այնմիկ. բերին կասանս մեծամեծս, կապեցին ի չնչին փետուրս կրծից ճնճղկի միոյ, եւ բուռն հարեալ ամենեքեան զօրութեամբ մեծաւ՝ զաղաղակ

3 Մարտի Դ] եւ Մեհեկի ԻՁ *add.* B || 6 եւ զգիշեր *om.* B || 6-7 եւ ի կիւրակէն ... քնոյ *om.* B || 8 դրախտն կախարդացն] պարտէզ չիրմայ մոգուցն B || 9-11 եւ ի վարել ... դիւին *om.* B || 11 ոգեշահս *om.* B || 12 — p. [1165] l. 3 Հայրն ... զակարութիւն *om.* B.

par les grands miracles qu'il a opérés qu'il avait cherché par des moyens au-dessus de la nature humaine à se rendre agréable à Dieu. A cent ans accomplis il s'endormit d'un bon repos dans le Christ, le 4 mars.

En ce jour, commémoration du bienheureux Macaire l'anachorète.

Le bienheureux Macaire était égyptien par la race, ascète austère, qui priait debout quarante jours et quarante nuits; les dimanches seulement il mangeait un trognon de chou; pendant quarante jours et quarante nuits, il ne dormit point et vainquit le sommeil.

Il se rendit aux jardins des sorciers de Pharaon, Yannès et Yamrès, que les démons occupaient, et comme les démons le repoussaient il leur dit : « Je n'entre que pour voir, je n'y habiterai point, mais j'en sortirai. » Et il fit ainsi.

Ayant à lutter avec le démon de la fornication, il saisit le petit d'une vipère, le cacha dans son sein et celui-ci ne lui fit aucun tort. Il écrivit de nombreux conseils spirituels pour les religieux. Le père Macaire ne rit jamais
* A fol. 198 r° b. pendant tout le temps de sa vie; un jour * tous les démons se réunirent pour inventer quelque artifice à ce sujet; ils apportèrent de grosses cordes qu'ils attachèrent aux pauvres petites plumes de la poitrine d'un moineau et tous se

բարձեալ ասէին. Քարշեցէք մանկունք, քարշեցէք ։ Եւ ոչ կարացին շարժել ամենեքին ։ Եւ զայս տեսեալ Մակարի ժպտեցաւ ։ Եւ նոքա ծափս ծափի հարեալ. Ծիծաղեցաւ, ասեն Մակար ։ Եւ նա ասէ. Ոչ այլ զինչ զանմտութիւն ձեր եւ զտկարութիւն ։

Սա եղեւ եպիսկոպոս կամօքն Աստուծոյ, եւ արար բազում սքանչելիս, եւ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։

Յայսմ աւուր վկայութիւն երկու հարիւր եւ յիսուն մարտիրոսացն որք ի Բուղայէ ամբարշտէ ի Հայս կատարեցան ։

Անօրէն իշխանն Իսմայելացի Ջափար, առաքեաց զօր բազում յաշխարհն Հայոց եւ այր մի արիւնահեղ աշխարհաւեր Բուղա անուն զօրագլուխ նոցուն Թուրք ազգաւ ։

Եւ եկեալ յերկիրն Հայոց առ ինքն կոչեաց խաբէութեամբ եւ երդմամբ զՍմբատ սպարապետն Հայոց յազգէ Բագրատունեաց, զայր քաջ եւ աստուածապաշտ, եւ զայլ նախարարս ։ Եւ իբրեւ չոգան առ նա ստեաց երդմանն իւրոյ, եւ արար զնոսա ի կապանս, եւ առաքեաց զնոսա կապանօք ի Սամառա առ ամիրապետն իւրեանց Ջափար եւ նա եդ զնոսա ի բանդի, եւ նեղէր ուրանալ զՔրիստոս, * եւ դառնալ ի կրօնս * A fol. 198 v° a.

4 եղեւ] յետոյ *add*: B || 5 ի Քրիստոս] ի Տէր B || 6 վկայութիւն] Սմբատայ սպարապետին Հայոց եւ *add.* B մարտիրոսացն] վկայից B || 7 ի Հայս *om.* B || 13 կապանս] կալանս B || 14 ի կրօնս Մահմէտայ] յայլազգութիւն B.

mirent à tirer dessus de toute leur force en criant : « Tirez, enfants, tirez. » Mais ils ne purent déplacer (le moineau). Ce que voyant, Macaire sourit. Tous alors applaudirent en disant : « Macaire a souri. » Il répondit : « Ce n'est que sur votre sottise et votre faiblesse. »

(Macaire) devint évêque par la volonté de Dieu, il opéra de nombreux prodiges et reposa en paix dans le Christ.

En ce jour, martyre des deux cent cinquante martyrs qui furent mis à mort, en Arménie, par l'impie Boula.

L'impie émir d'Ismaël, Tchapar, envoya de nombreuses troupes dans le pays d'Arménie, en même temps qu'un homme sanguinaire et destructeur, nommé Boula, leur chef d'armée de race turque.

Celui-ci, arrivé au pays d'Arménie, appela à lui par tromperie et sous serment le généralissime des Arméniens, Sembat, de la famille des Bagratounis, homme courageux et pieux, ainsi que d'autres satrapes. Lorsqu'ils se furent rendus auprès de lui, il renia son serment, les fit enchaîner et les envoya liés à Samara à leur émir Tchapar, qui les fit mettre en prison, et les pressa de renier le Christ * et de se convertir à la religion de Mahomet. * A fol. 198 v° a.

Մահմետայ ։ Եւ ի սաստիկ տանջանացն եւ յանհնարին նեղութեանցն բազումք դրդուեցան եւ ելին զկնի սատանայի ։

Իսկ սպարապետն Սմբատ համբերեալ չարչարանացն քաղցի եւ ծարաւոյ եւ գետնախշտութեան եւ արգելանաց անլուսից վեշտասան ամիս՝ կատարեցաւ նահատակութեամբ ։ Եւ պատանի մի Միքայէլ անուն՝ նախատէր յայտնապէս զանօրէն օրէնս նոցա եւ խոստովանէր զՔրիստոս Տէր եւ Աստուած, զնա ի նմին ժամու սրով սպանին ։ Եւ այր մի Կոնոն անուն՝ նոյնպէս խոստովանութեամբ կատարեցաւ ։

Իսկ ամենաչարն Բուղա գերեաց զաշխարհն Հայոց, զարս եւ զկանայս եւ զմանկունս, եւ նեղէր զնոսա զի ուրասցին զՔրիստոս ։ Եւ արք երկու հարիւր եւ յիսուն համարձակութեամբ խոստովանեցան զանունն Քրիստոսի, զորս վերայ սուր եդեալ կոտորեցին զնոսա, եւ զայլ բազմութիւնն գերի վարեալ տարան ի Սամառա, եւ բազումք ի ճանապարհին խիստ մեռան ի սաստիկ տապոյն եւ ի փութով վարելոյն ։ Եւ կատարի տօն սրբոյն Սմբատայ սպարապետի եւ այլոց սրբոցն Մարտի Դ ։

Մեհեկի ԻԷ եւ Մարտի Ե ։ Վկայաբանութիւն սրբոյն Կոնոնի Իսաւրացւոյ ։

Յաւուրս սրբոց առաքելոցն էր Կոնոնոս ի գեղջէն Եղանիս՝ ութ եւ տասն ասպարիսաւ հեռի ի քաղաքէն Իսաւրիոյ, եւ անուն հօրն Նեստորիոս եւ մօրն Նադաս ։

2 զկնի սատանայի] ի հաւատոյ B || 3 չարչարանացն] եւ տանջանաց *add.* B || 5 զանօրէն *om.* B || 7 Կոնոն] Կոն B || 12 փութով] փութապէս B. || 14 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 15 Եղանիս] Բիդանիս B || 16 Իսաւրիոյ] որդի հեթանոս ծնողաց *add.* B.

Nombreux furent ceux qui, ébranlés par les grandes tortures et les misères excessives, suivirent le démon.

Mais le généralissime Sembat résista aux tortures, à la faim, à la soif, au repos sur le sol, à un emprisonnement sans lumière de seize mois et mourut martyrisé. Un tout jeune homme, du nom de Michel, insulta ouvertement leur religion impie et confessa le Christ, Seigneur et Dieu; il fut tué sur-le-champ par l'épée. Un autre, nommé Conon, confessa pareillement et fut martyrisé.

Quant au très méchant Boula, il fit prisonniers, en Arménie, les hommes, les femmes et les enfants et les obligea à renier le Christ. Deux cent cinquante hommes confessèrent avec hardiesse le nom du Christ, on les tua à coups d'épée; et on emmena le reste de la multitude captive à Samara; beaucoup moururent en route par les grandes chaleurs et les marches précipitées. La fête du généralissime saint Sembat et des autres saints a lieu le 4 mars.

27 MÉHÉKI, 5 Mars.

Martyre de saint Conon l'Isaurien.

Aux jours des saints apôtres vivait Conon (*Kononos*), du village de Bidanè (*Etanis*), distant de dix-huit stades de la ville d'Isaurie. Son père s'appelait Nestor (*Nestorios*) et sa mère Nadas.

Եւ յորժամ եղեւ ի չափ հասակի, * խօսեցան ծնօղքն իւր նմա կին, որոյ անուն էր Աննա ։ Եւ նախ քան զհարսանիսն երեւեցաւ Կոնոնոսի հրեշտակապետն Միքայէլ որպէս ահաւոր այր պայծառ հանդերձիւք, եւ ուսոյց նմա զբարեպաշտութեան հաւատն Քրիստոսի. եւ տարեալ ի ջուր՝ մկրտեցաւ յանուն սրբոյ Երրորդութեանն, եւ հաղորդեցոյց զնա ի սուրբ խորհրդեանն, եւ վերացաւ յերկինս, եւ յամենայն ժամ աներեւոյթաբար էր ընդ նմա ։ * A fol. 198 v° b.

Եւ յորժամ եղեն հարսանիքն եւ եմուտ յառագաստն ընդ հարսինն ունելով զերկիւղն Աստուծոյ ի սրտի իւրում՝ առեալ ճրագ եւոյց եւ եդ ի ներքոյ գրուանի, եւ ասէ ցհարսն. Ով կին, ասա ինձ, ո՞ր լաւ է՝ լոյսն թէ խաւարն ։ Եւ նա ասէ. Լոյսն ։ Եւ բազում բանիւք եցոյց նմա զբանս ճշմարտութեան, եւ հաւանեցոյց զի անարատ կացցեն ընդ միմեանս ։ Նոյնպէս եւ զծնօղսն հաւանեցոյց, եւ հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան. որ եւ յետոյ հայրն իւր Նեստորիոս մարտիրոսացաւ ։ Եւ երանելին Կոնոնոս պահօք եւ աղօթիւք ճգնէր եւ զբազումս ի հեթանոսաց դարձուցանէր ի հաւատս ։

Եւ յաւուր միում տօն կատարէին կռապաշտքն եւ տօնէին ի տեղւոջ նսեմ եւ մթին. եւ երանելին խրատ տայր ժողովրդեանն ի բաց կալ ի մոլորութենէն եւ դառնալ ի լոյս աստուածգիտութեանն. եւ նոքա ծանրանային եւ խնդրէին ի նմանէ նշան տե-

2 զհարսանիսն] տեսիլ ետես Կոնոնոս եւ *add.* B — Կոնոնոսի] նմա B || 4 եւ տարեալ ի ջուր] եւ գնացեալ B — հաղորդեցոյց զնա ի սուրբ] հաղորդեցաւ սրբոյ B || 5-6 եւ վերացաւ... էր ընդ նմա *om.* B || 7-8 ունելով... սրտի իւրում *om.* B.

Lorsqu'il parvint à l'âge de la puberté, * ses parents le fiancèrent à une femme nommée Anne. Avant les noces, l'archange Michel apparut à Conon sous les traits d'un homme terrible avec des vêtements éclatants, et lui enseigna la foi et la piété du Christ; il le conduisit à un cours d'eau, le baptisa au nom de la Trinité, le fit communier au saint sacrement et s'éleva au ciel. Il était en tout temps invisiblement avec lui. * A fol. 198 v° b.

Lorsque les noces eurent lieu et que (Conon) pénétra dans la chambre nuptiale avec sa femme, ayant toujours la crainte de Dieu dans son cœur, il prit un flambeau, l'alluma, le posa sous un boisseau et dit à sa femme : « O femme, dis-moi, quel est le meilleur, la lumière ou les ténèbres? » Elle répondit : « La lumière. » Il lui adressa bien des paroles de vérité et la persuada qu'ils devaient rester purs entre eux. Il persuada également ses parents, qui crurent au Christ et se firent baptiser. Plus tard son père Nestor fut martyrisé. Le bienheureux Conon menait une vie d'ascète dans les jeûnes et les prières et convertit à la foi beaucoup de païens.

Un jour de fête que les idolâtres célébraient dans un endroit sombre et obscur, le bienheureux conseilla au peuple de se détourner de l'erreur et de se porter vers la lumière de la science de Dieu. Ils se refusèrent et lui

* A fol. 199 r° a. ստնել. եւ տեղին յորում * կամէին զոհս մատուցանել՝ հեռագոյն էր : Ասէ ցնոսա Կոնոնոս. Դուք արք էք զօրաւորք եւ երիվարօք, եւ ես այր տկար եւ հետեւակ. ընթանամք ի միասին, եւ որ յառաջ հասցէ ի տեղի զոհից ձերոց՝ զնորա աստուածն պաշտեսցուք : Եւ նոքա հաճեցան ի բանս նորա : Կարգեցան հաւասարք միմեանց, նոքա երիվարօքն եւ Կոնոնոս հետեւակ, եւ ընթացան ամենեքեան : Եւ հրեշտակապետն զօրացոյց զընթացսն Կոնոնոսի եւ յառաջ հասոյց ի տեղին, եւ կալով մնայր նոցա. եւ նոքա եկեալ զարմացան՝ այլ ոչ հաւանեցան նմա : Ասէ ցնոսա Կոնոնոս. Հարցից զկուռքն ձեր՝ եւ զոր նա ասէ եթէ իցէ ճշմարիտ աստուած, զնա արժան է պաշտել : Եւ նոքա յանձն առին :

Ասէ Կոնոնոս ցկուռքն որ ի բարձրաւանդակին կայր. Քեզ հրամայէ Յիսուս Քրիստոս Աստուածն իմ, մարմարինեայ կուռք, էջ ի բարձր տեղւոջէդ եւ կացջիր առաջի մեր : Եւ առժամայն անկաւ կուռքն եւ գլորեցաւ առաջի նոցա. եւ դարձեալ կանգնեցաւ : Եւ սարսեցին հեթանոսքն, եւ յահէն աղաղակէին : Եւ խստասրտութեամբ ասէ սուրբն ցկուռքն. Դո՞ւ ես աստուածն՝ եթէ Քրիստոս զոր ես քարոզեմ : Ասէ կուռքն մարդկային բարբառով. Միայն Աստուած նա է զոր դու քարոզես Յիսուս Քրիստոս : Յայնժամ բազմութիւն ամբոխին աղաղակէին մեծաւ բարբառով. Միայն Աստուածն
* A fol. 199 r° b. Կոնոնոսի * յաղթեաց : Եւ զայս բարբառ մինչեւ ցայսօր՝ յաւուր տօնի սրբոյն Կոնոնոսի

5-6 հրեշտակապետն... հասոյց] զօրութեամբն Քրիստոսի Կոնոնոս յառաջեաց եւ եհաս B || 7 եկեալ] յոյժ *add.* B || 11-15 էջ... Քրիստոս] անկիր յերկիր. եւ առժամայն անկաւ կուռքն եւ կործանեցաւ B || 17 յաղթեաց] է ճշմարիտ Աստուած B.

* A fol. 199 r° a. demandèrent de leur faire voir un miracle. L'endroit où ils * voulaient offrir des victimes était loin de là. Conon leur dit : « Vous êtes des hommes vigoureux et vous avez des chevaux, moi je suis un homme faible et je vais à pied. Nous allons courir ensemble et nous adorerons le dieu de celui qui arrivera le premier à l'endroit de vos sacrifices. » Ils consentirent à ses propos. Ils se mirent en ligne, eux à cheval et Conon à pied, et tous coururent. L'archange fortifia la course de Conon et le fit arriver premier à l'endroit, où il s'arrêta pour les attendre. Ils arrivèrent tout étonnés, mais ne consentirent point. Conon leur dit : « J'interrogerai votre idole et celui dont elle dira qu'il est le vrai dieu, il faudra l'adorer. » Ils y consentirent.

Conon dit à l'idole, qui était posée sur un socle : « Jésus-Christ, mon Dieu, t'ordonne, idole de marbre, descends de cet endroit élevé et place-toi devant nous. » Aussitôt l'idole se renversa, roula jusque devant eux et se redressa. Les païens frissonnèrent et se mirent à crier de stupeur. Le saint dit avec sévérité à l'idole : « Est-ce toi qui es dieu ou le Christ que je prêche? » L'idole répondit d'une voix humaine : « Le seul dieu est celui que tu prêches, Jésus-Christ. » Alors la multitude rassemblée se mit à crier à haute voix : « C'est
* A fol. 199 r° b. le Dieu de Conon * qui a vaincu seul. » Et ces mêmes mots sont prononcés à

ժողովին Իսաւրացիքն յեկեղեցին եւ մեծաձայն աղաղակեն զնոյն բանս ։ Ընթացան ժողովուրդքն եւ խորտակեցին զբագինսն մանր ։

Այս երանելի վկայս Քրիստոսի զդեւսն հնազանդեցոյց ի ծառայութիւն, եւ նորին հրամանաւն վաստակէին զերկիր, եւ բրէին արտորայս եւ այգիս եւ պարտէզս ։

Ի միում աւուր աւազակք դիմեցին ի վերայ սրբոյն, եւ զդեւսն կալեալ զնոսա զան հարին ուժգին, եւ վառեցին թոնիր զի այրեսցեն զնոսա ։ Եւ սաստեաց նոցա սուրբն եւ արձակեցին զաւազակսն, եւ պատուիրեաց նոցա զի չար ումեք ոչ արասցեն ։

Արտ մի հասեալ սիսռան զոր վաստակեցին դեւքն, եմուտ գող եւ փետեաց եւ եբարձ յոյժ. եւ դեւքն աներեւոյթաբար ասեն ցնա բարձր բարբառով. Կեր որչափ կարես եւ բարձ զչափն եւ մի անյագութեամբ ։ Եւ նա ոչ լուաւ նոցա ։ Եւ դեւքն առին զնա բեռամբն եւ տարան առաջի Կոնոնոսի. եւ նա խրատ տուեալ նմա արձակեաց բեռամբն ։ Եւ մինչեւ ցայժմ ոչ ոք իշխէ յափշտակել կամ գողանալ յընչից եկեղեցւոյ սրբոյն Կոնոնոսի, ապա եթէ յանդգնի ոք տանջի ի դիւաց ։

Յայլ աւուր գայլ յափշտակեաց զայրւոյ միոյ տղայ զաւակ, եւ յոյժ ողբայր եւ

1 — p. [1170] l. 5 Ընթացան ... եւ թաղեաց անդ] Եւ բազումք ի հեթանոսաց տեսեալ զնշանն մեծ զոր արար հաւատացին ի Քրիստոս, եւ ընթացան խորտակեցին մանր զբագինն B.

haute voix jusqu'aujourd'hui le jour de la fête de saint Conon par les Isauriens rassemblés à l'église. La population accourut et brisa en miettes les autels (des dieux.

Ce bienheureux martyr du Christ assujettit à l'obéissance les démons qui, sur son ordre, travaillaient la terre, bêchaient les champs, les vignes et les jardins.

Un jour, des brigands assaillirent le saint, mais les démons les ayant saisis les frappèrent brutalement, et allumèrent un feu pour les y brûler. Mais le saint les réprimanda et ils mirent en liberté les brigands; (le saint) leur recommanda de ne plus faire du tort à personne.

Un voleur s'étant introduit dans un champ de pois chiches mûrs, que les démons avaient cultivés, les avait égrenés et en emportait une grande quantité. Les démons invisiblement lui dirent à haute voix : « Manges-en autant que tu pourras, prends-en dans une certaine mesure, mais pas avec avidité. » Il ne les écouta point. Alors les démons le saisirent avec sa charge et le conduisirent auprès de Conon, qui lui donna des conseils et le laissa partir avec sa charge. Jusqu'aujourd'hui personne n'ose enlever ou voler les biens appartenant à l'église de saint Conon, et si quelqu'un en a l'audace, il est torturé par les démons.

Un autre jour, un loup avait enlevé l'enfant d'une veuve ; la femme pleurait et sanglotait amèrement; le saint entendit les gémissements, donna des

հառաչէր կինն. եւ լուաւ սուրբն զօղբսն. հրամայեաց դիւացն եւ հասին գայլոյն. եւ * A fol. 199 v° a. * կալան կէսքն զականջացն այլք զագոյն, այլք ձաղկէին եւ վարէին առաջի սրբոյն Կոնոնի. եւ ընկէց զտղայն անվնաս, եւ դարձաւ գայլն ի տեղւոյն : Իսկ երանելին զհասարակ դիւին հալածեաց, եւ զայլսն արգել ի խեցի սափորս, եւ կապարեայ մատանեաւ կնքեաց, եւ փորեաց վիհ ի հիմանս տան իւրոյ եւ թաղեաց անդ :

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եհաս Մագնոս դատաւորն, եւ ունէր հրամանս ի թագաւորէն զի զքրիստոնեայսն որ ոչ ուրասցին զՔրիստոս եւ զոհեսցեն կռոցն խիստ տանջանօք կորուսցէ : Եւ կալեալ զսուրբն Կոնոնոս՝ կուտեաց առաջի նորա զամենայն մեքենայս տանջողական, եւ բազում խստութեամբ եւ սպառնալեօք պատուէր տայր եւ ոչ հաւանեցոյց : Եւ ապա ողոքանօք եւ քաղցրութեամբ խրատ տայր եւ խոստանայր պարգեւս եւ պատիւս. եւ ամենեւին ոչ կարաց խախտել զնա ի հաւատոցն Քրիստոսի : Հրամայեաց եւ այնչափ գանեցին զնա մերկ մինչեւ ամենայն մարմինն զղեցաւ :

Եւ լուեալ ժողովրդեանն ընթացան ըմբռնել զդատաւորն. եւ նորա գիտացեալ զյարձակումն ամբոխին ի վերայ՝ փաղփաղակի փախեաւ : Եւ գտին զսուրբն կապեալ եւ կիսամահ լեալ, լուծին եւ բարձեալ լալագին ողբովք տարան ի տունն իւր : Եւ * A fol. 199 v° b. կեցեալ ցաւագին ի չարաչար վիրացն զամս երկու՝ * գոհութեամբ փառաւորելով

16 կիսամահ լեալ] ի տանջանացն եւ յարեւն թաւալեալ *add.* B.

* A fol. 199 v° a. ordres aux démons qui rejoignirent le loup, * plusieurs parmi eux le saisirent par les oreilles, d'autres par la queue, d'autres le frappèrent et le conduisirent devant saint Conon. Le loup jeta l'enfant indemne et retourna à son gîte. Le bienheureux chassa la plupart des démons, en renferma d'autres dans des cruches en grès, qu'il scella d'un sceau de plomb et enterra dans une grande fosse creusée sous les fondements de sa maison.

En ces jours arriva le juge Magnus avec ordre de l'empereur d'exterminer par de cruelles tortures les chrétiens qui ne renieraient point le Christ et n'immoleraient point aux idoles. Il fit saisir saint Conon, amoncela devant lui tous les instruments de tortures et le somma avec beaucoup de sévérité et menaces; mais (le saint) ne consentit point. Il le conseilla ensuite avec supplications et douceur, en lui promettant des présents et des honneurs, mais il ne parvint aucunement à l'ébranler dans sa foi au Christ. Alors il ordonna de le frapper nu à tel point que tout le corps en fût déchiré.

A cette nouvelle, la population accourut pour se saisir du juge; celui-ci, ayant appris l'assaut de la population, prit la fuite précipitamment. On trouva le saint attaché et à demi mort, on défit les liens et on l'emporta avec des pleurs et des gémissements à sa maison. (Le saint) vécut douloureusement à * A fol. 199 v° b. la suite de ces graves blessures pendant deux ans * et en rendant grâces et en

զԱստուած՝ հանգեաւ Մարտի Ե ։ Եւ եդին ի տապանին յորում թաղեալ էին զմայրն եւ զկուսան կինն իւր ։

Եւ յետ ժամանակաց կամեցան քրիստոնեայքն աւերել զտուն եւ շինել եկեղեցի. եւ փորեալ զհիմունսն գտին զսափորսն կապարով կնքեալ. ի ծանրութենէն կարծեցին եթէ գանձ իցէ, բացին զմին ի սափորացն, եւ ելին որպէս տարափ դեւքն. եւ նորա յերկեղէն ընկեցին յերկիր եւ փախեան ։ Եւ յորժամ արեգակն յերեկոյն մտանէր ոչ ոք իշխէր անցանել ընդ այն սահմանն, եւ ի բաց թողին զշինումն եկեղեցւոյն ։

Եւ յետոյ հրամանաւ սրբոյն Կոնոնոսի տեսլեամբ՝ կործանեցին զաւերակսն, եւ փորեցին վիհս խորս եւ թաղեցին զմնացեալ կնքեալ սափորսն. եւ շինեցին զեկեղեցին յանուն սրբոյն Կոնոսի. եւ բազում նշանք լինին ի սուրբ նշխարացն ։

Յայսմ աւուր կռապաշտ դատաւորն Մագնոս զՔրիստոսի վկայն զՆերսիոն կալաւ ի գեօղն Սորուստի, եւ բազում եւ խիստ տանջանօք սպան վասն զի ոչ ուրացաւ զՔրիստոս, եւ ոչ զոհեաց կռոցն ։

1 Մարտի Ե] եւ Մեհեկի ԻԷ *add.* B || 3-10 Եւ յետ ժամանակաց... նշխարացն] Եւ յետ ժամանակաց քրիստոնեայք քակեցին զտունն եւ շինեցին եկեղեցի յանուն սրբոյն Կոնոնոսի եւ բազում նշանք լինին ի ձեռս սրբոց նշխարացն B.

glorifiant Dieu, il reposa le 5 mars. On le déposa dans la tombe où étaient enterrées sa mère et sa femme vierge.

Longtemps après, les chrétiens voulurent démolir la maison et y construire une église; ils creusèrent les fondements et y trouvèrent les cruches scellées du sceau de plomb; de par le poids ils s'imaginèrent que c'était un trésor; ils ouvrirent une des cruches, les démons en sortirent en avalanche ; (les chrétiens) pris de peur laissèrent tomber à terre (la cruche) et s'enfuirent. Le soir, au coucher du soleil, personne n'osait passer dans ces parages, et on abandonna la construction de l'église.

Plus tard, par ordre de saint Conon dans une vision, on démolit les ruines, on creusa des fosses profondes et on y enterra les autres cruches scellées; on y construisit une église au nom de saint Conon, et bien des miracles ont lieu près des saints restes.

En ce jour, le juge idolâtre Magnus fit saisir le martyr du Christ Nersion[1], au village de Soroust, et le fit mourir par de nombreuses et cruelles tortures parce qu'il ne reniait pas le Christ et n'immolait pas aux idoles.

1. Le nom du saint et celui du village nous sont inconnus.

Մեհեկի ԻԸ եւ Մարտի Զ : Վարք երանելոյն Պորփիւրոսի Գազայ եպիսկոպոսի :

* A fol. 200 rº a. Երանելին Պորփիւրոս էր ի Թեսաղոնիկեցւոց քաղաքէն, յաւուրս * բարեպաշտ արքայիցն Արկադիոսի եւ Ոնորիոսի : Եւ մինչդեռ պատանին էր գնաց յԵգիպտոս եւ եղեւ կրօնաւոր ի Սկիւթ վանս. եւ զհինգ ամ կացեալ առ սուրբ հարցն՝ ուսաւ զամենայն ձգնողական ժուժկալութիւնսն : Եւ գնաց յԵրուսաղէմ, եւ երկիր եպագ սուրբ տեղեացն : Եւ առաքեաց զՄարկոս զհաւատարիմ ծառայն իւր ի Թեսաղոնիկէ եւ վաճառեաց զհասեալ բաժին նորա յընչից իւրոց ի չորեք հազար եւ չորեք հարիւր դահեկան, եւ տարաւ առ Պորփիւրոս, եւ նա բաշխեաց զամենայն աղքատաց եւ կրօնաւորաց :

Եւ էր երանելին Պորփիւրոս լերդացաւ : Եւ ետես յանուրջս զՔրիստոս բեւեռեալ ի խաչին եւ զմի յաւազակացն յայլ խաչի բեւեռեալ, եւ աղաղակեաց առ Քրիստոս. Յիշեա́ զիս Տէր յարքայութեան քում : Ասէ Փրկիչն ընդ աւազակն. Էջ ի խաչէդ եւ բժշկեա́ զդա : Եւ իջեալ կալաւ զձեռանէ նորա եւ տարաւ առ Փրկիչն. եւ էջ Քրիստոս ի խաչէն եւ մերձեցաւ յաջակողմն, կողից նորա, եւ ետ ի նա զխաչն իւր եւ ասէ. Պահեա́ ինձ զփայտս զայս, որով եւ դու ողջացար ի ցաւոց քոց : Եւ զարթեաւ ողջացեալ :

2 Թեսաղոնիկեցւոց] Թեսաղոնիկէ B || 4 Սկիւթ] Սկիւթի B || 11 եւ զմի յաւազակաց յայլ խաչի բեւեռեալ *om.* B || 12-13 Ասէ Փրկիչն ... առ Փրկիչն *om.* B.

28 MÉHÉKI, 6 Mars.

Vie du bienheureux Porphyre évêque de Gaza.

* A fol. 200 rº a. Le bienheureux Porphyre était de la ville de Thessalonique, aux jours* des pieux empereurs Arcadius et Honorius. Étant jeune il se rendit en Égypte et se fit moine au couvent de Scété (*Skiut*); il y resta cinq ans auprès des saints pères, et apprit toutes les austérités de l'ascétisme. De là il se rendit à Jérusalem pour se prosterner aux lieux saints. Il envoya son fidèle serviteur, Marc, à Thessalonique pour y vendre la part de biens qui lui revenait : ce fut quatre mille quatre cents écus qu'il apporta à Porphyre, et que celui-ci distribua entièrement aux pauvres et aux religieux.

Le bienheureux Porphyre avait une maladie de foie. Il vit dans un rêve le Christ cloué sur une croix, et un des larrons cloué à une autre croix, lequel criait au Christ : « Souviens-toi de moi, Seigneur, dans ton royaume. » Le Sauveur dit au larron : « Descends de ta croix et guéris-le (Porphyre). » Il descendit, le prit par la main et le conduisit au Sauveur. Le Christ descendit de la croix, s'approcha de son côté droit et lui donna sa croix en disant : « Conserve ce bois et tu seras guéri de tes douleurs. » Il se réveilla guéri.

Եւ երանելին ոչ դադարէր ի յանդիմանելոյ զՀրէայս եւ զհեթանոսս, եւ զհերձուածողս, եւ ուսուցանէր եւ լուսաւորէր զբազումս վարդապետութեամբ իւրով :

Ձեռնադրեաց զնա Պռայլիոս Երուսաղեմայ հայրապետն քահանայ, եւ արար զնա պահապան սրբոյ խաչին Քրիստոսի : Եւ էր կերակուր * հաց եւ բանջար եւ ջուր ի մտանել արեգականն : * A fol. 200 r° b.

Եւ եղեւ ի մեռանել Գազայ եպիսկոպոսին առաքեաց զնա հայրապետն Երուսաղեմի թղթով առ մետրապօլիտն Կեսարիոյ Պաղեստինացւոց : Եւ երեւեցոյց Աստուած մետրապօլտին զՊորփիւրոս ի տեսլեան եթէ. Սա է արժանի : Եւ յորժամ ետես՝ ծանեաւ ի տեսլենէն, եւ ձեռնադրեաց զնա եպիսկոպոս Գազայ :

Եւ ի քաղաքին յայնմիկ դեռ եւս կային կռապաշտք եւ տաճարք բագնաց, զի վասն բազում հարկաց զոր տային յարքունիս՝ թողին զնոսա ի կռապաշտութեանն, եւ համարձակութեամբ զոհէին ի տաճար կռոցն : Եւ երանելի եպիսկոպոսն բազում նեղութիւնս կրեաց ի նոցանէ, եւ ոչ կարաց ժուժկալել յանարգանս տեսանելով զանունն Քրիստոսի : Գնաց առ մետրապօլիտն իւր ի Կեսարիա, եւ խորհեցան ի միասին. եւ մտեալ ի նաւ գնացին ի Կոստանդինուպօլիս, երկիր պագին սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին որ յայնժամ պատրիարք էր Կոստանդինուպօլսի, եւ նա ի ձեռն ներքինոյ սենեկապետին եմոյծ զնոսա առաջի թագուհւոյն Եւդոքսիայ : Եւ երանելին Պորփիւրոս ասէ ցԹա-

1 զհեթանոսս] զկռապաշտս B || 2 ուսուցանէր եւ լուսաւորէր] լուսաւորեաց B || 6 Գազայ] քաղաքին *add.* B || 16 յայնժամ] յայնմ ժամանակի B.

Le bienheureux ne cessait de reprendre les Juifs, les païens et les hérétiques; il enseignait et éclairait nombre de gens par sa doctrine.

Praïlus (*Prayilos*), patriarche de Jérusalem, l'ordonna prêtre et le fit gardien de la sainte croix du Christ. Sa nourriture se composait de* pain, de légumes et d'eau qu'il prenait au coucher du soleil. * A fol. 200 r° b.

A la mort de l'évêque de Gaza, le patriarche de Jérusalem l'envoya chargé d'une lettre au métropolite de Césarée de Palestine. Dieu fit apparaître Porphyre au métropolite dans une vision en disant : « Celui-ci est digne. » Lorsque (le métropolite) le vit, il le reconnut à cause de la vision et le sacra évêque de Gaza.

Il y avait encore dans cette ville des idolâtres et des temples d'idoles, car à cause des nombreux impôts que (les habitants) payaient au palais, on avait toléré leur idolâtrie, et ils immolaient ouvertement dans les temples des idoles. Le bienheureux évêque eut à souffrir bien des peines de leur part, et ne put résister aux injures faites au nom du Christ. Il se rendit auprès de son métropolite à Césarée et tint conseil avec lui; tous les deux s'embarquèrent sur un navire et se rendirent à Constantinople, se prosternèrent devant Jean Chrysostome qui était alors patriarche à Constantinople, lequel par l'entremise du chambellan eunuque les fit présenter à l'impératrice Eudocie. Le bienheureux

գուհին. Եթէ կործանես զտաճար կռոցն եւ խափանես զհամարձակութիւն կռապաշտիցն՝ ծնցես արու մանուկ ։ Եւ նա յանձն էառ, եւ էր մերձ ի ծնունդ. եւ յետ սակաւ աւուր ծնաւ զՓոքր Թէոդոս ։ Եւ աղաչեաց զԹագաւորն յաւուր յորում մկրտեաց
* A fol. 200 v° a. * զմանուկն Ոսկեբերանն ։

Եւ առաքեաց Թագաւորն զոմն Կինիգոս անուն հրամանօք, տուեալ եւ Թագուհին հարիւր լիտր դահեկան ի Պորփիւրոս զի շինեսցէ ի մէջ քաղաքին եկեղեցի ։ Եւ յորժամ գնացին կործանեցին զբագինս կռոցն եւ զտաճարսն հրով այրեցին, եւ շինեցին զեկեղեցին խաչանշան ։ Եւ զբազումս ի կռապաշտիցն դարձոյց Պորփիւրոս ի Քրիստոսի հաւատն եւ մկրտեաց ։

Եւ անբաւ նշանս եւ սքանչելիս արար որք գրեալ են ի կատարեալ պատմութեանն իւրում ։ Եւ կեցեալ յաթոռ եպիսկոպոսութեանն ամս քսան եւ հինգ երանելի մահուամբ ննջեաց ի Քրիստոս Մարտի Զ ։

Յայսմ աւուր կատարեցան քառասուն եւ երկու վկայքն ի Տաճկաստան, ի Սամառա քաղաքին, վասն Քրիստոսի աստուածութեանն ։

Քառասուն եւ երեք քրիստոնեայս տարան ի գլխատումն ի Սամառա, եւ մինն տաճ-

5 Կինիգոս] Կնիգոս B || 10 անբաւ] բազում B || 12 Մարտի Զ] եւ Մեհեկի ԻԸ *add.* B || 15 տաճկացաւ] ուրացաւ B.

Porphyre dit à l'impératrice : « Si tu démolis le temple d'idoles et si tu fais disparaître l'audace des idolâtres, tu mettras au monde un garçon. » Elle consentit, car elle était proche d'accoucher, et quelques jours après naquit Théodose le Jeune. Il adressa sa prière à l'empereur, le jour où Chrysostome
* A fol. 200 v° a. baptisa * l'enfant.

L'empereur envoya un nommé Cynegius (*Kinigos*) avec des ordres ; l'impératrice, de son côté, donna une somme de cent livres à Porphyre pour qu'il construisît une église au milieu de la ville. Lorsqu'ils furent arrivés, ils démolirent les autels d'idoles, consumèrent les temples par le feu et construisirent l'église en forme de croix. Porphyre convertit beaucoup (d'habitants) de l'idolâtrie à la foi du Christ et les baptisa.

Il opéra d'innombrables miracles et prodiges qui sont décrits dans sa biographie complète. Il vécut sur le siège épiscopal vingt-cinq ans et s'endormit d'une mort bienheureuse dans le Christ, le 6 mars.

En ce jour furent mis à mort quarante-deux martyrs, en territoire musulman [1], dans la ville de Samara, pour la divinité du Christ.

On emmena quarante-trois chrétiens à Samara pour y être décapités ; l'un

1. Textuellement « dans le Tadjkestan », c'est-à-dire le pays des Tadjiks ; mais le terme « Tadjik » qui désignait originellement une tribu turque a en arménien

կացաւ. եւ հատին զքառասուն եւ երկու սրբոցն զգլուխսն ։ Եւ ասէ Ամիր Իլմումնի եթէ. Որպէս զիւր հաւատն ոչ պահեաց եւ ոչ զմերս պահեսցէ, եւ հրամայեաց եւ զնա գլխատեցին, եւ կորեաւ ի խաւարն արտաքին ։

Ցայսմ աւուր Գիւտ նշխարաց Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, եւ վարք Վարոսի եւ Թաթլոյ ։

[B * Ի սմին աւուր ստուգապէս եւ ճշմարիտ Գիւտ է սուրբ եւ պատուական եւ * B p. 108 b.
կենդանարար երանելի խաչափայտին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որ թէպէտ յայլ տեղիս յիշատակի, այլ գիւտն աստ եղեւ ։]

Մեհեկի ԻԹ եւ Մարտի Է ։ Վկայութիւն Վասիլիոսի եպիսկոպոսի որ թարգմանի թագաւոր ։

Ի վեշտասաներորդի ամի թագաւորութեանն Դիոկղետիանոսի կռապաշտ արքային՝ երանելին Երմոն հայրապետն Երուսաղեմի առաքեաց ի բազում * գաւառս եպիսկո- * A fol. 200 v° b.
պոսունս քարոզել յայլազգիս զբանն կենաց, եւ դարձուցանել զանհաւատս ի գիտութիւն ճշմարտութեան ։

9 Վկայութիւն... թագաւոր] Վկայութիւն սրբոյ եպիսկոպոսին եւ վկային Վասիլիոսի որ ի հայ լեզու թարգմանի թագաւոր, որ ի Բերսոն քաղաքին մարտիրոսացաւ B.

d'eux se convertit à l'islamisme, on trancha la tête à quarante-deux saints. Le commandeur des croyants *Amir Al-mouminin* (*Amir Ilmoumni*) dit : « Celui-ci, comme il n'a pas conservé sa foi, ne conservera pas non plus la nôtre. » Et il ordonna de lui trancher la tête également, ainsi fut-il perdu dans les ténèbres extérieures.

En ce jour, découverte des restes de Grégoire, catholicos des Albaniens, et vie de Varos et de Tatoul.

[B * En ce jour est l'authentique et vraie découverte du saint, précieux, * B p. 108 b.
vivifiant et bienheureux bois de la croix du Christ, notre Dieu ; bien que commémorée à un autre endroit, sa découverte prend place ici.]

29 MÉHÉKI, 7 Mars.

Martyre de l'évêque Basileus[1] dont le nom se traduit roi.

La seizième année du règne de l'empereur idolâtre Dioclétien, le bienheureux Hermon, patriarche de Jérusalem, envoya des évêques dans beaucoup * A fol. 200 v° b.
* de provinces pour y prêcher aux barbares la parole de vie et convertir les infidèles à la science de la vérité.

le sens de « musulman ». L'expression correspond donc à l'arabe بلاد الاسلا.

1. Le nom grec βασιλεύς s'est facilement transformé en *Vasilios* plus commun, surtout à cause de la forme du génitif βασιλέως, si voisine de βασιλίος ; mais l'explication du nom exige la restitution *Basileus*.

Առաքեաց զԵփրեմ ի Թուրքաստան, եւ զՎասիլիոս ի Քերսոն քաղաք ։ Եւ երթեալ քարոզէր զաւետարանն Քրիստոսի, եւ բազում նեղութեանց եւ տանջանաց համբերեաց վասն անուանն Քրիստոսի ։ Եւ եկեալ բնակէր ի քարայր մի լերինն որ կոչի Պարթենիոն ։ Դէպ եղեւ մեռանել որդւոյ իշխանի քաղաքին, եւ յորժամ թաղեցին՝ զօրն զայն եւ զգիշերն ի գերեզմանէն ոչ որոշէին ծնօղքն, այլ անմխիթարելի լային զմանուկն իւրեանց, եւ ի բազում աշխատութենէն ննջեցին ի վերայ տապանին ։ Եւ տեսանէին յերազի զորդին իւրեանց որ ասէր. Ընդէ՞ր լայք զիս ։ Եթէ կամիք որ ես կենդանի լինիմ՝ անկերուք յոտս արդար առն զոր չարաչար տանջեցէք, թերեւս աղաչեսցէ զԱստուածն իւր վասն իմ եւ դուք հաւատայցէք բանից նորին, եւ կատարին խնդրուածք ձեր. քանզի ստոյգ տեսի եւ գիտացի զի աստուածքն մեր դեւք են, եւ ամենեւին մարդոյ օգնել ոչ կարեն ։

Եւ զարթուցեալք գնացին առ եպիսկոպոսն Վասիլիոս եւ աղաչէին զնա վասն որդւոյն իւրեանց ։ Ասէ 'ցնոսա երանելի եպիսկոպոսն. Եթէ հաւատայք ի Քրիստոս կարող է զայդ առնել ։ Եւ նոքա յանձն առին եւ խոստովանեցան հաւատով ։ Եւ յարուցեալ գնաց նոքօք ի գերեզմանն, եւ արարեալ զաղօթս մկրտութեանն ի վերայ
* A fol. 201 rº a. ջրոյ՝ եհեղ * ի վերայ մեռելոյն յանուն սրբոյ Երրորդութեանն, առժամայն կենդանացաւ, եւ ետուն փառս Աստուծոյ, եւ մկրտեցան ամենեքեան ազգակցօք եւ ընտանեօք ։

2 համբերեաց] ի կռապաշտից *add.* B || 3 վասն անուանն Քրիստոսի *om.* B — լերինն] եւ անդ ճգնէր *add.* B || 3-16 որ կոչի ... եւ ընտանեօք] ապա եկեալ ի քաղաքն քարոզեաց նոցա զՔրիստոս, եւ արար սքանչելիս, եւ հաւատացին բազումք եւ մկրտեցան B.

Il envoya Éphrem en Scythie [1] et Basileus (*Vasilios*) à la ville de Kherson. Celui-ci, y étant allé, prêcha l'évangile du Christ et endura bien des peines et des souffrances pour le nom du Christ. Il alla habiter dans une grotte de la montagne appelée Parthénion. Le fils du gouverneur de la ville vint à mourir et lorsqu'on l'eut enterré ses parents ne quittèrent pas la tombe ce jour-là et la nuit (suivante), pleurant inconsolablement leur enfant, et, dans une extrême lassitude, ils s'endormirent sur la tombe. Ils virent en rêve leur fils qui disait : « Pourquoi me pleurez-vous? Si vous voulez que je sois vivant, tombez aux pieds de l'homme juste que vous avez torturé cruellement, peut-être priera-t-il son Dieu pour moi, et si vous croyez à ses paroles, vos vœux seront exaucés. Car j'ai vu réellement et j'ai reconnu que nos dieux sont des démons et ne peuvent nullement venir en aide aux hommes. »

A leur réveil, ils se rendirent auprès de l'évêque Basileus et le prièrent au sujet de leur fils. Le bienheureux évêque leur dit : « Si vous croyez au Christ, il peut vous l'accorder. » Ils consentirent et confessèrent avec foi. (L'évêque) s'étant levé se rendit avec eux au tombeau, fit la prière du
* A fol. 201 rº a. baptême sur de l'eau, la versa* sur le mort au nom de la sainte Trinité, et celui-ci ressuscita aussitôt. Ils rendirent grâces à Dieu et se firent tous baptiser avec leurs parents et leurs familles.

1. Le texte arménien porte : « Dans le Turkestan ».

Իսկ այլ կռապաշտքն եւ քաղաքին Հրէայքն նախանձու լցեալք՝ ժողովեցան ի միասին, եւ բարկութեամբ զիմեցին ի վերայ սրբոյն Վասիլիսի, ընկեցին յերկիր, կապեցին պարան յոտս նորա եւ քարշեցին ընդ մէջ քաղաքին, եւ փայտիւ եւ քարամբ հարկանէին. եւ այնպիսի տանջանօք աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Մարտի է : Եւ զմարմինն ընկեցին արտաքոյ քաղաքին, եւ ի ցերեկն պահէր զսուրբ մարմինն արծիւ, եւ ի գիշերի գայլ, մինչեւ եկեալ քրիստոնէիցն գաղտ թաղեցին :

Եւ մի ոմն յորոց էին ի Քերսոն ընդ սրբոյն Վասիլիսի, նաւեաց յայնկոյս յԵլենիպոնտոս, եւ եգիտ այլ երեք եպիսկոպոսունս որ եկեալ էին յԵրուսաղէմայ քարոզել զաւետարանն Քրիստոսի, զԵւգինիոս, զԱգաթոդորոս եւ զԵլպիոս, եւ պատմեաց նոցա զմարտիրոսութեամբ մահն սրբոյն Վասիլիսի, եւ գոհութեամբ փառս ետուն Աստուծոյ : Եւ մտեալ ի նաւ գնացին ի Քերսոն, եւ քարոզէին հրապարակաւ զանուն Տեառն Յիսուսի : Եւ զնոսա կալան քաղաքացի կռապաշտքն, կապեցին եւ ուժգին ձաղկեցին հաստ մահակօք մինչեւ զհոգիս իւրեանց աւանդեցին առ Աստուած : Եւ քարշեցին զմարմինս նոցա արտաքոյ քաղաքին, եւ * քրիստոնեայք թաղեցին զնոսա ի ծածուկ. * A fol. 201 r° b.
Եւ են մեզ բարեխօս առ Քրիստոս :

3 քարամբ] քարիւ B || 4 Մարտի է] եւ Մեհեկի ԻԹ *add.* B || 5-6 ի ցերեկն... մինչեւ *om.* B || 1 եւ են մեզ բարեխօս առ Քրիստոս] ի փառս Քրիստոսի B.

Mais les autres idolâtres et les Juifs de la ville, remplis de jalousie, s'assemblèrent et assaillirent avec colère saint Basileus, le jetèrent à terre, lui attachèrent une corde aux pieds, le traînèrent à travers la ville et le frappèrent avec des bâtons et des pierres. C'est dans de telles tortures qu'il rendit son âme à Dieu, le 7 mars. On jeta son corps hors de la ville, mais un aigle garda le saint corps de jour, et un loup la nuit, jusqu'à ce que les chrétiens fussent venus pour l'inhumer secrètement.

Un de ceux qui étaient à Kherson avec saint Basileus s'embarqua pour le rivage opposé à Hélénopont (*Elenioponlos*), et y retrouva trois autres évêques qui étaient venus de Jérusalem pour y prêcher l'évangile du Christ : Eugène, Agathodoros et Elpidius (*Elpios*); il leur raconta la mort en martyr de saint Basileus ; ils rendirent grâces à Dieu. Ils s'embarquèrent sur un navire et allèrent à Kherson, où ils prêchèrent publiquement le nom du Seigneur Jésus. Les habitants idolâtres de la ville les saisirent également, les attachèrent, et les frappèrent brutalement avec de gros bâtons jusqu'à ce qu'ils eurent rendu leur âme à Dieu. On traîna leurs corps hors de la ville * et les chrétiens les inhumèrent en secret. Ils sont nos intercesseurs auprès du Christ. * A fol. 201 r° b.

Մեհեկի Լ. եւ Մարտի Ը. : Վարք սրբուհւոյն Եփրոսինեայ :

Յաւուրս Փոքր Թէոդոսի բարեպաշտ արքային էր այր մի մեծատուն որոյ անուն էր Պափնուտիոս, ի քաղաքէն Աղեկսանդրիայ. եւ ունէր դուստր մի ամաց երկոտասանից որոյ անուն էր Եփրոսինէ, որ թարգմանի ուրախութիւն : Եւ ուսուցեալ էր նմա գիր, եւ կրթեալ էր նա յերկիւղ Տեառն պարկեշտութեամբ, եւ ի պահս եւ յաղօթս. եւ եղեւ Եփրոսինէ բարի բնութեամբ եւ գեղեցիկ տեսլեամբ :

Եւ մի ոմն ազնուական եւ մեծատուն իշխան խնդրեաց զնա հարսն յորդին իւր. եւ հաւանեցաւ Պափնուտիոս, եւ առնէին զհաստատութիւն խնամութեանն : Եւ Եփրոսինէ ունելով զերկիւղ Աստուծոյ ի սրտի իւրում՝ ոչ կամէր շաղախիլ ի յանցաւոր ցանկութիւնս, այլ փափաքէր պահել զկուսութիւնն իւր մաքուր եւ հարսնանալ Քրիստոսի :

Եւ ի միում աւուր կոչեցին զՊափնուտիոս ի վանս վասն ուխտի տօնի վանացն. եւ երթեալ անդ արար աւուրս երիս ուրախանալով ընդ կրօնաւորսն : Իսկ Եփրոսինէ գաղտ գերծեաց զգլուխ իւր եւ զգեցաւ հանդերձ առնն, եւ առ ընդ ինքեան հինգ հարիւր դահեկան, եւ յորժամ գիտաց վասն հօրն իւրոյ եթէ գնաց ի վանացն՝ եմուտ ի նաւ եւ գնաց ընդ այլ ճանապարհ ի վանսն : Քանզի ասէր ի մտի իւրում. Եթէ երթայց ի

1 Եփրոսինեայ] կուսին *add.* B || 2 մեծատուն] եւ երկիւղած յԱստուծոյ *add.* B || 9 ունելով... սրտի իւրում *om.* B.

30 MÉHÉKI, **8 Mars**.

Vie de sainte Euphrosyne.

Aux jours du pieux empereur Théodose le Jeune, il y avait un homme riche dont le nom était Paphnuce, de la ville d'Alexandrie; il avait une fille de douze ans nommée Euphrosyne, nom qui se traduit « joie ». Il lui avait enseigné les lettres et l'avait élevée pudiquement dans la crainte du Seigneur, dans les jeûnes et dans les prières. Euphrosyne devint d'une bonne nature et belle de figure.

Un prince noble et riche la demanda en mariage pour son fils. Paphnuce consentit et on confirma (mutuellement) cette alliance. Mais Euphrosyne, qui avait la crainte de Dieu dans son cœur, ne voulait se souiller dans des passions passagères; elle désirait au contraire conserver sa virginité sans tache et devenir la fiancée du Christ.

Un jour, Paphnuce fut invité au monastère pour la fête du monastère : il s'y rendit et y demeura trois jours, prenant part à la joie des religieux. Euphrosyne se fit raser la tête secrètement, se revêtit d'habits d'homme, prit avec elle cinq cents écus, et, lorsqu'elle apprit que son père revenait du couvent, elle s'embarqua sur un bateau et se rendit au même couvent par un

կանանց վանսն՝ գտանէ զիս հայրն * իմ եւ բռնութեամբ հանէ վասն խօսեցեալ փեսային : * A fol. 201 v° a.

Գնաց ի վանսն եւ ետ ողջոյն հօր վանացն եւ ասէ. Ես ներքինի եմ ի տանէ թագաւորին Թէոդոսի եւ ցանկացայ կրօնաւորական վարուց, եւ ի քաղաքին մերոյ կրօնաւորք խաղաղութեամբ ի վանս որպէս աստ ոչ գտանին. եւ լուայ վասն աստուածահաճոյ վարուց սրբութեան ձերոյ, եւ եկի առ ձեզ զի կեցուցից զոգի իմ. ունիմ ինչս բազումս եւ եթէ օգտեցայց ինչ հոգւոյ՝ տաց զայն վանացս : Եւ հանեալ զհինգ հարիւր դահեկանն ետ ցհայրն :

Ասէ հայր վանացն. Բարի եկիր որդեակ, եթէ հաճոյ է քեզ վանքս՝ կեցջիր ընդ մեզ : Եհարց եւ զանունն : Եւ նա ասէ. Սմարագդոս, որ թարգմանի զմրուխտ : Ասէ հայրն. Վասն զի դեռ մանուկ ես չէ պարտ միայն կեալ քեզ, այլ վերակացու քեզ տաց որ ուսուցանէ քեզ զկարգ եւ զգիր կրօնաւորական ժուժկալութեան : Ասէ Սմարագդոս. Որպէս հաճոյ է քեզ այնպէս արասջիր, զի ես պատրաստ եմ կատարել զհրամայեալսն ի քէն :

Եւ կոչեաց հայրն կրօնաւոր մի Ագաբիոս անուն, այր ճգնաւոր եւ աստուածահաճոյ, եւ ասէ. Առ զտէր Սմարագդոս քեզ աշակերտ եւ որդի, եւ այնպէս արասցես զդա իբրեւ զքեզ : Եւ յետ եօթն աւուր արար զնա կրօնաւոր : Իսկ այլ կրօնաւորքն տեսա-

8 ցհայրն] ի հայրն B ‖ 10 որ թարգմանի] որ է ի հայ լեզու B.

autre chemin. Car elle se disait : « Si je vais à un couvent de femmes, * mon père me trouvera et me fera sortir de force pour mon fiancé. » * A fol. 201 v° a.

Elle se rendit donc au couvent, salua le prieur du couvent et dit : « Je suis eunuque du palais impérial de Théodose; j'aspire à la vie religieuse, et dans notre ville il ne se trouve point de religieux vivant en paix comme ici; j'ai appris la sainteté de votre vie agréable à Dieu et je suis venu à vous pour sauver mon âme; je possède beaucoup de biens et si j'obtiens quelque avantage pour mon âme, je les laisserai à ce couvent. » Elle sortit les cinq cents écus et les remit au prieur.

Le prieur du couvent lui répondit : « Sois le bienvenu, mon enfant, et si ce couvent te plaît, tu vivras avec nous. » Il lui demanda son nom. Elle répondit : « Smaragde » (*Smaragdos*), qui se traduit émeraude. Le prieur dit : « Comme tu es trop jeune, il ne te convient pas de vivre seul; je te donnerai un directeur qui t'enseignera l'ordre et les écrits de la vertu religieuse. » Smaragde lui répondit : « Tu feras comme il te plaira, car je suis prêt à accomplir ce que tu m'ordonneras. »

Le prieur appela un moine du nom d'Agapius, ascète agréable à Dieu, et lui dit : « Prends Smaragde pour ton élève et fils, et rends-le semblable à toi. » Sept jours après, il le fit religieux. Mais les autres moines, vu la beauté

նէին զգեղեցկութիւն երեսացն Սմարագդոսի, տրտնջէին զհօրէն եթէ չէր պարտ
* A fol. 201 v° b. այնպիսի տեսլեամբ մանուկ արկանել ի վանս վասն սատանայական * հնարիցն :

Եւ լուեալ հօրն կոչեաց զԱգապիոս եւ պատուիրեաց նմա յարգելական եւ ի նսեմ խցի փակել զՍմարագդոս, եւ անդ միայն տալ աղօթել եւ ճաշակել, եւ ոչ յեկեղեցին եւ ոչ ի սեղանն ելանել : Եւ յոյժ ուրախ եղեւ Սմարագդոս : Եւ արարին այնպէս. արգելին զնա ի մթին խցին, եւ այնչափ ճգնութիւն ստացաւ Սմարագդոս պահօքն եւ աղօթիւք եւ տքնութեամբ՝ որ զարմանայր Ագապիոս եւ պատմէր հօրն եւ եղբարցն, եւ որպէս զհրեշտակ ընդունէին զնա :

Իսկ Պափնուտիոս հայրն իւր գնաց ի տուն, եւ մտեալ ի սենեակ դԵփրոսինէ ոչ եգիտ, եւ սկսան այլագունել երեսք իւր. հարցանէր ընդ ծառայսն եւ ընդ աղախնայսն եթէ ո՞ւր իցէ կամ զինչ եղեւ : Եւ նոքա ասեն եթէ. Երէկ ի տանս էր, բայց այսօր զնա ոչ տեսաք : Եւ նա կարծեաց եթէ ի տան ուր խօսեցեալն էր՝ եկեալ տարան զնա : Եւ յղեաց փութապէս ծառայս առ ի տեղեկանալ : Եւ նոցա լուեալ՝ եկին յընթացս ի տունն Պափնուտիոսի, եւ ի տարակուսի լեալ՝ առաքեցին ծովով եւ ցամաքաւ երիվարօք ի դրացիս ի քաղաքս եւ ի գաւառս, ի շէնս եւ ի կղզիս, ի վանորայս յանապատաւորս. եւ յորժամ ոչ գտին եւ անցին բազում աւուրք՝ յուսահատեցան :

du visage de Smaragde, protestèrent contre le prieur, (disant) qu'il n'aurait
* A fol. 201 v° b. pas fallu admettre au couvent un enfant de tel aspect à cause des * machinations des démons.

Le prieur, l'ayant appris, appela Agapius et lui recommanda d'enfermer Smaragde dans une cellule cloîtrée et obscure, de l'y faire prier et manger seul, et de ne pas le laisser aller ni à l'église ni au réfectoire. Smaragde en eut une grande joie. On fit ainsi, on l'enferma dans une cellule obscure. Smaragde obtint tant d'ascétisme par les jeûnes, les prières et les veilles qu'Agapius en fut émerveillé et le raconta au prieur et aux frères, qui l'accueillirent comme un ange.

Cependant Paphnuce, son père, rentré chez lui, alla à la chambre d'Euphrosyne et ne la trouva point. Son visage pâlit; il demanda aux domestiques et aux servantes où elle était et ce qui lui était arrivé. Ils répondirent : « Elle était à la maison hier, mais aujourd'hui nous ne l'avons pas vue. » (Paphnuce) crut qu'on était venu la chercher pour la conduire à la maison où elle était fiancée. Il y dépêcha des domestiques pour s'informer. A cette nouvelle les gens de la maison accoururent chez Paphnuce, et pris d'inquiétude, ils envoyèrent des gens par mer et par terre, montés sur des chevaux, chez les voisins, dans la ville et les provinces, dans les bourgs et les îles et dans les couvents chez les anachorètes, et ne l'ayant pas découverte après plusieurs jours, ils furent au désespoir.

Փետտեաց Պափնուտիոս զմօրուսն եւ զհերս գլխոյն եւ անկաւ ի վերայ մոխրոյ, եւ բաղխէր * զերեսն ։ Ողբայր մեծաւ հառաչմամբ զդուստրն իւր եւ ասէր. Վա՜յ ինձ * A fol. 202 r° a.
քաղցր զաւակ իմ, վա՜յ ինձ լոյս աչաց իմոց, վա՜յ ինձ ցուպ ծերութեան իմոյ, վա՜յ ինձ զի ոչ գտանեմ ուրախութիւն տրտմութեանս ։ Ով զգանձն իմ կողոպտեաց, ով զմեծութիւն իմ յափշտակեաց, ով զմարգարիտն իմ ցրուեաց, ով զճրագն իմ շիջոյց, ով զփառս տանն իմոյ գողացաւ, ով զվայելչութիւն անձին իմոյ ջնջեաց. ո՞ր գայլ զգառն իմ կիշատեաց, ո՞ր տեղի թաքոյց զարեգակնանման տեսութիւնն, ով գերեաց զթագաւորական գեղեցկութիւնն, ով սպան զտրտմութեան իմոյ լուծիչն ։ Նա էր նեղութեան իմոյ անդորրիչ, նա էր ծանրութեանս իմոյ թեթեւացուցիչ ։ Հող երկրի մի ծածկեր զարիւն մարմնոյ իմոյ, մինչեւ գիտացից թէ զինչ եղեւ զաւակն իմ Եփրոսինէ ։

Եւ յետ բազում աւուրց եմուտ ի նաւ եւ գնաց ի վանսն յորում էր Եփրոսինէ, եւ անկաւ յոտս հօր վանացն պատմեաց նմա զյանկարծակի կորուստ դստերն իւրոյ ։ Եւ յոյժ տրտմեցաւ նա եւ հրամայեաց եղբարցն պահօք եւ աղօթիւք զեօթն օր ուխտ կատարել եւ տքնութեամբ զԱստուած աղաչել զի յայտնեսցէ նոցա զզաւակն նորա ։ Եւ ամենեւին ոչ երեւեցոյց Աստուած ումեք՝ վասն զի աղօթք Սմարագդոսի ծածկէր

1 Պափնուտիոս] ձեռօքն *add.* B || 2 վա՜յ ինձ քաղցր զաւակ իմ *om.* B || 5 ով... շիջոյց] ով զլոյսն իմ կորոյս *add.* B || 6 գողացաւ] կողոպտեաց B || 6 կիշատեաց] յափշտակեաց B || 7 ո՞ր... տեսութիւնն] ո՞ր խորք ծածկեցին զարքունական նաւահանգիստն *add.* B || 8 լուծիչն] նա էր իմոյ աչացս լոյս *add.* B || 11 եմուտ] մտեալ B.

Paphnuce s'arracha la barbe et les cheveux de la tête, s'assit sur de la cendre et se frappa * le visage. Il gémit avec de gros sanglots sur sa fille et dit : « Malheur à moi, mon doux enfant; malheur à moi, lumière de mes * A fol. 202 r° a.
yeux; malheur à moi, bâton de ma vieillesse; malheur à moi, qui ne trouve point de consolation à ma tristesse. Qui m'a volé mon trésor, qui m'a dérobé ma richesse, qui a jeté ma perle, qui a éteint mon flambeau, qui a dérobé la gloire de ma maison, qui a détruit la splendeur de ma personne, quel loup a dévoré mon agneau, quel endroit retient caché le visage resplendissant comme le soleil, qui a fait prisonnier la beauté royale, qui a tué celle qui faisait disparaître ma tristesse? C'était elle qui apportait le calme à mes emportements, c'était elle qui allégeait mes fardeaux. Sol de la terre, ne recouvre pas le sang de mon corps, jusqu'à ce que je sache ce qu'est devenue mon enfant Euphrosyne. »

Longtemps après il s'embarqua dans un bateau et se rendit au couvent où se trouvait Euphrosyne, et se jeta aux pieds du prieur en lui racontant la perte subite de sa fille. Celui-ci en fut très affligé et recommanda aux frères de faire des vœux pendant sept jours avec des jeûnes, des prières et des veilles en priant Dieu de leur faire découvrir sa fille. Mais Dieu ne la fit voir à per-

* A fol. 202 r° b. զաղօթս կրօնաւորացն, զի աղաչէր զԱստուած որպէս զի ի կենդանութեան * իւրում մի ումեք երեւեսցի :

Եւ յետ եօթն աւուր ասէ հայր վանացն. Գիտասջիր տէր Պափնուտիոս որ եթէ ի չարիս տուեալ էր զանձն իւր՝ Աստուած յայտնէր մեզ, այլ նա ըստ հաճոյից Աստուծոյ գնաց, եւ դու գոհացիր զԱստուծոյ : Եւ սակաւիկ մի մխիթարեցաւ ի բազում սգոյն, գնաց ի տուն իւր եւ գոհանալով փառաւորէր զԱստուած, եւ բաշխէր զինչս իւր կարօտելոց : Եւ յամենայն ամի երկիցս եւ երիցս երթայր Պափնուտիոս ի վանսն եւ խօսէր ընդ Սմարագդոսի բանս հոգեւորս եւ մխիթարէր զանձն իւր : Եւ ասէ ցհայրն. Յոյժ օգտիմ ի բանից արգելական կրօնաւորին, եւ մեծապէս մխիթարի անձն իմ : Եւ դառնայր ի տուն իւր :

Եւ արար Սմարագդոս ի վանսն մեծ եւ առաքինի ճգնութեամբ ամս երեսուն եւ ութ յարգելական խցին. եւ գիտաց զվախճանն իւր մերձեալ : Եւ եղեւ գնալ ի վանսն Պափնուտիոսի. եւ երթեալ առ Սմարագդոս խօսէր եւ լսէր ի նմանէ բանս մխիթարութեան եւ փրկութեան. եւ ասէ Պափնուտիոս. Յոյժ տրտում եմ, սուրբ հայր, վասն դստերն իմոյ Եփրոսինեայ որ ոչ գիտացի թէ զինչ եղեւ : Ասէ Սմարագդոս. Համբերեա՛ ի վանս զերիս աւուրս եւ Աստուած ծանուցանէ քեզ եթէ որպէս կամեցաւ առնել ի զաւակն քո : Եւ յորժամ ծանրացաւ կոչեաց զհայրն իւր միայն առանձինն եւ ասէ.

7 երիցս] անգամ *add.* B || 9 ցհայրն] վանից *add.* B

sonne, parce que les prières de Smaragde couvraient les prières des religieux; car elle priait Dieu de ne la révéler à personne * de son vivant. * A fol. 202 r° b.

Sept jours après, le prieur lui dit : « Sache, seigneur Paphnuce, que si elle s'était donnée à de mauvaises actions, Dieu nous l'aurait dévoilé, mais elle est partie selon la volonté de Dieu et toi tu devrais rendre grâces à Dieu. » Sa grande tristesse trouva un peu de consolation, il rentra chez lui, rendit grâces en glorifiant Dieu et distribua ses biens aux nécessiteux. Tous les ans Paphnuce se rendait deux ou trois fois au couvent, avait des entretiens spirituels avec Smaragde et s'en consolait. Un jour il dit au prieur : « Je profite beaucoup des entretiens du moine cloîtré et je m'en sens grandement consolé. » Et il retournait chez lui.

Smaragde vécut au couvent d'un grand et vertueux ascétisme pendant trente-huit ans cloîtrée dans sa cellule, et elle reconnut que sa fin approchait. Or, il arriva que Paphnuce s'étant rendu auprès de Smaragde pour lui parler et entendre de lui des paroles de consolation et de salut, Paphnuce lui dit : « Je suis bien triste, père saint, au sujet de ma fille Euphrosyne, de n'avoir pas su ce qui lui est arrivé. » Smaragde lui répondit : « Attends trois jours au couvent et Dieu te fera savoir ce qu'il a voulu faire de ton enfant. » Lorsque (sa maladie) s'aggrava, elle fit appeler son père seul et lui dit : « Puisque Dieu

Բանզի արար ընդ իս Աստուած որպէս կամեցաւ, եւ կատարեաց զցանկութիւնս իմ, այժմ կամիմ զքեզ մխիթարել * վասն զաւակին քո որ ոչ տրտմեսցիս : Ես եմ Եփրոսինէ, * A fol. 202 v° a.
դուստրն քո, տե՛ս եւ հաւատովք մխիթարեաց : Եւ վասն զի յանձին կալայ հօր վանացս տալ ի ընչից իմոց՝ դու զբաժինն զոր խոստացար տալ փեսային վասն իմ, տո՛ւր ի վանքս : Եւ դու քո լիքնին ձեռօքդ մաղեղինաւս իմով թաղեա՛ զիս յորժամ պատեսցես զմարմինս իմ : Եւ զայս ասացեալ՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մարտի Ը :

Եւ յորժամ լուաւ Պափնուտիոս յանկարծ հիացմանէն լուծաւ եւ անկաւ յերկիր որպէս մեռեալ : Եւ ընթացաւ Ագապիոս ցանեաց ջուր յերեսն, կանգնեաց եւ հարցանէր եթէ . Զինչ եղեւ քեզ : Ասէ . Թո՛ղ տուք ինձ աստ մեռանել, զի տեսի այսօր զարմանալի սքանչելիս : Եւ քակեցին զպախարակս արգելական խցին, եմուտ Պափնուտիոս եւ անկաւ ի վերայ լանջացն, եւ արտասուօքն լուայ զերեսս երանելոյն :

Գնաց Ագապիոս եւ պատմեաց հօր վանացն եւ եղբարցն, եւ ամենեքեան անդ ժողովեցան : Եւ հանեալ զմարմինն եդին առաջի դրան եկեղեցւոյն, եւ ողբայր Պափնուտիոս լալագին արտասուօք . Վա՜յ ինձ դուստր իմ Եփրոսինէ, ընդէ՞ր ոչ նախ ասէիր ինձ զխորհուրդ քո, որ եւ ես ընդ քեզ մեռանէի . եւ եթէ ո՞րպէս կոխեցեր զգաղտնի խայթոցս սատանայի, եւ անցեր ընդ պետութիւնս եւ ընդ իշխանութիւնս. եւ մտեր յանանց կեանսն * եւ յանստուեր լոյսն, եւ յանարտում ուրախութիւնսն : * A fol. 202 v° b.

5 թաղեա՛ ... զմարմինս իմ] պատեա՛ զմարմին իմ եւ թաղեա՛, եւ աղօթեա՛ վասն տառապեալ հոգւոյս իմոյ B || 6 Մարտի Ը] եւ Մեհեկի Լ *add.* B.

a fait de moi ce qu'il a voulu, et qu'il a exaucé mon désir, je veux te consoler * au sujet de ton enfant pour que tu ne sois plus triste. Je suis Euphrosyne, ta * A fol. 202 v° a.
fille, regarde et console-toi avec foi. Et comme je me suis engagée envers le prieur du couvent de lui remettre une part de mes biens, tu donneras au couvent la part que tu avais promis de donner à mon fiancé. Tu m'enterreras de tes propres mains avec cette bure, lorsque tu auras enseveli mon corps. » Et ce disant, elle rendit son âme à Dieu, le 8 mars.

Paphnuce, en entendant cela, eut une défaillance causée par la terrible stupeur et tomba à terre comme mort. Agapius accourut, lui jeta de l'eau à la figure, le redressa et lui demanda : « Que vous est-il arrivé? » Il répondit : « Laissez-moi mourir ici, car j'ai vu aujourd'hui un miracle surprenant. » On démolit les cloisons de la cellule cloîtrée, Paphnuce y pénétra, se jeta sur la poitrine de la bienheureuse et de ses larmes lui lava la figure.

Agapius alla rendre compte au prieur et aux frères et tous se rassemblèrent là. On sortit le corps et on le déposa devant la porte de l'église. Paphnuce gémissait avec des larmes et des sanglots : « Malheur à moi, ma fille Euphrosyne! pourquoi ne m'as-tu pas prévenu de ton dessein, pour que je meure avec toi? Comment as-tu foulé aux pieds l'aiguillon secret du démon, as-tu surpassé les puissances et les dominations et es-tu entrée dans la vie qui ne passe pas, * dans la lumière sans ombre et dans la joie sans mélange de tristesse? » * A fol. 202 v° b.

Նոյնպէս եւ հայր վանացն եւ կրօնաւորքն ողբալով աղաղակէին. Ով հարսն Քրիստոսի մի մոռանար զընկերակիցս քո, այլ աղօթիւք քո տացի մեզ զգաստութիւն եւ զօրութիւն կեալ ըստ հաճոյից Աստուծոյ եւ հասանել մասին սրբոց ։

Եւ ժողովեցան անդ բազմութիւն կրօնաւորաց յայլ եւ այլ վանօրէից, եւ զարմանային ընդ ժուժկալութիւնն Եփրոսինեայ եւ փառաւորէին զԱստուած ։

Եւ մի ոմն կրօնաւոր միականի եդեալ զերեսն ի վերայ երեսացն արտասուօք համբուրէր զաչսն, եւ առժամայն բացաւ խաւարեալ ակն ։ Եւ այսու առաւելապէս փառաւորեաց Աստուած յերկրի զաղախինն իւր ։

Եւ ըստ արժանեացն սաղմոսիւք եւ օրհնութեամբ եդիր հայրն իւր զնշխարս նորա մազեղինաւն ի տապանի ։

Յայսմ աւուր երանելին Թէոփիլակտոս, որ թարգմանի աստուածապահ, Նիկոմիդացւոց արքեպիսկոպոսն, հանգեաւ յաքսորս. զոր ընկէց յաթոռոյն Լեւոն հերձուածող
* A fol. 203 r° a. արքայն, վասն զի պատուէր զոր նա անարգէր՝ զտէրունական * եւ զսրբոց պատկերս ։

* B p. 112 a. [B * Եւ յայսմ աւուր պարոն Կոստանդին որդի Լեւոն թագաւորի բարի վարուք փոխեցաւ ի Քրիստոս, եւ կայ ի Կոստանդնուպօլիս ։]

4 զարմանային] զարմանալով B || 6-8 Եւ մի ոմն ... զաղախինն իւր *om.* B || 10 տապանի] Մեհեկի Լ եւ Մարտի Ը ։ Եւ ինքն Պափնուտիոս կրօնաւորեալ ի խցի սուրբ գաւերն իւրոյ ճգնողական վարուք փոխեցաւ առ Աստուած *add.* B || 11 թարգմանի] է ի հայ լեզու B.

De même le prieur du couvent et les religieux criaient en gémissant : « O fiancée du Christ, n'oublie pas tes compagnons, pour que par tes prières nous soient données l'animation et la force de vivre selon la volonté de Dieu pour arriver à l'héritage des saints. »

Une multitude de religieux de divers couvents se rassemblèrent, admirant la persévérance d'Euphrosyne et glorifiant Dieu.

Un religieux borgne posa son visage sur le visage (d'Euphrosyne) et baisa, avec larmes, ses yeux; aussitôt son œil obscur se guérit. C'est ainsi que Dieu glorifia grandement sa servante sur la terre.

Son père inhuma, comme il convenait, avec psalmodies et bénédictions, ses restes enveloppés dans la bure, dans le tombeau.

En ce jour le bienheureux Théophylacte, nom qui se traduit « gardé par Dieu », archevêque de Nicomédie, mourut en exil. Léon, l'empereur schismatique, l'avait déposé de son siège, parce qu'il vénérait les images du Seigneur
* A fol. 203 r° a. * et des saints que lui-même méprisait.

* B p. 112 a. [B * En ce jour le baron Constantin, fils du roi Léon, trépassa après une bonne vie dans le Christ; (son corps) est à Constantinople.]

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE

TER ISRAEL

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le Dr G. BAYAN

VIII

MOIS DE AREG

A = Paris, Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 203 à fol. 225 verso.

B = Édition officielle du Synaxaire arménien de
Ter Israël de Constantinople, 1834 :

*Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց
Տէր Իսրայէլի ։ Կոստանդնուպօլիս,* 1834 ։

L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

* Արեգի ամսոյ Ա եւ Մարտի Թ ։ Տօն է սրբոց Քառասնիցն, որք ի Սեբաստիա վկայութեամբ նահատակեալ կատարեցան ։ * A fol. 203 r° a.

Սուրբ եւ փառաւորեալ քառասուն վկայիցն անուանքն են այսորիկ. Դոմետիանոս, Կիւրղոս, Ուվաղէս, Եւտիքէոս, Իսիքիոս, Եւնոյքիոս, Եղիանոս, Փլաւիոս, Սմարագդոս, Քսանթիոս, Սիսինիոս, Ղեւոնդիոս, Մելիտոն, Սեւերիանոս, Փիլոքտեմոն, Անկէաս, Իրակլոս, Եքտիկիոս, Կիւրիոն, Աէտիոս, Աղեքսանդրոս, Ակակիոս, Վաղերիանոս, Նիկողայոս, Եւտիքէոս, Յովհաննէս, Բիբիանոս, Քուդիոն, Լուսիմաքոս, Գայիոս, Ագղիոս, Իլիոդէս, Դոմնէս, Աթանասիոս, Պրիսկոս, Կանդիդոս, Սակերդոն, Գորգոնիոս, Թէոդուլոս, Թէոփիլոս ։

Սոքա էին ի Կապադովկացւոց երկրէն, ի մի գունդս պատեալք էին, զօրականք Լիկիանոսի արքային ։

1 Տօն... կատարեցան] Վկայութիւն սրբոց քառասնիցն որք ի Սեբաստիա կատարեցան ի լիճն B || 4 Եղիանոս] Վաղենտիանոս B — Փլաւիոս] Փեղաւիոս B || 6 Եքտիկիոս *om.* B — Աէտիոս] որ է արծիւ *add.* B — Վաղերիանոս *om.* B || 7 Եւտիքէոս] Եկդիկիոս B || 8 Ագղիոս] Կղոկղիոս, B || 9 Գորգոնիոս] որ է ճարտար *add.* B || 11 Լիկիանոսի] անօրէն *add.* B.

* 1[er] DU MOIS DE AREG et **9 Mars**. * A fol. 203 r° a.

Fête des quarante saints qui périrent en combattant par le martyre à Sébaste.

Les noms de ces quarante saints et glorieux martyrs sont les suivants : Domitien (*Dometianos*), Cyrille, Valens (*Ouralès*), Eutychius, Hésychius, Eunoïchus, Élien (*Elianos*), Flavius, Smaragde, Xanthe, Sisinnius, Léonce, Méliton, Sévérien, Philoctémon, Aggée (*Ankéas*), Héraclenios (*Iraklos*), Ekdichius, Cyrion, Aétius, Alexandre, Acace, Valérien, Nicolas, <Claude>[1], Jean, Bibianus, Khoudion, Lysimaque (*Lousimakhos*), Gaïus, Aglius, Iliodès, Domnès, Athanase, Priscus, Candide, Sacerdon, Gorgonius, Théodule, Théophile.

Ils étaient du pays de Cappadoce, enrôlés dans la même cohorte, soldats de l'empereur Licinius.

1. Restitution d'après *Syn. sel.;* la répétition d'Eutychius par le traducteur arménien semble dépourvue de fondement.

Իսկ դատաւորն Ագրիկողայոս տարաւ զնոսա ի քաղաքն Սեբաստիոյ, եւ յոյժ բռնադատէր զնոսա զոհել կռոցն, եւ ամենեւին ոչ կարաց մեկնել զնոսա ի Քրիստոսի հաւատոցն ։ Արկ զնոսա ի բանտ, եւ յաղօթելն նոցա երեւեցաւ Փրկիչն եւ քաջալերեաց զնոսա ։

* A fol. 203 r° b. Եւ յետ ութ աւուր հասաւ դուքսն ի Կեսարիոյ, եւ նստան ի միասին յատենի, եւ տարան զնոսա առաջի, եւ հարցանէին վասն * հաւատոցն Քրիստոսի եթէ ուրանան եւ զոհեն կռոցն ։ Եւ սուրբքն որպէս ի միոյ բերանոյ յանդիմանեցին աստուածային բանիւք զանաստուած մոլորութիւն կռապաշտիցն ։

Եւ հրամայեցին քարամբք զբերանս նոցա խորտակել, եւ զօրականքն սկսան զմիմեանս քարկոծել ։ Եւ առեալ վէմ մի պիղծ դուքսն ձգեաց ի վերայ սրբոցն եհար զդատաւորն եւ խորտակեաց զերեսն ։ Արկին զնոսա ի բանտ. եւ յաղօթել նոցա երեւեցաւ դարձեալ Փրկիչն եւ ասէ. Որ հաւատայ յիս թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ. քաջալերեցարուք եւ մի երկնչիք ի չարչարանաց նոցա զի առ ժամանակ մի են, համբերեցէք սակաւիկ մի եւ յերկնից պսակս ընկալջիք ։

3 եւ յաղօթել ... զնոսա] եւ աղօթէին անդադար. եւ տեսանէին ի տեսլեան զՓրկիչն որ քաջալերէր զնոսա, որով զօրացան յոյժ B || 5 ի Կեսարիոյ] ի Կեսարիա B || 9 խորտակել] հարկանել B — զօրականքն] շփոթեալ եւ շուարեալ *add.* B || 10 սրբոցն] եւ վրիպեալ ի խուձապանաց *add.* B || 11 արկին] յուղարկեցին B — եւ յաղօթել ... եւ ասէ] ուր դարձեալ տեսին զՓրկիչն յանուրջս որպէս յարթնութեան որ ասէր B.

Le juge Agricola les conduisit à la ville de Sébaste et les pressa fortement d'immoler aux idoles, mais il ne put nullement les séparer de la foi au Christ. Il les fit jeter en prison, et pendant qu'ils priaient, le Sauveur leur apparut et les encouragea.

Huit jours après, le duc étant arrivé de Césarée, ils siégèrent ensemble au tribunal (le juge et lui); ils firent comparaître les (martyrs), et les interrogèrent au sujet de * la foi au Christ s'ils la reniaient et immolaient aux idoles. Les saints, comme d'une seule bouche, réprouvèrent, par des paroles divines, l'erreur athée des idolâtres.

* A fol. 203 r° b.

Ils ordonnèrent de leur briser la bouche à coups de pierres, mais les soldats se mirent à se lapider les uns les autres. Ayant saisi une pierre, l'exécrable duc la jeta contre les saints, mais il atteignit le juge et lui cassa la figure. On les jeta en prison; or pendant qu'ils priaient, le Sauveur leur apparut de nouveau et leur dit : « *Celui qui croit en moi, même s'il meurt, sera vivant*[1]. Prenez courage et ne craignez point les tortures qui ne sont que pour un moment; patientez un peu et vous recevrez des couronnes du ciel. »

1. Jean, xi, 25.

Եւ ընդ առաւօտն կացուցին զնոսա առաջի բռնաւորին, եւ ասեն. Զոր ինչ առնելոց էք՝ արարէք, զի մեք զՔրիստոս ոչ ուրանամք ։ Յայնժամ կապեցին չուանօք զպարանոց եւ զձեռս նոցա, եւ տարան զամենեսեան ի լիճն, եւ ընկեցին մերկս ի մէջ ջրոցն յաւուրս ձմերայնոյ ։ Եւ սառուցեալ յոյժ լճին պատառեցան մարմինք նոցա ի խիստ սառուցմանէն, եւ հեղոյր արիւնն ի վերայ ոտից իւրեանց յառաջին պահու գիշերոյն, եւ սուրբքն յաղօթից ոչ դադարէին ։

Մի ոմն ի նոցանէ ոչ կարաց ժուժել յուժգին սառուցմանէն, ելեալ ի լճէն եմուտ ի բաղանիսն զոր պատրաստեցին նոցա անօրէնքն, եւ առժամայն ի ջերմութենէ բաղանեացն լուծեալ հալեցաւ ։

* Եւ յերրորդ ժամու գիշերոյ ծագեաց ի վերայ նոցա արեւ որպէս յամարայնոյ ի ջերմութենէ հալեցան սառուցեալ ջուրքն ։ Եւ մի ոմն ի զօրականացն որք պահէին զսուրբսն յարթնութեան էր, եւ նայէր թէ ուստի իցէ լոյսն ։ Եւ տեսանէ երեսուն եւ ինն պսակս իջեալ ի վերայ գլխոց մարտիրոսացն, եւ գիտաց եթէ որ փախեաւն ի բաղանիսն՝ ի թիւ քառասնիցն ոչ դասեցաւ, մերկացաւ զհանդերձսն փութեաց ի ներքս ի լիճն, եկաց ի մէջ սրբոցն, աղաղակեաց եւ ասէ. Քրիստոնեայ եմ ։ * A fol. 203 v° a.

Եւ ընդ առաւօտն հանին զնոսա ի լճէն յեզր, եւ հատին բրօք զանձինս եւ զոլորս

1 բռնաւորին] բռնաւորայ B || 4 ձմերայնոյ] ձմերայնի B || 9 հալեցաւ] եւ եհան զոգի B || 10-11 արեւ ... ջուրքն] ծառագայթ Փրկչին որպէս յարեգակնէ ամարայնոյ, եւ եղկեցան սառնամանիքն B || 14 մերկացաւ] մերկացեալ B || 15 աղաղակեաց եւ ասէ] աղաղակելով B || 16 ի լճէն յեզր] յեզր լճին B.

Au matin on les présenta au tyran et (les saints) dirent : « Ce que vous avez à faire, faites-le; car nous ne renions point le Christ. » On leur lia alors avec des cordes le cou et les mains et on les amena tous au lac; on les jeta nus à l'eau par des jours d'hiver. Le lac étant fortement gelé, leurs corps furent déchirés par la forte gelée et le sang se répandit sur leurs pieds dès la première heure de la nuit; mais les saints ne cessèrent point de prier.

L'un d'eux ne put résister à la forte gelée, sortit du lac et se rendit aux bains qu'avaient préparé les impies, mais aussitôt par la chaleur des bains il se décomposa et fondit.

* A la troisième heure de la nuit, le soleil se leva sur eux comme pendant l'été et les eaux glacées fondirent par la chaleur. Un des soldats qui gardaient les saints était en éveil et regardait d'où venait la lumière. Il aperçut trente-neuf couronnes descendues sur la tête des martyrs, comprit que celui qui s'était rendu aux bains n'était pas mis au nombre des quarante, ôta ses vêtements, courut au milieu du lac, se mit au milieu des saints, cria et dit : « Je suis chrétien. » * A fol. 203 v° a.

Au matin on les tira du lac sur le rivage; on leur brisa cruellement le

նոցա ջարդեցին սաստիկ. եւ առ հասարակ ի միասին աւանդեցին զհոգիս իւրեանց Մարտի Թ ։ Բայց մի ոմն որոյ անունն էր Մելիտոն՝ դեռ եւս կենդանի էր. եւ մայրն աղաչէր զնա եւ խրատ տայր. Քաղցրիկ որդեակ իմ, սակաւիկ մի համբերեա եւ կատարեսցիս ընդ սրբոցն. եւ մի երկնչիր զի Քրիստոս եկեալ է քեզ յօգնականութիւն ։

Եւ զօրականքն եկին եւ բերին սայլս, եդին զմարմինս նոցա ի վերայ զի տարցեն յայրումն, եւ զՄելիտոն զի դեռ եւս կենդանի էր թողին ։ Եւ մայրն բարձեալ յուսն զորդին ընթանայր զկնի սայլիցն. եւ նոյնժամայն ի վերայ ուսոյ մօրն աւանդեաց զհոգին իւր, եւ ընկէց զնա մայրն ի վերայ այլ սրբոցն ։ Եւ յորժամ այրեցին զմարմինս նոցա

* A fol. 203 v° b. ընկեցին ի * մերձակայ գետն, եւ ամենեւին ոչ ցրուեցան այլ ի միում տեղւոջ ժողովեցան ։

Եւ յետ երից աւուրց երեւեցան սուրբքն Սեբաստիոյ եպիսկոպոսին Պետրոսի եւ ասեն. Պահեալ կան մարմինք մեր յայս նիշ տեղի ի մերձակայ գետն, եկ եւ հան զմեզ ։ Եւ առեալ եպիսկոպոսին գաղտ զուխտ եկեղեցւոյն գնաց ի գիշերի յեզր գետոյն, եւ փայլէին նշխարք սրբոցն ի մէջ ջրոցն որպէս աստեղք ։ Ժողովեցին զնոսա եւ եթէ մնացեալ էր ուրեք ի նշխարացն՝ ի ճաճանչից փայլմանցն գտանէին. եւ առեալ եդին ի տապանս ։

1 իւրեանց] առ Աստուած՝ Արեգի ամսոյ Ը եւ *add.* B || 5 եկին եւ *om.* B || 7 ի վերայ ուսոյ մօրն] ուրախութեամբ B || 8 այլ սրբոցն] սայլիցն B || 9 ընկեցին] ձգեցին B — այլ] աստուածային խնամօքն *add.* B — ժողովեցան] ի խաղ մի գետոյն *add.* B || 11 յայս նիշ ... հան զմեզ] ի գետն, երթիջիր յայս նիշ տեղի եւ հան զմեզ B || 14 փայլմանցն *om.* B — տապանս] պատուով *add.* B.

corps et les chevilles à coups de gros bâtons et tous rendirent leur âme ensemble le 9 mars. Mais un seul, dont le nom était Méliton, était encore vivant; sa mère le priait et le conseillait : « Mon tendre enfant, patiente un peu et tu seras exécuté avec les saints; ne crains point, car le Christ est venu à ton secours. »

Les soldats arrivèrent avec des chariots, chargèrent les corps pour les emmener brûler, et laissèrent sur place Méliton, car il était encore vivant. La mère, ayant chargé son fils sur son épaule, se mit à courir après les chariots, et celui-ci aussitôt, sur les épaules de sa mère, rendit son âme; sa mère le jeta sur les autres saints. Lorsqu'on eut brûlé leurs corps, on les

* A fol. 203 v° b. jeta dans le cours d'eau * voisin, mais ils ne se séparèrent aucunement et se rassemblèrent dans un même endroit.

Trois jours après, les saints apparurent à Pierre, évêque de Sébaste, et lui dirent : « Nos corps se trouvent conservés à tel endroit dans le fleuve proche, va et retire-nous ». Ayant pris secrètement le clergé, l'évêque se rendit de nuit au bord du fleuve où les restes des saints brillaient au milieu des eaux comme des étoiles. Ils les ramassèrent, et si quelques morceaux étaient restés quelque part, on les retrouva par l'éclat des rayonnements, on les prit et on les mit dans des tombeaux.

Արեգի Բ եւ Մարտի Ժ ։ Վկայաբանութիւն սրբուհւոյն Թէոդոսեայ ։

Երանելին Թէոդոսիա աղախինն Քրիստոսի էր ի քաղաքէն Տիւրոսի, քրիստոնեայ հաւատով, եւ էր ամաց ութ եւ տասնից ։ Եւ կացեալ առաջի Ուրբիկիոյ իշխանին՝ խոստովանեցաւ զՔրիստոս, եւ զկռս ոչ եպագ երկիր, եւ ոչ զոհեաց ։ Տանջեցին զնա ուժգին եւ ընկեցին ի հուր, եւ հանգեաւ ի Քրիստոս բարի խոստովանութեամբ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Սիւքիոսի ։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ հրամայեաց Մաքսիմիանոս կռապաշտ արքայն, զի որք իցեն քրիստոնեայք յիւրում արքայական տանն՝ լուծցեն զգօտիս իւրեանց եւ անկանիցին ի պատուոյն եւ ելցեն *յարքունեացն ։ Եւ բազումք կամաւորութեամբ վասն * A fol. 204 r° a. սիրոյն Քրիստոսի լուծին զգօտիս իւրեանց, թողին զպատիւս եւ ելին արտաքս ։

Եւ տեսեալ զՍիւքիոս բարկացաւ զի գլուխ էր մեծ իշխանացն, հրամայեաց մերկացուցանել ի պատուական հանդերձիցն, եւ զգեցուցանել նմա կանացի անարգ

1 Վկայաբանութիւն] Վկայութիւն B — Թէոդոսեայ] Տիւրացւոյն *add.* B || 4 Տանջեցին ... հուր] Եւ իշխանն հրամայեաց եւ նախ տանջեցին զնա ուժգին բրօք եւ արջառաջլօք. եւ իբրեւ ոչ զոհեաց՝ կապեցին զձեռսն եւ զոտսն եւ ընկեցին ի ծով B || 6 Սիւքիոսի] իշխանի ։ Սա էր ի ժամանակս Մաքսիմիանոսի թագաւորի եւ *add.* B || 8 արքայական] արքունական B.

2 AREG, 10 Mars.

Martyre de sainte Théodosie.

La bienheureuse servante du Christ Théodosie était de la ville de Tyr, de foi chrétienne; elle avait dix-huit ans. Mise en présence du prince Urbicius, elle confessa le Christ, n'adora pas les dieux et ne leur immola point. On la tortura brutalement, on la jeta dans les flammes et elle reposa dans le Christ en bonne confession.

En ce jour martyre de saint Hésychius.

En ces jours-là, l'empereur idolâtre Maximien ordonna que tous ceux qui seraient chrétiens dans sa maison impériale auraient à défaire leur ceinturon, seraient déchus de leurs honneurs et devraient quitter * le palais * A fol. 204 r° a. impérial. Beaucoup, volontairement pour l'amour du Christ, délièrent leur ceinturon, abandonnèrent les honneurs et s'en allèrent.

(L'empereur), voyant Hésychius (*Siukhios*), se mit en colère parce qu'il était le chef des grands dignitaires, ordonna de le dépouiller de ses vêtements

հանդերձ. եւ նախատելով անարգեալ զնա առ աղախնայս զի վաստակեսցի իլիկ եւ ոստայն : Եւ բազումք ի սիրելեաց իւրոց գային առ նա ի տեսութիւն : Եւ լուեալ Մաքսիմիանոսի կոչեաց առ ինքն եւ ասէ. Ով մագիստրէ, ընդէ՞ր թողեր զպատիւն քո եւ լսող լինիս քրիստոնէից. միթէ կարող են դոքա պատիւ տալ քեզ՝ զոր ես ետու : Ասէ սուրբն Ոխւքիոս. Քո պատիւդ առ ժամանակ մի է՝ բայց խոստովանութիւնն Քրիստոսի յաւիտենական շնորհ է եւ պատիւ :

Եւ զայրացաւ յոյժ եւ հրամայեաց եւ կապեցին երկանաքար ծանր ի պարանոց նորա եւ ընկեցին ի գետն որ կոչի Որէնդին. եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս բարի խոստովանութեամբ Մարտի Ժ :

* B p. 114 a. [B * Յայսմ աւուր վկայութիւն եւ տօն սուրբ վկային Քրիստոսի Ամենաւագին :

Երանելին այս՝ էր ի գաւառէն Դերջանու, ի գեղջէն Կարենբերդակ, այր աշխարհիկ եւ երկրագործ, գեղեցիկ դիմօք եւ վայելուչ հասակաւ՝ ուժեղ եւ զօրաւոր մարմնով : Եւ ինքն էր բարեպաշտ եւ երկիւղած յԱստուծոյ եւ բարի * ծնողաց զաւակ. անուն հօր նորա էր Թիմեր, եւ մօրն Զամենտիկին :
* B p. 114 b.

Սա ունէր այլազգւոյ ումեմն սակաւ ինչ պարտս եւ նա եկեալ նեղէր զսուրբն, եւ

3 առ ինքն] առաջի իւր B — մագիստրէ] մագիստրոս Իսիքիէ B || 6 շնորհ է եւ պատիւ *om.* B || 7 յոյժ] զատաւորն *add.* B || 8 Քրիստոս] Աստուած *add.* B || 9 խոստովանութեամբ] Արեգի Ի եւ *add.* B.

précieux, de lui passer des vêtements méprisables de femme et, après l'avoir insulté, il l'envoya parmi ses servantes pour qu'il s'occupât à filer et tisser. Beaucoup de ses amis vinrent le visiter. Ce qu'ayant entendu, Maximien le fit appeler et lui dit : « O magister (*Magistrē*) [1], pourquoi as-tu abandonné ton grade et as-tu écouté les chrétiens? Sont-ils capables de te donner les honneurs que je t'ai donnés? » Saint Hésychius lui répondit : « Tes honneurs ne durent qu'un temps, mais la confession du Christ est une grâce et un honneur éternels. »

(L'empereur) fut violemment irrité et il ordonna de lui attacher au cou une meule très lourde et de le jeter dans l'Oronte (*Orēntin*). C'est ainsi qu'il mourut dans le Christ en bonne confession le 10 mars.

* B p. 114 a. [B * En ce jour martyre et fête du saint martyr du Christ Aménavag.

Ce bienheureux était de la province de Dertchan, du village de Karenberdak, homme marié et laboureur, de belle figure, d'une taille élégante, fort
* B p. 114 b. et puissant de corps. Il était pieux et craignant Dieu, fils de bons * parents. Le nom de son père était Thimer, celui de sa mère Zamentikin.

Il avait contracté quelque petite dette envers un certain musulman [2], qui

1. *Magister militum*, grade d'Hésychius. — 2. Le mot arménien signifie exactement païen ἐθνικός; mais il s'agit d'un musulman, comme on le verra dans la suite.

զգրաստն բռնութեամբ բարշեալ տանէր իբրեւ գրաւական : Ասէ Ամենաւագ ցեղբայր իւր. Մի թողուր տանել զգրաստն, բայց լիցի քոն թէ այլազգւոյն : Ասէ եղբայրն. Ոչ է ինձ պիտոյ : Եւ բարկացեալ Ամենաւագն ասէ. Որպիսի քրիստոնէութիւն է այդ ես ոչ գիտեմ :

Յայնժամ ասէ այլազգին ցԱմենաւագն. Ահա ոչ հաճեցար դու ընդ քրիստոնէութիւն, այժմ ընկալար զայլազգութիւն. եւ կային վկայք եթէ ուրացաւ զՔրիստոս : Զայս լուեալ երկեաւ, եւ փախուցեալ թաքեաւ ժամանակս ինչ, եւ դարձեալ եկն ի գիւղն իւր Կարենբերդակ, եւ եկաց անդ աւուրս ինչ : Եւ տեսեալ թէ այլազգիքն ոչ դադարին ի խնդրելոյ՝ եւ ինքն ոչ կարէ մնալ թաքուն, գնաց առ քահանայն եւ խոստովան եղեւ զմեղս իւր, եւ դաւանեաց զՀայր, եւ զՈրդի եւ զՀոգին սուրբ, հաղորդեցաւ ի մարմնոյ եւ յարենէն Քրիստոսի, եւ զինեալ զինքն հոգեւոր զինուք պատրաստ եղեւ ի պատերազմ :

Ազդ եղեւ իշխանին որոյ անուն էր Ամիր Մահմուտ, եւ դատաւորին որ կոչէր Ամիր Հասան՝ որ ծարաւի էր արեան քրիստոնէից, եւ առաքեալ զօրականս եւ տարան ի գեղաքաղաքն եւ կացուցին յատեան առաջի իշխանին : Ասէ իշխանն. Դու ընկալեալ ես զայլազգութիւն : Եւ նա ասէ. Ես քրիստոնեայ եմ : Եւ վկայքն ասէին թէ. Ուրացաւ զՔրիստոս :

Յայնժամ իշխանն առաքեաց առ դատաւորն, եւ նա ասէ. Հաստատո՞ւն կաս ի

vint harceler le saint et, lui ayant enlevé de force son âne, l'emmena comme gage. Aménavag dit à son frère : « Ne laisse point enlever l'âne, qu'il soit à toi plutôt qu'au musulman. » Le frère lui répondit : « Je n'en ai point besoin. » Aménavag, irrité, lui répondit : « Quel esprit chrétien est-ce cela, je l'ignore? »

Alors le musulman dit à Aménavag : « Tu n'es pas satisfait du christianisme, tu viens d'accepter l'islamisme! » Et des témoins se levèrent pour témoigner qu'il avait renié le Christ. L'ayant appris, (Aménavag) prit peur, s'enfuit et se tint caché pour quelque temps, puis revint à son village de Karenberdak et y séjourna quelque temps. Mais voyant que les musulmans ne cessaient pas de le rechercher et qu'il ne pouvait rester caché, il alla trouver le prêtre, lui avoua ses péchés et confessa le Père, le Fils et le Saint-Esprit, communia au corps et au sang du Christ, et, s'étant muni d'armes spirituelles, se trouva prêt au combat.

On le dénonça au prince, dont le nom était Amir Mahmoud et au juge qui s'appelait Amir Hassan et qui avait soif du sang des chrétiens; on envoya des soldats qui l'amenèrent au bourg et le présentèrent au tribunal du prince. Le prince lui dit : « Tu as accepté l'islamisme. » Il répondit : « Je suis chrétien. » Mais les témoins disaient : « Il a renié le Christ. »

Le prince le renvoya au juge, qui lui demanda : « Es-tu fidèle à ta pro-

խոստման քում : Ասէ սուրբն. Ոչ գիտեմ զինչ իցէ խոստումն իմ : Ասէ դատաւորն. Յանձն առեալ ես ընդունիլ զայլազգութիւն : Եւ նա ասէ. Հայ եմ ազգաւ եւ հաւատով քրիստոնեայ :

* B p. 115 a. Եւ հրամայեաց եւ արկին ի * բանդ եւ զաւուրս երկուս ոչ ետուն նմա հաց եւ ջուր. եւ կայր անդադար յաղօթս : Եւ դարձեալ յետ երկուց աւուրց կոչեաց զնա դատաւորն եւ ասէ. Ուրացի՛ր զՔրիստոս, ապա թէ ոչ՝ սպանանել տամ զքեզ եւ քարկոծել : Եւ նա ասէ. Ամենայն ազգն իմ քրիստոնեայ է, եւ ես զիմ հօրն եւ զմօրն հաւատն ունիմ եւ քրիստոնեայ եմ : Ասէ դատաւորն. Դու դարձեալ ես յայլազգութիւն եւ ընդէր քրիստոնեայ կեաս : Ասէ վկայն Քրիստոսի. Ես հայ եմ, զՀայրն հաւատամ եւ զՈրդին խոստովանիմ : Յայնժամ ասէ դատաւորն. Հայհոյեաց. ընդէ՞ր լսէք, խցէք զականջս ձեր եւ հարէք : Եւ ամբոխն աղաղակէր. Հրաման է իշխանին զի մահու մեռանիցի : Եւ այլք ասէին թէ. Ուրացաւ զՔրիստոս առաջի իշխանին. եւ ջանային խախտել ի հաւատոցն Քրիստոսի :

Եւ դարձեալ ասէ դատաւորն. Ուրացի՛ր զՔրիստոս զի ապրեսցիս. եւ բազում պարգեւս խոստանայր, երիվար, արծաթ եւ ոսկի եւ հանդերձս : Եւ այլազգիքն յամենայն կողմանէ խթէին եւ ասէին. Միանգամ ասա՛ դառնամ եւ ապրեաց, եւ յետոյ զքո

messe? » Le saint lui répondit : « Je ne sais ce qu'est ma promesse. » Le juge lui dit : « Tu t'es engagé à accepter l'islamisme. » Il lui répondit : « Je suis arménien de nation [1] et de foi chrétienne. »

* B p. 115 a. Il ordonna de le jeter * en prison et pendant deux jours on ne lui donna ni pain ni eau; mais il se tint continuellement en prières. De nouveau, après deux jours, le juge le convoqua et lui dit : « Renie le Christ, sinon je te fais tuer et lapider. » Il lui répondit : « Toute ma nation est chrétienne; j'ai la foi de mon père et de ma mère et je suis chrétien. » Le juge lui dit : « Tu t'es converti à l'islamisme, comment vis-tu en chrétien? » Le martyr du Christ lui répondit : « Je suis arménien; je crois au Père et je confesse le Fils. » Le juge dit alors : « Il a blasphémé! Comment pouvez-vous l'écouter? Bouchez vos oreilles et frappez-le. » La foule cria : « C'est l'ordre du prince, qu'il soit mis à mort. » D'autres disaient : « Il a renié le Christ devant le prince; » et ils cherchaient à l'ébranler de la foi au Christ.

Le juge lui dit encore : « Renie le Christ pour que tu sois sauvé. » Et il lui promettait beaucoup de présents, des chevaux, de l'argent, de l'or et des vêtements. Les musulmans le harcelaient de tous côtés et lui disaient : « Dis une fois : Je me convertis; et tu auras la vie sauve, ensuite tu suivras ta

1. Au sens juridique de ce mot, désignant les communautés non musulmanes vivant en pays musulman.

հաւատն պաշտեսցիր : Եւ բազում քաղցր եւ պատրողական բանիւք ջանային մոլորեցուցանել ի հաւատոյն Քրիստոսի :

Ասէ Ամենաւագ. զՔրիստոս Աստուած պաշտեմ, զԵրրորդութիւնն եւ զմի աստուածութիւնն հաւատամ : Եւ յորժամ լուան զանունն Քրիստոսի՝ ամենեքեան վկայէին թէ. Մահու արժանի է զի հայհոյեաց : Եւ յորժամ դատաւորն վճռեաց թէ մահապարտ է, յարուցեալ Ամենաւագն համբուրեաց զվկայսն եւ ասէ. Սպանէք : Եւ պատեալ ամբոխն շուրջանակի՝ կալեալ զհերացն եւ զհանդերձիցն հարկանէին մեղմագոյն բռամբ, եւ տանէին ի տեղի սպանմանն, զի յերկիւղէն զարհուրեալ ուրասցի. եւ զհանդերձն իւր զգլխովն արկանէին, եւ դարձեալ աղաղակէին առ դատաւորն եւ առ մեծամեծսն * եւ ասէին. Դարձաւ յայլադաւանութիւն մի հարկանէք : * B p. 115 b.

Եւ ընթացեալ դատաւորն մերձ՝ ասէ. հաւատա՞ս եւ դաւանս յայլադաւանութիւն : Եւ ծառայն Քրիստոսի աղաղակեաց. Քրիստոնեայ եմ եւ զՔրիստոս Աստուած հաւատամ : Եւ բարկացեալ դատաւորն խնդրեաց քար, եւ եհար ուժգին զգլուխն. եւ ասէ ամենեցուն. Քարկոծեցէք : Եւ սկսան քարկոծել, եւ ոմանք դաշնակաւ խոցեցին զկողսն, եւ այլ ոմն եհար ուժգին զգլուխն երկաթի ուռամբ եւ եհեղ զուղեղ գլխոյն. եւ ամենայն բազմութիւնն քարաձիգ լինէին մինչեւ ծածկեցաւ մարմինն ի քարանցն : Եւ այսպէս ճշմարիտ խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Մարտի Ժ. յուրբաթի օր ի ժամ խաչելութեանն Քրիստոսի եւ մինչեւ յիններորդ ժամն քարկոծեալ եղեւ :

foi. » Ils cherchaient par beaucoup de paroles douces et mensongères à le détourner de la foi au Christ.

Aménavag leur répondit : « Je sers le Christ Dieu, je crois à la Trinité et à la divinité une. » Lorsqu'ils entendirent le nom du Christ, tous témoignèrent qu'il était digne de la mort pour avoir blasphémé. Et quand le juge eut décrété qu'il était condamné à mort, Aménavag se leva, embrassa les témoins et dit : « Tuez. » La foule l'entoura, le saisit par les cheveux et par les vêtements et lui donna des coups de poing pas trop forts, et le conduisit à l'endroit d'exécution pour qu'il reniât, saisi de crainte; on lui retourna ses vêtements sur la tête et on cria de-nouveau au juge et aux fonctionnaires : * « Il s'est converti à l'islamisme, ne frappez pas! » * B p. 115 b.

Le juge accourut auprès de lui et dit : « Crois-tu et es-tu converti à l'islamisme? » Le serviteur du Christ cria : « Je suis chrétien et je crois au Christ Dieu. » Le juge, irrité, saisit une pierre et en frappa brutalement la tête, puis il dit à tous : « Lapidez-le. » Ils se mirent à le lapider, d'autres lui blessèrent les côtes à coups de couteaux, un autre le frappa vigoureusement à la tête avec un marteau de fer et répandit la cervelle de la tête; toute la foule le lapida jusqu'à ce que son corps fût couvert de pierres. C'est ainsi qu'il rendit son âme à Dieu en vraie confession le 10 mars, un jour de vendredi, à l'heure de la crucifixion du Christ; il fut lapidé jusqu'à la neuvième heure.

Եւ հանեալ անտի մերկացուցին զհանդերձն եւ կապեալ պարան յոտս՝ քարշել տային զքրիստոնէիցն բռնութեամբ յերկիր ի վերայ երեսաց, եւ ամբոխն զկնի ընթանային եւ ամենեքեան հարկանէին զմեռեալ մարմինն. Եւ մեզ մասն լիցի, ասէին : Որպէս ասէ Տէրն. Եկեսցէ ժամանակ որ սպանանիցեն զձեզ՝ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ : Որ եւ կատարեցաւ այս առ սուրբ վկայն Քրիստոսի Ամէնաւագ :

Եւ զերիս աւուրս կացեալ անթաղ՝ գազանք կամ թռչունք ոչ մերձեցան առ սուրբ մարմինն : Եւ այլազգիք կալեալ զշունս տանէին ի վերայ մարմնոյն, եւ տեսեալ զսուրբ մարմինն յետս փախչէին : Եւ ոչ բնաւ նեխեցաւ այլ բուրէր զանուշահոտութիւն : Եւ լոյս պայծառ ծագեցաւ ի գիշերին, եւ իբրեւ ղամբար վառէր ի վերայ մարմնոյն, եւ ձայն երգոյ եւ պաշտամանց լսէին իբրեւ զքահանայից : Եւ տեսեալ այլազգեացն կարծելով թէ քահանայք եկեալ գիշերի զի գաղտաբար գողասցին եւ թաղեսցեն, ընթացան առ մարմինն զի կալցեն զքահանայսն, եւ ոչ զոք տեսին :

* B p. 116 a. * Եւ յետ երից աւուրց՝ յաւուր կիւրակէի եկեալ հաւատացեալքն առին հրաման յիշխանէն եւ ի դատաւորէն եւ եդին պատուով ի գերեզմանի : Եւ այս եղեւ ի թուին Հայոց եօթն հարիւր եւ ութսուն եւ չորս. յորում ժամանակի Յովհաննէս վարդապետ

L'ayant ensuite retiré de là, on le dépouilla de ses vêtements, on lui attacha une corde aux pieds et on obligea les chrétiens à le traîner par terre sur le visage, tandis que la foule courait derrière et que tous frappaient le corps mort en disant : « Nous aussi, nous aurons eu notre part. » Ainsi que dit le Seigneur : *L'heure vient où quiconque vous fera mourir, croira faire à Dieu un sacrifice agréable*[1]. Ceci s'est accompli à l'égard du saint martyr du Christ Aménavag.

Le saint corps étant resté non enterré pendant trois jours, ni les fauves ni les oiseaux ne s'en étaient approchés. Les infidèles se saisirent de chiens qu'ils menèrent auprès du corps, mais à la vue du saint corps ceux-ci s'enfuirent en courant. Il ne subit aucune putréfaction, par contre il exhalait une odeur suave. Une clarté lumineuse jaillit pendant la nuit et comme une torche flambait au-dessus du corps, et des voix de chants et d'offices se firent entendre comme celle des prêtres. Ce que voyant, les infidèles, croyant que des prêtres étaient venus la nuit pour voler secrètement (le corps) et l'enterrer, accoururent auprès du corps pour saisir les prêtres, mais ne virent personne.

* B p. 116 a. * Après les trois jours, le jour du dimanche, les fidèles, étant intervenus, reçurent l'autorisation du prince et du juge et déposèrent (le corps) avec honneur dans le cimetière. Ceci eut lieu l'année sept cent quatre-vingt-quatre de l'ère arménienne, à l'époque où le Vardapet Jean, homme pieux, se trou-

1. Jean, xvi, 2.

այր բարեկրօն գոլով ի գաւառն Դերջան՝ ականատես եւ ականջալուր լինելով գրեալ է պճանկէս վկայութեան սուրբ նահատակին ։ Եւ Կարապետ գրիչ անցուցեալ է ի կարգս գրչագիր այսմաւուրաց այնր ժամանակի, յորմէ, բաց ի յառաջաբանութենէն որ ասէ. Հուր է սէրն Քրիստոսի եւ յոգիս մաքուրս բորբոքի, զայլն ամենայն գրեթէ բառ առ բառ արձանագրեցաք աստ ի փառս Քրիստոսի ։]

Արեգի Գ եւ Մարտի ԺԱ ։ Վկայութիւն սրբոցն Կոդրատոսի, Դիոգինոսի, Կիպրիանոսի, Անեկտոսի եւ Կրիսկինդոսի ։

Այս հինգ վկայքս Քրիստոսի էին ի Կորնթացւոց քաղաքէն՝ յաւուրս Դեկոսի եւ Վաղենտինիանոսի ամպարիշտ արքայիցն ։

Սուրբն Կոդրատոսի մինչդեռ * տղայն էր մեռան ծնողքն, եւ Աստուծոյ հրամանաւն ամպ իջանէր ի վերայ նորա, եւ իբրեւ ստին ջամբէր եւ արբուցանէր ։ Եւ յորժամ աճեաց ժողովէին առ նա այլ սուրբք եւ զքրիստոնէութիւնն հաստատէին յանձինս իւրեանց ։ * A fol. 204 r° b.

Եւ կացեալ առաջի Ասոնայ իշխանին՝ խոստովանեցաւ զՔրիստոս եւ ոչ ուրացաւ

6 սրբոցն] սրբոց մարտիրոսացն — Դիոգինոսի] Դիոնեսիոսի B || 7 Կրիսկինդոսի] որ ի Կորնթոս *add.* B || 9 արքայիցն] եւ Յասոնի դատաւորին Եղլադացւոց *add.* B || 10 մինչդեռ] մատաղ *add.* B || 10-11 եւ Աստուծոյ... արբուցանէր *om.* B || 12 աճեաց] հասակաւ *add.* B — զքրիստոնէութիւնն] ի նմանէ ուսանէին եւ *add.* B || 14-p. 1200, l. 1. Եւ կացեալ . . . զիշխանն] Վասն որոյ կալեալ եղեւ ընդ այլ հինգ սրբոցն՝ Կիպրիանու, Պաւլու, Դիոնէսիու եւ Կրիսկենդու,

vant dans la province de Dertchan, et ayant été témoin oculaire et auriculaire, écrivit le récit du martyre du saint athlète. Le copiste Karapet l'inséra dans l'ordre des synaxaires manuscrits de cette époque, et sauf la préface qui commence par : « L'amour du Christ est un feu qui brûle dans les âmes pures, » nous avons enregistré ici tout le reste presque mot à mot pour la gloire du Christ.]

3 AREG, 11 Mars.

Martyre des saints Codratus, Diogène, Cyprien, Anectos et Crucent.

Ces cinq martyrs du Christ étaient de la ville de Corinthe, aux jours de Dèce et Valentinien, les empereurs impies.

Les parents de saint Codratus (*Kodratios*) moururent pendant qu'il était encore * enfant, et par ordre de Dieu un nuage descendait sur lui et le nourrissait comme un sein et lui donnait à boire. Lorsqu'il fut devenu grand, d'autres saints se rassemblèrent auprès de lui et se raffermirent dans la foi chrétienne. * A fol. 204 r° b.

Mis en présence du prince Jason (*Asonay*), il confessa le Christ et ne renia

զանխիծ հաւատն, այլ աստուածային բանիւք յանդիմանէր զիշխանն ։ Եւ մերկացուցին զսուրբն, եւ գանեցին ուժգին ։ Տարան եւ զայլ սուրբսն առաջի, եւ նոքա նոյնպէս խոստովանեցան զանուն եւ զհաւատն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Եւ բարկացեալ իշխանին հրամայեաց եւ հատին զգլուխս հինգ սուրբ վկայիցն Արեգի Դ եւ Մարտի ԺԱ ։ Եւ բղխեաց ի տեղւոջէն յայնմիկ աղբիւր յստակ եւ ցուրտ. եւ եկեալ քրիստոնէիցն թաղեցին զնոսա ի նշանաւոր տեղւոջ ։

Յայսմ աւուր Սաբաս ստրատելատն երիտասարդ երեսուն եւ ութ ամաց՝ կատարեցաւ ի Հռոմ քաղաքի հրով եւ սրով վասն հաւատոյն Քրիստոսի. ընկեցին եւ յեռացեալ կաթսայ, եւ այլս ընդ այլ եօթանասուն զօրականսն որ նովաւ հաւատացին ի Քրիստոս՝ կատարեցան յԱւրելիանոսէ արքայէն ։

Արեգի Դ եւ Մարտի ԺԲ ։ Վկայութիւն սրբոյն Պիոնի քահանայի Զմիւռնիոյ եկեղեցւոյն ։

Աստուածասէր քահանայն Պիոնիոս էր յաւուրս կայսերն Դեկոսի ։ Եւ

1-2 ...րան առաջի Յոսան իշխանին ։ Եւ սուրբն Կոդրատոս նախ քան զամենեսեան համարձակ ...տովանեցաւ զՔրիստոս, եւ ոչ ուրացաւ զանխիծ հաւատն. այլ աստուածիմաստ բանիւք յանդիմանէր զիշխանն եւ ունայն ցուցանէր զկուռսն B || 3 նոյնպէս] համարձակութեամբ *add.* B || 4-6 Եւ բարկացեալ ... տեղւոջ] Եւ բարկացեալ իշխանին հրամայեաց՝ եւ նախ ձաղկեցին զնոսա ուժգին, եւ յորժամ ոչ հաւանեցան զոհել կռոցն՝ հրամայեաց եւ հատին սրով զպատուական գլուխ սրբոց վկայիցն Քրիստոսի զհնգից. եւ եկեալ քրիստոնէից թաղեցին զնոսա ի նշանաւոր տեղւոջ ։ Կատարի տօն սոցա Արեգի Դ եւ Մարտի ԺԱ, ի փառս Քրիստոսի B || 7 կատարեցաւ] չարչարեցաւ B || 8 վասն հաւատոյն Քրիստոսի *om.* B || 10 յԱւրելիանոսէ արքայէն] սրով B || 13 Դեկոսի] քարոզէր զճշմարիտ հաւատս Քրիստոսի եւ զբազումս ի հրէից եւ ի հեթանոսաց դարձուցանէր *add.* B.

point la foi pure, mais par des paroles divines il réprouva le prince. On dépouilla le saint et on le frappa vigoureusement. On fit comparaître aussi les autres saints, qui confessèrent également le nom et la foi du Christ notre Dieu.

Le prince, irrité, ordonna de trancher la tête aux cinq saints martyrs le 3 areg, le 11 mars. Une source pure et froide jaillit à l'endroit même. Les chrétiens vinrent et les enterrèrent dans un endroit renommé.

En ce même jour le stratélate Sabas, jeune homme de trente-huit ans, fut martyrisé en la ville de Rome par les flammes et le glaive pour la foi au Christ ; on le jeta aussi dans une chaudière bouillante, puis avec d'autres soldats au nombre de soixante-dix, qui, avec lui, avaient cru au Christ tous furent martyrisés par l'empereur Aurélien.

4 areg, 12 Mars.

Martyre de saint Pionius, prêtre de l'église de Smyrne.

Le prêtre ami de Dieu, Pionius, vivait aux jours de Dèce l'empereur

կալան զնա վեց արք, բարձին ի թիկունս իւրեանց եւ տանէին առ դատաւորն * Կինդելիանոս, եւ երանելին Պիոնիոս ոտիւքն հարկանէր զկողս նոցա, եւ աղաղակէր. Քրիստոնեայ եմ եւ ոչ զոհեմ կռոց ձերոց ։ Եւ կացեալ առաջի խոստովանեցաւ զանուն Տեառն Աստուծոյ ։ Եւ եհատ ի վերայ նորա վճիռ եթէ. ԶՊիոնիոս որ կամաւորութեամբ զինքն քրիստոնեայ անուանեաց՝ հրամայեմ կենդանւոյն հրով այրել ։ * A fol. 204 v° a.

Եւ յորժամ գնաց ի տեղին սուրբ քահանայն Պիոնիոս՝ ինքնին ելոյծ զգօտին եւ մերկացաւ ի հանդերձիցն, եւ զաչսն յերկինս համբարձեալ աղօթեաց առ Աստուած մեծաւ գոհութեամբ ։ Եւ դահիճքն բեւեռեցին զձեռս եւ զոտս նորա ի փայտի, եւ բորբոքեցին շուրջ զնովաւ հուր ։ Եւ նորա խցեալ զաչսն եւ ի միտս իւր աղօթէր առ Աստուած. եւ կարծեցին ամբոխն եթէ մեռաւ ։ Եւ յորժամ կատարեաց զաղօթսն՝ ձայնեաց մեծաւ բարբառով. Ամէն, Տէր, ընկալ զոգիս իմ ։ Եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Մարտի ԺԲ ։

Եւ յորժամ շիջաւ հուրն, գնացին քրիստոնեայքն գտին զսուրբ վկայն Քրիստոսի ամբողջ մարմնով եւ պայծառ երեսօք, անկէզ մնացեալ հեր գլխոյն եւ մօրուացն, եւ առաւելապէս հաստատեցան ի հաւատս քրիստոնէութեան անխախտելի ։ Եւ անհաւատքն երկմտեցին ի կռոցն պաշտամանէն ։

3 Խոստովանեցաւ] պայծառ երեսօք *add.* B || 12 Մարտի ԺԲ] եւ Արեգի Դ *add.* B || 13 վկայն Քրիստոսի] քահանավկայն B || 14 անկէզ ... մօրուացն *om.* B || 15 անխախտելի *om.* B || 16 պաշտամանէն] նոյնպէս սպանին յետոյ եւ զընկերս նորա, եւ զբազումս ի քրիստոնէից նահատակեցին պէս պէս տանջանօք *add.* B.

impie. Six hommes le saisirent, le portèrent sur leurs épaules au juge * Cyndélianus; le bienheureux Pionius frappait leurs côtes de ses pieds et criait : « Je suis chrétien et je n'immole point à vos dieux. » Mis en présence (du juge), il confessa le nom du Seigneur Dieu. (Le juge) prononça sur lui cette sentence : « J'ordonne de brûler vivant Pionius qui volontairement s'est avoué chrétien. » * A fol. 204 v° a.

Arrivé à l'endroit (de l'exécution), le saint prêtre Pionius défit lui-même sa ceinture, se dépouilla de ses vêtements, leva les yeux au ciel et pria Dieu avec beaucoup de joie. Les bourreaux clouèrent ses mains et ses pieds à un poteau et allumèrent du feu tout autour de lui. Ayant fermé les yeux, (le saint) priait Dieu en son esprit; et la foule crut qu'il était mort. Mais, lorsqu'il eut terminé sa prière, il s'écria à haute voix : « Amen, Seigneur, reçois mon âme. » Et il rendit son âme à Dieu le 12 mars.

Lorsque le feu se fut éteint, les chrétiens vinrent et trouvèrent le saint martyr du Christ entier de corps, la figure rayonnante; et les cheveux de sa tête et sa barbe (n'étaient) pas brûlés. Ils en furent grandement raffermis dans la foi inébranlable chrétienne. Les infidèles se mirent à douter du culte des idoles.

* A fol. 204 v° b.

* Արեգի Ե եւ Մարտի ԺԳ : Տօն է սրբոց մարգարէիցն Եզեկիելի եւ Եզրի :

Մարգարէն Եզեկիէլ գնաց ընդ ժողովրդեանն ի Բաբելոն զոր տարաւ Նաբուգոդոնոսոր արքայն Բաբելացւոց, եւ անդ առ ափն Քոբրայ գետոյ ետես զտեսիլն՝ զքերովբէսն լծեալ ի կառս եւ զԱստուած ի վերայ աթոռոյն, որք ասէին. Օրհնեալ են փառք Տեառն ի տեղւոջ իւրում : Մարգարէանայր ժողովրդեանն որ ինչ անցք անցանելոց էին ժողովրդեան ընդ նոսա : Յանդիմանէր զժողովուրդն որք կռապաշտ էին յերկրին Քաղդէացւոց, եւ մանաւանդ զցեղն Դանայ :

Եւ Քաղդէացիքն կամէին սպանանել զԵզեկիէլ եւ զամենայն օրինապահսն որ ընդ նմա շրջէին : Եւ նորա բաժանեալ զգետն մեծ՝ անց յայնկոյս ամենայն օրինապահօքն, եւ ի Քաղդէացւոցն որք յանդգնեցան մտանել ի գետն խեղդեցան :

Եւ առաջնորդն ցեղին Դանայ սպան զնա, եւ անդէն թաղեցաւ :

Իսկ Եզր մարգարէ էր անդէն ի Բաբելոն, եւ եկն զկնի Զօրաբաբելի յԵրուսաղէմ, եւ ետես զշինուած տաճարին եւ զամենայն բարութիւնսն զոր արար Աստուած

1 Տօն ... Եզրի] Յիշատակ Եզրի քահանայի հնոյ՝ եւ գրչի օրինացն Աստուծոյ, եւ զրօղի կտակաց մարգարէից սրբոց B || 2-11 Մարգարէն ... թաղեցաւ *om.* B || 12 Իսկ Եզր] Սուրբ քահանայն Եզր B.

* A fol. 204 v° b.

* 5 AREG, **13 Mars.**

Fête des saints prophètes Ézéchiel et Esdras.

Le prophète Ézéchiel s'était rendu à Babylone avec le peuple que Nabuchodonosor, roi des Babyloniens, y avait emmené, et c'est là qu'au bord du fleuve Khabour (*Khorbay*) il eut la vision des chérubins attelés à un char et Dieu sur un trône, (tandis que les chérubins) disaient : « La gloire du Seigneur est bénie en son lieu. » Il prophétisa à la population tous les événements qui devaient arriver au peuple avec eux. Il blâmait ceux du peuple qui étaient idolâtres dans le pays de Chaldée et surtout la tribu de Dan.

Les Chaldéens voulaient tuer Ézéchiel et tous ceux qui observaient les lois et circulaient avec lui. Mais, ayant divisé le grand fleuve, il passa de l'autre côté avec tous les observateurs des lois ; et ceux des Chaldéens qui osèrent pénétrer dans le fleuve, s'y noyèrent.

Le chef de la tribu de Dan le tua ; il fut enterré à l'endroit même.

Le prophète Esdras (*Ezr*) était aussi à Babylone et vint à Jérusalem à la suite de Zorobabel, il y vit la construction du temple et tous les bienfaits

ժողովրդեանն ։ Եւ գրեաց գիրս Զօրաբաբելի եւ Դարեհի եւ ժողովոյն Գոգայ եւ վախճանեցաւ յԵրուսաղէմ եւ թաղեցաւ անդ ։

Իսկ միւս Եզրն որ եւ Սաղաթիելն անուանեցաւ՝ եւ սա էր ի Բաբելոն, եւ սուգ ունէր վասն աւերածին * Սիոնի, որ առաքեաց Տէր զհրեշտակ իւր եւ մխիթարեաց * A fol. 205 r° a.
զնա ։ Եւ սա Հոգւով Աստուծոյ գրեաց զօրէնս եւ զմարգարէս, եւ արար նոր գիրս եւ ուսոյց ժողովրդեան, եւ եսես զդարձ գերոյն, եւ վախճանեցաւ եւ թաղեցաւ անդէն ։

Յայսմ աւուր վարք երանելոյն Գրիգորի Հռոմայ հայրապետին ։

Այս երանելի այրս Գրիգորիոս էր ի Հռոմ քաղաքէն, յաւուրս բարեպաշտ թագաւորին Յուստինիանոսի. եւ էր կրօնաւոր եւ գրագիր եւ հայր վանացն որ կոչի Կլէոսկորի ։

Եւ ի միում աւուր փորձեաց զնա Աստուած, եւ առաքեաց հրեշտակ ի կերպս աղքատի եւ մերկ նաւավարի, եւ անկեալ յոտս նորա խնդրէր ողորմութիւն, եթէ. Ի ծովուն ընկղմեցաւ նաւն իմ եւ կորուսի զամենայն բեռն նաւին եւ զիմն եւ զօտարաց, եւ ոչ ունիմ ինչ տալ նոցա ։ Եւ երանելին Գրիգորիոս ետ նմա վեց դահեկան ։ Եւ

3 անուանեցաւ] կոչիւր B || 12 փորձեաց զնա Աստուած եւ *om.* B — առաքեաց] Աստուած *add.* B.

que Dieu avait accordés au peuple. Il écrivit des lettres à Zorobabel, à Darius et à l'assemblée de Gog. Il mourut à Jérusalem et y fut enterré.

Quant à l'autre Esdras, qui fut aussi nommé Salathiel, il était à Babylone et gardait le deuil de la ruine de * Sion; c'est à lui que le Seigneur envoya * A fol. 205 r° a.
son ange pour le consoler. Il écrivit par l'esprit de Dieu la Loi et les Prophètes, en fit de nouveaux livres et les enseigna au peuple; il vit le retour de la captivité, mourut et fut enterré sur place.

En ce jour vie du bienheureux Grégoire, patriarche de Rome.

Ce bienheureux homme, Grégoire, était de la ville de Rome, aux jours du pieux empereur Justinien; il était religieux, copiste et prieur du couvent nommé *Kléoskor*[1].

Un jour, Dieu le mit à l'épreuve et lui envoya un ange sous la forme d'un matelot pauvre et nu, qui, se jetant à ses pieds, demanda l'aumône (en disant) : « Mon navire s'est perdu en mer, j'ai perdu toute la cargaison du bateau, la mienne et celle des autres, et je n'ai rien à leur donner. » Le bienheureux Grégoire lui remit six écus. Le pauvre revint mendier une

1. Transformation de l'expression : *ad clivum Scauri.*

դարձեալ երկրորդ անգամ աղքատն խնդրէր. եւ նա նոյնպէս ետ նմա վեց դահեկան : Եւ դարձեալ երրորդ անգամ աղքատն եկեալ խնդրէր, եւ նա դահեկան ոչ ունէր ետ նմա արծաթի սկուտեղ :

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղեւ մեռանել Հռոմայ հայրապետին, եւ աստուածային ընտրութեամբն ձեռնադրեցաւ Գրիգորիոս յառաքելական աթոռն : Եւ հրամայեաց ըստ սովորութեանն իւրում կոչել ի սեղանն իւր երկոտասան աղքատս հացակից լինել նմա :

* A fol. 205 r° b. Եւ ի միւսում աւուր * յորժամ նստան՝ տեսանէ սուրբ հայրապետն երեքտասան աղքատս նստեալս ի սեղանին. եւ հարցանէր ցսեղանապետն. Երեքտասան աղքատս կոչեցեր այսօր : Եւ նա ասէ. Ոչ, այլ երկոտասան. եւ ոչ տեսանէր զմինն՝ բայց միայն երանելին Գրիգորիոս, եւ երեւէր նմա երբեմն երիտասարդ՝ երբեմն ծեր : Բուռն եհար երանելին Գրիգորիոս յերեքտասաներորդ աղքատն, եւ մտին ի միասին ի սենեակ իւր, եւ հարցանէր. Ուստի՞ իցես եւ զի՞նչ անուն է քո : Եւ նա ասէր. Ընդէ՞ր հարցանես զանուն իմ : Իմ անունս սքանչելի է, եւ այն աղքատն եմ որոյ ետուր զդանձն եւ զսկուտեղն : Եւ յայնժամ հրամայեաց Աստուած լինել քեզ յաթոռն Պետրոսի՝ Հռոմայ հայրապետ : Ասէ Գրիգորիոս. Ուստի՞ գիտացեր եւ ո՞վ պատմեաց քեզ : Եւ նա ասէ. Ես հրեշտակ եմ Աստուծոյ ամենակալին, եւ հրաման առի յայսմ օրէն որ ընդ քեզ

11 եւ երեւէր ... ծեր *om.* B || 12 երանելին *om.* B.

deuxième fois; il lui donna encore six écus. Le pauvre revint mendier une troisième fois, et, comme il n'avait plus d'écus, (Grégoire) lui donna un plateau en argent.

En ces jours-là le patriarche de Rome vint à mourir et par élection divine Grégoire fut sacré patriarche sur le siège apostolique. Il ordonna, selon la coutume, d'inviter douze pauvres à sa table pour partager son repas.

* A fol. 205 r° b. Le lendemain, * lorsqu'on se mit à table, le saint patriarche aperçut treize pauvres assis à table. Il demanda au maître d'hôtel : « As-tu convoqué treize pauvres aujourd'hui ? » Il répondit : « Non, douze. » Car il ne voyait pas l'un (d'eux), que seul le bienheureux Grégoire apercevait, le voyant tantôt jeune et tantôt vieux. Le bienheureux Grégoire saisit le treizième pauvre et pénétra avec lui dans sa chambre; puis il l'interrogea : « D'où viens-tu et quel est ton nom? » Il lui répondit : « Pourquoi demandes-tu mon nom? Mon nom est merveilleux, et je suis le pauvre auquel tu as donné de l'argent et le plateau. C'est alors que Dieu a ordonné que tu deviennes, sur le siège de Pierre, patriarche de Rome. » Grégoire lui dit : « Comment as-tu su cela et qui te l'a raconté? » Il lui répondit : « Je suis l'ange du Dieu tout-puissant et j'ai reçu l'ordre à partir de ce jour d'être constamment auprès de toi;

լինիմ հանապազ՝ եւ զամենայն խնդիրս քո ես վերաբերեմ առ Աստուած ։ Եւ յարուցեալ Գրիգորիոս երկիր եպագ նմա, եւ նա աներեւոյթ եղեւ ։

Այս երանելւոյս՝ շնորհս գիտութեան տուաւ յԱստուծոյ. եւ մեկնեաց աստուածաշունչ գիրս զՀին եւ զՆոր կտակարանս. գրեաց եւ ի Յոբ ճառս քառասուն, եւ այլ գիրս գրեաց հռոմայեցերէն, զոր ի յունական լեզուն Դիալոգոս կոչեն զնոցին ։ Գրեաց եւ այլ գիրս ի վարս եւ ի ճգնութիւն սրբոց հարանց եւ եպիսկոպոսաց ։ Եւ յորժամ գրէր զճառսն՝ տեսանէր Պետրոս աշակերտն իւր եւ նախասարկաւագն աղաւնի սպիտակ * ի վերայ շրթանցն ։ * A fol. 205 v° a.

Այս մեծ հայրապետս Գրիգորիոս տեսանէր զզարմանալի շէնս զոր շինեալ էր Տրայիանոս կռապաշտ արքայն, զկամուրջս յանհուն եւ ի մեծամեծ գետսն, եւ սալարկս ի ձորս եւ ի քաղաքամէջ եւ ի տղմային տեղիս պողոտայիցն, եւ զարմանայր յոյժ, եւ խնդրէր յԱստուծոյ ներումն Տրայիանոսի, եւ ասէր եթէ. Առանց Աստուծոյ հրամանի այսպիսի անպատմելի գործս ոչ կարէր առնել ։ Եւ ի բազում ժամանակս արտասուօք խնդրէր փրկութիւն Տրայիանոսի ։ Եւ եկեալ առ նա հրեշտակ Տեառն ասէ. Վասն քո խնդրոյն Աստուած ներումն շնորհեաց նմա, բայց վասն այլ կռապաշտ մարդոյ զԱստուած մի աղաչեսցես՝ զի ոչ լսէ քեզ ։

5 Դիալոգոս] տիալոգոս կոչեն զնոցին, որ ի հայ բարբառ տրամախօսութիւն լսի B || 7 աղաւնի սպիտակ ի վերայ շրթանցն] դ՞ոգին սուրբ իբրեւ աղաւնի սպիտակ ի վերայ շրթանց սրբոյն Գրիգորի B || 9-16 Այս մեծ . . . լսէ քեզ *om.* B.

c'est moi qui porte à Dieu toutes tes demandes. » Grégoire, s'étant levé, se prosterna devant lui, mais il devint invisible.

Les grâces de la science furent accordées par Dieu à ce bienheureux, et il commenta les écritures inspirées de Dieu, l'ancien et le nouveau testament. Il écrivit aussi quarante homélies sur Job et d'autres écrits en langue romaine, écrits appelés en langue grecque Dialogues (*Dialogos*). Il écrivit encore des livres sur les vies et l'ascétisme des saints pères et évêques. Lorsqu'il composait ses homélies, Pierre son disciple et archidiacre apercevait une colombe blanche * sur ses lèvres. * A fol. 205 v° a.

Ce grand patriarche Grégoire, à la vue des merveilleuses constructions qu'avait édifiées l'empereur idolâtre Trajan, les ponts jetés sur d'immenses et très grands fleuves, les routes dallées dans les vallées, les voies à travers les pays boueux et marécageux, s'émerveillait fort et priait Dieu de pardonner à Trajan, et il disait que sans la permission de Dieu (Trajan) ne pouvait pas exécuter tant d'œuvres inénarrables. Il demanda longtemps avec larmes le salut de Trajan. L'ange du Seigneur vint à lui et lui dit : « Sur tes instances Dieu lui a accordé le pardon, mais ne prie plus Dieu pour d'autres hommes idolâtres, car Il ne t'exaucera point. »

Եւ յետ մահուան երիցս երանեալ հայրապետին Գրիգորի՝ Պետրոս նախասարկաւագն որ էր աշակերտ իւր՝ գնաց յարեւմուտս եւ մկրտեաց բազում անհաւատ ազգս, զոր կոչեն Սաքսոն եւ Փրանկս ։ Այս Պետրոս հրամայեաց կանոնք որ յաւուրս քառասներորդ պահոցն՝ յամենայն աւուր կատարեալ պատարագ մատուցանեն, եւ աւետարան ընթեռնուն. եւ շաբաթ օրն ընդ ծոմութեան պահօք ատնիցեն որպէս եւ զայլ հինգ աւուրսն ։ Եւ մինչեւ ցայսօր արեւմուտք զնոյն կարգ պահեն. բայց Կոստանդնուպօլիս եւ այլ երեք աթոռքն ոչ ընկալան այնպէս ։

Եւ հանգեաւ խաղաղութեամբ ի Հռոմ ։ Եւ յետ նորա մահուան գնացին Սաքսոնք
* A fol. 205 v° b. եւ Փրանկք զորս մկրտեաց * նա եւ արարին գաղաղանն արծաթի եւ զարդարեցին ոսկի պատկերօք ։

Եւ ձեռնադրեաց նոցա Հռոմայ հայրապետն եւ ամենայն ազգի եւ գաւառի եպիսկոպոս. եւ լինի մինչեւ ցայսօր ։

Արեգի Զ եւ Մարտի ԺԴ . Վկայութիւն սրբոյն Սաբինոսի ։

Ի ժամանակս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի էր սուրբն Սաբինոս յՆրապօլիսոյ յԵգիպտացւոց երկրէն, նախարար ի մեծ ազգէ, եւ վասն դժնդակ ժամանակաց հալածանացն եկեալ արտաքոյ քաղաքին ի փոքր եւ ի նեղ տան բնակէր ի թաքստի

7 այնպէս *om.* B || 13 սրբոյն] սրբոյ վկային B.

Après la mort du trois fois bienheureux patriarche Grégoire, Pierre l'archidiacre, qui était son disciple, se rendit en occident et y baptisa plusieurs nations infidèles appelées Saxons (*Sakhson*) et Francs (*Franks*). Ce Pierre ordonna par des canons de célébrer une messe complète tous les jours pendant le carême de quarante jours et d'y lire l'évangile, et de faire le samedi de carême comme les autres cinq jours. Jusqu'aujourd'hui l'occident observe ce règlement, mais Constantinople et les trois autres sièges ne l'acceptèrent point.

Il reposa en paix à Rome. Après sa mort, les Saxons et les Francs qu'il
* A fol. 205 v° b. avait baptisés * se rendirent (à Rome) et lui firent un cercueil en argent et l'ornèrent d'images en or.

Le patriarche de Rome leur sacra des évêques pour chaque nation et province; ce qui se fait jusqu'aujourd'hui.

6 AREG, 14 Mars.

Martyre de saint Sabinus.

Aux jours de l'empereur idolâtre Dioclétien, saint Sabinus vivait à Hiéropolis d'Égypte, dignitaire, de famille noble. Mais, à cause des temps durs de persécution, il demeurait dans une petite et étroite maison élevée hors de la ville, caché avec d'autres chrétiens; ils imploraient Dieu avec jeûnes et

ընդ այլ քրիստոնեայս, եւ պահօք եւ աղօթիւք աղաչէր զԱստուած ։ Եւ բազում քրիստոնեայք ըմբռնեցան ի ձեռս անօրինաց, եւ համբաւեցաւ յոյժ անուն Սաբինոսի, եւ յուզմամբ մեծաւ խնդրէին զնա եւ ոչ գտանէին ։

Եւ մի ոմն աղքատ սովոր էր երթալ առ սուրբն եւ մուրանայր. եւ նա յոյժ ողորմէր նմա եւ կերակրէր եւ սիրէր զնա. եւ նորա երթեալ առ զօրականսն ասէ. Զինչ տայք ինձ եւ ես ցուցից զնա ձեզ ։ Եւ նոքա ետուն նմա երկու դահեկան, եւ գնացին զկնի նորա մինչեւ ի տեղին. եւ մտեալ ի տունն հանին զամենեսեան արտաքս եւ հարցանէին. Ով է ի ձէնջ Սաբինոս ։ Եւ նա ասէ. Ես եմ ։ Կապեցին զնա միայն ծանր շղթայիւք եւ տարան * առ Արիանոս դատաւորն. եւ հարցանէր զանունն եւ զշնորհսն ։ Եւ նա ասէ. Քրիստոնեայ եմ եւ կոչիմ Սաբինոս ։ * A fol. 206 r° a.

Ասէ դատաւորն. Ծառա՞յ ես թէ ազատ ։ Սուրբն ասէ. Ազատ եմ եւ բարի մանկութեանս իմոյ զօրական եմ ի գունդս դքսին ։ Ասէ դատաւորն. Եւ զինչ եղեւ քեզ՝ որ թողեր զզօրականութիւնդ ։ Ասէ Սաբինոս. Տեսի զանօրէն գործս թագաւորին ձերոյ եւ զանիրաւ չարչարանս ի ծառայս Աստուծոյ, եւ լաւ համարեցայ բնակել ի տան Աստուծոյ քան ի յարկս մեղաւորաց ։

Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց կախել զնա եւ տանջել, եւ այնչափ տանջեցին զնա մինչեւ գլեցաւ մարմինն. եւ անտի բարձեալ զսուրբն տարան ի

2 անուն] սրբոյն *add.* B || 5 եւ սիրէր զնա *om.* B || 17 մարմինն] անձնն B.

prières. Or beaucoup de chrétiens tombèrent entre les mains des impies, et le nom de Sabinus fut largement divulgué; on le chercha fièvreusement, mais on ne le trouva point.

Un homme pauvre avait l'habitude d'aller auprès du saint pour mendier; celui-ci avait grande pitié de lui, le nourrissait et l'aimait. (Le pauvre) alla trouver les soldats et leur dit : « Que me donnerez-vous, et je vous l'indiquerai? » Ils lui remirent deux écus, le suivirent jusqu'à l'endroit et, ayant pénétré dans la maison, en firent sortir dehors tout le monde en demandant : « Qui de vous est Sabinus? » (Sabinus) leur dit : « C'est moi. » Ils le lièrent, lui seul, avec de lourdes chaînes et le conduisirent * au juge Arianus qui lui demanda son nom et ses titres. Il répondit : « Je suis chrétien et je m'appelle Sabinus. » * A fol. 206 r° a.

Le juge lui dit : « Es-tu esclave ou libre? » Le saint répondit : « Je suis libre et depuis ma jeunesse heureuse je suis soldat dans le régiment du comte ». Le juge lui dit : « Que t'est-il arrivé, pour que tu quittes la milice? » Sabinus répondit : « J'ai vu les œuvres impies de votre empereur et les tortures injustes des serviteurs de Dieu et j'ai préféré demeurer dans la maison de Dieu plutôt que sous les toits des pécheurs. »

Le juge, irrité, ordonna de le suspendre et de le torturer, et on le tortura à tel point que son corps fut mis en lambeaux; de là on transporta le saint

քաղաքն Անտոնինու զկնի դատաւորին՝ զի եւ անդ չարչարեսցէ զնա եթէ ոչ դառնայցէ ի կուռսն :

Եւ յորժամ գնացին բազում հնարիւք ջանաց դատաւորն, եւ ոչ կարաց փոխել զնա յաստուածապաշտ հաւատոյն : Ղամբարօք այրեցին զկողսն եւ զորովայնն. եւ սուրբն լռեալ ոչ ինչ բարբառէր, եւ որպէս զայլոյ մարմնին տանջեալ համարէր : Եհատ ի վերայ նորա վճիռ զի խեղդեսցեն ի գետն :

Եւ յորժամ տանէին՝ գնային զկնի նորա բազումք ի հաւատացելոցն. եւ պատուիրէր նոցա սուրբն հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի, եւ յօժարութեամբ մեռանել
* A fol. 206 r° b. վասն անուան նորա : Եւ զայս ասաց եթէ. * Յիշեցէք յաղօթս ձեր զօր կատարման իմոյ, եւ յերրորդ աւուրն եկեսջիք ի հիւսիսոյ կողմանէ գետոյն եւ գտանիցէք զմարմինս իմ, առջիք եւ թաղեսջիք զնա վիմովն որ յոտս իմ կապեալ է :

Եւ յորժամ տարան առ գետոյն կապեցին վէմ մեծ յոտսն, արկին ի փոքր նաւակ մի : Եւ սուրբն հայեցաւ յերկինս, գոհացաւ զԱստուծոյ եւ փառաւորեաց զանուն նորա՝ որ արժանաւորեցոյց զնա այնպիսի վկայութեամբ մեռանել : Եւ յաղօթելն նորա ընկեցին ի գետն, եւ աւանդեաց զհոգին իւր առ Քրիստոս Մարտի ԺԴ :

Եւ յետ երից աւուրց գնացին եղբարքն գաղտ ի գիշերի՝ ի տեղին յորում հրամայեաց

8 հաւատն] սէրն B || 15 Մարտի ԺԴ] եւ Արեգի Զ *add.* B.

et on l'emmena à la ville d'Antonin[1] à la suite du juge, pour être torturé là aussi s'il ne se convertissait point aux idoles.

Lorsqu'ils y arrivèrent, le juge essaya bien des moyens, mais ne put détourner (le saint) de la foi pieuse. On lui brûla les côtes et le ventre avec des torches allumées. Le saint garda le silence et ne parla pas, mais regardait comme si l'on torturait un autre corps. (Le juge) donna la sentence de le noyer dans le fleuve.

Tandis qu'on le conduisait, beaucoup de fidèles le suivirent; le saint les engagea à demeurer fermes dans la foi au Christ et de mourir avec empresse-
* A fol. 206 r° b. ment pour Son nom. Il leur dit ceci : * « Souvenez-vous dans vos prières du jour de mon martyre et vous reviendrez le troisième jour par le côté nord du fleuve et vous retrouverez mon corps, vous le prendrez et m'enterrerez avec la pierre qui est attachée à mes pieds. »

Lorsqu'ils l'eurent amené au fleuve, ils lui attachèrent une grosse pierre aux pieds et le jetèrent dans une petite barque. Le saint regarda le ciel, rendit grâce à Dieu, glorifia Son nom qui l'avait rendu digne de mourir d'un tel martyre, et pendant qu'il priait, ils le jetèrent dans le fleuve, et il rendit son âme au Christ le 14 mars.

Trois jours après, les frères se rendirent secrètement la nuit à l'endroit

1. C'est-à-dire Antoninoupolis.

սուրբն Սաբինոս, գտին զպատուական մարմին նորա, տարան եւ թաղեցին ի նոր տապանի վիմովն մերձ ի քաղաքն Անտինոյ :

Յայսմ աւուր վկայութիւն սուրբ եւ անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի երկու եղբարցն, եւ այլ երից վկայիցն. Անթիմոսի, Ղեւոնդեայ եւ Պապիասի :

Սուրբ եւ անարծաթ բժիշկքն եւ Քրիստոսի մարտիրոսքն Կոզմաս եւ Դամիանոս եղբարք էին հարազատք յԱրաբացւոց երկրէն, յաւուրս կռապաշտ թագաւորացն Մաքսիմիանոսի եւ Դիոկղետիանոսի : Եւ ըստ աւետարանական բանին՝ ձրի բժշկէին զամենայն ցաւս եւ զհիւանդութիւնս, ոչ միայն զմարդկան * այլ եւ զանասնոցն : Եւ * A fol. 206 v° a. մատնեցին զնոսա առ Լիւսիաս Եգիպտացւոց դատաւորն, եւ կացուցին առաջի նորա, եհարց. Ուստի՞ էք եւ ո՞ր հաւատոյ էք եւ զի՞նչ են անուանք ձեր :

Ասեն սուրբքն. Մեք յԱրաբացւոց եմք եւ քրիստոնեայ հաւատով. եւ ես անուանիմ Կոզմաս եւ եղբայրս իմ Դամիանոս. եւ եմք ի մեծ ազգէ եւ արուեստիւ բժիշկք : Ունիմք եւ այլ ընկերս՝ եթէ հրամայես ասասցուք եւ զնոցա անուանսն :

Ասէ դատաւորն. Ասացէք աներկիւղ : Եւ նոքա ասեն. Անթիմոս, Ղեւոնդիոս եւ Պապիոս : Տարան եւ զնոսա առաջի, եւ նոքա խոստովանեցան զՔրիստոս յամենայն

9 կացուցին] կացին B || 11 սուրբքն] Կոզմաս եւ Դամիանոս *add.* B || 12 արուեստիւ] արուեստաւոր B.

qu'avait indiqué saint Sabinus, trouvèrent son corps vénérable, l'emportèrent et l'enterrèrent dans un tombeau neuf avec la pierre près de la ville d'Antina[1].

En ce jour martyre des saints médecins anargyres, les deux frères Côme et Damien, et de trois autres martyrs Anthime, Léonce et Papias.

Les saints médecins anargyres, martyrs du Christ, Côme et Damien étaient deux frères germains du pays d'Arabie, aux jours des empereurs idolâtres Maximien et Dioclétien. Selon la parole de l'évangile ils soignèrent gratuitement tous les maux et les maladies non seulement des hommes * mais * A fol. 206 v° a. aussi des animaux. On les dénonça à Lysias, juge des Égyptiens, et on les mit en sa présence. Il leur demanda : « D'où êtes-vous, de quelle foi êtes-vous et quel est votre nom? »

Les saints répondirent : « Nous sommes d'entre les Arabes et de foi chrétienne; je m'appelle Côme et mon frère s'appelle Damien; nous sommes d'une haute lignée et médecins de profession. Nous avons encore d'autres compagnons, et si tu l'ordonnes nous te dirons aussi leurs noms. »

Le juge leur dit : « Dites sans crainte. » Ils lui répondirent : « Anthime, Léonce et Papias. » On les fit également comparaître et ils confessèrent le

1. Antoninoupolis (?).

սրտէ ։ Ասէ դատաւորն. Զոհեցէք կռոցն ։ Եւ սուրբքն ամենեւին ոչ ետուն պատասխանի ։ Կապեցին զձեռս եւ զոտս նոցա եւ գանեցին ուժգին եւ ընկեցին ի ծովն ։ Եւ հրամանաւ Տեառն լուծան կապանքն եւ ելին ի ցամաքն անվնաս ։

Եւ տեսեալ զնոսա դատաւորն յոյժ զարմացաւ եւ ասէ ցնոսա. Ուսուցէք զիս մոգութիւն առնել ։ Ասեն սուրբքն Կոզմաս եւ Դամիանոս. Եկեսջի՛ր զկնի մեր յանուն Աստուծոյն մերոյ ։ Ասէ դատաւորն. Եկից անուամբ աստուծոյն իմոյ Ադրիանոսի ։ Եւ նոյնժամայն թիւրեցան երեսք նորա ։ Եւ սուրբքն եդին ձեռս եւ ողջացուցին ։

Եւ հրամայեաց եւ ընկեցին ի բորբոքեալ հուր, եւ պատառեցաւ երկիր եւ եկուլ
* A fol. 206 v° b. զսուրբսն ի ներքս, եւ յորժամ շիջաւ հուրն դարձեալ եհան զնոսա * անվնասս ։ Եւ բարկութեամբ լցեալ դատաւորն հրամայեաց եւ խաչեցին զնոսա եւ քարկոծեցին, եւ քարինքն անդրէն դառնային, եւ բազումք մեռան ի նոցանէ ։ Եւ ապա նետս ձգէին ի նոսա, եւ ամենեւին սուրբքն ոչ խոցեցան ի նետիցն, այլ մանաւանդ սկսան ի միմեանս ձգել զնետսն, եւ բազումք ի նետաձգողացն եւ ի զօրականացն խոցեցան եւ մեռան ։

Եւ երկուցեալ դատաւորն հրամայեաց եւ սրով սպանին զսուրբսն յԵգիպտացւոց քաղաքին Մարտի ԺԴ ։

1 զոհեցէք] զոհէք B || 3 անվնաս *om.* B || 7 եւ սուրբք] բայց սուրբքն վաղվաղակի B || 8-13 Եւ հրամայեաց ... եւ մեռան] Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց՝ եւ ընկեցին զնոսա ի բորբոքեալ հուր, եւ ի շիջանել հրոյն ետես թէ մնացին կենդանի, հրամայեաց եւ հանին զնոսա ի խաչ, եւ քարկոծ արարին, եւ նետաձիգ եդեն, եւ արկ Աստուած ի նոսա յիմարութիւն, եւ ի միմեանս արկանէին զքարինս եւ զնետս, որովք եւ բազումք ի զօրականացն խոցեցան եւ մեռան B || 14 հրամայեաց] հրամանս ետ B || 15 Մարտի ԺԴ] եւ Արեգի Զ *add.* B.

Christ de tout cœur. Le juge leur dit : « Immolez aux idoles. » Les saints ne lui répondirent point du tout. On leur attacha les mains et les pieds, on les frappa brutalement et on les jeta à la mer. Par ordre du Seigneur les liens se défirent et (les saints) sortirent sur le rivage intacts.

Le juge en les voyant fut très étonné et leur dit : « Enseignez-moi aussi à faire de la magie. » Les saints Côme et Damien lui répondirent : « Suis-nous au nom de notre Dieu. » Le juge leur dit : « Je vous suivrai au nom de mon dieu Adrien. » Et aussitôt son visage se déforma. Les saints imposèrent les mains et (le) guérirent.

Il ordonna de les jeter dans un feu ardent, mais la terre s'entr'ouvrit et absorba les saints dans son sein ; lorsque le feu se fut éteint, (la terre) les
* A fol. 206 v° b. restitua * intacts. Le juge, plein de colère, ordonna de les crucifier et de les lapider, mais les pierres se retournèrent et beaucoup en furent tués. Ensuite on leur lança des flèches, mais les saints ne furent aucunement blessés par les flèches, par contre ils se tiraient les flèches l'un contre l'autre et beaucoup, parmi les archers et les soldats, furent blessés et moururent.

Le juge, effrayé, ordonna de tuer les saints par le glaive dans la ville des Égyptiens, le 14 mars.

Արեգի Է եւ Մարտի ԺԵ : Տօն է ութ նահատակացն. Ագապիոսի եւ երկու Աղեկսանդրացն եւ երկու Դիոնեսիոսացն եւ Տիմոլայի, Ռոմէլոսի, Պղիսինի :

Այս ութ վկայքս Քրիստոսի էին յաւուրս Դիոկղետիանոսի կռապաշտ արքային : Ագապիոս էր ի Գազայ քաղաքէն, Տիմոլայոս ի Պոնտոսէ, երկոքին Դիոնեսիոսքն ի Տրապօլսէ, Ռոմէլոս կիսասարկաւագ էր Դիոսպօլու եկեղեցւոյն, Պղիսին եւ երկու Աղէկսանդրոսքն յԵգիպտոսէ :

Սոքա միաբանեցան եւ ինքեանք զձեռս իւրեանց կապեցին եւ կամաւորութեամբ կացին առաջի Ուրբանոսի դատաւորին Կեսարու քաղաքին : Եւ համարձակութեամբ եւ պայծառ երեսօք որպէս ի միոյ բերանոյ * աղաղակէին. Քրիստոնեայք եմք եւ Քրիստոսի ծառայք, եւ զՔրիստոս Աստուած պաշտեմք, եւ վասն Քրիստոսի պատրաստ եմք ի մեռանել : * A fol. 207 r° a.

Եւ դատաւորն քաղցրութեամբ եւ ողոքանօք խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ պաշտել զկուռսն, եւ խոստանայր բազում պարգեւս եւ պատիւս եւ իշխանութիւն. Եւ յորժամ ոչ կարաց համանեցուցանել զնոսա ողոքանօք, ապա սպառնայր բազում

1 Տօն] Վկայութիւն B — նահատակացն] վկայիցն B || 2 եւ երկու Աղեկսանդրացն] Աղեկսանդրոսի, Աբբէլի B — Ռոմէլոսի] կիսասարկաւագի *add.* B || 5 Տրապօլսէ] Փիւնիկեցւոց *add.* B || 5 Դիոսպօլու] Դիոսպօլսոյ B || 7 միաբանեցան] եւ առաջին ընդ Քրիստոսի կապակցեցան սիրով *add.* B || 8 Կեսարու] Պաղեստինացւոց *add.* B || 9 երեսօք] ձայնիւ B || 13 պաշտել զկուռսն] պաշտել եւ զոհել կռոցն B — եւ իշխանութիւն] իշխանութեան B || 14 ապա *om.* B.

7 AREG, 15 Mars.

Fête des huit martyrs : Agapius et les deux Alexandre, les deux Denys, Timolaüs, Romulus, Plèsios.

Ces huit martyrs du Christ vivaient aux jours de Dioclétien l'empereur idolâtre. Agapius était de la ville de Gaza, Timolaüs du Pont, les deux Denys de Tripolis, Romulus (*Romēlos*) était sous-diacre de l'église de Diospolis, Plèsios (*Plision*) et les deux Alexandre de l'Égypte.

Ils s'unirent et, d'eux-mêmes s'étant lié les mains, ils se présentèrent volontairement devant le juge Urbanus de la ville de Césarée. Ils crièrent, avec hardiesse et la figure resplendissante, comme d'une seule bouche : * « Nous sommes chrétiens, serviteurs du Christ, nous adorons le Christ Dieu et nous sommes prêts à mourir pour le Christ. » * A fol. 207 r° a.

Le juge leur conseilla avec douceur et prières de renier le Christ et d'adorer les idoles; il leur promit de nombreux présents, honneurs et dignités; puis, comme il ne pouvait les persuader par de bonnes paroles,

տանջանօք, սրով եւ հրով սպանանել. եւ ոչ այնպէս կարաց զսուրբսն խոտորեցուցանել ի հաւատոցն Քրիստոսի ։ Հրամայեաց դահճացն եւ հատին զգլուխս նոցա Մարտի ԺԵ ։

* B p. 120 a. [B* Յիշատակ է սուրբ առաքելոյն եւ ընտրեալ աշակերտին Քրիստոսի Արիստաբուլոյ ։

Սուրբ եւ երանելի առաքեալն Քրիստոսի Արիստաբուլոս էր յաշակերտացն Պօղոսի եւ էր եղբայր Բառնաբայ առաքելոյ ։ Եւ հետեւեալ աւետարանին բազում սքանչելիս եւ նշանս առնէր ի հիւանդս եւ յախտաժէտս անուամբն Քրիստոսի ։ Եւ յոլով վանդական վշտաց եւ նեղութեանց եւ բանդից համբերէր ի հակառակորդ հրէիցն եւ ի հեթանոսաց ։ Աշխատեցաւ եւ ի ճանապարհորդութիւնս եւ ի ճգնութիւնս հանապազօր քարոզութեամբն, եւ զբազումս դարձոյց ի Քրիստոս եւ աշակերտեաց ճշմարտութեանն ։

* B p. 120 b. Եւ զտուն իւր եկեղեցի արար եւ ընդունէր եւ հանգուցանէր զեղբարս, * եւ ուսուցանէր եւ վարդապետէր միշտ խրատելով զտկարսն, եւ սպասաւորեաց Պօղոսի եւ այլ առաքելոց յաւետարանն ։

Ի սմին աւուր մարտիրոսացաւ սուրբ վկայն Նիկանդրոս ։

* B p. 121 a. *Զսա ըմբռնեալ ազգի ազգի չեղանակօք չարչարանաց նեղեցին զոհել կռոցն, եւ յորժամ պինդ եկաց ի խոստովանութեանն Քրիստոսի, սրով հատին զգլուխ նորա ։]

3 Մարտի ԺԵ] եւ Արեգի Է *add.* B.

il se mit à les menacer de les tuer par de nombreuses tortures, par l'épée et le feu, mais il ne parvint pas plus de cette façon à détourner les saints de la foi au Christ. Il ordonna aux bourreaux de leur trancher la tête le 15 mars.

* B p. 120 a. [B* Commémoration du saint apôtre et disciple élu du Christ Aristobule.

Le saint et bienheureux apôtre du Christ Aristobule était du nombre des disciples de Paul, il était le frère de l'apôtre Barnabé. Il suivit l'évangile et opéra de nombreux miracles et prodiges sur les malades et les infirmes au nom du Christ. Il eut à subir beaucoup de souffrances, de tribulations et d'emprisonnements de la part des adversaires juifs et païens. Il se fatigua en des voyages et en ascétisme par une prédication continue, convertit nombre de gens au Christ et en fit des disciples de la vérité.

* B p. 120 b. De sa maison il fit une église, y recueillit et hospitalisa les frères; * il enseigna et prêcha, soutenant les faibles, et servit Paul et d'autres apôtres dans (la prédication de) l'évangile.

En ce même jour fut martyrisé le saint martyr Nicandre.

* B p. 121 a. * L'ayant saisi, on l'obligea, par toutes sortes de tortures, à immoler aux idoles, mais comme il tenait ferme dans la confession du Christ, on lui trancha la tête avec le glaive.]

Արեգի Ը եւ Մարտի ԺԶ ։ Նահատակութիւն սուրբ վկայիցն որ ի Գութացւոց կատարեցան ։

Բինքուրիկոս կռապաշտ արքայն Գութացւոց գնաց զինուորօք ի մայրի եւ հատին փայտ յոյժ, եւ բարձեալ տարան յեկեղեցին ուր քրիստոնեայք զաղօթս իւրեանց կատարէին ։ Եւ ժողովեաց զամենայն հաւատացեալսն որք ոչ ուրացան զՔրիստոս՝ եմոյծ զնոսա յեկեղեցին, եւ զփայտն կուտեցին ի մէջ եկեղեցւոյն, եւ բորբոքեցին հրով, եւ այրեցաւ եկեղեցին եւ սուրբքն, Մարտի ԺԶ ։

Էին վկայքն Քրիստոսի երկու քահանայք Բաթոյի եւ Վիրկոս, եւ երկու որդիք եւ երկու դստերք, եւ Արպիլայն կրօնաւոր եւ երկոտասան աշխարհականք՝ * *Աբիպաս, Կոնատոս, Ագէաս, Ովիաս, Իգաթրաս, Իսկոյիս, Սիլաս, Սիգիսաս, Սուիրիլոս, Սուինպլաս, Թերթաս, Փիլիգաս ։ Եւ եօթն կանայք՝ Աննա, Ադաս, Վարկա, Անեմայի, Մայիկոյ, Մովիկիոյ ։ Էին ամենեքեան որք հրով այրեցան յեկեղեցին անձինք քսան եւ վեց ։*

* A fol. 207 r° b

1 *Նահատակութիւն ... կատարեցան*] *Վկայութիւն սրբոց վկայիցն Քրիստոսի Բաթուէլի եւ Վիրկոսի քահանայից եւ քսան եւ ութ ընկերացն եւ սուրբ Փոքրկանն* B || 7 *այրեցաւ*] *այրեաց* B — *սուրբքն*] *զսուրբսն* B — *Մարտի ԺԶ*] *եւ Արեգի Ը* *add.* B || 9 *դստերք*] *նոցա* *add.* B || 10 *Իգաթրաս*] *Իթաղրաս* B — *Սիլաս*] *Լիսաս* B.

8 AREG, 16 Mars.

Martyre des saints martyrs qui furent exécutés par les Goths.

Vinchuricus (*Binkhourikos*), le roi idolâtre des Goths, s'étant rendu avec des soldats dans la forêt, y coupèrent une grande quantité de bois qu'ils transportèrent à l'église où les chrétiens accomplissaient leurs prières. Il fit rassembler tous les fidèles qui ne renièrent point le Christ, les fit entrer dans l'église, puis on amoncela les bois dans l'église et on alluma un grand feu ; l'église et les saints furent brûlés le 16 mars.

Ces martyrs du Christ étaient : les deux prêtres Bathoy et Vircos, leurs deux fils et leurs deux filles, le moine Arpylas avec douze laïques : * Abipas, Conatus, Agias (*Agéas*), Ovias, Igetras, Iscoïs, Silas, Sigisas, Suirilos, Suinplas, Tertas, Philigas ; sept femmes : Anne, Adas, Varca, Anéma, Maïko, Movikio [1]. Ceux qui furent brûlés dans l'église étaient au nombre de vingt-six personnes.

* A fol. 207 r° b.

1. Il manque un nom : Les deux avant-derniers de la liste telle qu'elle se trouve dans *Acta SS.* mart., t. III, p. 612, sont *Marnica* et *Virco* ou *Vico*, Movikio semble composé des deux.

Եւ այր մի քրիստոնեայ առեալ նշխար եւ ձէթ եւ խունկ եւ բաժակ՝ երիվարովն յայլ անդր եկեղեցին յաղօթս կալ, եւ զնա ընկեցին ի հուրն եւ մարտիրոսացաւ ընդ այլ սրբոցն, եւ եղեւ մարմինն իւր եւ արիւնն փոխանակ նշխարին եւ բաժակին պատարագ ընդունելի (Աստուծոյ) ։

Եւ կին մի այրի քրիստոնեայ թագուհի լեալ այլազգեաց, որոյ անուն էր Գայիադի, գնաց յայրեցեալ եկեղեցին ժողովեաց զնշխարս սրբոց վկայիցն եւ պատուով թաղեաց ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Երմոսի, Սարապիոնի եւ Պաւղինոսի ։

Սոքա էին ի քաղաքէն Հռոմայ Քրիստոսի հաւատովն ։ Կալան զնոսա եւ տարան առ եպարքոս քաղաքին, եհարց զնոսա եւ նոքա խոստովանեցան զինքեանս քրիստոնեայս եւ Քրիստոսի ծառայս ։

Արկին զնոսա ի մթին եւ ի ժահահոտ բանդ, եւ նոքա ուրախանային եւ խնդային ընդ ճշմարիտ խոստովանութիւն իւրեանց ։ Եւ հանին ի բանդէն եւ կացուցին առաջի
* A fol. 207 v° a. եպարքոսին, եւ ողոքանօք եւ սպառնալեօք խրատ *տայր ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Եւ սուրբքն ոչ երկեան եւ ոչ հաւանեցան խրատու նորա, այլ մանաւանդ քարոզէին մեծաւ բարբառով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգի, եւ նզովեցին զկուռսն եւ անէծս արկին ի վերայ կռապաշտիցն ։

1 երիվարովն] երիվարով իւրով B || 2 անդր] առ երէցն *add.* B — ընկեցին] կալան եւ ընկեցին B || 7 սրբոցն] սրբոց վկայիցն B.

Un chrétien qui se rendait à cheval à une autre église pour y prier, emportant avec lui hostie, huile, encens et vin, fut (saisi également et) jeté dans les flammes et fut martyrisé avec les autres saints; son corps et son sang remplacèrent l'hostie et le vin, offrande agréable (à Dieu).

Une veuve chrétienne, qui avait été reine des infidèles, et dont le nom était Gaïadi, se rendit à l'église incendiée, rassembla les restes des saints martyrs et les enterra avec honneur.

En ce jour martyre des saints Hermas, Sérapion et Paulin.

Ils étaient de la ville de Rome et de la foi au Christ. On les saisit et on les conduisit à l'éparque de la ville qui les interrogea; ils s'avouèrent chrétiens et serviteurs du Christ.

On les jeta dans une prison obscure et infecte, mais ils furent joyeux et se félicitèrent de leur vraie confession. On les fit sortir de la prison et on les fit comparaître devant l'éparque, qui les engagea par de douces paroles et des
* A fol. 207 v° a. menaces* à renier le Christ et à immoler aux idoles. Les saints ne craignirent point et ne consentirent pas à ses conseils, au contraire ils invoquèrent à haute voix le Père, le Fils et le Saint-Esprit, anathématisèrent les idoles et maudirent les idolâtres.

Եւ բարկացեալ եպարքոսին հրամայեաց պարան կապել յոտս նոցա, եւ քարշեցին զնոսա ընդ քարս եւ ընդ վէմս եւ ընդ ծառս. եւ կոտորեցան ամենայն մարմինք նոցա, եւ լցան արեամբ տեղին յորժամ քարշէին, եւ ոչ թողին զնոսա ի քարշելոյ մինչեւ աւանդեցին զհոգիս իւրեանց ։

Եւ ոմանք բարեպաշտք եդին զմարմինս նոցա ի նշանաւոր տեղւոջ ։

Կատարեցան սուրբ վկայքս Քրիստոսի՝ Երմիոս, Սարապիոն եւ Պաւղինիոս Մարտի ԺԶ ։

Արեգի Թ եւ մարտի ԺԷ ։ Վարք երանելոյն Աղեքսիոսի մարդոյն Աստուծոյ կամաւոր աղքատին ։

Աղեքսիոս Աստուծոյ մարդն՝ որդի էր միամօր մեծատան առն փառաւորեալ պատրկի, որոյ անուն էր Եփեմիանոս, ի մեծ քաղաքէն Հռոմայ, յաւուրս բարեպաշտ արքայից Արկադեայ եւ Ոնորիոսի ։

Ուսուցին նմա զփիլիսոփայական եւ զհռետորական համաձայն արտաքին իմաս-

3 յորժամ] ընդ որ B || 5 եդին] զպատուական *add.* B — նոցա] զիշխանին ի ձայն սաղմոսաց *add.* B || 7 Մարտի ԺԶ] եւ Արեգի ամսոյ Ը *add.* B || 12 Ոնորիոսի] էր նորա եւ կին բարեպաշտօն որոյ անուն էր Ագլայիդէս. եւ յոյժ սիրէին զաղքատս եւ տուող էին ի տուրս կարօտելոց ։ Եւ քանզի ոչ գոյր նոցա զաւակ՝ հանապազօր խնդրէին յԱստուծոյ պահովք եւ աղօթիւք որպէս զի շնորհեսցէ նոցա որդի մի մխիթարութեան ։ Եւ լուաւ Աստուած աղօթից նոցա եւ յղացաւ կին նորա՝ եւ նա ուրախացեալ յոյժ փառաւորեաց զԱստուած, եւ մկրտեալ անուանեցին զնա մարդ Աստուծոյ, ասեն. Քանզի պահօք եւ աղօթիւք խնդրեցաք զդա յԱստուծոյ ։ Եւ մինչ մանուկ եղեւ՝ հայր նորա ետ զնա յուսումն աստուածպաշտութեան *add.* B || 13 ուսուցին նմա] որ եւ ուսաւ B.

L'éparque, irrité, ordonna de leur attacher une corde aux pieds, de les traîner à travers les rochers, les pierres et les arbres. Tous leurs corps furent brisés, les endroits par lesquels on les traînait furent inondés de sang, et on ne cessa de les traîner jusqu'à ce qu'ils eurent rendu leur âme.

Quelques pieuses personnes déposèrent leurs corps dans un endroit célèbre.

Ces saints martyrs du Christ Hermas (*Ermios*), Sérapion (*Sarapion*) et Paulin (*Paulinios*) furent martyrisés le 16 mars.

9 AREG, 17 Mars.

Vie du bienheureux Alexis, l'homme de Dieu, pauvre volontaire.

L'homme de Dieu Alexis était le fils unique d'un homme riche, glorieux patricien, dont le nom était Euphémianus, de la grande ville de Rome, aux jours des pieux empereurs Arcadius et Honorius.

On lui enseigna les sciences philosophiques et rhétoriques de la sagesse

ութեան, եւ զնոր աստուածաշունչ գիրս պատուիրանացն Աստուծոյ ։ Եւ յորժամ եղեւ
A fol. 207 v° b. ի չափ հասակի Աղեքսիոս՝ խօսեցան նմա կին ի թագաւորական տոհմէ, *եւ արարին զհարսանիսն ։

Եւ յորժամ եղեւ երեկոյ եմուտ յառագաստ հարսինն, եւ նախ քան զմերձենալն ի կինն՝ ծագեաց լոյս մարդասիրութեանն Աստուծոյ ի սիրտ Աղեքսիոսի, եհան զմատանին ի ձեռացն՝ պատեաց ի ծիրանի շղարշակ, ետ հարսինն եւ ասէ. Առ պահեա զայս առ քեզ, եւ Աստուած լիցի ի միջի մերում ընդ իս եւ ընդ քեզ ։

Եւ զայս ասացեալ ել ի սենեկէն. եւ էին ամենեքեան որ ի տանն ի քուն ։ Եւ գնաց միայն յարեւելս կոյս, գնաց յՈւռհայ քաղաք յորում էր անձեռագործ պատկերն Քրիստոսի ի սուրբ դաստառակին, որում մեծաւ փափաքանօք երկիր եպագ ։ Եւ երթեալ յեկեղեցին սրբուհւոյ Աստուածածնին, փոխեաց զհանդերձս իւր ընդ աղքատի, եւ զգեցաւ պատառատուն մաղեղէն եւ մուրայր ի քաղաքին ։

Իսկ հայր նորա առաքեաց յամենայն կողմանս զծառայս իւր ի քննել եւ ի գտանել զորդին իւր, զի երեք հազար ծառայս ունէր արծաթակապ երիվարօք եւ զիպակազգեստս ։ Գնացին յուզող ծառայքն եւ յՈւռհայ քաղաքն, եւ տեսեալ զԱղեքսիոս ոչ ծանեան, այլ որպէս աղքատի տային նմա ողորմութիւն. եւ դարձան ունայն ի տուն իւրեանց ։

1 Աստուծոյ *om.* B || 10 երկիր եպագ] երկրպագեաց B.

profane en même temps que les nouvelles écritures, inspirées de Dieu, des commandements de Dieu. Lorsque Alexis eut atteint l'âge de puberté, on le
* A fol. 207 v° b. fiança à une jeune fille de la famille impériale * et on célébra les noces.

Lorsqu'on fut au soir, il pénétra dans la chambre nuptiale de sa femme, mais avant qu'il approchât de sa femme, la lumière de la philanthropie divine jaillit dans le cœur d'Alexis, il ôta l'anneau de son doigt, l'enveloppa dans une étoffe pourpre, la remit à sa fiancée et lui dit : « Prends-la et garde-la sur toi, que Dieu soit entre nous, entre moi et toi. »

Ce disant, il sortit de la chambre. Tous ceux qui étaient dans la maison dormaient. Il partit seul dans la direction de l'orient, se rendit à la ville d'Édesse où se trouvait l'image achiropite du Christ sur le saint voile, qu'il vénéra avec beaucoup de joie. Il se rendit à l'église de la sainte Mère de Dieu, troqua ses vêtements avec ceux d'un pauvre, se vêtit de bure déchirée et se mit à mendier dans la ville.

Son père envoya ses domestiques de tous les côtés pour rechercher et retrouver son fils, car il avait trois mille domestiques montés sur des chevaux aux harnais d'argent et vêtus d'étoffes précieuses. Les domestiques investigateurs se rendirent aussi à la ville d'Édesse, aperçurent Alexis mais ne le reconnurent point, et lui donnèrent une aumône comme à un pauvre. Ils retournèrent sans succès chez eux.

Եւ երանելին Աղեքսիոս ապրեաց յայնմ քաղաքի օտարաբար մեծ եւ առաքինի ճգնութեամբ, պահօք եւ արտասուալից աչօք * ամս տասն եւ ութ : Եւ ի շաբաթուջն էր նորա կերակուր երկու ունկի հաց որ է տասն եւ ութ դրամակշիռ, եւ նոյն չափովն ջուր : * A fol. 208 r° a.

Եւ ի միում գիշերի երեւեցաւ յերազի ամենասրբուհի աստուածածնին եկեղեցպանին հրեշտակ Տեառն եւ ասէ. Մուծ զմարդն Աստուծոյ յեկեղեցին, վասն զի արժանաւոր է արքայութեանն Աստուծոյ : Եւ բանս այս յայտնի եղեւ ամենայն քաղաքացեացն, եւ երթային ի տեսութիւն. եւ յայնմ օրէ անուանեցաւ Աստուծոյ մարդ :

Եւ ետես երանելին զի յոյժ փառաւորեցաւ ի մարդկանէ՝ փախեաւ ի քաղաքէն եւ ի բազում աւուրս գնաց ի ծովեզրն, եւ մտեալ ի նաւ կամէր երթալ ի Տարսոն քաղաքն յեկեղեցի սուրբ առաքելոյն Պօղոսի : Եւ ելեալ հողմն ընդդիմակաց եւ մրրիկ յոյժ, եւ տարաւ զնաւն ի Հռոմ ուր ոչն կամէր վասն ծնողացն եւ տանն իւրոյ :

Եւ ելեալ հայրն ետես զնա եւ ոչ ծանեաւ, յանձնեաց զնա միում ի ծառայից իւրոց, զի որպէս աղքատի Աստուծոյ արասցէ նմա ողորմութիւն : Եւ բազում նեղութիւնս անցուցին այլ ծառայքն հօր նորա ընդ նա, այպն եւ ծաղր առնելով եւ ապտակելով,

1 եւ առաքինի *om.* B || 14 արասցէ նմա ողորմութիւն] այց արասցեն նմա ողորմութեամբ B || 15 եւ ծաղր *om.* B.

Le bienheureux Alexis vécut comme un étranger dans cette ville, d'un grand et vertueux ascétisme, avec des jeûnes et les larmes aux yeux, * pendant dix-huit ans. Le samedi, son repas consistait en deux onces de pain, c'est-à-dire dix-huit drachmes et la même quantité d'eau. * A fol. 208 r° a.

Une nuit, l'ange du Seigneur apparut en un songe au sacristain de l'église de la très sainte Mère de Dieu et lui dit : « Fais entrer l'homme de Dieu dans l'église, car il est digne du royaume de Dieu. » Ce fait fut connu de tous les habitants, qui allèrent le voir. De ce jour, il fut appelé l'homme de Dieu.

Le bienheureux, voyant qu'il était très honoré par les hommes, s'enfuit de la ville et après plusieurs jours arriva au bord de la mer, s'embarqua sur un bateau, voulant se rendre à la ville de Tarse, à l'église du saint apôtre Paul. Un vent contraire s'étant levé, suivi d'une grande tempête, poussa le bateau à Rome où il ne voulait pas aller à cause de ses parents et de sa maison.

Or son père, en sortant, l'aperçut mais ne le reconnut point, et le confia à un de ses domestiques pour qu'il lui fît la charité comme à un pauvre de Dieu. Les autres domestiques de son père lui firent subir beaucoup d'ennuis en se moquant de lui et le souffletant; les cuisiniers, après avoir lavé les

որ եւ խոհակերացն լուանային զսկուտեղսն եւ զպտուկսն եւ զջուր լուացմանն հեղուին ի վերայ գլխոյ եւ անձին նորա :

Եւ յետ ժամանակաց գիտաց զմահն իւր, խնդրեաց քարտէս եւ գրեաց զամենայն
* A fol. 208 r° b. գործս վարուց իւրոց, գրեաց * եւ զանուանս հօրն եւ մօրն եւ զհարսինն եւ զիւրն, եւ ունելով զքարտէսն ի ձեռին իւրում աւանդեաց զհոգին իւր առ որ ցանկայրն Քրիստոս Մարտի ժէ :

Եւ ձայն եղեւ յերկնից յապարանս թագաւորին եւ ասէ. Խնդրեցէք ի տանն Եփեմիանոսի զԱստուծոյ մարդն որ աղօթեսցէ վասն Հռոմայ եւ վասն ամենայն երկրի : Եւ առժամայն գնաց թագաւորն Ոնորիոս փութապէս ի տունն Եփեմիանոսի՝ ամենայն իշխանօքն եւ գտին զերանելին մեռեալ. կամեցան ի ձեռանէն առնուլ զքարտէսն, եւ ամենեւին ոչ կարացին հանել ի ձեռացն :

Եւ թագաւորն անկաւ ի վերայ ոտից երանելոյն եւ մեծաւ արտասուօք խնդրէր զքարտէսն, եւ դեռ եւս ոչ գիտէին թէ Ալեքսիոս իցէ, եւ առժամայն եբաց զձեռն իւր, եւ ետ զքարտէսն ի թագաւորն : Եւ հրամայեաց Այիտի դպրին իւրոյ ընթեռնուլ զթուղթն մեծաձայն ի լուր ամենայն ժողովրդեանն : Եւ իբրեւ լուան ահ մեծ եւ զարմացումն կալաւ զամենեսեան :

1 եւ զպտուկսն *om.* B || 2 անձին նորա] անձինն ծայր առնելով B || 5 Քրիստոս] Արեգի թ· եւ *add.* B || 7 Եւ ձայն… խնդրեցէք] Եւ Աստուած փառաւորեաց զնա յայտնի առնելով յապարանս թագաւորին՝ զի խնդրեսցեն B || 10 զերանելին] Ալեքսիոս *add.* B || 15 իբրեւ լուան *om.* B.

plats et les casseroles, répandaient l'eau qui avait ainsi servi sur la tète (d'Alexis) et sur sa personne.

Longtemps après, (Alexis) connut l'heure de sa mort; il demanda du papier
* A fol. 208 r° b. et y écrivit tous les actes de sa vie, il y écrivit * aussi le nom de son père et de sa mère, celui de sa fiancée et le sien, et tenant le papier à la main il rendit son âme au Christ, vers qui il soupirait, le 17 mars.

Une voix se fit entendre du ciel dans le palais impérial, disant : « Faïtes rechercher dans la maison d'Euphémianus l'homme de Dieu qui priera pour Rome et pour toute la terre. » Aussitôt, l'empereur Honorius se rendit en hâte à la maison d'Euphémianus, accompagné de tous les princes, et ils trouvèrent le bienheureux décédé. Ils voulurent lui prendre de la main le papier, mais ils ne purent le détacher des mains.

L'empereur se jeta sur les pieds du bienheureux et, avec beaucoup de larmes, demanda le papier, car on ne savait pas encore que c'était Alexis; aussitôt celui-ci ouvrit sa main et remit le papier à l'empereur. Celui-ci ordonna à son secrétaire Aétius (*Ayiti*) de lire l'écrit à haute voix pour être entendu de toute l'assemblée. Lorsqu'ils eurent entendu, une grande crainte et admiration les saisit tous.

Իսկ հայրն և մայրն իբրև տեսին եթէ Աղեքսիանոս է որդին իւրեանց, անկան ի վերայ մարմնոյ նորա, և զողբոն և զկոծանսն ընդ գրով ոչ կարեմ արկանել :

Եւ բարձեալ տարան յեկեղեցին սրբոյ առաքելոյն Պետրոսի, եդին ի տապանի մեծաւ օրհնութեամբ և փառաբանութեամբ : Եւ յետոյ փոխեցին զնշխարսն յարծաթի տապան՝ զուգեալ ոսկով և ակամբք. և մինչև ցայսօր * անուշահոտ ձէթ բղխէ ի մարմնոյն, և մեծ սքանչելիք լինին ի հիւանդս և յամենայն նեղեալս : * A fol. 208 v° a.

Արեգի Ժ և Մարտի ԺԸ : Վարք Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին :

Ի յաւուրս Կոստանդեայ հերձուածող արքային որդւոյ սրբոյն Կոստանդիանոսի մեծի թագաւորին, էր Կիւրեղ ի սուրբ քաղաքէն Երուսաղեմի, ուղղափառ հաւատով, և էր յոյժ ուսեալ զաստուածային հին և նոր կտակարանս, նոյնպէս և զամենայն համճարս արտաքին փիլիսոփայութեանն : Եւ թագաւորն Կոստանդեա յարիոսական հերձուածն և ի զաւանութիւնն խոտորեցաւ, և ի բաց ընկէց զհօրն իւրոյ զուղղափառ հաւատն :

Իսկ երանելին Կիւրեղ աստուածիմաստ վարդապետութեամբն իւրով յոյժ սաստէր և պապանձեցուցանէր զամենայն լեզու հերձուածողացն : Եւ յորժամ ոչ կարացին

5 անուշահոտ ձէթ բղխէ ի մարմնոյն *om.* B || 6 մեծ] մեծամեծ B || 12 հերձուածն և ի *om.* B.

Quant au père et à la mère, lorsqu'ils virent que c'était leur fils Alexis, ils se jetèrent sur son corps; et je ne puis exposer par écrit leur douleur et leurs sanglots.

On l'enleva et on le transporta à l'église du saint apôtre Pierre, et on le mit dans une tombe avec de grandes bénédictions et actions de grâces. Plus tard, on transporta les restes dans un cercueil en argent garni d'or et de pierreries, et jusqu'aujourd'hui * il jaillit du corps une huile suave qui opère de grands miracles sur les malades et tous les affligés. * A fol. 208 v° a.

10 AREG, 18 Mars.

Vie de Cyrille, patriarche de Jérusalem.

Aux jours de Constance, l'empereur schismatique, fils de saint Constantin le grand empereur, vivait Cyrille de la sainte ville de Jérusalem, de foi orthodoxe, très versé dans l'ancien et le nouveau testament inspirés de Dieu, en même temps que dans toutes les branches de la philosophie profane. L'empereur Constance, ayant adhéré au schisme pervers des Ariens et à leur profession de foi, répudia la foi orthodoxe de son père.

Le bienheureux Cyrille par sa doctrine divine réprimait fortement et réduisait au silence toutes les langues des hérétiques. Lorsqu'ils ne purent

ընդդիմանալ կամ տալ պատասխանի ըստ արժանեաց, հնարս իմացան բայց ոչ ի կամաց իւրեանց՝ այլ Աստուծոյ հրամանաւն ։ Եւ նստուցին զնա յաթոռ հայրապետութեան, եւ ձեռնադրեցին զնա Երուսաղեմայ պատրիարգ. կարծէին ունայնախորհուրդքն՝ որ եթէ հանցեն զնա յառաքելական յաթոռն՝ հաւանի բանից նոցա, եւ լինիցի իբրեւ
* A fol. 208 v° b. զնոսա Արիոսի եւ Մանենդոսի * խոստովանութեամբն, եւ յակնկալութենէն իւրեանց վրիպեցան ։

Բանզի երանելի հայրապետն Կիւրեղ աստուածային զօրութեամբն առաւելապէս յանդիմանէր եւ կշտամբէր զնոսա, եւ յայտնապէս նզովէր եւ ընդ անիծիւք արկանէր, եւ զբազումս ի նոցանէ դարձուցանէր յուղղափառութիւն ։ Եւ նախանձեալ չարին խորհրդակիցն Ակակիոս Կեսարիոյ Պաղեստինացւոց եպիսկոպոսն՝ հրամանաւ արքային ժողովեաց զամենայն հերձուածող ժողովուրդն, եւ բռնութեամբ զսուրբն Կիւրեղ իջոյց յաթոռոյն, եւ հալածեաց ի քաղաքէն եւ ի սահմանացն եւ ի հայրապետական աթոռոյն եւ ի ժառանգութենէ, եւ նստաւ ինքն յաթոռ պատրիարգութեանն ։

Իսկ երանելին Կիւրղոս ելեալ յԵրուսաղեմէ փախստական գնաց ի Տարսոն քաղաքն, եւ ընկալաւ զնա Սիլուանոս սքանչելի եպիսկոպոսն Տարսոնայ մեծաւ խնդութեամբ, եւ նստոյց զնա յաթոռ եպիսկոպոսութեանն իւրոյ, զի ուսուսցէ եւ հաւատացուսցէ զուղղափառ ժողովուրդն եւ դարձուսցէ զմոլորեալսն յԱրիոսի եւ ի Մանենդոսի ժանգոյն ։ Եւ նա ոչ դադարէր ի լուսաւորելոյ զամենեսեան ։

11 բռնութեամբ] զխարդալեան ճշմարտութեան *add.* B || 12 հայրապետական աթոռոյն եւ ի *om.* B.

lui résister ni lui répondre convenablement, ils inventèrent un moyen, non de leur propre volonté, mais par la permission de Dieu. Ils l'élurent au siège patriarcal et le sacrèrent patriarche de Jérusalem. Ces vains esprits pensaient que s'ils l'élevaient au siège apostolique, (Cyrille) consentirait à leurs desseins et deviendrait comme eux de la profession de foi d'Arius et de Manès
* A fol. 208 v° b. (*Manendos*) ; * mais ils se trompèrent dans leur espoir.

En effet, le bienheureux patriarche Cyrille, par la puissance divine, se mit à les blâmer et les réprimander davantage, les anathématisa ouvertement et les maudit ; il convertit beaucoup d'entre eux à la foi orthodoxe. Acace, évêque de Césarée de Palestine, le conseiller du mal, devenu jaloux, convoqua par ordre de l'empereur tout le peuple hérétique, fit descendre, par violence, saint Cyrille du siège, le chassa de la ville et des environs du siège patriarcal et du clergé, et s'assit lui-même sur le siège patriarcal.

Le bienheureux Cyrille, quittant Jérusalem, se réfugia à Tarse; Silvain, l'admirable évêque de Tarse, le reçut avec beaucoup de joie, le fit asseoir sur son siège épiscopal pour enseigner et attirer à la foi le peuple orthodoxe et pour détourner les égarés de la rouille d'Arius et de Manès. (Cyrille) ne cessa de les éclairer tous.

Եւ յորժամ լուաւ ժանգահաւատն Ակակիոս՝ բորբոքեցաւ նախանձու, դիմեաց բազում ամբոխիւ և իբրև դիւահար գնաց ի Տարսոն քաղաքն, և յոյժ մեղադրէր սպառնալեօք Սիլուանոսի վասն ընդունելոյն զԿիւրղոս : Եւ նա զբանս նորա * շաղփաղփութիւն և առասպելս համարեցաւ և ամենևին ոչ կամեցաւ լսել նմա : Եւ ժանտն Ակակիոս հրապուրեաց զիշխանս քաղաքին և բռնութեամբ զԿիւրեղ և զՍիլուանոս և զամենայն ժողովուրդն յաքսորս առաքեցին : Եւ թագաւորն զանարժանն Եւդոքսիոս նստոյց յաթոռ Կոստանդնուպոլսի, և զչարախօսն Եւնոմիոս եպիսկոպոսն Գերմանիկոյ փոխեաց յաթոռն Կիլիկիոյ : * A fol. 209 r° a.

Իսկ սուրբն Կիւրղոս յաքսորս և ի բանդս և ի հալածանս բազում ժամանակս ի չարչարանս կեցեալ՝ ոչ յուսահատեցաւ և ոչ ետ անձին խրում տրտմութեամբ իջանել ի դժոխս, այլ յարաժամ ի բերան ունէր զմարգարէական բանն եթէ. Համբերելով համբերէի Տեառն և նայեցաւ առ իս : Եւ ի քարոզելոյ և յուսուցանելոյ ոչ դադարէր, և ոչ ետ քուն աչացն և ոչ հանգիստ մարմնոյն իւրոյ մինչև այց արար Աստուած ժողովրդեան իւրոյ :

Մեռաւ Կոստանդիոս և թագաւորեաց ուրացողն Քրիստոսի Յուլիանոս, և յետ նորա պիղծն Վաղէս, և յաւուրս նորա այլ դառնութիւն հասուցանէին ճշմարտութեան

1 ժանգահաւատն] չարափառն B — բորբոքեցաւ] զիւակսն *add.* B || 5 ժանտն *om.* B || 6 ժողովուրդն] ուղղափառս B || 10 ի չարչարանս] թշուառութեամբ || 12 համբերէի] B համբերեցի B — յուսուցանելոյ] զուղիղ դաւանութիւնն *add.* B || 16 ճշմարտութեան վկայիցն] ճշմարտութեանն B.

Lorsque Acace, à la foi rouillée, apprit cela, furieux de jalousie, il se mit à la tête d'une troupe nombreuse et se rendit comme un possédé à la ville de Tarse et blâma Silvain sévèrement et avec menaces pour avoir accueilli Cyrille. Mais (Silvain) prit ses propos * pour des insanités et des fables et ne voulut aucunement l'écouter. Alors le méchant Acace attira à lui les princes de la ville et fit envoyer en exil, avec violence, Cyrille, Silvain et tout le peuple. L'empereur éleva au siège de Constantinople l'indigne Eudoxe et fit transférer au siège de Cilicie le médisant Eunomius, évêque de Germanicia. * A fol. 209 r° a.

Saint Cyrille, après avoir vécu de nombreuses années en exil, dans les prisons et dans la persécution, ne désespéra point et ne se laissa pas glisser par tristesse vers l'enfer; mais il avait constamment sur les lèvres la parole prophétique : *J'ai patienté pour le Seigneur et Il a regardé vers moi*[1]. Il ne cessa de prêcher et d'enseigner, et n'accorda pas de sommeil à ses yeux ni de repos à son corps jusqu'à ce que Dieu eût rendu visite à son peuple.

Constance vint à mourir, et puis régna Julien, le renégat du Christ, et après lui l'immonde Valens, aux jours duquel d'autres amertumes furent infli-

1. Ps. XXXIX, 2.

վկայից. այլ թէպէտ եւ իբրեւ զմայրսն Լիբանանու բազմացան եւ բարձրացան՝ այլ իբրեւ զփոշի անցին եւ կորեան ունայնութեամբ աւուրք նոցա :

Եւ յորժամ հաճեցաւ Աստուած տուրեալ փրկիչ ժողովրդեան իւրոյ աստուա-
* A fol. 209 rº b. ծատուր զմեծն Թէոդոս թագաւոր քրիստոնէից. եւ նա * կանգնեաց եւ սրբեաց զամենայն եկեղեցիս ուղղափառաց եւ դարձոյց զհալածեալսն յաքսորանաց եւ առաքեաց յիւրաքանչիւր յաթոռս իւրեանց. զԿիւրեղ յԵրուսաղէմ, զՄելիտոս յԱնտիոք, զԵւսեբիոս ի Սամոսատիս : Կացոյց զնոսա գլխաւորս հարիւր եւ յիսուն սիւնհոդոսին զոր արար ընդդէմ հոգեմարտ հերձուածոյն, յորում էր Գրիգոր աստուածաբանն եւ սուրբն Ներսէս Հայոց հայրապետն, եւ այլք :

Իսկ սուրբն Կիւրեղ յետ այնչափ նեղութեանց եւ հալածանօք աքսորանաց եւ աշխատանաց՝ դարձեալ ընկալաւ զաթոռն իւր, յոր անարժանքն բառ արժանեացն Աստուծոյ ընտրութեամբն նստուցին : Եւ ի բարի եւ ի խորին ծերութիւն հասեալ հանգեաւ յերկնից յարքայութիւնն՝ Մարտի ԺԸ, թողեալ մեզ յիշատակ յաւիտենական զվարդապետական գիրս իւր ի լուսաւորութիւն ամենայն ուղղափառ ժողովրդեանն :

Կալաւ զաթոռն Երուսաղեմի յառաջ եւ յետոյ սուրբն Կիւրեղ ամս քառասուն եւ երեք, եւ ի հալածանսն յորժամ ընկեցին յաթոռոյն ամս երեսուն եւ չորս :

1 իբրեւ] որպէս B || 9 եւ այլք *om.* B || 10 հալածանօք *om.* B || 13 յարքայութիւնն] Երեգի Ժ եւ *add.* B

gées aux martyrs de la vérité; et bien qu'elles se multipliassent et s'élevassent comme les sapins du Liban, néanmoins leurs jours passèrent comme la poussière et se perdirent dans le néant.

Lorsque Dieu le voulut, il envoya comme sauveur de son peuple, comme
* A fol. 209 rº b. un don divin, le grand Théodose, empereur des chrétiens, qui * releva et purifia toutes les églises orthodoxes, fit revenir les expulsés de leur exil et renvoya dans leurs sièges respectifs Cyrille à Jérusalem, Mélèce (*Melitos*) à Antioche et Eusèbe à Samosate. Il les mit à la tête du synode des cent cinquante (évêques) qu'il fit convoquer contre le schisme des pneumatomaques, au nombre desquels se trouvaient Grégoire le théologien, saint Nersès, patriarche des Arméniens, et d'autres.

Saint Cyrille après tant de tribulations, d'exil avec persécutions et de fatigues, reçut de nouveau son siège où des gens indignes l'avaient intronisé par la permission de Dieu. Après être parvenu à une bonne vieillesse avancée, il reposa dans le royaume des cieux le 18 mars, en nous laissant comme souvenir éternel ses écrits catéchétiques pour l'illumination de tous les peuples orthodoxes.

Saint Cyrille avait occupé le siège, avant et après, quarante-trois années; les années qu'il passa dans la persécution lorsqu'on l'eut déposé du siège sont de trente-quatre.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Որենդի եւ վեց եղբարցն իւրոց ։

Յետ մահուանն Դիոկղետիանոսի արքային թագաւորեաց Մաքսիմիանոս անօրէնն. եւ եկին ազգ բարբարոսաց յարեւմտից ի սահմանս Հոռոմոց՝ որք էին Մաւրիտանիք եւ Սկլաւք, եւ յոյժ աւերէին եւ ջնջէին զԹրակս եւ զՄակեդոնիա եւ զայլ արեւմտից գաւառսն ։

Եւ գրեաց Մարմարոթ * բարբարոսաց արքայն առ Մաքսիմիանոս զի եկեսցէ մենամարտիլ ընդ նմա միայն ինքն եւ կամ զայլ ոք տացէ, եւ որ յաղթէ՝ հնազանդեսցի նմա միւս կողմն ։ Եւ ի տարակուսի լեալ Մաքսիմիանոս քանզի յոյժ երկնչէր ի Մարմարոթայ վասն զօրաւոր եւ հզօր զօրութեան նորա, զի անձամբն որպէս հսկայ էր եւ քաջ պատերազմող ։ Եւ Մաքսիմիանոս յիշխանացն կամ ի զօրականացն իւրոց զոք ոչ կարաց գտանել որ եկեսցէ մենամարտիլ ընդ Մարմարոթայ ։ * A fol. 209 vº a.

Եւ ազդեցուցին նմա վասն սրբոյն Որէնդի՝ եթէ զօրեղ զօրական է եւ հզօր պատերազմող. կոչեաց զնա առաջի իւր՝ եւ տեսանէ զի էր երիտասարդ եւ գեղեցիկ տեսլեամբ, հաճոյ թուեցաւ նմա եւ առաքեաց ընդդէմ թշնամւոյն ։ Եւ սուրբն Որէնդիոս վեց եղբարբքն աղօթեցին առ Աստուած, եւ մտեալ ի մարտն՝ յաղթեաց ինքն միայն սկայազօր պատերազմողին եւ սպան զնա, եւ հատեալ զգլուխն տարաւ առ Մաքսի-

2 թագաւորեաց] միայն *add.* B || 3 Հոռոմոց] Հռոմայեցւոց B || 7 միայն *om.* B || 10 Մաքսիմիանոս *om.* B.

En ce jour martyre de saint Orentius et ses six frères.

Après la mort de l'empereur Dioclétien régna l'impie Maximien. Des peuplades barbares venant de l'occident envahirent les frontières romaines; c'étaient des Mauritaniens et des Slaves qui ravageaient et anéantissaient la Thrace, la Macédoine et les autres provinces occidentales.

Marmaroth, le roi des barbares, écrivit * à Maximien de venir se battre seul avec lui ou d'envoyer quelqu'un d'autre à sa place, afin qu'à celui qui aurait vaincu obéît la partie adverse. Maximien en fut angoissé, il redoutait en effet beaucoup Marmaroth à cause de sa force et de sa puissance, car celui-ci était de taille herculéenne et brave lutteur. Maximien ne put trouver personne parmi ses princes et ses soldats pour aller se battre en combat singulier avec Marmaroth. * A fol. 209 vº a.

On lui signala, à propos de saint Orentius, qu'il était un soldat fort et un puissant lutteur; il le manda en sa présence, vit qu'il était jeune, beau de visage, et agréable; il l'envoya à la rencontre de l'ennemi. Saint Orentius et ses six frères prièrent Dieu; il entra en lutte, vainquit à lui seul le gigantesque lutteur, le tua, lui trancha la tête et l'apporta à l'empereur Maximien.

միանոս արքային ։ Եւ հնազանդեցան նմա անթիւ զօրքն բարբարոսաց, եւ աղաղակեաց մեծաւ բարբառով Մաքսիմիանոս արքայն, գոհութիւն մատուցանէր զովասանութեամբ կռոցն եթէ ի նոցանէ տուաւ յաղթութիւնն, եւ նոքա զօրացուցին զՕրէնդիոս եւ ետուն նմա զքաջութիւնն ։

Իսկ սուրբ վկայն աղաղակեաց համարձակութեամբ. Քրիստոս զօրացոյց զիս եւ
* A fol. 209 v° b. ետ զյաղթութիւն եւ օգնեաց ինձ եւ ոչ * աստուածքն քո ։ Եւ թագաւորն ամաչեաց ի նմանէ զի յոյժ ուրախացոյց զնա, եւ առժամայն ոչ արար նմա չար, այլ մանաւանդ վերափոխեաց ի վեհագոյն պատիւ, եւ բազում տուրս պարգեւեաց նմա, եւ սուրբն ոչինչ կամեցաւ առնուլ ի նմանէ, բայց միայն խնդրեաց զգօտին Մարմարօթայ արքային, զի յոյժ պատուական եւ մեծագին էր. եւ շնորհեաց նմա ։

Եւ յետ աւուրց կոչեաց առ ինքն եւ բազում աղաչանօք եւ խոստմամբ ողոքէր եւ խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն, եւ ոչ կարաց դարձուցանել ։ Եւ հրամայեաց զօրականացն զի զսուրբն Օրէնդիոս եւ զվեց եղբարսն իւր աքսորեսցեն ի հեռաւոր երկիր ։ Եւ ըստ հրամանի նորա տարան զնա ի քաղաքն Տրապիզոնդի եւ զվեց եղբարսն ցրուեցին յԱփխազս եւ ի Ճքերս եւ ի Զալիկի, եւ անդ ի սովոյ եւ ի մերկութենէ հանգեան բարի խոստովանութեամբ ի Քրիստոս ։

Եւ ի սրբոյն Օրենդիոսի կապեցին վէմ մի ի պարանոցն մեծ յոյժ, եւ ընկեցին ի

2 զովասանութեամբ] զովասացութեամբ B || 17 կապեցին] կախեցին B.

Les troupes innombrables des barbares lui promirent obéissance, et l'empereur Maximien, criant à haute voix, rendit grâce avec éloges aux idoles, parce que par elles avait été procurée la victoire, et parce qu'elles avaient fortifié Orentius et lui avaient donné le courage.

Mais le saint martyr cria avec hardiesse : « C'est le Christ qui m'a fortifié
* A fol. 209 v° b. et m'a donné la victoire, qui m'a aidé, et non * tes dieux. » L'empereur eut honte de celui qui l'avait grandement réjoui, ne lui fit aucun mal sur-le-champ et même l'éleva à la plus grande dignité en lui offrant beaucoup de présents, mais le saint ne voulut rien accepter de lui, il lui demanda seulement la ceinture du roi Marmaroth qui était précieuse et de grande valeur. (L'empereur) l'en gratifia.

Après plusieurs jours, il l'appela à lui, l'engagea avec force prières et promesses, et lui conseilla de renier le Christ et d'immoler aux idoles, mais il ne put le convertir. Il ordonna à ses soldats d'exiler saint Orentius et ses six frères dans un pays lointain. Suivant l'ordre, ceux-ci le conduisirent donc avec ses six frères à la ville de Trébizonde, et les dispersèrent à Apkhaz, Djkorkh et Zalik où ils moururent de faim et de nudité en bonne confession pour le Christ.

Quant à saint Orentius, ils lui attachèrent une pierre au cou et le jetèrent

ծովն ։ Եւ հրեշտակապետն Ռափայէլ եհան զնա ի ցամաքն, եւ կացոյց ի վերայ վիմի եւ անդ աղօթելով առ Աստուած աւանդեաց զհոգին Մարտի ԺԸ ։ Եւ երեւեցաւ սուրբն քրիստոնէից, եւ երթեալ առին զմարմին եւ թաղեցին պատուով ։

Յայսմ աւուր յիշատակ Վանական վարդապետին Հայոց ։

* Ամենագով եւ երջանիկ հայրն մեր սուրբ վարդապետն Վանական էր յաշխարհէն Աղուանից ի Տաւուշ գաւառէն, եւ ծնողքն նուիրեցին զնա Աստուծոյ. եւ սրբութեամբ սնաւ առ երէց եղբօրն իւրում որոյ անուն էր Պօղոս կուսան եւ սուրբ քահանայ ։ Եւ թողեալ զերկիր ծննդեան իւրոյ՝ գնաց առ մեծ վարդապետն Մխիթար, եւ եղեւ ուսումնասէր յոյժ եւ ձեռնադրեցին զնա քահանայ ի վանսն Գետիկ ։ Եւ մականուն վարդապետին Գուշ ։ Եւ ուսաւ ի նմանէ զմեկնութիւն հին եւ նոր կտակարանացն, եւ եղեւ կատարեալ գիտնական եւ արժանի լեալ աստիճանի եւ անուան վարդապետի՝ գնաց յաշխարհն իւր եւ շինեաց վանս եւ ի նմա փառաւոր եկեղեցի սրբատաշ վիմօք, գմբեթաւոր եւ բազմախորան, եւ անուանեաց զվանսն Խորանաշատ ։ * A fol. 210 r° a.

Եւ համբաւ իմաստութեան նորա համանգամայն տարածեցաւ ընդ տիեզերս, եւ

1-3 Եւ հրեշտակապետն ... պատուով] Եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Արեգի Ժ եւ Մարտի ԺԸ ։ Եւ յետ աւուրց երեւեցաւ սուրբն քրիստոնէից ոմանց. եւ երթեալ գտին զմարմինն ի վերայ վիմի ի ցամաքն, եւ թաղեցին պատուով B.

à la mer. L'archange Raphaël le tira sur le rivage, le plaça sur un rocher et c'est là qu'en priant Dieu il rendit son âme le 18 mars. Le saint apparut aux chrétiens, qui allèrent relever son corps et l'enterrèrent avec honneur.

En ce jour commémoration du Vardapet des Arméniens, Vanakan.

* Notre bienheureux père, digne de tous les éloges, le saint vardapet Vanakañ était du pays de l'Albanie, de la province de Tavouš. Ses parents l'avaient offert à Dieu. Il fut élevé dans la sainteté auprès de son frère aîné, dont le nom était Paul, célibataire et saint prêtre. Il quitta son pays natal, se rendit auprès du grand vardapet Mékhitar, fut très appliqué aux études et fut ordonné prêtre au couvent de Gétik. Le nom de famile du Vardapet était Goš. Il apprit de lui l'exégèse de l'ancien et du nouveau testament, devint un savant accompli, puis, ayant mérité le grade et le titre de vardapet, il se rendit dans son pays et y construisit un couvent avec une magnifique église en pierre de taille, avec des coupoles et de nombreuses chapelles. Il appela le couvent Khoranašat[1]. * A fol. 210 r° a.

La renommée de sa sagesse se répandit unanimement de par le monde;

1. Mot à mot : aux nombreuses chapelles.

գային առ նա յամենայն կողմանց եւ ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան եւ սրբութեան եւ զգիտութիւն աստուածեղէն գրոց, եւ լուսաւորեալ դառնային յիւրաքանչիւր տեղիս, եւ լինէին լոյսք աշխարհաց ։

Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ Ջալալդինն ոմն բռնաւոր Խորասանայ, եւ աւերեաց զամենայն աշխարհս Հայոց եւ Աղուանից ։ Գնաց նա յանապատ տեղի յորում էր քար մեծ
* A fol. 210 r° b. յոյժ եւ փորեաց ի նմա այրս բրածոյս եւ եկեղեցիս փորեալս, եւ դադարեաց ի * նմա բազում ժամանակս մինչեւ եկն Թաթար զօրքն ի վեց հարիւր եւ ութսուն եւ չորս ամի թուականութեանս Հայոց, առաջնորդ ունելով զՃարմաղանեանն՝ հրամանօք Հոքթաղանին, եւ աւերեաց զբազում գաւառս Թուրքաց եւ Պարսից, Հայոց եւ Վրաց, եւ գերեաց ։ Գերեցաւ եւ նա աշակերտօք իւրովք եւ բազում ժողովրդովք, եւ շնորհօքն Աստուծոյ ազատեալք ի նոցանէ՝ եկն դարձեալ յառաջին վանսն իւր ի Խորանաշատ եւ մխիթարէր զբազումս, զի զուարթամիտ էր իբրեւ զԲառնաբաս, այր չափահասակ, մեծ եւ լայնամօրուք, տեսոյն փառաւոր եւ ամենեւին շնորհալից, միտք ծննդական, յանդիմանիչ հերձուածողաց, մեղաւորաց դարձուցիչ եւ կոչող յապաշխարութիւն, պահող, աղօթական, եւ սուրբ հոգւով եւ մարմնով, բազում որդիս ի փառս ածեալ, հասեալ ի խորին ծերութիւն, ալեւորեալ եւ լի աւուրբք՝ հանգեաւ ի Քրիստոս ամաց եօթանասնից, ի թուականին Հայոց Չ, Արեգի Ժ եւ Մարտի ԺԸ, ի տօնի սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին եւ Որենտի եւ վեց եղբարց ։

on vint le voir de tous côtés, pour apprendre de lui la vie de modestie, de sainteté et la science des écritures divines. Illuminé par lui, chacun retournait à son domicile et tous devinrent les lumières des régions.

Il y avait en ce temps-là un certain tyran du Khorassan, Djalal-ad-dìn, qui ruinait tout le pays d'Arménie et de l'Albanie. Il se retira dans un lieu désert où se trouvait un grand rocher, y creusa des cellules à l'intérieur et des
* A fol. 210 r° b. chapelles et il y * demeura longtemps, jusqu'à l'arrivée des troupes tartares, l'an six cent quatre-vingt-quatre de l'ère arménienne, sous la conduite de Tcharmaghan, par ordre de Hokhthaghan, qui détruisit nombre de provinces turques et persanes, arméniennes et albaniennes et y fit des prisonniers. (Vanakan) aussi fut fait prisonnier avec ses disciples et une nombreuse population; puis, ayant recouvré la liberté par la grâce de Dieu, il retourna à son premier couvent de Khoranašat et consola nombre de gens, car il était d'humeur gaie comme Barnabé, de moyenne taille, portant une grande et épaisse barbe, d'un aspect imposant, tout à fait charmant, d'un esprit fécond, blâmant les schismatiques, convertissant les pécheurs et les invitant à la pénitence, observant les jeûnes, toujours en prières, saint d'esprit et de corps, ayant élevé à la gloire bien des fils (spirituels), et parvenu à une vieillesse avancée; ayant les cheveux blancs et plein d'années, il reposa dans le Christ à soixante-dix ans, l'an 700 de l'ère arménienne, le 10 areg, 18 mars, jour de fête de saint Cyrille patriarche de Jérusalem, et d'Orentius et ses six frères.

Արեգի ԺԱ և Մարտի ԺԹ ։ Վկայութիւն սրբուհւոյն Կոպրիլայ ։

Յաւուրս Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի * ամբարիշտ թագաւորացն՝ էր սրբուհին Կոպրիլա, ի քաղաքէն Կիւրենայ, քրիստոնեայ և քրիստոնէից զաւակ ։ Եւ յորժամ եղև չորեքտասան ամաց՝ ետուն զնա առն, և կեցեալք ի միասին ամս երկու և ամիսս վեց, եղև զլխացաւ և ի բժշկաց նմա օգուտ ոչ եղև ։ * A fol. 210 v° a.

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ էր ի բանդին սուրբն Թէոդորոս Կիւրենայ եպիսկոպոսն վասն հաւատոյն Քրիստոսի ։ Գնաց ի բանդին առ նա երանելին Կոպրիլա, վասն դնելոյ ձեռն ի վերայ գլխոյն զի ողջասցի, որպէս և եղև իսկ ։ Եւ յորժամ գնաց առ նա՝ եգիտ զերանելի երկու կուսանսն զԼուկիա և զԱրուաս, որք երթեալ էին առ նա և լսէին զվարդապետութիւն նորա ։

Եւ եղև մարտիրոսանալ սրբոյն Թէոդորոսի Կիւրենայ եպիսկոպոսին, և դատաւորն սպառնալեօք պատուիրէր նոցա ուրանալ զՔրիստոս, և նոքա ամենևին ոչ հաւանեցան և ոչ երկեան ի սպառնալեացն ։ Եւ էր Կոպրիլա յոյժ գեղեցիկ տեսլեամբ, և դատաւորն տռփացաւ ի նա ցանկութեամբ, և պշուցեալ հայէր ցերեսն ։

1 Կոպրիլայ] Կիւրենացւոյ *add.* B || 2 ամբարիշտ] անաստուած B || 9 զԱրուաս] զԱրօյաս B || 11 եպիսկոպոսին] վասն հաւատոյն Քրիստոսի, եւ կացուցին առաջի Դիոկղետիանոսի դատաւորին զերանելի կանայսն զԼուկիա եւ զԱրուաս, կայր ի մէջի նոցա եւ սրբուհին Կոպրիլա ։ Եհարց ցնոսա դատաւորն թէ. Որո՞վ հաւատով կայք ։ Եւ նոքա ասեն թէ. Քրիստոնեայ եմք եւ աշակերտք սրբոյն Թէոդորոսի Կիւրենայ եպիսկոպոսին *add.* B.

11 AREG, 19 Mars.

Martyre de sainte Cyprilla.

Aux jours de Dioclétien et Maximien * les empereurs impies, vivait sainte Cyprilla (*Coprila*), de la ville de Cyrène, chrétienne et fille de chrétiens. Lorsqu'elle eut quatorze ans, on la maria, elle vécut avec son mari deux ans et six mois, puis elle eut une maladie de tête à laquelle les médecins ne purent apporter de soulagement. * A fol. 210 v° a.

A cette époque se trouvait en prison saint Théodore, évêque de Cyrène, pour la foi du Christ. La bienheureuse Cyprilla alla le trouver dans la prison pour qu'il imposât ses mains sur sa tête et qu'elle guérît, comme il arriva en effet. Or, lorsqu'elle alla auprès de lui, elle y trouva deux bienheureuses vierges, Lucie et Aroa (*Arouas*), qui étaient allées auprès de lui pour entendre sa doctrine.

Il arriva que saint Théodore, évêque de Cyrène, fut martyrisé, et le juge les engagea, avec menaces, de renier le Christ, mais elles refusèrent absolument et ne craignirent point les menaces. Cyprilla était fort belle de visage et le juge conçut de mauvais désirs à son égard; il la regardait fixement. Il ordonna de

Հրամայեաց եւ եղին ի ձեռս նորա կայծակունս եւ կնդրուկ զի խնկեսցէ կռոցն, եւ երանելի կինն զմատունսն փակեաց ի վերայ հրոյն մինչեւ այրեցան ձեռքն, եւ գեղ-երեսաց թարշամեցաւ ։

Կախեցին զնա մերկ զփայտէ եւ երկաթի քերչօք քերեցին զմարմինն, եւ ընդ արեանն

* A fol. 210 v° b. ելանէին քրտունք եւ ի ստեանցն բղխէր կաթն ։ Եւ տեսեալ * դատաւորին զարմացաւ յոյժ, իջուցին ի փայտէն, եւ աղօթեալ առ Աստուած՝ աւանդեաց զհոգին Մարտի ԺԹ ։ Եւ բուրեաց ի մարմնոյն անուշահոտութիւն ։

Իսկ երանելի կուսանքն Լուկիա եւ Արուաս հրամանաւ դատաւորին թաղեցին զսրբուհին Կուրիլա մեծաւ պատուով ։ Եւ կաթն ի ստեանց բղխելոյ ոչ դադարէր, եւ աղաչեցին կուսանքն զԱստուած եւ արգելաւ կաթն ի ստեանցն ։

Յայսմ աւուր տօն Յովհաննու Երուսաղեմայ հայրապետին ։

* B p. 120 b. [B * Յայսմ աւուր տօն սրբոյն Յովհաննու Երուսաղեմի հայրապետին, որ նստաւ յաթոռ հայրապետութեան յետ սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ, որ եւ վասն ոսկեսիրութեան յանդիմանեցաւ ի սրբոյն Եպիփանէ, զի այլ ամենայն առաքինութեամբ զերազանցեալ էր յոյժ ։ Որ յետ բազում վաստակոց եւ արդեանց վասն եկեղեցւոյ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։]

5 բղխէր] ելանէր B || 6 զհոգին] իւր՝ Արեգի ԺԱ եւ *add.* B || 7 եւ բուրեաց... անուշահոտութիւն *om.* B || 9-10 Եւ կաթն... ստեանցն *om.* B.

lui mettre dans les mains des braises ardentes et de l'encens pour encenser les idoles, mais la bienheureuse femme referma ses doigts sur le feu, jusqu'à ce que ses mains fussent brûlées et que la beauté de son visage fût fanée.

On la suspendit nue à un poteau et on lui déchira le corps avec des ongles

* A fol. 210 v° b. de fer, avec le sang jaillissait la sueur et le lait des seins. Ce que voyant * le juge en fut très étonné et la fit descendre du poteau; elle pria Dieu et rendit son âme le 19 mars. Une odeur suave se dégagea de son corps.

Les saintes vierges Lucie et Aroa enterrèrent, par ordre du juge, sainte Cyprilla avec de grands honneurs. Comme le lait ne cessait de couler de ses seins, les vierges prièrent Dieu et le lait s'arrêta (de couler) des seins.

En ce jour fête de Jean, patriarche de Jérusalem.

* B p. 120 b. [B * En ce jour fête de saint Jean, patriarche de Jérusalem, qui siégea sur le trône patriarcal après saint Cyrille de Jérusalem et qui fut réprimandé pour son amour de l'or par saint Épiphane, car il possédait au plus haut degré toutes les autres vertus. Il reposa en paix dans le Christ après bien des peines et des mérites pour l'église.]

Արեգի ԺԲ եւ Մարտի Ի ։ Վկայաբանութիւն սրբոցն Յունանու եւ Բարաքիսի եւ ինն մարտիրոսացն Քսանթիայ, Ղազարու, Մարութայի, Ներսեհի, Եղիայի, Մարիսի, Աբիբոսի, Սիմբերդեսի եւ Սաբասի ։

Քրիստոսի մարտիրոսքն Յունան եւ Բարաքիսս՝ էին ի Պարսիկս առ Սաբուհւոյն հրապաշտ արքային Պարսից ։ Եւ յաւուրս մեծի թագաւորին Կոստանդիանոսի էին կրօնաւորք աբեղայք, եւ ելեալ ի վանաց իւրեանց գնացին ի գեօղն որ կոչի Մարդաբոխ, յորում էին ի բանտի ինն խոստովանող վկայքն Քրիստոսի ։ Եւ մտեալ ի բանտն ողջունեցին եւ քաջալերէին զնոսա հաստատուն կալ ի սէրն Քրիստոսի, եւ մեռանել վասն անուան նորա եւ ժառանգել զանստուեր լոյսն եւ զանսպառ կեանսն յարքայութեանն Աստուծոյ ։

Եւ տեսեալ զնոսա ոմանք ի Պարսիցն երթեալ *մատնեցին զնոսա երեք մոգպետացն որք էին իշխանք, Մասդրաթ, Շիրա, Մախառնիս. եւ առաքեցին զօրականս եւ տարան առաջի՝ զՅունան եւ զԲարաքիսն ։ Եւ ողոքանօք խրատ տային եւ նեղէին զնոսա պաշտել զարեգակն եւ զհուր. եւ ոչ կարացին դարձուցանել զնոսա ի յուսոյն Քրիստոսի ։ * A fol. r° a

1 Վկայաբանութիւն] Վկայութիւն B — սրբոցն *om.* B || 2 մարտիրոսացն] ընկերացն B || 3 Սիմբերդեսի] Սիմբեթիոսի B — Սաբասի] որք նահատակեցան ի Պարսիկս բազում տանջանօք *add.* B || 11 մոգպետացն որք էին իշխանք] մոգպետ իշխանացն B.

12 AREG, **20 Mars.**

Martyre des saints Jonas et Barachie et des neuf martyrs Xanthos, Lazare, Marouta, Nersès, Élie, Mari, Habib, Simberdès et Sabas.

Les martyrs du Christ Jonas et Barachie étaient en Perse aux jours de Sapor le roi des Perses, adorateur du feu. C'étaient des moines solitaires qui, aux jours du grand empereur Constantin, avaient quitté leur couvent et s'étaient rendus au village appelé Mardabokh, où se trouvaient en prison neuf martyrs confesseurs du Christ. Ayant pénétré dans la prison, ils les saluèrent, et les encouragèrent à rester fermes dans l'amour du Christ, à mourir pour son nom et à hériter de la lumière sans ombre et de la vie intarissable dans le royaume de Dieu.

Quelques-uns d'entre les Perses, les ayant aperçus, allèrent les *dénoncer aux trois chefs des mages, qui étaient princes : Masdrath, Šira, Maḥarnis, qui envoyèrent des soldats pour leur amener Jonas et Barachie. Ils les engagèrent par de douces paroles et les pressèrent d'adorer le soleil et le feu, mais ils ne purent les détourner de l'espérance au Christ. * A fol. 211 r° a.

Հրամայեցին եւ զՅունան միայն կապեցին պարսկօրէն, զերկու ոտսն ի մի եւ զերկու ձեռսն ի մի, եւ անցուցին փայտ ընդ ձեռսն եւ ընդ ոտսն, եւ ընկեցին որպէս կոճղ յերկիր ։ Եւ արք զօրաւորք հարկանէին զնա ուժգին որպէս զվէմ դալար բրօք, եւ քարշէին արտաքս յաւուրս սաստիկ ցրտոյ. եւ թողին զնա մերկ նոյն կապանօք զգիշերն ամենայն ։ Եւ առաւօտուն հարցանէին ևթէ. Որպէս եղեր ի գիշերիս ։ Եւ նա ասէ. Մինչեւ ծնեալ է մայրն իմ զիս յերկիր՝ այսպիսի անոյշ քուն եւ հանգիստ ոչ եմ լեալ ։

Տարան առաջի եւ զսուրբն Բարաքիս, եւ նոքա նոյնպէս եւ զնա պատրողական բանիւք ջանային խաբել, եւ ամենեւին ոչ կարացին խախտել ի հաւատոյն Քրիստոսի ։ Կախեցին զերանելին գլխիվայր, եւ հատին զմատունս ձեռացն եւ ոտիցն, եւ արկին զերկոսեանն ի բանտ ։

Իսկ զինն սուրբ վկայսն ի ցերեկի ոչ իշխէին հարցանել եւ քննել վասն վարդա-
* A fol. 211 r° b. պետութեանն Յունանու եւ Բարաքիսի. այլ ի գիշերի * հարցաքննութիւն առնէին, եւ բռնադատէին զնոսա ուրանալ զՔրիստոս եւ լինել պարսկական հաւատովն ։ Եւ նոքա որպէս ի միոջէ բերանոյ մեծաւ անարգանօք նզովեցին զուրացողսն Քրիստոսի աստուածութեանն եւ զպաշտօղս արեգականն եւ հրոյ ։ Այրեցին հրով զկողս եւ զկուշտս նոցա, եւ հալեալ կապար հեղին յարտեւանունսն եւ յունչս եւ յականջս նոցա, եւ ապա քարշեցին արտաքս եւ հատին զինն մարտիրոսացն զգլուխն, եւ ընկեցին զմարմինսն ի խոր գուբ ։

14 ի միոջէ] ի միոյ B || 15 զպաշտօղս] զխոստովանողս B.

Ils ordonnèrent de lier Jonas seul, à la manière persane, les deux pieds ensemble et les deux mains ensemble, lui passèrent une barre de bois entre les pieds et entre les mains et le jetèrent à terre comme un tronc. Des hommes vigoureux le frappèrent vigoureusement avec des branches fraîches comme sur une pierre et le traînèrent dehors par des journées de grand froid; ils l'abandonnèrent nu avec les mêmes liens toute la nuit. Au matin ils lui demandèrent : « Comment as-tu passé la nuit? » Il répondit : « Depuis que ma mère m'a mis au monde je n'ai jamais eu un sommeil si doux et si reposant. »

Ils firent comparaître aussi saint Barachie; on essaya également de le séduire par des paroles trompeuses, mais on ne put l'ébranler de la foi au Christ. On suspendit le bienheureux la tête en bas, on lui coupa les doigts des mains et des pieds et on les jeta tous les deux en prison.

On n'osa point interroger et examiner de jour les neuf saints martyrs au
* A fol. 211 r° b. sujet de la doctrine de Jonas et de Barachie, * mais on fit cet examen de nuit et on les pressa de renier le Christ et d'accepter la religion persane. Mais, comme d'une seule bouche, ils anathématisèrent avec de grandes injures les négateurs de la divinité du Christ et les adorateurs du soleil et du feu. On leur brûla les côtes, on répandit du plomb fondu sur leurs paupières, leur nez et leurs oreilles; on les traîna dehors, et on trancha la tête à ces neuf martyrs, puis on jeta leurs corps dans une fosse profonde.

Եւ զսրբոյն Յովնանու շուրջ զգլխովն բերթեցին եւ հանին փոկ, հատին եւ զլեզուն, եւ զմարմինն պնդեցին ի մամուլս, մինչեւ ամենայն ոսկերքն ջախջախեցան :

Եւ զսրբոյն Բարաքիսի գլորեցին մերկ ի վերայ փշոց, եւ հերձեալ եղեգանս եւ պնդեցին բարակ չուանօք ընդ մարմինն մինչեւ թաղեցաւ յանձնն : Եւ ապա մի մի բռնութեամբ քարշէին զհերձեալ եղեգունս, եւ յօշ կոտորեցաւ անձնն՝ եւ արիւնն որպէս առու հեղեալ ի մարմնոյն : Եւ ապա ընկեցին զերկոսեանն ի խոր գուբն կիսամահ, ուր եւ զայլ ինն սուրբսն ընկեցին, եւ այնպէս աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած Մարտի Ի :

Եւ այն մի պարսիկ քրիստոնեայ որոյ անուն էր Աբդիշոյ տուեալ հինգ հարիւր դրամ գնեաց զմետասան մարմին սրբոց վկայիցն, եդիր պատուով ի տեղի նշանաւոր :

* Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Եմելիանոսին : * A fol. 211 v° a.

Քրիստոսի վկայն Եմելիանոս էր ծառայ առն հեթանոսի, ի քաղաքէն Դորոսթոլեայ, յաւուրս յանցող արքային Յուլիանոսի, ուրացողին Քրիստոսի. եւ ինքն էր քրիստոնեայ :

Եւ ի միում աւուր գտեալ զդուրս տաճարի կռոցն ի բաց եւ ի ներքս ի մարդկանէ

8 Աստուած] Արեգի ԺԲ եւ *add.* B || 12 Դորոսթոլեայ] Միւսիոյ *add.* B || 13 արքային] թագաւորին B — Քրիստոսի *om.* B.

On déchira la tête à saint Jonas et on lui enleva la peau tout autour, on lui coupa la langue, on mit son corps sous une presse jusqu'à ce que tous ses os fussent brisés.

On fit rouler saint Barachie nu sur des épines, on coupa des roseaux qu'on attacha avec des ficelles sur le corps jusqu'à ce que toute sa personne en fût couverte ; ensuite on se mit à retirer avec force les morceaux de roseau un à un, tout son corps fut atrocement déchiqueté et le sang coula comme un ruisseau le long du corps. On les jeta ensuite tous les deux à moitié morts dans la fosse profonde où ils avaient jeté les neuf saints, et c'est ainsi qu'ils rendirent leur âme à Dieu, le 20 mars.

Un certain persan chrétien, dont le nom était Abdišo versa, cinq cents écus et acheta les onze corps des saints martyrs et les déposa avec honneur dans un endroit célèbre.

* En ce jour martyre de saint Émilien. * A fol. 211 v° a.

Le martyr du Christ Émilien était serviteur d'un homme infidèle dans la ville de Dorostorum (*Dorostola*), aux jours de l'empereur coupable Julien, le renégat du Christ, étant lui-même chrétien.

Un jour, ayant trouvé ouverte la porte du temple des idoles et n'aperce-

ոչ զոք ետես, էառ ծանր կռան եւ մտեալ խորտակեաց զամենայն բագինսն մանր, եւ զզոհսն ցրուեաց ։ Եւ յորժամ տեսին քուրմքն կալան զոմն հողագործ, տանջէին եւ քարշէին առաջի Բիգանիրի ։ Եւ տեսեալ Եմելիանոս զայրն ի նեղութեան, եկաց առաջի եւ խոստովանեցաւ զմեղսն զոր արար, եւ ասէ. Ես եմ քրիստոնեայ, եւ արժան էր ինձ որ զայն առնէի ։ Մերկացուցին զնա եւ հարին ուժգին արջառաջլօք, ապա ընկեցին ի հուր եւ ոչ այրեցաւ, եւ գոհանալով եւ փառաւորելով զԱստուած՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։ Եւ շնորհս ետուն յԱստուծոյ սրբոյն Եմելիանոսի արագահաս օգնական լինել ամենայն նաւակոծելոց ի մրրկեալ ալեաց ծովու ։

Արեգի ԺԳ եւ Մարտի ԻԱ ։ Վարք սուրբ հօրն Բենեդիկտոսի ։

* A fol. 211 v° b. * Սուրբ հայրն Բենեդիկտոս էր ի Կամպանիոյ երկրէն, յոյժ տեղեակ աստուածային կտակարանաց, եւ ի տղայութենէ սիրեաց զվարս միայնակեցութեան, եւ բնակէր յայրի միում անգիտելի ի մարդկանէ ։

Եւ ի տօնի սուրբ զատկին երեւեցաւ Աստուած երիցու միոջ՝ որ պատրաստեալ

1 մտեալ] գաղտաբար *add.* B ‖ 3 Բիգանիրի] Բիգարին որպէս թէ նա արարեալ իցէ B ‖ 4 զմեղսն] զիրսն B ‖ 6 եւ ոչ այրեցաւ *om.* B ‖ 7 Աստուած] Քրիստոս B — յԱստուծոյ *om.* B ‖ 9 սուրբ] եւ մեծ *add.* B ‖ 10 տեղեակ] եւ վարժ *add.* B ‖ 13 Աստուած] ի տեսլեան *add.* B.

vant personne à l'intérieur, il saisit un lourd marteau, pénétra à l'intérieur, réduisit en menus morceaux toutes les idoles et dispersa les victimes. Lorsqu'ils s'en aperçurent, les prêtres d'idoles se saisirent d'un laboureur, le torturèrent et le traînèrent devant Biganir. Émilien, à la vue de cet homme dans les souffrances, se présenta, avoua le méfait qu'il avait commis et dit : « Je suis chrétien, et je devais faire ce que j'ai fait. » On le dépouilla, et on le frappa vigoureusement avec des nerfs de bœuf, ensuite on le jeta dans les flammes, mais il ne brûla point, et c'est en rendant grâces à Dieu et en le glorifiant qu'il rendit son âme à Dieu. La grâce fut accordée par Dieu à saint Émilien d'arriver promptement au secours de ceux qui sont en danger de naufrager dans les tempêtes en mer.

13 areg, **21 Mars.**

Vie du saint père Benoît.

A fol. 211 v° b. * Le saint père Benoît était de la province de Campanie, très versé dans les testaments divins, ayant aimé dès l'enfance la vie solitaire, et il vivait dans une grotte, ignoré des hommes.

Le saint jour de fête de Pâques, Dieu apparut à un prêtre qui s'était fait préparer de nombreux plats pour dîner avec sa famille et lui dit : « Prêtre, tu

էր իւր բազում խորտիկս եւ կամէր ճաշակել ընտանեօք իւրովք, եւ ասէ ցնա. Երէց՝ դու ազգի ազգի խորտիկս պատրաստեցեր քեզ, եւ ծառայն իմ Բենեդիկտոս յայս նեղ այրի քաղցեալ է, տար նմա ի խորտկացդ այդմ : Եւ առժամայն առեալ երիցուն յամենայն խորտկացն տարաւ նմա ի ցուցեալ այրն : Եւ ասէ ցնա երէցն. Արի հայր եւ ճաշակեսցուք ի միասին ի պարգեւացս զոր առաքեաց քեզ Աստուած՝ զի Զատիկ Տեառն է : Եւ ասէ սուրբն. Արդարեւ Զատիկ է, որովհետեւ տեսի զքեզ. եւ ոչ գիտէր եթէ Յարութիւն Փրկչին էր : Եւ ասէ երէցն. Ստուգապէս Յարութիւն Տեառն է, եւ գոհացեալք զԱստուծոյ ճաշակեցին ի միասին :

Եւ կին մի փայտեղէն ամանով ցորեան բերէր նմա, եւ սատանայ ընկէց զամանն եւ ջարդեաց, եւ սկսաւ կինն լալ : Եւ առեալ սրբոյն զանօթն ի ձեռս իւր եւ խաչակնքեալ ի վերայ ողջացոյց եւ ետ ցկինն, եւ գնաց ուրախութեամբ :

Եւ եկեալ եղբարք ի վանաց մի աղաչէին զնա լինել նոցա առաջնորդ, եւ գնաց առ նոսա. եւ նոքա տաղտկացեալ ի *սքանչելի վարուց նորա եւ ի խրատուէ խառնեցին ի կերակուր նորա մահադեղ, եւ խաչակնքեալ սրբոյն ի վերայ ամանոյն՝ առժամայն հերձաւ : Եւ հրաման ետ սուրբն ագռաւու միոյ եւ առեալ զխարդախ կերակուրն ընկէց արտաքոյ վանացն, եւ ինքն եկեալ ընկալաւ ի ձեռաց հօրն զանխարդախ կերակուրն : * A fol. r° a.

9-11 Եւ կին ... ուրախութեամբ] Եւ յայնմ օրէ գային առ նա մարդիկ եւ գտանէին զհոգեւոր մխիթարութիւն B || 15-16 Եւ հրաման ... վանացն] եւ հեղաւ մահադեղն B.

t'es fait préparer des plats variés, tandis que mon serviteur Benoît subit la faim dans une telle grotte; porte-lui une part de ces plats. » Le prêtre prit aussitôt une part de tous les mets et l'apporta à la grotte indiquée. Le prêtre dit : « Lève-toi, père, nous mangerons ensemble des dons que Dieu t'a envoyés, car c'est la Pâque du Seigneur. » Le saint répondit : « En effet c'est Pâques puisque je te vois. » Car il ignorait que c'était la Résurrection du Sauveur. Le prêtre lui dit : « En vérité, c'est la Résurrection du Seigneur. » Et en rendant grâces à Dieu ils dînèrent ensemble.

Une femme lui apportait du blé dans un ustensile en bois, le démon fit tomber l'ustensile et le cassa, la femme se mit à pleurer. Le saint prit l'ustensile dans ses mains, fit le signe de croix dessus, le répara et le rendit à la femme qui s'en alla joyeusement.

Des frères d'un certain couvent vinrent le prier d'être leur prieur; il se rendit chez eux, mais ils se lassèrent * de sa vie admirable et de ses conseils, * A fol. 212 r° a.
et ils mirent du poison dans ses aliments; le saint ayant fait le signe de la croix sur l'ustensile, celui-ci se brisa aussitôt. Le saint donna l'ordre à un corbeau qui vint prendre le mets empoisonné, le jeta hors du couvent et revint prendre des mains du père la saine nourriture.

Եւ գնաց սուրբն ի նոցանէ, եւ շինեաց երկու վանս եւ ժողովեաց եղբարս, եւ զի ոչ ունէին ջուր՝ բղխեցուց նոցա ջուր : Եւ ժողովեաց աշակերտս բազումս, եւ ուսոյց նոցա զկարգ եւ զկրօն ճգնաւորաց եւ կրօնաւորաց : Գրեաց ինքն գիրս եւ կանոնս վարուց կրօնաւորաց եւ քաղաքականաց զոր մինչեւ ցայսօր ունին ամենայն ազգք Հռոմայեցւոց, եւ առնեն անպակաս վանականք եւ աշխարհականք :

Եւ հասեալ ի խորին ծերութիւն հանգեաւ ի Քրիստոս Մարտի ԻԱ :

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Մատրոնայ Թեսաղոնիկեցւոյ :

Կինս այս էր աղախին հրէի միոյ կնոջ որոյ անուն էր Պաւլիտեա, սանտրէր եւ հիւսէր զհերս տիկնոջ իւրոյ : Եւ ի ժամ աղօթիցն յուղարկէր զտիկինն իւր ի ժողովարանն հրէից եւ ինքն երթայր յեկեղեցին քրիստոնէից եւ յաղօթս կայր :

Եւ մատնեցին զնա առ տիկինն իւր եթէ քրիստոնեայ է, եւ նա դարձեալ մատնեաց
* A fol. 212 r° b. Հրէիցն : Եւ ժողովեցան առ նա եւ գանեցին * զՄատրոնա ուժգին չորք արք, եւ արկին ի բանդ կապանօք, եւ թողին զնա դաւուրս չորս անսուաղ : Եւ ապա հանին ի բանդէն

1 նոցանէ] անդրէն յայրն իւր *add.* B — եւ զի ոչ ունէին... ժողովեաց *om.* B || 3 եւ կրօնաւորաց *om.* B || 4 կրօնաւորաց] եւ վանականաց *add.* B || 5 աշխարհականք] ունէր յԱստուծոյ եւ զշնորհս մարգարէութեան, արար եւ զբազում գործս սքանչելեաց *add.* B || 6 Քրիստոս] Արեգի ԺԴ եւ *add.* B || 7 Կինս] Երանելի կինս B — միոյ *om.* B — Պաւլիտեա] Պատիլա B.

Le saint les quitta, fit construire deux couvents et y rassembla des frères; comme ils n'avaient point d'eau, il leur fit jaillir une source. Il rassembla beaucoup de disciples, il leur enseigna l'ordre et la vie des ascètes et des religieux. Il écrivit des livres et des règles pour la vie des religieux et des laïcs que toutes les nations des Romains observent jusqu'aujourd'hui et qu'accomplissent incessamment les religieux des couvents et les laïcs.

Parvenu à une vieillesse avancée, saint Benoît reposa dans le Christ le 21 mars.

En ce jour martyre de sainte Matrone de Thessalonique.

Cette femme était la domestique d'une juive dont le nom était Politéa, elle peignait sa maîtresse et lui tressait les cheveux. A l'heure de la prière elle conduisait sa maîtresse à la synagogue des juifs, puis elle se rendait à l'église des chrétiens et y priait.

On la dénonça à sa maîtresse comme étant chrétienne, et celle-ci le répéta
* A fol. 212 r° b. aux Juifs. Ceux-ci se rassemblèrent auprès de * Matrona et quatre hommes la frappèrent brutalement; ensuite on la jeta en prison chargée de chaînes où on l'abandonna quatre jours sans nourriture. On la fit ensuite sortir de la

եւ այնչափ գանեցին զնա միւսանգամ՝ մինչեւ ամենայն մարմինն բերթեցաւ, եւ դարձեալ արկին ի բանտ եւ անտես արարին զնա բազում աւուրս, եւ ի սովոյն եւ ի ցաւոցն վշտացն վիրաւորեալ անձինն՝ աղօթելով եւ բարի խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մարտի ԻԱ ։

Եւ հրամայեաց տիկինն իւր հանել ի բանդէն զմարմին նորա եւ ձգել արտաքոյ քաղաքին, զոր առեալ քրիստոնէիցն թաղեցին ի պողոտայն ։

Եւ յետ հալածանացն Աղեկսանդրոս Թեսաղոնիկեայ եպիսկոպոսն ի ներքս ի քաղաքին շինեաց մատուռն, եւ անդ հանգոյց զնշխարս սրբուհւոյն Մատրոնայ ։

Իսկ Պաւղիտեա տիկինն իւր յոյժ աղքատացաւ եւ մուրանայր. եւ ի սովոյն եմուտ ի հնձան զի ժողովեսցէ զճմլեալ խաղողոյն զկուտսն, անկաւ գերան հնձանին ի վերայ նորա եւ չար մահուամբ սատակեցաւ ։

Եւ նշխարք սրբոյն Մատրոնայի զամենայն ախտս եւ զհիւանդութիւնս փարատէ որք հաւատով ապաւինին ի տապանի ։

4 Աստուած] Քրիստոս՝ Արեգի ԺԳ եւ *add.* B || 6 քաղաքին] Թեսաղոնիկեայ ի կերակուր շանց, զոր անարատ գտեալ B — թաղեցին] ներձ *add.* B || 9 Պաւղիտեա] Պոտիլա B.

prison et on la frappa de nouveau à tel point que tout son corps fut déchiré, puis on la jeta de nouveau en prison et on l'y abandonna de nombreux jours; elle rendit son âme par la faim et les fortes douleurs de son corps blessé, en priant et en bonne confession, à Dieu, le 21 mars.

Sa maîtresse ordonna de sortir son corps de la prison et de le jeter hors de la ville; les chrétiens vinrent le chercher et l'enterrèrent sur le bord de la route.

Après les persécutions, Alexandre, évêque de Thessalonique, fit construire une chapelle à l'intérieur de la ville et y déposa les restes de sainte Matrone.

Quant à Politéa, sa maîtresse, elle devint très pauvre et se mit à mendier; poussée par la faim, elle pénétra dans un pressoir pour y ramasser les pépins des raisins pressés, une barre du pressoir tomba sur elle et elle périt d'un mort atroce.

Les restes de sainte Matrone guérissent toutes les infirmités et les maladies de ceux qui ont recours avec foi à son tombeau.

Արեգի ԺԴ եւ Մարտի ԻԲ ։ Վարք Ակակիոսի խոստովանող եպիսկոպոսին ։

Յաւուրս Դեկոսի ամբարիշտ արքային՝ խոստովանողն Քրիստոսի սուրբ եպիսկոպոսն Ակակիոս, համարձակութեամբ քարոզէր զՔրիստոս ի * մէջ ժողովրդեան կռապաշտից, ի գաւառս եւ ի քաղաքս եւ ի գեօղս ։ Եւ կալեալ զնա անօրինացն կացուցին առաջի հիւպատոսին Մարկիանոսի, եւ հարցանէր վասն քարոզութեանն եւ վարդապետութեանն իւրոյ ։ Իսկ երանելի քահանայապետն Քրիստոսի բացեալ զբերան իւր՝ պայծառ բանիւք քարոզեաց զՔրիստոսի աստուածութիւնն եւ զկամաւոր մարդեղութիւնն, եւ զփրկական չարչարանս, եւ զերեքօրեայ յարութիւնն, զվերանալն յերկինս, եւ զմիւսանգամ գալուստն եւ զհատուցումն գործոց ամենայն մարդկան ։ Եւ յանդիմանեաց զշաղփաղփութիւն առասպելաբանից հեթանոսաց ։

* A fol. 212 v° a.

Եհարց Մարկիանոս եւ վասն սէրովբէից եւ քերովբէից ։ Եւ նա պատմեաց նմա մի ըստ միոջէ զորպիսութիւն եւ զկերպս ամենայն անմարմին զուարթնոցն յորոց վերայ նստեալ է Աստուած եւ հանգչի ի սուրբս իւր ։ Եւ բռնաւորն ոչ հաւատաց եւ ոչ ընդունեցաւ, այլ մանաւանդ հրամայեաց եւ ձաղկեցին զերանելի եպիսկոպոսն ուժգին եւ արկին ի բանդ ։

Եւ գրեաց Մարկիանոս զամենայն բանսն առ Դեկոս արքայն ։ Եւ նա առաքեաց

1 Վարք ... եպիսկոպոսին] Չարչարանք եւ վարք խոստովանող եպիսկոպոսին սրբոյն Ակակիոսի B || 2 ամբարիշտ] կռապաշտ B || 11 Մարկիանոս] Մարկիոս B || 14 զերանելի *om.* B

14 areg, 22 Mars.

Vie d'Acace évêque et confesseur.

Aux jours de Dèce l'empereur impie, le confesseur du Christ, le saint évêque Acace prêchait avec hardiesse le Christ * au milieu de la population idolâtre dans les provinces, dans les villes et les villages. Les impies, l'ayant saisi, le firent comparaître devant le consul Marcien, qui l'interrogea au sujet de sa prédication et de sa doctrine. Le bienheureux pontife du Christ ouvrit la bouche et confessa en des termes lumineux la divinité du Christ, son incarnation volontaire, sa passion salutaire, sa résurrection après trois jours, son ascension au ciel, son avènement futur et la rétribution des œuvres de tous les hommes. Il blâma l'absurdité des écrits légendaires des païens.

* A fol. 212 v° a.

Marcien l'interrogea au sujet des séraphins et des chérubins. (Acace) lui expliqua en détail l'essence et la forme de tous les anges incorporels sur lesquels Dieu est assis, se reposant parmi ses saints. Le tyran ne crut point ni ne consentit; au contraire, il ordonna de flageller vigoureusement le bienheureux évêque et de le jeter en prison.

Marcien écrivit tout cela à l'empereur Dèce, qui envoya l'ordre de délivrer

հրաման զի առանց անարգանաց եւ գանից արձակեսցեն զսուրբն Ակակիոս : Եւ առժամայն հանին ի բանդէն եւ արձակեցին խաղաղութեամբ : Եւ գնաց ի տուն իւր ունելով յանձին իւրում զչարչարանս Քրիստոսի : * Եւ զբազումս լուսաւորեաց * A fol. 212 v° b. վարդապետութեամբ իւրով եւ խառնեաց ի հաւատն Քրիստոսի. եւ կատարեաց մեծ սքանչելագործութեամբ զկեանս իւր եւ ըստ հաճոյից Աստուծոյ հանգեաւ ի Քրիստոս Մարտի ԻԲ :

Արեգի ԺԵ եւ Մարտի ԻԳ : Վկայութիւն Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի եւ Կիւրղի սարկաւագին եւ այլոց մարտիրոսացն :

Յորժամ Աստուած ներողութեամբն իւրով թոյլ տուեալ՝ թագաւորեաց գազանաբնութիւնն Յուլիանոս, ուրացողն եւ հայհոյիչն Քրիստոսի, թագուցեալ եւ գաղտակեաց կռապաշտքն համարձակեցան, եւ յայտնապէս զթոյնս իւրեանց հեղին եւ սփռեցին : Եւ շինեցին տաճար կռոցն եւ բագինս կանգնեցին, եւ շաղախեցին զերկիր յարենէ եւ ի ճենճերաց զոհիցն, եւ զդաւանողս ճշմարտութեանն անարգէին եւ թշնամանէին, այպն առնէին եւ անզոսնէին :

Եւ ոչ ժուժկալեալ քրիստոնէիցն նոցա՝ գնոյն եւ նոքա առնէին, եւ անօրէնքն

1 արձակեսցեն] ազատեսցեն B || 5 հանգեաւ] Արեգի ԺԴ եւ *add.* B || 7 Վկայութիւն ... մարտիրոսացն] Վկայութիւն սրբոյ եպիսկոպոսին Մարկոսի Արեթուսայ, եւ Կիւրղի սարկաւագին, եւ այլոց մարտիրոսացն որք յաւուրս Յուլիանոսի ուրացողին կատարեցան ի Քրիստոս B || 12 եւ ի *om.* B || 13 եւ թշնամանէին] թշնամանօք B || 15 նոցա] ընդ նոսա B.

saint Acace sans injures ni coups. On le fit sortir immédiatement de la prison et on le laissa aller en paix. Il se rendit chez lui, portant sur sa personne les stigmates du Christ. * Il illumina nombre de gens par sa doctrine et les * A fol. 212 v° b. amena à la foi au Christ; il termina sa vie par de grands miracles et selon la volonté de Dieu il reposa dans le Christ le 22 mars.

15 AREG, **23 Mars.**

Martyre de Marc, évêque d'Aréthuse, du diacre Cyrille et d'autres martyrs.

Lorsque Dieu, par sa permission, eut toléré que régnât Julien au tempérament féroce, renégat et blasphémateur du Christ, les idolâtres qui se cachaient et vivaient clandestinement prirent de l'audace, répandirent ouvertement leur poison et le disséminèrent. Ils construisirent des temples d'idoles, dressèrent des autels, souillèrent la terre du sang et de la graisse des holocaustes, insultèrent et outragèrent les confesseurs de la vérité, se moquèrent d'eux et les méprisèrent.

Les chrétiens, ne le supportant pas, en firent autant avec eux, mais les impies, comptant sur leur empereur immonde, se mirent à frapper, à flageller

վստահանալով ի պիղծ արքայն իւրեանց՝ սկսան գանել ձաղել եւ կափահարել զբարեպաշտսն : Կամեցան ըմբռնել եւ զերանելին Մարկոս զԱրեթուսայ եպիսկոպոսն, վասն զի նա յաւուրս Կոստանդիանոսի թագաւորին բազում տաճարս կռոց եւ բագինս խորտակեաց եւ եկեղեցի շինեաց :

* A fol. 213 rº a. Եւ լուեալ զչար * խորհուրդս նոցա՝ փախեաւ ըստ տէրունական հրամանին, եւ անօրէնքն փոխանակ նորա զայլ ոք կալան : Եւ գիտացեալ երանելին գնաց առ նոսա. եւ նոքա որպէս կատաղի շունք՝ ոչ ի ծերութիւնն խնայելով, եւ ոչ յալեացն պատկառելով, մերկացուցին զնա եւ չարաչար գանիւք վիրաւորեցին զամենայն մարմին նորա :

Ժողովեցին մանկունս ի դպրոցաց, եւ երկաթի գրչօք ծակոտեցին զգագաթն նորա. եւ օծին զմարմինն մեղու՝ եւ ի խորշակի աւուր կախեցին ի բարձրաւանդակի. եւ պիծակք եւ զուոյք եւ մեղուք եւ մժեխք կրծեցին զմարմինն եւ զոսկերսն :

Եւ յորժամ իջուցին՝ պահանջէին ի նմանէ եւ խնդրէին գանձս զի շինեսցեն զտաճար կռոցն զոր կործանեաց, եւ նորա ոչ ինչ ունելով տալ ասէր. Զանձն իմ ետու փոխանակ եւ այլ ոչ ինչ պարտիմ ձեզ : Եւ առժամայն արձակեցին զնա եւ զարմանային ընդ համբերութիւնն : Այլ զոր յաւուրսն յայնոսիկ ի ծովու եւ ի ցամաքի չարչարէին զքրիստոնեայսն հրամանաւ բռնաւորին՝ ընդ գրով ոչ ոք կարէ արկանել :

3 Կոստանդիանոսի] սուրբ *add.* B || 4 խորտակեաց] կործանեաց B.

et à donner des coups de poing aux fidèles. Ils voulurent aussi se saisir du bienheureux Marc, évêque d'Aréthuse, parce qu'il avait, aux jours du grand empereur Constantin, fait détruire de nombreux temples d'idoles et d'autels, et avait édifié des églises.

* A fol. 213 rº a. Ayant appris leurs mauvais * desseins, Marc s'enfuit selon la recommandation du Seigneur, et les impies s'emparèrent d'un autre à sa place. L'ayant appris, le bienheureux se rendit auprès d'eux, et ceux-ci à l'instar de chiens enragés, sans égards pour sa vieillesse et ses cheveux blancs, le dépouillèrent de ses vêtements et à coups redoublés blessèrent tout son corps.

Ils rassemblèrent des enfants d'entre les écoliers et leur firent trouer son crâne avec des stylets de fer; ils enduisirent son corps avec du miel et le suspendirent par une journée de vent chaud sur un tertre : les frelons, les guêpes, les abeilles et les moustiques lui rongèrent le corps et les os.

Lorsqu'ils l'eurent descendu, ils lui réclamèrent et exigèrent de lui de l'argent pour reconstruire le temple des idoles qu'il avait fait détruire, mais lui, n'ayant rien à leur donner, leur dit : « Je vous ai donné ma personne à la place, et je ne vous dois rien de plus. » Ils le mirent aussitôt en liberté, tout en admirant sa patience. Les tortures qu'ils ont fait endurer aux chrétiens à cette époque, sur mer et sur terre, par ordre du tyran, il n'y a personne qui puisse les mettre par écrit.

Իսկ զերանելին Կիւրեղ սարկաւագն որ յաւուրս Կոստանդիանոսի յերկիրն Փիւնիկեայ աստուածանախանձ ջանիւք բազում տաճարս կռոց կործանեաց, եւ զբագինս խորտակեաց, զայն յիշեցին * ամբարիշտքն եւ կալեալ սպանին զնա ։ Պատառեցին զորովայնն եւ հանեալ զլեարդն հաղորդեցան ամենեքեան, եւ նոյնժամայն ատամունքն իւրեանց անկան, եւ լեզուքն նեխեալ տորորեցան, եւ աչքայն կուրացան, եւ սկսան աղաղակել եւ յայտնել զքրիստոնէից զօրութիւնն ։ * A fol. 213 rº b.

Եւ յԱսկաղոն եւ ի Գազա եւ ի Պաղեստինեայ քաղաքսն բազում բարեպաշտ քահանայք եւ կրօնաւորք եւ կուսան կանայք եւ աշխարհականք կալեալ պատառէին զորովայնսն եւ արկանէին ի ներքս գարի եւ տային կերակուր խոզից ։

Եւ ի Սեբաստիա բացին զտապան սրբոյն Յովհաննու Մկրտչին եւ զմնացեալ անդ պատուական մարմինն այրեցին հրով եւ փոշին հողմով ցրուեցին ։

Եւ մի ոմն Արտեմիանոս անուն առ սրբով Կոստանդիանոսիւ զօրավար եւ դուքս լեալ Եգիպտոսի, այր իմաստուն եւ ընտրեալ հաւատով, բազում կուռս եւ բագինս խորտակեաց, եւ զտաճարս պղծազոհացն կործանեաց, զնա ընկեցին ի պատուոյն եւ յիշխանութենէն եւ հատին զգլուխ նորա ։ Եւ զԵմիլիանոս քաջ զօրականն հրով այրեցին ։

4-6 եւ նոյնժամայն ... զօրութիւնն] եւ ինքեանք չարաչար պատժովք պատուհասեցան ի Տեառնէ B || 8 պատառէին] պատառեցին B || 9 ի ներքս *om.* B || 12 Արտեմիանոս] Արտեմիոս B || 14 ընկեցին] ընկէց B.

Quant au bienheureux diacre Cyrille, qui aux jours de Constantin, dans le pays de Phénicie, par son zèle pour Dieu, avait fait détruire nombre de temples d'idoles et renversé des autels, les impies se souvinrent * de lui, le saisirent et le tuèrent. Ils déchirèrent le ventre, en sortirent le foie qu'ils mangèrent en commun, mais leurs dents tombèrent aussitôt et leurs langues putréfiées se recroquevillèrent, leurs yeux perdirent la vue et ils se mirent à crier et à proclamer la puissance des chrétiens. * A fol. 213 rº b.

A Ascalon, à Gaza et dans les villes de la Palestine, ils s'emparèrent de nombreux hommes pieux, prêtres et moines, femmes vierges et mariées, leur ouvrirent le ventre, y mirent de l'orge et les donnèrent à manger aux porcs.

A Sébaste, ils ouvrirent la tombe de saint Jean-Baptiste et tout ce qui restait de ce précieux corps et des autres, ils le livrèrent aux flammes et jetèrent les cendres au vent.

Un homme du nom d'Artémien, qui avait été, à l'époque de saint Constantin, général et duc en Égypte, homme pondéré et de foi éprouvée, qui avait brisé bien des idoles et des autels, et fait détruire les temples aux sacrifices immondes, ils le destituèrent de son grade et de son autorité et lui tranchèrent la tête. Ils brûlèrent aux flammes le brave soldat Émilien.

Եւ զայս եւս հրամայեաց անօրէն բռնաւորն, զի քրիստոնեայ որ՝ ոչ իշխան եւ ոչ զօրական լիցի, եւ որք իցեն՝ անկցին ։ Եւ դարձեալ օրինադրութիւն գրեաց հրամանաբար, որպէս զի քրիստոնէից որդիք * ոչ ուսանիցին արտաքին գրոց համարողական, զհռետորական, զփիլիսոփայական, զհոմերոսական ստորոգութեան հանճարս. Զի, ասէր, ուսանին զմերս, գիտեն եւ զիւրեանցն, եւ երկոքումբք սպառազինին, եւ զմեզ բանիւք մարտնչին եւ յաղթեն մեզ ։

*A fol. 213 v° a.

Եւ ոմն երիտասարդ քրիստոնեայ եւ զօրական Թէոդորոս անուն՝ երթայր ընդ մէջ հրապարակին եւ երգէր զերգս մարգարէին Դաւթի եւ յամենայն տան սաղմոսին ասէր. Յամօթ լիցին ամենեքեան որք պաշտեն զկուռս հեթանոսաց, ալէլուիա ։ Եւ կալեալ զնա ի մէջ հրապարակին կախեցին, եւ արջառաջլօք զթիկունս հարին, եւ զկողսն երկաթի ճանկօք քերեցին, եւ զամենայն օրն թողին ի կախաղանին, եւ երեկոյին իջուցին եւ կապեցին շղթայիւք եւ արկին ի բանդ ։

Եւ ընդ առաւօտն ասէ Յուլիանոս. Զարմանալի է համբերութիւն քրիստոնէից, զի մեծաւ ուրախութեամբ եւ յօժարութեամբ ընդունին զչարչարանս եւ պարծին ի տանջանս ։ Հրամայեաց եւ արձակեցին զվկայն Քրիստոսի ի կապանաց եւ ի բանդէն ։ Եւ հարցանէին ընդ արիական եւ քաջ զօրականն Քրիստոսի եթէ. Զգայի՞ր զսաստիկ եւ

10 հարին] քերթեցին B || 11 քերեցին] ծակեցին B.

L'impie tyran ordonna encore ceci : qu'un chrétien ne puisse devenir ni prince ni soldat, et que ceux qui le sont soient destitués. Il édicta aussi autoritairement un édit par écrit : que les fils des chrétiens * n'apprennent point les lettres profanes, les mathématiques, la rhétorique, la philosophie et les compositions homériques, « car, disait-il, ils apprennent les nôtres et ils connaissent également les leurs; ils s'arment des deux et par les armes de la parole ils luttent et nous battent ».

*A fol. 213 v° a.

Un jeune militaire chrétien, du nom de Théodore, traversait la place publique en chantant les psaumes du prophète David, et à chaque verset du psaume il ajoutait : « Que tous ceux qui adorent les idoles des païens soient confondus, alleluia. » On le saisit, on le suspendit au milieu de la place, on lui frappa le dos avec des nerfs de bœuf, on lui déchira les côtes avec des ongles de fer et on le laissa toute la journée à la potence. Le soir on le descendit, on lui passa des chaînes et on le jeta en prison.

Au matin, Julien dit : « Elle est admirable la patience des chrétiens, qui acceptent avec joie et de bon gré les tortures et se vantent des souffrances. » Il ordonna de mettre en liberté le martyr du Christ, de le délivrer des liens et de la prison. On demanda au courageux et brave soldat du Christ : « Ressentais-tu les fortes et douloureuses tortures? » Il répondit : « D'abord,

զպատն տանջանաց : Եւ նա ասէ. Յառաջագոյն ի սկիզբն չարչարանացն զգայի սակաւ ինչ վշտացն, եւ ապա ընդարմանայր անձն եւ որպէս ի քուն թմրեալ կայի :

Զայսպիսի չարիս գործեաց Յուլիանոս եւ այլ * բազում խստագոյն քան զայսոսիկ * A fol. 213 v° b. եւ գնացեալ ի պատերազմ ի Պարսս, չար կորստեամբ սատակեցաւ :

Կատարի տօն այս սրբոց վկայիցս Քրիստոսի՝ Մարտի ԻԳ :

Արեգի ԺԶ եւ Մարտի ԻԴ : Վկայութիւն Աբդայի եպիսկոպոսին եւ Որմզդանայ եւ Սայենի եւ Բենիամինի սարկաւագին :

Ի ժամանակս բարեպաշտ թագաւորին Թէոդոսի Փոքու՝ Եազկերտ հրապաշտ արքայն Պարսից շարժեաց պատերազմ քրիստոնէից եւ եկեղեցւոյ Աստուծոյ : Եւ իբրեւ լուաւ Աբդաս եպիսկոպոսն վառեցաւ աստուածային նախանձու եւ հրով այրեաց զպիւրիոնն պարսից, պիւրիոն՝ զտաճարն անուանէին յորում զհուրն բորբոքէին եւ երկիր պագանէին հրապաշտքն :

Եւ լուեալ ի մոգուցն արքայն Պարսից, կոչեաց զերանելի եպիսկոպոսն առ ինքն, եւ նախ հանդարտութեամբ ընդ գործն մեղադրեաց նմա եւ հրամայեաց շինել զպիւրիոնն զոր այրեաց : Իսկ սուրբ եպիսկոպոսն հակառակաբանէր եթէ անհնար է այլ զնա շինել : Եւ նա հրամայեաց եւ առաջի իւր զսուրբ եպիսկոպոսն սպանին, եւ զամենայն

5 Մարտի ԻԳ] եւ Արեգի ԺԵ *add.* B || 6 Որմզդանայ] Որմիզդանայ B || 7 եւ Բենիամինի սարկաւագին] որ ի Պարսիկս կատարեցան *add.* B || 14 ընդ գործն *om.* B || 16 եւ նա հրամայեաց եւ] եւ նոյնժամայն B.

au commencement, j'ai ressenti quelque peu les souffrances des tortures, mais ensuite je me suis trouvé engourdi et j'étais comme assoupi dans le sommeil. »

Julien accomplit de telles méchancetés et d'autres encore pires * et nombreuses; puis il partit en guerre contre les Perses, où il périt de mort violente. * A fol. 213 v° b.

La fête de ces saints martyrs du Christ a lieu le 23 mars.

16 AREG, 24 Mars.

Martyre de l'évêque Abda, d'Hormisdas (*Ormzdan*), de Saïéni et du diacre Benjamin.

Aux jours du pieux empereur Théodose le Jeune, Yezdegerd, le roi adorateur du feu des Perses, déchaîna la guerre contre les chrétiens et l'église de Dieu. L'ayant appris, l'évêque Abda fut embrasé par le zèle divin et mit le feu au pyrée (*piurion*) des Perses. On appelait pyrée le temple où les adorateurs du feu allumaient le feu et l'adoraient.

Le roi des Perses, l'ayant appris par les mages, fit venir à lui le bienheureux évêque, et commença par le blâmer calmement pour le fait et lui ordonna de reconstruire le pyrée qu'il avait incendié. Le saint évêque lui objecta qu'il lui était impossible de le reconstruire. Il ordonna alors de tuer en sa

եկեղեցիսն աւերեցին, եւ երեսուն ամ զմրրիկ հալածմանցն ի քրիստոնէիցն ոչ վերացոյց ։ Եւ հրամայեաց մոգուցն զբարեպաշտութեան դաւանողսն * ըմբռնել, եւ հատանել զոմանց զձեռս եւ զոտս, եւ զոմանց զականջս եւ զունչսն, եւ զոմանց զերկուս աչս խաւարեցուցանել ։ Եւ զայլոց զգլուխս ի ճակատէն մինչեւ ի մօրուսն քերթել, եւ զոմանս ճեղքեալ եղեգամբ զմարմինսն քերթէին. եւ զոմանց կապէին զձեռս յետս՝ եւ շաղախէին զանձինս ճարպով եւ ընկենուին ի խոր գուբ, եւ արկանէին բազում մկունս եւ աքիսս, եւ այնչափ զգուշանային որ ոչ կարէին զգազանքն փախչել, եւ ի քաղցոյն կրծէին զմարմինս սրբոցն ։ Եւ զայս առնելով անօրինացն ոչ կարացին ահացուցանել զճշմարիտ ծառայսն Աստուծոյ, եւ մանաւանդ յորժամ տեսանէին յայսպիսի խիստ տանջանս՝ ինքնակամ ընթանային փափաքմամբ ի մահ ։

* A fol. 214 r° a.

Եւ այր մի մեծ իշխան թագաւորին՝ մեծատուն յոյժ եւ քրիստոնեայ որոյ անուն էր Որմզդան, զնմանէ լուաւ արքայն եթէ քրիստոնեայ է, կոչեաց առաջի եւ պատուիրեաց նմա զի մի անուանեսցի քրիստոնեայ՝ այլ ուրանալ զՔրիստոս ։ Ասէ Որմզդան. Եթէ ոք ի քո ծառայից ուրասցի զքեզ՝ դու որ մահկանացու ես՝ զնա մեծ տանջանաց արժանի առնես, ո՞րչափ մանաւանդ որ զԱստուած երկնի եւ երկրի՝ զանմահ թագաւորն ուրանան ի յաւիտենական եւ յանշէջ հուրն մատնին ։

1 հալածմանցն *om.* B || 4 քերթել] մորթէին B || 5 զձեռս] եւ զոտս *add.* B || 15 եւ երկրի *om.* B.

présence le saint évêque. On détruisit ensuite toutes les églises, et (le roi) ne fit cesser l'orage de la persécution contre les chrétiens pendant trente ans. Il ordonna aux mages d'arrêter * tous les partisans de la piété, de leur couper les mains, à d'autres les pieds, à d'autres les oreilles et le nez et de leur crever les deux yeux; à d'autres de dépouiller la peau du front jusqu'à la barbe, à d'autres de déchirer le corps avec des roseaux fendus. A certains on attachait les mains par derrière, on barbouillait leurs corps avec de la graisse et on les jetait dans une fosse profonde dans laquelle on jetait de nombreux rats et des belettes en prenant toutes les précautions pour que les animaux ne se sauvassent pas afin que, poussés par la faim, ils dévorassent les corps des saints. Tout en faisant cela, les impies ne purent intimider les véritables serviteurs de Dieu, qui au contraire, à la vue de ces cruelles tortures, accouraient volontairement, désireux de la mort.

* A fol. 214 r° a.

Un certain grand prince du roi, très riche et chrétien, nommé Hormisdas, dont le roi avait entendu dire qu'il était chrétien, fut appelé devant lui et le roi lui commanda de ne plus s'appeler chrétien et de renier le Christ. Hormisdas lui répondit : « Si un de tes serviteurs te renie, toi qui es mortel, tu lui inflige de grandes tortures; combien plus ceux qui renient le Dieu du ciel et de la terre, le roi immortel, ne seront-ils pas livrés au feu éternel et sans fin? »

Եւ զայն լուեալ արքային ընկէց զնա ի փառաց եւ ի * պատուոյն, եւ եհան ի տանէն եւ ի ստացուածոցն, եւ հրամայեաց որ մերկ արածէր զուղտն : Եւ յետ բազում աւուրց ետես զնա մերկ աշխատութեամբ յուղտն, առաքեաց նմա շապիկ եւ ասէ. Յիշեա՛ զքո առաջին մեծութիւնն եւ զքաղցր կեանսն եւ զփափկութիւնն, եւ ուրացի՛ր զքրիստոնէութիւնդ, եւ հաւատա՛ ի պաշտամունս մեր : Եւ նորա լուեալ զդառն զբանս թագաւորին՝ առեալ զշապիկն պատառեաց : Եւ նա բարկութեամբ հրամայեաց եւ ի տեղւոջն սպանին զնա վասն Քրիստոսի հաւատոյն : * A fol. 214 r° b.

Եւ գայլ ոմն պարսիկ քրիստոնեայ մեծատուն յոյժ, հազար ծառայից տէր, որում անուն էր Սայենի, բազում անգամ ջանաց թագաւորն դարձուցանել ի Քրիստոսի հաւատոյն : Եւ յորժամ ոչ կարաց հաւանեցուցանել՝ որոշեաց ի ծառայիցն զմինն որ քան զամենեսեան էր անպիտան, եւ աղտեղի եւ գարշելի տեսլեամբ, ետ նմա զտէրն իւր ծառայ եւ զտիկինն նմա կին, եւ հրամայեաց նոցա ծառայել նմա հնազանդութեամբ : Եւ այն ամենայն եղեւ առ նա, եւ ոչ ի բաց եկաց ի յուսոյն Քրիստոսի :

Կալան եւ զսարկաւագ ոմն որում անուն էր Բենիամին եւ արկին ի բանդ զերկուամ : Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեցան դեսպանք ի Հոռոմոց թագաւորէն ի Պարսիկս, եւ լուան զԲենիամինէ սարկաւագէն եթէ վասն Քրիստոսի արգելեալ ի բանդի, խնդրեցին յՅազկերտէ արքայէն հանել * զնա ի բանդէն եւ արձակել : Ասէ * A fol. 214 v° a.

10 հաւանեցուցանել] ածել ի կամս իւր B.

Le roi, entendant cela, le déposa de ses fonctions et de ses * titres, lui enleva sa maison et ses propriétés, et lui ordonna d'aller nu paître les chameaux. Longtemps après, l'apercevant nu occupé avec les chameaux, il lui fit envoyer une tunique en disant : « Souviens-toi de ta grandeur d'antan, de ta vie douce et raffinée, renie le christianisme et crois à notre culte. » (Hormizdas), après avoir entendu les amères paroles du roi, saisit la tunique et la déchira. (Le roi), irrité, ordonna de le tuer sur place pour la foi au Christ. * A fol. 214 r° b.

Il y avait un autre persan chrétien fort riche, maître de mille domestiques, dont le nom était Saïéni, que le roi avait essayé plusieurs fois de détourner de la foi au Christ. Ne pouvant le persuader, il choisit un des domestiques, le plus paresseux de tous, sale et d'un visage répugnant, et il lui donna pour serviteur son maître et sa maîtresse pour femme, en leur enjoignant l'ordre de le servir avec obéissance. Toutes ces choses arrivèrent à (Saïéni); malgré cela, il n'abandonna point l'espérance au Christ.

On saisit également un diacre dont le nom était Benjamin et on le mit en prison pendant deux ans. A cette époque des ambassadeurs furent envoyés en Perse par l'empereur des Grecs et, ayant entendu dire du diacre Benjamin qu'il était en prison pour le Christ, ils prièrent le roi Yezdegerd de le sortir * de prison et de le mettre en liberté. Le roi leur répondit : « Qu'il nous * A fol. 214 v° a.

արքային. Վստահացուսցէ զմեզ ձեռնագրով որ զպարսիկ մոգ ոչ դարձուսցէ ի հաւատն իւր, եւ ոչ վարդապետութեամբն իւրով ուսուսցանէ զոք յերկրիս մերում, եւ ապա վասն խնդրոյ ձերոյ արձակեցից զնա ի կապանացն :

Եւ լուեալ Բենիամինի ոչ առ յանձն առնել զհրամանս թագաւորին ասելով. Անհնարին է ինձ զշնորհսն Աստուծոյ իմոյ արգելուլ ի մարդկանէ, այլ որչափ կարող եմ լուսաւորեմ զխաւարեալսն ի մոլորութենէ, զի մի պատիժ կրեցից ընդ թաքուցանողին զտաղանդ տեառն իւրոյ : Եւ արքայն վասն աղերսանաց եւ խնդրոյ դեսպանացն՝ արձակեաց զսարկաւագն ի բանտէն :

Եւ նորա ելեալ ոչ դադարէր յուսուցանելոյ եւ ի մկրտելոյ զկրակապաշտ ժողովուրդն Պարսից : Եւ յետ ամի միոյ յորժամ դարձան դեսպանքն Հոռոմոց՝ ազդեցուցին վասն նորա արքային զոր առնէր : Տարան զնա առաջի, եւ նա աստուածիմաստ բանիւք յոյժ յանդիմանեաց զյիմարութիւն զազանամիտ ազգին Պարսից : Եւ հրամայեաց ընդ եղեգունս հարկանել սրեալ եղէգն, եւ արիւնն իբրեւ առու հեղոյր ի ձեռացն եւ յոտիցն : Եւ դարձեալ սրեցին երկայնագոյն եղէգն՝ եւ արկին ի ծածուկ ջրահեղ մարմինն՝ եւ ստէպ ստէպ արկանէին եւ հանէին. եւ յայնչափ ցաւս կսկծանացն ի գոհանալոյ եւ ի փառաւորելոյ զԱստուած ոչ դադարէր :

* A fol. 214 v° b. *Եւ տեսեալ * արքային եթէ առ ոչինչ համարի զտանջանսն, հրամայեաց եւ երկաթի*

garantisse par écrit de ne convertir aucun mage persan à sa foi et de n'enseigner sa doctrine à personne dans notre pays, et ensuite, selon votre demande, je le délivrerai des liens. »

Benjamin, mis au courant, n'accepta point d'accomplir les ordres du roi et dit : « Il m'est impossible d'empêcher les grâces de mon Dieu envers les hommes; autant qu'il sera en mon pouvoir j'illuminerai ceux qui sont dans les ténèbres de l'erreur, pour ne pas avoir à subir les punitions de celui qui avait caché le talent de son maître. » Le roi, sur les prières et les instances des ambassadeurs, délivra le diacre de la prison.

Celui-ci, étant sorti, ne cessa pas d'enseigner et de baptiser le peuple persan adorateur du feu. Un an après, lorsque les ambassadeurs des Grecs furent partis, on prévint le roi de ce que (Benjamin) faisait. On le fit comparaître, et il blâma sévèrement par des paroles remplies d'une sagesse divine la démence brutale de la nation persane. (Le roi) ordonna de lui introduire des roseaux pointus sous les ongles, et le sang coula comme un ruisseau des mains et des pieds. On affila des roseaux plus longs qu'on lui introduisit dans le canal intérieur de l'urine, on les sortit et on les rentra à plusieurs reprises; dans des douleurs aussi atroces il ne cessait de rendre grâces à Dieu et de Le glorifier.

* A fol. 214 v° b. Le roi, voyant * qu'il méprisait les tortures, ordonna de lui introduire dans

գաւազան երկաթի սրաքաձեւ արկին ընդ նստոյ տեղին մինչեւ յորովայնն. եւ այնպէս հզօր եւ զօրեղ զօրականն Քրիստոսի աւանդեաց զհոգին ի ձեռս հրեշտակաց ։

Կատարի տօն այս մարտիրոսացս Մարտի ԻԴ ։

Արեգի ԺԷ եւ Մարտի ԻԵ ։ Յիշատակ Մելքիսեդեկի առաջին քահանայի ։

Թագաւորն Սաղիմ շինէ քաղաք եւ կոչէ ըստ անուան իւրում Սաղիմ ։ Եւ ծնանի զՄելքին. եւ Մելքի առ իւր կին զՍալա՝ եւ ծնաւ ի նմանէ որդի, եւ անուանեաց ըստ անուան իւրոյ Մելքի ։ Եւ դարձեալ ծնաւ որդի, եւ անուանեաց Մելքիսեդեկ. եւ հայրն սիրէր զՄելքի, եւ մայրն սիրէր զՄելքիսեդեկ ։

Եւ յաւուր միում ի տօնի աստուածոցն ասէ հայրն ցՄելքիսեդեկ. Երթ որդեակ ի նախիրն եւ բեր մեզ զուարակս եօթն եւ խոյս տասն զի մատուսցուք ողջակէզ աստուածոցն ։ Եւ գնաց Մելքիսեդեկ, եւ ի ճանապարհին, մտախոհ լեալ ասէ. Զինչ են կուռքն անշունչք որ ումեք օգնել ոչ կարեն. գնացից առ հայր իմ եւ * ասացից նմա թերեւս լուիցէ ինձ ։

Եւ դարձաւ առ հայրն եւ ասէ, Հայր, ընդէ՞ր կորուսանեմք զանասունս մեր զոհելով * A fol. 215 rº a.
կռոցն որ ոչ ումեք օգնել կարեն, եւ բարի առնել կամ չար. այլ Աստուծոյ պարտ է

2 քահանայի] զոր ոմանք յաւանդութենէ անյայտ գրոց առեալ պատմեն այսպէս. *add.* B.

le séant jusqu'au ventre des bâtons de fer, à double tranchant, en forme de lances, et c'est ainsi que le vaillant et puissant soldat du Christ rendit son âme entre les mains des anges.

La fête de ces martyrs a lieu le 24 mars.

17 AREG, 25 Mars.

Commémoration de Melchisédech le premier prêtre.

Le roi Salim s'était fait construire une ville qu'il appela d'après son nom Salim. Il engendra Melchi. Melchi prit pour femme Sala, et il lui naquit un fils qu'il appela d'après son nom Melchi. Puis de nouveau naquit un fils qu'il appela Melchisédech. Le père aimait Melchi, la mère aima Melchisédech.

Or, le jour d'une fête des dieux, le père dit à Melchisédech : « Va, mon fils, au troupeau et amène-nous sept génisses et dix béliers, pour que nous les offrions en holocauste aux dieux. » Melchisédech partit, mais, en chemin, il réfléchit et dit : « Que sont des dieux sans souffle, qui ne peuvent aider personne? J'irai à mon père et * je le lui dirai, peut-être m'écoutera-t-il? » * A fol. 215 rº a.

Il revint auprès de son père et lui dit : « Père, pourquoi perdrions-nous nos animaux en les sacrifiant aux idoles qui ne peuvent être utiles à personne, ni faire bien ou mal? Mais il faut immoler à Dieu, qui a créé le ciel et la

զոհել որ արար զերկինս եւ զերկիր եւ զամենայն որ ի նոսա ։ Եւ բարկացաւ հայրն ի վերայ Մելքիսեդեկի, եւ ասէ. Եթէ ոչ երթեալ բերցես զոր ասացի քեզ՝ փոխանակ անասնոցն զքեզ զոհեցից աստուածոցն ։ Եւ գնաց Մելքիսեդեկ բերել ըստ հրամանին ։

Եւ ասէ թագաւորն Մելքի ցթագուհի Սալա. Եկ եւ զմի յորդւոց մերոց մատուցուք զոհ աստուածոց մերոց ։ Եւ թագուհին սկսաւ լալ, եւ գիտաց եթէ ոխս ունի ընդ Մելքիսեդեկի վասն բանիցն զոր ասաց, եւ ասէ. վայ ինձ զի ցաւօք եւ երկամբք ծնայ եւ աշխատութեամբ սնուցի, եւ ահա ընդունայն եղեւ ամենայնն ։

Եւ թագաւորն կամեցաւ մխիթարել զթագուհին, եւ ասէ. Մի տրտմիր թագուհի, այլ արկցուք վիճակ, եթէ ինձ ելանէ՝ մատուցուք զորդին իմ, եւ եթէ քեզ՝ մատուցուք զորդին քո. զի կարծէր թէ կնոջն ելանէ վիճակն ։ Եւ արկին վիճակ եւ ել վիճակն թագաւորին, եւ պատրաստեցին զենուլ զպատանին ։ Եւ եկն Մելքիսեդեկ եւ եբեր զուարակսն եւ զխոյսն եւ զնոխազսն ։ Եւ ժողովեցան ամենայն ազգատոհմ
* A fol. 215 r° b. թագաւորին եւ * թագուհւոյն ի զենումն Մելքեայ, եւ ոչ ոք մնաց յազգէ նոցա որ ոչ եկին անդ ։ Ժողովեցին եւ այլ բազում մանկունս, եւ անասնոցն ոչ գոյր թիւ, եւ գնացին ամենեքեան ի տուն կռոցն ։

Եւ ասէ մայրն ցՄելքիսեդեկ. Ոչ ինչ ցաւ է քեզ զի զեղբայր քո զենուն, ընդէր ոչ աղաչես զԱստուածն քո զի թերեւս փրկեսցէ զնա ։ Եւ ասէ Մելքիսեդեկ. Գործ է իմ

terre et tout ce qu'ils contiennent. » Le père se fâcha contre Melchisédech et lui dit : « Si tu ne vas pas chercher ce que je t'ai dit, à la place des animaux c'est toi que j'immolerai aux dieux. » Melchisédech alla chercher ce qui lui avait été ordonné.

Le roi Melchi dit à la reine Sala : « Viens, immolons l'un de nos fils en holocauste à nos dieux. » La reine se mit à pleurer, car elle savait que (Melchi) avait une haine contre Melchisédech pour les propos qu'il avait tenus; elle lui répondit : « Malheur à moi, j'ai engendré avec douleurs et peines, j'ai élevé avec fatigue, et voilà que tout cela devient inutile. »

Le roi, voulant consoler la reine, lui dit : « Ne t'attriste pas, reine; nous allons jeter le sort : si le sort m'échoit, nous sacrifierons mon fils; et si c'est à toi, nous sacrifierons ton fils. » Car il croyait que le sort écherrait à la femme. Ils jetèrent le sort et il échut au roi; ils se préparèrent donc à immoler le jeune garçon. Melchisédech arriva en amenant les génisses, les béliers et
* A fol. 215 r° b. les boucs. Toute la famille du roi et * de la reine s'assemblèrent pour le sacrifice de Melchi, et il ne resta personne de leur race qui ne fût venu. On rassembla encore de nombreux autres enfants, le nombre des animaux était grand, et tous se rendirent au temple des idoles.

La mère dit à Melchisédech : « Tu ne ressens pas de peine de ce qu'on va immoler ton frère; pourquoi ne pries-tu pas ton Dieu, peut-être le sau-

այսօր երթալ կալ յաղօթս առ Աստուածն իմ ։ Եւ ել նա ի գլուխ լերին Թաբօրայ, եւ եդեալ զծունկս իւր յերկիր եւ համբարձեալ զձեռս իւր առ Աստուած, եւ յանկարծակի եղեւ մէգ եւ մառախուղ, եւ շարժեալ երկրին՝ ընկղմեցաւ քաղաքն առ հասարակ, եւ ոչ ոք մնաց յազգէ Մելքիսեդեկի ոչ այր եւ ոչ կին ։

Եւ էջ Մելքիսեդեկ ի լեռնէ անտի, եւ տեսեալ ընկղմեալ զքաղաքն երկեաւ, եւ ել ի լեառն Թաբօր, եմուտ յանտառն եւ ուտէր զծայրս ծառոց եւ ըմպէր ի ցօղոյ երկնից ։ Եւ ներկաւ մարմին նորա եւ բուսաւ մազ ընդ ամենայն անձն նորա եւ ծածկեաց զնա, եւ աճեցին եղեւնգունք ձեռացն եւ ոտից նորա իբրեւ թիզ մի, եւ եկաց յանտառին ամս եօթն ։

Եւ յետ եօթն ամաց երեւեցաւ Աստուած Աբրահամու եւ ասէ. Առ ընդ քեզ հանդերձ եւ կերակուր եւ ածելի եւ մկրատ, եւ ել ի լեառն Թաբօր, եւ ձայնեա երիցս անգամ. Այր Աստուծոյ ։ Եւ ելցէ առ քեզ յանտառէն այր մի * վայրենաձեւ * A fol. 215 v° a. կերպարանօք, եւ դու մի զարհուրիր ի նմանէ ։ Այլ ած զհեր գլխոյ նորա եւ հարթեա զեղեւնգունս ձեռացն եւ ոտից նորա, եւ զգեցո նմա հանդերձ եւ տուր կերակուր, եւ նա օրհնեսցէ զքեզ զի քահանայ Աստուծոյ բարձրելոյ է նա, անհայր, անմայր՝ չհամարեալ յազգս ։

Եւ արար Աբրահամ զամենայն զոր հրամայեաց նմա Տէր. եւ ել ի լեառն Թաբօր եւ ձայնեաց երիցս անգամ. Այր Աստուծոյ ։ Եւ ել յանտառէն այր մի զազանաձեւ,

verait-il? » Melchisédech répondit : « Je m'occupe aujourd'hui à prier mon Dieu. » Et il monta sur la crête de la montagne du Thabor, mit les genoux en terre et éleva ses mains vers Dieu. Il se fit tout à coup un brouillard, la terre trembla et toute la ville fut engloutie. Il ne resta plus de la race de Melchisédech ni homme ni femme.

Melchisédech descendit de la montagne, mais voyant la ville engloutie, il eut peur et remonta la montagne du Thabor, pénétra dans la forêt, se nourrit des pousses d'arbres et but de la rosée du ciel. Son corps se colora, des poils poussèrent sur toute sa personne jusqu'à la couvrir, les ongles des mains et des pieds s'accrurent de presque une aune, et il vécut sept années dans la forêt.

Sept ans après, Dieu apparut à Abraham et lui dit : « Prends avec toi des vêtements, de la nourriture, un rasoir et des ciseaux, monte sur la montagne du Thabor et crie trois fois : « Homme de Dieu. » Un homme sortant de la forêt viendra vers toi * sous les aspects d'un sauvage, n'aie pas peur de lui. * A fol. 215 v° a. Rase-lui les cheveux de la tête, coupe-lui les ongles des mains et des pieds, passe-lui des vêtements et donne-lui à manger; il te bénira, car c'est un prêtre du Dieu Très-Haut; il n'a ni père, ni mère, il est sans généalogie. »

Abraham fit tout ce que le Seigneur lui avait ordonné, il monta à la montagne du Thabor, cria trois fois : « Homme de Dieu. » Un homme, à l'as-

եւ տեսեալ զնա Աբրահամ զարհուրեցաւ, եւ ասէ ցնա. Զի՞նչ խնդրես ։ Եւ ասէ Աբրահամ. Հրամայեաց ինձ Աստուած ածել զգլուխ քո եւ հարթել զեղենգունս քո եւ զգեցուցանել քեզ հանդերձս, եւ դու օրհնեսցես զիս ։

Եւ ասէ Մելքիսեդեկ. Արա՛ զոր ինչ հրամայեաց քեզ Աստուած ։ Եւ իբրեւ արար Աբրահամ զոր հրամայեաց նմա Տէր, ասէ Մելքիսեդեկ. Օրհնեալ է Աբրահամ յԱստուծոյ բարձրելոյ. եւ ոչ կոչեսցի անուն քո Աբրամ, այլ Աբրահամ եղիցի անուն քո. եւ կին քո ոչ կոչեսցի Սարա, այլ Սառա եղիցի անուն նորա ։ Եւ էջ ընդ Աբրահամու եւ բնակեցաւ ընդ նմա ։ Եւ ասէ Տէր ցԱբրահամ. Զի ոչ ոք մնաց յազգէ Մելքիսեդեկի ի վերայ երկրի, այլ Մելքիսեդեկ կոչեսցի անհայր, անմայր՝ չհամարեալ յազգս նմանեալ որդւոյն Աստուծոյ առանց խորհրդոյ ։

Եւ յորժամ գայր Աբրահամ ի կոտորածէ թագաւորացն, ել ընդ առաջ նորա Մելքիսեդեկ եւ ետ նմա կոտորակ հացի եւ բաժակ, եւ օրհնեաց զնա ։ Եւ Աբրահամ տասանորդս ետ նմա յամենայն աւարէն, եւ եկաց մնաց քահանայ Աստուծոյ բարձրելոյ ։

Եւ կատարի տօն քահանայապետին Աստուծոյ Մելքիսեդեկի՝ Արեգի ԺԷ եւ Մարտի ԻԵ ։

* B p. 134 a. [B * Իսկ ըստ հաւաստի աստուածաշունչ գրոց է այսպէս. երանելին Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սաղիմայ՝ քահանայ Աստուծոյ բարձրելոյ. եւ յորժամ դարձաւ Աբրահամ

pect de bête sauvage, sortit de la forêt; à sa vue, Abraham eut peur, mais (l'homme) lui dit : « Que cherches-tu? » Abraham répondit : « Dieu m'a ordonné de te raser la tête, de couper tes ongles, et de te passer des vêtements; et toi, tu me béniras. »

Melchisédech lui dit : « Fais ce que Dieu t'a ordonné. » Et lorsque Abraham eut accompli ce que le Seigneur lui avait ordonné, Melchisédech dit : « Qu'Abraham soit béni par le Dieu Très-Haut! Ton nom ne sera plus Abram, mais ton nom deviendra Abraham; ta femme ne sera plus appelée Saraï (*Sara*), mais son nom sera Sara (*Sarra*). » Il descendit avec Abraham et habita avec lui. Le Seigneur dit à Abraham : « Comme il ne reste plus personne de la race de Melchisédech sur la terre, Melchisédech sera appelé sans père, sans mère, sans généalogie, ressemblant au fils de Dieu, sans le mystère. »

Lorsque Abraham revenait de la défaite des rois, Melchisédech vint au-devant de lui, lui offrit un morceau de pain, du vin et le bénit; Abraham lui donna la dîme de tout le butin. (Melchisédech) continua à demeurer le prêtre du Dieu Très-Haut.

La fête du prêtre de Dieu Melchisédech a lieu le 17 areg, 25 mars.

* B p. 134 a. [B *. D'après les certaines écritures divinement inspirées, c'est ainsi : le bienheureux Melchisédech était roi de Salim [1], prêtre du Dieu Très-Haut :

1. Hébr., vii, 1-3.

ի կոտորածէ թագաւորացն՝ ել ընդ առաջ նորա Մելքիսեդեկ արքայ * Սաղիմայ, եւ մատոյց նմա պատարագ հաց եւ գինի քանզի քահանայ էր Աստուծոյ բարձրելոյ. եւ օրհնեաց զԱբրահամ եւ ասէ. Օրհնեալ Աբրահամ յԱստուծոյ բարձրելոյ որ արար զերկինս եւ զերկիր. օրհնեալ Աստուած բարձրեալ որ մատնեաց զթշնամիս քո ի ձեռս քո ։ Եւ Աբրահամ տասանորդս ետ յամենայնէ զոր աւարեալ էր ի թշնամեաց ։ * B p. 134 b.

Մելքիսեդեկ օրինակ եղեւ երկնաւոր քահանայապետին մերոյ Քրիստոսի, որ զքահանայութիւնն երդմամբ ընկալաւ յԱստուծոյ Հօրէ՝ ըստ նախաձայնելոյ մարգարէին Դաւթի թէ. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, եւ Տէր ընդ աջմէ քումմէ ։

Մելքիսեդեկ թարգմանի թագաւոր արդարութեան. եւ Տէրն մեր ունէր զթագաւորութիւն հօր իւրոյ Դաւթի ըստ մարմնոյ՝ կացեալ թագաւոր յաւիտենից ի վերայ ամենեցուն. Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա ։ Որպէս եւ հրեշտակապետն Գաբրիէլ յառաջագոյն ասացեալ ասելով. Յաթոռն Դաւթի նստցի, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբու ի յաւիտեան, եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի ։

Ունէր Քրիստոս եւ զարդարութիւն փրկութեան, զի ոչ այնքան կարող զօրութեամբ՝ որքան արդար իրաւամբք դատապարտեաց զթշնամին կենաց եւ փրկութեան մերոյ, մահուամբ խաչի իւրոյ փոխարինելով զպարտիս մեր. եւ եղեւ մեզ յԱստուծոյ

et lorsque Abraham revint de la défaite des rois, Melchisédech, roi * de Salim, vint au-devant de lui et lui offrit le sacrifice du pain et du vin, car il était prêtre du Dieu Très-Haut. Il bénit Abraham et dit : « Qu'Abraham soit béni par le Dieu Très-Haut qui a créé le ciel et la terre! Beni (soit) le Dieu Très-Haut, qui a livré tes ennemis entre tes mains [1]. » Abraham lui donna la dîme de tout le butin qu'il avait pris à l'ennemi. * B p. 134 b.

Melchisédech est devenu l'image de notre grand prêtre céleste, le Christ, qui reçut par serment le sacerdoce de Dieu le Père, d'après la prédiction du prophète David : *Tu es le prêtre éternel selon l'ordre de Melchisédech et le Seigneur est à ta droite* [2].

Melchisédech se traduit roi de la justice. Or Notre-Seigneur avait la royauté de son père David selon la chair, étant le roi éternel sur tous les hommes. Le Seigneur a juré à David en vérité et Il ne lui a pas menti, en faisant asseoir sur son trône le fruit de ses entrailles, selon que l'archange Gabriel prédit auparavant en disant : *Il montera sur le trône de David et il régnera éternellement sur la maison de Jacob, et son règne n'aura point de fin* [3].

Le Christ avait aussi la justice du salut, car il ne condamna pas tant avec la force de la puissance qu'avec le juste droit l'ennemi de notre vie et de notre salut, en payant nos dettes par sa mort sur la croix. Il fut pour nous la

1. Gen., XIV, 18. — 2. Ps. CX, 7. — 3. Luc, I, 32 sq.

արդարութիւն եւ փրկութիւն, եւ արդարութեամբ իւրով արդարացոյց զմեզ, ազատեալ ի ծառայութենէ մահու եւ դժոխոց :

Մելքիսեդեկ կոչեցաւ թագաւոր խաղաղութեան, եւ փրկիչն մեր արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. եւ հաշտեցոյց զԱստուած ընդ մարդկային ազգի կենսաձիր արեամբ իւրով՝ զոր եհեղ ի վերայ քառաթեւ սուրբ խաչին, որպէս երգէին հրեշտակք
* B p. 135 a. ընդ հովուաց յաւուր ծննդեան Փրկչին. Փառք ի * բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն :

Մելքիսեդեկ հաց եւ գինի մատոյց Աբրահամու նահապետին յորժամ դարձաւ ի պատերազմէ թագաւորացն, եւ Տէրն մեր զմարմին եւ զարիւն իւր հացիւ եւ գինեաւ ետ առաքելոցն սրբոց ի խորհրդական ընթրիսն, եւ նոյնպէս կարգեաց նուիրել մինչեւ ի կատարած աշխարհի ասելով. Զայս արարէք առ իմոյ յիշատակի :

Մելքիսեդեկ անհայր անմայր կոչեցաւ. եւ Քրիստոս ըստ աստուածային յաւիտենական ծննդեանն ի Հօրէ՝ է անմայր, եւ ըստ մարդկային ժամանակաւոր ծննդեանն ի սրբոյ կուսէն՝ անհայր. եւ ինքն է տիրապէս մի Որդի, մի Տէր, մի Քրիստոս, Աստուած ճշմարիտ եւ մարդ ճշմարիտ : Զի այնպիսի վայելէր միջնորդ հաշտարար ի մէջ Աստուծոյ եւ մարդկան, եւ քահանայ յաւիտենական առ ի քաւելոյ զմեղս բազմաց. քանզի լոկոյ մարդոյ փրկել զարարածս անհնարին էր, եւ սոսկ Աստուծոյ չարչարիլ

justice et le salut provenant de Dieu, car par sa justice il nous a justifiés et nous a sauvés de l'esclavage de la mort et de l'enfer.

Melchisédech fut appelé roi de la paix et notre Sauveur fit la paix au ciel et sur la terre; Il a réconcilié Dieu avec le genre humain par Son sang vivifiant, qu'Il a versé sur la sainte croix à quatre branches, ainsi que chantaient les anges en compagnie des bergers le jour de la naissance du Sauveur :
* B p. 135 a. *Gloire à Dieu au * plus haut des cieux et paix sur la terre*[1].

Melchisédech offrit au patriarche Abraham du pain et du vin, lorsqu'il revint de la guerre contre les rois, et Notre-Seigneur donna son corps et son sang aux saints apôtres sous la forme de pain et de vin à la cène mystique; et il institua de faire ainsi l'oblation jusqu'à la fin du monde en disant : *Faites ceci en mémoire de moi*[2].

Melchisédech fut appelé sans père, sans mère; et le Christ par Sa naissance divine éternelle du Père est sans mère, mais par sa naissance humaine temporelle de la sainte Vierge Il est sans père; il est souverainement un Fils, un Seigneur, un Christ, vrai Dieu et vrai homme. Car c'est ainsi qu'il fallait un intermédiaire conciliateur entre Dieu et les hommes, un prêtre éternel pour ôter les péchés de beaucoup; il était impossible au seul homme de sauver les créatures comme il était impossible au seul Dieu de souffrir et de mourir.

1. Luc, II, 14. — 2. Luc, XXII, 19.

եւ մեռանել անկարելի ։ Զի որպէս առաքեալն ասէ. Բազում են կացեալ քահանայք՝ վասն մահուն արգել լինելոյ, իսկ սա վասն յաւիտեան կալոյ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն ։ Ուստի եւ կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալս նովաւ առ Աստուած, քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա ։

Եւ կատարի տօն քահանային Աստուծոյ Մելքիսեդեկի Արեգի ԺԷ եւ Մարտի ԻԵ ։]

Արեգի ԺԸ եւ Մարտի ԻԶ ։ Վկայութիւն սրբոցն Պօղոսի եւ քեռն իւրոյ Յուլիանեայ ։

* Քրիստոսի մարտիրոսքն Պօղոս եւ Յուլիանէ՝ քրիստոնեայք էին ի քաղաքէն Պտղոմիդեայ՝ յաւուրս Աւրելիանոսի անօրէն արքային. եւ դեռ եւս մանկունք էին ։ * A fol. 215 v° b.

Եւ յորժամ եկն թագաւորն ի քաղաքն եւ ետես զնա սուրբն Պաւղոս՝ ասէ ցքոյր իւր. Մեծ փորձութիւն եմուտ ի քաղաքս մեր, բայց զօրութեամբն Քրիստոսի ոչ երկիցուք. եւ սկսաւ զնշան խաչին կնքել յերեսն ։ Ետես զնա թագաւորն եւ կոչեաց առ ինքն եւ ասէ. Որպէս իշխեցեր զնշանդ զայդ առնել յերեսդ ։ Եւ նա խոստովանեցաւ զքրիստոնէութեան հաւատն իւր ։

6 սրբոցն] սրբոց վկայիցն B || 7 էին] եւ քրիստոնէից զաւակք *add.* B.

Ainsi que le dit l'apôtre : *Beaucoup furent institués prêtres, parce que la mort les empêchait de l'être toujours, mais Lui, parce qu'il demeure éternellement, Il possède le sacerdoce qui ne se transmet point. De là vient aussi qu'il peut sauver parfaitement ceux qui s'approchent de Dieu par Lui, puisqu'Il est toujours vivant pour intercéder en leur faveur*[1].

La fête du prêtre de Dieu Melchisédech a lieu le 17 areg, 25 mars.]

* 18 areg, 26 Mars.

Martyre de saint Paul et de sa sœur Julienne.

* Les martyrs du Christ Paul et Julienne (*Iouliané*) étaient des chrétiens de la ville de Ptolémaïde, aux jours de l'empereur impie Aurélien. Ils étaient presque des enfants. * A fol. 215 v° b.

Lorsque l'empereur vint à la ville et que Paul le vit, il dit à sa sœur : « Une grande épreuve vient d'entrer dans notre ville, mais nous n'en aurons point peur, par la puissance du Christ. » Et il se mit à faire le signe de la croix sur son visage. L'empereur l'aperçut, le fit appeler et lui dit : « Comment as-tu osé faire ce signe sur ton visage? » Il confessa sa foi chrétienne.

1. Hébr., vii, 23-25.

Կախեցին զսուրբն եւ տանջեցին զնա ։ Եւ ընթացաւ Յուլիանէ քոյրն իւր առ թագաւորն եւ ասէ . Անիրաւ չարչարես զեղբայրն իմ ով բռնաւոր ։ Հրամայեաց եւ զնա կախել եւ քերել զմարմինն ։ Եւ յորժամ տանջեցին զնոսա՝ իջուցին ի փայտէն եւ նեղէին ուրանալ զՔրիստոս . եւ ոչ հաւանեցան բանից նոցա ։ Եւ արկին զնոսա յեռացեալ ձիւթով տապակ, եւ առժամայն եղեւ ցուրտ եւ ոչ այրեցան ։ Ապա տարածեցին զնոսա ի վերայ հրացեալ երկաթի մահճաց . հրամայեաց՝ եւ ի վերայ հրոյն հարկանէին զսուրբսն երկայն բրօք ։ Եւ դահիճքն Կոդրատոս եւ Ակակիոս խնայէին ի հարկանել եւ ողորմէին . եւ տեսեալ զայն արքայն եհատ զգլուխս նոցա ։ Եւ ապա հատին զսրբոյն Պօղոսի եւ զՅուլիանեայ զգլուխն Մարտի ԻԶ ։

* A fol. 216 r° a.

* Արեգի ԺԹ եւ Մարտի ԻԷ ։ Վկայութիւն կուսին Կատարինեայ սրբուհւոյն ։

Այս իմաստասէր եւ հանճարեղ կին էր ի քաղաքէն Աղեքսանդրու, դուստր լեալ Կոստանդեայ թագաւորին, եւ անուն կուսին Կատերինեա ։ Եւ էր յոյժ գեղեցիկ տեսլեամբ երեսօք եւ անձամբ, եւ քրիստոնեայ հաւատով, յաւուրս անօրէն արքային Մաքսէնդի ։ Եւ այնչափ էր մտավարժ եւ երագամիտ մինչ զի ուսաւ ի բուն իսկ

5 տապակ] կաթսայ B || 5 առժամայն ... ապա *om.* B || 8 նոցա] դահճացն B || 9 զգլուխն] Արեգի ԺԹ եւ *add.* B || 10 Վկայութիւն ... սրբուհւոյն] Վկայութիւն սրբուհւոյ կոյս վկային Կատեալինեայ B || 13 անօրէն] բռնաւոր B.

On suspendit le saint et on le tortura. Julienne, sa sœur, courut à l'empereur et lui dit : « Tu tortures injustement mon frère, ô tyran! » Il ordonna de la suspendre également et de lui déchirer le corps. Après les avoir torturés, on les descendit du poteau et on les pressa de renier le Christ, mais ils ne consentirent point à leurs paroles. On les jeta dans une chaudière de goudron bouillant qui se refroidit aussitôt et ils ne furent point brûlés. Ensuite on les étendit sur un lit de fer rougi au feu et (l'empereur) ordonna de battre les saints sur le feu, avec de longs bâtons. Les bourreaux Codratus et Acace hésitaient à frapper et en avaient pitié, ce que voyant, l'empereur leur fit trancher la tête. On trancha ensuite la tête à saint Paul et à sainte Julienne le 26 mars.

* A fol. 216 r° a.

* 19 AREG, 27 Mars.

Martyre de la vierge sainte Catherine.

Cette femme philosophe et intelligente était de la ville d'Alexandrie, fille de l'empereur Constance; son nom de jeune fille était Catherine. Elle était de fort bel aspect, de visage et de prestance; de foi chrétienne, (vivant) aux jours de l'empereur impie Maxence. Elle était si capable et d'esprit si prompt

զամենայն հելլենական և զհռետորական և զիմաստասիրական հանճարն. զՀոմերոսն և զՎիրգիլոն, և զԱսկղեպիոս, զԱրիստոտէլ, զՊղատոն, զՓիլիստոն, զԱնիսի և զԱմրիսի զմոգուցն, զՍիբիլայն և զԴիոնիսիոսն. նոյնպէս և զհնախօսաց բժշկացն՝ զԻպոկրատէս և զԳաղիանոս, և զամենայն հռետորական և զփիլիսոփայական, և զաստեղագիտութեան և զերկրաչափական և զթուաբանական զամենայն զիրս հելլենական՝ ճարտարմտութեամբն ուսաւ և ի բերան ընթեռնոյր : Եւ յոյժ հմուտ եղեւ ամենայն բարբարոսաց լեզուաց, և զեօթանասուն և զերկու ազգաց զխօսս ուսաւ : Եւ յոյժ զարմանային որք տեսանէին զնա և լսէին ի նմանէ, և համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն ազգս :

Եւ ի միում աւուր ետես զթագաւորն Մաքսենտիոս, որ բազում ամբոխիւ * զոհս մատուցանէր կռոցն. և երթեալ եմուտ ի տաճարն, և սկսաւ կշտամբել և յանդիմանել զթագաւորն վասն գարշելի կռոցն տօնի ի գրոցն Հոմերոսի հելլենացւոցն և ի Վիրգիլիոսի հռովմայեցւոցն. և յոյժ զարմացան ընդ սքանչելի բանս իմաստութեան նորա, և դարձեալ ընդ բարբառս բազում և ազգի ազգի լեզուացն զոր խօսեցաւ զահի հարան : * A fol. 216 r° b.

Եւ տեսեալ երանելի կինն զթագաւորն և զամբոխն շուարեալ և ոչ կարէին պատասխանի տալ. սկսաւ խօսել պարզ բանիւք և ասէ ցթագաւորն. Ընդէ՞ր ժողովեցեր

1 զամենայն *om.* B — զհռետորական և] զհռովմայական B || 5 զթուաբանական] և զնուագարանական *add.* B || 13 զարմացան] սքանչացան B — սքանչելի] զարմանալի B.

qu'elle apprit en entier toutes les branches de la rhétorique et de la philosophie grecques, Homère et Virgile (*Virgilon*), Asclépius, Aristote, Platon, Philistion, les mages Anis et Amris, les Sibylles et Denys, en même temps que les anciens médecins Hippocrate et Galien, et tous les ouvrages grecs de rhétorique, de philosophie, d'astronomie, de géométrie et d'arithmétique qu'elle apprit avec talent et qu'elle récitait par cœur. Elle était très versée dans toutes les langues des barbares, car elle avait appris à parler la langue de soixante-douze nations. Tous ceux qui la voyaient et l'entendaient l'admiraient et la réputation de sa sagesse se répandit dans tous les peuples.

Un jour, elle vit l'empereur Maxence entouré d'une grande multitude offrir * des victimes aux idoles; s'avançant, elle pénétra dans le temple et se mit à réprimander et à blâmer l'empereur pour la fête abominable des idoles en se servant des textes de l'Homère des Grecs et du Virgile des Romains. Les (assistants) s'étonnèrent beaucoup des sublimes propos de sa sagesse en même temps qu'ils furent stupéfiés des nombreux idiomes et des langues variées dont elle se servit pour parler. * A fol. 126 r° b.

La bienheureuse femme, voyant l'empereur et la foule interdits et ne sachant que répondre, se mit à leur parler en des termes simples et dit à

զբազմութիւն ամբոխիս, եւ ունայնութեամբ կորուսանես զանձինս դոցա ի մոլորութիւն կռոցդ ։ Այժմ սթափեցո՛ զխելս մտաց քոց եւ լուր ինձ, եւ ծանիր զայն որ անճառելի բանիւ հաստատեաց զամենայն աշխարհս, զի նա միայն է ճշմարիտ Աստուած որ առաքեաց զմիածին իւր յերկիր, զի կեցուսցէ զանձինս մեր խաչիւն իւրով. նա է Փրկիչ մոլորելոց եւ Աստուած աստուծոց եւ նմա փառք յաւիտեանս ։

Յայնժամ ի տարակուսի լեալ թագաւորն, տարաւ զնա զկնի իւր յապարանսն, կարծէր թէ ողոքանօք դարձուսցէ զնա ի կուռսն եւ ուրանալ զՔրիստոս ։ Իսկ նա առաւել ջանայր աստուածիմաստ բանիւք զթագաւորն հաւանեցուցանել ։

* A fol. 216 v° a.
Եւ հրամայեաց թագաւորն բերել յիսուն հռետորական վարդապետս, զի խօսեսցին ընդ նմա ի հելլենական * հանճարից ։ Եւ յորժամ սկսան խօսել առաջի թագաւորին, սրբուհի Կատերինէ հրեշտակային օգնականութեամբն՝ զվեհագոյն հռետորական վարդապետսն զարմացոյց եւ յամօթ արար, եւ երեւեցոյց զնոսա տգէտս եւ անիմաստս ։ Յայնժամ փիլիսոփայքն յամօթ եղեն, եւ երկեան խօսել կամ հարցանել ի փիլիսոփայական գրոց ։

Իսկ երանելին Կատերինէ տեսեալ զնոսա ի տարակուսի՝ պատմեաց նոցա զմարգարէութիւն հեթանոս իմաստասիրացն որ յառաջ քան զՔրիստոսի գալուստն էին.

4 զմիածին] որդին *add.* B — զանձինս մեր] զմեզ B || 7 դարձուսցէ] դարձուցանէ B || 9 թագաւորն] արքայն B || 11 հրեշտակային օգնականութեամբն] հրեշտակական օգնութեամբն B.

l'empereur : « Pourquoi as-tu rassemblé cette grande foule, et les égares-tu vainement dans l'erreur de tes idoles? Secoue donc les facultés de ton esprit et écoute-moi, reconnais celui qui d'un mot ineffable a créé tout l'univers, car Il est le seul vrai Dieu, qui a envoyé Son fils unique sur la terre pour sauver nos personnes par Sa croix; c'est lui le sauveur des égarés, le Dieu des dieux, à qui gloire éternellement. »

L'empereur, alors, saisi d'indécision, l'emmena à sa suite à son palais, avec l'idée de la convertir par de douces paroles aux idoles et de lui faire renier le Christ. Mais elle redoubla d'efforts pour persuader l'empereur par des arguments divins.

L'empereur ordonna de faire venir cinquante maîtres de rhétorique pour

* A fol. 216 v° a.
discuter avec elle sur les sciences * grecques. Lorsqu'ils se mirent à discuter en présence de l'empereur, sainte Catherine avec l'aide angélique étonna les plus grands docteurs de rhétorique, les confondit et montra qu'ils étaient ignorants, dépourvus d'esprit. Alors les philosophes furent saisis de confusion et craignirent de parler ou de l'interroger sur les ouvrages philosophiques.

Quant à la bienheureuse Catherine, les voyant dans le doute, elle leur parla de la prophétie des philosophes païens antérieurs à la venue du Christ;

զՎիրգիլիոսի որ ասէ. Յերից միութենէն միոյն ի մարմին տեսանել եւ յերից աներեւութիցն ոչ պակասի : Եւ Սիբիլս կին էր, եւ գրեաց ի գիրս իւր ի շարս պատմենի վասն խաչին, ասէ. Ով երիցս երանեալ փայտ՝ յորում օծեալն տարածէ զբազուկս իւր ի վերայ քո : Եւ նախ գուշակեաց միոյն զխորհուրդ սրբոյ Երրորդութեանն, եւ միւսն զչարչարանս Քրիստոսի : Եւ այլ բազում բանիւք յառաքելոյն Պետրոսի եւ ի սաղմոսացն Դաւթի ուսուցանէր եւ խրատ տայր հռետորացն եւ փիլիսոփայիցն հաւատալ ի Քրիստոս :

Եւ ասէ ցնոսա. Ով կոյրք եւ անմիտք եւ պակասամիտք ծանիրուք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս որ վասն մեր մարմնացաւ եւ խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յարեաւ ի մեռելոց եւ ելեալ յերկինս համբարձաւ, եւ գալոց է դատել * զկենդանիս եւ զմեռեալս որում փառք յաւիտեանս : * A fol. 216 v° b.

Իսկ թագաւորն զհռետորսն իբրեւ ետես յամօթ լեալ եւ ի տարակուսի՝ բարկացաւ յոյժ, եւ հրամայեաց հուր բորբոքել եւ այրել զյիսուն իմաստասէրսն : Եւ յորժամ տանէին զնոսա յայրումն՝ միոյն ի նոցանէ խրատ տայր այլոցն զի անկանելին յոտս սրբուհւոյ կուսին, եւ առնուլ զկնիքն Քրիստոսի. որպէս եւ արարին. եւ հաւատացին ի Քրիստոս : Եւ ասէ ցնոսա. Երանի է ձեզ զի փախեայք ի մոլորութենէն եւ ծանեայք

10 գալոց է] երկնային փառօք *add.* B.

de Virgile qui disait : « De l'union des trois, l'un se spécifie dans le corps et ne fait pas défaut aux trois invisibles. » La Sibylle était une femme qui avait écrit dans ses œuvres, dans la série de ses oracles, au sujet de la croix en ces termes : « O arbre trois fois bienheureux! car l'oint étendra ses bras sur toi[1]. » Un autre avait prédit le mystère de la sainte Trinité; un autre la passion du Christ. Et par d'autres nombreux textes, de l'apôtre Pierre et des psaumes de David, elle enseignait et conseillait aux rhéteurs et aux philosophes de croire au Christ.

Elle leur dit : « O aveugles, gens stupides et faibles d'esprit! reconnaissez Notre-Seigneur Jésus-Christ qui a pris corps pour nous, a été crucifié, enterré, a ressuscité des morts et s'est élevé au ciel, qui doit venir pour juger * les vivants et les morts, à qui gloire éternellement. » * A fol. 216 v° b.

L'empereur, voyant les rhéteurs confus et dans le doute, en fut fort irrité; il ordonna d'allumer un grand feu et de brûler les cinquante philosophes. Pendant qu'on les emmenait au bûcher, l'un d'eux engagea les autres à se jeter aux pieds de la vierge sainte et en recevoir le sceau du Christ. Ils firent ainsi et crurent au Christ. Elle leur dit : « Heureux êtes-vous d'avoir fui l'erreur et d'avoir reconnu Dieu; recevez maintenant le baptême du feu et

1. Oracula Sibyllina, VI, 26, cf. J. Geffcken, *Die Oracula Sibyllina,* Leipzig, 1902, p. 132.

զԱստուած. արդ ընկալարուք զմկրտութիւն հրով եւ ուրախասջիք ընդ հրեշտակս յաւիտեան ։ Եւ կատարեցան հրով յիսուն արքն այնոքիկ խոստովանելով զՏէրն մեր Յիսուս Քրիստոս եւ մազ մի ի գլխոյ նոցա ոչ այրեցաւ ի հրոյն. եւ բազումք յամբոխէն հաւատացին ի Քրիստոս ։

Եւ զերանելոյն Կատարինեայ մերկացուցին զծիրանին բեհեղն եւ զոսկի զարդսն ի գլխոյն եւ ի բազկացն եւ ի պարանոցէն, եւ հարկանէին ուժգին ի վերայ հանդերձին եւ արկին ի բանդ ։

Եւ կին մի այրի՝ թագուհի լեալ երբեմն Մաքսենտիոսի արքային՝ ցանկայր տեսանել զԿատարինէ, եւ լսել ի նմանէ բանս իմաստութեան ։ Եւ Պորփիւրիոս ստրատելատն տարաւ ի գիշերի զթագուհին առ նա, եւ նորին վարդապետութեամբն հաւատաց ի Քրիստոս, եւ երթեալ ի տուն իւր մկրտեցաւ ի քրիստոնէից ։

* A fol. 217 r° a. Եւ դարձեալ * տարան զերանելին Կատարինէ ի հարցումն, եւ նա անփոփոխելի բնութեամբ խոստովանէր զՔրիստոս ։ Կապեցին զնա ի սրալից անիւ, եւ հրեշտակ Տեառն իջեալ յերկնից կորզեաց զնա ի դժնդակ մեքենայէն ։ Յայնժամ հաւատացեալ թագուհին ընթացաւ հերարձակ առ թագաւորն, եւ անգոսնելով մեղադրէր նմա ընդ անխիղճ անողորմութիւն նորա. եւ ինքն խոստովանեցաւ համարձակութեամբ զՔրիստոս ։ Եւ հատին զգլուխ նորա եւ կատարեցաւ մարտիրոսութեամբ ։

13 եւ հրեշտակ... մեքենայէն] եւ տանջեցին ուժգին B || 17 հատին] առժամայն *add.* B.

vous vous réjouirez avec les anges éternellement. » Ces cinquante hommes moururent dans les flammes en confessant Notre-Seigneur Jésus-Christ, et pas un cheveu de leurs têtes ne fut brûlé par les flammes. Beaucoup parmi la foule crurent au Christ.

Quant à la bienheureuse Catherine, on lui enleva le manteau de pourpre et les bijoux en or de la tête, des bras et du cou, et on la frappa vigoureusement par-dessus ses vêtements; puis on la jeta en prison.

Une veuve, qui avait été autrefois impératrice (femme) de l'empereur Maxence, désirait voir Catherine et entendre d'elle des paroles de sagesse. Le stratélate Porphyre conduisit donc l'impératrice auprès d'elle pendant la nuit, et celle-ci crut au Christ par son enseignement, rentra chez elle et se fit baptiser par les chrétiens.

* A fol. 217 r° a. On emmena de nouveau * la bienheureuse Catherine à l'interrogatoire, mais elle, d'une manière immuable, confessa le Christ. On l'attacha à une roue pleine de lames, mais l'ange du Seigneur descendu du ciel l'arracha de l'atroce machine. C'est alors que l'impératrice croyante courut, les cheveux épars, auprès de l'empereur et le blâma sévèrement de son défaut de pitié sans scrupule; elle confessa avec hardiesse le Christ. On lui trancha la tête et elle mourut en martyre.

Իսկ սրբուհի կուսին Կատարինեայ յոյժ աղաչեաց (թագաւորն) եւ խրատ տայր ուրանալ զՔրիստոս, եւ տեսեալ եթէ ամենեւին ոչ լսէ, եհատ վճիռ գլխատման նորա : Եւ յորժամ տանէին ի կատարումն՝ բազում ժողովուրդք երթային զկնի լալով : Եւ յորժամ գնացին ի տեղին՝ աղաչեաց զդահիճսն անսալ փոքր մի մինչեւ կացցէ յաղօթս : Եւ համբարձեալ զձեռս իւր եւ զաչս յերկինս ասէ. Տէր Աստուած իմ լուր ինձ եւ կատարեա զխնդրուածս իմ, եւ տուր ամենեցուն որք յիշեն զանուն աղախնոյս քո Կատարինեայ զառատ ողորմութիւն քո, եւ առողջութիւն մարդոյ եւ անասնոյ, եւ որք յիշեն զիս յաւուր ոգեվարի՝ առաքեա զհրեշտակ խաղաղութեան որ ջնջեսցէ զմեղս նորա եւ խաղաղութեամբ առանիցէ զհոգին : Ընկալ եւ զհոգիս իմ խաղաղութեամբ եւ քեզ փառք յաւիտեանս :

* Եւ ի կատարել զաղօթսն խօսեցաւ Տէր յամպոյն եւ ասէ. Եկեսջիր ի կայանս Հօրն քոյ որ յերկինս է, հրեշտակք պսակս եւ ջահս ունելով մնան զալստեան քոյ զի եկեսցեն քեզ ընդ առաջ : Եւ զխնդրուածս քո կատարեցից, եւ տաց ամենեցուն որք կատարեն զյիշատակս քո հարիւրապատիկ զխնդրուածս նոցա : Եւ յաւուր ոգեվարի եթէ ոք յիշեսցէ զանուն քո՝ առաքեցից զհրեշտակ խաղաղութեան, եւ քաղցրութեամբ առանիցէ զհոգի նորա : * A fol. 217 r° b.

Եւ յետ աստուածային ձայնին ասէ երանելին ցդահիճսն. Եկայք եւ կատարեցէք

5-17 ասէ... երանելին] աղօթեաց առ Աստուած, եւ ապա ասէ B.

L'empereur pria beaucoup la sainte vierge Catherine en l'engageant à renier le Christ, mais voyant qu'elle ne l'écoutait point du tout, il rendit contre elle une sentence de décapitation. Pendant qu'on la conduisait à l'endroit de l'exécution une foule de gens la suivaient en pleurant. Arrivée à l'endroit, elle pria les bourreaux d'attendre un peu jusqu'à ce qu'elle eût fini sa prière. Elle éleva ses mains et ses yeux au ciel et dit : « Seigneur mon Dieu, exauce-moi et accomplis mes vœux, donne dans ta grande pitié à tous ceux qui commémoreront le nom de ta servante Catherine la santé des hommes et des animaux; et à tous ceux qui se souviendront de moi au jour de l'agonie, envoie-leur l'ange de la paix, afin qu'il absolve leurs péchés et qu'ils rendent leur âme en paix. Reçois aussi mon âme en paix; à Toi gloire éternellement. »

* A la fin de la prière, le Seigneur parla d'un nuage et dit : « Viens dans la résidence de ton Père qui est au ciel; des anges tenant à la main des couronnes et des torches attendent ton arrivée pour venir au-devant de toi. J'exaucerai tes vœux et j'accorderai au centuple à ceux qui accompliront ta commémoration ce qu'ils me demanderont. A celui qui au jour de son agonie se souviendra de ton nom, j'enverrai l'ange de paix et il rendra son âme doucement. » * A fol. 217 r° b.

Après que la voix divine eut parlé, la bienheureuse dit aux bourreaux : « Venez et accomplissez ce qui vous a été ordonné par votre empereur. » Ainsi

զհրամայեալսն ձեզ_ ի թագաւորէն ձերմէ։ Եւ այնպէս հատին զգլուխ նորա Մարտի ԻԷ։ Եւ փոխանակ արեան կաթն բղխեաց ի պարանոցէն, եւ հրեշտակք Աստուծոյ բարձին զմարմինն եւ տարեալ եդին ի Սինէական լերինն։

Եւ գրեաց զպատմութիւն վկայութեանն Աթանասիոս դպիր եւ ծառայ սրբուհւոյն Կատարինեայ։

Արեգի Ի եւ Մարտի ԻԸ։ Վկայութիւն սրբուհեացն Փերփութեայ եւ քեռն իւրոյ եւ աղախնոյն. եւ Վահանայ Գողթնացւոյն։

Վկայն Քրիստոսի Վահան՝ որդի էր Խոսրովու իշխանին Գողթն գաւառի։ Եւ
* A fol. 217 v° a. յորժամ * տաճիկք հրամանաւ Աբդլմէլքի այրեցին զիշխանսն հայոց ի Նախճաւան եկեղեցին ի պատճառս երդման ժողովեալ ածին զնոսա անդ զի միամիտ կացցեն ի ծառայութիւն Իսմայելացւոց։ Եւ ապա փակեցին զդուրս եկեղեցւոյն աղիւսով, եւ վառեցին հրով զեկեղեցին զի փայտաշէն էր, եւ անհնարին այրեցան իշխանքն հրով նահատակեալք. եւ ինքեանք ասպատակ սփռեցան յաշխարհն Հայոց, աւար առեալ զամենայն՝ վարեցին ի գերութիւն զարս եւ զկանայս եւ զմանկունս. ընդ որս եւ գերեցաւ

1 հատին] զպատուական *add.* B — նորա] Արեգի ԺԹ եւ *add.* B || 2 եւ փոխանակ... Աստուծոյ] եւ ապա B || 3 լերինն] եւ եղեւ տապան նորա նշանաւոր ախտաւորացն հաւատացելոց *add.* B || 4 զպատմութիւն վկայութեանն] զվկայութիւնս B || 6 սրբուհեացն] սրբուհւոյ կուսին B || 8 Վկայն] Սուրբ վկայն B || 9 տաճիկք] այլազգիք B || 10 ժողովեալ ածին զնոսա անդ *om.* B || 11 Իսմայելացւոց] այլազգեաց B || 13 սփռեցան յաշխարհն] սփռեալ ընդ աշխարհն B.

donc on lui trancha la tête le 27 mars. Au lieu du sang c'est du lait qui coula de son cou, et les anges de Dieu enlevèrent son corps et l'emmenèrent sur la montagne du Sinaï.

Le scribe Athanase, serviteur de sainte Catherine, a écrit l'histoire de son martyre.

20 areg, 28 Mars.

Martyre des saintes (femmes) Pherbouta, sa sœur et sa servante, et de Vahan de Golthn.

Le martyr du Christ Vahan était le fils du prince Khosrow, de la province
* A fol. 217 v° a. de Golthn. Lorsque les * Sarrasins, par ordre de Abdelmélik, brûlèrent les princes arméniens dans l'église de Nakhitchévan où ils les avaient convoqués pour leur faire faire le serment de rester fidèles au service des Ismaélites, ils avaient fermé les portes de l'église avec des briques et incendié l'église qui était construite en bois et tous les princes y furent martyrisés par les flammes. Après quoi (les Sarrasins) firent irruption et se répandirent dans le pays d'Arménie, firent un butin de tout et emmenèrent en captivité les

Վահան մանուկ երից ամաց եւ տարեալ ի Սամառա եդաւ ի դպրոց, եւ ուսեալ երագամտութեամբ զամենայն ուսմունս Տաճկաց, եւ եղեւ դիւանադպիր եւ դպրապետ ի դրան արքունի :

Իսկ յորժամ առ Ոմար զիշխանութիւնն Տաճկաց բարեմիտ եղեւ առ քրիստոնեայս եւ մանաւանդ առ ազգս Հայոց, հրամայեաց եւ զամենայն գերեալսն արձակել :

Արձակեցաւ եւ Վահան, զոր անուանեցին Տաճկունքն Վահապ, եւ եկեալ ի գաւառ իւր ի Գողթն առ իւր կին յազգէն Սիւնեաց : Եւ խոստովանէր զՔրիստոս համարձակ զոր ի տղայութենէն ուրացուցին Տաճիկք, եւ ցանկայր մեռանել մարտիրոսութեամբ . եւ երթայր յանապատն կրօնաւորէր :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ մեռաւ իշխանն Տաճկաց Ոմարն, եւ իշխանեաց Շամա, որ է Շէհմ : Եւ գնաց Վահան առ նա, զի կամ * համարձակ կացցէ զքրիստոնէութիւնն * A fol. 217 v° b.
կամ մեռցի մարտիրոսութեամբ : Եւ գնացեալ ի դուռն ոչ ոք համարձակէր ասել վասն քրիստոնէութեանն . ապա ինքն իսկ գրեաց զքրիստոնէութիւնն իւր եւ եցոյց յարքունիս : Եւ իսկոյն կոչեցին առաջի Շամայ, եւ նա հարցանէր զնա եթէ քրիստոնեայ իցէ : Եւ նա համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս Աստուած եւ Որդի

2 Տաճկաց] Հագարացւոց B || 4 Տաճկաց] Հագարացւոց B || 6 Տաճկունքն] այլազգիք B || 8 Տաճիկքն *om.* B || 9 կրօնաւորէր] կրօնաւորեցաւ, եւ կեայր մեծ ճգնութեամբ B || 10 Տաճկաց *om.* B || 11 Շէհմ] Հէմշ B || 13 գրեաց] ի թղթի *add.* B || 15 համարձակութեամբ] համարձակ B.

hommes, les femmes et les enfants, parmi lesquels se trouvait le jeune Vahan âgé de trois ans, qui fut emmené à Samara et confié aux lettrés; il apprit rapidement tous les enseignements des Sarrasins, devint secrétaire d'archives et premier secrétaire au palais royal.

Lorsque Omar prit le gouvernement des Sarrasins, il se montra bienveillant pour les chrétiens et spécialement pour la nation arménienne et il ordonna de rendre la liberté à tous ceux qui avaient été emmenés en captivité.

Vahan, appelé par les Sarrasins Vahab, fut lui aussi mis en liberté et revint à sa province de Golthn; il se maria avec une femme de la race des Siuniks. Il confessa avec hardiesse le Christ, que les Sarrasins lui avaient fait renier dès l'enfance, et il aspirait à mourir par le martyre. Il se retira dans le désert et s'y fit moine.

A cette époque mourut le chef des Sarrasins Omar, et Chama, dit Chehm, prit le gouvernement. Vahan se rendit auprès de lui * pour obtenir * A fol. 217 v° b.
ou de professer ouvertement le christianisme ou de mourir par le martyre. Il se rendit au palais où personne n'osa lui répondre au sujet du christianisme, il écrivit lui-même au sujet de son christianisme et présenta (sa requête) au palais. Il fut aussitôt appelé en présence de Chama, qui lui demanda

Աստուծոյ ։ Եւ նա խոստանայր նմա պարգեւս եւ պատիւս եթէ լուէ նմա, եւ նա ոչ առ յանձն ամենեւին ։ Եւ նա հրամայեաց սրով սպանանել զնա ։

Եւ հանեալ արտաքոյ քաղաքին հատին զգլուխ նորա Մարտի ԻԸ ։ Եւ լոյս մեծ ծագեաց ի վերայ նորա ։ Եւ գաղտ բարձեալ զնա քրիստոնէիցն թաղեցին պատուով ի նշանաւոր տեղւոջ ։ Եւ բազում բժշկութիւնք լինին ի նշխարաց սրբոյն ի հիւանդս եւ յայլսն ։

Յայսմ աւուր վկայութիւն Փերփութեայ եւ աղախնոյն ։

Երանելի կանայքն էին ի Պարսիկս քրիստոնեայք, յաւուրս Սապուրիոսի հրապաշտ արքային ։ Սոքա քորք էին սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսին, որ յառաջ քան զայս մարտիրոսացաւ հանդերձ հազար խոստովանող վկայիւք ի Պարսիկս ։

Եւ եղեւ հիւանդանալ Պարսից թագուհւոյն եւ զչարէին հրապաշտքն զորբուհեաց եթէ նոքա կախարդեցին զթագուհին ։ Եւ հրամայեաց թագաւորն Մաքտատեայ մոգպետին քննել զկանայսն վասն որոյ մատնեցանն ։ * Եւ յորժամ կացին առաջի՝ տեսեալ

* A fol. 218 r° a.

3 Մարտի ԻԸ] եւ Ապրիլի Ի *add.* B || 6 եւ յայլսն] եւ յախտաժէտս, ի փառս Աստուծոյ B || 11 զչարէին ... զորբուհեացն] չար համբաւեցին անօրէն հրապաշտքն զորբուհի կուսանն B || 12 Մաքտատեայ] Մաքտայ B.

s'il était chrétien. Il confessa avec hardiesse le Christ Dieu et Fils de Dieu. (Chama) lui promit des cadeaux et des honneurs s'il voulait l'écouter, mais (Vahan) ne voulut aucunement. Il ordonna alors de lui trancher la tête.

On l'emmena hors de la ville et on lui trancha la tête le 28 mars. Une forte lumière jaillit sur son corps. Les chrétiens le relevèrent secrètement et l'enterrèrent dans un endroit renommé. Bien des guérisons s'opèrent par les restes du saint sur les malades et les autres.

En ce jour martyre de Pherbouta (*Pherphouṭiay*) et de sa servante.

Ces bienheureuses femmes étaient chrétiennes en Perse, aux jours du roi Sapor (*Sapourios*), l'adorateur du feu. Elles étaient les sœurs de saint Siméon (*Šmaoun*) l'évêque qui précédemment avait été martyrisé avec mille confesseurs martyrs en Perse.

La reine de Perse tomba malade, les adorateurs du feu en voulurent aux saintes femmes qu'ils accusèrent d'avoir ensorcelé la reine. Le roi ordonna à Makhtat (*Makhtateay*)[1], chef des mages, d'examiner les raisons pour lesquelles les femmes avaient été dénoncées. * Lorsqu'elles comparurent, le chef des mages, ayant vu la beauté du visage de Pherbouta, en conçut un désir

* A fol. 218 r° a.

1. *Acta SS.* april. III, 22 donne « Mauptes, cujus nominis interpretatio est, Pontifex Magorum ». *Syn. Cp.* : Μαπτάς.

մոգպետին զգեղեցկութիւն երեսացն Փերփութէի՝ ցանկացաւ նմա տարփութեամբ, եւ կայր ապշեալ ընդ երեսն անմռունչ եւ շփոթեալ ոչ ինչ հարցանէր :

Եւ գիտացին երանելի կանայքն զպատճառս կոչմանն առաջի մոգպետին, եւ ասեն . Մեք քրիստոնեայք եմք եւ ոչ ազանդ ինչ գիտեմք եւ ոչ կախարդութիւն : Եւ արգելին զնոսա ի տան մի, եւ ազդեցին արքային զպատասխանիս նոցա : Եւ մոգպետն առաքեաց կանայս յերանելին Փերփութեա. Եթէ կամիցիս ապրել ի մահուանէ ամուսնացիր ինձ : Եւ նորա լուեալ անարգանօք դարձոյց յետս զպատգամաւոր կանայսն առ մոգպետն :

Եւ հրամայեաց թագաւորն. Եթէ ուրանան զՔրիստոս եւ պաշտեն զարեգակն եւ զհուր՝ ազատեա զնոսա, ապա թէ ոչ՝ հատ զգլուխս նոցա : Եւ յորժամ ոչ հաւանեցան անօրէն հրամանին՝ հանին զնոսա ի գենումն : Եւ ոմանք ի պիղծ աղանդաւորացն ասացին. Եթէ ոչ յերկուս հերձնուն զնոսա՝ որ անցանէ թագուհին ի վերայ՝ ոչ ողջանայ : Ապա կապեցին զնոսա զմեքենայից, եւ սղոցեցին յերկուս մասունս որպէս փայտ, եւ էանց ի վերայ նոցա թագուհին եւ ամենայն բանակն որ զկնի երթային, եւ յորժամ դարձաւ յապարանսն իւր՝ չար մահուամբ սատակեցաւ :

* Իսկ երանելի սուրբ կանայքն զանմահ կեանս ընկալան Մարտի ԻԸ, եւ պսակեցան * A fol. 218 r° b.

4 ազանդ ինչ] աղանդիւս B 13 ողջանայ] առողջանայ B || 15 իւր *om.* B — սատակեցաւ] մեռաւ B || 16 երանելի *om.* B — զանմահ կեանս] զերանելի մահն B — Մարտի ԻԸ] եւ Արեգի Ի *add.* B.

violent, fixa longuement sa figure sans mot dire, et, interdit, ne la questionna point.

Lorsque les bienheureuses femmes apprirent la raison de leur comparution devant le chef des mages, elles dirent : « Nous sommes chrétiennes, nous ne connaissons point de sectes ni de sorcellerie. » On les enferma dans une maison, et on fit connaître au roi leur réponse. Le chef des mages envoya des femmes auprès de la bienheureuse Pherbouta pour lui dire : « Si tu veux éviter la mort, épouse-moi. » Celle-ci, après avoir écouté, renvoya avec outrages les femmes ambassadrices au chef des mages.

Le roi ordonna : « Si elles renient le Christ et adorent le soleil et le feu, mets-les en liberté; sinon, tu leur trancheras la tête. » Comme elles ne consentirent point à l'ordre impie, on les conduisit à l'endroit de l'exécution. Quelques-uns, parmi les sectaires immondes, dirent : « Si on ne les coupe point en deux, de sorte que la reine passe par-dessus, elle ne guérira point. » On les attacha alors à des machines et on les scia en deux parties comme du bois; la reine passa par-dessus elles, ainsi que tout le cortège qui la suivait, mais lorsqu'elle réintégra son palais elle mourut d'une mort atroce.

* Les bienheureuses saintes femmes reçurent la vie immortelle le 28 mars, * A fol. 218 r° b.

ի Քրիստոսէ, տուողէ նոցա այնչափ զօրութիւն եւ համբերութիւն, եւ են բարեխօս առ Քրիստոս վասն տօնողացս :

Արեգի ԻԱ եւ Մարտի ԻԹ : Վկայութիւն երեսուն եւ վեց մարտիրոսաց յորոց էին սուրբքն. Մակարիոս, Զենոն, Աղեքսանդրոս, Թէոդորոս եւ այլ երեսուն եւ երկու ընկերք :

Յամս Դեկոսի անօրէն արքային՝ կացուցին զսուրբսն առաջի դատաւորին Բուրտիանոսի, յԱփրեա քաղաքին, եւ ասէ. Ընդէ՞ր ոչ զոհէք աստուածոց մերոց : Եւ նոքա ասեն. Մեք քրիստոնեայք եմք, եւ ոչ զոհեմք պիղծ աստուածոց ձերոց :

Եւ բարկացեալ բռնաւորին՝ հրամայեաց եւ ձաղկեցին զսուրբսն դալար բրօք եւ արջառաջլօք : Եւ համբարձեալ զձեռս իւրեանց յերկինս աղաղակեցին բարձր ձայնիւ. Օգնեա՛ մեզ՝ Աստուած ծառայիցս քոց եւ փրկեա՛ զմեզ ի հակառակորդէս յայսմանէ :

1 այնչափ զօրութիւն եւ համբերութիւն] զօրութիւն համբերութեան B — առ... տօնողացս] վասն մեր յաւիտեան B || 3 Վկայութիւն... ընկերք] Վկայութիւն սրբոց քառասուն եւ երկու մարտիրոսացն որ յԱփրիկէ, Մակարիոսի, Աղեքսանդրոսի, Զենոնի եւ Թէոդորոսի B || 6 Յամս... կացուցին] Սուրբքս այսոքիկ՝ հանդերձ այլ եւս երեսուն եւ ութ ընկերօք պայծառացեալ փայլէին յԱփրիկէ՝ ճշմարիտ հաւատովն Քրիստոսի եւ ամենայն վարժովք. այլ եւ աներկիւղ խոստովանէին եւ քարոզէին զՔրիստոս յԱփրիկոյ քաղաքին, առ հալածանօքն որ եղեւ յամս Դեկոսի անօրէն արքային. վասն որոյ եւ կացուցին || 7 յԱփրեա *om.* B.

et elles furent couronnées par le Christ qui leur avait accordé tant de force et de patience : elles intercèdent auprès du Christ pour nous qui les fêtons

21 areg, 29 Mars.

Martyre des trente-six martyrs parmi lesquels se trouvaient les saints Macaire, Zénon, Alexandre, Théodore et trente-deux autres compagnons.

Aux jours de Dèce l'empereur impie, on fit comparaître les saints en présence du juge Burtianus (*Bourtianos*) dans la ville d'Apri[1] (Apréay). Il leur dit : « Pourquoi n'immolez-vous pas à nos dieux ? » Ils répondirent : « Nous sommes chrétiens et nous n'immolons point à vos dieux immondes. »

Le tyran, irrité, ordonna de flageller les saints avec de grosses branches vertes et des nerfs de bœuf. Ils élevèrent leurs mains au ciel et crièrent à haute voix : « Aide-nous, ô Dieu, (qui sommes) tes serviteurs et délivre-nous de cet adversaire. »

1. Ἄπροι en Thrace (?)

Եւ զայն լուեալ դատաւորին մոլեգաւ, եւ հրամայեաց հարկանել զնոսա ուժգին մինչեւ խորտակեցան գաւազանքն եւ լուծան կապանքն, եւ փոխեցան այլ դահճք, եւ այնչափ տանջեցին մինչեւ բացան ոսկերքն եւ պատառեցան որովայնքն եւ սիրտքն երեւէին, բայց երեսք իւրեանց էին պայծառք ։ Եւ յոյժ զարմացան ամենեքեան ընդ ժուժկալութիւն սրբոցն ։ Եւ ապա հրացեալ շանթիւք այրեցին զթիկունս նոցա, եւ խիստ քացախ աղացեալ * աղիւ հեղին ի վերայ թիկանցն վիրաւորելոցն եւ խոշոր խորգով տրորէին զխոցսն, եւ սուրբքն սաղմոսէին առ Աստուած ։ * A fol. 218 v° a.

Եւ նոյնժամայն հրամայեաց եւ հատին զերեսուն եւ վեց մարտիրոսացն զգլուխսն Մարտի ԻԹ ։ Եւ երթեալ քրիստոնէիցն թաղեցին մեծաւ պատուով զսուրբ եւ զպատուական մարմինս նոցա ի նշանաւոր տեղւոջ, յորում բժշկութիւնք լինին ի վերայ հիւանդաց եւ ախտաժետաց ։

[B * Յիշատակ սուրբ առաքելոյն Հերոդիոնի ։ * B p. 139 b

Աստուածային առաքեալն Հերոդիոն հետեւող սուրբ առաքելոցն գլխաւորաց, զի էր ի կարգէ եօթանասնիցն, եւ պաշտելով հաւատարմապէս եւ սպասաւորելով Պօղոսի եւ Պետրոսի, որ եւ հաւասար նոցա պայծառացաւ ի շնորհս, ի նշանս, ի վարդապետութիւնս, եւ ի համբերութիւն ազգի ազգի նեղութեանց եւ հալածանաց կրեց որ ի հրէից եւ ի հեթանոսաց ։

2 լուծան կապանքն *om* B || 3 ոսկերք] սիրտքն B || 3 եւ սիրտքն երեւէին *om.* B || 8 զերեսուն . . . մարտիրոսացն] զամենայն սրբոց զգլուխսն B || 9 Մարտի ԻԹ] եւ Արեգի ԻԱ *add.* B || 11 ախտաժետաց] ախտացելոց B.

Le juge, en entendant cela, devint furieux et ordonna de les frapper vigoureusement jusqu'à ce que les bâtons se brisassent et que les liens se défissent; puis d'autres bourreaux se succédèrent, qui les frappèrent à tel point que les os furent mis à nu, le ventre s'entr'ouvrit et le cœur apparut; cependant leurs visages étaient rayonnants. Tous furent grandement étonnés de l'endurance des saints. On leur brûla le dos avec des broches enflammées, on répandit sur le dos blessé du vinaigre fort mélangé à du * sel en poudre et on frotta les plaies avec de la grosse toile, mais les saints psalmodiaient à Dieu. * A fol. 218 v° a.

Aussitôt (le juge) ordonna de trancher la tête aux trente-six martyrs le 29 mars. Les chrétiens allèrent enterrer leurs saints et précieux corps avec de grands honneurs dans un endroit choisi, où des guérisons ont lieu sur les malades et les infirmes.

[B * Commémoration du saint apôtre Hérodien. * B p. 139 b.

Le divin apôtre Hérodien était l'imitateur des saints apôtres principaux, car il était du nombre des soixante-dix; il avait un culte pour Paul et Pierre et les servait fidèlement; il leur fut égal en réputation, en grâces, en prodiges, en doctrine et par son endurance des nombreuses peines et des persécutions passionnées provenant des Juifs et des païens.

* B p. 139 b. * Զսա յիշէ Պօղոս ի Թուղթս իւր եւ ողջունէ, որ եւ սքանչելապէս կատարեցաւ ի Քրիստոս, ի բազումս տարածեալ զաւետարանն : Հանգեաւ սուրբ եւ փառաւորեալ առաքեալն Քրիստոսի ի Ռոդոնի ԻԹ Մարտի ամսոյ, ի փառս Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն :

* B p. 140 a. * Յայսմ աւուր յիշատակ երանելի թագաւորին Երմունալտի՝ զոր Երմինիտոս կոչեմք :

Զսա հայրն իւր սպան վասն Քրիստոսի հաւատոցն. զի հայրն էր արիոսեան աղանդով, իսկ Երմինիտոս որդի նորա սիրեաց զուղղափառութիւն : Վասն որոյ զրկեաց զնա հայր իւր ի թագաւորութենէ, եւ կապանօք էարկ զնա ի բանդ. եւ ապա եւս կոտորատել զնա կացնով, եւ գլխատել անդէն ի բանդին :

Եւ եղեւ հրաշալի բարբառ զուարթնոց ի մէջ գիշերի ի բանդի անդ, եւ ծագեաց լոյս պայծառ ի վերայ մարմնոյ սրբոյն : Եւ բազմութիւն քաղաքին դիմեաց ի բանդն, եւ հայր նորա ամենայն տամբ իւրով դարձաւ յուղղափառութիւն, ընդ նմին եւ բազումք ի չարափառաց ընկալան զուղիղ հաւատն : Զսա յիշէ Գրիգոր պապն ի քսան եւ ութ ճառ երկրորդ գրոց :]

* B p. 139 b. * Paul en fait mention dans ses épîtres et le salue; il mourut glorieusement dans le Christ, après avoir répandu l'évangile parmi nombre de gens. Le saint et glorieux apôtre du Christ reposa à Rhodes le 29 du mois de mars pour la gloire du Christ qui est béni éternellement, amen.

* B p. 140 a. * En ce jour commémoration du bienheureux roi Ermounald, que nous appelons Erminitus.

Il fut tué par son père pour la foi au Christ; car son père était de la secte des ariens, tandis que son fils Erminitus aima l'orthodoxie. C'est pourquoi son père le priva de la royauté et le fit jeter en prison chargé de chaînes; ensuite il le fit déchiqueter à coups de hache et lui fit trancher la tête dans la prison.

Dans la nuit, un concert merveilleux des anges se fit entendre dans la prison et une lumière éclatante jaillit sur le corps du saint. La population de la ville accourut en foule à la prison, et son père avec toute sa maison se convertit à l'orthodoxie; de nombreux sectaires acceptèrent la foi orthodoxe. Le pape Grégoire le mentionne dans sa vingt-huitième homélie du deuxième volume.]

Արեգի ԻԲ եւ Մարտի Լ. ։ Վկայաբանութիւն Գուշտազատայ պարսիկ ներքինւոյն ։

Յաւուրս Սաբուռխոսի հրապաշտ արքային Պարսից՝ երանելի ներքինին Գուշտազատ սնուցեալ էր զարքայն, եւ էր ծերունի եւ մեծաւ պատուով իշխան եւ թագադիր. լեալ էր երբեմն քրիստոնեայ, եւ վասն սիրոյ եւ երկեղի արքային երկիր եպագ արեգական եւ հրոյ ։

Եւ ի միում աւուր նստէր աթոռով ի վերայ դրանն արքունի, եւ տեսանէ զսուրբն Շմաւոն եպիսկոպոսն, որ յետոյ մարտիրոսացաւ, յարեաւ յաթոռոյն գնաց ընդ առաջ երկիր եպագ եւ կամէր համբուրել. եւ եպիսկոպոսն դարձոյց զերեսս իւր ի նմանէ եւ անց ։ Իսկ Գուշտազատ յոգւոց եհան զղջմամբ եւ ասէ. Եթէ Շմաւոն եպիսկոպոսն որ մարդ է իբրեւ զիս՝ դարձաւ յինէն, ապա Աստուած որչափ * դարձուցանէ զերեսս իւր յինէն որ ուրացայ զնա ։ Գնաց ի տուն իւր եւ զգեցաւ հանդերձ սգոյ սեաւ եւ ողբայ զուրացութեան մեղս իւր ։ * A fol. 218 vº b.

Եւ լուեալ արքային կոչեաց զնա առաջի իւր, եհարց. Ընդէ՞ր զգեցար հանդերձ սեաւ սգոյ եւ ողբաս ։ Եւ նա ասէ. Վասն զի արարի զկամս քո եւ ուրացայ զԱստուածն իմ եւ երկիր պագի արեգական եւ հրոյ ։ Ասէ թագաւորն. Եթէ զայդ լաւ եւ

1 վկայաբանութիւն... ներքինւոյն] վկայութիւն Գուժդաթայ ներքինւոյն B || 2 Գուշտազատ] էր մեծապատիւ իշխան թագաւորական պալատին, այլ պատուով թագադիր էր եւ *add.* B || 3 մեծաւ... թագադիր *om.* B || 11 ողբայ] ողբայր B.

22 AREG, 30 Mars.

Récit du martyre de l'eunuque persan Gouśdazath.

Aux jours du roi de Perse Sapor, adorateur du feu, vivait le bienheureux eunuque Gouśdazath qui avait élevé le roi, vieillard, prince de haut rang, (investi du soin) de couronner le roi. Il avait d'abord été chrétien, mais par affection pour le roi et par crainte de lui il avait adoré le soleil et le feu.

Un jour qu'il était assis sur une chaise à la porte du palais royal, il aperçut le saint évêque Siméon (*Śmavon*), qui fut martyrisé plus tard; il se leva de son siège, alla au-devant de lui, se prosterna devant lui et voulut l'embrasser, mais l'évêque détourna son visage de lui et passa. Gouśdazath soupira avec contrition et dit : « Si l'évêque Siméon, qui est un homme comme moi, s'est détourné de moi, combien Dieu * détournera-t-il son visage de moi qui l'ai renié? » Il rentra dans sa maison, se revêtit de noirs habits de deuil et pleura sur son péché de reniement. * A fol. 218 vº b.

Le roi, l'ayant appris, l'appela en sa présence et lui demanda : « Pourquoi as-tu revêtu de noirs habits de deuil et gémis-tu? » Il répondit : « Parce que j'ai accompli ta volonté, j'ai renié mon Dieu et j'ai adoré le soleil et le

ողբաս, ով չար ծերունի, ես փութով դարձուցից զողբս քո ի գլուխ քո ։ Եւ յետ բազում խրատու եւ աղաչանաց՝ յորժամ ամենեւին ոչ հաւանեցաւ, բարկացաւ եւ հրամայեաց հատանել զգլուխ նորա ։

Ասէ Գուշտազատ. Գիտես հաւաստեաւ զի ես զգիրկս իմովք սնուցեալ եմ զքեզ, եւ միամտութեամբ ծառայեալ, այժմ կատարեա զխնդրուածս իմ, եւ առաքեա քարոզս ի մէջ քաղաքիս՝ որ մեծաւ ձայնիւ աղաղակեն յամբոխ քաղաքին եւ հրապարակին եթէ Գուշտազատ ոչ վասն նենգութեան եւ ոչ վասն յայտնելոյ զխորհուրդս արքային, եւ ոչ վասն այլ ինչ չար գործոց մեռանի սրով, այլ վասն հաւատոցն Քրիստոսի ։ Եւ հրամայեաց թագաւորն եւ արարին ըստ կամաց նորա ։

Եւ զայս եառ առնել սուրբ վկայն Քրիստոսի Գուշտազատ՝ վասն զի յառաջ քրիստոնեայ էր եւ ուրացաւ զՔրիստոս եւ բազում քրիստոնեայս գայթակղեցոյց ։ Եւ
* A fol. 219 r° a. յորժամ հանին զնա * արտաքոյ քաղաքին՝ առաջի ամենայն ժողովրդեան հատին զգլուխ նորա յաւուր մեծի կիւրակէի սրբոյ Զատկին՝ յորում էր Արեգ ամսոյ ԻԲ եւ Մարտի Լ ։

Յայսմ աւուր վկայութիւն աշակերտացն Մաշտոցի որ յԱստղաբլուրն կատարեցան ։

Արքայն հիւսիսոյ զօրաժողով լեալ՝ եկն բազում բարբարոսօք եւ եկ ընդ դուռն

5 ծառայեալ] ծառայեցի B — զխնդրուածս] զխնդիրս B || 6 քաղաքին եւ *om.* B || 8 այլ վասն հաւատոցն Քրիստոսի *om.* B.

feu. » Le roi lui dit : « Si c'est pour cela que tu pleures et que tu gémis, méchant vieillard, je ferai rentrer bien vite des gémissements dans ta tête. » Après bien des conseils et des prières, après qu'il n'eut pu le persuader aucunement, (le roi), irrité, ordonna de lui trancher la tête.

Goušdazath lui dit : « Tu sais parfaitement bien que je t'ai élevé dans mes bras et que je t'ai servi fidèlement, mais exauce maintenant ma prière et envoie des crieurs à travers la ville pour annoncer à la population de la ville et au tribunal que Goušdazath meurt par le glaive non pour cause de trahison, ni pour avoir dévoilé les desseins du roi, ni pour toute autre mauvaise action, mais pour la foi au Christ. » Le roi ordonna qu'il fût fait selon sa volonté.

Le saint martyr du Christ Goušdazath fit faire cela parce qu'auparavant il avait été chrétien, puis avait renié le Christ et avait scandalisé nombre de
* A fol. 219 r° a. chrétiens. Après qu'on l'eut fait sortir * de la ville, on lui trancha la tête en présence de toute la population le jour du grand dimanche de la sainte Pâque, qui était le 22 areg, le 30 mars.

En ce jour martyre des disciples de Machtotz, qui furent exécutés à Astlablour[1].

Le roi du Nord, ayant rassemblé une armée, vint avec de nombreux bar-

1. Mot à mot : colline de l'étoile.

Դարբանդայ. եւ հասեալ ի մեծ գետն որ կոչի Կուր եւ բանակեալ անդ՝ հրաման տայր զօրացն ասպատակ սփռել յերիս աշխարհսն՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից. եւ առեալ աւար եւ գերիս բազումս ածին առ նա։

Մի ոմն յիշխանացն գնաց յերկիրն Խաչենոյ, եւ աւար հարեալ զնա՝ եհաս ի գերեալսն կին մի գեղեցիկ եւ մեծազգի, եւ հրամայեաց ծառայից իւրոց պահել զնա նմա ի խառնակութիւն գիշերոյ։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ բանակեցաւ ի տեղի մի տափարակ մօտ յԱկանայ քաղաք, եւ հրամայեաց ածել զկինն. եւ նա ոչ չոգաւ. եւ ի բարշ տարան զնա առ նա։ Եւ կամեցեալ զօրավարին բռնադատել զնա, եւ նա առնաբար մարտեաւ ընդ նմա՝ եւ պատառեաց զհանդերձս նորա եւ ել ի նմանէ բռնութեամբ։ Եւ նա բարկացեալ յոյժ հրամայեաց * կապել զնա զագոյ ամեհի ձիոյ եւ արձակել զնա ի դաշտն, եւ ձիոյն քարշեալ զնա ընդ մայրս եւ ընդ քարս, քանդեցաւ ամենայն մարմինն, եւ պատառ պատառ հատեալ յերկիր անկաւ, եւ արիւնն ողողանէր զերեսս երկրին. եւ այնպէս կատարեցաւ նահատակութեամբ սուրբ տիկինն Թագուհի։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ լոյս սաստիկ ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյն եւ ի տեղիս կաթուածի արեանն, եւ տեսեալ իշխանին եւ զօրաց նորա զարհուրեցան։ * A fol. 219 r° b.

1 Դարբանդայ] Դարբանայ B || 5 գեղեցիկ] գեղեցկատեսիլ B — մեծազգի] որում անուն էր Թագուհի *add.* B | 6 գիշերոյ] գիշերին B || 11 արձակել զնա] ի դաշտն, եւ ձիոյն քարշեալ զնա *add.* B || 13 տիկինն] կինն B.

bares, pénétra par la porte de Darband et arriva jusqu'au grand fleuve appelé Kour; et y ayant établi son camp, il ordonna à ses troupes de faire des incursions dans les trois pays d'Arménie, d'Ibérie et d'Albanie; ils ramassèrent beaucoup de butin et de prisonniers qu'ils lui apportèrent.

Un de ses chefs, s'étant rendu dans le pays de Khatchène et l'ayant rançonné, aperçut parmi les prisonniers une femme belle et de grande famille; il ordonna à ses serviteurs de la garder pour la souiller la nuit. Lorsque le soir survint, il campa dans un endroit plat près de la ville d'Akan et ordonna de lui amener la femme; elle n'y alla point, mais on la traîna auprès de lui. Le chef des troupes voulut la violer, mais elle lutta avec lui comme un homme, lui déchira les vêtements et, de force, s'écarta de lui. Violemment irrité, celui-ci ordonna alors de * l'attacher à la queue d'un cheval fougueux et de le lancer dans la plaine; le cheval la traîna dans les broussailles et les pierres, tout son corps fut abîmé, tomba en lambeaux à terre et le sang inonda la terre. C'est ainsi que mourut en martyre la sainte dame Tagouhi[1]. Lorsque le soir arriva, une lumière éblouissante jaillit sur le saint corps et aux endroits où il y avait des traces de sang; ce que voyant, le chef et ses troupes en furent effrayés. * A fol. 219 r° b.

1. C'est-à-dire « Reine ».

Եւ էր ընդ գերեալսն քահանայ մի Աթանաս անուն, որ եկեալ էր յԵրուսաղեմէ ընդ աշակերտսն Մաշթոցի. եւ զընկերսն նորա սպանեալ բարբարոսացն՝ եւ զքահանայն ունէին ի կապանս ։ Եւ կոչեցեալ զնա զօրագլուխն՝ հարցանէր եւ ասէր թէ. Զինչ լոյէ լոյսն այն ։ Եւ նա ասաց. Որ վասն Աստուծոյ մեռանի սրբութեամբ՝ Աստուած նշանօք պատուէ զնա աստ եւ ի հանդերձեալ կեանսն, որպէս կինն որ նահատակեալ ի ձէնջ կատարեցաւ ։

Եւ զահի հարեալ իշխանն ուսաւ ի նմանէ զամենայն կարգ եւ զկրօնս քրիստոնէութեան, եւ մկրտեցաւ որդւովք եւ ամենայն զօրօքն, եւ անուանեցաւ Թէոփիլոս, եւ որդիքն՝ Մովսէս եւ Երանոլիս. եւ արձակեաց զամենայն քրիստոնեայսն որ գերեալ էին ։ Եւ կատարեցին զտօն սուրբ Զատկին ուրախութեամբ ի տեղւոջն որ կոչի այժմ Աստղաբլուր վասն լուսոյ ծագմանն ։

* A fol. 219 v° a. Եւ լուեալ արքային բարբարոսաց * եթէ քրիստոնեայք եղեն զօրագլուխքն եւ զօրքն, կոչեաց զնա եւ զայլ իշխանսն առ ինքն, եւ բազում ողոքանօք եւ սպառնալեօք ոչ կարաց խախտել զնոսա ի հաւատոյն Քրիստոսի, եւ ապա հրամայեաց սրով սպանանել զսուրբն Թէոփիլոս եւ զիշխանսն որ ընդ նմա ։ Եւ լուեալ որդւոցն նորա Մովսէսի եւ Երանոլայ՝ փախեան զօրօք իւրեանց ի մեծ լեառն որ կոչի Դիզափայտ ։

5 նահատակեալ] կատարեցաւ B — կատարեցաւ] նահատակութեամբ B || 10 տեղւոջն] տեղին B.

Parmi les prisonniers, il y avait un prêtre du nom d'Athanase, qui était venu de Jérusalem avec les disciples de Machtotz. Les barbares avaient tué les compagnons du prêtre; mais lui, ils l'avaient gardé dans les chaînes. Le chef des troupes le fit appeler, l'interrogea et lui dit : « Qu'est-ce que cette lumière? » Il lui répondit : « Quand quelqu'un meurt en sainteté pour Dieu, Dieu l'honore par des miracles ici-bas et dans la vie future, ainsi que cette femme qui est morte martyrisée par vous. »

Le chef, effrayé, apprit de lui toute l'organisation et les usages du christianisme, se fit baptiser avec ses fils et toutes les troupes; il fut appelé Théophile, et ses fils (furent appelés) Moïse et Eranolis. Il remit en liberté tous les chrétiens qui avaient été faits prisonniers. Ils célébrèrent avec joie la fête de la sainte Pâque à l'endroit qui s'appelle à présent Astlablour à cause du jaillissement de la lumière.

* A fol. 219 v° a. Le roi des Barbares, ayant appris * que les chefs et les soldats étaient devenus chrétiens, manda (Théophile) auprès de lui avec les autres princes, mais, malgré bien des prières et des menaces, il ne put les ébranler de la foi au Christ; alors il ordonna de tuer par le glaive saint Théophile et les princes qui étaient avec lui. A cette nouvelle, ses fils Moïse et Eranolis s'enfuirent avec leurs troupes à la grande montagne appelée Dizaphayd[1].

1. Mot à mot : monceau de bois.

Եւ առաքեաց բարբարոս արքայն բազում զօրս զկնի, եւ հասեալ կոտորեցին զնոսա առ հասարակ վասն հաւատոյն Քրիստոսի, եւ կուտեալ ի վերայ միմեանց այրեցին զամենեսեան հանդերձ միայնակեցօքն որ անդ էին ։ Եւ կոչեցաւ անուն լերինն Դիզափայտ մինչեւ ցայսօր ։ Եւ կատարի տօն սրբոցս Արեգի ԻԲ եւ Մարտի Լ. ի փառս Քրիստոսի ։

Արեգի ԻԳ եւ Մարտի ԼԱ ։ Վկայաբանութիւն սրբոյն Դաւթի Դվնեցւոյն ։

Սուրբ վկայն Քրիստոսի Դաւիթ պարսիկ էր ազգաւ, եւ եկեալ յաշխարհն Հայոց՝ յԱյրարատ գաւառ, հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ. եւ մեծ իշխանն Գրիգոր առ զնա յաւազանէն եւ զանուն հօր իւրոյ եդ նմա՝ Դաւիթ կոչելով զնա ։ Եւ կեայր առաքինի եւ սուրբ վարուք ամուսնացեալ ըստ աշխարհական կարգաց ։

Եւ յետ ժամանակաց ամիրայ ոմն եկն ի Դվին քաղաք Հայոց Սրճահան անուն * եւ լուեալ վասն Դաւթի եթէ յառաջ տաճիկ հաւատով էր եւ այժմ է քրիստոնեայ՝ կոչեաց զառաջեաւ եւ ստիպէր զնա ուրանալ զՔրիստոս եւ դառնալ յառաջին հաւատն իւր, եւ ընդունել ի նմանէ պատիւ եւ իշխանութիւնս ։ Եւ նա ոչ առ յանձն, այլ * A fol. 219 v° b.

7-8 Սուրբ վկայն . . . մկրտեցաւ] Սուրբ վկայն Քրիստոսի Դաւիթ՝ էր որդի առն պարսկի եւ մօր քրիստոնէի, եւ ի գալ իւրում ի Խորասանայ յաշխարհն Հայոց յԱյրարատ, տեսեալ զբարի վարս հաւատացելոց՝ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ յերանելոյն Անաստասայ կաթողիկոսէ B || 12 տաճիկ] հագարացի B.

Le roi barbare envoya de nombreuses troupes après eux, qui, les ayant rejoints, les tuèrent tous pour la foi au Christ, amoncelèrent leurs corps les uns sur les autres et les brûlèrent en même temps que les moines qui se trouvaient là. Cette montagne est appelée jusqu'aujourd'hui Dizaphayd. La fête de ces saints a lieu le 22 areg, 30 mars, dans la gloire du Christ.

23 AREG, 31 Mars.

Récit du martyre de saint David de Dwin.

Le saint martyr du Christ David était de nationalité persane. Il vint au pays d'Arménie, dans la province d'Ararat, crut au Christ et se fit baptiser. Le grand prince Grégoire le reçut des fonts baptismaux et lui donna le nom de son père David. Il mena une vie vertueuse et sainte et se maria selon les coutumes des laïcs.

Après quelque temps, un certain émir du nom de Sirtchahan vint à Dwin, ville d'Arménie, * et ayant appris au sujet de David qu'il avait été autrefois de religion musulmane et qu'il était présentement chrétien, le fit venir devant lui et le pressa de renier le Christ et de revenir à sa première religion pour recevoir de lui honneurs et fonctions. Mais il ne consentit point; au contraire * A fol. 219 v° b.

խոստովանէր զՔրիստոս համարձակ Աստուած եւ Որդի Աստուծոյ ։ Եւ հրամայեաց արգելուլ զնա ի բանդ, եւ չարչարէր զնա սովով եւ ծարաւով. եւ նա ոչ ձանձրացաւ՝ այլ օրհնէր զՔրիստոս ուրախութեամբ ։

Այս հրամայեաց խաչել զնա ի վերայ փայտի, եւ զերեսն առնել ի հարաւ, եւ շրջեցաւ փայտն ինքն առանց մարդոյ, եւ դարձոյց զերեսն նորա յարեւելս, եւ գեղարդեամբ խոցեցին զնա ընդ սիրտն, եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Մարտի ԼԱ ։

Եւ կաթողիկոսն Հայոց Անաստաս՝ բազում եպիսկոպոսօք եւ քահանայիւք իջուցին զմարմինն ի խաչէն՝ եւ թաղեցին պատուով ի նշանաւոր տեղւոջ, եւ տօն մեծ կարգեցին ամ յամէ ։ Եւ զխաչն տարան ի գեղաքաղաքն Ձագ եւ կանգնեցին յեկեղեցւոջն, որ եւ բազում նշանս եւ սքանչելիս կատարէ զօրութեամբն Քրիստոսի, որք հաւատով ապաւինին ի բարեխօսութիւն սրբոյն Դաւթի ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Յակոբայ քահանայի, եւ Ազա սարկաւագի, եւ Ղուկայ, եւ Մոկիմոսի ընթերցողի ։

* A fol. 220 rº a. * Այս Քրիստոսի վկայքս էին ի Պարսից. Յակոբ քահանայ եւ Ազա սարկաւագն կացին առաջի մոգպետին Արքասքարայ, եւ խոստովանեցան զՔրիստոս Աստուած՝

4-5 եւ զերեսն . . . յարեւելս *om.* B || 6 խոցեցին] խոցել B — Աստուած] Ապրիլի ԻԴ եւ *add.* B || 13 եւ Ղուկայ . . . ընթերցողի] որք կատարեցան ի Պարսս *add.* B.

il confessa avec hardiesse le Christ Dieu et Fils de Dieu. (L'émir) ordonna de l'enfermer dans la prison, et le fit torturer par la faim et la soif, mais (David) ne se découragea point, et bénit gaîment le Christ.

(L'émir) ordonna ensuite de le crucifier sur un gibet, le visage tourné vers le sud, mais le gibet se retourna sans (l'aide de) l'homme et tourna le visage (de David) vers l'orient; d'une lance on le frappa au cœur et c'est ainsi qu'il rendit son âme à Dieu le 31 mars.

Le catholicos des Arméniens, Anastase, et de nombreux évêques et prêtres descendirent le corps de la croix et l'enterrèrent avec honneur dans un endroit choisi. Ils établirent de célébrer une grande fête chaque année. Ils transportèrent la croix dans le bourg de Tzag et la dressèrent dans l'église, où elle opère de nombreux miracles et prodiges par la puissance du Christ sur ceux qui ont recours avec foi à l'intercession de saint David.

En ce jour martyre des saints : le prêtre Jacob, le diacre Aza, Luc, et le lecteur Mokimos.

* A fol. 220 rº a. * Ces martyrs du Christ étaient de la Perse ; le prêtre Jacob et le diacre Aza se présentèrent au chef des mages Arkaskar et confessèrent le Christ Dieu,

արարիչ արեգականն եւ լուսնի եւ աստեղաց եւ հրոյ եւ ջրոյ ։ Եւ արկին յըռնգունս նոցա մանանեխ քացախով արարեալ, եւ կախեալ՝ յոյժ գանեցին զնոսա դալար բրովք ։ Եւ յաւուր ձմերայնի ի գիշերի՝ ընկեցին զնոսա ի ջուրս սառամանիս մերկ երկաթի շղթայիւք կապեալ, եւ բռնադատէին եւ նեղէին զնոսա ուրանալ զՔրիստոս եւ երկիր պագանել արեգական եւ լուսնի եւ աստեղաց եւ հրոյ եւ ջրոյ զոր պաշտէին Պարսիկքն ։ Եւ յորժամ ոչ հաւանեցան՝ արկին զնոսա ի բանդ ։

Եւ քոյրն քահանային Յակոբայ եսես երազ եւ պատմեաց նոցա ։ Ասէ Յակոբ ցսարկաւագն իւր. Փութով կատարեմք զընթացս մեր առ Քրիստոս ։ Եւ ի վաղիւն յերրորդ ժամու աւուրն հատին զգլուխս նոցա Մարտի ԼԱ ։ Եւ երթեալ դահճին լուալ զսուրն իւր, եւ յորժամ եհաս արիւնն ի ջուրն, ամենայն լիճն յարիւն դարձաւ՝ որ ոչ մարդ եւ ոչ անասուն կարէին ըմպել, եւ յետ երեսուն աւուր ցամաքեցաւ ամենայն լիճն ։

Եւ ի տեղւոջն ուր կատարեցան սուրբքն՝ զերիս գիշերս հրեղէն սիւն երեւէր ի վերայ նշխարացն, եւ երթեալ քրիստոնէիցն թաղեցին զնոսա ։

Եւ էր սուրբ քահանայն Յակոբոս ի * գեղջէն Բիթնիրի, եւ Ազա սարկաւագն՝ ի գեղջէն Փառգաթայ ։ * A fol. 220 r° b.

4 ուրանալ զՔրիստոս *om.* B || 9 զգլուխս նոցա] Արեգի ԻԳ եւ *add.* B || 10 եւ յորժամ . . . ի ջուրն *om.* B || 10 յարիւն] ի գոյն արեան B || 11 որ ոչ մարդ . . . ըմպել *om.* B — ամենայն լիճն *om.* B || 13 հրեղէն] լուսեղէն B.

créateur du soleil, de la lune, des étoiles, du feu et de l'eau. On leur injecta dans les narines de la moutarde dissoute dans du vinaigre, puis, les ayant suspendus, on les frappa vigoureusement avec de gros bâtons verts. Ensuite, par temps d'hiver, on les jeta de nuit, nus, chargés de chaînes, dans un lac glacé et on les pressa, on leur fit violence pour qu'ils reniassent le Christ et adorassent le soleil, la lune, les étoiles, le feu et l'eau que les Persans adoraient. Mais, comme ils ne consentirent point, on les jeta en prison.

La sœur du prêtre Jacob eut un songe qu'elle leur raconta. Jacob dit à son diacre : « Nous allons bientôt terminer notre carrière pour le Christ. » Le lendemain, à la troisième heure de la journée, on leur trancha la tête, le 31 mars. Le bourreau alla laver son glaive dans le lac, mais lorsque le sang eut touché l'eau, tout le lac se convertit aussitôt en sang de manière que ni les hommes ni les animaux ne purent en boire ; trente jours après, tout le lac se dessécha.

A l'endroit où les saints furent exécutés, pendant trois nuits, une colonne de feu apparut au-dessus de leurs restes ; les chrétiens, étant venus, les inhumèrent.

Le saint prêtre Jacob était * du village de Bithnir et le diacre Aza du village de Phargath. * A fol. 220 r° b.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Լուկիոսի ։

Քրիստոսի վկայն Լուկիոս էր ի Լիբիացւոց Կիւրենայ, նախարար եւ աթոռակից իշխանաց եւ դատաւորին, եւ էր կռապաշտ, եւ թզաւ մի երկայն քան զայլ մարդիկն եւ հաստ անձն ։

Եւ յետ մարտիրոսանալոյն սրբոյն Թէոդորոսի Կիւրենոյ եպիսկոպոսին՝ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ. հաւանեցոյց եւ զՏիգնիանոս դատաւորն եւ արար քրիստոնեայ եւ մկրտեաց ։

Եւ նաւեցին ի միասին ի Կիւրենոյ ի Կիպրոս, եւ գտին անօրէն դատաւոր մի զի կոտորէր զքրիստոնեայս վասն ոչ ուրանալոյ զՔրիստոս եւ պաշտելոյ զկուռս ։ Գնաց Լուկիոս գաղտ ի Տիգնիանոսէ ի տաճար կռոցն՝ եւ հարկ ոտիւքն զբագինսն եւ կործանեաց եւ խորտակեաց, եւ մտեալ ի ժողովուրդն աղաղակէր. Քրիստոնեայ եմ եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած է ։ Եւ ի տեղւոջն յայնմիկ հատին զգլուխ նորա ի նմին ժամու ։

Եւ գիտացեալ Տիգնիանոս՝ գնաց առ զմարմին սրբոյ վկային, եւ օծեալ անուշահոտ խնկօք պատեաց մաքուր կտաւովք եւ եդ պատուով ի տապանի ։ Եւ յետ տարւոյ միոյ բացին զտապանն եւ գտին ի վերայ կրծիցն ծաղիկ վարդի, եւ յորժամ կամէին

1 Յայսմ] Ի սմին B || 14 անուշահոտ խնկօք] անուշահոտիւք B || 15-p. 229, l. 1 եւ յետ տարւոյ . . . լինէին *om.* B.

En ce jour martyre de saint Lucius.

Le martyr du Christ Lucius était de Cyrène de Libye, il était satrape et assesseur des princes et du juge; il était idolâtre, plus haut d'une palme que les autres hommes et gros de taille.

Après le martyre de saint Théodore, évêque de Cyrène, il crut au Christ et se fit baptiser. Il persuada également le juge Tignianus, le fit chrétien et le fit baptiser.

Ils partirent ensemble en bateau de Cyrène à Chypre, où ils trouvèrent un juge impie qui massacrait les chrétiens parce qu'ils ne reniaient pas le Christ et n'adoraient pas les idoles. Lucius se rendit, en cachette de Tignianus, au temple des idoles, renversa à coups de pied les autels et les brisa; puis, se mêlant à la foule, il cria : « Je suis chrétien, et le Christ est le vrai Dieu. » On lui trancha la tête sur place à l'instant même.

Tignianus, l'ayant appris, alla prendre le corps du saint martyr, l'oignit de parfum suave, l'enveloppa de linge propre et le mit au tombeau avec honneur. Un an après, on ouvrit le tombeau et on découvrit sur sa poitrine des fleurs de rose; puis lorsqu'on voulut prendre des roses avec foi, elles

հաւատոյ առնուլ ի վարդէն՝ անյայտ լինէին : Եւ յաւուրս քրիստոնէութեան շինեցին վկայարան ի վերայ : Կատարեցաւ սուրբն * Լուկիոս Մարտի ԼԱ : * A fol. 220 v° a.

Ամիս Ապրիլի աւուրս ունի Լ :

Արեգի ԻԴ եւ Ապրիլի Ա : Վարք Մարիամու եգիպտացւոյ կրօնաւորի :

Կին այս Մարիամ պոռնիկ էր ի քաղաքէն Աղեկսանդրիա Եգիպտացւոց, ոչ ի մեծատուն կամ յազնուական ազգէ, եւ էր յաւուրս քրիստոնէութեան : Եւ յորժամ եղեւ երկոտասան ամաց արհամարհեաց զգութ ծնողացն եւ ապականեաց զկուսութիւն իւր, եւ ետ զանձն ի գաւն եւ ի չար ախտս պոռնկութեան. եւ նստաւ ի պանդոկի, եւ յումեքէ ոչ ինչ առնոյր վասն անյագ ցանկութեան մարմնոյն՝ զի երթիցեն բազումք առ նա : Եւ այնպէս գտաւ եւ եօթն ամ թաւալեալ յաղբս մեղացն՝ ապականէր եւ զայլ երիտասարդս ի բորբոքումն շնութեան :

Եւ ի միում աւուր տեսանէ ամբոխ բազում որ երթային ի ծովն, եւ տեղեկանայր թէ ուր կամիցին երթալ. եւ գիտաց զի երթային յԵրուսաղէմ վասն * տօնի սուրբ խաչին * A fol. 220 v° b.
զի երկիր պագցեն պատուական սուրբ փայտին Քրիստոսի : Եւ ասէ ի միտս իւր. Գնացից

2 Լուկիոս] Արեգի ԻԴ եւ *add.* B || 4 կրօնաւորի *om.* B || 5 Մարիամ *om.* B || 7 եւ ապականեաց զկուսութիւն իւր *om.* B || 8-9 եւ յումեքէ . . . առ նա *om.* B || 10 յաղբս մեղացն] ի մեղս B || 12 տեսանէ] տեսեալ B.

disparaissaient. Aux jours du christianisme on construisit une chapelle sur (le tombeau). * Saint Lucius fut martyrisé le 31 mars. * A fol. 220 v° a.

Le mois d'avril a 30 jours.

24 AREG, 1er avril.

Vie de Marie l'Égyptienne, l'ermite.

Cette femme Marie était une prostituée de la ville d'Alexandrie d'Égypte, elle n'était point d'une famille riche ou noble. Elle vivait aux jours du christianisme. Lorsqu'elle fut âgée de douze ans, elle dédaigna l'amour envers les parents, souilla sa virginité et s'adonna au vice ignoble et mauvais de la prostitution. Elle se logea dans une auberge, n'acceptait rien de personne pour que beaucoup vinssent à elle satisfaire ses insatiables désirs charnels. Elle roula ainsi pendant dix-sept ans dans la boue du péché, en perdant d'autres jeunes gens dans la fièvre de la fornication.

Un jour, elle aperçut une foule nombreuse qui se rendait à la mer; elle demanda où ils voulaient aller, et apprit qu'ils allaient à Jérusalem * pour la fête de la sainte croix afin d'adorer le précieux et saint gibet du Christ. Elle se dit en son esprit : « J'irai, moi aussi; je sais que dans une telle foule * A fol. 220 v° b.

եւ ես, գիտեմ որ յայնչափ ժողովրդեանն լինին պոռնիկք որ պէտք է նոցա կին : Եւ առժամայն գնաց ի ծովեզրն եւ ենուտ ի նաւ, եւ փոխանակ վարձու նաւին զանձն իւր ետ նաւավարացն եւ զբազում մարդիկ ընկէց ի յաղբս պոռնկութեան. եւ յորժամ նաւեցին յԵրուսաղէմ ոչ դադարեաց ի չար գործոյ :

Եւ իբրեւ եհաս տօն սուրբ խաչին Վերացմանն որ ի Սեպտեմբերի ԺԴ, ընթանային բազմութիւն ժողովրդեանն ընդ առաւօտն յերկրպագութիւն սուրբ խաչին Քրիստոսի, խառնեցաւ եւ Մարիամ ի ժողովուրդն եւ երթայր զհետ զի մտցէ յեկեղեցին : Եւ յորժամ գնացին ի դուռն եկեղեցւոյն՝ ամենեքեան մտանէին եւ Մարիամ մնայր արտաքոյ, քանզի աստուածային զօրութիւն սրբոյ խաչին արգելոյր զնա արտաքոյ, եւ բազում անգամ ջանայր մտանել միայն եւ ընդ այլսն եւ ոչ կարէր, զի ոչ տայր թոյլ մտանել աներեւոյթ զօրութիւն սրբոյ խաչին : Եւ գիտաց որ վասն անառակ գործոց իւրոց ոչ արժանաւորեցաւ մտանել, եկաց արտաքոյ դրանն, եւ հայեցեալ ի վեր՝ տեսանէ ի վերայ դրանն եկեղեցւոյն զպատկեր ամենասրբուհւոյ Աստուածածնին՝ ունելով ի գիրկս իւր զմանկացեալ Աստուածն մեր, եւ արտասուալից պաղատանօք աղաչէր եւ ասէր.
* A fol. 221 r° a. Երաշխաւորեա զիս * ամենասրբուհի կոյս Աստուածածին զի մտից յեկեղեցին, եւ այլ ոչ տաց զանձն իմ ի չար գործս պոռնկութեան : Եւ ի բազում ժամս լալով հեծեծանօք

2 նաւին] նաւուն B || 6 սուրբ] աստուածընկալ B || 9 աստուածային] աներեւոյթ B || 10-11 զի ոչ տայր . . . խաչին *om.* B || 15 ամենասրբուհի] ամենասուրբ B || 16 պոռնկութեան] պղծութեան B.

il y aura des prostitués qui auront besoin de femme. » Aussitôt elle se rendit au rivage, monta sur le bateau et, en place du prix du bateau, elle se donna aux matelots et entraîna beaucoup d'hommes dans la boue de la prostitution. Tant qu'ils naviguèrent vers Jérusalem, elle ne cessa point sa mauvaise action.

Lorsque arriva la fête de l'Exaltation de la sainte croix, qui est le 14 septembre, une grande foule courut dès le matin à l'adoration de la sainte croix du Christ; Marie aussi se mêla à l'assemblée, qu'elle suivit pour entrer dans l'église. Lorsqu'ils arrivèrent à la porte de l'église, ils entrèrent tous, tandis que Marie restait dehors, car la puissance divine de la sainte croix la retenait dehors; et bien qu'elle essayât plusieurs fois d'y pénétrer seule ou avec d'autres, elle n'y arriva point, car la puissance invisible de la sainte croix ne lui permettait pas d'entrer. Elle reconnut alors que c'était à cause de sa conduite dissolue qu'elle ne méritait point d'entrer; elle se tint hors de la porte et, en élevant ses yeux, elle aperçut au-dessus de la porte de l'église l'image de la très sainte Mère de Dieu ayant dans ses bras notre Dieu enfant. Elle la pria avec des supplications, pleine de larmes, et dit : « Très sainte Vierge,
* A fol. 221 r° a. mère de Dieu, soyez ma répondante * pour que j'entre dans l'église et je ne me livrerai plus à l'abominable action de la prostitution. » Elle pleura de

եւ զառն արտասուօք, եւ առժամայն եմուտ յեկեղեցին եւ արժանաւորեցաւ տեսութեան եւ երկրպագութեան ամենօրհնեալ սրբոյ փայտին կենաց, յորժամ հայրապետն վերացուցանէր ի տեսութիւն ամենայն ժողովրդեանն :

Եւ ելեալ առաջի ամենասրբուհւոյ Աստուածածնին՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ եւ արտասուօք գոհանայր, եւ որպէս երաշխաւոր, խնդրէր ցուցանել նմա ճանապարհ փրկութեան՝ զի մի դարձցի ի քաղաքն իւր եւ ի տունն : Եւ լուաւ ձայն որպէս թէ ի պատկերէն որ ասէր. Եթէ անցանիցես ընդ Յորդանան բարի հանգիստ գտցես :

Եւ երթեալ առ այր մի խնդրեաց ի նմանէ փող մի, եւ առեալ գնեաց երիս նկանակս հացի, եւ գնաց ի Յորդանան յեկեղեցւոջ սրբոյն Յովհաննու Մկրտչին մտեալ աղօթեաց, եւ հաղորդեցաւ ի սուրբ եւ ի պատուական մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ ։ Եւ գտեալ նաւ մի անց ընդ Յորդանան եւ գնաց յանապատն, եւ մեծաւ ջանիւք ճգնեալ ամս քառասուն եւ եօթն : Եւ որչափ բաւեաց երեք նկանակն հացին, որպէս հաղորդութիւն օրինաց ի նմանէ ճաշակէր. եւ զվայրի խոտն դալար ուտէր եւ ոչ ձեռօքն հատանէր զխոտն՝ այլ *դնէր զերեսս իւր յերկիր եւ ատամամբքն որպէս * A fol. 221 r° b.
զանասուն կրծէր եւ ուտէր, եւ այնչափ ժամանակս այնպէս եկաց յանապատին :

2 սրբոյ *om.* B — փայտին կենաց] խաչին B || 6 լուաւ ձայն] ազդ եղեւ նմա B || 7 որ ասէր *om.* B || 9 մի] երկու B || 11 հաղորդեցաւ] խոստովանեալ հաղորդեցաւ B — պատուական] փրկական B || 13 ջանիւք] վարուք B.

longues heures en sanglotant et versant des larmes amères, entra aussitôt dans l'église et fut digne de voir et d'adorer le tout béni et saint arbre de vie, au moment où le pontife l'exaltait à la vue de toute la foule.

Elle sortit, se prosterna sur sa face devant la très sainte mère de Dieu, l'adora et, lui rendant grâces avec des larmes, la pria, comme sa répondante, de lui montrer le chemin du salut, pour qu'elle ne retournât plus à sa ville et à sa maison. Elle entendit une voix comme provenant de l'image qui lui dit : « Si tu passes le Jourdain, tu y trouveras le bon repos. »

Elle alla trouver un homme et lui demanda une pièce de monnaie, puis, ayant acheté trois petits pains, elle se rendit au Jourdain, entra à l'église de saint Jean-Baptiste, pria et communia aux saints et précieux corps et sang du Fils de Dieu. Ayant trouvé un bateau, elle traversa le Jourdain et pénétra dans le désert, où elle mena une vie ascétique avec grands efforts pendant quarante-sept ans. Autant que durèrent les trois petits pains, elle en consomma comme une participation à l'Eucharistie; elle se nourrissait d'herbes vertes sauvages, et ce n'était pas avec les mains qu'elle coupait l'herbe, mais * elle mettait sa * A fol. 221 r° b.
figure contre terre, broutait et mangeait comme les animaux; elle vécut ainsi tant d'années dans le désert.

Եւ յորժամ կատարեցան աւուրք կենաց իւրոց՝ ազդեաց Աստուած ի սիրտ ճգնաւոր կրօնաւորի միում որոյ անուն էր Զօսիմոս, ոչ հերձուածողին՝ այլ ուղղափառին ի վանորէիցն Յորդանանու, երթալ ի ներքսագոյն անապատն՝ տեսանել եթէ իցէ ոք բնակեալ ի ծառայիցն Աստուծոյ ։ Եւ քսան օր շրջէր յանապատին եւ աղաչէր զԱստուած ցուցանել նմա եթէ իցէ ոք բնակեալ անդ․ եւ ամենեւին ոչ եւտես գազան կամ անասուն կամ թռչուն ։

Եւ յորժամ յորհասարակին աղօթս կայր՝ տեսանէ ի ստորոտ վիմի միոջ ստուեր մարդոյ, եւ կնքեալ նշանաւ խաչին զերեսն եւ զամենայն անդամսն զի կարծեաց երեւմունս դիւականս տեսանել ։ Եւ նկատեալ ճշգրտիւ տեսանէ ապա զերանելի կինն զի երթայր ի կողմն հարաւոյ՝ մերկ եւ թուխ՝ մարմինն սեւացեալ ի տօթոյ արեգական, եւ հեր գլխոյն պակաս եւ սպիտակ իբրեւ զասր ։ Եւ ընթանայր ծերունին Զօսիմոս զկնի նորա ։ Եւ նորա գիտացեալ՝ սկսաւ փախչել եւ երթեալ եմուտ ի ձոր մի․ եւ յորժամ ելանէր յայնկոյս ձորոյն՝ եհաս Զօսիմոս յայսմ կողմանէ ի գլուխ ձորոյն․ եւ մեծաւ երդմամբ ձայնէր եւ աղաչէր զի կացցէ եւ տեսցէ զնա ։ Եւ նա ասէ․ Ով
* A fol. 221 v° a. աբեղայ Զօսիմոս, ընդէ՞ր * կամիս տեսանել զմեղաւոր կին․ արդ եթէ յօժարիցես զիս տեսանել՝ ընկեա՛ զմազեղէն փիլոնդ քո զի ծածկեցից զմերկութիւն մարմնոյս, եւ շահեցայց յաղօթից քոց ։

6 անասուն] երէ B || 8 անդամսն] անձամբն B || 15 յօժարիցես] յօժարես B.

Lorsque les jours de sa vie furent accomplis, Dieu inspira le cœur d'un religieux ascète dont le nom était Zosime — pas le schismatique, mais l'orthodoxe d'un couvent du Jourdain — de se rendre au plus profond du désert pour voir s'il y habitait quelque serviteur de Dieu. Il parcourut le désert pendant vingt jours en priant Dieu de lui montrer s'il y avait quelqu'un qui y habitait, mais il ne rencontra ni fauve, ni bête, ni oiseau.

Pendant qu'il était en prières, à midi, il aperçut au pied d'un rocher l'ombre d'un homme; il fit le signe de la croix sur son visage et sur tous ses membres, car il crut voir des apparitions diaboliques. Mais, en observant attentivement, il aperçut la bienheureuse femme qui marchait dans la direction du sud, nue et noircie, le corps noirci par le hâle du soleil, les cheveux de la tête diminués et blancs comme de la laine. Le vieillard Zosime se mit à courir après elle, mais celle-ci, s'en étant aperçue, se mit à fuir et pénétra dans un vallon. Comme elle remontait au delà, Zosime parvint du même côté à la tête du vallon; il lui cria avec une solennelle imprécation et la supplia de s'arrêter afin qu'il la vît. Elle lui répondit : « O moine Zosime, pourquoi
* A fol. 221 v° a * veux-tu voir une femme pécheresse? Si tu as envie de me voir, jette-moi ton manteau de poils, afin que je couvre la nudité de mon corps et profite de tes prières. »

Եւ Զոսիմոսի զթիկունս իւր ի նա դարձուցեալ ընկէց զմազեղէնն, եւ առեալ պատեաց զմասն ինչ ի մարմնոյն ։ Եւ անկան երկիրպագեանն ի վերայ երեսաց իւրեանց եւ երկիր պագին միմեանց. եւ բռնադատէր մինն զմիւսն առնել աղօթս ։ Ասէ կինն. Քեզ արժան է առնել աղօթս, զի քահանայութեան պատիւ ունիս ։ Եւ յորժամ մատոյց զաղօթսն կանգնեցան, եւ աղաչեաց Զոսիմոս զկինն զի եւ նա արասցէ աղօթս, եւ նորա տարածեալ զձեռս իւր յերկինս՝ յաղօթս եկաց լռելեայն ի բազում ժամս ։

Եւ տեսանէ զնա Զոսիմոս զի կախեցաւ յօդս կանգնուն մի բարձր յերկրէ, եւ երկեաւ ընդ միտս իւր եթէ ոգի ինչ իցէ, եւ կեղծաւորութեամբ կայ յաղօթս ։ Եւ գիտացեալ կինոջն զխորհուրդս մտաց նորա՝ ասէ. Ով Զոսիմոս, ընդէ՞ր խորհուրդ բերես ի սիրտ քո եթէ երեւումն ինչ իցեմ, հաւատա՛ ինձ հայր որ կին եմ մեղաւոր որպէս եւ տեսանես զիս, Աստուած փրկեսցէ զմեզ ի խաբէութենէ սատանայի ։ Եւ ապա ծերն խնդրէր զթողութիւն ։

Եւ նա հարցանէր զերկրէ եթէ ո՞րպէս իցեն մարդիկ յաշխարհի քրիստոնէութեամբ, եւ ո՞րպէս թագաւորք վարին ։ Եւ նա ասէ. Մայր սուրբ, բարւոք վարին աղօթիւք * քո ։ Եւ Զոսիմոս երդմնեցուցանէր զնա պատմել նմա ի տղայութենէ զգործս իւր խոստովանութեամբ ։ Եւ կինն մի ըստ միոջէ, որպէս վերագոյն գրեալն է, պատմեաց եւ ոչ ինչ թաքոյց, եւ աղաչեաց կինն զԶոսիմոս զի ի մեծի հինգշաբաթջ աւուրն տացէ նմա

* A fol. 221 vº b.

7-12 Եւ տեսանէ... զթողութիւն *om.* B || 14 վարին] վայելեն B.

Zosime lui tourna le dos et lui jeta son cilice; elle en couvrit une partie de son corps. Tous les deux se jetèrent sur leurs faces et se prosternèrent l'un devant l'autre. Ils se contraignirent mutuellement à faire la prière. La femme dit : « C'est à toi qu'il convient de dire la prière, car tu as l'honneur du sacerdoce. » Lorsqu'il eut dit la prière, ils se levèrent, et Zosime pria la femme de dire la prière à son tour; elle éleva ses mains au ciel et resta en prières plusieurs heures.

Zosime la vit alors suspendue en l'air à une aune au-dessus du sol, et il craignit en son esprit que ce fût un esprit, et qu'il ne fût en prières hypocritement. La femme, devinant la pensée de son esprit, lui dit : « O Zosime, pourquoi portes-tu en ton cœur la pensée que je sois un esprit? crois-moi, père, je ne suis qu'une femme pécheresse telle que tu me vois; que Dieu nous préserve de la tromperie de Satan! » Aussitôt le vieillard lui demanda pardon.

Elle lui demanda ensuite des nouvelles du monde, si les hommes de l'univers se conduisaient en chrétiens et comment les rois gouvernaient. Il lui répondit : « Sainte mère, ils gouvernent bien par tes * prières. » Zosime la supplia de raconter en confession toutes ses actions depuis son enfance. La femme lui raconta en détail ce que nous avons écrit plus haut et ne lui cacha rien; et elle pria Zosime de lui donner, le jour du jeudi saint, la communion

* A fol. 221 vº b.

հաղորդութիւն ի պատուական մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ. եւ պատուիրեաց նմա զի ի վանս իւր ոչ ումեք պատմեսցէ, Զի, ասէր, եթէ քառասուն եօթն ամ յանապատիս անհաղորդ եմ յանապական օրհնացն : Եւ ասէ. Ընդ Յորդանան մի՛ անցանիցես յայսկոյս՝ այլ մնա՛ ինձ առ ափն գետոյն :

Եւ դարձաւ Զօսիմոս ի վանսն իւր, եւ ի մեծի հինգշաբաթի աւուրն ընդ երեկս էարկ ի սկիհ ի սուրբ մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, առեալ եւ սակաւ թրջեալ ոսպն՝ գնաց յեզր գետոյն, եւ հոգայր թէ որպէս անցցէ երանելի կինն ընդ Յորդանան : Եւ առժամայն եհաս կինն եւ արարեալ զնշան խաչին ի վերայ գետոյն՝ անց ոտիւք որպէս ընդ ցամաք ի վերայ ջրոյն. եւ ասաց նմա պաշտել զԵրեքսրբեանն եւ զՀաւատամք ի մի Աստուածն, եւ զՀայր մեր որ յերկինս : Եւ համբուրեցին զմիմեանս յողջոյն սրբութեան, եւ հաղորդեցաւ յանմահական խորհրդոյն, եւ առեալ երիս հատս յոսպանցն եկեր եւ ասէ. Բաւական է այս ի պէտս մարմնոյս : Եւ աղաչեաց

* A fol. 222 r° a. զԶօսիմոս զի ի միւս այլ ամին անցցէ ընդ Յորդանան * եւ երթիցէ յանապատն ի տեղին ուր տեսին զմիմեանս : Եւ արարեալ զնշան սրբոյ խաչին ի վերայ գետոյն երանելի կինն որպէս ընդ կամուրջ անց յայնկոյս եւ գնաց յանապատն :

Եւ ուրախութեամբ լցեալ Զօսիմոս դարձաւ, եւ վասն ոչ հարցանելոյ զանուն

2 ի վանս իւր] վանն իւր B || 8-9 արարեալ . . . ջրոյն] անցեալ ընդ գետն որպէս ընդ ցամաքն B || 10 համբուրեցին] ողջունեցին B || 12 երիս] քանի մի B || 13 ամին] տարին B || 14-15 եւ արարեալ . . . յանապատն] եւ հրաժարեալ ի Զօսիմոսէ անց ընդ Յորդանան, եւ գնացեալ գնաց յանապատն B.

aux précieux corps et sang du Fils de Dieu ; et elle lui recommanda ensuite de ne rien raconter à son couvent : « Car, dit-elle, il y a quarante-sept ans qu'en ce désert je n'ai communié aux espèces immortelles. » Elle lui dit encore : « Tu ne passeras pas le Jourdain, de ce côté, mais tu m'attendras au bord du fleuve. »

Zosime retourna à son couvent, et le jour de jeudi saint vers le soir, il mit dans un calice les saints corps et sang du Fils de Dieu, prit avec lui un peu de lentilles trempées et se rendit au bord du fleuve ; il était anxieux de savoir comment la bienheureuse femme traverserait le fleuve. La femme arriva aussitôt et, ayant fait le signe de la croix sur le fleuve, elle traversa à pied, comme sur terre, par-dessus les eaux ; elle lui demanda de dire le Trisagion, « Nous croyons en un seul Dieu » et le « Notre Père ». Ils se donnèrent mutuellement le saint baiser, elle communia au mystère immortel. Puis ayant pris trois lentilles, elle les mangea et dit : « Cela suffit pour les besoins du corps. »

* A fol. 222 r° a. Elle pria Zosime de traverser le Jourdain * à la prochaine fête et de venir dans le désert à l'endroit où ils s'étaient rencontrés. La bienheureuse femme fit le signe de la sainte croix sur le fleuve, passa de l'autre côté comme sur un pont et s'achemina vers le désert.

Zosime, rempli de joie, s'en retourna, mais il devint bien triste de ne pas

պատուական կնոջն տրտում էր յոյժ ։ Եւ ի կատարել տարւոյն անց Զոսիմոս նաւով յայնկոյս գետոյն, եւ գնաց քսան աւուրս ի տեղին եւ եգիտ մեռեալ զերանելի կինն, եւ զմարմինն ըստ կարգի քրիստոնէից յարեւելից կողմն, եւ մերձ ի գլուխն եգիտ գիր յորում գրեալ էր. Աբբայ Զոսիմոս, թաղեա՛ զտառապեալ Մարիամայ զմարմինս, տո՛ւր հողոյ զհողս, եւ վասն Տեառն ինձ աղօթս արա. եւ ննջեցի յԱպրիլի Ա, յաւուր չարչարանաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Եւ գիտաց սուրբ ծերունին Զոսիմոս եթէ զգիշերն զայն յորում հաղորդեցաւ ի սուրբ խորհրդոյն՝ գնաց ի տեղին երանելի կինն եւ հանգեաւ. զոր Զոսիմոս ի քսան օրն գնաց ։ Եւ վասն բահի յոյժ տրտմէր թէ. Որպէս բրեցից զերկիր, եւ դառնալ ի քսան օր ի վանսն անհնարին թուէր, եւ ի տարակուսի լեալ զինչ արասցէ, տեսանէ մերձ առ Մարիամայ առիւծ մի, եւ գիտաց եթէ յԱստուծոյ առաքեցաւ, եւ հրամայեաց նմա փորել զերկիր, եւ սկսաւ փորել որչափ բաւական էր, եւ թաղեաց զնա երանելի ծերն սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ * արտասուօք ։ Եւ դարձաւ ի վանսն իւր, պատմեաց մի ըստ միոջէ ամենեցուն զվարս Մարիամայ ։ Եւ յետոյ Սոփրոնիոս հայրապետն Երուսաղեմի գրեաց զպատմութիւն երիցս երանեալ երջանիկ աղախնոյն Աստուծոյ Մարիամայ Եգիպտուհւոյն ։ * A fol. 222 r° b.

1 տրտում էր] տրտմեցաւ B — անց] անցաւ B — նաւով *om.* B | 2 յայնկոյս գետոյն] ընդ գետն B — քսան աւուրս *om.* B || 8-12 զոր Զոսիմոս . . . բաւական էր *om.* B || 15 երիցս երանեալ] երանելի եւ B.

avoir demandé le nom de l'excellente femme. Lorsque l'année fut accomplie, Zosime passa dans une barque de l'autre côté du fleuve, marcha pendant vingt jours pour arriver à l'endroit et trouva la bienheureuse femme décédée, le corps tourné vers l'orient selon le rite des chrétiens; il trouva près de la tête une lettre où il était écrit : « Abbé Zosime, enterre le pauvre corps de Marie, rends la terre à la terre et pour l'amour du Seigneur prie pour moi. Je me suis endormie le 1er avril, le jour de la Passion du Christ, notre Dieu. »

Le saint vieillard Zosime comprit alors que la bienheureuse femme, la nuit où elle avait communié au saint mystère, était arrivée à son endroit et y avait reposé, tandis que Zosime avait mis vingt jours pour s'y rendre. Il était très tourmenté au sujet d'une pelle pour creuser la terre; il lui paraissait impossible de retourner au couvent en vingt jours; or, étant rempli d'indécision de ce qu'il avait à faire, il aperçut un lion auprès du corps de Marie, il comprit qu'il avait été envoyé par Dieu et il lui ordonna de creuser la terre. Celui-ci se mit à creuser autant qu'il fallait et le bienheureux vieillard inhuma (le corps) en psalmodiant, bénissant et pleurant. * Il retourna à son couvent et raconta à tous la vie de la bienheureuse Marie dans ses détails. Plus tard Sophron, patriarche de Jérusalem, écrivit l'histoire de la trois fois bienheureuse et fortunée servante du Christ, Marie l'Égyptienne. * A fol. 222 r° b.

Արեգի ԻԵ եւ Ապրիլի Բ ։ Վկայութիւն սրբոցն Անփիանոսի եւ Եդեսիոսի եղբօր իւրոյ ։

Այս երանելի վկայքս Քրիստոսի հարազատ եղբարք էին յաւուրս Մաքսիմիանոսի արքային, յերկրէն Լիւդիայ Պաղեստինացւոց եւ ի Բիւրիտոն գնային, եւ էին ընկերակիցք սրբոյն Պամփիւլեայ մարտիրոսին ։

Եւ Անփիանոս կացեալ առաջի Ուրբանոսի իշխանին՝ խոստովանութեամբ երգս մատուցանէր Տեառն Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Ապտակեցին զծնօտսն ուժգին, եւ դահիճքն հարկանէին ոտիւք իւրեանց, օծին զոտսն ձիթով եւ այրեցին հրով, կախեցին զփայտէ եւ այրեցին զկողսն ։ Եւ տեսանէր սուրբն զմարմինն իւր այնպիսի չարչարանօք տանջեալ, աղաչէր զամենասուրբ Երրորդութիւնն տալ նմա համբերութիւն ։ Իջուցին ի կախաղանէն եւ ընկեցին ի ծովն, եւ եղեւ շարժ մեծ եւ պատառեցաւ
* A fol. 222 v° a. ծովն եւ եհան * զսուրբն ի ցամաքն. եւ երթեալ ի դուռն քաղաքին հանգեաւ Ապրիլի Բ. եւ որք տեսին զնա փառս ետուն Աստուծոյ ։

Իսկ միւս եղբայրն Եդեսիոս՝ թաղեաց զեղբայր իւր եւ գնաց յԱղեքսանդրիա ։ Եւ տեսանէ զի Հերակլոս իշխանն տանջէր զքրիստոնեայսն, համարձակեցաւ եւ եհար

2 Մաքսիմիանոսի] անօրէն *add.* B || 8 այրեցին զկողսն] պատառեցին սրով զկողսն B || 10 եւ եղեւ շարժ եւ պատառեցաւ ծովն *om.* B || 11 հանգեաւ] ի Քրիստոս Արեգի ԻԵ եւ *add.* B || 12 եւ որք տեսին . . . Աստուծոյ *om.* B || 13 Եդեսիոս] առեալ *add.* B || 14 տեսանէ] յաւուր միում *add.* B.

25 areg, 2 Avril.

Martyre des saints Amphianus et Édésius son frère.

Ces bienheureux martyrs du Christ étaient frères germains, aux jours de l'empereur Maximien, du territoire de Lydda en Palestine; et ils s'étaient rendus à Beyrouth (*Biuriton*). Ils étaient les compagnons du saint martyr Pamphyle.

Amphianus (*Anphianos*), mis en présence du gouverneur Urbanus, confessa en chantant des hymnes à Notre-Seigneur Jésus-Christ. On soufflleta ses joues vigoureusement, les bourreaux le frappèrent à coups de pied, oignirent les pieds avec de l'huile et les brûlèrent au feu; puis ils le suspendirent à un arbre et lui brûlèrent les côtes. Le saint, voyant son corps soumis à de telles tortures, priait la très sainte Trinité de lui donner la patience. On le descendit du gibet et on le jeta à la mer, mais il se fit un grand tremblement, la mer
* A fol. 222 v° a. s'entr'ouvrit et rejeta * le saint sur le rivage. Celui-ci se rendit à la porte de la ville et y reposa le 2 avril. Ceux qui le virent glorifièrent Dieu.

Quant à l'autre frère Édésius, il inhuma son frère et se rendit à Alexandrie, où, voyant que le gouverneur Hieroclès (*Heraklos*) torturait les chrétiens,

գնա ձեռօքն եւ ընկէց ցերկիր յորսայս, փետէր զմօրուսն եւ ասէր. Մի համարձակիր այսպիսի գործ առնել ընդ ծառայսն Աստուծոյ :

Եւ կալեալ զօրականացն այնչափ տանջեցին զնա հարուածովք մինչեւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, եւ զմարմինն ընկեցին ի ծով :

[B * Յայսմ աւուր կատարեցաւ ի Կեսարիա սրբուհին Թէոդոսիա, սրով վկայելով զՔրիստոս : * B p. 156 a.

Նոյնպէս եւ նահատակն Նիկիտոս. եւ նա յետ բազում չարչարանաց մարտի-րոսացաւ :

Ի սմին աւուր վկայեաց ի Հայս սուրբն Վլաս վկայն չարչարանօք եւ մահուամբ վասն Քրիստոսի խոստովանութեանն եւ հաւատոցն. սա կովարած կոչի :]

Արեգի ԻԶ եւ Ապրիլի Գ : Վկայութիւն երից քերցն Ագապի, Երինի, Քիոնի, որ թարգմանի Սէր, Խաղաղութիւն, Ձիւնայի :

Սոքա երեքեանս քորք էին հարազատք, ի քաղաքէն Թեսաղոնիկոյ, յաւուրս

2 Աստուծոյ] եւ չարչարել *add.* B || 3 տանջեցին] խստագոյն եւ *add.* B || 4 ծովն] եւ այնպէս պսակեցաւ ի Քրիստոսէ Աստուծոյ *add.* B || 11 Վկայութիւն . . . Ձիւնայի] Վկայութիւն սրբուհեաց եւ կուսից վկայից երից քերցն՝ Ագապեայ, Իրինեայ եւ Քինեայ Թեսաղոնիկեցւոց, որ թարգմանի ի հայ լեզու՝ Սէր, Խաղաղութիւն, Ձիւնայի B || 13 Թեսաղոնիկոյ] Թեսաղոնիկեցւոց B

il eut la hardiesse de le frapper de ses mains, de le renverser sur le dos, de lui arracher la barbe en disant : « N'ose plus agir de telle façon avec les serviteurs de Dieu. »

Les soldats le saisirent et lui infligèrent de tels coups cruels qu'il rendit son âme à Dieu; puis ils jetèrent son corps à la mer.

[B * En ce jour trépassa à Césarée sainte Théodosie, en témoignant pour le Christ, par le glaive. * B p. 156 a.

Également, le cha mpion (du Christ) Nicétas, qui fut martyrisé après de nombreuses tortures.

En ce même jour fut martyrisé en Arménie saint Blaise (*Vlas*) martyr, qui endura les tortures et la mort pour la confession et la foi au Christ; il est appelé le bouvier.]

26 AREG, 3 Avril.

Martyre des trois sœurs Agapê, Irène, Chionia, noms qui se traduisent Amour, Paix et Neigeuse.

Elles étaient trois sœurs germaines, de la ville de Thessalonique, aux

Մաքսիմիանոսի կռապաշտ արքային, եւ վասն հալածանաց ժամանակին՝ թողեալ զտունս իւրեանց բնակէին ի լերինս, եւ պահօք եւ աղօթիւք զԱստուած աղաչէին :

Եւ մատնեցան առ Դուլկիտիանոս իշխանն : Իջուցին ի լեռնէն եւ կացուցին առաջի, եւ բազում ողոքանօք եւ պատրանօք նեղէին զնոսա ուրանալ զՔրիստոս, եւ ոչ կարացին հաւանեցուցանել որ հաւատային ի կուռսն : Հրամայեաց եւ զԱգապի եւ
* A fol. 222 v° b. զԽիոնի հրով այրեցին : * Իսկ զերանելին Երինի վասն զի ունէր աւետարանն եւ պնակիտսն, եւ յորժամ գրէր եւ կարդայր՝ զայլս ուսուցանէր, տարան առաջի եւ հրով այրեցին զաւետարանն եւ զպնակիտսն, եւ զնա արկին ի պոռնկատուն, եւ Աստուած պահեաց զնա անարատ ի պղծի գործոց :

Եւ դարձեալ սպառնալեօք եւ ողոքանօք նեղէին զնա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն. եւ յորժամ ոչ կարացին հաւանեցուցանել՝ հրամայեաց հրով այրել զնա, որպէս եւ զայլ երկու քորսն : Եւ յորժամ տարան ի տեղին՝ կուտեցին փայտ եւ բորբոքեցին զհուրն, մերկացաւ ինքնին եւ անկաւ ի հուրն. եւ այնպէս բարի խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած՝ Ապրիլ Գ :

3 Դուլկիտիանոս] Դուլկիտիոս B || 4 ուրանալ զՔրիստոս *om.* B || 7 տարան] միայն *add.* B || 10 նեղէին] բռնադատէին B || 11 հրամայեաց] դատաւորն *add.* B || 14 Աստուած] եւ կատարի յիշատակ սոցա՝ Արեգի ԻԶ եւ *add.* B.

jours de Maximin l'empereur idolâtre. A cause de la période de persécution, elles avaient abandonné leur maison et habitaient à la montagne, implorant Dieu avec jeûnes et prières.

Elles furent dénoncées au gouverneur Dulcitianus. On les fit descendre de la montagne et on les fit comparaître; on les pressa par de douces paroles trompeuses à renier le Christ, mais on ne parvint pas à les persuader de
* A fol. 222 v° b. croire aux idoles. (Le gouverneur) ordonna de brûler aux flammes Agapè et Chiona (*Khioni*). * Quant à la bienheureuse Irène (*Erini*), parce qu'elle avait un évangéliaire et des tablettes, et qu'en écrivant ou lisant elle enseignait les autres, on la fit comparaître, on brûla l'évangéliaire et les tablettes, et on la jeta dans une maison de prostitution, mais Dieu la préserva immaculée d'abominables actions.

On la pressa de nouveau par des menaces et de douces paroles de renier le Christ et d'immoler aux idoles; mais comme on ne parvint pas à la persuader, (le gouverneur) ordonna de la brûler au feu comme ses deux autres sœurs. Lorsqu'on l'eut conduite à l'endroit (désigné), on amassa du bois et on y mit le feu; elle se déshabilla d'elle-même et se jeta dans les flammes, et c'est ainsi que dans une bonne confession elle rendit son âme à Dieu, le 3 avril.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Սեւերիանոսի եւ Մեմնոսի որք կատարեցան ի Թիրակ. եւ այլ երեսուն եւ ութ մարտիրոսացն որ ի Փիլիպուպօլիս կատարեցան ։

Սուրբ վկայքս այսորիկ էին յաւուրս Դիոկղետիանոսի ամբարիշտ արքային եւ Ապեղիանոսի բդեշխին ։ Եւ այս են անուանք երեսուն եւ ութ վկայիցն Քրիստոսի. Ռիոն, Արտիանոս, Մողիանոս, Դեմոն, Սիլվիանոս, Սաբինոս, Եւստաթէոս, Ստրատէոն, Վոզբաս. սոքա էին ի Բիւզանդիոյ. Տիմոթէոս, Պաղմատոս * Միտտոս, Մաքսիմոս, * A fol. 223 rº a. Նիկոն, Դեփիլոս, Դեմետոս, Նէոփիտոս, Ռինոս, Սատուրնինոս, Եպափրիդիտոս, Հերակաս, Գայիոս, Զոտիկոս, Կռոնիոս, Անթոս, Որոս, Վրիլոս, Տիւրանոս, Ապաթոս, Աթիոդորոս, Պարթենիոս, Աքելաս, Պանթիւրիոս, Խուսանթոս, Պանտոլէոն, Թէոսեբիոս, Գենեթլիոս, սոքա ամենեքեան ի Փիլիպուպօլիս խոստովանեցան զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ Ապեղիանոս բդեաշխն եհատ զգլուխս նոցա, եւ կատարեցին զընթացս իւրեանց բարի խոստովանութեամբ ։

Իսկ սուրբն Սեւերիանոս էր հզօր զօրութեամբ եւ բարձր հասակաւ. եւ ծնողքն նորա յահէ հալածչացն գնացին յայլ աշխարհ, եւ մնաց ի քաղաքն Սեւերիանոս, եւ աղաչէր զԱստուած զի հասցէ մարտիրոսութեանն. եւ տեսանէ յանուրջս զՏէրն որ

3 ամբարիշտ] անօրէն B || 4 երեսուն եւ ութ վկայիցն Քրիստոսի] վկայիցն B || 5 Արտիանոս] Անատոլիանոս B — Դեմոն] Եւդեմոն B || 8 Կռոնիոս] Կրոնիոն B — Վրիլոս] Զրիլոս B — Տիւրանոս] Տիւրոս B || 9 Պանտոլէոն] Պանտելէիմոն B.

En ce jour martyre des saints Sévérien et Memnon, qui furent exécutés en Thrace, et de trente-huit autres martyrs qui furent exécutés à Philippopolis.

Ces saints martyrs vivaient aux jours de Dioclétien l'empereur impie et du gouverneur Apellianus. Voici les noms des trente-huit martyrs du Christ : Horion (*Rion*), Anatolinus (*Artianos*), Molias (*Molianos*), Eudaimon (*Démon*), Sylvain (*Sylvianus*), Sabinus, Eustathe, Straton (*Stratéon*), Boslas (*Vozbas*), qui étaient de Byzance; Timothée, Palmatus, * Mesius (*Mittos*), Maxime, Nicon, * A fol. 223 rº a. Diphilus, Dométius (*Demétos*), Néophyte, Rhenus (*Rhinos*), Saturnin, Épaphrodite, Héracas, Gaius, Zoticus, Cronius, Anthus, Horus, Zoïle (*Vrilos*), Tyrannus, Agathos (*Apathos*), Athénodore (*Athiodoros*), Parthénius, Achélas, Panthérius, Chrysanthe, Pantoléon, Théosébius, Généthlias, qui étaient tous de Philippopolis. Ils confessèrent le nom du Christ notre Dieu. Le gouverneur Apellianus leur fit trancher la tête, et ils terminèrent leur carrière en bonne confession.

Quant à saint Sévérien (*Severianos*), il était puissant, fort et de haute taille. Ses parents, par crainte des persécuteurs, étaient allés dans un autre pays, mais Sévérien était resté seul à la ville; il priait Dieu d'arriver au martyre, et il vit

ասէր ցնա. Սիրելի իմ Սեւերիանոս, ընդ առաւօտն ե՛լ ընդ արեւելեան դուռն քաղաքիս, եւ անդ տեսցես զոր փափաքես : Եւ յորժամ գնաց. եգիտ զզօրապետն Մեմնոս, եւ առեալ զնա առանձինն տուեալ նմա խրատ զի ուրասցի զկուռսն եւ պաշտեսցէ զՔրիստոս. եւ բազում վարդապետութեամբ հաւանեցոյց զՄեմնոս եւ հաւատայ ի Քրիստոս :

Մատնեցին զսուրբն Սեւերիանոս առ Ապեղիանոս բդեաշխն, եւ կացուցին առաջի,
* A fol. 223 r° b. եւ նա խոստովանեցաւ յայտնապէս զՔրիստոս Աստուած : Կոչեաց * բդեաշխն զՄեմնոնն, կարծէր զնա թէ տակաւին կռապաշտ է, եւ յանձնեաց ի նա զՍեւերիանոս որպէս զի ողոքանօք կամ սպառնալեօք կարասցէ դարձուցանել զնա ի կռապաշտութիւն : Եւ երթեալ ի միասին ի տունն Մեմնոսի, ուրախութեամբ գոհանային զԱստուծոյ :

Եւ ի միւս այլ աւուրն կացուցին առաջի բդեշխին, եւ աղաղակեցին երկոքեանն. Քրիստոնեայք եմք : Մերկացուցին զՄեմնոս եւ գանեցին զթիկունսն եւ զլանջսն ուժգին, եւ զՍեւերիանոսի զկզակսն : Եւ գնաց բդեաշխն ի Փիլիպուպօլիս, տարաւ զկնի իւր եւ զսուրբսն ծանր շղթայիւք, եւ անդ ձաղկեաց զնոսա յոյժ : Եւ անտի գնացին ի Բիւզիէ քաղաք, եհարց զսուրբսն, եւ նոքա զնոյն քրիստոնէութեան հաւատոյն խոստովանեցան :

Կապեցին զսուրբն Մեմնոս յերկու սիւնս, եւ սրով հանին յանձնէն երիս փոկս ի թիկանցն մինչեւ ի վայր : Ասէ սուրբն Մեմնոս. Զմիսս իմ ունիմ ի յաւիտենական

10 ի միասին *om.* B.

dans un rêve le Seigneur qui lui dit : « Mon cher Sévérien, sors au matin par la porte orientale de la ville et tu y verras ce que tu désires. » Lorsqu'il y arriva, (Sévérien) trouva le chef des troupes Memnon (*Memnos*) et, le prenant à part, il lui conseilla de renier les idoles et de servir le Christ. Il persuada par un long enseignement Memnon, qui crut au Christ.

On dénonça saint Sévérien au gouverneur Apellianus et on le fit compa-
* A fol. 223 r° b. raître. Il confessa ouvertement le Christ Dieu. Le gouverneur * fit appeler Memnon, le croyant encore idolâtre, et lui confia Sévérien afin que par des prières ou par des menaces il le fît revenir à l'idolâtrie. Ils se rendirent ensemble à la maison de Memnon et joyeusement rendaient grâces à Dieu.

Le lendemain, on les introduisit chez le gouverneur, et ils crièrent tous les deux : « Nous sommes chrétiens. » On dépouilla Memnon de ses vêtements, on le frappa violemment sur le dos et sur les côtes, et Sévérien sur les mâchoires. Le gouverneur se rendit à Philippopolis en emmenant à sa suite les saints chargés de lourdes chaînes, et il les y fit flageller vigoureusement. De là s'étant rendu à la ville de Byzia, il interrogea les saints qui confessèrent la même foi du christianisme.

On attacha saint Memnon à deux colonnes et on détacha de sa personne, par le glaive, trois lanières de peau, sur son dos, du haut en bas. Saint

ուրախութիւնն եւ տանջանացս ոչ զգամ, զի զարդ երեսօք երեք նշխարք յանձնէս ընծայ մատուցանեմ սուրբ Երրորդութեանն : Բորբոքեցին հուր եւ կոտորեցին զմատունս ձեռաց եւ ոտիցն, եւ ընկեցին զնա ի մէջ բորբոքեալ բոցոյն : Եւ յաղօթելն նորա եղեւ ձայն յերկնից առ նա եւ ասէ. Ով Մեմնոս, արիական ճգնաւոր, եթէ ոչ էիր արժանի ոչ գայիր առ իս. արդ * եկ ի բնակարանս քո ի դասխս արդարոց : Եւ առժամայն ի մէջ հրոյն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած : *A fol. 223 v° a.

Իսկ զմարմին սրբոյն Սեւերիանոսի քերեցին երկաթի ճանկօք, եւ զկերձակաց մատանին հրացուցին եւ արկին ի մատունս նորա, եւ օղ երկաթի հրացուցեալ արկին որպէս գօտի ի մէջն, եւ ապա սղոցեցին զնա ի գագաթանէն եւ ի վայր : Եւ յորժամ աշխատեցան դահիճքն, աղաղակեցին. Մեծ է Աստուածն քրիստոնէից որ օգնէ ծառայից իւրոց : Ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ. Սեւերիանոս, սիրելի իմ, զօրացիր եւ քաջ լեր : Եւ ի ձայնէն երկեան զօրականքն : Եւ մինչդեռ ի տանջանս էր սուրբն՝ հատին զգլուխ նորա :

Կատարեցան սուրբ վկայքս Քրիստոսի Ապրիլի Գ :

2 կոտորեցին] զամենայն *add.* B || 4-5 եղեւ ձայն . . . արդարոց *om.* B || 9 սղոցեցին] զնդեալ ի մամուլս սկսան սղոցել B || 10 դահիճքն] եւ սուրբն իբրեւ անյաղթելի զինուոր Քրիստոսի ոչ ինչ համարէր զայն եւս ահագին տանջանսն *add.* B || 12 ձայնէն . . . զօրականքն *om.* B || 14 Քրիստոսի] Սեւերիանոս եւ Մեմնոս՝ Արեգի ԻԶ եւ *add.* B.

Memnon dit : « J'ai mon esprit fixé à la joie éternelle et je ne ressens rien de ces tortures, car, d'un visage serein, j'offre trois lambeaux de ma personne en offrande à la sainte Trinité. » On alluma du feu, on lui brisa les doigts des mains et des pieds et le jeta dans les flammes ardentes. Or, pendant qu'il priait, il y eut une voix du ciel qui lui dit : « O Mennon, ascète vaillant, si tu n'étais pas digne, tu ne viendrais pas à moi. Mais viens * dans ton habitation, dans l'enceinte des justes. » Il rendit aussitôt son âme à Dieu au milieu du feu. *A fol. 223 v° a.

On déchira alors le corps de saint Sévérien avec des ongles de fer, on fit enflammer un dé de tailleur qu'on passa à ses doigts, on lui passa à la taille un cercle de fer enflammé en guise de ceinture, ensuite on le scia à partir du crâne jusqu'en bas. Les bourreaux fatigués crièrent : « Grand est le Dieu des chrétiens qui vient en aide à ses serviteurs. » Une voix vint du ciel, qui lui dit : « Sévérien, mon bien-aimé, prends courage et sois vaillant. » Les soldats prirent peur de cette voix; enfin, tandis que le saint était dans les tortures, on lui trancha la tête.

Ces saints martyrs du Christ furent exécutés le 3 avril.

Արեգի ԻԷ եւ Ապրիլի Դ ։ Վկայութիւն սրբոցն Ագաթոպոսի սարկաւագի եւ Թէոդուլոսի ընթերցողի ։

Սոքա եղբարք էին հարազատք եւ քրիստոնեայք ի քաղաքէն Թեսաղոնիկոյ ։ Եւ ի միում աւուր տեսանեն յանուրջս որ արկեալ էին ի մատունս մատանի ի սքանչելի երկրէ, յորում գրեալ էին ի յակունսն զմարտիրոսութիւնք մահն իւրեանց վասն անուանն Քրիստոսի ։

Իսկ Ագաթոպոս սարկաւագն ծերունի էր, եւ Թէոդուլոս ընթերցողն սարկաւագ երիտասարդ ։ Եւ մատնեցան առ Փաւստինոս դատաւորն Թեսաղոնիկիոյ քաղաքին, եւ
* A fol. 223 v° b. կապանօք * կացուցին առաջի, եւ յոյժ նեղեաց եւ բռնադատեաց զնոսա ուրանալ զՔրիստոս, եւ ոչ կարաց մեկնել զնոսա ի հաւատոց եւ ի յուսոյն Քրիստոսի ։

Արգելին զնոսա ի բանդ, եւ յաղօթելն նոցա ննջեցին, եւ տեսանէին երկոքեանն զմի երազ՝ որ էին ի նաւի ընդ այլ ժողովուրդս, եւ եղեւ մրրիկ ի ծովուն եւ շարժեցան ալիքն եւ հերձաւ նաւն եւ ամենեքեան ընկղմեցան, եւ ինքեանք միայն ապրեցան եւ ելին ի

1 Ագաթոպոս] Ագաթոպիոս B — սարկաւագի] եւ եղբօր իւրոյ *add.* B || 3 Սոքա] Սուրբքս այսոքիկ B || 3 Թեսաղոնիկոյ] յաւուրս հալածանաց Մաքսիմիանոսի արքայի ։ Թէոդուլոս երիտասարդ զօրով ընթերցող՝ մեծի եկեղեցւոյն Թեսաղոնիկոյ, իսկ Ագաթոպոս սարկաւագ ծերունի *add.* B || 7-8 Իսկ... երիտասարդ *om.* B || 8 Թեսաղոնիկիոյ] Թեսաղոնիկեցւոց B || 10 զՔրիստոս] եւ զոհել կռոցն *add.* B || 11 տեսանէին] տեսանեն B || 13 ապրեցան] փրկեցան B.

27 AREG, 4 Avril.

Martyre des saints Agathopus, diacre, Théodule, lecteur.

Ils étaient frères germains et chrétiens de la ville de Thessalonique. Un jour, ils virent dans un songe qu'on leur avait passé au doigt une bague d'un pays merveilleux, et sur ses pierres était inscrite leur mort en martyrs pour le nom du Christ.

Le diacre Agathopus était un vieillard, et le lecteur Théodule jeune clerc [1]. Ils furent dénoncés au juge Faustinus de la ville de Thessalonique, et on les
* A fol. 223 v° b. lui * présenta chargés de chaînes. Celui-ci les pressa beaucoup, les poussant à renier le Christ, mais il ne put les séparer de la foi et de l'espérance au Christ.

On les retint en prison; pendant qu'ils priaient, ils s'endormirent, et ils virent tous les deux le même songe : ils étaient dans un bateau avec d'autres, et une tempête se leva sur la mer, les vagues déferlèrent, le bateau fut brisé et tous furent engloutis; eux seuls furent sauvés, et ils montèrent sur

1. Le texte porte « diacre », ce qui est évidemment fautif.

լեառն մի բարձր մինչեւ յերկինս ։ Եւ զարթուցեալք պատմեցին միմեանց զերազն, եւ առաւել եւս հաստատուն եղեն ի սէրն Քրիստոսի ։

Եւ ընդ առաւօտն հանին ի բանդէն եւ ընկեցին ի ծովն. եւ այնպէս բարի դաւանութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած Ապրիլի Դ ։ Եւ լուծան կապանքն եւ եհան զնոսա ծովն ի ցամաքն, եւ ազգականք նոցա թաղեցին զնոսա պատուով ի նշանաւոր տեղւոջ ։

[B * Յայսմ աւուր յիշատակ երանելի վարդապետին մերոյ Մխիթարայ Սասունեցւոյ ։ * B p. 148 b.

Երանելիս այս մանկութենէ սիրող էր սրբակրօն վարուց եւ գիտութեան. եւ լուեալ զհամբաւ առաքինութեան եւ իմաստութեան սրբասնեալ վարդապետին Ներսիսի Տարոնեցւոյ որ ուսուցանէր ի վանս Գլաձորոյ, գնաց առ նա եւ վարժեցաւ յուսումն աստուածային գրոց եւ արտաքին իմաստութեան ։

Եւ յետ մահու վարդապետին՝ ելեալ անտի շրջեցաւ ի վանորայս որք էին ի կողմանս յայնոսիկ, եւ մնացեալ յիւրաքանչիւր վանս ամս ինչ, բարեկարգէր զնոսա խրատու, եւ ուսուցանէր զամենեսին աստուածեղէն վարդապետութեամբ, եւ բարիոք քաղաքավարութեամբ օրինակ զանձն ընծայէր բոլորեցուն ։

Եւ զի ճարտար էր յարուեստ գրչութեան՝ գրէր գիրս գեղեցկագիրս, եւ վաճառեալ

3 բանդէն] եւ զատեալ զնոսա հաստատուն ի հաւատս *add.* B || 4 Աստուած] Արեգի ԻԷ եւ *add.* B || 5 զնոսա] զմարմինս նոցա B — ազգականք նոցա] զատեալ ի ծովափին *add.* B.

une montagne haute jusqu'au ciel. S'étant réveillés, ils se racontèrent mutuellement leur rêve, et furent raffermis davantage dans l'amour du Christ.

Au matin, on les fit sortir de la prison et on les jeta à la mer; et c'est ainsi qu'en bonne confession ils rendirent leur âme à Dieu le 4 avril. Leurs liens se défirent, la mer les rejeta sur le rivage, et leurs proches les inhumèrent avec honneur dans un endroit de choix.

[B * En ce jour commémoration de notre bienheureux Vardapet Mékhitar de Sassoun. * B p. 148 b.

Ce bienheureux avait dès sa jeunesse aimé la vie pure et sainte et la science. Ayant entendu la renommée de vertu et de sagesse du saint Vardapet Nersès de Taron, qui enseignait au couvent de Glatzor, il se rendit auprès de lui et fut instruit à l'étude des divines écritures et de la philosophie profane.

Après la mort du Vardapet, il partit de là et visita les couvents qui se trouvaient dans ces parages; il séjourna dans chaque couvent quelques années, les réforma par ses bons conseils, et les instruisit tous par sa divine doctrine, par son urbanité, il s'offrait lui-même en exemple à tous.

Comme il était adroit dans l'art de copiste, il écrivait des manuscrits en

գանս բաշխէր զգինս աղքատաց եւ կարօտելոց, եւ ինքն ամփոփութեամբ շատանայր :

Եւ այսպիսի առաքինազարդ վարուք հասեալ ի ծերութիւն՝ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ի թուին հայոց եօթն հարիւր եւ ութսուն եւ վեց :]

Արեգի ԻԸ եւ Ապրիլի Ե : Վկայութիւն սրբոյն Կալիոպոսի :

Երանելի վկայն Քրիստոսի Կալիոպոս որդի էր քրիստոնէի եւ բարեպաշտ կնոջ որոյ անուն էր Թէոկղիա, ի Պերգեայ Պամփիւլացւոց՝ յաւուրս կռապաշտ արքային Մաքսիմիանոսի : Եւ վասն հալածանաց ժամանակին առաքեաց զնա մայրն իւր ի Պոմփիուպօլիս Կիլիկեցւոց, եւ անդ մատնեցաւ ի ձեռս Մաքսիմինոյ դատաւորին : Եւ

* A fol. 224 rº a. * կացեալ առաջի խոստովանեցաւ զանունն Քրիստոսի : Եւ լուծեալ թափեցին զօդս ձեռաց եւ ոտից, եւ զան հարին զմարմինն ուժգին, եւ պնդեցին զնա կապանօք յանիւ եւ ընկեցին ի հուր : Եւ հրեշտակ Տեառն շիջոյց զհուրն եւ զանիւն խորտակեաց, եւ մնաց սուրբն ամբողջ մարմնով :

Արկին զնա ի բանդ շղթայիւք : Եւ լուեալ մօրն բաշխեաց զամենայն ինչս իւր

5 Կալիոպոսի] եւ մօր իւրոյ Թէոկղեայ *add.* B || 6 բարեպաշտ] եւ մեծատան *add.* B || 9 Պոմփիուպօլիս] Պոմպիուպօլիս Կիլիկեցւոց, այսինքն է Բոմպալիս *add.* B || 10 թափեցին] խախտեցին B || 12-13 Եւ հրեշտակ . . . մարմնով] Եւ ի շիջանել հրոյն զօրութեամբն Քրիստոսի մնաց կենդանի B || 14 Արկին] Եւ առեալ արկին B.

beaux caractères, et après les avoir vendus, il en distribuait le prix aux pauvres et aux indigents ; car lui-même il se plaisait dans la sobriété.

Arrivé à la vieillesse après une telle vie pleine de vertus, il reposa en paix dans le Christ l'année sept cent quatre-vingt-six de l'ère arménienne.]

28 AREG, 5 **Avril.**

Martyre de saint Calliope.

Le bienheureux martyr du Christ Calliope (*Kaliopos*) était fils d'une femme chrétienne et pieuse dont le nom était Théoclia, de Perge en Pamphylie, aux jours de l'empereur idolâtre Maximin. A cause de la période de persécution, sa mère l'envoya à Pompéioupolis de Cilicie, où il fut livré entre les mains du

* A fol. 224 rº a. juge Maximinus. * Mis en sa présence, il confessa le nom du Christ. On lui rompit les articulations des mains et des pieds, on frappa brutalement son corps, on l'attacha avec des chaînes à une roue et on le jeta dans le feu. Mais l'ange du Seigneur éteignit le feu, brisa la roue, et le saint demeura intact de corps.

On le jeta en prison enchaîné. Sa mère, l'ayant appris, distribua tous ses

աղքատաց, եւ ազատեաց զերկերիւր եւ զյիսուն ծառայս իւր, եւ փութով գնաց ի Պոմպիուպօլիս. եմուտ ի բանդն առ որդին, եւ արտասուալից խնդութեամբ գիրկս արկեալ համբուրէր եւ մաքրէր զխոցուածս վիրաց եւ ի միասին սաղմոսէին : Եւ ի մէջ գիշերին լոյս մեծ ծագեաց ի բանդին, ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Երանի է խոստովանութեանդ քոյ :

Եւ յաւուր մեծի հինգշաբաթուն՝ հրամայեաց դատաւորն խաչել զսուրբն Կալիոպոս : Եւ մայրն իւր տուեալ հինգ հարիւր դահեկան զի մի խաչեսցեն զնա կանգուն որպէս զՏէրն՝ այլ գլխիվայր. եւ նոքա առեալ զդանձն այնպէս արարին : Եւ յաւուր ուրբաթու չարչարանաց աւուր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յերրորդ ժամուն, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած : Եւ ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ. Ե՛լ ի վեր քաղաքացի եւ ժառանգորդ Քրիստոսի, լեր դասակից հրեշտակաց :

Եւ իջոյց զնա մայրն իւր ի խաչէն, * եւ գիրկս արկեալ նմա աւանդեաց եւ նա * A fol. 224 r° b.
զհոգին իւր առ Աստուած : Եւ ոմանք քրիստոնեայք թաղեցին զերկոսեանն ի միասին, ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ մերոյ Ապրիլի Ե :

[B * Յայսմ աւուր յիշատակ է սրբոյ հօրն մերոյ Գէորգեայ որ ի Մալէոն լեառն՝ * B p. 149 b.
զոր ասեն եթէ ի Վաներն է :

4 ձայն... ասէ] եւ լուաւ ի հոգի իւր ձայն յերկնից որ ասէր B — խոստովանութեանդ] խոստովանութեամբ մարտիրոսութեանդ B || 9 աւուր ... Քրիստոսի] Քրիստոսի Աստուծոյն մերոյ B || 10 ժամուն] աւուրն *add.* B || 10-11 Եւ ձայն ... հրեշտակաց *om.* B || 14 գովութիւն] գոհութիւն B — մերոյ] Արեգի ԻԸ եւ *add.* B.

biens aux pauvres, rendit la liberté à ses deux cent cinquante domestiques, et se rendit en hâte à Pompéioupolis, pénétra dans la prison auprès de son fils et, l'ayant pris dans ses bras avec des larmes de joie, l'embrassa, nettoya les plaies des blessures, et tous les deux psalmodièrent ensemble. Au milieu de la nuit une grande clarté jaillit dans la prison, et il vint une voix du ciel qui dit : « Heureuse est ta confession. »

Le jour du jeudi saint, le juge ordonna de crucifier saint Calliope. Sa mère donna cinq cents écus pour qu'il ne fût point crucifié debout comme le Seigneur, mais la tête en bas. (Les bourreaux) prirent l'argent et firent ainsi. Le jour du vendredi, jour de la Passion de Notre-Seigneur Jésus-Christ, à la troisième heure, il rendit son âme à Dieu. Une voix vint du ciel qui dit : « Monte là-haut, concitoyen et héritier du Christ, prends rang parmi les anges. »

Sa mère le descendit de la croix, * l'entoura de ses bras et rendit, elle aussi, * A fol. 224 r° b.
son âme à Dieu. Des chrétiens les inhumèrent tous deux ensemble, pour la gloire et la louange de notre Dieu, le 5 avril.

[B * En ce jour commémoration de notre saint père Georges, de la mon- * B p. 149 b.
tagne de Maléon, qu'on dit être à Vaner.

Սա մեծ ճգնութեամբ փայլեաց իբրեւ զջահ լուսաւորելով զբազումս. եւ յետ մահու բազում նշանք լինին ի գերեզմանէ նորա ի նեղեալս :

Յայսմ աւուր յիշատակ է վարուց սքանչելի առն Աստուծոյ սրբոյն Ռուսինոսի :

Սա էր յաշխարհէն Հայոց, ի գաւառէն Մոկաց, կրօնաւորեալ ի վանս Փասայ. ուր եւ տնտես կարգեալ՝ համապազ կատարէր զծառայութիւն վանացն եւ զպաշտասութիւն եղբարցն ամենայն խոնարհութեամբ : Եւ էր խստակրօն յոյժ, եւ պահօք եւ աղօթիւք ծառայէր Աստուծոյ յամենայն սրտէ : Որ ի մարմնի զանմարմին հրեշտակաց վարս յանձին ունէր, եւ յերկրի կալով զերկնայինս միշտ խորհէր, բայց արտաքին ձեւով էր գձուձ եւ անշուք, եւ արհամարհեալ յաչս ամենեցուն :

Եւ յայտնեաց Աստուած զծածկեալ առաքինութիւնս նորա միում յաբեղայից նոյն վանաց՝ որ եւ նա էր կատարեալ առաքինի, ցուցանելով նմա յանուրջս զՌուսինոս լինել բնակիչ դրախտին : Որ իբրեւ յայտնեցաւ բանս այս այլոց միաբանից, կամէին այնուհետեւ փառաւորել զծառայն Աստուծոյ. եւ նա կամեցաւ փախչել անտի, զոր իմացեալ եղբարցն եւ փակեալ ամրացուցին զդուռն վանացն : Եւ Ռուսինոս եկեալ անդ արար զնշան սուրբ խաչին ի վերայ դրանն, եւ առժամայն բացաւ դուռն եւ ելեալ գնաց յանծանօթ տեղի, եւ անդ կատարեաց զկեանս իւր ի հաճոյս Աստուծոյ :]

Il brilla comme un lustre par son grand ascétisme, illuminant nombre de gens. Après sa mort, beaucoup de miracles ont lieu à son tombeau en faveur des affligés.

En ce jour commémoration de la vie de l'excellent homme de Dieu saint Roussinos.

Il était du pays d'Arménie, de la province de Mokh, religieux du couvent de Phass, où, étant économe, il accomplissait journellement l'administration du couvent et le service des frères en toute humilité. Il était très austère et servait Dieu par des jeûnes et des prières de tout son cœur. Il avait en son corps la vie incorporelle des anges, et demeurant sur terre il ne songeait qu'aux choses célestes. D'aspect extérieur. il était vilain et mesquin, méprisable aux yeux de tous.

Dieu révéla ses vertus secrètes à l'un des religieux du même couvent, qui était, lui aussi, parfaitement vertueux, en lui montrant dans un rêve Roussinos habitant le paradis. Lorsque cette chose fut révélée aux autres cénobites, tous se mirent dès lors à glorifier le serviteur de Dieu. Aussi voulut-il s'enfuir de là, mais, l'ayant appris. les frères fermèrent et consolidèrent la porte du couvent. Roussinos s'approcha, et fit le signe de la sainte croix sur la porte ; la porte s'ouvrit aussitôt, il sortit et se rendit dans un endroit inconnu, où il termina sa vie agréable à Dieu.]

Արեգի ԻԹ եւ Ապրիլի Զ : Տօն է Աւետեաց Աստուածածնին զոր ետ նմա Գաբրիէլ հրեշտակն, եւ յղացաւ զԲանն Աստուած :

Ամենասրբուհին Մարիամ մայր Տեառն՝ դուստր էր Յովակիմայ արդարոյ եւ Աննայի սրբուհւոյ, աւետեօք հրեշտակի յղացեալ յամուլ յարգանդէ եւ ծնեալ օրինօք : Եւ յետ երից ամաց տարան զնա ծնողքն իւր ի տաճարն Տեառն, եւ ետուն զնա նուէրս Աստուծոյ, եւ սնաւ ի տաճարի Տեառն սրբութեամբ ամս մետասան, եւ ընդունէր կերակուր ի հրեշտակէ Տեառն :

Եւ ի լինել չորեքտասան ամաց՝ ետուն քահանայքն զնա Տեառն վիճակաւ Յովսեփայ 'արդարոյ ի պահպանութիւն : Եւ նորա առեալ տարաւ ի տուն իւր ի Նազարէթ, եւ պահէր զնա սրբութեամբ, զի ունէր եւ այլ կին եւ որդիս եւ դստերս :

Եւ կացեալ ի տանն Յովսեփայ ամիսս երիս, եւ առեալ սափոր գնաց յաղբիւրն բերել ջուր. եւ երեւեալ նմա Գաբրիէլ հրեշտակապետն ի ձեւ երիտասարդի եւ ասէ ցնա. Ուրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս : Եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ խորհէր ի միտս իւրում թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս : Եւ մտեալ ի տունն Յովսեփայ * զարհուրեալ եւ փակեալ զդուրսն երեւեցաւ նմա * A fol. 224 v° a.

29 AREG, 6 Avril.

Fête de l'Annonciation de la mère de Dieu, que lui annonça l'ange Gabriel quand elle conçut le Verbe de Dieu.

La très sainte Marie, la mère du Seigneur, était la fille de Joachim le juste et de sainte Anne, conçue d'entrailles stériles par l'annonciation d'un ange, mais née selon les lois (de la nature). Trois ans après, ses parents la conduisirent au temple du Seigneur et l'offrirent en offrande à Dieu ; elle grandit en sainteté dans le temple du Seigneur pendant onze ans, recevant sa nourriture de l'ange du Seigneur.

Lorsqu'elle eut quatorze ans, les prêtres la donnèrent, en tirant au sort, à Joseph le juste, pour la garder. Il l'emmena à sa maison à Nazareth et la gardait saintement, car il avait une autre femme et des fils et des filles.

Elle resta à la maison de Joseph trois mois, et, ayant pris la cruche, elle alla à la fontaine pour apporter de l'eau ; l'archange Gabriel lui apparut sous les formes d'un jeune homme et lui dit : « *Sois heureuse, pleine de grâce, le Seigneur est avec toi, tu es bénie entre les femmes.* » *Elle fut troublée de ces paroles et elle se demandait en son esprit quelle pouvait être cette salutation* [1]. Rentrée à la maison de Joseph * effrayée, après qu'elle eut fermé la porte, (l'archange) lui * A fol. 224 v° a.

1. Luc, I, 28-29.

դարձեալ ի կերպարանս ծերոյ, եւ ասէ. Մի՛ երկնչիր Մարիամ զի գտեր շնորհս յԱստուծոյ, եւ ահա յղասջիր եւ ծնցես որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս ։ Նա եղիցի մեծ եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր իւրոյ, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան, եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի ։ Եւ ասէ Մարիամ. Զիա՞րդ լինիցի ինձ այդ՝ քանզի զայր ոչ գիտեմ ։ Եւ ասէ ցնա հրեշտակն. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո, զի որ ծնանելոց է ի քէն սուրբ է եւ որդի Աստուծոյ կոչեսցի ։ Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո եւ նա յղի է ի ծերութեան իւրում, եւ այս վեցերորդ ամիս է նորա, այն որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ ի յԱստուծոյ ամենայն բան ։ Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում ։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն ։

Եւ բանն Աստուծոյ ընդ լսելիս կուսին եմուտ յարգանդ նորա, եւ յարենէ կուսին շրջաստեղծեաց իւր մարմին, եւ խառնեաց զանխառնելի աստուածութիւնն ընդ մարդկութիւնս. նոր խառնումն եւ սքանչելի խառնուած, անհաս յարարածոց ։

Այսօր եւ մեք հաւատացեալքս ուրախացեալք ընդ սրբոյ Կուսին յաւուր փրկութեան
* A fol. 224 v° b. մերոյ՝ որ ազատեցաք յանիծից դատապարտութեանն* աւետեօք Կուսին գոչեսցուք եւ ասասցուք. Ուրա՛խ լեր բերկրեալ՝ աստուածաստեղծ կոյս Մարիամ ։ Ուրա՛խ լեր

apparut de nouveau sous les formes d'un vieillard et lui dit : « *Ne crains point, Marie, car tu as trouvé grâce devant Dieu. Voici que tu concevras en ton sein, et tu enfanteras un fils et tu lui donneras le nom de Jésus. Il sera grand; on l'appellera Fils du Très-Haut; le Seigneur Dieu lui donnera le trône de David son père; il régnera éternellement sur la maison de Jacob, et son règne n'aura point de fin.* » *Marie dit :* « *Comment cela sera-t-il, puisque je ne connais point d'homme?* » *L'ange lui répondit :* « *L'Esprit-Saint viendra sur toi, et la vertu du Très-Haut sera une ombre au-dessus de toi. C'est pourquoi celui qui naîtra de toi est saint et sera appelé Fils de Dieu. Voici que déjà Élisabeth, ta parente, a conçu, elle aussi, dans sa vieillesse et c'est ici le sixième mois de celle qui était appelée stérile : car rien n'est impossible à Dieu.* » *Marie dit alors :* « *Voici la servante du Seigneur, qu'il me soit fait selon ta parole.* » *Et l'ange la quitta*[1].

Le Verbe de Dieu entra par l'ouïe de la Vierge dans son sein et se créa son corps du sang de la Vierge, en mélangeant, ce qui ne peut être mélangé, la divinité avec l'humanité. Nouveau mélange et merveilleux assemblage incompréhensible aux créatures.

Aujourd'hui, nous aussi, les croyants, remplis de joie avec la sainte Vierge, en ce jour de notre salut, où nous avons été délivrés de la malédiction
A fol. 224 v° b. de la condamnation * par l'annonciation de la Vierge, crions et disons : Sois

1. Luc, I, 30-38.

երկրեալ՝ բարձող անիծից նախաՀօրն ։ Ուրախ լեր երկրեալ՝ գարուն Հոգեւոր ։ Ուրախ լեր երկրեալ՝ դատապարտութեանց լուծիչ ։ Ուրախ լեր երկրեալ՝ երկանց Եւայի ապառնիչ ։ Ուրախ լեր երկրեալ՝ զաւակ փրկութեան Ադամայ ։ Ուրախ լեր երկրեալ՝ Էակցին Հօր բնակարան ։ Ուրախ լեր երկրեալ՝ ընդՀանուր ազգի մարդկան փրկող ։ Ուրախ լեր երկրեալ՝ Թագաւորին յաւիտենից աթոռ ։ Ուրախ լեր երկրեալ՝ ժառանգեցուցիչ երկնաւոր դրախտին ։ Ուրախ լեր երկրեալ՝ իմանալի դրախտ բանաւոր ։ Ուրախ լեր երկրեալ՝ լեառն վիմածին ։ Ուրախ լեր երկրեալ՝ խորՀուրդ կենաց ։ Ուրախ լեր երկրեալ՝ ծաղիկ անթառամ ։ Ուրախ լեր երկրեալ՝ կենսատու մարդկան ազգի ։ Ուրախ լեր երկրեալ՝ Հոգին սուրբ առ քեզ եկեալ ։ Ուրախ լեր երկրեալ՝ ձայնիւ Հրեշտակապետին աւետաւորեալ ։ Ուրախ լեր երկրեալ՝ ճառագայթ լուսոյ ծագեալ ։ Ուրախ լեր երկրեալ՝ մաքուր աղաւնի մշտակոյս ։ Ուրախ լեր երկրեալ՝ Յիսուսածին Մարիամ ։ Ուրախ լեր երկրեալ՝ շուշան ծաղկեալ ։ Ուրախ լեր երկրեալ՝ ուրախութեան պատճառ ազգի մարդկան ։ Ուրախ լեր երկրեալ՝ չորեքծագեան աշխարՀի զուարթացուցիչ ։ Ուրախ լեր երկրեալ՝ պայծառ քան զարեգակն եւ մաքուր քան զաստեղս ։ Ուրախ լեր երկրեալ՝ ջրՀոր կենդանի ջրոյն ։ Ուրախ լեր երկրեալ՝ ամբոխ բարձրացուցիչ ։ Ուրախ լեր երկրեալ՝ սուրբ կոյս անՀարսնացեալ ։ Ուրախ լեր երկ-

heureuse, pleine de grâce, Vierge Marie créée par Dieu. Sois heureuse, pleine de grâce, toi qui as ôté la malédiction du premier père. Sois heureuse, pleine de grâce, printemps spirituel. Sois heureuse, pleine de grâce, qui as effacé la condamnation. Sois heureuse, pleine de grâce, qui as détruit les douleurs d'enfantement d'Ève. Sois heureuse, pleine de grâce, rejeton de salut d'Adam. Sois heureuse, pleine de grâce, habitation de celui qui coexiste avec le Père. Sois heureuse, pleine de grâce, la rédemptrice du genre humain universel. Sois heureuse, pleine de grâce, trône glorieux du roi éternel. Sois heureuse, pleine de grâce, qui nous as faits héritiers du royaume céleste. Sois heureuse, pleine de grâce, paradis spirituel. Sois heureuse, pleine de grâce, montagne mère de rochers. Sois heureuse, pleine de grâce, mystère de la vie. Sois heureuse, pleine de grâce, fleur immortelle. Sois heureuse, pleine de grâce, source de vie du genre humain. Sois heureuse, pleine de grâce, vers qui est venu le Saint-Esprit. Sois heureuse, pleine de grâce, évangélisée par la voix de l'archange. Sois heureuse, pleine de grâce, rayon de lumière épanouie. Sois heureuse, pleine de grâce, colombe pure toujours vierge. Sois heureuse, pleine de grâce, Marie, mère de Jésus. Sois heureuse, pleine de grâce, lys fleuri. Sois heureuse, pleine de grâce, cause de joie du genre humain. Sois heureuse, pleine de grâce, cause de gaîté de toute la terre. Sois heureuse, pleine de grâce, plus éblouissante que le soleil et plus pure que les étoiles. Sois heureuse, pleine de grâce, puits d'eau vive. Sois heureuse, pleine de grâce, toi qui rehausses le peuple. Sois heureuse, pleine de grâce, vierge sainte, imma-

բեալ՝ վասն մեր բարեխօս առ Աստուած ։ Ուրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ յաւիտեան ։ Ուրախ լեր բերկրեալ՝ ընկալուչ էին արարչութեան ։ Ուրախ լեր բերկրեալ՝
* A fol. 225 r° a. զարմանալիք սերովբէից ։ * Ուրախ լեր բերկրեալ՝ հիւսեալ պսակ եկեղեցւոյ ։ Ուրախ լեր բերկրեալ՝ փառաց աթոռ աստուածութեան ։ Ուրախ լեր բերկրեալ՝ քաղաք Աստուածոյ, ուրախացեալ գնացիւք գետոց ։ Օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Պաւսիլիպոսի ։

Այս երանելի վկայս Քրիստոսի Պաւսիլիպոս էր ի ժամանակս Ադրիանոսի ամբարշտի արքային եւ առաջի նորա խոստովանեցաւ զանունն Քրիստոսի. եւ հրամանաւ թագաւորին գան հարին զնա երեք հարիւր բիր եւ ետուն ի Պռիսկոս եպարքոսն Եւրոպիոյ ։ Եւ նա բազում ողոքանօք եւ սպառնալեօք ջանայր դարձուցանել զնա ի հաւատոյն Քրիստոսի եւ զոհել կռոցն, եւ ոչ կարաց. եւ հրամայեաց սրով հատանել զգլուխն ։

Կապեցին զսուրբն եւ տանէին ի տեղի կատարմանն, եւ նա ուժգին զձեռսն ցանցեալ խորտակեաց զկապանսն եւ փախեաւ աղօթելով առ Աստուած ։ Եւ զկնի ընթա-

9 խոստովանեցաւ] համարձակութեամբ *add.* B — զանունն Քրիստոսի] զՔրիստոս B || 14 ցանցեալ] ցանցեաց եւ B.

culée. Sois heureuse, pleine de grâce, toi qui es notre intercesseur auprès de Dieu. Sois heureuse, pleine de grâce, le Seigneur est avec toi éternellement. Sois heureuse, pleine de grâce, réceptacle du créateur de la création.
* A fol. 225 r° a. Sois heureuse, pleine de grâce, admiration des séraphins. * Sois heureuse, pleine de grâce, couronne tressée de l'église. Sois heureuse, pleine de grâce, trône de gloire de la divinité. Sois heureuse, pleine de grâce, ville de Dieu, embellie par le cours des fleuves. Tu es bénie entre toutes les femmes, et béni le fruit de tes entrailles.

En ce jour martyre de saint Pausilype.

Ce bienheureux martyr du Christ Pausilype vivait aux jours d'Adrien l'empereur impie; il confessa devant lui le nom du Christ. On le frappa, sur l'ordre de l'empereur, de trois cents coups de bâton, et on le remit entre les mains de Priscus, l'éparque d'Europe. Celui-ci essaya avec beaucoup de douces paroles et de menaces de le détourner de la foi au Christ et de le faire immoler aux idoles, mais il n'y parvint point; il ordonna alors de lui trancher la tête par le glaive.

On attacha le saint et on le conduisit à l'endroit de l'exécution; mais il secoua fortement les mains, rompit les liens et s'enfuit en priant Dieu. Les

ցան զօրականքն եւ դահճքն եւ նախ քան պհասանելն անկաւ յերկիր ի վերայ ծնկացն՝ աղաչեաց զԱստուած եւ աւանդեաց զհոգին իւր Ապրիլի Զ ։ Եւ եկեալ քրիստոնէիցն թաղեցին * պատուով ի տեղին որ կոչի Դոլան ։ * A fol. 225 r° b.

[B * Նախատօնակ է ամենասրբուհւոյ Աստուածածնին Աւետեաց ։ * B p. 150 a.

Զնախատօն Աւետեաց մարդկութեան Փրկչին մերոյ Քրիստոսի՝ որով ամենայն տիեզերք եւ բոլոր բնութիւնս մարդկային ի մեղաց՝ յարդարութիւն, եւ յանիծից՝ յօրհնութիւն, եւ ի մահուանէ՝ ի կեանս վերածաք, իրաւապէս այսօր կարապետեմք եւ աւետեմք, զճշմարիտ ուրախութիւն ընդ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ Աստուածածնին կուսին, ընդունիլ եւ պատրաստիլ զգուշութեամբ աստուածային այսմ կենսատու եւ աշխարհակեցոյց աւետեաց, որ հիմն եւ սկիզբն եղեւ ամենայն աստուածագործ տնտեսութեան կենարարին մերոյ Քրիստոսի ։

Զոր արժանապէս բարեբանելով գոչեսցուք ընդ Գաբրիելի աստուածածնողն նորա կուսի ձայն եթէ. Ուրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս, Մարիամ, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո Քրիստոս, զոր միշտ օրհնաբանեմք ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն ։

* Յայսմ աւուր կատարեցան յաշխարհին Պարսից հարիւր եւ քսան մարտիրոսք, որոց յետ բազում չարչարանաց զի ոչ երկիր պագին արեգական եւ հրոյ, այլ զՔրիստոս միայն խոստովանեցան ճշմարիտ Աստուած, սուր ի վերայ եղեալ հրամանաւ Թագա- * B p. 150 b.

2 Ապրիլի Զ] եւ Արեգի ԻԹ *add.* B.

soldats et les bourreaux coururent après lui, mais avant qu'ils l'eussent rejoint, il tomba à terre sur ses genoux, pria Dieu et rendit son âme, le 6 avril. Les chrétiens allèrent et l'enterrèrent * avec honneur à l'endroit appelé Dolan. * A fol. 255 r° b.

[B * Vigile de l'Annonciation de la très sainte mère de Dieu. * B p. 150 a.

Nous devançons et nous annonçons justement aujourd'hui la Vigile de l'incarnation de notre Rédempteur le Christ, jour où tout l'univers et tout le genre humain sont élevés du péché à la justice, de la malédiction à la bénédiction, de la mort à la vie, (unis dans) une vraie joie à la toute bénie notre Dame, la Vierge mère de Dieu, pour recevoir et accueillir avec soin cette Annonciation divine et vivifiante qui sauva le monde, et qui fut la base et le commencement de toute l'économie divine du Christ, notre vivificateur.

En la glorifiant, comme il sied, nous crierons avec Gabriel à la Vierge, Mère de Dieu : Sois heureuse, pleine de grâce, *le Seigneur est avec toi; tu es bénie entre les femmes, ô Marie, et béni le fruit de tes entrailles*, le Christ, que nous bénissons toujours avec le Père et le Saint-Esprit.

* En ce jour furent exécutés dans le pays des Perses cent vingt martyrs, qui, après avoir enduré de nombreuses tortures parce qu'ils n'adoraient pas le soleil et le feu, et parce qu'ils avaient confessé le Christ seul vrai Dieu, furent tués par le glaive selon l'ordre de Sapor, roi des Perses; le * B p. 150 b.

ւորին Պարսից Սաբուհոյ՝ կոտորեցին ի միում աւուր զհարիւր եւ քսան սուրբ վկայսն, որք գոհութեամբ կատարեցան վկայելով զՔրիստոս :

Ի սմին աւուր չարչարանք եւ վկայական կատարումն սուրբ մարտիրոսին եւ ճգնաւոր վկային Երմէու :

Սա՝ նախ ճգնաւորական ժուժկալութեամբ կրօնաւորեալ հաճոյացաւ Աստուծոյ խստամբերական կենաց մաքրութեամբ, եւ ապա յետոյ ի յանաստուած հեթանոսաց դառնագոյն կիրս չարչարանաց եւ զմահ վասն Քրիստոսի յօժարութեամբ կրելով կատարեցաւ մարտիրոսութեամբ՝ պսակելով յԱստուծոյ :]

Արեգի Լ. եւ Ապրիլի Է : Տօն է Գաբրիելի հրեշտակապետին որ եւ ողջունիւ աւետիս ամենասուրբ կուսին Մարիամու, եւ ամենայն երկնային զօրութեանցն որ են պահապան ազգի մարդկան, եւ սպասաւորք տնօրէնութեան Որդւոյն Աստուծոյ, եւ բարեխօսք եւ միջնորդք առ Աստուած վասն տօնողացս :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Բարսիմիոսի :

Այս երանելի վկայս Քրիստոսի Բարսիմիոս կրօնաւոր էր եւ հայր վանաց յերկրին Պարսից, ի քաղաքին Բեթղապատ, ի փառաւոր եւ մեծատուն ազգէ : Եւ մատնեցին

13 Վկայութիւն սրբոյն Բարսիմոսի] Վկայութիւն սրբոյն Փասիմոսի հօր, եւ եօթն աշակերտաց նորա B || 14 Բարսիմիոս] Փասիմոս B || 15 Բեթղապատ] Փիթլապատ B.

même jour, ces cent vingt martyrs saints moururent joyeusement en martyrs du Christ.

En ce même jour tortures et fin en martyre du saint martyr et ascète Hermès.

Celui-ci, après qu'il se fut d'abord rendu agréable à Dieu comme religieux par une endurance ascétique et une vie très austère et pure, endura ensuite volontiers (des mains) des païens athées les plus cruelles tortures et la mort pour le Christ; il mourut par le martyre et fut couronné par Dieu.]

30 AREG, 7 **Avril**.

Fête de l'archange Gabriel dont la salutation donna la bonne nouvelle à la très sainte Vierge Marie et (fête) de toutes les puissances célestes, qui sont les gardiens du genre humain, les ministres de l'Économie du Fils de Dieu, des intercesseurs et des intermédiaires auprès de Dieu pour ceux qui célèbrent leur fête.

En ce jour martyre de sainte Barsimius[1].

Barsimius (*Barsimios*) le bienheureux martyr du Christ était religieux, prieur d'un couvent dans la terre des Perses, dans la ville de Beth-Lapat; il était

1. Dans *Syn. G.* Βάδιμος.

զնա առ Սաբուրիոս հրապաշտ արքայն Պարսից, եւ տարան զնա առաջի եօթն աշակերտօքն, եւ ամենեւին ոչ հաւանեցան պաշտել զարեգակն եւ զհուր, արկին զնոսա ի բանդ չորս ամիս ։

Եւ կալան այր մի քրիստոնեայ որոյ անուն էր Ներսան, եւ նորա երկուցեալ ի տանջանացն ուրացաւ զՔրիստոս, եւ հաւատայ յանաստուած մոլորութիւնն Պարսից, նմա հրամայեցին զի սպանցէ զսուրբ հայրն Բարսիմոս ։ Եւ տեսեալ զնա երանելին այլագունեալ յահէն Քրիստոսի եւ զձեռսն ոչ կարէր շարժել, աւաղ եւ եղուկ բարբառեցաւ նմա, եւ յիշեցոյց նմա զահեղ զատաստանն Աստուծոյ, եւ զհատուցումն ըստ գործոց ։

Եւ * թշուառականն այն դողութեամբ չորեք անգամ եհար սրով զսուրբն. եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Ապրիլի Է. եւ թաղեցաւ ի քրիստոնէից ։ Իսկ Ներսան սպանողն ի չարիս անկեալ ըստ մեղաց իւրոց եւ սատակեցաւ սրով ։ * A fol. 225 v° a.

[B * Տօն է Աւետեաց ամենասրբուհւոյ Աստուածածնին միշտ կուսին Մարիամու տիրուհւոյն մերոյ, յորժամ ասաց նմա Գաբրիէլ. Ուրախ լեր բերկրեալ. եւ լցեալ * B p. 151 a.

1 Սաբուրիոս հրապաշտ] Շապուհ Սաբուրիոս B || 5 մոլորութիւն] դաւանութիւն B || 6 Բարսիմոս] Բասիմոս B || 11 Աստուած] Արեգի Լ եւ *add.* B — քրիստոնէից] սպանին եւ զեօթն աշակերտս սրբոյն տոկալի տանջանօք, վասն զի ոչ ուրացան զՔրիստոս եւ ոչ երկիր պագին արեգական եւ հրոյ *add.* B.

d'une glorieuse et riche famille. Or on le dénonça à Sapor (*Sapourios*), le roi des Perses, adorateur du feu, et on le fit comparaître avec ses sept élèves. Mais ils n'acceptèrent aucunement d'adorer le soleil et le feu ; et on les jeta en prison pendant quatre mois.

On avait saisi un homme chrétien dont le nom était Nersas (*Nirsan*) et qui, ayant eu peur des tortures, avait renié le Christ et cru à l'erreur athée des Perses. C'est à lui qu'on ordonna de tuer le saint père Barsimius (*Barsimos*). Le bienheureux, le voyant pâlir par crainte du Christ et ne pouvant remuer ses mains, lui témoigna sa commisération et sa peine et lui rappela le terrible jugement de Dieu et la rétribution selon les œuvres.

Mais le * malheureux frappa le saint du glaive, tout tremblant, par quatre fois, et c'est ainsi que [Barsimius] rendit son âme à Dieu, le 7 avril. Il fut enterré par les chrétiens. Quant à Nersas le meurtrier, il tomba dans le malheur à cause de ses péchés et fut tué par l'épée. * A fol. v° a.

[B * Fête de l'annonciation de la très sainte Mère de Dieu, toujours vierge, Marie, notre Dame, lorsque Gabriel lui dit : Sois heureuse, pleine de * B p. 151 a

սուրբ Հոգւոյն զմիածին Որդին եւ զԲանն Աստուծոյ, զՏէրն եւ զԱստուածն մեր զՅիսուս Քրիստոս ։

Յորժամ եկեալ առ նա հրեշտակապետն Գաբրիէլ աւետարանեաց նմա զէջումն եւ զմարմնաւորութիւն միածին Որդւոյն եւ Բանին Հօր ի նմանէ, որ էջն յերկնից, եւ ինննամսեայ յղութեամբ մարդացեալ ճշմարտապէս որ իսկապէսն է Աստուած եւ ստուգապէս ճանապարհորդելով ընդ բնութիւնս մեր՝ յարգանդէ եւ յորովայնէ սկսաւ ։

Ուստի ցանկութեամբ երկնելոյս եւ մեղօք ծնանելոյս լինելն է մահկանացու եւ մեռանել, զոր սրբեալ կեանքն եւ արդարութիւն՝ բնակեցաւ ի մեզ, ոչ ամօթ համարելով զբնակելն յիւրաստեղծ ամբիծ՝ եւ մաքուր կուսականն արգանդի՝ վասն ամենեցուն մեր ։ Որ երբեմն վասն Աբրահամու ի խուղն, եւ վասն Մովսեսի ի նուաստ մորենին հրով երեւեալ, նոյն ի կուսական որովայնին հաճեցաւ տաղաւարել ։ Վասն որոյ եւ հրեշտակապետն յառաջէր պատրաստել եւ հարսնացուցանել զկոյսն գալստեան սուրբ Հոգւոյն՝ եւ բնակութեան Որդւոյն միածնի ։

Այնմ՝ զոր թէպէտ ոչ բովանդակէր երկին եւ երկիր՝ եւ ոչ տանէր իսրայէլեանն տաճար, սակայն ի մարդում բնակի եւ տարեալ լինի, որպէս ասէր ինքն մարգարէիւն. Որպիսի տուն շինեցէք ինձ եւ կամ զինչ տեղի հանգստեան իմոյ. երկինք աթոռ իմ

grâce, et qu'elle conçut, par le Saint-Esprit, le Fils unique et le Verbe de Dieu, notre Seigneur et Dieu Jésus-Christ.

Lorsque vint à elle l'archange Gabriel, il lui annonça la descente et l'incarnation en elle du Fils unique et Verbe du Père, qui descendit du ciel et par une gestation de neuf mois est devenu vraiment homme, Lui qui est essentiellement, Dieu et qui suivit réellement le cours de notre nature dans les entrailles et le sein.

Quant à nous, qui avons été conçus par la concupiscence et qui sommes nés avec le péché, notre essence est d'être mortels et de mourir, tandis que la vie sanctifiée et la justice, est venue vivre parmi nous, ne considérant pas comme une honte le fait d'habiter dans le sein pur et sans tache de la Vierge, qu'Il avait créée lui-même, pour nous tous. Lui qui jadis apparut dans la hutte à Abraham et dans l'humble buisson ardent à Moïse, a daigné s'abriter dans le sein virginal. C'est pourquoi l'archange précéda pour fiancer la Vierge et la préparer à la venue du Saint-Esprit et à l'habitation du Fils unique.

Celui que ne pouvaient contenir le ciel et la terre, ni même le temple d'Israël, vint pourtant habiter dans l'homme et est contenu par lui, ainsi que le disait lui-même le prophète : *Quelle demeure me bâtirez-vous, ou quel sera le lieu de mon repos*[1] *?* Le ciel est mon trône et la terre l'escabeau de mes

1. Isaïe, LXVI, 1.

են եւ երկիր պատուանդան ոտից. այլ ես յո՞ հայեցայց՝ եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որ դողան ի բանից իմոց, եւ եթէ. Բնակեցայց ի նոսա՝ եւ գնացից ի նոսա :

Ըստ այսմիկ տալս խոստման եւ գուշակութեան՝ իջեալ բնակի ի կուսական արգանդ, եւ սկիզբն առնէ լինել անտի գնացից եւ ճանապարհորդելոյ ի մեզ՝ ըստ տեսլեանն * Եզեկիելի. Ընդ դուռն որ փակեալ էր՝ անշաղախ կուսութեամբ մտեալ՝ * B p. 151 b.
ել առ մեզ Աստուածն Իսրայէլի, ել եւ ծննդեամբն, եւ կուսական դուռն փակեալ մնաց : Ըստ Դաւթի. Էջ որպէս ցօղ ի վերայ գեղման, որ զմերկութիւնն Ադամայ ծածկեաց մարմնով իւրով :

Հրեշտակապետն Գաբրիէլ աւետելով կուսին եւ ծնողին Աստուծոյ Մարիամու զի մի յանկարծակի տեսանելով զյղութիւն արգանդի խռովեսցի կամ անարժան ինչ ածցէ զմտաւ, կամ ի ճանաչելն զՅովսեփայ մտացն խռովութիւն, եւ զշշուկ ճանաչողացն զյղութիւն արգանդին անձին ինչ առնիցէ, կամ տրտմութեամբ լիցի հեղձամղձուկ :

Վասն որոյ գայ առ մայրն կենաց կոյսն երկրորդ, նախընթաց Աստուծոյ՝ աւետող հրեշտակն՝ ազդել զխորհուրդն եւ մերձեցուցանել առ Աստուած՝ ընդդէմ կարապետի բանսարկուին անձին խաբողի, որ առ կոյսն առաջին՝ զորոշելն յԱստուծոյ բանսարկէր : Վասն որոյ ընդդէմ տրտմութեան անիծիցն՝ որով ծնանել նախամայրն պատժ

pieds. Sur qui porterai-je mes regards, sinon sur ceux qui sont doux et humbles et ceux qui tremblent à ma parole. J'habiterai en eux et je circulerai parmi eux.

D'après cette promesse et prédication, Il est descendu pour habiter dans les entrailles virginales et par là Il commence à être ici, à aller et à circuler * B p. 151 b.
parmi nous, selon la vision * d'Ézéchiel, en pénétrant par la porte, qui était fermée, d'une virginité immaculée. Il en est sorti parmi nous le Dieu d'Israël, Il en est sorti par la naissance, et la porte virginale est demeurée fermée. Selon David, il est descendu comme la rosée sur la toison et il a couvert de son corps la nudité d'Adam.

L'archange Gabriel annonça à la Vierge et à la Mère de Dieu, Marie, pour qu'en apercevant tout d'un coup la conception de son sein, elle ne fût pas troublée, ou qu'en apercevant le trouble dans l'esprit de Joseph et les murmures de ceux qui se seraient aperçus de la grossesse de son sein, elle n'eût pas la pensée indigne de se tuer ou de s'étouffer par tristesse.

C'est pourquoi l'ange annonciateur vint vers la Mère de la vie, la deuxième vierge, en précurseur de Dieu, pour lui inspirer le mystère et la rapprocher de Dieu, à l'opposé du précurseur du démon qui a trompé la première vierge et qui méditait de la séparer de Dieu. C'est pourquoi, à l'encontre de la malédiction de tristesse que la première mère reçut pour l'enfantement,

ընկալաւ, բերէ սմա ուրախութեան աւետիս՝ առ ի բառնալ զվշտալի երկունսն. զի չէր պարտ բարձողին անիծից՝ ի ներքոյ պատականքի տրտմութեանն ծնանել :

Վասն որոյ յանդի նզովիցն՝ օրհնի աստ զաւակն Աբրահամու Մարիամ, ըստ խոստմանն Աստուծոյ առ նախահայրն եթէ. Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի : Զի ասաց նմա հրեշտակն Աստուծոյ. Ուրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս : Որով զօրհնիչն աշխարհի՝ օրհնեալն ի կանայս ծնանելով, օրհնեցաք ի նոյն օրհնութեան զաւակն Աբրահամու՝ ամենայն հեթանոսք յանիծից ծննդեանն տրտմական երկանց, եւ ի նզովից մահուն ապականարարի, եւ ի դժոխոցն դատապարտութենէ, եւ ազատեցաք ի ծառայելոյ մահուն եւ մեղաց՝ եւ յիշխանութենէ բանսարկուին :

* B p. 152 a. * Վասն որոյ օրհնեմք զաւետարերեալ ծնօղն, եւ երկրպագեմք աւետարանեալ միածնին զալստեանն՝ խոնարհական եւ որպէս ցօղ իջմանն, որ՝ որպէս ճշմարիտ մարդ ինն ամսեայ՝ յանձն էառ յարգանդի բնակիլ յղանալ եւ ծնանիլ ի փրկութիւն մեր :

Արդ այսուհետեւ ճառեսցուք զնախնի հարցն մերոց պատմութիւնս, զոր համառօտաբար եղեալ են ի գիրս՝ յաղագս տօնի աւետեաց Աստուածածնին կուսին Մարիամու :

(l'archange) lui apporta l'heureuse nouvelle qu'elle serait délivrée de l'enfantement pénible, car il ne seyait pas à celui qui ôta la malédiction de naître sous la sentence de la tristesse.

C'est pourquoi, à l'encontre de cette malédiction, Marie, rejeton d'Abraham, reçoit ici la bénédiction, d'après la promesse de Dieu au premier père : « *En ta postérité seront bénies toutes les nations de la terre*[1]. » Car l'ange de Dieu lui dit : *Sois heureuse, pleine de grâce, le Seigneur est avec toi; tu es bénie entre les femmes*[2]. » Celui qui a béni la terre étant né de la femme bénie entre les femmes, nous avons été délivrés, par cette même bénédiction de la fille d'Abraham, (nous) et tous les gentils, de la malédiction de la naissance et des douleurs attristantes de l'enfantement ainsi que de la malédiction de la mort corruptrice, de la condamnation de l'enfer et nous avons été délivrés de l'esclavage de la mort et du péché et de la domination du démon.

* B p. 152 a. * C'est pourquoi nous bénissons la mère qui a reçu l'annonciation et nous adorons la venue du Fils unique qui a été annoncée, venue humble *comme la rosée sur la toison*[3], lequel comme homme véritable accepta de demeurer pendant neuf mois dans le sein, d'être conçu et de naître pour notre salut.

Maintenant nous allons décrire les récits de nos pères anciens, qui se trouvent recueillis brièvement dans les livres, au sujet de la fête de l'Annonciation de la Mère de Dieu, la vierge Marie.

1. Genèse, XXII, 18. — 2. Luc, I, 28. — 3. Ps. LXXI, 6.

Ամենասրբուհին Մարիամ մայր Տեառն՝ դուստր էր Յովակիմայ արդարոյ եւ Աննայի սրբուհւոյ, աւետեօք հրեշտակի յղացեալ յամուլ արգանդէ եւ ծնեալ օրինօք : Եւ յետ երից ամաց տարան զնա ծնողքն իւր ի տաճարն Տեառն՝ եւ ետուն զնա նուէրս Աստուծոյ. եւ սնաւ ի տաճարի Տեառն սրբութեամբ ընդ պարկեշտ կուսանսն ամս մետասան : Եւ ի լինել չորեքտասան ամաց ըստ տեսչութեանն Աստուծոյ խօսեցեալ առն արդարոյ Յովսեփայ հիւսան ի տանէ Դաւթի, եւ նորա առեալ տարաւ ի տուն իւր ի Նազարէթ, եւ պահէր զնա սրբութեամբ :

Եւ կացեալ ի տանն Յովսեփայ ամիսս երիս՝ երեւեցաւ նմա Գաբրիէլ հրեշտակապետն եւ ասէ ցնա. Ուրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս : Եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ խորհէր ի մտի իւրում թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս : Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի երկնչիր Մարիամ զի գտեր շնորհս Աստուծոյ. եւ ահա յղասջիր եւ ծնցիս որդի եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս, եւ նա եղիցի մեծ, եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր իւրոյ, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան, եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի : Եւ ասէ Մարիամ. Զիարդ լինիցի ինձ այդ՝ քանզի զայր ոչ գիտեմ : Եւ ասէ ցնա հրեշտակն. Հոգի սուրբ եկեսցէ * ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի * B p. 152 b.
լիցի ի վերայ քո, զի որ ծնանելոցն է ի քէն սուրբ է եւ որդի Աստուծոյ կոչեսցի : Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ եւ նա յղի է ի ծերութեան իւրում. եւ այս վեցերորդ

La très sainte Marie, Mère du Seigneur, était la fille du juste Joachim et de sainte Anne, conçue par l'annonciation de l'ange dans le sein stérile et née selon les lois (de la nature). Trois ans après, ses parents la conduisirent au temple du Seigneur et l'offrirent en offrande à Dieu. Elle grandit dans le temple du Seigneur saintement avec d'autres vierges pures pendant onze ans. Lorsqu'elle eut quatorze ans, par la providence de Dieu, elle fut fiancée au juste Joseph, menuisier, de la maison de David, lequel la conduisit à sa maison à Nazareth et la garda saintement.

Elle resta trois mois dans la maison de Joseph, puis l'archange Gabriel lui apparut et lui dit : « *Sois heureuse, pleine de grâce, le Seigneur est avec toi ; tu es bénie entre les femmes.* » *Elle fut troublée par ces paroles et se demandait quelle était cette salutation. L'ange lui dit :* « *Ne crains point, Marie, car tu as trouvé grâce devant Dieu. Voici que tu concevras, en ton sein, et que tu enfanteras un fils et tu lui donneras le nom de Jésus. Il sera grand; on l'appellera le Fils du Très-Haut; le Seigneur Dieu lui donnera le trône de David, son père; il régnera éternellement sur la maison de Jacob et son règne n'aura point de fin.* » *Marie répondit :* « *Comment cela sera-t-il pour moi, puisque je ne connais point d'homme?* » *L'ange lui dit :* « *L'Esprit-Saint viendra * sur toi, et la vertu du Très-* * B p. 152 b.
Haut sera une ombre au-dessus de toi. C'est pourquoi l'être saint qui naîtra de toi sera appelé Fils de Dieu. Et voici que déjà Élisabeth, ta parente, a conçu,

ամիս է նորա որ ամուլն կոչեցեալ էր զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան ։ Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. եւ գնաց ի նմանէ հրեշտակն ։

Եւ սուրբ կոյսն առժամայն եղեւ մարմնարան բանին Աստուծոյ՝ անթառամ մաքրութեամբ միշտ կուսութեան ։

Այսուհետեւ մեք հաւատացեալքս ուրախացեալք ընդ սրբոյ կուսին յաւուր փրկութեան մերոյ՝ որ ազատեցաք յանիծից դատապարտութեան աւետեօք կուսին՝ գոչեսցուք եւ ասասցուք. Ուրախ լեր բերկրեալ՝ աստուածաստեղծ կոյս Մարիամ, բարձող անիծից նախամօրն, գարուն հոգեւոր, դատապարտութեանն լուծիչ, երկանցն Եւայի ապատիչ, շառաւիղ փրկութեան Ադամայ ։ Ուրախ լեր բերկրեալ՝ էակցին հօր բնակարան, ընդհանուր ազգի մարդկան փրկող, թագաւորին յաւիտենից աթոռ փառաց, ժառանգեցուցիչ երկնաւոր դրախտին, իմանալի դրախտ բանաւոր, լեառն վիմածին ։ Ուրախ լեր բերկրեալ՝ խորհուրդ կենաց, ծաղիկ անթառամ, կենդանատու մարդկան ազգի, հոգին սուրբ առ քեզ եկեալ, ձայնիւ հրեշտակապետին աւետաւորեալ, ղեկավար ճարտար՝ անցեալ ընդ ծով կենցաղոյս ։ Ուրախ լեր բերկրեալ՝ ճառագայթ լուսածագ, մաքուր աղաւնի միշտ կոյս, Յիսուսածին Մարիամ, շուշան ծաղկեալ, ուրախութեան պատճառ

elle aussi, un fils dans sa vieillesse, et c'est actuellement son sixième mois, à elle que l'on appelle stérile : car rien n'est impossible à Dieu. » Marie dit alors : « Voici la servante du Seigneur, qu'il me soit fait selon ta parole. » Et l'ange la quitta[1].

La sainte Vierge devint aussitôt le réceptacle du Verbe de Dieu, par sa virginité toujours pure et inflétrissable.

Réjouissons-nous donc, nous, croyants, avec la sainte Vierge en ce jour de notre salut, pour avoir été délivrés de la malédiction et de la condamnation par l'annonciation de la Vierge, crions et disons : Sois heureuse, pleine de grâce, Vierge Marie créée par Dieu, toi qui as ôté la malédiction de la première mère, printemps spirituel, toi qui as effacé la malédiction, qui as détruit les douleurs d'enfantement d'Ève, rejeton de salut d'Adam. Sois heureuse, pleine de grâce, habitation de Celui qui coexiste avec le Père, rédemptrice du genre humain universel, trône glorieux du roi éternel, qui nous as faits héritiers du royaume céleste, paradis spirituel, montagne mère de rochers. Sois heureuse, pleine de grâce, mystère de la vie, fleur immortelle, source de vie du genre humain, toi vers qui est venu le Saint-Esprit, évangélisée par la voix de l'archange; timonier habile qui as traversé la mer de l'existence. Sois heureuse, pleine de grâce, rayon de lumière éclatante, colombe pure toujours vierge, Marie, mère de Jésus, lys fleuri, cause de joie du genre humain, cause

1. Luc, I, 28-38.

մարդկան ազգի, չորեքծագեան աշխարհի զուարթացուցիչ ։ Ուրախ լեր բերկրեալ՝ պայծառ քան զարեգակն եւ մաքուր քան զաստեղս, ջրհոր կենդանի ջրոյն, ռամկաց բարձրացուցիչ, * սուրբ կոյս անհարսնացեալ, վասն մեր բարեխօսեա առ Աստուած, Տէր ընդ քեզ յաւիտեան ։ Ուրախ լեր բերկրեալ՝ ընկալարան Էին արարչութեան, զանկալեղ սերովբէից, հիւսեալ պսակ եկեղեցւոյ, փառաց աթոռ աստուածութեանն բնակարան, քաղաք Աստուծոյ ուրախացեալ դնացիւք գետոց ։ Ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ, ուստի եղեւ սկիզբն ելից մահու՝ անսասան կեանքն զմուտ կենդանութեան ճարտարապետեցին ։ Ի ձեռն կնոջ հոսեցին ի մեզ չարիքն, ի ձեռն կնոջ աղբիւրանան ի մեզ լաւագոյնքն ։ Ուրախ լեր բերկրեալ՝ այրի եղելոյ աշխարհիս անշաղախ փեսայածին ։ Ուրախ լեր բերկրեալ՝ որ ի քում արգանդի զառաջնոյ կնոջն ընկղմեցեր զմահ ։ Ուրախ լեր բերկրեալ շնչաւոր տաճար Աստուծոյ ։ Ուրախ լեր բերկրեալ՝ երկնի եւ երկրի հանդիպամէտ բնակարան ։ Ուրախ լեր բերկրեալ՝ անտանելի բնութեանն ընդարձակատար տեղի ։ * B p. 153 a.

Օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո, առ ծնեալդ ի քէն Քրիստոս միշտ բարեխօսեա վասն տօնողաց քոց, որք տօնեմք զօր աւետեաց քոց, փառաւորելով զսուրբ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Որ ծաղկեցար ի սուրբ կուսէն Փրկիչ մարդկան ազգի, Տէր եւ Որդի միածին լոյս

de gaîté pour les quatre coins de la terre. Sois heureuse, pleine de grâce, toi qui es plus éblouissante que le soleil et plus pure que les étoiles, puits d'eau vive, toi qui rehausses le peuple, * vierge sainte, immaculée, intercède pour nous auprès de Dieu, le Seigneur est avec toi éternellement. Sois heureuse, pleine de grâce, réceptacle du créateur de la création, admiration des séraphins, couronne tressée de l'église, trône glorieux de la divinité, ville de Dieu embellie par le cours de fleuves. Sois heureuse, pleine de grâce, c'est de toi que, la mort prenant fin, l'existence a institué le commencement de la vie. Les mauvaises choses nous ont inondés par les mains d'une femme, et par les mains d'une femme les meilleures choses s'écoulent près de nous. Sois heureuse, pleine de grâce, immaculée, qui as mis au monde le fiancé de la terre devenue veuve. Sois heureuse, pleine de grâce, qui as dans ton sein englouti la mort de la première femme. Sois heureuse, pleine de grâce, temple animé de Dieu. Sois heureuse, pleine de grâce, habitation convergente du ciel et de la terre. Sois heureuse, pleine de grâce, lieu immense d'une nature qui ne pouvait être contenue. * B p. 153 a.

Tu es bénie entre les femmes et béni le fruit de tes entrailles; intercède toujours auprès du Christ, qui est né de toi, en faveur de nous qui te fêtons, qui fêtons le jour de ton annonciation en glorifiant la sainte Trinité dans les siècles des siècles, amen.

Toi, qui as fleuri de la sainte Vierge, Sauveur du genre humain, Seigneur et Fils unique, lumière du monde, conserve avec bienveillance ta précieuse

աշխարհի, զգնեալ արեամբ քո ստացուական եկեղեցի պահեա՛ բարեգութ՝ միաբան սիրով անշարժելի, բարեխօսութեամբ մօր քո անարատի, փառաւորեալ տիրուհւոյն մերոյ սուրբ Աստուածածնի յաւիտեանս, ամէն :

* B p. 153 b. * Յայսմ աւուր չարչարանք սուրբ եւ փառաւորեալ վկայիցն Քրիստոսի՝ սրբոյ սարկաւագին Ռուփինոս սքանչելագործի, եւ Ակիլինիոսի սրբուհւոյ, եւ երկու հարիւր մարտիրոսացն եւ ընկերաց նոցա :

Զսոսա բազում եւ այլ եւ այլ տանջանօք ի մեքենայս քերանաց, յօդաթափութեան, եւ եռացեալ տապակաց հրոյ եւ սղոցելոյ չարչարեալ՝ ստիպեցին զոհել կռոց. եւ սուրբքն զՔրիստոս խոստովանելով Աստուած ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն՝ անարգէին զկուռսն, զմարգարէին ասելով. Կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են ձեռագործք
* B p. 154 a. մարդկան : Եւ զայրացեալ դատաւորն սրով կոտորեաց զամենեսեան * վասն հաւատոյն Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն :

Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պարոն Ստեփանէ որդի երկրորդ Լեւոն թագաւորի, ի տղայական ծաղկեալ հասակի. եւ կայ ի Դրազարկն :]

église que tu as rachetée par ton sang, en la rendant inébranlable dans l'amour mutuel, par l'intercession de Ta mère immaculée, notre glorieuse Dame, la sainte Mère de Dieu éternellement, amen.

* B p. 153 b. * En ce jour passion des saints et glorieux martyrs du Christ, le saint diacre Roufinos, le thaumaturge, et sainte Aquilina (*Akilinios*), avec deux cents martyrs et leurs compagnons.

On les pressa d'immoler aux idoles par des tortures nombreuses et variées, (en les mettant) sous des presses, en leur brisant les articulations, en les jetant dans des poêles bouillantes et en les sciant; mais les saints du Christ, en confessant Dieu avec le Père et le Saint-Esprit, méprisèrent les idoles, en citant les paroles du prophète : *Les idoles des païens en or et en argent sont*
* B p. 154 a. *l'ouvrage de la main des hommes* [1]. Le juge irrité les fit tous * tuer par le glaive pour la foi au Christ, à qui gloire éternellement, amen.

En ce jour reposa dans le Christ le baron Stéphané, fils du roi Léon II, à l'âge fleuri de l'enfance, et il gît à Drazark.]

1. Ps. cxiii,4.

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE

TER ISRAEL

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le Dr G. BAYAN

IX

MOIS DE AHÉKAN

A = Paris, Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 225 verso à fol. 253.

B = Édition officielle du Synaxaire arménien de
Ter Israël de Constantinople, 1834 :

Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի ։ Կոստանդնուպօլիս, 1834 ։

L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

Ահկի Ա. եւ Ապրիլի Ը : Վկայութիւն Սահակայ եւ Համազասպայ նախարարաց Արծրունեաց :

Այս մեծատոհմ եւ փառաւոր իշխանքս Համազասպ եւ Սահակ էին ի մեծ ազգէն Արծրունեաց : Համազասպ մարզպան էր Հայոց : Եւ իշխանն Իսմայելացւոց լուաւ եթէ ի Յունս կամին ձեռն տալ զօրքն Հայոց եւ առաքեաց զԱփշինն, զորդին Աբուսաճի, զի նենգութեամբ կալցի զիշխանսն : Եւ նորա եկեալ յաշխարհն Աղուանից, ի քաղաքն Պարտաւ, կոչեաց առ ինքն զերիս եղբարսն՝ զՍահակ, զՀամազասպ եւ զՄեհրուժան. եւ նոքա գնացին միամտութեամբ՝ զի ոչ գիտէին զանձանց ինչ : Եւ նա զառաջինն սիրով մեծարեաց զնոսա, եւ ապա ի կապանս արկ զնոսա եւ նեղէր ուրանալ զՔրիստոս. իսկ նոցա հաստատուն կացեալ ի հաւատս յայտնապէս խոստովանեցան զՔրիստոս ճշմարիտ Աստուած եւ Որդի Աստուծոյ : Եւ նա խոստանայր նոցա մեծութիւնս եւ իշխանութիւնս յարքունուստ քան զոր * ունէինն : * A fol. 225 v° b.

Իսկ Մեհրուժան ոչ կարացեալ տանել նեղութեանն՝ ուրացաւ զհաւատն իւր, եւ

1 Վկայութիւն] սրբոյն *add.* B — նախարարաց] տանն *add.* B || 2 մեծատոհմ] մեծ տոհմ B || 2 Համազասպ . . . Հայոց *om.* B || 4 զօրքն Հայոց] Հայք B || 9-10 խոստովանեցան] խոստովանէին B || 12 իւր *om.* B.

1 AHÉKAN, 8 Avril.

Martyre de Sahak et de Hamasaspe, les satrapes Ardzrounis.

Ces glorieux princes, de grande lignée, Hamasaspe et Sahak, étaient de la grande famille des Ardzrounis. Hamasaspe était gouverneur de l'Arménie. Le prince des Ismaélites, ayant appris que les troupes arméniennes voulaient venir en aide aux Grecs, envoya Apchine, le fils d'Abousadj, pour s'emparer des princes par trahison. Celui-ci arriva au pays des Albaniens, à la ville de Partav, fit mander les trois frères Sahak, Hamasaspe et Mehroujan, qui s'y rendirent de bonne foi, n'ayant rien à se reprocher. Il leur fit tout d'abord un accueil amical, puis les fit mettre aux chaînes et cherchait à les contraindre à renier le Christ, mais ils restèrent fermes dans la foi et confessèrent manifestement le Christ vrai Dieu et fils de Dieu. Il leur promettait, au nom du gouvernement, des honneurs et des dignités plus élevées que celles * qu'ils occupaient. * A fol. 225 v° b.

En fait, Mehroujan, n'ayant pu résister au supplice, renia sa foi, et ayant obtenu (du prince) une haute situation, retourna au pays d'Arménie. Gri-

առեալ ի նմանէ մեծ իշխանութիւն եկն յերկիրն Հայոց : Եւ լուեալ Գրիգորի իշխանին Մամիկոնէից եթէ ուրացաւ զՔրիստոս ել ընդ առաջ նորա եւ սպան զնա :

Իսկ սուրբքն Համազասպ եւ Սահակ բազում չարչարանս կրեալ վասն անուանն Քրիստոսի կատարեցան սրով, վկայականն արժանացեալ շնորհի եւ պսակի, նախ Սահակ եւ ապա սուրբն Համազասպ յԱպրիլի Ը եւ Ահկի Ա :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն որ ի գերութեանն Պարսից կատարեցան, եւ Աբդիշոյի :

Հրապաշտ արքայն Պարսից Սաբուրիոս՝ յիսուն եւ երեք ամ թագաւորեաց. գնաց պատերազմաւ ի սահմանս Հոռոմոց եւ առ զԲիւզանդի քաղաքն, եւ զամենայն քաջ պատերազմող արս սրով կոտորեաց : Եւ առ ի գերութիւն հազար անձն, քահանայս, կրօնաւորս, եւ աշխարհականս արս եւ կանայս եւ մանկունս. եւ էին ամենեքեան քրիստոնեայք, եւ ի ճանապարհին սաղմոսիւք զաղօթս իւրեանց կատարէին : Եւ տեսեալ մոգպետն Ատէլփարաս երթեալ չարախօսեաց զքրիստոնեայսն առ Սաբուրիոս եթէ Անիծանեն եւ անարգեն զմեզ եւ զհաւատս մեր :

* A fol. 226 r° a. Յայնժամ առաքեաց արքայն նենգութեամբ առ * գերեվարսն, եւ առին ի պատուաւոր մարդկանէն հարիւր անձն, եւ տարան ի լեառն որ կոչի Ժրաթ, յորում է գեօղն

4 շնորհի եւ *om.* B || 9 պատերազմող արս] պատերազմողս B.

gor, prince des Mamikoniens, ayant appris qu'il avait renié le Christ, marcha contre lui et le tua.

Quant aux saints Hamasaspe et Sahak, après avoir enduré bien des supplices pour le nom du Christ, ils furent martyrisés par le glaive, et se rendirent dignes de la grâce et de la couronne des martyrs, d'abord Sahak et ensuite Hamasaspe, le 8 avril, le 1er ahékan.

En ce jour martyre des saints qui furent exécutés pendant la captivité en Perse, et (martyre) d'Abdicho.

Le roi des Perses Sapourios, adorateur du feu, régna cinquante-trois ans; il partit en guerre contre les provinces grecques, s'empara de la ville de Byzance et y passa au fil de l'épée tous les vaillants hommes de guerre. Il emmena en captivité mille personnes, des prêtres, des religieux et des civils avec leurs femmes et enfants. Ils étaient tous chrétiens et, chemin faisant, accomplissaient leurs prières en psalmodiant. Ce qu'ayant vu, l'Archimage Atelpharas s'en vint accuser les chrétiens auprès de Sapourios, disant : « Ils nous maudissent et nous méprisent, nous et notre foi. »

* A fol. 226 r° a. Alors le roi envoya traîtreusement (des ordres) à ceux * qui les emmenaient en captivité. Ces derniers choisirent cent personnes parmi les gens les plus honorables et les conduisirent à la montagne Jérath, où se trouve le

որ անուանի Այգի, եւ բռնադատեցին զնոսա երկիր պագանել արեգական եւ հրոյ, եւ նոքա ոչ հաւանեցան այլ մանաւանդ անարգեցին զնեղիչսն ։ Եւ ի նոցանէ եօթանասուն եւ հինգ ոգի սպանին սրով. եւ քսան եւ հինգ երկեան եւ ուրացան զՔրիստոս զկեանքն իւրեանց ։

Եւ մինն յեօթանասուն եւ հնգիցն ոչ մեռաւ, որոյ անուն էր Աբդիշոյ, զի ոչ ազդոյ հարաւ սուրն ի պարանոցն, եւ յերեկոյն յարուցեալ գնաց ի գեօղն. եւ քահանայ մին դեղ առնէր հարուածին ։ Եւ երթեալ ի տեղին ուր կոտորեցան սուրբքն՝ ժողովեցին զնշխարսն եւ եդին յայր մի ։ Եւ Աբդիշոյ բնակեցաւ յայրն յայն ընդ սրբոցն ճգնութեամբ մեծաւ, եւ քարոզէր զՔրիստոս անհաւատից ։

Եւ էին հովիւք ի լերինն, եւ տեսանէին ի գիշերի երիս գունդս հրեշտակաց շուրջ զայրիւն որ փառաբանութեամբ ելանէին եւ իջանէին յերկնից, հաւատացին յԱստուած եւ եղեն քրիստոնեայք ։ Եւ այլք բազումք որք լուան ի հովուացն զքանչելիսն՝ դարձան ի Քրիստոս։

Մի ոմն ամբարիշտ երթեալ առ երանելին Աբդիշոյ պատուիրէր նմա զի մի քարոզեսցէ զՔրիստոս. եւ յորժամ ոչ կարաց խափանել՝ ետ ատն միում պարսկի յիսուն դրամ, եւ նորա առեալ զարծաթն գնաց յայրն եւ որպէս * զոչխար եղեն * A fol. 226 r° b.

2 անարգեցին] անարգէին B || 3 ոգի] այր B.

village appelé Aïghi, et les obligèrent à adorer le soleil et le feu. Mais ceux-là non seulement n'y consentirent point, mais, bien plus, méprisèrent ceux qui leur faisaient violence. Soixante-quinze parmi eux furent tués par l'épée, les vingt-cinq autres eurent peur et renièrent le Christ, leur vie.

L'un des soixante-quinze, dont le nom était Abdicho, n'était pas mort, car le glaive n'avait point porté mortellement sur son cou, et le soir, s'étant relevé, il se rendit au village où un prêtre lui pansa sa blessure. On se rendit ensuite à l'endroit où les saints avaient été massacrés, on recueillit leurs reliques et on les déposa dans une grotte. Et Abdicho vécut là dans la grotte avec les saints, en grand ascétisme, et prêcha le Christ aux infidèles.

Or, il y avait des bergers sur la montagne et ils voyaient la nuit trois groupes d'anges autour de la grotte qui montaient et descendaient du ciel, rendant gloire (à Dieu). Ils crurent à Dieu et devinrent chrétiens. D'autres encore en grand nombre apprirent des bergers ces merveilles et se convertirent au Christ.

Un certain impie se rendit auprès du bienheureux Abdicho et lui enjoignit de ne pas prêcher le Christ, mais comme il ne réussit point à l'en empêcher, il donna cinquante deniers à un Persan qui prit l'argent, se rendit à la grotte et égorgea * comme un mouton le saint martyr du Christ Abdicho. Le prêtre qui * A fol. 226 r° b.

զսուրբ վկային Քրիստոսի Աբդիշոյ : Եւ քահանայն որ բժշկեաց զնա՝ երթեալ փորեաց տեղի մի խոր եւ անդ թաղեաց զմարմին երանելւոյն, եւ կուտեաց ի վերայ հող եւ արար բլուր եւ անուանեաց Աբդիշոյի բլուր :

Եւ սպանողն մոլեգնեցաւ ի դիւաց, եւ ցնորեցան խելքն, եւ ինքնին զչորեսին որդիսն իւր սպան սրով եւ ինքն ջրգողեալ ի խիստ ցաւոց անկաւ ի կոյտս աղբոյ եւ չարաչար կատարած եղեւ. եւ կերան զմարմինն շունք եւ ագռաւք, եւ ամենայն տունն իւր կորեաւ : Եւ զաղբիւր գեղջն խլուրդք ցամաքեցուցին, եւ եօթն անգամ պեղեցին եւ մաքրեցին, եւ դարձեալ լնուին հողով. եւ ցամաքեցաւ աղբիւրն ամս քսան եւ երկու, եւ գեօղն եղեւ անբնակ ի մարդկանէ :

Եւ յետ քսան եւ երկու ամաց՝ որդի ծեր քահանային որ զսուրբն Աբդիշոյ ընկալաւ եւ բժշկեաց, գնաց ի բլուրն սրբոյն Աբդիշոյի եւ աղօթեաց այսպէս . Սուրբդ Աստուծոյ Աբդիշոյ եթէ օրհնեսցես զիս եւ բնակեցայց ի տեղւոջս յայսմիկ խաղաղութեամբ, յամենայն ամի կատարեցից առատութեամբ եւ պայծառութեամբ զյիշատակս ձեր : Եւ սկսաւ փորել զաղբիւրն, եւ բղխեաց ջուր յորդ եւ եղեւ գետ, եւ շինեցաւ գիւղն : Եւ կատարէին զյիշատակ սրբոց վկայիցն եւ զսրբոյն Աբդիշոյի յԱպրիլի Ը, մեծաւ պատուով եւ առատութեամբ : Եւ բազում նշանք լինին ի նշխարացն սրբոյն :

10 քսան եւ երկու *om.* B || 13 զյիշատակս ձեր] ըստ իմում կարողութեանն խրախութեամբ ի փառս Աստուծոյ եւ ձեր *add.* B || 15 Աբդիշոյի] Ահկի Ը եւ *add.* B.

l'avait guéri alla creuser une place profonde et y enterra le corps du bienheureux; il y amoncela de la terre, fit un tertre et l'appela la colline d'Abdicho.

Celui qui l'avait tué devint possédé des démons, ses esprits s'égarèrent; il tua par l'épée ses quatre fils, devint lui-même hydropique, et, poussé par les douleurs aiguës, se jeta sur un tas de fumier et y trouva une mort atroce. Les chiens et les corbeaux dévorèrent son cadavre. Toute sa maison fut anéantie. Les taupes desséchèrent la source du village. Sept fois on la creusa et on la nettoya, mais (les taupes) la remplirent de nouveau de terre; la source demeura tarie pendant vingt-deux années et le village fut déserté des gens.

Vingt-deux ans après, le fils du vieux prêtre qui avait accueilli et guéri saint Abdicho, s'étant rendu à la colline du saint Abdicho, y pria ainsi : « Abdicho, saint de Dieu, si tu me bénis et si je demeure en paix dans cette place, je célébrerai chaque année généreusement et avec éclat votre souvenir. » Il se mit à creuser la source, une eau abondante en jaillit et devint une rivière; le village se repeupla. On y célébrait la commémoration des saints martyrs et de saint Abdicho avec de grands honneurs et largesses le 8 avril. De nombreux miracles ont lieu par les reliques du saint.

Եւ յետ ժամանակաց ումն * կրօնաւոր հայր վանաց շինեաց մերձ ի գեօղն մեծ եկեղեցի, եւ անդր փոխեաց զնշխարս սրբոցն ։ * A fol. 226 v° a.

[B * Վերստին տօն է Աւետեաց ։ * B p. 154 a.

Այսօր վերստին տօն է Աւետեաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ ծննդեան յանարատ եւ յաստուածածին կուսէն Մարիամայ, եւ յիշատակ նմին ամենասրբուհւոյ աստուածածնին, որ փակեալ գոլով անբիծ կուսութեամբ՝ լինել դրախտ եւ դրախտ մեզ գտաւ հոգեւոր կենացն պտղոյ, փոխանակ առաջնոյ դրախտին յորմէ մահն մեզ կթեցաւ ։

Այլ եւ կնքեալ գոլով ի հոգւոյն սրբութեամբ, աղբիւր օրհնութեան եւ արդարութեան բղխմանն կենաց վերբերեցաւ, վասն որոյ զնա Սողոմոն. Պարտէզ փակեալ եւ աղբիւր կնքեալ գրուատէ ։ Այլ եւ ի բոլոր երկրածնաց մաքրութեամբ բարձրացեալ՝ արդարութեանն ըստ Դաւթի ընդունարան, բլուր կնդրկի օրինակեցաւ, յորմէ անուշահոտութիւն հաճոյից Աստուծոյ ի համայն աշխարհ բուրեցաւ ։

Նաեւ խոնարհամտութեամբ հոգւոյ հարթայատակեալ հովիտ գոլով, շուշանին եւ ծաղկին՝ որ յԻսրայէլէ ըստ Եսայեայ ծաղկեալ՝ պտղով զտիեզերս ելից. եւ ի Յեսսեան գաւազանէն փթթելով՝ վերստին մեզ զհոգւոյն եօթնեկի շնորհսն ընկալաւ ։ Զոր արժա-

Quelque temps après un * religieux, père abbé d'un couvent, fit construire une grande église près du village, et y transporta les reliques des saints. * A fol. 226 v° a.

[B * De nouveau fête de l'Annonciation. * B p. 154 a.

Aujourd'hui, c'est de nouveau la fête de l'Annonciation de la naissance du Christ notre Dieu de la vierge pure et mère de Dieu Marie, en même temps que la commémoration de cette très sainte mère de Dieu, qui étant close par une virginité sans tache s'est trouvée pour nous comme un jardin et paradis spirituel du fruit de la vie en remplacement du premier paradis où nous avions récolté la mort.

Tout en étant scellée par la sainteté de l'esprit, elle nous fut révélée comme une source de bénédiction et de justice d'où jaillit la vie; c'est pourquoi Salomon la proclame avec éloge : *Jardin fermé, fontaine scellée*[1]. Elle a surpassé par la pureté tous les hommes de la terre, et elle a été le réceptacle de la justice selon David; elle a été comparée à la colline de myrrhe, d'où se répandit sur toute la terre l'odeur suave de la volonté de Dieu.

De plus, vallon aplani par l'humilité de l'esprit, elle a rempli l'univers du fruit du lis et de la fleur, qui selon Isaïe[2] a fleuri d'Israël, et sortant de la tige de Jessé comme un fleuron, elle nous a fait recouvrer les grâces de l'Esprit septiforme. C'est pourquoi nous bénissons avec éloges, comme il convient, en

1. Cantique des cantiques, IV, 12. — 2. Is., XXXV, 1.

*նոյնպէս ընդ մարմնով ծնեցելոյն Աստուծոյ եւ զԱստուածածին ծնողն եւ կոյս՝ բարեբանելով երանեմք, եւ փառս նմին * միածնի Որդւոյ, եւ Հօր եւ սուրբ Հոգւոյն մատուցանեմք յաւիտեանս ։*

* B p. 154 b.

Եւ ընդ նմին ամենասրբուհւոյ Աստուածածնին՝ յիշատակ է եւ տօն սրբոյ աւետաբեր հրեշտակապետին Գաբրիէլի ։ Որ ի վերուստ զսկիզբն փրկութեանն եւ զաւետիս կենաց կենարարին գալստեանն նախնապէս աւետարանեաց առ կոյսն ի Նազարէթ, առաքելով յԱստուծոյ՝ որպէս զգերաբուն եւ զանճառ խորհրդոյն Աստուծոյ սպասաւոր եւ խորհրդակցած պատուեալ եղեւ ։ Զի վեհագոյն ի բոլոր երկնաւորացն յառաջագոյն սա միայն յԱստուծոյ իմաստութենէն ընտրեցաւ, զառ ի յաւիտենից եւ յազգաց անծանօթ եւ զծածուկ խորհուրդ տնօրէնութեան Աստուծոյ Բանին իրազեկ լինել, եւ որպէս առաւելապէս ցնծացեալ ընդ մեր փրկութիւնն, եւ իբրու ճշմարիտ բարեկամ բնութեանս մերոյ՝ աւետաւոր առաքել, մանաւանդ եթէ նախընթաց առ մեզ գալստեանն Աստուծոյ, եւ հարսն գոլով պատրաստող եւ յարդարիչ հոգեւոր տաճարին նորին բնակութեան ։ Եւ արժանաւորեցաւ լինել հարսնացուցանող ածող եւ առթող հարսին Աստուծոյ՝ երանուհւոյ դշխոյին երկնից եւ մերոյ ճշմարիտ տիրուհւոյ աստուածածին կուսին ։

Վասն որոյ եւ իրաւապէս ամենայն փրկեալքս ի փրկութենէն՝ պատուել պարտական եմք զփրկութեան մերոյ աւետաբերն, զնոյն զփառաւորեալ նախընթացն եւ զմեծ

même temps que le Dieu né avec le corps, celle qui l'a mis au monde, la mère de Dieu et la vierge, et nous glorifions éternellement avec elle * le Fils unique, le Père et le Saint-Esprit.

* B p. 154 b.

Commémoration est faite également avec la très sainte Mère de Dieu et fête du saint Messager l'archange Gabriel. C'est lui qui, d'en haut, pour la toute première fois, apporta à la Vierge, à Nazareth, la bonne nouvelle : le commencement de la Rédemption et l'annonce de l'avènement du Vivificateur de la vie. Dieu, en l'envoyant, lui fit l'honneur de devenir comme le ministre et l'initié du surnaturel et ineffable mystère de Dieu. Car, éminent entre tous les (esprits) célestes, lui seul fut, à l'avance, choisi par la Sagesse de Dieu, pour être mis au courant du mystère de l'Incarnation (οἰκονομία) du Verbe de Dieu, mystère inconnu de tous les êtres créés et des nations et mystère caché, choisi, comme s'étant davantage réjoui de notre rédemption, et comme étant un véritable ami de notre nature, pour être envoyé vers nous porteur de la bonne nouvelle, ou mieux, précurseur de la venue de Dieu : et en préparant la fiancée et en ornant le temple spirituel où il devait habiter. Et il a été jugé digne de faire la demande en mariage, d'obtenir le consentement, de faire les accordailles entre Dieu et la fiancée : la bienheureuse reine des cieux et notre véritable souveraine, la vierge Mère de Dieu.

C'est pourquoi, nous tous qui avons été l'objet de ce salut, nous devons, en toute justice, glorifier celui qui nous a apporté la bonne nouvelle de notre

Հրեշտակապետն Աստուծոյ զԳաբրիէլ ։ Զի որպէս այսու շնորհիւ առաւել երկ-րայնոցս փառաւորեաց եւ մեծացոյց եղոյց Աստուած ի մարդկանէ՝ զմեծն ի ծնունդս կանանց զՅովհաննէս, որ նախ քան զամենայն մարդիկ՝ յորովայնին ծանեաւ զՏէրն . որոյ եւ յայտնութեանն ի յերկրի եւ ի դժոխս եղեւ նախընթաց . նոյն օրինակ՝ եւ նախ քան զնա՝ յերկնայինս առաւել փառաւորեցաւ ի * յամենայն հրեշտակական կարգացն՝ սուրբ հրեշտակապետն Գաբրիէլ . որ յառաջ քան զբոլոր երկնայինս, եւ զհամայն խոկ եւ զերկրաւորս, եւ քան զնոյն ինքն զմաքուր աստուածածնող կոյսն՝ զխորհուրդն Աստուծոյ ծանուցեալ կարապետեաց, եւ նախընթաց Աստուծոյ ի բնութիւնս մեր գալստեան, եւ բնակելոյ ի մեզ բարձրացուցանողն նորին իջման ։ * B p. 155 a.

Զոր եւ ընդ բոլոր հրեշտակաց դասս եւ համայն սրբոց գումարս, զԲանն Աստուած որ մարմին եղեւ եւ աւետեօքն Գաբրիէլի եկաւորեալ ի դստերն Դաւթի եւ բնակեաց ի մեզ . եւ փոխանակ անիծիցն որ ի ձեռն մահաթոյն օձին ունկամբն Եւայի եմուտ պատրանօք ի բնութիւնս մեր եւ տարածեցաւ, զօրհնութիւն եւ զկեանս ի ձեռն ողջունաբեր ձայնին Գաբրիէլի ունկամբն Մարիամու ի մարդիկ աղբերացոյց եւ սփռեաց . զոր փառաւորեմք զնա ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն յաւիտեանս, ամէն ։]

salut, le glorieux précurseur et le grand archange de Dieu Gabriel. Car de même que Dieu, par cette grâce (la grâce d'être son prédécesseur), a, plus que tous, entre les habitants de la terre, glorifié et, entre les hommes, magnifié le plus grand des enfants des femmes, Jean, qui, avant tous les autres hommes, dès le sein de sa mère, a connu le Seigneur et a été, de la Révélation de celui-ci, sur terre et aux enfers, le précurseur, de la même manière, et avant Jean, plus que tous, entre les (esprits) célestes, entre les Anges de toutes les hiérarchies, a été glorifié* le saint Archange Gabriel, qui, avant tous les (esprits) célestes, et avant tous les habitants de la terre que ce soit, même avant la Vierge pure, Mère de Dieu, elle-même, a connu le mystère de Dieu, (l)'a annoncé et a été le précurseur de la venue de Dieu en notre nature et l'exaltateur de sa descente pour demeurer parmi nous. * B p. 155 a.

C'est Lui, qu'avec tous les chœurs des Anges et toute l'assemblée des Saints, Lui le verbe de Dieu, qui s'est fait chair, et qui, par l'annonce de Gabriel, est venu en la fille de David et a habité parmi nous, et, au lieu de la malédiction qui, par la séduction du serpent au venin mortel reçue par Ève en son oreille, s'était introduite et propagée dans notre nature, a, par la voix porteuse de salut de Gabriel reçue par Marie en son oreille, fait jaillir la bénédiction et la vie sur l'humanité, c'est Lui, c'est celui-là que nous glorifions avec le Père et le Saint-Esprit, à jamais. Amen.]

Ահկի Բ եւ Ապրիլ Թ : Տօն է եօթանասուն եւ երկու առաքելոցն :

Առաքելոցն երկոտասանիցն որք աշակերտեցան Քրիստոսի, անուանք նոցա յաւետարանէն յայտնի են. Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բարթողիմէոս եւ Մատթէոս, Յակոբոս Ալփեայ եւ Ղեբէոս որ անուանեցաւ Թադէոս, Շմաւոն նախանձայոյզ եւ Յուդայի փոխանակն Մատաթիա :

Իսկ եօթանասուն եւ երկու առաքելոցն անուանքն չեն գրեալ յաւետարանն, բայց միայն կոչումն նոցա որպէս ասաց Ղուկաս թէ Յետ այսորիկ երեւեցոյց Տէր այլ եւս եօթանասուն եւ երկուս, եւ առաքեաց զնոսա քարոզել յամենայն տեղիս :

Առաջինն ի նոցանէ է մեծն Թադէոս, որ յերկոտասանիցն, եւ կարգեցաւ նոցա վարդապետ. որ յառաջ քան զամենայն առաքեալսն հրամանաւ Հոգւոյն սրբոյ գնաց յՈւռհա, եւ բժշկեաց զԱբգար թագաւոր Հայոց եւ Ասորւոց, եւ գնաց ի Հայս եւ սպանաւ ի Սանատրկէ յԱրտազ :

Բ. Յակոբոս, եղբայր Տեառն, որ առաջին եպիսկոպոս եղեւ Երուսաղէմի եւ սպանաւ յԵրուսաղէմ :

1 Տօն] Յիշատակ B || 2 առաքելոցն] Քրիստոսի *add.* B.

2 AHÉKAN, **9 Avril.**

Fête des soixante-douze apôtres.

Les noms des douze apôtres qui furent les disciples du Christ nous sont connus par l'évangile : Pierre et Jacques, Jean et André, Philippe et Thomas, Barthélemy et Matthieu, Jacques fils d'Alphée et Lebbée, surnommé Thaddée, Simon le Zélé et Matathias qui remplaça Judas.

Les noms des soixante-douze apôtres ne sont pas écrits dans l'évangile, leur élection seulement (y est indiquée) ainsi que dit Luc : *Après cela le Seigneur en désigna encore soixante-douze autres et les envoya prêcher dans toutes les villes*[1].

Le premier d'entre eux est le grand Thaddée, l'un des douze, qui fut institué leur chef, et qui avant tous les apôtres, par ordre du Saint-Esprit, se rendit à Ourfa et guérit Abgar le roi d'Arménie et de Syrie, puis se rendit en Arménie et fut tué à Artaz par Sanatrouk.

2[e] Jacques le frère du Seigneur, qui fut le premier évêque de Jérusalem et fut tué à Jérusalem.

1. Luc, x, 1.

Գ. Բառնաբաս, որ ընդ Պօղոսի * ձեռնադրեցաւ յԱնտիոք յառաքելութիւն հեթանոսաց, եւ սպանաւ ի Կիպրոս կղզի եւ թաղեցաւ : * A fol. 226 v° b.

Դ. Անանիա, եպիսկոպոսն Դամասկոսի, որ մկրտեաց զՊօղոս եւ քարկոծեալ ի Հրէից կատարեցաւ :

Ե. սուրբն Ստեփաննոս նախավկայն որ եբաց զերկինս եւ քարկոծեալ յԵրուսաղէմ մեռաւ :

Զ. Փիլիպպոս, ընկեր նորա որ մկրտեաց զներքինին եւ քարոզեաց ի բազում տեղիս եւ նահատակեալ կատարեցաւ :

Է. Պրոխորոս, որ գնաց ընդ Յովհաննու աւետարանչին յԱսիա եւ գրեաց զաւետարանն եւ զտեսիլն Յովհաննու, եւ եկեալ յԵրուսաղէմ՝ անդ կատարեցաւ :

Ը. Նիկանովրս, որ եպիսկոպոս լեալ վկայութեամբ կատարեցաւ :

Թ. Տիմոն, որ քարոզեալ զբանն Աստուծոյ կատարեցաւ վկայական մահուամբ եւ արեամբ :

Ժ. Պարմենա, որ ընդ սրբոյն Ստեփաննոսի սպանաւ երկու հազար յուսացելովք ի Քրիստոս[1].

Նիկողայոս, եկն անտիոքացին, յորմէ աղանդն Նիկողայեցւոց բուսաւ :

4 կատարեցաւ] մեռաւ B || 8 նահատակեալ] նահատակութեամբ B.

1. Les numéros d'ordre finissent avec Ժ.

3ᵉ Barnabé (*Barnabas*), qui fut ordonné avec Paul * à Antioche pour la prédication des gentils et qui fut tué dans l'île de Chypre et y fut enterré. * A fol. 226 v° b.

4ᵉ Ananias, l'évêque de Damas, qui baptisa Paul et qui mourut lapidé par les Juifs.

5ᵉ Saint Étienne, le protomartyr, qui ouvrit le ciel et mourut lapidé à Jérusalem.

6ᵉ Philippe, son compagnon, qui baptisa l'eunuque, prêcha en beaucoup d'endroits et mourut en martyr.

7ᵉ Prochoros, qui se rendit avec Jean l'évangéliste en Asie, écrivit l'évangile et la vision (Apocalypse) de Jean et vint à Jérusalem où il fut martyrisé.

8ᵉ Nicanor, qui devint évêque et mourut par le martyre.

9ᵉ Timon, qui prêcha la parole de Dieu et mourut de la mort des martyrs et dans son sang.

10ᵉ Parmenas, qui fut tué avec saint Étienne et deux mille fidèles au Christ[1].

Nicolas, l'étranger d'Antioche de qui germa la secte des Nicolaïtes.

1. Les numéros d'ordre se terminent avec le numéro 10.

Մարկոս աւետարանիչ, որ ի Հռոմ գրեաց զաւետարանն իւր, եւ եպիսկոպոս լեալ ի սրբոյն Պետրոսէ՝ գնաց յԵգիպտոս եւ յԱղեքսանդրիա, քարշեալ ընդ հրապարակս վկայութեամբ կատարեցաւ ։

Ղուկաս աւետարանիչ, որ ընդ Պօղոսի քարոզեաց զբանն Աստուծոյ, եւ գրեաց զաւետարանն իւր եւ զԳործս Առաքելոցն, եւ գնաց ի Թեբաս եւ անդ մեռաւ իւրով

* A fol. 227 r° a. * մահուամբ յեօթնադրունսն ։

Շիղա, որ ընդ Պօղոսի քարոզեաց, եւ ունէր շնորհս մարգարէութեան եւ ի կղզւոջն Լեզրոնի յԵլեսպոնտոս ի ծովն ընկեցեալ խեղդեցաւ ։

Յուդա, որ ընդ Շիղայի առաքեցաւ յԱնտիոք, քարոզել զաւետարանն եւ կատարեցաւ ի նմին ։

Բարթողիմէոս, որ ընդ Փիլիպպոսի յԵփիմէս պրկեցաւ յորմն մեհենի եւ ի Լիկաւոնիտոս կատարեցաւ ։

Յովհաննէս, որ եւ Մարկոս, վասն բանին Աստուծոյ քարոզութեան վկայութեամբ կատարեցաւ ։

Ղազար բարեկամն Քրիստոսի, զոր յարոյց ի մեռելոց, եպիսկոպոս լեալ, ի Կիպրոս կատարեցաւ ։

Յովսէփ Արեմաթացի, որ թաղեաց զՏէրն, վախճանեցաւ ի տան իւրում յԱրեմաթեմ ։

2 քարշեալ] քարոզեալ B || 3 կատարեցաւ] մեռաւ B || 11 յԵփիմէս] յԵփիփիմեայ B.

L'évangéliste Marc, qui écrivit son évangile à Rome et, sacré évêque par saint Pierre, se rendit en Égypte et à Alexandrie et y mourut en martyr, traîné sur les places.

Luc l'évangéliste, qui prêcha avec Paul la parole de Dieu, écrivit son

* A fol. 227 r° a. évangile et les Actes des apôtres, se rendit à Thèbes et y mourut de sa * propre mort (dans la ville) aux sept portes.

Silas (*Sila*), qui prêcha avec Paul, reçut le don de prophétie et fut jeté à la mer d'Hellespont, dans l'île de Lezron, et s'y noya.

Jude (*Jouda*), qui fut envoyé avec Silas à Antioche, y prêcha l'évangile et y mourut.

Barthélemy, qui fut cloué avec Philippe au mur du temple des idoles à Ephimès et fut martyrisé à Licaonitos.

Jean dit aussi Marc, qui mourut en martyr pour avoir prêché la parole de Dieu.

Lazare, l'ami du Christ, que le Christ avait ressuscité des morts, et qui, devenu évêque, mourut en Chypre.

Joseph d'Arimathie, qui enterra le Seigneur et qui mourut dans sa maison à Arimathie (*Arimathem*).

Միւս Յովսէփ որ Բարսաբայն կոչէր, եւ անուանեցաւ Յուստոս, եպիսկոպոս եղեւ յԵրուսաղէմ եւ անդ կատարեցաւ ։

Կղէոփաս, եղբայրն Յովսեփու, որ ետես յարութեանն ետեւ զՔրիստոս ի ճանապարհին Էմաւուսայ, քարոզեաց զՔրիստոս Հրէիցն եւ անդ կատարեցաւ ։

Շմաւոն որդին Կղէոփայ, ի սորա հարսանիսն չոգաւ Քրիստոս եւ արար զջուրն գինի ։ Սա եպիսկոպոս եղեւ Երուսաղեմի յետ Յակոբայ. զսա տարան առաջի Դոմետիանոսի կայսեր որպէս թէ յազգէ Դաւթի իցէ, եւ տեսեալ Դոմետիանոսի զաղքատութիւն նորա եւ զծերութիւնն՝ արձակեաց զնա, եւ եկեալ յԵրուսաղէմ խաչեցաւ ի Հրէից ։

* Սիմոն Կիւրենացի, որ եբարձ զխաչն Քրիստոսի. * A fol. 227 rº b.

Եւ երկու որդիք նորա՝ Ռուփոս եւ Աղեկսանդրոս, որք եպիսկոպոսք լեալ յառաքելոցն, եւ գնացին ի Կիւրենիա, եւ ի Լիբիա կատարեցան ։

Ստաքիոս, որ զհետ Անդրէի առաքելոյն չոգաւ, եւ ի նմանէ եղեւ եպիսկոպոս Բիւզանդիոյ՝ յԱռակլիա Թիրակայ, եւ ի Բիւզանդիոն կատարեցաւ ։

Ղուկիոս Կիւրենացի, որ ի բազում տեղիս քարոզեաց զՔրիստոս եւ ի նոյն կատարեցաւ ։

Մանայէն, դայեկորդի Հերովդի չորրորդապետի, քարոզեաց զՔրիստոս Հրէից եւ հեթանոսաց, եւ կատարեցաւ նահատակութեամբ ։

8 խաչեցաւ ի Հրէից] խաչեցին զնա Հրեայքն B || 12 Կիւրենիա] Կիւրինա B.

L'autre Joseph, appelé Barsabas et qui fut surnommé le Juste (*Youstos*), qui devint évêque de Jérusalem et y mourut.

Cléophas, le frère de Joseph, qui vit le Christ, après la résurrection, sur la route d'Emmaüs, et qui prêcha le Christ aux Juifs et finit dans cette ville.

Siméon fils de Cléophas, aux noces duquel le Christ s'était rendu, où il avait transformé l'eau en vin. Il fut évêque de Jérusalem après Jacques. On le conduisit auprès de l'empereur Dometianus comme étant de la famille de David; Dometianus, vu la pauvreté et la vieillesse (de Siméon), le laissa en liberté, et il revint à Jérusalem où il fut crucifié par les Juifs.

*Simon le cyrénaïque, qui se chargea de la croix du Christ; * A fol. 227 rº b.

Et ses deux fils Rouphos et Alexandre, qui furent sacrés évêques par les apôtres, se rendirent à Cyrène et en Libye et y moururent.

Eustachus (*Stachios*), qui suivit l'apôtre André, et fut sacré par lui évêque de Byzance, à Héraclée (*Araclia*) de Thrace (*Thirakay*). Il mourut à Byzance.

Lucius le cyrénaïque, qui prêcha en de nombreux endroits le Christ et mourut à Cyrène.

Manaïen, le fils de la nourrice d'Hérode le tétrarque, qui prêcha le Christ aux Juifs et aux Gentils et mourut en martyr.

Սոսթենէս, զոր Պօղոս յիշէ ի թղթին. սա քարոզեաց ի բազում տեղիս զՔրիստոս, եւ չարչարեալ ուժգին կատարեցաւ:

Նաթանայէլ, որում ասաց Քրիստոս թէ Ահա այր արդարեւ իսրայէլացի յորում նենգութիւն ոչ գոյ: Սա կշտամբէր զհրեայս խստագոյնս յօրինաց եւ ի մարգարէից եւ ի նոցանէ մեռաւ:

Նիկոդիմոս, որ եկն առ Յիսուս ի գիշերի եւ ուսաւ ի նմանէ զխորհուրդ վերստին ծննդեանն, եւ ի թաղմանն Տեառն եբեր զմուռս խառն ընդ հալուէս իբրեւ լտերս հարիւր, եւ պատեաց ընդ Յովսեփու զՏէրն: Սա բազում չարչարանս կրեալ ի հրէից՝ մեռաւ, եւ ընդ սրբոյն Ստեփաննոսի եդաւ եւ ընդ Գամաղիէլի:

Մինաս Իբեքտայ յԱղեկսանդրէ քարկոծեալ վասն քարոզելոյ զպարկեշտութիւն կուսութեան:

* A fol. 227 v° a. Կեփաս, յԱնտիոք քարկոծեալ ի * հեթանոսաց:

Ղեբէոս ի բարբարոսաց եղեւ քարկոծեալ:

Տիտոս, որ ընդ Պօղոսի շրջէր, եւ եպիսկոպոս լեալ Գորտինու քաղաքին ի Կրետէս, եւ անդ կատարեցաւ:

2 ուժգին] ուժգնակի B — կատարեցաւ] ի ծովու *add.* B || 5 մեռաւ] նահատակեցաւ B || 7 լտերս] ի լտերց B || 10 Իբեքտայ] Իբբեքտաս B || 13 քարկոծեալ] կատարեցաւ քարկոծմամբ B.

Sosthène, dont Paul fait mention dans son épître. Il prêcha le Christ dans bien des endroits et mourut dans des supplices atroces.

Nathanaël, à qui le Christ avait dit : *Voici vraiment un Israélite, en qui il n'y a nul artifice*[1]. Celui-ci tirait de la Loi et des prophètes de sévères reproches contre les Juifs et ce fut de par eux qu'il mourut.

Nicodème, qui vint trouver Jésus de nuit et apprit de Lui le mystère de la renaissance et qui à l'ensevelissement du Seigneur apporta un mélange de myrrhe et d'aloès, d'environ cent livres, et avec Joseph enveloppa le Seigneur dans des linges. Il eut à endurer beaucoup de souffrances de la part des Juifs, mourut, et fut déposé avec saint Étienne et Gamaliel.

Memnas de Bechta, (qui fut) lapidé par Alexandre pour avoir prêché la chasteté virginale.

* A fol. 227 v° a. Céphas, lapidé à Antioche par les * Gentils.

Lebbée, qui fut lapidé par les barbares.

Titus, qui accompagnait Paul dans ses tournées, devint évêque de la ville de Gortinos en Crète et y mourut.

1. Jean, I, 47.

Կրեսկէս, ի Գաղղիա ի բարբարոսաց քարկոծեալ վասն զպարկեշտութիւն քարոզելոյ ։

Յովհաննէս, զոր կոչեն հայր,

Եւ Բարաբայ, ի Կիպրոս իւրեանց մահուամբ կատարեցան ։

Յովհաննէս

Եւ Գայիոս ի Լիւկիա ։

Յովհաննէս միւս, որ Պօղոսի սպասաւոր էր, ի Կարիա ի բարիոք ծերութեան կատարեալ ։

Կղեմէս, զոր Պօղոս ասէ եթէ Կղեմաւ հանդերձ ։

Նիկիտաս, որ վասն Քրիստոսի բազում չարչարանս կրեալ կատարեցաւ ։

Կիւրղոս, որ սպասաւորեաց բանին Տեառն, և ի նմին կատարեցաւ ։

Բուղոս,

Եւ Պուդէոս, զոր յիշատակէ Պօղոս ի թուղթն Հռովմայեցւոց ։

Լինոս, որ յետ Պետրոսի եպիսկոպոս եկաց ի Հռոմ քաղաքի ։

Կղաւդիա, որ վասն զՔրիստոս քարոզելոյ մեռաւ ։

Դեմետրիոս, որ վասն Քրիստոսի ի Հրէից քարկոծեալ մեռաւ ։

9 հանդերձ] որ վասն Քրիստոսի չարչարեալ կատարեցաւ *add.* B || 13 Եւ Պուդէոս] Եպուդէս B.

Crescent, qui fut lapidé par les barbares en Galatie pour avoir prêché la chasteté.

Jean, qu'on appelle le père,

Et Barabas, qui moururent de leur propre mort en Chypre.

Jean,

Et Gaïus, en Lycie.

Un autre Jean, qui avait été le serviteur de Paul, en Carie, et qui mourut dans une belle vieillesse.

Clément, celui que Paul désigne quand il dit : « *avec Clément* ».

Nicitas qui, après avoir enduré bien des tourments pour le Christ, fut martyrisé.

Cyrille, qui vécut au service de la parole du Seigneur et mourut en Lui.

Eubule (*Boulos*),

Et Pudens (*Poudeos*), dont fait mention Paul dans son épître aux Romains.

Linus, qui fut, après Pierre, évêque de la ville de Rome.

Claudia, qui mourut pour avoir prêché le Christ.

Temedrius, qui mourut lapidé par les Juifs pour le Christ.

Կրիսպոս, անչափ ծերացեալ եւ սողեալ, եւ արտաքս ընկեցեալ ի հրապարակն մեռաւ :

Կոդրատոս, որ վկայեաց ի Տրայանոսէ :

Յուդա Ճապիու, որ ի Խլաթ կատարեցաւ :

Յովսէս, որ վասն զՔրիստոս քարոզելոյ բազում չարչարանս կրեաց, եւ ի նոյն կատարեցաւ :

Ղազար միւս, որ եւ նա քարոզ բանին կենաց եղեւ, եւ նահատակութեամբ կատարեցաւ :

* A fol. 227 v° b. * Դեմաս, որ սիրեաց զաշխարհ, եւ գնաց ի Թեսաղոնիկէ եւ քուրմ եղեւ կռոց :

Հերմոգինէս, որ այլափառեաց, եւ եղեւ ընկեր Սիմոնի մոգի :

Աղեկսանդրոս դարբին, որ բազում չարչարանս եցոյց Պօղոսի, եւ հակառակ կայր բանից նորա :

Անդրոնիկոս,

եւ Յունիոս, ազգականք Պօղոսի,

եւ Պենտաս, սիրելի առաքելոյն Պօղոսի :

Ամպղիոս, որ եւ զնա յիշատակէ Պօղոս :

Ուրբանոս, զոր առ Հռովմայեցիսն յիշէ առաքեալն :

Ապեղղաս, զոր ի նմին թղթի յիշէ Պօղոս :

Crispus, qui, parvenu à une extrême vieillesse, se traîna et fut jeté dehors sur la place publique où il mourut.

Quadratus, qui fut martyrisé par Trajan.

Jude de Chabios, qui mourut à Khlat.

Osée, qui pour avoir prêché le Christ endura bien des souffrances et mourut pour Lui.

Un autre Lazare, qui fut aussi héraut du Verbe de Vie et mourut martyrisé.

* A fol. 227 v° b. * Démas, qui aima le monde, se rendit à Thessalonique et devint prêtre des idoles.

Hermogène, qui changea de foi et devint compagnon de Simon le mage.

Alexandre le forgeron, qui causa beaucoup de peine à Paul en s'opposant à ses paroles.

Andronicus,

Et Junius, parents de Paul,

Et Pentas, l'ami de l'apôtre Paul.

Amplius, que Paul mentionne également .

Urbanus, que l'apôtre mentionne (dans l'épître) aux Romains

Apellas, que Paul mentionne dans la même épître.

Արիստաբուղաս,
Հերովդիոն, որք յիշին յառաքելոյն ։
Նարկիսոս, որ եղեւ եպիսկոպոս եւ վկայ ։
Ասինկրիտոս,
եւ Փղեգոնտաս, ի նոյն թղթի յիշեցեալքն ի Պօղոսէ ։
Երմաս հովիւն,
եւ Պատրոբաս, առ Հռովմայեցիսն յիշատակեալք ի սրբոյն Պօղոսէ ։
Տրիփոս,
եւ Տրիփոն, զոր ողջունեաց Պօղոս երանելին ։

Փիլոլոգիոս, Ներիաս, Ողումպոս, սոքա փոխանորդք Դեմասայ եւ Հերմոգինի եւ Աղեկսանդրի եղեն, որպէս Մատաթիա՝ Յուդայի մատնչի ։

Սոքօք թեւեալ աւետարանն ընդ չորս կողմանս աշխարհի, եւ եդան հիմունք եկեղեցւոյ, եւ երեւեցաւ հաւատն ։ Զորոց զյիշատակն կատարէ եկեղեցի Ապրիլի Թ ։

* Անուանք կանանցն Առաքելուհեաց ։ * A fol. 228 r° a.

Մարիամ աստուածածինն, որ բազում չարչարանս կրեաց ի Հրէիցն, եւ վախճանեալ ոչ ուրեք գտանի, զի փոխեաց զնա որդին իւր Յիսուս Քրիստոս ։

7 սրբոյն] յերանելւոյն B || 10 Ներիաս] Ներիանոս B || 13 եկեղեցի] Քրիստոսի՝ Ահկի Բ եւ *add.* B || 14 առաքելուհեաց] որ վկայեցին վասն Քրիստոսի *add.* B || 16 որդին իւր Յիսուս *om.* B.

Aristaboulas,
Hérodion, qui sont mentionnés par l'apôtre.
Narcissus, qui fut évêque et martyr.
Asingritas,
Et Phlégontas, mentionnés par Paul dans la même épître.
Hermas, le berger,
Et Patrobas, mentionnés par saint Paul (dans l'épître) aux Romains.
Triphus,
Et Triphon, auxquels le bienheureux Paul envoya le salut.

Philologius, Nérias, Ulumpos, qui furent les remplaçants de Démas, d'Hermogène et d'Alexandre, comme Matathias fut celui de Judas le traître.

C'est par ceux-ci que l'évangile s'envola aux quatre coins de la terre, que les assises de l'Église furent posées et que la foi apparut. L'Église fête leur souvenir le 9 avril.

* Noms des femmes apôtres. * A fol. 228 r° a.

Marie, mère de Dieu, qui eut beaucoup à souffrir de la part des Juifs. Après sa mort, (son corps) ne se trouve nulle part, car son fils Jésus-Christ l'a transportée.

Մարիամ Մագդաղենացին, որ յաւետարանին պատմի, վասն Քրիստոսի բազում չարչարանս կրեաց ի Կայիափայ. կայ յագարակին որ կոչի Մագդաղեայ՝ մօտ ի Նազարէթ :

Միւս Մարիամ Մագդաղենացի, կատարեցաւ հեռի յԵրուսաղեմէ եօթանասուն ասպարիսաւ :

Մարիամ, Յակոբու փոքրկան մայր :

Մարիամ եւ Մարթա, քոյրքն Ղազարու հանդերձ եղբարբն հալածեալ ի Հրէիցն եւ ի Սադուկեցւոցն՝ ընկեցեալ եղեն ի Յոպպէ, ուր զՏաբիթայն անուցին եւ ուսուցին :

Եղիսաբեթ, մայրն Յովհաննու Մկրտչի իւրով մահուամբ :

Սողոմէ, որ ի յարութեանն Տեառն ցուցաւ, իւրով մահուամբ :

Յովհաննա եւ Շուշան, բազում չարչարանս կրեալ ի Մագդաղապետէն՝ կատարեցան :

Աննա դուստր Փանուէլի, որ ի տաճարին մարգարէանայր վասն Քրիստոսի, իւրով մահուամբ :

Զոքանչն Պետրոսի, բազում համարձակութեամբ վկայեաց վասն Քրիստոսի, եւ կայ ի Կափառնայում :

Այս է վկայութիւն երկոտասանից առաքելոցն եւ եօթանասուն եւ երկուցն, եւ սուրբ կանանցն որ վկայեցին զբարիոք վկայութիւնն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր :

11 որ ի յարութեան ցուցաւ *om.* B || 16 Պետրոսի] Սիմոնի B.

Marie-Madeleine dont il est parlé dans l'évangile, qui eut beaucoup à souffrir de la part de Caïphe pour le Christ; (son corps) se trouve dans le champ qui s'appelle le champ de Madeleine, près de Nazareth.

Une autre Marie-Madeleine qui mourut à soixante-dix lieues de Jérusalem.

Marie, mère de Jacques le mineur.

Marie et Marthe, sœurs de Lazare, persécutées avec leur frère par les Juifs et les Saducéens, furent jetés (à la mer) à Jaffa (*Hobbé*) où elles avaient élevé Tabitha et l'avaient instruite.

Élisabeth, mère de Jean-Baptiste, (qui mourut) de sa propre mort.

Salomé, qui apparut à la résurrectiou du Seigneur, (morte) de sa propre mort.

Johanna et Suzanne qui, après avoir enduré bien des tourments de la part du gouverneur de Magdala, moururent.

Anne, fille de Phanuel, qui prophétisait dans le temple, (morte) de sa propre mort.

La belle-mère de Pierre qui témoigna avec beaucoup de hardiesse pour le Christ, et qui gît à Capharnaüm.

Tel est le martyrologe des douze apôtres et des soixante-douze et des saintes femmes qui rendirent le bon témoignage pour Jésus-Christ, Notre-Seigneur.

* Յայսմ աւուր վկայութիւն քառասուն սրբոց մարտիրոսաց, յորոց էին սուրբքն Տերենտիոս, Ափրիկանոս, Մաքսիմոս եւ Պոմպիոս։ * A fol. 228 r° b.

Սուրբ վկայքն Քրիստոսի քառասուն զօրականքն էին յաւուրս Դեկոսի ամբարիշտ արքային, եւ Փորտունեայ դատաւորին, յԱփրիկոյ քաղաքէն ։ Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եհաս պատճէն հրամանաց թագաւորին վասն քրիստոնէից, եւ ըստ հրամանին ժողովեաց դատաւորն զամենայն քրիստոնեայսն, եւ եդ առաջի նոցա զամենայն տանջողական մեքենայս, եւ պատուիրեաց բարկութեամբ զոհել եւ պաշտել զկուռսն ։ Եւ բազումք ի հաւատացելոցն երկեան ի սպառնալեացն, հաւանեցան դատաւորին եւ ուրացան զՔրիստոս ։

Իսկ քառասուն սուրբ զօրականքն ուխտս եդին միմեանց, զի արիաբար մեռանիցին ի սէրն Քրիստոսի, եւ ասեն վստահաբար ընդ միմեանս. Զգոյշ կացցուք եւ մի ուրասցուք զՏէր մեր Յիսուս Քրիստոս առաջի մարդկան, զի մի եւ նա ուրասցի զմեզ առաջի Հօրն իւրոյ որ յերկինս է ։ Յիշեմք զբանն որ ասաց. Մի երկնչիք յայնցանէ որ միայն զմարմինս կարող են սպանանել, երկերուք մանաւանդ յայնմանէ որ կարող է կորուսանել զհոգի եւ զմարմինն ի գեհեն ։ * Եւ այլ բազում բանիւք զմիմեանս քաջալերեցին ։ * A fol. 228 v° a.

1 էին] են B || 2 Պոմպիոս] Պրոմպիոս, Զինոն, Աղեկսանդրոս եւ Թէոդորոս *add.* B || 3 Սուրբ վկայքն] Այս սուրբ վկայքս B || 6 քրիստոնեայսն] հաւատացեալսն B || 8 սպառնալեացն] եւ ի չարչարանացն *add.* B || 11 կացցուք] լիցուք եղբարք B.

* En ce jour martyre des quarante saints martyrs, parmi lesquels se trouvaient saints Terentius, Africanus, Maximus et Pompius. * A fol. 228 r° b.

Les quarante saints martyrs du Christ, soldats, vivaient aux jours de l'empereur Dèce, l'impie, et du juge Fortunea, de la ville d'Afrique. En ces jours-là arriva la copie des ordres de l'empereur au sujet des chrétiens, et le juge, conformément à cet ordre, rassembla tous les chrétiens, disposa devant eux tous les instruments de supplice et leur enjoignit avec colère de sacrifier aux idoles et de les adorer. Nombre de fidèles prirent peur devant ces menaces, obéirent au juge et renièrent le Christ.

Mais les quarante saints soldats se jurèrent mutuellement de mourir vaillamment pour l'amour du Christ et se dirent l'un à l'autre avec confiance : « Gardons-nous de renier Notre-Seigneur Jésus-Christ devant les hommes, pour qu'Il ne nous renie point devant son Père qui est aux cieux. Rappelons-nous la parole qu'il a dite : *Ne craignez pas ceux qui tuent seulement le corps; craignez plutôt celui qui peut perdre l'âme et le corps, dans la géhenne* [1]. » * Et avec beaucoup d'autres paroles ils s'encouragèrent mutuellement. * A fol. 228 v° a.

1. Matth., x, 28, 29.

Եւ դատաւորն Փորտունեա կոչեաց զնոսա առաջի իւր եւ ասէ. Տեսանեմ զձեզ այրս քաջս, բարի հասակաւ եւ իմաստնական բանիւ զարդարեալս. ընդէ՞ր խաբեցայք եւ յետս ընկեցէք զձեզ ի թագաւորական հրամանացն, եւ խոստովանիք զմի Աստուած եւ զՔրիստոս ոմն՝ զոր որդիք Հրէիցն խաչեցին իբրեւ զչարագործ :

Իսկ սուրբն Տերենտիոս բերան եղեւ ամենեցուն եւ ասէ. Եթէ գիտէիր ո՛վ դատաւոր զզօրութիւն խաչեցելոյն ուրանայիր եւ դու զնոտի խաբէութիւն կռոցն, եւ նմա միայնոյ երկիր պագանէիր, քանզի նա միայն է ճշմարիտ Աստուած, գթած, ողորմած, բարերար եւ ամենայն շնորհաց տուող : Որ կամաւ Հօր էջ յերկնից յերկիր, զգեցաւ զմարդկային բնութիւնս եւ վասն մերոյ փրկութեան համբերեաց խաչի եւ մահու :

Եւ զայս լուեալ դատաւորին ասէ ցսուրբսն. Զոհեցէք ընդ մեզ աստուածոց մերոց, եթէ ոչ՝ տանջանօք մաշեցից զանձինս ձեր : Ասէ Տերենտիոս. Կարծես եթէ ահիւ եւ սպառնալեօք խաբես զմեզ, ո՛չ այդպէս. միթէ վա՞տք լիցուք եւ երկչոտք, զի թողումք զկենաց տուողն եւ երկիր պագանեմք աստուածոց օտարաց որ ոչ իցեն : Արդ՝ փութով արա՛ զոր ինչ խորհեալդ ես վասն մեր, եւ տեսցես քաջութիւն ի խորհուրդս մեր ի Տէր մեր Յիսուս Քրիստոս զոր ունիմք :

* A fol. 228 v° b. Եւ զայս * լուեալ դատաւորին ի սրբոյն Տերենտիոսէ առաւել եւս մոլեցաւ ի

6 խաչեցելոյն] խաչելոյն B || 7 պագանէիր] եւ զնա միայն պաշտէիր *add.* B.

Le juge Fortunea les fit venir devant lui et leur dit : « Je vois en vous des hommes vaillants, de belle taille et doués de sage raison. Pourquoi vous êtes-vous laissé tromper et vous êtes-vous rejetés en arrière devant les ordres impériaux, et confessez-vous un seul Dieu et un certain Christ que les fils des Juifs ont crucifié comme un malfaiteur? »

Saint Terentius, se faisant l'interprète de tous, répondit : « Si tu connaissais, ô juge, la puissance du crucifié, tu renoncerais, toi aussi, à la vaine duperie des idoles et tu L'adorerais, lui seul, car il est le vrai Dieu, miséricordieux, plein de pitié, bienfaisant et donnant toutes grâces. C'est Lui qui, par la volonté du Père, descendit des cieux sur la terre, se revêtit de la nature humaine et souffrit la croix et la mort pour notre salut. »

Après avoir entendu cela le juge dit aux saints : « Immolez avec nous à nos dieux, sinon je vous détruirai tout entiers par les tortures. » Terentius répondit : « Tu crois que c'est par la crainte et par les menaces que tu vas nous séduire? Tu te trompes! Sommes-nous des lâches et des poltrons pour abandonner celui qui donne la vie et pour nous prosterner devant des dieux étrangers qui n'en sont pas? Hâte-toi donc d'accomplir ce que tu es résolu à faire à notre égard et tu verras la vaillance que nous sommes résolus à déployer pour Notre-Seigneur Jésus-Christ. »

* A fol. 228 v° b. Après avoir *reçu cette réponse de saint Terentius, le juge devint plus

բարկութիւն, եւ հրամայեաց զՏերենտիոս, զԱփրիկանոս, զՄաքսիմոս եւ զՊոմպիոս, եւ արգելուլ ի ներքսագոյն բանդն, եւ երկաթովք եւ փայտիւք պնդել զգուշութեամբ. եւ զայլ երեսուն եւ վեց յարտաքին բանդին պահել ։

Եւ յետ աւուրց կացուցին առաջի զամենեսեան եւ հարցանէր եթէ արասցեն զհրամանս թագաւորին ։ Ասեն սուրբքն. Մեք բազում անգամ ասացաք քեզ թէ մեք քրիստոնեայք եմք եւ ի Քրիստոս յուսացեալ եմք, եւ զդեւս ոչ պաշտեմք. եւ դու որչափ կամիս տանջեա՛ զմեզ, եւ մեք ակն ունիմք յԱստուած որ յաղթիս ի մէնջ որպէս յաղթեցաւ սատանայ ի Քրիստոսէ, եւ նա զօրացուցանէ զմեզ ընդդէմ խորհրդոց քոց ։

Եւ զայս լուեալ դատաւորին ի սրբոյն Տերենտիոսէ հրամայեաց դարձուցանել զնոսա ի բանդն, եւ շղթայիւք պնդել զնոսա, եւ ոչ զոք ի քրիստոնէից թողուլ առ նոսա կամ տալ նոցա կերակուր ։ Եւ ի մէջ գիշերին մինչդեռ աղօթէին սուրբքն՝ լոյս ծագեաց ի բանդն եւ հրեշտակ Տեառն խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Ծառայք Աստուծոյ բարձրելոյն, արիք եւ հանգիք ։ Եւ առժամայն շղթայքն անկան ի պարանոցացն եւ կապանքն ի ձեռաց եւ յոտից իւրեանց, եւ տեսին սեղան առաջի իւրեանց ամենայն բարութեամբ լցեալ ։ Եւ ասէ * հրեշտակ Տեառն. Կերիջիք զոր առաքեաց կերակրիչն * A fol. 229 r° a.

12 — p. 1328, l. 1 խօսեցաւ... ճաշակեցին] երեւեալ քաջալերեաց զնոսա B.

furieux encore dans sa colère et ordonna d'enfermer Terentius, Africanus, Maximus et Pompius dans la prison la plus intérieure et de les garrotter soigneusement avec fers et entraves. Quant aux autres trente-six, il les fit garder dans la prison extérieure.

Quelques jours après, on les fit tous comparaître, et, comme le juge leur demandait s'ils étaient décidés à accomplir les ordres de l'empereur, les saints répondirent : « Nous t'avons dit à plusieurs reprises que nous sommes chrétiens, que nous avons mis notre foi dans le Christ et que nous n'adorons point les démons. Pour toi, torture-nous tant que tu voudras, mais nous espérons en Dieu que tu seras vaincu par nous, comme Satan a été vaincu par le Christ. Il nous donnera la force de résister à tes desseins. »

Ayant entendu cela de saint Terentius, le juge ordonna de les reconduire à la prison, de les lier fortement avec des chaînes, de ne permettre à aucun chrétien d'avoir accès auprès d'eux et de ne leur point donner à manger. Au milieu de la nuit, pendant que les saints priaient, une lumière jaillit dans la prison et l'ange du Seigneur s'entretint avec eux et leur dit : « Serviteurs de Dieu le Très-Haut, levez-vous et reposez-vous. » Aussitôt les chaînes leur tombèrent du cou et les liens des mains et des pieds; et ils aperçurent devant eux une table garnie de toutes sortes de bonnes choses. L'ange du Seigneur * A fol. 229 r° a.
* leur dit : « Mangez ce que le Christ, qui vous nourrit, vous envoie. » Les saints

ձեր Քրիստոս ։ Եւ սուրբքն օրհնեցին զԱստուած եւ ճաշակեցին ։ Իսկ պահապանքն տեսին զքանչելի լոյսն, երթեալ պատմեցին դատաւորին ։

Եւ ընդ առաւօտն տարան առաջի. եւ այնչափ գան հարին զնոսա որ ամենայն մարմինքն քերթեցան ։ Եւ պատուիրեցին զլւթից եւ բերին իժս եւ քարբս թունաւորս, եւ ի մի տուն թողուլ զնոսա յանձինս նոցա եւ փակել զդուռն. եւ չար գազանքն ամենեւին ոչ մերձեցան ի նոսա ։ Եւ յետ երից աւուրց զօրականքն մտին ի տունն, եւ տեսին զնոսա պայծառ երեսօք զի սաղմոսէին եւ երթեալ պատմեցին դատաւորին ։ Եւ պատուիրեաց դատաւորն այլ զլւթիցն բերել այլ գազանս, եւ յորժամ բերին՝ զերծեալ դիմեցին ի վերայ անօրինացն եւ զբազումս ի նոցանէ սպանին եւ զլւթան լափեցին ։ Եւ ընդ առաւօտն հանին զսուրբսն արտաքոյ քաղաքին, եւ հատին սրով զքառասուն վկայսն զգլուխս յԱպրիլի Թ ։ Եւ քրիստոնեայքն թաղեցին զնոսա ի նշանաւոր տեղւոջ երկու մղոնաւ հեռի ի քաղաքէն ։

* B p. 159 b. [B * Յայսմ աւուր վկայութիւն սուրբ վկայիցն Եւփսիքոսի եւ Իլիոդորոսի եպիսկոպոսի եւ Մարիամու սրբուհւոյ, եւ երեք հարիւր վկայիցն՝ որք ի գերութեանն Պարսից կատարեցան, ի փառս Քրիստոսի ։]

8-10 Եւ պատուիրեաց ... լափեցին *om.* B.

bénirent Dieu et mangèrent. Les gardiens, qui avaient aperçu la lumière éclatante, s'en allèrent le dire au juge.

Le matin, on les conduisit devant (le juge); on les frappa à tel point que tout leur corps fut écorché. On ordonna à des charmeurs d'apporter des serpents et des scorpions venimeux, de les lâcher dans une maison contre les corps (des saints) et de fermer les portes; mais ces bêtes mauvaises ne s'approchèrent nullement d'eux. Trois jours après, les soldats pénétrèrent dans la maison et virent (les saints), la figure resplendissante, qui psalmodiaient. Ils allèrent rendre compte au juge. Celui-ci ordonna à d'autres charmeurs d'apporter d'autres bêtes, qui, lorsqu'ils les eurent apportées, s'échappèrent et s'élancèrent sur les impies, en tuèrent un grand nombre et engloutirent les charmeurs. Au matin, on fit sortir les saints hors de la ville et on trancha la tête par le glaive aux quarante martyrs, le 9 avril. Les chrétiens les inhumèrent dans un endroit distingué, à deux lieues de la ville.

* B p. 159 b. [B * En ce jour martyre des saints martyrs Eupsychus, Iliodore l'évêque, sainte Marie, et trois cents martyrs qui moururent pendant la captivité en Perse, pour la gloire du Christ.]

Ահկի Գ եւ Ապրիլի Ժ ։ Վկայութիւն սրբոյն Անտիպայ եպիսկոպոսին Պերգամոյ ։

Քահանայապետն Քրիստոսի Անտիպաս * էր յաւուրս սրբոց առաքելոցն եւ էր ծերունի յոյժ ։ Զսա յիշէ Յովհաննէս աւետարանիչն ի տեսլեանն եթէ. Անտիպաս վկայն իմ հաւատարիմ քահանայն ։ Եւ քանզի բազում կուռք եւ դիւաց բնակութիւնք էին ի քաղաքին Պերգամոյ աղաչէր երանելի եպիսկոպոսն զԱստուած զի հալածեսցին դեւքն եւ կործանեսցին բագինք կռոցն ։ * A fol. 229 r° b.

Եւ երեւեցան դեւքն յերազի կռապաշտ իշխանաց քաղաքին եւ ասեն. Վասն Անտիպայ քրիստոնէից գլխաւորին ոչ կարեմք կեալ ի տեղւոջս մեր, եւ ոչ ընդունել եւ հոտոտել ի զոհից ձերոց, քանզի յոյժ հալածէ զմեզ ի բնակութենէս մերմէ ։

Եւ յարուցեալ ամենեքեան կալան զնա եւ տարան առաջի զօրավարի քաղաքին, եւ նա յոյժ մեղադիր լինէր նմա թէ Ընդէր զայդ առնես ։ Եւ սուրբն Անտիպաս յանդիմանէր զնոսա վասն ամբարիշտ եւ սնոտի պաշտամանն Դոմետիանոսի եւ իւրումն ։

Եւ զօրավարն աղաչանօք խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն, եւ

1 Անտիպայ] Անտիպեայ B || 4-6 Եւ քանզի ... կռոցն] Եւ քանզի ի քաղաքին Պերգամոյ բնակութիւն դիւաց էր ի կուռս, եւ երանելի եպիսկոպոսն աղօթիւք հալածէր զդեւս, եւ անգործ առնէր զխաբէութիւնս նոցա ի կուռս B.

3 AHÈKAN, **10 Avril.**

Martyre de saint Antipas évêque de Pergame.

Le pontife du Christ Antipas * vivait aux jours des saints apôtres; il était très vieux. L'évangéliste Jean en fait mention dans son Apocalypse : *Antipas, mon témoin fidèle*[1], le prêtre. Et comme dans la ville de Pergame il se trouvait beaucoup d'idoles et des habitations de démons, le bienheureux évêque priait Dieu de chasser les démons et de ruiner les autels des idoles. * A fol. 229 r° b.

Les démons apparurent en songe aux notables idolâtres de la ville et leur dirent : « Nous ne pouvons, à cause du chef des chrétiens Antipas, vivre dans notre place, ni recevoir et humer l'odeur de vos sacrifices, car il nous chasse avec force de notre demeure. »

Tous se levèrent, se saisirent (d'Antipas) et le conduisirent chez le commandant des forces de la ville qui lui fit de sévères reproches : « Pourquoi fais-tu cela? » Saint Antipas les blâma de leur culte impie et vain pour Dometianus et pour leur (dieu).

Le commandant conseillait à (Antipas), en le suppliant, de renier le Christ

1. Apocalypse, II, 13.

յորժամ ոչ կարաց հաւանեցուցանել զսուրբն, հրամայեաց անօրէն ժողովրդեանն յափշտակել զնա եւ տանել ի պղնձէ ցուլ, եւ յորժամ ջեռուցին հրով եւ եղեւ ցուլն իբրեւ զհուր, արար յինքն երանելին զնշան սրբոյ խաչին եւ եմուտ ի ցուլն, եւ տարա-
* A fol. 229 v° a. ծեալ զձեռս իւր յերկինս աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Լուր Տէր * ձայնի աղաչանաց իմոց եւ զամենայն աստուածացու քրիստոնեայս որ անուամբ իմով աղաչեսցեն զքեզ, բժշկեա եւ թեթեւացո ի նոցանէ զցաւս ատամանց. Նոյնպէս եւ ամենայն հիւանդաց օգնեա եւ փարատեա զցաւս հոգւոյ եւ մարմնոյ նոցա, եւ որք նշխարաւ եւ խնկով յիշեն զօր յիշատակի իմոյ փրկեա եւ օգնեա նոցա աստ եւ ի հանդերձելումն ։ Ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ. Լսելի եղեն խնդրուածք քո եւ կատարին աղաչանք քո, յամենայն աստուածացուս որք աղաչեն զԱստուած յամենայն սրտէ ։ Եւ որպէս ի քուն լեալ սուրբ եպիսկոպոսն ի պղնձի ցուլն բորբոքեալ՝ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Ապրիլի Ժ ։

Եւ արք երկիւղածք հանին զնշխարս փառաւորեալ վկային Քրիստոսի Անտիպայ եպիսկոպոսին, թաղեցին պատուով ի նոյն քաղաքին Պերգամայ, յորմէ բղխեն շնորհք բժշկութեան ամենայն ցաւոց՝ յոսկերաց եւ ի տապանէ սրբոյն ։

Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս ճգնաւորն Սարգիս ։

2 պղնձէ] պղնձի B || 3-11 եւ տարածեալ... ցուլն բորբոքեալ] ուր աղօթելով սուրբ եպիսկոպոսն որպէս խոր ի քուն լեալ B || 12 Աստուած] Աչկի Դ եւ *add.* B || 14 բղխեն] լինին B || 15 ամենայն ցաւոց՝ յոսկերաց եւ *om.* B — սրբոյն] ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ *add.* B.

et d'immoler aux idoles, puis quand il se vit impuissant à persuader le saint, il ordonna à la foule impie de le saisir et le conduire au taureau de bronze. Quand le taureau eut été chauffé par le feu et fut devenu rouge comme du feu, le saint fit le signe de la croix sur sa personne, pénétra dans le taureau
* A fol. 229 v° a. et, élevant ses mains au ciel, pria Dieu en disant : « Entends, Seigneur, * la voix de mes supplications et guéris des maux de dents tous les chrétiens qui te prieront en mon nom; guéris-les et soulage-les de leurs maux de dents; de même viens en aide à tous les malades et dissipe les maux de leur âme et de leur corps; et à tous ceux qui avec hostie et de l'encens célébreront le jour de ma commémoration, sauve-les et aide-les ici-bas et dans l'autre monde. » Une voix du ciel se fit entendre qui lui dit : « Ta requête a été entendue et voici que tes vœux suppliants s'accomplissent en faveur de ceux qui sont affligés de maux de dents et qui prient le Seigneur de tout cœur. » Et après s'être endormi dans le taureau de bronze embrasé, le saint évêque rendit son âme à Dieu, le 10 avril.

Des personnes pieuses sortirent les restes du glorieux martyr du Christ, l'évêque Antipas, et les inhumèrent avec honneur dans cette même ville de Pergame. Des ossements et du tombeau du saint jaillissent des grâces de guérison pour tous les maux.

En ce jour reposa dans le Christ l'ascète Serge.

Ահեկի Դ և Ապրիլի ԺԱ ։ Վկայութիւն սրբոյն Արտեմոնայ քահանայի և մարտիրոսի ։

Ի ժամանակս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի էր քահանայ Լաւոդիկեայ քաղաքին Արտեմոն ծերունին. և ամօք միով յառաջ քան * զմարտիրոսութիւնն իւր * A fol. 229 v° b
առնու ընդ իւր զՍիսինոս զեպիսկոպոսն իւր, և գնացեալ ի տաճար կռոցն՝ զամենայն բագինսն խորտակեցին և կործանեցին ։

Եւ երթեալ կոմսին որոյ անուն էր Պատրիկիոս ի տաճար կռոցն՝ եգիտ զբագինսն խորտակեալ ի յերկիր ։ Եւ լուաւ եթէ Սիսինոս եպիսկոպոսն խորտակեաց և փախեաւ ընդ այլ քրիստոնեայսն յեկեղեցին ։ Դիմեաց և նա զկնի զի կալցէ զնա, և յորժամ ընթանայր ի ճանապարհին՝ կալաւ զնա ցաւ և չարաչար վշտանայր. դարձաւ ի տուն իւր, և յղեաց առ եպիսկոպոսն եթէ Աղօթեա վասն իմ, և եթէ ողջացայց արարից փոխանակ խորտակելոցն ոսկի բագինս ։ Ասէ եպիսկոպոսն. Եթէ հաւատաս ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ողջանաս ։ Եւ նորա յանձին կալեալ ողջացաւ ։

Եւ յարուցեալ գնաց ի Կեսարիա. և հանդիպեցաւ նմա սուրբն Արտեմոն ծերունի քահանայն և զկնի նորա երթային երկու ոչխարք վայրի, և գիտաց կոմսն եթէ սուրբն քրիստոնեայ է, կապեաց զնա և տարաւ ի Կեսարիա ։ Եւ առաքեաց սուրբն Արտեմոն

13 գնաց] գնայր B || 13-14 նմա ... վայրի] Արտեմոն քահանայի B || 14 կոմսն *om.* B — սուրբն *om.* B || 15 և առաքեաց ... եպիսկոպոսն] և եղ ի բանդի ։ Ազդ եղեւ Սիսինիոսի եպիսկոպոսի վասն ըմբռնմանն Արտեմոնայ B.

4 AHÉKAN, 11 Avril.

Martyre de saint Artémon prêtre et martyr.

Au temps de l'idolâtre empereur Dioclétien, le vieillard Artémon était prêtre de la ville de Laodicée. Un an avant son * martyre il prend avec lui son * A fol. 229 v° b.
évêque Sisinus et, une fois arrivés au temple des idoles, ils brisèrent tous les autels et en firent des ruines.

Le comte, dont le nom était Patricius, s'étant rendu au temple des idoles, trouva les autels brisés par terre. Il apprit que l'évêque Sisinus les avait brisés et s'était enfui avec d'autres chrétiens à l'église. Il courut après lui pour l'arrêter; mais dans sa course, en route, des douleurs le prirent qui le faisaient souffrir cruellement. Il retourna chez lui, envoya dire à l'évêque : « Prie pour moi et, si je guéris, je ferai faire des autels en or à la place de ceux qui ont été brisés. » L'évêque répondit : « Si tu crois en Notre-Seigneur Jésus-Christ tu guériras. » Il accepta et fut guéri.

Et (Patricius), s'étant levé, alla à Césarée. Saint Artémon le prêtre vieillard, que suivaient deux moutons sauvages, le rencontra. Le comte, ayant appris que le saint était chrétien, le fit lier et l'emmena à Césarée. Saint Artémon envoya

զվայրի երէոն առ եպիսկոպոսն Սիսինոս, եւ մարդկային բարբառով ազդեցին նմա վասն ըմբռնելոյն Արտեմոնի. եւ զարհուրեցաւ եպիսկոպոսն եւ առաքեաց զՓիլէոն սարկաւագն, եւ երթեալ եգիտ զԱրտեմոն ի բանդին :

* A fol. 230 rº a. Եւ կոմսն կոչեաց զԱրտեմոն առաջի * իւր հարցանէր եթէ ուրասցի զՔրիստոս : Եւ նա համարձակութեամբ խոստովանեցաւ զանունն Քրիստոսի, եւ ասէ. Վեշտասան ամ ընթեռնուի զաստուածային գիրս, եւ ութ եւ քսան ամ էի սարկաւագ եւ ընթեռնուի զաւետարանն Քրիստոսի, եւ հինգ եւ տասն ամ ի քահանայութեանս իմում ուսուցանեմ ամենեցուն զՔրիստոսի բարեպաշտութիւնս. եւ կռոց ոչ զոհեցի եւ ոչ զոհեմ. բայց հրամայեա ինձ երթալ ի տաճարն Ասկղեպիոսի յորում բունեալ են եօթն վիշապք :

Կոմսն ասէ. Առ ընդ քեզ խունկ եւ երթիջիր : Եւ յորժամ գնաց եւ եմուտ ի տաճարն աղաչեաց զԱստուած, եւ բագինն Ասկղեպիոսի անկեալ խորտակեցաւ եւ վիշապքն փախեան արտաքս, փչեաց երանելին ի նոսա՝ եւ առժամայն անկեալ սատակեցան : Եւ տեսեալ Բիտալիոս քուրմն զեղեալ սքանչելիս հաւատաց ի Քրիստոս :

Եւ կոչեաց կոմսն զսուրբն Արտեմոն եւ ասէ. Որո՞վ զօրութեամբ առնես զայդ : Եւ նա ասէ. Քրիստոսի զօրութեամբն : Եւ հրամայեաց բերել հուր եւ կտրէին ի մարմնոյն Արտեմոնայ եւ խորովէին ի հուրն : Եւ նոյնժամայն եհաս այծեամն յեպիսկո-

4 կոչեաց] կոչեալ B — ուրասցի զՔրիստոս] զոհեսցէ կռոցն B || 5 Քրիստոսի] Տեառն Յիսուսի B || 12 փախեան... սատակեցան] սատակեցան B || 14 — p. 1333 l. 7 եւ կոչեաց... ի տեղւոջէն ջուր *om.* B.

à l'évêque Sisinus les bêtes sauvages qui lui firent savoir en langage humain l'arrestation d'Artémon. L'évêque prit peur et envoya le diacre Philéon, qui, à son arrivée, trouva Artémon dans la prison.

* A fol. 230 rº a. Le comte fit venir en sa * présence Artémon et il lui demanda s'il voulait renier le Christ. Mais celui-ci confessa avec hardiesse le nom du Christ et dit : « Seize ans durant j'ai lu les écritures divines, vingt-huit ans durant je fus diacre et je lus l'évangile du Christ, et depuis quinze ans que je suis prêtre j'enseigne à tous la dévotion au Christ; je n'ai point immolé aux idoles, et je n'immole point; mais permets-moi d'aller au temple d'Asclépius où se trouvent nichés sept dragons. »

Le comte lui dit : « Prends avec toi de l'encens et vas-y. » Lorsqu'il s'y fut rendu et fut entré dans le temple, il pria Dieu et l'autel d'Asclépius tomba et se brisa, et les dragons s'enfuirent dehors. Le bienheureux souffla sur eux et aussitôt ils tombèrent et crevèrent. Le prêtre des idoles Bitalius, témoin de ce miracle, crut au Christ.

Le comte fit venir saint Artémon et lui dit : « Par quelle puissance fais-tu cela? » Il répondit : « Par la puissance du Christ. » (Le juge) ordonna d'apporter du feu; et on taillait des morceaux dans la chair d'Artémon et on les

պոտէն եւ մարդկային բարբառով յանդիմանէր զկոմսն : Եւ մի ոմն ի զօրականացն լարեաց զաղեղն իւր, ձգեաց նետ զի հարցէ զայծեամն, եհար զաթոռակից կոմսին եւ սպան : Եւ հրամայեաց կոմսն կաթսայ ջեռուցանել ձիւթով եւ * յորժամ եռայ խաղար-հեցան յօդոյն երկու արծուիք եւ վերացուցին զկոմսն, եւ ձգեցին ի կաթսայն եւ առժամայն հալեցաւ մարմինն, եւ յեռացմանէ կաթսային հեղաւ ձիւթն եւ այրեաց զդահիճսն : * A fol. 230 r° b.

Իսկ սուրբն Արտեմոն խնդրեաց յԱստուծոյ եւ բղխեաց ի տեղւոջէն ջուր, եւ մկրտեաց զքուրմն Բիտալիոս եւ զայլս բազումս ի կռապաշտիցն, եւ մատուցեալ զսուրբ խորհուրդն հաղորդեցոյց զնոսա ի պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն : Եւ ի գիշերին յայնմիկ իջին երկու հրեշտակք յերկնից առ Արտեմոն, եւ ձայն որ ասէր. Ել ի Կեսարիոյ եւ երթիջիր յԱսիա, ի տեղին որ կոչի Վոլվինէս, մերձ ի ծովեզրն, եւ մաքրեա զտեղին՝ քանզի դիւաց բնակարան է, եւ զմարդիկ տեղւոյն բժշկեա ի հիւանդութեանց իւրեանց, եւ դարձո ի բարեպաշտութիւն : Եւ եկեալ ցիռ վայրի խօսեցաւ մարդկօրէն, եւ նստաւ Արտեմոն ի վերայ նորա, գնաց ի տեղին եւ բժշկեաց զնոսա ի ցաւոց իւրեանց, եւ մկրտեաց զնոսա Ասիոյ եպիսկոպոսն, եւ նշանագրեաց զտեղին եւ շինեաց եկեղեցի, եւ զմկրտեալսն ձեռնադրեաց քահանայս եւ սարկաւագունս. եւ զԲիտալիոս արար եպիսկոպոս Պաղեստինոյ. եւ անուանեաց զտեղին Խաղաղութիւն :

8 մկրտեաց] սուրբն Արտեմոն *add.* B || 10 երկու ... եւ ձայն] ազդումն եղեւ նմա ի վերուստ B || 13-14 եկեալ ... ի վերայ նորա *om.* B.

grillait sur le feu. A ce moment-là arriva un chevreuil, envoyé par l'évêque, qui fit en langage humain de vifs reproches au comte. Un des soldats banda son arc, lança une flèche pour atteindre le chevreuil, mais frappa l'assesseur du comte et le tua. Le comte ordonna de chauffer un chaudron avec de la poix et * lorsqu'elle fut en ébullition deux aigles descendirent des airs, soulevèrent le comte et le jetèrent dans le chaudron; son corps fondit aussitôt; et par suite de l'ébullition du chaudron la poix déborda et brûla les bourreaux. * A fol. 230 r° b.

Sur la requête que saint Artémon fit à Dieu une source jaillit de cet endroit et il baptisa le prêtre des idoles Bitalius et beaucoup d'autres idolâtres; puis il offrit le saint sacrifice, et les communia au précieux corps et sang du Seigneur. Cette nuit-là deux anges descendirent du ciel auprès d'Artémon et une voix lui dit : « Sors de Césarée et rends-toi en Asie, à l'endroit appelé Volvinès, près du bord de la mer, et purifie la localité, car elle est l'habitation des démons; guéris les gens de l'endroit de toutes leurs maladies et convertis-les à la piété. » Un âne sauvage survint qui parla en langage humain et Artémon, s'étant assis dessus, se rendit à l'endroit et guérit tous les gens de leurs maux; l'évêque d'Asie les baptisa, bénit de la croix la localité, y construisit une église, ordonna prêtres et diacres ceux qu'il avait baptisés et fit Bitalius évêque de Palestine. Il donna à la localité le nom de Paix.

Եւ Փիլիկիոսի իշխանին կինն չերից դիւաց այսահարէր, եւ աղաչէր զսուրբն Արտե-
* A fol. 230 v° a. մոն. եւ նորա սաստեալ դիւացն՝ ելին ի կնոջէն եւ երեւեցան դեւքն * շուն, աղուէս, եւ կատու, եւ առաքեաց զնոսա ի հուր գեհենոյն եւ եղեն անյայտ ։ Ողջացաւ կինն եւ հաւատաց ի Քրիստոս, ինքն եւ այրն իւր եւ ամենեքեան որ ի տանն էին եւ մկրտեցան ։

Եւ սուրբն Արտեմոն առաքեաց զայծեամն ի Լաւոդիկեա քաղաք առ Սիսինոս եպիսկոպոսն, եւ ազդեցոյց նմա զամենայն մեծամեծսն Աստուծոյ ։ Եւ նոյնժամայն յափշտակեաց հրեշտակն զսուրբն Արտեմոն, եւ տարաւ ի տեղին ուր զայցելութիւնն արար նմա Աստուած, եւ մարտիրոսութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Ապրիլի ԺԱ ։ Եւ երթեալք ոմանց յեղբարցն ի Կեսարիոյ թաղեցին պատուով զմարմինն սրբոյն Արտեմոնայ ի տեղւոջն յայնմիկ ։ Եւ գրեցին ճշգրտիւ զվկայութեամբ վարս երանելոյն ։

* B p. 162 b. [B * Յայսմ աւուր վարք եւ յիշատակ երանելոյն Պետրոսի մաքսաւորին ։

Էր սա ափրիկեցի, այր մեծատուն եւ երբեմն անողորմ առ աղքատս ։ Եւ յաւուր միում ձմերայնոյ մինչդեռ աղքատք ոմանք նստեալ ջեռնուին հանդէպ արեգական, այր իւրաքանչիւր սկսան գովել զողորմած մեծատունսն յականէ յանուանէ եւ պարսաւել զանողորմսն. բանս ի մէջ անկաւ եւ վասն մաքսաւորին Պետրոսի, եւ ոչ ոք գտաւ որ առեալ էր ի տանէ նորա ողորմութիւն ինչ ։

1 չերից դիւաց] ի դիւաց B || 2 ելին] եհան B — եւ երեւեցան... եղեն անյայտ *om.* B || 5-7 առաքեաց... տարաւ] գնաց B || 8 Աստուած] Աճկի Դ եւ *add.* B.

La femme du gouverneur Philicius était possédée de trois démons, elle supplia saint Artémon. Vivement réprimandés par lui, les démons quittèrent la
* A fol. 230 v° a. femme; puis les démons apparurent (sous la forme) * de chien, renard et chat; il les envoya dans le feu de la géhenne, et ils disparurent. La femme, guérie, crut au Christ, elle et son mari, avec tous ceux qui se trouvaient dans la maison, et ils se firent baptiser.

Saint Artémon envoya le chevreuil à la ville de Laodicée à l'évêque Sisinus et l'avisa de tous ces grands miracles de Dieu. Aussitôt un ange enleva saint Artémon et le déposa à l'endroit où Dieu lui avait fait visite, et il y rendit son âme à Dieu en martyr le 11 avril. Quelques frères de Césarée s'y rendirent et inhumèrent avec honneurs le corps de saint Artémon à l'endroit même et ils écrivirent avec exactitude dans le martyrologe la vie du Bienheureux.

* B p. 162 b. [B * En ce jour vie et commémoration du bienheureux Pierre le publicain.

Il était Africain, homme riche et parfois sans pitié pour les pauvres. Un jour d'hiver, pendant que quelques pauvres assis se chauffaient au soleil, chacun se mit à faire l'éloge des riches charitables en les citant par leurs noms et à blâmer ceux qui n'avaient pas de pitié. La conversation tomba sur le publicain Pierre, et il ne se trouva personne qui eût reçu de sa maison la moindre aumône.

Յայնժամ մի ոմն յաղքատացն ասէ. Զինչ տայք ինձ թէ ես առից այսօր ի տանէ նորա ողորմութիւն : Ասացին եւ գրաւն : Եւ գնացեալ եկաց արտաքոյ դրան մաքսապետին եւ սպասէր գալստեան նորա. եւ ի նմին ժամու եկեալ մտանէր ընդ դուռն բարձեալ ի գրաստ հաց զերմակ, եւ աղքատն աղաչէր եւ խնդրէր ի նմանէ ողորմութիւն : Եւ նա դարձեալ այսր անդր յածեալ իբրեւ ոչ գտանէր քար կամ փայտ հարկանել եւ վանել անտի, ի բարկութենէ սրտին առեալ զկտակ մի հաց ձգեաց յերեսս աղքատին. եւ նա * խնդութեամբ առեալ փաղեաց առ ընկերս իւր, եւ ասէր * B p. 163 a.
երդմամբ թէ Յիւր ձեռանէ առի :

Եւ յետ երկուց աւուրց հիւանդացաւ Պետրոս մերձ ի մահ, եւ տեսանէ ի տեսլեան գիշերոյ՝ որպէս թէ համարս պահանջէին ի նմանէ վասն ամենայն գործոց իւրոց զոր արարեալ էր յընթացս կենաց : Եւ արք սեւադէմք, զաժանատեսիլք եւ սոսկալիթխարք ժողովեալ ի մի վայր՝ դնէին ի մի թաթ կշռոյ զչար գործս նորա : Եւ ի միւս կողմն կացեալ արք պայծառադէմք եւ լուսազգեացք սքանչելի եւ ահաւոր տեսլեամբ, եւ ոչ ինչ գործ բարի տեսեալ Պետրոսի՝ տրտմէին յոյժ : Եւ ապա գտեալ զկտակ մի հացին զոր տուեալ էր աղքատին սաստիւ եւ ցասմամբ, եդին ի միւս թաթն եւ ծանրացաւ կշիռն : Եւ ասեն ցՊետրոս. Յաւել այսուհետեւ ի տուրս աղքատաց, ապա թէ

Alors un des pauvres dit : « Que me donnez-vous si aujourd'hui je reçois une aumône de sa maison? » Chacun dit son pari. (Le pauvre) alla se poster à l'extérieur de la porte du chef des publicains et il attendit son arrivée. A ce moment il arriva et entra par la porte avec du pain blanc chargé sur un âne. Le pauvre le supplia de lui faire une aumône. Il jeta un regard à droite, à gauche, et, ne trouvant point de pierre ou de morceau de bois pour frapper (le pauvre) et le chasser de là, la rage au cœur, il saisit une miche de pain et la lança à la figure du pauvre, qui *la reçut avec joie et courut auprès de ses * B p. 163 a.
compagnons; et il leur disait avec serment : « C'est de sa propre main que je l'ai eue! »

Deux jours après, Pierre tomba malade à mourir. Et voici qu'en rêve, la nuit, il a une vision : il lui semblait qu'on lui demandait compte de toutes les actions qu'il avait accomplies au cours de sa vie. Des hommes à figure noire, à l'aspect farouche, des colosses terribles réunis en un endroit mettaient sur l'un des plateaux d'une balance toutes ses mauvaises actions. De l'autre côté des gens à figure joyeuse et revêtus de lumière, à l'aspect merveilleux et terrible, qui n'avaient remarqué aucune bonne action de Pierre, s'attristaient fort. Ayant enfin trouvé l'unique miche de pain que (Pierre), de rage et de colère, avait donnée au pauvre, ils la mirent sur l'autre plateau, et elle pesa dans la balance. Ils dirent alors à Pierre : « Ajoute désormais à tes offrandes aux pauvres, sinon, tu seras livré aux mains de ces gens des

ոչ՝ մատնեցիս ի ձեռս խաւարայնոյս այսոցիկ : Եւ զարթուցեալ Պետրոս ի միտ եառ եթէ ողորմութիւնն փրկէ յահագին դատաստանացն Աստուծոյ, եւ այնուհետեւ այնչափ ողորմած եղեւ մինչ զի յանձն իւր ոչ խնայեաց :

Դէպ եղեւ նմա երթալ ուրեք ի մաքսաւորութիւն, եւ ետես զնա նաւորդ մի մերկ՝ որ զերծեալ էր ի նաւաբեկութենէ եւ կորուսեալ էր զամենայն ինչս իւր, եւ անկեալ առաջի Պետրոսի խնդրէր ի նմանէ ողորմութիւն : Եւ նա հանեալ զներքին հանդերձն իւր ետ նաւորդին, տալով նմա երդումն զի զգեցցի. եւ նա ամաչելով զգենուլ զայն՝ ետ ումեմն ի վաճառել : Եւ ընդ անցանելն Պետրոսի ետեսեալ զայն ի վաճառանոցն՝ տրտմեցաւ յոյժ : Եւ մինչդեռ ի քուն եմուտ՝ ետես զոմն լուսափայլ դիմօք որ ունէր ի գլուխ իւր զխաչ, եւ արկեալ էր զիւրեւ զհանդերձն զայն զոր տուեալ էր նաւորդին, եւ ասէ. Գո՛հ եմ զքէն զի մերկ էի եւ զգեցուցեր զիս :

* B p. 163 b.

* Իսկ Պետրոս զարթուցեալ ի միտս եկն եւ ասէ. Եթէ աղքատն Քրիստոս է, ոչ մեռայց մինչեւ եղէց իբրեւ զմի յաղքատաց : Եւ առժամայն կոչեաց զդպիրն իւր որ էր արծաթագին ծառայ իւր, եւ ասէ. Եթէ ոչ լուիցես ինձ՝ վաճառեմ զքեզ բարբարոսաց : Եւ ետ նմա տասն լիտր արծաթ եւ ասէ. Երթ եւ արա՛ քեզ վաճառս, եւ գնեա՛ զիս իբրեւ զծառայ, եւ տարեալ յԵրուսաղէմ վաճառեա՛ զիս առն քրիստոնէի, եւ զգինս իմ տո՛ւր աղքատաց : Եւ դպիրն արար ըստ հրամանի նորա, եւ գնացին յԵրուսաղէմ

ténèbres. » Pierre, s'étant réveillé, comprit que la charité sauve (l'homme) des terribles jugements de Dieu, et il fut par la suite à ce point charitable qu'il le fut jusqu'aux dépens de sa propre personne.

Il lui arriva d'aller quelque part pour affaire de publicain. Un navigateur nu, qui avait échappé au naufrage et avait perdu tout ce qu'il possédait, l'aperçut, tomba aux genoux de Pierre et lui demanda l'aumône. Pierre se dévêtit de ses habits de dessous, les donna au navigateur en lui faisant jurer qu'il se les mettrait; mais celui-là, ayant honte de les mettre, les mit en vente chez quelqu'un. Pierre, en passant devant le marché, les aperçut et en fut très attristé. Lorsqu'il fut endormi, il vit un homme au visage éclatant de lumière qui avait une croix sur la tête et qui avait endossé les vêtements qu'il avait donnés au navigateur et qui dit : « Je suis content de toi, car j'étais nu et tu m'as habillé. »

* B p. 163 b.

* Pierre, s'étant réveillé, réfléchit et dit : « Si le pauvre c'est le Christ, je ne veux pas mourir avant d'être devenu comme un de ces pauvres. » Et il appela aussitôt son secrétaire, qui était son esclave, qu'il avait acheté à prix d'argent, et lui dit : « Si tu ne m'obéis point je te vendrai aux barbares. » Il lui donna dix livres d'argent et lui dit : « Va, et achète-toi des marchandises, puis achète-moi comme esclave et emmène-moi à Jérusalem; là, vends-moi à un chrétien et donne mon prix aux pauvres. » Le secrétaire fit comme il lui avait été ordonné. Ils se rendirent à Jérusalem et il le vendit à un orfèvre du

եւ վաճառեաց զնա արծաթագործի ումեմն որոյ անուն էր Զուլէ, եւ առեալ յիսուն դահեկան զգինն՝ ետ աղքատաց :

Եւ ինքն Պետրոս զգեցեալ էր հանդերձս անպաճոյճս եւ հնոտիս, եւ կայր ի ծառայութիւն Զուլէ արծաթագործին. եւ նախատէին զնա ծառայակիցքն իւր եւ այպանէին եւ յիմար եւ խելագար կոչէին, եւ բազում անգամ տրտմեցուցանէին զնա :

Եւ ի միում գիշերի երեւեցաւ նմա Քրիստոս որպէս երեւեալ էր նմա յԱփրիկէ, եւ ունէր յիսուն դահեկանն ի ձեռին եւ ասէր ցնա. Մի՛ տրտմիր Պետրէ, զի ահա զգին քո առի, եւ դու համբերեա՛ զի մեծ պսակ պատրաստեալ է քեզ : Եւ զարթուցեալ գոհացաւ զԱստուծոյ եւ կայր ուրախութեամբ :

Եւ յետ այնորիկ եկին ոմանք արծաթագործք յԱփրիկոյ յԵրուսաղէմ վասն աղօթից, եւ Զուլէ կոչեաց զնոսա ի պատիւ, եւ Պետրոս կայր ի սպաս : Եւ արքն նմանեցուցեալ զնա Պետրոսի ասեն ցԶուլէ. Մեծ ոմն ազնուական ունիս ի սպասաւորութիւն քեզ, եւ կամէին ունել զնա :

Եւ Պետրոս փախուցեալ փութացաւ ի դուռն, եւ էր դռնապանն խուլ եւ համր, եւ նշանացի խօսէին նմա ի բանալ եւ ի փակել : Ասէ ցնա Պետրոս. Քեզ ասեմ յանուն Յիսուսի Քրիստոսի բա՛ց զդուռն : Եւ նա առժամայն լուաւ զբարբառ նորա եւ ասէ. Ահաւասիկ եմ * եւ եբաց : Եւ Պետրոս ելեալ ընդ այն գնաց : Յայնժամ խուլն եւ * B p. 164 a.

nom de Zoulé; et ayant reçu pour son prix cinquante écus, il les donna aux pauvres.

Quant à Pierre, vêtu d'habits ordinaires et vieux, il était dès lors au service de l'orfèvre Zoulé. Les autres esclaves, ses compagnons, l'insultaient, se moquaient de lui, l'appelaient fou et idiot, et bien souvent le rendaient triste.

Une nuit le Christ lui apparut, comme il lui était apparu en Afrique, tenant les cinquante écus dans sa main, et lui dit : « Ne t'attriste point, Pierre, car voici que ton prix, je le tiens! Toi, prends patience, car une grande couronne t'est préparée. » A son réveil il rendit grâces à Dieu et il était tout en joie.

Par après, quelques orfèvres vinrent d'Afrique à Jérusalem pour y prier; Zoulé les invita et leur fit les honneurs. Pierre faisait le service. Et ces gens, dans le serviteur ayant reconnu Pierre, dirent à Zoulé : « Tu as à ton service un grand noble, » et ils voulaient le retenir.

Pierre se sauva et se précipita vers la porte. Le portier était sourd et muet, et on lui parlait par signes pour ouvrir et fermer (la porte). Pierre lui dit : « Je te dis au nom de Jésus-Christ : ouvre la porte. » Et celui-là aussitôt entendit sa voix et dit : « Me voilà, » * et il ouvrit. Et Pierre sortit par la porte et s'en alla. Alors le sourd-muet se mit à crier à pleine voix : « L'esclave qui vient de sortir de la maison a ouvert mes oreilles et a délié ma langue. » Les * B p. 164 a.

համբն մեծաւ բարբառով աղաղակէր թէ Ծառային որ եղ ի տանէս՝ եբաց զականջս իմ եւ արձակեաց զկապս : Եւ ելեալ ծառայակիցքն ընթացան յայսկոյս եւ յայնկոյս, եւ ոչ գտին զնա : Եւ սկսան զղջանալ եւ ապաշաւել Զուղէ եւ ամենայն ընտանիք նորա եւ ծառայք, զի յիմար համարէին զնա եւ անարգէին :

Իսկ Պետրոս փախուցեալ գնաց յանապատ, եւ աշակերտեալ սրբոյն Մակարայ մեծի՝ բազում ճգնութեամբ հանգեաւ ի Քրիստոս : Այսպէս աղքատացաւ Պետրոս, եւ ստացաւ զանանց մեծութիւնն ի Քրիստոսէ Աստուծոյ :]

Ահկի Ե եւ Ապրիլ ԺԲ : Վկայութիւն սրբոյն Կրիսկինդոսի :

Քրիստոսի վկայն Կրիսկինդոս էր ի քաղաքէն Միւռոնայ Լիկիացւոց, եւ էր ծերունի եւ ի պատուական ազգէ. եւ տեսանէր զկռապաշտսն զի պատուէին զպղծելի տօնս իւրեանց, գնաց առ նոսա եւ պատուիրէր եւ խրատ տայր ի բաց կալ ի մոլորութենէն եւ դառնալ յԱստուած կենդանի :

Եւ կալեալ զնա կռապաշտքն կացուցին առաջի դատաւորին, եւ անարգեաց զսուրբն չարագլուխ եւ չարադեւ ասելով նմա : Ասէ սուրբն. Ով դատաւոր, Քրիստոս
* A fol. 230 v° b. է * թագաւոր եւ զնա պարտ է պաշտել, եւ ես քրիստոնեայ եմ եւ կամիմ որ ամենեքեան քրիստոնեայ լինիցին, որպէս եւ դու կամիս զի ամենեքեան լինիցին իբրեւ զքեզ : Եւ

autres esclaves, étant sortis, se mirent à courir de-ci de-là, mais ils ne le trouvèrent point. Zoulé et toute sa famille ainsi que les esclaves se mirent à avoir du regret et des remords de l'avoir tenu pour fou et de l'avoir insulté.

Pierre, qui s'était sauvé, se rendit au désert, et, après être devenu disciple du grand saint Macaire, en grand ascétisme, il reposa dans le Christ. C'est ainsi que Pierre se fit pauvre et obtint du Christ Dieu la richesse qui ne passe pas.]

5 AHÉKAN, **12 Avril.**

Martyre de saint Crescentus.

Le martyr du Christ Crescentus était de la ville de Myron en Lycie; c'était un vieillard et il était de noble famille. Il voyait les idolâtres qui célébraient leurs abominables fêtes. Il alla à eux et il leur enjoignait et leur conseillait de se retirer de leur erreur et de se convertir au Dieu vivant.

Les idolâtres, s'étant saisis de lui, le citèrent devant le juge, qui méprisa le saint en l'appelant mauvaise tête et méchant démon. Le saint lui répondit :
* A fol. 230 v° b. « O juge, c'est le Christ qui est * roi, et c'est Lui qu'il faut adorer; moi, je suis chrétien et je veux que tous soient chrétiens, comme toi tu veux que

եհարց դատաւորն եթէ. Զի՞նչ անուն է քո ։ Եւ նա ասէ. Քրիստոնեայ եմ. եւ զանունն ամենեւին ոչ յայտնեաց, այլ ասէր. Մեք ոչ եմք իբրեւ զկուռս ձեր որ զանուանս փոփոխեն, այլ յանուանէ միայնոյ մեծի Աստուծոյ մերոյ Քրիստոսի Փրկչին անուանիմք քրիստոնեայք ։

Եւ հրամայեաց դատաւորն կախել զսուրբն, եւ այնչափ ձաղկեցին մինչեւ ամենայն կողքն քերթեցան ։ Եւ սուրբն աղաղակէր. Քրիստոնեայ եմ եւ անուանիմ Քրիստոսի ծառայ, եւ հայր ունիմ զԱստուած յերկինս, եւ մայրն իմ յերկրի՝ զեկեղեցի, եւ քաղաքն իմ՝ վերին Երուսաղէմ ։ Ասէ դատաւորն. Կարո՛ղ ես մարմնով խոստովանել զաստուածսն մեր, եւ հոգւովդ հաւատալ յԱստուածն քո, եւ ազատիլ ի տանջանացդ ։ Սուրբն ասէ. Հոգին տայ խօսել մարմնոյն, եւ մարմինն զհետ երթայ կամաց հոգւոյն. եւ եթէ հոգին ոչ հրամայէ՝ մարմինն զիա՞րդ կարէ զոհել կռոց զորս ատէ եւ գարշի. եւ ձեռք ո՞րպէս կարեն զոհս մատուցանել առանց հոգւոյ ։

Բորբոքեցին հուր եւ տարան զսուրբն զի արկցեն անդ. եւ նա համբարձեալ զձեռս եւ զաչս յերկինս՝ ասէ. Գոհանամ զքէն Աստուած արարիչ երկնի եւ երկրի, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զի լի կատարեցաւ բանն որ ասէ. * Ոսկի եւ արծաթ * A fol. 231 rº a.

9 մեր *om.* B || 11 կարէ] կարող է B || 12 կարեն] կարող են B || 13 համբարձեալ] համբարձ B.

tous soient comme toi. » Le juge lui demanda : « Quel est ton nom? » Il répondit : « Je suis chrétien, » et il ne lui fit point du tout connaître son nom, et il ajouta : « Nous, nous ne sommes pas comme vos idoles qui changent de nom; nous nous appelons chrétiens du nom de notre seul grand Dieu, le Christ rédempteur. »

Le juge ordonna de suspendre le saint, et on le flagella à tel point que tous ses flancs en furent déchirés. Le saint criait : « Je suis chrétien et je m'appelle serviteur du Christ, j'ai pour père Dieu aux cieux, et ma mère sur la terre c'est l'Église; ma ville c'est la Jérusalem d'en haut. » Le juge dit : « Tu peux bien confesser nos dieux avec ton corps, et croire à ton Dieu avec ton âme, et tu seras délivré de tes tortures. » Le saint répondit : « C'est l'âme qui fait parler le corps, et le corps suit la volonté de l'âme; si l'âme ne commande point, comment peut-il immoler aux idoles démons qu'il hait et qu'il abhorre; comment les mains peuvent-elles offrir des sacrifices sans l'âme? »

On alluma un grand feu et on y conduisit le saint pour l'y jeter. Il éleva les mains et les yeux au ciel et dit : « Je Te rends grâces, Dieu créateur du ciel et de la terre, Père de Notre-Seigneur Jésus-Christ, de ce que s'est accomplie en moi la parole qui dit : * *L'or et l'argent sont éprouvés par le feu*[1]. Reçois * A fol. 231 rº a.

1. Cf. Job, XXIII, 10.

հրով փորձի. ընկա՛լ զաղաչանս իմ որպէս խունկ առաջի քո, վասն խոստովանողաց անուանդ քում սրբոյ, եւ ծանիցեն անաստուածքն եթէ ոչ գոյ այլ Աստուած որ ունի իշխանութիւն կենաց եւ մահու բայց ի քէն, եւ ընկա՛լ զհոգի իմ ։

Եւ մտեալ ի հուրն տարածեաց զձեռմին իւր, եւ աղաղակեաց մեծաւ բարբառով. Փառք քեզ Աստուած ։ Եւ ընդ ձայնին աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Ապրիլի ԺԲ ։ Եւ մազ մի յանձնէն ոչ այրեցաւ եւ ոչ ի գլխոյն ի հուրն ։ Եւ եղեւ պատարագ ընդունելի վասն մոլորեալ քրիստոնէիցն որք յահէն զոհեցին կռոցն, զի դարձցին եւ կեցցեն ըստ խնդրուածոցն իւրեանց ։

Եւ երթեալ քրիստոնէիցն ժողովեցին զոսկերսն եւ թաղեցին ի մէջ պողոտային, երեք ասպարիսաւ հեռի ի քաղաքէն, զի ամենեքեան որք անցանիցեն վայելեսցեն յօրհնութենէ սրբոյ վկային Քրիստոսի Կրեսկենդոսի ։

Յայսմ աւուր վկայն Քրիստոսի Դիոսկորիդոս ի նոյն քաղաքին Միւռոնայ Լիկէացւոց յանօրէն դատաւորէն յետ բազում տանջանաց սրով կատարեցաւ, վասն զի ոչ զոհեաց կռոցն ։

1 զաղաչանս իմ] եւ եղեն աղօթք իմ *add.* B || 5 Աստուած] Քրիստոս՝ Աստծի Ե եւ B || 6 Եւ մազ ... հուրն *om.* B || 8 իւրեանց] իւրոց B || 12 աւուր] սուրբ *add.* B.

mes prières comme l'encens en Ta présence pour ceux qui confessent ton saint nom et que les athées sachent qu'il n'y a point d'autre Dieu qui ait le pouvoir sur la vie et la mort excepté Toi, et reçois mon âme. »

Et étant entré dans le feu, il étendit son corps et cria à haute voix: « Gloire à Toi, Dieu. » Et c'est avec ce cri qu'il rendit son âme à Dieu le 12 avril. Et pas un poil de son corps, pas un cheveu de sa tête ne fut brûlé dans le feu. Il fut agréé comme victime pour les chrétiens égarés qui par crainte avaient immolé aux idoles, afin qu'ils se convertissent et vécussent conformément à ce qu'il avait demandé en ses prières.

Les chrétiens allèrent recueillir ses os et les inhumèrent au milieu de la grand'route, à trois lieues de la ville, pour que tous ceux qui passeraient par là pussent jouir de la bénédiction du saint martyr du Christ Crescentus.

En ce jour le martyr du Christ Dioscoridos de la même ville de Myron de Lycie fut, après bien des tortures, martyrisé par le glaive (par ordre) du juge impie, pour n'avoir point immolé aux idoles.

Ահեկի Զ եւ Ապրիլի ԺԳ : Վկայութիւն սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի ի Պարս եւ Փիւսիկ կիւրապաղատի եւ դստերն եւ Աբդլայի քահանայի :

Փառաւորեալ ծերունին Շմաւոն էր * ամաց հարիւր տասն եւ եօթանց, եւ էր եպիսկոպոս ի Պարսիկս Սալիքտի եւ Կտեսիփոնեայ քաղաքացն, յաւուրս արեգակնապաշտ արքային պարսից Սաբուհոսի : Իբրեւ զարեգակն փայլեաց աստուածահաճոյ բանիւք եւ գործովք ի մէջ գազանաբարոյ ազգացն : * A fol. 231 r° b.

Այս երանելի ծերունիս տեսանէր զպիղծ եւ զզարշելի գործս Պարսից զոր առնէին յեկեղեցիսն Աստուծոյ, վշտանայր եւ տրտմէր յանձին իւրում, եւ խնդրէր յԱստուծոյ մեռանել մարտիրոսութեամբ վասն անուան իւրոյ : Գրեաց հրովարտակ առ արքայն Սաբուհոս այսպէս. Մեք որ ծառայքս եմք Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, գին եմք պատուական արեան նորա, եւ ոչ կարեմք լինել ծառայք ընդ հարկաւ ամբարշտաց : Մեր ոչ արծաթ գոյ եւ ոչ ոսկի, եւ յօժար եմք մեռանել ժամանակ վասն չարչարելոյն վասն մեր :

Եւ յորժամ ընթերցաւ զգիրն բարկացաւ յոյժ, եւ հրամայեաց զի կապանօք տարցեն

1 Վկայութիւն... քահանայի] Վկայութիւն սրբոյն Շմաւոնի կաթողիկոսի Պարսից, եւ Փիւսկեայ կիւրապաղատի եւ դստերն իւրոյ Ասկիտրոյ եւ Աբդլայի քահանայի B || 4 Սալիքտի եւ Կտեսիփոնեայ] Սալի եւ Տիզբոնայ B || 5 պարսից] Տաճկաց *add.* B || 12 ժամանակ *om.* B || 13 վասն մեր] յաղագս մեր B.

6 AHÉKAN, 13 Avril.

Martyre des saints Siméon, évêque en Perse, Phusik, Curopalate, de sa fille et d'Abdla, prêtre.

Le glorieux vieillard Siméon était * âgé de cent dix-sept ans, il était évêque des villes de Salikhte et de Ktisphone en Perse, aux jours de Sapour roi des Perses et adorateur du soleil. Il brilla comme le soleil par ses paroles et ses œuvres agréables à Dieu au milieu de ces populations à mœurs sauvages. * A fol. 231 r° b.

Ce bienheureux vieillard, témoin des actes impurs et exécrables que les Perses commettaient dans les églises de Dieu, s'affligeait et s'attristait en lui-même et il demandait à Dieu de mourir par le martyre, pour son nom. Il écrivit une lettre au roi Sapour en ces termes : « Nous qui sommes les serviteurs de Jésus-Christ fils de Dieu, nous sommes le prix de son précieux sang et nous ne pouvons être esclaves tributaires des impies. Nous ne possédons ni argent, ni or, et nous désirons par-dessus tout mourir pour Celui qui a souffert pour nous. »

Lorsque (le roi) eut lu cet écrit, il entra dans une grande colère et ordonna

զերանելի ծերն առաջի նորա. եւ տարան առաջի երկու աշակերտօք ։ Եւ յորժամ եմուտ երկիր ոչ եպագ ։ Եւ հարցանէին. Ընդէ՞ր երկիր ոչ պագեր արքային որպէս յամենայն ժամ անէիր յորժամ մտանէիր առաջի նորա ։ Եւ նա ասէ. Յորժամ խաղաղութեամբ մտանէի առաջի նորա երկիր պագանէի, այժմ կապեալ շղթայիւք երկիր ոչ պագանեմ. Եւ բազում բանս յաստուածային գրոց խօսեցաւ ընդ թագաւորն ։

* A fol. 231 v° a.

* Հրամայեաց եւ տարան զնա ի բանտ, եւ անդ տարածեալ զձեռս իւր յերկինս՝ խնդրէր յԱստուծոյ կատարել արեամբ զընթացս իւր փութապէս ։ Եւ յետ աւուրց հրամայեաց թագաւորն հատանել սրով զգլուխ նորա եւ այլ քրիստոնէիցն որ վասն Քրիստոսի արգելեալք էին ի բանտն ։ Եւ յորժամ հանին ի բանտէն, հանին եւ այլ կապեալ քրիստոնեայս՝ քահանայս եւ սարկաւագունս եւ կրօնաւորս հարիւր անձն ։

Եւ յորժամ տարան ի տեղին՝ քաջալերէր Քրիստոսի քահանայապետն զսուրբ վկայսն, եւ առաջի նորա հատին զգլուխս հարիւր վկայիցն ։ Եւ մի ի քահանայիցն դողայր յահէն, որում անուն էր Աբդլա, եւ մին պարսիկ որ էր պատուով կուրապաղատ, որոյ անուն էր Փուսիկ, քրիստոնեայ հաւատով, ասէ ցքահանայն Աբդլա որ դողայրն յահէն. Խ՛ց զաչսդ եւ մի երկնչիր, Քրիստոս լուսաւորէ զքեզ ։ Եւ հատին զգլուխ նորա ։

Եւ մատնեցին առ թագաւորն զՓուսիկ Կուրապաղատն եթէ քրիստոնեայ է, եւ

1 ծերն] ծերունին B || 6 տարածեալ] տարածեաց B || 15 զգլուխ նորա] զգլուխ քահանային, եւ ապա հատին յետոյ զգլուխ սրբոյ եպիսկոպոսին Շմաւոնի Ահկի Զ եւ Ապրիլի ԺԳ B.

d'amener le bienheureux vieillard chargé de liens en sa présence. On l'amena accompagné de deux disciples. Lorsqu'il fut entré il ne se prosterna point. Et on lui demandait : « Pourquoi ne t'es-tu pas prosterné devant le roi comme tu le faisais chaque fois que tu te présentais devant lui ? » Il répondit : « Quand je me présentais en paix devant lui, je me prosternais, mais maintenant que me voilà chargé de chaînes, je ne me prosterne point. » Il prononça devant le roi bien des paroles tirées des écritures divines.

* A fol. 231 v° a.

* (Le roi) ordonna de le conduire en prison ; là il étendit ses mains vers le ciel et demandait à Dieu d'achever promptement sa carrière dans le sang. Quelques jours après, le roi ordonna de lui trancher la tête par le glaive, à lui et à d'autres chrétiens qui étaient retenus en prison pour le Christ. Lorsqu'on les fit sortir de la prison, on fit sortir encore d'autres chrétiens enchaînés, des prêtres, des diacres et des religieux : cent personnes.

Lorsqu'ils furent amenés à l'endroit (de l'exécution), le pontife du Christ encourageait les saints martyrs; et on trancha devant lui la tête aux cent martyrs. Un des prêtres, dont le nom était Abdla, tremblait de peur, et un Persan qui avait la dignité de Curopalate, dont le nom était Phousik, et qui était de foi chrétienne, dit au prêtre Abdla qui tremblait de peur : « Ferme tes yeux et n'aie point peur, le Christ t'illuminera. » Et on lui trancha la tête.

On dénonça au roi Phousik le Curopalate comme étant chrétien et on lui

պատմեցին զբանն զոր ասաց ցքահանայն որ դողայրն : Եւ կոչեալ առաջի իւր հարցանէր. եւ նա խոստովանեցաւ համարձակութեամբ զքրիստոնէական հաւատն իւր, եւ զՔրիստոս ճշմարիտ Աստուած : Եւ նոյնժամայն հանին զնա յերեսաց արքային, եւ տարան արտաքոյ ապարանիցն, հատին զլեզուն * եւ գանձն հարկանելով քերթեցին, եւ այնպէս կատարեցաւ աւանդելով զհոգին իւր քաջի խոստովանութեամբ առ Աստուած : * A fol. 231 v° b.

Եւ դուստր մի էր նորա կուսան եւ քրիստոնեայ, կրօնաւորի զգեստով. եւ վասն զի խոստովանեցաւ զանունն Քրիստոսի եւ խնդաց ընդ նահատակութիւնն հօրն իւրոյ՝ հատին եւ զնորա զգլուխն, ի գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ :

[B * Յայսմ աւուր յիշատակ է հազար հազարաց վկայիցն, որք սքանչելի բազմութեամբ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ զանազան կարգաց պաշտօնէից եւ ժողովրդականաց՝ քառասուն ամ հալածանօք ի Պարս շրջեցան, եւ յետոյ մեծ տանջանօք չարչարեալ ընդ սրբոյն Շմաւոնի կատարեցան :] * B p. 164 a.

Ահեկի Է եւ Ապրիլի ԺԴ : Վկայութիւն հազար վկայիցն որ ի Պարս կատարեցան :

Ամպարիշտն եւ անօրէնն Սաբուհրս արքայն Պարսից յորժամ սպանել թագադիրն իւր զներքինի Գուշտազատ եւնայն, յոյժ տրտմեցաւ, եւ բարկութեամբ լցեալ հրամա-

5 կատարեցաւ աւանդելով] աւանդեաց B || 6 զգեստով] զգեստուք B || 13 Վկայութիւն ... կատարեցան] Վկայութիւն սրբոց վկայիցն հազարաց որ ի Պարսիկս կատարեցան B || 15 զներքինի *om.* B.

rapporta les paroles qu'il avait dites au prêtre qui tremblait. (Le roi) le fit venir en sa présence et il l'interrogeait. Il confessa avec hardiesse sa foi chrétienne et le Christ vrai Dieu. Aussitôt on le fit sortir de devant la face du roi, on le conduisit hors du palais, on lui coupa la langue, * à force de le frapper on écorcha tout son corps et c'est ainsi qu'il fut martyrisé et rendit son âme à Dieu en le confessant vaillamment. * A fol. 231 v° b.

Il avait une fille, vierge et chrétienne, qui avait pris l'habit de religieuse. Et, parce qu'elle avait confessé le nom du Christ et s'était réjouie du martyre de son père, on lui trancha la tête, à la gloire de Notre-Seigneur Dieu.

[B * En ce jour commémoration des mille milliers de martyrs qui, multitude admirable d'évêques, de prêtres, de ministres de tous rangs, et de laïques, quarante ans durant, en butte aux persécutions, parcoururent la Perse et furent ensuite martyrisés dans de grandes tortures avec saint Siméon.] * B p. 164 a.

7 AHÈKAN, 14 Avril.

Martyre des mille martyrs qui furent exécutés en Perse.

L'impie et inique roi des Perses, Sapour, après avoir tué son cher ministre couronneur, l'eunuque Gousdazat, devint très triste; et, plein de colère, il

չեաց զամենայն քրիստոնեայսն սրով սպանանել՝ որ ոչն հաւանին բանից նորա, եւ ոչ երկիր պագանեն արեգական եւ հրոյ ։

Եւ անաստուած զօրականքն սուր եղեալ ի վերայ սրբոց վկայիցն եւ հատին հազար քրիստոնէի գլուխ՝ Ապրիլի ԺԴ, զկնի սրբոյ Զատկին, եւ արիւն նոցա որպէս առու հեղաւ ։

Եւ յետոյ զղջացաւ թագաւորն յոյժ ընդ այնչափ զենումն նոցա, եւ հրամայեաց զի այլ քրիստոնեայ վասն հաւատոյն իւրոյ մի մեռցի ։ Եւ եղեւ խաղաղութիւն ամս բազումս մինչեւ Սապուհոս մեռաւ ։

Յայսմ աւուր վկայութիւն Գէորգայ անապատականի ։

* A fol. 232 r° a. Երանելին Գէորգիոս ծերունին * ի լերինս Ողոմպիացւոց ի տղայութենէ վարժեցաւ յաւաքինի ճգնութիւնս, եւ այնչափ արժանապէս ծառայեաց Աստուծոյ ի լերինն պահօք եւ աղօթիւք եւ յոտնկայս տքնութեամբ՝ մինչ զի ամենայն անապատականք լերինն երկրորդ Անտոն զնա անուանէին ։ Եւ այնպիսի խստակրօն վարուք եկաց ամս իննսուն եւ հինգ.

Եւ յաւուրս Լեւոնի արքայի Իսաւրոսի պատկերամարտի, լուաւ զանաստուած

4 գլուխ] Ահկի է եւ *add.* B | 6 յետոյ] յետ սատն աւուր B || 7 մեռցի] բայց վարդապետքն միայն, եւ մի յոյժ բազմութիւնք վկայից սրբոց *add.* B || 9 Վկայութիւն] եւ վարք երանելւոյն *add.* B || 11 յառաքինի] յառաքինական B || 12 յոտնկայս] ոտնկայ B || 13 անուանէին] անուանեցին B — ամս ՂԵ] մինչեւ ի խորին ծերութիւն B || 15 զանաստուած] զանօրէն B.

ordonna de tuer par le glaive tous les chrétiens qui ne se rendaient pas à ses paroles et ne se prosternaient pas devant le soleil et le feu.

Les soldats athées levèrent le glaive sur les saints martyrs et tranchèrent la tête à mille chrétiens le 14 avril après la sainte Pâque. Leur sang coula comme un ruisseau.

Le roi, par la suite, regretta beaucoup le sacrifice de tant de gens, et ordonna qu'aucun chrétien n'eût à subir la mort pour sa foi. La paix régna de nombreuses années jusqu'à ce que Sapour mourût.

En ce jour martyre de Georges l'anachorète.

* A fol. 232 r° a. Le bienheureux vieillard Georges, * dès son enfance dans un ascétisme vertueux, s'entraîna dans les montagnes de l'Olympe, et il servit Dieu avec tant de mérite dans ces montagnes, avec jeûnes, prières, stations debout et sans sommeil, que tous les anachorètes de la montagne l'appelaient le second Antoine. Il persévéra dans cette vie austère quatre-vingt-quinze années.

Aux jours du roi Léon Isaurus l'iconoclaste, il entendit parler des actes

գործոն զոր առնէր թագաւորն, եւ այրէր զտէրունական պատկեր եւ զնշխարս սրբոցն, նոյնպէս եւ զեկեղեցիսն յորում էին նշխարք կամ պատկերք սրբոց՝ կործանէր եւ այրէր : Եւ էջ Գէորգիոս ի լեռնէն, եւ համարձակութեամբ եմուտ առ թագաւորն, եւ յանդիմանեաց զամբարիշտ եւ զնոր գործս նորա :

Եւ նորա բարկացեալ հրամայեաց զան հարկանել զնա ուժգին. եւ այրեցին զգլուխն եւ սրով հատին զհոտոտելիսն, եւ առաքեցին յաքսորս, եւ անդ բարի կատարմամբ հանգեաւ խաղաղութեամբ յԱպրիլի ԺԴ : Եւ ամենայն կրօնաւորք լերանցն անթիւ հազարաց գնացին ի հանգստարանն եւ եդին ի տապանի, եւ մոմեղէնօք եւ խնկօք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ տարան ի լեառն, ուր զայնչափ ժամանակս ճգնեալ էր, եւ թաղեցին ի բնակութեան խուցն իւր :

* Ահեկի Ը եւ Ապրիլի ԺԵ : Վկայութիւն սրբոյն Սաբայ մարտիրոսի : * A fol. 232 r° b.

Սուրբ վկայն Քրիստոսի Սաբա ի Գոթացւոց երկրէն էր, եւ բնակէր ի մէջ չար եւ դժնդակ ազգաց : Եւ մինչդեռ տղայն էր սիրեաց զՔրիստոս, եւ մկրտեցաւ եւ յանդի-

3 Գէորգիոս *om.* B || 7 յԱպրիլի ԺԴ] ի Քրիստոս Ահեկի Է եւ յԱպրիլի ԺԴ ի հասակի իննսուն եւ հինգ ամաց B || 8 անթիւ հազարաց] որք էին բազում յոյժ B || 13 մկրտեցաւ] սրով եւ պատճառ եղեւ բազմաց դառնալոյ ի հաւատս Քրիստոսի : Եւ տեսեալ զմոլորութիւնս կռապաշտից *ad l.* B.

d'athéisme qu'accomplissait le roi, faisant brûler les images du Seigneur et les reliques des saints, en même temps qu'il faisait démolir et brûler les églises qui contenaient les reliques ou les images des saints. Georges descendit de la montagne et se présenta avec hardiesse au roi et il lui reprocha vivement ses actes impies et nouveaux.

Celui-ci, irrité, lui fit infliger une vigoureuse bastonnade. On lui brûla la tête, on lui trancha les narines à coups de sabre et on l'envoya en exil où il finit saintement ses jours et entra en paix dans le repos, le 14 avril. Tous les religieux des montagnes par milliers, innombrables, se rendirent à l'endroit où il reposait et le mirent dans un cercueil, puis le conduisirent avec cierges et encens, psalmodies et bénédictions, à la montagne où il avait véeu en ascète tant d'années et l'inhumèrent dans la cellule qu'il avait habitée.

* 8 AHÉKAN, **15 Avril**. * A fol. 232 r° b.

Martyre de saint Saba, martyr.

Le saint martyr du Christ Saba était du pays des Goths, et vivait au milieu de nations méchantes et cruelles. Encore enfant, il aima le Christ, et fut

մանէր զկռապաշտսն, եւ թքանէր ի պիղծ զոհս նոցա, եւ արգելոյր զքրիստոնեայսն որք կամէին ուրանալ զՔրիստոս եւ ուտել ի զոհիցն. եւ բազում արանց եւ կանանց եղեւ փրկիչ :

Եւ տեսեալ կռապաշտիցն զոր առնէրն Սաբա՝ հանին զնա արտաքս ի քաղաքէն : Եւ դարձեալ յորժամ հալածիչքն ի քաղաքին խնդրէին քրիստոնեայս, երդնուին քաղաքացիքն եթէ ոչ գոյ աստ քրիստոնեայ, յայնժամ Քրիստոսի վկայն Սաբա գնայ ի մէջ նոցա եւ ասէ. Վասն իմ մի՛ ոք երդնուցու զի ես քրիստոնեայ եմ : Եւ կալեալ տարան զնա առ իշխան քաղաքին, եւ նորա տեսեալ զնա աղքատ եւ զձուձ արհամարհեաց եւ եհան արտաքս :

Եւ կամեցեալ սուրբն երթալ առ Գորթիկոն քահանայն զի արասցէ առ նա զոր սրբոյ Զատկին, եւ նա գնացեալ էր ի Հոռոմս, հանդիպի նմա ի ճանապարհին այր մի մեծ եւ ահաւոր, պայծառ տեսակաւ, եւ ասէ. Դարձի՛ր առ Սանսալոն քահանայն : Եւ դարձաւ առ նա եւ տօնեցին զսուրբ Զատիկն ի միասին :

* A fol. 232 v° a. Եւ յետ երից աւուրց ի * գիշերի գնաց Աթանարիքոս իշխանն եւ որդին Ռադոստիոն, եւ կալան զնոսա. զՍանսալոն քահանայն եդին ի վերայ սայլի, իսկ զՍաբա մերկ եւ հետեւակ քարշէին կապանօք, եւ յորժամ տարան զնոսա կապեցին զձեռս եւ զոտս

1 զկռապաշտսն] զնոսա B || 2 որք] առ երկիւղի *add.* B || 5 դարձեալ] յետոյ B — խնդրէին] հալածէին B || 10 զոր] զտօն B || 16 կապեցին] թողին B.

baptisé. Il faisait de vifs reproches aux idolâtres; il crachait sur leurs sacrifices impurs; les chrétiens qui voulaient renier le Christ et manger des sacrifices, il les en empêchait, et il fut le sauveur de beaucoup d'hommes et de femmes.

Les idolâtres, témoins de ce que faisait Saba, le conduisirent hors de la ville. Derechef, lorsque les persécuteurs recherchaient les chrétiens dans la ville, et que les habitants juraient qu'il ne s'y trouvait plus aucun chrétien, à ce moment, le martyr du Christ Saba se rendit parmi eux et dit : « Que personne ne jure pour moi, car je suis chrétien. » On le saisit et on l'amena au gouverneur de la ville, qui, le voyant pauvre et misérable, le méprisa et le fit mettre dehors.

Le saint voulut aller auprès du prêtre Gorticon pour célébrer auprès de lui le saint jour de Pâque, mais ce dernier s'en était allé chez les Grecs. Chemin faisant, il rencontra un homme grand et terrible, d'un aspect éblouissant, qui lui dit : « Retourne auprès du prêtre Sansalon. » Il retourna auprès de celui-ci et ils fêtèrent ensemble la sainte Pâque.

* A fol. 232 v° a. Trois jours après, * le gouverneur Athanarikos et son fils Radostion s'en vinrent, de nuit, et se saisirent d'eux. Ils mirent le prêtre Sansalon sur un chariot; quant à Saba, nu et marchant à pied, ils le tiraient par des liens. Après

Սաբայի ի սայլին, եւ կապեցին յորսայս զցայգ եւ զցերեկ. եւ ապա լուծին անտի եւ կախեցին ի գերանս տանն, եւ առաքեցին նմա միս ի զոհից կռոցն, եւ սուրբն անարգանօք ետ դարձոյց : Իջուցին ի կախաղանէն եւ տարան ի գետն որ կոչի Մուսոն. կապեցին ի պարանոցն գերան եւ ընկեցին ի գետն, եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Ապրիլի ԺԵ :

Էր սուրբն Սաբա յորժամ մարտիրոսացաւ ամաց երեսուն եւ ութից, յաւուրս բարեպաշտ թագաւորին Յունաց Վաղենտիանոսի : Եւ Սորանոս դուքս երկրին այնմիկ քրիստոնեայ էր, եհան զմարմին սրբոյն ի գետէն, եւ տարաւ հաւատովք ի Կապադովկիա ի գաւառ իւր :

[B * Յայսմ աւուր վկայութիւն երանելւոյն Նիկողայոսի նոր նահատակին : * B p. 167 b.

Հաւատարիմ վկայն Քրիստոսի Նիկողայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտի, պատանի հնգետասանամեայ, գեղեցիկ տեսլեամբ եւ վայելուչ հասակաւ : Եւ այլազգիք յորդորէին զնա ուրանալ զՔրիստոս եւ դառնալ ի կրօնս իւրեանց, եւ խոստանային նմա բազում պարգեւս եւ պատուութիւնս. իսկ նա ոչ բնաւ ունկն մատուցանէր նոցա : Եւ յաւուր միում իբրեւ կարի ստիպեցին՝ արհամարհեաց զկրօնս նոցա, եւ դաւանէր զՔրիստոս Աստուած :

Յայնժամ կուտեցան այլազգիք ի վերայ նորա եւ ածին յատեան, եւ ամբաստան

3 Մուսոն] Իմուսոն B || 5 Աստուած] Աշխի Ը եւ *add.* B || 7 Վաղենտիանոսի] Վաղենտիանոսի մեծի B || 9 գաւառ իւր] ուր շինեցաւ վկայարան վասն նորա *add.* B.

les avoir ainsi emmenés, on lia les mains et les pieds de Saba dans le chariot, et on l'y lia sur le dos, (et on l'y laissa) jour et nuit; puis on l'en détacha et on le suspendit aux poutres de la maison et on lui envoya de la viande des sacrifices faits aux idoles; le saint la renvoya avec mépris. On le fit descendre de son gibet et on l'emmena au fleuve appelé Mouson. On lui attacha au cou une poutre et on le jeta dans le fleuve. C'est ainsi qu'il rendit son âme à Dieu le 15 avril.

Saint Saba avait trente-huit ans lorsqu'il fut martyrisé aux jours du pieux empereur des Grecs Valentius. Le duc du pays, Soranos, était chrétien; il fit retirer du fleuve le corps du saint, et le transporta avec foi dans sa province en Cappadoce.

[B* En ce jour martyre du bienheureux Nicolas, nouveau martyr. * B p. 167 b.

Le fidèle martyr du Christ Nicolas était de la ville de Tigranakert. C'était un jeune homme de quinze ans, beau de visage et de belle taille. Les infidèles l'engageaient à renier le Christ et à se convertir à leur religion, et lui promettaient beaucoup de présents et de dignités. Il ne leur prêtait nullement l'oreille. Un jour qu'ils l'avaient pressé très fort, il méprisa leur religion et confessa le Christ Dieu.

Alors les infidèles s'ameutèrent contre lui, le conduisirent au tribunal, et

եղեն զնմանէ, թէ Հայհոյեաց զկրօնս մեր : Եւ դատաւորն բազում ողոքանօք եւ սպառնալեօք ջանացաւ ձգել զնա յուրացութիւն եւ ոչ կարաց : Քանզի քաջ նահատակն Քրիստոսի ոչ ողոքանացն անսաց եւ ոչ ի սպառնալեացն երկեաւ, այլ անդրդուելի
* B p. 168 a. կացեալ * ի հաւատս՝ համարձակ եւ անխափան խոստովանէր զՔրիստոս Աստուած :

Եւ հրամայեաց դատաւորն եւ տարան զնա ի հրապարակն, ուր կայր վէմ մի յորոյ վերայ խորտակէին զձեռս եւ զոտս մահապարտաց, եւ անդ եւս խրատ տային նմա դահիճքն ուրանալ զՔրիստոս եւ ապրել, եւ ասեն ցնա. Ահա հանդերձեալ եմք խորտակել զձեռս քո եւ զոտս, եւ մեռցիս չարաչար : Եւ նա ասէ. Ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանիլն շահ : Եւ առժամայն զուարթ երեսօք տարածեաց զերկոսին ձեռս եւ զերկոսին ոտս իւր ի վերայ վիմին : Եւ նոքա հարեալ կացնաւ ջախջախեցին զայնս, եւ թողին անդ ոգեսպառ զայն գիշեր եւ նստեալ պահէին : Եւ նա անխափան օրհնէր զԱստուած որ արժանաւորեաց զնա մարտիրոսական մահուան :

Այլ ի միւսում աւուր հրաման առեալ ի դատաւորէն բարձին անտի քրիստոնեայք եւ տարան ի տուն, ուր անդադար աղօթիւք խնդրէր ի տեառնէ ելանել ի մարմնոյ եւ մտանել առ Աստուած : Եւ կացեալ այնպէս զաւուրս երիս ի ցաւագին տանջանս, բարի խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած : Եւ առժամայն ծագեաց

l'accusèrent : « Il a blasphémé contre notre religion. » Le juge s'efforça par beaucoup de supplications et de menaces de l'amener au reniement, mais il n'y parvint point. Car le vaillant martyr du Christ n'écouta ni les supplications,
* B p. 168 a. ni n'eut peur des menaces, mais, inébranlablement établi * dans sa foi, il confessait avec hardiesse, et sans qu'on pût l'en empêcher, le Christ Dieu.

Le juge ordonna de l'amener au tribunal, où se trouvait une pierre sur laquelle on brisait les mains et les pieds des condamnés à mort, et là encore les bourreaux lui conseillaient de renier le Christ pour avoir la vie sauve. Ils lui dirent : « Voici que nous nous apprêtons à briser tes mains et tes pieds et tu mourras cruellement. » Il répondit : *Le Christ est ma vie et la mort m'est un gain* [1]. Et aussitôt avec un visage souriant il étendit ses deux mains et ses deux pieds sur la pierre. Ils les frappèrent avec une hache, les brisèrent, et le laissèrent là à moitié mort cette nuit; puis, après s'être assis, ils le gardaient. Et lui, sans qu'on pût l'en empêcher, bénissait Dieu qui l'avait jugé digne de la mort du martyre.

Le lendemain les chrétiens, ayant obtenu la permission du juge, le relevèrent et le transportèrent dans une maison. Là, dans des prières continuelles, il demandait au Seigneur de sortir de ce corps et d'être admis auprès de Dieu. Et après avoir ainsi persévéré trois jours dans de douloureux tourments, en vaillant confesseur, il rendit son âme à Dieu. Aussitôt, au-dessus de son saint

1. Philippiens, I, 21.

լոյս պայծառ ի վերայ սուրբ մարմնոյ նորա ակներեւ ամենեցուն որք էին անդ ։ Եւ տարեալ թաղեցին զնա սաղմոսիւք եւ երգօք հոգեւորօք ։

Եւ առաջնորդ քաղաքին առեալ զաջ երանելի պատանւոյն, եւ գողացեալ զվէմն յորոյ վերայ խորտակեցան ձեռք եւ ոտք նորա, եդ ի հիմն եկեղեցւոյն զոր ձեռնարկեալ էր շինել ։

Կատարեցաւ երանելի վկայն Քրիստոսի Նիկողայոս ի թուին հայոց հազար իննսուն եւ մի եւ Ապրիլի ԺԵ ։]

Ահկի Թ եւ Ապրիլ ԺԶ ։ Վկայութիւն Ղեւոնդիոսի եւ եօթն սրբուհի կանանցն՝ Քարեսի, Նունեքեայ, Բասիլիսեայ, Նիկիսի, Գալինի, Կալլիդոսայ, եւ Թէոդորայ, որք ի Կորնթոս կատարեցան ։

Այս բարեյաղթ վկայքս Քրիստոսի էին յԵլլադայ գաւառին. եւ սուրբն Ղեւոնդիոս շրջէր բազում քրիստոնէիւք * արամբք եւ կանամբք, եւ քարոզէին զՔրիստոս եւ (* A fol. 232 v° b.) տօնէին մեծաւ պայծառութեամբ զսուրբ Յայտնութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ երգէին մեծաւ համարձակութեամբ զերգս սաղմոսաց ։

Եւ կռապաշտքն կալան ի Տրէզինեա քաղաքին զսուրբն Ղեւոնդիոս եւ զեօթն սուրբ կանայսն զորս յանուանէ գրեցաք. տարան ի Կորնթոս քաղաքն առ Քեննուպոս դատա-

8 Ղեւոնդիոսի] Լեւոնիդասի B || 9 Բասիլիսեայ] Վասիլիսայ B || 11 Ղեւոնդիոս] Լէոնիդէս B || 16 Քեննուպոս] Բեննուստոս B.

corps, rayonna une lumière éclatante que virent de leurs yeux tous ceux qui étaient là. On l'enterra avec psalmodies et chants spirituels.

Le chef (de la communauté) de la ville prit la main droite du bienheureux jeune homme, et, après avoir dérobé la pierre sur laquelle les mains et les pieds avaient été brisés, il la posa dans la fondation de l'église qu'il avait entrepris de construire.

Le bienheureux martyr du Christ Nicolas fut martyrisé l'année de l'ère arménienne mil quatre-vingt-onze, le 15 avril.]

9 AHÉKAN, 16 Avril.

Martyre de Léontios et des sept saintes femmes : Kharès, Nounekia, Basilivsa, Nikise, Galine, Kallidos et Théodora, qui furent martyrisés à Corinthe.

Ces glorieux martyrs du Christ étaient de la province de l'Hellade. Saint Léonce circulait accompagné de beaucoup de chrétiens, * hommes et femmes ; (* A fol. 232 v° b.) et ils prêchaient le Christ, célébraient avec un grand éclat la sainte Épiphanie du Christ notre Dieu et chantaient avec beaucoup de hardiesse les cantiques des psaumes.

Les idolâtres saisirent en la ville de Trézinea saint Léontios et les sept saintes femmes dont nous avons cité les noms, les conduisirent à la ville de

ւսին : Հրամայեաց եւ զսուրբն Ղեւոնդիոս կախեցին եւ քերեցին զմարմինն, եւ զսուրբ կանայսն գան հարին. եւ նոքա իբրեւ զվէմ ապառաժ անշարժ կային յուղիղ հաւատն Քրիստոսի : Եւ հրամայեաց զամենեսեան խեղդել ի ծովն :

Եւ յորժամ տանէին՝ սաղմոսէին մեծաձայն. արկին զնոսա ի նաւն, եւ նոյնպէս խնդութեամբ երգէին : Եւ յորժամ տարան զնոսա ի ներքս երեսուն ասպարիսաւ, կապեցին դահիճքն վէմ յոտս նոցա եւ ընկղմեցին զամենեսեան ի ծովն. եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս :

* B p. 168 b. [B * Յայսմ աւուր տօն է սրբոց Իւղաբեր կանանցն որք սպասաւորեցին Քրիստոսի թաղմանն, եւ ի գերեզմանին ականատեսք եղեն կենարար յարութեանն :

Առաջին եւ մեծ էր Մարիամ Մագդաղենացին ջերմն սիրողն Տեառն մերոյ, յորմէ եօթն դեւ ելեալ էր, զորմէ բազումս աւետարանիչքն պատմեն գովութեամբ :

Սա բազում չարչարանս կրեաց վասն Քրիստոսի ի Կայիափայ կատարեցաւ նահատակութեամբ. եւ կայ յագարակին * որ կոչի Մագդաղեայ մօտ ի Նազարէթ : Բայց յայլ գիրս սորա բազում պատմութիւնք գործոց եւ սքանչելեաց են եւ իրք մեծամեծք : (* B p. 169 a.)

Եւ միւս Մարիամն, զոր ասեմք եւ զնա Մագդաղենացի ասեն, եւ պատմեն թէ կատարեցաւ յԵրուսաղեմէ հեռի գոլով եօթանասուն ասպարիսաւ :

5 ի ներքս երեսուն ասպարիսաւ] հասուցին երեսուն ասպարէզ ընդ ծովն B || 7 կատարեցան ի Քրիստոս] բայց հաւատով աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած ՌՀկի Թ եւ Ապրիլի ԺՁ B.

Corinthe au juge Khénoustos. Celui-ci ordonna de suspendre saint Léontios et de lui déchirer le corps. Quant aux saintes femmes, on les chargea de coups, mais elles demeurèrent inébranlables comme un roc dans la droite foi du Christ. Ensuite il ordonna de les noyer tous dans la mer.

Pendant qu'on les y conduisait, ils psalmodiaient à haute voix. On les jeta dans un bateau, et toujours pareillement avec joie ils chantaient. Puis quand ils les eurent amenés jusqu'en eau profonde, à trente lieues, les bourreaux attachèrent des pierres à leurs pieds et les immergèrent tous dans la mer. Et c'est ainsi qu'ils furent martyrisés pour le Christ.

* B p. 168 b. [B * En ce jour fête des saintes femmes porteuses de parfums qui furent les ministres de la sépulture du Christ et, au tombeau, les témoins oculaires de la résurrection vivificatrice.

La première et la plus grande fut Marie-Madeleine, l'Amante fervente de Notre-Seigneur, de qui sept démons étaient sortis, et au sujet de laquelle les évangélistes racontent beaucoup de traits qui sont à son éloge.

Celle-ci eut à souffrir beaucoup de tortures pour le Christ de la part de Caïphe et mourut par le martyre. Elle repose dans le champ * qui s'appelle le champ de Madeleine, près de Nazareth. Mais d'autres livres contiennent beaucoup de récits de ses actes et miracles et contiennent de très grandes choses. (* B p. 169 a.)

Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր, և Մարիամ և Մարթա քորք Ղազարու, եղբարբ հանդերձ հալածեալ ի Հրէիցն և ի Սադուկեցւոցն, ընկեցեալ եղեն ի Յոպպէ ի ծովն, ուր զՏաբիթայն սնուցին :

Սաղոմէ մայր որդւոցն Զեբեդեայ՝ որ ի Յարութեան Տեառն պատմի, կատարեցաւ իւրով մահուամբ :

Յովհաննա և Շուշան, բազում չարչարանս կրեալ ի Մագդաղայեանէն կատարեցան :

Զոքանչն Սիմոնի, բազում համարձակութեամբ վկայեաց վասն Քրիստոսի, և կայ ի Կափառնայում :

Եղիսաբէթ, մայրն Յովհաննու Մկրտչին, իւրով մահուամբ կատարեցաւ :

Աննա, դուստրն Փանուէլի, որ ի տաճարն մարգարէացաւ զՔրիստոսէ, իւրով մահուամբն փոխեցաւ առ Տէր :

Բայց ունիմք այլ ճշմարիտ պատմութիւն եթէ Մարիամ Մագդաղենացին գնացեալ յԵփեսոս զկնի Յովհաննու աւետարանչի, և անդ կատարեցաւ : Իսկ Լատինքն ասեն եթէ Մարիամ Մագդաղենացին՝ քոյրն Ղազարու է, և նա է որ էօծ զՏէրն, զոր և պատմեն աւետարանիչքն, և ասեն եթէ գնացեալ քարոզեաց ի Փրանգն, և անդ կատարեցաւ :

L'autre Marie, appelée également Madeleine par certains, et dont on raconte qu'elle mourut loin de Jérusalem, à une distance de soixante-dix lieues.

Marie, mère de Jacques et de Josée, Marie et Marthe sœurs de Lazare qui furent persécutées avec leur frère par les Juifs et les Saducéens, et furent jetées à la mer, à Jaffa, où elles avaient élevé Tabitha.

Salomé, mère des fils de Zébédée, dont on parle à la résurrection du Seigneur, et qui mourut de sa propre mort.

Jeanne (*Johanna*) et Suzanne qui, après avoir enduré bien des tourments de la part du gouverneur de Magdala, moururent.

La belle-mère de Simon qui confessa avec beaucoup de hardiesse le Christ et repose à Capharnaüm.

Élisabeth, mère de Jean-Baptiste, qui mourut de sa propre mort.

Anne, fille de Phanuel, qui prophétisa dans le temple au sujet du Christ, qui mourut de sa propre mort. Elle fut transportée auprès du Seigneur.

Cependant nous avons un autre récit vrai qui dit que Marie-Madeleine, après s'être rendue à Éphèse à la suite de Jean l'évangéliste, y finit sa vie. Les Latins, eux, disent que Marie-Madeleine est la sœur de Lazare et que c'est elle qui oignit le Seigneur comme le racontent les évangélistes, et ils disent qu'elle se rendit au pays des Francs, y prêcha et y mourut.

Եւ երեք Մարիամ քոյրք ասեն լինել, զՄարիամ աստուածածինն, եւ զՄարիամ Կղէովպայ, զոր ասեն մայր Յակովբայ եւ Յովսեայ, եւ Մարիամ Սողոմէ, մայր Յովհաննու եւ Յակովբայ: Էր եւ այլ ոմն Մարիամին, քոյրն Փիլիպպոսի, մի ի սրբոց կանանցն եւ առաքելուհեաց :]

Ահեկի Ժ եւ Ապրիլի ԺԷ : Վկայութիւն Սիմոնի առաքելոյն որդւոյն Կղէովպայ :

*Սուրբ առաքեալն Քրիստոսի Սիմոն՝ որդի էր Կղէովպայ եղբօրն Յովսեփայ, որ անուանեցաւ այր Մարիամայ : Զսա ձեռնադրեցին առաքեալքն եպիսկոպոս Երուսաղեմի յետ Յակոբայ. եւ քարոզէր զՔրիստոս համարձակութեամբ, եւ առնէր նշանս եւ սքանչելիս անուամբն Քրիստոսի : Եւ մատնեցին զնա Հրեայքն Դոմետիանոսի արքային Հռոմայ թէ * յազգէ Դաւթի եւ Քրիստոսի է, եւ ածին առաջի թագաւորին, եւ տեսեալ զնա այր ծեր եւ տառապեալ, արձակեաց զնա :*

* A fol. 233 r° a.

Եւ նորա շրջեալ ընդ բազում տեղիս քարոզեաց զՔրիստոս, եւ եկեալ յԵրուսաղէմ ըմբռնեալ զնա Հրէիցն խեղդեցին : Եւ այնպէս բարի խոստովանութեամբ կատարեցաւ սուրբ առաքեալն Սիմոն Ապրիլի ԺԷ :

5 Վկայութիւն] Տօն է սրբոյ B || 13 խեղդեցին] խաչեցին B || 14 Սիմոն] Ահեկի Ժ եւ *add.* B.

On dit encore que les trois Marie étaient sœurs : Marie, mère de Dieu, Marie de Cléophas qu'on dit avoir été la mère de Jacques et de Josée et Marie Salomé, mère de Jean et Jacques. Il y avait aussi une autre Marie, sœur de Philippe, une des saintes femmes et apôtres.]

10 AHÉKAN, 17 Avril.

Martyre de l'apôtre Simon fils de Cléophas.

Le saint apôtre du Christ Simon était fils de Cléophas, le frère de Joseph qui fut appelé l'époux de Marie. Les apôtres le sacrèrent évêque de Jérusalem après Jacques. Il prêchait le Christ avec hardiesse, faisait des prodiges et des miracles par le nom du Christ. Les Juifs le dénoncèrent à l'empereur de Rome Dometianus comme étant * de la famille de David et du Christ, et ils le conduisirent en présence du roi. Mais quand il eut vu cet homme vieux et miséreux, celui-ci lui rendit la liberté.

* A fol. 233 r° a.

Il circula dans de nombreux endroits en prêchant le Christ et, arrivé à Jérusalem, les Juifs se saisirent de lui et l'étranglèrent. C'est ainsi qu'en vaillant confesseur mourut le saint apôtre Simon, le 17 avril.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Արդալէոնի կատակողին ։

Քրիստոսի մարտիւրոսն Արդալէոն կատակող էր, եւ խաղայր առաջի Մաքսիմիանոսի կռապաշտ արքային եւ այլ իշխանաց եւ ժողովրդեանն, եւ յոյժ սիրէին զնա, զի մեծամեծ խրախճանօք ուրախացուցանէր զնոսա ։

Եւ տեսանէր ի չարչարանս զսուրբ վկայսն, եւ զպատասխանիս նոցա ի միտ առնոյր ։ Ի միում աւուր նստաւ իշխանն ի թէատրոնն բազում ամբոխիւ, եւ մտեալ ի մէջն Արդալէոն՝ նստոյց զմի յընկերաց իւրոց որպէս դատաւոր յաթոռ, եւ ինքն եղեւ քրիստոնեայ, եւ այսլն առնելով խաղ առնէին զքրիստոնեայս ։ Եւ ասէ սուտ դատաւորն կատակելով. Զո՞վ պաշտես ։ Ասէ Արդալէոն. ԶՅիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ ։ Ասէ դատաւորն. Զոհեա՛ կռոց մերոց եւ բազում բարեաց հանդիպիս ։ Ասէ Արդալէոն. Ոչ զոհեմ կռոց զի դեւք են ։ Եւ բազում ժամս ծիծաղելով վիճէին ընդ միմեանս ։

Մերկացուցին զնա եւ պրտուով ծեծէին թեթեւ. * կախեցին զփայտէ եւ որպէս թէ երկաթի ճանկօք քերէին զմարմինն. եւ ժողովուրդք ծիծաղէին խրախճանօք ։ Եւ յորժամ իջուցին ի փայտէն՝ ծագեաց լոյս մարդասիրութեանն Աստուծոյ ի սրտի իւրում, եւ * A fol. 233 r° b.

2 խաղայր] յիմարանայր B || 6 ամբոխիւ] ընդ նմա *add.* B.

En ce jour martyre de saint Ardalon le comédien.

Le martyr du Christ Ardalon était comédien, et il jouait devant Maximin, l'empereur idolâtre, devant d'autres princes et devant la foule; et ils l'aimaient beaucoup pour les joyeusetés fort bouffonnes dont il les réjouissait.

Il voyait les saints martyrs au milieu de leurs tortures et retenait leurs réponses. Un jour que le gouverneur était venu occuper son siège au théâtre accompagné d'une grande foule, Ardalon entra en scène, fit asseoir un de ses compagnons sur un siège en qualité de juge, prit le rôle du chrétien et en les tournant en dérision ils se moquaient des chrétiens. Le faux juge demanda en plaisantant : « Qui adores-tu? » Ardalon répondit : « Jésus-Christ, le fils de Dieu. » Le juge lui dit : « Immole à nos idoles et tu obtiendras beaucoup de biens. » Ardalon répondit : « Je n'immole pas aux idoles, car ce sont des démons. » Et longtemps ainsi en plaisantant ils discutaient ensemble.

On le mit à nu et avec un jonc on le frappait légèrement. * Puis on le suspendit à un poteau et on fit semblant de lui déchirer le corps avec des ongles de fer. Et les foules riaient de joie. Mais lorsqu'on le descendit du poteau la lumière de la bonté de Dieu pour les hommes jaillit dans son cœur * A fol. 233 r° b.

պատուիրեաց ժողովրդեանն լռել ։ Եւ նոքա կարծէին եթէ խաղ ինչ կամի առնել՝ լռեցին ։

Ասէ մեծաւ բարբառով ընդ իշխանին եւ ընդ ժողովուրդն. Գիտասջիք ամենեքեան որ ճշմարիտ քրիստոնեայ եղէ ես, եւ ոչ եւս ընդ այպն կամ ընդ խաղս խօսիմ ընդ ձեզ, զի շնորհք Քրիստոսի լոյս ծագեաց ի սրտի իմում ։ Եւ յայսմհետէ անարգեմ եւ թքանեմ ի կուռս ձեր, եւ այպն առնեմ զպաշտօնեայս եւ զերկրպագողս նոցա, եւ անգոսնեմ եւ նախատեմ զի դիւապաշտք են ։

Եւ ընթացեալ ի տաճարն եղծեաց ի մէջ կռոցն եւ առեալ օծեաց յերեսն զբագինսն եւ դարձաւ ի ժողովուրդն եւ ասէ. Ես գնացի եւ խնկեցի զաստուածսն ձեր. արդ զինչ հրամայէք զի առնեմ աւելի ։ Եւ ընթացաւ մի ոմն ի քրմացն եւ պատմեաց իշխանին եւ ժողովրդեանն զոր արար, եւ յոյժ տրտմեցան ամենայն ժողովուրդն ։

Կոչեաց իշխանն առ ինքն եւ ողոքանօք խրատ տայր, եւ ինչս խոստանայր ուրանալ զՔրիստոս եւ դառնալ ի կուռսն որպէս յառաջն. եւ ամենեւին ոչ հաւանեցաւ, այլ եւ դարձաւ յարեւելս եւ աղօթեաց առ Աստուած յամենայն սրտէ ։

1 եթէ] նորադոյն *add.* B ‖ 4 եղէ ես] եմ B ‖ 7 դիւապաշտք են] եւ ասէ. Տեսէք զիս թէ որպէս պատուեմ զաստուածսն ձեր. եւ խանարհեցուցեալ զգլուխ իւր յերկիր, եւ սկսաւ հանել ի փորոյն փուքս մեծաձայնս ։ Եւ միոյ միոյ ասէր. Այս քեզ Ապողոն, այս քեզ Հեփեստոս, այս քեզ Ասկղեպիոս, այս քեզ Հերակլիոս ։ Եւ որչափ հանէր՝ բաշխէր կռոցն, եւ զարշահոտութեամբն ելից զժողովուրդն *add.* B ‖ 8 ընթացեալ] ընթացաւ B — օծեաց յերեսն զբագինսն] էօծ զերեսս բագնացն B ‖ 9 խնկեցի] զամենայն *add.* B ‖ 12 խրատ... խոստանայր] եւ բազում խոստմամբ խրատ տայր B ‖ 13 դառնալ ի կուռսն] զոհել կռոցն B.

et il ordonna à la foule de se taire. Celle-ci, croyant qu'il voulait faire quelque bouffonnerie, se tut.

Alors, à haute voix, il dit en s'adressant au gouverneur et à la foule : « Sachez, tous, que je suis devenu un vrai chrétien, et que je ne vous parle plus en raillant ou en plaisantant, car la grâce du Christ a illuminé mon cœur. Désormais je méprise vos idoles et je crache sur elles, je me moque de leurs ministres et de leurs adorateurs; j'en fais fi et je les insulte, car ce sont des adorateurs de démons. »

Il courut au temple, gâta au milieu des idoles, et en barbouilla leurs visages, les autels, puis retourna devant la foule et lui dit : « Je viens d'aller encenser vos dieux, que voulez-vous que je fasse de plus maintenant? » Un des prêtres des idoles courut raconter au gouverneur et à la foule ce qu'il venait de faire, et toute la foule en fut très contristée.

Le gouverneur l'appela à lui et il l'engageait avec supplications, et en lui promettant des biens, de renier le Christ et de revenir aux idoles comme auparavant. Il n'y consentit nullement, bien plus il se tourna vers l'orient et pria Dieu de tout son cœur.

* Հրամայեաց իշխանն հուր բորբոքել, եւ ընկեցին անդ զսուրբ վկայն Քրիստոսի, եւ ի մէջ հրոյն աղօթելով աւանդեաց զհոգին առ Քրիստոս յոր հաւատաց եւ յուսացաւ Ապրիլի ԺԷ: * A fol. 233 v° a.

[B * Յայսմ աւուր յիշատակ սուրբ հայրապետին Յովհաննու իմաստասիրին Օձնեցւոյ: * B p. 170 b.

Սուրբ եւ երանելի հայրապետն մեր Յովհաննէս իմաստասէր էր ի գաւառէն Տաշրայ, ի գեղջէն Օձուն, ի տանէ քաջաց եւ առաքինեաց:

Սա ի մանկութենէ վարժեալ յուսումն աստուածային գրոց՝ գնացեալ աշակերտեցաւ մեծ վարդապետին Թէոդորոսի Քռթենաւոր կոչեցելոյ. եւ ուսեալ ի նմանէ զամենայն ուսումն՝ գերազոյն գտաւ քան զբազումս, մանաւանդ թէ քան զամենեսին որ էին յիւրումն ժամանակի: Եւ եղեւ քաջ տեղեակ աստուածային եւ արտաքին գիտութեանց, յաջողակ ի քերթողութեան արուեստի, պերճ ի հռետորական հանդիսի, եւ առաւելեալ յոյժ յուսումն փիլիսոփայական մակացութեանց, վասն որոյ եւ կոչեցաւ իմաստասէր:

Եւ էր անձամբն վայելչահասակ եւ թիկնաւէտ՝ շքեղատիպ եւ փառացի. ի ներքոյ ունէր զգեցեալ խարազն խիստ եւ անըմբերելի, իսկ արտաքուստ յաւուրս հանդիսի ագանէր աչեղակերպս, մինչեւ ամենեցուն ակն ածել ի նմանէ եւ պատկառանօք մերձիլ առ նա:

2 յուսացաւ] Ահկի Ժ եւ *add.* B.

* Le gouverneur ordonna d'allumer un grand feu et on y jeta le saint martyr du Christ, qui tout en priant au milieu des flammes rendit son âme au Christ, en qui il avait cru et espéré, le 17 avril. * A fol. 233 v° a.

[B * En ce jour commémoration du saint patriarche le philosophe Jean Otznetzi. * B p. 170 b.

Notre saint et bienheureux patriarche Jean, le philosophe, était de la province de Tashir, du village d'Otzoun, d'une famille dont les membres étaient vaillants et vertueux.

Dès son enfance il s'appliqua à l'étude des écritures divines et alla auprès du grand docteur Théodore surnommé Kerténavor, devint son disciple, apprit de lui toute la science, se montra supérieur à beaucoup et surtout à tous ceux qui vivaient à son époque. Il devint très versé dans la science divine et profane, très habile dans l'art poétique, magnifique dans l'action oratoire, mais surtout dans l'étude des disciplines philosophiques, et c'est pourquoi il fut surnommé le philosophe.

De sa personne il était de taille élégante, avec de larges épaules, beau de visage et de prestance imposante. Sous ses vêtements il portait de la bure rude et incommode; mais à l'extérieur il portait, les jours de cérémonie, des vêtements imposants qui faisaient que tout le monde le respectait et l'approchait avec vénération.

Սա ինքն երանելի հայրս մեր յետ մահուան տեառն Եղիայի կաթողիկոսի հաւանութեամբ իշխանացն եւ ամենայն աշխարհին յաջորդեաց յաթոռն կաթողիկոսութեան, եւ փոյթ կալաւ ամենայն խնամով հովուել զհօտ իւր. շրջէր ընդ * ամենայն տեղիս, եւ զբարեկարգ սահմանադրութիւնս նախնի սուրբ հարցն հաստատէր յեկեղեցիս Հայաստանեայց :

* B p. 171 a.

Եւ յերկրորդում ամի կաթողիկոսութեան իւրոյ հրաման եհան առ համօրէն եպիսկոպոսունս աշխարհին Հայոց, եւ արար ժողով ի հայրապետական աթոռն ի մայրաքաղաքն Դուին, ուր քաջ ատենախօսութեամբ առաջի արար զանկարգութիւնս որք ընդ այն ժամանակս մտեալ էին յեկեղեցիս մեր, եւ հաւանութեամբ ամենեցուն սահմանեաց կանոնս երեսուն եւ երկու ի բարեկարգութիւն եկեղեցւոյ սրբոյ :

Յետ ամաց ինչ Վլիթ ոստիկան որ կարգեալ էր ի վերայ աշխարհին Հայոց, կոչեցեալ յամիրապետէն՝ գնաց ի Դամասկոս. եւ յանդիման լեալ ամիրապետին Օմարայ՝ բազում բանս գովութեան խօսեցաւ վասն սրբոյ հայրապետին մինչեւ ցանկացաւ տեսանել զնա : Վասն որոյ պատգամաւորս առաքեալ կոչեաց զնա գալ առ ինքն եւ յանդիման լինել իւրով զարդարեալ զգեստուք, զոր ի տօնական հանդէսս ագանէր :

Եւ իբրեւ գնաց առ նա սուրբ հայրապետն Յովհան, տեսեալ ամիրապետին զշքեղութիւն կերպարանաց նորա եւ զվայելչութիւն զգեստուցն պատուեաց զնա յոյժ.

Ce bienheureux père à nous, après la mort du seigneur Élie, le patriarche, et avec le consentement des autorités et de tout le pays, lui succéda sur le siège patriarcal. Dès lors il se mit avec empressement, en toute sollicitude, à paître son troupeau. Il parcourait * toutes les localités et affermissait dans les églises de l'Arménie toutes les bonnes institutions des saints pères ses prédécesseurs.

* B p. 171 a.

La deuxième année de son catholicat, il publia une ordonnance pour tous les évêques du pays d'Arménie d'avoir à se réunir en un concile au siège patriarcal, dans la capitale Dwin, où, avec une courageuse éloquence, il leur représenta les abus qui s'étaient introduits à cette époque dans nos églises et, avec le consentement de tous, il institua trente-deux règlements pour l'édification de la sainte Église.

Après quelques années, l'ostikan Vlith, qui avait été préposé sur tout le pays d'Arménie, ayant été appelé par l'émir, se rendit à Damas et, s'étant présenté à l'émir Omar, lui parla avec de grands éloges du saint patriarche, tant et si bien qu'il manifesta le désir de le voir. Aussi envoya-t-il des messagers pour l'inviter à venir auprès de lui et à se présenter dans ses vêtements pompeux qu'il portait les jours de fête.

Lorsque le saint patriarche Jean se fut rendu auprès de lui et que l'émir eut vu la beauté de ses traits et la magnificence de ses vêtements, il l'honora grandement; et après avoir conversé avec lui sur bien des sujets, il lui dit :

եւ յետ խօսելոյ ընդ նմա բազում ինչ՝ ասաց ցնա. Ոչ ապաքէն ըստ օրինաց ձերոց պարտ է ձեզ խոնարհ զգենուլ, ապա ընդէր այդպէս զգեցեալ էք : Նա պատասխանի ետ եւ ասէ. Զայդ յայդ սակս առնեմք, զի որովհետեւ պակասեալ են ի ձեռս մեր գործք սքանչելեաց որով ձգին ժողովուրդք ի բարին, զորս առնէր Քրիստոս եւ աշակերտքն նորին. հարկիմք ապա ահեղ գնացիւք զարհուրեցանել զնոսա ի չարեաց : Այլ քանզի տակաւին ամիրապետն ցուցանէր զինքն գայթակղեալ ի վերայ զգեստու նորա, առիպեալ սուրբ հայրապետին եցոյց նմա յառանձին * տեղւոջ զխարազն զոր զգեցեալ էր ի վերայ մերկ մարմնոյն : * B p. 171 b.

Եւ յորժամ ամիրապետն մերձեցոյց յայն զձեռն իւր՝ սոսկացաւ եւ ապշեցաւ յոյժ, եւ ասէ. Զիա՞րդ հնար է մարդկային մարմնոյ ժուժկալել այսպիսի անբերելի խստութեան եթէ չիցէ տուեալ նմա համբերութիւն յԱստուծոյ : Եւ բազում պարգեւօք պատուեալ զնա յուղարկեաց մեծաշուք փառօք ի Հայս : Եւ նորա եկեալ յաթոռն իւր ի խաղաղութեան եւ ի բարեկարգութեան պահէր զազգն իւր, եւ ինքն անձանձիր ի վարս առաքինութեան եւ ի քարոզութիւն ուղիղ վարդապետութեան :

Եւ կացեալ ի հայրապետութեան ամս մետասան սքանչելի քաղաքավարութեամբ եւ նշանագործ սրբութեամբ՝ փոխեցաւ առ Քրիստոս, եւ թաղեցաւ յանապատին իւրում :]

« Ne devez-vous pas, d'après vos lois, vous vêtir humblement? Pourquoi donc êtes-vous habillé comme vous l'êtes? » Il lui répondit : « Nous faisons cela parce que les œuvres de miracles qu'opéraient le Christ et ses disciples, pour attirer le peuple au bien, manquant entre nos mains, nous sommes obligés de nous montrer dans une tenue qui inspire la crainte pour le détourner du mal. » Mais comme l'émir continuait à se montrer scandalisé de ses vêtements, force fut au saint patriarche de lui montrer dans un endroit à l'écart * la bure qu'il portait sur son corps nu. * B p. 171 b.

Lorsque l'émir l'eut touchée de sa main, il fut frappé d'horreur et de stupeur et dit : « Comment le corps humain peut-il endurer austérité aussi insupportable, si l'endurance ne lui est point accordée par Dieu? » Il l'honora de nombreux présents et le renvoya en Arménie avec de grands honneurs. Et retourné à son siège, il maintenait sa nation dans la paix et dans l'ordre, et, personnellement, s'adonnait avec entrain à la pratique de la vertu et à la prédication de la vraie doctrine.

Et après avoir occupé le siège patriarcal pendant onze années avec une merveilleuse urbanité et une sainteté qui opéra des prodiges, il s'en alla au Christ, et fut enterré dans sa solitude.]

Ահեկի ԺԱ եւ Ապրիլի ԺԸ ։ Վկայաբանութիւն սրբոյն Յուլիանոսի վկային ։

Մարտիրոսն Քրիստոսի Յուլիանոս էր ի քաղաքէն Անարզաբու Կիլիկեցւոց, քրիստոնեայ եւ քրիստոնէից զաւակ, եւ ուսաւ յոյժ գիրս, եւ եղեւ հմուտ աստուածաշունչ գրոց ։

Եւ յորժամ եղեւ ութ եւ տասն ամաց՝ մատնեցին զնա առ դատաւորն Մարկիանոս ։ Եւ յորժամ կացուցին զնա առաջի՝ բռնադատէին զնա ուրանալ զՔրիստոս. եւ նա անխախտելի եկաց ի ճշմարիտ հաւատն ։ Գան հարին զնա ուժգին, եւ բռնութեամբ բացին զբերանն եւ արկին ի գինւոյ եւ ի ճարպոյ զոհիցն, եւ տարան զնա կապանօք յեգիպտացւոց քաղաքն, եւ անդ դարձեալ նեղէին զնա զոհել կռոցն, եւ նա ամենեւին ոչ հաւանեցաւ ։ Եւ տարան զմայր իւր զԱսկղեպիոդորա, եւ հարցանէին նմա. եւ նա ասէ. Տուք ինձ զորդին իմ զերիս աւուրս եւ խորհեսցուք ի միասին. եւ արարին
* A fol. 233 v° b. * այնպէս ։ Եւ յետ աւուրց տարան զնոսա առաջի, եւ երկոքեանն յամենայն սրտէ խոստովանեցան մեռանել վասն հաւատոյն Քրիստոսի ։ Եւ զերանելի կինն Ասկղեպիոդորա գան հարին յոյժ եւ արձակեցին ։

Իսկ զսուրբն Յուլիանոս արկին ի քուրձ եւ լցին աւազով, արկին եւ թունաւոր

1 վկային] եւ մօր իւրոյ Ասկղեպիդեայ *add.* B || 5 առ] կուապաշտ *add.* B || 9 յեգիպ-տացւոց] յեգիպացւոց B.

11 AHÉKAN, **18 Avril.**

Martyre de saint Julien, le martyr.

Le martyr du Christ Julien était de la ville d'Anazarbe de Cilicie, il était chrétien et fils de chrétiens, il étudia beaucoup les lettres et devint versé dans les écritures divines.

Lorsqu'il eut dix-huit ans on le dénonça au juge Marcianus. Quand on l'eut fait comparaître devant lui, on cherchait à le contraindre à renier le Christ, mais il demeura inébranlable dans la vraie foi. On le roua de coups, on lui ouvrit de force la bouche et on y introduisit du vin et de la graisse des sacrifices. On le conduisit enchaîné à la ville d'Égypte, et là encore on le pressait d'immoler aux idoles, mais il n'y consentit nullement. On fit venir sa mère Asclépiodora et on l'interrogeait. Elle répondit : « Rendez-moi mon fils pendant trois jours, et nous réfléchirons ensemble. »
* A fol. 233 v° b. Ainsi * fit-on. Après ces jours on les fit comparaître et tous les deux, de tout cœur, confessèrent vouloir mourir pour la foi du Christ. On roua de coups la bienheureuse femme Asclépiodora et on la relâcha.

Quant à saint Julien, en le mit dans un sac qu'on remplit de sable, on y

աղուես եւ ընկեցին ի խորս ծովուն, եւ անդ հանգեաւ յԱպրիլի ԺԸ։ Եւ ալիք ծովուն հանին ի ցամաք զքուրցն մարմնովն յԱղեքսանդրիա քաղաքն. եւ կին մի այրի քրիստոնեայ եգիտ ի ծովեզրն, եւ տարաւ ի տուն իւր, եւ պատուով պաշտաւորէր։ Իսկ սուրբն ծանոյց զինքն կնոջն եւ նա եդիր զնա ի տապանի։ Եւ եղեւ մեռանել որդւոյ այրի կնոջն, եւ թաղեաց զնա ի տապանի սրբոյն Յուլիանոսի, եւ բազում հիւանդք եւ դիւահարք բժշկեցան անդ։

Եւ հարք կրօնաւորք ի Տաւերներսիոյ լեռնէն գնացին ի տեղին զի առցեն զնշխարս սրբոյն Յուլիանոսի։ Եւ յորժամ բացին զտապանն գտին զմարմին մանկանն ողջ, եւ զերեսն պայծառ առաւել քան զոր էրն ի կենդանութեանն եւ զնշխարս սրբոյ վկային սպիտակ իբրեւ զձիւն։ Եւ առեալ փոխեցին ի պատուական տեղի. եւ բազում բժշկութիւնք լինին որք հաւատով մատչին առ նա։

[B * *Յայսմ աւուր վկայութիւն Յուսուփայ պարսկի նոր վկայի, որ կոչեցաւ Իսահակ։* * B p. 172 a.

*Սա էր ի քաղաքէն Դաւրիժոյ երիտասարդ չար եւ սաստիկ թշնամի քրիստոնէից, որ ի մանկութենէ անտի ատէր զքրիստոնեայս. զի ժողովէր ի փողոցաց զոսկերս շանց, եւ * երթեալ զհետ քրիստոնեայ մանկանց ի տունս նոցին արկանէր ի մէջ կարասեացն* * B p. 172 b.

1 *հանգեաւ*] *կատարեցաւ Ահեկի ԺԱ եւ* B || 3 *պաշտաւորէր* ... *նա* om. B || 9 *առաւել* ... *կենդանութեանն* om. B || 10 *բժշկութիւնք*] *սքանչելագործ զօրութիւնք* B.

mit également des reptiles venimeux et on le jeta dans les profondeurs de la mer; c'est là qu'il reposa le 18 avril. Les vagues de la mer rejetèrent à terre le sac contenant le corps en la ville d'Alexandrie; une femme chrétienne le découvrit sur le rivage, le transporta dans sa maison et elle lui rendait ses devoirs avec honneur. Le saint se fit connaître à la femme, qui le mit ensuite dans un tombeau. Le fils de cette femme qui était veuve vint à mourir et elle l'enterra dans le tombeau de saint Julien. Nombre de malades et de possédés du démon trouvèrent là la guérison.

Les pères religieux de la montagne Tavernersi se rendirent sur les lieux pour prendre les reliques de saint Julien. Lorsqu'on ouvrit la tombe, on y trouva le corps de l'enfant, intact, et la figure plus fraîche qu'elle n'était de son vivant; quant aux restes du saint martyr ils étaient aussi blancs que la neige. Ils prirent (le corps) et le transportèrent dans un endroit honorable; et bien des guérisons ont lieu pour ceux qui s'en approchent avec foi.

[B* En ce jour martyre de Youssouf, le Persan, le nouveau martyr, qui fut appelé Isaac. * B p. 172 a.

Il était de la ville de Taurus. C'était un jeune homme méchant et ennemi acharné des chrétiens; il haïssait les chrétiens depuis son enfance. Il ramassait dans les rues les os des chiens et, * suivant les enfants chrétiens jusque * B p. 172 b.

յորոց ըմպէին ջուր. առնէր եւ զայլ անարգանս ընդդէմ եկեղեցւոյ եւ հայհոյէր զուղղ հաւատս ։

Եւ եղեւ ի միում գիշերի ի ննջել Յուսփայ ի տան իւրում տեսիլ ահաւոր. զի յանկարծակի բացան երկինք եւ էջ Քրիստոս եւ նստաւ փառօք ի վերայ հրեղէն աթոռոյ, եւ կային շուրջ զնովաւ բազմութիւնք հրեշտակաց եւ սրբոց ։ Եւ հայեցեալ ի վերայ Յուսփայ զայրագին դիմօք, հրամայեաց միոյ ի հրեշտակաց իւրոց, եւ տարեալ եցոյց նմա զպէս պէս չարաչար տանջանս դժոխոց, եւ զանճառելի փառս արքայութեան ։ Եւ ասէ ցնա հրեշտակն. Տեսե՞ր այժմ զբարեգործս եւ զհաւատացեալս Քրիստոսի եւ զփառս նոցա. արդ եւ դու եթէ տակաւին կացցես ի մոլորութեանդ յայդմիկ գնասցես ի տեղի տանջանացն ուր այրէին մեղաւորք եւ անհաւատք ի հուրն անշէջ. ապա եթէ դարձցիս եւ հաւատասցես ի Տէր Յիսուս՝ եկեսցես յայս տեղի փառաց եւ ուրախ լիցիս ի Տէր յաւիտեան ։ Եւ ապա առեալ էած զնա առաջի աթոռոյն Քրիստոսի ։

Յայնժամ գոչեաց Յուսուփ մեծաձայն եւ ասէ. Տէր իմ եւ Աստուած իմ Յիսուս Քրիստոս մեղայ, հաւատամ ի քեզ, մի՛ թողուր զիս երթալ յայն տեղի տանջանաց ։ Զնոյն ձայն նորա լուեալ մօրն եւ եղբարցն որք կային ի տան, եւ իմացեալ զնշանակութիւն բարբառոյն զահի հարան եւ ապշեցան յոյժ, եւ ընթացեալ առ նա հազիւ

dans leur maison, il jetait (les os) dans les ustensiles dans lesquels ils buvaient de l'eau. Il commettait encore d'autres indignités contre l'Église et blasphémait la sainte foi.

Il arriva qu'une nuit, pendant que Youssouf dormait chez lui, il eut un songe terrible : Le ciel s'entr'ouvrit tout d'un coup, le Christ en descendit et s'assit avec gloire sur un trône de feu; des multitudes d'anges et de saints l'entouraient. (Le Christ), après avoir regardé Youssouf d'un air courroucé, donna un ordre à l'un de ses anges et celui-ci, après l'avoir emmené, lui fit voir les divers supplices cruels de l'enfer et les gloires ineffables du paradis. L'ange lui dit : « As-tu vu à présent les hommes de bien et les fidèles du Christ et leur gloire? Maintenant, si tu persévères encore dans ton erreur, tu iras au séjour des supplices où brûlaient dans un feu inextinguible les pécheurs et les infidèles; mais si tu te convertis et si tu crois au Seigneur Jésus, tu viendras dans ce séjour de gloire et tu seras heureux dans le Seigneur éternellement. » Ensuite, après l'avoir pris, (l'ange) le reconduisit devant le trône du Christ.

Alors Youssouf cria à haute voix et dit : « Mon Seigneur et mon Dieu Jésus-Christ, j'ai péché, je crois en Toi, ne me laisse point aller dans ce séjour des supplices. » Sa mère et ses frères qui se trouvaient à la maison, ayant entendu ses cris et ayant compris le sens de ses paroles, furent pris de peur et d'une grande stupeur. Ils accoururent auprès de lui et ne purent qu'à

կարացին զարթուցանել, եւ հարցանէին. Զի՞ եղեւ քեզ, ընդէ՞ր այնպէս աղաղակեցեր ։ Եւ նա պատմեաց նոցա զտեսիլն. եւ սկսաւ համարձակ դաւանիլ զհաւատն Քրիստոսի ։

Եւ ելեալ ի տանէն եգիտ զՍտեփաննոս վարդապետ՝ Լալուկ կոչեցեալ, եւ պատմեաց նմա կարգաւ զամենայն տեսիլն, եւ մկրտեալ ի նմանէ եղեւ քրիստոնեայ եւ անուանեցաւ * Իսահակ ։ Եւ ուսեալ զհայերէն դպրութիւն խելամուտ եղեւ հին եւ նոր կտակարանաց, եւ զի քաջ գիտէր եւ զգիրս այլազգեաց վիճէր ընդ նոսա, եւ յաղթահարէր ի գրոց իւրեանց ։ * B p. 173 a.

Եւ նոցա ամբոխ արարեալ կուտեցան ի վերայ նորա, եւ պէս պէս բանիւք ողոքանաց եւ սպառնալեաց ջանացան փոխել զմիտս նորա. եւ տեսեալ թէ հաստատուն կայ ի հաւատս Քրիստոսի, գանեցին զնա ուժգին, եւ իբրեւ խելագար հեծուցին ի վերայ ուղտու, եւ նախատանօք շրջեցուցանէին ընդ ամենայն փողոցս քաղաքին ։ Եւ նա ուրախ էր ի նախատինս վասն Քրիստոսի, եւ ասէր ի գնալն ի վերայ ուղտու. Գոհանամ զքէն Աստուած իմ եւ Տէր Յիսուս Քրիստոս ։

Եւ ապա իջուցեալ չարչարեցին ազգի ազգի տանջանօք եւ թողին կիսամահ ։ Այլ գթացեալ ի նա ընտանեացն առին զնա եւ պատեցին ի մէջ մորթոյ, եւ խնամ տարան զաւուրս քառասուն մինչեւ առողջացաւ ։

grand'peine le réveiller. Et ils lui demandaient : « Qu'est-ce qu'il t'est arrivé et pourquoi as-tu crié ainsi? » Il leur raconta le songe, et se mit à confesser ouvertement la foi au Christ.

Et étant sorti de la maison, il alla trouver le docteur (prêtre) Étienne, surnommé Lalouk, et lui raconta en détail tout le songe, se fit baptiser par lui, devint chrétien et reçut le nom * d'Isaac. Il apprit les lettres arméniennes, approfondit l'Ancien et le Nouveau Testament et, comme il connaissait bien aussi les écritures des infidèles, il discutait avec eux et les vainquait par leurs propres écritures. * B p. 173 a.

Alors (les infidèles), s'étant ameutés, se soulevèrent contre lui, et, avec bien des paroles de supplication et de menace, ils cherchèrent à changer ses idées; mais quand ils virent qu'il demeurait ferme dans la foi du Christ, ils le frappèrent brutalement, le firent monter, comme un fou, sur un chameau, puis tout en l'injuriant, ils le promenaient par toutes les rues de la ville. Mais lui, il était dans la joie d'être insulté pour le Christ et répétait, tandis qu'il allait ainsi à dos de chameau : « Je Te rends grâces, mon Dieu et Seigneur Jésus-Christ. »

On le fit ensuite descendre, on le soumit à divers supplices et on l'abandonna à moitié mort. Les membres de sa famille, ayant eu pitié de lui, l'emportèrent, l'enveloppèrent dans une peau et le soignèrent pendant quarante jours, jusqu'à ce qu'il fût guéri.

Եւ ելեալ անտի գնաց ի Հեշատ քաղաք, ի Գուռնավա, ի Լայիլան եւ ի Նախջուան, եւ յամենեսին ի նոսա քարոզէր զՔրիստոս. եւ բազում եւ դառն չարչարանս կրեաց ի թշնամեաց Քրիստոսի, եւ անփորձ պահեցաւ խնամօքն Աստուծոյ ։

Եւ դարձեալ եկն ի Դաւրէժ, եւ անտի ի Մարաղա, եւ գնաց յԱրճէշ քաղաք, եւ ոչ դադարէր ի քարոզելոյ զՔրիստոս. զոր կալեալ Պարսից փորեցին խորխորատ, եւ անդ արկեալ զԻսահակ՝ թափեցին քարինս ի վերայ նորա այլ ոչ սպանին ։ Բայց մի ոմն հարեալ ուժգին խորտակեաց զբազուկ նորա, եւ ինքն պատուհասեալ մեռաւ չարաչար զկնի վեց աւուրց ։

Եւ շրջեալ յաշխարհն Մարաց եւ Պարսից, Հայոց եւ Վրաց, եւ յայլ հեռաւոր գաւառս զամս իբրեւ քառասուն զանս եւ հարուածս եւ մահաբեր չարչարանս կրելով յամենայն տեղիս, դարձոյց զբազումս յայլազգեաց ի հաւատս Քրիստոսի ։ Եւ հասեալ
* B p. 173 b. քարոզութեամբ յերկիրն Շրուանայ, ի քաղաքն * Շամախի, եւ անդ կալեալ մատնեցաւ ի ձեռս դատաւորին. եւ քննեալ յատենի խոստովանեցաւ զՔրիստոս Աստուած, եւ հատաւ ի վերայ նորա վճիռ մահու ։

Յայնժամ ասէ Իսահակ դատաւորին. Խնդիր մի հայցեմ ի քէն, եթէ կատարես՝ ինձ մեծ երախտաւոր լինիս, եւ այս է. զի այրեսցես զիս հրով ի նշանակ սիրոյն Քրիստոսի, որ վառեալ կայ ի սրտի իմում ։ Եւ տարան զնա ի տեղի կատարման, եւ

Il partit de là et se rendit à la ville Héchat, à Gournava, à Laïlan et à Nakhidjévan, et dans toutes ces villes il prêchait le Christ. Il endura de nombreux et cruels supplices de la part des ennemis du Christ, mais fut conservé sain et sauf par les soins de Dieu.

Il revint de nouveau à Tauris, de là à Maragha et se rendit à la ville de Artchèche sans cesser de prêcher le Christ. Les Persans, l'ayant saisi, creusèrent une fosse et y jetèrent Isaac. Ils firent tomber des pierres sur lui, mais ils ne le tuèrent point. Quelqu'un pourtant, lui ayant porté un coup violent, lui brisa le bras, mais celui-là même fut puni d'une mort cruelle six jours après.

(Isaac) parcourut le pays des Mèdes, des Perses, des Arméniens, des Géorgiens, et d'autres contrées éloignées, pendant quarante années environ, en endurant partout des coups de bâton, des blessures, des tortures meurtrières, et convertit de nombreux infidèles à la foi du Christ. Il arriva, tout en prê-
* B p. 173 b. chant, dans le pays de Chirouan, à la ville * de Chamakh, et là il fut saisi et livré entre les mains du juge. Interrogé au tribunal, il confessa le Christ Dieu. Une sentence de mort fut portée contre lui.

Alors Isaac dit au juge : « Je ne te demanderai qu'une chose; si tu me l'accordes, tu seras pour moi un grand bienfaiteur, la voici : Tu me brûleras dans le feu pour signifier par là l'amour du Christ qui brûle dans mon cœur. » Et on le conduisit à l'endroit de l'exécution, et quelqu'un de la foule lui frappa

մի ոմն յամբարշտէն եհար հաստ բրով զգլուխ նորա, եւ պատառեցաւ գագաթն եւ հոսէր արիւն յորդ ընդ երեսն. եւ նա գոհանայր զԱստուծոյ որ արժանի արար մարտիրոսական մահուան :

Եւ ապա զրոհ տուեալ քարկոծեցին զնա անդ, եւ յետոյ այրեցին զմարմին սրբոյն : Եւ ի գիշերին լոյս պայծառ ծագեաց ի վերայ նշխարաց նորա, զոր ակներեւ տեսին ամենայն այլազգիքն :

Եւ եղեւ կատարումն Յուսփայ, որ Իսահակն կոչեցաւ, ի թուին Հայոց ութ հարիւր վաթսուն եւ վեց, Ահկի ԺԱ եւ Ապրիլի ԺԸ : Եւ է բարեխօս վասն մեր առ Քրիստոս :]

* Ահկի ԺԲ եւ Ապրիլի ԺԹ : Վկայութիւն Սահակայ եպիսկոպոսի եւ երկու հարիւր եօթն վկայիցն Բիւրականու : *A fol. 234 r° a.

Անօրէն իշխանն Իսմայէլացի Աբդլա առաքեաց ոստիկան մի յերկիրն Հայոց, որոյ անուն էր Յուսուփ, որդի Ապուսաճի, այր անօրէն եւ խորամանկ : Սա բազում չարիս անցոյց ընդ աշխարհն Հայոց, կամեցաւ ըմբռնել զկաթողիկոսն Հայոց զտէրն Յովհաննէս, եւ առաքէ զօր բազում ի գիշերի ի վերայ ամրոցին Բիւրականու, ուր անդ էր կաթողիկոսն, եւ ինքն իջեալ էր ի Դուին քաղաք Հայոց : Եւ գիտացեալ կաթողիկոսին

9 Վկայութիւն] սրբոյն *add.* B — եպիսկոպոսի] Հայոց *add.* B || 11 Իսմայէլացի] Հագարացւոց B || 14 ի գիշերի *om.* B.

la tête avec un gros bâton et lui fendit le crâne, et le sang ruisselait le long de la figure; mais, lui, il rendait grâces à Dieu de l'avoir rendu digne de la mort du martyre.

Puis après s'être élancés sur lui ils le lapidèrent sur place; ensuite ils brûlèrent le corps du saint. La nuit au-dessus de ses reliques rayonna une lumière éclatante que les infidèles purent voir de leurs yeux.

Le martyre de Youssouf, appelé Isaac, eut lieu l'année huit cent soixante-six de l'ère arménienne, le 11 ahékan, le 18 avril. Il est notre intercesseur auprès du Christ.]

* 12 AHÉKAN, 19 Avril. *A fol. 234 r° a.

Martyre de l'évêque Sahak et des deux cent sept martyrs de Burakan.

L'impie émir ismaélite Abdla avait envoyé un ostikan en Arménie dont le nom était Youssouf, fils d'Apousadj, homme impie et rusé, qui fit bien du mal au pays d'Arménie. Il voulut se saisir du seigneur Jean, le catholicos des Arméniens. Il envoya donc de nombreuses troupes nuitamment sur le fort de Burakan où se trouvait le catholicos, tandis que lui était descendu à Dwin,

փախեաւ ։ Եւ նոքա պաշարեալ զամրոցն առին զնա, եւ գտին զեպիսկոպոսն Սահակ հիւանդ․ կալան եւ զայլ մարդիկ ամրոցին եւ չարչարէին ուրանալ զՔրիստոս եւ լինել տաճկակրօնիք եւ արձակեցեն զնոսա ։

Եւ սուրբ եպիսկոպոսն քաջալերէր զնոսա հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի, եւ մեռանել նահատակութեամբ ։ Եւ նոցա զաղաղակ բարձեալ եթէ՝ Քրիստոնեայ եմք եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած է մեր, եւ զնա ոչ ուրանամք, զոր ինչ կամիք արարէք ։ Եւ նոցա սպանեալ ի նոցանէ արս երկու հարիւր եւ եօթն, որոց անուանքն գրեալ են ի դպրութիւն կենաց ։

Իսկ զեպիսկոպոսն Սահակ բազում չարչարեալ՝ հատին զնորա պատուական գլուխն Ապրիլի ԺԹ ։ Եւ զայլսն գերի վարեալ տարան ի Դուին, զարս եւ զկանայս եւ

* A fol. 234 r° b. * զմանկտիս ։

Յայսմ աւուր վարք Ագապիտոսի Հռոմայ հայրապետին ։

Մեծ եւ սքանչելի այրս այս Ագապիտոս էր ի Հռոմայ քաղաքէն, յաւուրս բարեպաշտ արքային Յուստինիանոսի մեծին ։ Եւ առաքինի վարուք հաճոյ եղեւ Աստուծոյ եւ բազում սքանչելագործութեամբքն նախանձաւոր եղեւ ուղղափառ հաւատոյ, եւ զգուշու-

2 ուրանալ] զի ուրասցին B || 3 լինել տաճկակրօնիք] դարձցին ի կրօնս իւրեանց B || 5 նոցա] առ հասարակ *add.* B || 9 չարչարեալ] վասն հաւատոյն որ ի Քրիստոս, եւ իբրեւ ոչ լուաւ նոցա *add.* B || 10 գլուխն] Ապրիլի ԺԲ եւ *add.* B || 11 զմանկտիս] զմանկունս B || 13 Մեծ] Սուրբ եւ մեծ B.

ville d'Arménie. Le catholicos, prévenu, prit la fuite. Eux, après avoir assiégé le fort, le prirent et trouvèrent l'évêque Sahak, malade. Ils se saisirent aussi d'autres gens du fort, et ils les tourmentaient pour leur faire renier le Christ et se convertir à la religion musulmane : à ce prix, ils auraient la liberté.

Et le saint évêque les encourageait à demeurer fermes dans la foi du Christ et à mourir en martyrs. De parmi eux alors un cri s'éleva : « Nous sommes chrétiens et le Christ est notre vrai Dieu, nous ne Le renions pas; faites ce que vous voulez. » Sur leur nombre ils tuèrent deux cent sept hommes dont les noms sont inscrits dans le livre de la vie.

Quant à l'évêque Sahak, après l'avoir beaucoup torturé, ils tranchèrent sa tête vénérable le 19 avril. Ils emmenèrent les autres personnes, hommes,

* A fol. 234 r° b. femmes et* enfants, en captivité à Dwin.

En ce jour vie d'Agapius le pontife de Rome.

Ce grand et merveilleux personnage Agapius était de la ville de Rome, (et vivait) aux jours du pieux empereur le grand Justinien. Par sa vie vertueuse il se rendit agréable à Dieu, et en plus des nombreux miracles qu'il

թեամբ պահէր զպատուիրանս Աստուծոյ, եւ արժանաւորեցաւ նստել յառաքելական աթոռն Հռոմայ :

Եւ յորժամ ձեռնադրեցաւ՝ ելեալ ի քաղաքէն գնայր ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն Յուստինիանոս, եւ յորժամ եհաս յԵլլադա՝ տեսեալ այր մի կաղ եւ համր, գթացաւ ի նա եւ ի ծնօղսն նորա, զի յոյժ ողբային զդաւակն իւրեանց. եւ մատուցեալ զաստուածային խորհուրդ պատարագին՝ հրամայեաց եւ եդին մերձ իւր զկաղն եւ զհամր այրն : Եւ յորժամ կատարեաց զաղօթս իւր առ Աստուած կալեալ զձեռանէ նորա առաջի ամենայն ժողովրդեանն կանգնեաց. եւ եղեւ ողջ եւ գնայր հաստատուն ոտիւքն : Եւ արկ ի բերան նորա ի սուրբ եւ ի պատուական մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, եւ ի հաղորդելն՝ խօսեցաւ ամբողջ լեզուաւն : Եւ ամենայն ժողովուրդքն փառս ետուն Աստուծոյ :

Եւ յորժամ եհաս յոսկի Դուռն Կոստանդնուպօլսի * բազում ժողովուրդք ելին ընդ առաջ նորա, եւ տարան առաջի նորա այր մի կոյր. եւ նորա եդեալ ձեռս ի վերայ՝ աղօթիւք եւ անուամբն Աստուծոյ եբաց զաչսն եւ լուսաւորեաց զայրն : * A fol. 234 v° a.

Եւ յորժամ եմուտ ի քաղաքն մեծաւ ուրախութեամբ ընկալաւ զնա թագաւորն եւ իշխանքն եւ ամենայն ժողովուրդն : Եգիտ անդ զԱնթիմոս զեպիսկոպոսն Տրապեզոնդոյ

12 յոսկի Դուռն] յՈսկեդուռն B.

opéra, il fut zélé pour la foi orthodoxe et observait scrupuleusement les commandements de Dieu. Il se montra digne de s'asseoir sur le trône apostolique de Rome.

Lorsqu'il eut été sacré, après avoir quitté la ville, il faisait route vers Constantinople pour se rendre auprès de l'empereur Justinien. Arrivé en Hellade, il aperçut un homme boiteux et muet. Il eut pitié de lui et de ses parents qui se lamentaient beaucoup sur le sort de leur fils. Et après avoir offert le divin sacrifice de la messe, il ordonna de placer auprès de lui l'homme boiteux et muet. Puis quand il eut fini d'adresser à Dieu ses prières, il le prit par la main en présence de toute la foule et le redressa. Voilà l'homme guéri et marchant d'un pas ferme. Il lui mit ensuite dans la bouche du saint et précieux corps et sang du Fils de Dieu, et sitôt après avoir communié l'homme se mit à parler avec une langue parfaitement saine. Tous les assistants rendirent gloire à Dieu.

Lorsqu'il arriva à la Porte d'or de Constantinople, * de grandes multitudes sortirent au-devant de lui et lui présentèrent un homme aveugle. Après lui avoir imposé les mains, tout en récitant des prières et en invoquant le nom de Dieu, il ouvrit les yeux de cet homme et lui rendit la lumière. * A fol. 234 v° a.

Lorsqu'il eut pénétré dans la ville, l'empereur, les princes et tout le peuple l'accueillirent avec grande joie. Il y rencontra Anthimus, l'évêque de Trébizonde, qui était du schisme d'Eutychius et de Severianus, et qui faisait

որ էր Եւտիքէսի եւ Սեւերիանոսի հերձուածոյն, եւ սերմանէր զաղանդն ի մէջ իշխանացն խռովութիւն մեծ արարեալ յեկեղեցիս քաղաքին :

Իսկ երանելին Ագապիոս աստուածային վարդապետութեամբն իւրով աւերեաց զնա ի սպառ եւ ընդ նզովիւք կապեաց ընդ նմին եւ զՊետրոս զԱպամիոյ եպիսկոպոսն եւ զՍեւերիանոս Անտիոքայ եւ զամենայն խորհրդակիցս չար հերձուածոյն : Եւ Աստուծոյ ընտրութեամբն եւ հաճութեամբ թագաւորին եւ իշխանացն եւ ամենայն ժողովրդեանն ձեռնադրեաց զքահանայն Մինաս, զայր բարեպաշտ եւ երկիւղած եւ ուղղափառ, պատրիարգ Կոստանդնուպօլսոյ :

Եւ ինքն գնաց ի Հռոմ, եւ կացեալ բարի ճգնութեամբ եւ ուղղափառ հաւատով հանգեաւ ի Քրիստոս Ապրիլի ԺԹ, եւ է մեզ օգնական եւ բարեխօս :

* B p. 175 a. [B * Եւ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս բարի եւ քաջ հովիւն հօտին Քրիստոսի՝ տէր Բարսեղ արքեպիսկոպոսն Դրազարկու, որդի Աւագ պարոնին :]

Ահկի ԺԳ եւ Ապրիլի Ի : Վարք երանելի եպիսկոպոսացն Անթերիոսի եւ Կապետոնի :

* A fol. 234 vº b. Մեծ հայրապետն Երուսաղեմի Երմոն լուաւ * զքաղաքէն Քերսոնայ որ էին ամենայն բնակիչքն անհաւատք, ձեռնադրեաց եպիսկոպոս զմի ի քահանայից իւրոց,

5 խորհրդակիցս] համախորհուրդս B || 10 հանգեաւ] խաղաղութեամբ *add.* B — Քրիստոս] Ահկի ԺԲ եւ *add.* B || 13 վարք երանելի] վկայութիւն սուրբ B.

de la propagande pour sa secte parmi les princes en causant un grand trouble parmi les églises de la ville.

Le bienheureux Agapius, par sa divine doctrine, le ruina complètement et le lia d'anathèmes, et avec lui Pierre l'évêque d'Apamée, Severianus l'évêque d'Antioche et tous les conjurés du mauvais schisme. Puis, guidé par Dieu dans son choix et avec le consentement de l'empereur, des princes et du peuple, il sacra le prêtre Minas, homme pieux, craignant Dieu et orthodoxe, patriarche de Constantinople.

Quant à lui, il retourna à Rome, et après avoir persévéré en bon ascétisme et foi orthodoxe, il entra au repos du Christ le 19 avril. Il est notre soutien et notre intercesseur.

* B p. 175 a. [B * En cette année passa au Christ le bon et vaillant pasteur du troupeau du Christ, le seigneur Barsegh l'archevêque de Drazark, fils du baron Avag.]

13 AHÉKAN, **20 Avril.**

Vie des bienheureux évêques Anthérius et Kapéton.

* A fol. 234 vº b. Le grand patriarche de Jérusalem Ermon, ayant* appris au sujet de la ville de Kherson que tous les habitants y étaient infidèles, sacra évêque un de

այր երկիւղած յԱստուծոյ, որոյ անուն էր Անթերիոս, եւ առաքեաց ի Քերսոն. եւ մտեալ ի նաւ գնաց :

Եւ յորժամ եմուտ ի քաղաքն՝ սկսաւ քարոզել եւ ուսուցանել զբարեպաշտութեան հաւատն Քրիստոսի, եւ նոքա ամենեւին ոչ ընկալան զվարդապետութիւն նորա :

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ հաւատաց ի Քրիստոս մեծ թագաւորն Կոստանդիանոս Հռոմայ եւ մկրտեցաւ : Եւ լուեալ Անթերիոս եմուտ ի նաւ, եւ գնաց ի Հռոմ առ թագաւորն եւ խնդրեաց ի նմանէ զօրս հեծելոց յօգնականութիւն : Եւ առեալ արս պատերազմօղս զինուք՝ գնաց ի քաղաքն Քերսոն. եւ հինգ հարիւր այր որք հակառակէին ընդդէմ ճշմարտութեան եւ սպանին զյառաջ եղեալ եպիսկոպոսն զսուրբն Վասիլիոս զնոսա ազգականօք եւ ընտանեօք իւրեանց հանին ի քաղաքէն, եւ ցրուեաց զնոսա ի քաղաքս Սկիւթացւոց, եւ արկ փոխանակ նոցա այլ հինգ հարիւր քրիստոնեայս մեծատունս ընտանեօք յերկրէն Հոռոմոց. եւ բնակեցուցին զնոսա յարեւելից կողմանէ քաղաքին : Եւ շինեաց եպիսկոպոսն տէրունական եկեղեցի :

Եւ գնաց առ թագաւորն գոհացաւ զնմանէ եւ օրհնեաց զնա յոյժ, եւ խնդրեաց անօթս եկեղեցւոյն եւ գիրս, եւ առեալ դարձաւ ի * Քերսոն : Եւ մինչդեռ ի ծովուն * A fol. 235 r° a.
էր՝ շարժեցան ալիք ծովուն եւ եհան զնաւն ի գետն Դանուբի, ի կղզի մի որ կոչի

10 իւրեանց *om.* B — եւ ցրուեաց զնոսա ի քաղաքս Սկիւթացւոց *om.* B.

ses prêtres, homme craignant Dieu, dont le nom était Anthérius, et l'envoya à Kherson. Celui-ci s'embarqua sur un bateau et partit.

Lorsqu'il eut pénétré dans la ville, il se mit à prêcher et enseigner la foi pieuse du Christ, mais (les habitants) n'acceptèrent point du tout sa doctrine.

Il arriva qu'à cette époque le grand empereur de Rome, Constantin, crut au Christ et se fit baptiser. Ce qu'ayant appris, Anthérius s'embarqua sur un bateau, se rendit à Rome auprès de l'empereur et lui demanda des troupes de cavalerie pour lui venir en aide. Il prit avec lui des gens de guerre armés et se rendit à la ville de Kherson; il expulsa de la ville les cinq cents personnes qui s'opposaient à la vérité et qui avaient tué le précédent évêque, saint Vassilios; il les expulsa avec leurs familles et parents et les dispersa dans les villes des Scythes, et les remplaça par cinq cents autres chrétiens, riches, avec leurs familles, (amenés) du pays des Grecs. On les logea du côté oriental de la ville. Et l'évêque fit construire une église du Seigneur.

Ensuite il se rendit auprès de l'empereur, lui rendit grâces et le bénit grandement. Il lui demanda des vases d'église et des livres, et les ayant obtenus, il retourna à * Kherson. Pendant qu'il était en mer, les vagues de la * A fol. 235 r° a.
mer se soulevèrent, et poussèrent le navire dans le fleuve Danube, sur une île appelée Aghson; et c'est là qu'il entra au repos du Christ. Les chrétiens de

Ազոն, եւ անդ հանգեաւ ի Քրիստոս ։ Եւ քրիստոնեայք կղզւոյն թաղեցին զնա եւ կանգնեցին ի վերայ գերեզմանին սիւն եւ խաչ. եւ բուսան ծառք շուրջ զսեամբն ։

Իսկ քրիստոնեայքն Քերսոնեայ գրեցին առ բարեպաշտն Կոստանդիանոս արքայն եւ խնդրեցին եպիսկոպոս. եւ առաքեաց նոցա զերանելին Կապետոն, զոր ընկալեալ քրիստոնէիցն ուրախ եղեն ։ Եւ անհաւատքն դժուարեալ ծանրանային, եւ ասեն ցեպիսկոպոսն. Եթէ կամիս որ հաւատամք ի Քրիստոսն քո մուտ ի մէջ բորբոքեալ հրոյ, եւ եթէ ելցես անվնաս հաւատամք ի նա ։ Իսկ երանելի եպիսկոպոսն խնդրեաց ի նոցանէ պատանդ զզաւակս իւրեանց որ եթէ մտցէ ի հուրն եւ ելցէ ամբողջ եւ ոչ հաւատասցեն արկցէ զնոսա ի հուրն ։ Նոքա հաւանեցան եւ ետուն ի նա զորդիս իւրեանց. եւ նա յանձնեաց զնոսա ի քրիստոնեայ զօրականսն ։ Եւ առեալ զքահանայութեան պատմուճանսն զգեցաւ, եւ արկաւ ի վերայ պատմուճանին զպատուական եմիփորոնն ։ Եւ նախասարկաւագն քարոզեաց. Պռօսխումէ ։ Եւ եպիսկոպոսն տուեալ զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն, եմուտ ի հուրն եւ եկաց

* A fol. 235 r° b. բովանդակ ժամ մի ի մէջ հրոյն, ելից զփիլոնն կայծականբք * եւ ել ի բոցոյն անկիզելի, զի մազ մի ի գլխոյն կամ ի մօրուացն ոչ այրեցաւ ։

Եւ զայնպիսի սքանչելիսն տեսեալ Հրէիցն եւ կռապաշտիցն հաւատացին ի Քրիստոս ամենեքեան եւ մկրտեցան, զորս ընկալան յաւազանէն զօրականքն եւ այլ

16 սքանչելիսն] եւ արար Աստուած ի ձեռն նորա սքանչելիս մեծամեծս զոր B.

l'île l'enterrèrent, et posèrent sur sa tombe une colonne et une croix. Des arbres poussèrent autour de la colonne.

Les chrétiens de Kherson écrivirent au pieux empereur Constantin et lui demandèrent un évêque. Il leur envoya le bienheureux Kapéton, que les chrétiens accueillirent avec joie. Les infidèles, mécontents, s'irritèrent et dirent à l'évêque : « Si tu veux que nous croyions à ton Christ, entre dans les flammes d'un feu, et si tu en sors intact, nous croirons en Lui. » Le bienheureux évêque leur demanda en otage leurs enfants pour que, au cas où lui pénétrerait dans les flammes, en sortirait intact et eux ne croiraient pas, il pût les jeter dans le feu. Ils acceptèrent et lui remirent leurs enfants. Il les confia à des soldats chrétiens. Il prit ses vêtements sacerdotaux, s'en revêtit et passa sur ses vêtements le précieux hémiphoron (pallium). L'archidiacre cria : « Proschoumen. » Et l'évêque, après avoir béni et glorifié le Père, le Fils et le Saint-Esprit, pénétra dans les flammes et demeura une heure entière

* A fol. 235 r° b. dans le feu, remplit le philon de braises ardentes * et sortit des flammes sans être brûlé; pas un cheveu de sa tête, pas un poil de sa barbe n'avait brûlé.

Les Juifs et les idolâtres témoins d'un tel miracle crurent tous au Christ, se firent baptiser, et les soldats ainsi que les autres chrétiens les reçurent des

քրիստոնեայքն ։ Արար եւ այլ բազում նշանս երանելի եպիսկոպոսն Կապետոն եւ զբազումս դարձոյց յաստուածգիտութիւն, եւ երանելի մահուամբ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս յԱպրիլի Ի ։

Յայսմ աւուր սրբուհին Անուշ ի Թեսաղոնիկէ քաղաքն ի կռապաշտիցն գեղարդեամբ խոցեցաւ ի սիրտն եւ ի կողն, եւ մարտիրոսացաւ, զի ոչ ուրացաւ զՔրիստոս եւ զոհեաց կռոցն յաւուրս Մաքսիմիանոսի անօրէն արքային ։

[B * Յայսմ աւուր սրբուհին Անուշ որ էր ի ժամանակս Մաքսիմիանոսի անօրէն արքային ի Թեսաղոնիկեայ քաղաքն ։ Յաւուր միում յորժամ ըստ սովորութեան իւրում երթայր յեկեղեցի՝ առին զնա կռապաշտքն երթալ ի մեհեանն եւ զոհել կռոց ։ Եւ նա ընդդէմ դարձեալ խոստովանէր զՔրիստոս եւ անգոսնէր զկուռսն ։ Եւ ի կռապաշտիցն գեղարդեամբ խոցեցաւ ի սիրտ եւ ի կողն, եւ անկեալ յերկիր գոհանայր զՏեառնէ, եւ աղօթիւք աւանդեաց զհոգին իւր առ Աստուած թաթաւեալ կայր յարեան ։ * B p. 175 b.

Ի սմին աւուր յիշատակ Վիկտորիսի հայրապետին, որ հինգերորդ եկաց յաթոռն յետ Պետրոսի, եւ ի Սեւերիոսէ թագաւորէ կատարեցաւ վասն Քրիստոսի ։]

1 արար եւ այլ ... յաստուածգիտութիւն *om.* B || 2 եւ երանելի մահուամբ] եւ ինքն երանելի եպիսկոպոսն Կապետոն B || 3 Քրիստոս] Ահկի Ժ·Գ եւ *add.* B.

fonts. Le bienheureux évêque Kapéton opéra encore beaucoup d'autres miracles et convertit nombre de gens à la connaissance de Dieu. Il entra dans le repos par une mort bienheureuse, en paix, dans le Christ, le 20 avril.

En ce jour, dans la ville de Thessalonique, sainte Anouche eut le cœur et le côté transpercés par la lance et fut martyrisée par les idolâtres pour ne pas avoir renié le Christ, ni immolé aux idoles, aux jours de l'empereur Maximin, l'impie.

[B * En ce jour sainte Anouche aux jours de l'empereur Maximin, l'impie, dans la ville de Thessalonique, se rendant un jour selon son habitude à l'église, les idolâtres l'obligèrent d'aller au temple et d'immoler aux idoles. Elle s'y opposa, confessa le Christ et insulta les idoles. Un des idolâtres lui ayant transpercé d'un coup de lance le cœur et le côté, elle tomba à terre et rendit grâces au Seigneur. C'est en priant qu'elle rendit son âme à Dieu, baignée dans son sang. * B p. 175 b.

En ce jour même commémoration du pontife Victoris qui, le cinquième, monta sur le trône après Pierre et fut martyrisé pour le Christ par l'empereur Severius.]

Ահկի ԺԴ եւ Ապրիլի ԻԱ ։ Վկայութիւն սուրբ առաքելոյն Սիմոնի Նախանձայուզի ։

Աստուածատեսն Սիմոն աշակերտն Քրիստոսի, ընդ ամենայն արեւմուտս շրջեալ քարոզէր զՔրիստոս, եւ վարդապետութեամբ իւրով զբազումս լուսաւորեաց. գնաց յերկիրն Մավրիտանեայ եւ յԱւիրոնեայ գաւառս, սերմանեաց զաւետարանին սերմանս ։ Եւ յետոյ գնաց յերկիրն Վրիտացւոց եւ ի նոցանէ խաչեցաւ. եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս Ապրիլի ԻԱ ։

Յայսմ աւուր սուրբ վկայքն Քրիստոսի Ալփիոս, Փիղադելփոս, Կիւրինիոս, ի
* A fol. 235 v° a. կռապաշտ դատաւորէն * բազում չարչարանս կրեցին ընդ այլ հազար եւ յիսուն վկայս Քրիստոսի, եւ ապա սրով եւ հրով եւ քարկոծութեամբ կատարեցան ի Քրիստոս վասն ուղիղ հաւատոյն իւրեանց ։

* B p. 176 a. [B * Յայսմ աւուր յիշատակ սուրբ առաքելոյն Զակքէի ։

Սա մաքսաւոր էր գործով ի յԵրիքով քաղաքէ, եւ էր փոքր հասակաւ. եւ լուեալ զՏեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ մինչդեռ անցանէր, ընթացեալ ել ի ժանտաթզենի մի առ ի տեսանել զնա, զի ի բազմութենէն որ էին ընդ Քրիստոսի, վասն կարճահասակն գոլոյն՝ թէպէտ ցանկայր յոյժ՝ այլ ոչ կարէր զՏէրն տեսանել ։

5 եւ այնպէս… Ապրիլի ԻԱ] եւ անդ հանգեաւ ի Քրիստոս եւ թաղեցաւ Ահկի ԺԴ եւ Ապրիլի ԻԱ B || 10 իւրեանց] եւ բարեխօս են վասն մեր առ Տէր այժմ եւ յաւիտեան *add.* B.

14 AHÉKAN, **21 Avril.**

Martyre du saint apôtre Simon le zélé.

Simon, qui avait vu Dieu et avait été disciple du Christ, parcourut tout l'occident en prêchant le Christ, et éclaira nombre de gens par sa doctrine. Il se rendit au pays des Maures et dans les provinces d'Aviron où il sema les semences de l'évangile. Ensuite il se rendit au pays des Vrites et fut crucifié par eux. C'est ainsi qu'il fut martyrisé pour le Christ le 21 avril.

En ce jour les saints martyrs du Christ Alphios, Philadelphos, Cyrinios,
* A fol. 235 v° a. sur l'ordre du juge idolâtre, * endurèrent de nombreuses tortures avec mille cinquante autres martyrs du Christ et furent ensuite martyrisés par le glaive,
* B p. 176 a. le feu et la lapidation dans le Christ pour leur foi orthodoxe.

[B * En ce jour commémoration du saint apôtre Zachée.

Il était publicain de son état et était de la ville de Jéricho; il était petit de taille. Ayant entendu que Notre-Seigneur Jésus-Christ traversait la ville, il courut, monta sur un sycomore pour le voir, car à cause de la foule qui accompagnait le Christ et parce qu'il était petit de taille, malgré son grand désir, il ne pouvait voir le Seigneur.

Իսկ ամենատեսն եւ ամենագէտն Յիսուս ի գալն պատեղի առեալ՝ հայեցաւ ի վեր եւ կոչեաց զնա, եւ ընթրեալ ի տան նորա փրկեաց զնա ամենայն տամբ իւրով, որ եւ զզրկեալսն չորեքպատիկ վճարեաց, եւ զայլ ինչսն աղքատաց բաշխեաց ։ Եւ ինքն ի կարգ եօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի խառնեալ զանձն ուղիղ հաւատով որպէս ճշմարիտ որդի Աբրահամու, շրջեցաւ * քարոզութեամբ աւետարանին ընդ աշխարհ, եւ բազում չարչարանաց տարեալ՝ զբազումս դարձոյց վարդապետութեամբ եւ նշանօք ի Քրիստոս, եւ այնպէս կատարեցաւ երանութեամբ ։ * B p. 176 b.

Ի սմին աւուր վկայութիւն սրբոյն Թէոդորոսի որ ի Պերգէ Պամփիլեայ, եւ Սոկրատայ, եւ Դիոնեսիոսի ընդ նմա ։

Սուրբն Թէոդորոս պայծառացեալ հաւատովն Քրիստոսի, եւ քարոզութեամբն իւրով ջնջէր զմոլորութիւն կռոցն, եւ զտաճարս եւ զբագինս դիցն յատակեալ կործանէր ։ Վասն որոյ կալեալ զնա տարածեցին ի վերայ հրացեալ կասկարայից այրեցին, եւ երկաթի կօշիկս յոտսն ագուցին, ապա կապեալ ի կառս ձիոց եւ այնպէս վարեալ քարշեցին ընդ խոշոր եւ երկար տեղիս, յորմէ ապրեցաւ շնորհօքն Աստուծոյ ։ Զոր կալեալ արկին ի հնոց հրոյ ընդ Սոկրատայ եւ Դիոնեսիոսի, ուր պահեցան կենդանի ի ձեռն Քրիստոսի զօրութեանն ։

Յետ որոյ արկին ի բանդ զնոսա, եւ ընդ առաւօտն տարածեալ ի վերայ խաչափայտի խաչեցին զնոսա եւ նետիւք խոցոտեցին ։ Եւ զերիս աւուրս տանջեալք ի վերայ խաչին՝ աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած ։

Mais Jésus qui voit tout et qui sait tout, arrivé à cet endroit, s'arrêta, leva les yeux, l'appela, dîna dans sa maison et le sauva avec toute sa famille; il rendit au quadruple à ceux à qui il avait fait du tort et distribua les autres biens aux pauvres. Lui-même s'enrôla dans le rang des soixante-dix disciples du Christ avec une vraie foi comme un vrai fils d'Abraham, parcourut * le monde en prêchant l'évangile, endura de nombreuses tortures, convertit nombre de gens au Christ par sa doctrine et ses prodiges, et mourut ainsi en bienheureux. * B p. 176 b.

En ce même jour martyre de saint Théodore de Pergues en Pamphylie et, avec lui, de Socrate et de Denys.

Saint Théodore, célèbre par sa foi au Christ et par sa prédication, extermina l'erreur des idoles et rasa, démolit les temples et les autels des dieux. C'est pourquoi on le saisit, on le brûla après l'avoir étendu sur un gril enflammé, on lui passa aux pieds des chaussures de fer et, après l'avoir attaché à un char traîné par des chevaux, on le traîna longuement par des chemins raboteux; mais il en sortit indemne par la grâce de Dieu. On le saisit et on le jeta dans une fournaise ardente avec Socrate et Denys; mais ils y furent conservés vivants par la puissance du Christ.

Ensuite on les jeta en prison, et au matin, après les avoir étendus sur le bois d'une croix, on les crucifia et on les perça de flèches. Après trois jours de tortures sur leur croix, ils rendirent leur âme à Dieu.

* B p. 177 a. Յայսմ աւուր յիշատակ Ապաւլեայ եւ Սահակիոսի եւ Կոդրատոսի * սպասաւորաց սրբուհւոյն Աղեկսանդրեայ թագուհւոյն որ ընդ սրբոյն Գէորգեայ, եւ սրբոյն Սիմէոնի եպիսկոպոսին Պարսից եւ բազմացն որք ընդ նմա ։

Եւ յայսմ աւուր յիշատակ սրբոյն Սաւթերիոսի հայրապետին Հռոմայ որ երեքտասան յետ Պետրոսի եկաց յաթոռն, եւ վկայութեամբ կատարեցաւ ։

Ի սմին աւուր վկայութիւն սրբոյն Գէորգայ Ակէացւոց, եւ Խոսրովու Գաբեղեան ։

Երանելիքս այսոքիկ էին քաջ իշխանք Հայոց նախարարազունք, զորս կալեալ ամբարիշտ ոստիկանն Բուղայ բազում ողոքանօք ջանայր դարձուցանել զնոսա ի կրօնս մոլորութեան իւրոյ ։ Եւ նոքա արհամարհեալ զբանս նորա համարձակ դաւանեցան զՔրիստոս Աստուած ։ Ընդ որ բարկացեալ Բուղայ ետ գլխատել զնոսա ։

Զքաջ նահատակութիւն սրբոցս տեսեալ մի ոմն յայլազգեաց աղաղակեաց թէ Եւ ես քրիստոնեայ եմ ։ Վասն որոյ հատին եւ զգլուխ նորա ։ Եւ լոյս պայծառ ծագեաց ի վերայ մարմնոց երեցունց վկայիցն ։]

Ահկի ԺԵ եւ Ապրիլի ԻԲ ։ Վարք սրբոյն Թէոդորոսի Սիկիացւոյն ։

Այս երջանիկ եւ սքանչելագործ հայրս մեր Թէոդորոս էր ի Գաղատացւոց գաւառէն,

14 Վարք] եւ քաղաքավարութիւն *add.* B — սրբոյն] երանելոյն B — Սիկիացւոյն] Սիկեցւոյն B.

* B p. 177 a. En ce jour commémoration d'Apaulis, Sahacius et Quadratus, * serviteurs de la sainte reine Alexandra, qui (furent martyrisés) avec saint Georges, saint Siméon évêque de Perse et beaucoup d'autres avec eux.

Également commémoration en ce jour de saint Sauterius le pontife de Rome, le treizième qui occupa le trône après Pierre et mourut en martyr.

Ce même jour martyre de saint Georges Akéatzouotz et de Kosrow Gabélian.

Ces bienheureux étaient de vaillants princes arméniens, des satrapes. L'impie ostikan Boula les fit saisir, et il s'efforçait par beaucoup de supplications de les convertir à la religion de son erreur. Mais ceux-là, méprisant ses paroles, confessèrent avec hardiesse le Christ Dieu, sur quoi Boula irrité leur fit trancher la tête.

Un des infidèles, témoin du vaillant martyre de ces saints, s'écria: « Et moi aussi je suis chrétien! » C'est pourquoi on lui trancha aussi la tête. Une lumière éclatante rayonna au-dessus des corps des trois martyrs.]

15 AHÉKAN, 22 Avril.

Vie de saint Théodore de Sicène.

Ce bienheureux et thaumaturge père à nous, Théodore, était de la province de Galatie, du village de Sicène, aux jours du pieux empereur Justinien. La

ի գեղջէն Միկենի, յաւուրս բարեպաշտ արքային Յուստինիանոսի ։ Եւ Մարիամ մայր երանելւոյն՝ եւ Եղպիդիա հանիկն բնակէին ի պանդոկին ի մէջ Շահուահ պողոտային ։

Եւ դէպ եղեւ անցանել ընդ այն տուն մի՝ որ էր կառավար ի ձիընթացս պողոտային որ երթայր ի թէատրոնն, զոր կոչեն պոտոումն, եւ էր անուն առն Կոսմաս ։ Եւ տեսեալ զՄարիամ գեղեցիկ տեսլեամբ ցանկացաւ նմա, ննջեաց ընդ նա եւ առժամայն յղացաւ ։

Եւ տեսանէ կինն յանուրջս աստղ մեծ պայծառ, որ էջ յերկնից եւ եմուտ յորովայնն ։ Եւ պատմեաց զերազն առն մի Մագիստրիանոս անուն. եւ նա ասէ. Պահեա զանձն քո եւ Աստուած այց արասցէ ծնանելոյն ի քէն, եւ նստցի յաթոռ եպիսկոպոսութեան ։ Եւ այլ ոմն ճգնաւոր կրօնաւոր ասաց ցկինն. Որ ծնանելոցն է ի քէն մեծ ծառայ լինիցի Աստուծոյ, եւ շնորհք սքանչելագործութեան տացի նմա ։

Եւ յորժամ ծնաւ զմանուկն եւ մկրտեաց, անուանեաց * զնա Թէոդորոս ։ Եւ յորժամ եղեւ պատանեակ, խորհեցաւ մայր իւր տանել զորդին առ թագաւորն զի դասեսցէ ի զօրականսն ։ Եւ երեւեցաւ նմա մեծ վկայն Գէորգիոս եւ ասէ. Մի աշխատիր եւ մի հաներ ի քէն զպատանեակդ, զի պիտոյ է դա երկնաւոր թագաւորին ։ Եւ ետ զնա ի դպրոց եւ ուսաւ գիր, եւ այլ ինչ ամենեւին ոչ ուտէր բայց միայն հաց եւ ջուր, եւ * A fol. 235 vº b.

1 Միկենի] Միկէոնայ B || 3 պողոտային... թէատրոնն] թէատրոնին B || 5 ննջեաց] օթեւանեցաւ B || 8 անուն *om.* B || 10 ոմն] նախիմաց *add.* B || 11 լինիցի] Տեառն *add.* B || 15 նմա] յանուրջս *add.* B.

mère du bienheureux, Marie, et sa grand'mère Elpitia habitaient l'auberge située à mi-chemin sur la voie Shahrah.

Vint à passer par cette auberge un homme qui était cocher aux arènes situées sur cette voie et qui se rendait au théâtre, appelé hippodrome. Le nom de l'homme était Cosmas. Ayant aperçu la beauté du visage de Marie, il la désira, coucha avec elle et la rendit aussitôt enceinte.

La femme vit en songe une grande étoile éclatante qui descendit du ciel et entra dans son sein. Elle raconta le songe à un homme nommé Magistrianus, qui lui dit : « Préserve ta personne et Dieu rendra visite à celui qui naîtra de toi, il siégera sur le trône épiscopal. » Un autre religieux ascète dit à la femme : « Celui qui naîtra de toi deviendra un grand serviteur de Dieu, et il lui sera accordé la grâce d'accomplir des prodiges. »

(Marie), lorsqu'elle mit au monde l'enfant, le fit baptiser et lui donna le nom * de Théodore. Lorsqu'il devint jeune homme, sa mère songea à présenter son fils à l'empereur pour l'enrôler parmi ses soldats. Mais le grand martyr saint Georges lui apparut et lui dit : « Ne prends pas cette peine et n'éloigne pas ton enfant de toi, car le Roi du Ciel a besoin de lui. » Elle le mit à l'école où il apprit les lettres. Il se nourrissait exclusivement de pain et d'eau, et en * A fol. 235 vº b.

զայն սակաւ ։ Եւ յամենայն ժամ երեւէր նմա սուրբն Գէորգիոս եւ տանէր զնա յեկեղեցին անուան իւրոյ ։

Եւ եղեւ հիւանդանալ մանկանն. տարաւ զնա մայր իւր յեկեղեցին, եւ ի տէրունական պատկերէն իբրեւ քրտունք ցօղեցին յերեսս մանկանն եւ առժամայն ողջացաւ ։ Եւ ամենասրբուհի աստուածածինն երեւեցաւ նմա ի միում աւուր, եւ ետ նմա զօրութիւն ի ճգնութիւն վարուց առաքինութեան ։

Եւ յաւուրս քառասներորդ պահոցն զառաջին շաբաթն եւ զմիջինն ոչ ինչ ճաշակէր, եւ ոչ ընդ ումեք խօսէր, եւ ի սաղմոսարանէն քան զտասն եւ եօթն սաղմոսն այլ աւելի ոչ կարաց ուսանել ։ Եւ ի միում աւուր մինչդեռ աղօթէր յեկեղեցին՝ լցաւ բերանն քաղցրութեամբ իբրեւ ի խորիսխէ մեղու, եւ ապա փութապէս ուսաւ զամենայն սաղմոսարանն ։

* A fol. 236 r° a. Եւ յորժամ եղեւ ամաց երեքտասանից հրաժարեաց ի մօրէն եւ ի * տանէն, գնաց յեկեղեցի սրբոյն Գէորգեայ, եւ մերձ յայր մի փորեաց եւ բղխեաց ջուր եւ բնակեցաւ անդ ։ Եւ ի ճրագալուցի Յայտնութեանն մտանէր բոկ ի ջուրն մինչեւ յորովայնն, եւ անդ կանգնեալ կայր մինչեւ ցառաւօտն, եւ յորժամ կատարէին զաղօթսն յեկեղեցին՝ ելանէր ի ցրտոյն սառուցեալ ։

Եւ Եղպիդիա հանիկն իւր յամենայն շաբաթ եւ ի կիւրակէ տանէր նմա միրգ եւ

1-6 Եւ յամենայն ժամ ... առաքինութեան] Եւ ստէպ երեւէր մանկանն սուրբն Գէորգիոս իբրեւ պաշտպան նորա B || 10 ապա] յետ այնորիկ B || 14-16 Եւ ի ճրագալուցի ... սառուցեալ *om.* B.

petite quantité. A tout instant saint Georges lui apparaissait et le conduisait à l'église de son nom.

L'enfant vint à tomber malade. Sa mère le conduisit à l'église. De l'image du Seigneur, comme des gouttes de sueur tombèrent en rosée sur la figure de l'enfant et il fut aussitôt guéri. Un jour la très sainte mère de Dieu lui apparut et lui accorda la force de mener dans l'ascétisme une vie vertueuse.

Pendant les quarante jours de carême, il ne mangeait rien la première semaine et la semaine du milieu (du carême) et il ne causait avec personne. Il n'avait pu apprendre plus de dix-sept psaumes du psautier. Un jour qu'il priait à l'église, sa bouche se remplit de douceur comme d'un rayon de miel, après quoi il apprit rapidement tout le psautier.

* A fol. 236 r° a. Lorsqu'il eut atteint ses treize ans, il se sépara de sa mère et de * la maison, alla à l'église de saint Georges, creusa une grotte près (de l'église) d'où jaillit de l'eau, et y habita. A l'illumination (veille) de l'Épiphanie il descendait pieds nus jusqu'au ventre dans l'eau et y restait debout jusqu'au matin, et lorsqu'on achevait les prières à l'église il sortait (de l'eau), gelé par le froid.

Sa grand'mère Elpidia lui apportait chaque samedi et dimanche des fruits

խաւարտ, քանզի զայլ հինգ աւուրսն ոչ ինչ ճաշակէր բայց միայն հաց եւ ջուր սակաւ ։

Եւ ոմն մի տարաւ զորդին իւր առ երանելի մանուկն, զի յոյժ ի դիւէն այսահարէր. եւ արարեալ ի վերայ նորա զնշան սրբոյ խաչին ողջացոյց զնա ։ Եւ ելեալ դեւն աղաղակէր. Ո՛վ պոռնկորդի, ընդէր հալածես զմեզ. վա՜յ մեզ զի պոռնկորդի ի սպառ հալածեաց զմեզ ի սահմանաց մերոց, եւ չար եղեւ մեզ դրակցութիւն նորա ։ Եւ երթեալ երանելի մանուկն փորեաց այր մի ի ներքոյ ապառաժ վիմի, եւ մտեալ անդ բնակեցաւ զերկու ամ, եւ զդուռն այրին փակեաց որմով, եւ յոյժ տկարացաւ մարմնով ։

Լուաւ վասն նորա Թէոդոս եպիսկոպոսն Անաստասուպօլեայ, գնաց առ նա եւ տեսեալ զնա յայնչափ ճգնութեան զահի հարաւ, եւ ձեռնադրեաց զնա կիսասարկաւագ, եւ յետոյ սարկաւագ, եւ յետ սակաւ աւուրց քահանայ. եւ աղօթս արարեալ * նմա զի * A fol. 236 r° b.
եւ եպիսկոպոսութեան արժանաւորեսցի ։

Եւ յորժամ եղեւ ութ եւ տասն ամաց գնաց յԵրուսաղէմ երկիր պագանել սուրբ տեղեացն ամենայն, եւ տեղեկանայր եւ ուսանէր զվարս ճգնութեան անապատաւոր սուրբ հարանցն ։ Եւ երթեալ ի վանս ամենասրբուհւոյ աստուածածնին որ է ի Խուզիբա, եւ եղեւ կրօնաւոր եւ դարձաւ ի գաւառ իւր ։ Եւ զհանիկն իւր զԵլպիդիա

4-6 Եւ ելեալ դեւն ... դրակցութիւն նորա *om.* B || 12 յետոյ] ի միւս օրն B.

et des gâteaux, car les cinq autres jours il ne mangeait rien d'autre qu'un peu de pain avec de l'eau.

Quelqu'un amena son fils qui était fortement possédé par le démon au bienheureux enfant qui fit le signe de la sainte croix sur lui et le guérit. Le démon, une fois sorti, criait : « O fils de prostituée, pourquoi nous chasses-tu? Malheur à nous qu'un fils de prostituée ait réussi ainsi à nous chasser complètement de nos domaines; son voisinage nous a été fatal. » Le bienheureux jeune homme alla creuser une grotte sous un rocher aride, y pénétra et y habita pendant deux ans; il mura la porte de la grotte, et s'affaiblit beaucoup de corps.

Théodose, l'évêque d'Anastasioupolis, ayant entendu parler de lui, alla le trouver et à la vue d'un tel ascétisme il fut effrayé; il l'ordonna sous-diacre, puis diacre et quelques jours après prêtre; puis il fit des prières * pour lui * A fol. 236 r° b.
pour qu'il devînt digne de l'épiscopat.

Lorsqu'il eut dix-huit ans il se rendit à Jérusalem pour se prosterner dans tous les lieux saints. Il s'informait et s'instruisait des pratiques d'ascétisme des saints pères du désert. Il se rendit au couvent de la très sainte mère de Dieu, dit Chrousiba, se fit religieux et retourna dans sa province. Il établit sa grand'mère Elpidia au service de l'église de saint Georges; et ce choix

կարգեաց ի սպասաւորութիւն եկեղեցւոյն սրբոյն Գէորգեայ եւ եղեւ ընտրեալ ըստ հաճոյից Աստուծոյ ։ Եւ յորժամ տանէին առ երանելին Թէոդորոս կանայս հիւանդս եւ այսահարս՝ առաքէր զնոսա առ նա, եւ նա ձեռն դնելով աղօթիւք բժշկէր ։

Աղաչէին զնա ոմանք գեղջականք զի երթիցէ ի գիւղն իւրեանց եւ սրբեսցէ զտեղիսն ի բազմութենէ դիւացն որ բնակեալ էին անդ. եւ գնաց ընդ նոսա, արգելաւ զամենայն ձմեռն ի խուց մի, եւ հալածեցան ամենայն զունդք դիւացն եւ սրբեցաւ տեղին ։ Որ եւ զհողն խցին հիւանդք ի բժշկութիւն տանէին եւ ի խաշնամահ ի ջուր արկանէին եւ արբուցանէին եւ ապրէին ի մահուանէ ։

Հրամայեաց գեղջն այնմիկ եւ արարին նմա արգելանոց երկաթի, եւ մտեալ փակեցաւ անդ ի Ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի Ծաղկազարդ գալուստ նորա ։ Եւ ապա բարձին զնա անտի, եւ սաղմոսիւք եւ օրհնութեամբ տարան յայրն յորում եւ բնակեալ

* A fol. 236 v° a. էր, եւ ի ներքոյ * վիմի եդին զնա ։

Եւ պատուիրեաց նոցա եւ արարին երկաթի կապանս ձեռաց եւ ոտիցն հնգետասան լիտր ծանր, եւ քառամանեակ ի պարանոցն ութ եւ տասն լիտր ծանր, եւ երկաթի գօտի ընդ մէջն երեսուն եւ երեք լիտր, եւ երկաթի գաւազան եւ ի վերայ խաչ յիսուն լտեր, եւ զամենայն սնդեաց յանձին իւրում ։ Եւ եմուտ դարձեալ յարգելանոցն երկաթի

6 զունդք դիւացն] դեւքն B || 8 ապրէին] ապրեցան B || 13 հնգետասան լիտր ծանր *om.* B || 14 ութ եւ տասն լիտր ծանր *om.* B || 15 երեսուն եւ երեք լիտր *om.* B || 15 յիսուն լտեր *om.* B.

s'avéra conforme au bon plaisir de Dieu. Et lorsqu'on amenait au bienheureux Théodore des femmes malades et possédées du démon, il les lui envoyait; elle leur imposait les mains et les guérissait par ses prières.

Quelques paysans le prièrent de venir dans leur village et de purifier les lieux de la multitude des démons qui y habitaient. Il s'y rendit avec eux, se cloîtra tout un hiver dans une cellule, et toutes les légions de démons furent chassées et la localité purifiée. Les malades allaient même jusqu'à emporter la terre de sa cellule pour leur guérison et (comme remède) contre la mortalité des moutons; ils en mettaient dans de l'eau, leur donnaient à boire et les sauvaient de la mort.

Il ordonna à ce village de lui construire une cage de fer, il s'y enferma depuis la Nativité du Christ jusqu'à sa venue le jour des Rameaux. Ensuite ils l'enlevèrent de là et le conduisirent avec psaumes et bénédiction dans la

* A fol. 236 v° a. grotte qu'il avait habitée sous * le rocher.

Il leur commanda de lui faire des chaînes de fer pour ses mains et ses pieds lourdes de quinze livres, un collier pour son cou lourd de dix-huit livres, une ceinture de fer pour sa taille lourde de trente-trois livres, un bâton de fer surmonté de la croix lourd de cinquante livres et il appliqua le tout sur sa personne. Puis il entra de nouveau dans sa cage de fer, depuis le jour de la

ի Ծննդենէն մինչեւ ի Ծաղկազարդն. եւ յոյժ վտանգէր ի հողմոյ եւ յանձրեւոյ եւ ի ցրտոյ : Եւ զամենայն գիշերն կանգնեալ կայր, եւ այնչափ ծանրութիւն երկաթոյն յանձինն իւր. եւ կցեցան ներբանք ոտիցն յերկաթի արգելանոցն եւ ջերմն ջրով հազիւ կարացին հանել : Երթային առ նա գազանք, արջ եւ գայլ եւ կերակրէր զնոսա : Եւ բորոտք գնացին առ նա եւ սրբեցան :

Եւ Եղպիդիա հանիկն իւր ի ժամ վախճանի իւրոյ տեսանէ յանուրջս զսուրբն Գէորգիոս որ ասէր. Ուրախ լեր յոյժ որ տեսեր զթոռն քո յայնպիսի փառս, եւ ինձ լեր շնորհակալ, զի ես եղէ շնորհացն գործակից, եւ զԱստուծոյ գոհացիր որ արժանաւորեցոյց զնա մասին սրբոցն : Դու եկ եւ հանգիր, զի յոյժ աշխատեալ ես : Եւ ի միւսում գիշերի հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս : Եւ թաղեաց զնա թոռն իւր Թէոդորոս :

Եւ ոմն աղանդաւոր բազում կախարդանս արարեալ զի վնասեսցէ զարդարն, եւ ոչ կարաց, ապա առաքեաց դեւս եւ * դարձան ունայն, եւ ասէ ցնա կախարդն. Ոչ կարեմք ամենեւին առ նա մերձենալ : Եւ նորա լուեալ գնաց առ արդարն եւ մկրտեցաւ, եւ զկախարդութեան գիրսն այրեաց : * A fol. 236 v° b.

Եւ յետ այնորիկ շինեաց եկեղեցի մեծ յանուն սրբոյն Գէորգեայ : Եւ եղեւ մեռանել եպիսկոպոսին Անաստասիուպօլեայ եւ առաքեաց Պօղոս Անկուրիոյ մետրապօլիտն եւ

4 գազանք... կերակրէր զնոսա] զիւահարք եւ ախտաժէտք եւ բժշկէին B || 7 որ տեսեր] զի արժանաւորեցար տեսանել B.

Nativité jusqu'au jour des Rameaux, rudement exposé aux vents, à la pluie et au froid. Il passait toute la nuit debout avec tout ce poids de fer sur sa personne, les plantes de ses pieds se collèrent aux barres de fer de la cage et c'est à peine si on put les en détacher avec de l'eau chaude. Les bêtes sauvages, les ours, les loups s'approchaient de lui et il les nourrissait. Des lépreux allèrent le trouver et furent guéris.

Sa grand'mère Elpidia, à l'heure de sa mort, vit en songe saint Georges qui lui dit : « Réjouis-toi d'avoir vu ton petit-fils dans une telle gloire, et remercie-moi de cela, car c'est moi qui ai coopéré à cette grâce; rends grâce à Dieu de l'avoir rendu digne de l'héritage des saints. Toi, viens et repose-toi, car tu es très fatiguée. » La nuit après elle reposa en paix dans le Christ. Son petit-fils Théodore l'enterra.

Quelqu'un, membre d'une secte, avait fait toutes sortes de sortilèges pour nuire au juste, mais il n'y parvint point. Il lui envoya alors des démons qui * revinrent sans succès et dirent au mage : « Nous ne pouvons absolument pas l'approcher. » Ayant entendu cela, il alla trouver le juste, se fit baptiser et brûla les livres de magie. * A fol. 236 v° b.

(Saint Théodore) fit ensuite construire une grande église au nom de saint Georges. L'évêque d'Anastasioupolis vint à mourir et Paul le métropolite

տարաւ զերանելին Թէոդորոս եւ ձեռնադրեաց եպիսկոպոս Անաստասիուպօլեայ, եւ երթեալ օրհնեաց զեկեղեցին զոր շինեաց ։ Եւ արար բազում նշանս աղօթիւք եւ անուամբ Աստուծոյ, եւ կուրս լուսաւորեաց, խլից լսել շնորհեաց, կաղաց գնալ ետ, յերաշտութեան անձրեւ էած, զբազում անձրեւհեղութիւնս դադարեցոյց ։ Իսկ սուրբն Գէորգէոս յամենայն ժամ երեւէր նմա յանուրջս եւ խօսէր ընդ նա եւ զամենայն զոր ինչ լինելոց էր նմա պատմէր ։

Եւ տեսանէր երանելին Թէոդորոս զշատ գործս եւ զբազումս եպիսկոպոսարանին, եւ զբազմութիւն սպասաւորացն եւ գործաւորացն, ասէ ի միտս իւր. Այս ամենայն խափանեն զիս ի սովորական ուխտէն եւ ի կարգէն իմմէ. գնաց առ մետրապօլիտն եւ ձեռնագրով հրաժարեաց յեպիսկոպոսութենէն, բայց միայն զեմիփորոնն առ զկնի իւր ։

Եւ ցանկայր գտանել մասն ինչ ի նշխարաց սրբոյն Գէորգեայ. եւ երեւեցաւ
* A fol. 237 r° a. * նմա Քրիստոսի վկայն, եւ երթեալ առ Գերմիոն եպիսկոպոսն, քանզի եւ նմա հրամայեաց ի տեսլեանն տալ նմա. եւ առեալ ի նմանէ մասն ի նշխարացն եւ յատամանցն տարաւ յեկեղեցին զոր շինեաց ։

Եւ յորժամ մերձեցաւ օր ննջման իւրոյ, տեսանէ յանուրջս զամենասրբուհի աստուածածինն զի արկ մատանի ի ձեռն նորա, եւ էր այն առիթ հանգստեան նորա ։

3 գնալ ետ] առողջութիւն ետ B || 5 յամենայն ժամ] ստէպ B || 8 զբազմութիւն] զյոլովութիւն B.

d'Ancyre envoya chercher le bienheureux Théodore, le sacra évêque d'Anastasioupolis. Puis il s'en retourna bénir l'église qu'il avait fait construire. Il opéra bien des miracles par ses prières et au nom de Dieu; il rendit la vue aux aveugles, accorda l'ouïe aux sourds, fit marcher les boiteux, fit tomber de la pluie à l'époque de la sécheresse, fit arrêter la trop grande abondance des pluies. Saint Georges lui apparaissait en songe à tout moment et conversait avec lui et lui prédisait tout ce qui devait arriver.

Le bienheureux Théodore, voyant la multiplicité et le grand nombre des affaires de l'évêché, la multitude des serviteurs et des ouvriers, se dit en lui-même : « Tout cela me détourne de mon vœu habituel et de mon état (religieux). » Il se rendit auprès du métropolite et lui donna par écrit sa démission d'évêque; il ne conserva que l'hémiphoron (pallium).

Il aspirait à trouver quelque partie des reliques de saint Georges. Le
* A fol. 237 r° a. martyr du Christ lui apparut, * et après s'être rendu après de l'évêque Germion, auquel (le saint) avait ordonné en un songe de lui en donner, il reçut de lui une partie des reliques et des dents, et les transporta dans l'église qu'il avait fait construire.

Lorsque le jour de son repos fut proche, il vit en songe la très sainte mère de Dieu qui lui passa au doigt un anneau : c'était le présage de son repos.

Հիւանդացաւ աւուրս երեքտասան, եւ ոչ խօսեցաւ եւ ոչ եբաց զաչսն, եւ յետ երեքտասան աւուրն եբաց զաչսն եւ պատուիրեաց զի զամենայն ժամ աղօթիցն ոչ խափանեսցեն. զի մեծ շահ է հոգւոյ, եւս առաւել յեկեղեցին լինի ընդունելի աղօթք մարդկան, քանզի յորժամ յեկեղեցին մտանեմք՝ յերկինս ելանեմք, եւ ընդ հրեշտակս մատուցանեմք զաղօթս մեր ։

Եւ որչափ էր ի հիւանդութեանն՝ յազդել ժամուն բարձեալ տանէին զնա յեկեղեցին, եւ ի կատարման աղօթիցն դարձուցանէին ի տեղի իւր ։ Եւ երեւեցաւ նմա սուրբն Գէորգիոս ի տեսլեան երիվարով, եւ ետ նմա գաւազան եւ կոչէր ի ճանապարհ ։ Եւ այլ ումն երիվարով եւ ունէր երիվար կազմեալ իբրեւ հեծելոյ ի ձեռինն եւ ասէր. Արի, հեծի՛ր եւ եկեսջի՛ր, զի ի միասին երթիցուք ի պալատն արքային ։

Եւ յարուցեալ պատմեաց զտեսիլն, եւ բարի հանգստեամբ ննջեաց ի Քրիստոս * յԱպրիլի ԻԲ, մերձ ի տօն սրբոյն Գէորգեայ ։ Եւ թաղեցին զնա եպիսկոպոսութեան * A fol. 237 r° b.
փիլոնաւն եւ եմիփորոնովն ։ Եւ լուեալ թագաւորին եւ պատրիարգին տօնեցին ի մեծի եկեղեցւոջն զյիշատակ ննջման նորա. եւ տարան զնշխարս նորա ի Կոստանդինուպօլիս եւ եդին մօտ յեկեղեցին սրբոյն Գէորգեայ, եւ շինեցին ի վերայ գեղեցիկ մատուռն ։

1 եւ յետ երեքտասան աւուրն եբաց զաչսն եւ *om.* B || 11 Քրիստոս] Ահկի ժե եւ *add.* B.

Il tomba malade treize jours, ne parla point et n'ouvrit point les yeux; le treizième jour il ouvrit les yeux et recommanda de ne supprimer aucune des heures des offices, car c'est un grand avantage pour les âmes, et c'est surtout dans l'église que les prières des hommes sont agréées, puisque quand nous entrons dans l'église, nous montons au ciel et nous offrons nos prières avec les anges.

Tout le temps qu'il fut malade, lorsqu'on sonnait à l'église, on le portait et on le conduisait à l'église et, l'office terminé, on le ramenait chez lui. Saint Georges lui apparut en songe à cheval, lui donna un bâton et l'engagea à se mettre en route. Un autre personnage à cheval, qui tenait en main un second cheval harnaché prêt à monter, lui disait : « Lève-toi, monte à cheval et viens avec moi pour aller ensemble au palais du roi. »

A son réveil, il raconta le songe et dans un doux repos il s'endormit dans le Christ * le 22 avril aux approches de la fête de saint Georges. On * A fol. 237 r° b.
l'enterra avec le philon des évêques et l'hémiphoron (pallium). L'empereur et le patriarche, l'ayant appris, fêtèrent dans la grande église la commémoration de son repos. On transporta ses reliques à Constantinople, on les déposa près de l'église de saint Georges et on construisit au-dessus une belle chapelle.

Ահկի ԺԶ եւ Ապրիլի ԻԳ : Վկայութիւն փառաւոր եւ մեծ վկային Քրիստոսի Գէորգեայ :

Քաջամարտիկ մարտիրոսն Քրիստոսի եւ զօրեղ զօրականն Գէորգիոս, որ թարգմանի հողագործ, էր ի Կապադովկիացւոց գաւառէն, զոր հայք Գամիրս կոչեն, երիտասարդ հասակաւ, քրիստոնէից եւ մեծատուն ծնօղաց զաւակ, եւ էր կոմս յարեւելեան զաւուն :

Եւ յորժամ անօրէն հրամանն յանօրէն արքայէն Դիոկղետիանոսէ եհաս ի Նիկոմիդեայ քաղաքէն, նստաւ յատենի անօրէն դատաւորն Գադիանոս, եւ զամենայն քրիստոնեայս զորս գտանէր՝ սրով եւ հրով եւ բազում տանջանօք սպանանէր : Եւ որպէս աստղ պայծառ փայլեաց ի մէջ ասպարիսին հզօր նահատակն Քրիստոսի Գէորգիոս,
* A fol. 237 v° a. եւ համարձակութեամբ եկաց առաջի դատաւորին եւ ասէ. Ես * Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ, եւ առանց ահի անգոսնեմ, անարգեմ, արհամարհեմ եւ յանդիմանեմ զմոլորութիւն կռապաշտութեան ձերոյ :

Եւ տեսեալ զնա դատաւորին երիտասարդ եւ գեղեցիկ կերպարանաւ, կոչեաց առ ինքն եւ ողոքանօք խոստանայր տալ նմա մեծագոյն պատիւ, եւ քաղցրութեամբ

1 Վկայութիւն ... Գէորգեայ] Տօն է եւ վկայութիւն սուրբ եւ ամենայաղթ մեծ եւ հռչակաւոր վկային Քրիստոսի եւ սքանչելագործ նահատակին սրբոյն Գէորգեայ զօրավարին եւ որոց ընդ նմա կատարեցան՝ Անատոլեայ եւ Պրոտոլեայ եւ Գղերիկեայ, Աթանասիոսի, Աղեկսանդրիոյ թագուհւոյն, եւ այլ բազմութեանն ընդ նմա B || 11 արհամարհեմ *om.* B || 14 տալ *om.* B.

16 AHÉKAN, 23 Avril.

Martyre du glorieux et grand martyr du Christ Georges.

Le vaillant martyr du Christ et le valeureux soldat Georges, — nom qui se traduit laboureur, — était de la province de Cappadoce, que les Arméniens appellent Gamirs. C'était un jeune homme, fils de parents chrétiens et riches, et il avait le titre de comte dans l'armée d'Orient.

Lorsque l'ordre impie lancé par l'empereur Dioclétien, l'impie, fut parvenu de la ville de Nicomédie, l'impie juge Gadianus siégea sur son tribunal et tous les chrétiens qu'il trouvait, il les tuait, par l'épée, par les flammes et par de nombreuses tortures. Le puissant martyr du Christ, Georges, brilla comme un astre éclatant dans l'arène et avec hardiesse il comparut devant le
* A fol. 237 v° a. juge et lui dit : « Je suis * chrétien et serviteur du Christ et sans crainte je tiens pour rien, je méprise, j'insulte et je réprouve l'erreur de votre idolâtrie. »

Le juge, à la vue de sa jeunesse et de la beauté de ses traits, l'appela vers lui et tout en le priant il lui promettait des titres plus élevés, et l'engageait

խրատ տայր նմա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի արհամարհեաց զբանս նորա եւ ոչ լսել իսկ կամեցաւ, այլ միայն զայս ասէր եթէ Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ, եւ զարշիմ ի կռոց ձերոց ։

Եւ մի ոմն ի զօրականացն եհար զեղարդեամբն յորովայն նորա, եւ իբրեւ զջուր հեղաւ արիւնն յերկիր, եւ երկաթն իբրեւ զկապար կրկնեցաւ ։ Եւ հրամայեաց եւ տարան զսուրբն ի բանտ եւ զոտսն պնդեցին ի փայտի ։ Եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա ։ Եւ յետ աւուրց արարին փայտեայ անիւ, եւ շուրջ հարին սրեալ սլաքս, եւ հանին ի բանդէն եւ տարան յանիւն ։ Եւ տեսեալ զսրալից անիւն երկեաւ եւ ասէ. Ոչ ապրեցայց յայսմ տանջանացս ։ Տարածեցին զսուրբն եւ կապեցին ի վերայ սլաքացն եւ հոլովեցին զանիւն ընդ զառ ի վայր մինչեւ ամենայն մարմինն կոտորեցաւ եւ արեամբ լցաւ երկիր ։ Եւ հրեշտակ Տեառն իջեալ յերկնից եթոյծ զնա յանուոյն եւ ողջացոյց զամենայն վէրս նորա ։

Եւ սուրբն * գնաց ի տուն այրի կնոջ միոյ, եւ խնդրեաց ջուր եւ արբ. եւ փայտեայ * A fol. 237 v° b.
սիւնն որ էր առաջի դրանն առժամայն արմատացաւ տերեւովք ։ Եւ գնաց առ դատաւորն ի տաճար կռոցն, եգիտ զնա եւ զՄագնենտիոս զի էր աթոռակից նորա, զի

4 զեղարդեամբն] զգեղարդն — նորա] եւ խոցեաց *add.* B ‖ 5 հեղաւ] ցայտեաց B ‖ 6 Եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա *om.* B ‖ 8 Եւ տեսեալ ... տանջանացս *om.* B ‖ 9 սլաքացն] սուսերացն B ‖ 11 լցաւ] ներկեցաւ B ‖ 11 Եւ հրեշտակ ... վէրս նորա] եւ արկին զնա իբրեւ զմեռեալ, եւ ինքեանք գնացին B ‖ 13 եւ փայտեայ ... տերեւովք *om.* B.

avec douceur à renier le Christ et à immoler aux idoles. Mais le saint martyr du Christ méprisa ses paroles et ne voulut même pas les entendre; il se bornait à lui dire : « Je suis chrétien et serviteur du Christ et j'abhorre vos idoles. »

Un des soldats le frappa au ventre avec sa lance. Le sang coula à terre comme de l'eau et le fer se plia comme du plomb. (Le juge) ordonna de le mettre en prison et d'attacher ses pieds dans des ceps. L'ange du Seigneur le guérit. Quelques jours après on fit une roue en bois et tout autour on y enfonça des pointes aiguës. On fit sortir (le saint) de la prison et on le mena à la roue. A la vue de la roue pleine de pointes il eut peur et dit : « Je ne survivrai pas à ces supplices. » On étendit le saint et on l'attacha sur les pointes et on fit rouler la roue sur une pente jusqu'en bas, tant que tout son corps fut brisé et le sol inondé de sang. L'ange du Seigneur descendu du ciel le détacha de la roue et guérit toutes ses plaies.

Le saint * se rendit à la maison d'une veuve, demanda de l'eau et en but. * A fol. 237 v° b.
La colonne de bois qui se trouvait devant la porte prit aussitôt racine et se garnit de feuilles. Il se rendit auprès du juge au temple des idoles, l'y trouva, lui et son assesseur Magnentius, en train d'immoler aux idoles; ils

զոհէին կռոցն, տեսին զնա եւ ոչ հաւատային թէ նա իցէ, ակն ունէին թէ մեռաւ յանիւն : Ասէ սուրբն. Ես եմ Գէորգիոս ծառայն Քրիստոսի որ ի ձէնջ խոցոտեցայ, այժմ Տէր Աստուած իմ կանգնեաց զիս եւ նորոգեաց : Եւ բազումք յանհաւատիցն որք տեսին զնա կենդանի՝ հաւատացին ի Քրիստոս : Եւ հրամանաւ դատաւորին հանին զամենեսեան արտաքոյ եւ սրով հատին զգլուխս նոցա :

Լուաւ եւ վասն նորա թագուհին Աղէկսանդրիա եւ խոստովանեցաւ ուղիղ հաւատով զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

Ապա փորեցին հոր եւ լցին կիր, եւ հեղին ի վերայ ջուր. եւ յորժամ եռաց սաստիկ կիրն՝ ընկեցին անդ զսուրբն Գէորգիոս, եւ եդին ի վերայ ծանր սայլս եւ թողին զերիս աւուրս. եւ հրեշտակ Տեառն իջեալ ողջ պահեաց զնա : Եւ զայն սքանչելիսն որք տեսին հաւատացին ի Քրիստոս :

Լուաւ թագուհին Աղեկսանդրիա եւ փառաւորեաց զԱստուած, եւ հաստատուն եկաց ի հաւատն Քրիստոսի :

Ագուցին սրբոյն Գէորգեայ երկաթի կօշիկս եւ բեւեռեցին յոտսն, եւ շրջեցուցանէին

1 ակն ունէին թէ մեռաւ յանիւն] կարծէին թէ ցանխայր մեռեալ իցէ ի տանջանաց անուին B || 3 նորոգեաց] կազդուրեաց B || 6-7 Լուաւ... Աստուծոյ մերոյ *om.* B || 8 հոր] խոր *add.* B — կիր] ի նոր շիջեալ փռանէ կիր յոլով B || 9 զսուրբն] զվկայն Քրիստոսի *add.* B — եւ եդին... սայլս *om.* B || 10 եւ հրեշտակ... պահեաց զնա] եւ խնամօքն Աստուծոյ պահեցաւ կենդանի B || 12 Լուաւ... Քրիստոսի] Լուաւ թագուհին Աղեկսանդրիա որ էր կին Դիոկղետիանոսի եւ փառաւորեաց զԱստուած, եւ եկեալ անդ գոչէր. Մեծ է զօրութիւնն Քրիստոսի. եւ հաստատուն եկաց ի հաւատն որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս B.

l'aperçurent et ne pouvaient croire que c'était lui; ils croyaient qu'il était mort sur la roue. Le saint dit : « C'est moi qui suis Georges, le serviteur du Christ, qui ai été par vous criblé de blessures, mais le Seigneur mon Dieu m'a mis sur pieds et tout renouvelé. » Nombre d'infidèles qui le virent vivant crurent au Christ, et sur l'ordre du juge on les fit sortir et on leur trancha la tête par le glaive.

L'impératrice Alexandra, ayant entendu parler de lui, confessa avec vraie foi le nom du Christ notre Dieu.

On creusa ensuite un puits et on le remplit de chaux, on y versa de l'eau, et lorsque la chaux fut en pleine ébullition on y jeta saint Georges, on mit par-dessus de lourds chariots et on l'abandonna pendant trois jours. Mais l'ange du Seigneur descendit et le conserva sain et sauf. Ceux qui furent témoins de ce miracle crurent au Christ.

L'impératrice Alexandra, l'ayant appris, glorifia Dieu et demeura ferme dans la foi du Christ.

On passa aux pieds de saint Georges des chaussures de fer et on les cloua

այսր եւ անդր ։ Ձայն * եկեւ յերկնից առ նա եւ ասէ. Զօրացիր Գէորգէոս եւ քաջ լեր զի ես ընդ քեզ եմ ։ * A fol. 238 r° a.

Իսկ Մագնենտիոս փորձելով ասէ ցսուրբն, զի կայր մերձ ի տապան մի. Յարո՛ զմեռեալն ։ Ասէ սուրբն Գէորգիոս. Եթէ հաւատաս ի ճշմարիտ Աստուածն մեր ի Յիսուս Քրիստոս՝ յարուցից անուամբն նորա ։ Եւ նա յանձն ոչ էառ, քանզի սատանայ կապեալ էր զմիտս նորա ի մոլորութիւն կռապաշտութեան ։

Արկին զսուրբն ի բանդ, եւ բազումք ի հաւատացելոցն ի գիշերի տային ինչս բանտապետին եւ մտանէին առ Քրիստոսի վկայն ։ Եւ ուսուցանէր զնոսա հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի, եւ հիւանդս եւ ախտաժետս եւ այսահարս մուծանէին առ նա, եւ նա ձեռն դնելով եւ զնշանն Քրիստոսի ի նոսա դրոշմելով՝ ողջացուցանէր զնոսա եւ յուղարկէր ։

Եւ այր մի երկու եզամբք վաստակէր զերկիր, որոյ անուն էր Գղերիկոս, եւ մինչդեռ գործէր զհողն՝ անկաւ մին յեզանցն եւ մեռաւ ։ Եւ ընթացեալ առ սուրբ վկայն Քրիստոսի աղաչէր զնա զի կենդանացուսցէ զանասունն քանզի աղքատ էր եւ այլ ինչ ոչ ունէր ։ Եւ ասէ սուրբն. Հաւատա՞ս ի Քրիստոս ։ Ասէ Գղերիկոս հաւատամ զի ոչ գոյ այլ Աստուած բայց ի նմանէ ։ Եւ յորժամ դարձաւ եգիտ զեզն կենդանի ։ Եւ

1-6 Ձայն... կռապաշտութեան] Եւ յետ բազում հարցաքննութեանց հրամայեաց եւ B || 8 բանտապետին] բանտապահացն B || 13 եւ մեռաւ] որպէս մեռեալ B || 14 զի կենդանացուսցէ] յարուցանել B || 16 կենդանի] եւ առողջ *add.* B.

à ses pieds, et on le promenait d'un endroit à l'autre; une * voix du ciel se fit entendre à lui qui disait : « Prends courage, Georges, et sois vaillant, car je suis avec toi. » * A fol. 238 r° a.

Magnentius, voulant éprouver le saint qui se trouvait près d'une tombe, lui dit : « Ressuscite le mort! » Saint Georges lui répondit : « Si tu crois en notre vrai Dieu Jésus-Christ, je le ressusciterai en Son nom. » Mais celui-là n'accepta point, car Satan avait lié son cœur à l'erreur de l'idolâtrie.

On jeta le saint en prison. Beaucoup parmi les fidèles, la nuit, donnaient des gratifications au gardien chef de la prison et s'introduisaient auprès du martyr du Christ. Il leur enseignait à demeurer fermes dans la foi du Christ. Ils introduisaient auprès de lui des malades, des infirmes, des possédés; et lui, en leur imposant les mains, en faisant sur eux le signe du Christ, les rendait à la santé et les congédiait.

Un homme, dont le nom était Cléricus, travaillait la terre avec deux bœufs; pendant qu'il labourait le sol, un des bœufs tomba et mourut. Il accourut au saint martyr du Christ et le priait de rendre la vie à la bête, car il était pauvre et n'en avait aucun autre. Le saint lui dit : « Crois-tu au Christ? » Clericus répondit : « Je crois qu'il n'y a point d'autre Dieu que lui. » Lorsqu'il fut de

լուեալ զայս դատաւորին առաքեաց զօրականս եւ զԿղերիկոս յօդս յօդս կորատեցին

* A fol. 238 r° b. եւ սպանին եւ արեամբն * իւրով մկրտեցաւ :

Եւ ի մէջ գիշերին սուրբն տարածեաց զձեռս իւր յերկինս, եւ աղօթեաց առ Աստուած : Եւ ձայն եղեւ առ նա յերկնից եւ ասէ. Եկեսջիր առ իս քաջ զօրական իմ եւ հանգիր յանանց յուրախութիւնս, եւ արարից զանուն քո մեծ յամենայն ազգս, եւ տաց քեզ շնորհս զօրութեան, զի ամենեցուն որք կատարեն զյիշատակս քո եւ պատուեն զօր հանգստեան քո՝ օգնեցից նոցա ի նեղութեան եւ փրկեցից ի հասեալ փորձութեանց :

Եւ վաղիւն հատին ի վերայ նորա վճիռ զի սրով մեռցի : Եւ յորժամ տանէին ի տեղին ընթացաւ թագուհին Աղեկսանդրիա, անկաւ յոտս նորա եւ ասէ. Ողորմեա՛ ինձ եւ մի՛ թողուր զիս : Եւ սուրբն վասն նորա աղաչեաց զԱստուած : Եւ հրամայեաց դատաւորն զի եւ զնորա զգլուխն հատցեն. տարածեաց զձեռս իւր յերկինս եւ աղօթեաց առ Աստուած յոր հաւատացն. եւ նախ քան զհարկանել զահճին աւանդեաց զհոգին Աղեկսանդրիա :

Իսկ սուրբն Գէորգէոս աղաչեաց զդահճսն զի անսայցեն սակաւիկ մի, եւ տարածեալ զձեռս իւր յերկինս ասէ. Աստուած իմ, որ յառաջ քան զյաւիտեանս, ես ի քեզ

3 սուրբն] Գէորգէոս *add.* B || 4-8 Եւ ձայն... փորձութեանց] մինչեւ յաւուրս B || 14 Աղեկսանդրիա] Նոյնպէս կատարեցաւ եւ երանելին Գերոնդիոս՝ որ էր հայր սրբոյն Գէորգեայ *add.* B || 16 — p. 1385, l. 8 ասէ... զդահճսն] աղօթեաց առ Աստուած, եւ ապա ասէ B.

retour, il trouva le bœuf vivant. Ce qu'ayant appris le juge, il envoya des soldats qui dépecèrent articulation par articulation Cléricus, puis le tuèrent; il

* A fol. 238 r° b. fut baptisé * dans son sang.

Pendant la nuit, le saint étendit ses mains vers le ciel et pria Dieu. Une voix du ciel se fit entendre à lui qui disait : « Viens auprès de moi, mon vaillant soldat, et repose-toi dans les joies qui ne passent pas. Je rendrai ton nom grand dans tous les peuples, je t'accorderai des grâces de puissance et à tous ceux qui célébreront ta mémoire et honoreront le jour de ton repos je leur viendrai en aide dans la tribulation, et je les sauverai des épreuves qui les auront atteints. »

Le lendemain, sentence fut portée contre lui qu'il mourrait par le glaive. Tandis qu'on le conduisait au lieu (d'exécution), l'impératrice Alexandra accourut, tomba à ses pieds et lui dit : « Aie pitié de moi et ne m'abandonne pas. » Le saint pria Dieu pour elle. Le juge ordonna qu'à elle aussi on lui tranchât la tête; elle étendit ses mains vers le ciel et pria Dieu en qui elle avait cru, et avant que le bourreau eût frappé Alexandra rendit l'âme.

Quant à saint Georges, il pria les bourreaux d'attendre un instant, et ayant étendu ses mains vers le ciel, il dit : « Mon Dieu, Toi qui es avant tous les

յուսացայ ի մանկութենէ իմէ, եւ ետուր ինձ պսակ մարտիրոսութեան, լուր ինձ եւ տուր շնորհս անուան իմոյ եւ ոսկերացս, զի որք աղաչեսցեն զքեզ անուամբս իմով, եւ կոչեսցեն զիս յօգնականութիւն, հասիր * արագարագ յաւգնականութիւն եւ փրկեա զնոսա յամենայն փորձութենէ, եւ պահեա զամենայն վաստակս եւ զանասունս նոցա անվնաս, եւ զամենայն խնդրուածս նոցա կատարեա : Ձայն եկեւ առ նա յերկնից եւ ասէ. Ամենայն ազգք հաւատացելոց որք յիշեն զանուն քո զոր ինչ եւ խնդրեսցեն տացի նոցա եւ փառաւոր արարից զանուն քո յաւիտեան ի վերայ երկրի : *A fol. 238 v° a.

Եւ ասէ սուրբն Գէորգէս ցդահիճսն. Կատարեցէք զհրամայեալսն ձեզ : Եւ առժամայն հատին զգլուխ նորա Ապրիլի ԻԳ :

Եւ Պասիկրատէս ծառայն իւր անմեկնելին ի մարտիրոսութեանն իւրում ոչ մեկնեցաւ առ ի նմանէ, այլ զամենայն նահատակութիւնն տեսանէր եւ զպատասխանիսն լսէր եւ ստուգութեամբ գրեաց, զոր եւ մեք հաւատով հաւատացաք եւ հաստատեմք :

[B * Յայսմ աւուր կատարեցաւ սուրբ վկայն եւ քաջայաղթ մանուկն Յոհան ի քաղաքն Նախճաւան, զի ոչ ուրացաւ զՔրիստոս. վասն որոյ սաստիկ տանջանօք նա սպանանել զնա Ամիր Մումնի ամիրայն այլազգեաց :] *B p. 181 a.

9 նորա] Աշկի ԺԶ եւ *add.* B || 12 զոր եւ մեք ... հաստատեմք] յորմէ եւ մեք առաք B.

siècles, j'ai espéré en Toi dès mon enfance et Tu m'as accordé la couronne du martyre. Exauce-moi et donne grâce à mon nom et à mes os : tous ceux qui Te prieront en mon nom et m'invoqueront à leur secours, * viens rapidement à leur aide et sauve-les de toute tentation; conserve-leur tous les fruits de leurs labeurs et (garde) leurs animaux de tout mal; exauce toutes leurs prières. » Une voix du ciel se fit entendre à lui qui dit : « A toutes les générations de croyants qui invoqueront ton nom, tout ce qu'elles me demanderont, je le leur accorderai et je rendrai ton nom glorieux à jamais sur la terre. » *A fol. 238 v° a.

Saint Georges dit alors aux bourreaux : « Exécutez ce qui vous a été commandé. » Ils lui tranchèrent aussitôt la tête, le 23 avril.

Pasicratès, son serviteur, ne l'avait point quitté pendant son martyre. Il fut témoin de tout son martyre, entendit ses réponses et les transcrivit fidèlement; nous y avons cru et y croyons sincèrement.

[B * En ce jour mourut le saint et vaillant martyr Hohan dans la ville de Naxidjavan pour ne pas avoir renié le Christ; c'est pourquoi l'émir des infidèles, Amir Moumni, le fit mourir dans d'atroces supplices.] *B p. 181 a.

Ահեկի ԺԷ եւ Ապրիլի ԻԴ : Վկայութիւն սրբոցն Պասիկրատոսի եւ Վաղենդիոնի :

Սոքա զօրականք էին ի գնդէն Միւսիա, ի քաղաքէն Ռոդոստոլայ, յաւուրս Աւրելիանոսի եպարքոսին, եւ տեսանէին զկռապաշտսն մոլեալս ի կուռսն, աղաղակեցին.

* A fol. 238 v° b. * Քրիստոնեայ եմք, եւ սկսան աղօթել առ Աստուած :

Եւ կալեալ զնոսա տարան առ եպարքոսն եւ բռնադատեցին զնոսա ուրանալ զՔրիստոս, եւ ամենեւին ոչ հաւանեցան : Եւ սպիտակ աղաւնի մի սլացեալ մերձեցաւ յերեսս նոցա, եւ էր այն նշան քաջալերութեան նոցա ի մարտիրոսութիւնն : Ասէ սուրբն Պասիկրատէս ցեպարքոսն. Ցոյց մեզ զաստուածսն քո : Եւ նա ասէ. Սա է աստուածն իմ Ապողոն : Գնաց մերձ Պասիկրատէս եթուք ի նա եւ ասէ. Այսպէս պատուեմ զսա եւ զամենայն կուռս. եւ դու որպէս կամիս՝ այնպէս պատուեա :

Եւ բարկութեամբ արկին զնոսա ի բանդ, եւ էր յաւուրս սրբոյ Պենտեկոստէին զկնի Զատկին մեծի. էին արկեալ ի պարանոցսն երկաթի ծանր քառամանեակս : Եւ ասէ. Տեսէք որպիսի մանեակս շնորհեաց Աստուած մեզ եւ պարտ է մեզ

1 սրբոցն] սրբոց վկայիցն — Վաղենդիոնի] Վաղենտիանոսի B || 2 Սոքա] Սուրբ վկայքն Քրիստոսի Պասիկրատոս եւ Վաղենտիանոս B || 3 եպարքոսին] անօրէն արքային B || 5 ուրանալ] զի ուրասցին B || 6-7 Եւ սպիտակ... մարտիրոսութիւնն *om.* B || 12 մեծի] սրբոյ B.

17 AHÉKAN, 24 Avril.

Martyre des saints Pasicratos et Valention.

Ils étaient soldats de la légion de Mysie, de la ville Rodostola, aux jours de l'éparque Aurelianus. Témoins de l'attachement insensé des idolâtres pour

* A fol. 238 v° b. les idoles, ils s'écrièrent : * « Nous sommes chrétiens. » et ils se mirent à prier Dieu.

On les saisit et on les conduisit à l'éparque et on voulut par violence leur faire renier le Christ. Ils n'y consentirent nullement. Une colombe blanche arriva à tire-d'ailes et s'approcha de leur figure, ce qui fut pour eux un gage d'encouragement au martyre. Saint Pasicratos dit à l'éparque : « Montre-nous tes dieux. » Il leur répondit : « Voici mon dieu Apollon. » Pasicratos s'approcha, cracha dessus et dit : « C'est ainsi que je l'honore, lui et toutes les idoles ; toi, honores-les comme tu veux. »

De colère, on les jeta en prison; on était aux jours de la sainte Pentecôte après la grande Pâque; on leur avait posé au cou de lourds colliers de fer. (Le saint) dit : « Voyez quels colliers de grâce Dieu nous a accordés et nous devons vivre avec. » A la neuvième heure de la journée ils se mirent

սովաւ կեալ : Եւ յետ սպասու աւուրն կացին յաղօթս, եւ ճաշակեցին կերակուր եւ ի քուն եղեն : Եւ յարժամ զարթեան ասէ սուրբն Վաղենտիոն. Տեսի զփառս Աստուծոյ :

Եւ ընդ առաւօտն կացուցին առաջի եպարքոսին : Եւ եղբայր սրբոյն Պասիկրատոսի Պապ անուն, կայր առաջի եւ լայր զեղբայրն իւր եւ աղաչէր զեպարքոսն վասն նորա : Եւ ասէ ցեղբայրն. Մատո՛ խնկունս ի բագինսն, զանզի ես վասն գթոյ քո մատուցի խունկ եւ անկայ ի * հաւատոյ : Ասէ ցնա եղբայրն իւր Պասիկրատոս. Որ ուրացար * A fol. 239 r° a. զՔրիստոս, չես արժանի եւ ոչ անուանել : Եւ սաստեաց նմա ի բաց կալ յերեսաց իւրոց, եւ ինքն մեծաբարբառ ձայնիւ խոստովանէր զՔրիստոս ճշմարիտ Աստուած : Եւ երթեալ ի հուրն յորում խնկէին առաջի կռոցն՝ այրեաց զձեռն իւր, եւ ասէ ցեպարքոսն. Տեսանես զապականացու մարմինս, նայեա՛ եւ ի հոգիս զի է անմահ եւ Հոգւով սրբով շնչաւորի, եւ որպէս անշարժ հիմն հաստատուն կայ ակն ունելով փրկութեան ի յաւիտենական կեանսն, ամրացեալ հաւատով զոր ի խաչեցելոյն ընկալաւ :

Հարցին զՎաղենտիոն, եւ նա նոյն եղբայրութեամբ զնոյն խոստովանեցաւ. եւ հատին ի վերայ նորա վճիռ մահուան : Եւ երթեալ մայրն քաջալերէր զնա եթէ Ցնծութեամբ խոնարհեցո՛ զպարանոց քո եւ երթիցես ի կեանսն յաւիտենից. զօրացի՛ր որդեակ իմ եւ ես քեւ ապրեցայց : Եւ նոյնժամայն հատին զերկոցունց վկայիցն Պասիկրատոսի

5 լայր] պաղատէր *add.* B || 14 հատին] հատաւ B.

en prières, puis prirent de la nourriture et s'endormirent. A leur réveil, saint Valention dit : « J'ai vu la gloire de Dieu. »

Au matin, on les fit comparaître devant l'éparque. Un frère de saint Pasicratos, nommé Pape, était présent, il pleurait son frère et implorait l'éparque pour lui. Il dit à son frère : « Offre de l'encens sur les autels, car c'est par pitié pour toi que j'ai offert de l'encens et que j'ai failli dans * la foi. » * A fol. 239 r° a. Son frère Pasicratos lui répondit : « Toi qui as renié le Christ, tu n'es même plus digne de prononcer son nom. » Il lui ordonna avec véhémence de se retirer de sa présence, puis lui-même à haute et forte voix il confessa le Christ vrai Dieu. Étant allé au feu où on brûlait de l'encens devant les idoles, il se brûla la main et dit à l'éparque : « Tu vois cette chair corruptible, regarde aussi l'âme qui est immortelle et est animée par l'Esprit-Saint, qui est ferme comme une fondation solide dans l'espérance où elle est du salut pour la vie éternelle, et fortifiée qu'elle est par la foi qu'elle a reçue du crucifié. »

On interrogea Valention qui, en vrai frère, fit la même confession. On décréta pour lui la peine de mort. Sa mère, qui était venue là, l'encourageait en ces termes : « Baisse ton cou avec plaisir et tu iras à la vie éternelle. Sois fort, mon fils, et par toi je serai sauvée. » On trancha aussitôt la tête aux deux

զգլուխսն Ապրիլի ԻԴ : Էր սուրբն Պասիկրատէս ամաց քսան եւ վեցից, եւ սուրբն Վալենտիոն ամաց երեսնից : Եւ երթեալ ազգականք իւրեանց թաղեցին զնոսա պատուով ի տեղի վայելուչ, ի փառս Քրիստոսի :

Յայսմ աւուր երկու բարեյաղթ վկայքն Քրիստոսի յԱյրարատ գաւառէ, որոց
* A fol. 239 r° b. անուանքն Կիւրակոսք էին, ածան ի Դուին քաղաք առաջի * գլխաւորին ապազգեաց Բուլայի, եւ նա բռնադատէր զնոսա ուրանալ զՔրիստոս եւ լինել տաճկահաւատք :

Իսկ սուրբքն պայծառ երեսօք եւ համարձակ բարբառով խոստովանեցան զՔրիստոս ճշմարիտ Աստուած՝ հաւասար Հօր եւ սուրբ Հոգւոյն : Եւ անօրէնն հրամայեաց բազում չարչարանօք տանջել եւ սրով բառնալ զգլուխս նոցա, եւ են բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց :

* B p. 182 b. [B * Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Թամարայ նոր վկայուհւոյ :

Աղախինն Քրիստոսի Թամար էր կին ամուսնին յերկրէն Մոկաց, որ վասն գեղեցկութեան Գոհար կոչէին, որում սիրահարեալ քուրդ մի ի նոյն գաւառէն Մոկաց, ջանայր սպանանել զայր կնոջն եւ յափշտակել զկինն : Զոր իմացեալ Թամարայ ազդ արար առն իւրում, եւ առեալ զորդիս իւրեանց փախուցեալ գնացին յԱղթամար կղզին :

1 զգլուխսն] Ահկի ԺԷ եւ *add.* B || 3 տեղի] տեղւոջ B — ի փառս Քրիստոսի *om.* B || 6 լինել տաճկահաւատք] դառնալ ի կրօնս իւր B || 10 եւ են բարեխօս . . . մերոց] եւ կատարեցան վկայութեամբ՝ Ահկի ԺԷ եւ Ապրիլի ԻԴ B.

martyrs du Christ, le 24 avril. Saint Pasicratès était âgé de vingt-six ans et saint Valention de trente ans. Leurs parents allèrent les inhumer avec honneur dans un endroit choisi à la gloire du Christ.

En ce jour deux victorieux martyrs du Christ de la province d'Ararat, qui
* A fol. 239 r° b. avaient nom Kirakos, furent amenés à la ville de Dwin devant le * chef des infidèles Boula, qui les obligea à renier le Christ et à se convertir à la religion musulmane.

Les saints, la figure rayonnante et d'une voix hardie, confessèrent le Christ vrai Dieu égal au Père et au Saint-Esprit. L'impie ordonna de les torturer par de nombreux supplices et de leur trancher la tête par le glaive. Ils sont nos intercesseurs auprès du Christ.

* B p. 182 b. [B * En ce jour martyre de sainte Thamar, la nouvelle martyre.

La servante du Christ Thamar était une femme mariée, de la province de Moks, surnommée Bijou (*Gohar*) à cause de sa beauté. Un Kurde de la même province de Moks s'éprit d'elle ardemment et cherchait à tuer le mari de cette femme pour la lui ravir. Thamar, l'ayant su, en informa son mari ; ils prirent leurs fils et allèrent se réfugier dans l'île d'Aghthamar.

Եւ յետ անցանելոյ իբրեւ հինգ ամաց, վասն պիտոյից ինչ գնացին ի միասին յՈստան քաղաք, զոր տեսեալ այլազգեաց զկինն կալան զնա, եւ ձայն բարձեալ աղաղակեցին ասելով թէ. Սա երբեմն դարձեալ էր յայլազգութիւն : Եւ առեալ տարան յատեան ամիրային եւ կնոջ նորա, եւ կացուցին սուտ եւ անիրաւ վկայս : Եւ նա յայտնի եցոյց զստութիւն զրպարտութեան նոցա, եւ համարձակ խոստովանեցաւ զքրիստոնէութիւն իւր : Եւ թէպէտ ամիրայն անփոյթ առնէր, եւ կամէր արձակել, բայց կին նորա ջանացաւ խոստմամբ մեծամեծ պարգեւաց եւ սպառնալեօք մահուչափ տանջանաց ձգել զնա յուրացութիւն :

Իսկ սրբուհին Թամար վառեալ սիրովն Քրիստոսի ոչ խոստմանցն հաւանեցաւ եւ ոչ ի սպառնալեացն երկեաւ, այլ աներկիւղ ամենայն համարձակութեամբ տայր պատասխանի եւ ասէր. Քաւ լիցի թէ ուրացայց զՔրիստոս Աստուածն իմ յոր հաւատացեալ եմ եւ հաւատամ : Ոչ երկնչիմ ի տանջանացդ զոր սպառնաս ածել ի վերայ իմ, զի ես պատրաստ եմ մեռանել վասն Քրիստոսի Աստուծոյն իմոյ, եւ անգոսնեմ զմեծարանսդ զոր խոստանաս * պարգեւել ինձ. զի եթէ ի տեղի քո նստուցանիցես զիս * B p. 183 a.
եւ զամենայն իշխանութիւն քո եւ զտիկնութիւն ինձ տայցես, ոչ փոխանակեմ ընդ սիրոյն Քրիստոսի զոր ունիմ առ նա : Բայց զոր սպառնաս չարաչար տանջանօք մաշել զիս, փութա կատարել եւ մի յամեր զի ես զՔրիստոս ոչ ուրանամ :

Cinq années étaient presque écoulées quand ils se rendirent ensemble pour une affaire à la ville d'Ostan. Les infidèles, ayant reconnu la femme, s'en saisirent et, à voix haute, se mirent à crier : « Celle-ci s'était autrefois convertie à la religion musulmane. » Ils la conduisirent au tribunal de l'émir et de sa femme et produisirent des témoins faux et injustes. Elle démontra la fausseté de leur calomnie et confessa avec hardiesse sa foi chrétienne. Bien que l'émir ne se souciât guère de cette affaire et voulût mettre (la femme) en liberté, cependant sa femme s'efforça, en lui promettant de grands cadeaux et en la menaçant de tortures mortelles, de l'attirer au reniement.

Sainte Thamar, embrasée de l'amour du Christ, ne consentit ni aux promesses ni ne prit peur des menaces, mais sans crainte et en toute hardiesse elle se contentait de répondre : « Loin de moi la pensée de renier le Christ mon Dieu en qui j'ai cru et en qui je crois! Je ne crains point les tortures que tu me menaces de déployer contre moi, car je suis prête à mourir pour mon Dieu le Christ. Je méprise les honneurs que tu me promets de m'accorder, et si même tu me faisais asseoir à ta place et me donnais toute ta puissance et ta dignité de suzeraine, je ne les échangerais point avec l'amour que j'ai pour * B
le Christ. Quant à tes menaces de me consumer dans de cruelles tortures, p. 183 a.
presse-toi de les exécuter et ne tarde pas, car pour moi je ne renie point le Christ. »

Եւ բարկացեալ ամիրային ընդ բանս նորա հրամայեաց հանել յերեսաց իւրոց եւ արկանել ի բանդ, եւ պահել անսուաղ մինչեւ հաւանեսցի ։ Եւ առեալ տարան առ դատաւորն, եւ անդ եւս համարձակ խոստովանեցաւ զՔրիստոս ։

Եւ ի սպառնալ նորա ասէ Թամար. Գիտասցես դատաւոր եթէ զամենայն մարմինս իմ մասն մասն տացես կտրատել որպէս զչամիչդ որ առաջի քո, ես զՔրիստոս ոչ ուրանամ ։ Եւ դատաւորն ըստ հրամանի ամիրային ետ տանել ի բանտ եւ թողուլ անսուաղ, ուր եկաց նա զաւուրս տասն զուարթ երեսօք եւ ուրախ սրտիւ, անդադար պարապեալ յաղօթս Աստուծոյ ամենայն գոհութեամբ ։ Եւ թէպէտ պահապանք բանդին գթացեալ ի նա տային նմա հաց եւ ջուր, այլ երանելի կինն ոչ առնոյր բնաւ ։

Եւ յետ տասն աւուր ժողովեցան տանուտեարքն Ոստան քաղաքին եւ մատուցին առ ամիրայն հազար դեկան, եւ աղաչեցին արձակել զնա ։ Բայց նա ոչ հաւանեցաւ, այլ մեծաւ սաստիւ ետ հանել արտաքոյ քաղաքին եւ քարկոծել ։

Եւ իբրեւ տարան ի տեղի կատարման, բազում անգամ հարցին զնա եւ յորդորեցին ուրանալ զՔրիստոս, բայց նա պնդագոյն տայր պատասխանի, եւ դաւանէր զՔրիստոս Աստուած եւ Որդի Աստուծոյ ։ Եւ մինչդեռ դաւանութիւնն ի բերան իւր էր, հարին զնա քարիւ մեծաւ ի դէմսն, իսկ նա զփանդամն իւր արկեալ զերեսօքն՝ դարձոյց զդէմս իւր յարեւելս ։

L'émir, irrité par ces paroles, ordonna de la faire sortir de sa présence, de la jeter en prison et de la garder sans nourriture jusqu'à ce qu'elle eût consenti. Puis on la prit de là et on la conduisit auprès du juge et là encore elle confessa avec hardiesse le Christ.

Comme (le juge) la menaçait, Thamar dit : « Sache, juge, que si tu me fais couper tout mon corps morceau par morceau comme le raisin sec que tu as devant toi, je ne renierai point le Christ. » Le juge, selon l'ordre de l'émir, la fit conduire en prison et abandonner sans nourriture. Elle y resta dix jours, la figure souriante et le cœur joyeux, incessamment occupée à prier Dieu en Lui rendant toutes grâces. Et bien que les gardiens de la prison, émus de pitié pour elle, lui donnassent du pain et de l'eau, la bienheureuse femme n'acceptait absolument rien.

Dix jours après, les notables de la ville d'Ostan se réunirent et offrirent mille écus à l'émir en le priant de mettre (la femme) en liberté. Mais il n'accepta point; au contraire, très irrité, il la fit sortir de la ville pour la lapider.

Lorsqu'on l'eut conduite au lieu d'exécution, on l'interrogea plusieurs fois et on l'engagea à renier le Christ, mais elle répondait avec la même fermeté et confessait le Christ Dieu et Fils de Dieu. Elle avait encore cette profession de foi sur les lèvres quand on la frappa au visage avec une grosse pierre, elle abaissa son voile sur sa figure et tourna son visage vers l'orient.

Յայնժամ զրոհ տուեալ ամբոխին * մեծաբարբառ աղաղակաւ ձգեցին ի նա քարինս, մինչեւ ի բազմութենէ խուռն քարանցն ծածկիլ Թամարայ, իբրեւ զգոհար պատուական ըստ անուան իւրոյ : Եւ եղեւ կատարումն երանելոյն Թամարայ Ահկի ԺԷ եւ Ապրիլի ԻԴ : Եւ ապա հրաման եղեւ քրիստոնէից բառնալ զնա եւ թաղել : Եւ յամփոփելն զմարմին նորա տեսին զի կարեալ էր հնարիւք զտորոտ շապկին եւ զփողպատն, զի մի ի ձգելն յանօրինաց մերկասցի մասն մարմնոյն : Եւ զարմացեալ ընդ համեստութիւն նորա փառս ետուն Աստուծոյ : * B p. 183 b.

Ի սմին աւուր վկայութիւն Եղիսաբեթի նոր վկայուհւոյ :

Երանելի կինս այս էր յերկրէն Արճիշոյ, ի Խառաբաստ գեղջէ, եւ փորձանօք չարին յայլազգութիւն դարձեալ ի Բերկրի՝ մատնեաց զանձն ի պղծութիւն : Եւ ի գալ նորա ի Վան քաղաք ի խօսելն ընդ ումեք երդուաւ ի վերայ իրիք բանի ասելով. Այն սուրբ աստուածածինն որ այս այսպէս է. զոր լուեալ այլազգեաց սաստեցին նմա : Եւ նա երկրորդեաց ասելով. Յայտնապէս ասեմ եւ ոչ ամաչեմ, զի ես ծառայ եմ սուրբ Աստուածածնին, եւ հաւատամ ի միածին նորա որդին Յիսուս Քրիստոս ի խաչելեալն թագաւոր վասն մերոյ փրկութեան :

Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նորա եւ կալեալ տարան յատեան դատաւորաց, եւ անդ եւս համարձակ դաւանեցաւ զՔրիստոս Աստուած : Եւ յետ բազում աղօթանաց եւ

Alors la foule l'assaillit * à grands cris et lui jeta des pierres, tant que sous la grande multitude des pierres Thamar fut recouverte comme un Bijou précieux, ainsi qu'on la nommait. Le martyre de la bienheureuse Thamar eut lieu le 17 ahékan, le 24 avril. Il fut ensuite permis aux chrétiens de l'enlever et de l'enterrer. En ensevelissant son corps on s'aperçut qu'elle avait trouvé le moyen de coudre le bord de sa chemise avec le voile pour qu'au milieu des attaques qu'elle aurait à subir de la part des impies, aucune partie de son corps ne fût mise à nu. Ravis de sa pudeur, (les témoins) rendirent grâces à Dieu. * B p. 183 b.

En ce même jour martyre d'Élisabeth, la nouvelle martyre.

Cette bienheureuse femme était de la province d'Artchèche, du village Xarabast. Par la tentation du méchant (démon) elle se convertit à l'islamisme à Berkri et s'adonna à la débauche. Lorsqu'elle vint à la ville de Van, en parlant avec quelqu'un elle jura à propos de quelque chose, en disant : « Par la sainte mère de Dieu, je vous dis que c'est ainsi. » Ce qu'ayant entendu, les infidèles la réprimandèrent. Mais elle répéta et dit : « Je vous dis ouvertement, et je n'en ai point honte, que je suis la servante de la sainte mère de Dieu, et que je crois en son fils unique Jésus-Christ, en ce roi crucifié pour notre salut. »

Une multitude de gens se rassemblèrent autour d'elle, la saisirent et la conduisirent au tribunal des juges; là encore elle confessa avec hardiesse le Christ Dieu. Après bien des supplications et des menaces, lorsqu'il leur eut

տպաւորեալ, յորժամ ոչ կարացին հաւանեցուցանել զնա ուրանալ զՔրիստոս, հրամանաւ բդեշխին որոյ անուն էր Մելիքազդին, եւ կնոջ նորա որ զերանելին Թամար եւս քարկոծել, տարան զԵղիսաբեթ եւ մեծաւ ամբոխիւ քարկոծեցին ի հրապարակի անդ ։ Եւ եղեւ կատարումն երանելի կնոջս Ահկի ԺԷ եւ Ապրիլի ԻԴ, յաւուր տօնի սրբոց քառասնից, որոց եղեւ հաղորդակից ։]

Ահկի ԺԸ եւ Ապրիլի ԻԵ ։ Պատմութիւն սրբոյ առաքելոյն Մարկոսի աւետարանչի ։

Առաքեալն Քրիստոսի Մարկոս աւետարանիչն շրջեաց յԵգիպտացւոց գաւառս, ի Լիբիա եւ ի Մարմարիկա, յԱմոնիական եւ ի Պենտապօլիս, յաւուրս Տիբերի կռապաշտ

6 պատմութիւն ... աւետարանչի] Վկայութիւն եւ տօն ամենահռչակ եւ ամենաժողով սրբոյ եւ փառաւորեալ առաքելոյն եւ լուսափայլ աւետարանչին Մարկոսի. եւ երկրպագութիւն սրբոյ աւետարանչին Քրիստոսի զոր գրեաց նա ըստ անուան իւրոյ B ‖ 7-8 Առաքեալն ... յաւուրս] Յետ կենդանարար չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ եւ աստուածային նորա յարութեանն եւ համբառնալոյն փառօք առ հայր ի յերկինս, սուրբ առաքեալքն եւ երանելի աշակերտքն նորա որք ամենայնի ականատեսք եղեն, հրամանաւ սուրբ Հոգւոյն ընթացան ընդ տիեզերս ամենայն որպէս զի աւետարանին լուսով զկռապաշտութեան խաւարն հալածեսցեն ։ Ուստի եւ ի գալն Պետրոսի ի Հռոմ ունէր աշակերտ ընդ իւր եւ ընկերակից եւ ճանապարհորդակից զերանելի առաքեալն Մարկոս, որ էր որդի նմին գլխաւորի առաքելոյն, սիրելի իսկ ի մկրտութենէն, որպէս եւ գրէ առեալ. Ողջոյն տայ ձեզ Մարկոս որդի իմ ։ Քանզի էր սա ինքն ամենագովելի առաքեալս եւ լուսափայլ աւետարանիչս Մարկոս՝ ազգաւ ի հրէից անտի, գոլով ի քահանայական ցեղէն Ղեւեայ, ա.լ եւ քեռորդի սրբոյ առաքելոյն Բառնաբայ ։ Եւ յորժամ մարտիրոսացաւ սուրբն Բառնաբաս ի Կիպրոս, Մարկոս՝ որ նախ ընդ Բառնաբայ եւ ընդ Պօղոսի շրջելով աշակերտաբար սպասաւորէր նոցա յաւետարանն՝ եկն առ սուրբ առաքեալն Պետրոս ։ Քանզի որպէս ասացաք՝ որդի էր նորա ըստ վերայն ծննդեանն. եւ ի նմանէ աշակերտեալ՝ շրջելով

été impossible de la faire consentir à renier le Christ, sur l'ordre du gouverneur, dont le nom était Mélikhazde, et de sa femme, celle qui avait fait lapider la bienheureuse Thamar, ils conduisirent Élisabeth sur la place publique où une grande foule la lapida. Le martyre de cette bienheureuse femme eut lieu le 17 ahékan, le 24 avril, jour de la fête des quarante martyrs, au triomphe desquels elle fut associée].

18 AHÉKAN, **25 Avril.**

Histoire du saint apôtre Marc l'évangéliste.

L'apôtre du Christ Marc l'évangéliste parcourut les provinces de l'Égypte, la Libye, Marmarika, Amoniacon et la Pentapole[1], aux jours de Tibère,

1. C'est-à-dire la Pentapole de Libye, comprenant les villes de Cyrène, Bérénice, Arsinoë, Apollonie, Ptolémaïs.

կայսերն, եւ քարոզէր զաւետարանն Քրիստոսի ։ Գնաց եւ ի Կիւրինի Պենտապօլսոյ եւ բազում սքանչելիս արար ի հիւանդս եւ ի դիւահարս եւ զբազումս յանօրինացն դարձոյց յաստուածգիտութիւն եւ կործանեաց զբագինս կռոցն ։

Եւ հրամանաւ Տեառն զոր առ գնաց յԱղեքսանդրիա, եւ յորժամ կոխեաց զոտնն դրան քաղաքին պատառեցաւ կօշիկն, եւ ասէ. Արդարութեամբ ուղիղ է ճանապարհս այս ։ Եւ ետ զկօշիկն ի կօշկակարն Անիանոն, եւ նա յորժամ սկսաւ կարել խոցեաց հերիւնովն զձեռն, եւ առաքեալն ուրախ եղեւ, եթուք ի գետինն, արար կաւ եւ եդ ի վերայ խոցին, կոչելով զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ողջացոյց ։ * Եւ տարաւ զնա կօշկակարն ի տուն իւր, եւ ի քարոզութենէ առաքելոյն հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ ամենայն ընտանեօքն ։ Եւ ձեռնադրեաց զԱնիանոն եպիսկոպոս եւ այլ երիս այրս երիցունս, զՄիլէոն, զՍաբինոս եւ զԿերդոնես ։ Ձեռնադրեաց եւ *A fol. 239 v° a.

ընդ նմա հնգամեայութեամբ սպասաւորէր յաւետարանին պաշտօն. եւ այնպէս քարոզութեամբ բանին Աստուծոյ եկ ընդ Պետրոսի ի Հռոմ ։ Սա՛ այնչափ լի էր ամենայն առաւելօք բարեաց, մինչ զի առաւելու քան զբան նորա զովութիւնն. ճանաչեալ զի եւ ի ձեռն Պօղոսի խրատեալ՝ վասն երբեմն բաժանելոյն՝ ծայրագոյն արութեամբ զբոլոր հեզութեան նշխարս ամենայն յանձնէ ի բաց հերքեաց ։ Որ եւ առաւել քան զամենայն ինչ ունէր զդաժանիս քաղցրութիւն եւ զխոնարհութիւն հոգւոյ. եւ այնպէս ի գլխաւոր քաղաքայն ի մեծն Հռոմ ընդ Պետրոսի կալով, պէսպէս նշանօք եւ համապատասխան վարդապետութեամբ զբազումս ի հաւատոն Քրիստոսի ածին, եւ զՍիմոնի մոլորութիւնն հերքեցին ։ Եւ յետ սակաւ ինչ աւուրս կալոյ անդէն Պետրոսի եւ Մարկոսի՛ եւ սերմանելոյ զբանն Աստուծոյ բազմապատիկ՝ ձեռնադրէ զնա եպիսկոպոս Աղեքսանդրիա եւ Եգիպտոսի եւ առաքեաց անդ ։ Որ եւ գնացեալ շրջեցաւ քարոզութեամբ աւետարանին յամենայն երկիրն Եգիպտացւոց եւ Լիբէացւոց եւ բարբարոսաց, ի Պենտապոլիս եւ ի Մարմարիկա, յԱմոնիական եւ ի Փիւնիկէ, եւ յայլ շրջակայ զաւառս յաւուրս[1] B.

1 կայսերն] Հռովմայեցւոց *add.* B — Քրիստոսի] եւ առնէր բազում սքանչելիս *add.* B || 2 եւ բազում սքանչելիս] եւ անդ յայտ նշանս եւ բժշկութիւնս B — դիւահարս] եւ ի բորոտս եւ յուրուկս *add.* B || 4 առ] ի տեսլեանն *add.* B || 7 եղեւ] յոյժ *add.* B || 8 ողջացոյց] առժամայն առողջացոյց B.

1. Voir note additionnelle, I, page 415.

l'empereur idolâtre. Il y prêcha l'évangile du Christ. Il se rendit aussi à Cyrène dans la Pentapole et y opéra de grands prodiges sur les malades et les possédés, convertit nombre d'impies à la connaissance de Dieu et démolit les autels des idoles.

Sur l'ordre qu'il avait reçu du Seigneur, il se rendit à Alexandrie et lorsqu'il mit le pied sur le seuil de la porte de la ville, sa chaussure se déchira et il dit : « En vérité, le chemin que je suis est le bon ! » Il donna la chaussure (à réparer) au cordonnier Anianon. A peine s'était-il mis à coudre qu'il se perça la main avec la grosse aiguille. L'apôtre en fut content, cracha à terre, fit un emplâtre et l'appliqua sur la blessure en mentionnant le nom de Notre-Seigneur Jésus-Christ, et le guérit. * Le cordonnier le conduisit à sa maison et, sur la prédication de l'apôtre, il crut au Christ et se fit baptiser avec toute sa famille. (L'apôtre) sacra évêque Anianon et ordonna prêtres trois *A fol. 239 v° a.

եօթն սարկաւագունս, կարգեաց եւ այլ մետասան այր սպասաւոր եկեղեցւոյն ։ Եւ ինքն գնաց ի Պենտապօլիս եւ արար անդ ամս երկուս. եւ ձեռնադրեաց անդ եպիսկոպոսունս եւ այս ի սպասաւորութիւն եկեղեցւոյն, եւ դարձաւ յԱղեքսանդրիա ։ Եւ եգիտ զեղբարսն ի նախիրսն, մերձ ի ծովեզրն եւ ուրախ եղեւ յոյժ, քանզի համարձակութեամբ քարոզէին զՔրիստոս ։

Եւ լցան նախանձու կռապաշտքն, եւ յաւուր սրբոյ Զատկին ի ժամ պատարագին, յորժամ եւ նոքա զՍերապիսական տօնն իւրեանց կատարէին, զինեցին ի վերայ առաքելոյն, եւ կապեցին ի պարանոցն պարան եւ ընկեցին յերկիր, եւ քարշէին ընդ մէջ քաղաքին եւ ասէին. Քարշեցէք զգոմէշս ի նախիրսն ։ Եւ առաքեալն գոհանալով աղօթէր առ Աստուած, եւ կոտորեցաւ ամենայն մարմինն, եւ քարինքն եւ հողն լցան արեամբ ։ Արկին զնա ի բանդ, եւ ի մէջ գիշերին հրեշտակ Տեառն իջեալ յերկնից, մերձեցաւ ի նա եւ ասէ. Ծառայ Աստուծոյ Մարկոս, գլխաւոր սրբոցն որ են յԵգիպտոս, (* A fol. 239 v° b.) ահա անուն * քո գրեցաւ յերկիրն կենդանեաց, եւ լինիցիս ի թիւ երկոտասան առաքելոցն, եւ անուն քո ոչ ջնջեսցի յաւիտեան ։ Եւ հրեշտակք զհոգի քո ընկալցին, եւ դասակից լինիցիս երկնային զուարթնոցն, եւ նշխարք ոսկերաց քոց յերկիր ոչ կորիցեն ։

2 Եւ ինքն գնաց] Սա զառաջինն մատոյց զաստուածային պատարագն յԱղեքսանդրիա, որպէս եւ Յակոբ յԵրուսաղէմ եւ Պետրոս յԱնտիոք ։ Եւ եկեալ յԱղեքսանդրէ՝ գնաց B || 3 դարձաւ] վերստին *add.* B || 10 լցան] ներկեցան B || 11-15 իջեալ ... ոչ կորիցեն] մխիթարեաց զնա B.

autres hommes : Miléon, Sabinus et Kerdonea. Il ordonna aussi sept diacres et institua onze autres hommes serviteurs de l'église, puis lui-même se rendit dans la Pentapole et y demeura deux années. Il y sacra des évêques et d'autres personnes au service de l'église et retourna à Alexandrie. Il trouva les frères parmi les troupeaux de bœufs, près du bord de la mer, et en fut très content, car ils y prêchaient le Christ avec hardiesse.

Les idolâtres furent remplis de jalousie et le jour de la sainte Pâque, à l'heure de la messe, au moment où eux aussi célébraient leur fête de Sérapis, ils assaillirent l'apôtre, lui attachèrent une corde au cou, le renversèrent à terre et le traînèrent par la ville en disant : « Traînez ce buffle jusqu'au troupeau de bœufs. » L'apôtre priait Dieu en rendant grâces. Tout son corps fut brisé, les pierres et le sol furent inondés de son sang. On le jeta en prison, et au milieu de la nuit l'ange du Seigneur descendit du ciel, s'approcha de lui et lui dit : « Marc, serviteur de Dieu, principal des saints qui sont en Égypte, (* A fol. 239 v° b.) voici que ton * nom est inscrit dans la terre des vivants, tu seras du nombre des douze apôtres, et ton nom ne sera jamais effacé. Les anges recueilleront ton âme et tu seras mis au rang des Veilleurs célestes et les reliques de tes os ne périront point dans la terre. »

· Եւ զայս լուեալ սրբոյ առաքելոյն Մարկոսի գոհացաւ զԱստուծոյ եւ ասէ. Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի թողուր զիս, ընկա՛լ զհոգիս իմ եւ խառնեա՛ զիս ի թիւ սրբոց քոց : Եւ երեւեցաւ նմա Տէր եւ ասէ. Խաղաղութիւն ընդ քեզ աւետարանիչ իմ Մարկոս : Եւ նա ասէ. Խաղաղութիւն քեզ Տէր իմ Յիսուս Քրիստոս :

Եւ յորժամ առաւօտ եղեւ հանին ի բանդէն եւ դարձեալ քարշեցին որպէս յառաջն, եւ մինչդեռ օրհնաբանութիւնն ի բերանն էր աւանդեաց զհոգին իւր առ Աստուած : Եւ ընկեցին զմարմինն իւր ի հուր, եւ եղեւ անձրեւ սաստիկ եւ որոտումն, եւ ահագին կայծակունք, եւ փախեան եւ հուրն շիջաւ : Եւ երթեալք եղբարքն հանին ամբողջ զմարմինն, եւ եդին փառօք ի փորեալ վիմի, եւ տօնեցին զօրն ննջման իւրոյ Ապրիլ ԻԵ :

3 երեւեցաւ նմա Տէր] եւ եկն ի տեսլեանն զՏէր B || 5 յառաջն] ընդ ամենայն փողոցս քաղաքին մինչեւ մերձ ի խորտակել բոլոր ոսկերացն եւ ի քանդել ամենայն մարմնոյ նորա *add.* B || 7 ահագին *om.* B || 8 կայծակունք] եւ մթացան երկինք եւ բազում սունք հեթանոսաց կործանեցան եւ երկեան երկիւղ մեծ, եւ որք սպանին զմարմին սրբոյն թաղին եւ *add.* B || 8 — p. 1396 l. 4 Եւ երթեալք ... Աստուծոյ] Իսկ հաւատացեալքն համարձակեալք զօրութեամբն Աստուծոյ, երթեալ հանին ամբողջ ի հրոյն զմարմին սրբոյն, եւ տարեալ ի տեղին յորում աղօթէր միշտ եւ քարոզէր՝ թաղեցին անուշահոտ եղօք եւ խնկօք ի վիմափոր գերեզմանի յոյժ փառաւորապէս ի կողմն արեւելից քաղաքին : Ննջեաց առաքեալն եւ աւետարանիչն Քրիստոսի Մարկոս, որ եղեւ քահանայ եւ վկայ, եւ առաջին յԱղեքսանդրիա. եւ մարտիրոսացաւ Ահկի ամսոյ ԺԸ եւ Ապրիլի ԻԵ, որ եւ երեսուն ամսոյն Եգիպտացւոց եւ վեշտասան Եբրայեցւոցն, յորժամ ի մարմնաւորութենէն Քրիստոսի յիսուն երեք ամ անցեալ էին :

Ոմանք ի ժամանակս Գայոսի եւ Յուլիոսի կայսերաց, եւ այլք ի ութ ամի Ներոնի կայսեր ասեն զմահ նորա լինել. բայց զքարոզութիւնն ի ժամանակս Տիբերիոսի կայսեր արար : Զսա առաքեալքն անուանեցին աւետարանիչ, վասն զի գրեաց զաւետարանն որ ըստ անուանն իւրում է, ի բանից եւ ի պատմութենէ սրբոյ առաքելոյն Պետրոսի : Էր սուրբն Մարկոս անձամբն միջակ՝ ոչ առաւել երկայն եւ մեծ, եւ ոչ դարձեալ յոյժ փոքր եւ ամփոփ, այլ բարեվայելուչ եւ յարմար եւ հասակին չափ կատարեալ : Եւ սկսեալ ի ծաղկիլ բայց ոչ յոյժ ծեր, եւ մանաւանդ մարմնովն առաւել

Le saint apôtre Marc, quand il eut entendu cela, rendit grâces à Dieu et dit : « Mon Seigneur Jésus-Christ, ne m'abandonne point, reçois mon âme et mêle-moi au nombre de Tes saints. » Le Seigneur lui apparut et lui dit : « Paix soit avec toi, mon évangéliste Marc. » Il Lui répondit : « Paix avec Toi, mon Seigneur Jésus-Christ. »

Quand le matin fut venu, on le sortit de prison et on se remit à le traîner comme auparavant; et pendant que la bénédiction était encore sur ses lèvres il rendit son âme à Dieu. On jeta son corps dans les flammes; une forte pluie survint avec des coups de tonnerre et de terrifiants éclats de foudre; (les bourreaux) prirent la fuite et le feu s'éteignit. Les frères allèrent relever son corps resté intact, le déposèrent avec gloire dans un rocher creusé et fêtèrent le jour de son repos le 25 avril.

Զսա առաքեալքն անուանեցին աւետարանիչ, վասն զի գրեաց զաւետարանն որ ըստ անուանն իւրում է, ի բանից եւ ի պատմութենէ սուրբ առաքելոյն Պետրոսի :

* A fol. 240 r° a. Էր սուրբն Մարկոս անձամբն միջակ, * երկայնաքիթ, յաւնեղ, պակասամօրուս, աչեղ, ճակատն ցորենագոյն, ալեխառն, քարեաւեալ, լցեալ շնորհօքն Աստուծոյ :

Ահեկի ԺԹ եւ Ապրիլի ԻԶ · Վկայութիւն սրբոյն Վասիլեոսի Ամասիոյ եպիսկոպոսին :

Բռնաւոր եւ ամբարիշտ արքայն Մաքսիմոս բազում չարիս գործեաց յարեւելս ընդ քրիստոնեայս : Եւ մեծն Կոստանդիանոս առաջին քրիստոնեայ թագաւորն Հռոմայ առաքեաց զքեռայրն իւր զԼիկինիոս ի Նիկոմիդիա, եւ կալաւ զթագաւորութիւնն Մաքսիմոսի, եւ սկսաւ առաւելապէս զոհս մատուցանել կռոցն եւ հալածել զքրիստոնեայսն : Արդ մարտիրոսացան ի Սեբաստիա սուրբ քառասունքն եւ ի Նիկոպոլիս

յոլով քան զհնգ երեսուն, գեղեցիկ տեսլեամբ երեսօք, երկայնաքիթ ուղիղ եւ սաստնեալ ունչք, եւ ոչ անհաւանագոյն եւ կարճատեսակ երեւելով, մեծադլուխ սակ եւ գեղեցկաշար յարմարութեամբ շարժեալ հերքն խառն ալեօքն, գեղեցիկ ակնահայեաց, եւ յօնեղագոյն եւ կից, աչեղ, լայնաճակատ, եւ մերձ ի ճաղատութիւն, խարամօրուս եւ կից, ոչ առաւել կարճ այլ եւ ոչ յոյժ երկայն, ցորենամորթ, եւ էր սակաւակեր յոյժ : Բարուք ազարմած զթակից առ որս հանդիպէր . բարեպատմող եւ բարեհաշտ, զուարթամիտ եւ քարեաւեալ, լցեալ շնորհօքն Աստուծոյ, որ եւ փայլէր ի մարմին նորա շնորհք սուրբ Հոգւոյն : Եւ հոգի նորա լի էր ամենայն առաքինութեամբ բարեաց, որպէս զի շնորհին որ ի մարմինն էր՝ ցուցանէր զհոգւոյն առաքինութիւնն [1] B.

6 Մաքսիմոս] Մաքսիմիանոս B || 8 Նիկոմիդիա] բազում զի մարտիցէ ընդ Մաքսիմոս : Եւ յորժամ գնաց Լիկիանոս եմուտ ի Նիկոմիդիա *a d.* B.

1. Voir note additionnelle II, page 416.

Les Apôtres l'avaient surnommé l'Évangéliste, parce qu'il écrivit l'évangile qui porte son nom, d'après les paroles et les récits du saint apôtre Pierre.

* A fol. 240 r° a. Saint Marc était de taille moyenne, * avait le nez long, les sourcils épais, la barbe peu fournie, de grands yeux, le front couleur de blé; il était grisonnant, agréable de figure, plein des grâces de Dieu.

19 AHÉKAN, 26 Avril.

Martyre de saint Vassilios, évêque d'Amassia.

L'empereur Maximus, tyran et impie, avait causé beaucoup de mal aux chrétiens en Orient. Le grand Constantin, le premier empereur chrétien de Rome, envoya son beau-frère Licinius à Nicomédie. Il y occupa comme roi la place de Maximus, et se mit plus encore que lui à offrir des sacrifices aux idoles et à persécuter les chrétiens. C'est ainsi que furent exécutés par

Հայոց քառասուն եւ հինգ վկայքն եւ այլք բազումք վասն անուանն եւ հաւատոյն Քրիստոսի որք կատարեցան ի նմանէ ։

Իսկ կինն իւր քոյր էր մեծին Կոստանդիանոսի, եւ էր քրիստոնեայ, որոյ անուն էր Կոստանդինեա ։ Եւ էր նորա աղախին մի քրիստոնեայ որոյ անուն էր Գլափիւրա, յոր տռփացաւ Լիկինիոս պոռնկական ցանկութեամբ ։ Եւ նորա խորհուրդ արարեալ ընդ թագուհւոյն զի փախիցէ յարքայէն, եւ նորա տուեալ ինչս բազումս եւ ոսկի եւ ծառայս յուղարկեաց յարեւելս առն * զգեստիւք ։ Եւ յորժամ եհաս ի քաղաքն Ամասիա՝ * A fol. 240 rº b. իջեւանեցաւ առ այր մի քրիստոնեայ որում անուն էր Կոյինդի ։ Եւ նա գնաց առ եպիսկոպոսն Ամասիոյ Վասիլիոս, եւ պատմեաց նմա զգալուստն Գլափիւրայ, եւ նորա կոչեալ առաջի իւր օրհնեաց եւ զօրացոյց ։

Եւ յաւուրսն յայնոսիկ շինէր եպիսկոպոսն Վասիլիոս եկեղեցի եւ Գլափիւրա ետ զամենայն ինչս իւր ի շինուած եկեղեցւոյն ։ Գրեաց եւ առ թագուհին թէ ուր կայ եւ կամ առ ում, եւ խնդրեաց գանձ ի շինուած եկեղեցւոյն, եւ առժամայն առաքեաց ։

Եւ Բենիգինիոս սենեկապետ թագաւորին առեալ զգրեալ թուղթն Գլափիւրայ եցոյց թագաւորին, եւ նոյնժամայն առաքեաց հրաման առ դատաւորն Ամասիոյ քաղաքին զի երկաթի կապանօք յուղարկեսցէ զեպիսկոպոսն եւ զԳլափիւրա ։ Եւ յառաջ քան զհասանել հրամանացն յԱմասիա Գլափիւրա հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։

lui à Sébaste les quarante (martyrs) et à Nicépolis d'Arménie quarante-cinq martyrs et nombre d'autres, pour le nom et la foi du Christ.

Sa femme était la sœur du grand Constantin; elle était chrétienne, et son nom était Constantinea. Elle avait une servante chrétienne du nom de Glaphyra pour laquelle Licinius s'enflamma d'une convoitise impudique. Elle se concerta avec l'impératrice pour fuir l'empereur; elle lui donna beaucoup de biens, de l'or et des esclaves et l'expédia en Orient, habillée en * homme. * A fol. 240 rº b. Lorsqu'elle arriva dans la ville d'Amassia, elle descendit chez un homme chrétien dont le nom était Koyindi. Celui-ci alla trouver l'évêque d'Amassia, Vassilios, et lui annonça l'arrivée de Glaphyra. (L'évêque) la fit venir auprès de lui, la bénit et l'encouragea.

A cette époque l'évêque Vassilios faisait construire une église. Glaphyra fit don de tout ce qu'elle possédait pour la construction de l'église. Elle écrivit également à l'impératrice où elle se trouvait et chez qui et lui demanda de l'argent pour la construction de l'église; ce qu'elle envoya immédiatement.

Beneginius, le chambellan de l'empereur, prit la lettre qu'avait écrite Glaphyra et la montra à l'empereur, qui aussitôt envoya ordre au juge de la ville d'Amassia de lui expédier, chargés de chaînes, l'évêque et Glaphyra. Avant que l'ordre fût arrivé à Amassia, Glaphyra entra en paix au repos du Christ.

Եւ տարան կապանօք զսուրբ եպիսկոպոսն երկու սարկաւագօք ի Նիկոմիդիա, զԹէոմիտոս եւ զՊարթենիոս, եւ իջուանեցաւ առ այր մի քրիստոնեայ որոյ անուն էր Եղպիտոփորոս ։ Եւ թագաւորն կոչեաց առաջի իւր զսուրբ եպիսկոպոսն, եւ յառաջ տեղեկանայր վասն Գղափիւռայ, եւ ապա պատուիրէր նմա եւ բռնադատէր զոհել կռոցն ։

* A fol. 240 v° a. Իսկ մեծիմաստ * քահանայապետն Աստուծոյ պայծառ երեսօք եւ քաղցրաբարբառ ձայնիւ խոստովանէր զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ զպատուէրս թագաւորին առ ոչինչ համարեցաւ ։ Արկին զնա ի բանդ, եւ ի միւսում աւուրն պատգամաւ եպարքոսին նեղէր զնա յուրացութիւնն Քրիստոսի, եւ նա ամենայն բանի հակառակութեամբ առնէր պատասխանի ։ Եւ հրամայեցին հատանել զգլուխն եւ ընկենուլ ի ծովն ։ Եւ ի գիշերին յայնմիկ սաղմոսէր երկու սարկաւագօքն, եւ տարածեալ զձեռս իւր յերկինս աղօթեաց յերկար. եւ երեւեցոյց նմա Աստուած թէ որպէս լինիցի մահն իւր, եւ նա պատմեաց սարկաւագացն ։

Եւ ընդ առաւօտն հանին ի բանդէն եւ տարան ի տեղի կատարմանն, եւ խնդրեաց անսալ փոքր մի, եւ եդեալ ծունր յեզր ծովուն աղօթեաց առ Աստուած ։ Եւ յորժամ կատարեաց զաղօթսն յանձնեաց զերկուս սարկաւագունս իւր յԵղպիտոփորոս ։ Եւ զահիճն եհատ զպատուական գլուխ նորա յԱպրիլի ԻԶ ։ Եւ ընկեցին ի խորս ծովուն,

1 զԹէոմիտոս] զԹէոպիմոս B || 6 եւ զպատուէրս ... համարեցաւ *om.* B || 16 նորա] Աջկի ԺԹ եւ *add.* B.

On conduisit le saint évêque chargé de liens, accompagné des deux diacres Théomitos et Parthénius, à Nicomédie; il descendit chez un homme chrétien dont le nom était Elpitiphoros. L'empereur fit venir devant lui le saint évêque; tout d'abord il lui demandait des renseignements au sujet de Glaphyra; ensuite, par des ordres et par violence, il cherchait à le faire immoler aux idoles.

* A fol. 240 v° a. Mais le très sage *pontife de Dieu, le visage rayonnant et d'une voix douce, confessait le nom de Notre-Seigneur Jésus-Christ et les ordres de l'empereur furent pour lui néant. On le jeta en prison; le lendemain, en lui envoyant l'éparque, (l'empereur) le pressait de renier le Christ, mais, à toutes les paroles (de l'éparque), (l'évêque), dans ses réponses, opposait la résistance. Ordre fut donné de lui trancher la tête et de le jeter à la mer. Il passa cette nuit-là à psalmodier avec les deux diacres, et, les mains étendues vers le ciel, il pria longuement. Dieu lui fit voir comment s'accomplirait sa mort et il le raconta aux diacres.

Au matin, on le fit sortir de la prison et on le conduisit au lieu d'exécution; il pria (les bourreaux) d'attendre un peu, et, s'étant mis à genoux sur le rivage, il pria Dieu. Quand il eut fini sa prière, il confia ses deux diacres à Elpitiphoros. Le bourreau trancha sa tête vénérable le 26 avril. On le jeta

յայլ տեղի գլուխն եւ յայլ տեղի զմարմինն ։ Եւ ի գիշերին յայնմիկ հրեշտակ երեւեցաւ Ելպիտիփորոսի եւ ասէ. Սուրբ եպիսկոպոսն Վասիլիոս ի Սինոպ գնաց, եւ անդ մնայ ձեզ, երթիջիք առ նա ։ Զայս երիցս անգամ ետես ։

Եւ նորա առեալ զերկու սարկաւագունսն գնաց ի քաղաքն * Սինոպի ։ Եւ միւսանգամ հրեշտակ Տեառն երեւեցաւ Ելպիտիփորոսի ի տեսլեան եւ ասէ. Յաջակողմն պարսպին արկէք ուռկանս ի ծովն եւ անդ գտանիցէք զփափագելին զոր ցանկայք պատուական մարգարտին ։ Եւ անուամբ Տեառն ընկեցին զգործին ի ծովն եւ հանին զմարմինն կցեալ զգլուխն ի տեղի իւր. եւ զիրկս արկեալ համբուրեցին, եւ անուշահոտութեամբ եւ մաքուր կտաւովք պատեցին, եւ ի հինգ օր տարան ի քաղաքն իւր Ամասիա, եւ եդին տապանով յեկեղեցին զոր սուրբն շինեաց ։ * A fol. 240 v° b.

Եւ Յովհաննէս եպիսկոպոսն Նիկոմիդացւոց գրեաց զվկայութիւն սուրբ եւ փառաւորեալ եպիսկոպոսին Վասիլեայ ։

1-2 հրեշտակ ... ասէ] ետես յանուրջս Ելպիտիփորոս զհրեշտակ Տեառն որ ասէր ցնա B || 2-3 եւ անդ ... առ նա] երթիջիք անդր եւ գտջիք B || 5 Տեառն *om.* B — ի տեսլեան *om.* B || 6-7 զփափագելին ... մարգարտին *om.* B || 8 կցեալ ... իւր] ընդ գլխոյն B || 11 գրեաց] ճշգրտիւ *add.* B || 12 Վասիլեայ] փառաւորելով զՔրիստոս *add.* B.

au fond de la mer, sa tête à un endroit et son corps à un autre. La même nuit un ange apparut à Elpitiphoros et lui dit : « Le saint évêque Vassilios est parti pour Sinope, il vous attend là-bas, allez auprès de lui. » Il vit trois fois (ce songe).

Il prit avec lui les deux diacres et se rendit à la ville de * Sinope. L'ange du Seigneur apparut de nouveau à Elpitiphoros dans un songe et lui dit : « Jetez le filet dans la mer du côté droit des remparts et vous y trouverez la perle précieuse que vous désirez avoir. » Au nom du Seigneur ils jetèrent l'instrument à la mer et en sortirent le corps auquel était fixée la tête bien à sa place; ils l'embrassèrent et lui donnèrent le baiser, l'ensevelirent avec des parfums dans du linge propre, et après (un trajet de) cinq jours l'apportèrent à sa ville Amassia; ils le déposèrent dans un cercueil, dans l'église que le saint avait fait construire. * A fol. 240 v° b.

Jean, l'évêque de Nicomédie, écrivit le martyre du saint et glorieux évêque Vassilios.

Ահեկի Ի եւ Ապրիլի ԻԷ : Վկայութիւն սրբոցն Մաքսիմոսի, Գադայ եւ Կիւնդիլիանոսի :

Յաւուրս կռապաշտ արքայիցն Մաքսիմիանոսի եւ Մաքսիմեայ այս երեք սուրբ վկայքս էին ի քաղաքն Ռոտոսդոլայ :

Սուրբն Մաքսիմոս ընթերցող էր կաթուղիկէ եկեղեցւոյն, եւ աստուածային գրոց հմուտ, եւ զհաւատացեալսն քաջալերէր եւ հաստատէր անշարժելի կալ յուղիղ հաւատն Քրիստոսի : Եւ նախանձաւոր կռապաշտքն երթեալ ի քաղաքն մատնեցին

* A fol. 241 r° a. զնոսա առ հիւպատոսքն * Գաբինիոն եւ Տարկիւրինոս եւ ասեն. Երեք արք են որ ոչ կամին հնազանդել հրամանաց թագաւորացն մերոց, այլ անուանեն զինքեանս քրիստոնեայս, եւ պաշտեն զերկնաւոր Աստուածն միայն :

Եւ յորժամ լուան հիւպատոսքն Գաբինիոն եւ Տարկիւրինոս առաքեցին զօրականս եւ կալան զնոսա յագարակն իւրեանց յՕսոբիա, եւ երկաթի շղթայիւք կապեցին եւ տարան ի քաղաքն Ռոտոսդոլա առ հիւպատոսսն : Եւ յորժամ տեսին զնոսա հարցին եւ զանուանսն : Ասէ սուրբն Մաքսիմոս. Ըստ մեր հաւատոյս զոր ունիմք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ քրիստոնեայս կոչիմք, եւ է անունս իմ Մաքսիմոս : Եւ նոքա

1 սրբոցն] սրբոց վկայիցն B || 4 կաթուղիկէ] սուրբ *add.* B || 7 Գաբինիոն] Բաբիոն B || 8 հնազանդել] հաւանիլ B || 12 հարցին] հարցանէին B || 14 կոչիմք] լինիմք B.

20 AHÉKAN, 27 Avril.

Martyre des saints Maximus, Gad et Kiwndilianus.

Ces trois saints martyrs vivaient dans la ville de Rotosdola aux jours des empereurs idolâtres Maximien et Maxime.

Saint Maximus était lecteur de l'église catholique; il était versé dans les saintes écritures, encourageait les fidèles et leur donnait la force de demeurer inébranlables dans la vraie foi du Christ. Les idolâtres, jaloux,

* A fol. 241 r° a. se rendirent à la ville et les dénoncèrent aux consuls * Gabinion et Tarquinius et leur dirent : « Il y a trois hommes qui ne veulent point obéir aux ordres de nos empereurs, mais s'intitulent chrétiens et n'adorent que le seul Dieu du ciel. »

Aussitôt qu'ils eurent appris cela, les consuls Gabinion et Tarquinius envoyèrent des soldats qui s'emparèrent de leurs personnes dans leur champ à Osobia, les lièrent dans des chaînes de fer et les conduisirent à la ville de Rotosdola auprès des consuls. Ceux-ci, lorsqu'ils les virent, les interrogèrent et leur demandèrent leur nom. Saint Maximus leur répondit : « D'après la foi que nous avons en Notre-Seigneur Jésus-Christ, nous nous appelons chrétiens, et mon nom est Maximus. » Ils lui demandèrent : « Et cet autre

տեն. Եւ միւսումն որ ընդ քեզ է՝ զինչ անուանի ։ Եւ նա ասէ. Ես քրիստոնեայ եմ եւ անուն իմ Կիւնդիլիանոս ։ Եւ գրեցին զանուանս նոցա, եւ բռնադատէին զոհս մատուցանել կռոցն Դիայ, եթէ նա է թագաւոր երկնի ։

Իսկ սուրբն Մաքսիմոս անարգեաց զնոսա եւ ասէ. Գիտասջիք ո՛վ անմիտք եւ անզգայք, զի Քրիստոս է թագաւոր երկնի եւ երկրի եւ ամենայնի հոգացող եւ մատակարար եւ ունող ամենեցունց ։ Եւ դուք ստուգիւ գիտասջիք զի զձեր հրամանդ ոչ կատարեմք. մեք ամենայն զիմօք զերկնաւորն Աստուած պաշտեմք, զի նորա ձեռացն ստեղծուած եմք ։

* Եւ Գաբինոս հիւպատոսն կոչեաց առանձինն զԳադա եւ զԿիւնդիլիանոս, խրատ տայր նոցա բանիւք թերեւս կարասցէ հաւանեցուցանել զնոսա ի կամս իւր ։ Իսկ սուրբն Գադա եւ Կիւնդիլիանոս ասեն. Մեք հաւանեցաք բանից եղբօրս մերում Մաքսիմոսին, վասն զի ընթերցող է եկեղեցւոյ Աստուծոյ, եւ յոյժ հասու սուրբ գրոց, եւ զօգուտն մեր նա առաւել գիտէ քան զմեզ, եւ մեք վարդապետութեան նորա հաւատացաք ։ Ասէ հիւպատոսն. Մոլորիք որ հաւատայք դմա ։ * A fol. 241 r° b.

Ասէ սուրբ նահատակն Քրիստոսի Մաքսիմոս. Դուք մոլորիք որ զսուրբ եւ զբարեպաշտ ծառայքս ճշմարիտ Աստուծոյ որ արարիչ է երկնի եւ երկրի եւ որ ի նոսա

5 եւ երկրի *om.* B — հոգացող] զոհացող B || 11 բանից] ի բանս B || 13 առաւել] լաւագոյն B || 16 ճշմարիտ *om.* B.

qui est avec toi, comment s'appelle-t-il? » Celui-ci répondit : « Je suis chrétien et mon nom est Kiwndilianus. » Ils inscrivirent leurs noms, et cherchaient à les contraindre à immoler des sacrifices à l'idole Dia (Zeus), comme étant le roi du ciel.

Cependant saint Maximus les méprisa et leur dit : « Sachez, ô insensés et fous, que c'est le Christ qui est le roi du ciel et de la terre, qui pourvoit à tout, qui est le distributeur et le possesseur de tous (biens). Soyez certains que nous n'exécuterons point vos ordres; nous adorons dans toutes ses personnes [1] le Dieu céleste, car nous sommes les créatures de ses mains. »

* Le consul Gabinus prit à part Gad et Kiwndilianus et il leur prodiguait les vains conseils dans l'espoir de les amener à sa volonté. Mais saint Gad et Kiwndilianus lui répondirent : « Nous nous sommes laissé convaincre par les paroles de notre frère Maximus, parce qu'il est lecteur de l'église de Dieu, et très compétent dans les saintes écritures; il connaît mieux que nous ce qui nous est avantageux, et nous avons cru à sa doctrine. » Le consul leur dit : « Vous êtes dans l'erreur si vous le croyez. » * A fol. 241 r° b.

Le saint martyr du Christ Maximus répondit : « C'est vous qui êtes dans l'erreur quand, de saints et pieux serviteurs du vrai Dieu, créateur du ciel

1. C'est-à-dire dans la personne du Père, du Fils et du Saint-Esprit.

արարածք են, եւ յանգոյութենէ ի գոյութիւն ածէ զամենայն եւ նախախնամէ ողորմութեամբ իւրով, զոր պարտ է պաշտել եւ երկիր պագանել, դուք ջանայք երկրպագուս առնել դիւաց որպէս զձեզդ : Արդ՝ զոր ինչ խորհեալ էք արասջիք, զի զմեզ ի կամաց մերոց ոչ կարէք խախտել ամենեւին :

Արկին զնոսա ի բանդ, եւ աղօթեցին առ Աստուած եւ ասեն. Շնորհեա մեզ Քրիստոս Աստուած յերկնից զօրութիւն յօգնականութիւն մեզ, զի կարող լինիցիմք յաղթել ընդդիմակացաց մերոց, եւ ընդունել ի քէն զպսակս յաղթութեան : Եւ զամենայն գիշերն սուրբ Մաքսիմոս յաստուածային գրոց ուսուցանէր զԳադա եւ զԿիւնդիլիանոս :

* A fol. 241 v° a.

* Եւ երեւեցաւ նոցա հրեշտակ Տեառն եւ ասէ. Մի երկնչիք, քանզի Աստուած յոր ապաւինեցայք՝ մնայ ձեզ եւ ոչ հեռի է ի ձէնջ : Եւ այսու բանիւքս զօրացան եւ օրհնեցին զԱստուած :

Եւ ընդ առաւօտն կացուցին զնոսա առաջի հիւպատոսացն, եւ ամենեւին ոչ ողոքանացն եւ ոչ սպառնալեացն լուան : Ասացին եթէ Տէր մեր յայսմ գիշերիս երեւեցաւ մեզ եւ պատուիրեաց զի վասն անուան նորա համբերեմք տանջանացն :

Եւ հրամայեցին մերկացուցանել զնոսա եւ գանիւք յոյժ տանջեցին : Եւ նոքա

1 ածէ] էած B || 3 զձեզդ] դուք B || 5 մեզ] Յիսուս *add.* B || 6 Աստուած *om.* B || 9 նոցա] ի տեսլեանն *add.* B || 10 օրհնեցին] օրհնէին B || 14 նորա] իւրոյ B || 15 զնոսա] եւ տարածեցին յերկիր *add.* B.

et de la terre et de toutes les créatures qui s'y trouvent, qui de l'inexistence tire tout à l'existence et gouverne tout par sa miséricorde, que l'on doit adorer, et (devant qui on doit) se prosterner, vous vous efforcez, vous, de faire des adorateurs des démons, comme vous l'êtes! Çà donc, tout ce que vous avez pensé faire, faites-le; car vous êtes totalement impuissants à nous ébranler dans notre volonté. »

On les jeta en prison; ils prièrent Dieu et dirent : « Christ Dieu, accorde-nous du ciel la force et l'aide pour pouvoir vaincre nos adversaires et recevoir de Toi les couronnes de la victoire. » Toute la nuit saint Maximus la passa à rappeler à Gad et à Kiwndilianus l'enseignement des écritures divines.

* A fol. 241 v° a.

* L'ange du Seigneur leur apparut et dit : « Ne craignez point, car Dieu, à qui vous avez eu recours, vous attend et n'est pas loin de vous. » Ils furent réconfortés par ces paroles et ils bénirent Dieu.

Au matin on les fit comparaître devant les consuls, ils n'écoutèrent absolument point ni les supplications ni les menaces. Ils dirent : « Notre-Seigneur nous est apparu cette nuit et nous a recommandé d'endurer les tortures à cause de Son nom. »

(Les consuls) ordonnèrent de les mettre à nu et de leur infliger le supplice d'une rude bastonnade. Et eux, comme d'une seule bouche, ils dirent : « C'est

որպէս ի միոյ բերանոյ ասացին. Մեք Աստուծով զօրանամք եւ արհամարհեմք զչարչարանս, եւ սնոտի խորհրդոց ձերոց ոչ հաւանիմք :

Եւ լուեալ զայն հիւպատոսացն հրամայեցին տանել զնոսա ի տեղին իւրեանց, եւ անդ հատանել զգլուխ նոցա : Եւ յորժամ առին սուրբքն զվճիռ մահուանն փառս ետուն Աստուծոյ, եւ ասեն. Տէր մեր Յիսուս Քրիստոս որ փրկեցեր զմեզ յայսմ չար կենցաղոյս, արժանաւորեա զմեզ գալ ի հանգիստ քո եւ հանդիպել շնորհաց արքայութեան քո :

Եւ խորհուրդ արարին հիւպատոսքն զի ի գլուխ Մաքսիմոսին բեւեռեսցեն երկաթի քառամանեակ, եւ ապա հատցեն զգլուխն, քանզի բազում հակառակաբանութեամբ վիճէր ընդ նոսա : Եւ յորժամ տարան ի տեղին որ կոչի Ոզիբա սուրբքն * ամրացուցին զանձինս իւրեանց ամենազօր խաչիւն Քրիստոսի, եւ նոյնժամայն հատին զգլուխս նոցա Ահկի Ի եւ Ապրիլի ԻԷ : Եւ ոմանք հաւատացեալք թաղեցին զնոսա ի նշանաւոր տեղւոջ : * A fol. 241 v° b.

Եւ յետ բազում ժամանակաց ազդեցութեամբ հրեշտակաց տարան զնշխարն ի Կոստանդնուպօլիս, եւ եդին յեկեղեցւոջ ամենասրբուհւոյ աստուածածնին ի Բեգլենդիա :

[B * Տօն է եւ վկայութիւն սուրբ առաքելոյն Սիմոնի տեառնեղբօրն եւ եպիսկոպոսին Երուսաղեմի : * B p. 187 b.

6 քո] երկնից B || 9 հակառակաբանութեամբ] հակառակութեամբ B || 14 ազդեցութեամբ հրեշտակաց] շարժեալք ի վերին ազդեցութենէ B || 15-16 Բեգլենդիա] Բեբլենդիա B.

en Dieu que nous puisons notre force et nous méprisons vos tortures; nous ne cédons point à vos vains conseils. »

Ce qu'ayant entendu, les consuls ordonnèrent de les ramener chez eux (à Osobia) et de leur y trancher la tête. Lorsque les saints reçurent leur sentence de mort, ils rendirent grâces à Dieu et dirent : « Notre-Seigneur Jésus-Christ, Toi qui nous as sauvés de cette méchante vie, rends-nous dignes d'entrer en Ton repos et de jouir des grâces de Ton royaume. »

Les consuls se concertèrent pour faire clouer un collier de fer sur la tête de Maximus et lui faire trancher ensuite la tête, car dans la discussion ils sentaient toute la force de ses réfutations. Lorsqu'on eut conduit les saints à l'endroit appelé Osobia, ceux-ci * fortifièrent leur personne par la toute-puissante croix du Christ, et au même instant on leur trancha la tête le 20 ahékan, le 27 avril. Quelques fidèles les inhumèrent dans un endroit choisi. * A fol. 241 v° b.

Longtemps après, par l'inspiration des anges, leurs reliques furent transportées à Constantinople et furent déposées dans l'église de la très sainte mère de Dieu à Beglendia.

[B* Fête et martyre du saint apôtre Siméon, le frère du Seigneur et évêque de Jérusalem. * B p. 187 b.

Զայս երանելիս Սիմէոն նոյն ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս որպէս ազգակից առընկալաւ եղբայր անուանել, որ եւ ինքն քահանայ օծեաց եւ առաքեաց քարոզել զիւր աստուածային գալուստն որ ի վերայ երկրի : Ուստի եւ զԵրուսաղեմի աթոռն ընկալեալ զեկեղեցին զարդարեաց, եւ բիւր ցաւօք եւ քրտամբք մարտնչելով ընդ գայլսն որպէս հովիւ քաջ եւ ոչ որպէս վարձկան՝ հովուեաց զհօտն բանաւոր զամս քառասուն եւ եօթն մինչեւ յամս Տրայանոսի :

Այլ եւ տաճար զինքն մաքրութեամբ գործելով սուրբ Հոգւոյն Աստուծոյ, զդիւապաշտ մոլորութիւնն հերքեաց եւ զտաճարս կռոցն կործանեաց, եւ զբազումս որ մոլորեալ էին ի խաւարի կռապաշտութեան քարոզութեամբ եւ նշանօք առաջնորդելով ի լոյս հաւատոյ էած :

Եւ բազում ցաւոց եւ երկանց եւ զանազան տանջանաց վասն ճշմարտութեանն ի յամբարշտացն կրեալ համբերեաց : Եւ ի կատարածի ի խաչի կացուցաւ, եւ զհոգին ի ձեռս Աստուծոյ աւանդելով աստի առ երկին որպէս փափաքէրն ի վեր ել ընդ Փրկչին լինելով :

Այս երանելիս կրկին կոչմամբ հարստացաւ, զի Սիմէոն եւ Սիմոն կոչեցաւ, եւ
* B p. 188 a. եղբայր Յակոբայ եւ Քրիստոսի անուանեցաւ : Բայց թուի ինձ եթէ * սա վասն ազգականութեան կոչեցաւ եղբայր Յակոբայ, զի երեւի թէ սա է որդին Կղէոփայ : Քանզի միւս եւս Սիմոնն եղբայր էր հարազատ Յակոբայ, եւ կոչեցաւ տեառնեղբայր. ի կարգէ

Notre-Seigneur Jésus-Christ lui-même accepta d'appeler son frère ce bienheureux Siméon parce qu'il était son parent, lui-même le consacra prêtre et l'envoya prêcher sa venue divine sur la terre. Aussi ayant obtenu le siège de Jérusalem, il fut un ornement pour l'Église et, luttant avec mille peines et sueurs avec les loups comme un vaillant pasteur et non comme un mercenaire, il gouverna son troupeau spirituel pendant quarante-sept ans jusqu'aux jours de Trajan.

Il se fit, par la pureté, le temple du saint Esprit de Dieu, réfuta l'erreur du culte des démons, détruisit les temples des idoles, et attira à la lumière de la foi, en leur servant de guide par la prédication et les miracles, nombre de gens qui étaient égarés dans les ténèbres de l'idolâtrie.

Il endura patiemment bien des peines, des douleurs et des tortures variées de la part des impies pour la vérité, et finit par être crucifié et rendit son âme entre les mains de Dieu, s'élançant d'ici-bas au ciel, ainsi qu'il le souhaitait, pour demeurer avec le Sauveur.

Ce bienheureux s'enrichit d'une double dénomination, car il fut appelé Siméon et Simon et frère de Jacques et du Christ. Mais il me semble qu'il
* B p. 188 a. fut * appelé frère de Jacques à cause de la parenté, car il paraît que c'est lui le fils de Cléophas, puisque l'autre Simon était le propre frère de Jacques et fut surnommé frère du Seigneur; il était du nombre des apôtres, et alla

առաքելոցն էր, եւ ընդ Յուդայի եղբօրն իւրում չոգաւ յԵթովպիա եւ յԱրեւելս քարոզել, եւ անդ կատարեցաւ ։ Այլ զայս կարծեմ եթէ հօրեղբօրորդի է Յակոբայ զոր Շմաւոն կոչեն ։]

Ահկի ԻԱ եւ Ապրիլի ԻԸ ։ Վկայութիւն սրբոցն Դիոդորոսի եւ Ռոդոպիանոս սարկաւագի ։

Այս բարեպաշտ մարտիրոսքս էին ի քաղաքէն Ափրիդիսոնայ ի Կարիայ, յաւուրս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի, եւ վասն Քրիստոսի հաւատոյն յոյժ տանջեցան եւ ձաղկեցան ի քաղաքացեաց, ի ծանօթից եւ յազգականաց, եւ յետոյ ի մէջ հրապարակին քարկոծեցան, եւ առ Աստուած աւանդեցին զհոգիս իւրեանց Ապրիլի ԻԸ ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Պաքումիոսի ճգնաւորին ։

Այս երանելիս Պաքումիոս եգիպտացի էր ի ներքին Թեբայիդայ, հեթանոսաց զաւակ ։ Եւ ի տղայութենէ եթող զծնողսն եւ եղեւ քրիստոնեայ եւ գնաց ի լեառն, եւ ընդ սրբոյն Թէոդորոսի մինչեւ ի վախճան մեծաւ ճգնութեամբ աստուածահաճոյ վարս * իւրեանց կատարեցին յաւուրս Կոստանդիանոսի սուրբ թագաւորին ։ * A fol. 242 r° a.

4 սրբոցն] սրբոց վկայիցն B || 5 Ափրիդիսոնայ] Սփրիդիսոնայ B — Կառիւայ] Կարիայ B || 7 ձաղկեցան] անարգանօք *add.* B || 8 իւրեանց] Ահկի ԻԱ եւ *add.* B || 9 ճգնաւորին] անապատականին B || 13 կատարեցին] կատարէին B.

avec Jude son frère en Ethiopie et en Orient pour y prêcher et y fut martyrisé. Moi, je crois que celui-ci [Siméon] est le cousin de Jacques qu'on appelle Simon.]

21 AHÉKAN, **28 Avril.**

Martyre de saint Diodore et du diacre Rodopianos.

Ces glorieux martyrs étaient de la ville d'Aphridison de Carie, aux jours de l'empereur Dioclétien l'idolâtre. Ils furent cruellement torturés pour la foi du Christ, flagellés par des concitoyens, par les gens qui leur étaient connus et par leurs parents. Ensuite ils furent lapidés sur la place publique et rendirent leur âme à Dieu le 28 avril.

En ce jour commémoration du bienheureux Pacôme (*Pachoumios*) l'ascète.

Ce bienheureux Pacôme (*Pachoumios*) l'Égyptien était de la Thébaïde inférieure, fils de parents infidèles. Il quitta dès l'enfance ses parents, se fit chrétien, se rendit à la montagne et là avec saint Théodore, * tous deux menèrent jusqu'à la fin une vie agréable à Dieu en grand ascétisme aux jours du saint empereur Constantin. * A fol. 4 r° a

Սոքա պատմեցին մեզ վասն մեծի ծերունւոյն որ անկաւ ի հայքս սատանայի, որ եւ ի բազում ժամանակս մարտեաւ ընդ նա բանսարկուն, եւ ոչ գործովք եւ ոչ բանիւք եւ ոչ խորհրդովք կարաց գայթակղեցուցանել զնա ։ Ապա ջանաց սատանայական երազովք ընկենուլ զայնպիսի ծառայն Աստուծոյ, որ ի տղայութենէ հրաժարեաց ի մեղսաւէր եւ յունայնազբաղ կենցաղոյս, եւ որպէս Եղիա եւ Յովհաննէս ընդ հրեշտակս քաղաքավարեցաւ ։

Եւ ցուցանէ նմա յանուրջս տաճար անպատմելի փառօք զարդարեալ, եւ տեսանէ անդ զԱբրահամ եւ զամենայն մարգարէսն մեծաւ ուրախութեամբ ի հանգստեան ։ Ցուցանէ եւ այլ տաճար զարդարեալ բայց նսեմ եւ մթին, եւ տեսանէ անդ զամենայն մարտիրոսսն եւ զճգնաւոր հարսն եւ զքահանայապետսն ։ Եհարց զդռնապանն. Ընդէր մարգարէքն ի լուսեղէն տաճարին ուրախանան, եւ սուրբ մարտիրոսքն եւ հայրապետքն եւ ճգնաւոր կրօնաւորքն ի նսեմագոյն տաճարին ։ Ասէ դռնապանն. Զի նոքա թլփատեալք են եւ սոքա անթլփատք ։ Եւ զարթուցեալ ի քնոյն հաւատաց
* A fol. 242 r° b. երազոյն, եւ սրով թլփատեաց * ինքնին զմարմին իւր, եւ անկեալ նուաղեցաւ, եւ այրն յորում բնակէր լցաւ արեամբ ։

Եմուտ ոմն առ նա ի կրօնաւորացն եւ ետես զնա յերկիր անկեալ, կարծեաց եթէ վախճանեալ է, պատմեաց այլ կրօնաւորացն. եւ երթեալ մտին յայրն, եւ տեսին զմարմինն եւ զարիւնն, ջուր ցանեցին զերեսօքն եւ նստուցին մինչեւ դարձան միտքն.

Ceux-ci [Pacôme et Théodore] nous ont rapporté l'histoire de ce grand vieillard qui tomba dans les pièges de Satan. Le diable avait lutté longtemps avec lui, mais il n'avait réussi à le faire tomber ni par des actes, ni par des paroles, ni par des pensées (suggérées). C'est alors qu'il essaya par des rêves sataniques de faire tomber ce grand serviteur de Dieu qui avait, dès son enfance, abandonné la vie de péché et d'occupations frivoles, et vivait avec les anges à l'instar d'Élie et de Jean.

Il lui montre, dans un rêve, un temple illuminé d'une gloire ineffable, dans lequel il aperçoit Abraham et tous les prophètes en grande joie et dans le repos. Il lui montre aussi un autre temple orné, mais sombre et noir, où il aperçoit tous les martyrs, les pères ascètes et les pontifes. Il demanda au portier : « Pourquoi les prophètes sont-ils si joyeux dans le temple lumineux et les saints martyrs, les patriarches et les religieux ascètes se trouvent-ils dans un temple si sombre? » Le portier lui répondit : « Parce que ceux-là sont circoncis et ceux-ci incirconcis. » Réveillé de son sommeil, il crut au rêve
* A fol. 242 r° b. et circoncit * lui-même son corps avec un couteau, il tomba à terre évanoui et la grotte qu'il habitait fut remplie de sang.

Un des religieux entra chez lui et le trouva gisant à terre; il crut qu'il était décédé; il en avertit les autres religieux. Ils accoururent, entrèrent dans la grotte, et aperçurent son corps et le sang. Ils aspergèrent son visage

եւ նա պատմեաց նոցա զեղեալ գործ երազին ։ Եւ ամենայն անապատաւորքն մեծաւ ճգնութեամբ վասն նորա ապաշխարեցին, եւ բազում աւուրս հազիւ կարացին հաշտեցուցանել զԱստուած ընդ մեղուցեալ ծերունոյն ։

Նոյնպէս եւ զայլ ծերունւոյ ուրումն պատմեցին, որ որդւովն իւրով բնակէր ի վանս մեծաւ ճգնութեամբ. եւ նմա երեւեցոյց սատանայ յանուրջս զԱբրահամ փառօք ի վեր քան զհրեշտակսն, եւ լուաւ ձայն որ ասէր եթէ Վասն զի զորդին իւր պատարագել կամեցաւ ։ Եւ յարուցեալ եւ նա կապեաց զորդին իւր, եւ փակեաց զխուցն, եւ առ զսուրն զի հատցէ զգլուխ որդւոյն եւ ինքն դասաւորեսցի ընդ Աբրահամ ի վեր քան զհրեշտակս ։ Եւ գիտացեալ որդւոյն՝ բռնութեամբ եհատ զկապանսն ի ձեռացն, եւ կալեալ զհայրն ընկէց յերկիր, եւ առեալ զսուրն գնաց առ հարսն եւ պատմեաց նոցա ։ Եւ ամենեքեան ժողովեցան * առ նա եւ նա պատմեաց նոցա թէ որպէս հաւատաց երազոյն, եւ կամէր լինել որդեսպան ։ Եւ նոքա ետուն նմա կանոնս ապաշխարութեան եւ հանին ի վանացն ։ Եւ նա երթեալ ի լեառն մեծաւ ճգնութեամբ մինչեւ ի մահ արտասուօք ապաշխարեաց, եւ հանգեաւ խաղաղութեամբ ։

* A fol. 242 v° a.

14 արտասուօք] եւ հառաչմամբ *add.* B — եւ հանգեաւ խաղաղութեամբ *om.* B.

d'eau, et le firent asseoir jusqu'à ce que ses esprits lui revinrent. Lui alors leur raconta le rêve qu'il avait eu. Tous les solitaires du désert firent pénitence pour lui avec grand ascétisme et purent à peine après de longs jours réconcilier Dieu avec le vieillard qui avait péché.

Ils nous ont raconté également l'histoire d'un autre vieillard qui habitait en grand ascétisme avec son fils dans un couvent. Satan lui fit voir en songe Abraham dans la gloire, au-dessus des anges, et il entendit une voix qui disait : « C'est parce qu'il a bien voulu sacrifier son fils. » Il se leva donc et attacha lui aussi son fils, ferma la cellule et prit le glaive pour trancher la tête à son fils et être classé avec Abraham au-dessus des anges. Son fils, ayant compris (ce qu'il voulait faire), coupa violemment les liens de ses mains et, se saisissant de son père, il le jeta à terre; puis il prit le glaive et se rendit auprès des pères et leur raconta (le fait). Tous se réunirent * auprès de lui, et il leur raconta dans quelles conditions il avait cru au songe et voulait devenir le meurtrier de son fils. (Les pères) lui imposèrent des règles de pénitence et l'éloignèrent du couvent. Il se rendit alors à la montagne et vécut en grand ascétisme jusqu'à sa mort en faisant pénitence avec larmes et reposa en paix.

* A fol. 242 v° a.

Ահեկի ԻԲ եւ Ապրիլի ԻԹ ։ Վարք եւ վկայութիւն Բատայ ճգնաւորի ։

Աստուածահաճոյ կրօնաւորն եւ ճգնաւորն Բատա էր յերկրէն Պարսից, ի գեղջէն Բիրգամայ, սնեալ եւ ուսեալ քրիստոնէական հաւատով, եւ ի տղայութենէ կրթէր զանձն իւր ի պահս եւ ի տքնութիւն եւ յաղօթս. ակն ունէր եւ մարտիրոսութեան ։ Եւ մինչդեռ յերկրին իւրում էր առ ծնօղսն եւ ազգականսն իւր յիշեաց զտէրունական բանն. Եթէ որ ոչ թողու զհայր եւ զմայր, եւ զկին եւ զորդիս, եւ զտուն եւ զինչս, եւ եկեսցէ զկնի իմ ոչ կարէ իմ աշակերտ լինել ։ Եւ լցաւ նախանձու սիրոյն Քրիստոսի ։ Եթող զամենայն ինչս իւր եւ գնաց ի հեռագոյն տեղի որ կոչի Բիբայիգալոն, յորում էր վանք մի կրօնաւորաց, եւ եղեւ կրօնաւոր, եւ անդ ըստ արժանեաց զճգնակրօն վարս իւր կատարէր զամս երեսուն, բարձեալ զքաղցր լուծն Քրիստոսի ի թիկունս իւր, քաղցի եւ ծարաւոյ եւ զետնախշտի տքնութեամբ որպէս անմարմին

* A fol. 242 v° b. հրեշտակ ոչ ճաշակելով ի գինւոյ եւ ի ձիթոյ կամ ի * մրգոյ ։

Եւ տեսեալ Աստուծոյ զյօժարութիւն կամացն նորա ետ անձին իւրոյ առողջութիւն, եւ ոչ տկարութիւն եւ ոչ այլ ինչ ախտաժետութիւն տիրեաց նմա, այլ զամենայն

1 ճգնաւորի] ճգնաւոր կրօնաւորի եւ մարտիրոսի B || 2 եւ ճգնաւորն *om.* B || 3 եւ սնեալ *om.* B || 9 վանք մի] վանս ճգնաւորաց բազում B.

22 AHÉKAN, **29 Avril.**

Vie et martyre de Bata l'ascète.

Le religieux et ascète agréable à Dieu Bata était du pays des Perses, du village de Birgama. Élevé et instruit dans la foi chrétienne, il s'était entraîné dès l'enfance aux jeûnes, aux veilles et à la prière, et il espérait aussi le martyre. Pendant qu'il était dans son pays auprès de ses parents et des parents de sa famille, il se souvint de la parole du Seigneur : *Si quelqu'un ne quitte pas son père et sa mère, sa femme et ses enfants, sa maison et ses biens et ne se met pas à ma suite, il ne peut être mon disciple*[1]. Et il fut rempli de zèle pour l'amour du Christ. Il abandonna tous ses biens et se rendit dans un endroit lointain appelé Bibayicalon où se trouvait un couvent de moines, se fit religieux et y accomplit comme il fallait ses pratiques de vie austère pendant trente années, portant sur son dos le doux joug du Christ, de la faim, de la soif, veillant couché sur la terre comme un ange incorporel,

* A fol. 242 v° b. ne goûtant ni au vin, ni à l'huile ni aux * fruits.

Dieu, ayant vu la bonne disposition de sa volonté, accorda à son corps la santé, de sorte que la faiblesse ou aucune autre infirmité n'eut prise sur

1. Luc, XIV, 26.

գիշերն իբրեւ զարձան յոտն կալով զաղօթս իւր կատարէր, եւ սակաւիկ մի ննջումն յոտն կալով անցուցանէր, եւ աղաչէր զԱստուած մարտիրոսանալ : Եւ զայնչափ ճգնութիւնն առանց մարտիրոսութեան ոչ ինչ համարէր, եւ Աստուած թոյլ ետ մարտիրոսանալ նմա ըստ խնդրոյն :

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ հալածիչք առաքեցան ընդ ամենայն գաւառս Պարսից, եւ զորս գտանէին քրիստոնեայս մեծաւ տանջանօք չարչարէին, եւ նեղէին ուրանալ զՔրիստոս եւ երկիր պագանել արեգականն եւ հրոյ : Եւ ապա սկսան քննել զլերինս եւ զանապատս եւ զվանորայս : Եւ լուեալ հօր վանացն յորում էր Բատա կատարէր զտէրունական հրամանն որ ասէ. Եթէ հալածեսցեն զձեզ յայսմ քաղաքէս փախերուք ի միւսն : Եւ ելեալ ի վանացն կրօնաւորօքն գնաց յայլ տեղի, եւ կոչէր զկնի զհանդերձեալ վկայն Քրիստոսի զԲատա եւ ասէր. Տո՛ւր տեղի բարկութեանն : Եւ երանելին ոչ կամեցաւ գնալ, մնաց ի վանսն միայն, ուր զերեսուն ամս բնակեալ էր անդ :

Հասին անօրէն Պարսիկքն եւ գտին զնա միայն յաղօթս. եւ առեալ տարան *առ Յուզիտ քաղաքապետն, որ էր եղբայր Վարզաւանայ. եւ յոյժ նեղէր զնա ուրանալ

* A fol. 243 r° a.

4 խնդրոյն] խնդրուածոյ նորա B || 6 տանջանօք չարչարէին] չարչարանօք տանջէին B || 7 եւ հրոյ *om.* B || 9 հրամանն] բանն B.

lui; toute la nuit, debout comme une statue, il s'acquittait de ses prières; à peine satisfaisait-il quelque peu, debout, le besoin de sommeil, et il priait Dieu de devenir martyr. Il tenait pour rien tant d'ascétisme sans le martyre, et Dieu lui accorda le martyre ainsi qu'il le demandait.

A cette époque des persécuteurs furent envoyés dans toutes les provinces de la Perse, qui torturaient dans de grandes souffrances tous les chrétiens qu'ils rencontraient, et cherchaient à les contraindre à renier le Christ et à adorer le soleil et le feu. Puis ils commencèrent à fouiller les montagnes, les déserts et les couvents. Ce qu'ayant appris, le prieur du couvent où se trouvait Bata exécuta l'ordre du Seigneur qui dit : *Lorsqu'on vous poursuivra dans une ville, fuyez dans une autre*[1]. Il quitta le couvent avec les religieux et partit ailleurs. Il engageait (de là) Bata, le futur martyr du Christ, à venir le rejoindre, en lui disant : « Cède devant la colère. » Mais le bienheureux ne voulut point partir et resta seul au couvent où il avait vécu trente années.

Les impies Persans arrivèrent et le trouvèrent seul en prières. Après l'avoir saisi, ils le conduisirent * au préfet de la ville, Houzit, qui était le frère de Varzavan. Il le pressait fort de renier le Christ et d'adorer le soleil.

* A fol. 243 r° a.

1. Matth., x, 23.

զՔրիստոս եւ պաշտել զարեգակն ։ Եւ ամենեւին յանձն ոչ առ, այլ համարձակութեամբ խոստովանէր զՔրիստոս ճշմարիտ Աստուածն մեր ։

Հրամայեաց եւ տարածեցին զձեռս նորա տասն այր, եւ այնչափ քարշեցին մինչեւ թիկունքն թափեցան, եւ հարին զնա հաստ բրովք անկեալ յերկիր ։ Եւ կապեցին լար յերկուորիս նորա, եւ քարշեցին մինչեւ ստուցին յորովայնէն եւ հեղաւ փորն յերկիր․ եւ նա ի խոստովանելոյ զՔրիստոս ոչ դադարէր ։

Շրջեցին զնա յորսայս եւ եդին ի վերայ լանջացն եւ որովայնին մեծամեծ վէմս եւ թողին վեց օր․ ապա ընկեցին զքարինսն, եւ սրով խզրատեցին զթիկունսն, եւ ապա հատին զգլուխն յԱպրիլի ԻԹ ։

Եւ քահանայ մի Դանիէլ անուն երթեալ ամբոխիւ յափշտակեաց ի Պարսից դահճացն զմարմինն սրբոյն Բատայ, եւ տարաւ ի Մծբին քաղաք, եւ Աբրահամ եպիսկոպոսն եդ պատուով ի տապանի ։

Յայսմ աւուր վարք երանելոյն Պեղիկեայ ։

Աղախինն Քրիստոսի Պեղիկեա էր ի ժամանակս անօրէն արքային Նումերիանոսի, * A fol. 243 r° b. ի քաղաքէն Անտիոքայ, ի քրիստոնեայ եւ մեծատուն * եւ փառաւոր ազգէ ։

2 խոստովանէր] խոստովանեցաւ B || 9 զգլուխն] Ահկի ԻԲ եւ *add.* B || 13 երանելոյն Պեղիկեայ] եւ վկայական մահ սրբուհւոյ կուսին Պեղիկեայ Անտիոքացւոյ B.

(Bata) n'accepta nullement; au contraire, avec hardiesse il confessa le Christ notre vrai Dieu.

(Houzit) ordonna à dix hommes de le tirer, les bras tendus, par les mains. Ils le traînèrent jusqu'à ce qu'il eût le dos tout arraché, et tandis qu'il restait là, gisant à terre, ils le frappèrent avec de gros bâtons. Ensuite ils lui attachèrent une corde aux testicules et les tirèrent avec une telle force qu'ils les firent sortir du ventre et les entrailles se répandirent sur le sol, mais il ne cessait de confesser le Christ.

Ils le retournèrent sur le dos et posèrent de grosses pierres sur sa poitrine et sur son ventre ; ils l'abandonnèrent pendant six jours et ensuite, ayant enlevé les pierres, ils lui tailladèrent le dos à coups de sabre, puis lui tranchèrent la tête le 29 avril.

Un prêtre nommé Daniel alla avec une foule de gens enlever le corps de saint Bata (des mains) des bourreaux persans et le transporta à la ville de Nespin, où l'évêque Abraham le fit déposer avec honneurs dans un cercueil.

En ce jour vie de la bienheureuse Félicie.

La servante du Christ Félicie vivait au temps de l'empereur Numerianus, * A fol. 243 r° b. l'impie, dans la ville d'Antioche; elle était chrétienne, riche * et d'une illustre famille.

Մատնեցին զնա առ իշխան քաղաքին թէ. Քրիստոնեայ է, եւ գեղեցիկ տեսլեամբ եւ անարատ կոյս, եւ անարգէ զկուռս եւ զկռապաշտս ։ Յորժամ լուաւ իշխանն եթէ կոյս է եւ գեղեցիկ տեսլեամբ, առաքեաց սուսերաւոր զօրականս զի տարցեն բռնութեամբ զնա առ նա ։

Եւ յորժամ գնացին ի դուռն եւ մտին ի ներքս, եւ կամէին ելանել ի վերնատունն, սրբուհին աղաչեաց զզօրականսն սակաւիկ մի համբերել մինչեւ զգեցցի զհանդերձս պատուականս, եւ երթիցէ աղախնօք իւրովք զկնի, եւ խոստացաւ նոցա կաշառս ։ Եւ նոքա նստան ի ներքոյ սանդղոցն համբերելով ։ Եւ երանելի կոյսն համբարձեալ զձեռս իւր յերկինս, եւ ընդ պատուհանն որ յարեւելից կողմն էր աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Աստուած հարցն մերոց, Աստուած երկնից եւ երկրի, դու գիտես զեղեալն եւ որ լինելոցն է, դու գիտես զոր ինչ խորհեալս եմ առնել ոչ վասն փախչելոյ ի մարտիրոսութենէ որ յաղագս անուանդ քո սրբոյ, այլ զի մի անօրէն գայլքն ապականեսցեն զորոջս քո, զի որպէս շունք պատրաստ են յափշտակել զիս, փրկեա զիս յորսողաց ։ Մինչեւ ցայսօր զգուշութեամբ պահեցի զմարգարիտ կուսութեանս իմոյ, ակն ունելով երկնաւոր հարսանեաց առագաստին զոր պատրաստեցեր սիրելեաց * քոց, եւ ես ձեպիմ եւ փութամ * A fol. 243 v° a.
գալ առ քեզ անարատ մարմնով քան ի ձեռս ապականողացն անկանել ։

Եւ զայս ասացեալ ընկէց զանձն իւր ընդ պատուհանն ի վերուստ ի վայր ։

3 գեղեցիկ տեսլեամբ] գեղեցկատեսիլ B || 6 սրբուհին] գիտացեալ *add.* B || 17 ի վայր] ի խոնարհ B.

On la dénonça au gouverneur de la ville : « Elle est chrétienne, belle d'aspect, vierge pure, et elle méprise les idoles et les idolâtres. » Lorsque le gouverneur apprit qu'elle était vierge et belle d'aspect, il envoya des soldats armés d'épées pour la conduire de force chez lui.

Lorsque les soldats furent arrivés à sa porte et qu'ayant pénétré à l'intérieur, ils s'apprêtaient à monter à l'étage supérieur, la sainte les pria d'attendre un peu jusqu'à ce qu'elle eût mis ses beaux vêtements pour les suivre accompagnée de ses servantes; et elle leur promit de l'argent. Ils s'assirent au bas de l'escalier en attendant. La bienheureuse vierge éleva ses mains au ciel et, de la fenêtre qui était du côté de l'orient, elle pria Dieu et dit : « Dieu de nos pères, Dieu du ciel et de la terre, Tu connais le passé et l'avenir, Tu sais ce que je suis résolue à faire non pas pour éviter le martyre pour Ton saint nom, mais pour que les loups impies ne déflorent pas Ta brebis, eux qui sont prêts à me ravir comme des chiens. Sauve-moi de ceux qui me donnent la chasse. Jusqu'aujourd'hui j'ai conservé avec soin la perle de ma virginité dans l'espoir de la chambre nuptiale des fiançailles célestes que Tu as préparée à ceux qui t'aiment; * j'ai hâte et je m'empresse de venir à Toi avec un * A fol. 243 v° a.
corps pur plutôt que de tomber entre les mains des corrupteurs. »

Quand elle eut dit cette (prière), elle se jeta par la fenêtre de haut en bas.

Եւ հրեշտակ Տեառն ընկալաւ եւ եդ անվնաս ի վերայ երկրի ։ Եւ նա տարածեաց զձեռս իւր եւ զաչս յերկինս փառաւորեաց գոհանալով զԱստուծոյ, եւ աղօթեաց յերկար, եւ յետ աղօթիցն ասէ . Քրիստոս ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ։ Եւ տարածեցաւ ի վերայ երկրի եւ զձեռսն խաչանման եդ ի վերայ կրծիցն եւ աւանդեաց զհոգին իւր ։

Եւ տեսեալ զօրականացն եթէ յամեաց, ելին ի վեր եւ զնա ոչ գտին . խոնարհեալ ընդ պատուհանն տեսին զնա մեռեալ, որպէս թէ ի քուն լեալ ։ Եւ երթեալ պատմեցին իշխանին, եւ նա յոյժ զարմացաւ ընդ իմաստութիւն կնոջն ։

Են եւ այլ սուրբ կանայք որ անուանին Փեղիկեա բայց զսա յիշէ սուրբն Յովհան Ոսկեբերան, եւ վասն սորա գրեաց ճառս գովասանութեան ։

Ահկի ԻԳ. եւ Ապրիլի Լ ։ Վկայութիւն տասն մարտիրոսացն Մարկիանոսի,
Նիկանդրոսի, Ապողոնի, Ղեւոնդիոսի, Արիոսի, Գորդիոնի,
Պերիոքայ, Սիլինադայ, Իրինեայ, Պապամբոնի ։

* A fol. 243 v° b. Քրիստոսի վկայքս էին յԵգիպտոսէ, * եւ վասն զի ոչ ուրացան զՔրիստոս եւ ոչ զոհեցին կռոցն՝ ի սովոյ եւ ի ծարաւոյ, ի ցրտոյ եւ ի խորշակէ, ի դառն ծառայութենէ

1-4 Եւ հրեշտակ ... զհոգին իւր] Եւ անվնաս մարմնով անկաւ ի վերայ երկրի անշնչացեալ, քանզի դեռ ոգի նորա ի նմին էր ։ Եւ զձեռս իւր խաչանման եդեալ ի վերայ կրծոցն ասէ . Քրիստոս ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ . եւ այնպէս աւանդեաց զհոգի իւր B || 9 գրեաց] ներբողեան *add.* B || 10 Վկայութիւն] սրբոց *add.* B || 13 Քրիստոսի] տասն *add.* B.

Mais l'ange du Seigneur la reçut et la posa à terre indemne. Elle étendit ses mains et éleva ses yeux vers le ciel, et glorifia Dieu en lui rendant grâces. Elle pria longtemps. Puis, sa prière terminée, elle dit : « Christ, je remets mon âme entre Tes mains. » Elle s'étendit à terre, mit ses mains en forme de croix sur sa poitrine et rendit l'âme.

Les soldats, voyant qu'elle s'attardait, montèrent en haut et ne la trouvèrent pas ; ils se penchèrent par la fenêtre et l'aperçurent morte, comme si elle dormait. Ils allèrent en aviser le gouverneur, qui admira fort la sagesse de cette femme.

Il y a encore d'autres saintes femmes du nom de Félicie, mais c'est celle-ci dont saint Jean Chrysostome fait mention et c'est sur elle qu'il a écrit des panégyriques.

23 AHÉKAN, **30 Avril.**

Martyre des dix martyrs Markianus, Nikandros, Apollon, Léonce, Arius, Gordion, Périokhe, Silinade, Irène, Papambon.

* A fol. 243 v° b. Ces martyrs du Christ étaient de l'Égypte * et, pour ne pas avoir renié le Christ, ni immolé aux idoles, après avoir enduré la faim, la soif, le froid, la

եւ յայլ բազում նեղութենէ չարաչար մահուամբ կատարեցան ի Քրիստոս յԵգիպտոս ի կռապաշտ իշխանէն :

Յայսմ աւուր սուրբն Աղեքսանդրոս զօրականն հռոմայեցի, էր յաւուրս Մաքսիմիանոսի անօրէն արքային ի Տիբերիանէ զօրապետէն խրմէ յոյժ նեղեցաւ ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն : Եւ վասն զի ոչ հաւանեցաւ հրամանին չարչարեցաւ բազում գանիւք, եւ ապա հատեալ սրով զգլուխն, կատարեցաւ բարի խոստովանութեամբ :

[B * Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ առաքելոյն Յակոբայ Զեբեթեանց : * B p. 192 a.

Սուրբ առաքեալն Յակոբ եղբայր էր Յովհաննու աւետարանչի եւ որդի Զեբեթիոսի, ի Սաղոմէէ ի դստերէն Յովսեփայ, որ քոյր համարեալ էր Տեառն մերոյ. իսկ այլք մօրքուերորդի ասեն լինել զնա Քրիստոսի :

Զսա ընդ եղբօրն իւրում կոչեաց Քրիստոս որդիք որոտման. եւ կոչեցաւ սա մեծ * Յակոբ, ոչ միայն զի ընտանի եւ ընտրելագոյն էր Քրիստոսի՝ այլ եւ զի Քրիստոս ամենայն ուրեք նախապատուէր զնա ընդ Պետրոսի եւ ընդ Յովհաննու ի խորհրդակցութիւն եւ յաղօթս եւ յայլ տնօրէնութիւնս որպէս ի Թափորական լերինն, եւ ի յարութիւն դստեր հարիւրապետին, եւ ի ժամ հոգալոյն եւ երկնչելոյն առ խաչին՝ զնոսա միայն առնոյր ընդ ինքեան : * B p. 192 b.

3 Յայսմ] Ի սմին B || 6 հատեալ զգլուխն]. զլխատեցաւ B — խոստովանութեամբ] ի Քրիստոս առ որ ցանկայրն *add.* B.

chaleur, la dure servitude et beaucoup d'autres tribulations, ils finirent leur vie par une mort cruelle pour le Christ en Égypte par (l'ordre) du gouverneur idolâtre.

En ce jour saint Alexandre, soldat romain, aux jours de Maximien, empereur impie, fut vivement pressé par son chef d'armée Tiberianus, de renier le Christ et d'immoler aux idoles. Et pour ne s'être point soumis à cet ordre, il eut à subir le supplice d'une rude bastonnade; il eut ensuite la tête tranchée par le glaive et mourut en vaillant confesseur.

[B * Martyre du saint et glorieux apôtre Jacques de Zébédée. * B p. 192 a.

Le saint apôtre Jacques était le frère de Jean l'évangéliste et fils de Zébédée et de Salomé, fille de Joseph, qui passait pour sœur de Notre-Seigneur; mais d'autres disent qu'il était le fils de la sœur de la mère du Christ (cousin du Christ).

C'est lui que, avec son frère, le Christ appela les fils du tonnerre. C'est lui qu'on a appelé * Jacques le majeur non seulement parce qu'il était de la famille du Christ et dans une plus grande intimité avec Lui, mais aussi parce que le Christ lui accordait partout la prééminence ainsi qu'à Pierre et à Jean et dans ses confidences et dans ses prières et dans d'autres actes. Ainsi sur la montagne du Thabor, à la résurrection de la fille du centurion et à l'heure des angoisses et de la peur que lui causait la perspective de la croix, c'est eux * B p. 192 b.

Այլ եւ զի նախ քան զայլ առաքեալսն ի նմին յինքենէ ի Քրիստոսէ կոչեցաւ եւ ընտրեցաւ յաշակերտութիւն ընդ Անդրէի եւ Պետրոսի եւ ընդ եղբօրն իւրոյ Յովհաննու ։ Վասն զի Քրիստոս նախ կոչեաց զԱնդրէաս եւ զՊետրոս, եւ ապա զՅակովբոս եւ զՅովհաննէս, որոց թէպէտ եւ հայրն մերձ էր՝ սակայն առ ոչ ինչ գրեցին զգութ նորա առ սէր կոչողին, անդէն վաղվաղակի հետեւեցան Քրիստոսի ։

Վասն որոյ Տէրն զնոսա այնչափ սիրեաց մինչ զի համարձակէր մայրն զընդ աջմէ եւ ընդ ահեկէ նստուցանելն խնդրել ։ Եւ նոքա յանձն առնուին զբաժակն Տեառն ըմպել եւ զմկրտութիւնն մկրտել, ուստի եւ Քրիստոս ումեմն առ լանջսն համարձակեաց, եւ զմիւսն վաղվաղակի իւրում բաժակին արժանաւորեաց յետ խաչին ։

Սա՝ յետ համբառնալոյն Քրիստոսի քարոզեաց ի Հրէաստան եւ ի Սամարիա եւ ի Գալիլեա զանունն Քրիստոսի եւ զաւետարանն փրկութեան, եւ դարձոյց զբազումս յաստուածգիտութիւն ։ Արար եւ յոլով սքանչելիս եւ զօրութիւնս, որ եւ յաղթեաց զօրութեամբն Քրիստոսի կախարդին Երմոգենէսի եւ Փելիտոսի, եւ հալածեաց զդեւսն, եւ զնոսա աշակերտեալ էած ի հաւատն Քրիստոսի եւ մկրտեաց ։ Որ եւ բարիոք քաղաքավարեալ քարոզէին զՔրիստոս, եւ սքանչելիս գործէին յանուն նորա ։

Իսկ քահանայապետն Աբիաթար ոչ կարէր բերել զնախանձ եւ զցասումն չարութեանն, շարժեաց ամբոխ մեծ ի վերայ առաքելոյն Յակովբայ. վասն զի * քան զամենայն

* B p. 193 a.

seulement qu'il prit avec Lui. Encore et aussi parce qu'il fut, avant les autres apôtres, appelé et choisi par le Christ lui-même pour devenir Son disciple avec André et Pierre et avec son frère Jean. Car le Christ ayant d'abord appelé André et Pierre et ensuite Jacques et Jean, ceux-ci, malgré la présence de leur père, préférèrent l'amour de Celui qui les appelait à l'amour de leur père et sur-le-champ suivirent le Christ.

Aussi le Seigneur les a tellement aimés que leur mère osa Lui demander de les faire asseoir l'un à sa droite et l'autre à sa gauche. Et eux ils acceptèrent de boire le calice du Seigneur et d'être baptisés de son baptême; c'est pourquoi le Christ permit à l'un de se pencher sur Sa poitrine et rendit l'autre digne (de boire) à Son calice après le crucifiement.

(Jacques), après l'ascension du Christ, prêcha en Judée, à Samarie et en Galilée le nom du Christ et l'évangile du salut, et convertit nombre de gens à la connaissance de Dieu. Il accomplit aussi beaucoup de miracles et de prodiges. C'est lui aussi qui vainquit par la puissance du Christ les mages Ermogène et Phélitus, chassa (d'eux) les démons et, après en avoir fait ses disciples et les avoir amenés à la foi du Christ, il les baptisa. Ceux-ci eurent une bonne conduite, prêchèrent le Christ et accomplirent des prodiges en son nom.

Mais le chef des prêtres Abiathar, ne pouvant surmonter sa jalousie et sa méchante irritation, souleva une grande foule contre l'apôtre Jacques; car ils * le

* B p. 193 a.

առաքեալն զնա տեսանէին համարձակեալ եւ ջերմն ի քարոզութիւն Քրիստոսի, ցուցանելով յօրինացն եւ ի մարգարէիցն եթէ Յիսուս զոր խաչեցին նոքա՝ նա ինքն է Քրիստոսն որ գալոց էր ։ Վասն որոյ զայրացեալ կալան զնա եւ պրկեալ պարան ի պարանոցն կապեցին եւ տարան յապարանսն Հերովդէի որ էր առ խաչելութեամբն Տեառն, եւ չարախօս եղեն առ նա զառաքելոյն, եւ շնորհս խնդրէին ի նմանէ սպանանել զնա ։

Եւ նա տեսեալ եթէ հաճոյ են Հրէիցն ած զնա առաջի. ձեռնարկեաց ընդ այլոց ոմանց զորս չարչարեաց յեկեղեցւոյն, եւ զՅակովբոս սպանանել ետ ։ Եւ մինչ տանէին զնա առ ի գլխատել Յովսիաս դպիրն որ տարաւ զնա յատեան դատաստանի, եւ նախ զպարանն զնովաւ արկ, անկաւ առ ոտս առաքելոյն եւ աղաչէր թողուլ նմա զոր արարն, եւ խոստովան լինէր եւ հաւատայր զանունն Քրիստոսի ։

Իսկ քահանայապետն խնդրեաց ի Հերովդէէ եւ զնա գլխատել ընդ առաքելոյն ։ Եւ յորժամ եկին ի տեղին՝ խաղաղութիւն ետ նմա առաքեալն եւ համբուրեաց զնա, եւ այնպէս գլխատեցաւ սրով սուրբ առաքեալն Յակովբոս յետ աղօթելոյ առ Տէր ընդ երկար, երկրորդ եղեալ վկայ յետ Ստեփաննոսի ։ Մանաւանդ եթէ յառաքելոց առաջին նախ նա կատարեցաւ վկայութեամբ, զբաժակ մահու վասն Քրիստոսի արբեալ յետ նորա որպէս խօսեցաւ ։ Եւ գլխատեցաւ ընդ նմա եւ Յովսիաս դպիրն ։

Ասի եթէ ի յօրն եւ ի ժամն յորում խաչեցաւ Տէրն մեր, ի նոյն եւ գլխատեցաւ

voyaient plus que tous les autres apôtres osé et fervent dans la prédication du Christ, leur démontrant, par la Loi et par les prophètes, que ce Jésus qu'ils avaient crucifié était par identité le Christ qui devait venir. C'est pourquoi, irrités, ils se saisirent de lui, lui passèrent une corde au cou, le lièrent et le conduisirent au palais d'Hérode, qui vivait au temps de la crucifixion du Seigneur, calomnièrent l'apôtre devant lui et lui demandaient la faveur de le tuer.

(Hérode), ayant vu que cela faisait plaisir aux Juifs, le fit venir devant lui, le fit arrêter avec d'autres de l'église qu'il avait fait torturer, et fit tuer Jacques. Pendant qu'on l'emmenait pour lui trancher la tête, Osias, le scribe, qui l'avait conduit à l'assemblée du tribunal et lui avait, le premier, passé la corde, se jeta aux pieds de l'apôtre et il le priait de lui pardonner ce qu'il lui avait fait, et il confessait le Christ et la foi qu'il avait en Son nom.

Le chef des prêtres pria Hérode de le décapiter avec l'apôtre. Lorsqu'ils furent arrivés au lieu (d'exécution), l'apôtre lui donna la paix et le baiser. C'est ainsi que le saint apôtre Jacques, après avoir longuement prié le Seigneur, eut la tête tranchée par le glaive, et devint le deuxième martyr après Étienne. Et même c'est lui, parmi les apôtres, qui mourut le premier martyr, en buvant le calice de la mort pour le Christ après Lui, comme le Christ le lui avait dit. Avec lui fut décapité le scribe Osias.

On dit que c'est le même jour et à la même heure où Notre-Seigneur avait

Յակոբոս ի քսան եւ եօթն մարտի ամսոյ. բայց վասն պատուոյ չարչարանացն Տեառն եղաւ տօնէն յաւուրս սուրբ Պենտակոստէիցս ։ Եւ եկեալ աշակերտքն նորա ի գիշերի առին զմարմին նորա, եւ ի ծածուկ տարեալ յերկիւղէ Հրէիցն ի Յոպպէ եւ եդին * B p. 193 b. * ի նաւակ մի եւ յանձնեցին Տեառն՝ խնդրելով յայտնել թէ ուր կամիցի լինել գերեզման նորա ։ Եւ առաջնորդեաց հրեշտակ Տեառն էած զնաւն ի Սպանիա ի գաւառ Դալլիոյ, զոր ասեն եթէ վիճակեալ էր նմա յառաջագոյն ։ Եւ բազում սքանչելեօք յայտնեալ անդ թաղեցաւ պատուով ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Եւ ի սոյն աւուր եղեւ կատարումն ի Պարսիկս սրբուհւոյ վկային Քրիստոսի Թեսբեայ, հաւատաւորն եւ քոյրն իւր եւ աղախնեայքն բազում չարչարանօք եւ մարտիրոսական մահուամբ կատարեցան, վասն զի ոչ ուրացան զՔրիստոս եւ ոչ երկիրպագեցին հրոյ ։]

Մայիս ամիս ունի աւուրս ԼԱ ։

Ահկի ԻԴ եւ Մայիս Ա ։ Տօն է Երեմիայի մարգարէի ։

Երեմիա մարգարէն էր յԱնաթովթայ Բենիամինի, ի քահանայական ազգէն, եւ բնակէր յԵրուսաղէմ ։ Եւ շատ մարգարէացաւ վասն գալոյն Նաբուքոդոնոսորայ, եւ

13 տօն է] սուրբ եւ փառաւորեալ *add.* B.

été crucifié, que fut décapité Jacques : le 27 mars; mais que, en honneur de la passion du Seigneur, (sa fête) fut transférée de ce jour aux jours de la sainte Pentecôte. Ses disciples vinrent la nuit, prirent son corps et le transportèrent en cachette, par crainte des Juifs, à Jaffa. Ils le mirent * dans une barque et le confièrent au Seigneur, en Le priant de révéler où Il voulait que fût sa tombe. Un ange du Seigneur guida et conduisit la barque en Espagne dans la province Tallia, que le sort, dit-on, avait assignée (à Jacques) auparavant. Après s'y être révélé par de nombreux miracles, il y fut enterré avec honneurs pour la gloire du Christ notre Dieu.

* B p. 193 b.

En ce même jour eut lieu le martyre en Perse de la sainte martyre du Christ Thesbée. Cette vierge, sa sœur et ses servantes moururent dans de nombreuses tortures de la mort des martyrs, pour n'avoir pas renié le Christ ni adoré le feu.]

Le mois de mai a trente et un jours.

24 ADÉKAN, et 1er Mai.

Fête du prophète Jérémie.

* B

Le prophète Jérémie était d'Anathoth de Benjamin, de la tribu des prêtres; il habitait Jérusalem. Il prophétisa beaucoup au sujet de la venue de Nabucho-

չարչարեցին զնա թագաւորք տանն Յուդայ Յովակիմ եւ Սեդեկիա ։ Եւ յորժամ հանդերձեալ էին Քաղդէացիքն առնուլ զԵրուսաղէմ, * հրամանաւն Աստուծոյ եմուտ նա ի տաճարն, առ զտապանակն եւ զայլ սպաս սրբութեանցն, եւ տարաւ ի լեառն Սինայ՝ ուր զառաջինն կանգնեցաւ խորանն, եւ եդ զնոսա ի վէմն եւ կնքեաց անուամբն Աստուծոյ ։ Եւ ի գիշերի լոյս լինի ի վիմին, եւ ի տուընջեան ամպ ։ Եւ ոչ ոք գիտէ զտեղին ։ Եւ ասաց. Զտապանակս զայս ոչ ոք հանիցէ ի վիմէս բայց միայն Մովսէս եւ Ահարոն ընտրեալքն Աստուծոյ ։ * A fol. 244 r° a.

Եւ յետ աւերածին Երուսաղեմի մնաց Երեմիա հրամանաւ Նաբուգոդոնոսորայ առ Գոթողեայ վերակացու քաղաքին. եւ յորժամ սպան Իսմայէլ զԳոդողիա մնացորդք ժողովրդեանն իջուցին զնա յԵգիպտոս, եւ ի Տափնաս քաղաքին քարկոծեալ մեռաւ ։ Եւ բարի գտեալ ի նմանէ Եգիպտացիքն պատուեցին զնա, եւ սատակեցան ի տեղւոջն . իժք եւ կարիճք որ ծախէին զմանկունս նոցա, եւ ջրային գազանքն զոր Եգիպտացիքն նափոտ կոչեն եւ յոյնք կոկորդիլոս ։

Եւ յետոյ գնացեալ Աղեքսանդր Մակեդոնացի, եւ լուեալ զսքանչելիսն բարձեալ զնշխարս նորա տարաւ յԱղեքսանդրիա ։ Նոյնպէս եւ անդ սատակեցան իժք եւ կարիճք

5 Եւ ի գիշերի ... ամպ *om.* B || 6-7 եւ ասաց ... Աստուծոյ *om.* B || 11 զնա] զի գիտէին զնա այր մարգարէ ։ Եւ աղօթիւք նորա ի կենդանութեան նորին *add.* B || 13 կոկորդիլոս] եւ նոքա սատակեցան *add.* B || 15 — p. 1418 l. 1 Նոյնպէս ... կոկորդիլոս *om.* B.

donosor. Les rois de la maison de Juda, Joakim et Sédécias, le firent beaucoup souffrir. Lorsque les Chaldéens furent sur le point de prendre Jérusalem, * il entra, sur l'ordre de Dieu, dans le temple, prit l'Arche et les autres ustensiles sacrés et les emporta sur le mont Sinaï, où pour la première fois avait été dressé le tabernacle, les déposa dans un rocher qu'il scella avec le nom de Dieu. La nuit il se forme une lumière sur le rocher et le jour un nuage. Personne ne connaît cet endroit. Il avait dit : « Que personne ne sorte cette arche de ce rocher, hormis seulement Moïse et Aaron, les élus de Dieu. » * A fol. 244 r° a.

Après la ruine de Jérusalem, Jérémie, autorisé par Nabuchonodosor, resta auprès de Godolias, gouverneur de la ville, et lorsque Ismaël tua Godolias, le restant de la population le fit descendre en Égypte et il mourut lapidé dans la ville de Taphnas. Les Égyptiens, qui avaient fait l'expérience de sa bonté, lui rendirent les honneurs (de la sépulture) et à cet endroit les serpents et les scorpions qui dévoraient leur enfants et les monstres aquatiques que les Égyptiens appellent naphots et les Grecs crocodiles, furent exterminés.

Par après Alexandre le Macédonien, s'y étant rendu et ayant appris les miracles, fit relever ses reliques et les emporta à Alexandrie. Là aussi les ser-

եւ մարդակեր պալանն կոկորդիլոս ։ Եւ կատարի տօն սուրբ մարգարէին Երեմիայի՝ Մայիսի Ա ։

Յայսմ աւուր վկայութիւն Կոդրատոսի եւ որոց ընդ նմա կատարեցան ։

* A fol. 244 r° b. Յաւուրս կռապաշտ արքայիցն Դեկոսի * եւ Վաղերիանոսի էր սուրբ վկայն Քրիստոսի Կոդրատոս ի Նիկոմիդեայ քաղաքէն. եւ կացեալ առաջի Պերենիոյ իշխանին ընդ այլ քրիստոնեայսն խոստովանեցաւ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Եհարց իշխանն զանուանսն եւ զգաւառն, եւ Կոդրատոս միայն տայր պատասխանի վասն ամենեցուն եւ ասէր. Անուանք մեր գրեալ են յերկինս, եւ գաւառ մեր է վերինն Երուսաղէմ, եւ եմք ծառայք Քրիստոսի երկնաւոր թագաւորին ։

Մերկացուցին զնա եւ ծեծեցին ուժգին արջառաջլօք, եւ սուրբն ի տանջանսն անարգէր զիշխանն եւ զդատաւորն եւ զկուռսն. եւ այնչափ գան հարին զթիկունսն եւ զլանջսն զի թզաւ մի ուռուցեալ բարձրացան եւ արեամբն լցաւ տեղին. եւ արկին զնա ի բանդ ։

Գնաց իշխանն ի Նիկոմիդիա քաղաքն, եւ տարան զսուրբսն զկնի, եւ անդ դարձեալ քննեցին. եւ սուրբն Կոդրատոս յաղագս ամենայնի առնէր զպատասխանին, եւ բազումք ի քրիստոնէիցն երկեան ի տանջանացն եւ զոհեցին կռոցն ։

1 Երեմիայի] Ահկի ԻԴ եւ *add.* B || 3 վկայութիւն] սրբոյն *add.* B — կատարեցան *om.* B || 6 Տեառն մերոյ Յիսուսի *om.* B || 12 տեղին] երկիր B.

pents, les scorpions et la bête anthropophage, le crocodile, furent exterminés. La fête du saint prophète Jérémie a lieu le 1er mai.

En ce jour martyre de Quadratus et de ceux qui furent martyrisés avec lui.

* A fol. 244 r° b. Aux jours des empereurs idolâtres Dèce * et Valérien vivait le saint martyr du Christ Quadratus, de la ville de Nicomédie. Mis en présence du gouverneur Perenius, il confessa avec d'autres chrétiens le nom de Notre-Seigneur Jésus-Christ. Le gouverneur leur demanda leurs noms et de quelle province (ils étaient). Quadratus répondit seul à la place de tous et dit : « Nos noms sont inscrits dans les cieux, notre province est la Jérusalem d'en haut et nous sommes les serviteurs du Christ le roi céleste. »

* On le mit à nu et on le flagella vigoureusement avec des nerfs de bœuf. Dans ses souffrances le saint méprisait le gouverneur, le juge et les idoles. On lui frappa tellement le dos et la poitrine qu'ils enflèrent et augmentèrent d'une palme, l'endroit fut inondé de sang. Puis on le jeta en prison.

Le gouverneur partit pour la ville de Nicomédie et emmena les saints avec lui. Là on les interrogea de nouveau. Saint Quadratus avait pour tout réponse, mais bien des chrétiens prirent peur des tortures et immolèrent aux idoles.

Արձակեցին զսուրբն Կոդրատոս ի կապանացն զի երթեալ տեսցէ զուրացօղսն, եւ նա գնաց ի տաճար կռոցն եւ զամենայն բագինսն կործանեաց եւ խորտակեաց ։ Եւ երթեալ առ մոլորեալ քրիստոնեայսն ասէ. Զինչ պատասխանի առնելոց էք ո՜վ թշուառականք ի փառաւորեալ գալստեանն Քրիստոսի ։ Եւ շատ խրատ տուեալ դարձոյց զնոսա ի քրիստոնէութիւնն * եւ առեալ հող արկին ի գլուխս իւրեանց, եւ քարամբ * A fol. 244 v° a.
զկուրծսն բախէին եւ մեծաւ հառաչմամբ ողբային ։

Զայս լուեալ իշխանին հրամայեաց զվէրսն սրբոյն Կոդրատոսի հրով այրել ։ Եւ նա վասն քրիստոնէիցն որ զոհեցին, եւ դարձեալ զղջացան աղաչէր զԱստուած ։ Եւ էջ ամպ լուսաւոր ի վերայ նոցա, եւ երկեան իշխանն եւ ժողովուրդն, եւ արկին զամենեսեան ի բանդն ։ Եւ ի միւս այլ աւուրն դարձեալ եհարց զնոսա, եւ եգիտ զնոսա հաստատուն ի հաւատսն Քրիստոսի, հրամայեաց եւ տարան զամենեսեան ի գաւառս իւրեանց եւ հրով այրեցին ։ Եւ այնպէս քաջի խոստովանութեամբ կատարեցան ի Քրիստոս ։

Եւ զսուրբն Կոդրատոս տարաւ իշխանն յԱպամիա քաղաքն Բիւթանացւոց, զի յոյժ տրորեալ էր ի բազում տանջանացն. նոյնպէս եւ անդ հաստատուն կալաւ զհաւատն Քրիստոսի ։ Ընկեցին զնա ի գուբ եւ քարկոծ առնէին, եւ քարինքն ի նա ոչ դիպէին ։

9 Եւ էջ ... ժողովուրդն *om.* B || 14 յԱպամիա] յԱմասիա B.

On délivra saint Quadratus de ses chaînes pour qu'il allât voir les renégats. Il se rendit au temple des idoles, renversa tous les autels et les brisa. Puis allant trouver les chrétiens égarés, il leur dit : « Quelle réponse aurez-vous à donner, ô malheureux, à la glorieuse venue du Christ? » Après leur avoir donné beaucoup de conseils, il les ramena au christianisme; * ils prirent * A fol. 244 v° a.
de la poussière qu'ils jetèrent sur leur tête, et avec des pierres ils se frappaient la poitrine et avec de grands soupirs ils se lamentaient.

Ce qu'ayant appris, le gouverneur ordonna de brûler au feu les blessures de saint Quadratus. Et lui priait Dieu pour les chrétiens qui avaient immolé et qui, après s'être convertis, s'étaient repentis ensuite. Un nuage lumineux descendit sur eux; le gouverneur et la population en prirent peur, et les firent jeter en prison. Le lendemain (le gouverneur) les interrogea de nouveau et les trouva fermes dans la foi du Christ; il ordonna de les transporter dans leurs provinces et de les y brûler par le feu. C'est ainsi qu'en vaillants confesseurs ils moururent pour le Christ.

Quant à saint Quadratus, le gouverneur l'emmena à la ville d'Apamée de Bythinie; car il était tout couvert de plaies au sortir de ces supplices multipliés. Là aussi pareillement il maintint ferme sa foi dans le Christ. On le jeta dans une fosse et on le lapidait, mais les pierres ne l'atteignaient point.

Դարձեալ տարան զսուրբն սայլիւ զհետ իշխանին ի Կեսարիա Բիւթանացւոց, եւ անդ յոյժ նեղեցին զնա զի արասցէ զկամս իշխանին, եւ նա ոչ կամեցաւ լսել, եւ եկաց յաղօթս առ Աստուած, եւ ձայն եղեւ յերկնից եւ քաջալերեաց զնա ։ Եւ երկուք ոմանք յամբոխէն Սատորնիլոս եւ Ռուփինոս հաւատացին ի Քրիստոս. կախեցին զնոսա եւ գզեցին զմարմինս, եւ ապա հատին զգլուխս նոցա ։

* A fol. 244 v° b.

* Գնաց իշխանն յԱպողինա քաղաքն. եւ անդ նեղեցին զսուրբն Կոդրատոս զոհել կռոցն՝ եւ ոչ հաւանեցաւ. եւ աղ քացախիւ խառնեալ հեղին ի վերայ վիրաւորեալ մարմնոյն եւ բոլոր անձինն, եւ խոշոր խորգով շփէին զվէրսն, եւ հրացեալ շամփրօք զկողսն այրեցին ։

Անց իշխանն ընդ Ռունտակայ գետն եւ գնաց յԵրմուպօլիս եւ տարաւ զսուրբն սայլիւ զկնի. եւ անդ հարցին եթէ կռոցն զոհեսցէ ։ Եւ նա մեծաւ բարբառով աղաղակէր. Ես ի տղայութենէ քրիստոնեայ եմ եւ զայլ աստուած ոչ գիտեմ բայց միայն զՏէր իմ Յիսուս Քրիստոս ։ Հրացուցին շանթս եւ տարածեցին զսուրբն ի վերայ, եւ նա սաղմոսէր, եւ որպէս յանկողնի շուրջ տայր անձինն զերկու ժամ ։ Եւ ասէ ցիշխանն. Շանթքս ցուրտ են եւ երկաթքս կակուղ քան զսիրտ քո, բարւոք արարեր զի յաշխատութենէս հանգուցեր զիս ի վերայ փափուկ անկողնոյս ։ Եւ տեսեալ իշխանին թէ ոչ

3 եւ ձայն... քաջալերեաց զնա] եւ ընկալաւ զքաջալերութիւն B || 7 աղ քացախիւ խառնեալ] քացախ խառնեալ ընդ աղ B || 16 ոչ մեռաւ] տակաւին կենդանի է B.

On conduisit de nouveau le saint sur un chariot à la suite du gouverneur à Césarée de Bythinie, et là on le pressa beaucoup d'exécuter la volonté du gouverneur, mais il ne voulut rien entendre; il se mit à prier Dieu et une voix se fit entendre du ciel qui l'encouragea. Deux hommes parmi la foule, Satornilus et Ruphinus, crurent au Christ; on les suspendit, on leur déchira le corps (avec des peignes de fer) et on leur trancha ensuite la tête.

* A fol. 244 v° b.

* Le gouverneur se rendit à la ville d'Apollina; là encore on pressa saint Quadratus d'immoler aux idoles, mais il n'y consentit point; on versa du sel mélangé à du vinaigre sur les parties blessées de son corps et sur toute sa personne, puis on frottait ses blessures avec de la grosse toile (de sac) et on lui brûla les côtes avec des broches rougies au feu.

Le gouverneur traversa le fleuve Rhountacas et se rendit à Hermopolis; il y emmena à sa suite le saint sur un chariot; là encore on lui demanda s'il immolerait aux idoles. Il criait à haute voix : « Je suis chrétien depuis mon enfance et je ne reconnais d'autre Dieu que mon Seigneur Jésus-Christ. » On chauffa à blanc des masses de fer et on étendit sur elles le saint qui psalmodiait et retournait sur elles tout son corps comme dans un lit pendant deux heures. Il dit au gouverneur : « Ces masses (barres) sont froides et ces fers plus tendres que ton cœur; tu as bien fait de me faire reposer de mes fati-

մեռաւ, հրամայեաց եւ քարշեցին զնա ի բարձր տեղւոջ, եւ հատին զգլուխ նորա Մայիսի Ա, ի փառս եւ ի գոհութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս :

Աշկի ԻԵ եւ Մայիսի Բ : Վկայութիւն սրբոյն Եսպերիու եւ ամուսնոյն իւրոյ Զոյեայ եւ երկու որդւոցն Կիւրակոսի եւ Թէոդուլոսի :

Այս սուրբ վկայքս Քրիստոսի Եսպերիոս եւ Զոյի ծառայք էին առն եւ կնոջ կռապաշտից, եւ ինքեանք էին քրիստոնեայք ի ծածուկ. եւ անուն էր տեառն իւրեանց Կաստալոն եւ կնոջն * Տետրադիա, ի քաղաքին Բիւզանդիա, յաւուրս կռապաշտին Ադրիանոսի. եւ զհացն զոր առնուին ի տերանց իւրեանց տային աղքատաց : * A fol. 245 r° a

Եւ ի միում աւուր ասեն մանկունքն Կիւրակոս եւ Թէոդուլոս ընդ Զոյի մայրն իւրեանց. Ընդէր բնակիմք ընդ անբարշտաց, թող որոշեսցուք ի նոցանէ զի մի կորիցեմք եւ մեք ընդ նոսա : Ասէ Զոյի. Սոքա տեարք են ըստ մարմնոյ եւ մեք եմք դոցա ծառայք : Ասեն մանկունքն. Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն մեր խաչեցաւ եւ մեք խոստովանեսցուք զանուն նորա եւ մեռցուք վասն նորա :

Եւ լուեալ զայս Զոյեայ մայրն իւրեանց, խրատ ետ մանկացն զի երթիցեն առ

1 նորա] Աշկի ԻԴ եւ *add.* B || 2 օրհնելոյն յաւիտեանս *om.* B || 3 սրբոյն *om.* B — Եսպերիու] Ասպերիոսի B || 14 մայրն] մօրն B.

gues sur ce lit si douillet. » Le gouverneur, ayant vu qu'il n'était pas mort, ordonna de le traîner jusque sur un endroit élevé et de lui trancher la tête, le 1er mai, pour la gloire et la louange de notre Dieu qui est béni à jamais.

25 AHÉKAN, 2 Mai.

Martyre de saint Hespérios, de sa femme Zoè et de ses deux fils Cyriacus et Théodulos.

Ces saints martyrs du Christ Hespérios et Zoè étaient esclaves d'un homme et d'une femme idolâtres; ils étaient chrétiens en secret; le nom de leur maître était Castalon et celui de la femme * Tétradia, et ils habitaient la ville de Byzance, aux jours d'Adrien, l'idolâtre. Le pain qu'ils recevaient de leurs maîtres, ils le donnaient aux pauvres. * A fol. 245 r° a.

Un jour leurs enfants Cyriacus et Théodulos dirent à leur mère Zoè : « Pourquoi habitons-nous chez des idolâtres? Séparons-nous d'eux pour ne pas nous perdre nous aussi avec eux. » Zoè leur répondit : « Ce sont nos maîtres selon le corps et nous sommes leurs esclaves. » Les enfants dirent : « Notre-Seigneur Jésus-Christ a été crucifié pour nous, nous confesserons son nom et nous mourrons pour Lui. »

En entendant cela, leur mère Zoè conseilla aux enfants d'aller trouver le

տէրն, եւ աներկիւղ ասացեն զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ առժամայն երթեալ հանդիպեցան տեառն իւրեանց եւ ասեն. Մարմնոյ մերոյ դու ես տէր, եւ հոգւոյ մերոյ տէր է Յիսուս Քրիստոս։ Եւ զարմացաւ Կաստաղոն ընդ բանս տղայոցն, կոչեաց զմայրն իւրեանց եւ առաքեաց առ Եսպերիոն այրն իւր յագարակն ուր վաստակէր զհողն, եւ անդ աներկիւղ եւ հաստատուն կային ի հաւատն Քրիստոսի։

Ծնաւ կինն Կաստաղոնի որդի եւ կատարեաց զօր ծննդեանն զաւակին ուրախութեամբ եւ արար տօն մեծ։ Եւ առաքեաց միս եւ գինի ի սեղանոյն՝ Եսպերիոնի եւ Զոյեայ եւ զաւակացն։ Իսկ երանելին Զոյի առեալ զգինին եհեղ, եւ զմիսն ընկէց
* A fol. 245 rº b. շանց։ Եւ յոյժ բարկացաւ Կաստաղոն, կախեաց * զմանկունսն եւ սաստիկ տանջեաց զնոսա առաջի հօրն եւ մօրն իւրեանց, որք մանաւանդ քաջալերէին ծնողքն զմանկունսն համբերել վասն հաւատոցն Քրիստոսի։ Իջուցին զնոսա ի փայտէն եւ նոքա ասեն ցԿաստաղոն տէրն իւրեանց. Այս տանջանքս ոչինչ են։ Չարչարեցին ուժգին եւ զերանելին Զոյի եւ ի Քրիստոսի հաւատոյն ոչ խախտեցաւ։ Հրամայեաց այրել զփուռն յորում զհացն եփէին եւ զԵսպերիոն եւ զԶոյի եւ զԿիւրակոս եւ զԹէոդուլոս արկին անդ, եւ եդին խուփն ծանր սալ, եւ բարի խոստովանութեամբ կատարեցան չորեքեանն Մայիսի Բ։

4 այրն] հայրն B || 6 ուրախութեամբ] խրախութեամբ B || 15 չորեքեանն] Ահկի ԺԵ եւ *add.* B

maître et de lui dire sans crainte le nom du Christ notre Dieu. Ils s'y rendirent aussitôt, trouvèrent leur maître et lui dirent : « Tu es le maître de notre corps, mais Jésus-Christ est le maître de nos âmes. » Castalon fut étonné des propos des enfants, appela leur mère et l'envoya auprès de Hespérion son mari à la ferme où il travaillait la terre; là ils demeurèrent sans crainte et inébranlables dans la foi du Christ.

La femme de Castalon mit un fils au monde et célébra le jour de la naissance de son fils avec joie en faisant une grande fête. Elle envoya de la viande et du vin de la table à Hespérion, à Zoè et à ses enfants. La bienheureuse Zoè prit le vin et le répandit et elle jeta la viande aux chiens. Castalon en fut très
* A fol. 245 rº b. irrité; il fit suspendre * les enfants et les fit torturer durement en présence de leur père et de leur mère ; ceux-ci n'en encourageaient que plus en parents leurs enfants à endurer pour la foi du Christ. On les descendit de la potence, mais (les enfants) dirent à Castalon : « Ces tortures ne sont rien. » On flagella aussi vigoureusement la bienheureuse Zoè, mais elle ne fut point ébranlée dans sa foi au Christ. (Castalon) ordonna de chauffer le four où on cuisait le pain, et on y jeta Hespérion, Zoè, Cyriacus et Théodulos, on y posa comme couvercle une grosse dalle; tous les quatre moururent en vaillants confesseurs le 2 mai.

Եւ ընդ առաւօտն լուան ձայն երգոց հրեշտակաց ի ներքսագոյն փռանն, եւ երթեալ Կաստաղոն եբաց զփուռն եւ ոչ զոք ետես, բայց միայն զմարմինս սրբոցն որպէս թէ ի քուն յարեւելից կողմանէն : Եւ ձայն եղեւ յերկնից որ ասէ. Ելէք ի վեր ծառայք Աստուծոյ, ժառանգեցէք ձեզ պատրաստեալ զարքայութիւնն : Եւ յահէ ձայնին երկեաւ Կաստաղոն եւ փախեաւ ի տեղւոջէն :

Եւ բարեպաշտ կանայք հանին զնշխարս սրբոց մարտիրոսացն եւ թաղեցին ի տեղի նշանաւոր :

[B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս աստուածասէր եւ բարեպաշտ առաջին թագաւորն Հայոց Լեւոն, որ իւրով վեհապանծ քաջութեամբն պսակազարդեաց զազգս մեր :] * B p. 196 a.

Ահկի ԻԶ եւ Մայիսի Գ. Վկայութիւն Տիմոթէոսի եւ զուգակցին իւրոյ Մաւրայ :

Մարտիրոսն Քրիստոսի Տիմոթէոս ընթերցող էր եկեղեցւոյն Աստուծոյ, ի գեղջէն Պերսպեայ : Եւ անաստուած զօրականքն կալան * զնա եւ տարան առ կռապաշտ դատաւորն Թեբայիդայ որոյ անուն էր Արիանոս. եւ խոստովանեցաւ զանուն Տեառն Աստուծոյ եւ զքրիստոնէութեան հաւատն : * A fol. 245 v° a.

1-5 Եւ ընդ առաւօտն... տեղւոջէն *om.* B || 11 Վկայութիւն] սրբոց վկայիցն *add.* B — Տիմոթէի] ընթերցողի *add.* B.

Au matin, on entendit la voix et les chants des anges du fond du four. Castalon, s'y étant rendu, ouvrit le four et n'y vit personne hormis les corps des saints comme endormis et (tournés) du côté de l'orient. Une voix se fit entendre du ciel qui dit : « Montez, serviteurs de Dieu, et venez hériter du royaume qui vous a été préparé. » Castalon prit peur de cette voix terrifiante et s'enfuit de l'endroit.

Des femmes pieuses sortirent les reliques des saints martyrs et les inhumèrent dans un endroit choisi.

[B* En ce jour reposa dans le Christ l'ami de Dieu et pieux Léon, premier roi d'Arménie, qui par sa glorieuse vaillance ajouta un fleuron à la couronne de notre nation.] * B p. 196 a.

26 AHÉKAN, 3 Mai.

Martyre de Timothée et de son épouse Mavras.

Le martyr du Christ Timothée était lecteur de l'église de Dieu du village Persepos. Les soldats athées le saisirent * et le conduisirent chez le juge idolâtre de Thébaïde dont le nom était Arianus. Il confessa le nom de Dieu et la foi chrétienne. * A fol. 245 v° a.

Ասէ Արիանոս. Տուր ինձ զգիրսն քո զի գիտացից զզօրութիւն գրեցոցն : Ասէ Տիմոթէոս. Ոչ, անօրէն դատաւոր, ո՞վ զորդիս իւր մատնեաց ի մահ, ո՞չ գիտես զի գիրք՝ զաւակք իմ են, եւ յորժամ բանամ զգիրսն պատեն զինեւ հրեշտակք Աստուծոյ : Եւ նա ընդ բանսն բարկացաւ յոյժ, եւ հրամայեաց հրացուցանել շամփուրս եւ արկանել ընդ լսելիս նորա, եւ ի սաստիկ նեղութենէն երկոքին աչքն արտաքոյ կախեցան : Եւ յետ այնորիկ պնդեցին զսձգունսն ոտիցն յանիւ, եւ եդին զայլ ի բերանն, եւ կախեցին գլխիվայր զփայտէ, եւ կապեցին վէմ մի ի պարանոցն : Եւ սուրբ վկայն Քրիստոսի ի փառաւորելոյ զԱստուած եւ ի գոհանալոյ ոչ դադարէր :

Եւ առաքեաց դատաւորն առ կին նորա Մաւրաս, եւ պատուիրեաց զի զարդարեսցի ոսկւով եւ արծաթով եւ դիպակով, եւ անուշահոտ իւղով օծանիցի : Եւ յորժամ զարդարեցաւ՝ տարան զնա առ այրն իւր Տիմոթէոս, զի դեռ եւս քսան աւուրք էին հարսանեացն յորում ամուսնացաւ. եւ զայն հնարս իմացաւ դատաւորն թերեւս հաւանեցուսցէ զնա զոհել կռոցն :

Եւ երթեալ Մաւրաս աղաչեաց զայրն իւր զի արասցէ զկամս դատաւորին. եւ
* A fol. 245 v° b. Տիմոթէոս իմացեալ զնա զի * զարդարեալ էր եւ անուշահոտեալ, ասէ ցՊիկիլիոս քահանայն ցհայրն իւր. Ո՛վ հայր իմ, բեր ի հանդերձից եկեղեցւոյն եւ ծածկեա զերեսս իմ զի մի՛ առից զհոտ զարշելի, եւ մի՛ հոտոտեցայց ի մահացուցանող հոտոց : Եւ

1 գրեցոցն] գրեցեալցն B || 3 են] իցեն B || 10 անուշահոտ իւղով] անուշահոտիւք B.

Arianus dit : « Donne-moi tes livres pour que je sache ce que signifient les choses qui y sont écrites. » Timothée répondit : « Non, juge inique. Qui donc a jamais livré à la mort ses fils ? Ne sais-tu pas que les livres sont mes enfants et que lorsque j'ouvre mes livres les anges de Dieu m'entourent ? » Il fut très irrité de ces paroles et ordonna de faire rougir au feu des broches et de les enfoncer dans ses oreilles. La douleur fut tellement forte que ses deux yeux sortirent et restèrent suspendus hors (des orbites). Après cela on lia fortement les chevilles de ses pieds à une roue, on mit un bâillon dans sa bouche, on le suspendit la tête en bas à un poteau et on lui attacha une pierre au cou. Le saint martyr du Christ ne cessait de glorifier Dieu et de lui rendre grâces.

Le juge envoya à Mavras, femme (de Timothée), l'ordre de se parer d'or, d'argent et d'étoffes précieuses et de s'oindre d'huile parfumée. Lorsqu'elle se fut parée, on la conduisit auprès de son mari Timothée ; il y avait à peine vingt jours qu'ils avaient fait leurs noces et s'étaient mariés. Le juge avait imaginé ce stratagème dans l'espoir de le persuader d'immoler aux idoles.

Mavras se rendit auprès de son mari et le supplia de faire la volonté du
* A fol. 245 v° b. juge. Quand Timothée se fut rendu compte qu'elle était * parée et parfumée, il dit au prêtre Picilius son père : « O mon père, apporte-moi quelqu'un des vêtements ecclésiastiques et couvres-en ma figure pour que la senteur abominable ne parvienne pas jusqu'à moi et que je n'aspire pas de senteurs mor-

պարձու ի կենս եւ ասէ. Բայց իմ Մաւրաս, հրաժարեա ի կենցաղոյս եւ եկեսջիր զկնի իմ, եւ արիացիր ընդ իս եւ պսակեսցիս ի Փրկչէն մերմէ :

Իսկ Մաւրաս լցաւ Հոգւով սրբով եւ ասէ ցդատաւորն. Ես քրիստոնեայ եմ : Եւ նոյնժամայն մերկացուցին զերանելին եւ ձաղկեցին զամենայն մարմին նորա, կտրեցին զմատունսն եւ արկին յեռացեալ ջրով կաթսայ, եւ անկիզելի մնաց : Կարծեաց դատաւորն եթէ դահիճքն խնայելով ի կինն ոչ եռացուցին զջուրն : Ասէ ցՄաւրաս. Հեղ ի վերայ ձեռաց իմոց ի ջրոյ կաթսայիդ : Եւ նորա առեալ երկու ափովն ջուր արկ ի ձեռս դատաւորին : Եւ առժամայն քերթեցան եւ խաղաւարտեցան, եւ ի ցաւոցն աղաղակէր. Մեծ է Աստուած Մաւրասայ : Եւ դարձեալ եռացուցին զկաթսայն ծծմբով եւ ձիւթով եւ ընկեցին անդ զՄաւրաս, եւ հրեշտակ Տեառն եհան զնա անվնաս :

Եւ յետ այնորիկ հրամայեաց դատաւորն եւ խաչեցին զնոսա զերկոսեանն ընդդէմ միմեանց, եւ թողին զնոսա զաւուրս ինն. եւ նոքա մխիթարէին զմիմեանս, զցերեկն խրատ տայր Տիմոթէոս Մաւրասայ ուրախութեամբ համբերել, եւ զգիշերն * Մաւրաս քաջալերէր զՏիմոթէոս ուրախութեամբ համբերել վասն Քրիստոսի : * A fol. 246 r° a.

Եւ եղեալ Մաւրայ ի զարմացման որպէս թէ ի թմբրութեան, եւ երեւեցաւ նմա

4 մարմին] հերս գլխոյն B || 5-11 եւ անկիզելի ... անվնաս] եւ ապա ի կաթսայ եռացեալ ծծմբով եւ ձիթով, եւ զօրութիւնն Աստուծոյ պահեաց կենդանի B || 12 ընդդէմ] հանդէպ B || 16 — p.1426, l.7 եւ երեւեցաւ ... յերկինս] տեսանէ զի հրեշտակ Տեառն կալեալ զձեռանէ նորա եհան յերկինս B.

telles. » Puis il se retourna vers sa femme et lui dit : « Mavras, ma sœur, renonce à cette vie et suis-moi, sois courageuse avec moi et tu seras couronnée par notre Sauveur. »

Effectivement, Mavras fut remplie de l'Esprit-Saint et dit au juge : « Je suis chrétienne. » Aussitôt on mit à nu la bienheureuse et on flagella tout son corps, on lui coupa les doigts, on la jeta dans un chaudron d'eau bouillante, mais elle demeura sans brûlures. Le juge crut que les bourreaux, ayant eu pitié de la femme, n'avaient pas fait bouillir l'eau. Il dit à Mavras : « Verse sur mes mains de l'eau de ce chaudron. » Elle prit de l'eau dans ses deux paumes et la versa sur les mains du juge. (Les mains) furent aussitôt boursouflées, couvertes de cloques et (le juge) criait de douleur : « Grand est le Dieu de Mavras. » On chauffa de nouveau le chaudron avec du soufre et de la poix et on y jeta Mavras, mais l'ange du Seigneur l'en retira indemne.

Le juge ordonna ensuite de les crucifier tous les deux l'un en face de l'autre. On les abandonna pendant neuf jours. Et eux ils se consolaient mutuellement ; pendant le jour Timothée conseillait à Mavras d'endurer avec joie, et pendant la nuit * Mavras encourageait Timothée à endurer avec joie pour le Christ. * A fol. 246 r° a.

Mavras eut un ravissement et se trouva plongée dans une espèce de tor-

սատանայ ունելով ի ձեռին խրուծ բաժակ լի կաթամբ խառնեալ մեղու, եւ տայր նմա ըմպել, Քանզի ինն օր է, ասէ, անսուաղ էք ի կերակրոյ ի վերայ խաչիցդ : Եւ գիտացեալ Մաւրաս զհնարս սատանայի սաստեաց նմա եւ անյայտ եղեւ : Եւ ապա երեւեցուցանէ նմա սատանայ գետ կաթամբ եւ մեղու, եւ ասէր. Կեր եւ արբ : Եւ ասէ Մաւրաս. Ոչ ճաշակեցից ի դոցանէ մինչեւ արբից ի Քրիստոսին իմոյ բաժակէ զոր ի ձեռն մահուան իմոյ պարգեւեաց ինձ. եւ անյայտ եղեւ սատանայ : Եւ հրեշտակ Տեառն իջեալ յերկնից կալաւ զձեռանէն եւ եհան փառօք յերկինս, եւ ցուցանէ նմա աթոռ զարդարեալ եւ ի վերայ սպիտակ հանդերձ եւ պսակ, եւ ասէ. Այս պատմուճանս եւ պսակս քո են :

Ապա հանէ զնա ի վերագոյն տեղի՝ եւ ցուցանէ նմա այլ պայծառագոյն աթոռ եւ պատմուճան եւ պսակ հրաշալի փառօք եւ ասէ. Այս պսակս եւ աթոռս՝ առն քոյ է Տիմոթէոսի, եւ լաւ է քան զքոյն, վասն զի նա եղեւ առիթ փրկութեան քոյ, դարձիր ի միտս եւ ի զգայարանս քո :

Եւ ի վեցերորդ ժամն ի տասներորդի աւուրն եբաց Մաւրաս զաչս իւր, եւ տեսանէ
* A fol. 246 r° b. մերձ կացեալ կանայս, եւ ասէ ցնոսա. Դստերք Երուսաղեմի * եւ քորք իմ յիշեցէք որ կատարեցաք զերկրաւորական հաճոյս, կատարեսցուք եւ այժմ զԱստուծոյն, եւ

11 եւ պատմուճան... փառօք *om.* B || 12-13 եւ լաւ... զգայարանս քո *om.* B.

peur. Satan lui apparut tenant à la main une coupe remplie de lait mélangé à du miel, et il la lui présentait à boire : « Car il y a neuf jours, disait-il, que vous êtes sans manger, privés de nourriture, sur vos croix. » Mavras, s'étant aperçue de la ruse de Satan, le réprimanda avec menace et il disparut. Satan lui fit apparaître ensuite un fleuve de lait et de miel et lui dit : « Mange et bois. » Mavras répondit : « Je n'y goûterai point avant d'avoir bu la coupe de mon Christ dont il m'a fait présent dans cette mort que j'endure. » Satan disparut. L'ange du Seigneur descendit du ciel, la prit par la main, la fit monter glorieusement au ciel et lui montra un trône orné et sur (ce trône) un vêtement blanc et une couronne, et il lui dit : « Cette robe et cette couronne sont pour toi. »

Ensuite il la fit monter à un endroit plus élevé et lui montra un trône plus brillant et un vêtement et une couronne d'une magnificence merveilleuse et lui dit : « Cette couronne et ce trône sont pour ton mari Timothée : ils sont supérieurs aux tiens, parce que c'est lui qui a été l'occasion de ton salut. Et maintenant reviens à tes esprits et à tes sens. »

Le dixième jour, à la sixième heure, Mavras ouvrit ses yeux et aperçut
* A fol. 246 r° b. des femmes se tenant près d'elle; elle leur dit : « Filles de Jérusalem et * mes sœurs, rappelez-vous que nous avons accompli les désirs terrestres, et main-

ընկալցուք զպսակն կենաց : Եւ զայս ասացեալ աւանդեցին երկոքեան զհոգիս իւրեանց առ Աստուած Մայիսի Գ :

[B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ թագուհին Հայոց երկրորդ Զապէլն, որ իբրեւ մայր գթած աստուածպարգեւ ողորմութեամբ խնամ տանէր կարօտելոց :] * B p. 197 b.

Ահկի ԻԷ եւ Մայիսի Դ : Վկայութիւն սուրբ եպիսկոպոսի Սիլբիանոսի :

Երանելի եպիսկոպոսն Սիլբիանոս էր ի գաւառէն Գազայ, յառաջ լեալ զօրական, եւ վասն բարեհաճոյ գործոց իւրոց եղեւ քահանայ, եւ յետ սակաւ աւուրց արժանաւորեցաւ եպիսկոպոսութեան. եւ ծերացաւ բարի գործովք եւ վարդապետութեամբ յեկեղեցին Աստուծոյ, եւ զբազումս ի հեթանոսաց լուսաւորեաց :

Եւ կալեալ զնա կռապաշտիցն տարան ի հրապարակ քաղաքին Կեսարիոյ Պաղեստինացւոց, եւ վասն անուանն Քրիստոսի յոյժ տանջեցին զնա, եւ քերեցին զմարմինն, եւ ապա դատապարտեցին զնա ի մահ, եւ զորս ընդ նմա էին հաւատացեալս : Հանին արտաքոյ քաղաքին եւ հատին զգլուխսն, ընդ նոսին եւ այլ հարիւր քրիստոնէից

2 Աստուած] Ահկի ԻԶ եւ *add.* B || 6 եպիսկոպոսի] եւ վկային *add.* B — Սիլբիանոսի] Սիղուանոսի B || 11 Պաղեստինացւոց] Պաղեստինեայ B.

tenant nous accomplirons les désirs de Dieu et nous entrerons en possession de la couronne de la vie. » Et ceci dit, ils rendirent tous les deux leur âme à Dieu, le 3 mai.

[B* En ce jour reposa dans le Christ la pieuse reine d'Arménie la deuxième Zabel qui, à l'instar d'une mère charitable, prenait soin des nécessiteux par des aumônes généreuses.] * B p. 197 b.

27 AHÉKAN, 4 Mai.

Martyre du saint évêque Silbianos.

Le bienheureux évêque Silbianos était de la province de Gaza; il avait été auparavant soldat; et ses (bonnes) œuvres l'ayant fait agréer, il fut fait prêtre et, quelques jours après, jugé digne de l'épiscopat. Il vieillit dans les bonnes œuvres et la bonne doctrine dans l'église de Dieu, et il illumina nombre d'infidèles.

Les idolâtres se saisirent de lui et le conduisirent au tribunal de la ville de Césarée de Palestine, où pour le nom du Christ ils le torturèrent beaucoup et lui déchirèrent le corps. Ensuite ils le condamnèrent à mort avec ceux des fidèles qui étaient avec lui. On les fit sortir de la ville, on leur trancha la tête et avec eux à cent autres chrétiens qui n'avaient pas renié le Christ et

որ ոչ ուրացան զՔրիստոս եւ ոչ զոհեցին կռոցն՝ Մայիսի Դ, յորոց էին ոմանք ի նոցանէ Եգիպտացիք եւ ոմանք ի Պաղեստինու գաւառէն :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Յուստիանոսի :

Սուրբ վկայն Քրիստոսի Յուստիանոս, իմաստասէր փիլիսոփայն, խոստովանէր
* A fol. 246 v° a. զՔրիստոս համարձակութեամբ յաւուրս Անտոնինոսի * կռապաշտ արքային : Եւ նախանձեցաւ այլ փիլիսոփայ իմաստասէր ընդ նա, որոյ անունն էր Կրիսկենդոս կռապաշտ, չար մահուամբ նահատակեաց զՔրիստոսի քաջ նահատակն Յուստիանոս :

* B p. 198 a. [B * Ի սմին աւուր նահատակութիւն սրբոյն Փիլիպպոսի որ էր որդի Փիլիպպոսի կայսերն Հռոմայ, եւ բազմութեան մարտիրոսացն որ ընդ նմա կացեալ յատենի եւ խոստովանեցան զՔրիստոսի աստուածութիւնն, եւ ի Դեկոսէ բազմապատիկ տանջանօք կատարեցան երանելի մահուամբ :

Յայսմ աւուր վարք եւ յիշատակ երանելոյն Գէորգեայ կուրի :

Էր սա յԱրճէշ քաղաքէ, կոյր ի ծնէ, առ ժամանակօք Շնորհալւոյն, մնեալ սրբութեամբ ի վանս ի մանկութենէ, միով մազեղինաւ, միանգամ միայն ճաշակէր յաւուրն հաց եւ ջուր չափով ի մուտս արեւուն : Եւ էր իմաստուն միտք՝ փոխանակեալ

1 կռոցն] Աշկի ԻԷ· եւ *add.* B || 3 վկայութիւն] յիշատակ B — Յուստիանոսի] վկային Քրիստոսի *add.* B || 6 իմաստասէր] յանօրինաց *add.* B — կռապաշտ *om.* B || 7 նահատակեաց] սպան B — զՔրիստոսի] վկայն *add.* B.

n'avaient pas immolé aux idoles, le 4 mai. Parmi eux il y avait des Égyptiens et d'autres étaient de la province de Palestine.

En ce jour martyre de saint Justin (*Youstianos*).

Le saint martyr du Christ Justin (*Youstianos*) le sage philosophe confessait
* A fol. 246 v° a. avec hardiesse le Christ aux jours de l'empereur Antonin, * l'idolâtre. Un autre philosophe dont le nom était Crescent (*Kriskēndos*), un idolâtre, lui porta envie, et il fit martyriser d'une mort cruelle le vaillant martyr du Christ Justin (*Youstianos*).

* B p. 198 a. [B* En ce jour martyre de saint Philippe qui était le fils de Philippe l'empereur de Rome, et d'une multitude de martyrs qui comparurent avec lui au tribunal et confessèrent la divinité du Christ. Ils furent martyrisés par Dèce (*Dekos*) dans de multiples tortures et eurent une mort bienheureuse.

En ce jour vie et commémoration du bienheureux Georges (*Gēorg*) l'aveugle.

Il était de la ville d'Ardjèche, aveugle de naissance, aux jours de Chenorhali. Il avait été élevé saintement dès son enfance dans un couvent, vêtu d'un cilice, toujours le même; il ne prenait qu'un seul repas par jour : du pain et

զակն մարմնոյն ի կրկին աչս հոգւոյն ։ Ոչ գոյր նմա տեղի անկողնոյ եւ ոչ սնարս գլխոյ, զմետասան ժամ գիշերոյն յաղօթս կայր ամենայն արտասուօք, եւ զմի ժամն ի ծունր ննջէր ։

Եւ այսպիսի սքանչելի քաղաքավարութեամբ կեցեալ աւելի քան զամս եօթանասուն, յաւել շրջել յուխտաւորս․ գնաց յուխտ եւ յերկրպագութիւն սուրբ տեղեացն Երուսաղեմի եօթն անգամ, առաջնորդ ընդ իւր ունելով զԳրիգոր ոմն միայնակեաց հետեւող սուրբ վարուց եւ ժուժկալութեան իւրոյ ։ Եւ իբրեւ կամէին երթալ անտի ի Հռոմ՝ մոլորեալ ի ճանապարհի անկան ի ձեռս աւազակաց յաշխարհին Ունկրուսաց, որք հարին զնոսա եւ թողին կիսամահ եւս առաւել զԳրիգոր միայնակեաց ։

* Եւ յետ բազում ժամուց փոքր մի ուշաբերեալ Գէորգեայ՝ դիմեաց ի բարեխօսութիւն սրբոյն Յովհաննու Կարապետի ։ Եւ անուրջ երեւեցաւ կրօնաւորի ուրումն յազգէ Փռանկաց որ էր հայր վանաց մօտակայ տեղեաց, այր ընտիր վկայեալ յամենայնէ, եւ եկն անդր սայլիւք եւ սպասաւորօք, բերեալ ընդ իւր վերարկու, հանդերձ եւ խիւս եփեալ եւ հաց եւ ջուր ։ Եւ մօտ կացեալ գոչեաց ի բարբառ Փռանկաց․ Գէորգ եւ Գրիգոր յառն կացէք ։ * B p. 198 b

Եւ Գէորգ ձայն տուեալ ասէ․ Ով ես․ զի Գրիգոր հասեալ կայր ի շունչ յետին, եւ միայն տափայր, եւ ոչ գոյր ի նմա այլ նշան կենդանութեան ։ Եւ հայր վանացն ասաց

de l'eau, rationnés au coucher du soleil. Il était d'esprit sagace, remplaçant l'œil du corps par les deux yeux de l'âme. Il n'avait pas d'emplacement pour un matelas, pas d'oreiller pour sa tête; il priait tout en larmes les onze heures de la nuit et ne dormait qu'une heure à genoux.

Il vécut d'une vie aussi merveilleuse plus de soixante-dix ans; il y ajouta également des voyages aux pèlerinages, se rendit en pèlerin sept fois pour se prosterner aux saints lieux de Jérusalem, ayant avec lui pour guide un nommé Grigor, solitaire, imitateur de la sainteté et de l'austérité de sa vie. Comme ils voulaient se rendre de là à Rome, ils s'égarèrent en route et tombèrent entre les mains de brigands dans le pays des Hongrois (*Ounkrousatz*) qui les battirent et les laissèrent à moitié morts, surtout le solitaire Grigor.

* Gēorg étant, après bien des heures, revenu un peu à soi, eut recours à l'intercession de saint Jean le Précurseur. Une vision apparut à un religieux de la nation des Francs qui était prieur d'un couvent d'une localité proche, homme parfait, estimé de tous, qui arriva sur les lieux avec des chariots et des domestiques, apportant avec lui des manteaux, des vêtements, des galettes, du pain et de l'eau. Il s'approcha et cria en langue française : « Gēorg et Grigor, levez-vous. » * B p. 198 b.

Gēorg, répondant à ce cri, dit : « Qui es-tu? » Car Grigor était sur le point de rendre le dernier soupir, il râlait et ne donnait aucun signe de vie. Le prieur donna son nom et celui de son couvent et dit qu'il était venu à eux sur la

զանուն իւր եւ զկանացն, եւ թէ եկեալ իցէ անդր ի տեսլեանէ սրբոյն Յովհաննու Կարապետի որ երեւեցաւ նմա ի տեսլեան ։ Եւ պատեալ զնոսա հանդերձիւ եդ ի վերայ սայլին եւ տարաւ ի վանս իւր ։

Եւ ի հասանելն նոցա անդր մեռաւ Գրիգոր. եւ միաբանք ուխտին սկսան կատարել զկարգ թաղմանն, կամելով ծածկել ի Գէորգեայ զմահ նորա ։ Եւ նա որ կոյր էր աչօք եւ լուսաւոր մտօք զգացեալ զայն՝ ստիպեաց մուծանել զինքն յեկեղեցին, ուր թախծագին պաղատանօք գոչեաց ի խորոց սրտէ առ Աստուած. եւ նոյնժամայն դարձաւ հոգի մեռելոյն ի մարմինն եւ յարուցեալ նստաւ ։

Իսկ որք շուրջ զմեռեալ մարմինն էին եւ զկարգ թաղմանն կատարէին՝ տեսեալ զքանչելիսն ի ձայն մեծ աղաղակէին փառաւորելով զԱստուած ։ Եւ փութացեալ յեկեղեցին աւետիս տային ընկերին, եւ առեալ տարան առ Գրիգոր, որ եկեալ անկաւ զպարանոցաւ նորա ողջունէր զնա լալով եւ խնդութեամբ ։

Ապա գնացեալ ի Հռոմ կատարեցին զուխտ իւրեանց եւ դարձան ի Հայս. եւ եկեալ յԱնի քաղաք բնակեցան ի սուրբ կաթուղիկէն զամիսս վեց սքանչելի վարուք,
* B p. 199 a. անդադար * պարապեալ յաղօթս առ Աստուած ։

Եւ յաւուր միում եկն կին մի որ ունէր ի ձեռին իւր վէր չար եւ անբժշկելի զոր շնաբոր կոչեն, եւ էր մերձ ի մեռանել, եւ ծնողք նորա անկեալ առ ոտս Գէորգեայ աղաչէին կոծկոծելով աղօթս առնել առ Աստուած զի բժշկեսցի ։ Եւ իբրեւ կալաւ

recommandation de saint Jean le Précurseur qui lui était apparu dans une vision. Il les enveloppa de vêtements, les mit sur un chariot et les conduisit à son couvent.

Comme ils y arrivaient, Grigor mourut. Les religieux du couvent commencèrent l'office de la sépulture, voulant cacher sa mort à Gēorg. Mais Gēorg, qui était aveugle des yeux mais éclairé d'esprit, en eut l'aperception et il obligea (les gens) à le faire entrer dans l'église où avec des supplications désolées il cria du fond de son cœur à Dieu, et aussitôt l'âme du mort retourna dans son corps et Grigor après s'être redressé, il s'assit.

Tous ceux qui étaient autour du corps mort et célébraient l'office de sépulture, témoins du miracle, crièrent à haute voix en glorifiant Dieu. Ils accoururent à l'église et ils donnaient cette bonne nouvelle à son compagnon; puis, l'ayant pris, ils le conduisirent auprès de Grigor, qui vint, se jeta à son cou, et il le saluait en pleurant et avec joie.

Ils se rendirent ensuite à Rome, y accomplirent leur vœu et retournèrent en Arménie. Arrivés à la ville d'Ani, ils logèrent pendant six mois dans l'église
* B p. 199 a. cathédrale (Kathoulikē), menant une vie merveilleuse, incessamment * occupés à prier Dieu.

Un jour il se présenta une femme qui avait à la main une plaie mauvaise et incurable, qu'on appelle lèpre de chien, et elle était sur le point d'en mourir. Ses parents, tombés aux pieds de Gēorg, le suppliaient en se lamentant de

զմիրաւորեալ ձեռն նորա եւ վերացոյց արտասուալից պաղատանօք առաջի սուրբ կաթողիկէին, առժամայն պայթեալ վիրացն՝ արտաքս ել շարաւն, եւ ողջացաւ ձեռն աղջկանն ։ Բժշկեաց ախտիւք եւ զբաղում հիւանդս եւ ախտաժէտս, եւ հրաշալի առաքինութեամբ հասեալ ի բարւոք ծերութիւն՝ փոխեցաւ յաստեաց յանվախճան կեանս Ահկի ԻԷ եւ Մայիսի Դ ։]

Ահկի ԻԸ եւ Մայիսի Ե ։ Վկայութիւն սուրբ առաքելոյն Տիմոնի ։

Սուրբ առաքեալն Տիմոն մի էր յեօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի, ընդ սրբոյն Ստեփաննոսի նախավկային ձեռնադրեցաւ սարկաւագ եւ լնուին զպէտս եկեղեցւոյն եւ հաւատացելոց բազմութեանն որ ի Հրէից անտի հաւատացին ի Քրիստոս յետ յարութեանն ։ Եւ ազգականք նոցա հանին զնոսա ի տանց եւ ի հայրենեաց եւ ի ստացուածոց, եւ նոքա եկեալ յարեցան յառաքեալսն, եւ նոքա կացուցին զեօթն սարկաւագունսն ի վերայ մարմնական պիտոյից նոցա ։

Եւ ապա հրամանաւ Հոգւոյն սրբոյ գնաց Տիմոն եւ քարոզեաց զՔրիստոս ի բազում

6 Վկայութիւն] Տօն է B — սուրբ *om.* B || 9 եկեղեցւոյն եւ *om.* B || 13 զՔրիստոս *om.* B.

prier Dieu pour qu'elle fût guérie. Et lorsqu'il lui eut pris la main blessée et l'eut élevée en priant avec des supplications pleines de larmes vers la sainte cathédrale, aussitôt, la plaie ayant crevé, il en sortit du pus, et la main de la jeune fille devint saine. Il guérit par ses prières de nombreux malades et infirmes et, en pratiquant une vertu admirable, étant parvenu à une bonne vieillesse, il passa de ce monde à la vie sans fin le 27 ahékan, le 4 mai.]

28 ahékan, 5 Mai.

Martyre du saint apôtre Timon.

Le saint apôtre Timon était un des soixante-douze disciples du Christ, il fut ordonné diacre avec saint Étienne, le protomartyr, et ils présidaient aux besoins de l'Église et de la multitude des fidèles parmi les Juifs qui avaient cru au Christ après la résurrection. Leurs parents les avaient chassés de leurs maisons, de leur patrie et de leurs propriétés; aussi vinrent-ils se joindre aux apôtres. Ceux-ci avaient institué sept diacres pour pourvoir à leurs besoins matériels.

Ensuite, sur l'ordre du Saint-Esprit, Timon parcourut de nombreux pays, y prêcha le Christ et convertit nombre d'infidèles à la vraie foi par les pro-

տեղիս, եւ զբազումս դարձոյց յանհաւատութենէ ի ճշմարիտ հաւատս նշանօք եւ սքանչելեօք զոր գործէր. եւ բազում կտտանօք չարչարեալ կատարեցաւ Մայիսի Ե :

Յայսմ աւուր սքանչելիք մեծ եւ փառաւոր սուրբ կուսին Երինեայ :

Որոջն Քրիստոսի Երինէ դուստր էր միամօր թագաւորին Մեգիդեայ քաղաքին
* A fol. 246 v° b. որոյ անուն էր Լեգենէոս * եւ մօրն անուն Լեգեննա, եւ անուն կուսին Պեղենոպի : Եւ վասն յոյժ գեղեցկութեան երեսաց նորա շինեաց հայր նորա աշտարակ բարձր եւ ոսկեձեղուն տաճար, եւ ամենայն մարմարիոնս զարդարեաց զորմն եւ զգետինն, եւ արար աթոռ արքունական յարծաթոյ եւ յոսկւոյ, եւ սեղան եւ ջահ արծաթի, եւ բնակեցոյց անդ զդուստր իւր զՊեղենոպի, տուեալ նմա գանձս եւ երիս գեղեցկատեսիլ կուսանս աղախնայս, եւ զԱմբելիանոս ալեւորն ետ նմա վարդապետ. եւ արար անդ ամս վեց :

Եւ յաւուր միում ետես ի տեսլեան աղաւնի մի ունելով շիւղ ձիթենոյ ի բերան իւր, որ ընդ պատուհան աշտարակին եւ եմուտ ի տաճարն, եւ եդ ի վերայ սեղանոյն զայն. եւ զկնի մտեալ արծիւ եդ ի վերայ սեղանոյն պսակ ի ծաղկանց հիւսեալ, եւ ընդ միւս պատուհանն եմուտ ագռաւ եւ ընկէց ի վերայ սեղանոյն օձ : Եւ մտեալ Ամբելիանոս

2 գործէր] առնէր B — կտտանօք *om.* B — կատարեցաւ] Եհկի ԻԸ եւ *add.* B || 3 սքանչելիք... Երինեայ] վկայութիւն սրբոյ եւ մեծի կուսին Երինեայ սքանչելագործի B || 12 ի տեսլեան] տեսիլ Պեղենոպիս զի B.

diges et les miracles qu'il opéra. Après avoir souffert de nombreuses tortures il fut martyrisé le 5 mai.

En ce jour grands et glorieux miracles de la vierge sainte Irène.

La brebis du Christ Irène était la fille unique du roi de la ville de Mégide,
* A fol. 246 v° b. dont le nom était Légénius, * le nom de sa mère Légénev et le nom de la vierge Pélénope. A cause de la grande beauté de son visage, son père fit construire une haute tour, avec un temple aux plafonds d'ors, dont il orna les murs et le sol de toutes sortes de marbres; il y fit faire un trône royal en argent et en or, avec un autel et un lustre en argent, et y installa sa fille Pélénope après lui avoir donné un trésor, trois belles vierges comme servantes et le vieillard Ampélianos comme précepteur. Elle y resta six années.

Un jour elle vit en songe une colombe, tenant un rameau d'olivier dans son bec, qui pénétra dans le temple par la fenêtre de la tour et déposa le rameau sur l'autel. Ensuite pénétra un aigle qui déposa sur l'autel une couronne tressée de fleurs, et par l'autre fenêtre pénétra un corbeau qui jeta un serpent sur l'autel. Le vieillard Ampélianos, quand il vint auprès d'elle à son arrivée, lui

ալեւորն, մեկնեաց նմա զտեսիլն եւ ասէ. Աղաւնին խրատիչ է մտաց, եւ շիղ ձիթենւոյն դրոշմ է գործոյն եւ բացող մկրտութեան, եւ արծիւն թագաւոր հզօր եւ մեծ, եւ պսակն՝ ընտրութեան հրաման, ագռաւն՝ թագաւոր վատուժ եւ տկար, օձն՝ նեղութիւն եւ թշնամութիւն. եւ ասաց նմա զհանգչելն եւ զմարտիրոսութեամբ մահն որ վասն Քրիստոսի :

* Եմուտ առ նա հայրն իւր եւ ասէ. Տաց քեզ այր ամուսին : Ասէ Պելենոպի. Սպաս ինձ սակաւ աւուրս զի խորհեցայց ի միտս իմ : Եւ մտեալ առ կուռսն աստուածսն հօրն՝ եւ արար խնդրուածս, եւ ոչ ձայն եղեւ ի նոցանէ եւ ոչ ունկնդրութիւն : * A fol. 247 r° a.

Եւ դարձաւ յարեւելս եւ աղօթեաց առ Աստուած յամենայն սրտէ : Եւ էջ առ նա հրեշտակ եւ ասէ. Ոչ եւս լիցի անուն քո Պելենոպի՝ այլ Երինի, որ թարգմանի խաղաղութիւն, եւ քեւ կեցցեն անձինք հարիւր հազար եւ ինն հազար երեք հարիւր եւ երեք որ դառնան առ Աստուած. եւ եկեսցէ առ քեզ այր մի աշակերտեալ ի վարդապետութենէն սրբոյն Պօղոսի եւ նա մկրտեսցէ զքեզ : Եւ ի վերանալ հրեշտակին գնաց առ նա Տիմոթէոս եւ մկրտեաց զնա եւ զերիս կոյս աղախնայս նորա :

9 սրտէ] որպէս ուսեալ էր ի Զամբեղիանոսէ. եւ անկաւ ի վերայ նորա թմրութիւն *add.* — 9 էջ առ նա հրեշտակ] երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն B — ասէ] քաջալերեաց զի ընդունելի եղեն աղօթք քո. այսուհետեւ *add.* B || 10 որ թարգմանի խաղաղութիւն *om.* B || 11 հարիւր... երեք] բազումք B || 13 սրբոյն *om.* B — Պօղոսի] որոյ անուն է Տիմոթէոս *add.* B — ի վերանալ հրեշտակին] իբրեւ վերացաւ տեսիլն B || 14 զնա] եւ անուանեաց Երինէ *add.* B — կոյս] կուսանս B

interpréta le songe et dit : « La colombe est la conseillère de l'esprit, le rameau d'olivier est le sceau de l'action[1] préliminaire au baptême, l'aigle un roi puissant et grand, la couronne le décret d'élection, le corbeau un roi malingre et faible, le serpent tribulation et inimitié. » Et il lui prédit le repos et la mort par le martyre pour le Christ.

* Son père étant entré auprès d'elle lui dit : « Je vais te donner un homme pour époux. » Pélénope répondit : « Attends quelques jours pour que je puisse réfléchir. » Et étant entrée auprès des idoles, les dieux de son père, elle leur exposa ses demandes; mais ils ne lui firent pas entendre leur voix et ne prêtèrent pas l'oreille. * A fol. 247 r° a.

Elle se retourna vers l'orient et pria Dieu de tout son cœur. Un ange descendit auprès d'elle et lui dit : « Ton nom ne sera plus Pélénope mais Irène, (nom) qui se traduit paix. C'est par toi que seront sauvées cent mille personnes et neuf mille trois-cents et trois qui se convertiront à Dieu. Un homme viendra à toi, qui aura suivi la doctrine de saint Paul, et lui vous baptisera. » Au moment où l'ange remontait, Timothée était rendu auprès d'elle, et il la baptisa, elle et ses trois servantes vierges.

1. Onction faite avec l'huile des Catéchumènes avant le Baptême.

Եւ առեալ Երինի զամենայն կուռս հօրն խորտակեաց մանր ։ Եւ յորժամ ել առ նա հայրն ետես զդուստր իւր քրիստոնեայ եւ զարհուրեցաւ ։ Եւ նա պատմեաց հօր իւրոյ զԱստուծոյ սքանչելագործութիւնն, եթէ որպէս ի վեց օրն բանիւ միայն զամենայն երեւելիքս եւ զաներեւոյթս ստեղծ, եւ զմարդեղութիւնն Քրիստոսի յայտնեաց նմա ։ Եւ հայրն նորա յոյժ դիւրաւ լսէր բանից դստերն, եւ առեալ զձեռանէն իջին ի լեառնէն ի քաղաքն, զհետ երթայր եւ մայրն. եւ ելին ամենայն քաղաքն ի տեսութիւն աղջկանն

* A fol. 247 r° a. * վասն գեղեցկութեան երեսացն ։

Եւ եմուտ սատանայ ի սիրտ հօրն եւ յիշեցոյց նմա զխորտակումն կռոցն, եւ բարկացաւ ցասմամբ մեծաւ ի վերայ դստերն եւ կնոջն իւրոյ ։ Հեծաւ յերիվար իւր եւ ամենեքեան որ ընդ նմա էին հեծան, եւ կամէին զնոսա կոխան առնել երիվարացն ։ Եւ մի յերիվարացն հեծելոց վերացուցեալ զյետոյս իւր՝ եհար զհայրն ի լանջսն, եւ անկեալ յերկիր՝ խորտակեցան ձեռքն եւ եղեւ կիսամահ ։ Եւ երիվարն որ ընկէց զհայրն ասէ մարդկային բարբառով. Երանի է քեզ երանելի Երինէ ։ Եւ երթեալ ժողովրդեանն անկան առ ոտս նորա, խնդրէին զբժշկութիւն հօրն, եւ նորա եդեալ ձեռս ի վերայ՝ աղօթեաց առ Աստուած եւ կանգնեաց զհայրն իւր, եւ բժշկեցան ձեռքն, եւ հաւատաց յԱստուած եւ ընդ նմա այլ հազար ոգի եւ մկրտեցան ։

2 ետես] եղիտ B — զարհուրեցաւ] ապշեցաւ B || 9 եւ կնոջն *om.* B || 10 զնոսա] զնա B || 12 անկեալ] անկաւ B — խորտակեցան ձեռքն եւ եղեւ *om.* B — Եւ երիվարն ... հօրն *om.* B || 14 նորա] սուրբ կոյսն B || 15 եւ բժշկեցան ձեռքն *om.* B || 16 հազար ոգի] հազարաւոր ոգիք B — եւ մկրտեցան *om.* B.

Irène, ayant saisi toutes les idoles de son père, les brisa en menus morceaux. Lorsque son père monta chez elle et vit sa fille devenue chrétienne, il fut saisi de frayeur. Elle raconta à son père les merveilles de la création de Dieu, de quelle façon il créa par sa seule parole en six jours tout ce qui est visible et invisible et lui révéla l'Incarnation du Christ. Son père écouta très docilement les paroles de sa fille, puis après l'avoir prise par la main ils descendirent de la montagne à la ville ; derrière eux allait aussi la mère. Tous

* A fol. 247 r° a. les gens de la ville sortirent au-devant de la jeune fille pour (admirer) * la beauté de son visage.

Satan entra dans le cœur du père et lui rappela la destruction des idoles. Il s'enflamma d'un grand courroux contre sa fille et sa femme. Il monta à cheval, et tous ceux qui étaient avec lui montèrent à cheval également et ils voulaient les fouler aux pieds de leurs chevaux. Un des chevaux des cavaliers élevant ses pieds arrière en frappa la poitrine du père qui tomba à terre, eut les mains brisées et resta à moitié mort. Le cheval qui avait jeté bas le père dit en langage humain : « Tu es heureuse, bienheureuse Irène. » La foule, s'étant approchée, se jeta à ses pieds et lui demandait la guérison de son père ; elle, lui ayant imposé les mains, pria Dieu, puis elle releva son père ; ses

Եւ թողեալ զթագաւորութիւնն իւր եկն եւ բնակեցաւ առանձինն յաշտարակն զոր շինեաց դստերն իւրոյ : Եւ կալաւ զթագաւորութիւն աշխարհին այնմիկ այր մի յօտար աշխարհէ Սեդեկոս անուն :

Եւ յոյժ նեղեաց զսրբուհին Իրինէ զի ուրասցի զՔրիստոս. եւ յորժամ ոչ կարաց դարձուցանել՝ կախեաց զնա գլխիվայր ի խոր գուբ մի, յորում էին օձք եւ թունաւոր սողունք, եւ էր ի կախաղանի աւուրս չորս. եւ հրեշտակ Տեառն պահեաց զնա ամբողջ եւ անարատ : Սղոցեցին * զոտսն եւ Աստուծոյ շնորհիւն ոչ ինչ վնասեցաւ : Էջ յերկնից * A fol. 347 v° a. կարկուտ եւ մեռան յանհաւատիցն երեսուն հազար անձն : Եւ կապեցին յանիւ ջրաղացի, եւ ջուրն արգելաւ. եւ հաւատացին յաւուրն յայնմիկ ոգիք իբրեւ ութ հազար : Կամէր թագաւորն դեռ եւս զաղախինն Քրիստոսի չարչարել եւ ժողովեցան քաղաքացիքն եւ փախուցին զթագաւորն ի քաղաքէն, եւ երթեալ յերկիր իւր մեռաւ :

Եւ Սիբար որդին իւր հարիւր հազար զօրօք գնաց պատերազմել ընդ քաղաքն Մակեդայ յորմէ զհայրն իւր փախուցին : Եւ եկեալ ընդ առաջ նորա սրբուհի կոյսն

2 աշխարհին] քաղաքին B || 3 անուն] իսկ սրբուհին Իրինեա առաքելուհի եղեալ քարոզէր զՔրիստոս, եւ զմոլորեալսն դարձուցանէր ի հաւատս ճշմարտութեան, զոր կալեալ Սեդեկոս *add.* B || 4 զսրբուհին Իրինէ] զնա B — զՔրիստոս] եւ դարձցի ի պաշտօն կռոց *add.* B || 6-10 եւ հրեշտակ . . . դեռ եւս] եւ Աստուծոյ շնորհիւն ոչ ինչ վնասեցաւ. զոր տեսեալ անհաւատից բազումք հաւատացին ի Քրիստոս : Ապա հրամայեաց թագաւորն եւ ետ կախել զաղախինն Քրիստոսի յանիւ ջրաղացի, եւ կամէր դեռ եւս B || 10 քաղաքացիքն] եւ ամբոխ արարեալ *add.* B || 11 մեռաւ] վախճանեցաւ B || 12 հարիւր . . . գնաց] զօր բազում գումարեալ եկն B || 13 փախուցին] հալածեցին B — եկեալ] եւ B.

mains avaient été guéries; il crut en Dieu, lui et mille autres personnes avec lui, et ils se firent baptiser. Il abdiqua la royauté et vint habiter seul la tour qu'il avait construite pour sa fille. La souveraineté sur ce pays passa aux mains d'un homme d'un pays étranger et dont le nom était Sédéeus.

Celui-ci poursuivit beaucoup sainte Irène pour qu'elle reniât le Christ; puis quand il se vit impuissant à la faire revenir sur son dessein, il la fit suspendre la tête en bas dans un puits profond où se trouvaient des serpents et des reptiles venimeux. Elle resta ainsi pendue quatre jours, mais l'ange du Seigneur la conserva intacte et pure. On lui scia* les pieds, mais par la grâce * A fol. 347 v° a. de Dieu elle n'en eut aucun mal. Une grêle tomba du ciel et trente mille personnes parmi les infidèles trouvèrent la mort. On l'attacha à la roue d'un moulin à eau, mais l'eau fut arrêtée et ce jour-là huit mille personnes environ se convertirent. Le roi voulait encore torturer la servante du Christ, mais les habitants de la ville se rassemblèrent et forcèrent le roi à s'enfuir de la ville; et, étant allé dans son pays, il y mourut.

Sibar, son fils, à la tête de cent mille (hommes) de troupes, alla livrer bataille à la ville de Makédas d'où on avait chassé son père. La vierge sainte Irène alla

Երինէ, արար ընդդէմ զնշան տէրունական խաչին, եւ առժամայն կուրացաւ Սիբար եւ ամենայն զօրապետք զօրացն. եւ երթեալ անկան յոտս նորա եւ աղաչեցին զնա, եւ նա աղօթիւք եբաց զաչս նոցա, եւ հաւատացին ի Քրիստոս անձինք երեսուն հազար : Իսկ Սիբար եկաց անհաւատութեամբ իւրով, եւ հրեշտակ Տեառն սատակեաց զնա :

Եւ կոյս աղախինն Քրիստոսի ուսուցանէր քաղաքացեացն զբանն Աստուծոյ, եւ բժշկէր աղօթիւք զհիւանդս : Եւ կնոջ մի միամօր որդի յարոյց ի մեռելոց :

Եւ առեալ զքահանայն Տիմոթեա, ելեալ յաշտարակն առ հայր իւր եւ մկրտեաց զնա : Եւ իջին ի քաղաքն եւ մկրտեցին ի քաղաքացեացն անձինք յիսուն հազար

* A f. 1.247 v° b. երեք հարիւր եւ երեք եւ հաստատեցին * զնոսա ի ճշմարիտ հաւատն Քրիստոսի :

Գնացին առ նա երկու չարաչար բորոտք եւ խնդրէին զբժշկութիւն. եւ հրամայեաց նոցա երթալ երիցս անգամ ի բղխեալ ջուրն լուանալ եւ այնպէս արարեալ բժշկեցան :

Եւ թողեալ զքաղաքն սրբուհին Երինէ գնաց յայլ քաղաք որ կոչի Կալինիկիա, եւ

1 Երինէ] հանդերձ հաւատացելովք քաղաքին. եւ իբրեւ մերձ եղեն աղօթեաց առ Աստուած եւ *add.* B || 1-6 եւ առժամայն ... մեռելոց] եւ անկաւ ի վերայ նոցա մէգ եւ մառախուղ եւ կալեալ եղեն աչք նոցա եւ ոչ կարէին տեսանել զմիմեանս, եւ առ տեղեաւն զեռալ սկսան : Եւ Սիբար հարեալ յանհերեւոյթ զօրութենէ սատակեցաւ անդէն : Եւ բազումք ի թշնամեաց ի միտ առեալ զօրանչելին հաւատացին ի Քրիստոս, եւ եկեալ անկան յոտս սրբոյ կուսին : Իսկ աղախինն Քրիստոսի դարձաւ ի քաղաքն փառաւորելով զԱստուած, եւ ցուցանէր ամենեցուն զճանապարհն փրկութեան. եւ բժշկէր աղօթիւք զհիւանդս B || 7 ելեալ] գնաց B || 8 իջին] իջեալ B — անձինք ... երեք] զբազումս B || 10 հրամայեաց] եւ կոյսն աղօթս արար ի վերայ նոցա եւ ասաց B || 11 բղխեալ ջուրն] գետն.

au-devant de lui, fit contre lui le signe de la croix du Seigneur et Sibar devint aussitôt aveugle, ainsi que tous les chefs des troupes; ils vinrent se jeter aux pieds (de la vierge), la supplièrent, et elle leur rendit la vue par ses prières. Trente mille personnes crurent au Christ. Mais Sibar demeura dans son infidélité et l'ange du Seigneur l'extermina.

La vierge servante du Christ enseignait aux habitants de la ville la parole de Dieu et guérissait les malades par ses prières. Elle ressuscita d'entre les morts le fils unique d'une femme.

Elle prit avec elle le prêtre Timothée, monta à la tour chez son père et le fit baptiser. Ensuite ils descendirent à la ville et baptisèrent parmi les habitants

* A fol. 247 v° b. de la ville cinquante mille trois cent trois personnes et les confirmèrent * dans la vraie foi du Christ.

Deux lépreux affreusement affligés allèrent la trouver et ils lui demandaient leur guérison. Elle leur ordonna d'aller se baigner trois fois dans l'eau jaillissante; ce qu'ayant fait, ils furent guéris.

Sainte Irène quitta cette ville et se rendit dans une autre ville appelée

անուն արքային Նումերիանոս. եւ անդ սկսաւ քարոզել զՔրիստոս եւ խորտակել զբագինսն : Կալան զնա քաղաքացիքն եւ տարան զնա յերիս պղնձի ցուլս հրացեալս. եւ մտեալ ի մինն ոչ այրեցաւ. եմուտ եւ յերկրորդն եւ ոչ այրեցաւ. ապա ածին զնա յերրորդն, եւ արար Աստուած մեծ սքանչելիս, եւ մինչդեռ ի մէջ ցլոյն էր Երինէ՝ գնաց ցուլն ոտիւքն որպէս կենդանի, եւ մտեալ ի մէջ ամբոխին, եւ էր որպէս հուր ջեռուցեալ, հերձաւ եւ ապա ել որոջն Քրիստոսի ամբողջ եւ անկիզելի. եւ հաւատացին յայնմ ժամու անձինք հազար :

Եւ թագաւորն յերկեղէն չարաչար հիւանդացաւ, եւ ի մահուանն իւրում պատուիրեաց եպարքոսի քաղաքին զի չարաչար տանջեսցէ զաղախինն Քրիստոսի. եւ նոյնժամայն սատակեցաւ : Եւ եպարքոսն ծանր շղթայիւք կապեաց զնա եւ ի հուր ընկէց. եւ հրեշտակ Տեառն եհան զնա ի հրոյն, եւ հաւատացին ի Քրիստոս եպարքոսն եւ այլ բազումք ընդ նմա :

Եւ այր մի պարսիկ որոյ անուն * էր Զոփիլ եհատ զգլուխ սրբոյն Երինի, եւ * A fol. 248 r° a.
հրեշտակ Տեառն կենդանացոյց զնա : Եւ ասէ հրեշտակն. Երանի է քեզ Երինէ՝ զի

2-9 եւ տարան ... քաղաքին] եւ տարան առ թագաւորն, հրամայեաց եւ տանջեցին զերանելին ի մէջ հրացեալ ցլու, եւ որոջն Քրիստոսի ոչ վնասեցաւ. զայն տեսեալ բազումք հաւատացին ի Քրիստոս : Եւ եղեւ հիւանդանալ թագաւորին եւ կոչեաց զեպարքոսն քաղաքին եւ պատուիրեաց B || 11 եւ հրեշտակ ... հրոյն] եւ ի շիջանել հրոյն ել կայր անվնաս B || 13 — p. 1437, l. 4 Եւ այր մի ... շահեմարանք նոցա] Եւ հրեշտակ Աստուծոյ երեւեալ ի տեսլեան Երինեայ եւ մխիթարեաց զնա եւ ասէ. Երանի է քեզ Երինէ զի բազում վարձք են քո B.

Kalinikia, dont le roi avait nom Numerianus. Elle se mit à y prêcher le Christ et à briser les autels. Les habitants de la ville se saisirent d'elle et la conduisirent à trois taureaux de bronze embrasés. Elle entra dans l'un et ne fut point brûlée; elle entra dans le deuxième et ne fut pas brûlée non plus; on la conduisit ensuite au troisième et Dieu fit un grand prodige, car pendant qu'Irène se trouvait dans le taureau, le taureau se mit en marche avec ses pieds, comme s'il était vivant, et pénétra au milieu de la foule; il était chauffé à blanc comme du feu; il éclata et la brebis du Christ en sortit intacte et sans brûlure. A l'instant même mille personnes se convertirent.

Le roi tomba gravement malade de crainte et, au moment de sa mort, il donna l'ordre à l'éparque de la ville de torturer cruellement la servante du Christ; il fut exterminé sur-le-champ. L'éparque fit attacher (Irène) avec de lourdes chaînes et la fit jeter dans un feu, mais l'ange du Seigneur la sortit du feu; l'éparque et beaucoup d'autres avec lui crurent au Christ.

Un Persan, dont le nom * était Zophil, trancha la tête de sainte Irène, mais * A fol. 248 r° a.
l'ange du Seigneur la rendit à la vie. L'ange lui dit : « Tu es heureuse, Irène, car ta récompense est multiple; heureux ceux qui ont cru au Christ; heureux

բազում վարձք են քո. երանի այնոցիկ որ հաւատացին ի Քրիստոս. երանի այնոցիկ որ կատարեն զյիշատակս քոյ եւ գրեն զվկայութիւնս քոյ, եւ որք շինեն յանուն քո խորան, տացի նոցա տաճար յարքայութեանն Աստուծոյ եւ որք պտղաբերեն զընծայս անուանդ քոյ՝ ամենայն բարութեամբ լցցին շտեմարանք նոցա ։

Եւ առեալ Իրինի ի ձեռս իւր ոստս ձիթենեաց գնաց ի մէջ քաղաքին եւ օրհնեաց զԱստուած. եւ հաւատացին ի Քրիստոս հազար անձն, եւ մկրտեցան ի ձեռաց Տիմոթէի քահանայի ։ Եւ դարձաւ ի քաղաքն իւր Մակեդեայ, եգիտ զհայրն իւր մեռեալ եւ արտասուեաց ։ Եւ հրաժարեալ ի մօրէն՝ ել ի քաղաքէն, եւ իջեալ ամպ վերացոյց զնա յօդս, եւ տարաւ յԵփեսոս քաղաքն. եւ անդ բազում սքանչելիս արար ի հիւանդս եւ ի դիւահարս, եւ ընդունէին զնա իբրեւ զմի յառաքելոցն ։

Գնաց առ նա վարդապետն իւր Ամպելիանոս, եւ ա՛ռ զնա սուրբն Իրինի եւ այլ վեց այր երկիւղած յԱստուծոյ, ելին արտաքոյ քաղաքին, գտին տապան յորում ոչ ոք էր եդեալ ։ Եւ մտեալ կոյսն տարածեցաւ ի մէջ տապանին եւ հրամայեաց ծանր սալ
* A fol. 248 r° b. դնել ի վերայ, եւ զնոսա յուղարկեաց եւ պատուիրեաց յետ * չորից աւուրց գալ առ նա ։ Եւ յորժամ գնացին գտին զտապանն ի բաց եւ զմարմինն ոչ գտին. եւ գիտացին

1 լցաւ *om.* B || 2 կանայք] աղայօք *add.* B || 6 հայրապետն] Երուսաղէմի *add.* B || 7 պատճէնն] պատճէանն B || 7 վարդապետութեան իւրոյ ։] Եւ արդ՝ ո՞ր բերան բաւական իցէ պատմել զզօրութիւն ամենապայծառ խաչին. զի խաչին կապանքն մեր անխզեցան որ ի ձեռն յանցանացն՝ լուծան. նախահայրն մեր փրկեցաւ. ախեղերք ապառեցան ի ծառայութենէ սատանայի ։ Խաչին զմեղ ի խաւարային գնացիցն լուսաւորեաց, ի խոտորեալ կռապաշտութեանցն դարձոյց, զցրուեալն ժողովեաց, զվարատեալն միաւորեաց, եւ արար քաղաքակից եւ ընտանիս Աստուծոյ ։ Եւ արդ ո՞ր բերան բաւական իցէ պատմել զզօրութիւնն սորա խաչին. զի զայս խաչ մարգարէքն իբրեւ զպատրուակաւ քարոզեցին, առաքեալքն խաչին պարծէին, մարտիրոսքն նովաւ պսակէին, ուխտաւորքն ի նա ապաւինէին, եւ ամենայն արդարքն նովաւ փառաւորէին ։ Քանզի զայս խաչ կենարար՝ Հրէից յիմարութիւն ճանաչեմք, եւ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ, մեղաւորաց թողութիւն, արդարոց ամրութիւն, կեցուցիչ կենդանեաց, եւ հանգուցիչ մեռելոց, եւ պահապան ամենայն աշխարհի ։ Այս խաչ՝ որք հաւատով ապաւինին ի նա, զմեղս ամենայն յանցանացն քաւէ, զախտս զխոց հալածէ, զհիւանդութիւնս բժշկէ, զմահս տարաժամս տարածեալս դադարեցուցանէ, զցասումն բարկութեանն արգելու, զզօրութիւնս երկնայինս առաքէ, զպտուղս անդաստանաց բազմացուցանէ ։ Այս խաչ կենարար՝ որք հաւատով ապաւինին ի նա, ի յորձանաց զեռոց ապրեցուցանէ, ի ժանեաց գազանաց փրկէ, ի բռնութենէ իշխանաց ազատէ, եւ յամենայն փորձից զերծուցանէ ։ Այս խաչ կենարար՝ զպաշտօնեայս իւր պահէ, զքահանայս պատուէ, զթագաւորս շքեղացուցանէ, զեկեղեցիս լուսաւորէ, եւ աշխարհի շինութիւն շնորհէ ։ Այս խաչ կենարար ամենեցուն քաւէ, զամենեսեան լուսաւորէ եւ լցուցանէ եւ պայծառացուցանէ երկնաւոր պսակօք ։ Եւ արդ՝ ո՞ր բերան բաւական

viers. Devant la clarté de la lumière les rayons du soleil s'éclipsèrent. Tous furent remplis d'une grande joie. Vieillards et jeunes hommes, femmes et enfants, coururent à l'église avec de grandes actions de grâces, et avec allé-
* A fol. 253 r° b. gresse * ils rendirent gloire à Dieu pour le grandissime miracle qu'Il avait fait en faveur des chrétiens, et pour la honte dont il avait confondu le peuple infidèle des Juifs, qui à cette vue prirent la fuite et se cachèrent dans leurs maisons.

Le bienheureux patriarche Cyrille écrivit à l'empereur Constance l'apparition de la Croix adorable du Christ; la copie faite sur cette lettre se trouve dans les livres de sa doctrine[1].

1. Migne, *P. G.*, XXXIII, 1165-1178.

[B * Յայսմ աւուր յիշատակ սրբոյն Փիլիկտիմոնի եւ տղայոյն եւ Ռուսինայ կնոջն եւ երկու որդւոցն ։ * B p. 205 b.

Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս առաքինի եւ իմաստուն պատուելի քահանայն Ներսէս որդի թագաւորին Հայոց Լեւոնի ։]

կցէ պատմել զզօրութիւն խաչին, զի խաչիւն սրբին սեղանք մեր սրբութեամբ, օրհնի պատարագ մեր հաշտութեամբ, կնքի մկրտութիւն մեր քաւարար, հաստատի աւարտումն քահանայութեանն, կատարին աղօթք մեր սրբարարք, լուսաւորեալ պայծառանան ամենայն եկեղեցիք Քրիստոսի ։ Եւ արդ որպիսի՞ զօրութիւն եւ կամ ո՞րչափ փառաբանութիւն առաքեսցուք բազմազօր մարդասիրութեանն Աստուծոյ, որ ոչ միայն ստեղծ զմեզ ի հողոյ՝ այլ շնչով կենդանացոյց, եւ զամենայն լիութիւն պարգեւեաց որդւոց մարդկան, եւ ի ձեռն խաչին յերկին ի վեր արար ճանապարհ ։ Ի ձեռն խաչին զդրախտն եբաց, յարութիւն խոստացաւ, զարքայութիւնն պարգեւեաց ։ Ի ձեռն խաչին՝ մարդիկ ընդ հրեշտակս խառնեցան, եւ հողեղէնք ընդ հոգեղէնս պատուարեցան. եւ այս ամենայն բարեաց խաչն եղեւ պատճառ ։ Արդ՝ եկայք ամենեքեան փութասցուք զտօն սուրբ խաչիս յօրինել, եւ զյիշատակն կատարել աստուածային ընծայիւք՝ օրհնութեամբ եւ գոհութեամբ եւ անդադար փառաբանութեամբ ։ Ի ձեռն սրբոյ խաչին փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, ամէն ։ *add.* B.

[B * En ce jour commémoration de saint Philiktimon et de son enfant, de la femme Roussine et de ses deux fils. * B p. 205 b.

En ce même jour reposa dans le Christ le vertueux et sage révérend prêtre Nersès, fils du roi d'Arménie Léon.]

NOTES ADDITIONNELLES

I. — Traduction du texte arménien, page 348, variantes, ligne 3.

Après la vivifiante passion de Notre-Seigneur Jésus-Christ, sa divine résurrection, son ascension glorieuse auprès du Père au ciel, ses saints apôtres et ses bienheureux disciples, qui furent des témoins oculaires de tout, parcoururent, sur l'ordre du Saint-Esprit, l'univers entier pour dissiper les ténèbres de l'idolâtrie par la lumière de l'évangile. Aussi Pierre, arrivé à Rome, avait avec lui son disciple et compagnon de route, le bienheureux apôtre Marc, qui était le fils de ce chef des apôtres, aimé par lui dès son baptême, ainsi qu'il l'écrit : *Marc, mon fils, vous salue*[1]. Cet apôtre digne de tous les éloges et évangéliste, Marc, était de la nation juive, de la race des prêtres de Lévi et fils de la sœur du saint apôtre Barnabé. Lorsque saint Barnabé fut martyrisé en Chypre, Marc, qui jusqu'alors voyageait avec Barnabé et Paul et les servait, en tant que disciple, dans l'évangile, vint auprès du saint apôtre Pierre. Il était, comme nous l'avons dit, son fils d'après le nouveau baptême; il devint son disciple et voyagea avec lui en le servant, avec obéissance dans l'œuvre de l'évangélisation. C'est ainsi qu'en prêchant la parole de Dieu il arriva avec Pierre à Rome. Il était tellement rempli de toutes sortes d'excellentes qualités, que l'éloge dépasse toute expression, car, instruit par Paul, après s'en être séparé, il fit disparaître avec une extrême énergie toute trace d'inactivité de sa personne. Il possédait avant tout une douceur soumise et une humilité

1. Épitre de Saint Pierre, v, 13.

d'esprit, et, en restant auprès de Pierre dans la principale des villes, Rome, tous deux, par divers miracles et par l'enseignement de tous les jours, convertirent de nombreuses gens à la foi du Christ et réfutèrent l'erreur de Simon. Après que Pierre et Marc y furent restés quelques jours, et y eurent semé abondamment la parole de Dieu, Pierre sacra Marc évêque d'Alexandrie d'Égypte et l'y envoya. Il s'y rendit, parcourut en prêchant l'évangile tout le pays d'Égypte, la Libye, les Barbares, la Pentapole, Marmarika, Amoniacon et la Phénicie et d'autres provinces environnantes, aux jours (de Tibère)...

II. — Traduction du texte arménien, page 351, variantes, ligne 5.

Les fidèles, enhardis par la puissance de Dieu, allèrent retirer des flammes le corps entier du saint et le transportèrent à l'endroit où il avait toujours prié et prêché, puis ils l'inhumèrent avec parfums et encens en grande solennité dans un tombeau creusé dans le rocher du côté est de la ville. L'apôtre et l'évangéliste du Christ, Marc, qui fut prêtre et martyre, et le premier dans Alexandrie, fut martyrisé le 18 ahékan, le 25 avril, le trentième jour du mois des Égyptiens et le seizième du mois des Hébreux, après que cinquante-trois ans s'étaient écoulés depuis l'incarnation du Christ.

D'aucuns disent que sa mort eut lieu aux jours des empereurs Gaïus et Julius; d'autres la huitième année de l'empereur Néron; mais il fit sa prédication aux jours de l'empereur Tibère. Les apôtres l'ont appelé évangéliste parce qu'il a écrit l'évangile selon son nom d'après les paroles et les récits du saint apôtre Pierre.

Saint Marc était de taille moyenne, pas trop haut ni trop grand ni trop petit ni trop ramassé, mais bien proportionné, bien fait et d'une taille parfaite. Il commençait à blanchir, sans paraître trop vieux, vieilli plutôt de corps que de figure. Il avait un beau visage, un nez long et droit avec des narines développées qui ne l'écrasaient pas et pleines de finesse; il avait seulement la tête grosse, les cheveux bien disposés, mélangés de blancs, un beau regard droit, des sourcils épais, rapprochés, de grands yeux, un front large, avec un commencement de calvitie, une barbe fournie, serrée, pas trop courte ni trop longue, le teint couleur de blé; il mangeait très peu.

De son caractère il était miséricordieux, compatissant avec tous ceux qu'il rencontrait. Il parlait bien, était conciliant, d'humeur gaie et d'un accueil facile, plein des grâces de Dieu : les grâces du Saint-Esprit brillaient en sa personne. Son âme était remplie de toutes sortes de bonnes qualités, au point que la grâce qui émanait de sa personne était l'indice des vertus de son âme.

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE

TER ISRAEL

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le Dr G. BAYAN

X

MOIS DE MARÉRI

A = Paris, Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 253 verso à fol. 276.

B = Édition officielle du Synaxaire arménien de
Ter Israël de Constantinople, 1834 :

*Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց
Տէր Իսրայէլի : Կոստանդնուպօլիս,* 1834 :

L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

Մարերի Ա եւ Մայիս Ը ։ Յիշատակ սուրբ Յովհաննու առաքելոյն եւ աստուածաբան աւետարանչին յօրն յորում բղխէ տապանն զմանանայն ։

Յովհաննէս աշակերտն Քրիստոսի՝ որդի էր Զեբեդեայ. եւ Սողոմի մայրն իւր դուստր էր Յովսեփայ անուանելոյն այր Մարիամայ աստուածածնին ։ Յովսէփ չորս որդիս ունէր. զՅակոբոս, զՍիմոն, զՅուդա եւ զՅովսի ։ Ունէր եւ երիս դստերս. զԵսթեր, զՄարթա եւ զՍողոմի որ էր կին Զեբեթեայ եւ մայր Յակոբայ եւ Յովհաննու ։ Եւ վասն այնորիկ էր Փրկիչն քեռի Յովհաննու՝ որպէս եղբայր Սողոմեայ դստերն Յովսեփայ. եւ որպէս որդիքն Յովսեփայ եղբարք անուանին Քրիստոսի, նոյնպէս եւ դստերքն քորք ։

Եւ Յիսուս միայն զՊետրոս մկրտեաց ձեռօք իւրովք, եւ Պետրոս զԱնդրէաս զեղբայրն իւր, եւ Անդրէաս զՅակոբոս եւ զՅովհաննէս, եւ Յակոբոս եւ Յովհաննէս զայլ առաքեալսն ։

Եւ յորժամ զՅիսուս կալան ամենեքեան * փախեան, բայց միայն Յովհաննէս եկաց * A fol. 253 v° a.
առ նմա. եւ ի խաչին նա միայն էր, եւ ի գերեզմանն նախ քան զՊետրոս նա ընթացաւ.

1 Յիշատակ] եւ տօն *add.* B || 2 զմանանայն] եւ յիշատակ Տեղեանն *add.* B || 10-13 Եւ Յիսուս ... առաքեալսն *om.* B.

I MARÉRI, 8 Mai.

Commémoration de saint Jean, apôtre, l'évangéliste théologien, au jour où sa tombe émet de la manne.

Jean, disciple du Christ, était fils de Zébédée; sa mère Salomé (*Soghoemi*) était fille de Joseph, surnommé l'époux de Marie, Mère de Dieu. Joseph avait quatre fils : Jacques, Simon, Jude et Osée (*Horsi*). Il avait également trois filles : Esther, Marthe et Salomé, qui fut l'épouse de Zébédée et la mère de Jacques et Jean. C'est pourquoi le Sauveur était l'oncle maternel de Jean, en tant que frère de Salomé (*Soghoma*), fille de Joseph ; car de même que les fils de Joseph sont appelés frères du Christ, de même les filles (sont appelées) ses sœurs.

Jésus ne baptisa que Pierre de ses propres mains, Pierre (baptisa) son frère André, André (baptisa) Jacques et Jean, et Jacques et Jean (baptisèrent) les autres apôtres.

Lorsqu'on eut saisi Jésus, tous * s'enfuirent, excepté Jean qui resta seul * A fol. 253 v° a.
auprès de Lui ; il était également seul à la crucifixion, et c'est lui qui accourut

եւ յետ յարութեանն զԱստուածածինն առ ի տուն իւր մինչեւ ննջեաց ։ Եւ սա միայն գտաւ յերկրի երիս մայրս ունելով. մին՝ Սողոմի որ ծնաւ զինքն, եւ միւս՝ Որոտման որդի ըստ բանի Տեառն, եւ երրորդ՝ Աստուածածինն որպէս եւ ասաց Տէր ի խաչին. Ահա մայր քո ։ Եւ զամենասրբուհի Աստուածածինն Պետրոս եւ Յովհաննէս մկրտեցին ։ Եւ վասն Քրիստոսի գալստեանն ի ննջումն Աստուածածնին սա գրեաց ։ Եւ գնաց յԵփեսոս եւ զտաճար կռոցն Արտեմիդոսի աղօթիւք կործանեաց, եւ քառասուն հազար անձն որք պաշտէին զկուռսն ազատեաց եւ դարձոյց յաստուածպաշտութիւն ։

Յայսմ աւուր յիշատակ է Արսենի մեծի անապատականի ։

Երանելին Արսէնիոս էր մեծ իշխան Թէոդոսի մեծի արքային, յոյժ հանճարեղ եւ իմաստուն. եթող զամենայն եւ կրօնաւորեցաւ, եւ առաքինի վարուք եղեւ մեծ ճգնաւոր ։

Եւ յորժամ մեռանէր Թէոդոս թագաւորն արար զնա թագաւորահայր, եւ յանձնեաց ի նա զերկուս զորդիս իւր * զԱրկադէոս եւ զՈնորիոս փոքր պատանեակս ։ Եւ

* A fol. 253 v° b.

1-5 Եւ սա միայն... մկրտեցին *om.* B || 7 յաստուածպաշտութիւն] յաստուածգիտութիւն B || 9 յիշատակ... անապատականի] տօն եւ հանգիստ սուրբ եւ մեծ հօրն մերոյ եւ ճգնաւոր հօրն հարանց Արսենիոսի երանելոյ սինկելոսին B || 11 եւ առաքինի... ճգնաւոր *om.* B.

le premier au tombeau avant Pierre ; après la résurrection, il prit chez lui la Mère de Dieu jusqu'à sa dormition. Il fut le seul sur la terre qui eut trois mères : d'abord Salomé (*Soghormi*) qui le mit au monde, ensuite (comme) fils du Tonnerre selon l'expression du Seigneur, troisièmement la Mère de Dieu comme le Seigneur le lui dit sur la croix : *Voici votre mère*[1]. Pierre et Jean baptisèrent la très sainte Mère de Dieu; mais c'est ce dernier qui écrivit au sujet de la venue du Christ à la dormition de la Mère de Dieu. Il se rendit à Éphèse et démolit par ses prières le temple de l'idole Artémis (*Artémidosi*), délivra les quarante mille personnes qui adoraient l'idole et les convertit au culte de Dieu.

En ce jour commémoration du grand anachorète Arsène (*Arseni*).

Le bienheureux Arsène (*Arsenios*) était un grand prince de l'empereur Théodose le Grand, très intelligent et sage, qui, abandonnant tout, se fit moine et devint un grand ascète d'une vie pleine de vertus.

L'empereur Théodose, sur le point de mourir, le proclama régent et lui confia ses deux fils * Arcadius (*Arkadēos*) et Honorius (*Onorios*), encore jeunes

* A fol. 253 v° b.

1. Jean, XIX, 27.

անոյց զնոսա բարեպաշտութեամբ մինչեւ եղեն չափահասակք. եւ թագաւորեցին Ոնո-րիոս ի Հռոմ եւ Արկադէոս ի Կոստանդնուպօլիս :

Եւ Արսէնիոս դարձաւ ի Հռոբոմ, եւ ուխտէր իւր որ յամենայն շաբաթ օր ի տասներորդ ժամուն յայգ կիւրակէ թողոյր զշող արեգականն ի թիկունս իւր, եւ ինքն կանգնեալ կայր յարեւելս՝ զձեռսն եւ զաչսն յերկինս ունելով սաղմոսէր արտասուօք եւ ոչ նստէր եւ ոչ զաչսն եւ զձեռսն իջուցանէր մինչեւ յառաւօտն : Եւ յորժամ ծագէր արեգակն զճառագայթս իւր յերեսս նորա, յայնժամ իջուցանէր զձեռս իւր եւ նստէր :

Ասէր երանելին Արսէնիոս. Ամենայն չար որ ոչ կատարի՝ չէ չար, եւ ամենայն բարի որ ոչ կատարի՝ չէ բարի : Նոյնպէս եւ մեղք եւ արդարութիւն թէ ոչ կատարին՝ ոչ ինչ են : Մարդ որ ոչ ունիցի ի միտս իւր խորհուրդ բարի եւ չար՝ նման է երկրին Սոդոմայ եւ Գոմորայ, քանզի ամլացեալ է եւ ոչ փուշ ունի ի նմա եւ ոչ խոտ դալար, իսկ ի բարի երկիր բուսանի ցորեան եւ որոմն. եւ ամենայն որ քան զչափն աւելի է՝ դիւական է : Բարի է երթալ ընդ արքունական պողոտան եւ մի յաջ խոտորիլ եւ մի յահեակ :

Ասացին ծերքն ընդ Արսէնիոս. Ընդէ՞ր ոչ * աղաչես զԱստուած եւ հանես զգեւս * A fol. 254 r° a.

enfants. Il les éleva pieusement jusqu'à ce qu'ils devinrent adultes; puis Honorius régna à Rome et Arcadius à Constantinople.

Arsène retourna à *Hrobom*[1], fit vœu que tous les samedis à partir de la dixième heure jusqu'à l'aube du dimanche, laissant les rayons du soleil derrière son dos et se tenant face à l'orient, les mains et les yeux élevés vers le ciel, il psalmodierait les larmes aux yeux, sans s'asseoir ni baisser les yeux et les mains. Et lorsque le soleil levant dardait ses rayons sur son visage, alors il abaissait ses mains et s'asseyait.

Le bienheureux Arsène disait : « Tout mal non accompli n'est pas mal, et tout bien non accompli n'est pas bien. De même le péché et la justice non accomplis ne sont rien. L'homme qui ne produit pas dans sa pensée une idée bonne et mauvaise, ressemble à la terre de Sodome et de Gomorrhe, car elle est stérile et il n'y pousse ni épine, ni herbe tendre; tandis que dans une bonne terre il y pousse du blé et de l'ivraie. Tout ce qui est au-dessus de la mesure est diabolique. Il est bon de suivre la route royale et de ne point s'écarter à droite ou à gauche. »

Des vieillards s'entretinrent avec Arsène : « Pourquoi * ne pries-tu point * A fol. 254 r° a.

1. Mot qui semble dépourvu de sens. Arsène se rendit en Égypte, cf. H. DELEHAYE, *Synaxarium Constantinopolitanum* dans *Propylæum ad Acta SS. novembris*, col. 663-6. *Syn. Cp.* porte Αἴγυπτον; *Syn. sel.* Ἀλεξάνδρειαν et Σκήτει. Le synaxaire arménien donne, pour la suite, la légende de *Syn. sel.;* mais on ne voit pas comment s'est formée la leçon Hrobom.

ի մարդկանէ, եւ աղօթիւք զհիւանդս բժշկես որպէս եւ այլ ճգնաւոր հարքն ։ Ասէ Արսէնիոս· Ես աղաչեմ զԱստուած որ յիս դեւք ոչ մտցեն, եւ աղօթեմ որ զհիւանդութիւն հոգւոյս իմոյ բժշկէ ։

Հարցին ծերքն զԱրսէնիոս եթէ Երկու արք էին, մինն աբեղայ եւ միւսն աշխարհական ։ Խորհեցաւ աբեղայն զի վաղիւն ձգեսցէ զկարգ աբեղայութեանն եւ լինիցի աշխարհական, եւ խորհեցաւ աշխարհականն՝ զի վաղիւն լինիցի աբեղայ. եւ ի գիշերին յայնմիկ մեռան երկոքեանն ։ Արդ յո՞ր կարգի իցեն աբեղայն եւ աշխարհականն ։ Ասէ Արսէնիոս. Աբեղայն մեռաւ որպէս աբեղայ, եւ աշխարհականն որպէս աշխարհական, զի որպէս գտան ի ժամ մահուն այնպէս եւ գնացին ։

Եւ հանգեաւ սուրբ ճգնաւորն Արսէնիոս Մայիսի Ը ։

Յայսմ աւուր յիշատակ Սմբատայ Հայոց թագաւորին ։

Առաջին թագաւորն Հայոց յազգէն Բագրատունեաց եղեւ Աշոտ, որ յառաջ իշխանաց իշխան էր ։ Եւ իշխանն Իսմայելի Աբդլա առաքեաց նմա թագ ի ձեռն Յուսփայ զօրավարին իւրոյ ։ Եւ լուեալ արքայն Յունաց Վասիլ առաքեաց եւ նա թագ

10 Մայիսի Ը] եւ գնաց առ Քրիստոս *add.* B || 11 յիշատակ] ի Հայք վկայութիւն B || 13 Իսմայելի] Հագարացւոց B || 14 Վասիլ] կայսր *add.* B.

Dieu pour chasser les démons des hommes et guérir, par tes prières, les malades comme le font d'autres pères ascètes? » Arsène répondit : « Moi, je prie Dieu pour que les démons n'entrent pas en moi, et je Le prie de guérir les maladies de mon âme. »

Des vieillards interrogèrent Arsène : « Il y avait deux hommes, dont l'un était religieux et l'autre laïc. Le religieux songeait à quitter l'état religieux le lendemain et à se faire laïc, et le laïc songeait à se faire religieux le lendemain, mais tous deux moururent dans la même nuit. Dans quel état se sont-ils donc trouvés, le religieux et le laïc? » Arsène répondit : « Le religieux est mort comme religieux et le laïc comme laïc, car ils sont partis comme ils se sont trouvés à l'heure de la mort. »

Le saint ascète Arsène reposa le 8 mai.

En ce jour commémoration de Sembat (*Sempad*), roi d'Arménie.

Le premier roi d'Arménie de la race des Bagratounis fut Ashot (*Asot*), qui était auparavant prince des princes. L'émir musulman[1] Abdallah (*Abdla*) lui envoya une couronne par l'intermédiaire de son général Yousouf (*Yousphay*).

1. Mot à mot : l'émir d'Ismaël. C'était Abou'l-Abbas Ahmad II Almutamid 'ala'llāh (870-892).

Աշոտոյ. եւ պսակեալ նա յերկուց թագաւորացն՝ եղեւ ճոխ թագաւոր, եւ արար խաղաղութիւն եւ շինութիւն աշխարհին Հայոց : * Շինեաց եւ բազում եկեղեցիս փառաւորս, եւ վախճանեցաւ աստուածպաշտութեամբ եւ լի հաւատով : * A fol. 254 r° b.

Եւ յետ նորա թագաւորեաց որդի նորա Սմբատ, հայրենի առաքինութեանցն նմանեալ, այր կատարեալ յամենայն բարեգործութիւնս : Եւ կացոյց ընդ ձեռամբ իւրով թագաւորս Վրաց՝ զԱտրներսեհ, եւ Եգերացւոց՝ զԿոստանդին. եւ կայր խաղաղութեամբ եւ աստուածպաշտութեամբ :

Ընդ այն ժամանակս զօրավարն Իսմայելի Աֆշին՝ որդին Աբուսաճի՝ եղբայր Յուսփայ, ապստամբեաց յամիրապետէն իւրմէ եւ կուտեաց զօրս ի վերայ նորա, եւ առաքեաց առ Սմբատ թագաւորն օգնել նմա. նոյնպէս եւ ամիրապետն առաքեաց առ Սմբատ թագաւորն եւ խոստացաւ բազում պարգեւս զի մի օգնեսցէ Աֆշինի : Եւ ի լինել մարտին յաղթեաց ամիրապետն, եւ կալեալ զԱֆշին եդ ի բանդի, եւ պատուիրեաց Սմբատայ մեծամեծ պարգեւս տալ :

Յետ բազում ժամանակաց արձակեցաւ չարն Աֆշին ի կապանաց, եւ կարգեցաւ ի

8 Իսմայելի] Հագարացւոց B || 12 եւ պատուիրեաց... տալ] եւ պատուեաց զՍմբատ մեծամեծ պարգեւօք B.

L'ayant appris, Basile, empereur des Grecs, envoya, lui aussi, une couronne à Ashot. Couronné par les deux rois, celui-ci devint un roi puissant et fit régner la paix et le progrès dans le pays d'Arménie. * Il fit construire beaucoup de belles églises et mourut dans la piété et plein de foi. * A fol. 254 r° b.

Après lui régna son fils Sembat, imitateur des vertus de son père, qui accomplit toutes sortes de bonnes actions. Il installa, sous sa dépendance, Aternerseh roi des Géorgiens et (préposa) Constantin aux Egériens [1]. Il vécut en paix et dans la piété.

A cette époque le général musulman Afchin [2], fils d'Abousadj, frère de Yousouf, se révolta contre son émir, rassembla des troupes contre lui, et envoya demander secours au roi Sembat; mais l'émir envoya de même au roi Sembat en lui promettant beaucoup de présents pour qu'il ne vînt point en aide à Afchin. Le combat s'étant engagé, l'émir obtint la victoire, fit prisonnier Afchin et le mit en prison; puis il ordonna de donner à Sembat beaucoup de présents.

Longtemps après le méchant Afchin fut délivré de ses liens et promu

1. L'Egérie est un district du Lazistan, sur le cours inférieur du Tchorok. — 2. Afchin est un titre donné à certains émirs turcs, cf. *Encyclopédie de l'Islam*, t. I, p. 181. Afchin Haydar Ibn Kawus est cité par les historiens arabes en relation avec l'histoire d'Arménie, mais il n'est pas le frère de Yousouf Ibn Abou Saïd, qui fut gouverneur d'Arménie de 849 à 855 environ.

գործ զօրավարութեան, եւ եկն յաշխարհն Հայոց ի Դուին քաղաք : Եւ առաքեաց առ Սմբատ պատգամ սիրոյ եւ խաղաղութեան, եւ երդմամբ ոչ յիշել զայն զի ոչ օգնեաց նմա, այլ եւ շնորհակալ եւս լինէր զի պահեաց զհաւատութիւն առ ամիրապետն. եւ այսպէս խաբանօք կոչեաց առ ինքն :

* A fol. 254 v° a. Եւ յորժամ չոքաւ մեծարեաց * զառաջինն, եւ ապա ստեալ ամենայն երդմանցն կալաւ եւ եդ ի բանդի եւ չարչարէր ազգի ազգի տանջանօք եւ ստիպէր ուրանալ զՔրիստոս : Եւ նա հաստատուն կացեալ ի հաւատն իւր պաշտէր զՔրիստոս ճշմարիտ Աստուած :

Եւ նոքա սրեալ եղեգունս հարկանէին ընդ առնացի անդամս նորա, եւ հեղոյր արիւնն իբրեւ զառու. եւ զաւուրս ամարայնի պահէին ի բանդին ի Դուին քաղաքն տանջանօք : Եւ ապա հանդերձս կուէին ի բերան նորա, եւ տասն այր անկեալ ի վերայ գլխոյ նորա՝ այնպէս վասն հաստատուն կալոյ նորա ի հաւատն Քրիստոսի խեղդեցին զպատուական թագաւորն, եւ զմարմին նորա կախեցին զպարսպէ քաղաքին, եւ թողին աւուրս բազումս : Եւ լոյս մեծ ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյն նորա, եւ աւիշքն որ կաթէին ի մարմնոյն խառնեալ ընդ հողն լինէր ի բժշկութիւն ամենայն ցաւոց :

10 ամարայնի] ամարայնոյն B || 12 վասն հաստատուն… Քրիստոսի *om.* B || 15 ի բժշկութիւն] բժիշկ B.

aux fonctions de général; il vint au pays d'Arménie, à la ville de Dwin. Il envoya à Sembat un ambassadeur (portant un message) d'affection et de paix, en lui jurant de ne plus se souvenir de ce qu'il ne l'avait pas aidé, et le remerciant même d'avoir su conserver la fidélité envers l'émir. C'est ainsi qu'il l'appela à lui en le trompant.

* A fol 254 v° a. Lorsque (Sembat) se rendit auprès de lui, il * commença par lui rendre tous les honneurs, mais ensuite, parjure à tous ses serments, il le fit saisir, le fit mettre en prison et le soumit à différentes tortures, pour le contraindre à renier le Christ. Mais (Sembat) demeura ferme dans sa foi et servit le Christ vrai Dieu.

On lui enfonça des roseaux aiguisés dans le membre viril et le sang coula à flots; puis il fut gardé en prison à Dwin pendant la saison d'été en le soumettant à de nombreuses tortures. Enfin, on lui enfonça des linges dans la bouche, et dix hommes s'étant jetés sur sa tête étouffèrent l'excellent roi, parce qu'il était resté ferme dans la foi au Christ; on suspendit son corps sur le bastion de la ville et on l'y abandonna pendant plusieurs jours. Mais une grande lumière jaillit sur son saint corps et des gouttes d'humeur, qui suintèrent du corps en se mêlant à la poussière, servirent à la guérison de tous les maux.

Այսպէս նահատակեցաւ սուրբ թագաւորն Սմբատ Մարերի Ա. եւ Մայիսի Ը. եւ կատարի յիշատակ նորա ընդ յիշատակս Յովհաննու աւետարանչին եւ Արսենի մեծի ճգնաւորին, ի փառս Քրիստոսի յաւիտեան :

[B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պարոն Լեւոն եղբայրն պարոնին Թորոսի, այր քաջ եւ առաքինի :] * B p. 207 b.

Մարերի Բ եւ Մայիսի Թ ։ Տօն է Եսայեայ մարգարէին ։

Սքանչաբարբառն Եսայի մարգարէն էր յԵրուսաղէմէ, եւ սղոցեցաւ ի Մանասէէ թագաւորէ Հրէաստանի, * յորդւոյն Եզեկիայ, եւ թաղեցաւ ընդ կաղնեաւն Առովելի արտաքոյ քաղաքին Գաբաւոնի : * A fol. 254 v° b.

Յայսմ աւուր յիշատակ մանկանցն Բեթղեհեմի ։

Ի ծնանելն Յիսուսի Քրիստոսի ի Բեթղեհէմ Հրէաստանի՝ Հերովդէս որդի Անթիպատրոսի յայլազգեաց ունէր զթագաւորութիւնն Հրէից ։ Իբրեւ եկին մոգքն ի Պարսից յԵրուսաղէմ եւ ասէին. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն

2 Յովհաննու] առաքելոյ եւ *add.* B || 10 յիշատակ] է սուրբ *add.* B || 11 Յիսուսի *om.* B.

C'est ainsi que fut martyrisé le saint roi Sembat le 1er maréri, 8 mai. Sa commémoration a lieu avec celle de Jean l'évangéliste et d'Arsène le grand ascète, pour la gloire du Christ éternellement.

[B * Et en ce jour reposa dans le Christ le baron Léon, frère du baron Thoros, homme valeureux et vertueux.] * B p. 207 b.

2 maréri, 9 Mai.

Fête du prophète Isaïe.

L'éloquent prophète Isaïe était de Jérusalem. Il fut scié par Manassé, roi de Judée[1], * fils d'Ezéchias et fut enterré sous le chêne d'Aroël (*Aroveli*), hors de la ville de Gabaon[2]. * A fol. 254 v° b.

En ce jour commémoration des enfants de Bethléem.

Lorsque Jésus-Christ naquit à Bethléem de Judée, Hérode, fils d'Antipater (*Antipatrosi*), d'entre les Gentils, régnait sur les Juifs. Lorsque les mages vinrent de la Perse à Jérusalem et dirent : « *Où est le roi des Juifs qui*

1. Il faut restituer : de Juda. — 2. Cf. *Syn. Cp.*, col. 667.

նորա յարեւելս եւ եկաք երկիր պագանել նմա ։ Հերովդէս հարցեալ զգիտունս Հրէից առաքեաց զմոգսն ի Բեթղեհէմ, եւ ինքն ուսաւ ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ ։

Իսկ յորժամ մոգքն ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց, Հերովդէս բարկացաւ յոյժ եւ հրամայեաց զօրականաց իւրոց կոտորել զամենայն մանկունս ի Բեթղեհէմ յերկեմենից եւ ի խոնարհ՝ ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն. եւ նոքա յարձակեալ գազանաբար ի վերայ Բեթղեհեմի եւ ամենայն սահմանաց նորա, կոտորեցին զամենայն ստնդիեայ մանկունսն զոր գտին յութսուն եւ չորս գեղջէ ։

Իսկ Յովսէփ եւ Մարիամ զքառասուն օր կացեալ ի Բեթղեհէմ՝ բերին ապա զմանուկն Յիսուս յԵրուսաղէմ ի տաճարն Տեառն. եւ ընկալաւ Սիմէոն ի գիրկս իւր,
* A fol. 255 r° a. օրհնեաց զԱստուած եւ զՄարիամ եւ զՅովսէփ, եւ * անտի գնացին ի Նազարէթ, եւ ապա փախեան յԵգիպտոս ։

Իսկ արդարադատն Աստուած ոչ եթող զՀերովդէս առանց պատժոյ, այլ պահանջեալ մանկանցն արիւնն խնդրեաց ի նմանէ. զի եսպան ինքն զկին իւր եւ զորդիս իւր, եւ անկաւ յախտ չարաչար, եւ որդունք եռային ի նմանէ ։ Եւ ապա ինքն եսպան ձեռօք իւրովք զինքն, եւ այսպէս բարձաւ չարն, եւ ոչ ետես զփառսն Աստուծոյ ։

6 ստուգեաց] տեղեկացաւ B || 8 գեղջէ] եւ էին մանկունքն թուով հազար չորս հարիւր եւ վաթսուն երկու *add.* B || 9 ապա *om.* B || 10 Տեառն *om.* B.

vient de naître? Car nous avons vu son étoile en Orient, et nous sommes venus l'adorer[1] »; Hérode s'enquit auprès des savants Juifs, envoya les mages à Bethléem, et lui-même apprit d'eux la date à laquelle l'étoile était apparue.

Puis, lorsque les mages eurent regagné leur pays par un autre chemin, Hérode, très irrité, ordonna à ses soldats de tuer tous les enfants qui étaient à Bethléem, depuis l'âge de deux ans et au-dessous, selon la date qu'il connaissait exactement par les mages. (Les soldats) assaillirent brutalement Bethléem et tous les environs, et tuèrent tous les enfants au sein qu'ils trouvèrent dans quatre-vingt-quatre villages.

Quant à Joseph et Marie, après être restés quarante jours à Bethléem, ils emmenèrent l'enfant Jésus au temple du Seigneur à Jérusalem; Siméon l'accueillit dans ses bras, et bénit Dieu ainsi que Marie et Joseph, qui se
* A fol. 255 r° a. rendirent * de là à Nazareth, d'où ils s'enfuirent en Égypte.

Mais Dieu, qui est juste, ne laissa point Hérode sans punition, et exigea de lui le sang des enfants innocents; car il tua lui-même sa femme et ses enfants, et subit une maladie terrible, car des vers fourmillaient (sortant) de lui; il finit par se tuer de sa propre main. C'est ainsi que ce méchant disparut et ne vit point la gloire de Dieu.

1. Matth., II, 2.

Իսկ մանկունքն որ կոտորեցան եղեն վկայք Քրիստոսի, որ վասն մեր մանկացաւ հինաւուրցն, եւ դասաւորեաց զնոսա ի գոգն Աբրահամու ։ Եւ կատարի տօն մանկանցն Բեղղեհեմի Մայիսի Թ, ի փառս Աստուծոյ օրհնելոյ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Քրիստափորի եւ երկու կանանցն ։

Սուրբ եւ փառաւորեալ վկայն Քրիստոսի Քրիստափոր էր ի ժամանակս Դեկոսի ամբարիշտ արքային, եւ անուն էր նորա յառաջ Պռեպրոպոս, ի շանագլուխ ազգէն մարդակերաց, եւ յաւուր պատերազմին ըմբռնեցաւ ի ձեռս կոմսի ։ Եւ վասն զի ոչ կարէր խօսել՝ աղաչեաց զԱստուած եւ էջ հրեշտակապետ յերկնից եւ մերձեցաւ ի շրթունս նորա, եւ առժամայն խօսել սկսաւ. եւ մտեալ ի մէջ քաղաքին յանդիմանէր զհալածիչսն քրիստոնէիցն ։

Եւ մի ոմն որոյ անուն էր Բաքխոս կալաւ զնա եւ զան եհար ուժգին ։ Եւ նա ասէ.

1 Քրիստոսի] Աստուծոյ B || 2 Աբրահամու] զի ոչ լոկ վասն Քրիստոսի մեռան՝ այլ եւ փոխանակ Քրիստոսի, որ ոչ այլ ումեք ի վկայից վիճակեցաւ *add.* B || 3 Բեթղեհեմի] Մարերի Բ եւ *add.* B — օրհնելոյ *om.* B || 4 կանանցն] ընկերացն B || 6 ամբարիշտ արքային] ըռնաւորին B — Պռեպրոպոս] Ռեպրոպոս B || 7-9 Եւ վասն զի... խօսել սկսաւ] Եւ ուսեալ զհաւատս Քրիստոսի փափաքէր ընդունել զսուրբ մկրտութիւնն, եւ զայրանայր յոգի իւր յորժամ տեսանէր զհալածումն եւ զնեղութիւն քրիստոնէից. եւ կամէր յանդիմանել զանհաւատսն, եւ ոչ կարէր յստակ խօսել զյունարէն լեզուն ։ Եւ աղաչեաց զԱստուած, եւ շնորհեցաւ ի վերին զօրութենէն B || 9 յանդիմանէր] համարձակ *add.* B.

Les enfants qui furent tués devinrent les martyrs du Christ, Lui, l'Ancien des jours qui se fit enfant pour nous, et Il les plaça dans le sein d'Abraham. La fête des enfants de Bethléem se célèbre le 9 mai, pour la gloire du Dieu béni.

En ce jour martyre de saint Christophe et de deux femmes.

Christophe (*Khristaphor*), le saint et glorieux martyr du Christ, vivait aux jours de Dèce, l'empereur impie. Il s'appelait auparavant Prépropos[1], il était de la race des anthropophages à la tête de chien. Il fut fait prisonnier dans un jour de combat et tomba entre les mains du comte. Comme il ne pouvait point parler, il pria Dieu, et voici qu'un archange descendu du ciel s'approcha de ses lèvres et il se mit aussitôt à parler. Il entra à la ville et blâma les persécuteurs des chrétiens.

Un homme, du nom de Bacchios, le saisit et le frappa brutalement. Mais

1. *Syn. Cp.*, col. 658 Ῥέπρεβος; ms. S : Ῥέπρεβος en cet endroit seulement.

*A fol. 255 r° b. Համբերեմ * վասն Քրիստոսին իմոյ, ապա թէ ոչ՝ եւ ոչ թագաւորն ձեր կարէր կալ ընդդէմ իմ ։ Եւ լուեալ թագաւորն զբանս նորա առաքէ երկերիւր զօրականս զի կալցեն զնա, վասն ահեղ տեսլեան անձինն ։ Եւ երթեալ զօրականացն գտին զերանելին առաջի դրան եկեղեցւոյն ունելով գաւազան ի ձեռին իւրում, զոր աղօթիւք արմատացոյց ։ Եւ յորժամ երթային երեւեցաւ նմա հրեշտակապետն Ռափայէլ, եւ բազմացոյց զհացն զոր ունէին յինքեանս ։

Եւ յորժամ գնացին ի քաղաքն Անտիոքայ սուրբ քահանայապետն եւ վկայն Քրիստոսի Բաբիլաս մկրտեաց զնա եւ անուանեաց Քրիստափոր, որ թարգմանի քրիստոսազգեաց. մկրտեցան եւ զօրականքն ։

Եւ յորժամ ետես զնա թագաւորն երկեաւ, եւ յահէն անկաւ յետս. եւ յորժամ կանգնեցաւ՝ հրամայեաց եւ ածին առ նա երկու պոռնիկ կանայս զԿալինիկէ եւ զԱկիլինէ, թերեւս կարասցեն զնա ողոքանօք դարձուցանել ի կուռսն. եւ մանաւանդ Քրիստափոր վարդապետութեամբն իւրով դարձոյց զնոսա ի Քրիստոսի հաւատն ։ Եւ զայն լուեալ արքային բարկացաւ, եւ հրամայեաց եւ զԱկիլինէ կախեցին զհերացն գլխոյն եւ կապեցին յոտսն երկու վէմս մեծամեծս. եւ լուծան յօդք անձինն ։ Եւ սուրբն

1 թագաւորն] բռնաւորն B || 3 վասն ահեղ տեսլեան անձինն] վասն զի էր այր հուժկու եւ ահեղ տեսլեամբ B || 4 ունելով... յինքեանս] եւ պատմեցին նմա զպատճառ գալստեանն իւրեանց. եւ նա լուսաւորեաց զնոսա քարոզութեամբ սուրբ աւետարանին B || 9 քրիստոսազգեաց] քրիստոսազգեստ B || 10 զնա ... կանգնեցաւ] զսուրբն զարհուրեցաւ զի ահեղակերպ երեւեցաւ նմա շնորհօքն Քրիստոսի B || 12 եւ մանաւանդ Քրիստափոր] այլ ընդ հակառակն եղեւ, զի երանելին Քրիստափոր աստուածեղէն B || 13 արքային] անօրինին B.

*A fol. 255 r° b. (le saint) dit : « Je supporte * pour mon Christ, sans cela votre roi lui-même ne pourrait me résister. » L'ayant appris, le roi envoya deux cents soldats pour le saisir, car sa personne inspirait la terreur. Les soldats, en arrivant, trouvèrent le bienheureux devant la porte de l'église; il tenait à la main un bâton, qui prit racine par ses prières. Pendant le trajet, l'archange Raphaël lui apparut et multiplia le pain que (les soldats) portaient sur eux.

Lorsqu'ils furent arrivés à la ville d'Antioche, le saint pontife et martyr du Christ, Babylas, le baptisa et lui donna le nom de Christophe, qui se traduit « porteur du Christ » : les soldats furent également baptisés.

Lorsque le roi l'eut aperçu, il prit peur et dans son effroi tomba à la renverse; puis, s'étant relevé, il ordonna de conduire auprès de lui deux prostituées nommées Callinice (*Kaliniké*) et Aquilina, dans l'espoir qu'elles pourraient par leurs supplications le faire revenir aux idoles. Mais ce fut Christophe, au contraire, qui par son enseignement les convertit à la foi du Christ. Ce qu'ayant appris, le roi fut pris de colère et ordonna de suspendre Aquilina par les cheveux et de lui attacher aux pieds deux grosses pierres.

Քրիստափոր աղաչեաց զԱստուած վասն նորա, եւ առժամայն աւանդեաց * զհոգին իւր : * A fol. 255 v° a.

Եւ ընկեցին զմարմինն առաջի Կալինիկեայ : Եւ ասէ Կալինիկէս խաբէութեամբ. Երթայց ի տաճարն եւ զոհեցից : Եւ յորժամ եմուտ՝ արկ զփակեղն իւր ի պարանոց կռոցն եւ ուժգին քարշեաց եւ ընկեց յերկիր եւ խորտակեաց : Եւ ասէ ցքուրմսն. Ժողովեցէք զոսկերս աստուածոց ձերոց եւ ձիւթով եւ աղիւ պնդեցէք :

Եւ լուեալ արքային բարկացաւ եւ հրամայեաց երկաթի շամփուր երկայն անցուցանել յոտիցն մինչեւ ի թիկունս. եւ մեքենայիւ կախեցին զնա խոտորնակի, եւ կապեցին վէմս յոտսն եւ ի ձեռսն : Եւ սուրբն Քրիստափոր աղօթեաց վասն նորա առ Աստուած, եւ աւանդեաց զհոգին իւր :

Կոչեաց թագաւորն զսուրբ վկայն եւ թշնամանէր զնա, գարշելես եւ օտարակերպ եւ չարապատկեր ասելով : Եւ երթեալ երկերիւր զօրականքն որք հաւատացին առաջի թագաւորին եւ երկիր պագին սրբոյն Քրիստափորի եւ զթագաւորն անարգեցին : Հրամայեաց եւ հատին զգլուխս նոցա, եւ զմարմինս նոցա ընկեցին ի հուր :

Եւ զսուրբն հրամայեաց բեւեռել ի պղնձի մեքենայս ընդ չորս կողմանէ, եւ շուրջ

1 աղաչեաց] աղօթէր B — առժամայն] նա ի տանջանս անդ B || 7 արքային] բռնաւորն B || 12 երկերիւր *om.* B — որք հաւատացին *om.* B || 13 եւ երկիր ... անարգեցին] աղաղակէին թէ. Քրիստոնեայ եմք եւ անարգէին զբռնաւորն B || 15 Եւ զսուրբն հրամայեաց բեւեռել] Եւ բռնաւորն ոչ կամեցաւ զսուրբն Քրիստափոր փութանակի կորզել ի կենաց, այլ զնա ի դժնդակ տանջանս. հրամայեաց եւ բեւեռեցին զնա B.

Les jointures de son corps se brisèrent; saint Christophe pria Dieu pour elle, et aussitôt elle rendit* son âme. * A fol. 255 v° a.

On jeta son corps devant Callinice. Callinice leur dit pour les tromper : « Je veux aller au temple et y sacrifier. » Mais lorsqu'elle y eut pénétré, elle jeta son voile au cou des idoles, tira fortement, les jeta à terre et les brisa. Elle dit ensuite aux prêtres d'idoles : « Ramassez les os de vos dieux et consolidez-les avec de la poix et du sel. »

A cette nouvelle, le roi fut très irrité et ordonna de la transpercer par de longues broches de fer depuis les pieds jusqu'au dos; on la suspendit de biais à une machine et on lui attacha des pierres aux pieds et aux mains. Saint Christophe pria Dieu pour elle, et elle rendit son âme.

Le roi manda le saint martyr et l'injuria en disant : « Figure dégoûtante, espèce d'étranger de mauvaise mine. » Mais les deux cents soldats qui avaient cru se présentèrent au roi, se prosternèrent devant saint Christophe et insultèrent le roi. Celui-ci ordonna de leur trancher la tête et de jeter leur corps aux flammes.

Il ordonna ensuite de clouer le saint à des machines de bronze des quatre

դնովլ կուտեցին փայտ եւ վառեցին հուր ։ Եւ սուրբ վկայն ոչ այրեցաւ, այլ որպէս յաթոռ նստեալ պատմէր զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն Քրիստոսի ։ *Պատմէր եւ տեսիլս սքանչելիս եթէ Այր մի զօրական, բարետեսակ եւ պայծառ երեսօք զգեցոյց ինձ սպիտակ հանդերձ, եւ պսակ եդ ի գլուխ իմ, եւ զգեղեցկութիւնն պսակին եւ պատմուճանին պատմել ոչ կարեմ ։ Տեսանեմ եւ այլ զօրս սեւադէմս եւ մարտեան ընդ լուսեղէն զօրականսն եւ յաղթեցին նոցա ։ Եւ դարձաւ փառաւոր այրն բարկութեամբ ի նոսա եւ եհերձ զնոսա յերկուս եւ յաղթեաց ի սպառ ։ Եւ իբրեւ լուան զայս մերձակայ ամբոխն, եւ տեսին զսուրբն անկիզելի հաւատացին ի Քրիստոս անձինք իբրեւ հազար, եւ երթեալ հանին զսուրբն ի մեքենայէն եւ ի հրոյն ։

* A fol. 255 v° b.

Եւ երեւեցաւ սատանայ ի կերպարանս մարդոյ, եւ բորբոքեաց զչարութիւն սրտի նորա ի վերայ սրբոյն ։ Եւ յաւուր յորում կամէին կռապաշտքն զոհս մատուցանել

1 — p. 1477, l. 14 ոչ այրեցաւ... մերձ ի գետն] այրեալ լինէր զօրութեամբն Քրիստոսի, զոր տեսեալ բազմաց զսքանչելիսն հաւատացին ի Քրիստոս ։ Եւ եղեւ յաւուրն յորում կռապաշտքն զոհս մատուցանէին ժողովեցան հաւատացեալքն եւ երթային պաշտամամբք այսպէս. Պայծառ է, զրախտն, պայծառ են պսակքն աւետեաց. ձէթ է, սափորիկ մի համբերութիւն մեր, եւ պսակեմք ի Տեառնէ ։ Եւ զայն լուեալ բռնաւորին բարկացաւ յոյժ, հրամայեաց եւ զիմեցին զօրքն, եւ սրով զամենեսեան կոտորեցին ։ Եւ հրամայեաց եւ կապեցին վէմ մի ի պարանոց սրբոյն եւ ձգէին. եւ նա զոհանայր զԱստուծոյ որ արժանի արար զայնպիսի չարչարանս կրել վասն անուան իւրոյ ։ Յայնժամ հրամայեաց սրով հատանել զգլուխ նորա ։ Եւ յորժամ տարան ի տեղին աղօթեաց առ Աստուած, եւ խնդրեաց զփրկութիւն ամենայն քրիստոնէից ։ Եւ ապրեցաւ նմա ի վերուստ կատարումն խնդրուածոց իւրոց, եւ երկնային փառացն ժառանգութիւն, եւ մխիթարեցաւ ի հոգի իւր ։ Եւ նոյնժամայն հատին զգլուխ նորա Մարտի Ի եւ Մայիսի Թ ։ Եւ Պետրոս եպիսկոպոսն Անալիոյ որ է մերձ յԱնեփոր՝ առեալ զմարմինն տարաւ ի քաղաք իւր, եւ մեծաւ պատուով եդ ի տապանի մերձ ի գետն ։ Եւ յետ ժամանակաց պատուական նշխարք նորա փոխադրեցան ի Կոստանդինուպօլիս եւ անդ յայլ տեղիս. եւ ամենայն ուրեք փայլեալ եղեն սքանչելեօք B.

côtés, d'entasser tout autour du bois et d'y mettre le feu. Mais le saint martyr ne fut point brûlé, et comme s'il était assis sur un trône il prêcha le terrible et dernier avènement du Christ. *Il raconta également cette vision magnifique : « Un homme, un soldat, de belle prestance et d'un visage éclatant, m'a revêtu d'une tunique blanche et a déposé une couronne sur ma tête. Je ne puis vous décrire la beauté de la couronne et de la tunique. J'ai vu aussi d'autres soldats nègres qui luttaient avec des soldats lumineux et les battaient. Alors l'homme à la belle prestance s'est retourné vers eux en colère, les a fendus en deux et anéantis. » La foule qui se trouvait proche, ayant entendu ces paroles et vu que le saint n'avait point été brûlé, se convertit au Christ au nombre de mille personnes environ; ils allèrent délivrer le saint des machines et des flammes.

* A fol. 255 v° b.

Satan apparut (au roi) sous la forme d'un homme et excita la méchanceté de son cœur contre le saint. Un jour que les idolâtres voulurent immoler, le

ժողովեաց սուրբ վկայն Քրիստոսի զհաւատացեալ ժողովուրդն եւ երգէին պաշտամամբ այսպէս. Ձէթ է յայրումն, սակաւիկ մի համբերեսցուք եւ պսակիմք ի Քրիստոսէ ։ Եւ դիմեցին ի վերայ նոցա զօրք թագաւորին եւ սրով զամենեսեան կոտորեցին զքաջալերեալսն ի սրբոյն ։ Եւ կապեցին վէմ մի մեծ ի պարանոց սրբոյն Քրիստափորի եւ ընկեցին ի ջրհորն. լուծաւ վէմն եւ հրեշտակ Տեառն եհան զնահատակն * Քրիստոսի եւ կացոյց առաջի թագաւորին, եւ տեսեալ զնա զարհուրեցաւ, եւ հրամայեաց սրով հատանել զգլուխ նորա ։ Եւ յորժամ տարան ի տեղին՝ աղօթեաց առ Աստուած եւ խնդրեաց փրկութիւն ամենայն քրիստոնէից, շնորհ ոսկերաց իւրոց զի հալածեսցէ զդեւս եւ զամենայն սատանայական հնարս, եւ ուր անունն իւր յիշատակեսցի փրկեսցին յամենայն նեղութենէ, ի կարկտոյ եւ ի ժանգոյ եւ յերաշտութենէ ։ Ձայն եկեւ յերկնից առ նա. Զամենայն խնդիրս քո կատարեցից, եկեսջիր յանտրտում յուրախութիւնս ։ Եւ նոյնժամայն հատին զգլուխ նորա Մայիսի Թ ։ * A fol. 256 rº a.

Եւ Պետրոս եպիսկոպոսն Ատալիու որ է մերձ յԱնտիոք, առեալ զմարմին նորա տարաւ ի քաղաքն իւր եւ մեծաւ պատուով եդ ի տապանի մերձ ի գետն ։

[B * Սղոցումն սուրբ մարգարէին Եսայեայ ի Մանասէ թագաւորէ ։ * B p. 207 b.

Մեծաբարբառն Եսայի էր որդի Ամովսայ յազգէ Յուդայ յԵրուսաղեմէ, որ

saint martyr du Christ rassembla des gens qui se mirent à chanter et à officier ainsi : « L'huile est à brûler, ayons un peu de patience et nous serons couronnés par le Christ. » Les soldats du roi les assaillirent et tuèrent à l'épée tous ceux que le saint encourageait. Ils attachèrent une grosse pierre au cou de saint Christophe et le jetèrent dans un puits. La pierre se détacha; l'ange du Seigneur fit sortir le martyr * du Christ et le mit en présence du roi, qui, épouvanté à sa vue, ordonna de lui trancher la tête par l'épée. Lorsqu'on l'eut conduit au lieu de l'exécution, il pria Dieu en Lui demandant le salut de tous les chrétiens, et la grâce pour ses ossements d'écarter les démons et toutes les manœuvres de Satan, et (priant pour) que là où son nom serait invoqué on soit délivré de toute gêne, de la grêle, de la rouille et de la sécheresse. Une voix du ciel parvint jusqu'à lui et dit : « J'exaucerai tout ce que tu me demandes, viens à la joie exempte de tristesse. » On lui trancha aussitôt la tête, le 9 mai. * A fol. 256 rº a.

Pierre, l'évêque d'Atalios[1], qui est proche d'Antioche, prit le corps, l'emmena à sa ville et le déposa avec de grands honneurs dans un tombeau près du fleuve.

[B * Le saint prophète Isaïe scié par le roi Manassé. * B p. 207 b.

L'éloquent Isaïe était fils d'Amos, de Jérusalem et de la tribu de Juda.

1. Il n'y a que deux sièges épiscopaux portant le nom d'Ἀττάλεια, respectivement en Lycie et en Pamphylie; aucun ne peut être dit dans le voisinage d'Antioche et à aucun on ne connaît de titulaire nommé Pierre.

յայտնագոյն խօսեցաւ զգալուստն Բանին յաշխարհ ծննդեամբ ի սրբոյ կուսէն ։ Եւ ի կշտամբելն զՄանասէ թագաւորն Հրէաստանի վասն չարեաց նորա, հրամանաւ նորա սղոցեցաւ ի գլխոյն եւ ի վայր յերկուս մասունս ։ Եւ թաղեցաւ ընդ կաղնեաւն Ռոգելի արտաքոյ քաղաքին Գաբաւոնի ։]

Մարերի Գ եւ Մայիսի Ժ ։ Վարք երանելոյն Գերմանոսի Կոստանդինուպօլսի հայրապետի ։

Այս ցանկալի այրս եւ երանելի հայրապետս Գերմանոս ներքինի էր, որդի մեծի իշխանի եւ պատրկի որոյ անուն էր Յուստիանոս, յաւուրս բարեպաշտ արքային Հերակլի ։
* A fol. 256 r° b. * Եւ վասն իւր աստուածահաճոյ վարուցն, եւ զի յոյժ ուսեալ էր զաստուածաշունչ գիրս ձեռնադրեցին զնա Կիզիկոյ մետրապօլիտ. եւ բազում ժամանակս կեցեալ մինչեւ ի ժամանակս Լեւոնի Իսաւրոյ ։

Եւ վասն զի էր յոյժ առաքինի եւ ժուժկալ վարուք, եւ էր ամենիմաստ եւ աստուածասէր, խոնարհ, հանդարտ, ողորմած եւ ամենայն բարութեամբ լցեալ, աստուածային ընտրութեամբն եւ ամենայն քահանայից նստուցին զնա յաթոռ պատրիարքութեան Կոստանդինուպօլսի ։

5 վարք] եւ յիշատակ *add.* B — հայրապետի] պատրիարքի B || 6 Գերմանոս *om.* B || 12 բարութեամբ] բարի բնութեամբ B || 13 քահանայից] քահանայապետաց B.

Il parla avec évidence de la venue au monde du Verbe par sa naissance de la sainte Vierge. Pour avoir blâmé Manassé, roi de Juda, de ses mauvaises actions, il fut, par son ordre, scié de la tête jusqu'en bas en deux parties. Il fut enterré sous le chêne de Rogel, hors de la ville de Gabaon [1].]

3 MARÉRI, 10 Mai.

Vie du bienheureux Germain, patriarche de Constantinople.

Cet aimable et bienheureux patriarche Germain (*Germanos*) était eunuque, fils du grand prince et patricien nommé Justinien (*Youstianos*), aux jours
* A fol. 256 r° b. du pieux empereur Héraclius.* A raison de sa vie agréable à Dieu et parce qu'il était très versé dans les écritures inspirées de Dieu, on le sacra métropolite de Cyzique (*Kisiko*). Il y vécut de longues années jusqu'aux jours de Léon l'Isaurien.

Il était très vertueux et d'une vie austère, de grande intelligence, ami de Dieu, humble, paisible, charitable, rempli de toutes les bontés, c'est pourquoi, par élection divine et (le choix) de tous les prêtres, on le fit siéger sur le trône patriarcal de Constantinople.

1. Cf. *Syn. Cp.*, col. 667.

Եւ եղեւ վարդապետ ճշմարտութեան եւ ուսուցանէր եւ մեկնէր ժողովրդեանն աստուածային գիրս : Եւ բազում ճառս գրեաց ի տէրունական տօնս եւ ի սուրբս, եւ արար կցուրդս եւ քաղցր եղանակաւ շարականս, որպէս եւ պաշտի մինչեւ ցայսօր : Տեսանէր եւ զշնորհս Հոգւոյն սրբոյ ի պատարագին եւ յահէն հեղոյր բազում արտասուս, եւ զհիւանդս եւ զախտաժէտս ձեռն դնելով եւ աղօթելով ողջացուցանէր, եւ զբազում դեւս ի մարդկանէ հալածէր :

Իսկ թագաւորն Լեւոն սատանայական խորհրդովք սկսաւ զտէրունական պատկերս եւ զնշխարս սրբոցն անարգել եւ ընկենուլ : Եւ նա խրատ տայր եւ ուսուցանէր ի բաց կալ յանօրէն խորհրդոցն. եւ թագաւորն ոչ լսէր, այլ մանաւանդ բազում նեղութիւնս անցոյց ընդ սրբոյ հայրապետին, * նա եւ զաստուածաբանեալ գիրսն զոր գրեաց սուրբն այրեաց, եւ սակաւ ճառք մնացին ի թագստեան : * A fol. 256 v° a.

Եւ տեսեալ երանելին զթագաւորին չարիսն զի այլ եւս կարի խստութեամբ գործէր, եմուտ յաւագ եկեղեցին եւ զպատուական եմիփորոնն եդ ի վերայ սրբոյ սեղանոյն եւ դնաց յառաջին տունն իւր, եւ անդ լռութեամբ եւ ուղղափառ հաւատով եւ առաքինի վարուք կացեալ զմնացուածս կենաց իւրոց, եւ աւելի քան զինն ամաց

3 քաղցր եղանակաւ] քաղցրեղանակս B || 7 սատանայական] չարաչար B || 9 յանօրէն] յանարժան եւ ի չար B || 10 սրբոյ] բարուք ծերացեալ B || 11 սուրբն *om.* B.

Il devint le docteur de la vérité, enseigna et commenta au peuple les divines écritures. Il écrivit de nombreuses homélies pour les fêtes du Seigneur et des saints, il composa des antiennes (*Kzourt*) et des hymnes très mélodieuses qui sont en usage jusqu'à nos jours. Il percevait les grâces du Saint-Esprit au moment du saint sacrifice et versait de nombreuses larmes de crainte ; il guérissait les malades par l'imposition de ses mains et par ses prières ; il chassait des hommes de nombreux démons.

Or, le roi Léon, par les conseils du démon, se prit à mépriser et rejeter les images du Seigneur et les reliques des saints. (Germain) exhorta le roi et lui recommanda de s'abstenir de ces desseins impies, mais celui-ci ne l'écoutait pas ; au contraire, il suscita bien des persécutions au saint patriarche, * et brûla les écrits théologiques que le saint avait composés ; peu d'homélies demeurèrent, étant cachées. * A fol. 256 v° a.

Le bienheureux, voyant les méfaits du roi qui agissait avec une rigueur croissante, pénétra dans la grande église[1], déposa le précieux omophorion sur le saint autel et retourna à sa première demeure, où en silence, avec une foi orthodoxe et une vie pleine de vertus, il vécut le restant de sa vie.

1. Sainte-Sophie.

լեալ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, եւ եդին զնա ի վանսն իւր զոր ինքն շինեաց Խորան կոչեցեալ ։

Յայսմ աւուր սուրբ վկայն Քրիստոսի Եպիմաքոս եւ սուրբն Գորդիանոս ի Հռոմ քաղաքին հրամանաւ անօրէն իշխանին բազում տանջանաց համբերեալ չարչարեցան եւ զՔրիստոս ոչ ուրացան. եւ ապա հատին զգլուխս նոցա Մայիսի Ժ ։

* B p. 210 b. [B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս աստուածասէր պատանին Ռուբէն որդի Լեւոն թագաւորին ։]

Մարերի Դ եւ Մայիսի ԺԱ . Վկայութիւն սրբոյն Մոկկիմոսի քահանայի ։

Սուրբն Մոկկիմոս Ամփիլիպօլիտոյ քաղաքին քահանայ էր եւ վարդապետ ճշմարտութեանն, եւ յաւուրս ամբարիշտ արքային Դիոկղետիանոսի համարձակութեամբ քարոզէր զանունն Քրիստոսի, եւ պատուիրէր ի բաց կալ ի կռապաշտութենէ, եւ հաւատալ ի մի Աստուած ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։

2 Խորան կոչեցեալ] զոր Խորան կոչեն B || 3 սուրբն *om.* B || 4 տանջանաց համբերեալ չարչարեցան] չարչարանօք տանջեալք համբերեցին B || 5 նոցա] Մարերի Գ եւ *add.* B || 8 Վկայութիւն... քահանայի] Վկայութիւն սուրբ եւ մեծ քահանայկային Մոկկիու զոր Մոկկիմոս կոչեմք B || 9 Ամփիլիպօլիտոյ] Ամփիլիպօլեայ B || 11 կռապաշտութենէ] մոլորութենէն B.

Il reposa en paix dans le Christ, âgé de plus de quatre-vingt-dix ans. On le déposa dans le couvent qu'il avait fait bâtir, appelé Khora [1] (*Khoran*).

En ce jour le saint martyr du Christ Epimaque et saint Gordien eurent à souffrir à Rome de nombreuses tortures par l'ordre de l'impie gouverneur, mais ne renièrent point le Christ. On leur trancha ensuite la tête le 10 mai.

* B p. 210 b. [B* En ce jour reposa dans le Christ le pieux jeune homme Rouben [2], fils du roi Léon.]

4 maréri, 11 Mai.

Martyre du saint prêtre Mocimus.

Saint Mocimus était prêtre et docteur de la vérité à Amphipolis (*Amphilippolitoy*) aux jours de l'empereur impie Dioclétien; il prêchait avec hardiesse le nom du Christ, exhortant à abandonner l'idolâtrie et à croire au seul Dieu Notre-Seigneur Jésus-Christ.

1. Le fameux monastère dédié au Sauveur, appelé couramment ἡ Μονὴ τῆς χώρας, hors des murs de Constantinople, au nord de la ville, cf. S. Byzantios, Ἡ Κωνσταντινούπολις, t. I. Athènes, 1851, pp. 366-368. — 2. Fils de Léon I, tué à Byzance, après avoir eu les yeux brûlés au fer rouge en 1141.

Եւ ի միում աւուր Լաւոդիկոս բդեշխն գնայ բազում ամբոխիւ ի տաճար կռոցն զոհս մատուցանել Դիոնիսայ. * եւ երանելի վկայն Քրիստոսի խափանէր զբազումս որ երթային ի զոհել ։ Եւ լուեալ բդեշխին առաքեաց զօրականս եւ տարան զսուրբն առաջի, եւ մեծաձայն բարբառով խոստովանեցաւ զանդրդուելի հաւատն իւր որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։ Եւ հրամայեաց կախել եւ քերել զմարմին նորա, եւ նա ի յանդիմանելոյ զմոլորութիւնն ոչ դադարէր ։ * A fol. 256 v° b.

Եւ ապա բորբոքեցին հուր ձիթով եւ վշով եւ որթով, եւ արկին զնա ի մէջ հրոյն, եւ սուրբն որպէս ի դրախտի ճեմէր ։ Եւ երեւեցան նմա երեք արք փառաւոր տեսլեամբ, եւ ելեալ բոցոյն ի հնոցէն այրեաց զբդեշխն եւ ինն զօրականս, եւ եղեն աներեւոյթ ի մարդկանէ մարմինք նոցա ։ Եւ Թաղատիոն քաղաքապետն արկ զնա ի բանդ ։

Եւ առաքեաց թագաւորն այլ բդեաշխ որոյ անուն էր Մաքսիմոս, եւ բազում աղաչանօք խրատ տայր կատարել զհրամանս թագաւորին, եւ սուրբն ամենեւին ոչ հաւանեցաւ ։ Կապեցին զնա յերկու անիւս եւ գլորեցին, եւ մարմինն յօշ կտրատեցաւ ։ Եւ նա աղաչեաց զԱստուած եւ լուծաւ ի կապանացն, եւ ել սուրբն արիւնաշաղախ վիրօք ։

1 Լաւոդիկոս] Լայիկոս անօրէն B — բազում *om.* B || 5 զմարմին նորա] եւ զկողսն եւ զկուռն *add.* B || 8-10 եւ սուրբն... ի բանդ] եւ յաղօթել սրբոյն ցրուեցաւ հուրն ուժգին հողմով, եւ հրդեհեաց զանդին ուր էր բդեշխն, եւ այրեաց զնա եւ զինն զօրականս ընդ նմա ։ Յայնժամ Թաղատիոն քաղաքապետն ձեռն էարկ ի սուրբն եւ եդ ի բանդի, եւ նա գոհութեամբ անդադար փառաւորէր զԱստուած B || 12 սուրբն ամենեւին] նա B || 13 զնա] զնահատակն Քրիստոսի B || 14 աղաչեաց զԱստուած] աղօթէր առ Աստուած, եւ յանկարծակի խորտակեցաւ անիւն եւ սուրբն B — սուրբն *om.* B.

Un jour que le gouverneur Laodicius (*Lavodikos*) se rendait avec une nombreuse escorte au temple des idoles pour immoler à Dionysos, * le bienheureux martyr du Christ détourna beaucoup de ceux qui allaient sacrifier. L'ayant appris, le gouverneur envoya des soldats, qui le lui amenèrent; et là, celui-ci confessa à haute voix sa foi inébranlable en Notre-Seigneur Jésus-Christ. (Le gouverneur) ordonna de le suspendre et de lui labourer le corps, mais il ne cessa de réprouver leur erreur. * A fol. 256 v° b.

Ensuite on alluma un grand feu avec de l'huile, du chanvre et des sarments et on le jeta dans les flammes. Le saint s'y promena comme dans un jardin. Il lui apparut trois hommes de glorieuse apparence, et les flammes sortant du brasier brûlèrent le gouverneur et neuf soldats, dont les corps disparurent. Le préfet de la ville, Thalatios, fit jeter (le saint) en prison.

Le roi envoya un autre gouverneur nommé Maxime, qui engagea (le saint) avec beaucoup de supplications à exécuter les ordres du roi, mais le saint n'y consentit point. On l'attacha alors à deux roues que l'on fit tourner, et tout son corps en fut déchiré. Le saint pria Dieu, ses liens se détachèrent et il sortit avec des plaies pleines de sang.

Եւ յետ աւուրց ընկեցին զնա առաջի առիւծուց, եւ երթեալ գազանացն լիզուին զոտսն եւ զվէրսն. եւ տեսեալ զայն ամբոխին ասեն առ բդեշխն. Արձակեա՛ զԱստուծոյ A fol. 257 r° a. ծառայդ : Եւ նա յղարկեաց զնա * կապանօք ի Հերակլիա քաղաքն Թրակիայ առ դատաւորն Թիլիսիոն, եւ նա դարձեալ տայ զսուրբ վկայն Քրիստոսի ի զօրականս եւ յուղարկեաց ի Բիւզանդիա : Եւ անդ տարան զնա ի խորհրդական ատեանն յորում նստէին ամենայն դատաւորքն եւ առնէին քննութիւն ամենայն գործոց :

Եւ անդ հարցին զսուրբն. եւ նա մի ըստ միոջէ պատմեաց զամենայն զսքանչելիսն զոր արար : Եւ նոքա բարկացեալք հատին ի վերայ նորա զվճիռ գլխատմանն : Եւ յորժամ տարան ի տեղին աղօթեաց առ Աստուած, եւ եղեւ առ նա ձայն ի յերկնից. Ուրախ լեր բարեյաղթ վկայ իմ Մոկկիմոս, մուտ յարքայութիւնն երկնից : Եւ ապա հատին զգլուխ նորա :

Եւ Փիլիպպոս եւ Դաղմատիոս եւ Կիւրակոս եպիսկոպոսունք ընդ այլ քրիստոնեայս թաղեցին զմարմին նորա մղոնաւ մի արտաքոյ Բիւզանդիոյ : Եւ յետ ժամանակաց սուրբն Կոստանդիանոս շինեաց մեծ եկեղեցի ի վերայ տապանին :

* B p. 211 b. [B * Յայսմ աւուր յիշատակ սրբոյ վկային Թէոդորոսի, որ կոչեցեալ էր Աթենադորոս :

1-2 առիւծուց ... առ բդեաշխն] գազանաց, եւ խնամօքն Աստուծոյ ոչ մերձեցան ի նա. յայնժամ ամբոխն աղաղակեաց առ բդեաշխն B || 4 Թիլիսիոն] Փիլիպպիսիոն B || 7 զսուրբն *om.* B || 9 եւ եղեւ ձայն ... երկնից] եւ վերին ազդեցութեամբն ընկալաւ զաւետիս ժառանգութեան արքայութեանն երկնից B || 13 զմարմին նորա] զվկայն Քրիստոսի B.

Quelques jours après, on le jeta aux lions, mais les fauves s'approchèrent et léchèrent les pieds et les plaies. A cette vue, la foule dit au gouverneur : « Remets en liberté le serviteur de Dieu. » Mais il l'envoya * chargé de chaînes à la ville d'Héraclée de Thrace, devant le juge Thilission, qui remit de nouveau le saint martyr du Christ entre les mains des soldats et l'envoya à Byzance. Là, on le conduisit au tribunal du conseil, où siégeaient tous les juges pour connaître de toutes les affaires.

* A fol. 257 r° a.

Ils interrogèrent le saint, qui raconta un à un tous les miracles qu'il avait opérés; furieux, ils le condamnèrent à la décapitation. Lorsqu'il fut amené au lieu de l'exécution, il pria Dieu. Une voix du ciel se fit entendre qui disait : « Réjouis-toi, Mocimus, mon martyr victorieux; entre dans le royaume des cieux. » On lui trancha la tête.

Les évêques Philippe, Dalmatius et Cyriaque accompagnés d'autres chrétiens inhumèrent son corps à une lieue hors de Byzance. Plus tard, saint Constantin édifia une grande église sur sa tombe.

* B p. 211 b. [B * En ce jour commémoration du saint martyr Théodore, qui était appelé Athénadore.

Երանելին այս էր որդի Սուրենայ Հայոց նախարարի յազգէ թագաւորութեան, որ էր իշխան գաւառին Սալահունեաց, եւ բնակէր յաւանաշէնն իւր որ կոչեցաւ յանուն նորա Սուրէն մերձ յԵզնկայ ։

Եւ մայր նորա Աղվիթոս կին ողորմած յորդորեաց զայր իւր եւ շինեցին տեղի ցաւագնելոց առ ափն ձորոյն մօտ յաղբիւրն որ կոչէր Սրբենուտ. եւ էին անդ ոգիք երեսուն եւ հինգ, որք հոգային զպէտս կենաց ողորմութեամբ ։ Եւ ոմն ի նոցանէ քրիստոնեայ էր եւ քահանայ Դասիոս անուն եւ վարդապետութեամբ աստուածաշունչ գրոց դարձոյց զնոսա ի հաւատս Քրիստոսի ։

Եւ զի մերձ էր տեղին բազում անգամ երթայր Աթենադորոս, եւ լսէր ի Դասիոսէ զքարոզութիւն աւետարանին ։ Եւ ինքն յեօթն ամաց հետէ ախտացեալ զախտ ցաւագին տառապէր յոյժ. եւ ծնողք նորա արծաթ բազում ծախեալ էին ի բժիշկս զի միամօր էր նոցա, եւ ոչ կարացին բժշկել ։

Լուեալ Աթենադորոսի զբժշկութիւնն զոր առնէր սուրբ Լուսաւորիչն անուամբն Քրիստոսի, յորժամ տանէին զնա արկանել ի խոր վիրապն դիմեաց յոտս նորա, եւ առժամայն ընկալաւ ի նմանէ զբժշկութիւն. եւ հաւատաց ի Քրիստոս յամենայն սրտէ, եւ մկրտեաց զնա սուրբ քահանայն Դասիոս, եւ կոչեաց զանուն նորա Թէոդորոս ։ Եւ զամս եօթն գաղտնի պահէր զքրիստոնէութիւն իւր անդադար կանխեալ յաղօթս եւ ի պաղատանս առ Աստուած ։

Ce bienheureux était le fils de Sourèn, satrape arménien de famille royale, gouverneur de la province des Salahouniqs, qui habitait le bourg construit par lui-même, appelé de son nom Sourèn, près d'Ezenka.

Sa mère Aghvithos, femme charitable, engagea son mari à construire au bord du vallon, près de la source appelée Serpenout, un hospice pour les infirmes. Il y avait là trente-cinq personnes qui leur procuraient par charité les choses nécessaires à leur vie. Il y avait parmi eux un chrétien, prètre, du nom de Dasios, qui par son enseignement des écritures inspirées de Dieu les avait converties au Christ.

Comme l'endroit était proche, Athénadore s'y rendait souvent et entendait les prédications de l'évangile par Dasios. Il était lui-même affligé depuis sept ans d'une douloureuse maladie, dont il souffrait beaucoup, et ses parents avaient dépensé beaucoup d'argent avec les médecins, parce qu'il était fils unique, sans résultat de guérison.

Athénadore, ayant appris les guérisons que le saint Illuminateur avait opérées au nom du Christ, accourut se jeter à ses pieds lorsqu'on le conduisait au puits profond pour l'y jeter, et il en reçut aussitôt la guérison. Il crut au Christ de tout son cœur, et le saint prêtre Dasios le baptisa en lui donnant le nom de Théodore. Il conserva secrètement pendant sept années sa foi chrétienne, priant incessamment et suppliant Dieu.

Եւ ապա լուեալ հայր նորա Սուրէն բազում ողոքանօք ջանայր դարձուցանել անդրէն ի պաշտօն կռոցն. եւ իբրեւ ոչ կարաց հաւանեցուցանել, սկսաւ սպառնալեօք
* B p. 212 a. զարհուրեցուցանել զնա ։ Եւ նա փախուցեալ ի * տանէն գնաց ի ձորակն զոր Սեղեմնուտ կոչեն եւ թաքեաւ անդ ։

Իսկ հայրն իմացեալ զտեղին գնաց անդր, եւ տեսեալ թէ հաստատուն կայ ի հաւատս Քրիստոսի բարկացաւ յոյժ, եւ կալեալ զհերացն խողխողեաց զնա անդ. եւ էր յայնժամ երանելին Թէոդորոս քսան եւ ութ ամաց եւ վեց ամսոց ։ Եւ ի գիշերին յայնմիկ լոյս պայծառ ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյ վկային Քրիստոսի. եւ Դասիոս քահանայ հրամանաւ մօր նորա Աղվիթոսի գնացեալ թաղեաց ի նմին տեղւոջ ։

Եւ յետ իբրեւ հնգետասան ամաց՝ յորժամ անցանէր ընդ այն սուրբն Գրիգոր երեկօթս արար յաւանն Սուրենաշէն. եւ ի հասարակել գիշերոյն ետես լոյս մեծ ծագեալ ի վերայ ձորակին ուր էր գերեզման սրբոյն Թէոդորոսի, եւ հարցեալ ծանեաւ զպատճառն զոր պատմեաց նմա Դասիոս ։ Եւ ետ շինել անդ վկայարան յանուն սրբոյն Թէոդորոսի ուր մայր նորա Աղվիթոս ճգնողական վարուք կեցեալ անդր զամս եօթն բարի խոստովանութեամբ հանգեաւ ի Քրիստոս, եւ թաղեցաւ արտաքոյ դրան մատրանն. եւ Դասիոս քահանայ ի նմին վայրի թաղեալ կայ ի կողմն արեւելից ։ Եւ յետ ժամանակաց եղեւ տեղին այն վանք միանձանց անուանեալ Գորոբու սուրբ Թորոս, եւ գերեզման սրբոյն ուխտատեղի ամենայն ցաւագնելոց ։

Par la suite, son père Sourèn, venant à l'apprendre, essaya avec bien des supplications à le faire revenir au culte des idoles; mais comme il ne parvenait pas à le convaincre, il se mit à le terroriser par des menaces. Lui (cependant)
* B p. 212 a. s'enfuit * de la maison, se rendit au vallon appelé Selemnout et s'y cacha.

Son père, ayant découvert l'endroit, s'y rendit, et voyant qu'il demeurait ferme dans la foi du Christ, il fut pris de colère, le saisit par les cheveux et l'égorgea sur place. Le bienheureux Théodore était alors âgé de vingt-huit ans et six mois. Cette nuit-là une lumière éclatante jaillit sur le saint corps du martyr du Christ; et le prêtre Dasios, sur l'ordre de sa mère Aghvithos, se rendit à l'endroit et l'inhuma à la place même.

Quinze ans après environ, comme saint Grégoire passait par cet endroit, il fit halte le soir dans le bourg de Sourenachèn, et à minuit apercevant une forte lumière qui brillait sur le vallon où se trouvait la tombe de saint Théodore, il se renseigna et en apprit la raison par les explications de Dasios. Il y fit construire au nom de saint Théodore un oratoire où sa mère Aghvithos alla mener une vie ascétique pendant sept années et reposa en bonne confession dans le Christ; elle fut inhumée en dehors de la porte de l'oratoire. Le prêtre Dasios a sa sépulture aussi au même endroit du côté est. Longtemps après, cet endroit devint un couvent de religieux appelé saint Théodore (*Thoros*) de Gorob et le tombeau du saint un lieu de pèlerinage pour toutes sortes d'infirmités.

Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս քաջ եւ բարեպաշտ իշխանն Հայոց պարոն Թորոս որդի պարոն Լեւոնի ։

Եւ յայսմ եղեւ շինութիւն թագաւորական քաղաքին Կոստանդնուպօլսի ի ձեռն մեծին Կոստանդիանոսի, որ նուիրեաց ի պաշտպանութիւն ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ աստուածածնի ։]

Մարերի Ե եւ Մայիսի ԺԲ ։ Վարք երանելւոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոց ։

Այս սքանչելագործ եւ զարմանալի այրս Եպիփան էր ի սահմանաց Ելեւթերուպօլսի ի Փիւնիկիոյ, եւ էին ծնողքն Հրէայք հողագործք ։

Եւ յետ մահուան հօրն առաքեաց զնա մայրն իւր զի վաճառեսցէ արատաւոր էշ մի. * հանդիպեցաւ քրիստոնէի միոյ որոյ անունն էր Կղէոպիոս, եւ նա հարցանէր եթէ վաճառէ զէշն ։ Ասէ Եպիփան. Այո, վաճառեմ, բայց ատամբակ է ։ Եւ մինչդեռ խօսէին ընկէց էշն զԵպիփան եւ թափեաց զծունկսն ի բարձիցն ։ Իսկ Կղէոպիոս արարեալ զնշան խաչին ի վերայ վնասելոյ տեղւոյն եւ կոչեաց զանունն Քրիստոսի եւ ողջացոյց, եւ սաստեաց իշոյն եւ առժամայն անկեալ սատակեցաւ ։ Եհարց Եպիփան *A fol. 257 r° b.

6 Վարք ... Կիպրացւոց] Վարք սուրբ եւ սքանչելագործ հօրն մերոյ եւ մեծ վարդապետին Եպիփանու արքեպիսկոպոսին Կոստանդեա քաղաքին ի Կիպրոս կղզին B ‖ 10 Կղէոպիոս] Կղոպիոս B ‖ 12 խօսէին] ընդ միմեանս *add.* B ‖ 14 եւ սաստեաց ... սատակեցաւ *om.* B.

En ce jour également reposa dans le Christ le brave et pieux prince arménien, le baron Thoros, fils du baron Léon.

En ce jour eut lieu aussi la construction de la ville impériale de Constantinople par les mains du grand Constantin qui la voua à la protection de notre très sainte reine, la Mère de Dieu.]

5 MARÉRI, 12 Mai.

Vie du bienheureux Épiphane, évêque de Chypre.

Ce thaumaturge homme extraordinaire, Épiphane, était des environs d'Éleuthéropolis en Phénicie; ses parents étaient des Juifs cultivateurs.

Après la mort de son père, sa mère l'ayant envoyé vendre un âne défectueux, * il rencontra un chrétien dont le nom était Cléopius qui lui demanda s'il voulait vendre l'âne. Épiphane répondit : « Oui, je le vends, mais il rue. » Pendant qu'ils causaient, l'âne jeta à bas Épiphane qui eut les genoux disjoints des cuisses. Cléopius, ayant fait le signe de la croix sur l'endroit lésé en invoquant le nom du Christ, le guérit; puis il réprimanda l'âne qui tomba aussitôt mort. Épiphane demanda à Cléopius qui était le Christ? Il *A fol. 257 r° b.

վասն Քրիստոսի ցՀրէայսն թէ ո՞վ իցէ : Եւ նա ասէ. Յիսուս Քրիստոս է զոր խաչեցին Հրէայք : Եւ երթեալ պատմեաց մօրն իւրոյ :

Եւ յաւուր միում հանդիպեցաւ ի ճանապարհի առն միոյ կրօնաւորի որոյ անուն էր Լուկիանոս, եւ աղքատ մի որ խնդրէր ողորմութիւն ի նմանէ, եւ հանեալ զպարեգօտն իւր զգեցոյց աղքատին. եւ տեսեալ Եպիփան զի անկաւ յերկնից սպիտակ հանդերձ եւ ծածկեաց զԼուկիանոս, եւ ի զարման լեալ անկաւ յոտս նորա եւ աղաչէր զի արասցէ զինքն քրիստոնեայ : Եւ կրօնաւորն տարաւ զնա առ եպիսկոպոսն եւ մկրտեաց : Եւ տեսանէ եպիսկոպոսն զերեսս Եպիփանու լցեալ փառօք եւ պսակ ի գլուխ նորա :

Եւ յորժամ դարձաւ ի տուն իւր մեռաւ մայրն, եւ նա մկրտեալ զքոյր իւր եւ եդ ի կուսանաց վանս, եւ արար կրօնաւոր : Եւ ինքն զամենայն ինչս իւր բաշխեաց աղքատաց եւ գնաց ի վանս Լուկիանոսի : Եւ էր յայնժամ ամաց վեշտասանից * սուրբն Եպիփան, եւ պահէր երկուս եւ երիս աւուրս եւ ապա ճաշակէր հաց եւ աղ եւ ջուր, եւ զայն ոչ յագեցմամբ :

* A fol. 257 v° a.

Եւ յաւուր միում հանդիպեցաւ ճանապարհորդաց զի բարձեալ էին գրաստուց իւրեանց գինի, եւ ջուր ոչ գտանէին, եւ գրաստքն նուաղեցան յոյժ. եւ Եպիփան արար

2 մօրն իւրոյ] եւ ինքն Եպիփան անպաքին ի մանկութենէ ուսումնասէր էր եւ արագամիտ. եւ աշակերտեալ Տրիփոնի օրինականի, եղեւ հմուտ եւ տեղեակ ամենայն գրաւոր եւ անգիր աւանդից Հրէից *add.* B || 5 տեսեալ] ի զարմանալ իւրում յափշտակեցաւ մտօք եւ տեսանէր B — սպիտակ] լուսափայլ B || 8 լցեալ *om.* B || 12 սուրբն Եպիփան *om.* B || 14 յագեցմամբ] յագ B || 15 — p. 1487, l. 1. Եւ յաւուր ... բարձում] Եւ տուաւ նմա զօրութիւն սքանչելեաց, եւ ամենայն B.

lui répondit : « C'est Jésus-Christ que les Juifs ont crucifié. » Épiphane retourna à sa mère et lui raconta (les événements).

Un jour il rencontra sur la route un religieux dont le nom était Lucien (*Loukianos*) et un pauvre qui lui demandait l'aumône; ayant enlevé sa tunique; il en revêtit le pauvre, mais Épiphane aperçut une tunique blanche qui tombait du ciel et recouvrait Lucien. Saisi de crainte, il tomba aux pieds de Lucien et le pria de le faire chrétien. Le religieux le conduisit à l'évêque qui le baptisa. L'évêque aperçut la figure d'Épiphane remplie de gloire et une couronne sur sa tête.

Comme il rentrait chez lui, sa mère mourut; alors il fit baptiser sa sœur, la conduisit dans un couvent de vierges et en fit une religieuse. Quant à lui, il distribua tous ses biens aux pauvres et se retira au couvent de Lucien. Saint Épiphane * avait à ce moment seize ans, il jeûnait deux et trois jours, et ne prenait ensuite que du pain, du sel et de l'eau, et pas même à satiété.

* A fol. 257 v° a.

Un jour il fit la rencontre de voyageurs qui avaient chargé du vin sur leurs bêtes, mais qui ne trouvaient point d'eau pour leurs bêtes qui défail-

աղօթիւք զգինին ջուր եւ արբոյց անասնոցն ։ Եւ բազում հիւանդս եւ ախտաժէտս աղօթիւք միայն ողջացուցանէր, եւ դեւս ի մարդկանէ հալածէր ։ Եւ դեւ մի աղաղակեաց. Ո՛վ Եպիփան զքան եւ զերկու ամ հալածելոց ես զմեզ, գնացից ի Պարսիկս եւ մեծաւ աշխատութեամբ տարայց զքեզ անդ ։ Եւ երթեալ դեւն ի Պարսիկս եմուտ ի դուստր թագաւորին, եւ խեղդէր զնա եւ ասէր. Եթէ ոչ եկեսցէ Եպիփան ոչ ելանեմ ի քէն ։ Եւ փութանակի առաքեաց արքայն Պարսից եւ տարան զԵպիփան, եւ յերթալն նորա հալածեցաւ դեւն, եւ երկիր եպագ նմա թագաւորն ։

Եւ զոմն մի մոգ համր արար վասն անառակ խօսիցն, եւ դարձեալ վասն աղաչանաց թագաւորին արար զի խօսեցի մոգն ։ Եւ պատուիրեաց արքային. Եթէ ընդ Հոռոմոց մարտնչիս՝ լինիս թշնամի խաչելոյն, եւ թագաւորութիւն քո ի թշնամեաց քոց կորնչի ։

Եւ զայր մի սպանեալ հանին ընկենուլ շանց եւ ագռաւուց կերակուր. եւ Եպիփան * աղօթիւք կենդանացոյց եւ յանջրդի տեղւոջ ջուր բղխեցոյց ։ Եւ սատանայ եղեալ ի կերպարանս մարդոյ եւ հանդիպի ծոյլ եւ պղերգ կրօնաւորի ումեմն, եւ երկիր եառ նմա պագանել եւ առժամայն եմուտ ի նա. եւ երթեալ ի վանսն իւր մեծ *A fol. 257 v° b.

2-4 Եւ դեւ... զքեզ անդ *om.* B || 4 երթեալ դեւն ի Պարսիկս եմուտ] դեւ մտեալ B || 5 եւ ասէր... ի քէն] եւ լուեալ արքայն վասն Եպիփանու B || 6 արքայն Պարսից] ·արս B || 7 եւ երկիր... թագաւորն] եւ բժշկեցաւ աղջիկն B || 8 վասն... խօսեցի մոգն] դարձեալ առողջացոյց B || 10 խաչելոյն] Քրիստոսի B || 12 — p. 1488 l, 4 Եւ զայր... սատանայ] Եւ բազում պատուով հրաժարեալ ի թագաւորէն եկն յանապատն, եւ յանջրդին տեղւոջ աղօթիւք ջուր բղխեցոյց B.

laient. Épiphane, par ses prières, tourna le vin en eau et abreuva les animaux. Par sa seule prière il guérissait de nombreux malades et infirmes et chassait les démons des hommes. Un des démons se mit à crier : « O Épiphane, tu vas nous poursuivre pendant vingt-deux années, je vais partir pour la Perse et je t'y ferai venir avec beaucoup de peine. » Le démon se rendit en Perse, entra dans le corps de la fille du roi, et il l'étouffait en disant : « Si Épiphane ne vient pas ici je ne sortirai pas de ton corps. » Le roi de Perse s'empressa d'envoyer chercher Épiphane, et dès son arrivée le démon fut chassé. Le roi se prosterna devant (le saint).

Celui-ci rendit muet un mage à cause de ses propos libertins, puis, sur les instances du roi, il fit que le mage parla de nouveau. Il recommanda au prince : « Si tu fais la guerre aux Grecs tu te fais l'ennemi du Crucifié, et ton royaume sera détruit par tes ennemis. »

Un jour que l'on transportait un homme tué pour le jeter en pâture aux chiens et aux corbeaux, Épiphane le ressuscita par ses prières. *Il fit aussi jaillir de l'eau dans un terrain aride. Le démon, sous la forme d'un homme, rencontra un religieux paresseux et désœuvré, il le fit se prosterner devant *A fol. 257 v° b.

խռովութիւն շարժեաց ի կրօնաւորսն ։ Եւ լուեալ Եպիփանու գնաց ի վանսն, եւ ելեալ սատանայի փախեաւ ։

Եւ առիւծ մի եղանէր ի ճանապարհին եւ զբազումս սպանանէր. գնաց Եպիփան ի տեղին, եւ ի տեսանել գազանին զերեսս Եպիփանու սատակեցաւ ։

Եւ երթեալ Եպիփանու ի Ղեւոնդիուպօլիս եգիտ անդ աբեղայ մի որ ուսուցանէր ժողովրդեանն եւ հաւատարմացուցանէր եթէ յաւուր յարութեանն այս մարմինս ոչ յարիցէ, այլ փոխանակ սորա հողացեալ մարմնոյս այլ մարմին յարիցէ. եւ տղայք որ մեռանին կատարեալ մարմնով ոչ յառնեն ։ Իսկ երանելին Եպիփան սաստեաց նմա, եւ առժամայն կապեցաւ լեզուն եւ եղեւ անմռունչ ։ Եւ ուսոյց ամենեցուն ուղղափառ հաւատոն ։ Եւ այլ բազում սքանչելիս արար Եպիփան որ գրեալ է ի կատարեալ պատմութեան նորում ։

Եւ եղեւ մեռանել արքեպիսկոպոսին Կիպրոսի կղզւոյն. եւ ի տեսլեան հրամայեաց Տէր եպիսկոպոսացն զի ձեռնադրեսցեն զԵպիփան արքեպիսկոպոսապետ Կիպրոսի ։

* A fol. 258 r° a. * Եւ եղեւ ուրախութիւն մեծ յեկեղեցիսն եւ յամենայն կղզին ։

Եւ այլ շնորհ մեծ տուաւ Եպիփանու, զի յորժամ պատարագ մատուցանէր տեսանէր զզօրութիւնն Աստուծոյ զի իջանէր ի վերայ խորհրդեանն ։ Եւ ի միում աւուր

10 կատարեալ] լիակատար B || 13 զԵպիփան] արքեպիսկոպոս. եւ ըստ հրամանի Տեառն ձեռնադրեցին զնա *add.* B || 15 — p. 1489, l. 7 Եւ այլ շնորհ... խորանն *om.* B.

lui et entra aussitôt en lui. Le religieux, de retour à son couvent, mit un grand trouble parmi les religieux. Ce qu'ayant appris, Épiphane se rendit au couvent : le démon sortit et prit la fuite.

Un lion parcourait les chemins et tuait beaucoup de monde. Épiphane se rendit en ce lieu et lorsque le fauve aperçut le visage d'Épiphane, il creva.

Épiphane, s'étant rendu à Léontioupolis, y trouva un moine qui enseignait le peuple et affirmait qu'au jour de la résurrection ce corps ne ressusciterait point et qu'à la place de ce corps devenu poussière, c'est un autre corps qui ressusciterait; et que les enfants qui meurent avec un corps parfait ne ressusciteraient point. Le bienheureux Épiphane le réprimanda et aussitôt sa langue s'arrêta et il devint muet; puis (le saint) prêcha à tous la vraie foi orthodoxe. Il fit encore bien des miracles qui sont écrits dans sa biographie complète.

L'archevêque de l'île de Chypre vint à mourir. Le Seigneur ordonna en vision aux évêques de sacrer Épiphane archevêque de Chypre. * A fol. 258 r° a. *Ce fut une grande joie dans les églises et dans toute l'île.

Une autre grande faveur fut accordée à Épiphane, c'est que quand il célébrait le sacrifice il apercevait la puissance de Dieu qui descendait sur le mystère. Un jour pourtant, il ne l'aperçut point et, saisi de crainte, il vit du

ոչ ետես եւ յերկիւղէ լեալ՝ տեսանէր ի ձախակողմանէ սեղանոյն սարկաւագ մի զի ունէր ի ճակատն չար վէր բորոտութեան. հրամայեաց եւ հանին արտաքոյ եկեղեցւոյն, եւ ապա ետես զնշանն : Եւ յորժամ արձակեաց զժողովուրդն խոշտանգէր կալեալ բանիւք զսարկաւագն զի խոստովանեսցի զոր ինչ արարեալ էր չար գործս : Եւ նորա անկեալ յոտս խոստովանեցաւ եթէ ի գիշերին յայնմիկ ընդ կնոջ իւրում խառնակեցաւ : Եւ պատուիրեաց մեծաւ զգուշութեամբ զի յաւուր յորում մերձենայ յամուսինն իւր եթէ քահանայ կամ սարկաւագ կամ այլ որ յուխտէ եկեղեցւոյ ոչ ելցէ ի խորանն :

Եւ յաւուրս քահանայապետութեան նորա էին ի Կիպրոս հերձուածողք. օձեանք, սաբելացիք, կարպոկրիտեանք, նիկողայիտք, սիմոնացիք, բասիլեանք, զամենեսեան որ ոչ դարձան յուղղափառութիւն ի կղզւոյն հալածեաց :

Եւ յաւուրսն յայնոսիկ կոչեցին զԵպիփան ի Կոստանդինուպօլիս վասն աքսորելոյ զպատրիարքն զՅովհաննէս Ոսկեբերանն : Եւ Եպիփան ամենեւին ոչ էր հաւան * ի բանս Թագուհւոյն Եւդոքսեայ, եւ ոչ գրեաց վկայութիւն ի չարութեան տումարն վասն աքսորահմանելոյն Յովհաննու յաթոռոյն : Առաքեաց Թագուհին զմի ի ներքինեացն առ Յովհաննէս եւ պատուիրեաց ներքինոյն եթէ Ասա յանձնէ քումէ եթէ եւ Եպիփան գրեաց ի տումար աքսորանաց քոց : Եւ ներքինոյն արարեալ զհրամայեալսն դարձաւ առ Թագուհին : * A fol. 258 r° b.

12 էր հաւան] հաւանեցաւ B || 14 աքսորահմանելոյն] տարագրութեան B.

côté gauche de l'autel un diacre qui avait au front une mauvaise plaie de lèpre. Il ordonna de le faire sortir de l'église, et il aperçut à nouveau la vision. Après avoir congédié le peuple, il menaça d'interdiction le diacre s'il ne lui avouait point le méfait commis par lui. Celui-ci, se jetant à ses pieds, avoua que dans la même nuit il avait couché avec sa femme. (Épiphane) recommanda alors avec beaucoup de prudence que le jour où un prêtre, ou diacre ou tout autre membre de l'ordre ecclésiastique, s'approcherait de sa femme, il ne devait point monter à l'autel.

A l'époque de son pontificat il y avait des hérétiques en Chypre : des ophites, des sabelliens, des carpocrites, des nicolaïtes, des simoniens, des basilidiens (*basileanq*); il chassa de l'île tous ceux qui ne se convertirent point à l'orthodoxie.

En ce temps-là, on convoqua Épiphane à Constantinople pour exiler le patriarche Jean Chrysostome. Épiphane ne fut point du tout de l'avis* de l'impératrice Eudoxie et ne signa point son adhésion au décret pervers qui exilait Jean loin de son trône. L'impératrice envoya un de ses eunuques à Jean en lui ordonnant : « Dis spontanément : Épiphane aussi a signé le décret de ton exil. » L'eunuque s'acquitta de ce qui lui avait été ordonné et revint auprès de l'impératrice. * A fol. 258 r° b.

Իսկ Յովհաննէս տրտմեցաւ յոյժ եւ գրեաց թուղթ առ Եպիփան այսպէս. Ո՛վ զարմանչելի Եպիփան, յօժարեցա՞ր եւ դու յանկումն իմ եւ ետուր ձեռնագիր, ոչ եւս հասցես յաթոռն քո ։ Գրեաց եւ Եպիփան առ Յովհաննէս պատասխանի. Ո՛վ սուրբ ճգնաւոր Յովհաննէս, որպէս եւ ես ոչ հասեալ նստայց յաթոռն իմ, նոյնպէս եւ դու ոչ հասցես յաքսորանս քո ։ Եւ եղեւ ըստ բանի նոցա մեռանել Յովհաննու ի ճանապարհին, եւ թաղեցաւ ի Կոմանա ։ Եւ Եպիփան եմուտ ի նաւ զի երթիցէ ի Կիպրոս, հիւանդացաւ ի նաւին, եւ եղեւ մրրիկ ի ծովուն, եւ յոյժ ալէկոծէր նաւն ։ Եւ ասէ Եպիփան. Եթէ ոչ կատարի բան տեառն իմոյ Յովհաննու՝ խաղաղութիւն ծովուս ոչ դադարէ ։ Եւ առեալ զաւետարանն ի գիրկս իւր պատուիրեաց աշակերտացն իւրոց զոր ինչ հրամայելոցն էր, եւ ողջունեալ զամենեսեան աւանդեաց զհոգին իւր խաղաղութեամբ առ Աստուած Մայիսի ԺԲ ։ Եւ առժամայն դադարեաց մրրիկ ծովուն,
* A fol. 258 v° a. * եւ եղեւ խաղաղութիւն ալեացն ։ Էր երանելին Եպիփան ամաց հարիւր հնգետասանից ։ Եւ մի ոմն ի նաւավարացն վերացոյց զհանդերձս նորա տեսանել թէ թլփատեալ իցէ, եւ մեռեալ մարմինն Եպիփանու վերացոյց զոտս իւր իբրեւ կենդանի եւ եհար զնաւավարն ի սիրտն եւ անկեալ մեռաւ ։ Եւ ժողովեցան ամենեքեան որ ի նաւին էին եւ մեծաւ հառաչմամբ եդին զնա առ ոտս սրբոյն, եւ արտասուալից ողբովք խնդրէին զթողութիւն. եւ նոյնժամայն կենդանացաւ մեռեալն ։

4 հասեալ] այլ B || 5 քո] յերկրորդումն *add.* B || 11 Աստուած] Մարերի Ե եւ *add.* B || 13-17 Եւ մի ոմն... մեռեալն *om.* B.

Jean en fut très attristé et écrivit une lettre à Épiphane en ces termes : « O merveilleux Épiphane! toi aussi tu as consenti à ma perte, et tu as donné ta signature; tu ne parviendras plus à ton siège. » Épiphane écrivit à Jean en réponse : « O saint ascète Jean! de même que je n'arriverai plus à siéger sur mon trône, ainsi tu ne parviendras pas à ton lieu d'exil. » Et il arriva comme ils avaient dit. Jean mourut en route et fut enterré à Comana; quant à Épiphane, lorsqu'il s'embarqua pour se rendre en Chypre, il tomba malade dans le navire, une tempête se leva sur la mer, et le navire fut très secoué. Épiphane dit alors : « Tant que la parole de mon seigneur Jean ne se sera point réalisée, la fureur de cette mer ne se calmera pas. » Il prit l'évangile sur sa poitrine, recommanda à ses disciples tout ce qu'il avait à leur ordonner, et après avoir donné le salut à tous, il rendit paisiblement
* A fol. 258 v° a. son âme à Dieu le 12 mai. La tempête de la mer cessa aussitôt et * le calme régna sur les vagues. Le bienheureux Épiphane était âgé de cent quinze ans. Un des matelots souleva ses vêtements pour voir s'il était circoncis, mais le cadavre d'Épiphane leva les pieds, comme s'il était vivant, et porta un coup au cœur du matelot qui tomba mort. Tous ceux qui se trouvèrent sur le navire s'assemblèrent et le posèrent, avec de grands sanglots, aux pieds du saint, en demandant le pardon avec des larmes et des gémissements; aussitôt le mort ressuscita.

Եւ յորժամ հասին ի Կիպրոս լուր եղեւ յամենայն կղզին եւ ի Կոստանդիա քաղաքն, գնացին ընդ առաջ մոմեղէնօք եւ խնկօք, եւ հանին զերանելին ի ցամաք, եւ կոծ մեծ եղեւ ի քահանայսն եւ ի կրօնաւորսն եւ յամենայն ժողովուրդն ։ Եւ կոյրք երեք անկան ի վերայ սուրբ մարմնոյն, եւ բացան աչք նոցա ։ Եւ յորժամ տարան յեկեղեցին խորհուրդ արարին ամենայն եպիսկոպոսունքն եւ ուխտականք եկեղեցւոյն թէ ո՞ր թաղեսցեն զնա, եւ հրաման եհաս ի թագաւորէն զի թաղեսցեն զնա յեկեղեցւոջն, եւ արարին այնպէս ։

Մարերի Զ եւ Մայիսի ԺԳ ։ Վկայութիւն սրբուհւոյ կուսի աղախնոյն Քրիստոսի Գլիկերիայ ։

Սրբուհի եւ կոյս վկայն Քրիստոսի * Գլիկերիա էր ի ժամանակս Անտոնինոսի * A fol. 258 v° b.
կռապաշտ արքային եւ Սաբինոսի դատաւորին ։ Եւ ի քաղաքին Տրայանուպօլիս յորժամ զոհս մատուցանէին կռոցն՝ գրեաց Գլիկերիա ի ճակատն իւր զանունն Քրիս-

2 խնկօք] բուրվառօք B || 3-4 Եւ կոյրք ... աչք նոցա *om.* B || 7 այնպէս] փառաւորեալ զՔրիստոս *add.* B || 8 Վկայութիւն ... Գլիկերիայ] Վկայութիւն Գլիկերիասայ կուսի, զոր Գլերիա կոչեն Յոյնք B | 10 էր] հաւատացեալ եւ բնակէր ի Տրայանուպօլիս *add.* B | 11 եւ ի քաղաքին Տրայանուպօլիս *om.* B.

Lorsqu'ils furent arrivés à Chypre, la nouvelle se répandit par toute l'île et à la ville de Constantia[1]. On alla au-devant avec des cierges et de l'encens et on déposa à terre le bienheureux. Il y eut de grandes lamentations parmi les prêtres, les religieux et tout le peuple. Trois aveugles se jetèrent sur le saint corps, et leurs yeux s'ouvrirent. Lorsqu'il fut amené à l'église, tous les évêques et les membres du clergé tinrent conseil pour décider où il serait inhumé, mais un ordre de l'empereur arriva prescrivant de l'inhumer dans l'église ; et ils firent ainsi.

6 MARÉRI, 13 Mai.

Martyre de la vierge sainte, la servante du Christ Glycéria.

La sainte vierge et martyre du Christ * Glycéria vivait aux jours d'An- * A fol. 258 v° b.
tonin, l'empereur impie, et du juge Sabinus. Pendant qu'on immolait aux idoles dans la ville de Trajanopolis, Glycéria écrivit sur son front le nom

1. Autre nom de Salamine, métropole ecclésiastique de Chypre et siège d'Épiphane; cf. J. Hackett, *A history of the orthodox church of Cyprus*, Londres, 1901, pp. 244-246.

տափ եւ արար զնշան սրբոյ խաչին. գնաց առ դատաւորն եւ ասէ. Քրիստոնեայ եմ եւ աղախին Քրիստոսի : Ասէ դատաւորն. Առ զամբարս եւ մատո զոհս Աստուծոյ : Ասէ սրբուհին. Ես զոհս մատուցանեմ Աստուծոյ իմոյ պատարագ օրհնութեան : Եւ ցուցանէր ժողովրդեանն զնշան խաչին որ ի ճակատին էր :

Գնաց ի տաճարն եւ զԴիոնիսի բագինն խորտակեաց. եւ անօրէնքն զնա քարկոծ արարեալ ոչ կարացին վիրաւորել : Եւ կալեալ զերանելի կինն բռնադատէին ուրանալ զՔրիստոս, եւ ոչ հաւանեցաւ : Կախեցին զհերացն եւ քերեցին զմարմինն. եւ հրեշտակ Տեառն եհար զդահիճսն, եւ անկան որպէս մեռեալք : Եւ արգելին զնա ի բանդ աւուրս բազումս անսուաղ, եւ հրեշտակ Տեառն կերակրէր զնա : Եւ երթեալ դատաւորին ի բանդն ետես սկաւառակ կաթամբ եւ հաց եւ ջուր, եւ զարմացաւ զի դուռն փակեալ եւ կնքեալ էր :

Գնաց դատաւորն ի Հերակլէա ի քաղաքն Թրակաց եւ տարաւ զկնի իւր զաղախինն Քրիստոսի եւ անդ յոյժ նեղեաց զնա զոհել կռոցն եւ ոչ լուաւ : Արկին զնա ի բոցաքեալ հուր եւ * իջեալ անձրեւ շիջոյց զհուրն : Քերթեցին զճակատն յունկանէ յունկն, եւ արկին ի բանդ երկաթի կապանօք. եւ հրեշտակ Տեառն իջեալ ելոյծ զկապանսն եւ զճակատն ողջացոյց : Եւ դահիճն Լաւոդիկոս մտեալ ի բանդն եգիտ զսրբուհին լուծեալ

* A fol. 259 rº a.

6 վիրաւորել] վնասել B || 7 զմարմինն] քերանօք *add.* B || 8 եւ հրեշտակ ... մեռեալք *om.* B || 9 եւ հրեշտակ... զնա] եւ խնամօքն Աստուծոյ մնաց կենդանի B — Եւ երթեալ ... կնքեալ էր *om.* B || 14 իջեալ] ի գիշերին *add.* B.

du Christ, fit le signe de la sainte croix, alla trouver le juge et lui dit : « Je suis chrétienne et servante du Christ. » Le juge lui dit : « Prends des torches et offre des sacrifices à Dieu. » La sainte répondit : « Moi, comme victimes, j'offre à mon Dieu un sacrifice de bénédiction. » Et elle montra au peuple le signe de la croix qu'elle portait sur son front.

Elle se rendit au temple et brisa l'idole de Dionysos. Les impies la lapidèrent mais ne purent la blesser. Ils saisirent alors la bienheureuse femme et la pressèrent de renier le Christ, mais elle n'y consentit point. On la suspendit par les cheveux et on lui déchira le corps, mais l'ange du Seigneur frappa les bourreaux qui tombèrent comme morts. On l'enferma dans une prison de nombreux jours sans nourriture, mais l'ange du Seigneur la nourrissait. Le juge, s'étant rendu à la prison, y aperçut un bol de lait, du pain et de l'eau, et en fut émerveillé, car la porte était fermée et scellée.

Le juge se rendit à Héraclée, ville de Thrace, emmenant à sa suite la servante du Christ, et là, il la pressa beaucoup d'immoler aux idoles, mais elle ne l'écouta point. On la jeta dans les flammes d'un grand feu, mais une pluie * se mit à tomber et éteignit le feu. On lui écorcha le front d'une oreille à l'autre et on la jeta en prison chargée de fers, mais l'ange du Seigneur descendit délier les chaînes et guérit son front. Le bourreau Laodicus

* A fol. 259 rº a.

ի կապանացն եւ զճակատն ողջացեալ, հաւատաց ի Քրիստոս եւ երթեալ առ դատաւորն խոստովանեցաւ զանունն Քրիստոսի եւ հատին զգլուխ նորա ։

Եւ զԳղիկերիա ընկեցին կերակուր լինել գազանաց եւ ոչ մերձեցան ի նա ։ Արձակեցին այլ գազան եւ նա ժանեօքն եհատ զաղախինն Քրիստոսի, բայց ոչ վիրաւորեաց. եւ առժամայն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մայիսի ԺԳ ։ Եւ Դոմետիանոս եպիսկոպոսն թաղեաց զնա պատուով ի քաղաքին իւրում ի Հերակլիա ։

Մարերի Է եւ Մայիսի ԺԴ ։ Վկայաբանութիւն սրբոյն Իսիդորի
եւ Մեռոպի կուսի ։

Քրիստոսի մարտիրոսն Իսիդորոս զօրական էր յԱղեկսանդրիա քաղաքէն, յաւուրս կռապաշտ արքային Դեկոսի, եւ գնաց ընդ այլ զօրականսն նաւօք ի Հիոն կղզին ։

Եւ մի ոմն ի զօրականացն Յուլիոս անուն մատնեաց զնա առ հազարապետն Նումերիոս եթէ քրիստոնեայ է ։ Եւ կոչեցեալ առ ինքն հարցանէր ։ Եւ սուրբն Իսիդորոս համարձակութեամբ, * ջերմեռանդն սիրով եւ անխախտելի մտօք խոստովա- * A fol. 259 r° b.

4 ժանեօքն] ժանիւքն B || 5 առ Աստուած] Մարերի Զ եւ B || 6 Հերակլիա] Թիրակայ *add.* B || 7 Վկայաբանութիւն] Վկայութիւն B — Իսիդորի] Իսիդորոսի B || 8 Մեռոպի] Միւռոպի B — կուսին] սրբուհւոյն B || 11 Յուլիոս] Յուլիանոս B || 12 Նումերիոս] Նումերիանոս B.

ayant pénétré dans la prison y trouva la sainte déliée des chaines et ayant le front guéri; il crut au Christ, se rendit auprès du juge et confessa le nom du Christ. On lui trancha la tête.

On jeta Glycéria en pâture aux fauves, mais ils ne s'approchèrent point d'elle. On lança sur la servante du Christ un autre fauve qui la mordit avec ses crocs mais ne la blessa pas. Elle rendit aussitôt son âme à Dieu le 13 mai. L'évêque Dométianus l'inhuma avec honneurs dans sa ville d'Héraclée.

7 MARÉRI, **14 Mai.**

Martyre de saint Isidore et de la vierge Myropée.

Le martyr du Christ Isidore était soldat en la ville d'Alexandrie, aux jours de Dèce, l'empereur impie. Il partit avec d'autres soldats sur des navires pour l'île de Chio (*Hion*).

Un des soldats, nommé Jules (*Youlios*), le dénonça au tribun Numérius comme étant chrétien; et celui-ci, l'ayant mandé auprès de lui, l'interrogea. Saint Isidore, avec hardiesse, * pieux amour et fermeté d'esprit, confessa * A fol. 259 r° b.

նեցաւ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Եւ շատ ջանացան զի ուրասցի զՔրիստոս եւ ոչ կարացին եւ հրամայեաց հատանել զգլուխ նորա ։

Եւ յորժամ տարան ի տեղին աղօթեաց այսպէս. Գոհանամ զքէն Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի, լուր աղօթից իմոց եւ ընկալ զհոգիս իմ ի ձեռս քո ։ Եւ ամենեքեան որ աղաչեն զքեզ անուամբս իմով Իսիդորոսի եթէ ի սովի, եթէ ի փորձութեան, եթէ ի ծովի, լուր աղօթից նոցա եւ կատարեա զխնդրուածս նոցա եւ փրկեա զնոսա յամենայն փորձութենէ ։ Եւ խոնարհեցուցեալ զծունկսն յերկիր, արար զնշան խաչին եւ ապա հատին զգլուխ նորա Մայիսի ԺԴ ։ Եւ Ամոնիոս քահանայն թաղեաց զնա ի նոյն տեղւոջ. եւ ինքն գնաց յԵլեսպոնտոս մարտիրոսացաւ եւ ընկալաւ զպսակ ի Քրիստոսէ ։

Եւ կին մի հաւատացեալ որում անուն էր Միւռոպի, փախեաւ վասն հալածանացն յԵփեսոս եւ ի Հիոն կղզին եւ յագարակս իւր քննեաց զնշխարս սրբոյն Իսիդորոսի, եւ յայտնեաց նմա հրեշտակ Տեառն եւ հանեալ պատեաց սուրբ կտաւովք եւ անուշահոտութեամբ պահեաց ի տան իւրում ։ Եւ լուեալ կռապաշտիցն խոշտանգէին զնա տալ զնշխարսն զի այրեսցեն եւ վասն զի ոչ ետ եւ ոչ եցոյց զտեղին եւ ոչ ինքն
* A fol. 259 v° a. ուրացաւ զՔրիստոս՝ հատին զգլուխ նորա, եւ եղեւ * վկայ Քրիստոսի ։

2 կարացին] խախտել զնա ի սիրոյն Քրիստոսի *add.* B || 4 Հոգի] աղաչեմ զքեզ *add.* B — Եւ ամենեքեան… փորձութենէ *om.* B || 8 նորա] Մարերի է եւ *add.* B — զնա] զմարմին սրբոյ վկային B || 13 յայտնեաց… Տեառն] յայտնեցաւ նմա ազդեցութեամբ Տեառն B.

le nom de Notre-Seigneur Jésus-Christ. On le pressa vivement de renier le Christ, mais on n'y parvint pas, et (le juge) ordonna de lui trancher la tête.

Lorsqu'on l'eut conduit au lieu de l'exécution, il pria Dieu en ces termes : « Je vous rends grâces, Père, Fils et Saint-Esprit, exaucez mes prières et recevez mon âme dans vos mains. Et que tous ceux qui vous prieront en mon nom d'Isidore, que ce soit en temps de famine, ou de tentation, ou sur mer, exaucez leur prière, accordez-leur leurs vœux et délivrez-les de toute épreuve. » Il fléchit les genoux à terre, fit le signe de la croix, et on lui trancha la tête le 14 mai. Le prêtre Ammonius l'inhuma à la place même; il partit ensuite pour l'Hellespont où il fut martyrisé et reçut la couronne du Christ.

Une femme fidèle dont le nom était Myropée s'enfuit, à cause de la persécution, à Éphèse et à l'île de Chio (*Hion*); elle rechercha dans la campagne les restes de saint Isidore, et l'ange du Seigneur les lui révéla. Elle les exhuma, les enveloppa de linge propre et de parfums et les conserva dans sa maison. Ce qu'ayant appris, les idolâtres la brutalisèrent pour se faire remettre les restes et les brûler, mais comme elle ne les rendit point, n'indiqua pas l'endroit et ne renia point le Christ, on lui trancha la tête et
* A fol. 259 v° a. elle devint * martyre du Christ.

Եւ յետ ժամանակաց յաւուրս քրիստոնէութեան բնակիչք Խիոն կղզւոյն շինեցին մեծ եւ գեղեցիկ եկեղեցի յանուն սրբոյն Իսիդորոսի եւ սրբոյն Միւռոպի, եւ հանգուցին անդ զպատուական նշխարս նոցա ։

[B * Ի սմին վկայութիւն երանելոյն Նիկողայոսի նոր մարտիրոսի ։ * B p. 215 b.

Քաջ վկայն Քրիստոսի Նիկողայոս էր ի քաղաքէն Պրուսայու, ազգաւ հայ, բարեպաշտ ծնողաց զաւակ, եւ էր անուն հօր նորա Աթաճան եւ մօրն Շուշան ։ Եւ յորժամ եղեւ ութ ամաց մեռաւ հայր նորա եւ ոչ մնաց ինչ եւ մայրն գործէր ձեռօք իւրովք, եւ սնուցանէր զնա բազում աշխատանօք ։ Եւ յետ փոքր մի ուսանելոյ զգիր՝ ետ զնա յարհեստ կազմելոյ զմատման եւ հասեալ ի չափ հասակի ի կրպակի ի շուկայն որ կոչի Թահտաքալէ Պօղազի, եւ աշխատութեամբ իւրով հոգայր զկարեւոր պէտս տան իւրոյ ։ Եւ էր պատանին այս գեղեցիկ տեսլեամբ եւ վայելուչ հասակաւ, հեզ, քաղցրաբարոյ եւ երկիւղած յԱստուծոյ ։

Իսկ այլազգիք որք կրպակակիցք էին Նիկողայոսի զչարեալ ընդ գեղեցկութիւն կերպարանին եւ ընդ ազնուութիւն բարուցն, բազում անգամ յորդորէին զնա եւ աղաչէին դառնալ ի կրօնս իւրեանց, խոստանալով զնա փեսայացուցանել ընդ դստեր մեծատան ուրուք ընդ որ ինքն հաճեսցի, եւ ճոխանալ ընչիւք եւ փառօք եւ պատուով ։ Իսկ նա արհամարհէր զայն ամենայն մեծութիւն եւ զփառս զոր խոստանային նմա,

3 անդ] զսուրբ եւ *add.* B.

Plus tard, aux jours du christianisme, les habitants de l'île de Chio construisirent une grande et belle église au nom de saint Isidore et de sainte Myropée et y déposèrent leurs précieux restes.

[B* En ce même jour martyre du bienheureux Nicolas, le nouveau martyr. * B p. 215 b.

Le vaillant martyr du Christ Nicolas était de la ville de Brousse, de nationalité arménienne, fils de parents pieux. Le nom de son père était Athadjan, celui de sa mère Susanne. Lorsqu'il eut huit ans, son père mourut et il ne resta rien. Sa mère travailla de ses mains pour l'élever avec beaucoup de peine. Après qu'il eut un peu appris les lettres, (sa mère) le mit apprenti à manier le fuseau. Parvenu à l'âge adulte, il ouvrit une boutique dans le bazar appelé Taḥta-kalé Boghazi, et subvenait par son travail aux besoins de la maison. Ce jeune homme était beau d'aspect, d'une taille élégante, paisible, d'une bonne nature et craignant Dieu.

Les infidèles qui étaient voisins de boutique de Nicolas, jaloux de son beau visage et de la noblesse de son caractère, l'engagèrent maintes fois en le suppliant à se convertir à leur religion en lui promettant de le fiancer à la fille d'un homme riche à son choix et de le rendre riche en biens, en gloire et en honneurs. Mais lui, il méprisait toutes les grandeurs et la gloire qu'on

լու համարեալ զաղքատութեամբ եւ անարգանօք կալ ընդ Քրիստոսի քան մեծութեամբ եւ փառօք առանց Քրիստոսի :

* B p. 216 a. Տեսեալ նոցա զհաստատութիւն մտաց * պատանւոյն թէ անդրդուելի կայ ի հաւատսն Քրիստոսի սկսան ահ արկանել նմա ասելով թէ Յամառութեամբ քով ոչ միայն զայս ամենայն բարիս այլ եւ զկեանս քո հանդերձեալ ես կորուսանել, զի դու առաջի մեր ուրացար զհաւատն քո եւ ընկալար զայլազգութիւն եւ այժմ կամիս ի բաց թողուլ զայն, եւ լինել քրիստոնեայ :

Ասէ ցնոսա երանելի պատանին. Մի ինչ կարծէք եթէ ի սպառնալեացն մահու երկուցեալ դառնամ ի կրօնս ձեր, զի ոչ տանջանք եւ ոչ մահ կարեն մեկնել զիս ի հաւատոցն Քրիստոսի զոր ունիմ ի մանկութենէ իմմէ : Ի բանիցս յայսցանէ ոմանք ի դրացեաց անօրէն ազգացն որք բարեխիղճք էին, ի միտ առեալ թէ յօժար է մեռանիլ քան թէ փոքր մի ի հաւատոցն խախտիլ, խրատ տան նմա հացկերոյթս ինչ առնել ոսոխացն, եւ ինքեանք միջնորդ եղեալ լռեցուցեն զլեզուս նոցա ի տարապարտ ամբաստանութենէն :

Եւ նորա հաւանեալ արար կոչունս մեծահաց, եւ այնուհետեւ լռեցին զամս հինգ. եւ ինքն ազատեալ եղեալ ի զրպարտութենէ նոցա եմուտ ի կարգ աշխարհի : Եւ հազիւ կացեալ ընդ ամուսնոյն զամիսս վեշտասան, թշնամիքն նորա խորհեցան ընդ միմեանս խորհուրդ չար, եւ ժողովեալ եկին առ նա եւ ասեն. Ո՛վ դու զինչ է այդ զոր

lui promettait, préférant rester pauvre et méprisé avec le Christ que comblé de grandeur et de gloire sans le Christ.

* B p. 216 a. Lorsqu'ils eurent constaté la fermeté de l'intention * du jeune homme de rester inébranlable dans la foi du Christ, ils commencèrent à le menacer en disant : « Par ton obstination tu vas perdre non seulement tous ces biens mais aussi ta vie, car tu as renié ta foi en notre présence et tu as accepté la religion musulmane, et maintenant tu veux la quitter et devenir chrétien. »

Le bienheureux jeune homme leur répondit : « Ne croyez point que je me convertirai à votre religion par les menaces de mort, car ni les tortures ni la mort ne peuvent me détacher de la foi au Christ que j'ai depuis mon enfance. » Sur ces paroles, quelques voisins infidèles mais bienveillants, comprenant que le jeune homme était plutôt disposé à mourir que de s'ébranler tant soit peu de sa foi, lui proposèrent de donner un dîner à ses adversaires, où eux-mêmes, intervenant, feraient taire leur langue au sujet d'une dénonciation inopportune.

Ayant consenti, il donna un grand dîner, et les autres gardèrent le silence pendant cinq années. Quant à lui, délivré des soucis d'une délation de leur part, il se maria ; mais à peine avait-il vécu avec son épouse seize mois que ses ennemis tinrent entre eux un méchant conseil et, s'étant réunis, vinrent le trouver et lui dirent : « O toi ! qu'est-ce que c'est ce que tu fais? N'as-tu pas

առնես. ո՞չ աւանիկ առաջի մեր ամենեցուն ընկալար զկրօնս մեր, եւ այժմ արհամարհեալ զայն՝ պաշտես զնախնի հաւատն քո. համարիցիս արդեօք եթէ իրաւունք եւ դատաստան բարձեալ իցէ ի քաղաքէ աստի : Ասէ ցնոսա Նիկողայոս. Ի քրիստոնէական հաւատս ծնեալ եմ եւ ի սոյն մեռանիմ, եւ զայլ ինչ հաւատ ոչ բնաւ ընկալայ եւ ոչ ընկալայց երբէք :

Յայնժամ սաստիկ սպառնալեօք եւ կոպտութեամբ բուռն հարեալ զնմանէ տարեալ կացուցին առաջի դատաւորին, եւ չարախօս եղեն ստութեամբ եւ ասեն. Այրս այս առաջի մեր ուրացաւ * զհաւատս իւր եւ դարձաւ յայլազգութիւն, եւ դաւանեաց զդաւանութիւնս մեր, եւ այժմ թողեալ զայն՝ պաշտօն տանի խափանեալ կրօնից նախնեաց իւրոց : * B p. 216 b.

Եւ դատաւորն պնդագոյնս հարցափորձ արարեալ՝ իբրեւ եգիտ հաստատուն ի հաւատս Քրիստոսի, սկսաւ ողոքանօք եւ խոստմամբ պարգեւաց եւ պատուոյ յորդորել զնա, եւ ապա սպառնալիս չարչարանաց եւ մահու ի վերայ անել զի հաւանեցուցանել կարասցէ : Իսկ Քրիստոսի վկայն ոչ ողոքանացն ինչ, եւ ոչ ի սպառնալեացն զարհուրեցաւ, այլ աներկիւղ համարձակութեամբ առաջի ատենին խոստովանեցաւ զանունն Քրիստոսի :

Ընդ որ բարկացեալ դատաւորն հրամայեաց եւ արկին ի բանդ, եւ պնդեցին զոտս նորա ի կոճեղս, եւ եկաց անդ զաւուրս տասն : Եւ քրիստոնեայք որք էին ի քաղաքին բազմօք ջանացան ազատել զնա արծաթ յոյժ խոստանալով նմա բայց չեղեւ հնար :

accepté notre religion en présence de nous tous et maintenant voici que tu la méprises et que tu pratiques ton ancienne foi; crois-tu peut-être que la justice et le tribunal aient disparu de cette ville? » Nicolas leur répondit : « Je suis né dans la foi chrétienne et j'y mourrai; je n'ai jamais accepté d'autre religion et n'en accepterai jamais. »

Alors l'ayant saisi avec de terribles menaces et brutalisé, ils le conduisirent devant le juge, le calomnièrent faussement et dirent : « Cet homme a renié sa foi * en notre présence et s'est converti à l'islamisme, il a pratiqué notre religion et maintenant, l'ayant abandonnée, il pratique la religion défendue de ses ancêtres. » * B p. 216 b.

Le juge le soumit à un sévère interrogatoire et, le trouvant ferme dans la foi du Christ, il se mit à le conseiller avec sollicitations et promesses de richesse et d'honneurs, puis il ajouta des menaces de tortures et de mort dans l'espoir de le persuader. Mais le martyr du Christ n'eut ni égard aux sollicitations, ni peur des menaces; au contraire, avec une vigoureuse hardiesse, il confessa devant le tribunal le nom du Christ.

Sur quoi le juge irrité ordonna de le jeter en prison, où l'on attacha ses pieds à un bloc de bois; il y resta dix jours. Les chrétiens qui se trouvaient dans la ville firent de grands efforts pour le sauver, en promettant beaucoup

Նա եւ այլազգիք ոմանք տեսանելով թէ տարապարտ մեռանելոց է հարեալ ի խղճէ մտաց գնացին առ դատաւորն եւ վկայեցին զստութենէ ամբաստանողացն, այլ ոչ լուաւ նոցա :

Եւ մինչդեռ ի բանտին կայր երանելին, եմուտ առ նա քահանայ ոմն եւ հաղորդեաց զնա ի կենդանարար մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, եւ քաջալերեալ զօրացոյց զնա յուսով կենացն յաւիտենից : Եւ ի վաղիւն ածին զնա միւսանգամ յատեան դատաւորին, եւ քաղցր եւ ողոք բանիւք խրատ տայր նմա գալ ի հաւանութիւն. եւ այլազգիք թշնամիք նորա արծաթ բազում մատուցանէին սրբոյն, եւ խոստանային զմեծամեծս : Իսկ նա ի բաց մերժեալ զարծաթն ասէ. Գանձք ձեր եւ մեծութիւն եւ հաւատք ձեր ձեզ լիցի, ես քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ, եւ պատրաստ եմ մեռանիլ վասն անուան նորա, զոր առնելոց էք ընդ իս արարէք * վաղվաղակի : Յայնժամ ամբոխն այլազգեաց միաբարբառ աղաղակեցին. Հաւատուրաց է, արժանի է մահու : Եւ դատաւորն առժամայն ետ վճիռ գլխատման :

* B p. 217 a.

Մերկացուցին զնա եւ կապեցին զձեռսն յետս, եւ բոկոտն եւ գլխիբաց շրջեցուցանէին զնա ընդ ամենայն փողոցս եւ հրապարակս քաղաքին : Եւ դահիճն ունելով զսուրն մերկ ի ձեռին երթայր առաջի, եւ քարոզն աղաղակէր. Որ ոք ընդունի զայլազգութիւն եւ անդրէն ի բաց թողու, հաւատուրաց է եւ այս պատիժ է նորա :

d'argent (au juge), mais ce fut en vain. Plusieurs même parmi les infidèles, voyant qu'il allait mourir injustement, et touchés par le remords, allèrent trouver le juge et témoignèrent de la fausseté des calomniateurs, mais (le juge) ne les écouta point.

Pendant que le bienheureux se trouvait en prison, un prêtre put trouver accès auprès de lui et le fit communier au corps et au sang vivifiants du Fils de Dieu, il l'encouragea et le fortifia dans l'espoir de la vie éternelle. Le lendemain on l'amena de nouveau au tribunal du juge, lequel par de douces et suppliantes paroles lui conseilla de se laisser convaincre; les ennemis infidèles (du saint) lui offrirent beaucoup d'argent, en lui promettant de grands honneurs. Mais il repoussa l'argent et dit : « Gardez pour vous votre argent, vos honneurs et votre religion; moi je suis chrétien et serviteur du Christ, je suis prêt à mourir pour son nom; ce que vous avez à faire de moi, faites-le * tout de suite. » Alors la foule des infidèles se mit à crier unanimement : « C'est un renégat, il mérite la mort. » Le juge décréta aussitôt sa décapitation.

* B p. 217 a.

On le dépouilla de ses vêtements, on lui attacha les mains par derrière, et on le promena pieds nus et la tête découverte à travers toutes les rues et les places de la ville. Le bourreau, le sabre au clair à la main, marchait devant lui, et un héraut criait : « Celui qui accepte la religion musulmane et l'abandonne ensuite est un renégat, et ceci est son châtiment. »

Իսկ քաջ նահատակն Քրիստոսի ուրախ սրտիւ եւ զուարթ երեսօք երթայր, եւ զաչսն յերկինս ունելով ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս ընկա՛լ զիս առ քեզ, զի վասն քո հեղում զարիւն իմ ։ Եւ բազմութիւնն այլազգեաց որ երթային ընդ նմա աղաչէին զնա եւ ասէին. Ո՛վ պատանի, մինչեւ ցե՞րբ յամառիս, ընկա՛լ զկրօնս մեր եւ զերծիր ի մահուանէ, եւ մի՛ ընդ վայր կորուսաներ զգեղեցիկ մանկութիւն քո ։ Իսկ նա ոչ ինչ տայր պատասխանի այլ աղօթէր եւ օրհնէր զԱստուած ։

Տեսեալ այլազգեաց եթէ ոչ կարեն հանել զմիտս նորա, ստիպեցին զմայր նորա եւ զազգականս յորդորել զնա ընդունել զայլազգութիւն եւ կեալ ։ Եւ նոքա թէպէտ եւ յօժարամիտ էին ընդ մարտիրոսական մահ նորա, բայց առ ահի այլազգեաց եկեալ աղաչէին ասելով. Գոնէ բերանով միայն ասա՛ թէ ընդունիմ զհաւատս ձեր, եւ ապրեցո՛ այժմ զանձն քո ի մահուանէ. եւ ապա գնացեալ յերկիր օտար պահեա՛ զհաւատն Քրիստոսի զոր ունիս ի սրտի ։

Եւ զի մայր նորա լայր կականագին՝ հայեցեալ ի նա ասէ. Մատո՛ զձեռն քո մայր իմ, եւ համբուրեցից զնա ։ Եւ յորժամ համբուրեաց ասէ. Մայր իմ, աղաչեմ զքեզ՝ մի՛ այլ եւս կայցես առ իս, այլ երթ ի տուն քո եւ աղօթս արա՛ վասն իմ, զի ես տամ զանձն իմ ի մահ վասն սիրոյն Քրիստոսի ։

* Եւ հասեալ ի տեղին կատարման ամբարձ զաչս իւր յերկինս եւ աղաղակեաց. Տէր իմ եւ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, որ վասն իմ հեղեր զպատուական արիւնդ * B p. 217 b.

Quant au vaillant martyr du Christ, il marchait le cœur plein de joie et le visage souriant; élevant ses yeux au ciel, il disait : « Mon-Seigneur Jésus-Christ, reçois-moi près de toi, car c'est pour Toi que je verse mon sang. » La multitude d'infidèles qui l'accompagnait le priait et disait : « O jeune homme! jusques à quand vas-tu t'obstiner? Accepte notre religion et tu éviteras la mort, ne perds point en vain ta belle jeunesse. » Mais il ne leur répondait point, priait et bénissait Dieu.

Les infidèles, voyant qu'ils ne pouvaient le convaincre, obligèrent sa mère et ses parents à l'engager d'accepter la religion musulmane afin de vivre. Bien qu'ils fussent désireux de sa mort en martyr, toutefois par crainte des infidèles, ils vinrent le prier en ces termes : « Dis au moins de bouche que tu acceptes leur religion et délivre ta personne de la mort; tu partiras ensuite à l'étranger et tu conserveras la foi du Christ que tu as dans ton cœur. »

Et comme sa mère pleurait avec de grands sanglots, il la regarda et dit : « Approche ta main, ma mère, pour que je la baise. » Et après l'avoir baisée il dit : « Ma mère, je t'en prie, ne reste plus à mes côtés, va chez toi et prie pour moi, car je me livre à la mort pour l'amour du Christ. »

* Arrivé au lieu de l'exécution, il leva les yeux au ciel et cria : « Mon-Seigneur et mon Dieu Jésus-Christ, qui as versé Ton précieux sang pour moi, je * B p. 217 b.

քոյ, գոհանամ զքեն զի եւ զանարժանս զիս արժանի արարեր այսօր հեղուլ զարիւն իմ վասն անուանդ քո սրբոյ : Եւ զայս իբրեւ ասաց եդ ծունր առաջի դահճին, եւ նա փայլփնացայտ շողշողէր զսուրն եւ յապաղէր հարկանել զի թերեւս յահաղին սրոյն պակուցեալ հաւանեսցի : Եւ այլազգիք ամենայն որք շուրջն կային հայեցեալ ի բարեվայելուչ տեսիլ գուարթածաղիկ հասակի նորա, իբրեւ կարեկցութեամբ իմն ստիպէին զնա ասելով. Ո՛վ պատանի, մի՛ յամառիր, ընկա՛լ զայլազգութիւն եւ ապրեսցիս :

Յայնժամ քաջ նահատակն Քրիստոսի դարձաւ առ դահիճն եւ ասէ ցնա բարկացմամբ. Ո՛վ անհաւատ, ընդէ՞ր ոչ հատանես զպարանոցս իմ : Եւ խոնարհեցոյց զգլուխն առաջի սրոյն : Եւ ձգեալ զսուրն եհար միանգամ եւ երկիցս եւ երիցս զպարանոց նորա, եւ ոչ կարաց հատանել եւ այլ ոչ եւս կարաց ի վեր ամբառնալ զսուրն զի թուլացան ձեռք նորա :

Եւ առժամայն այլ ոմն դահիճ կալաւ զսուրն եւ եկաց առ նա եւ ասէ. Ողորմիմ քեզ պատանի, ուրացի՛ր զՔրիստոս եւ ընկա՛լ զկրօնս մեր, եւ ես բժշկեցից դեղովք զխոցուածս քո եւ մի՛ մեռցիս : Ասէ ցնա Քրիստոսի վկայն. Ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, եւ զկենս քո ոչ ընդունիմ, հա՛տ զգլուխ իմ եւ մի՛ դանդաղիր : Զայս ասէր, եւ արիւնն իբրեւ զառու հոսէր ի խոցուածոց նորա, եւ ներկանէր զամենայն մարմին նորա, եւ առոգանէր զերկիր : Եւ դահիճն ամբարձ զձեռն, եւ եհար զպարանոց նորա ամենայն զօրութեամբ ուժոյ, եւ ոչ կարաց հատանել :

Te rends grâces de m'avoir rendu digne de verser aujourd'hui mon sang pour Ton saint nom. » Après avoir dit cela, il plia les genoux devant le bourreau, qui faisait briller et miroiter son glaive, retardant le coup dans l'espoir que, saisi de crainte de l'énorme glaive, il consentirait. Tous les infidèles qui l'entouraient, considérant sa belle physionomie à la fleur de l'âge, le pressaient avec pitié en disant : « O jeune homme! ne t'obstine point, accepte notre religion et tu vivras. »

Alors le vaillant martyr du Christ, se retournant vers le bourreau, lui dit avec colère : « O infidèle! pourquoi ne me tranches-tu point la tête? » Il baissa la tête devant le glaive. (Le bourreau) frappa son cou du glaive, une première, une deuxième et une troisième fois, mais il ne put le trancher; il ne put même pas relever le glaive, car ses mains étaient énervées.

Aussitôt un autre bourreau reprit le glaive, se mit près de (Nicolas), et dit : « J'ai pitié de toi, jeune homme, renie donc le Christ, accepte notre religion et je guérirai tes blessures avec des médicaments, pour que tu ne meures point. » Le martyr du Christ lui répondit : « Je ne renie point le Christ mon Dieu, je n'accepte point ta religion; tranche ma tête et ne tarde pas. » Il disait cela et le sang coulait comme un ruisseau de ses plaies, maculant tout son corps et inondant la terre. Le bourreau leva le bras et frappa sur le cou de toute la vigueur de sa force, mais ne put le trancher.

Յայնժամ աղաղակեցին այլազգիքն եւ ասեն. Անմեղութիւն մանկանն ոչ թողու նմա մեռանել ։ Եւ դահիճն խռովեալ ընդ այն՝ տարածեաց զերանելին * ի վերայ երկրի, եւ սրով ձեռին իւրոյ խողխողեաց զնա որպէս զգառն ։ * B p. 218 a.

Եւ այսպիսի դառն մահուամբ կատարեցաւ սուրբն Նիկողայոս ի թուին Հայոց հազար հարիւր քառասուն երեք, եւ մայիսի ԺԴ, ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի Տեառն Նահապետի ամենայն Հայոց կաթողիկոսի, եւ յառաջնորդութեան մայրաքաղաքին Պրուսայու տեառն Սուքիասայ եպիսկոպոսի ։

Իսկ մարմին սրբոյն մնաց անդ ժամս քսան եւ ութ, եւ հրամանաւ դատաւորին բարձեալ տարան բերին յեկեղեցին, եւ ամենայն քրիստոնեայք Հայք եւ Հոռոմք եկին խուռն բազմութեամբ, եւ համբուրեցին զմարմինն ։ Եւ ապա յաւուրն երրորդի թաղեցին զնա հոգեւորական ցնծութեամբ ի նշանաւոր տեղւոջ. եւ մինչեւ ցայսօր բազում բժշկութիւնք լինին ի տապանէ սրբոյն ի փառս Քրիստոսի ։]

Մարերի Ը եւ Մայիսի ԺԵ ։ Վկայութիւն սրբոցն Իրակլեսի, Պաւղինեայ, Բենեդիմոյ որք յԱթէնս կատարեցան ։

Սոքա քրիստոնեայք էին, եւ զՔրիստոս ուղիղ հաւատով քարոզէին հեթանոսաց ։ Կալեալ զնոսա անօրէն զօրականացն տարան առ կռապաշտ դատաւորն Աթենացւոց,

13 սրբոյն] սրբոյ վկային B.

Les infidèles crièrent alors et dirent : « L'innocence de cet enfant ne le laisse point mourir. » Le bourreau, troublé par ces paroles, étendit le bienheureux * à terre et l'égorgea comme un agneau avec le glaive qu'il tenait dans sa main. * B p. 218 a.

C'est d'une mort aussi atroce que fut martyrisé saint Nicolas l'an de l'ère arménienne mil cent quarante-trois, le 14 mai [1], sous le patriarcat au saint siège d'Etchmiadzin de Ter Nahapet, catholicos de tous les Arméniens, et sous l'épiscopat en la métropole de Brousse de Ter Sukias évêque.

Le corps du saint resta là pendant vingt-huit heures, puis ayant été relevé sur l'ordre du juge, il fut amené à l'église; tous les chrétiens, Arméniens et Grecs, arrivèrent en foule et baisèrent le corps. Ensuite le troisième jour on l'inhuma avec une joie spirituelle dans un endroit choisi. De nombreux miracles s'opèrent jusqu'aujourd'hui au tombeau du saint pour la gloire du Christ.]

8 MARÉRI, 15 Mai.

Martyre des saints Héraclius, Pauline, Bénédime qui furent exécutés à Athènes.

Ils étaient chrétiens et prêchaient le Christ aux infidèles suivant la foi orthodoxe. Des soldats impies les ayant saisis les conduisirent au juge idolâtre

1. Y. Manandian et H. Adjarian. *Hayots nor vkaner*, t. II, Valaršapat, 1902, pp. 184-190, donnent comme date le 14 mars.

եւ համարձակութեամբ խոստովանեցան զՔրիստոս եւ կռոցն ոչ զոհեցին ։ Եւ բազում տանջանօք չարչարեցին զնոսա եւ ապա հրով կատարեցան եւ այլ քրիստոնեայք ընդ նոսա Մայիսի ԺԵ ։

Յայսմ աւուր Քրիստոսի ճշմարիտ վկայն եւ վարդապետն ճշմարտութեան սուրբ Մաքսիմոս յանօրինացն նախ ձաղկեցաւ ուժգին, եւ ապա քարկոծեցաւ, եւ բարւոք կատարեաց զընթացս իւր առ Քրիստոս ։

Յայսմ աւուր վարք երանելոյն Յովհաննու Կողոնիոյ եպիսկոպոսին ։

Երանելին Յովհաննէս էր ի քաղաքէն Նիկոպօլիս Հայոց, եւ յորժամ մեռան
* A fol. 259 v° b. ծնողքն իւր էր ամաց տասն եւ ութից. * եւ զամենայն հայրենական ինչսն բաշխեաց աղքատաց, եւ շինեաց եկեղեցի յանուն ամենասրբուհւոյ աստուածածնին, եւ եղեւ կրօնաւոր եւ բարեհաճոյ վարուք ճգնէր ընդ այլ կրօնաւորսն ։

Եւ եղեւ ի մեռանել Կողոնիոյ եպիսկոպոսին, եւ մետրապօլիտն Սեբաստիոյ ձեռնադրեաց զնա եպիսկոպոս Կողոնիոյ ։ Եւ յետ տասն ամաց փախեաւ եւ գնաց

1 զՔրիստոս] զանուն Քրիստոսի B || 2 չարչարեցին զնոսա] չարչարեցան B — եւ այլ ... ԺԵ] ընդ այլ քրիստոնէից սրբոց Մարեբի Ը եւ Մայիսի ԺԵ ի փառս Քրիստոսի B || 6 առ Քրիստոս] փառաւորելով զՔրիստոս B || 7 Յայսմ] Ի նմին B || 9 տաս. ն] չխառն B || 13 զնա] բանութեամբ *add.* B — Կողոնիոյ *om.* B — տասն ամաց] ժամանակաց B — փախեաւ] գաղտ *add.* B.

d'Athènes. Ils confessèrent avec hardiesse le Christ et n'immolèrent point aux idoles. On les soumit à de nombreuses tortures et ensuite on les martyrisa dans les flammes avec d'autres chrétiens le 15 mai.

En ce même jour, le vrai martyr du Christ et docteur de la vérité saint Maxime (*Maximos*) fut d'abord vigoureusement flagellé par les impies, puis lapidé, et acheva bien sa carrière dans le Christ.

En ce jour vie du bienheureux Jean, évêque de Colonia [1] (*Kolonioy*).

Le bienheureux Jean était de la ville de Nicopolis d'Arménie ; à la mort de
* A fol. 259 v° b. ses parents il avait dix-huit ans, * il distribua tout son patrimoine aux pauvres, fit construire une église au nom de la très sainte Mère de Dieu, se fit religieux et mena une vie d'ascète agréable (à Dieu) avec les autres religieux.

A la mort de l'évêque de Colonia, le métropolite de Sébaste le sacra évêque de Colonia. Dix ans après, il prit la fuite et se rendit à Jérusalem ; il vit dans

1. Colonia, aujourd'hui Agountzor, au nord de Mélitène, cf. F. Tournebize, *Histoire politique et religieuse de l'Arménie*, p. 675, n. de la page précédente.

յԵրուսաղէմ, եւ ետես ի տեսլեանն աստղ պայծառ յերկինս, եւ լուաւ ձայն որ ասէր. Երթիցես զկնի աստեղն, եւ առաջնորդեաց աստղն մինչեւ ի վանսն Սաբայի :

Եւ զարթուցեալ ընդ առաւօտն գնաց ի վանսն, եւ յորժամ ետես զնա մեծն ի հարս սուրբն Սաբա ուրախ եղեւ եւ բարւոք ընկալաւ զնա, բայց ոչ գիտաց թէ ով իցէ : Արար զնա դռնապան եւ յետ ամաց միոյ կարգեաց զնա հիւրընկալ, եւ յետ այլ ամաց եդ զնա ի խոհակերոցի : Եւ յետ միւս այլ ամաց արգելաւ ի խցի եւ զհինգ օր ի շաբաթուն զոր ոչ տեսանէր եւ ոչ ընդ ումեք խօսէր, եւ ոչ ճաշակէր բայց միայն ի շաբաթ եւ ի կիւրակէ : Երթայր յառաջ քան զամենեսեան յեկեղեցին եւ յետոյ քան զամենեսեան ելանէր յետ արձակմանն եւ յոյժ զարմանային կրօնաւորքն որք էին ի վանսն ընդ ահագին արտասուսն զոր հեղոյր ի ժամ պատարագին :

Եւ տեսեալ զհրեշտակաձեւ վարս * նորա երանելին Սաբա տարաւ զնա առ Եղիա հայրապետն Երուսաղեմի զի ձեռնադրեսցէ զնա քահանայ : Եւ նա ասէ ցհայրապետն. Գայթակղական եմ ես եւ մեղանչական եւ ոչ եմ արժանի քահանայութեան : Եւ յորժամ բռնադատեցին զնա, ասէ Յովհաննէս ցհայրապետն. Խոստովանեցայց քեզ միայն առանձինն : Եւ յորժամ մտին ի մատուռն եկեղեցւոյն, եւ տուեալ նմա նմա երդումն մի՛ ումեք յայտնել զխորհուրդն, եւ ապա խոստովանեցաւ եւ ասէ. Ես եպիսկոպոս էի Կողոնիոյ, եւ վասն զբաղանաց աշխարհիս փախեայ, եւ լռեմ * A fol. 260 r° a.

4 ուրախ եղեւ եւ բարւոք] ուրախութեամբ B | 9 որք էին ի վանսն *om.* B || 11 երանելին] երջանիկ հայրն B || 13 գայթակղական] գայթակղեալ B | 16 զխորհուրդն] զպատճառն B || 17 զբաղանաց] զբաղմանց B.

une vision une étoile qui brillait au ciel, et entendit une voix qui disait : « Suis l'étoile, » et l'étoile le précéda jusqu'au couvent de Saint-Sabas.

S'étant réveillé au matin, il se rendit au couvent, et lorsque saint Sabas, grand parmi les pères, le vit, il se réjouit et l'accueillit avec bonté, mais ne sachant pas qui il était, il le fit portier. Un an après il le chargea de recevoir les étrangers; l'année suivante, il le mit à la cuisine. Après une autre année, il le confina dans une cellule, où il ne voyait personne et ne causait avec personne cinq jours de la semaine; il ne mangeait que le samedi et le dimanche. (Jean) se rendait avant tous les autres à l'église et n'en sortait, à la fin des offices, qu'après les autres; les religieux qui se trouvaient au couvent étaient fort étonnés de l'abondance des larmes qu'il versait au moment de la messe.

Le bienheureux Sabas, ayant vu sa conduite angélique, * le conduisit à Élie, patriarche de Jérusalem, pour qu'il l'ordonnât prêtre. Mais (Jean) dit au patriarche : « Je suis scandaleux et pécheur, je ne suis point digne du sacerdoce. » Et comme on le pressait, Jean dit au patriarche : « Je me confesserai à toi seul. » Lorsqu'ils furent entrés dans la chapelle de l'église, et après lui avoir fait jurer de ne point révéler le mystère, il le lui avoua et dit : « J'étais l'évêque de Colonia, je me suis sauvé à cause des occupations du monde, et * A fol. 260 r° a.

միաբնակեցութեամբ ։ Եւ հայրապետն յորժամ լուաւ խոնարհեալ երկիր եպագ նմա, եւ գիրկս արկեալ համբուրեաց եւ յուղարկեաց ։

Եւ ի մէջ ճանապարհին հինգ մղոնաւ հեռի ի վանացն նուաղեցաւ ի ճանապարհին եւ անկաւ որպէս մեռեալ, քանզի բազում աւուրք ոչինչ էր ճաշակեալ, եւ զկնի պահու միոջ բացեալ զաչսն եւ գտաւ ի խուցն իւր ։

Եւ յորժամ եկին Պարսիկք եւ աւերեցին զԵրուսաղէմ եւ զսահմանս նորա առաքեաց Աստուած առիւծ եւ պահէր զվանս վասն աղօթիցն Յովհաննու, եւ տեսանէին թշնամիքն զգազանսն եւ փախչէին ։

Եւ յորժամ հանգեաւ սուրբն Սաբաս յոյժ հոգայր զնա երանելին Յովհաննէս ։ Եւ
* A fol. 260 r° b. ի միում աւուր տեսանէ * Յովհաննէս յանուրջս զսուրբն Սաբա զի ասէր. Ողջոյն քեզ եղբայր իմ Յովհաննէս, մի՛ տրտմիր վասն իմ զի թէպէտ մարմնով որոշեցայ ի քէն, այլ հոգւով ընդ քեզ եմ. բայց զգոյշ լեր զի դարձեալ հերձուածողք հալածեն զեկեղեցիս ուղղափառաց ։

Այս երանելի հայրս Յովհաննէս աղաչեաց զԱստուած զի ցուցցէ նմա թէ որպէս որոշի հոգի ի մարմնոյն ։ Եւ ետես ի զարմացման գիշերոյն զի կանգնեալ կայր ի պատշգամբ եկեղեցւոյն սրբոյ Բեդղեհեմի զարդար այր մի որ վախճանեցաւ, եւ լուսաւոր

1 խոնարհեալ] խոնարհութեամբ B || 5 եւ գտաւ] յարեաւ եւ եկն B || 6 զԵրուսաղէմ եւ զսահմանս նորա] զսահմանս Երուսաղեմի B — առաքեաց... փախչէին] աղօթիւք սրբոյն Յովհաննու անվնաս մնաց վանքն յորում բնակէր. զի առիւծ ահեղի երեւէր կացեալ առ դուրս վանիցն, եւ թշնամիքն փախչէին անտի B || 9 — p. 1505, l. 2 Եւ յորժամ... վախճանեալ *om.* B.

je garde le silence dans la vie monacale. » Le patriarche, après l'avoir écouté, se prosterna devant lui, le prit dans ses bras, lui donna le baiser et le congédia.

(Jean) eut une défaillance en route à cinq lieues du couvent, il tomba sur la route comme mort, car il y avait plusieurs jours qu'il n'avait rien mangé; une heure après il ouvrit les yeux, et se trouva dans sa cellule.

Lorsque les Perses envahirent et dévastèrent Jérusalem et ses environs, Dieu envoya des lions, sur les prières de Jean, pour garder le couvent; et les ennemis, apercevant les fauves, prirent la fuite.

Lorsque saint Sabas mourut, le bienheureux Jean eut de grands troubles
* A fol. 260 r° b. à son sujet. Un jour * Jean vit en rêve saint Sabas, qui lui disait : « Salut à toi, mon frère Jean, ne t'attriste point pour moi, car bien que je sois séparé de toi de corps, je suis avec toi par mon âme; mais prends garde, car les hérétiques reprendront leur persécution contre les églises orthodoxes. »

Ce bienheureux père Jean avait prié Dieu de lui montrer de quelle façon l'âme se séparait du corps. Il vit, dans une extase nocturne, un homme juste qui se trouvait dans l'atrium de la sainte église de Bethléem, et mourut; des

հրեշտակք երգովք հոգեւորօք սաղմոսեցին զհոգին եւ փառօք հանին յերկինս : Եւ յորժամ զարթեաւ գնաց ի տեղին եւ եգիտ զարդար այրն վախճանեալ :

Էր կերակուր երանելւոյն Յովհաննու վայրի ռուփին ի շաբաթու եւ ի կիւրակէի եւ սակաւ հաց թանայր ի մոխիր բուրվառին, եւ ուտէր ըստ գրեցելոյն եթէ. Զմոխիր որպէս զհաց կերայ :

Խորհեցան ոմանք յազգականաց իւրոց գնալ յանծանօթս ի տեսանել զնա, զի լուէին որ մեծամեծ սքանչելիս առնէր : Եւ նորա գիտացեալ հոգւովն յղէ առ նոսա. Եթէ գայք զիս ոչ տեսանէք, եւ եթէ ոչ գայք ես յարաժամ յանուրջս երեւիմ ձեզ : Եւ այսպէս առնէր նոցա ի տեսլեանն :

Եւ ի միում աւուր առեալ չոր թուզ ի ձեռսն ասէ ցկրօնաւորսն. Եղից զթուզս յապառաժ վիմիս, * եթէ բուսանի եւ լինի ծառ՝ գիտասջիք զի Աստուած պարգեւէ * A fol. 260 v° a.
ինձ ձրի զիւր արքայութիւնն : Եւ յորժամ եդիր եդեւ առժամայն ծառ ի չոր թզէն, եւ եբեր պտուղ երիս թուզ, եւ հատեալ ի ծառոյն արտասուօք համբուրեաց եւ ետ այլոց կրօնաւորացն : Եւ կեցեալ առաքինի եւ սուրբ վարուք հանգեաւ ի Քրիստոս ամաց հարիւր եւ չորից :

3 ռուփին] ռափին B || 4 թանայր ... կերայ *om.* B || 10-14 Եւ ի միում ... կրօնաւորացն *om.* B || 14 վարուք] մինչեւ ի ծերութիւն, եւ փայլեալ բազում սքանչելեօք *add.* B.

anges lumineux avec des chants spirituels recueillirent son âme et l'élevèrent au ciel avec gloire. A son réveil, il se rendit à l'endroit et trouva mort cet homme juste.

La nourriture du bienheureux Jean se composait d'un raisiné grossier le samedi et le dimanche avec un peu de pain qu'il trempait dans la cendre de l'encensoir, et il le mangeait, selon qu'il est écrit : *J'ai mangé la cendre comme du pain*[1].

Quelques-uns de ses proches songèrent à le visiter incognito, car ils avaient entendu dire qu'il opérait de grands prodiges. Lui, l'ayant su par l'esprit, leur manda : « Si vous venez, vous ne me verrez point, mais si vous ne venez point, je vous apparaîtrai constamment en rêve. » Ainsi fit-il pour eux en vision.

Il prit un jour une figue sèche dans sa main et dit aux religieux : « Je vais mettre cette figue sur ce rocher aride; * si elle pousse et devient arbre, vous * A fol. 260 v° a.
saurez que Dieu m'accorde gratuitement son paradis. » Lorsqu'il l'eut posée, un arbre poussa aussitôt de la figue sèche et donna des fruits : trois figues. Il les détacha de l'arbre avec larmes, les baisa et les donna aux autres religieux. Après avoir mené une vie vertueuse et sainte, il reposa dans le Christ à l'âge de cent quatre ans.

1. Ps. ci, 10.

Եւ սուրբն Սաբա ի տեսլեան երեւեցաւ Եթերիոսի Ասիոյ եպիսկոպոսին եւ պատմեաց նմա զամենայն վարս երանելւոյն Յովհաննու, եւ նորա զարթուցեալ գրեաց զպատմութիւն ճգնութեան Յովհաննու Կողոնիոյ եպիսկոպոսին ։

Մարերի Թ եւ Մայիսի ԺԶ ։ Յիշատակ Զաքարիայ մարգարէին յերկոտասանիցն ։

Մարգարէն Զաքարիա որդի էր Բարաքեայ եկեալ ի Քաղդէացւոց, եւ մարգարէացաւ առ ժողովուրդն Իսրայէլի ։ Եւ ետ արուեստս բազումս ի ցուցումն, եւ ասէ ցՍեդեկիա եթէ Ծնցիս որդի եւ լինիցի քահանայ Տեառն յԵրուսաղէմ ։ Օրհնեաց եւ զՍաղաթիէլ եւ ասէ. Ծնցիս որդի եւ կոչեսցես զանուն նորա Զօրաբաբէլ ։ Եւ յոյժ ծերացեալ հանգեաւ, եւ թաղեցաւ մերձ ի մարգարէն Անգէոս ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոց եպիսկոպոսացն Աբդայի եւ Աբդիշոյի, եւ վեշտասան քահանայիցն եւ ինն սարկաւագաց եւ վեց կրօնաւորաց եւ եօթն կուսանաց ի Պարսից գաւառէ ։

* A fol. 260 v° b.

Սուրբն Աբդիշոյ եպիսկոպոս էր ի Պարսիկս, ի քաղաքէն * Խասխառ ։ Եւ էր նորա քեռորդի սարկաւագ. եւ գնաց առ արքայն Պարսից եւ ասէ. Քեռին իմ ընդ այլ քրիստոնեայս հրամանաց քոց ոչ հնազանդի ։

1 Եւ սուրբն... եպիսկոպոսին *om.* B || 4 Յիշատակ] սրբոյն *add.* B || 7 Տեառն] Աստուծոյ *add.* B.

Saint Sabas apparut en vision à Ethérius, l'évêque d'Asie, et lui raconta toute la vie du bienheureux Jean. A son réveil (Ethérius) écrivit l'histoire de l'ascétisme de Jean, évêque de Colonia.

9 MARÉRI, **16 Mai.**

Commémoration du prophète Zacharie, l'un des douze.

Le prophète Zacharie était le fils de Barachie venu de la Chaldée; il prophétisa au peuple d'Israël. Il opéra de nombreux prodiges en signe de démonstration, et dit à Sédécias : « Tu engendreras un fils qui sera prêtre du Seigneur à Jérusalem. » Il bénit également Salathiel et lui dit : « Tu engendreras un fils et tu lui donneras le nom de Zorobabel. » Il mourut très âgé et fut enterré près du prophète Aggée.

En ce jour martyre des saints évêques Abda et Abdišo, de seize prêtres, neuf diacres, six moines et sept vierges de la province de Perse.

* A fol. 260 v° b.

Saint Abdišo, évêque en Perse, était de la ville * de Khaškhar. Il avait comme diacre le fils de sa sœur. Ce dernier alla trouver le roi de Perse et lui dit : « Mon oncle avec d'autres chrétiens n'obéissent point à tes ordres. »

Եւ կոչեցեալ առաջի իւր հարցանէր, եւ սուրբ եպիսկոպոսն համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս։ Եւ հրամայեաց տանել զնա առ եղբայրն իւր Երսիթ, եւ նա բարկութեամբ սպառնայր եւ բռնադատէր ուրանալ զՔրիստոս։

Եւ սուրբ եպիսկոպոսն աստուածիմաստ բանիւք յանդիմանէր զնա, եւ նա հրամայեաց փայտիւք եւ չուանօք պնդել զամենայն մարմին նորա մինչեւ ճարճատել ոսկերացն։ Եւ եօթն անգամ այսպիսի չարչարանօք տանջեցին զնա, եւ ոչ հաւանեցաւ երկիր պագանել արեգական եւ հրոյ, եւ ի յոյժ տանջանացն տկարացեալ մարմնով եւ կիսամահ արկին ի բանդ, եւ առաքեցին ի զոհից իւրեանց կերակուր, եւ ամենեւին ոչ մերձեցաւ եւ ոչ նայեցաւ։ Եւ կին մի այրի որոյ մերձ էր ի ծովն տուն իւր տայր ընդ պատուհանն բանդին հաց եւ ջուր, որչափ աւուրս էր ի բանդին հրամանաւ Տեառն։

Եւ մինչդեռ ի բանդին էր կալան եւ զԱբդա եպիսկոպոսն Խերհալիդայ եւ այլ երեսուն եւ ութ քրիստոնեայս, ընդ քահանայս եւ ընդ սարկաւագունս եւ ընդ կրօնաւորս եւ ընդ կուսան կանայս, եւ կացուցին առաջի Երսիթա եղբօր թագաւորին, եւ նոքա յանձն առին վասն հաւատոյն Քրիստոսի մեռանել։

*Առաքեաց զնոսա կապանօք * պիղծ քահանայապետն իւրեանց Մամթի, եւ առաջի* * A fol. 261 r° a.

9 ծովն] բանդն B.

(Le roi) fit venir en sa présence et interrogea le saint évêque qui confessa hardiment le Christ. Il ordonna de le conduire auprès de son frère Ersith, qui, furieux, le menaça et le pressa de renier le Christ.

Le saint évêque le réprouva avec des paroles pleines d'une sagesse divine. Il ordonna alors de serrer tout son corps avec des bois et des cordes jusqu'à faire craquer les os. On le soumit sept fois à cette torture, mais il ne consentit point à adorer le soleil et le feu. On le jeta en prison, le corps affaibli par ces cruelles tortures et à moitié mort; on lui envoya à manger de la viande des victimes du sacrifice, mais il ne s'en approcha point et ne la regarda point. Une veuve dont la maison était près de la mer lui passait, sur l'ordre de Dieu, par la fenêtre de la prison du pain et de l'eau tout le temps qu'il resta en prison.

Pendant qu'il se trouvait en prison on saisit aussi l'évêque de Kherhalida[1], Abda, avec trente-huit autres chrétiens, prêtres, diacres, religieux et femmes vierges, qu'on produisit devant Ersith, frère du roi, et qui acceptèrent de mourir pour la foi du Christ.

Il les envoya, chargés de chaînes, * à l'impur chef de leurs prêtres, * A fol. 261 r° a.

1. Selon les actes publiés par Assémani, *Acta ss. martyrum orientalium et occidentalium,* t. I, Rome, 1748, notes 2 et 3. p. 163, Abdišo aurait été évêque d'une ville indéterminée du pays de Khašbar et Abda évêque de Khašbar même.

նորա մեծաւ բարբառով եւ պայծառ երեսօք խոստովանեցան զքրիստոնէական հաւատն իւրեանց ։ Եւ սկսան պարսիկ ժողովն հրամանաւ Մամթի քարիւ հարկանել զբերան նոցա, եւ հատին զգլուխս նոցա Մայիսի ԺԶ ։

Հանին եւ զսուրբ եպիսկոպոսն Խաշխառայ զԱբդիշոյ ի բանդէն եւ հատին եւ զնորա զգլուխն ։

Իսկ զսրբուհի կանայսն տարան ի Բիթլապատ քաղաքն, եւ անդ հատին զգլուխս նոցա ։

Մարերի Ժ եւ Մայիսի ԺԷ ։ Գիւտ սուրբ խաչին Քրիստոսի ։

Ի ժամանակս քարոզութեան առաքելոցն յորժամ էր Պետրոս ի Հռոմ քաղաքի, կինն Կղօդեայ կայսեր ի քարոզութենէ նորա հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ ։

Սա ցանկացաւ երթալ յԵրուսաղէմ, եւ տեսանել զտնօրինական տեղիսն Քրիստոսի, եւ առեալ ընդ իւր զերիս որդիս իւր եւ զդուստր մի կոյս եկն յԵրուսաղեմ ։ Եւ ամենայն քաղաքն իբրեւ զդշխոյ եւ զտիկին Հռովմայեցւոց ընկալան զնա, զի նոցա էր քաղաքն ։

2 ժողովն] ժողովուրդն B — զբերան նոցա] եւ մինչդեռ խոստովանութիւնն ի բերանս իւրեանց էին *add.* B || 3 նոցա] Մարերի Թ եւ *add.* B || 8 Քրիստոսի] Աստուծոյ մերոյ *add.* B || 13 քաղաքն] քաղաքացիքն B.

Mamthi, devant lequel ils confessèrent la foi chrétienne à haute voix et avec un visage souriant. L'assemblée des Perses, sur l'ordre de Mamthi, se mit à leur frapper la bouche avec des pierres et on leur trancha la tête le 16 mai.

On fit sortir de prison le saint évêque de Khaškhar Abdišo, et on lui trancha également la tête.

Quant aux vierges saintes, on les conduisit à la ville de Bithlapat et là on leur trancha la tête.

10 maréri, 17 Mai.

Invention de la sainte croix du Christ.

A l'époque de la prédication des apôtres, pendant que Pierre se trouvait dans la ville de Rome, la femme de l'empereur Claude se convertit au Christ à la suite de sa prédication, et fut baptisée.

Elle désira se rendre à Jérusalem et visiter les lieux de la vie incarnée du Christ. Elle prit avec elle ses trois fils et une fille vierge et vint à Jérusalem. Toute la ville l'accueillit comme impératrice et souveraine des Romains, car la ville leur appartenait.

Իսկ Յակոբոս եղբայր Տեառն որ էր եպիսկոպոս քաղաքին իբրեւ գիտաց եթէ քրիստոնեայ է դշխոյն, եւ թէ զինչ իրաց եկեալ է չոգաւ առ նա, զի իջեալ էր նա ի մեծ ապարանս Հերովդէի :

Իսկ թագուհին * մեծաւ պատուով ընկալաւ զնա իբրեւ զՍիմոն Պետրոս, զի լուեալ էր զառաքինութիւն նորա եւ զքանչելիսն զոր առնէր անուամբն Քրիստոսի : Եւ ասէ ցնա դշխոյն. Ցոյց ինձ զխաչն Քրիստոսի եւ զԳողգոթայն ուր խաչեցաւ եւ զգերեզմանն յորում եդաւ : * A fol. 261 r° b.

Եւ ասէ Յակոբոս. Զայդ երիս իրսդ զորս կամիս տիկնութիւնդ քո տեսանել ընդ իշխանութեամբ Հրէից է, եւ ոչ տան թոյլ մեզ երթալ կալ յաղօթս, այլ եւ հալածեն զմեզ :

Եւ կոչեաց թագուհին զաւագնորդս Հրէիցն եւ ասէ. Տուք ի ձեռս Յակոբոսի եւ ընկերաց նորա զխաչն Քրիստոսի եւ զԳողգոթա եւ զՅարութիւնն : Եւ առեալ զՅակոբոս չոգաւ տեսանել զտեղին եւ յանձնել ի Յակոբոս : Եւ յորժամ եմուտ ի գերեզմանն կոյս դուստր նորա անկաւ եւ եհան զհոգին առանց ցաւոց եւ պատճառաց մահու :

2 զինչ] վասն ինչ B || 5 — p. 1510, l. 11 Եւ ասէ ցնա դշխոյն . . . ի փառս Քրիստոսի] Եւ առեալ զՅակոբոս չոգաւ շրջեցաւ ի անօրինական տեղին Քրիստոսի, եւ տուեալ եւս հաստատեցաւ ի հաւատս բարեպաշտութեան : Եւ էին աւուրքն յորս դշխոյն եկաց յԵրուսաղէմ տօն ուրախութեան ամենայն հաւատացելոց, եւ ամօթ նախատանաց ազգին Հրէից : Եւ մինչդեռ հանգերձեալ էր դառնալ ի Հռոմ, պարգեւեաց նմա սուրբ առաքեալն Յակոբոս մասն ի խաչափայտէն Քրիստոսի, զոր ընկալեալ թագուհւոյն ուրախ եղեւ յոյժ, եւ տարաւ ընդ իւր ի Հռոմ : Եւ այս խաչամասն էր զոր ի պարանոցին կրէր սուրբ կոյսն Հռիփսիմէ, գոլով նորա ի Թագաւորական ազգէն Կղօդեայ եւ Պատրոնիկեայ : Եւ յորժամ ի ձեռաց անօրէն արքային Դիոկղետիանոսի փախեաւ յարեւելս ընդ սուրբ ընկերաց իւրոց եբեր ընդ իւր ի Հայաստան : Եւ է այժմ ի վանս Վարագայ սուրբ նշան, եւ առնէ բազում սքանչելիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ : B.

Jacques, frère du Seigneur, qui était l'évêque de la ville, lorsqu'il apprit que l'impératrice était chrétienne et dans quel but elle était venue, se rendit auprès d'elle au grand palais d'Hérode, où elle était descendue.

L'impératrice * le reçut avec de grands honneurs comme Simon Pierre, car elle avait appris ses vertus et les prodiges qu'il opérait au nom du Christ. L'impératrice lui dit : « Montre-moi la croix du Christ, le Golgotha où Il fut crucifié et le tombeau où Il fut déposé. » * A fol. 261 r° b.

Jacques lui répondit : « Ces trois choses que Votre Majesté veut voir sont sous la domination des Juifs, qui ne nous permettent point d'y aller prier et nous chassent. »

L'impératrice manda les chefs des Juifs et leur dit : « Remettez entre les mains de Jacques et de ses compagnons la croix du Christ, le Golgotha et (les lieux de) la résurrection. » Ayant pris Jacques avec elle, elle alla visiter les lieux et faire remettre à Jacques. Lorsqu'elle eut pénétré dans le sépulcre, sa fille vierge tomba et rendit l'âme sans douleurs et sans cause de mort.

Եւ տրտմեցաւ յոյժ թագուհին եւ ուրախացան Հրէայքն ։ Եւ ասէ ցնա երէց որդին իւր. Ինձ այսպէս թուի թէ ոչ է վայրապար մահ քեռ իմոյ, մտեալ եմք մեք աստ եւ գտեալ երիս խաչափայտս, եւ ոչ գիտեմք եթէ ո՞ր է Քրիստոսին եւ ո՞ր աւազակացն, մահուամբ քեռ իմոյ յայտնի լիցի ։ Եւ հաճոյ թուեցաւ դշխոյին, եւ առեալ զերկու խաչսն եդ ի վերայ դստերն, եւ աղօթեալ յերկար ոչ յարեաւ, եւ յորժամ եդ զերրորդն եւ կամէր բանալ զբերանն յաղօթս իսկոյն յարեաւ աղջիկն. եւ * A fol. 261 v° a. ուրախացեալ դշխոյին եւ յամօթ * լեալ Հրէիցն ։

Եւ կուտեցաւ ամբոխ բազում զի տեսցեն զաղջիկն որ յարեաւ, եւ բազումք հաւատացին ի Քրիստոս յաւուր այնմիկ ի Հրէից եւ ի հեթանոսաց ։ Եւ հաստատեալ դշխոյին ի հաւատս գնաց ի Հռոմ, եւ պատմեաց Կղօդեայ կայսերն եւ Պետրոսի առաքելոյն, եւ տօն մեծ կատարեցին զօրն զայն որ օր տասն էր Մարերի ամսոյ եւ Մայիսի ԺԷ, ի փառս Քրիստոսի ։

Նոյն աւուր վկայութիւն Աբդիշոյի, Սահակայ եւ Սիմէոնի որք ի Պարսիկս կատարեցան ։

Սուրբ վկայքն Քրիստոսի էին յաւուրս Սաբուռիոսի հրապաշտ արքային Պարսից, եւ յոյժ նեղէին զնոսա ուրանալ զԱստուած եւ պաշտել զարեգակն եւ զլուսին, եւ զաստեղս եւ զջուր եւ զհուր ։

14 զԱստուած] զՔրիստոս B.

L'impératrice en fut très attristée, tandis que les Juifs s'en réjouissaient. Son fils aîné lui dit alors : « Il me semble que la mort de ma sœur n'est pas en vain; nous sommes entrés ici et avons trouvé trois croix de bois, nous ne savons point laquelle est celle du Christ et laquelle celle des larrons, cela deviendra évident par la mort de ma sœur. » L'impératrice consentit, prit deux croix, les posa sur sa fille, et pria longtemps, mais celle-ci ne ressuscita point. Au contraire, lorsqu'elle eut posé la troisième et voulut ouvrir la bouche pour prier, sa fille ressuscita aussitôt. L'impératrice s'en réjouit et * A fol. 261 v° a. les Juifs * devinrent honteux.

Une multitude s'assembla pour voir la jeune fille qui était ressuscitée, et de nombreuses personnes crurent au Christ ce jour-là, tant parmi les Juifs que parmi les infidèles. L'impératrice, raffermie dans la foi, retourna à Rome, et en fit le récit à l'empereur Claude et à l'apôtre Pierre; ils célébrèrent une grande fête ce jour-là, dix du mois maréri, dix-sept mai, pour la gloire du Christ.

En ce jour martyre d'Abdišo, d'Isaac et de Siméon qui furent exécutés en Perse.

Les saints martyrs du Christ vivaient aux jours de Sapor, roi des Perses, adorateur du feu. On les pressa beaucoup de renier Dieu et d'adorer le soleil, la lune, les étoiles, l'eau et le feu.

Եւ ասէ թագաւորն. Հաւատացէք յոր ես հաւատամ եւ ուրացիք զԱստուածն զոր պաշտէք դուք ։ Պատասխանի ետուն սուրբքն եւ ասեն. Մեք զԱստուածն մեր ոչ ուրանամք որ արար զերկին եւ զերկիր եւ զծով եւ զամենայն որ է ի նոսա. քանզի յոչնչէ զմարդն միայն բանիւք գոյացոյց, եւ զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս, զհուր եւ զջուր, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ ։

Ասէ ցնոսա թագաւորն. Ոչ պաշտէք զաստուածսն իմ. ո՞չ գիտէք զի ես թագաւոր եմ եւ չարաչար մահուամբ կորուսանեմ զձեզ, եւ ոչ կարէ աստուածն ձեր փրկել զձեզ ի ձեռաց իմոց ։ Ասեն սուրբքն. Ունիմք մեք զԱստուած ու փրկէ զմեզ, որպէս * A fol. 261 v° b.
փրկեաց զերիս մանկունսն ի բորբոքեալ բոցոյն ։* Եւ հրամայեաց ստուար պարանօք ձաղկել զնոսա ։

Եւ դարձեալ երկրորդ անգամ եհարց թագաւորն. Երկիր պագանէք աստուածոց զոր պաշտեմ ես եթէ ոչ ։ Եւ նոքա ասեն. Քաւ լիցի, ոչ պագանեմք երկիր ։ Առաքեաց զնոսա ի բանդ զաւուրս եօթն ։ Ապա տարան առաջի, եւ հարցանէր երիցս անգամ. Խոստովանիք զաստուածսն ։ Ասէ սուրբն Աբդիշոյ. Կենդանի է Աստուած զոր պաշտեմք, զի մեռանիմք եւ ոչ ուրանամք զնա, եւ ոչ զկամս քո կատարեմք ։

Եւ հրամայեաց զջիլսն ի ներքոյ ծնկացն նոցա ծակել եւ կախել զարմաւենեաց ։ Եւ կացին կախեալ զաւուրս երկուս ։ Ապա իջուցին, եւ հարցանէր չորրորդ անգամ

7 կորուսանեմ] սպանանեմ B || 8 զձեզ] ի ձեռաց քոց *add.* B || 12 պագանեմք երկիր] պաշտեմք զարարածս B || 16 հրամայեաց] բարկութեամբ *add.* B.

Le roi leur dit : « Croyez en ce que je crois et reniez le Dieu que vous adorez. » Les saints lui répondirent en disant : « Nous ne renions pas notre Dieu qui a créé le ciel, la terre, la mer et tout ce qu'ils contiennent; car Il a créé du néant l'homme par sa simple parole, ainsi que le soleil, la lune, les astres, le feu et l'eau; sans Lui rien n'a été créé. »

Le roi leur dit : « N'adorez-vous point mes dieux? Ne savez-vous pas que je suis roi et puis vous perdre par une mort cruelle, et votre dieu ne saura pas vous délivrer de mes mains? » Les saints répondirent : « Nous avons Dieu, qui nous sauvera comme Il a sauvé les trois jeunes gens de la fournaise ardente. » * Il ordonna alors de les fustiger avec de grosses cordes. * A fol. 261 v° b.

Le roi les interrogea une deuxième fois : « Adorez-vous les dieux que j'adore, oui ou non? » Ils répondirent : « Jamais! nous ne les adorons point. » Il les envoya en prison pour sept jours. Ensuite on les amena devant lui, et il leur demanda pour la troisième fois : « Confessez-vous les dieux? » Saint Abdišo répondit : « Vive Dieu que nous adorons! nous mourrons, mais nous ne Le renierons pas, ni n'exécuterons ta volonté. »

(Le roi) ordonna de leur trouer les tendons au-dessous des genoux et de les suspendre à des dattiers. Ils restèrent suspendus deux jours. On les

եւ ասէր. Երդնում յաստուածսն իմ զի թէ ոչ լսէք ինձ խստագոյն տանջանօք չարչարեմ զձեզ ։ Ասեն սուրբքն. Դու երդուար յաստուածսն քո, մեք երդնումք յԱստուածն մեր զի զկամս քո ոչ կատարեմք ։ Եւ հրամայեաց գաւազանօք հարկանել զմարմինս նոցա ։

Եւ զկնի քսան եւ չորս աւուր հարցանէր հինգերորդ քննութեամբ. Ընդէր ոչ առնէք զհրամանս իմ, եւ երկիր ոչ պագանէք որում ես երկիր պագանեմ ։ Սուրբքն ասեն. Մեք ոչ թողումք զաստեղծիչն մեր եւ պաշտեմք զաստեղծուածս ։

Ասէ թագաւորն. Այսօր տամ զմարմինս ձեր թռչնոց կերակուր ։ Եւ նոքա ասեն.
* A fol. 262 r° a. Լաւ է մեզ զի զմարմինս մեր թռչունք * կերիցեն, եւ ոչ զի քեզ լսելով կերիցէ զմեզ գեհեն հրոյն, զի թէ զաժամանակեայս արհամարհեմք՝ յաւիտենականն կենացն հանդիպիմք ։ Հրամայեաց եւ արկին զնոսա ի հրացեալ շանթս, եւ ամենեւին սուրբքն ոչ այրեցան. ապա հատին զգլուխս երից վկայիցն Քրիստոսի, զսրբոյն Սահակայ, Աբդիշոյի եւ զՍիմէոնի Մայիսի ժէ ։

7 պաշտեմք զաստեղծուածս] ստեղծուածոց երկիր պագանեմք B || 11 եւ ամենեւին սուրբքն ոչ այրեցան *om.* B || 13 զՍիմէոնի] Մարերի ժ եւ *add.* B.

descendit ensuite et (le roi) leur demanda pour la quatrième fois et dit : « Je jure par mes dieux que si vous ne m'écoutez point, je vous ferai endurer des tortures plus cruelles encore. » Les saints lui répondirent : « Tu as juré par tes dieux et nous jurons par notre Dieu que nous n'accomplirons pas ta volonté. » Il ordonna de frapper leur corps avec des bâtons.

Après vingt-quatre jours il les interrogea pour la cinquième fois : « Pourquoi n'exécutez-vous pas mes ordres et n'adorez-vous pas ce que j'adore? » Les saints répondirent : « Nous n'abandonnons point notre créateur pour adorer les créatures. »

Le roi leur dit : « Je vais donner vos corps aujourd'hui en pâture aux
A fol. 262 r° a. oiseaux. » Ils lui répondirent : « Il est préférable que les oiseaux * mangent nos corps, et que nous ne soyons pas dévorés par les flammes de la géhenne pour t'avoir écouté, car, en méprisant le temporel, nous gagnons l'éternel. » (Le roi) ordonna de les jeter sur des barres enflammées, mais les saints n'en furent pas brûlés, ensuite on trancha la tête aux trois martyrs du Christ; à saint Isaac, à Abdišo et à Siméon, le 17 mai.

Մարերի ԺԱ եւ Մայիսի ԺԸ : Վկայութիւն սրբոցն Սողոխոնի, Պամփամերի եւ Պամփիլոնի եւ Յակինթոսի :

Անօրէն արքայն Մաքսիմիանոս առաքեաց զօրագլուխ զԿամբանոս երեք հազար եւ չորեք հարիւր զօրօք ի քաղաքն Քաղկեդոնի, եւ պատուիրեաց նմա զի զօրօքն իւրովք զոհս մատուցանէ կռոցն : Եւ բազումք հաւանեցան հրամանի նորա, բայց միայն երեք զօրականք եգիպտացիք որ գիտացին եւ ծանեան զճշմարիտ հաւատն Քրիստոսի, Սողոխոն, Պամփամիր եւ Պամփաղոն ոչ հաւանեցան :

Եւ յորժամ լուաւ Կամբանոս եթէ քրիստոնեայք իցեն եւ զոհս ոչ մատուցանեն կռոցն, կոչեաց առաջի իւր եւ հարցանէր : Եւ նոքա ասեն. Ընտրեցաք զերկնային զօրականութիւն թագաւորին մերոյ սրբոյ Յիսուսի Քրիստոսի : Եւ մոլեալ ընդ բանսն Կամբանոս հրամայեաց գաւազանօք զմարմինս նոցա ձաղկել. եւ տեսեալ *զնոսա հաստատուն ի հաւատս պատուիրեաց խստագոյնս զնոսա տանջել : * A fol. 262 rº b.

Եւ այնչափ զան հարին զթիկունս նոցա զի մինչեւ ի գլուխն այտուցեալ եղեն, եւ լանջքն մինչեւ ի ստամոքսն իջին, եւ համբարձեալ զաչս իւրեանց յերկինս խնդրէին

1 սրբոցն] սրբոց վկայից B || 8 ոչ մատուցանեն] մատուցանել ոչ յօժարին B.

11 MARÉRI, 18 Mai.

Martyre des saints Solochon, Pamphamir, Pamphylon et Hyacinthe.

L'empereur impie Maximien envoya le chef militaire Cambanus avec trois mille quatre cents soldats à la ville de Chalcédoine, en lui recommandant d'immoler aux idoles avec ses troupes. Nombreux furent ceux qui se plièrent à ses ordres, excepté trois soldats égyptiens qui avaient reconnu et cru à la vraie foi du Christ : Solochon, Pamphamir et Pamphalon[1]; ceux-ci n'y consentirent point.

Lorsque Cambanus apprit qu'ils étaient chrétiens et n'immolaient point aux idoles, il les fit venir en sa présence et les interrogea. Ils lui répondirent : « Nous avons préféré la milice céleste de notre saint roi Jésus-Christ. » Cambanus, irrité de ces paroles, ordonna de fustiger leur corps avec des verges, mais, *les voyant fermes dans leur foi, il ordonna de les torturer plus cruellement. * A fol. 262 rº b.

On les frappa tellement sur le dos, qu'il en fut enflé jusqu'à la tête, et la poitrine leur descendit jusqu'à l'estomac; mais, les yeux levés au ciel,

1. Le grec hésite aussi sur la vocalisation de la deuxième syllabe : Παμφαλῶν et Παμφυλῶν caractérisent les deux manuscrits de *Syn. Cp.*

յԱստուծոյ օգնականութիւն ։ Եւ ասեն ցամբարիշտ Կամբանոսն. Մեք քրիստոնեայ եմք եւ մեռելոտի կռոց ոչ զոհեմք ։ Եւ նոյնժամայն սուրբն Պամփամիր եւ սուրբն Պամփաղոն յահագին տանջանացն աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած ունելով զաչս եւ զխորհուրդս իւրեանց յերկինս ։

Եւ համարձակութեամբ սուրբն Սողոխոն ասէ ցզօրագլուխն. Ո՛վ աստուածամարտ եւ ամբարիշտ դատաւոր, մինչեւ յե՞րբ ոչ կամիս ճանաչել զարարիչն քո եւ զկերակրիչն ի մանկութենէ ։ Մի կարծեր եթէ չարչարանօքդ քոյ կարես թուլացուցանել զիս, այլ մանաւանդ զօրանամ եւ որպէս ձէթ եւ իւղ պարարեմ զմարմինս իմ, եւ անվիշտ ընդունիմ զհարուածսդ ։

Եւ Կամբանոս յոյժ սրտմտութեամբ բարկացեալ՝ հրամայեաց կապել զձեռսն եւ ընկենուլ յորսայս, եւ սրով զբերանն բանալ, եւ հեղուլ ի ներքս զպղծեալ գինի ի զոհիցն ։ Եւ յորժամ ընկեցին եւ եդին զսուրն ի բերանն, սուրբն զօրացեալ Հոգւովն
* A fol. 262 v° a. սրբով եւ ատամամբքն խորտակեաց զսուրն, եւ զկապանսն կտրեաց, եւ եկաց * կանգուն ի վերայ ոտիցն եւ ասէ. Ո՛վ անօրէն դիւապաշտ, ոչ յագեցար ի մարմնոյս իմոյ, այլ եւ հոգւոյս կամիս տիրել. գիտասջիր զի զոր ինչ եւ կամեսցիս եւ արասցես, հոգւոյս իմոյ տիրել ոչ կարես, վասն զի քրիստոնեայ եմ եւ զերկնից Աստուածն պաշտեմ որ

1 քրիստոնեայ եմք] եւ զՔրիստոս առաջի աչաց ունեանեմք *add.* B || 3 յահագին] յանհնարին B || 10 բարկացեալ] բարկացաւ եւ B || 15 կամեսցիս] կամիս B.

ils imploraient le secours de Dieu. Ils dirent à l'impie Cambanus : « Nous sommes chrétiens et ne sacrifions point aux idoles mortes. » Saint Pamphamir et saint Pamphalon, sous le coup des horribles tortures, rendirent aussitôt leur âme à Dieu, les yeux et l'esprit élevés vers le ciel.

Saint Solochon dit avec hardiesse au tribun : « O ennemi de Dieu et juge impie! jusques à quand ne voudras-tu point reconnaître ton créateur et celui qui t'a nourri dès l'enfance? Ne crois point que par tes tortures tu puisses me faire faillir; au contraire, je prends des forces et j'oins mon corps comme avec de l'huile et de l'onguent; je reçois tes coups sans souffrances. »

Cambanus entra dans une grande fureur, ordonna de lui attacher les mains, de l'étendre sur le dos, de lui ouvrir la bouche avec le glaive, et d'y verser le vin impur des sacrifices. Lorsqu'on l'eut jeté à terre et qu'on eut mis le glaive sur la bouche, le saint fortifié par le Saint-Esprit brisa le
* A fol. 262 v° a. glaive avec ses dents, rompit ses liens, * se releva sur ses pieds et dit : « O impie adorateur du démon! ne t'es-tu pas rassasié de mon corps? tu veux dominer aussi mon âme; sache que tu feras ce que tu voudras, mais tu ne pourras pas dominer mon âme, car je suis chrétien et j'adore le Dieu

կարող է փրկել զիս յանօրէն ձեռաց քոց ։ Եւ ձայն եկեւ յերկնից եւ ասէր. Զօրացի՛ր եւ քա՛ջ լեր Սողոխոն ընդդէմ հնարից բռնաւորին ։

Եւ հրամայեաց Կամբանոս խեցի մանր խորտակել եւ սփռել ի գետնի, եւ քարշել զսուրբն ի վերայ, զի վէրք անձինն առաւելապէս սրբեսցին եւ ցաւսն խստացուցանիցեն ։ Եւ ոչ այնպէս կարաց խախտել զնա ի հաւատոցն Քրիստոսի ։ Եւ ապա կախեցին զնա զաջոյ ձեռանէն ի ձեղունս տանն, եւ կապեցին յոտն ձախի ծանր վէմ ։ Կարծէր պիղծ եւ անօրէն Կամբանոս եթէ ի պատճառս տանջանաց ուրանայ զԱստուածն իւր ։ Իսկ վկայն Քրիստոսի կայր կախեալ ի վեցերորդ ժամէ աւուրն մինչեւ յերկոտասան ժամն, եւ գոհանալով փառաւորէր զԱստուած, եւ պաղօթսն իւր մատուցանէր ։

Եւ յոյժ զարմացեալ բռնաւորն ընդ համբերութիւն սրբոյ վկային, եւ ասէ. Կատարեա՛ զհրամանս թագաւորին եւ մի՛ չարաչար մեռանիր ։ Ասէ սուրբն. Բազում անգամ ասացի քեզ եթէ քրիստոնեայ եմ, եւ զԱստուածն իմ ունիմ յերկինս * եւ զդեւս քո ոչ * A fol. 262 v° b.
պաշտեմ ։ Ելին ի ձեղունս եւ հատին զպարն զի անկցի ի բարձրութենէն վիմաւն եւ մեռցի ։ Իսկ սուրբն ոչ անկաւ այլ եկաց ի վերայ ոտից իւրոց եւ ասէ. Ո՛վ Աստուածամարտ Կամբանէ, մինչեւ յե՞րբ ոչ ճանաչես զԱստուծոյն իմոյ զանհուն զօրութիւնն ։

1-2 Եւ ձայն... բռնաւորին *om.* B || 6 յոտն ձախի] ի ձախ ոտինն B || 15 ոչ անկաւ այլ] ընդ անկանելն յերկիր B.

du ciel qui est capable de me délivrer de tes mains impies. » Une voix du ciel se fit entendre qui dit : « Sois vaillant et fort, Solochon, contre les machinations du tyran. »

Cambanus ordonna de briser du verre en petits morceaux, de l'étendre sur le sol et de traîner le saint dessus afin que les plaies de son corps s'avivassent et que la douleur devînt plus forte. Mais de cette façon même ils ne purent l'ébranler de la foi du Christ. On le suspendit ensuite par la main droite au plafond de la maison et on lui attacha une lourde pierre au pied gauche. L'immonde et impie Cambanus croyait lui faire renier son Dieu par ces cruelles tortures. Mais le martyr du Christ resta suspendu de la sixième heure du jour jusqu'à la douzième heure en rendant grâces à Dieu, Le glorifiant et Lui offrant ses prières.

Le tyran, très étonné de l'endurance du saint martyr, lui dit : « Exécute les ordres de l'empereur pour ne pas mourir d'une mort violente. » Le saint lui répondit : « Je te l'ai dit plusieurs fois que je suis chrétien et que j'ai mon Dieu au ciel * et que je n'adore point tes démons. » On monta au * A fol. 262 v° b.
plafond et on coupa la corde pour qu'il tombât de cette hauteur avec la grosse pierre et se tuât. Mais le saint ne tomba point, il resta debout sur ses pieds et dit : « O Cambanus, ennemi de Dieu! Jusques à quand ne reconnaîtras-tu pas la puissance immense de mon Dieu? »

Եւ առեալ բռնաւորին գրիչ եղեգնեայ, արկ յականջս սրբոյն Սողոխոնի. եւ երթեալ քրիստոնէիցն բարձին զնա մինչդեռ շունչն առ ինքն էր եւ տարան ի տուն կնոջ միոյ քրիստոնէի որոյ անուն էր Թէոնսէս. եւ հոգ տարեալ նմա սակաւ մի ներումն եգիտ յահագին ցաւոցն, եւ խնդրեաց հաց, առեալ ի ձեռս իւր օրհնեաց զԱստուած, եւ ի հացէն հաղորդեցաւ եւ ետ ամենեցուն որք էին առ նա քրիստոնեայք ։ Եւ ապա համբարձեալ զաչս իւր եւ զձեռս յերկինս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մայիսի ԺԸ ։

Եւ եղբարքն մեծաւ փառօք հանգուցին զմարմին նորա ի նշանաւոր տեղի ։ Եւ յաւուրս քրիստոնէութեան փոխեցին զնշխարսն յեկեղեցի սրբուհւոյն Եւփիմեայ, ի Քաղկեդոն քաղաքն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Յակինթոսի ։

Էր սուրբն Յակինթոս որդի քրիստոնեայ ծնողաց Թէոկղիտոսի եւ Թէոնիլեայ, եւ
* A fol. 263 r° a. անուանեցին զորդին * իւրեանց Յակինթոս. եւ այնպէս եղեւ պատանին ի տղայութենէ

7 Աստուած] Մարերի ԺԸ եւ *add.* B || 10 Քրիստոսի] եւ ի զովութիւն B || 12 որդի] զաւակ B || 13 զորդին իւրեանց] Նէոփիտոս, բայց հրեշտակ Տեառն երեւեալ ի տեսլեան հօր իւրոյ Թէոկղիտոսի եւ ասէ. Զորդիդ քո անուանեա *add.* B.

Le tyran prit une plume de roseau et l'enfonça dans les oreilles de saint Solochon. Les chrétiens allèrent le relever pendant qu'il avait encore du souffle en lui et le portèrent à la maison d'une femme chrétienne dont le nom était Théonsès, lui prodiguèrent des soins, ce qui le remit un peu de ses douleurs atroces. Il demanda du pain, le prit dans ses mains, bénit Dieu, puis communia au pain et en donna aux chrétiens qui se trouvaient auprès de lui. Il leva ensuite ses yeux et ses mains au ciel et rendit son âme à Dieu le 18 mai.

Les frères déposèrent son corps avec de grands honneurs dans un endroit choisi. Et aux jours du christianisme on transféra ses restes dans l'église de sainte Euphémie, dans la ville de Chalcédoine, pour la gloire du Christ notre Dieu.

En ce jour martyre de saint Hyacinthe.

Saint Hyacinthe était le fils de parents chrétiens, Théoclite et Théonille.
A fol. 263 r° a. Ceux-ci donnèrent à * leur fils le nom de Hyacinthe; l'enfant fut tellement

առաքինի վարուք զի Աստուած փառաւորեաց զնա, եւ պատանի մի աղօթիւք յարոյց ի մեռելոց, եւ հաւատացին ի կռապաշտից վասն սքանչելեացն հազար այր :

Եւ մի ոմն իմաստասէր առեալ զՅակինթոս ի գիրկս իւր տարաւ ի տուն իւր, եւ նա զհիւանդ կին նորա ողջացոյց : Եւ պատանի մի խեղդեալ ի բաղանիսն կենդանացոյց. եւ հաւատացին ծնողքն եւ զաւակքն նոցա ի Քրիստոս : Եւ կուրի մի զաչսն եբաց :

Եւ յորժամ մեծացաւ եւ եղեւ կատարեալ այր, գնաց ի Սինոպ քաղաք առ սուրբն Փոկաս, եւ արար առ նա ամ մի, եւ դարձաւ ի քաղաքն իւր յԱմաստրիս եւ քարոզէր ժողովրդեանն զՔրիստոս :

Եւ դատաւոր Պոնտոսի Կաստրիտիոս դատէր զքրիստոնեայս. եւ տեսեալ Յակինթոսի այնչափ մոլորեալ զժողովուրդս զի պաշտէին զփետղեայ ծառն, առեալ փայտատ եհատ ընկէց յերկիր զփետղեա ծառն զոր պաշտէին :

Կալան զնա եւ տարան առ Կաստրիտիոս դատաւորն եւ առ քաղաքապետն. եւ նոքա դատապարտեցին զնա եւ գան հարին ուժգին, եւ ակցօք կորզեցին զատամունս նորա : Եւ կապեալ քարշեցին ընդ մէջ քաղաքին, * եւ հանին արտաքոյ պարսպին, եւ * A fol. 263 r° b.
ի բազում նեղութենէն եղեւ կիսամահ : Եւ ի գիշերին իջին առ նա հրեշտակք Տեառն

1-5 եւ պատանի . . . զաչսն եբաց] պէս պէս նշանագործութեամբ, որով բազումք ի կռապաշտից հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան : B || 6 մեծացաւ եւ *om.* B || 9 Պոնտոսի] որոյ անուն էր *add.* B — տեսեալ] սրբոյն *add.* B || 14 պարսպին] եւ ի քարանցն *add.* B || 15 — p. 1518, l. 2 Եւ ի գիշերին . . . զյիշատակս նորա *om.* B.

vertueux dès son enfance que Dieu le glorifia. Il ressuscita un jeune homme d'entre les morts et sur ce miracle mille personnes parmi les idolâtres se convertirent.

Un philosophe prit Hyacinthe dans ses bras et l'emporta chez lui, où il guérit sa femme malade. Il rendit la vie à un jeune enfant qui s'était noyé au bain : parents et enfants se convertirent au Christ. Il fit recouvrer la vue à un aveugle.

Lorsqu'il eut grandi et devint homme fait, il se rendit à Sinope auprès de saint Phocas et resta chez lui une année; il retourna ensuite à sa ville d'Amastria et prêcha le Christ à la population.

Le juge de Pont, Castritius, jugeait les chrétiens; Hyacinthe, voyant le peuple dans une telle erreur qu'ils adoraient un orme [1], prit une hache et jeta à terre l'orme qu'ils adoraient.

On le saisit et on le conduisit au juge Castritius et au préfet de la ville. Ceux-ci le condamnèrent, le firent frapper vigoureusement et lui arracher les dents avec des tenailles. On le lia et on le traîna à travers la ville, * puis * A fol. 263 r° b.
on l'emmena hors des murs de la ville où il succomba à moitié mort à

1. Le traducteur arménien a transcrit le mot grec πτελέα.

սպիտակ զգեստիւք ողջացուցին զնա ։ Եւ յարուցեալ աղօթեաց վասն քաղաքին իւրոյ եւ վասն ամենայն աշխարհի եւ վասն այնոցիկ որք կատարեն զյիշատակս նորա, եւ այնպէս խաղաղութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։ Եւ թաղեցին զնա ի նոյն քաղաքին Ամաստրիա, եւ մինչեւ ցայսօր նշանք լինին, եւ ի տապանէ ելանէ հող եւ լինի դեղ ամենայն ցաւոց ։

Մարերի ԺԲ եւ Մայիսի ԺԹ ։ Վկայութիւն սրբոյն Պատրիկոսի եպիսկոպոսի Պռուսա քաղաքի, եւ Ակակիոսի, Մենադրոսի եւ Պաւլիանու ։

Զսուրբն Պատրիկիոս եպիսկոպոսն Պռուսա քաղաքին կացուցին առաջի Յուլիանոսի իշխանին եւ նեղէին զնա զոհել կռոցն, եւ քաղցրութեամբ եւ ողոքանօք խրատ տայր իշխանն եւ ասէր. Ահա տեսանես եթէ որպէս նախախնամութեամբ աստուածոց մերոց բղխեն յերկրէ աղբիւրք ջերմայինք ։

Եւ սուրբ եպիսկոպոսն համբարձեալ զձեռս յերկինս ասէ մեծաձայն բարբառով. Քրիստոս է արարող երկնի եւ երկրի եւ ամենայնի որ ի նոսա, եւ հրամանաւ նորա
* A fol. 263 v° a. յանդնդայինհրոյն ջերմանան ջուրք * եւ բղխեն յերկիր ի բժշկութիւն մարդկան ։ Եւ

3 խաղաղութեամբ] խոստովանողական վկայութեամբ B || 4 ցայսօր] բազում *add.* B — եւ ի տապանէ... ցաւոց] ի հողոյ տապանի նորա զոր առեալ տանին առ ախտաժէտս եւ գտանեն զբժշկութիւնն B || 7 Պաւլիանու] որք ընդ նմա *add.* B || 8 քաղաքին *om.* B || 11 ջերմայինք] ջերմինք B || 14 յերկիր] ի վերայ երկրի՝ յօգուտ եւ B.

cause des grandes douleurs. La nuit, les anges du Seigneur habillés de vêtements blancs descendirent auprès de lui et le guérirent. Il se releva, pria pour sa ville, pour toute la terre et pour ceux qui accompliraient sa commémoration, puis rendit ainsi en paix son âme à Dieu. On l'inhuma dans la même ville d'Amastria et jusqu'aujourd'hui des miracles s'opèrent, car de son tombeau sort une terre qui est un remède pour toutes les douleurs.

12 MARÉRI, 19 Mai.

Martyre de saint Patrice, évêque de la ville de Brousse, et d'Acace, Ménandre et Polyénos.

On amena saint Patrice, évêque de Brousse, devant le gouverneur Julien en le pressant d'immoler aux idoles. Le gouverneur l'exhorta avec douceur et supplications et lui dit : « Tu vois combien, grâce à la sollicitude de nos dieux, de nombreuses sources thermales surgissent de la terre. »

Le saint évêque, élevant ses mains au ciel, dit à haute voix : « C'est le Christ qui est le créateur du ciel et de la terre et de tout ce qui y est contenu, c'est par son ordre que les eaux se chauffent au feu souterrain, et
* A fol. 263 v° a. *jaillissent à la surface de la terre pour la guérison des hommes. » Il dit

դարձեալ ասէ. Երկուս տեղիս պատրաստեաց Աստուած, մին՝ ի հանգիստ արդարոց եւ միւսն՝ ի դատապարտութիւն մեղաւորաց յետ յարութեան մեռելոց ։ Եւ որպէս ջուր նոյնպէս եւ հուր յամենայն երկիր բաժանեալ է, եւ ի վերայ հաստատութեան երկնից հուր եւ ջուր է, նոյնպէս եւ ի ներքոյ հաստատութեան երկրի հուր եւ ջուր է, յորմէ բղխեն աղբիւրք ։ Եւ ջուրք որ են մերձ ի հուրն ջերմին բղխեն, եւ որ են հեռի ի հրոյն ցուրտ բղխեն ։ Եւ հուրն որ ի ներքոյ երկրի է՝ չարչարանք է ամբարշտաց, եւ ցրտային սառնամանիք անդնդոցն որ է տարտարոսն յորում տանջին կռապաշտքն որպէս դու եւ թագաւորն քո ։ Եւ այլ եւս բազում յաստուածայինն գրոց խօսեցաւ ընդ նմա ։

Եւ հրամայեաց իշխանն եւ ընկեցին զնա յեռացեալ ջուր ջերմկացն, եւ ամենեւին ոչ այրեցաւ, այլ ծածանեալ ցնցեալ այրեաց զզօրականսն որք ընկեցին զնա ։ Եւ առժամայն ետ վճիռ սրով զգլուխն հատանել ։ Եւ յորժամ տարան ի տեղին՝ աղօթեաց առ Աստուած այսպէս. Աստուած ամենակալ թագաւոր յաւիտենից, լո՛ւր աղաչանաց մերոց, եւ արա՛ զջերմային ջուրքս ի փրկութիւն հաւատացելոց եւ ի կորուստ ամբարշտաց, եւ մերձեցի՛ր առ իս եւ ընկա՛լ զհոգի իմ ։

Եւ ի կատարել զաղօթսն եհատ դահիճն * զգլուխն Մայիսի ԺԹ ։ * A fol. 263 v° b.

10-11 եւ ամենեւին . . . ընկեցին զնա *om.* B || 12 առժամայն] ապա B || 13-16 այսպէս . . . զաղօթսն] եւ ասէ. Տէր Աստուած ամենակալ թագաւոր մերձեցի՛ր առ իս, եւ ընկալ զհոգի իմ ։ Եւ B || 16 զգլուխն] զգլուխ սրբոյն Պատրիկիոսի Մարերի ԺԲ եւ B.

encore : « Dieu a préparé deux endroits, l'un pour le repos des justes et l'autre pour la condamnation des pécheurs à la résurrection des morts. Comme l'eau, le feu est distribué par toute la terre; au-dessus du firmament des cieux il y a du feu et de l'eau, de même au-dessous du firmament de la terre il y a du feu et de l'eau, d'où surgissent les sources. Les eaux qui sont à proximité du feu jaillissent chaudes et celles qui en sont éloignées jaillissent froides. Le feu qui est au centre de la terre c'est le tourment des impies; les glaciers froids du centre, c'est-à-dire le Tartare, sont le lieu où les idolâtres comme toi et ton empereur subiront les tourments. » Il lui dit encore beaucoup d'autres paroles tirées des livres divins.

Le gouverneur ordonna de le jeter dans l'eau thermale bouillante, mais il ne s'y brûla point; par contre l'eau éclaboussa et brûla les soldats qui l'y avaient jeté. Il donna aussitôt l'ordre de lui trancher la tête par le glaive. Quand on l'eut amené au lieu de l'exécution, il pria Dieu ainsi : « Dieu tout-puissant, roi éternel, exauce mes prières et rends ces eaux thermales le salut des fidèles et la perdition des impies, approche-toi de moi et recueille mon âme. »

La prière terminée, le bourreau lui trancha *la tête le 19 mai. * A fol. 263 v° b.

Եւ ի նմին աւուր կատարեցան սրով ընդ սրբոյն Պատրիկիոսի եպիսկոպոսին սուրբն Ակակիոս եւ սուրբն Մենանդրոս եւ սուրբն Պալիանոս :

* B p. 224 a. [B * Ի նմին աւուր նահատակութիւն նոր վկային Թէոդորոսի :

Երանելի եւ փառաւորեալ վկայս էր ազգաւ հայ ի քաղաքն Կեսարիա, երիտասարդ հասակաւ եւ վայելուչ տեսլեամբ : Եւ նեղեալ ի կարօտութենէ էառ փոխ դահեկանս ինչ յայլազգւոյ ումեմնէ, եւ ի պայմանեալ ժամանակին ոչ կարացեալ հատուցանել կոչեցաւ ի դատաստան. եւ դատաւորն եհատ վճիռ եւ հրամայեաց արկանել ի բանտ :

Եւ Թէոդորոս աղմկեալ յոյժ եւ զրեթէ յայլ խելս եղեալ՝ ուրացաւ անզգօր զհաւատոն զի զերծուցէ զանձն իւր : Եւ իբրեւ դարձաւ ի տուն առժամայն ուշաբերեալ զղջացաւ, եւ սկսաւ լալ եւ կոծել զանձն. եւ փախուցեալ գնաց ի քաղաք մի այլազգեաց Խիրշէհիր կոչեցեալ, եւ պաշտէր անդ զքրիստոնէութիւնն :

Եւ մի ոմն յայլազգեաց որ երթեալ էր ի Կեսարիոյ ի քաղաք անդր, տեսեալ զԹէոդորոս ծանեաւ եւ մատնեաց քաղաքապետին : Եւ նա առաքեաց * կապանօք ի Կեսարիա, ուր էր յայնժամ Ռուքնատին արքայն Իկոնիոյ, այր արիւնահեղ եւ ատեցող քրիստոնէից : (* B p. 224 b.)

Եւ յորժամ ածին կապանօք յատեան նորա սկսաւ յորդորել զնա ի բաց կալ ի

Le même jour furent exécutés par le glaive, avec l'évêque saint Patrice, saint Acace, saint Ménandre et saint Polyénos.

* B p. 224 a. [B* En ce même jour martyre du nouveau martyr Théodore.

Ce bienheureux et glorieux martyr était de nationalité arménienne, de la ville de Césarée, jeune homme de stature et de physionomie avantageuses. Se trouvant dans la gène, il avait emprunté quelque argent à un musulman, mais comme il ne pouvait le rendre à la date convenue, il fut appelé au tribunal, où le juge le condamna et ordonna de le jeter en prison.

Théodore, profondément troublé et perdant la tête, y renia sa foi pour sauver sa personne. Mais, de retour à sa maison, il réfléchit aussitôt, regretta et se mit à pleurer et à se frapper la poitrine; il s'enfuit et alla dans une ville des musulmans, appelée Kirchéhir [1], où il pratiqua le christianisme.

Or, un musulman, qui s'était rendu de Césarée à la même ville, aperçut Théodore, le reconnut et le dénonça au gouverneur de la ville, qui * B p. 224 b. l'envoya * chargé de fers à Césarée où se trouvait alors Roukn ad-Dîn, roi d'Iconium, homme sanguinaire et détestant lés chrétiens.

Lorsque (Théodore) fut amené à son tribunal, il l'engagea d'abord à

1. Kirchéhir est à mi-chemin entre Césarée et Angora, au nord de Kizil Irmaq.

քրիստոնէութենէ եւ գտեալ զնա հաստատուն ի հաւատս Քրիստոսի բարկացաւ յոյժ, եւ հրամայեաց բուռս հարկանել ուժգին զբերան նորա, եւ առաքեաց առ դատաւորն ։

Եւ նա բազում բանիւք ողոքանօք խօսեցաւ ընդ նմա, եւ խոստացաւ բազում գանձս տալ նմա ոսկւոյ եւ արծաթոյ, եւ յերեւելի աւագութիւն հանել ։ Եւ տեսեալ թէ առ ոչինչ համարի զայն ամենայն, եւ անխախտելի կայ ի հաւատս՝ մատնեաց զնա ի ձեռս դահճաց ։ Եւ նոքա գանեցին յոյժ, եւ խորտակեցին քարամբք զկզակս նորա. եւ ապա մերկացուցին եւ միով սփածանելեաւ տարան եւ արկին ի բանդ ։ Եւ նա անդադար գոհանայր եւ օրհնէր զԱստուած եւ անդադար աղօթէր ։

Եւ ընդ առաւօտն հանին ի բանդէն եւ դարձեալ չարչարեցին կարծրագոյն տանջանօք մինչեւ անկանել նմա յերկիր իբրեւ զմեռեալ ։ Ապա կալեալ զհերաց գլխոյն գետնաքարշ ածին ընդ փողոցս եւ ընդ հրապարակս եւ եդին ի բանդի ։ Եւ նա աղօթիւք խնդրէր հասանել ի ժամ մարտիրոսութեան ։ Եւ ի տեսլեան երեւեցաւ նմա Քրիստոս եւ ունէր ի ձեռին թագ արքայական, եւ օրհնեաց զնա եւ քաջալերեաց, որով մխիթարեցաւ յոյժ եւ զօրացաւ ։

Եւ դատաւորն առաքեաց զոմանս յօրինագիտաց իւրոց, որք եկեալ առ նա ի բանդն բազում բանիւք խրատ տային նմա ընդունել զկրօնս իւրեանց ։ Եւ նա զայս միայն ասէր պատասխանի. Քրիստոնեայ եմ եւ Քրիստոսի ծառայ ։

quitter le christianisme, mais le trouvant ferme dans la foi du Christ, il entra dans une grande colère et ordonna de lui frapper vigoureusement la bouche à coups de poing; puis il l'envoya au juge.

Celui-ci lui parla longuement avec supplications, et lui offrit des trésors considérables, en or et argent, promettant de l'élever à de hautes fonctions. Mais, ayant reconnu que (Théodore) méprisait tout cela et demeurait inébranlable dans sa foi, il le remit entre les mains des bourreaux. Ceux-ci le frappèrent cruellement et brisèrent ses mâchoires à coups de pierres; ensuite l'ayant dépouillé de ses vêtements, ils le conduisirent à la prison et l'y jetèrent couvert seulement d'une pièce de toile. Mais (Théodore) ne cessait de rendre grâces à Dieu et priait continuellement.

Au matin, on le fit sortir de la prison et on le soumit de nouveau à des tortures plus cruelles, à tel point qu'il tomba à terre comme mort. Ensuite le saisissant par les cheveux de la tête, on le traîna à travers les rues et les places, puis on le reconduisit à la prison. Il demandait par la prière d'arriver à l'heure du martyre. Le Christ lui apparut en vision, tenant à la main une couronne royale, le bénit, et l'encouragea; (Théodore) en fut grandement consolé et réconforté.

Le juge envoya à la prison quelques-uns de ses juristes qui avec beaucoup de paroles engagèrent (Théodore) à reconnaître leur religion. Mais lui, pour toute réponse, ne disait que ceci : « Je suis chrétien et serviteur du Christ. »

Եկին առ նա եւ բազում իշխանաւոր այլազգիք, եւ բերին ինչս յոլովս եւ հանդերձս մեծամեծս, եւ յորդորէին զնա եւ աղաչէին գոնէ բերանով միայն դաւանել՝ զդաւա-
* B p. 225 a. նութիւն * իւրեանց եւ զերծանիլ ի մահուանէ : Եւ նա ոտս արձակեալ ցրուեաց զամենայն զանձսն եւ աղաղակեաց. Ես քրիստոնեայ եմ :

Եւ էր նա ի բանդի զաւուրս վեշտասան, եւ անդադար նեղէին ազգի ազգի տանջանօք, եւ ապա հանին արտաքոյ քաղաքին, եւ պնդեցին զնա ընդ ցից մի յոտից մինչեւ ի լանջսն, եւ յորդոր մատուցանէին ընդունել զկրօնս իւրեանց : Եւ տեսեալ թէ անխախտելի կայ ի հաւատն Քրիստոսի, յառաջ մատեաւ դահճապետն եւ եհար տապարաւ զգագաթն եւ ճեղքեաց զճակատ նորա : Եւ այլ ոմն եհար քարիւ ընդ բիբս նորա, եւ մի յաչացն կախեցաւ զերեսօք նորին : Ձայնեաց յայնժամ երանելին առ դահճսն եւ ասէ. Անսացէք ինձ սակաւիկ մի : Եւ նոքա կարծեցին եթէ կամի հաւանիլ կրօնից իւրեանց, եւ անսացին :

Ասէ սուրբն. Երդմնեցուցանեմ զձեզ ի կեանս արքային ձերոյ, զի թողջիք ինձ զմիւս ակն իմ զի տեսից զյօշատումն մարմնոյ իմոյ : Ընդ այս բան բարկացեալ դահճին՝ եհար սրովն զճակատ երանելոյն, եւ ի բաց եհան զկառափն ի գլխոյ նորա : Եւ սուրբն ի շունչ յետին աղաղակեաց. Տէր իմ եւ Աստուած իմ Յիսուս Քրիստոս ընկալ զիս որ վասն անուանդ քո մեռանիմ :

Եւ բազմութիւն ամբոխին զրոհ տուեալ հարին զնա յամենայն կողմանց սուսերօք

De nombreux notables musulmans vinrent le trouver, lui apportant beaucoup d'objets et de riches vêtements, l'engageant et le priant d'accepter
* B p. 225 a. leur *religion, au moins de bouche, afin d'échapper à la mort. Mais il dispersa, d'un coup de pied, tous ces trésors et cria : « Je suis chrétien. »

Il resta seize jours en prison; on le soumit continuellement à diverses tortures, puis on le fit sortir de la ville, on l'attacha fortement à un poteau des pieds à la poitrine, tandis que (les musulmans) l'engageaient à accepter leur religion. Mais voyant qu'il demeurait inébranlable dans la foi du Christ, le bourreau s'avança, frappa avec une hache la tête (du bienheureux) et fendit son front. Un autre frappa d'une pierre ses paupières et un des yeux sortit et resta suspendu sur son visage. Alors, le bienheureux cria aux bourreaux et dit : « Attendez un instant. » Ils crurent qu'il voulait consentir à leur religion et attendirent.

Le saint leur dit : « Je vous adjure, par la vie de votre roi, de me laisser l'autre œil afin que je puisse voir le démembrement de mon corps. » Le bourreau, irrité de ces paroles, frappa de son glaive le front du bienheureux et détacha le crâne de la tête. Le saint au dernier souffle cria : « Mon Seigneur et mon Dieu, Jésus-Christ, reçois-moi qui meurs pour ton nom. »

La multitude de la foule l'assaillit de tous les côtés avec des glaives, des

եւ քարամբք եւ փայտիւք. եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս Մարերի ԺԲ եւ Մայիսի ԺԹ ։

Եւ ի գիշերին ծագեաց լոյս մեծ ի վերայ սուրբ մարմնոյ նորա, եւ զարհուրեալ դահճաց խոյս ետուն անտի ։ Եւ Ռուքնատին արքայ իմացեալ զքանչելիսն հրամայեաց փութով բառնալ եւ թաղել զնա ։ Եւ երթեալ քրիստոնէից բարձին զսուրբ մարմինն եւ ամփոփեցին յարժանաւոր տեղւոջ ։ Եւ եցոյց Աստուած ի տապանի նորա բազում նշանս բժշկութեան ի հիւանդս եւ յախտաժէտս ։]

Մարերի ԺԳ եւ Մայիսի Ի ։ Վկայութիւն սրբոյն Ասկղայի ։

Մարտիւրոսն Քրիստոսի սուրբն Ասկղաս էր ի Թեբայիդայ Եգիպտացւոց, քրիստոնեայ հաւատով. եւ մատնեցաւ առ Արիանոս դատաւորն ։ Եւ կացեալ առաջի խոստովանեցաւ ճշմարիտ հաւատով զՔրիստոս, եւ ոչ խոստմանցն հաւանեցաւ եւ ոչ ի սպառնալեացն երկեաւ ։ Կախեցին զնա մերկ զփայտէ եւ զան հարեալ քերեցին զմարմինն եւ արկին ի բանդ ։

Եւ դատաւորն եմուտ ի նաւ զի անցցէ յայնկոյս ընդ գետն, եւ սուրբ վկայն

13 հարեալ] հարին B — քերեցին] քերթեցին B — զմարմինն] քերանօք եւ կիսամահ *add.* B.

pierres et des bâtons et c'est ainsi qu'il fut martyrisé dans le Christ, le 12 maréri, 19 mai.

La nuit, une forte lumière éclata au-dessus de son saint corps et les bourreaux, saisis de frayeur, prirent la fuite. Le roi Roukn ad-Dîn, ayant appris les miracles, ordonna de l'enlever promptement et de l'enterrer. Les chrétiens, y étant allés, relevèrent le saint corps et le déposèrent dans un endroit digne de lui. Dieu fit voir à sa tombe de nombreux miracles de guérison sur les malades et les infirmes.]

13 maréri, 20 Mai.

Martyre de saint Asclas (*Asklayi*).

Le martyr du Christ saint Asclas (*Asklas*) était de la Thébaïde d'Égypte, de foi chrétienne. Il fut dénoncé au juge Arianus. Mis en sa présence, il confessa le Christ avec une foi sincère, ne céda point aux promesses et n'eut point peur des menaces. On le suspendit nu à un arbre et après qu'en le battant on eut déchiré son corps, on le jeta en prison.

Le juge s'étant embarqué pour passer de l'autre côté du fleuve, le saint

Քրիստոսի աղաչեաց զԱստուած, եւ դադարեաց նաւն ի մէջ գետոյն ։ Եւ գիտացեալ դատաւորին գրեաց առ սուրբ վկայն այսպէս. Ճշմարիտ մեծ է Աստուածն քրիստոնէից, եւ ոչ գոյ այլ Աստուած բայց ի նմանէ ։ Եւ ապա արձակեցաւ նաւն եւ ել ի ցամաք տեղին յոր եմուտ ։ Եւ կոչեալ առաջի իւր զսուրբն ասէ. Դու կամէիր ի մէջ ջրոցն կապել զիս կախարդութեամբ ։ Եւ հրամայեաց եւ հրով այրեցին զկողսն, եւ ապա վէմ մի մեծ կապեցին յոտսն եւ ընկեցին ի գետն. եւ անդ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մայիսի Ի ։

* A fol. 264 r° a. Եւ վաղիւն եհան գետն զմարմին * սրբոյ վկային ի ցամաք ի հիւսիսակողմն քաղաքին, եւ արք քրիստոնեայք առեալ զմարմինն թաղեցին ի նշանաւոր տեղի ։

* B p. 226 a. [B * Յայսմ աւուր յիշատակ է Աշոտոյ թագաւորին Հայոց որ Ողորմած կոչեցաւ ։

Սա էր որդի Աբասայ որդւոյ Սմբատայ որդւոյ առաջնոյն Աշոտոյ, զարդարեալ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր ձիրիւք. եւ էր սիրելի ամենեցուն իւրով առաքինազարդ քաղաքավարութեամբն եւ կատարեալ բարեպաշտութեամբ ։

Շինեաց ի հիմանց զբազում եկեղեցիս ի քաղաքն Անի եւ յայլ տեղիս, եւ զհնացեալսն նորոգեաց եւ վայելչացոյց ։

1-4 եւ դադարեաց . . . յոր եմուտ] զի ոչ հասցէ ի ցամաք մինչեւ զրով տացէ վկայութիւն ճշմարտութեան ։ Յայնժամ արգելան զնացք դատաւորին ի ջուրս . եւ գիտացեալ զզօրութիւնն Քրիստոսի գրեաց առ սուրբն այսպէս . Մեծ է Աստուածն քրիստոնէից, եւ ոչ գոյ այլ Աստուած բաց ի նմանէ ։ Զայս արարեալ՝ յաջողութեամբ ել ի ցամաք B || 6 յոտսն] յոտս նորա B || 7 Աստուած] Մարերի ԺԳ եւ *add.* B || 8 հիւսիսակողմն] հիւսիսոյ կողմանէ B || 9 զմարմինն *om.* B.

martyr du Christ pria Dieu, et le bateau s'immobilisa au milieu du fleuve. Le juge, l'ayant appris, écrivit au saint martyr en ces termes : « Vraiment le Dieu des chrétiens est grand et il n'y a point d'autre Dieu que lui. » Là-dessus le bateau reprit sa course et (le juge) débarqua au rivage où il s'était embarqué. Il fit venir le saint en sa présence et dit : « Tu as voulu me lier au milieu des eaux par magie, » et il ordonna de lui brûler les côtes avec un feu ardent, puis on lui attacha aux pieds une grosse pierre et on le jeta dans le fleuve. Il y rendit son âme à Dieu, le 20 mai.

* A fol. 264 r° a. Le lendemain, le fleuve rejeta le corps * du saint martyr sur le rivage au nord de la ville. Des chrétiens prirent le corps et l'inhumèrent dans un endroit choisi.

* B p. 226 a. [B* En ce jour commémoration d'Ashot, roi d'Arménie, surnommé le Miséricordieux.

Il était fils d'Abas, fils de Sembat, fils d'Ashot I[er], doué de toutes les qualités spirituelles et corporelles. Il fut aimé de tous pour sa vie vertueuse et sa parfaite piété.

Il fit construire depuis le fondement de nombreuses églises dans la ville d'Ani et ailleurs, fit réparer celles qui étaient vieilles et les embellit.

Կառոյց ի բազում տեղիս հիւանդանոցս եւ անկելանոցս, եւ հաստատեաց մշտնջենաւոր հասոյթս, Եւ յոլով անգամ ինքն յայց ելանէր հիւանդաց եւ ախտացելոց, եւ անձամբ ծառայէր նոցա ուրախամիտ ։ Եւ ի սեղանի եւս ընդ իւր նստուցանէր զաղքատս, զհիւանդս, զկոյրս, զբորոտս, եւ զբաժակն թագաւորական նոցա մատուցանէր, եւ զմնացորդս նոյն բաժակին ինքն ըմպէր ։ Գթած էր յոյժ եւ առատ առ աղքատս եւ առ կարօտեալս, վասն որոյ եւ Ողորմած կոչեցաւ ։ Եւ կեցեալ սրբութեամբ եւ արդարութեամբ հանգեաւ ի Քրիստոս ։

Նոյն ամին օրհնալի եւ աստուածասէր կողակիցն իւր դշխոյն Խոսրովանոյշ գործակից էր առն իւրում յամենայն աստուածահաճոյ բարեգործութիւնս ։ Կանգնեաց զհոյակապ եկեղեցիս ի գիւղն Սանահին եւ ի Հաղբատ, եւ զերկուս մեծ եւ զհռչակաւոր վանս որք յանուն գիւղիցն կոչին ուխտ Սանահնի եւ Հաղբատայ ։ Եւ ինքն վասն բազում գործոցն սիրոյ եւ ողորմութեան զոր առնէր առ աղքատս եւ կարօտեալս ցուցաւ գթած մայր ազգին Հայոց ։ Եւ յետ մահու առն իւրոյ թագաւորին Աշոտոյ ապրեալ այլ եւս ամս երիս աստուածահաճոյ վարուք փոխեցաւ առ Աստուած ։]

Il fit ériger en plusieurs endroits des hôpitaux et des infirmeries et leur assigna des revenus perpétuels. Bien souvent il visitait lui-même les malades et les infirmes, les servait personnellement avec gaieté. Il faisait asseoir à sa table les pauvres, les malades, les aveugles, les lépreux, leur offrait la coupe royale et buvait ensuite le restant de la même coupe. Il était très charitable, généreux envers les pauvres et les indigents, c'est pourquoi il fut surnommé le Miséricordieux. Après avoir vécu en sainteté et en justice, il reposa dans le Christ.

De même, son épouse, amie de Dieu, la reine Khosrowanouiš, fut la collaboratrice de son mari dans toutes les œuvres de bienfaisance et agréables à Dieu. Elle fit élever les grandioses églises des bourgs de Sanahin et de Halbat et les deux grands et fameux monastères appelés, du nom de ces bourgs : couvents de Sanahin et de Halbat. Elle s'est montrée une vraie mère charitable de la nation arménienne par ses nombreuses œuvres d'amour et de charité à l'égard des pauvres et des indigents. Après avoir vécu trois années encore après la mort de son mari le roi Ashot, elle trépassa à Dieu, après une vie agréable à Dieu.]

Մարերի ԺԴ եւ Մայիսի ԻԱ ։ Տօն Կոստանդիանոսի թագաւորի եւ մօր նորա Հեղինեայ, առաջին լեալ թագաւորք քրիստոնէից ։

Կոստանդիանոս թագաւորն Հռոմայ յառաջ հեթանոս էր, որդի Կոստայ, որ Խլորոսն անուանեցաւ ։ Եւ վասն ծննդեանն Կոստանդիանոսի թէ որպէս էր որդի Կոստայի Խլորոսին պատմեցից ի գրոց սրբոյ վկային Եւսիգնիոսի ։

Յաւուրս Կոստայ արքային զօրականք անցին ընդ քաղաքն Ելինեապօլիս, եւ իջաւանեցան առ կին մի պանդոկապետ որոյ անուն էր Հեղինէ ։ Եւ պատանեակ որդին իւր նստաւ յերիվար զօրականին, եւ զօրականն ած նմա ապտակ եւ իջոյց յերիվարէն, եւ մանուկն ելաց ։ Ասէ Հեղինէ. Մի հարկաներ զդա քանզի թագաւորի որդի է ։ Նոքա հարցանէին թէ որպէս ։ Եւ նա ասէ. Յորժամ դարձաւ թագաւորն Կոստաս ի Պարսից առ իս իջաւանեցաւ, եւ ցանկացեալ գեղոյ իմոյ ննջեաց ընդ իս. եւ ի

1 Տօն] է սրբոյն *add.* B — Կոստանդիանոսի] մեծի *add.* B || 7 իջաւանեցան] ի պանդոկի մի *add.* B || 11 ցանկացեալ] ցանկացաւ B.

14 maréri, 21 Mai.

Fête de l'empereur Constantin et de sa mère Hélène qui furent les premiers souverains chrétiens.

Constantin l'empereur de Rome était auparavant païen, fils de Constance (*Kostayi*), surnommé Chlore. Je vais raconter comment il était fils de Constance Chlore d'après les écrits du saint martyr Eusignius[1].

Aux jours de l'empereur Constance, des soldats traversèrent la ville d'Hélénopolis[2] (*Elineapolis*) et descendirent chez une femme nommée Hélène, qui tenait une hôtellerie. Son jeune enfant étant monté sur le cheval d'un soldat, le soldat lui donna un soufflet et le fit descendre du cheval. L'enfant se mit à pleurer. Hélène dit : « Ne le frappe pas, car c'est le fils de l'empereur. » (Les soldats) lui demandèrent comment cela pouvait être. Elle répondit : « Lorsque l'empereur Constance, revenant de Perse, descendit chez moi, il me désira pour ma beauté, et coucha avec moi. Je devins

1. Il s'agit vraisemblablement d'Eusèbe de Césarée. Il n'est pas trop difficile d'expliquer la transformation d'Eusébios en Eusignios, mais le titre de martyr ne convient pas. L'original grec peut avoir dit qu'Eusèbe avait été témoin, μάρτυρος, de la vie de Constantin, le mot aura été entendu par le traducteur au sens qu'il a d'ordinaire dans un synaxaire. — 2. Appelée ainsi en l'honneur de la mère de l'empereur à partir de 327, cette localité de Bithynie s'appelait auparavant Drépané; cf. Pauly-Wissova, *Realencyclopädie des classischen Alterthumswissenschaft*, nouv. éd., t. 14, Stuttgart, 1912, col. 2821.

նմանէ յղացայ եւ ծնայ զմանուկս զայս ։ Եցոյց նոցա եւ զպարգեւսն զոր ետ նմա թագաւորն. եւ նոքա ուրախացան * առ նա, եւ ետ ի նոսա Հեղինէ զտուրսն Կոստանդայ * A fol. 264 r° b. թագաւորին զի ցուցցեն նմա ։

Եւ գնացին զօրականքն ի Հռոմ. եւ վասն զի ոչ գոյր զաւակ կոստաս խնդրէր յիշխանացն եւ ի գաւառապետացն գեղեցկատեսիլ փոքր պատանի մի, զի արասցէ իւր որդեգիր եւ ժառանգորդ թագաւորութեանն իւրոյ ։ Եւ պատմեցին զօրականքն արքային վասն Հեղինեայ եւ զաւակին իւրոյ, ցուցին նմա եւ զպարգեւացն տուրսն ։

Եւ իբրեւ ետես ծանեաւ, յիշեաց եւ զօր իջեւանին իւրոյ առ Հեղինեայ, եւ փութով յուղարկեաց զօրականս բազում ձախիւք, եւ արքունական երիվարօք ոսկեկազմեալ տարան զպատանեակն ի Հռոմ ։ Եւ տեսեալ արքային յոյժ ուրախ եղեւ եւ համբուրեաց զնա, եւ զգեցոյց նմա զարկիւռենոյ պատուոյ իշխանութիւնն, եւ յուղարկեաց ի Բիւզանդիա տուեալ նմա զունդս հեծելոց վասն պատերազմելոյ ընդ բարբարոսս ։ Եւ երթեալ յաղթեաց թշնամեացն, եւ դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի Հռոմ, եւ առժամայն թագ եդեալ արար զնա թագաւոր ։

Տարաւ եւ զմայրն իւր Հեղինէ ի Հռոմ, եւ եդ նմա թագ եւ արար զկնոյ Հռովմայեցւոցն. եւ ամենայն իշխանքն եւ ժողովուրդքն երկիր պագին մօրն եւ զաւակին ։

1 նոցա] նմա B || 3 ցուցցեն] ցուցանիցեն B || 9 արքունական երիվարօք ոսկեկազմեալ] արքունակազմ երիվարաւ B || 12 տուեալ նմա] հինգ *add.* B.

enceinte de lui et je mis au monde cet enfant. » Elle leur montra les cadeaux que l'empereur lui avait donnés. (Les soldats) * la félicitèrent et * A fol. 264 r° b. Hélène leur remit les cadeaux de l'empereur Constance afin qu'ils les lui montrassent.

Les soldats partirent pour Rome. Or, comme Constance n'avait point d'enfant, il était à la recherche, auprès des gouverneurs et des préfets des provinces, d'un bel enfant pour l'adopter et en faire l'héritier de son empire. Les soldats entretinrent l'empereur au sujet d'Hélène et de son enfant, et lui montrèrent les cadeaux offerts.

Lorsqu'il les eut vus, il les reconnut et se rappela le jour où il avait été hébergé chez Hélène; il envoya promptement des soldats avec grand apparat et des chevaux impériaux harnachés d'or, qui amenèrent l'enfant à Rome. Lorsque l'empereur le vit, il en fut transporté de joie, il embrassa l'enfant, le revêtit de l'autorité de la puissance tribunitienne et l'envoya à Byzance, en lui donnant des troupes montées pour guerroyer contre les barbares. Il partit, vainquit les ennemis et retourna à Rome après une grande victoire; (Constance) le couronna aussitôt et le fit empereur.

Il fit venir aussi sa mère Hélène à Rome, la couronna et en fit l'impératrice des Romains; tous les princes et le peuple se prosternèrent devant la mère et l'enfant.

* A fol. 264 v° a. Եւ յետ մահուանն Կոստասայ թագաւորեաց Կոստանդիանոս * որդին իւր որ ի Հեղինեայ էր ։ Եւ էր ի Քրիստոսի գալստենէն մինչեւ ի թագաւորելն Կոստանդիանոսի ամք երկերիւր իննսուն եւ ութ ։

Եւ յորժամ ետես ի տեսլեանն զնշան սրբոյ խաչին յերկինս, ելեալ ի Հռոմայ գնաց ի Բիւզանդիա, եւ անտի գնաց ի Նիկոմիդիա, մարտեաւ ընդ Լիկիանոս եւ յաղթեաց նմա ։ Այլ վասն բորոտութեանն գրեալ է ի գիրսն յորում է վարք Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին ի Յունվարի Բ ։

Եւ Կոստանդիանոս տեսեալ զԲիւզանդիա տեղի վայելուչ մեծացոյց զքաղաքն եւ ամրացոյց պարսպօք եւ կամարակապ սալարկ փողոցօք, եւ անուանեաց յանուն իւր Կոստանդինուպօլիս ։ Եւ արար մեծապայծառ նաւակատիս քաղաքին Մայիսի ԻԱ ։ Եւ փոխեաց զթագաւորութիւնն Հռոմայ ի Կոստանդինուպօլիս ։ Եւ առաքեաց զմայրն իւր յԵրուսաղէմ, եւ եգիտ ճշմարտութեամբ զխաչն Քրիստոսի թաղեալ ի Հրէիցն յաղբի ։

Եւ յորժամ յայտնեցաւ հերետիկոսն Արիոս հայհոյիչն սրբոյ Երրորդութեանն, ժողովեաց մեծն Կոստանդիանոս եպիսկոպոսունս երեքհարիւր տասն եւ ութ ի քաղաքն Նիկիա Բիւթանացւոց, ի քսան ամի թագաւորութեանն իւրոյ եղեւ սիւնհոդոսն ի Նիկիա, եւ նզովիւք արմատախիլ արարին զչար հերձուածն Արիոսի ։ Եւ աղաչեաց

6 ի գիրսն յորում է վարք] ի վարս սրբոյն B || 7 Յունվարի Բ] Յունվարի ամսեանն յերկուսն B || 10 քաղաքին] Մարերի ԺԴ եւ *add.* B || 12 իւր] զՀեղինէ *add.* B || 13 յաղբի] յաղբիւսի B || 15 մեծն Կոստանդիանոս] յամենայն գաւառաց *add.* B.

* A fol. 264 v° a. Après la mort de Constance, régna Constantin, son fils * né d'Hélène. Deux cent quatre-vingt-dix-huit ans s'étaient écoulés depuis la venue du Christ jusqu'au règne de Constantin.

Lorsque (Constantin) eut vu en vision dans les cieux le signe de la sainte croix, il quitta Rome, se rendit à Byzance, de là à Nicomédie, se battit avec Licinius (*Likianos*) et le vainquit. Quant à sa maladie de la lèpre, cela est écrit dans la vie de Silvestre pontife de Rome, au 2 janvier.

Constantin, ayant vu le remarquable emplacement de Byzance, agrandit la ville, la fortifia d'enceintes, l'embellit de rues dallées et d'arcades voûtées, enfin l'appela de son nom Constantinople. Il fit une somptueuse dédicace de la ville le 21 mai. Il transporta l'empire de Rome à Constantinople. Il envoya à Jérusalem sa mère, qui y découvrit la vraie croix du Christ enterrée dans du fumier par les Juifs.

Et lorsque apparut l'hérétique Arius, le blasphémateur de la sainte Trinité, le grand Constantin convoqua trois cent dix-huit évêques dans la ville de Nicée de Bithynie; et la vingtième année de son règne eut lieu le synode de Nicée, où fut anathématisé et déraciné le méchant schisme

զամենեսեան երթալ ի քաղաքն * իւր ի Կոստանդնուպօլիս եւ օրհնութեամբ մեծաւ օրհնել : * A fol. 264 v° b.

Եւ մտին երեքհարիւր տասն եւ ութ քահանայապետքն Քրիստոսի, եւ ելեալ ի պարիսպ քաղաքին շուրջ պատեցան աղօթիւք եւ օրհնութեամբ, եւ խնդրեցին յԱստուծոյ զի յաւիտեան ի ձեռն այլազգի թշնամեաց ոչ պաշարեսցի : Եւ ողջունեալ զթագաւորն եւ զսուրբն Մետրոփանէս զեպիսկոպոսն Բիւզանդիոյ գնացին իւրաքանչիւր յաթոռ իւր :

Եւ շինեաց Կոստանդիանոս ի մէջ քաղաքին բարձր արձան, եւ կանգնեաց զոր ի Հռոմայ եբեր սկայաչափ պղնձի ոսկէզօծ պատկերն ի վերայ սեանն զոր անիղէոս անուանեն, եւ ի ձեռին կառոյց խաչ, եւ գրեաց ի վերայ խաչին. Ի քեզ Քրիստոս Աստուած յանձն առնեմ զքաղաքս իմ զայս : Եդիր եւ ի ներքոյ խարսխին զերկոտասան զամբիւղսն որ լցան ի հացէն որ աւելորդ ի կերողացն զոր Քրիստոս յագեցոյց զբազմութիւն ժողովրդեանն : Եւ զփրկչական փայտ սրբոյ խաչին յերկուս բաժանեաց, զկէսն ետ Երուսաղեմի եկեղեցւոյն զոր շինեաց յանուն յարութեանն Քրիստոսի, եւ զկէսն պարգեւեաց քաղաքին իւրոյ Կոստանդնուպօլսոյ :

4 պատեցան] զքաղաքաւն *add.* B || 12 հացէն որ աւելորդ ի կերողացն *om.* B.

d'Arius. (Constantin) pria tous (les évêques) de venir dans sa ville* de Constantinople et de la bénir avec de grandes bénédictions. * A fol. 264 v° b.

Les trois cent dix-huit pontifes du Christ firent leur entrée, montèrent sur les murailles de la ville, en firent le tour avec des prières et des bénédictions et demandèrent à Dieu qu'à jamais elle ne fût investie par des ennemis infidèles. Après avoir salué l'empereur et saint Métrophane, l'évêque de Byzance, ils retournèrent chacun à son siège.

Constantin fit élever au milieu de la ville une grande colonne, au haut de laquelle il installa la statue colossale de bronze doré qu'il fit apporter de Rome et qu'on appelle Aniléos[1], il lui plaça une croix dans la main, et fit inscrire sur la croix : « A Toi Christ-Dieu je confie cette mienne ville. » Au bas du socle il fit mettre les douze corbeilles qui furent remplies du pain qui resta en plus, après que la multitude eut mangé et eut été rassasiée par le Christ. Il fit couper en deux le bois de la sainte croix du Sauveur, dont il donna une moitié à l'église de Jérusalem qu'il édifia sous le vocable de la résurrection du Christ, et il offrit l'autre moitié à sa ville de Constantinople.

1. Ἀνήλιος « sans soleil, opaque ». La première érection de cette statue à Rome, aussitôt après la victoire sur Maxence, est racontée par Eusèbe, *De vita Constantini*, lib. I, cap. 40, *P. G.*, XX, col. 954-956. Son transport à Constantinople est attesté par Pseudo-Codinus, *Origines;* dans T. Preger, *Scriptores originum Constantinopolitanarum*, fasc. II, Leipzig, 1917, pp. 177, 257.

*Եւ թագաւորեաց Կոստանդիանոս բարեպաշտութեամբ ամս երեսուն եւ երկու յետ մկրտութեանն իւրոյ, եւ փոխեցաւ յանանց կեանսն Մայիսի ԻԱ եւ Մարերի ԺԴ, թողեալ ժառանգորդս * զերիս որդիս իւր զԿոստանդին, զԿոստաս, եւ զԿոստանդինոս, եւ եդաւ ի տապանի ընդ Հեղինեայ մօրն իւրոյ ի Կոստանդնուպօլիս :*

* A fol. 265 r° a.

Ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի թագաւորութիւնն Կոստանդիանոսի մեծի եւ ի ժողովն Նիկիոյ ամք երկերիւր իննսուն եւ ութ :

Մարերի ԺԵ եւ Մայիսի ԻԲ : Վկայութիւն Թէոդոտոնի գինեվաճառի, եւ եօթն կուսանացն որք յԱնկիւրիա կատարեցան որոց անուանքն են այսոքիկ, Տեկուսա, Եփրասիա, Աղեկսանդրիա, Կղաւդիա, Փայինէ, Մատրոնա, Յուլիա :

Սոքա էին յԱնկիւրիոյ քաղաքէն քրիստոնեայ հաւատով, յաւուրս Թէոդեկնոսի անօրէն իշխանին, եւ վասն հալածանաց կռապաշտիցն Թէոդոտոսն հնարս իմացաւ կնաւն իւրով, եւ եղեւ գինեվաճառ. եւ ընդունէր ի յարկս իւր զփախուցեալ քրիստոնեայսն եւ կերակրէր :

7 *Թէոդոտոնի*] *սրբոյն Թէոդոտայ* B || 8 *Տեկուսա, Եփրասիա*] *Տեկուսի, Նեփրասի* B || 10 *Սոքա*] *Սուրբքս այսոքիկ* B.

Constantin régna pieusement trente-deux années après son baptême et trépassa à la vie éternelle le 21 mai, 14 maréri, laissant comme héritiers * ses trois fils, Constance (*Kostandin*), Constant (*Kostas*), et Constantin (*Kostandinos*)[1]. Il fut inhumé dans le tombeau de sa mère Hélène, à Constantinople.

* A fol. 265 r° a.

De la naissance du Christ jusqu'au règne du grand Constantin et le synode de Nicée il y eut deux cent quatre-vingt-dix-huit ans[2].

15 MARÉRI, 22 Mai.

Martyre de Théodote (*Théodotoni*), le marchand de vin, et des sept vierges qui furent exécutées à Ancyre, et dont les noms sont Tékousa, Euphrasia, Alexandria, Claudia, Phayné, Matrona et Julia.

Ces (saints) étaient de la ville d'Ancyre, de foi chrétienne, aux jours du gouverneur impie Théotecnos (*Théodeknos*). En raison des persécutions (exercées) par les idolâtres, Théodote, de concert avec sa femme, inventa une ruse et se mit marchand de vin; il recevait chez lui les chrétiens fugitifs et les nourrissait.

1. Les fils de Constantin sont par ordre de naissance : Constance, Constantin et Constant.

2. Ce compte pourrait s'appliquer aux années écoulées de l'Ascension de Notre-Seigneur au concile de Nicée, cf. *infra*, 22 maréri [B], p. 1553.

Եւ հրամայեաց Թէոտեկնոս իշխանն զի ի վաճառումն ի հացն եւ ի գինին խառնեսցեն ի զոհից կուոցն ճարպ եւ արիւն. եւ քրիստոնեայքն ոչ գտանէին հաց կամ գինի որ մատուցանէին յեկեղեցին ։ Յայնժամ երանելին Թէոդոտոս գնէր ցորեան, եւ ամուսինն իւր եփէր հաց, եւ տային նշխար Աստուծոյ պատարագին, եւ բաշխէր քրիստոնէից եւ որք ի բանդս արգելեալք էին վասն Քրիստոսի հաւատոցն ։

Եւ զոմն * քրիստոնեայ որոյ անուն էր Բիկտորոս կալեալ եւ չարչարէին զնա տանջանօք ։ Եւ յորժամ տանէին ի կատարումն, աղաչեաց զիշխանն անսալ նմա սակաւ աւուրս զի խորհեսցի ի միտս իւր, եւ թոյլ ետուն նմա. եւ երթեալ ի տուն իւր մեռաւ ։ Եւ յերկուանալի է, սորա մահս եթէ ընդունելի է եթէ ոչ ։ * A fol. 265 r° b.

Իսկ երանելին Թէոդոտոս գնաց ի Գալիւս գետն եւ եգիտ զմարմին սրբոյ վկային Վաղենդիոսի, որ յաւուրսն յայնոսիկ ի Միդիկեայ հրով մարտիրոսացաւ եւ ընկեցաւ ի գետն.' եւ առեալ տարաւ ի ստորոտ լերինն ի տեղի անտառախիտ, կոչեաց եւ զքահանայն Փռոնատոն եւ թաղեցին պատուով ։

Եւ յորժամ դարձաւ ի քաղաքն Թէոդոտոս եգիտ զեօթն կուսան կանայսն որք ի տղայութենէ ճգնեալ էին կրօնաւորութեամբ, եւ մինն ծերագոյն էր քան զայլսն որոյ

6 չարչարէին] վասն Քրիստոսի հաւատոցն *add.* B || 7 տանէին] տարան B || 9 մեռաւ] ի ցաւոց անտի *add.* B || 11 Վաղենդիոսի] Վաղենտոսի B || 13 Փռոնատոն] Փրոտոնատոն B.

Le gouverneur Théotecnos ordonna qu'en vendant le pain et le vin on y mélangeât de la graisse et du sang des sacrifices aux idoles. Les chrétiens ne trouvaient point de pain ni de vin pour l'offrir à l'église. Le bienheureux Théodote acheta alors du blé, son épouse cuisait du pain et ils donnaient l'hostie du sacrifice divin, distribuée aux chrétiens et à ceux qui étaient détenus en prison pour la foi du Christ.

On avait * saisi un certain chrétien, dont le nom était Victor (*Biktoros*), et on le soumit à de cruels supplices. Au moment où on le conduisait au lieu de l'exécution, il pria le gouverneur de patienter quelques jours pour qu'il pût réfléchir; ce qui lui fut accordé. Rentré dans sa maison, il y mourut. Sa mort fut-elle agréable (à Dieu) ou non; c'est douteux. * A fol. 265 r° b.

Le bienheureux Théodote, s'étant rendu au fleuve Halys (*Galius*)[1], y trouva le corps du saint martyr Valence, qui avait été ces jours-là martyrisé par les flammes à Midicea puis avait été jeté dans le fleuve; il le prit, le porta au bas de la montagne dans un fourré, fit venir le prêtre Phronatos (*Phronaton*) et tous deux l'inhumèrent avec honneur.

Étant revenu à la ville, Théodote découvrit sept femmes vierges qui depuis l'enfance vivaient ascétiquement comme religieuses; l'une d'entre elles, dont le nom était Tékousa, était plus âgée que les autres; elle était la

1. L'Halys passe à une certaine distance à l'est d'Ancyre.

անուն էր Տեկուսա, եւ էր մօրաքոյր Թէոդոտոսի ։ Զոր կալեալ իշխանին եւ վասն ոչ ուրանալոյ զՔրիստոս եւ ոչ զոհելոյ կռոցն չարչարեաց զնա ուժգին ։ Եւ ետ զնոսա ի պոռնիկ երիտասարդս, զի շնութեամբ ապականեսցեն զնոսա, զի լուեալ էր եթէ կուսանք են, եւ յորժամ արկին զնոսա ի մի տուն երաց զգլուխն իւր Տեկուսա եւ եցոյց զալիսն. նոյնպէս եւ այլքն աղաչեցին մինչեւ ի գութ շարժեցին զերիտասարդսն, եւ մնացին անարատք Աստուծոյ զօրութեամբն ։

* A fol. 265 v° a. Հրամայեաց իշխանն եւ տարան զնոսա * մերկս ի լիճն, եւ վէմս կապեցին ի նոսա եւ ընկեցին անդ. եւ աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած զոր լուեալ Թէոդոտոս գոհացաւ զԱստուծոյ, եւ թողին պահապանս զի մի հանցեն զնոսա քրիստոնեայքն ի լճէն ։ Եւ եղեւ որոտ եւ կայծակունք եւ անձրեւ սաստիկ, եւ երեւեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Սոսանթոս ունելով ի գլուխն սաղաւարտ եւ ի ձեռին վահան, զոր տեսեալ պահապանացն զահի հարան եւ չերկիւղէն փախեան ։ Եւ առեալ Թէոդոտոս արս քրիստոնեայս գնաց ի գիշերի անդր, եւ ջուրք լճին ախուեցան ի միւս կողմն, եւ յայտնեցան նշխարք սրբոց կանանցն վիմօքն զոր կապեալ էին յանձինսն ։ Եւ մտեալ

3 ի պոռնիկ] յանառակ B — զի շնութեամբ ապականեսցեն զնոսա *om.* B || 8 անդ] ի լիճն B || 9 գոհացաւ զԱստուծոյ] փառաւորեաց զԱստուած B — քրիստոնեայքն *om.* B || 10 կայծակունք] եւ հողմ *add.* B — եւ երեւեցաւ . . . փախեան] եւ պահապանքն փախեան B || 13 ջուրք լճին ախուեցան] ջուր լճին բանութեամբ հողմոյն ժողովեցաւ B.

tante maternelle de Théodote. Le gouverneur, l'ayant fait saisir, la tortura brutalement, parce qu'elle ne reniait point le Christ et n'immolait point aux idoles; puis il remit les saintes femmes à de jeunes débauchés, pour qu'ils les flétrissent par la fornication, car il avait appris qu'elles étaient vierges. Lorsqu'on les eut enfermées dans une maison, Tékousa découvrit sa tête et montra ses cheveux blancs; quant aux autres, elles supplièrent tellement que les jeunes gens en eurent pitié, et ainsi elles restèrent immaculées par la puissance de Dieu.

* A fol. 265 v° a. Le gouverneur ordonna de les conduire * nues au lac; on leur attacha des pierres, et on les jeta là. Elles rendirent leur âme à Dieu, et l'ayant appris, Théodote rendit grâces à Dieu. On avait mis des gardiens pour que les chrétiens ne vinssent point les retirer du lac. Mais il y eut du tonnerre et des éclairs, et une forte pluie se mit à tomber; le saint martyr du Christ Sosanthos apparut avec un casque sur la tête et un bouclier à la main; ce que voyant, les gardiens furent saisis de crainte et s'enfuirent apeurés. Théodote prit avec lui des hommes chrétiens et s'y rendirent nuitamment; les eaux du lac se retirèrent vers l'autre bord et les restes des saintes femmes avec les pierres qui leur étaient attachées apparurent. Les (chrétiens) avancèrent, les sortirent

հանին ի ցամաքն, եւ դարձաւ ջուր լճին անդրէն ի տեղի իւր, հատին զպարանն եւ զնշխարսն բարձեալ ի վերայ գրաստու տարան թաղեցին մերձ ի սուրբ հարանցն :

Եւ մի ոմն զոր չարչարէին վասն Քրիստոսի հաւատոյն ոչ համբերեալ ահագին տանջանացն, գնաց առ իշխանն մատնեաց զԹէոդոտոն եւ զնշխարս սրբոց կանանցն : Եւ առաքեաց իշխանն եւ եհան զնշխարսն եւ այրեաց հրով :

Եւ Թէոդոտոն փախեաւ, եւ կալան զայլս վասն նորա. եւ նորա լուեալ գնաց ինքնակամ առաջի իշխանին եւ յանդիմանեաց զանաստուած * մոլորութիւնն կռոցն, *A fol. 265 v° b. եւ խոստովանեցաւ զանունն Քրիստոսի, եւ պատմեաց զԱստուծոյ զսքանչելագործութիւնս : Կախեցին զԹէոդոտոն եւ քերեցին զմարմինն ուժգին, եւ մանր աղիւ շփէին զվէրսն, եւ քարիւ խորտակեցին զկզակսն. եւ յաղօթելն սրբոյն Թէոդոտոսի դահիճքն հատին զգլուխ նորա Մայիսի ԻԲ :

[B * Ի սմին բարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ առ Քրիստոս կրօնաւորական վարուք, ի թուականիս Հայոց եօթն հարիւր քսան ի չորեքշաբաթի աւուր :] * B p. 229 a.

Մարերի ԺԶ եւ Մայիսի ԻԳ : Վկայութիւն սրբոյն Կողութայ :

Սուրբ վկայն Քրիստոսի Կողութայ քրիստոնեայ էր ի Թեբայիդայ Եգիպտացւոց

1 դարձաւ ջուր . . . իւր *om.* B || 10 դահիճքն հատին] դահիճն եհատ B || 11 նորա] Մարերի ԺԵ եւ *add.* B || 14 Կողութայ] Կոլութայ B || 15 Կողութայ] Կոլութաս B.

sur le rivage, et l'eau du lac reprit sa place. Ils coupèrent les cordes, hissèrent les corps sur des bêtes de somme, les transportèrent et les inhumèrent près des saints pères.

Or, l'un de ceux qu'on torturait pour la foi du Christ, n'ayant pu résister aux cruels tourments, se rendit auprès du gouverneur et lui dénonça Théodote ainsi que les restes des saintes femmes. Le gouverneur envoya (des hommes) qui exhumèrent les restes et les brûlèrent au feu.

Théodote s'enfuit, mais on saisit d'autres à sa place; l'ayant appris, il se rendit volontairement auprès du gouverneur, blâma l'erreur * athée* des *A fol. 265 v° b. idoles, confessa le nom du Christ et raconta les miracles de Dieu. On suspendit Théodote, on lui laboura cruellement le corps, on lui frotta les plaies avec du sel fin et on lui brisa les mâchoires à coups de pierres. Pendant que saint Théodote priait, les bourreaux lui tranchèrent la tête le 22 mai.

[B * En ce jour le pieux roi d'Arménie Héthoum trépassa au Christ après avoir vécu comme un religieux, l'an de l'ère arménienne sept cent vingt, le jour du mercredi.] * B p. 229 a.

16 MARÉRI, 23 Mai.

Martyre de saint Coluthus.

Le saint martyr du Christ Coluthus (*Koloutha*) était chrétien, de la

յաւուրս Մաքսիմիանոսի անօրէն արքային ։ Եւ Արիանոս դատաւորն կոչեաց առաջի իւր եւ ասէ. Դարձիր յաստուածն մեր եւ կեցցես ։ Այս ամենայն ժողովուրդս որ առաջի մեր կան վասն քո աղօթեն, պատկառեա ի սոցանէ եւ յանձնէդ քումմէ, քան մի կորիցես ։ Ամաչեա եւ ի մէնջ եւ երկիր պագ հրամայելոցն, թո՛ղ ի բաց զամբարտաւանութիւնդ եւ ընդ ամենեցուն վայելեա ի շնորհաց աստուածոցն մերոց ։

Իսկ երանելին Կողութոս ամենեւին ոչ եբաց զբերանն եւ ոչ արար պատասխանի, եւ ոչ եդիր ի միտս իւր լսել ասացելոցն ։

* A fol. 266 r° a. Եւ կարծեաց ի միտս իւր դատաւորն * եթէ խորհի ի միտս իւր եւ կամի զոհել, բայց ամաչէ. եւ դարձեալ յաճախէր զպատրողական բանն ։ Եւ սուրբն իբրեւ զշաղփաղփութիւնս եւ զբարբանջանս համարեցաւ զբանն նորա ։

Եւ յորժամ աղաչանօք եւ խոստմամբք եւ քաղցրութեամբ խօսէր, պատասխանի տանէր սուրբն եթէ Ոչ եմ լսելոց ։ Եւ յորժամ մահու սպառնայր՝ ասէր. Քաղցր եւ անոյշ համարիմ զվասն Քրիստոսի մահն ։ Եւ յոյժ նեղեցին եւ բռնադատեցին զնա, իսկ նա համարձակութեամբ ստոյգ մեծաւ բարբառով երիցս անգամ եթէ Ոչ զոհեմ կռոց, ոչ պաշտեմ զդեւսն, ոչ ուրանամ զՔրիստոս ։

Եւ հրամայեաց Արիանոս զօրականացն, եւ կախեցին վէմ ի պարանոցն ։ Եւ ասէ

2 մեր] իմ B || 7 ասացելոցն] յԱրիանոսէ դատաւորէ *add.* B || 8 ի միտս իւր *om.* B || 10 համարեցաւ] արհամարհեաց B.

Thébaïde d'Égypte, aux jours de l'empereur impie Maximien. Le juge Arianus le fit comparaître et lui dit : « Convertis-toi à nos dieux et tu auras la vie sauve. Tous ces gens qui se trouvent devant nous prient pour toi, aie du respect pour eux et pour ta personne, plutôt que de périr. Aie honte devant nous et prosterne-toi devant ceux que nous t'ordonnons, abandonne ton orgueil et jouis avec tous des faveurs de nos dieux. »

Mais le bienheureux Coluthus n'ouvrit point la bouche, ne répondit point et ne songea nullement à écouter ce qu'on lui disait.

* A fol. 266 r° a. Le juge dans sa pensée crut * qu'il réfléchissait et voulait immoler, mais qu'il avait honte. Il ajouta encore à ses paroles trompeuses, mais le saint prit tous ses propos pour des inepties et des radotages.

Puis comme le juge lui parlait avec des supplications, des promesses et de douces paroles, le saint lui répondit : « Je ne t'écouterai point. » Et lorsqu'il le menaça de mort, (le saint) lui répondit : « Je trouve suave et douce la mort pour le Christ. » On le pressa beaucoup en le tourmentant, mais il répondit avec hardiesse et à haute voix par trois fois : « Je n'immole point aux idoles, je n'adore point les démons, je ne renie point le Christ. »

Arianus ordonna aux soldats de lui attacher une pierre au cou. Puis

Արիանոս. Լաւագոյն է այդ քեզ, ով Կողութէոս. զոհեա եւ արձակեցից զքեզ. եթէ ոչ ես լսեսցես՝ ընկալ զոր արժանեաց քոյ պատիժս : Եւ հրամայեաց կենդանւոյն զնա այրել հրով : Եւ այնպէս ի մէջ բոցաբորբոք բոցոյն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մայիսի ԻԳ :

Մարերի ԺԷ եւ Մայիսի ԻԴ : Վկայութիւն սրբոյն Թաղեղեայ բժշկին :

Սուրբ վկայն Քրիստոսի Թաղիլոս քրիստոնեայ էր, եւ էր ճարտար * ուսեալ զբժշկական արուեստն. եւ էր երիտասարդ եւ փախչէր ի կռապաշտութենէ : * A fol. 266 rº b.

Կալան զնա յԱնազարբայ քաղաքին ի ձիթենիս թաքուցեալ, եւ տարան առ Թէոդորոս իշխան քաղաքին, եւ նա հարցանէր եթէ ուրանայ զՔրիստոս : Եւ յորժամ ոչ զնա հաւանեցուցանել կարաց, հրամայեաց ծակել զպճղունս ոտիցն եւ կախել գլխիվայր, եւ դահիճքն խելագարեալք կախեցին մեծ կոճակ փայտի, կարծէին եթէ նա է. եւ տեսեալ իշխանին յոյժ տանջեաց զդահիճսն եւ երկու ի նոցանէ Աստերիոս եւ Աղեքսանդրոս տեսեալ զսքանչելի գործսն հաւատացին ի Քրիստոս, եւ տարան զնոսա ի լեառն եւ հատին զգլուխս նոցա :

1 Արիանոս *om.* B — Կողութէոս] Կուղութէոս B — զքեզ] եւ իբրեւ ոչ լսէր ասէ Արիանոս դարձեալ *add.* B || 4 Աստուած] Մարերի ԺԶ եւ *add.* B || 6 Թաղիլոս] Թաղեղիոս B || 7 երիտասարդ] ատեաց *add.* B || 11-13 գլխիվայր . . . Քրիստոս] որպէս գոչմար. եւ դահիճքն յոյժ աշխատեցան, եւ ոչինչ օգտէին ի նա տանջանքն : Յայնժամ երկու ի դահճաց անտի Աղեքսանդրոս եւ Աստերիոս յաւատարեալք առ յԱստուծոյ ի ձիս աւելին զսքանչելեան եւ հաւատացին ի Քրիստոս B.

Arianus dit : « Cela est-il mieux, Coluthus? immole et je te remettrai en liberté; si tu ne m'écoutes point, reçois la punition que tu mérites. » Il ordonna de le brûler vif. C'est ainsi qu'au milieu des flammes d'un grand feu il rendit son âme à Dieu le 23 mai.

17 marérı, 24 Mai.

Martyre de saint Thaléléos, le médecin.

Le saint martyr du Christ Thaléléos (*Thalilos*) était chrétien; il était habile, * ayant appris l'art de médecin. Il était jeune et fuyait l'idolâtrie. * A fol. 266 rº b.

On le saisit dans la ville d'Anazarbe caché au milieu des oliviers, et on le conduisit à Théodore, gouverneur de la ville, qui lui demanda s'il reniait le Christ. Ne parvenant pas à le convaincre, il ordonna de percer les chevilles de ses pieds et de le suspendre avec des cordes la tête en bas; mais les bourreaux, perdant la tête, suspendirent un grand tronc d'arbre, croyant que c'était lui. A cette vue, le gouverneur soumit les bourreaux à une cruelle torture. Deux d'entre eux, Astérius et Alexandre, témoins des faits miraculeux, crurent au Christ. On les conduisit à la montagne et on leur trancha la tête.

Եւ ասէ իշխանն ցսուրբն Թաղելէոս . Ոչ հաւատաս աստուածոց իմ եւ ոչ զոհես ։ Ասէ Թաղելէոս . Ոչ հաւատամ աստուածոց քո եւ ոչ զոհեմ ։ Եւ կամեցաւ իշխանն ինքն յառնել յաթոռոյն եւ ծակել զջիլս ծնկացն եւ կախել զփայտէ . եւ դարձաւ աթոռն չնաւ եւ յառնել ոչ կարաց . եւ հաւատացին ամենեքեան յԱստուած որք տեսինն ։ Եւ իշխանն աղաղակէր եւ աղաչէր արտասուալից պաղատանօք, եւ գթացեալ ի նա սուրբն աղաչեաց վասն նորա զԱստուած, եւ արձակեցաւ յաթոռոյն ։ Եւ դիմեաց ի

* A fol. 266 v° a. վերայ սրբոյ վկային զի կալցէ եւ տանջեսցէ . եւ * առժամայն գօսացաւ ձեռն ։ Եւ դարձեալ աղաչեաց զսուրբն, եւ նա աղօթիւք բժշկեաց ։ Եւ երկեաւ իշխանն մի գուցէ այլ ինչ մեծագոյն չարիս գտցէ, հրամայեաց եւ ընկեցին զսուրբն ի ծովն . եւ Աստուած եհան զնա անվնաս ի ծովէն սպիտակ զգեստիւք . եւ երթեալ առաջի իշխանին անզգամեաց եւ անարգեաց զամբարշտութիւնն որ ոչ հաւատաց ընդ այնչափ սքանչելիսն որ եղեն ։ Եւ արձակեցին ի նա գազանս, եւ երթեալ լիզուին զոտս նորա,

4 — p. 1537, l. 5 եւ հաւատացին . . . Մայիսի ԻԴ] կաշկանդեալ յանկերուցթ զօրութենէ ։ Յայնժամ ամենայն բազմութիւնն որ կային ի գինն աղաղակեցին առհասարակ . Մեծ է Աստուածն քրիստոնէից ։ Եւ յորժամ աղօթիւք սրբոյն արձակեցաւ իշխանն յաթոռոյ, երկեաւ մի գուցէ այլ ինչ մեծագոյն չար գտցէ, հրամայեաց եւ ընկեցին զսուրբն ի ծովն ։ Այլ օգնականութեամբն Աստուծոյ ապրեալ ի ծովէն, եւ երթեալ առաջի իշխանին անգոսնեաց եւ անարգեաց զամբարշտութիւն նորա, եւ մեծացուցանէր զզօրութիւնն Քրիստոսի ։ Յայնժամ իշխանն առաւել եւս խստացեալ հրամայեաց եւ արձակեցին ի նա գազանս, եւ նոքա հեզաբար կացեալ ոչ ինչ արարին նմա չար, զոր տեսեալ ամբոխին փառս մատուցին Աստուծոյ ։ Եւ առեալ զՁարակիոս որ զգազանսն եկեր՝ ընկեցին առաջի գազանացն, եւ նոյնժամայն կերան զնա, զի եւ ոչ ոսկր մնաց ի նմանէ ։ Եւ առեալ զսուրբն Թաղելէոս ատրան յԵդեսիա քաղաքն Եգիպտացւոց, եւ անդ հատին զգլուխ նորա Մարերի ԺԷ եւ Մայիսի ԻԴ ։ Եւ եղեւ սուրբն Թաղելէոս մին ի նշանաւոր վկայից, եւ շինեցաւ վկայարան յանուն նորա ի Կոստանդինուպօլիս ի մեծէն Կոստանդիանոսէ ։ B.

Le gouverneur dit à saint Thaléléos : « Tu ne crois pas à mes dieux et tu n'immoles pas? » Thaléléos répondit : « Je ne crois point à tes dieux et je n'immole point. » Le gouverneur voulut par lui-même se lever du siège, lui percer les nerfs des genoux et le suspendre à un poteau, mais le siège se renversa et il ne put se relever; tous ceux qui en furent témoins crurent à Dieu. Le gouverneur criait, suppliait avec larmes et sanglots; le saint, ayant pitié de lui, pria Dieu pour lui et il fut dégagé du siège. Il se jeta alors sur le saint martyr pour le saisir et le torturer, mais

* A fol. 266 v° a. * sa main se raidit aussitôt. Il se mit de nouveau à supplier le saint, qui le guérit par sa prière. Le gouverneur, craignant de s'attirer quelque malheur plus grave, ordonna de jeter le saint à la mer, mais Dieu le fit sortir indemne de la mer, habillé de blanc. Il se rendit auprès du gouverneur, le blâma, insulta son impiété, parce qu'il ne s'était pas converti après tous les miracles qui avaient eu lieu. On lança contre lui des fauves qui s'appro-

եւ ամբոխն ամենայն փառս մատուցանէին Աստուծոյ. եւ առեալ զՈւրկինոս որ զգազանսն բերէր, եւ ընկեցին առաջի գազանացն, եւ զնա կերան նոյնժամայն, զի եւ ոչ ոսկր մնաց ի նմանէ ։

Եւ առեալ զսուրբն Թաղելաս տարան յԵդեսիա քաղաքն Եղիացւոց, եւ անդ հատին զգլուխ նորա Մայիսի ԻԴ ։

Մարերի ԺԸ եւ Մայիսի ԻԵ ։ Վկայաբանութիւն սրբոյն Բասիլիսկոսի ։

Մարտիրոսն Քրիստոսի սուրբն Բասիլիսկոս էր ի ժամանակս ամբարիշտ արքային Մաքսիմիանոսի, ի սահմանաց Ամասիոյ քաղաքին, ի գեղջէն Խումիալոնէ ։ Եւ *էր եղբօրորդի Թէոդորոսի մեծի վկային Քրիստոսի ։ * A fol. 266 v° b.

Եւ յորժամ կալան զսուրբն Եւտրոպիոն եւ զԿղէոնիկոս զընկերակիցսն սրբոյն Թէոդորոսի մեծի վկային Քրիստոսի կալան եւ զԲասիլիսկոս, եւ ընդ նոսա տանջեցաւ եւ ի բանդի արգելաւ ։

Եւտրոպէոս եւ Կղէոնիկոս մարտիրոսացան վասն անուան եւ հաւատոցն Քրիստոսի. եւ մնաց Բասիլիսկոս միայն ի բանտին, եւ ողբալից հառաչմամբ աղաչէր զԱստուած եւ ասէր. Յիշեա՛ զիս Քրիստոս եւ մի՛ որոշեր ի սրբոց քոց ։ Եւ ձայնեաց

7 սուրբն *om.* B — ամբարիշտ] կռապաշտ B || 9 մեծի վկային Քրիստոսի *om.* B || 14 ողբալից] արտասուալից B || 15 Եւ ձայնեաց . . . ասէ] Եւ ետես յանուրջս զՏէր որ ասէր B.

chèrent et lui léchèrent les pieds; toute la multitude des témoins rendit grâces à Dieu, et se saisissant d'Urcinus qui amenait les fauves, on le jeta aux bêtes qui le dévorèrent aussitôt à tel point qu'il ne resta plus un os de lui.

On se saisit ensuite de saint Thaléléos et on le conduisit à la ville d'Édesse d'Égée, où on lui trancha la tête le 24 mai.

18 maréri, 25 Mai.

Martyre de saint Basiliscus.

Le martyr du Christ saint Basiliscus vivait aux jours de Maximien, l'empereur impie; il était des abords de la ville d'Amassia, du village de Khoumiales (*Khoumialonè*). * Il était neveu de Théodore, le grand martyr du Christ. * A fol. 266 v° b.

Lorsqu'on saisit saint Eutrope (*Eutropion*) et Cléonicus, les compagnons de saint Théodore, le grand martyr du Christ, on saisit en même temps Basiliscus, qui fut torturé avec eux et détenu à la prison.

Eutrope et Cléonicus furent martyrisés pour le nom et la foi du Christ, et Basiliscus resta seul dans la prison, priant Dieu avec gémissements et sanglots et disant : « Souviens-toi de moi, Christ, et ne me sépare point de

զնա Տէրն յերկնից եւ ասէ. Գրեցի զանուն քո ի գիրս սրբոց վկայիցն. երթիջիր ի տուն քո եւ հրաժարեա՛ ընտանեաց քոց, եւ ի Կոմանա մարտիրոսանաս վասն իմ :

Եւ ելեալ ի բանդէն զօրականօք գնաց ի տուն իւր, ողջունեաց զմայր եւ զեղբարսն իւր, եւ պատուիրեաց նոցա հաստատուն կալ ի հաւատսն Քրիստոսի : Եւ ասէ. Ես երթայց առ Աստուած եւ բարեխօսեմ վասն ձեր եւ վասն ամենայն քրիստոնէից զի դադարեսցէ կռապաշտութիւն յաշխարհէս : Եւ զայս ասացեալ դարձաւ ի բանդ :

Եւ առաքեաց Ագրիպաս զատաւորն այլ զօրականս, եւ կապեցին զսուրբն Բասիլիսկոս շղթայիւք, եւ ագուցին նմա կօշիկս երկաթիս եւ բեւեռեցին յոտսն, եւ

* A fol. 267 r° a. առաքեցին * ի Կոմանա, եւ ի ճանապարհին վարէին ընթացս զսուրբն :

Եւ յորժամ գնացին ի գեօղն Դական, իջեւանեցան ի տուն կնոջ միոյ որոյ անուն էր Տղայանէ, եւ կապեցին ընդ զօսացեալ ծառ մի պատատան ձեռս յետս. եւ յաղօթել սրբոյն արմատացաւ ծառն, եւ ջուր բղխեաց ի տեղւոջէն, եւ է ծառն եւ աղբիւրն մինչեւ ցայսօր : Եւ արջառք իջին ի լեռնէն եւ արբին յաղբիւրն, եւ որպէս մտաւոր բանաւորք երկիր պագանէին սրբոյն Բասիլիսկոսի : Եւ տեսեալ զօրականացն եւ

1-2 երթիջիր... ընտանեաց քոց *om.* B || 4-6 Եւ ասէ... ի բանդ] յայտ արարեալ նոցա եւ զվկայական մահն որ առաջի կայր նմա, եւ դարձաւ անդրէն ի բանդն B || 11-14 ընդ զօսացեալ ... տեսեալ] ընդ ծառ մի ձեռս յետս : Լուեալ բնակչաց գեղջն վասն սրբոյն Բասիլիսկոսի թէ այր նշանագործ է, եւ զբազում ախտաժէտս բժշկեաց ի ճանապարհին, բերին առ նա զհիւանդս եւ զդիւահարս, եւ անուամբն Քրիստոսի բժշկեաց զնոսա : Զոր տեսեալ B.

tes saints. » Le Seigneur fit entendre sa voix du ciel et lui dit : « J'ai inscrit ton nom dans le registre des saints martyrs. Rentre chez toi et prends congé de ta famille. Tu vas être martyrisé pour moi à Comana. »

Il quitta la prison, accompagné de soldats, rentra chez lui, salua sa mère et ses frères, et leur recommanda de demeurer fermes dans la foi du Christ. Il leur dit : « Je m'en vais à Dieu et j'intercéderai pour vous et pour tous les chrétiens, pour que l'idolâtrie cesse sur la terre. » Ceci dit, il retourna à la prison.

Le juge Agrippa envoya d'autres soldats qui attachèrent saint Basiliscus avec des chaînes, lui mirent des chaussures de fer qu'ils clouèrent à ses pieds

* A fol. 267 r° a et le conduisirent * à Comana en lui faisant parcourir le chemin au pas de course.

Lorsqu'ils furent arrivés au village de Daces (*Dakan*), ils descendirent à la maison d'une femme dont le nom était Trayané (*Tghayané*); ils attachèrent (le saint) à un platane mort, les mains liées derrière le dos, mais sur la prière du saint l'arbre reprit racine, et une source jaillit à cet endroit. L'arbre et la source existent encore aujourd'hui. Des troupeaux descendirent de la montagne et s'abreuvèrent à la source; puis, comme s'ils étaient des êtres

Տրայանէ զնշանն որ եղեւ հաւատացին ի Քրիստոս, եւ լուծին զնա ի կապանացն : Եւ բազում հիւանդք եւ այսահարք բժշկեցան, ոչ միայն անդ այլ եւ յամենայն ճանապարհին :

Եւ յորժամ հասին ի Կոմանա, կացուցին զսուրբն առաջի դատաւորին, եւ յոյժ նեղեցին զոհել կռոցն Ապողոնի : Եւ նա զձեռս իւր յերկինս տարածեալ աղաչեաց զԱստուած, եւ էջ հուր յերկնից եւ այրեաց զտաճարն, եւ փշրեաց զպիղծ Ապողոնի զբագին զաստուածոյն իւրեանց :

Եւ բարկութեամբ լցեալ դատաւորն հրամայեաց եւ հատին զգլուխ նորա ի տեղւոջն որ կոչի Դիոսկոր Մայիսի ԻԵ, եւ զմարմինն ընկեցին ի գետն : Եւ ոմանք քրիստոնեայք * փութանակի երթեալք հանին ի գետոյն տուեալ զօրականացն երեսուն դահեկան, եւ * A fol. 267 rº b.
թաղեցին ի նշանաւոր տեղւոջ : Եւ այր մի քրիստոնեայ Մարինոս անուն շինեաց ի վերայ գերեզմանին եկեղեցի վկայարան սրբոյն Բասիլիսկոսի :

Մարերի ԺԹ եւ Մայիսի ԻԶ : Վարք երանելոյն Սիմէոնի սիւնակեցւոյն, որ ի սքանչելի լեառն Անտիոքայ :

Մեծն Սիմէոն էր ի քաղաքէն Անտիոքայ Ասորւոց, յաւուրս Յուստինիանոսի

1 զնշանն որ եղեւ *om.* B || 2-3 Եւ բազում ... ճանապարհին *om.* B || 5 աղաչեաց զԱստուած] աղօթեաց առ Աստուած եւ եղեւ որոտմունք եւ փայլատակմունք B || 6 էջ] անկաւ B || 9 Դիոսկոր] Մարերի ԺԸ եւ *add.* B || 11 շինեաց] ի Կոմանա *add.* B || 15 Յուստինիանոսի] Յուստիանեայ B.

intelligents, ils se prosternèrent devant saint Basiliscus. Les soldats et Trayané, témoins de ce miracle, crurent au Christ et délièrent (le saint) de ses chaînes. De nombreux malades et possédés du démon furent guéris, non seulement là, mais tout le long du chemin.

Lorsqu'ils furent arrivés à Comana, on mit le saint en présence du juge, on le pressa beaucoup d'immoler à l'idole Apollon. Mais lui, il éleva ses mains au ciel, pria Dieu, et le feu tomba du ciel, brûla le temple et réduisit en miettes l'abject autel d'Apollon leur dieu.

Le juge, plein de colère, ordonna de lui trancher la tête à l'endroit appelé Dioscore, le 25 mai; on jeta son corps dans le fleuve. Quelques chrétiens * s'empressèrent d'aller retirer (le corps) du fleuve, en payant aux soldats * A fol. 267 rº b.
trente deniers, et l'inhumèrent dans un endroit choisi. Un certain chrétien du nom de Marinus fit construire sur la tombe une église, le martyrium de saint Basiliscus.

19 MARÉRI, 26 Mai.

Vie du bienheureux Siméon Stylite sur la merveilleuse montagne d'Antioche.

Le grand Siméon était de la ville d'Antioche de Syrie. Il vivait aux jours

բարեպաշտ արքայի ։ Եւ հայրն իւր Յովհաննէս եւ մայր իւր Մարթա վասն ոչ գոլոյ զաւակ իւրեանց խնդրէին յԱստուծոյ որ եթէ տայ նոցա պտուղ արգանդի տացեն զնա նուէր Աստուծոյ ։

Եւ երեւեցաւ կնոջն ի տեսլեանն Յովհաննէս Մկրտիչն եւ ասէ. Քաջալերեաց Մարթա, տուեալ նմա խունկ եւ բուրվառ, եւ հրամայեաց նմա խնկել ։ Եւ յետ աւուրց գնաց յեկեղեցի սրբոյն Յովհաննու Մկրտչին խնկել եւ աղօթել առ Աստուած ։ Եւ երեւեցաւ նմա Մկրտիչն միւսանգամ եւ ասէ. Երթիջիր ի տուն առ այրն քո եւ յղասցիս եւ ծնցես որդի, եւ ոչ միս եւ ոչ գինի եւ ոչ այլ ինչ շնչաւոր կերիցէ. եւ դու ամենեւին զձախ ստին քո մի տացես մանկանն. եւ յորժամ * լինիցի երկուց ամաց մկրտեա զնա եւ անուանեսցես Սիմէոն, եւ լինիցի պաշտօնեայ Տեառն ի տուն Աստուծոյ ։

* A fol. 267 v° a.

Ծնաւ զմանուկն եւ յետ երկուց ամաց ի մկրտութեանն անուանեաց Սիմէոն ։ Եւ տղայն խօսեցաւ մեծաւ ձայնիւ եւ ասէ. Ունիմ հայր եւ ոչ ունիմ հայր, ունիմ մայր եւ ոչ ունիմ մայր. եւ գուշակեաց զհրաժարումն իւր յերկրաւորական զբաղմանց ։ Կերակուր էր նորա հաց եւ մեղր, եւ ի բաղանիս բնաւ ոչ եմուտ ։

1 Մարթա] երանելիքն *add.* B || 6 խնկել ... Աստուած] եւ յաղօթել իւրում անկաւ թմրութիւն ի վերայ նորա B || 7 նմա] Յովհաննէս *add.* B || 8-10 եւ դու ամենեւին ... անուանեսցես] եւ ի մկրտութեան անուանեսցես զնա B || 12-15 եւ յետ երկուց ... կերակուր] եւ մկրտեաց, եւ անուանեաց զնա Սիմէոն որպէս ասացաւ նմա ի տեսլեան ։ Եւ յետ երկուց ամաց եհատ զնա ի ստենէ եւ էր կերակուր B.

de Justinien, le pieux empereur. Son père Jean et sa mère Marthe, n'ayant point d'enfant, priaient Dieu, (disant) que s'il leur accordait le fruit des entrailles, ils l'offriraient à Dieu.

Jean-Baptiste apparut à la femme en songe et lui dit : « Prends courage, Marthe. » Il lui présenta de l'encens et un encensoir et lui ordonna d'encenser. Quelques jours après, elle se rendit à l'église de saint Jean-Baptiste pour encenser et prier Dieu. Le Baptiste lui apparut de nouveau et lui dit : « Rentre à la maison, auprès de ton mari, tu deviendras enceinte et tu enfanteras un fils. Il ne prendra jamais ni viande, ni vin, ni rien de ce qui a eu souffle. Tu ne donneras jamais à l'enfant ton sein gauche, et lorsqu'il * aura atteint ses deux ans tu le feras baptiser, et lui donneras le nom de Siméon. Il deviendra serviteur du Seigneur dans la maison de Dieu. »

* A fol. 267 v° a.

L'enfant vint au monde et deux ans après, au baptême, il fut appelé Siméon. L'enfant se mit à parler à haute voix et dit : « J'ai un père, et je n'ai point de père; j'ai une mère, et je n'ai point de mère, » et il prophétisa son détachement des affaires terrestres. Sa nourriture consistait en pain et miel; il n'alla jamais au bain.

Եւ յորժամ եղեւ հինգ ամաց եղեւ շարժ մեծ ի քաղաքին Անտիոքայ, եւ ի կործանմանէ տանն մեռաւ հայրն ։ Եւ մայրն առեալ զմանուկն փախեաւ յեկեղեցի սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ ապրեցան ։ Եւ խնդրէր Մարթա յԱստուծոյ վասն որդւոյն իւրոյ թէ որպէս լինելոց է առ Աստուած հաճութեամբ ։

Եւ տեսանէ յանուրջս որ համբարձաւ յօդս որդւովն իւրով ։ Տեսանէ եւ մանուկն Սիմէոն աստուածային տեսլեամբ զՏէր նստեալ ի վերայ քերովբէից դատաստան առնելով, գիրք դատաստանի բացեալ, եւ շուրջ զՏէրամբ արդար ժողովուրդս. ի յաջակողման արեւելից դրախտն տարածեալ մինչեւ յամպս երկնից, եւ ի ձախակողման արեւմտից հրեղէն սիւն յեռանդման ։ Եւ որ զհետն երթայր հոգին մատամբն ցուցանէր մանկանն եւ ասէր. * Լո՛ւր մանուկ եւ ի միտ ա՛ռ զբանս կենաց. սկսի՛ր աստուածահաճոյ վարս ճգնութեան եւ յայնչափ դժնդակ չարեաց զերծանիս, եւ յաւիտենական կենացն հանդիպիս ։ Եւ զարթուցեալ պատմեցին զտեսիլն ։ * A fol. 267 v° b.

Եւ ելեալ մանուկն որպէս յումեքէ առաջնորդեալ՝ գնաց ի լեառն Սելեւկիայ եւ բնակեցաւ միայն յանապատին ընդ գազանս. եւ ապա գնաց ի վանսն յորում էր երանելին Յոհաննէս եւ այլ ճգնաւոր կրօնաւորք, եւ առ նոսա զգեցաւ զկրօնաւորական սքեմն ։ Եւ ելեալ ի վերայ սեանն զադարեաց անդ առաքինի վարուք ։ Եւ երեւեցաւ

8 յամպս] ի յօդս B || 9 սիւն] լիճ B || 12 կենացն] աւետեացն B || 14 միայն *om.* B — ընդ գազանս *om.* B || 16 երեւեցաւ] յանուրջս *ad l.* B.

Lorsqu'il eut atteint cinq ans, il y eut un grand tremblement de terre dans la ville d'Antioche; son père mourut sous les ruines de sa maison. La mère prit l'enfant et se réfugia à l'église de saint Étienne le protomartyr, où ils furent sauvés. Marthe priait Dieu pour son fils pour savoir comment il se rendrait agréable à Dieu.

Elle vit dans un rève qu'elle était soulevée dans les airs avec son fils. L'enfant Siméon vit aussi dans une vision divine le Seigneur, assis sur les Chérubins, qui rendait justice, les livres du tribunal ouverts, et tout autour du Seigneur les justes. A droite, du côté de l'orient, le paradis s'étendait jusqu'aux nuages du ciel; à gauche, du côté de l'occident, une colonne de feu ardent. L'esprit qui la suivait montra du doigt à l'enfant et dit : * « Écoute, enfant, et reçois en ton esprit les paroles de la vie. Commence une vie d'ascétisme agréable à Dieu, tu échapperas à d'innombrables maux cruels et tu parviendras à la vie éternelle. » S'étant réveillés, ils se racontèrent mutuellement la vision. * A fol. 267 v° b

L'enfant, comme guidé par quelqu'un, se leva, se rendit à la montagne de Séleucie et y vécut seul dans le désert avec les bêtes sauvages. Ensuite il se rendit au couvent où se trouvait le bienheureux Jean et d'autres religieux ascètes, il prit chez eux l'habit monacal. Il monta ensuite sur la colonne et y

նմա Տէր ։ Եւ ասէ Սիմէոն. Տէր, ո՞րպէս խաչեցար ։ Եւ Յիսուս տարածեաց խաչանման զձեռս իւր եւ ասէ. Այսպէս խաչեցայ ի Հրէիցն, եւ եցոյց նմա զամենայն որոգայթս սատանայի որպէս կենդանի սողունս զմեղաց գործակիցս ։ Եւ աղաչեաց մանուկն Սիմէոն զՅիսուս զի փրկեսցէ ի նոցանէ զինքն եւ զամենայն քրիստոնեայս ։

Եւ մի ոմն ի հայրապետացն օծ զնա մեռոնաւ եւ ասէ. Այսու հալածեա զհազարս եւ զբիւրս ընդդիմակաց զօրութեանց ։ Եւ այնպէս զօրացաւ Սիմէոն աստուածային

* A fol. 268 r° a. շնորհօքն, եւ ուսուցանէր եւ * խրատ տայր ամենայն մարդկան, եւ ամենեքեան զարմանային ընդ բանս շնորհաց որ ելանէին ի բերանոյ նորա ։

Այլ զանթիւ շնորհսն զոր արար Աստուած ի ձեռն նորա ոչ ոք կարէ ընդ գրով արկանել, քանզի զկուրաց զաչս բանայր, զխուլս լսեցուցանէր, զմեռեալս յարուցանէր, կաղաց զնալ շնորհէր, զանդամալոյծն կանգնէր, զբորոտս սրբէր, զդեւս հալածէր, եւ զոր ինչ լինելոց էր յառաջագոյն ասէր աստուածային նախագիտութեամբ, եւ

4 Սիմէոն զՅիսուս *om.* B || 8 զարմանային] ընդ սքանչելի փարթամութիւն նորա, եւ փառաւորէին զԱստուած *add.* B || 9 — p. 1545, l. 2 Այլ զանթիւ շնորհսն . . . ի լեառն էր մեծ ամաց ։] Եւ յետ երեսուն ամաց փոխեցաւ յայլ_ սիւն, եւ Սելեւկիոյ եպիսկոպոսն ազդմամբն Աստուծոյ գնացեալ ի սիւնն ձեռնադրեաց զնա քահանայ ։ Եւ իբրեւ նստաւ զաստուածային խորհուրդ պատարագին, յայտնութիւն եղեւ նմա յԱստուծոյ, որ յետ տասն աւուր լինի փոխումն նորա յերկրէս ։ Եւ ողջունեալ զամենայն եղբարսն պատուիրեաց նոցա պահել զամենայն պատուիրանս Աստուծոյ. եւ հրաժարեալ յամենեցունց ի գիշերին, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Մարերի ԺԹ եւ Մայիսի ԻԶ ։ Էր եղանելին Սիմէոն ամաց եօթանասուն եւ հինգից. մեծ ամաց գնաց ի լեառնն, եւ կացեալ ի սիւնն աւուրքն եւ աստուածահաճոյ վարուք ամաց եօթանասուն ։ Եւ ունէր յԱստուծոյ զհոգի նախագիտութեան որով զլինելոցն յառաջագոյն գուշակէր մարդկան, եւ զշնորհս նշանագործութեան որով առնէր զբազում սքանչելիս ։ B.

vécut d'une vie vertueuse. Le Seigneur lui apparut. Siméon lui dit : « Seigneur, comment as-tu été crucifié? » Jésus étendit ses mains en forme de croix et dit : « C'est ainsi que j'ai été crucifié par les Juifs. » Il lui montra tous les pièges de Satan, comme des reptiles vivants, complices du péché. L'enfant Siméon pria Jésus de le préserver de tous ces pièges, lui et tous les chrétiens.

Un des patriarches l'oignit du chrême et lui dit : « Repousse avec cela les mille et dix mille puissances adversaires. » Siméon, ainsi fortifié par la grâce

* A fol. 268 r° a. de Dieu, enseignait * et donnait des conseils à tout le monde, et tous étaient émerveillés des paroles de grâce qui sortaient de sa bouche.

Personne n'est capable de décrire les innombrables grâces que Dieu a accordées par son intervention, car il ouvrait les yeux aux aveugles, faisait entendre les sourds, ressuscitait les morts, accordait aux boiteux de marcher, guérissait les paralytiques, purifiait les lépreux, chassait les démons, annonçait d'avance par la prescience divine ce qui devait arriver, et par ses prières

արժանաւոր եւ ընդունելի աղօթիւք իւրովք դարձուցանէր զաստուածասաստ ցասումն յաշխարհէն, եւ զգազանս սաստելով սատակէր, եւ զկալանաւորսն արձակէր աղօթիւք :

Եւ մինչդեռ երիտասարդ էր խնդրեաց յԱստուծոյ որ զամենայն աւուրս կենաց իւրոց ոչ պիտանանայ նմա մարմնական կերակուր : Եւ երեւեցաւ նմա այր մի սպիտակազգեստ ունելով ի ձեռն սկաւառակ լի կերակրով, եւ ջամբեաց նմա դգալով երեք անգամ. եւ յամենայն կիւրակէ յետ արձակման ժամուն երեւէր այրն սկաւառակաւն եւ տայր նմա երեք անգամ ունելեօք կերակուր. եւ այն միայն էր կերակուր նորա մինչեւ ի վախճանն :

Եւ ի միում աւուր երեւեցաւ նմա Տէր հրեշտակօք * եւ երիվարս կազմեալ զարդիւք, որպէս թէ կամէին զնա¹... թագաւոր առնել եւ դնել թագ ի գլուխ : Եւ ասէ Սիմէոն. Տէր եթէ հրամայես ինձ ընդ սուրբս քո թագաւորել, մի լիցի ինձ պէտք մարմնական զգեստի : Եւ զգեցուցին նմա հոգեւորական պատմուճան. եւ տեսեալ սատանայի դիւօքն իւրովք անյայտ եղեւ : * A fol. 268 rº b.

Եղեւ շարժ սաստիկ եւ ի բազում աւուրս երերայր քաղաքն եւ ոչ դադարէր : Եւ երթայր մայրն Սիմէոնի Մարթա առաջի սեանն, աղաչեաց զնա աղօթել առ Աստուած զի դադարեսցէ շարժն : Եւ նորա փակեալ զպատուհան սեանն աղաչեաց զԱստուած, եւ նոյնժամայն դադարեաց շարժն :

1. Mot illisible.

méritantes et exaucées il détournait de la terre la colère divine menaçante : il faisait mourir les bêtes par ses imprécations et libérait les détenus par ses prières.

Tandis qu'il était encore un jeune homme, il demanda à Dieu que, pour tous les jours de sa vie, la nourriture corporelle ne lui fût plus nécessaire. Un homme vêtu de blanc lui apparut portant en sa main une écuelle pleine de nourriture, et il lui donna à manger par trois fois avec une cuiller. Tous les dimanches, après l'heure de la retraite, l'homme apparaissait avec son écuelle et par trois fois lui donnait de la nourriture avec la cuiller. Ce fut sa seule nourriture jusqu'à la mort.

Un jour le Seigneur lui apparut accompagné d'anges * et de chevaux richement harnachés, comme si on voulait le faire roi et lui mettre la couronne sur la tête. Siméon dit : « Seigneur, si tu m'ordonnes de régner avec tes saints, je n'aurai point besoin de vêtements corporels. » On le revêtit d'une tunique spirituelle. Voyant cela, Satan disparut avec ses démons. * A fol. 268 rº b.

Il y eut un terrible tremblement de terre, la ville trembla plusieurs jours et cela ne cessait point. Marthe, la mère de Siméon, se rendit auprès de la colonne et le pria de supplier Dieu pour que le tremblement de terre cessât. Il ferma la fenêtre de la colonne, pria Dieu et le tremblement de terre cessa aussitôt.

Եւ կին մի այսահար գնաց առ Սիմէոն եւ եդ զգլուխն առ խարսխի սեանն եւ բժշկեցաւ : Եւ երթեալ ի քաղաքն կինն այն արար զպատկերն Սիմէոնի ի տախտակի եւ կանգնեաց յորմն տանն իւրոյ, եւ բազում բժշկութիւնս առնէր պատկերն այն ի հիւանդս եւ յախտաժէտս եւ յայսահարս :

Եւ ոմն մի այլ առեալ հաւատով ի հերաց երանելւոյն՝ եդ ի մէջ խաչի եւ կանգնեաց յեկեղեցին, եւ բազում բժշկութիւն լինէր ի հերացն Սիմէոնի եւ ի խաչէն :

* A fol. 268 v° a. *Եւ յետ ութ ամաց փոխեցաւ յայլ բարձրագոյն սիւն : Եւ երեւեցաւ հրեշտակ Տեառն եպիսկոպոսին Սելեւկիոյ, եւ գնաց առ սիւնն, եւ ի ներքուստ * ի վեր զաղօթսն առնելով եւ զաջն վերացուցեալ յօդս եւ ձեռնադրեաց զՍիմէոն քահանայ : Եւ Սիմէոն խնդրեաց յԱստուծոյ, եւ երգեաց խորհուրդ պատարագի, եւ աղաչեաց զԱստուած զի երեւեցուսցէ նմա եթէ եղեւ ընդունելի երգ խորհրդոյ պատարագին զոր երգեաց : Եւ ետես ի տեսլեան զօրս երկնաւորս ի կերպս ներքինեաց լուսաւոր տեսլեամբք, որք աղաղակէին. Որք ոչ հաղորդեսցին յայդմ խոստովանութեանդ՝ նզովեալ լիցին : Եւ ապա կանգնեաց ի սեանն սեղան սուրբ, եւ մատոյց զաստուածային խորհուրդս պատարագին :*

Եւ ծանոյց նմա Աստուած յետ տասն աւուր զփոխումն իւր յերկրաւորէս յերկինս : Եւ հրամայեաց սանդուղս դնել, եւ ել հայրապետն եւ կղերիկոսքն եւ ողջոյն ետուն նմա : Եւ հրամայեաց նոցա պահել զպատուիրանս Աստուծոյ անարատ, եւ զդոյզ

Une femme possédée du démon alla trouver Siméon, posa sa tête à la base de la colonne, et fut guérie. Revenue dans la ville, cette femme fit l'image de Siméon sur du bois et l'accrocha au mur de sa maison; cette image fit beaucoup de guérisons sur les malades, les infirmes et les possédés du démon.

Un autre, ayant pris avec foi des cheveux du bienheureux, les mit dans une croix et l'exposa dans l'église; de nombreuses guérisons eurent lieu par les cheveux de Siméon et la croix.

Après huit ans, il se transporta sur une autre colonne plus élevée. L'ange du Seigneur apparut à l'évêque de Séleucie, qui se rendit à la colonne et, * A fol. 268 v° a. adressant ses prières de bas * en haut, et élevant sa main droite en l'air, consacra prêtre Siméon. Siméon pria Dieu, chanta le mystère du sacrifice et pria Dieu de lui manifester s'Il avait pour agréable le chant du mystère du sacrifice, qu'il avait chanté. Il vit en vision les milices célestes sous la forme d'eunuques d'aspect lumineux qui criaient : « Que ceux qui ne communieront point à ta confession, soient anathèmes. » Alors (Siméon) installa une table sainte sur la colonne et offrit le mystère divin du sacrifice.

Dieu lui fit connaître qu'après dix jours, il passerait de cette vie terrestre au ciel. (Siméon) ordonna d'appliquer une échelle; le pontife, les clercs y montèrent et lui donnèrent le salut. Il leur ordonna de conserver intacts les com-

լինել աղօթից եւ պահոց, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի Մայիսի ԻԶ, ամաց եօթանասուն եւ հնգից ։ Եւ յորժամ գնաց ի լեառն էր վեց ամաց ։

* Մարերի Ի եւ Մայիսի ԻԷ ։ Վկայութիւն սրբոյ Թերապոնի եպիսկոպոսին ։ * A fol. 268 v° b.

Սուրբ եւ փառաւորեալ վկայն Քրիստոսի Թերապոն ալեւոր էր յառաջին ժամանակաց, եւ սիրեաց զլռութիւն միայնակեցութեան ի տղայութենէ. զգեցաւ զկրօնաւորական սքեմն եւ փախեաւ ի բազմամբոխ կենցաղոյս, վարժեցաւ ի կրթութիւն ճգնողական վարուց, եւ առաքինասէր վարուք հաճոյ եղեւ Աստուծոյ մեծապէս ։ Եւ որպէս քաղաք շինեալ ի վերայ լերին ոչ թաքչի եւ ոչ նա կարաց ի ծածուկ զժամանակս իւր անցուցանել, այլ գործք իւր երեւեցուցին զնա յերկրի ։

Եւ նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան ի Կիպրոս կղզւոջն, եւ ժամանակս յոլովս ուսոյց, եւ փայլեաց աստուածիմաստ վարդապետութեամբն իւրով եւ ուղղափառ հաւատովն յեկեղեցին Աստուծոյ ։ Եւ ցանկայր զմահն իւր մարտիրոսութեամբ կատարել, որ եւ եղեւ իսկ ի կռապաշտիցն՝ լցեալ աւուրբք եւ ի բարի ծերութիւն հասեալ արեամբ նահատակեցաւ ։

Եւ եթէ յո՞ր թագաւորաց եղեւ՝ ոչ կարացաք ի գրոց պատմութիւնս գտանել, բայց

11 ուսոյց եւ *om.* B — աստուածիմաստ] աստուածուսոյց B || 13 կռապաշտիցն] կռապաշտ հեթանոսաց B.

mandements de Dieu et d'être fidèles aux prières et aux jeûnes, puis il rendit son âme à Dieu le 26 mai, à l'âge de soixante-quinze ans. Il avait six ans lorsqu'il monta à la montagne.

* 20 MARÉRI, 27 Mai. * A fol. 268 v° b.

Martyre du saint évêque Thérapion.

Le saint et glorieux martyr du Christ Thérapion était un vieillard des premiers temps qui aima le silence de la vie cénobitique dès son enfance. Il prit l'habit monacal, fuit la vie dissipée, s'exerça à la vie ascétique et fut, par sa vie vertueuse, grandement agréable à Dieu. Comme une ville construite sur la montagne ne peut pas se cacher, lui non plus il ne put passer sa vie dans le secret, car ses œuvres le rendirent manifeste au monde.

Il occupa le siège épiscopal dans l'île de Chypre, il enseigna de longues années, brilla par sa doctrine inspirée de Dieu et par sa foi orthodoxe dans l'église de Dieu. Il désirait la mort du martyre, ce qui lui arriva par les mains des idolâtres, car, rempli d'années et parvenu à une bonne vieillesse, il fut martyrisé dans son sang.

Mais par lequel des empereurs fut-il (martyrisé), nous n'avons pu le

միայն զայս զոր գրեցաք ։ Եւ ի տապանէն յորում նշխարք իւր էին, բազում նշանք սքանչելագործութեան լինէին ։

Յաւուրս յորում անաստուած Հագարացիքն զԿիպրոս ասպատակէին, երեւեցաւ
* A fol. 269 r° a. * սուրբ քահանայապետն Աստուծոյ Թերապոն սպասաւորաց տապանին իւրոյ, եւ ասաց նոցա փախչել յայլ քաղաք ։ Եւ նոքա առեալ զտապանն նշխարօքն եդին ի նաւն եւ ծածուկ կամէին նաւել ի Կոստանդինուպօլիս ։ Եւ մինչդեռ ի ծովուն խաղաղ հողմով երթային՝ բուրեաց անուշահոտութիւն անբաւ եւ անպատմելի, եւ բղխեաց յոսկերացն ձէթ նոյն անուշահոտութեամբն, եւ ժողովէին ի շիշս. եւ որպէս ձայն մարդոյ լսելի եղեւ ի տապանէն ։

Եւ յորժամ հասին ի Կոստանդինուպօլիս եդին մեծաւ պատուով յեկեղեցին, եւ ի բղխելոյ զանուշահոտ ձէթն ոչ դադարէր, յորմէ նշանք սքանչելագործութեանց լինէին ։ Եւ կատարի տօն սրբոյն Թերապոնի եպիսկոպոսի Մայիսի ԻԷ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Դաւթի եւ Գուրգենայ յազգէ Գնունեաց ։

Վկայքն Քրիստոսի Դաւիթ եւ Գուրգէն իշխանք էին ի նախարարացն Հայոց,

3 անաստուած *om.* B || 7-9 անբաւ ... լսելի եղեւ *om.* B || 11 զանուշահոտ ձէթն] զնոյն անուշահոտութիւնն B — յորմէ] եւ բազում B — լինէին] ի տապանէ *add.* B || 12 եպիսկոպոսի] Մարերի Ի եւ *add.* B.

trouver dans les livres d'histoire. Nous ne savons que ce que nous avons écrit. Au tombeau qui renfermait ses restes il se produisait de nombreux prodiges et miracles.

* A fol. 269 r° a. A l'époque où les athées Agaréniens envahirent Chypre, * le saint pontife de Dieu Thérapion apparut aux desservants de son tombeau et leur recommanda de fuir dans une autre ville. Ceux-ci prirent le cercueil avec les reliques, l'embarquèrent et voulurent en secret faire route sur Constantinople. Or, pendant leur traversée sur mer, par vent calme, il se répandit abondamment une odeur suave et indescriptible; de ses os se dégagea une huile de la même odeur suave, qu'on recueillit dans des flacons; et comme une voix humaine se fit entendre du cercueil.

Lorsqu'ils arrivèrent à Constantinople, ils le déposèrent avec de grands honneurs dans l'église, et l'huile parfumée ne cessa point de se répandre, faisant des prodiges et des miracles. La fête du saint évêque Thérapion a lieu le 27 mai.

En ce jour martyre des saints David et Gourghēn de la famille des Gnouniks.

Les martyrs du Christ David et Gourghēn étaient des princes parmi les

յազգէն Գնունեաց ։ Եւ յորժամ գերեաց անօրէնն Բուղայ իշխանն Իսմայելի զաշխարհն Հայոց, տեսին սոքա զկանայս իւրեանց եւ զմանկունս ընդ համաշխարհական գերին եւ հանեալ զսուրս իւրեանց յարձակեցան ի վերայ գերեվարացն, զբազումս սպանին եւ զայլս կիսամահ *արարեալ՝ հանին զգերին ի նոցանէ, եւ տարեալ ամրացուցին ի լերինս եւ ի մայրսն ։ * A fol. 269 r° b.

Եւ կուտեցաւ զօրն Իսմայելի ի վերայ նոցա եւ ձերբակալ արարեալ տարան առաջի Բուղայի, եւ պատմեցին զգործ քաջութեան նոցա ։ Եւ նա խոստանայր նոցա պարգեւս եւ իշխանութիւնս եթէ ուրասցին զՔրիստոս ։ Եւ նոքա ոչ առին յանձն, այլ բազում համարձակութեամբ անարգէին զՄահմէտ եւ զպիղծ օրէնս նորա ։ Եւ հրամայեաց Բուղա սրով սպանանել զնոսա ։ Եւ կատարեցան սուրբքն Դաւիթ եւ Գուրգէն վկայական մահուամբ Մայիսի ԻԷ, ի փառս Քրիստոսի ։

[B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս մեծ եւ բարեպաշտ իշխանն Հայոց պարոն Կոստանդին որդի Ռուբենի, որ զօրօք եւ պաշարօք ձեռնտու եղեւ ազատութեան սուրբ երկրին, եւ այնպէս արժանի գտաւ ընդունել զգովութիւն ի մարդկանէ եւ վարձս յԱստուծոյ ։] * B p. 233 a.

1 իշխանն Իսմայելի] զօրավարն Հագարացւոց B || 3 զսուրս] զսուսերս B || 4 զայլս] զմնանս B || 6 Իսմայելի] Հագարացւոց B || 9 զՄահմէտ... նորա] զսահմանս եւ զօրէնս նոցա B || 11 մահուամբ] Մարերի Ի եւ *add.* B.

satrapes arméniens, de la famille des Gnouniks. Lorsque Bogha[1], l'impie émir musulman, emmena en captivité le pays d'Arménie, ces princes, voyant leurs femmes et leurs enfants dans la généralité des captifs, tirèrent leur épée et attaquèrent les convoyeurs des captifs; ils en tuèrent beaucoup, laissèrent * les autres à moitié morts, leur enlevèrent les captifs et les conduisirent à l'abri dans les montagnes et les fourrés. * A fol. 269 r° b.

Les troupes musulmanes s'étant rassemblées contre (les princes), les firent prisonniers, les conduisirent à Bogha et lui racontèrent leurs actes de vaillance. Celui-ci leur promit des cadeaux et commandements s'ils reniaient le Christ. Mais ils n'acceptèrent point, et méprisèrent, avec beaucoup de hardiesse, Mahomet et ses lois immondes. Bogha ordonna de les tuer par le glaive. Les saints David et Gourghēn subirent la mort du martyre le 27 mai, pour la gloire du Christ.

[B * En ce même jour reposa dans le Christ le grand et pieux prince d'Arménie, le baron Constantin, fils de Rouben, qui aida en troupes et en vivres à la délivrance des lieux saints : il mérita ainsi les louanges des hommes et la récompense de Dieu.] * B p. 233 a.

1. La campagne de Bogha contre l'Arménie eut lieu en 237 A. H. (851-2 A. D.), cf. *Encyclopédie de l'Islam*, t. I, p. 755.

Մարերի ԻԱ եւ Մայիսի ԻԸ ։ Վկայութիւն սրբոյն Դիդիմոյի եւ Թէոդորայ կուսի ։

Յաւուրս Դիոկղետիանոսի անօրէն արքային էին սոքա ի քաղաքէն Աղեքսանդրու ։ Եւ կացուցին առաջի Եւստրատիոսի դատաւորին զաղախինն Քրիստոսի Թէոդորա, եւ խոստովանեցաւ պայծառ երեսօք զանունն Քրիստոսի ։ Եւ դատաւորն բազում ողոքանօք խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն եւ նա ամենեւին ոչ հաւանեցաւ ։

Արկին զնա ի բանդ, եւ հրամայեաց զօրականացն պոռնկել ընդ նմա եւ նա աղաչէր զԱստուած փրկել ի մեղաց ։ Եւ առաքեաց Աստուած այր մի զօրականի զգեստիւ
* A fol. 269 v° a. քրիստոնեայ որոյ անուն էր Դիդիմոս, եւ եկեալ եմուտ ի * բանտն ։ Եւ տեսեալ զնա Թէոդորայ երկեաւ, եւ գնաց յանկիւն բանդին թաքեաւ աղօթելով առ Աստուած ։

Եւ երթեալ առ նա Դիդիմոս ասէ. Զօրացիր եւ մի երկնչիր, ես քրիստոնեայ եմ եւ եկի փրկել զքեզ հրամանաւն Աստուծոյ ։ Եւ հանեալ զզգեստ զօրականութեանն յանձնէ իւրմէ՝ զգեցոյց նմա եւ եհան ի բանդէն. եւ ինքն զգեցաւ զկանացի պատմուճանն եւ նստաւ ի տեղին յորում նստէր երանելին Թէոդորա ։

Եւ մտեալ այր մի անառակ վասն պոռնկութեան եգիտ զնա այր կանացի զգեստիւ

1 կուսի] սրբուհւոյն B || 7 պոռնկել] զի պոռնկեսցին B || 8 Եւ առաքեաց Աստուած] Եւ ազդեցութեամբն Աստուծոյ գնաց առ նա B.

21 maréri, 28 Mai.

Martyre de saint Didyme et de la vierge Théodora.

Ils étaient de la ville d'Alexandrie et vivaient aux jours de l'empereur impie Dioclétien. On amena devant le juge Eustratius la servante du Christ Théodora qui confessa avec un visage resplendissant le nom du Christ. Le juge lui conseilla avec beaucoup de supplications de renier le Christ et d'immoler aux idoles; mais elle n'y consentit nullement.

On la jeta en prison; (le juge) ordonna aux soldats d'aller forniquer avec elle, mais elle pria Dieu d'échapper au péché. Dieu lui envoya un homme
* A fol. 269 v° a. chrétien, habillé en soldat, dont le nom était Didyme, qui pénétra * dans la prison. Théodora, l'apercevant, eut peur et alla se cacher dans un coin de la prison en priant Dieu.

Didyme, s'approchant d'elle, lui dit : « Prends courage et ne crains pas; je suis chrétien et suis venu te sauver sur l'ordre de Dieu. » Il ôta son vêtement de soldat, en revêtit Théodora et la fit sortir de la prison; par contre, il se revêtit de la tunique de femme et s'assit à la place où était assise Théodora.

Un homme débauché, étant entré pour forniquer, trouva assis un homme

նաւեալ, զարհի հարեալ ասէ. Լուեալ վասն Քրիստոսի եթէ զջուրն ի գինի փոխեաց եւ զարմանայի, եւ այժմ տեսի զկանայս յայրս փոխեալ, եւ երկնչիմ մի գուցէ եւ զիս ի կին փոխեսցէ :

Եւ վաղիւն կոչեաց դատաւորն զԴիդիմոս առաջի իւր եւ հարցանէր. եւ նա խոստովանեցաւ զինքն քրիստոնեայ եւ Քրիստոսի ծառայ : Եւ հրամայեաց զնա սրով եւ հրով սպանանել զնա : Եւ յորժամ տարան ի տեղին աղօթեաց առ Աստուած այսպէս. Օրհնեալ ես Աստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զիս ոչ անտես արարեր, եւ զաղախին քո անարատ պահեցեր : Եւ նոյնժամայն հատին զգլուխն եւ զմարմինն ընկեցին ի հուրն : Նոյնպէս եւ աղախին Քրիստոսի հրով եւ սրով կատարեցաւ Մայիսի ԻԸ :

[B * Յայսմ աւուր յիշատակ Աշոտոյ Բագրատունւոյ առաջին թագաւորին Հայոց ի ցեղէն Բագրատունեաց : * B p. 234 a.

Սա որդի էր Սմբատայ սպարապետի որ Խոստովանող կոչեցաւ. եւ էր այր բարի եւ առաքինի, հեզ, խաղաղասէր, փայլեալ ամենայն բարեպաշտութեամբ : Որ իւրով խոհական իմաստութեամբն եբարձ զխռովութիւն ի Հայաստան աշխարհէ, եւ հայրական խնամով կառավարեաց զազգս մեր, որով եւ սիրելի եղեւ իւրոց եւ օտարաց : Եւ համբաւ բարութեան նորա եհաս մինչեւ ի Բաբելոն առ ամիրապետն Հագարացւոց,

9 Քրիստոսի] Թէոդորա *add.* B — հրով] չարչարեալ *add.* B — կատարեցաւ] Մարերի ԻԱ եւ *add.* B.

habillé en femme; il eut peur et dit : « J'avais entendu au sujet du Christ qu'il avait changé l'eau en vin et j'en étais étonné, mais maintenant je vois des femmes changées en hommes, j'ai peur qu'Il ne me change pareillement en femme. »

Le lendemain, le juge convoqua Didyme en sa présence et l'interrogea; il confessa être chrétien et serviteur du Christ. Il ordonna de le tuer par le glaive et le feu. Lorsqu'on l'eut conduit au lieu de l'exécution, il pria Dieu en ces termes : « Tu es béni, Dieu, Père de Notre-Seigneur Jésus-Christ, de ne m'avoir point abandonné et d'avoir préservé pure ta servante. » Aussitôt on lui trancha la tête et on jeta son corps dans les flammes. De même la servante du Christ fut exécutée par les flammes et le glaive le 28 mai.

[B * En ce jour commémoration d'Ashot le Bagratounien, premier roi d'Arménie de la race des Bagratouniens. * B p. 234 a.

Il était fils de Sembat le généralissime, qui fut surnommé le Confesseur. C'était un homme bon, vertueux, doux, paisible, brillant de toutes les qualités de piété. Par sa sagesse et sa prudence, il fit disparaître les troubles du pays d'Arménie, gouverna avec une sollicitude paternelle notre nation, et fut ainsi aimé des siens et des étrangers. La renommée de sa bonté parvint

եւ ի Կոստանդինուպօլիս առ կայսրն Յունաց Վասիլ Արշակունի : Եւ երկոքին թագաւորքն առաքեցին առ նա թագ արքայական եւ պսակեցին թագաւոր Հայոց :

Եւ այնուհետեւ առաւել եւս բարեկարգեաց զաշխարհն, եւ արար շինութիւնս բազումս, եւ պայծառացոյց զեկեղեցիս : Եւ հիւանդացեալ հիւանդութիւն մեծ, իբրեւ գիտաց թէ հանկերձեալ է մահուամբ ելանել յաշխարհէ, նա բաշխեաց զբազում գանձս յաղքատս եւ ի տնանկս, * յեկեղեցիս եւ ի վանորայս, ի հիւանդանոցս եւ յանկելանոցս : Եւ հաղորդեալ կենարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի հասակի եօթանասուն եւ մի ամաց, եւ թաղեցաւ ի թագաւորանիստ քաղաքն Բագարան : Եւ վասն բազմապատիկ առաքինական գործոց եւ ճշմարիտ աստուածպաշտութեան արժանաւորեցաւ յիշատակիլ յեկեղեցիս Հայաստանեայց :]

* B p. 234 b.

* A fol. 269 v° b.

* Մարերի ԻԲ եւ Մայիսի ԻԹ : Տօն է Նիկիոյ առաջին սուրբ ժողովին երեք հարիւր եւ տասն եւ ութ եպիսկոպոսաց, հրամանաւ սրբոյն Կոստանդիանոսի մեծի արքային :

Եւ տօնն կատարի անփոփոխ ի Կիւրակէ որ յետ Համբարձմանն Քրիստոսի, քանզի յայն կիւրակէն ժողովեցան, եւ էր Մարերի ամսոյ ԻԲ եւ Մայիսի ԻԹ : Եւ ի Համբարձմանէն Քրիստոսի մինչեւ ի ժողովն Նիկիոյ ամք երկու հարիւր վաթսուն եւ հինգ :

jusqu'à Babylone, au chef des émirs des Sarrasins, ainsi qu'à Constantinople, à l'empereur des Grecs Basile l'Archakounien. Ces deux rois lui envoyèrent une couronne royale et le couronnèrent roi d'Arménie.

Dès lors, il organisa encore mieux le pays, fit élever de nombreuses constructions, embellit les églises. Étant tombé gravement malade et sachant qu'il allait quitter la terre à cause de sa mort prochaine, il fit distribuer beaucoup de trésors aux pauvres et aux indigents, * aux églises et aux monastères, aux hôpitaux et aux infirmeries. Après avoir communié au corps vivifiant et au sang du Christ, il rendit son âme à Dieu à l'âge de soixante et onze ans, fut enterré dans la ville royale de Bagaran. A cause de ses nombreuses actions de vertu et de sa vraie piété il a mérité d'être commémoré dans les églises d'Arménie.]

* B p. 234 b.

* A fol. 269 v° b.

* 22 maréri, 29 Mai.

Fête du saint Concile, premier de Nicée, des trois cent dix-huit évêques, par ordre de saint Constantin le grand empereur.

Cette fête a lieu invariablement le dimanche après l'Ascension du Christ, car (les évêques) s'assemblèrent ce jour-là, qui était le 22 du mois de maréri, 29 mai. De l'Ascension du Christ jusqu'au concile de Nicée (il y eut) deux cent soixante-cinq ans [1].

1. Ce chiffre, qui correspond à celui donné dans la vie de Constantin, *supra*, p. 1530, est évidemment trop faible; cf. *infra*, rédaction B, p. 1553.

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյ կուսին Եղիկոնիդայ ։

Աղախինն Քրիստոսի Եղիկոնիդա էր ի քաղաքէն Թեսաղոնիկոյ, յաւուրս Գորդիանոսի եւ Փիլիպպոսի կռապաշտ արքայիցն ։ Եւ Պերինոս դուքսն Կորնթացւոց հարցանէր եթէ Ուրանաս զՔրիստոս եւ զոհես կռոցն ։ Եւ սրբուհի կինն աստուածիմաստ բանիւք զարմացոյց զդուքսն խոստովանելով զանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյն մերոյ ։

Եւ նա ասէ . Բարւոք է անունդ քո Եղիկոնիդա՝ զի ասէ զքեզ եղուկ ի տանջանաց ։ Ասէ Եղիկոնիդա . Չիս տանջանք եղուկ ոչ առնեն, այլ մանաւանդ փոխեն ի մահուանէ ի կեանս . բայց քո անունդ Պերինոս՝ յայտ է զի զպարանոց քո պարանով քարշեսցեն ի կորուստն յաւիտենից ։

Հրամայեաց եւ գերծին զգլուխն, եւ հալեալ ձիւթ կայծախառն մածուցին ի վերայ գլխոյն ։ Եւ երթեալ ի տաճար կռոցն եւ աղօթիւք զպատկերն Աթենայի * յերիս մասունս խորտակեաց . նոյնպէս եւ զայլ բագինս Արամազդայ եւ Ասկղիպիոնի կործանեաց ։ Պատառեցին զստինս նորա եւ արկին ի բանդ ։ * A fol. 270 rº a.

1 կուսին] կոյս վկային B || 8 ի մահուանէ *om.* B || 9 քարշեսցեն] եւ արկցեն զքեզ *add.* B || 10 յաւիտենից] յաւիտենական B || 11 զգլուխն] զհերս գլխոյն B || 12 Եւ երթեալ] Յետոյ տարան զսրբուհին B.

En ce jour martyre de la vierge sainte Héliconis.

La servante du Christ Héliconis (*Elikonida*) était de la ville de Thessalonique, aux jours de Gordien et Philippe, les empereurs impies. Périnius (*Perinos*), le duc de Corinthe, lui demanda : « Renies-tu le Christ et immoles-tu aux idoles? » La sainte femme par ses paroles pleines de sagesse divine étonna le duc, confessant le nom du Seigneur Jésus-Christ, notre Dieu.

Il lui répondit : « Ton nom, Héliconis[1], te va bien, car il indique que tu seras malheureuse par les tortures. » Héliconis répondit : « Les tortures ne me rendront point malheureuse; au contraire, elles me transporteront de la mort à la vie. Mais ton nom, Périnius, indique qu'on te traînera une corde au cou dans la perdition éternelle. »

(Périnius) ordonna de lui raser la tête et de lui poser sur la tête de la poix fondue mêlée à des braises. Elle se rendit au temple d'idoles et par ses prières brisa en trois tronçons la statue * d'Athéna. Elle renversa également les autres autels d'Aramazd[2] et d'Asclépios (*Asklipioni*). On lui déchira les seins et on la jeta en prison. * A fol. 270 rº a.

1. Héliconis signifie « celle de l'Hélicon », c'est un surnom des Muses. — 2. Interprétation du rédacteur arménien; la légende grecque cite Zeus.

Փոխեցին զդուքսն Պերինոս յիշխանութենէ իւրմէ եւ փոխանակ նորա առաքեցաւ Յուստիանոս բդեաշխն եւ նա եւս առաւել բռնադատեաց զաղախինն Քրիստոսի զոհել կռոցն, եւ ոչ կարաց համոզեցուցանել : Հրամայեաց եւ ընկեցին զնա ի բորբոքեալ հուր եւ ոչ այրեցաւ հրամանաւն Աստուծոյ, այլ մանաւանդ ելեալ բոցոյն այրեաց ի կռապաշտիցն եօթանասուն այր :

Եւ դարձեալ տարածեցին զնա ի վերայ պղնձի հրացեալ մահճի եւ հալեցաւ մարմին նորա որպէս մոմ. եւ հրեշտակք իջեալ յերկնից վերացուցին ի մահճացն եւ ողջացուցին զնա : Ընկեցին զնա եւ ի գազանս եւ ոչ մերձեցան ի նա. եւ ելեալ մի ի գազանացն եսպան զմի ի դահճացն :

Ապա հատին նմա վճիռ գլխատման, եւ աղօթեաց այսպէս. Տէր Աստուած կատարեա զանսուտ խոստմունս քո եւ դասաւորեա զիս ընդ ընտրեալ սուրբ կանայսն, ընդ Սառայի եւ ընդ Ռեբեկայ, ընդ Ռաքելի եւ Շուշանայ, եւ Մարթայի եւ Մարիամու, Աննայի, Եղիսաբեթի եւ Թեկղի, եւ հանգո՛ զհոգի իմ յանծերանալի կեանսն : Եւ եղեւ
* A fol. 270 r° b. ձայն յերկնից առ նա եւ ասէ. Եկեսջիր * դուստր, պսակն քո պատրաստեալ է, աթոռն քո զարդարեալ եւ հրեշտակք մնան քեզ :

1 յիշխանութենէ իւրմէ *om.* B — առաքեցաւ] առաքեցին B || 4-6 եւ ոչ այրեցաւ.. դարձեալ] եւ մնաց կենդանի B || 6-8 եւ հալեցաւ . . . ողջացուցին զնա] եւ այրեցաւ զօրութեամբն Քրիստոսի B || 8 ի գազանսն] առաջի գազանացն B || 10-11 Տէր . . . խոստմունս քո եւ] Աստուած իմ B || 13-15 Եւ եղեւ ձայն . . . մնան քեզ :] Եւ լուաւ հոգւովն հրաւէր ի յերկնից ընդունել զանթառամ փառացն պսակ, դասակից լինել հրեշտակաց եւ սրբոց, եւ ժառանգել զկեանս յաւիտենից : B.

On déplaça le duc Périnius de son commandement, et on envoya à sa place le gouverneur Justin (*Youstianos*), qui pressa davantage la servante du Christ d'immoler aux idoles, mais ne put la convaincre. Il ordonna alors de la jeter dans les flammes d'un feu ardent, mais elle n'en fut point brûlée, par ordre de Dieu; par contre, les flammes sortirent et brûlèrent soixante-dix hommes d'entre les idolâtres.

On l'étendit alors sur un lit de bronze enflammé et son corps fondait comme de la cire, mais des anges descendus du ciel la soulevèrent du lit et la guérirent. On la jeta aux fauves, mais ils ne l'approchèrent point; un des fauves s'élança et tua un des bourreaux.

On décréta ensuite sa mort par décapitation, et elle pria en ces termes : « Seigneur Dieu, accomplis ta promesse véridique, et classe-moi parmi les saintes femmes élues, Sarah et Rébecca, Rachel et Susanne, Marthe et Marie, Anne, Élisabeth et Thècle, et fais reposer mon âme dans la vie qui n'a point de vieillesse. » Une voix du ciel se fit entendre à elle, qui disait :
* A fol. 270 r° b. « Viens, * ma fille, ta couronne est prête, ton trône est orné et les anges t'attendent. »

Եւ նոյնժամայն հատին զգլուխն Մայիսի ԻԹ․ եւ փոխանակ արեանն՝ կաթն հեղաւ ։ Եւ ոմանք հաւատացեալք թաղեցին զմարմին նորա ի նշանաւոր տեղւոջ ։

[B* Տօն սրբոյ եւ առաջին ժողովոյն Նիկիոյ, աստուածախումբ եւ առաքելագործ հարցն, երեք հարիւր եւ տասն եւ ութ հայրապետացն ։ *B p. 234 b.

Ի ժամանակս մեծին Կոստանդիանոսի կայսեր եղեւ սուրբ ժողովն Նիկիոյ, որոյ գլխաւորք էին․ Սեղբեստրոս պապ Հռոմայ, Մետրոփանէս եւ Աղեքսանդրոս արքեպիսկոպոսք Կոստանդինուպոլսի, Աղեքսանդրոս պատրիարք Աղեքսանդրու, Եւստաթէոս Անտիոքայ, Մակրոս Երուսաղեմի․ էր եւ Արիստակէս ի Հայոց, Յովհան ի Պարսից, Յակոբ Մծբնայ, Իպատիոս Գանգրայ, Նիկողայոս Միւռոս Լիկէացւոց, Սպիւրիդոն ի Կիպրոսէ, եւ այլ բազում հարք սուրբք ։ Որք նզովեցին զԱրիոս որ փոքր եւ օտար ասէր զՈրդին Աստուծոյ ի բնութենէ Հօր եւ խոստովանեցան երիս անձինս եւ մի բնութիւն եւ աստուածութիւն անբաժանելի Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն ։

Եւ տօնն կատարի անփոփոխելի ի կիւրակէ օր յետ Համբարձմանն Քրիստոսի որ է յառաջ քան զսուրբ Պենտակոստէն․ քանզի եւ յայն կիւրակէն ժողովեցան, եւ էր Մարերի ամսոյ ԻԲ եւ Մայիսի ԻԹ ։ Եւ ի Քրիստոսի Համբարձմանէն մինչեւ ի սուրբ ժողովն Նիկիոյ ամք երկու հարիւր ութսուն եւ ութ ։]

1 Մայիսի ԻԹ *om.* B — եւ փոխանակ... հեղաւ] եւ արեան իբրեւ զկաթն հեղաւ B | 2 տեղւոջ] ի փառս Քրիստոսի *add.* B.

On lui trancha aussitôt la tête le 29 mai; au lieu de sang, c'est du lait qui se répandit. Quelques fidèles inhumèrent son corps dans un endroit choisi.

[B*. Fête du saint concile, premier de Nicée, où furent convoqués par Dieu les pères aux œuvres apostoliques au nombre de trois cent dix-huit pontifes. *B p. 234 b.

C'est aux jours du grand Constantin l'empereur qu'eut lieu le saint concile de Nicée, dont les principaux (chefs) furent : Silvestre, pape de Rome, Métrophane et Alexandre, archevêques de Constantinople, Alexandre, patriarche d'Alexandrie, Eustache d'Antioche, Marc de Jérusalem; il y avait aussi Aristacès d'Arménie, Jean de Perse, Jacques de Nisibe, Hypatios de Gangres, Nicolas de Myre en Lycie, Spiridon de Chypre et d'autres nombreux saints pères. Ils anathématisèrent Arius qui disait du Fils de Dieu qu'il était inférieur et étranger à la nature du Père. Ils confessèrent trois personnes et une nature et divinité inséparable du Père, du Fils et du Saint-Esprit.

Cette fête a lieu invariablement le jour de dimanche après l'Ascension du Christ, et qui précède la sainte Pentecôte. Car (les pères) se réunirent ce dimanche-là, le 22 du mois de maréri, 29 mai. De l'Ascension du Christ jusqu'au saint concile de Nicée il y eut deux cent quatre-vingt-huit ans.]

Մարերի ԻԳ եւ Մայիսի Լ ։ Վարք Սահակայ կրօնաւոր քահանայի ։

Երջանիկ հայրն Սահակ ի Հոռոմոց աշխարհէն էր, յարեւելից կողմանէն, եւ եկեալ ի Կոստանդինուպօլիս, եւ հանդիպեցաւ Վաղէսի թագաւորին որ էր արիոսի հերձուածոյն, եւ ասէ. Բա՛ց զեկեղեցիս ուղղափառաց եւ նա ոչ լուաւ նմա ։

Եւ յորժամ կամեցաւ թագաւորն ելանել ի պատերազմ ընդ Գոթացիսն դարձեալ հանդիպեցաւ նմա եւ ասէ. Ո՛վ թագաւոր, բա՛ց զեկեղեցիս ուղղափառացն. եւ ոչ կամեցաւ լսել ։ Եւ յառաջեալ ի դրան քաղաքին ասէ. Բա՛ց թագաւոր զեկեղեցիս ուղղափառացն եթէ ոչ ի թշնամեաց քոց ոչ դարձցիս ։ Եւ յոյժ բարկացաւ թագաւորն ընդ բանս նորա, անարգեաց զնա, եւ զան հարին ուժգին եւ ընկեցին ի վերայ փշոց վայրի ։ Եւ հրեշտակք երեւեցան յայտնապէս սպիտակ զգեստիւք եւ հանին զճշմարիտ
* A fol. 270 v° a. * քահանայն Աստուծոյ ի դժնդակ փշոցն, եւ զվէրսն բժշկեցին եւ անյայտ եղեն ։

Եւ ընթացեալ եհաս թագաւորին ի տեղին որ կոչի Տրիտոն, կալաւ զերասանակ երիվարին եւ ասէ. Ո՛վ թագաւոր, լո՛ւր ինձ եւ բա՛ց զեկեղեցիս ուղղափառաց, եւ

1 վարք] երանելւոյ *add.* B || 2 հայրն] մեր *add.* B — ի Հոռոմոց... կողմանէն] էր յարեւելեան սահմանացն Հոռոմոց՝ հայ ազգաւ B || 6 եւ ոչ կամեցաւ... ուղղափառացն *om.* B || 9 զան հարին] եւ զան հարկանել B || 10 վայրի] եւ դժնդակ *add.* B — Եւ հրեշտակք... անյայտ եղեն] եւ նա անմիջապէս պահեցաւ խնամօքն Աստուծոյ B || 12 Տրիտոն] Տիրիտոն B.

23 maréri, 30 Mai.

Vie du prêtre moine Isaac.

Le bienheureux père Isaac était du pays des Grecs, du côté de l'orient; il vint à Constantinople, rencontra l'empereur Valens qui était de l'hérésie d'Arius et lui dit : « Rouvre les églises des orthodoxes, » mais il ne l'écouta point.

Au moment où l'empereur se disposait à partir en guerre contre les Goths, (Isaac) le rencontra de nouveau et lui dit : « O empereur, rouvre les églises des orthodoxes, » mais il ne voulut point l'écouter. Il le devança à la porte de la ville et lui dit : « Rouvre, empereur, les églises des orthodoxes sinon, tu ne reviendras pas de tes ennemis. » L'empereur, fort irrité de ces paroles, l'insulta; on le frappa brutalement et on le jeta sur des ronces sauvages. Des anges apparurent visiblement, habillés de blanc, et
* A fol. 270 v° a. retirèrent le vrai * prêtre de Dieu des mauvaises ronces, guérirent ses plaies et disparurent.

(Isaac) se mit à courir, rejoignit l'empereur à l'endroit appelé Triton [1], saisit les rênes du cheval et dit : « O empereur, écoute-moi, rouvre les

1. Le troisième mille à partir de Constantinople : τρίτον.

դառնաս խաղաղութեամբ ։ Արիոս նզովեալ է եւ լիցի, եւ ամենեքեան որ են նորա հերձուածոյն ։

Իսկ թագադիրն իւր առաւել խստացոյց զսիրտ թագաւորին, եւ սրտմտեալ ետ զերանելին յերկու մեծամեծ իշխանսն իւր ի Սատուրնինոս եւ ի Բիքտորոս ։ Եւ պատուիրեաց նոցա զի զգուշութեամբ պահեսցեն զնա, մինչեւ դարձցի ի պատերազմէն, եւ դարձեալ ընկեցին ի խորխորատ տղմոյ ։

Ասէ երանելին. Եթէ դու դառնաս այսր Աստուած ոչ է խօսեալ ընդ իս, փախստական լիցիս ի թշնամեացն, եւ մարմին քո հրով այրեսցի. որպէս եւ եղեւ իսկ ըստ բանի արդարոյն ։ Սատակեցաւ ի Գոթացւոցն եւ հրով այրեցաւ, ընդ նմին եւ թագադիրն իւր, եւ այլք բազումք ի զօրացն ։ Եւ մնացեալքն դարձան ի Թեսաղոնիկէ քաղաքն եւ ընկալան ի Գրատիանոսէ զմեծն Թէոդոս այր ուղղափառ հաւատով ։

Եւ թագաւորեաց ի Կոստանդնուպօլիս եւ եբաց զամենայն եկեղեցիս ուղղափառաց, եւ * զամենեսեան որ էին արիոսի հերձուածոյն եհան արտաքոյ քաղաքին, եւ դարձեալ ուղղափառքն տիրեցին եկեղեցեացն ։ * A fol. 270 v° b.

3 իւր] թագաւորին B || 7 ընդ իս] բայց ինձ երդնու Աստուած զի *add.* B || 9 սատակեցաւ ... այրեցաւ] զի Վաղէս փախեաւ ի Գոթացւոցն անկաւ ի մարագ մի յարդի, յոր թշնամիքն մատուցին հուր եւ այրեցին զթագաւորն B || 11 Գրատիանոսէ] Հռոմայ արքայէն *add.* B || 13 արիոսի] արիոսական B.

églises des orthodoxes, et tu reviendras en paix. Arius est anathématisé et le sera toujours, ainsi que tous ceux qui sont dans son hérésie. »

Celui qui avait couronné[1] l'empereur endurcit encore plus le cœur de l'empereur, qui, irrité, remit le bienheureux entre les mains de deux de ses principaux dignitaires, Saturnin et Victor. Il leur recommanda de le garder avec vigilance jusqu'à son retour de la guerre. On le jeta de nouveau dans un puits de boue.

Le bienheureux dit : « Si tu reviens, c'est que Dieu ne m'a pas parlé ; tu fuiras devant l'ennemi et ton corps sera brûlé au feu. » C'est ce qui arriva selon la parole du juste. (L'empereur) fut tué par les Goths et fut brûlé au feu, et avec lui celui qui l'avait couronné, ainsi que de nombreux hommes parmi ses troupes. Ceux qui survécurent revinrent à la ville de Thessalonique et reçurent de Gratien le grand Théodose, homme de foi orthodoxe.

Celui-ci régna à Constantinople, rouvrit toutes les églises des orthodoxes et * chassa de la ville tous ceux qui étaient de l'hérésie d'Arius. Les orthodoxes prirent de nouveau possession des églises. * A fol. 270 v° b.

1. Il s'agit d'un haut dignitaire, ayant influence sur l'empereur; les rituels connus disent que le patriarche seul couronne l'empereur, à moins que son père ne soit encore vivant, mais ceci ne vaut pas pour l'époque de Valens.

Իսկ Սատուռնինոս եւ Բիկտորոս որք զերանելին Սահակ ի պահ ունէին, եղեն ուղղափառք եւ անկան յոտս Սահակայ որպէս ի մարգարէի. եւ աղաչեցին զնա կալ ընդ նոսա ։ Եւ շինեցին նմա սենեակ կեալ առանձինն, եւ բնակեցաւ անդ զամենայն աւուրս կենաց իւրոց մեծաւ ճգնութեամբ եւ առաքինի վարուք, եւ ուսուցանէր ամենեցուն զճշմարիտ հաւատս ուղղափառութեան, եւ հանգեաւ խաղաղութեամբ Մայիսի Լ ։

Մարերի ԻԴ եւ Մայիսի ԼԱ ։ Վկայաբանութիւն սրբոյն Երմիասայ ։

Քրիստոսի վկայն Երմիաս զօրական էր եւ ծերացեալ աւուրբք ի քաղաքէն Կոմանոյ, յաւուրս կռապաշտ արքային Անտոնինոսի ։ Եւ դատաւորն Սեբաստիանոս յոյժ նեղէր եւ բռնադատէր զնա զոհել կռոցն, եւ նա հաստատուն եկաց հաւատովքն Քրիստոսի ։

Զան հարին զկզակսն եւ զանեցին զերեսսն, խորտակեցին զատամունսն, եւ
* A fol. 271 r° a. ընկեցին զնա ի հուր, եւ * անկիզելի եհան զնա Աստուած եւ բժշկեաց զամենայն վէրսն մարմնոյն եւ ատամանցն ։ Ետուն նմա մահացու կերակուր երիցս անգամ, եւ ոչ վնասեցաւ. եւ որ զմահացու զեղն գործէր զարմացաւ ընդ զօրութիւնն Քրիստոսի,

2 յոտս] սրբոյն *add.* B || 3 սենեակ] սիւնեակ B — կեալ *om.* B || 5 խաղաղութեամբ] Մարերի ԻԴ եւ *add.* B || 7 Վկայաբանութիւն] Վկայութիւն B — Երմիասայ] Երմիոս B || 10 հաւատովքն Քրիստոսի] խոստովանելով զՏէրն մեր Յիսուս Քրիստոս B || 12 զանեցին] քերթեցին B || 13-14 եւ անկիզելի . . . ատամանցն] եւ ապրեցաւ զօրութեամբն Քրիստոսի B.

Quant à Saturnin et Victor, qui avaient en garde le bienheureux Isaac, ils devinrent orthodoxes, tombèrent aux pieds d'Isaac comme devant un prophète et le prièrent de rester avec eux. Ils lui construisirent une chambre pour y vivre seul, et il y demeura toute sa vie en grand ascétisme et avec une conduite pleine de vertu; il enseignait à tous la vraie foi orthodoxe, et mourut paisiblement le 30 mai.

24 MARÉRI, **31 Mai.**

Martyre de saint Hermias.

Le martyr du Christ Hermias était un soldat, vieillard âgé, de la ville de Comana, aux jours de l'empereur idolâtre Antonin. Le juge Sébastien le tourmentait beaucoup en le pressant d'immoler aux idoles, mais il restait ferme dans la foi du Christ.

On lui frappa sur les mâchoires, on le souffleta au visage, on lui brisa
* A fol. 271 r° a. les dents et on le jeta dans les flammes, * mais Dieu l'en fit sortir sans brûlures, et guérit toutes les plaies de son corps et de ses dents. On lui donna par trois fois des mets empoisonnés à manger, et il n'eut aucun mal, et

հաւատաց եւ անկաւ յոտս սրբոյն Երմիասայ եւ խնդրէր զաղօթս նորա յօգնականութիւն ։ Եւ դատաւորն հրամայեաց եւ հատին զգլուխ նորա, եւ գնաց առ Աստուած ուղիղ հաւատով ։

Եւ զսուրբն արկին յեռացեալ ձէթ, հանին եւ զերկու աչսն, եւ զերիս աւուրս կախեցին զգլխիվայր ։ Եւ որ տեսին զնա կուրացան, եւ նա աղաչեաց զԱստուած վասն նոցա եւ դարձեալ բացան աչք խոցեանց ։ Եւ իջուցին զնա ի կախաղանէն եւ տարան ի հատանել զգլուխն. եւ նա աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Տէր Քրիստոս աղաչելով խնդրեմ ի քէն զի ամենեցուն որք կատարեն զօր յիշատակի իմոյ պարգեւեա՛ նոցա մասն ընդ սրբոց, բարեխօսութեամբ ամենասրբուհւոյ Աստուածածնի ։ Եւ ի կատարել զաղօթսն հատին զգլուխ նորա Մայիսի ԼԱ ։

Եւ տարան քրիստոնեայքն ի Կապուտկիա ի քաղաքն Կոմանայ ։

Յայսմ աւուր յիշատակ է սրբոյն Մարկիանոսի ։

* Սա էր երիտասարդ հասակաւ եւ քրիստոնեայ հաւատով. եւ ի քաղաքին Նիկիա իշխանն Տերենտիոս կախեաց զնա, եւ քերեաց սրով զկողսն եւ զկղակսն, եւ նա * A fol. 271 r° b.

1 Երմիասայ *om.* B || 2 Եւ դատաւորն] Ընդ որ բարկացեալ դատաւորն B || 5-6 Եւ որ տեսին... աչք խոցեանց *om.* B || 7-9 եւ ասէ... աստուածածնի *om.* B || 10 նորա] Մարերի ԻԴ եւ *add.* B || 11 Կոմանայ] եւ եդին ի գերեզմանի *add.* B || 14 Տերենտիոս] կապաւ զնա, եւ ոչ կարաց շրջել ի հաւատոյ խոստմամբք եւ սպառնալեօք *add.* B.

celui qui avait préparé le poison mortel fut étonné de la puissance du Christ, crut et tomba aux pieds de saint Hermias, demandant le secours de ses prières. Le juge ordonna de lui trancher la tête, et il trépassa à Dieu en bonne foi.

On jeta le saint dans de l'huile bouillante, on lui arracha les deux yeux et on le suspendit pendant trois jours la tête en bas. Ceux qui l'avaient regardé devinrent aveugles, mais il pria Dieu pour eux et leurs yeux recouvrèrent la vue. On le descendit du gibet et on l'emmena pour avoir la tête tranchée. Il pria Dieu et dit : « Seigneur Christ, je te prie et je t'implore pour tous ceux qui accompliront la commémoration de mon jour, afin que tu leur accordes une part avec les saints, par l'intercession de la très sainte mère de Dieu. » A la fin de sa prière on lui trancha la tête le 31 mai.

Les chrétiens le transportèrent en Cappadoce (*Capoutkia*) à la ville de Comana.

En ce jour commémoration de saint Marcien.

* C'était un jeune homme, de foi chrétienne. Le gouverneur de la ville de Nicée, Térentius, le fit suspendre et lui fit déchirer par le glaive les côtes et * A fol. 271 r° b.

համարձակութեամբ խոստովանէր զՔրիստոս ։ Ապա ափուեցին զնա ի վերայ հրացեալ շանթից, եւ արկին ի բերան նորա պայլ, եւ սրեալ երկաթիւ խոցոտեցին զլեզուն, եւ ի վերայ հրոյն հատին զգլուխ նորա ։

* B p. 237 a. [B * Ի սմին աւուր յիշատակ սուրբ վկայիցս Եւսեբիոսի, Խարալամբոսի, Ռոմանոսի, Տելետիոսի եւ Քրիստոնեայ սրբուհւոյ ։

Եւ յայսմ աւուր վկայութիւն Կոստանդեայ իշխանի եւ ընտանեաց նորա որք ընդ նմա կատարեցան ։

Յայսմ աւուր յիշատակ Խաչիկ վարդապետի ։

Երանելիս այս էր յաշակերտաց անտի սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ, այր հոգեւոր, որ յետ՝ վախճանի նոցա շրջէր առաքելաբար եւ քարոզէր զբանն կենաց, եւ դարձուցանէր զբազումս ի զեղջ եւ յապաշաւ ։ Եւ էր լցեալ ամենայն հոգեւոր իմաստութեամբ եւ զօրաւոր բանիւք, եւ շարժէր ուժգին զսիրտս ունկնդրաց ։

Դէպ եղեւ յաւուր ծննդեանն Քրիստոսի զի եկն նա քարոզել յեկեղեցւոջ Ակոռի գեղջն որ է յոտն Մասեաց, եւ պատմեաց զտեսիլն սքանչելի զոր տեսեալ էր յայնմ գիշերի, այր ոմն Դաւիթ անուն որ անհոգացեալ էր տալ ողորմութիւն վասն հոգւոյ ծնողին իւրոյ Ղազարու, որոյ բազում ինչս եւ ստացուածս թողեալ էր նմա

2 խոցոտեցին] խոցոտէին B.

les mâchoires, mais il confessa avec hardiesse le Christ. Ensuite on l'étendit sur des braises ardentes, on lui mit un bâillon dans la bouche, on lui piqua la langue avec du fer aigu et on lui trancha la tête sur le feu.

* B p. 237 a. [B * En ce même jour commémoration des saints martyrs Eusèbe, Charalambos, Romanos, Télétius et de sainte Christine (*Khristoneay*).

En ce jour martyre du prince Constant et de sa famille avec lui.

En ce jour commémoration du vardapet Khatchik [1].

Ce bienheureux était du nombre des disciples de nos saints traducteurs Sahak et Mesrop, homme éclairé par le Saint-Esprit, qui, après leur mort, circula en apôtre et prêcha la parole de vie, convertissant de nombreuses personnes à la contrition et à la pénitence. Il était rempli de toute sagesse spirituelle, puissant en paroles et touchait fortement le cœur de ses auditeurs.

Il arriva qu'au jour de la nativité du Christ, étant venu pour prêcher dans l'église du village d'Akori, qui se trouve aux pieds du Massis, et ayant fait le récit d'une vision merveilleuse qu'il avait eue la même nuit, un homme nommé David qui avait négligé de donner l'aumône pour l'âme de son père Lazare qui lui avait laissé beaucoup de biens et des propriétés ainsi qu'à d'autres

1. Diminutif pour Khatchatour, cf. *infra*, p. 1559, l. 4.

եւ այլոց ժառանգաւորաց, առժամայն շարժեալ ի հոգելից բանից նորա ի նմին աւուր արար հացկերոյթ մեծ, եւ բաշխեաց առատ ողորմութիւնս աղքատաց եւ եկեղեցական պաշտօնէից ։

Եւ ինքն երանելին Խաչատուր անաչառ վարդապետութեամբ անդադար ուսուցանէր զպատգամս Աստուծոյ ի քաղաքս եւ ի գիւղս, եւ բարիոք քաղաքավարութեամբ օրինակ զանձն ընծայէր ամենեցուն կեալ առաքինաւէր վարուք ։ Եւ այսպէս զամենայն աւուրս կենաց իւրոց վաստակեալ ի հոգեւոր մշակութեան լի արդեամբք փոխեցաւ առ Քրիստոս ։]

Ամիս Յունիս աւուրս է Լ ։

Մարերի ԻԵ եւ Յունիսի Ա ։ Վարք Մարութայի եպիսկոպոսի ։

Սքանչելի եպիսկոպոսն Մարութա էր յաւուրս Թէոդոսի բարեպաշտի, որդւոյն Արկադեայ, եւ Յազկերտի Պարսից արքային ։ Էր Մարութա զաւակ մեծ իշխանաց ի տղայութենէն սնեալ սրբութեամբ ի հանոյ իւրմէ ի Մարիամայ որ էր դուստր իշխանաց Հայոց, սուրբ եւ առաքինի կին ։

Իսկ յորժամ ձեռնադրեցաւ Մարութա եպիսկոպոս՝ գնաց առ թագաւորն Պարսից Յազկերտ, եւ բժշկեաց զդուստր նորա դիւահար ։ Ցաւէր եւ գլուխ թագաւորին սաստիկ

12 իշխանաց] իշխանաւորի B.

ecclésiastiques, aussitôt touché par ses paroles pleines d'onction, donna le même jour un grand dîner et distribua de larges aumônes aux pauvres et aux ministres de l'église.

Quant à lui, le bienheureux Khatchatour, avec sa doctrine intègre enseignant sans relâche les commandements de Dieu dans les villes et les villages, se donnait comme exemple à tous par sa bonne conduite et sa vie vertueuse. Après avoir travaillé ainsi tous les jours de sa vie dans le labeur spirituel, il reposa plein de mérite dans le Christ.]

Le mois de juin a 30 jours.

25 MARÉRI, 1er Juin.

Vie de l'évêque Marouthа.

Le merveilleux évêque Marouthа vivait aux jours du pieux Théodore, fils d'Arcadius, et du roi de Perse Yazdegerd (*Yazkert*). Marouthа était fils de grands princes; il avait été élevé saintement depuis son enfance par sa tante Marie, qui était fille de princes arméniens et femme sainte et vertueuse.

Lorsque Marouthа fut sacré évêque, il se rendit auprès du roi de Perse Yazdegerd et guérit sa fille possédée du démon. Le roi avait aussi de terribles

* A fol. 271 v° a. յոյժ, եւ աղօթեաց ի * վերայ նորա՝ առժամայն ողջացաւ : Եւ հաւատաց թագաւորն յԱստուած, եւ գաղտ մկրտեցաւ ի սրբոյն Մարութայէ եպիսկոպոսէն, եւ դադարեցոյց զհալածումն ի քրիստոնէից :

Եւ մի ոմն ի մեծ իշխանացն Պարսից կամեցաւ սպանանել զթագաւորն եւ զՄարութայ, եւ փորեաց ի տան իւրում հոր խոր յոյժ, եւ ցցեաց ի նմա սուսերս, եւ պատրաստեաց գահոյս թագաւորին ի վերայ հորոյն, զի յորժամ բազմեսցի ի վերայ թագաւորն անկցի ի ներքս եւ մեռցի ի սուսերացն. եւ աղաչէր զթագաւորն գալ առ նա ի ճաշ : Եւ գիտացեալ Մարութայ Հոգւով սրբով՝ ասաց թագաւորին զդարանն գործեալ յառնէն : Եւ այրն ստէպ աղաչէր զթագաւորն եւ զսուրբն : Եւ գնացեալ թագաւորն եւ սուրբն Մարութա ի տուն իշխանին, եւ տեսեալ զբազմականն մահաբեր հրամայեաց թագաւորն ծառայից իւրոց բազմեցուցանել զիշխանն ի վերայ գահոյիցն եւ նա լայր յոյժ : Եւ նոքա ակամայ ընկեցին զնա ի վերայ բազմականին, եւ անկեալ ի խորխորատն մեռաւ ի սրոցն : Եւ ասէ սուրբն Մարութա. Գուբն զոր փորեաց եւ պեղեաց՝ նոյն ինքն անկաւ ի խորխորատն զոր գործեաց :

Եւ թագաւորն առաւել եւս սիրեաց զայրն Աստուծոյ, եւ ետ նմա պարգեւս
* A fol. 272 v° b. բազումս եւ բաժակ մի ոսկի * լի ոսկւով կնքեալ մատանեաւ արքունի : Եւ սուրբն

2 եւ գաղտ... եպիսկոպոսէն *om.* B || 3 քրիստոնէից] եւ արար սէր ընդ Թէոդոսի կայսերն Յունաց ի ձեռն սրբոյն *add.* B || 10 եւ սուրբն Մարութայ] հանդերձ երանելեաւն B — եւ տեսեալ զբազմականն մահաբեր *om.* B || 13-14 եւ ասէ սուրբն... զոր գործեաց *om.* B || 16 արքունի] արքային B.

* A fol. 271 v° a. maux de tête, il pria * sur lui et le guérit aussitôt. Le roi crut à Dieu, se fit baptiser secrètement par le saint évêque Maroutha et mit fin à la persécution des chrétiens.

Un des grands princes de Perse voulut tuer le roi et Maroutha. Il fit creuser dans sa maison un puits très profond, y fit planter des épées et prépara un trône pour le roi sur le puits, pour que le roi, lorsqu'il se serait assis sur le trône, tombât dans le puits et mourût par les épées. Il pria le roi de venir dîner chez lui. Maroutha, inspiré par le Saint-Esprit, révéla au roi le guet-apens préparé par cet homme. Celui-ci renouvelait incessamment sa prière au roi et au saint. Le roi et saint Maroutha se rendirent à la demeure du prince, mais à la vue du siège mortel, le roi ordonna à ses domestiques d'asseoir sur le trône le prince, qui se mit à pleurer amèrement. (Les domestiques) à contre-cœur le jetèrent sur le siège; il tomba dans le puits et mourut par les épées. Saint Maroutha dit : « *Il est tombé dans le puits qu'il avait creusé* [1] et approfondi. »

Le roi aima de plus en plus l'homme de Dieu, lui donna de nombreux
* A fol. 272 v° b. cadeaux, et une coupe en or * pleine de pièces d'or, scellée de son sceau royal.

1. Ps. vii, 16.

խնդրեաց յարքայէն զի տայցէ նմա հրաման յաշխարհէն Պարսից ժողովել զամենայն նշխարս մարտիրոսաց, առաքելոց, մարգարէից եւ զամենայն սրբոց ։ Եւ արքայն ետ հրաման ։ Եւ ժողովեաց ի Պարսից եւ յԱսորեստանեաց եւ ի Հայոց եւ յերկրէն Յունաց թուով երկերիւր հազար ։ Եւ շինեաց քաղաք յերկրին Ծոփաց եւ անուանեաց Քաղաք մարտիրոսաց, որ այժմ կոչի Մուփարղին, եւ շինեաց եկեղեցի մեծ եւ փառաւոր, եւ եդ զնշխարսն ի պարիսպն, յորում անբաւ բազում բժշկութիւնք լինին մինչեւ ցայժմ ։

Եւ կացեալ սուրբն Մարութա մինչեւ ի ծերութիւն հանգեաւ ի Քրիստոս Յունիսի Ա ։

Յայսմ աւուր վկայութիւն Յուստինոսի Հռոմայեցւոյն եւ վեց ընկերաց նորա ։

Քրիստոսի ծառայն Յուստինոս ի Հռոմայ քաղաքին բազում իմաստասիրական բանս յաստուածայինն գրոց խօսեցաւ ընդ Ռուստիկոս կռապաշտ եպարքոսն, եւ պատմէր նմա զԱստուծոյ սքանչելիսն եւ զփոխարէն արդարոց յանվախճան ուրախութիւնս ։

Ասէ Ռուստիկոս եպարքոսն. Եթէ չարչարեցից զքեզ եւ հատից զգլուխդ քո ակն ունիս զի ելանես յերկինս ։ Ասէ * Յուստինոս. Գիտեմ որ ամենայն ոք որ համբերէ * A fol. 272 r° a.

1 զամենայն *om.* B || 5 Մուփարղին] Մուփարկին B || 6 բժշկութիւնք] սքանչելագործութիւնք B || 8 Քրիստոս] յամսեանն Մարերի ԻԵ եւ *add.* B || 12 գրոց] պատուիրանաց B.

Le saint pria le roi de lui donner la permission de recueillir dans le pays de Perse tous les restes des martyrs, des apôtres, des prophètes et de tous les saints. Le roi lui accorda la permission. Il recueillit en Perse, en Assyrie, en Arménie et dans le pays des Grecs (des reliques) au nombre de deux cent mille. Il fonda une ville dans la province de Dzopkh et la nomma Ville des martyrs (Martyropolis); elle s'appelle aujourd'hui Moupharghin. Il y fit construire une grande et belle église, déposa les reliques dans les murailles de la ville, et de nombreuses guérisons ont lieu en cet endroit jusqu'aujourd'hui.

Saint Maroutha vécut jusqu'à la vieillesse et reposa dans le Christ le 1er juin.

En ce jour martyre de Justin le Romain et de ses six compagnons.

Justin, le serviteur du Christ, adressa, dans la ville de Rome, bien des paroles de sagesse tirées des écritures divines à Rusticus, l'éparque idolâtre, lui faisant le récit des miracles de Dieu et la récompense des justes dans une joie sans fin.

L'éparque Rusticus lui dit : « Si je te livre à la torture et que je te fasse trancher la tête, espères-tu monter au ciel? » Justin * répondit : « Je sais que * A fol. 272 r° a.

ի սպառ պատուիրանացն Աստուծոյ, երկնային շնորհացն հանդիպի ։ Ասէ եպարքոսն. Կարծես որ ելանես յերկինս եւ բարեացն փոխարէն ընկալցիս ։ Ասէ Յուստինոս. Ոչ միայն կարծեմ այլ եւ ստոյգ գիտեմ որ եթէ վասն Քրիստոսի հաւատոցն քաջութեամբ ջանամ, երկնային աւետեացն հասանեմ ։ Եւ այլ բազում բանիւք խօսեցան ընդ միմեանս ։

Եւ առժամայն հրամայեաց եւ հատին զգլուխ նորա յաղագս խոստովանութեանն Յունիսի Ա, ընդ նմին եւ այլ վեց վկայք Քրիստոսի կատարեցան սրով Քարիտոնս, Քարիտոս, Եւիպիտոս, Յերակոս, Պիոնոս եւ Լիբերիանոս ։

* B p. 238 a. [B * Յայսմ աւուր տօն է եւ միւս Յուստինոսի հռետոր փիլիսոփայի եւ մեծի վարդապետի քրիստոնական հաւատոցն, որ եւ սա եկն ի Հռոմ, եւ անդ կատարեցաւ ։ Եւ սրբոյ հօրն Իպատիոսի եպիսկոպոսին ։]

Մարերի ԻԶ եւ Յունիսի Բ ։ Վարք Մովսէսի խափշիկ աւազակին ։

Յաւուրս բարեպաշտ արքային Մօրկայ էր խափշիկ աւազակն ի սահմանս Տանեփայ, անյաղթելի եւ հզօր ի պատերազմի ։ Եւ ի միում աւուր տեսանէ յանուրջս գետ հրեղէն

6 խոստովանութեանն] Մարերի ԻԵ եւ *add.* B.

quiconque patiente jusqu'à la fin dans les commandements de Dieu se rend digne des grâces divines. » L'éparque lui dit : « Crois-tu alors monter au ciel et recevoir la récompense des bonnes œuvres? » Justin lui répondit : « Non seulement je le crois, mais je sais pertinemment que si je résiste vaillamment pour la foi du Christ, j'obtiendrai les promesses célestes. » Ils se dirent encore bien d'autres choses mutuellement.

(L'éparque) ordonna sur-le-champ de lui trancher la tête, pour sa confession, le 1[er] juin. En même temps que lui furent exécutés par le glaive six autres martyrs du Christ : Chariton, Charitos, Evelpistos (*Evipitos*), Hiérax (*Yerakos*), Pion et Libérien.

* B p. 238 a [B * En ce jour fête de l'autre Justin le rhéteur philosophe et grand docteur de la foi chrétienne, qui lui aussi était venu à Rome et y fut martyrisé. Également (fête) du saint père, l'évêque Hypatius.]

26 MARÉRI, 2 Juin.

Vie de Moïse le Noir, le bandit.

Aux jours du pieux empereur Maurice, il y avait un bandit nègre dans les parages de Tanépha, indomptable et puissant dans les combats. Or, il vit un jour dans son rêve un fleuve de feu qui dévalait et perçut un grand bruit

ընթացս, եւ մեծ հնչիւն ելանէր յընթացից գետոյն. եւ ելեալ չորք խափշիկք ի գետոյն նման իւրեանց եւ բռեալ հարին նմա, եւ կալեալ զհերաց գլխոյն եւ մօրուացն քարշէին զի ընկեսցեն զնա ի գետն ։ Եւ * նա ասէ. Ո՞ւր տանիք զիս ։ Եւ նոքա ասեն. Յանշէջ հուր գետոյն ։ Եւ մին ի նոցանէ ասէ. Ով գերի եւ թշուառական, եթէ լինիս կրօնաւոր ոչ անկցիս յանշէջ հրեղէն գետն ։ * A fol. 272 r° b.

Եւ յահագին հրեղէն գետոյն երկեղէն զարթեաւ, եւ կալաւ զնա ահ մեծ եւ դողումն, եւ ասէ առանձինն. Ով կարող է մեկնել ինձ զսոսկալի տեսիլս ։ Եւ ասէ. Երթայց յանապատաւորսն եւ պատմեցից զտեսիլն նոցա, եւ նոքա մեկնեսցեն ինձ զճշմարիտն.

Եւ երթեալ յանապատն եգիտ քարայր մի, եւ եմուտ ի ներքս, եւ տեսանէ մերկ ծերունի ի վերայ ծնկացն կանգնեալ, եւ ձեռքն տարածեալք ի բարձունս, եւ աչքն հայէր ի վեր ։ Կարծեաց եթէ յաղօթս է, եւ բազում ժամանակս կանգնեալ կայր առաջի. եւ յորժամ գիտաց եթէ մեռեալ է, մերձեցաւ եւ առժամայն անկաւ յերկիր, եւ մեռեալ մարմինն տարածեաց զոտսն, եւ զձեռսն խաչանման կալեալ ի վերայ կրծիցն, կափոյց զաչս իւր ։

Եւ աւազակն յահի լեալ ել յայրէն, եւ երթայր ընդ անապատն. եգիտ այլ քարայր եւ եմուտ ի նա. եւ տեսեալ տարածեալ յերկիր մերկ ծերունի մի մեռեալ, որոյ հեր

2 հարին նմա] հարեալ ի նա B || 6 հրեղէն գետոյն *om.* B — ահ] երկիւղ B || 8 պատմեցից] զքանչելի *add.* B || 9 — p. 1564, l. 2 Եւ երթեալ յանապատն... դարձեալ ելից *om.* B.

de Lévi, d'où étaient aussi Moïse, Aaron et Samuel. Il était né dans l'île de Chypre. * Il crut au Christ dès la première prédication des saints apôtres, se rendit à Jérusalem et y rencontra Paul qui persécutait les églises; il l'engagea maintes fois, oralement et par écrit, à croire au Christ et à cesser de persécuter les églises, mais il ne l'écouta point. * A fol. 281 rº b.

Après que, sur la route de Damas, Paul eut eu la vision et cru au Christ, Barnabé conduisit d'abord Paul auprès des apôtres, puis il circula avec Paul dans les villes et dans les provinces et ils prêchèrent le Christ. Arrivés à Antioche, ils se séparèrent; Barnabé prit son neveu Jean, surnommé Marc, et tous les deux s'embarquèrent pour Chypre où ils prêchèrent la parole de Dieu.

Barnabé avait avec lui l'évangile de Matthieu, et il éclaira beaucoup d'habitants dans la connaissance de Dieu. Un certain juif, nommé Barjésus, se rendit auprès des Juifs et leur parla en mal de Barnabé, disant : « Il parle au peuple contre nos lois, et prêche le Christ qu'ils (les Juifs) ont crucifié à Jérusalem. »

(Les Juifs) tinrent conseil, se réunirent; ils allèrent saisir Barnabé la nuit, le lièrent et le conduisirent au consul juge de Chypre. Mais celui-ci le remit entre leurs mains. Ils le jetèrent à terre, lui attachèrent les pieds et le traînèrent hors de la ville, où ils le tuèrent par lapidation et le jetèrent dans les flammes.

* A fol. 281 v° a. * Եւ երթեալ Մարկոս եւ Տիմոն եւ Ռիդոն ժողովեցին զմնացեալ ոսկերսն եւ զհողն եւ եդին զաղտ յայրի միում. եդին եւ զաւետարանն Մատթէոսի ընդ նմա յայրին, եւ փակեցին վիմով զմուտ այրին ։ Եւ անտի նաւեցին յԵփեսոս, գտին զՊաւղոս եւ պատմեցին նմա զմահն Բառնաբայ ։ Եւ ելաց յոյժ Պաւղոս, եւ առաքեաց զՄարկոս ի Հռոմ, զոր տեսեալ Պետրոսի արար իւր որդեգիր ։

Եւ Մարկոս հրամանաւ Պետրոսի գրեաց զաւետարանն որ ըստ անուանն իւրոյ է ։ Եւ առաքեաց զնա յԱղեքսանդրիա եւ յամենայն Եգիպտոս քարոզել զբանն կենաց ։

Եւ յաւուրս Զենոնի արքային յայտնեցան նշխարք սրբոյն Բառնաբայ եւ աւետարանն որ եղաւ ընդ նմա յայրին ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Ակակիոսի ։

Սուրբն Ակակիոս մանուկ էր հասակաւ, եկաց առաջի Լիկինիոսի անօրէն արքային եւ խոստովանեցաւ զքրիստոնէական հաւատն իւր ։ Կախեցին եւ յոյժ գան հարին զնա. ձայն եղեւ առ նա յերկնից եւ ասէ. Զօրացի՛ր Ակակիէ զի ես ընդ քեզ եմ ։ Եւ ապա ետ զնա թագաւորն յեպարքոսն Տէրէնտիոս, եւ նա հրամայեաց եւ ջեռուցին տապակ ձիթով եւ ճարպով, եւ ընկեցին զսուրբ վկայն, եւ յաղօթելն նորա շիջաւ հուրն եւ ցրտացաւ եղեւ տապակն, եւ ել սուրբն ամբողջ ։

12 զքրիստոնէական] զքրիստոնէութեան B || 13 ձայն... քեզ եմ *om.* B || 15-16 ընկեցին... ամբողջ] արկին անդ զսուրբ վկայն եւ տանջեցին B.

* A fol. 281 v° a. * Marc, Timon et Rhodon (*Ridon*) allèrent recueillir le reste des os et la poussière, qu'ils déposèrent en secret dans une grotte; ils déposèrent aussi l'évangile de Matthieu dans la grotte et en fermèrent l'entrée avec des pierres. De là ils s'embarquèrent pour Éphèse, y retrouvèrent Paul et lui racontèrent la mort de Barnabé. Paul pleura beaucoup, et envoya Marc à Rome. Pierre, le voyant, en fit son fils adoptif.

Marc, sur l'ordre de Pierre, écrivit l'évangile qui porte son nom. (Pierre) l'envoya à Alexandrie et dans toute l'Égypte pour y prêcher la parole de vie.

Aux jours de l'empereur Zénon, les restes de saint Barnabé furent découverts en même temps que l'évangile qui avait été déposé avec lui dans la grotte.

En ce jour martyre de saint Acace.

Saint Acace était encore jeune enfant, lorsqu'il se présenta devant Licinius, l'empereur impie, et confessa sa foi chrétienne. On le suspendit et on le frappa brutalement. Une voix du ciel se fit entendre à lui qui disait : « Prends courage, Acace, car je suis avec toi. » Ensuite l'empereur le remit entre les mains de l'éparque Térence, qui ordonna de chauffer une chaudière avec de l'huile et de la graisse, et d'y jeter le saint martyr; mais pendant qu'il priait, le feu s'éteignit, la chaudière se refroidit et le saint en sortit indemne.

* Գնաց եպարքոսն յԱպամիա եւ յԱպողոնիա. տարաւ եւ զսուրբ վկայն զկնի, եւ բռնադատէր զոհել կռոցն որ էին ի քաղաքսն յայնոսիկ. եւ յաղօթել սրբոյն անկան ամենայն բագինքն եւ խորտակեցան : Եւ ապա ետուն զսուրբն ի Զիլիկինթոս դատաւորն ի քննութիւն, եւ նա հաստատուն եկաց ի հաւատն Քրիստոսի : Դան հարին զնա սաստիկ հարուածովք եւ ընկեցին առաջի ահաւոր առիւծոյ, եւ գազանն ոչ մերձեցաւ ի նա : Արկին զնա ի բորբոքեալ հնոց, եւ հրեշտակ Տեառն եհան զնա անարատ, եւ երթեալ Զիլիկինթոս ի տեսանել զհնոցն, ել բոցն եւ կիզեաց զերեսն : * A fol. 281 v° b.

Եւ ապա ետուն զսուրբն յայլ դատաւոր որոյ անուն էր Պոսիդոնիոս, եւ նա ծանր շղթայիւք տարաւ զկնի իւր ի քաղաքն Մելիտոյ : Եւ մտեալ ի տաճար կռոցն սուրբն Ակակիոս, իշխանաբար հրամայեաց կռոցն եւ անկեալ յերկիր խորտակեցան : Արկին զնա ի բանդ եւ պնդեցին զոտսն ի փայտի. եւ ի գիշերին երեւեցաւ հրեշտակ Տեառն եւ խորտակեցաւ փայտն յոտիցն, եւ եկաց սուրբն կանգուն եւ աղօթէր : Եւ մի ոմն սենեկապետ ետես զսուրբն եւ երթեալ պատմեաց դատաւորին :

Եւ ի միւս այլ աւուրն տարան զսուրբն յայլ տաճար կռոց յորում էին բագինք աստուածուհեաց Իսառոսայ եւ Աթինայ զի երկիր պագցէ : Եւ յորժամ եմուտ աղօթեաց

1 զկնի] եւ կացոյց առ բագինսն *add.* B || 6 բորբոքեալ *om.* B || 6-7 եւ հրեշտակ... զերեսն] եւ խնամօքն Աստուծոյ պահեցաւ կենդանի B || 9 զկնի իւր *om.* B — քաղաքն] իւր *add.* B || 10 խորտակեցան] բագինքն որք էին աստուածուհեացն Իսառայ եւ Աթինայ *add.* B || 11-12 եւ ի գիշերին ... աղօթէր] եւ նա աղօթէր անդադար B || 12 — p. 1610, l. 4. — Եւ մի ոմն... փշրեցան *om.* B.

* L'éparque se rendit à Apamée et à Apollonia, emmena le saint martyr à sa suite, et le pressa d'immoler aux idoles qui se trouvaient dans ces villes, mais sur la prière du saint tous les autels s'écroulèrent et se brisèrent. On remit ensuite le saint entre les mains du juge Zilicynthus pour l'interroger, mais il demeura ferme dans la foi au Christ. On le frappa à grands coups et on le jeta au-devant d'un lion terrible, mais le fauve ne s'en approcha point. On le jeta dans une fournaise ardente, mais l'ange du Seigneur l'en fit sortir indemne, et lorsque Zilicynthus s'approcha pour regarder la fournaise, les flammes jaillirent et lui brûlèrent le visage. * A fol. 281 v° b.

On remit ensuite le saint entre les mains d'un autre juge, dont le nom était Posidonius, et qui l'emmena à sa suite chargé de lourdes chaînes à la ville de Milet (*Melitoy*). Saint Acace, pénétrant dans le temple des idoles, ordonna avec autorité aux idoles, qui tombèrent à terre et se brisèrent. On le jeta en prison et on lui attacha les pieds à un bloc de bois; la nuit, l'ange du Seigneur apparut et le bloc (auquel étaient attachés) ses pieds se brisa, le saint se leva et se mit à prier debout. Un certain chambellan vit le saint, et alla avertir le juge.

Le surlendemain, on conduisit le saint dans un autre temple d'idoles, où se trouvaient les autels des déesses Isis (*Isarosay*) et Athéna, pour qu'il les

* A fol. 282 r° a. առ Աստուած եւ կործանեցան բագինքն յերկիր ։ Եւ ելեալ *Պիսիտոյ ի Մելիտոյ քաղաքէն հնգետասան ասպարիսաւ եւ տարաւ զսուրբն յայլ տաճար կռոցն յորում բազում բագինք էին ։ Եւ առեալ սուրբն ջուր լուաց զձեռս եւ զերեսս իւր ի տաշտիշն եւ եհեղ զջուրն ի բագինսն, եւ առժամայն յերկիր անկան եւ փշրեցան ։

Եւ հրամայեաց զգլուխն հատանել, տարան ի տեղին որ կոչի Զոնքիոնա, աղօթեաց առ Աստուած, եւ ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Զօրացիր Ակակիէ եւ եկեսջիր առ Աստուած որ ետ քեզ համբերութիւն, եւ ընկալ զպատրաստեալ քեզ պսակն անապական, ուրախ լինելով ընդ ամենայն սուրբս յարքայութեանն Աստուծոյ ։ Եւ խոնարհեցուցեալ զպարանոցն հատին զգլուխն, եւ հեղաւ ընդ արեանն կաթն ։

Եւ առեալ զմարմինն Գէորգէոս քահանայն թաղոյց վասն ահի կռապաշտիցն, եւ տարեալ ի քաղաքն Սինադայ եդ ի տապան առն միոյ քրիստոնէի որոյ անուն էր Դորոմենդոս, որ յետոյ մարտիրոսացաւ ընդ սրբոյն Տրոփիմոսի ։ Եւ յաւուրս բարեպաշտ արքային Մօրկայ Եղպիդիոս եպիսկոպոսն նորոգէր զեկեղեցի Դորեմենդոսի, յայտնեցան նշխարք սրբոյն Ակակիոսի որ եւ ինքն Ակակիոս ասաց եթէ իմ են նշխարքս. եւ ապա շինեցին ի վերայ նորա եկեղեցի, որով փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն յաւիտեանս ։

6 եւ ձայն ... ասէ] եւ լուաւ հոգւովն բարբառ երկնային որ ասէր ցնա B || 9 ընդ արեանն կաթն] արիւնն որպէս կաթն B.

adorât. Lorsque (le saint) y pénétra, il pria Dieu et les autels s'écroulèrent à

* A fol. 282 r° a. terre. Posidonius (*Pisitoy*), * quittant la ville de Milet à une distance de quinze lieues, y emmena le saint pour le conduire dans un autre temple d'idoles où se trouvaient de nombreux autels. Le saint prit de l'eau, se lava les mains et le visage dans une cuvette, puis en répandit l'eau sur les autels, qui se renversèrent aussitôt et se brisèrent en menus morceaux.

(Le juge) ayant ordonné de lui trancher la tête, on le conduisit à un endroit nommé Zonkhiona; (le saint) pria Dieu et une voix du ciel se fit entendre qui dit : « Prends courage, Acace; tu viendras auprès de Dieu, qui t'a donné la patience; tu recevras la couronne impérissable qui t'est préparée, et tu te réjouiras avec tous les saints dans le royaume de Dieu. » Il baissa le cou et on lui trancha la tête; du lait se répandit avec le sang.

Le prêtre Georges (*Gēorgēos*), s'emparant du corps, le cacha par crainte des idolâtres, puis le transporta à la ville de Synnade, l'inhuma dans le tombeau d'un chrétien, dont le nom était Dorymédon (*Doromendos*) et qui plus tard fut martyrisé avec saint Trophime. Et aux jours du pieux empereur Maurice, lorsque l'évêque Elpidius restaura l'église de Dorymédon, on découvrit les restes de saint Acace, pour lesquels Acace, lui-même, dit : « Ces restes sont les miens »; et on construisit ensuite une église sur ses restes, par lesquels est glorifiée la sainte Trinité éternellement.

* Մարգաց Զ եւ Յունիս ԺԲ : Վարք երանելոյն Ոնոփրիոսի անապատականի : * A fol. 282 r° b.

Այս երանելի եւ ցանկալի այրս Աստուծոյ Ոնոփրիոս սնեալ էր ի վանս միաբանակեցաց որ կոչի Ռիտի, մերձ յԵրմոպօլիս ի Թեբաս գաւառին : Եւ լուաւ զբնակութիւն Եղիայի մարգարէին եւ զՅովհաննու Մկրտչին, ելեալ ի վանացն գնաց ի լեառն եւ բնակեցաւ յանապատին միայն առանձինն զամս վաթսուն. եւ զվաթսուն ամն ամենեւին զմարդ ոչ ետես :

Եւ մի ոմն ճգնաւոր կրօնաւոր որոյ անուն էր Պափնուտիոս ազդեցութեամբ սուրբ Հոգւոյն ել ի լեառն յայն, եւ ցանկայր յանապատին գտանել հարս սուրբս եւ շահիլ յաղօթից նոցա : Եւ շրջեալ զեօթն եւ տասն օր հանդիպեցաւ Ոնոփրիոսի, ահաւոր տեսլեամբ, մերկ ծածկեալ ի հերաց մարմնոյն, ծերունի թաւագլուխ, նստեալ ընդ հովանեաւ վիմի հանգչէր, եւ ի յոյժ ծերութենէն եւ ի խիստ ճգնութենէն ի սպառ տկարացեալ :

Եւ տեսեալ զՊափնուտիոս ձայնեաց յանուանէ, եւ հրամայեաց նմա մերձ իւրեան նստել, եւ հարցանէր նմա եթէ ո՞րպէս գնաց յանապատ. նոյնպէս եւ Պափնուտիոս աղաչեաց զնա զի պատմեսցէ զվարս իւր եւ զանունն : Եւ նա ասէ. Ես յառաջնումն Եգիպտոս

1 անապատականի] հրեշտակակրօն անապատական ճգնաւորի B || 3 Ռիտի] Իռիտի B || 8 հարս] այրս B.

* 6 MARGATS, 12 Juin. * A fol. 282 r° b.

Vie du bienheureux Onuphre l'anachorète.

Onuphre, ce bienheureux et agréable homme de Dieu, avait été élevé dans un couvent d'une communauté qui s'appelle Riti, près d'Hermopolis (*Erimoypolis*) dans la province de Thèbes (*Thēbas*). Ayant entendu (quelle était) la demeure du prophète Élie et de Jean-Baptiste, il quitta le couvent, se rendit à la montagne et habita le désert tout seul en solitaire pendant soixante ans; et durant ces soixante années il ne vit absolument aucun homme.

Un religieux ascète, dont le nom était Paphnuce, par l'inspiration du Saint-Esprit, monta sur cette montagne et aspira trouver dans ce désert des pères saints pour profiter de leurs prières. Après avoir circulé durant dix-sept jours, il rencontra Onuphre, d'aspect terrible, nu, ayant le corps couvert de poils, vieillard aux cheveux touffus, qui se reposait assis sous un rocher, complètement affaibli par la grande vieillesse et le sévère ascétisme.

Ayant aperçu Paphnuce, il l'appela par son nom, lui ordonna de venir s'asseoir auprès de lui, et lui demanda de quelle façon il était venu dans le désert. Paphnuce le pria également de lui raconter sa vie et de lui indiquer

անուանէի եւ այժմ անուն իմ Ոնուփրիոս է, եւ կերակուր է մեր անապատաւորացս * յարմաւենեաց եւ ի դալար խոտոյ ։ Եւ յամենայն կիւրակէ հրեշտակ սպասաւորէ մեզ, եւ եթէ ցանկայ ոք ի մէնջ ի մարդ հայել, հրեշտակն Աստուծոյ հանէ զնա յերկինս եւ ցուցանէ նմա զփառս արդարոցն եւ լուսաւորէ զհոգի իւր, եւ մեծաւ ուրախութեամբ իջանէ դարձեալ ի տեղի իւր, եւ այլ եւս ոչ ցանկայ տեսութեան մարդոյ ։

* A fol. 282 v° a.

Եւ յարուցեալ ի միասին գնացին յայլ տեղի անապատին, գտին փոքր քարայր մի եւ ի միջի նորա եղեալ հաց եւ ճաշակեցին ի միասին ։ Եւ ասէ Ոնուփրիոս. Որդեակ Պափնուտիէ, այսօր կատարեմ զընթացս իմ եւ դու ամփոփեա՛ զմարմինս, եւ երթիջիր յԵգիպտոս եւ պատմեա՛ եղբարցն վասն իմ ։ Եւ եթէ ոք նշխար կամ խունկ մատուցանէ յանուն իմ, կամ աղքատս կերակրէ յիշելով զիս, յիշեցից եւ ես զնա առաջի Քրիստոսի ։ Իմ խնդիրք յԱստուծոյ այդ է, զի որք յաղօթս իւրեանց յիշեսցեն զանուն իմ մեծ վարձս ընկալցին յԱստուծոյ ։ Եւ զայս ասացեալ անկաւ յերկիր եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԺԲ ։

Եւ իջին հրեշտակք Աստուծոյ մերձ ի մարմինն, եւ լուաւ Պափնուտիոս զերգս օրհնութեան որ փառաբանէին զԱստուած ։ Եւ հանեալ Պափնուտիոս զպարեգօտն

2-5 Եւ յամենայն ... մարդոյ *om.* B || 6 անապատին *om.* B || 7 եւ ի միջի ... հաց] եւ նկանակ հացի ի նմա B || 10 յանուն իմ] վասն յիշատակի իմոյ B || 11 յիշեսցեն] առ Աստուած *add.* B || 12 ընկալցին] առցեն B || 13 Աստուած] Մարգաց Զ եւ *add.* B || 14-15 Եւ իջին ... օրհնութեան] Յանժամ շուրջ զմարմնովն լսելի լինէր երգ օրհնութեան հրեշտակաց B.

son nom. Il lui dit : « Je m'appelais auparavant Égypte et mon nom est maintenant Onuphre; notre nourriture à nous solitaires * se compose de dattes et d'herbes fraîches. Tous les dimanches un ange vient nous servir de dattes et d'herbes fraîches, et si quelqu'un de nous a envie de voir un homme, l'ange de Dieu l'enlève au ciel, lui montre la gloire des justes et éclaire son âme, et il redescend avec grande joie à sa demeure n'ayant plus envie de la vue de l'homme. »

* A fol. 282 v° a.

Ils se levèrent et partirent ensemble pour un autre endroit du désert, ils découvrirent une petite grotte au milieu de laquelle se trouvait un pain qu'ils mangèrent ensemble. Onuphre dit : « Mon fils Paphnuce, je termine ma carrière aujourd'hui; tu enseveliras mon corps, puis tu te rendras en Égypte et tu donneras de mes nouvelles aux frères. Et si quelqu'un offre de l'hostie ou de l'encens en mon nom, ou s'il donne à manger à un pauvre en souvenir de moi, je me souviendrai aussi de lui auprès du Christ. Ce que je demande à Dieu c'est que ceux qui se souviendront de mon nom dans leurs prières reçoivent de grandes récompenses de Dieu. » Ce disant, il tomba à terre et rendit son âme à Dieu le 12 juin.

Des anges de Dieu descendirent auprès du corps et Paphnuce entendit les chants de bénédictions par lesquels ils glorifiaient Dieu. Paphnuce ôta sa

իւր եհերձ, եւ կիսովն պատեաց զմարմինն Ոնոփրիոսի եւ թաղեաց ընդ վիմովն եւ ծածկեաց քարամբք ։

Եւ յորժամ դարձաւ եգիտ յայլ տեղի անապատին չորս * ծերունի անապատաւորս. * A fol. 282 v° b. ետ նոցա ողջոյն, եւ նոքա ասեն. Վաթսուն ամ է մեր որ բնակեալ եմք յանապատս եւ զմարդ ոչ երբէք տեսաք բայց այժմ զքեզ ։ Եւ մտին յայրն եւ գտին հինգ հաց ։ Եւ գոհացեալ զԱստուծոյ կերան եւ ուրախ եղեն եւ ասեն. Գիտասջիր եղբայր Պափնուտիէ, զի յորէն յորմէ սկսաք ծառայել Աստուծոյ յամենայն աւուր չորս հաց առաքէր մեզ Աստուած, այսօր հինգ պարգեւեաց ։ Եւ ողջունեալ զսուրբ ծերունիսն դարձաւ ։

Եւ մինչդեռ երթայր ընդ այն անապատն ետես այլ չորս անապատաւորս մաշկեղէն պարեգօտիւք եւ ասեն. Մեք նախարարք էաք ի քաղաքէն Ոքսիւրիքոյ, եւ եկաք յանապատս ծառայել Տեառն, հանդիպեցաք ծառայի Աստուծոյ միումն ծերունւոյ, եւ տարի մի ուսոյց մեզ զաստուածահաճոյ վարս եւ ինքն խաղաղութեամբ հանգեաւ ։ Եւ վեց ամ է մինչեւ ցայժմ որ եմք յանապատիս, եւ յամենայն կիւրակէ հրեշտակ Տեառն իջանէ յերկնից եւ կերակրէ զմեզ յամենօրհնեալ հաղորդութենէն ։ Եւ այսօր շաբաթ է պատրաստեա՛ եւ զքեզ զի հաղորդեսցիս եւ դու, զի ամենեքեան որ արժանա-

1 զմարմինն] սրբոյն *add.* B || 3 p. — 1614, l. 3 յայլ տեղի ... հաղորդեցոյց զնոսա] յայլ եւ այլ տեղիս զծերունիս անապատաւորս որոց ոմանք վաթսուն ամ էր զի բնակեալ էին յանապատին եւ ծառայէին Աստուծոյ, եւ ոմանք դեռ վեց ամ էր զի եկեալ էին ի քաղաքէն Ոքսիւրիքոյ, եւ բնակէին անդ առաքինի վարուք իբրեւ զհրեշտակս Աստուծոյ ։ Խօսակից եղեւ ընդ նոսա Պափնուտիոս, եւ նոքա պատմեցին զքանչելի բարերարութիւնն Աստուծոյ զոր առնէր նոցա յանմարդի անապատի անդ, սնուցանելով զհոգիս նոցա հոգեւորական կերակրովք ։ Որ եւ ինքն Պափնուտիոս հաղորդակից եղեւ նոցա երկնաւոր շնորհին եւ գոհանայր զԱստուծոյ B.

tunique, la déchira et dans une moitié enveloppa le corps d'Onuphre, l'inhuma dans le rocher et le couvrit de pierres.

A son retour, il rencontra dans un autre endroit du désert * quatre vieux anachorètes; il les salua, et ceux-ci lui dirent : « Il y a soixante ans que nous habitons ce désert, nous n'avons jamais vu la figure d'un homme excepté toi maintenant. » Ils entrèrent dans leur grotte et y trouvèrent cinq pains. Ils rendirent grâces à Dieu, mangèrent, furent réjouis et dirent : « Sache, frère Paphnuce, que du jour où nous avons commencé de servir Dieu, tous les jours Dieu nous envoyait quatre pains, aujourd'hui il nous en a accordé cinq. » Il salua les saints vieillards et partit. * A fol. 282 v° b.

Or, tandis qu'il s'acheminait à travers le désert, il aperçut quatre autres anachorètes en tunique de peau, qui lui dirent : « Nous étions magistrats de la ville d'Oxyrhynchos (*Okhsiurikhoy*), et nous sommes venus dans ce désert pour servir le Seigneur; nous avons rencontré un vieillard, serviteur de Dieu, qui après nous avoir enseigné durant une année la vie agréable à Dieu, reposa en paix. Voilà six ans aujourd'hui que nous sommes dans ce désert; tous les dimanches l'ange du Seigneur descend du ciel et nous nourrit de la très sainte

ւորին այնմ հաղորդութեան թողութիւն մեղաց գտցեն եւ լուսաւորին հոգւով ։ Եւ մինչդեռ խօսէին բուրեաց հոտ անուշ անպատմելի, եւ իջեալ հրեշտակ Աստուծոյ
* A fol. 283 r° a. հաղորդեցոյց զնոսա ։ Եւ ողջունեաց * զսուրբ անապատաւորսն Պափնուտիոս դարձաւ ի Սկիւթ եւ պատմեաց ամենեցուն զոր ետես եւ լուաւ ճշմարտապէս ։

Մարգաց Է եւ Յունիսի ԺԳ ։ Վկայութիւն սրբոյն Տիմոթէի որ ի Պռուսա ։

Քրիստոսի մարտիրոսն Տիմոթէոս էր յաւուրս Քրիստոսի ուրացողին Յուլիանոսի կայսերն ։ Եւ ծառ մի ճշգարենի բնամեծ էր ի մէջ քաղաքին Պռուսայ, յորում են ջերմուկք, եւ յարմատ ծառոյն բնակէր վիշապ մի ահաւոր, եւ էր մերձ քարայր մի, եւ յերեկորեայ ելանէր վիշապն եւ մտանէր յայրն, եւ գիշերն անդ բնակէր ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ կին մի թագուհի որոյ անուն էր Առիտեա, քրիստոնեայ հաւատով, եւ բնակէր ի քաղաքին Ապողոնեա, եւ լսէր վասն օգտակար ջերմային ջրոցն գնաց բնակել անդ ։

Իսկ եպիսկոպոսն քաղաքին Պռուսայ եւ քահանայքն եւ ամենայն ուխտ եկեղեցւոյն ընտրեցին յինքեանց զՏիմոթէոս այր բարի եւ հեզ եւ աստուածահաճոյ, կացուցին ի

3 Պափնուտիոս *om.* B || 6 Քրիստոսի *om.* B || 7 կայսերն *om.* B — բնամեծ *om.* B — մէջ քաղաքին *om.* B || 12 ջրոցն] ջուրցն B || 14 ընտրեցին] զմի ոմն *add.* B.

communion. C'est samedi aujourd'hui, prépare-toi aussi à communier, car tous ceux qui se rendent dignes de cette communion, trouvent l'absolution de leurs péchés et s'illuminent spirituellement. » Pendant qu'ils parlaient, il se répandit une indicible odeur suave, et l'ange de Dieu descendu (du ciel) les
* A fol. 283 r° a. communia. Paphnuce salua * les saints anachorètes, retourna à Scété (*Skiuth*) et raconta à tous ce qu'il avait vu et avait entendu en toute vérité.

7 MARGATS, **13 Juin**.

Martyre de saint Timothée à Brousse.

Le martyr du Christ Timothée vivait aux jours de l'empereur Julien l'Apostat. Il y avait un orme au tronc énorme au milieu de la ville de Brousse où se trouvent des thermes; dans la racine de cet arbre habitait un dragon terrible; il y avait auprès une grotte, et, le soir, le dragon sortait et pénétrait dans la grotte où il passait la nuit.

Il y avait en ces jours-là une reine de foi chrétienne, dont le nom était Arétias (*Aritéa*) et qui habitait dans la ville d'Apollonia. Ayant entendu parler de la bienfaisance des eaux thermales, elle s'y était rendue pour y habiter.

Or, l'évêque de la ville de Brousse, les prêtres et tout le clergé avaient élu Timothée, homme bon, paisible, ayant une vie agréable à Dieu, et l'avaient

սպասաւորութիւն եկեղեցւոյն ։ Եւ ետուն ցնա այծենի մաշկոց եւ առաքեցին իբրեւ զօրհնութիւն Առետայի թագուհւոյն ։ * Եւ նորա առեալ գնայր, եւ յորժամ կամեցաւ * A fol. 283 r° b. անցանել ընդ ճշգարենի ծառն երանելին Տիմոթէոս տարածեալ զձեռս յերկինս ասէ. Աստուած յօգնել ինձ նայեաց եւ Տէր յընկերել ինձ փութա ։ Եւ տեսեալ զնա վիշապին եկաց ի վերայ ճանապարհին, եւ յանցանելն Տիմոթէի դիմեաց ի վերայ նորա. եւ նա զայծենի մաշկոյթն ծալեաց եւ ձգեաց յերեսս վիշապին, եւ անց առանց երկիւղի, եւ առժամայն սատակեցաւ վիշապն ։

Եւ լուեալ թագուհւոյն գնաց առ նա, եւ անկաւ յոտս նորա, եւ ամենայն քաղաքն եւ գաւառն մեծաւ ուրախութեամբ փառս ետուն Աստուծոյ եւ գոհացան զնմանէ ընդ սատակումն վիշապին ։

Եւ լուեալ վասն վարուց եւ սքանչելեացն Տիմոթէի ուրացողն Յուլիանոս առաքեաց զօրականս եւ կալեալ զերանելին Տիմոթէոս արկ ի բանդ ։ Եւ յետ սակաւ աւուրց հրամայեաց եւ հատին զգլուխ նորա Յունիսի ԺԳ ։ Եւ քրիստոնեայք թաղեցին ի քաղաքին Պրուսա, եւ շինեցին ի վերայ նորա մատուռն յանուն սրբոյն Տիմոթէի ։

[B * Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Սմբատայ սպարապետի Բագրատունւոյ * B p. 254 b. որ Խոստովանող կոչեցաւ ։

6 երկիւղի] եւ աղօթիւք նորա *add.* B || 12 կալեալ] կալան B — արկ] արկին B || 14 նորա] Մարգաց է եւ *add.* B || 14 Տիմոթէի] Տիմոթէոսի B.

destiné au service de l'église; ils lui remirent une couverture de chèvre et l'envoyèrent comme (un présent de) bénédiction à la reine Arétias. * Il prit (la cou- * A fol. 283 r° b. verture) et s'en alla, mais, lorsqu'il voulut passer devant l'orme, le bienheureux Timothée éleva les mains au ciel et dit : « Dieu, viens à mon aide! Seigneur, empresse-toi de m'assister [1]. » Le dragon, l'apercevant, se mit sur le chemin, et au passage de Timothée l'assaillit; celui-ci plia la couverture en peau de chèvre, la jeta à la figure du dragon, et passa sans crainte; le dragon creva aussitôt.

A cette nouvelle, la reine se rendit auprès de lui, tomba à ses pieds, et toute la ville et la province, avec une grande joie, rendirent grâces à Dieu et le remercièrent de la mort du dragon.

Julien l'Apostat, ayant appris la vie et les miracles de Timothée, envoya des soldats, qui s'emparèrent du bienheureux Timothée et le jetèrent en prison. Peu de jours après, (Julien) ordonna de lui trancher la tête le 13 juin. Les chrétiens l'inhumèrent dans la ville de Brousse, et construisirent sur (ses restes) une chapelle au nom de saint Timothée.

[B * En ce jour commémoration du bienheureux Sembat le généralissime * B p. 254 b. Bagratounien qui fut surnommé le Confesseur.

1. Ps. LXIX, 2.

Սա էր հայր Աշոտոյ առաջնոյ արքային այր քաջ եւ աստուածասէր ։ Բայց յորժամ յարձակեցաւ ի վերայ աշխարհին Հայոց ոստիկանն Բուղայ հարկեցաւ Սմբատ անձնատուր լինել ի նա, եւ բռնաւորն չունելով այնուհետեւ կասկած յումեքէ խափանող լինել արշաւանաց իւրոց, աւերեաց առ հասարակ զաշխարհն Հայոց եւ Աղուանից, եւ նահատակեաց զբազումս վասն ի Քրիստոս հաւատոյն, եւ արեամբ ներկեաց զերեսս երկրին ։

Եւ կալեալ կապեաց զնախարարս Հայոց եւ ած ընդ իւր ի Բաբելոն, ընդ որս տարաւ եւ զՍմբատ սպարապետ ։ Իբրեւ յանդիման եղեն ամիրապետին նախարարք Հայոց հանդերձ կապանօք, խօսեցաւ ընդ նոսա սաստկութեամբ եւ հրամայեաց կապել եւ զՍմբատ եւ դնել ի բանդի ընդ այլ նախարարսն ։ Եւ հրամանաւ ամիրապետին նեղէին զնոսա դառնալ ի կրօնս իւրեանց, սպառնացեալ դանհնարին տանջանս եւ զմահ, յորմէ զարհուրեալ անկան բազումք ի հաւատոց, եւ դարձան յօրէնս նոցա ։

Բայց Ստեփաննոս Կոն կոչեցեալ իշխանն Տուս աւանի աշխարհին Ուտէացւոց, հաստատուն կացեալ ի հաւատս անտանելի չարչարանօք կատարեցաւ ի Քրիստոս ։ Իսկ քաջն Սմբատ մնաց աւուրս բազումս ի բանդի անդ ի կապանս մեծաւ հաւատով եւ զղջութեամբ ։ Եւ բազում անգամ խրատ տային նմա եւ ստիպէին ուրանալ զքրիստոնէութիւնն, եւ առատ պարգեւօք եւ իշխանական փառօք դառնալ յաշխարհն

Il était le père d'Achot, le premier roi, homme courageux et ami de Dieu. Lorsque le gouverneur (*ostikan*) Bogha envahit le pays d'Arménie, Sembat se trouva dans la nécessité de se rendre à lui, et le tyran, n'ayant désormais plus à craindre personne qui fût capable d'entraver ses incursions, mit la désolation dans la totalité du pays d'Arménie et des Albaniens; il martyrisa beaucoup d'habitants à cause de leur foi au Christ et teignit la surface du pays de leur sang.

Il fit mettre aux chaînes les satrapes arméniens et les emmena à sa suite à Babylone, et parmi eux il conduisit le généralissime Sembat. Lorsque les satrapes arméniens furent présentés, avec leurs chaînes, au grand émir, celui-ci leur parla avec véhémence et ordonna de mettre également aux chaînes Sembat et de le jeter en prison avec les autres satrapes. Sur l'ordre du grand émir, on fit pression sur eux pour les faire changer de religion en les menaçant de tortures intolérables et de mort; nombreux furent ceux qui en eurent peur, abandonnèrent la foi et se convertirent à leurs lois.

Cependant Étienne surnommé Kon, prince du bourg de Tous, dans la province d'Outi, demeura ferme dans sa foi et fut martyrisé pour le Christ dans des tortures atroces. Quant au brave Sembat, il resta longtemps enchaîné dans la prison, avec grande foi et contrition. A plusieurs reprises on lui conseilla et on le pressa de renier le christianisme et de retourner dans son pays

իւր ։ Այլ * բարեպաշտ իշխանն միշտ զայս բան տանէր պատասխանի. Ոչ կարեմ թողուլ զՔրիստոս, ոչ կարեմ ի բաց կալ ի քրիստոնէական հաւատոյ զոր աւազանին շնորհօք ընկալայ ։ * B p. 255 a.

Եւ այսպէս բարի խոստովանութեամբ յերկար մնացեալ ի բանդի անդ մինչեւ բեկեալ սրտիւ եւ բազում արտասուօք աղօթս մատուցանէր առ Աստուած աւանդեաց զհոգին իւր ։ Եւ ոմանք ի քրիստոնէից որք կային ի քաղաքի անդ հրաման առեալ յամիրապետէն տարեալ զմարմին նորա ի հինն Բաբելոն թաղեցին ի վկայարանն որ կայր շինեալ ի վերայ գբոյն սրբոյ մարգարէին Դանիէլի ։]

Մարգաց Ը եւ Յունիսի ԺԴ ։ Վարք երանելոյն Թէոփանոսի եւ սրբուհւոյն Պանսեմնի ։

Երանելին Թէոփանոս էր ի քաղաքէն Անտիոքայ, անհաւատ ծնողաց զաւակ ։ Եւ յորժամ եղեւ հնգետասան ամաց * մեռաւ կինն, եւ երթեալ Թէոփանոս յեկեղեցին մկրտեցաւ, եւ զգեցաւ մազեղէն, եւ արգելաւ ի խցի մերձ ի քաղաքն ։ Եւ սկսաւ աստուածահաճոյ վարուք ճգնել պահօք եւ աղօթիւք եւ տքնութեամբ, եւ ընկալաւ շնորհս յԱստուծոյ հալածել զդեւսն եւ բժշկել զամենայն հիւանդսն աղօթիւք եւ ձեռն դնելով ։ * A fol. 283 v° a.

9 սրբուհւոյն] աղախնոյն Աստուծոյ B || 14 զամենայն *om.* B — ձեռն] զձեռս B.

muni d'abondants présents et d'une glorieuse autorité. Mais le * pieux prince leur donnait toujours cette même réponse : « Je ne puis abandonner le Christ, je ne puis renoncer à la foi chrétienne, que j'ai reçue avec la grâce des fonts baptismaux. » * B p. 255 a.

C'est ainsi qu'après être resté de longs jours dans la prison, en bonne confession, et après avoir prié Dieu le cœur brisé et avec beaucoup de larmes, il rendit son âme. Quelques chrétiens qui se trouvaient dans cette ville, ayant obtenu l'autorisation du grand émir, transportèrent son corps dans la vieille Babylone et l'inhumèrent dans la chapelle commémorative qui était érigée sur le puits du saint prophète Daniel.]

8 MARGATS, 14 Juin.

Vie du bienheureux Théophane et de sainte Pansemnè.

Le bienheureux Théophane était de la ville d'Antioche, fils de parents infidèles. Lorsqu'il eut quinze ans, * la femme mourut; Théophane, s'étant rendu à l'église, se fit baptiser, se vêtit d'une tunique de poils et se cloîtra dans une cellule près de la ville. Il se mit à pratiquer l'ascétisme par une vie agréable à Dieu, avec jeûnes, prières et veilles, et il reçut de Dieu le don de chasser les démons et de guérir tous les malades par la prière et l'imposition des mains. * A fol. 283 v° a.

Եւ կին մի էր ի քաղաքին որոյ անուն էր Պանսեմնի, եւ լուաւ վասն նորա Թէոփանոս որ զբազումս կորուսանէր ի գործս անառակս, աղաչէր զԱստուած վասն նորա ։ Եւ ելեալ ի խցէն գնաց առ հայրն իւր եւ մերկացաւ զմազեղէնն, զգեցաւ զիպակ հանդերձ աշխարհականի, նստաւ յերիվար եւ առեալ ընդ իւր տասն լիտր դահեկան գնաց առ պոռնիկ կինն որպէս թէ հարսանեօք ամուսնացի նմա ։

Եւ յորժամ կերան եւ արբին եւ ուրախ եղեն, մտին ի սենեակն, եւ որպէս սովորութիւն էր Պանսեմնեայ կամէր զի ննջեսցէ ընդ նմա ։ Եւ նա ասէ. Քանի՞ ժամանակք են որ այդ գործովդ կեաս ։ Եւ նա ասէ. Երկոտասան ամ է, եւ որպէս զքեզ գեղեցիկ այր չեմ տեսեալ, եւ ոչ այնչափ սիրեալ զոք իբրեւ զքեզ ։

Ասէ Թէոփանոս. Եթէ սիրես զիս մի՛ այժմ նեղեր յայդպիսի գործդ, մինչեւ արասցուք զհարսանիսն ։ Եւ կինն յանձին կալաւ ։ Եւ նորա հանեալ զտասն լիտր դահեկան ետ
* A fol. 283 v° b. *ի կինն եւ ասէ. Երթայց եւ պատրաստեցից * զծախս հարսանեացն ։*

Եւ երթեալ ի խուցն իւր շինեաց մերձ այլ խուց, եւ դարձեալ գնաց առ կինն, զիրկս արկեալ համբուրեաց եւ ասէ. Եթէ ոչ մկրտիս ոչ կարեմ ամուսնանալ քեզ ։ Եւ ծագեաց շնորհք Հոգւոյն սրբոյ ի սիրտ կնոջն, եւ յանձն առ մկրտիլ ։ Եւ առեալ զնա Թէոփանոս տարաւ յեկեղեցին առ քահանայն եւ մկրտեաց, եւ ընկալաւ զնա

1 *քաղաքին*] *պոռնիկ* add. B || 9 *զոք* om. B || 14 *զիրկս ... ասէ*] *եւ սիրողաբար ասէ ցնա* B || 14 *կարեմ ամուսնանալ*] *ամուսնանամ* B.

Il y avait dans la ville une femme dont le nom était Pansemnè; Théophane avait appris à son sujet qu'elle menait beaucoup d'hommes à la perdition par ses actes de débauche, et il pria Dieu pour elle. Puis il quitta sa cellule, se rendit auprès de son père, quitta sa tunique de poils, se vêtit d'un vêtement laïque d'une riche étoffe, monta à cheval ayant sur lui dix livres de monnaie, et alla trouver la prostituée comme s'il voulait l'épouser par mariage.

Après qu'ils eurent mangé et bu et se furent réjouis, ils pénétrèrent dans la chambre, et Pansemnè, selon sa coutume, voulut qu'il dormît avec elle. Il lui dit : « Combien de temps y a-t-il que tu vis de cette occupation? » Elle lui répondit : « Il y a douze ans, et je n'ai jamais vu quelqu'un d'aussi beau que toi, et je n'ai jamais aimé quelqu'un comme toi. »

Théophane lui dit : « Si tu m'aimes, ne me presse pas maintenant à une telle chose, jusqu'à ce que nous ayons accompli les noces. » La femme consentit. Il sortit les dix livres de monnaie et les donna à la femme en disant :
* A fol. 283 v° b. « Je m'en vais préparer * les dépenses des noces. »

Il retourna à sa cellule, construisit auprès une autre cellule et revint auprès de la femme; il la prit dans ses bras, l'embrassa et dit : « Si tu ne te fais pas baptiser, je ne puis me marier avec toi. » Alors les grâces du Saint-Esprit jaillirent dans le cœur de la femme et elle accepta de se faire baptiser. Théophane la prit, et la conduisit à l'église auprès du prêtre qui la baptisa.

յաւազանէն Թէոփանոս, եւ զեօթն օր վարդապետէր եւ ուսուցանէր նմա զաստուածային պատուիրանն ։ Եւ հաստատեցաւ սիրտ կնոջն ի հաւատս եւ յերկիւղն Աստուծոյ ։

Եւ առաքեաց զԹէոփանոս ի տուն իւր, եւ վաճառեաց զամենայն ինչս իւր եւ բաշխեաց աղքատաց եւ զծառայսն եւ զաղախնայսն ազատեաց տուեալ նոցա բաժին յընչից իւրոց. եւ զոսկին եւ զարծաթն եւ զմարգարիտսն եւ զականսն պատուականս արար անօթս եկեղեցւոյն ։ Եւ մտեալ յեկեղեցին եդ զայն արտասուօք առաջի սրբոյ սեղանոյն, եւ ասէր. Տէր, մի՛ խոտան համարեր եւ պիղծ, եւ մի՛ յամօթ առներ զբազմամեղ աղախինս քո, ընկա՛լ զընծայս զոր չար գործովք ժողովեցի եւ մատուցի առաջի քո ։

Իսկ երանելին Թէոփանոս արգել զնա ի խցին զոր շինեաց, զգեցոյց նմա մազեղէն եւ խորգ, եւ ինքն զգեցաւ զառաջին մազեղէն պարեգօտն իւր, եւ արգելաւ ի խուցն * իւր ։ Եւ այնչափ խստակրօն վարուք ճգնեցաւ կինն, որ եւ զդեւս ի մարդկանէ հալա- * A fol. 284 r° a.
ծէր, եւ զախտաժէտս աղօթիւք բժշկէր ։

Եւ կեցեալ աստուածահաճոյ վարուք ամ մի եւ ամիսս երկու յարգելական խցին իւրեանց, եւ յաւուր ուրբաթու եղեւ շարժ եւ որոտումն եւ կայծակունք, եւ իջին հրեշտակք ի յերկնից, եւ աւանդեցին զհոգիս երկոցունց Յունիսի ԺԴ ։

6 եկեղեցւոյն] եկեղեցեաց B || 8 չար... եւ *om.* B || 10 խցին] խուր խցին B || 12 ճգնեցաւ] ճգնաւորեցաւ B || 15 եղեւ շարժ... ԺԴ] երկոքին եւս աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած Մարգաց Ը եւ Յունիսի ԺԴ B.

Théophane la reçut des fonts baptismaux, lui enseigna durant sept jours la doctrine et lui fit apprendre les commandements divins. Le cœur de la femme se raffermit dans la foi et la crainte de Dieu.

Elle envoya Théophane à sa maison pour vendre tous ses biens et les distribuer aux pauvres. Elle rendit la liberté à ses domestiques et à ses servantes en leur faisant une part de ses biens. De l'or, de l'argent, de ses perles et de ses pierres précieuses elle fit des vases d'église. Elle pénétra dans l'église et les déposa avec larmes devant le saint autel en disant : « Seigneur, ne les dédaigne point, ne les considère point comme immondes et ne rends point honteuse ta servante, grande pécheresse; accepte ces dons que j'ai ramassés par de mauvaises œuvres et que je t'offre maintenant. »

Le bienheureux Théophane la cloîtra dans la cellule qu'il avait construite, la revêtit d'une robe de poils et d'un sac, et lui, reprenant son ancienne tunique de poils, se cloîtra dans * sa cellule. La femme mena une vie ascétique * A fol. 284 r° a.
d'une telle austérité religieuse qu'elle chassait des hommes les démons et guérissait les infirmes par ses prières.

Ils vécurent un an et deux mois d'une vie agréable à Dieu, dans leur cellule cloîtrée, et un jour de vendredi il se produisit un tremblement de terre, avec des coups de tonnerre et de foudre; des anges descendirent du ciel, et recueillirent leurs âmes à tous deux le 14 juin.

Եւ երթեալ եպիսկոպոս քաղաքին ամենայն ուխտիւն եւ ժողովրդեամբն հանին զմարմինս նոցա ի խրճթացն, եւ տարան ի քաղաքն մոմեղէնօք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ, եդին ի տապանի յեկեղեցւոջն ։ Եւ բազում սքանչելիս արարին ծառայքն Աստուծոյ Թէոփանոս եւ աղախինն Քրիստոսի Պանսեմնի ։

Մարգաց Թ եւ Յունիսի ԺԵ ։ Տօն է սրբոյն Ստաքէոսի առաքելոյն ։

Առաքեալն Քրիստոսի Անդրէաս յորժամ հրամանաւ սուրբ Հոգւոյն երթայր ի քարոզութիւն, առաքեալքն ետուն սպասաւոր եւ ընկեր քարոզութեան նորա զՍտաքիոս, եւ առաքեցին ընդ նմա յամենայն տեղիս ։

Եւ յորժամ ըմբռնեցաւ Մատթէոս յազգէն մարդակերաց, եւ առաքեաց Տէր զԱնդրէաս հանել զնա ի բանդէն, եւ նաւեալ ի վերայ ծովուն Բարդիրացւոց, եւ հասեալ
* A fol. 284 rº b. ի Թիրակ եւ եկեալ *յԵրակլիա, ձեռնադրէ անդ զՍտաքիոս եպիսկոպոս եւ առաքէ ի Բիւզանդիա ։ Եւ մինչեւ ցայսօր հրաման է ի կանոնաց, յորժամ Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրեն, նախ Երակլեայ մետրապօլիտն դնէ զձեռս ի վերայ ։

Եւ գնացեալ սրբոյն Ստաքիոսի ի Բիւզանդիա քարոզեաց նոցա զՔրիստոս, եւ զբազումս դարձոյց ի մոլորութենէ կռոցն, եւ բազում սքանչելիս կատարէր անուամբն

3 տապանի] տապանս B — բազում] նշանս եւ *add.* B || 5 է ... առաքելոյն] Ստաքիւսի առաքելոյ B || 6 Առաքեալն] Սուրբ առաքեալն B || 7 զՍտաքիոս] զՍտաքիւս B.

L'évêque de la ville avec tout le clergé et la population allèrent sortir leurs corps des cellules, les conduisirent à la ville avec des cierges, des psalmodies et des bénédictions, et les déposèrent dans un tombeau dans l'église. Les serviteurs de Dieu Théophane et la servante du Christ Pansemnè opérèrent de nombreux miracles.

9 MARGATS, 15 Juin.

Fête du saint apôtre Stachys.

Lorsque, sur l'ordre du Saint-Esprit, l'apôtre du Christ André partit pour la prédication, les apôtres lui donnèrent Stachys (*Stakhios*) comme serviteur et compagnon de sa prédication, et l'envoyèrent partout avec lui.

Et lorsque Matthieu fut saisi par la tribu des anthropophages et que Dieu eut envoyé André pour le délivrer de la prison, (celui-ci), après avoir navigué
* A fol. 284 rº b. sur la mer des Bardirak et être arrivé en Thrace (*Thirac*), se rendit à * Héraclée, y sacra Stachys évêque et l'envoya à Byzance. Et jusqu'aujourd'hui il est prescrit par les canons qu'au sacre du patriarche de Constantinople, le métropolite d'Héraclée est le premier qui fait l'imposition des mains.

Saint Stachys, s'étant rendu à Byzance, prêcha le Christ et convertit beaucoup d'habitants de l'erreur des idoles; il y accomplit de nombreux pro-

Քրիստոսի ի վերայ հիւանդաց եւ ախտացելոց ։ Եւ շատ չարչարանս կրեալ ի կռապաշտիցն կատարեցաւ վկայութեամբ Յունիսի ԺԵ ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Անտոնինեայ ։

Կին այս քրիստոնեայ էր ի քաղաքէն Նիկիայ Բիւթանացւոց, յաւուրս կռապաշտ արքայիցն Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի ։ Եւ կացուցին զնա առաջի Պրիսկիլիանոսի իշխանին, եւ խոստովանեցաւ զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եւ այպն առնէր զկոյր եւ զխուլ եւ զհամր զանօտի կուռսն. եւ արկին զնա ի բանդ ։

Եւ յետ աւուրց հանին ի բանդէն եւ կախեցին զփայտէ, եւ շամփրովք այրեցին զկողսն, եւ նա եւս առաւել յանդիմանէր եւ անարգէր ի տանջանս զպաշտամունս կռապաշտիցն ։ Ապա հրացեալ շանթիւք ծակեցին զթաթս ձեռացն երկոցունց եւ զպճղունս ոտիցն, եւ երանելի կինն գոհանալով փառաւորէր զԱստուած. * եւ բուրեաց անուշահոտութիւն յանձնէն որպէս ի խնկոց եկեղեցւոյ ։ Եւ ձայն եղեւ յերկնից առ նա եւ ասէ. Զօրացի՛ր Անտոնինեա եւ քաջալերեաց ։ Եւ արկին զնա ի բանդ եւ թողին անդ զամս երկու ։ * A fol. 284 v° a

Եւ ապա հրամայեաց իշխանն Պրիսկիլիանոս ընկենուլ զնա ի լիճն, եւ յորժամ

2 վկայութեամբ] Մարգաց Թ եւ *add.* B || 5 Պրիսկիլիանոսի] Կրիսկիլիանոսի B — խոստովանեցաւ] առաջի նորա *add.* B || 10 Ապա] հրամայեաց եւ *add.* B || 11-13 եւ բուրեաց... քաջալերեաց *om.* B.

diges au nom du Christ sur les malades et les infirmes. Il eut à souffrir beaucoup de tortures de la part des idolâtres, et mourut par le martyre le 15 juin.

En ce jour martyre de sainte Antonine.

Cette femme chrétienne était de la ville de Nicée de Bithynie, aux jours des empereurs idolâtres Dioclétien et Maximien. On l'amena devant le gouverneur Priscillien et elle confessa le nom du Christ notre Dieu, en ridiculisant comme aveugles, sourdes et muettes les idoles vaines. On la jeta en prison.

Quelques jours après, on la sortit de la prison, on la suspendit à un poteau et on lui brûla les côtes avec des broches; mais elle, dans ses tortures, réprouva de plus en plus et méprisa les cérémonies des idolâtres. Ensuite, avec des braises enflammées on lui troua la paume des deux mains et les chevilles des pieds. La bienheureuse femme, en rendant grâces, glorifiait Dieu. * Une odeur suave se dégagea de sa personne comme celle de l'encens à l'église. Une voix du ciel se fit entendre à elle qui disait : « Prends courage, Antonine, et sois forte. » On la jeta en prison et on l'y laissa deux années. * A fol. 284 v° a.

Ensuite le gouverneur Priscillien ordonna de la jeter dans le lac, et pendant

տանէին աղօթելով առ Աստուած եւ ասէ. Գոհանամ զքէն Որդի Աստուծոյ որ արժանի արարեր զիս կալ առաջի քո ընդ այլ սրբոց քոց ։ Եւ երեւեցան հրեշտակք երկու որ երթային, եւ աւանդեաց զհոգի իւր ի ձեռս նոցա Յունիսի ԺԵ, եւ զմարմինն հանեին ի ցամաք ։ Եւ երեւեցաւ ի տեսլեան քրիստոնէից արանց եւ երթեալ առեալ պատուով թաղեցին ։

Մարգաց Ժ եւ Յունիսի ԺԶ ։ Վկայաբանութիւն կուսի վկային Քրիստոսի Ակիլինեայ ։

Յաւուրս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի էր այր մի ի քաղաքին Վիվլոպօլիս, որոյ անուն էր Եւտոլմէոս, եւ էր քրիստոնեայ ։ Եւ էր նորա դուստր Ակիլինեա անուն, եւ ի տասնամենից տուեալ նմա շնորհք յԱստուծոյ, եւ զհամահասակ աղջկունսն եւ զայլ կանայս ուսուցանէր եւ պատուիրէր ի բաց կալ ի կռոցն, եւ երկիր պագանել Քրիստոսի, եւ բազում ժամանակս յուսուցանելոյ ոչ դադարէր ։

* A fol. 284 v° b. Եւ ոմն մի Նիկոմիդոս անուն մատնեաց զնա առ դատաւորն * Վողիսիանոս եւ կոչեաց ի հարցումն, եւ քաղցրութեամբ խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ պաշտել

2-5 Եւ երեւեցան ... թաղեցին] եւ այնպէս կատարեցաւ ի Քրիստոս ։ Եւ երթեալ քրիստոնէից առին զմարմինն եւ պատուով թաղեցին, յորմէ բազում սքանչելիք լինին B || 6 Վկայաբանութիւն ... Ակիլինեայ] Վկայութիւն սրբուհւոյ եւ կուսի վկային Ակելինեայ B || 8 Ակիլինեա] Ակելինեա B || 13 Վողիսիանոս] Վոլոսիանոս B.

qu'on l'y conduisait elle pria Dieu et dit : « Je te rends grâces, Fils de Dieu, de ce que tu m'as rendue digne de me présenter devant Toi avec tes autres saints. » Deux anges apparurent qui l'accompagnèrent; elle rendit son âme entre leurs mains le 15 juin, et ils tirèrent son corps sur le rivage. Elle apparut en vision à des chrétiens, qui allèrent prendre (son corps) et l'inhumèrent avec honneur.

10 MARGATS, 16 Juin.

Passion de la vierge et martyre du Christ Aquilina.

Aux jours de l'empereur idolâtre Dioclétien, il y avait dans la ville Byblos (*Vivlopolis*) un homme dont le nom était Eutolmius, qui était chrétien. Il avait une fille nommée Aquilina (*Akilinéa*) qui, à l'âge de dix ans, reçut les grâces de Dieu et enseignait aux jeunes filles de son âge et aux femmes, les engageant à renoncer aux idoles et à adorer le Christ. Elle ne cessa pas d'enseigner durant de longues années.

* A fol. 284 v° b. Un certain Nicomède la dénonça au gouverneur * Volusianus (*Volisianos*), qui la fit venir et l'interrogea; il lui conseilla avec douceur de renier le Christ

զկուռսն, և նա խոստովանեցաւ զՔրիստոս և զկուռսն ուրացաւ ։ Դան հարին զնա ուժգին և հրացեալ շամփուրս հարին յականջսն և մինչև յուղեղն այրեցաւ, և հեղոյր արիւնն ընդ ռնգունսն ի վայր, և արկին ի բանդ ։ Եւ յաղօթել նորա առ Աստուած ի հասարակ գիշերին հրեշտակ Տեառն մերձեցաւ ի գլուխն և յանձն և ասէ․ Եղիցիս ողջ․ և եհան ի բանդէն ողջ մարմնով և կացոյց մերձ ի սնարս բդեշխին մինչդեռ բազմեալ կայր ի մահճման ։ Եւ տեսեալ զնա յարուցեալ կալաւ և ետ ի պահապանսն ։ Եւ յետ սակաւ աւուրց հրամայեաց հատանել զգլուխն ։

Եւ յորժամ տարան ի տեղին աղօթեաց առ Աստուած այսպէս․ Տէր Աստուած ամենակալ, գոհանամ զքէն որ ցուցեր ինձ զօր կատարման իմոյ, և ոչ անտես արարեր զընթացս հանդիսի իմոյ, և ոչ անտես արարեր զխնդրուածս իմ․ ընկալ զհոգիս իմ խաղաղութեամբ ։ Ձայն եղև առ նա յերկնից և ասէ․ Լսելի եղեն աղօթք քո ։ Եւ նախ քան զդահճին հարկանելն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԺԶ․ և ապա եհատ զգլուխն, և փոխանակ արեանն կաթն բղխեաց ։

Եւ թաղեաց զնա Եւթաղիոս եպիսկոպոսն ։

3 հեղոյր] հոսեաց B || 3-7 Եւ յաղօթել ... պահապանսն *om.* B || 7 հատանել զգլուխն] սպանանել զնա B || 10 և ոչ ... զխնդրուածս իմ *om.* B || 11 Ձայն ... աղօթք քո] Եւ լուաւ Աստուած աղօթից նորա B || 12 Աստուած] Մարգաց Ժ և *add.* B || 13 փոխանակ ... բղխեաց] արիւնն իբրև զկաթն հոսեցաւ B || 14 եպիսկոպոսն] փառաւորապէս *add.* B.

et d'adorer les idoles. Mais elle confessa le Christ et renia les idoles. On la frappa brutalement, on lui enfonça des broches dans les oreilles, elle fut brûlée jusqu'au cerveau, le sang coula de ses narines et on la jeta en prison. Pendant qu'elle priait Dieu au milieu de la nuit, l'ange du Seigneur s'approcha de sa tête et de sa personne et dit : « Tu seras guérie. » Et il la sortit de la prison, saine de corps, et la déposa près du chevet du gouverneur pendant qu'il reposait sur sa couche. L'ayant aperçue, il se leva, la saisit et la remit aux gardiens. Peu de jours après, il ordonna de lui trancher la tête.

Pendant qu'on l'amenait au lieu (de l'exécution), elle pria Dieu en ces termes : « Seigneur, Dieu tout-puissant, je Te rends grâces de ce que tu m'as fait connaître le jour de mon martyre, de ce que Tu n'as pas négligé le cours de ma carrière et n'as pas refusé mes vœux ; reçois mon âme en paix. » Une voix du ciel se fit entendre à elle et dit : « Tes prières ont été exaucées. » Et avant que le bourreau eût frappé, elle rendit son âme à Dieu, le 16 juin ; on lui trancha ensuite la tête et au lieu de sang c'est du lait qui se répandit.

L'évêque Euthalius l'inhuma.

* A fol. 285 r° a.

* Յայսմ աւուր յիշատակ է Կիւրակէի եւ Պարասկեւի ։

Պատմեաց մեզ հայրն Մակար անապատաւորն եթէ այր մի էր յԱղեկսանդրի քաղաքին որոյ անուն էր Կիւրակէ, եւ էր քոյր մի նորա որոյ անուն էր Պարասկեւի որ թարգմանի ուրբաթ ։

Եւ յորժամ մեռան ծնողքն իւրեանց ցանկացաւ Կիւրակէ կրօնաւորական վարուց, եւ թողեալ զտունն եւ զքոյրն գնաց յանապատն ի Սկիւթ առ մեծն Դանիէլ կրօնաւորեցաւ, եւ առաքինի վարուք եւ մեծ ճգնութեամբ հաճոյ եղեւ Աստուծոյ ։

Իսկ քոյրն իւր Պարասկեւի ետ զանձն իւր ի մեղս պոռնկութեան, եւ անառակ վարուք բազում ոգիս կորուսանէր ։ Եւ լուեալ Կիւրակէի եղբօրն իւրոյ յոյժ բարկացաւ եւ ուրացաւ զնա ։

Եւ յետ ժամանակաց լուաւ Դանիէլ եւ այլ անապատական ծերքն, եւ յոյժ մեղադրեցին Կիւրակէի եթէ Ընդէ՞ր առանց հողաբարձութեան թողեր զքոյրն քո, զի ինքն կորեաւ եւ զայլս կորոյս . արժան է քեզ երթալ առ նա եւ կորզել զնա ի սատանայական գործոց ։

Եւ յարուցեալ աղօթեաց եւ աղաչեաց զԱստուած զի գործակից լինիցի նմա ի փրկութիւն քեռն իւրոյ ։ Եւ յուղի անկեալ գնաց ի քաղաքն, եւ գնաց ի դուռն Պարասկեւեայ, առաքեաց պատանի մի առ նա եթէ Եղբայրն քո Կիւրակէ առ դրանն կայ եւ կոչէ զքեզ ։

1 գնաց ի դուռն] ընթացաւ ի դուռն B.

* A fol. 285 r° a.

* En ce jour commémoration de Cyriaque et de Parascévè.

Le père Macaire (*Makar*), l'anachorète, nous a raconté qu'il y avait dans la ville d'Alexandrie un homme dont le nom était Cyriaque (*Kiurakē*), ayant une sœur nommée Parascévè, ce qui se traduit vendredi.

A la mort de leurs parents, Cyriaque aspira à la vie monacale, et quittant sa maison et sa sœur, il se rendit au désert de Scété et se fit moine, auprès du grand Daniel. Il fut agréable à Dieu par sa vie vertueuse et son grand ascétisme.

Quant à sa sœur Parascévè, elle s'adonna au péché de prostitution et fut la cause de la perdition de bien des âmes par sa vie de débauche. Son frère Cyriaque, l'ayant appris, eut une grande colère et la renia.

Après quelque temps, Daniel et d'autres anciens anachorètes, l'ayant appris, réprouvèrent fortement Cyriaque en disant : « Pourquoi as-tu laissé ta sœur sans tutelle, car elle s'est perdue et a perdu les autres ? Il faut que tu ailles vers elle et l'arraches aux œuvres sataniques. »

Il se leva, pria et supplia Dieu de collaborer avec lui au salut de sa sœur. Il se mit en route, se rendit à la ville, alla à la porte de Parascévè et envoya un jeune garçon lui dire : « Ton frère Cyriaque est à la porte et t'appelle »

Իսկ Պարասկեւէ * բացեալ գլխով եւ բոկոտն եւ անառակութեամբ խաղայր ընդ մեղսասէր երիտասարդսն : Եւ յորժամ լուաւ զեղբօրէն ուրախ եղեւ յոյժ, եւ եկեալ երկիր եպագ եւ ողջոյն ետ : Եւ տեսեալ զնա Կիւրակէի յայնպիսի կերպս եհար ձեռօքն զերեսս իւր եւ աւէր ողբալով. Վա՜յ ինձ տիկին քոյր իմ, զի՞ եղեւ ընդ քեզ զի ատեցեր զհոգիդ եւ արհամարհեցեր զԱստուածն քո. կորեար եւ կորուսեր զբազումս. լա՛ւ էր ինձ եթէ յառաջագոյն մեռեալ էի : * A fol. 285 r° b.

Եւ յորժամ լուաւ Պարասկեւէ անկաւ յոտս նորա եւ ողբալով աւէր. Աւաղ է ինձ թշուառականիս, եւ եղուկ եմ ես զի ի սպառ կորեայ, եւ ունայնութեամբ կորուսի զժամանակս կենաց իմոց : Աղաչեմ զքեզ հայր իմ ըստ հոգւոյ եւ եղբայր ըստ մարմնոյ, զի եթէ գիտես զի ընդունի Աստուած զզղջումն պոռնկիս եւ զանառակ կնոջ ապաշխարութիւնս, մի՛ թողուր զիս աստէն աղաչեմ, եւ լուր եղէց քեզ եւ հնազանդ ամենայն աւուրս, եւ յամենայն սրտէ ծառայեցից Աստուծոյ :

Եւ նորա լուեալ զայս ուրախ եղեւ յոյժ, եւ ասէ ցաղջիկն. Մո՛ւտ ի տուն քո եւ ծածկեա՛ զգլուխ քո, եւ ագի՛ր կօշիկ յոտս քո, զի երկայն եւ դժուարին է ճանապարհ լերինն եւ խորշակ յոյժ : Եւ ասէ կինն. Կենդանի է Տէր, զի որպէս այժմ եկի առ քեզ այսպէս եկից զկնի քո. ոչինչ առից ընդ * իս ի սատանայական ընչիցն, այլ երթիցուք որպէս եմս, անծածուկ գլխով եւ բոկ ոտիւք : Լաւ է ինձ մերկ զալ զկնի * A fol. 285 v° a.

6 զբազումս] վա՜յ ինձ զի տեսի զքեզ այսպէս *add.* B.

Parascévè * la tête découverte, les pieds nus, s'amusait lascivement avec des jeunes gens aimant le péché. Lorsqu'elle entendit le nom de son frère, elle fut très contente, alla se prosterner devant lui et le salua. Cyriaque, la voyant dans cette attitude, frappa de ses mains son visage et lui dit en soupirant : « Malheur à moi, madame ma sœur, que t'est-il arrivé pour que tu aies haï ton âme et méprisé ton Dieu? Tu t'es perdue et tu en as perdu beaucoup. Il aurait été mieux pour moi d'être mort auparavant. » * A fol. 258 r° b.

Lorsqu'elle eut entendu, Parascévè tomba aux pieds de son frère et dit en pleurant : « Malheur à moi misérable, je suis malheureuse d'être perdue complètement; j'ai perdu en vain le temps de ma vie. Je t'en prie, mon père selon l'esprit, et mon frère selon la chair, si tu sais que Dieu agrée mon repentir de prostituée et ma pénitence de femme débauchée, ne me laisse plus ici, je t'en prie; je t'écouterai et je t'obéirai de toute ma vie, et je servirai Dieu de tout mon cœur. »

(Cyriaque) en entendant cela fut réjoui et dit à la fille : « Rentre dans ta maison, couvre ta tête, mets des chaussures à tes pieds, car la route de la montagne est longue et fatigante et le vent chaud est violent. » La femme lui répondit : « Le Seigneur est vivant, car comme je suis venue à toi maintenant, telle je te suivrai; je ne prendrai rien avec * moi de mes biens diaboliques : nous partirons telle que je suis, la tête non couverte et les pieds nus. J'aime * A fol. 258 v° a.

քո քան զդառնալն ի կորստական յարկսն ։ Եւ յորժամ լուաւ զայս Կիւրակէ առաւելապէս խնդայր ։

Եւ յուղի անկեալք ելին ի լեառն, գնացին ի ներքսագոյն անապատն, եւ մինչդեռ երթային ընդ դժուարին ճանապարհն հերձան ներքանք ոտիցն ի քարանցն, եւ արիւնն որպէս առու հոսէր, նոյնպէս եւ արտասուքն հեղուլին յաչացն, եւ գլուխն եւ երեսն ի խորշակէ եւ ի տօթոյ եւ ի կիզմանէ արեգականն որպէս հրով այրեցան ։ Եւ այնչափ բախէր բռամբն զկուրծս իւր մինչ զի յոյժ կապուտակեալ սեւացան, եւ ուռուցեալ եղեն լանջքն ։ Եւ ասէր. Տէր, ընկալ զապաշխարութիւնս իմ, որպէս երբեմն զպոռնիկ կնոջն ։

Եւ մինչդեռ երթային տեսանէ Կիւրակէ ի հեռուստ այլ անապատաւորս զի գային ընդ ճանապարհ անապատին, ասէ ցքոյրն իւր. Խոյս տուր ի ճանապարհէս սակաւիկ մի եւ թաքիր մինչեւ անցանիցեն, զի օտարք են եւ ոչ գիտեն եթէ քոյր իմ ես, եւ գայթակղին ի միտս իւրեանց ։ Եւ Պարասկեւի թիւրեցաւ ի ճանապարհէն եւ թաքեաւ. եւ երթեալ նստաւ եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԺԶ ։

* A fol. 285 v° b. Եւ Կիւրակէ գնաց եւ եգիտ զնա * մեռեալ, եւ յոգւոց հանեալ մեծաւ հառաչմամբ ասէ. Վա՜յ ինձ մեղաւորիս, զի ոչ եղէ արժանի կեցուցանել զոգիս տառապեալ քեռս իմոյ ։ Եւ փորեաց զերկիր արտասուալից սաղմոսիւք եւ թաղեաց զնա ։ Եւ ի բազում

14 Աստուած] Մարգայ Ժ եւ *add.* B.

mieux te suivre nue que de retourner à la maison de perdition. » Cyriaque, entendant cela, en fut plus réjoui encore.

Ils se mirent en route, montèrent à la montagne et se rendirent au plus profond du désert. Tandis qu'ils allaient par le chemin difficile, la plante des pieds (de Parascévè) se crevassa par les pierres, le sang en coulait comme un ruisseau; de même les larmes lui coulaient des yeux, sa tête et son visage brûlaient comme du feu à cause du vent chaud, de la chaleur et de l'ardeur du soleil. Elle frappait tellement sa poitrine de son poing que de très bleue elle en devint noire, sa gorge s'enfla, et elle disait : « Seigneur, accepte ma pénitence, comme jadis celle de la femme prostituée. »

Pendant qu'ils marchaient, Cyriaque aperçut au loin d'autres anachorètes qui venaient par la route du désert et il dit à sa sœur : « Éloigne-toi un peu du chemin et cache-toi jusqu'à ce qu'ils soient passés, car ce sont des étrangers et ils ne savent point que tu es ma sœur, ils pourraient se scandaliser dans leur pensée. » Parascévè s'écarta du chemin et se cacha; elle alla s'asseoir et rendit son âme à Dieu le 16 juin.

* A fol. 285 v° b. Cyriaque alla vers elle et la trouva * morte, il soupira avec de grands sanglots et dit : « Malheur à moi, pécheur, qui n'ai pas été digne de sauver l'âme de ma pauvre sœur. » Il creusa la terre, psalmodiant et versant beaucoup de

տրտմութենէն ննջեաց ի վերայ գերեզմանին. եւ տեսանէ յանուրջս զՏէր նստեալ ի վերայ բարձր աթոռոյ եւ առաջի նորա զՊարասկեւի հին եւ պատառոտուն հանդերձիւ եւ զգլուխն ի կոր: Եւ ասէ Տէր. Բերէք զամենայն գործս պոռնիկ կնոջս: Եւ սեւադէմ արք տարան տումար եւ ընթեռնուին զամենայն պիղծ գործս նորա: Նոյնպէս եւ լուսաւոր արք մատուցին ոսկի շիշ լցեալ արեամբ եւ արտասուօք. եւ կարդային քարտէս եթէ որպէս առժամայն լուաւ եղբօրն, եւ բացեալ գլխով եւ բոկ ոտիւք գնաց զկնի յայնչափ դժուարին եւ քարուտ ճանապարհ, եւ կոծելով բախէր զկուրծսն եւ զճակատն եւ վիրաւորեաց զամենայն մարմինն:

*Ասեն սեւքն. Այնչափ ժամանակս ընդ մեզ էր եւ զհաճոյս մեր կատարէր, եւ փոքր սակաւ աւուրց որ եկն զկնի ձեր կամիք յափշտակել զնա ի մէնջ: Ասէ Տէրն. Բերէք զկշիռս: Եւ յորժամ բերին լցին սեւքն զմի կողմն ամենայն չարեօք զոր գործեաց, նոյնպէս եւ լուսաւոր արքն եդին ի միւս *կողմն զոսկի շիշն. եւ ծանրացաւ յոյժ եւ* * A fol. 286 r° a.
վերացոյց զչարալից կողմն, եւ ցրուեցան ամենայն մեղքն եւ որպէս զծուխ անյայտ եղեն, եւ բուրեաց անուշահոտութիւն: Եւ երթեալ յափշտակեցին զնա ի ձեռաց թշնամեացն որ կամէին տանել զնա ի տանջանս, եւ կացուցին զնա առաջի Տեառն, եւ հրամայեաց մերկացուցանել զնա յաղտեղի հանդերձիցն, եւ զգեցուցանել նմա

1 տրտմութենէն] եւ ի նեղսրտութենէն *add.* B — յանուրջս] տեսիլ զարմանալի. եւես *ad l.* B || 3 կոր] ունելով *add.* B || 16 նմա] պայծառ *add.* B.

larmes, et l'enterra. Puis, dans sa grande tristesse, il s'endormit sur la tombe, et vit en rêve le Seigneur assis sur un trône élevé ayant devant Lui Parascévè en vêtements vieux et déchirés, la tête basse. Le Seigneur dit : « Apportez-moi toutes les actions de cette femme prostituée. » Des hommes au visage noir apportèrent le registre et firent la lecture de toutes ses actions impures. De même des hommes lumineux apportèrent un flacon d'or rempli de sang et de larmes, et firent la lecture d'une feuille (de papier) relatant de quelle façon (Parascévè) avait immédiatement écouté son frère et l'avait suivi nu-tête et nu-pieds par une route si difficile et pleine de pierres, en frappant avec sanglots sa poitrine, son front, et avait blessé tout son corps.

Les démons dirent : « Elle a été si longtemps avec nous, accomplissant nos désirs, et vous voulez, pour les quelques jours qu'elle vous a suivi, nous l'enlever. » Le Seigneur répondit : « Apportez la balance. » Lorsqu'on la Lui apporta, les (hommes) noirs remplirent un des plateaux de tous les méfaits que (Parascévè) avait commis, les hommes lumineux de même posèrent sur l'autre * plateau le flacon d'or, qui l'emporta de beaucoup en poids et souleva * A fol. 286 r° a.
le plateau rempli des mauvaises actions, tous les péchés se dispersèrent et disparurent comme de la fumée. Une odeur suave se répandit. Ils allèrent délivrer (Parascévè) des mains des ennemis qui voulaient la mener aux tortures, et ils la mirent en présence du Seigneur, qui ordonna de la dépouiller de ses vêtements sales, de lui passer des vêtements d'étoffes riches et de pourpre, de

բեհեզս եւ ծիրանիս, եւ եդին ի գլուխ նորա պսակ աստեղալից, եւ առեալ թռեան յերկինս :

Եւ զարթուցեալ Կիւրակէի ի քնոյն ուրախ եղեւ ընդ տեսիլն, եւ երթեալ պատմեաց մեծին Դանիէլի եւ այլոց հարանցն ի Սկիւթ լերինն, եւ ամենեքեան ետուն փառս Աստուծոյ : Եւ գրեցին զերանելին Պարասկեւի ի տումարս յիշատակաց ընդ այլ սուրբ երանելի եւ ճգնազգեաց կանանցն :

* B p. 259 a. [B * Եւ յայսմ աւուր տօն եւ յիշատակ սուրբ հօրն մերոյ Տիխոնիոսի սքանչելագործ եպիսկոպոսին Ամաթու որ ի կղզին Կիպրոս. եւ սրբոցն Իրակլիոսի եւ Ռոդոնի որ ի Տամասիու քաղաք Կիպրոսի կատարեցան :]

Մարգաց ԺԱ եւ Յունիսի ԺԷ : Տօն է Եղիսէի մարգարէի :

Եղիսէ մարգարէ էր յԱղբելբաուլայ, յազգէ Ռուբենի : Եւ իբրեւ ծնաւ զնա մայր իւր երինջք ոսկի որ ի Դան եւ ի Բեթէլ այնպէս գոչեցին մեծաձայն զի լսելի եղեւ յԵրուսաղէմ, եւ քահանայապետն որ կայր ի տաճարին ասաց. Մարգարէ մեծ ծնաւ
* A fol. 286 r° b. այսօր որ բարձցէ զկռապաշտութիւնն յԻսրայէլէ : Եւ յորժամ կոչեաց * զնա Եղիա

1 յԱղբելբաուլայ] յԱբելմաուլայ B || 2 Եւ իբրեւ ծնաւ… յԻսրայէլէ *om.* B.

lui mettre sur la tête une couronne constellée d'étoiles, puis ils la prirent avec eux et s'envolèrent au ciel.

Cyriaque, s'étant réveillé de son sommeil, se réjouit de la vision et alla la raconter au grand Daniel et aux autres pères de la montagne de Scété; et tous rendirent grâces à Dieu. Ils inscrivirent la bienheureuse Parascévè dans le diptyque des commémorations, parmi les autres saintes et bienheureuses femmes ascètes.

* B p. 259 a. [B * En ce jour fête et commémoration de notre saint père Tychonius, l'évêque thaumaturge d'Amathonte (*Amathou*) dans l'île de Chypre; et des saints Héraclius et Rhodon, qui furent martyrisés dans la ville de Tamassus (*Tamasiou*) en Chypre.]

11 MARGATS, **17 Juin.**

Fête du prophète Élisée.

Le prophète Élisée était de Albelbaal [1], de la tribu de Ruben. Lorsque sa mère le mit au monde, les veaux d'or qui se trouvaient à Dan et à Béthel beuglèrent si fort qu'ils furent entendus à Jérusalem, et le grand prêtre qui se trouvait dans le temple dit : « Un grand prophète est né aujourd'hui, qui fera
* A fol. 286 r° b. disparaître l'idolâtrie d'Israël. » Lorsque Élie l'appela * à la prophétie sur

1. Abil Bet-Maaka, en Galilée, qui est devenue Abelmaoul dans *Syn. Cp.*, col. 747.

բանիւ Տեառն ի մարգարէութիւն, թողեալ զամենայն գնաց զկնի Եղիայի. եւ յետ վերանալոյ նորա յերկինս դատէր զժողովուրդն :

Սա աղօթիւք եւ որդի առնու կնոջ Սոմնացւոյ, եւ յետ մեռանելոյ մանկանն դարձեալ յարոյց զնա ի մեռելոց : Սա եւ օծել զՅեու որ կոտորեաց զտունն Աքաաբու : Սա օծ զԱզայէլ թագաւոր Ասորոց, եւ մարգարէացաւ զոր ինչ առնելոց էր նմա : Սա սրբեաց զՆէեման բորոտ, եւ բորոտեաց զԳեեզի որ ստեաց : Սա զչար եւ զանպտուղ ջուրն աղիւն քաղցրացոյց եւ բժշկեաց :

Եւ վախճանեցաւ յաւուրս Յովասու արքայի Իսրայելի : Եւ մեկնաղէնքն Մովաբու մեռեալ մի ընկեցին ի գերեզմանն Եղիսէի, եւ իբրեւ եհաս յոսկերսն նորա առժամայն կենդանացաւ :

Յայսմ աւուր վկայութիւն Կիւրենոսի Գորտինայ եպիսկոպոսին ի Կրետա կղզւոջն :

Սուրբն Կիւրենոս եպիսկոպոսն էր յաւուրս կռապաշտ արքային Մաքսիմիանոսի, այր ցանկալի եւ սուրբ, ունէր եւ երկու ծառայս, զԹէոփանէս եւ զԹէոքարիստոս, եւ նոքօք շրջէր ի վանորայս եւ յեկեղեցիս :

2 զժողովուրդն] Ասասեծոյ : Սա առաջին նշան արար յորժամ զջուրսն Յորդանան գետոյ մաշկեկաւն Եղիայի բաժանեաց, եւ անց ընդ ցամաք : Սա լուա խնդրոյ բնակչացն Երիքովի զանպիտան ջուր տեղւոյն արար առողջարար, եւ զանպտուղ երկիրն ծննդաբեր *add.* B || 4 օծել] օծանել B || 6-7 Սա զչար . . . բժշկեաց *om.* B || 11 վկայութիւն] սրբոյն *add.* B.

l'ordre du Seigneur, (Élisée) abandonna tout et suivit Élie. Après l'ascension de celui-ci au ciel, il jugea le peuple.

Il donna un fils par sa prière à la femme stérile Sunamite, et après la mort de l'enfant il le ressuscita des morts. C'est lui qui fit oindre Jéhu, qui extermina la maison d'Achab. C'est lui qui oignit Hazaël roi de Syrie et prophétisa tout ce que celui-ci lui ferait. C'est lui qui guérit Naaman (*Nēeman*) le lépreux, et rendit lépreux Giézi, qui avait menti. C'est lui qui par le sel rendit douce et assainit l'eau mauvaise et improductive.

Il mourut aux jours de Joas roi d'Israël; des bandits moabites l'ayant jeté dans le sépulcre d'Élisée, un homme mort reprit vie aussitôt qu'il eut touché ses ossements.

En ce jour martyre de Cyrinus [1], évêque de Gortyne dans l'île de Crète.

Le saint évêque Cyrinus (*Kuirenos*) vivait aux jours de l'empereur idolâtre Maximien. C'était un homme agréable et saint. Il avait deux domestiques, Théophane et Théochariste, avec lesquels il circulait parmi les couvents et les églises.

1. *Syn. Cp.* et *Acta SS.* Iul., t. II, pp. 682 sqq., ont « Cyrille ».

Եւ ի միում աւուր տեսանէր կռապաշտս զի զոհէին արջառս եւ ոչխարս եւ թռչունս ի բագինս իւրեանց, եւ աւաղեաց եւ պարսաւեաց զնոսա եւ դժուարէր ընդ անարժան գործս նոցա ։ Եւ նոցա գիտացեալ կալան զնա եւ արկին ի բանդ ։

* A fol. 286 v° a. Եւ լուեալ երկուց ծառայիցն գնացին յափշտակել զնա եւ հանել * ի բանդէն բռնութեամբ, եւ երանելին Կիւրենոս ոչ ետ նոցա թոյլ եւ ի հասարակ գիշերին մինչդեռ յաղօթս կայր լուաւ ձայն յերկնից որ ասէր. Կիւրենոս պիտոյ ես ինձ ի Հռոմ ։ Եւ յորժամ եղեւ առաւօտ եգիտ բացեալ զբանդն, եւ ելեալ ետես զտաճար կռոցն կործանեալ եւ զբագինսն խորտակեալ մանր. յոյժ ուրախ եղեւ եւ փառաւորեաց զԱստուած ։

Գնաց ի վանսն եւ եգիտ զերանելի կրօնաւորն Փիլոքսենոս, ողջոյն ետ նմա ։ Եւ նա մարգարէացաւ առ նա եւ ասէ. Ո՛վ Կիւրենէ երկուս պսակս ընդունելոց ես ի Քրիստոսէ. մի քահանայապետութեանդ եւ միւս մարտիրոսութեան ։

Եւ ելեալ ի վանացն երթայր ընդ ճանապարհն հանդիպեցաւ նմա դեւ մի ի նմանութիւն զօրականի փախուցեալ ի կործանեալ կռոց տաճարէն հեծեալ յերիվար, եւ ի ձեռին իւրում ունէր սուր, դիմեաց ի վերայ նորա զի սպանցէ զնա սրովն. եւ Կիւրենոս արարեալ ընդդէմ նորա զնշան սրբոյ խաչին սաստեաց նմա եւ անյայտ արար ։

Եւ դարձեալ յայլում տեղոջ երեւեցաւ նմա սատանայ ի կերպարանս ահաւոր

5-10 եւ ի հասարակ ... վանսն] եւ ելեալ անտի սքանչելեօք գնաց ի վանսն B || 11 առ նա] նմա B || 13 — p. 1631, l. 4 Եւ ելեալ ... քաջալերէր] Եւ յազդմանէ Տեառն ելեալ ի վանաց ճանապարհ արար ի Հռոմ, եւ զօրութեամբն Քրիստոսի յաղթեաց պէսպէս փորձութեանց դիւին ։ Եւ գնացեալ ի Հռոմ քաջալերէր B.

Un jour, ayant vu des idolâtres immoler des bêtes à cornes, des moutons et des oiseaux sur leurs autels, il leur témoigna du mécontentement et les blâma, étant peiné de leurs indignes actes. Cela ayant été su, il fut saisi et jeté en prison.

Les deux domestiques, l'ayant appris, allèrent pour l'enlever et le sortir de force * de la prison; mais le bienheureux Cyrinus ne le leur permit point, et au milieu de la nuit pendant qu'il priait, il entendit une voix du ciel qui disait : « Cyrinus, tu m'es nécessaire à Rome. » Au matin, il trouva la prison ouverte, aperçut le temple des idoles démoli et les autels brisés en menus morceaux. Il en fut tout réjoui et glorifia Dieu.

* A fol. 286 v° a.

Il se rendit au couvent, y trouva le bienheureux Philoxène et le salua. Celui-ci lui prophétisa et dit : « O Cyrinus! tu recevras deux couronnes du Christ : l'une pour ton pontificat et l'autre pour ton martyre. »

En sortant du couvent, pendant qu'il suivait la route, il rencontra un démon sous les apparences d'un soldat monté à cheval, échappé du temple des idoles ruiné et tenant une épée à la main, qui se jeta sur lui pour le tuer avec l'épée. Cyrinus fit contre lui le signe de la sainte croix, le chassa, et il disparut.

Une autre fois, Satan lui apparut dans un autre endroit sous la forme d'un

վիշապի, ութ կանգուն երկայն, եւ բացեալ զբերան իւր կամէր կլանել զնա ։ Եւ Կիւրենոս աներկիւղ մերձեցաւ եւ փչեաց յերեսս նորա, եւ առժամայն անյայտ եղեւ ։

Գնաց ի Հռոմ ըստ բանի Տեառն, եւ քաջալերէր եւ պատուիրէր * զարգելեալ վկայսն Քրիստոսի, եւ խրատ տայր հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի եւ յօժարութեամբ մեռանել վասն նորա ։ * A fol. 286 v° b.

Եղեւ ի Հռոմ հալածումն քրիստոնէից եւ պատերազմ ընդ միմեանս. եմուտ ի նաւ զի երթիցէ յԵրուսաղէմ, եւ յորժամ եհաս ի տեղին որ կոչի Մալիա, երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն ի կերպարանս առն սպիտակազգեստի եւ ասէ. Մի թողուր զԿրիտիս զի եւ անդ պիտոյ ես ինձ, եւ ես եղէց ընդ քեզ ։

Եւ ելեալ քաղցրաշունչ հողմ եհան զնոսա ի Կրիտէս. եւ էր յայնժամ երանելին Կիւրենոս ամաց վաթսուն եւ ութից ։ Եւ ձեռնադրեցին զնա եպիսկոպոս ի Կրիտիս Գորտինոյ աթոռոյն եւ զքսան եւ զեօթն ամ որպէս զքրիստոսանման քաջ հովիւ վարեցաւ ուղղափառութեամբ ի վիճակ աթոռոյն իւրոյ եւ զբազումս յանհաւատից լուսաւորեաց ։

Եւ դատաւորն Կրիտիսոյ Անդրիանոս կացոյց առաջի, եւ ստիպէր եւ նեղէր զնա բռնութեամբ զի ուրասցի զՔրիստոս եւ զոհեսցէ կռոցն ։ Եւ յորժամ ոչ կարաց հաւանեցուցանել զնա, հրամայեաց հատանել զգլուխն ։ Եւ վասն զի յոյժ ծերացեալ էր

5 Քրիստոսի *om.* B || 6 նորա] Քրիստոսի B || 9 ի կերպարանս առն սպիտակազգեստի] ի տեսլեան B || 13 զքրիստոսանման] զՔրիստոս անման B.

terrible dragon, long de huit aunes, qui, la gueule ouverte, voulait l'avaler. Cyrinus sans crainte s'approcha de lui, lui souffla à la face et il disparut.

Il se rendit à Rome selon la parole du Seigneur et y encouragea * les martyrs du Christ détenus, en les engageant à demeurer fermes dans la foi au Christ et à mourir volontairement pour Lui. * A fol. 286 v° b.

Il y eut à Rome une persécution des chrétiens, et les habitants se battaient entre eux. (Cyrinus) s'embarqua pour se rendre à Jérusalem, et lorsqu'il arriva à l'endroit appelé Malia, l'ange du Seigneur lui apparut sous les apparences d'un homme vêtu de blanc qui dit : « Ne quitte point Crète (*Kritis*), parce que là aussi tu m'es nécessaire, et je serai avec toi. »

Un vent doux s'étant levé les fit aborder en Crète. Le bienheureux Cyrinus avait alors soixante-huit ans. On le sacra évêque sur le siège de Gortyne (*Gortinoy*) en Crète ; il gouverna son diocèse comme un vaillant pasteur, ressemblant au Christ, en toute orthodoxie, durant vingt-sept années, et illuminant de nombreux infidèles.

Adrien, juge de Crète (*Kritisoy*), le fit comparaître, le pressa et insista tyranniquement pour qu'il reniât le Christ et immolât aux idoles. Ne parvenant pas à le persuader, il ordonna de lui trancher la tête. Et comme il était très âgé et ne pouvait aller à pied, car le bienheureux avait quatre-vingt-

եւ գնալ ամիւքն ոչ կարէր զի էր երանելին ամաց ժինանւն եւ հնգից եդին զնա ի վերայ սայլի : Եւ յորժամ հասին ի տեղին որ կոչի Ռաքսոն ձայն եղեւ յերկնից եւ ասէ . Մինչեւ յաստ . եւ կացին եզինքն ի տեղին եւ իջուցին զնա ի սայլէն եւ * հատին զգլուխ նորա Յունիսի ԺԷ :

* A fol. 287 r° a.

Մարգաց ԺԲ եւ Յունիսի ԺԸ : Վկայաբանութիւն սրբոյն Դուլայի :

Սուրբ վկայն Քրիստոսի Դուլայ էր ի գաւառէն Զեփիւրի Պռետորիադայ ի Կիլիկեցւոց երկրէն : Եւ անհաւատ զօրականք կալան զնա զի էր քրիստոնեայ եւ տարան առ Մաքսիմոս դատաւորն : Եւ խոստովանեցաւ զՔրիստոս եւ անգոսնեաց զաստուածն նոցա զԱպողոն, եւ այպն առնելով ասէր . Ապողոն ցանկացաւ Դափնայի պոռնիկ կնոջ եւ ոչ կարաց հասանել ցանկութեանն :

Եւ հրամայեաց դատաւորն եւ ձաղկեցին բրովք զթիկունսն եւ զնստոյ տեղին, եւ եդին ի վերայ հրացեալ շանթից եւ արկին ի բանդ : Եւ դարձեալ կացուցին առաջի, եւ խոստովանէր զինքն ծառայ Քրիստոսի : Օծին զգլուխն ձիթով, եւ եդին ի վերայ կայծակունս հրոյ, եւ արկին ընդ քիթն տորոբեալ մանանեխ, եւ ընկեցին յորսայս եւ արջառաջլօք հարին զորովայն, եւ բացան աղիքն, եւ հեղին ի վերայ խիստ քացախ, եւ

2-3 ձայն... տեղին *om.* B || 3 նորա] Մարգաց ԺԱ եւ *add.* B || 5 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 6 սուրբ *om.* B || 15 հարին] կարատեցին B.

quinze ans, on le mit sur un chariot, et lorsqu'on fut arrivé à l'endroit appelé Raxos (*Rakhson*), une voix du ciel se fit entendre qui dit : « Jusqu'ici. » Les bœufs s'arrêtèrent à cet endroit, on descendit (le bienheureux) du chariot, et on lui * trancha la tête le 17 juin.

* A fol. 287 r° a.

12 MARGATS, **18 Juin.**

Passion de saint Doula.

Le saint martyr du Christ Doula était du district de Zéphyr de Prétorias (*Pretoriaday*) dans le pays de Cilicie. Les soldats infidèles le saisirent parce qu'il était chrétien et le conduisirent au juge Maxime. Il confessa le Christ, blâma leur dieu, Apollon, et dit en se moquant : « Apollon s'éprit d'une femme prostituée, Daphné, et ne put arriver à ses désirs. »

Le juge ordonna de le fustiger avec des bâtons sur le dos et le séant, puis on l'étendit sur des braises ardentes et on le jeta en prison. On le fit de nouveau comparaître et il se confessa serviteur du Christ. On lui oignit la tête d'huile et on y posa des braises enflammées, on lui introduisit dans les narines de la graine de moutarde pulvérisée, on l'étendit sur le dos et on lui frappa sur le ventre à coups de nerfs de bœuf. Ses entrailles s'entr'ouvrirent

խեցեաւ հարկանէին զվէրսն, եւ զերեսն այնչափ ապտակեցին զի բացան ոսկերք ծնօտիցն, եւ խորտակեցին զսրունսն : Եւ երանելի վկայն Քրիստոսի յայնչափ տանջանացն ոչ դադարեաց ի յանդիմանելոյ զմոլորութիւն կռոցն, եւ պատմէր զվասն մեր մարդեղութիւն *Քրիստոսի Աստուծոյ մերոյ : * A fol. 287 rº b.

Եւ դարձեալ երրորդ անգամ հարցանէին եթէ Զոհե՞ս կռոցն : Եւ յորժամ ոչ կարացին դարձուցանել ի Քրիստոսի հաւատոյն, արկին ի բերան նորա բռնութեամբ ի զոհից կռոցն, եւ քարշեցին զնա ընդ գետինն քսան մղոն : Եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԺԸ : Եւ ձգեցին զմարմինն յԵփիւրի յուղխն, եւ երթեալ երկու շունք նստան մերձ մարմնոյն եւ պահէին, եւ մին յարուցեալ գնաց առ հովիւսն եւ ատամամբքն կալեալ զհանդերձիցն տարաւ ի տեղին, եւ տեսեալ զմարմին սրբոյ վկային ազդեցոյց ի գեօղն, եւ հանին զնշխարսն եւ տարեալ թաղեցին ի տեղի նշանաւոր, եւ բազում նշանք եղեն յաւուր յայնմիկ :

Յայսմ աւուր վկայութիւն Յովսեփայ նոր վկային :

Սուրբն Յովսէփ վկայն Քրիստոսի որդի էր առն պարսկի ի սահմանացն Դվնայ քաղաքի Հայոց . եւ տուեալ յուսումն տաճկերէն գրոց ի Դուին քաղաք : Եւ տեսեալ

5 զոհես] զոհեցէ՞ B || 8 Աստուած] Մարգաց ԺԲ եւ *add.* B || 9-12 եւ երթեալ . . . յայնմիկ] եւ յորձանք ջրոյն հանին զնա ի ցամաք, զոր տեսեալ հովիւ մի ազդեցոյց ի գեօղն, եւ քրիստոնեայք տարեալ թաղեցին ի տեղի նշանաւոր, յորմէ բազում նշանք եղեն ի փառս Քրիստոսի B || 13 վկայութիւն] նահատակութիւն B || 15 տաճկերէն գրոց] դպրութեան այլազգական գրոց B.

et on y répandit du vinaigre fort, on lui frappa sur les blessures avec des morceaux de verre, et on lui souffleta tellement la figure que les os des mâchoires furent mis à nu; on lui brisa les jambes. Le bienheureux martyr du Christ, dans ses tortures si nombreuses, ne cessait de blâmer l'erreur des idoles et faisait le récit de l'incarnation, à cause de nous, du* Christ, notre Dieu. * A fol. 287 rº b.

Pour la troisième fois on lui demanda : « Immoles-tu aux idoles? » Et comme on ne réussit point à le détourner de la foi au Christ, on lui mit de force dans la bouche des victimes (immolées) aux idoles. On le traîna à terre pendant vingt milles, et c'est ainsi qu'il rendit son âme à Dieu le 18 juin. On jeta le corps dans le ravin d'Euphyr; deux chiens vinrent se placer près du corps et le gardèrent, puis l'un d'eux courut vers des bergers et les saisissant par leur vêtement, avec ses dents, les conduisit à l'endroit. Ceux-ci, ayant découvert le corps du saint martyr, en portèrent la nouvelle au village. Les habitants enlevèrent les restes et les inhumèrent dans un endroit distingué. De nombreux miracles eurent lieu ce jour-là.

En ce jour martyre de Joseph le nouveau martyr.

Saint Joseph le martyr du Christ était le fils d'un homme persan dans les environs de la ville de Dwin en Arménie. On lui fit apprendre les lettres

զոճրագործութիւն Տաճկաց եւ Պարսից փախեաւ, եւ եկեալ ի գեօղն իւր յարեցաւ ի քրիստոնեայսն, եւ երթայր յեկեղեցիս նոցա, եւ ծնողքն ոչ կարէին արգելուլ զնա : Եւ փախեաւ գաղտ եւ երթեալ մկրտեցաւ, եւ անուանեցաւ Յովսէփ որ յառաջ Յուսուփ
* A fol. 287 vº a. էր : Եւ գնաց յԵրուսաղէմ երկիր *եպագ տնօրինական տեղեացն Քրիստոսի : Եւ եկն ի Հռոմկլայն առ սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Ներսէս Երգեցողն եւ պատմեաց նմա զվարս իւր : Եւ նա հաստատեաց զնա ի հաւատսն. Եւ եթէ դիպի քեզ, ասէ, սպանանիլ ի Տաճկաց կարգեցից զքեզ ՚ընդ վկայսն Աստուծոյ :

Եւ ուրախացեալ դարձաւ ի տուն իւր եգիտ զհայրն իւր մեռեալ, եւ մայր եւ եղբայրն կենդանի, եւ զիրկս արկեալ համբուրէին զնա, զի մայրն յառաջագոյն քրիստոնեայ էր :

Պատահեաց անդ ամիրայն Սրջհան, եւ գիտացեալ եթէ քրիստոնեայ եղեւ կալաւ զնա եւ կապեաց, եւ խոստանայր նմա պարգեւս բազումս եւ պատիւս եթէ դարձցի յառաջին հաւատն իւր, եւ եթէ յամառեալ մնասցէ ի նմին չարչարանս եւ մահ : Իսկ

1 Տաճկաց] այլազգեաց B || 4 տնօրինական] սուրբ *add.* B || 5 սուրբ] եւ երջանիկ *add.* B — տէր *om.* B — Ներսէս] Շնորհալին *add.* B || 7 ի Տաճկաց] յայլազգեաց վասն հաւատոցն B || 8 ուրախացեալ] առեալ զօրհնութիւն նորա ուրախութեամբ B || 11 ամիրայն] Դվնայ *add.* B || 13 մնասցէ] մնայցէ B.

turques dans la ville de Dwin. Témoin des crimes commis par les Turcs et les Persans, il s'enfuit, retourna à son village, adhéra aux chrétiens, et se rendait à leur église, sans que ses parents pussent l'en empêcher. Il s'enfuit secrètement, alla se faire baptiser et s'appela Joseph alors qu'il était aupara-
* A fol. 287 vº a. vant Yousouf. Il se rendit à Jérusalem, vénéra* devant les lieux de l'incarnation du Christ, puis vint à Hromkla auprès du saint catholicos des Arméniens Ter Nersès le Chanteur et lui raconta sa vie. Celui-ci l'affermit dans la foi, et lui dit : « S'il t'arrive d'être tué par les Turcs, je te mettrai au nombre des martyrs de Dieu. »

Il s'en réjouit et retourna à sa maison; il trouva que son père était décédé, sa mère et son frère en vie; il leur tendit les bras et les embrassa, car sa mère était chrétienne auparavant.

L'émir Sĕrdšhan[1] étant survenu et ayant appris que (Joseph) était devenu chrétien, le fit saisir et attacher, puis lui promit beaucoup de présents et d'honneurs, s'il revenait à sa première religion, mais s'il s'obstinait à rester dans la même, des tortures et la mort. (Joseph) ne répondait point,

1. Le nom de l'émir se trouve sous les formes « Sadrišhan » et « Sadšahan » dans les deux recensions éditées par J. Manandean et A. Adjarean, Հայոց նոր վկաներ, Valaršapat, t. I, 1903, p. 60.

նա ոչինչ տայր պատասխանի, բայց միայն երկիր պագանէր խաչին Քրիստոսի որ կայր ի տանն յորում ամիրայն էր իջեալ, զի քրիստոնէի էր տունն :

Իբրեւ ետես ամիրայն զպնդութիւն հաւատոց նորա արգել զնա ի բանդ աւուրս բազումս ընդ այլ երկու քրիստոնեայս, եւ նա ուսաւ ի նոցանէ սաղմոսս բազումս : Եւ ապա հանեալ ի բանդէն հրամայեաց սրով սպանանել : Եւ լոյս ծագեաց ի վերայ սուրբ մարմնոյն, եւ բարձեալ տարան զնա ի հռչակաւոր վանսն որ կոչի Հաւուց * Թառ, որ կայ հանդէպ Գառնոյ, եւ անդ թաղեցին փառաւորապէս : *A fol. 287 v° b.

Կատարեցաւ սուրբ նահատակն Քրիստոսի Յովսէփ Մարգաց ԺԲ եւ Յունիսի ԺԸ : Եւ բազում բժշկութիւնք լինին ի նշխարաց նորա ի փառս Քրիստոսի օրհնելոյն յաւիտեանս :

Մարգաց ԺԳ եւ Յունիսի ԺԹ : Վկայաբանութիւն սրբոյն Վոնիփատոսի :

Վոնիփատոս ի Հռոմ քաղաքին ծառայ էր կնոջ միոյ այրւոյ մեծատան, որոյ անուն էր Ագղայիդա, էր պոռնիկ եւ արբեցող. պոռնկէր եւ ընդ տիկնոջն իւրոյ Ագղայիդայ : Բայց երիս բարի գործս ունէր Վոնիփատոս, էր օտարասէր եւ ողորմած եւ պարգեւատու :

2 ամիրան] իշխանն B — տունն *om.* B || 6 հռչակաւոր *om.* B || 8 Յովսէփ] յամենանն *add.* B || 9 նորա] սրբոյն B || 10 օրհնելոյն յաւիտեանս] Աստուծոյ B || 11 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 13 պոռնկէր եւ] եւ մեղսաշաղախ B.

mais il ne faisait qu'adorer la croix du Christ qui se trouvait dans la maison où était descendu l'émir, car c'était la maison d'un chrétien.

L'émir, voyant la fermeté de sa foi, le fit enfermer dans la prison de longs jours avec deux autres chrétiens. (Joseph) apprit d'eux beaucoup de psaumes. Ensuite, le faisant sortir de la prison, (l'émir) ordonna de le tuer par l'épée. Une lumière jaillit sur le saint corps. On le transporta dans le célèbre couvent appelé Havouts * Thar [1], qui se trouve en face de Garnik, et on l'y inhuma magnifiquement. Joseph, le saint martyr du Christ, fut martyrisé le 12 margats, 18 juin. De nombreuses guérisons ont lieu par ses reliques pour la gloire du Christ éternellement béni. *A fol. 287 v° b.

13 margats, 19 Juin.

Passion de saint Boniface.

Boniface (*Vonifatos*) était, dans la ville de Rome, domestique d'une riche veuve, nommée Aglaé (*Aglaïda*), prostituée et ivrogne. Il forniquait lui aussi avec sa maîtresse Aglaé, mais Boniface faisait trois bonnes œuvres : il était ami des étrangers, miséricordieux, et donnait généreusement.

1. Ce nom signifie « le perchoir des poules ».

Եւ ի միում աւուր լուաւ կինն եթէ յարեւելս բազում քրիստոնեայս չարչարեն եւ սպանանեն վասն Քրիստոսի հաւատոցն, եւ ածեալ զմտաւ զղջացաւ զմեղս իւր եւ ասէ ցԲոնիփատոս. Առ զանձս եւ մաքուր կտաւս եւ երթիջիր յարեւելս, եւ բերցես ինձ նշխարս մարտիրոսաց զի նոքօք գտից մեղաց իմոց թողութիւն ։

Ասէ Բոնիփատոս. Եթէ զիմ մարմինս քեզ նշխար բերցեն ընդունի՞ս ։ Ասէ ցնա տիկինն. Թափեա՛ ի քէն զգինիդ, եւ մի՛ վայրապար խօսիցիս ։

Եւ Բոնիփատոս առեալ զոր ինչ հրամայեաց տիկինն, եւ զայլ ոմանս ի ծառայակցացն եւ ջորիս գնաց ի Տարսոն քաղաքն եւ իջեւանեցաւ ի պանդոկի. եւ * եթող
* A fol. 288 r° a.
անդ զընկերսն զրաստօքն, եւ ինքն եմուտ ի դատողական ատեանն ։ Եւ տեսանէ ի չարչարանս զՔրիստոսի վկայսն, զոմանս գլխատեալս, զոմանս հատեալս զձեռս եւ զոտս, եւ ոմանք տարածեալք ի վերայ երկրի եւ բեւեռեալ ի փայտի, եւ ոմանք յերկծղի փայտս կապեալք, ոմանք հրով այրեցեալք, ոմանք յորսայս անկեալք եւ գեղարդեամբքն ընդ սիրտն եւ ընդ թիկնամէջսն յերկիր բեւեռեալք ։ Եւ երթեալ անկաւ ի վերայ խողխողեալ մարմնոցն եւ ողբալով համբուրէր ։

Եւ իշխանն նստեալ ի բարձրաւանդակի ետես զԲոնիփատոս զի աշխարէր եւ գիրկս արկեալ Քրիստոսի վկայիցն, հրամայեաց զօրականացն եւ կալեալ զնա տարան առաջի ։ Հարցանէր. Ո՞վ իցես. եւ ուստի՞ եկիր այսր ։ Ասէ Բոնիփատոս. Քրիստոնեայ

17 իցես] ես դու B.

Un jour, la femme apprit qu'on torturait beaucoup les chrétiens en Orient et qu'on les tuait pour la foi au Christ; elle réfléchit, se repentit de ses péchés, et dit à Boniface : « Prends de l'argent, du linge propre et va en Orient; tu m'en rapporteras des restes de martyrs, pour que par eux j'obtienne l'absolution de mes péchés. »

Boniface lui répondit : « Si on t'apporte mon corps comme relique, l'accepteras-tu? » La dame lui dit : « Cuve ton vin et ne dis pas d'insanités. »

Boniface prit avec lui ce que la dame lui avait ordonné, quelques autres de ses co-domestiques, des mulets, et se rendit à la ville de Tarse. Il descendit dans une hôtellerie, y * laissa ses compagnons avec les mulets, et il pénétra lui-même dans la salle du tribunal. Il y vit les martyrs du Christ dans les tortures, quelques-uns décapités, d'autres les mains et les pieds coupés, d'autres étendus sur le sol et cloués sur des planches, d'autres attachés à des bois à deux branches, d'autres brûlés au feu, d'autres tombés sur le dos, cloués à terre par des lances qui avaient traversé le cœur et la poitrine. Il se jeta sur les corps massacrés et les embrassa en sanglotant.
* A fol. 288 r° a.

Le gouverneur, assis sur une estrade, aperçut Boniface, qui gémissait et embrassait les martyrs du Christ; il ordonna aux soldats de le saisir et de l'amener en sa présence. Il lui demanda : « Qui es-tu et d'où es-tu venu ici? » Boniface répondit : « Je suis chrétien et serviteur du Christ. »

եմ եւ Քրիստոսի ծառայ ։ Եւ բարկացեալ յոյժ հրամայեաց եւ կախեցին զնա գլխիվայր․ եւ այնչափ քերեցին զմարմինն մինչեւ բացան ոսկերքն, եւ սրեալ եղէգն հարին ի ունգունս նորա, եւ հալեալ կապար արկին ի բերան նորա ։ Եւ տեսեալ ժողովրդեանն զհամբերութիւն սրբոյն աղաղակեցին մեծաձայն․ Մեծ է Աստուածն քրիստոնէից, եւ դիմեցին ի վերայ իշխանին, եւ կործանեցին զաթոռն․ եւ նորա * երկուցեալ փախեաւ յապարանս իւր ։ * A fol. 288 r° b.

Եւ վաղիւն հրամայեաց եւ ընկեցին յեռացեալ կաթսայ ձիթոյ, եւ հրեշտակ Տեառն ցրտացոյց զկաթսային եռացումն, եւ ել սուրբն անքոյզ ։ Եւ նոյնժամայն հատին զգլուխ նորա Յունիսի ԺԹ, եւ բազումք յանհաւատիցն հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան ։

Իսկ ծառայակիցքն ոչ գիտէին վասն Բոնիփատոսի, եւ ասէին․ Եգիտ պոռնկատուն եւ եմուտ յարբեցութիւն ։ Եւ տեղեկացան ի զօրականացն, եւ լուան եթէ մարտիրոսացաւ վասն Քրիստոսի․ գնացին ի հանդէս պատողական ասպարիսին, եւ ի մէջ զիականցն գտին զմարմինն յոյժ կտրատեալ ի բազում տանջանացն, եւ զգլուխն ի բացեայ յայլում տեղւոջ ընկեցեալ ։ Առեալ սրբեցին եւ եդին մերձ ի մարմինն ։ Եւ սուրբն որպէս կենդանի տեսեալ զծառայակիցսն իւր ժպտեցաւ ։

2 եղէգն] եղեգունս B || 3 ունգունս] յեղնգունս B || 5-6 Եւ դիմեցին ... յապարանս իւր *om.* B || 7-8 եւ հրեշտակ ... նոյնժամայն] եւ մինչդեռ կենդանի էր B || 9 նորա] Մարգաց ԺԳ եւ *add.* B || 14 բազում *om.* B || 16 Եւ սուրբն ... ժպտեցաւ *om.* B.

(Le gouverneur), très irrité, ordonna de le suspendre la tête en bas; on lui déchira le corps à tel point que les os furent mis à nu; on lui enfonça dans les narines des roseaux taillés en pointe; on lui coula du plomb fondu dans la bouche. Le peuple, témoin de la patience du saint, cria à haute voix : « Grand est le Dieu des chrétiens, » assaillit le gouverneur et démolit son siège; celui-ci * prit peur et s'enfuit dans son palais. * A fol. 288 r° b.

Le lendemain, il ordonna de jeter (le saint) dans une chaudière d'huile bouillante, mais l'ange du Seigneur refroidit l'ébullition de la chaudière, et le saint en sortit indemne. On lui trancha aussitôt la tête le 19 juin. De nombreux infidèles crurent au Christ et se firent baptiser.

Les compagnons de domesticité de Boniface n'avaient point de nouvelles et disaient : « Il a trouvé une maison de prostituées et y est rentré pour s'enivrer. » Ils se renseignèrent auprès des soldats et apprirent qu'il avait été martyrisé pour le Christ. Ils se rendirent dans l'arène du tribunal et trouvèrent parmi les cadavres son corps affreusement mutilé par les nombreuses tortures, et sa tête rejetée plus loin dans un autre endroit. Ils la prirent, la nettoyèrent et la mirent près du corps. Le saint, comme s'il était vivant, en voyant ses co-domestiques, leur sourit.

Եւ ետուն հինգ հարիւր դահեկան զօրապետին եւ առեալ զնշխարսն տարան յիջեւանս իւրեանց, եւ անուշ իւղօք եւ խնկօք եւ մաքուր կտաւօք պատեալ եդին ի փայտեայ տապանի : Եւ ելեալ ի Տարսոնէ գնացին ի Հռոմ :

Եւ յորժամ մերձեցան ի քաղաքն երեւեցաւ հրեշտակ Տեառն տիկնոջ նորա եւ ասէ . Ե՛լ ընդ առաջ եւ ընկա՛լ զծառայն քո եւ զեղբայրն մեր զԲոնիփատոս, քանզի վասն
* A fol. 288 v a. Քրիստոսի չարչարեցաւ եւ մեռաւ, եւ զմարմինն որպէս ինքն *յառաջագոյն ասաց բերեն քեզ նշխար : Եւ վաղվաղակի բազում ժողովրդովք եւ մոմեղինօք ելին ընդ առաջ, եւ գիրկս արկեալ համբուրեաց եւ սաղմոսիւք եւ օրհնութեամբ եդին ի տապանի յիսուն ասպարիսաւ հեռի ի քաղաքէն Հռոմայ : Եւ շինեաց մատուռն ի վերայ տապանին :

Եւ յետոյ յաւուրս քրիստոնէութեան տարան զնշխարսն ի քաղաքն, եւ շինեցին ի վերայ մեծ եւ փառաւոր եկեղեցի յանուն սրբոյն Բոնիփատոսի եւ բազում սքանչելագործութիւն լինին ի պատուական նշխարացն մինչեւ ցայսօր :

* B p. 262 b. [B * Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ թագաւորն Հայոց Օշին որ բազում ուղղութիւն արար յազգիս մերում :]

4 երեւեցաւ] ի տեսլեանն *add.* B || 11 փառաւոր] գեղեցիկ B || 12 մինչեւ ցայսօր *om.* B.

Ils donnèrent cinq cents écus au chef des soldats, et, ayant pris les restes, les transportèrent à leur hôtellerie, puis, après les avoir embaumés avec des parfums et de l'encens dans du linge propre, ils les déposèrent dans un cercueil de bois. Ils quittèrent Tarse et partirent pour Rome.

Lorsqu'ils furent arrivés près de la ville, l'ange du Seigneur apparut à la maîtresse (de Boniface) et lui dit : « Va au-devant et accueille ton domestique, notre frère Boniface, car il a subi des tortures pour le Christ et il est
* A fol. 288 v° a. mort; et ainsi qu'il t'avait dit * auparavant, on t'apporte son corps comme reliques. » Elle se rendit aussitôt avec une nombreuse foule portant des cierges et de l'encens au-devant (du saint), lui tendit les bras et l'embrassa; puis on l'inhuma avec des psalmodies et des bénédictions dans un tombeau éloigné de cinquante lieues de la ville de Rome. Elle fit élever un oratoire sur le tombeau.

Plus tard, aux jours du christianisme, on transporta ces reliques dans la ville; on construisit sur elles une grande et magnifique église au nom de saint Boniface et jusqu'aujourd'hui de nombreux prodiges ont lieu par ces vénérables reliques.

* B p. 262 b. [B * En ce jour reposa dans le Christ le pieux roi d'Arménie Ochin, qui accomplit beaucoup de réformes dans notre nation.]

Մարգաց ԺԴ եւ Յունիսի Ի ։ Վկայութիւն երից եղբարցն Մանուէլի, Սաբէլի, Իսմայէլի ։

Այս երեք բարեկամքս Քրիստոսի էին ի Պարսիկս, եղբարք ի միոջէ հօրէ եւ ի մօրէ, երիտասարդք եւ գեղեցիկ տեսլեամբ ։ Հայրն իւրեանց էր պարսիկ մոգպետ, եւ մայրն բարեպաշտ քրիստոնեայ, եւ սնոյց զորդիսն իւր քրիստոնէական հաւատով ։

Եւ յետ մահուան ծնողացն առ զնոսա Բաղտան Պարսից արքայն առ ինքն, եւ յոյժ ընդունէր եւ սիրէր զնոսա, եւ առաջի աչաց իւրոց կացուցանէր, եւ վասն բազում սիրոյն ամենեւին ոչ նեղէր * զնոսա թողուլ զքրիստոնէական հաւատն. եւ նոքա խաղաղութեամբ ծառայէին Քրիստոսի ։ * A fol. 288 v° b.

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ թագաւորեաց Հոռոմոց Յուլիանոս որ յառաջ քրիստոնեայ էր բարեպաշտ, եւ յորժամ թագաւորեաց եղեւ յանցող պատուիրանացն Աստուծոյ եւ ուրացաւ զՔրիստոս, եւ նորոգեաց զկործանեալ տաճարս կռոցն եւ կանգնեաց զբագինսն եւ հալածէր զքրիստոնեայսն ։ Առաքեաց դեսպանս վասն սիրոյ եւ խաղաղութեան առ Բաղտան արքայն Պարսից. եւ նա դարձեալ առաքեաց հրովարտակօք դեսպանս առ Յուլիանոս զայս երեսին եղբարքս զՄանուէլ, զՍաբէլ եւ զԻսմայէլ, զորս ընկալաւ Յուլիանոս մեծաւ խնդութեամբ եւ հանապազ առաջի աչաց իւրոց կացուցանէր զնոսա ։

4 սնոյց] եւ ուսոյց *add.* B || 7 նեղէր] նեղեաց B || 9 այնոսիկ] Աստուծոյ ներողութեամբն *add.* B || 10 բարեպաշտ *om.* B || 11 զկործանեալ *om.* B.

14 MARGATS, 20 Juin.

Martyre de trois frères Manuel, Sabel, Ismaël.

Ces trois amis du Christ vivaient en Perse, ils étaient frères d'un même père et d'une même mère, jeunes et de bel aspect. Leur père était un chef de mages persan, leur mère une chrétienne pieuse, qui éleva ses enfants dans la foi chrétienne.

Après la mort de leurs parents, Baltan, roi de Perse, les prit chez lui; il les recevait souvent, les aimait, les retenait en sa présence, et comme il les aimait beaucoup, il ne les * pressa jamais d'abandonner la foi chrétienne; aussi servaient-ils le Christ en paix. * A fol. 288 v° b.

A cette époque vint à régner sur les Grecs Julien, qui était auparavant un pieux chrétien, mais qui, lorsqu'il régna, devint le transgresseur des commandements de Dieu et renia le Christ; il fit reconstruire les temples ruinés des idoles, fit élever des autels et persécuta les chrétiens. Il envoya des ambassadeurs d'amitié et de paix à Baltan, roi de Perse, qui envoya, en échange, à Julien, comme ambassadeurs, avec des traités, ces trois frères Manuel, Sabel et Ismaël, que Julien reçut avec grande joie, les retenant tous les jours en sa présence.

Եւ յաւուր միում գնաց Յուլիանոս ի Քաղկեդոն, եւ ի տաճար կռոցն զոր անուանէին Տրիգոնա զոհս մատուցանէր. եւ տեսեալ երից եղբարցն կացեալ արտաքոյ դրան տաճարին բախէին զկուրծս իւրեանց եւ աշխարհէին զմոլորութիւն կռապաշտիցն ։ Եւ լուաւ Յուլիանոս եթէ քրիստոնեայք են կոչեաց առաջի իւր եւ եհարց. եւ նոքա խոստովանեցան ճշմարտութեամբ զանունն Քրիստոսի եւ զհաւատ. եւ նա առաքեաց զնոսա ի բանդ ։

* A fol. 289 r° a

Եւ ի միւսում աւուրն եհան ի բանդէն եւ տանջեաց ուժգին. * ծակեցին եւ զպըճղունս ոտից նոցա. եւ հրեշտակ Տեառն փարատեաց զցաւն ։ Դարձեալ այրեցին հրով զանթս նոցա ։ Եւ որոշեաց զՄանուէլ յեղբարցն, եւ կոչեաց առաջի իւր առանձինն, խոստանայր պարգեւս եւ պատիւս եթէ արասցէ զկամս նորա, ապա թէ ոչ չարաչար մահուամբ սպանցէ զնոսա ։

Ասէ սուրբն Մանուէլ. Ոչ ունիս իշխանութիւն ի վերայ մեր, եւ ոչ երկնչիմք ի քէն, զի ոչ եմք քո. դեսպան առաքեցաք առ քեզ վասն սիրոյ եւ խաղաղութեան, եւ ոչ վասն հաւատոց ։ Մեր թագաւորն Բաղտան պատուեաց զմեզ, որ եւ իշխանութիւն ունէր ի վերայ մեր ոչ նեղեաց զմեզ վասն հաւատոյս մերոյ, եւ դու կամիս դարձուցանել զմեզ ի դիւական կուռս քո ։ Տո՛ւր մեզ թղթոյն պատասխանի եւ գնասցուք առ առաքիչն մեր ։

8 եւ հրեշտակ . . . զցաւն *om.* B || 10 խոստանայր] խոստացաւ B.

Un jour, Julien, s'étant rendu à Chalcédoine, immola des victimes dans le temple des idoles appelé Trigon (*Trigona*). A cette vue, les trois frères, restés au dehors à la porte du temple, se frappèrent la poitrine et se lamentèrent de l'erreur des idolâtres. Julien, ayant appris qu'ils étaient chrétiens, les fit venir en sa présence et les interrogea. Ils confessèrent en toute vérité le nom du Christ et (leur) religion. Il les envoya en prison.

Le lendemain, il les fit sortir de la prison et les fit torturer brutalement;

* A fol. 289 r° a.

* on leur troua les chevilles des pieds, mais l'ange du Seigneur fit disparaître les douleurs. On leur brûla ensuite les aisselles. Il fit séparer Manuel de ses frères, le fit venir seul devant lui, lui promit de l'argent et des dignités s'il accomplissait sa volonté, dans le cas contraire, il les ferait mourir d'une mort cruelle.

Saint Manuel lui répondit : « Tu n'as pas d'autorité sur nous; nous ne te craignons point, car nous ne sommes point des tiens; nous avons été envoyés auprès de toi comme ambassadeurs d'amitié et de paix, et non point pour la religion. Notre roi Baltan nous a tenus en honneur et, lui qui avait de l'autorité sur nous, ne nous a point inquiétés pour notre foi; et toi, tu veux nous convertir à tes idoles diaboliques! Donne-nous la réponse à notre lettre et nous retournons à celui qui nous a envoyés. »

Եւ բարկացեալ սրտմտութեամբ ընդ բանս նորա, հրամայեաց եւ հարին երեք բեւեռս, մի ի գլուխն եւ երկու ի յերկու թիկունսն, եւ սրեալ եղեգամբ խոցոտէին զանձն : Եւ ապա տարան զերեսեանն ի Կոստանդինուպօլիս եւ ի դուռն Թիրակայ, որ կոչի Պռեմնոյ, հատին զգլուխս նոցա Յունիսի Ի : Ձայն եղեւ առ նոսա յերկնից եւ ասէ. Բարի նահատակք իմ, եկայք ի պատրաստեալ ձեզ արքայութիւն : Կամեցան եւ զմարմինս նոցա այրել, պատառեցաւ * երկիր եւ թաքոյց զմարմինս նոցա եւ ոչ գտին : Եւ յետ երկուց աւուրց երեւեցան քրիստոնէից, եւ երթեալ գաղտնի թաղեցին զնոսա ի նշանաւոր տեղի : * A fol. 289 r° b.

Եւ լուեալ Պարսից արքային Բաղտան եթէ Յուլիանոս զսիրեցեալ ծառայսն իւր եսպան դառն տանջանօք յոյժ տրտմեցաւ, եւ շարժեցաւ ի պատերազմ ընդդէմ Հոռոմոց, եւ ամենայն քրիստոնեայք փախեան, եւ անօրէն Յուլիանոսն չարախոց լեալ ի պատերազմին հրամանաւն Աստուծոյ, եւ մշտադին ցաւօք աւանդեաց զպիղծ հոգին ի ձեռս հօր իւրոյ սատանայի :

1 բարկացեալ] բարկացաւ B — սրտմտութեամբ] մեծաւ *add.* B — նորա] արքային Մանուէլի B || 4 նոցա] Մարգաց ԺԴ եւ *add.* B || 4-6 Ձայն ... արքայութիւն *om.* B || 6 պատառեցաւ ... ոչ գտին] բայց քրիստոնեայք գաղտնի բարձին B || 7 երեւեցան ... գաղտնի] տարեալ B || 10 Հոռոմոց] եւ եկեալ Յուլիանոս ընդդէմ նոցա գնաց ի Պարսիկս, եւ եղեւ փախուստ Հոռոմոց *add.* B || 11 չարախոց լեալ] չարաչար խոցեալ B || 13 հօր իւրոյ *om.* B.

(Julien), fort irrité de ses paroles, ordonna de lui enfoncer trois clous, l'un dans la tête et les deux autres dans les deux épaules; puis on lui piqua le corps avec des roseaux taillés en pointe. Ensuite on les conduisit tous trois à Constantinople, et à la porte de Thrace (*Thirakay*), appelée Premno [1], on leur trancha la tête le 20 juin. Une voix du ciel se fit entendre à eux qui disait : « Mes bons martyrs, venez au royaume qui vous est préparé. » On voulut aussi brûler leur corps, mais la terre * s'entr'ouvrit et cacha leur corps, et on ne les trouva point. Deux jours après ils apparurent à des chrétiens, qui allèrent secrètement les inhumer dans un endroit choisi. * A fol. 289 r° b.

Le roi de Perse Baltan, ayant appris que Julien avait tué dans de cruelles tortures ses serviteurs, qui lui étaient chers, en fut fort attristé et partit en guerre contre les Grecs; tous les chrétiens prirent la fuite et l'impie Julien, atteint d'une blessure mortelle pendant le combat et par ordre de Dieu, rendit son âme immonde entre les mains de son père Satan dans d'atroces souffrances.

1. *Syn. Cp.* : ἐν τόπῳ χρεμνώδει « dans un endroit abrupt ».

Մարգաց ԺԵ եւ Յունիսի ԻԱ ։ Վկայաբանութիւն սրբոյն Յուլիանոսի Եգիպտացւոյն ։

Վկայն Քրիստոսի Յուլիանոս էր ի քաղաքէն Անդինու Եգիպտացւոց, յաւուրս կռապաշտ թագաւորացն Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի ։ Եւ շինեաց բնակարան վանս յորում ապաւինեալ էին տասն հազար անձն ։

Եւ կալեալ կռապաշտիցն զՅուլիանոս տարան առ դատաւորն Մարկիանոս, եւ խոստովանեցաւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ զհրամանս դատաւորին արհամարհեաց ։ Եւ նա բարկութեամբ մոլեգնեալ եւ առաքեաց զօրականս եւ այրեաց զվանսն հրով
* A fol. 289 v° a. * բնակչօքն հանդերձ որ բնակեալ էին անդ եպիսկոպոսք, քահանայք կրօնաւորք եւ բազում աշխարհականք ։ Եւ շնորհք յԱստուծոյ տուեալ տեղեացն այնմիկ մինչեւ ցայսօր, եւ ամենեքեան որ ընդ այն անցանեն լսեն ձայն պաշտաման յամբոխէ, եւ հիւանդք որ լսեն զսաղմոսերգութիւնն ողջանան ։

Եւ զսուրբն Յուլիանոս ջանաց դատաւորն բազում ողոքանօք դարձուցանել ի կուռս եւ ոչ կարաց ։ Հրամայեաց եւ տարածեցին զնա եւ երկաթի կապանօք կապեցին, եւ այնչափ գան հարին մինչեւ ամենայն մարմինն քանդեալ ոսկերքն փշրեցան ։ Եւ մի ոմն ի հարկանողացն կուրացաւ յաչացն, եւ սուրբ վկայն խոստացաւ նմա զի աղօթիւք

8 եպիսկոպոսք] եւ քահանայք *add.* B || 9-11 Եւ շնորհք . . . ողջանան *om.* B || 12 Յուլիանոս] կալաւ *add.* || 13 երկաթի կապանօք] երկաթովք զմարմինն B || 14 այնչափ] յոյժ B — ամենայն . . . փշրեցան] խորտակիլ ոսկերաց նորա B || 14 — p. 1643, l. 8 Եւ մի ոմն . . . զգլուխ նորա *om.* B.

15 MARGATS, **21 Juin.**

Passion de saint Julien l'Égyptien.

Le martyr du Christ Julien était de la ville d'Antinoé (*Andinou*)[1] d'Égypte, aux jours des empereurs impies Dioclétien et Maximien. Il fit construire les bâtiments d'un couvent, où étaient abritées dix mille personnes.

Les idolâtres, ayant saisi Julien, le conduisirent au juge Marcien; il confessa Notre-Seigneur Jésus-Christ et méprisa les ordres du juge. Celui-ci,
A fol. 289 v° a. devenu furieux de colère, envoya des soldats livrer le couvent * aux flammes avec tous ceux qui y habitaient, évêques, prêtres, moines et nombreux laïcs. Les grâces de Dieu furent accordées à cet endroit jusqu'aujourd'hui et tous ceux qui passent par là entendent les voix des offices (chantés) par une multitude et les malades qui entendent ces psalmodies trouvent leur guérison.

Le juge essaya avec beaucoup de supplications de convertir saint Julien aux idoles, mais il n'y parvint pas. Il ordonna alors de l'étendre à terre et de l'attacher avec des chaînes de fer; on le frappa à tel point que tout son corps fut disloqué et ses os brisés. Un de ceux qui le frappaient perdit la lumière

1. Αντινόου πόλις.

լուսաւորեսցէ զաչսն ։ Իսկ Մարկիանոս դատաւորն հրամայեաց քրմացն կռոցն զի ողջացուսցեն զկոյրն. եւ մտեալ ի տաճար կռոցն մատուցին զպիղծ զոհս իւրեանց ։ Եւ խօսեցան ընդ նոսա դեւքն որ բնակեալ էին ի բագինսն եւ ասեն. Ի բաց թողէք զՅուլիանոս զի որչափ եւ դուք զնա տանջէք մեք եօթնպատիկ չարչարիմք ։ Զոր լուեալ Մարկիանոսի բարկացաւ, եւ հրամայեաց մէզ արկանել ի վերայ սրբոյն որպէս ի վերայ կախարդի, եւ հոտ մէզին ի բալասանի անուշահոտութիւն դարձաւ ։ Եւ եդ * զձեռն ի վերայ կուրացեալ աչացն եւ ողջացոյց աղօթիւք ։ Եւ նա հաւատաց ի Քրիստոս, եւ հատին զգլուխ նորա ։ * A fol. 289 v° b.

Եւ մինչդեռ կապեալ կայր սուրբն Յուլիանոս, տեսանէ որդին Մարկիանոսի դատաւորին Կեղսիոս տեսիլս արս սպիտակազգեստս թեւաւորս որ խօսէին ընդ սրբոյն, եւ եդին ի գլուխ նորա ոսկի պսակ յականց պատուականաց, եւ հովանի լինէր նմա ։ Եւ առժամայն մանուկն Կեղսիոս հաւատաց ի Քրիստոս, եւ մկրտեցաւ եւ էր հանապազ ընդ սրբոյն. հաւատացին ի Քրիստոս եւ այլ զօրականք ։

Եւ մեռեալ մի հրամանաւ դատաւորին յարոյց սուրբն ի մեռելոց ։ Եւ այլ մի ումն ի զօրականացն կամեցաւ որոշել զԿեղսիոս ի սրբոյն Յուլիանոսէ, եւ նեխեցան ձեռքն ։ Տարան զՔրիստոսի վկայն եւ զԿեղսիոս ի խաւարային եւ ի ժահահոտ բանդ եւ սա-

13 հաւատացին . . . զօրականք] եւ ոչ կարէին որոշել ի նմանէ B || 14-15 Եւ մեռեալ . . . ձեռքն *om.* B || 16 առժամայն *om.* B.

des yeux, mais le saint martyr lui promit de guérir ses yeux par ses prières. Alors le juge Marcien ordonna aux prêtres des idoles de guérir l'aveugle ; ceux-ci entrèrent dans le temple des idoles et leur offrirent leurs immondes victimes. Les démons qui habitaient les autels leur parlèrent et dirent : « Laissez tranquille Julien, car quand vous le faites souffrir nous sommes soumis à sept fois plus de souffrances. » L'ayant appris, Marcien fut pris de colère et ordonna de répandre de l'urine sur le saint comme sur un sorcier, mais l'odeur de l'urine se changea en une suave odeur de baume. (Julien) * posa sa main sur les yeux aveuglés et il les guérit par ses prières. (L'aveuglé guéri) crut au Christ et on lui trancha la tête. * A fol. 289 v° b.

Pendant que saint Julien était dans les liens, le fils du juge Marcien, Celse, eut une vision : il vit des hommes vêtus de blanc, ailés, qui s'entretenaient avec le saint, et lui posaient sur la tête une couronne d'or sertie de pierres précieuses, qui l'abritait. Le jeune Celse crut aussitôt au Christ, fut baptisé et demeura tous les jours avec le saint; d'autres soldats aussi crurent au Christ.

Le saint ressuscita encore, sur l'ordre du juge, un mort. Un certain soldat voulut séparer Celse de saint Julien ; mais ses mains se putréfièrent. On emmena le martyr du Christ et Celse dans une prison obscure et d'odeur

ժամայն լոյս եղեւ եւ անուշահոտութիւն ի բանդին. եւ տեսեալ զայն քսան այր ի բանդապանացն հաւատացին ի Քրիստոս :

Եւ նախարար քաղաքին այնմիկ որ էր քրիստոնեայ եօթն որդւովքն, եւ էին սիրեցեալք յոյժ ի Դիոկղետիանոսէ արքայէ, եւ վասն զի ազգակիցք նորա էին թոյլ ետ նոցա պաշտել զհաւատս իւրեանց համարձակութեամբ : Եւ նոքա ունէին առ ինքեանս քահանայ ոմն զԱնտոնիոս. եւ հրեշտակ Տեառն պատուիրեաց նոցա երթալ ի բանդն.
* A fol. 290 r° a. եւ յորժամ գնացին գտին զդուռն բանդի * բացեալ, մտին ի ներքս եւ քահանայն մկրտեաց զքսան արսն :

Եւ ի միւս այլ աւուրն հանին զՅուլիանոս ի բանդէն եւ զԿեղսիոս եւ զքահանայն եւ զքսան արսն, եւ տարան արկին յեռացեալ կաթսայս ձիթոյ : Եւ հանդիպեցան ի ճանապարհին մեռելոյ զոր տանէին ի թաղել : Եւ հրամայեաց դատաւորն Յուլիանոսի կենդանացուցանել զմեռեալն, եւ նա աղօթիւք յարոյց : Եւ յորժամ կանգնեցաւ մեռեալն աղաղակեաց մեծաձայն գոհանալով զԱստուծոյ, եւ ասէ ցսուրբն Յուլիանոս. Ողորմեաց ինձ եւ մկրտեա զիս, եւ հաւատամ ի Քրիստոս, զի մի երթայց դարձեալ յայն տեղի տանջանացն : Եւ մկրտեաց զնա Անտոն քահանայն եւ անուանեաց զնա Անաստասիոս :

6-7 եւ հրեշտակ . . . մտին ի ներքս] եւ առեալ գնացին ի բանդն B || 9 զքահանայն] Անտոնիոս *add.* B || 10 — p. 1645, l. 11 եւ հանդիպեցան . . . ի բանդ] եւ մնացին կենդանի զօրութեամբն Քրիստոսի : Զայն տեսեալ Մարկիոնիլլա մայրն Կեղսիոսի հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ : Իսկ զքսան արսն որք հաւատացին ի Քրիստոս ի հուր մատնեցին, եւ նոքա այնպէս կատարեցան : Եւ ապա զսուրբն Յուլիանոս եւ զԿեղսիոս եւ զԱնտոն քահանայն արկին ի բանդ B.

infecte, mais il se fit aussitôt une clarté et une douce odeur se répandit dans la prison; à cette vue, vingt hommes d'entre les geôliers crurent au Christ.

Le gouverneur de la ville était un chrétien qui avait sept fils, très aimés de l'empereur Dioclétien; comme ils étaient de ses proches, il leur avait laissé la liberté d'exercer leur foi avec hardiesse; ceux-ci avaient avec eux un prêtre, un certain Antoine. L'ange du Seigneur leur ordonna d'aller à la prison, et
* A f° 290 r° a. lorsqu'ils s'y furent rendus, ils trouvèrent la porte de la prison * ouverte; ils y pénétrèrent et le prêtre baptisa les vingt hommes.

Le lendemain, on fit sortir de la prison Julien, Celse, le prêtre et les vingt hommes et on les emmena pour les jeter dans des chaudières d'huile bouillante. En route, ils rencontrèrent un mort qu'on emmenait enterrer. Le juge ordonna à Julien de ressusciter le mort, et il le ressuscita par ses prières. Lorsque le mort fut debout, il cria à haute voix en rendant grâces à Dieu et dit à saint Julien : « Aie pitié de moi et baptise-moi, car je crois au Christ, pour que je ne retourne plus en ce lieu de tourments. » Le prêtre Antoine le baptisa et le nomma Anastase (*Anastasios*).

Եւ զյարուցեալն ի մեռելոց եւ զքսան արսն, եւ զՅուլիանոս եւ զԿեղսոս արկին յեռացեալ կաթսայս, եւ այնչափ այրեցան կաթսայքն մինչեւ այրեցաւ ձիւթն եւ փայտն, եւ սուրբքն ելին ամբողջք եւ ամենեւին ոչ այրեցան :

Եւ Կեղսոս դարձոյց զմայրն իւր ի քրիստոնէութիւն եւ ընկալաւ յաւազանէն, եւ եղեւ մօրն հայր հոգեւոր : Եւ ձայն յերկնից զօրացոյց զնա եւ զքսան արսն : Եւ զԱնաստասիոս ի հուր մատնեցին զյարուցեալն ի մեռելոց :

Իսկ զսուրբն Յուլիանոս եւ զԱնտոն քահանայ տարան ի տաճար կռոցն զի զոհեսցեն : * Եւ նոքա ծունր եդեալ աղօթեցին առ Աստուած յերկար, եւ առժամայն ամենայն բագինքն կռոցն իբրեւ զաւազ փշրեցան, եւ տաճարն յանդունդս ընկղմեցաւ. եւ մինչեւ ցայսօր հուր երեւի ի տեղւոջն յայնմիկ : * A fol. 290 r° b.

Արկին զնոսա ի բանդ. եւ ի մէջ գիշերին երեւեցան նոցա քսան արքն եւ Անաստասիոս որ այրեցանն զարդարեալ փառօքն Աստուծոյ : Երեւեցաւ նոցա եւ սրբուհին Բասիլիսա ամենայն կուսանօքն որք յառաջ մարտիրոսացան ընդ նմա : Եւ լուան բարբառս հրեշտակաց որք ասէին. Ալէլուիա : Ասէ սրբուհին Բասիլիսա ցսուրբն Յուլիանոս. Երկնից արքայութիւնն բացաւ, եւ հրամայեաց երկնաւորն զի ամենայն

11 եւ Անաստասիոս *om.* B || 13-14 եւ լուան . . . ալէլուիա *om.* B.[1]

On jeta le ressuscité des morts, les vingt hommes, Julien et Celse dans des chaudières d'huile bouillante; les chaudières brûlèrent jusqu'à ce que la poix et le bois eurent pris feu, mais les saints en sortirent indemnes et ne furent nullement brûlés.

Celse convertit sa mère au christianisme, la reçut des fonts baptismaux et devint le père spirituel de sa mère. Une voix du ciel le fortifia ainsi que les vingt hommes. On livra aux flammes Anastase qui était ressuscité des morts.

Quant à saint Julien et au prêtre Antoine, on les conduisit au temple des idoles pour y immoler. * Ils se mirent à genoux et prièrent Dieu longuement; aussitôt tous les autels des idoles se brisèrent menus comme du sable, le temple fut englouti dans l'abîme et jusqu'aujourd'hui des flammes paraissent à cet endroit-là. * A fol. 290 r° b.

On jeta (les saints) en prison; la nuit, les vingt hommes et Anastase qui avaient été livrés aux flammes leur apparurent ornés de la gloire de Dieu. Leur apparurent également sainte Basilissa avec toutes les vierges qui avaient été martyrisées avec elle auparavant. Ils entendirent des voix des anges qui disaient : « Alléluia. » Sainte Basilissa dit à saint Julien : « Le royaume des cieux est ouvert et le Céleste a ordonné que tous les saints vien-

սուրբք ընդ առաջ եկեսցեն ձեզ յաւուր կատարման ձերոյ ։ Եւ դարձեալ լուան․ Ալէլուիա երիցս անգամ, եւ սուրբքն անյայտ եղեն ։

Հրամայեաց դատաւորն պրտուս թանալ ի ձէթ եւ կապել զսրբոցն մատունսն ձեռաց եւ ոտիցն, եւ վառեցին հրով․ եւ պրտունն այրեցաւ եւ մատունք սրբոցն ոչ այրեցան ։ Բերթեցին զգլուխն Յուլիանոսի եւ Կեղսոսի․ իսկ զքահանային Անտոնի հանին զաչսն, եւ զմայրն Կեղսոսի ձեռակտուր արարին եւ ընկեցին առաջի գազանաց, եւ երթեալ լիզուին զոտս նոցա ։ Եւ ապա հատին զգլուխս նոցա Յունիսի ԻԱ ։

* A fol. 290 v° a. Գլխատեցին եւ այլ * չարագործս եւ խառնեցին զմարմինս նոցա ընդ սրբոցն զի մի կարասցեն քրիստոնեայքն ճանաչել եւ առնուլ ։ Եւ յորժամ գնացին քրիստոնեայք ի տեղին ծունր եդեալ աղաչեցին զԱստուած զի յայտնեսցէ նոցա զսուրբսն․ եւ երեւեցան հոգիք սրբոցն որպէս կոյս կանայք ի վերայ իւրաքանչիւր մարմնոյ իւրոյ եւ թաւալեալք արեամբ ։ Եւ այնպէս ծանեան, եւ առեալ եդին մերձ ի խորանն կաթողիկէ եկեղեցւոյն ։ Եւ բղխեցին աղբիւրք ի տեղւոջ նշխարացն ։ Եւ եղեւ շարժ մեծ ի քաղաքին յայնմիկ եւ կործանեցաւ յոլով քան զկէս քաղաքին, եւ կորեաւ դատաւորն եւ բազումք ի

1 դարձեալ լուան] լուան բարբառ հրեշտակաց որք ասէին B || 2 եւ սուրբքն . . . եղեն] եւ զարթուցեալ զօրացան, եւ ուրախութեամբ փառաւոր առնէին զԱստուած B || 3 թանալ] թացին B — կապել] կապեցին B || 4 եւ պրտունն . . . այրեցան] եւ խանձոտեցին զմատունս նոցա B || 6 եւ ընկեցին . . . զոտս նոցա *om.* B || 7 նոցա] Մարգաց ժե եւ *add.* B || 8 այլ] զայլ բազում B || 10 եւ երեւեցան . . . ծանեան] եւ յայտնեաց նոցա Աստուած ցուցեալ նշան ի վերայ իւրաքանչիւր մարմնոյ սուրբ վկայիցն B || 13 եւ բղխեցին . . . նշխարացն] յորոց բազում նշանք բժշկութեան լինին յախտաժէտս եւ ի դիւահարս ի փառս Քրիստոսի B — յայնմիկ *om.* B || 14 քան զկէս] տեղիք B.

nent au-devant de vous le jour de votre martyre. » Ils entendirent de nouveau « Alléluia » par trois fois et les saints disparurent.

Le juge ordonna de tremper des joncs dans de l'huile, d'en attacher aux doigts des mains et des pieds des saints, puis d'y mettre le feu; les joncs brûlèrent, mais les doigts des saints ne brûlèrent point. On déchira la tête de Julien et de Celse, on creva les yeux au prêtre Antoine, on coupa le bout des doigts à la mère de Celse; puis on les jeta au-devant des fauves, mais ceux-ci s'approchèrent et léchèrent leurs pieds. Enfin, on leur trancha la tête le 21 juin.

* A fol. 290 v° a. On trancha la tête aussi à d'autres * malfaiteurs et on mêla leurs corps avec ceux des saints, pour que les chrétiens ne pussent les reconnaître et les prendre. Lorsque les chrétiens se furent rendus à l'endroit, ils prièrent Dieu de leur révéler les saints, et les âmes des saints leur apparurent comme des femmes vierges, chacune sur son corps et inondées de sang. Ils les reconnurent de cette façon, les enlevèrent et les déposèrent dans le chœur de l'église métropolitaine. Des sources jaillirent à l'endroit des reliques. Il y eut un grand tremblement de terre dans cette ville-là, plus de la moitié de la ville

կռապաշտից ։ Եւ աղբիւրն որ բղխեաց երթայ եւ մտանէ յաւազանն եւ ամենայն հիւանդք որ լուանան յաւազանն բժշկին, կոյրք լուսաւորին, դեւք հալածին, խուլք լսեն, համերք խօսին ։

Մարգաց ԺԶ եւ Յունիսի ԻԲ ։ Վկայաբանութիւն սրբոյն Զօսիմոսի ։

Քրիստոսի վկայն Զօսիմոս զօրական էր Տրայանոսի կռապաշտ արքային յԱպոլինադոյ քաղաքն, ի դատաւորութեանն Դոմետիանոսի ։ Եւ ի միում աւուր ամենայն զմտաւ ծանեաւ զնոտի պաշտամունսն կռապաշտից, ընկէց զզէնս իւր եւ * հաւատաց ի Քրիստոս, գնաց յեկեղեցին եւ մկրտեցաւ ։ * A fol. 290 v° b.

Եւ յորժամ լուաւ դատաւորն կոչեաց զնա առաջի իւր, եւ եհարց երկիցս եւ երիցս անգամ. եւ նա խոստովանեցաւ զքրիստոնէութիւնն ։ Կախեցին զնա զփայտէ, եւ արջառաջլօք եւ բրօք հարին զմարմինն ուժգին ։ Եւ եղեւ առ նա ձայն յերկնից եւ ասէ. Զօրացիր Զօսիմէ զի ես ընդ քեզ եմ ։ Եւ բազումք յանհաւատից որք տեսին զժուժկալութիւն համբերութեանն եւ լուան զձայնն հաւատացին ի Քրիստոս ։ Եղին

1-3 Եւ աղբիւրն... խօսին] իսկ քրիստոնեայք որք կային անդ պահեցան անվնաս խնամօքն Աստուծոյ B || 4 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 7 ծանեաւ *om.* B || 9 զնա] յատենի *add.* B || 11 հարին] դանեցին, եւ քերեցին B — ուժգին] քերանօք B || 11-13 Եւ եղեւ... Քրիստոս *om.* B.

fut ruinée; le juge et de nombreux idolâtres périrent. La source qui jaillit va couler dans un bassin et tous les malades qui se baignent dans le bassin guérissent, les aveugles recouvrent la vue, les démons sont chassés, les sourds entendent, les muets parlent.

16 MARGATS, 22 Juin.

Passion de saint Zosime.

Le martyr du Christ Zosime était soldat de Trajan, l'empereur idolâtre, dans la ville d'Apollonias (*Apolinadoy*), aux jours du juge Domitien (*Dometianos*). Un jour, il réfléchit, reconnut la vanité du culte des idolâtres, jeta ses armes et * crut au Christ; il se rendit à l'église et fut baptisé. * A fol. 290 v° b.

Le juge, l'ayant appris, le fit venir en sa présence, l'interrogea deux et trois fois; mais il confessa son christianisme. On le suspendit à un arbre et on frappa brutalement son corps avec des nerfs de bœuf et des bâtons. Une voix du ciel se fit entendre à lui qui disait : « Prends courage, Zosime, car je suis avec toi. » De nombreux infidèles, témoins de la fermeté de sa patience et qui

զերանելին ի վերայ հրացեալ պղնձի մահճաց, եւ հրեշտակ Տեառն զհուրն ի ցօղ փոխեաց եւ զսուրբն յափշտակեաց ։

Ապա կապեցին զնա շղթայիւք եւ քարշելով տանէին առաջի դատաւորին, եւ զերիս աւուրս նօթի տարան զնա ի քաղաքն Կանէոտոն ։ Եւ երեւեցան առաջի նորա երկու մանկունք, մին ունէր հաց եւ միւսն ամանով ջուր. առեալ եկեր եւ արբ եւ գոհացաւ զԱստուծոյ ։

Եւ դարձեալ կախեցին եւ գանիւք մաշեցին զանձն, եւ ջամբարօք այրեցին զկողն, եւ տարան ի հատանել զգլուխն ։ Եւ նա աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Նայեաց յիս Քրիստոս ի մեղաւորս, եւ ընկա՛լ զոգիս իմ ընդ ընտրելոցն քոց, քանզի դու ես պարծանք իմ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ։ Եւ այնպէս հատին զգլուխ նորա ։ Եւ

* A fol. 291 r° a. եդին հաւատացեալքն * զմարմին սրբոյ վկային Զոսիմոսի յարժանաւոր տեղի ։

* B p. 265 b. [B * Յայսմ աւուր յիշատակ է բարեպաշտ թագաւորին Յունաց Կիր Մանուէլի Կոմնենոսի ։

Երանելի թագաւորս քրիստոսասէր խորհրդով փոյթ մեծ կալաւ բառնալ զկրճիմն խռովութեան որ կայր ի մէջ Հայոց եւ Յունաց, եւ հաստատել զսէր եւ զմիաբա-

1 եւ հրեշտակ... յափշտակեաց] եւ խանձատեցաւ ամենայն մարմին նորա B || 4 նօթի] անօթի B — Կանէոտոն] Կանեոտն B — Եւ երեւեցան... ջուր] Ուր երկու մանկունք խնամօքն Աստուծոյ ածին նմա հաց եւ ջուր B || 6 զԱստուծոյ ։] Եւ տեսեալ զհաստատութիւն մտաց նորա ի հաւատս Քրիստոսի *add.* B || 10 նորա] Մարգաց ԺԶ եւ Յունիսի ԻԲ *add.* B.

avaient entendu la voix, crurent au Christ. On étendit le bienheureux sur un lit d'airain enflammé, mais l'ange du Seigneur changea les flammes en rosée et enleva le saint.

On l'attacha ensuite avec des chaînes et on le traîna devant le juge, puis on le conduisit trois jours durant, sans manger, à la ville de Kanéoton [1]. Deux enfants apparurent au-devant d'eux, dont l'un portait du pain et l'autre de l'eau dans un vase; (Zosime) le prit, mangea, but. et rendit grâces à Dieu.

On le suspendit de nouveau et on déchira son corps en le frappant, on lui brûla les plaies avec des torches, puis on l'emmena pour lui trancher la tête. Il pria Dieu et dit : « Jette ton regard, Christ, sur moi, pécheur, et reçois mon âme parmi Tes élus, car Tu es ma gloire maintenant et toujours et éternelle-

* A fol. 291 r° a. ment. » C'est ainsi qu'on lui trancha la tête. Les fidèles déposèrent * le corps du saint martyr Zosime dans un endroit digne de lui.

* B p. 265 b. [B * En ce jour commémoration du pieux empereur des Grecs Kyr Manuel Comnène.

Ce bienheureux empereur, dans un sentiment d'amour envers le Christ, mit un grand zèle à détruire le ferment de discorde qui existait entre Arméniens et Grecs, et à établir l'amour et la concorde entre eux. Pendant que les

1. Κανεοτῶν est la forme des manuscrits D B du *Syn. Cp.*, col. 757 ; mais les éditeurs ont préféré Κονανέων, cf. *Acta SS.* Iun., t. III, p. 816.

նութիւն ։ Եւ մինչդեռ պատգամաւորքն երթային եւ գային եհաս վախճան սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսէսի Շնորհալւոյ ։

Զոր լուեալ երանելի թագաւորն սուգ մեծ էառ եւ ասէ. Մեծ զգայարան եւ արթուն հովիւ բարձաւ այսօր յեկեղեցւոյն Աստուծոյ. զրկեցան Հայաստանեայք յերկրորդ Լուսաւորչէն իւրեանց ։ Եւ ապա պատուէր ետ յամենայն եկեղեցիս Յունաց յիշատակել զնա ընդ առաջին սուրբսն ։

Եւ յաջորդեաց զաթոռն հայրապետական տէր Գրիգոր Տղայ կոչեցեալ որդի մեծի իշխանին Վասլի ։ Զորմէ լուեալ թագաւորին եթէ եղբօր որդի է տեառն Ներսէսի, եւ իմաստութեամբն եւ ուղղափառութեամբն եւ բարի վարուքն յար եւ նման նմին, հաստատեաց առ նա զսէր որպէս առ սուրբ հայրապետն Ներսէս ։ Եւ արար ժողով մետրապօլտաց ի քաղաքն Կոստանդնուպօլիս սիրոյ եւ խաղաղութեան ։ Սոյնպէս եւ տէր Գրիգոր կաթողիկոս գրեաց առ եպիսկոպոսունս արեւելից, եւ * էառ զհաւանութիւն ի նոցանէ վասն միաբանութեան ընդ Յունաց ։ * B p. 266 a.

Այլ աստուածասէր թագաւորն մինչեւ ընկալեալ էր զպատասխանի ի ժողովոյն Հայոց անկաւ ի մահճս մահու. եւ ութ աւուրբք յառաջ քան զվախճան իւր կոչեաց զԹէոդորոս պատրիարքն եւ զայլ եպիսկոպոսունսն, եւ զգեցաւ զձեւ միանձնեցի եւ զքեն կրօնաւորութեան, եւ ասէ. Ուրախ եմ այժմ յայս սուրբ պատկս Քրիստոսի

ambassadeurs allaient et venaient, survint la mort de notre saint patriarche Ter Nersès Schnorhali.

A cette nouvelle, le bienheureux empereur prit un grand deuil et dit : « Un grand sens et un pasteur vigilant sont enlevés aujourd'hui à l'église de Dieu. Les Arméniens se trouvent privés de leur deuxième Illuminateur. » Il ordonna ensuite à toutes les églises grecques de le commémorer avec les anciens saints.

Sur le siège patriarcal succéda Ter Grigor, surnommé Tghay [1], fils du grand prince Basile (*Vasil*). L'empereur en apprenant qu'il était le neveu de Ter Nersès, son égal par la sagesse, l'orthodoxie et les bonnes mœurs, lui accorda son affection comme il l'avait fait au saint patriarche Nersès. Il fit convoquer un concile des métropolites dans la ville de Constantinople, pour établir l'amitié et la paix. De même le catholicos, Ter Grigor, écrivit aux évêques de l'Orient et * obtint d'eux leur consentement pour l'union avec les Grecs. * B p. 266 a.

Cependant l'empereur, ami de Dieu, avant d'avoir reçu la réponse du concile des Arméniens, tomba au lit mortellement malade et huit jours avant sa mort il appela le patriarche Théodore et d'autres évêques, prit l'habit de moine et le manteau de religieux et dit : « Je suis plus heureux maintenant

1. « L'enfant. »

խոնարհութեանս քան յորժամ պատուական քարամբք պսակեալ նստայ յինքնակալութեան աթոռս :

Եւ ետ բառնալ զինքն յանկողնոյն եւ դնել ի փսիաթի ըստ օրինակի ճգնաւորաց. եւ գոհացեալ զԱստուծոյ ասէ. Ահա հանգիստ որոյ պտուղն խնդութիւն է. արդ ի բաց գնացէք յինէն որ պաճուճեալդ էք ոսկեթել պատմուճանօք, եւ շուրջ կացցեն կրօնաւորակից եղբարք իմ երգով սաղմոսաց : Եւ ի նուագել նոցա սաղմոս արտասուօք լուանայր զմահիճս իւր : Եւ այնպէս կացեալ աւուրս եօթն, եւ հաղորդեալ կենարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, փոխեցաւ առ Աստուած յանանց թագաւորութիւնն ի թուին Հայոց վեց հարիւր քսան եւ ինն :

Եւ բարձեալ կրօնաւորաց տարեալ թաղեցին ի վանքն որ կոչի Ամենակալ. եւ կարգեցաւ յիշատակ նորա յեկեղեցիս Հայոց ընդ բարեպաշտ թագաւորսն :]

Մարգաց ԺԷ եւ Յունիսի ԻԳ : Վկայութիւն Ղեւոնդեայ եւ երկու ընկերացն Հիպատոսի եւ Թէոդուլոսի :

Սուրբն Ղեւոնդիոս քաջ զօրեղ զօրականն էր ի քաղաքէն Տրապօլսայ Ափրիկեցոց,

12 Վկայութիւն] սուրբ եւ փառաւորեալ վկային *add.* B || 14 զօրեղ] եւ հզօր *add.* B || 15 Տրապօլսայ] Տրէպօլեայ B.

avec cette couronne d'humilité au Christ, que lorsque, couronné de pierres précieuses, je pris possession de mon siège impérial. »

Il demanda à être enlevé du lit et déposé sur une natte à l'exemple des ascètes et, rendant grâces à Dieu, il dit : « Voici le repos dont le fruit est la joie; or, retirez-vous tous, vous qui êtes habillés de vêtements d'or; que mes frères en religion seuls restent auprès de moi et chantent des psaumes. » Et pendant qu'ils entonnaient des psaumes, il inonda sa couchette de ses larmes. Il vécut ainsi sept jours et après avoir communié au corps vivifiant et au sang du Christ, il trépassa à Dieu dans le royaume qui ne passe point, l'an de l'ère arménienne six cent vingt-neuf.

Les moines l'enlevèrent et l'emportèrent pour être enterré au couvent dit du Tout-Puissant [1], et sa commémoration fut établie dans les églises d'Arménie avec celle des rois pieux.]

17 MARGATS, 23 Juin.

Martyre de Léonce et de ses deux compagnons Hypatus et Théodule.

Saint Léonce, le vaillant et puissant soldat, était de la ville de Tripoli

1. Le monastère du Pantocrator avait été fondé par Jean Comnène, cf. Skarlatos D. BYZANTIOS, Ἡ Κωνσταντινούπολις.... t. I, Athènes, 1851, pp. 554-6.

ի ժամանակս Վեսպիանոսի կռապաշտ արքային եւ Ադրիանոսի դատաւորին, եւ ծառայէր Աստուծոյ մեծաւ հաւատով ։

Լուաւ դատն նորա դատաւորն Փիւնիկեցւոց, եւ առաքեաց զՀիպատոս զօրագլուխն եւ զԹէոդուլոս զօրականն զի գտցեն զնա եւ ածցեն առ նա ։ Եւ յորժամ գնացին ի քաղաքն կալաւ զՀիպատոս ջերմութիւն սաստիկ, եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն եւ ասէ. Եթէ կամիցիս ողջ լինել յորժամ ննջէ Թէոդուլոս զօրականդ, աղաղակեա երիցս անգամ. Աստուած սրբոյն Ղեւոնդեայ օգնեա ինձ ։ Եւ յորժամ աղաղակեաց զօրագլուխն լուաւ Թէոդուլոս ընդ քունն զձայնն, եւ երթեալ շրջէին եւ խնդրէին զնա ։ Հանդիպեցաւ նոցա սուրբն Ղեւոնդիոս, եւ տուեալ ողջոյն հարցանէին զնա եթէ. Ո՞ւր իցէ Ղեւոնդիոս սիրելին աստուածոց մերոց ։

Ասէ Ղեւոնդիոս. Դուք զի աշխատեալ էք, եկայք ի տուն իմ եւ հանգերուք, եւ ես ցուցից զնա ձեզ. զի նա աստուածոցն ձերոց ոչ է սիրելի, այլ ծառայ է Տեառն * Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ։ Եւ մինչդեռ ուտէին հարցին զանուն նորա ։ Եւ նա * A fol. 291 r° b.
ասէ. Ես եմ Ղեւոնդիոս հաւատարիմ զօրական եւ ծառայ Քրիստոսի ։ Եւ զահի հարան եւ ասեն. Ողորմեաց մեզ ծառայ Աստուծոյ բարձրելոյ, զի եւ մեք քրիստոնեայք եմք ։

5 եւ երեւեցաւ ... կամիցիս] եւ մինչդեռ ի տագնապի էր եւ ծփէր ի խորհուրդս տեսաւ նմա ի տեսլեան. Եթէ կամիս B || 6 յորժամ ... զօրականդ *om.* B || 7 ինձ] եւ զարթուցեալ գոչեաց երիցս, եւ առժամայն ողջացաւ *add.* B || 8 զձայնն] եւ զարթեաւ, յայնժամ երկոքին ի միասին Հիպատոս եւ Թէոդուլոս *add.* B || 13 Քրիստոսի ։] Եւ գնացին ընդ նմա, եւ եդ առաջի նոցա սեղան *add.* B || 14 հարան] հարեալ աղաղակեցին B || 15 զի] ահա *add.* B.

d'Afrique, aux jours de Vespasien l'empereur idolâtre et du juge Adrien. Il servait Dieu avec grande foi.

Le juge des Phéniciens, l'ayant appris, envoya l'officier Hypatus et le soldat Théodule pour le chercher et le lui amener. Lorsqu'ils furent arrivés à la ville, Hypatus fut pris d'une grande fièvre, et un ange du Seigneur lui apparut, qui disait : « Si tu veux guérir, tu crieras par trois fois, lorsque ton soldat Théodule sera endormi : Dieu de saint Léonce, aide-moi. » Lorsque l'officier cria, Théodule entendit la voix dans son sommeil ; puis, s'en étant allés, ils circulèrent et le cherchèrent. Saint Léonce les rencontra, ils se saluèrent mutuellement, et ils lui demandèrent : « Où est donc Léonce, l'aimé de nos dieux? »

Léonce répondit : « Puisque vous êtes fatigués, venez à ma maison et reposez-vous, et moi, je vous le montrerai. Seulement, il n'est point l'aimé de vos dieux, mais le serviteur du * Seigneur Dieu Jésus-Christ. » Pendant * A fol. 291 r° b.
le repas, ils lui demandèrent son nom. Il répondit : « Je suis Léonce, le soldat fidèle et le serviteur du Christ. » Ils furent saisis de crainte et lui dirent : « Aie pitié de nous, serviteur du Dieu très-haut, car nous aussi nous sommes

Եւ սուրբն Ղեւոնդիոս աղաչեաց զԱստուած վասն նոցա, եւ էջ ամպ ցօղագին, եւ լուսաւորեաց զնոսա, եւ զգեցոյց նոցա սպիտակ զգեստ, եւ ետ մոմեղէնս լուցեալս ի ձեռս իւրեանց ։

Եւ տեսեալ կռապաշտիցն զեկուցին վասն նոցա Ադրիանոսի դատաւորին, եւ նա արկ զնոսա ի բանդ ։ Եւ սուրբն Ղեւոնդիոս ուսուցանէր նոցա հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի եւ յօժարութեամբ մեռանել վասն անուան նորա ։

Եւ յորժամ կացուցին զնոսա յատենին հարցանէր զնոսա դատաւորն, եւ զպատասխանիսն տանէր սուրբն Ղեւոնդիոս ։ Եւ զան հարին զնոսա ուժգին հաստ գաւազանօք ։ Եւ պատուիրէր դատաւորն Հիւպատոսի եւ Թէոդուլոսի ի բաց կալ ի հաւատոցն Քրիստոսի, եւ նոքա խոստովանէին եթէ. Մեք զօրականք եմք եւ ծառայք Քրիստոսի մինչեւ ցմահ ։

Կախեցին զՀիւպատոսն եւ հարուածովք քերթեցին զանձն, եւ զԹէոդուլոս սրով ծեծեցին, եւ ապա հատին զգլուխս նոցա ։

Եւ զսուրբն Ղեւոնդիոս աղաչէր դատաւորն զի հաւանեսցի հրամանաց թագաւորին,
* A fol. 291 v° a. եւ նա ամենեւին ոչ լուաւ, եւ ոչ հաւանեցաւ *հրամանաց դատաւորին ։ Հրամայեաց եւ տարածեցին զնա ի վերայ երկրի եւ ձաղկեցին, եւ՝ ապա կախեցին եւ քերեցին զմարմինն, եւ կապեցին ծանր վէմ ի պարանոցն եւ արկին ի բանդ. եւ հրեշտակ Տեառն

1-2 եւ սուրբն . . . լուսաւորեաց զնոսա] եւ հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան B || 10 եմք] իցեմք B || 15 դատաւորին] թագաւորին B || 17 եւ հրեշտակ . . . պարձեալ] եւ յետ սակա-աւուրց հանեալ B.

chrétiens. » Saint Léonce pria Dieu pour eux et un nuage chargé de rosée descendit; (Léonce) les illumina, les vêtit d'habits blancs et leur mit des cierges allumés dans la main.

A cette vue, les idolâtres en avertirent le juge Adrien, qui les fit jeter en prison. Saint Léonce leur enseigna de demeurer fermes dans la foi du Christ et de mourir volontairement pour Son nom.

Lorsqu'ils eurent été amenés au tribunal, le juge les interrogea, mais c'est saint Léonce qui donnait les réponses. On les frappa brutalement avec des gourdins. Le juge engagea Hypatus et Théodule à renoncer à la foi au Christ, mais ils confessèrent : « Nous sommes soldats et serviteurs du Christ jusqu'à la mort. »

On suspendit Hypatus et à force de coups on lui déchira le corps. On frappa Théodule avec le glaive et enfin on leur trancha la tête.

Le juge supplia ensuite saint Léonce de céder aux ordres de l'empereur,
* A fol. 291 v° a. mais il ne l'écouta aucunement et ne consentit * pas aux ordres du juge. Celui-ci ordonna alors de l'étendre à terre et de le fustiger; ensuite on le suspendit et on déchira son corps, puis on lui attacha une lourde pierre au cou

զօրացոյց զնա ։ Եւ դարձեալ կապեցին ի չորս ցից, եւ այնչափ հարին զնա մինչեւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԻԳ ։ Եւ թաղեցին ի նաւահանգիստն Տրապօլսոյ քաղաքին ։

Եւ մի ոմն Կիւրոս անուն գրեաց զպատմութիւն նոցա ի կապարեայ տախտակի, եւ եդ ի տապանն ընդ նշխարացն ։

[B * Յայսմ աւուր վկայութիւն երանելոյն Ստեփաննոսի եպիսկոպոսին Սեբաստիոյ ։ * B p. 267 a.

Այս երանելիս վկայս էր յաւուրս աշխարհաւեր բռնաւորին Լանկթեմուրայ, եւ էր եպիսկոպոս Սեբաստիոյ քաղաքին եւ առաջնորդ սուրբ Նշանի վանացն ։ Եւ էր այր առաքինի եւ սրբակրօն, եւ վայելչահասակ եւ փառահեղ տեսլեամբ ։

Եւ Պուրհանատին ամիրայն Սեբաստիոյ պատրուակս եդեալ ի վերայ Ստեփաննոսի եթէ խորհրդակից *եղեալ է ընդ ապստամբսն առաքեաց այրս եւ ետ բերել առաջի իւր ։ Եկին ընդ նմա եւ երկու ծերագոյն աբեղայք որոց անուանքն էին Սեղբեստրոս եւ Թորոս ։ Եւ քննեալ բռնաւորին ոչ ինչ եգիտ ի նոսա վնաս․ քանզի երանելի եպիսկոպոսն չունելով խիղճ զանձնէ համարձակ տայր պատասխանի, եւ յայտնի ցուցանէր զանմեղութիւն իւր եւ զհաւատարմութիւն ։ * B p. 267 b.

Ասէ բռնաւորն․ Այդու գիտացից թէ անմեղ ես եւ հաւատարիմ առ իս, եթէ դարձցիս յօրէնս իմ ։ Ասէ եպիսկոպոսն․ Դու զիս կալար իբրեւ խորհրդակից

2 Աստուած] Մարգաց ԺԷ եւ *add.* B || 3 Տրապօլսոյ] Տրէպօլեայ B.

et on le jeta en prison; mais l'ange du Seigneur le fortifia. On l'attacha ensuite à quatre poteaux et on le frappa à tel point qu'il rendit son âme à Dieu le 23 juin. On l'inhuma dans le port de la ville de Tripoli.

Un certain Cyrus écrivit leur histoire sur une plaque de plomb et la déposa dans la tombe avec leurs restes.

[B * En ce jour martyre du bienheureux Étienne, évêque de Sébaste. * B p. 267 a.

Ce bienheureux martyr vivait aux jours de Timour-lenk, le tyran désolateur du pays. Il était évêque de la ville de Sébaste et prieur du couvent du saint Signe (de la croix). C'était un homme vertueux, d'une vie sainte, d'une taille élégante et d'aspect majestueux.

Bourhan ad-Din, émir de Sébaste, sous prétexte qu'Étienne avait été le * conseiller des insurgés, envoya des hommes pour l'amener en sa présence. * B p. 267 b. Deux des moines les plus âgés, dont les noms étaient Silvestre et Théodore, l'accompagnèrent. Le tyran, après enquête, ne leur trouva aucun délit, car le bienheureux évêque, n'ayant rien à se reprocher, répondit avec hardiesse et donna la preuve de son innocence et de sa fidélité.

Le tyran dit : « La preuve que tu es innocent et que tu m'es fidèle sera que tu te convertisses à ma religion. » L'évêque répondit : « Tu m'as fait

ապստամբաց, արդ եթէ համախոհ եմ ապստամբացն սպան զիս, իսկ եթէ անմեղ՝ արձակեա՛ :

Այլ ամիրայն խոստմամբ պարգեւաց եւ սպառնալեօք մահու առաւել եւս ստիպէր զնոսա յուրացութիւն : Յայնժամ երեքին նոքա ի մի բերան խոստովանեցան զամենասուրբ Երրորդութիւնն եւ զՔրիստոս Աստուած : Եւ ապա ասեն. Մեք զայլ հաւատ ոչ գիտեմք եւ ոչ ընդունիմք այլ զայս միայն. եւ վասն այսր հաւատոյ մեռանիլ մեզ կեանս համարիմք :

Եւ բարկացեալ բռնաւորին հրամայեաց հատանել զգլուխս նոցա առաջի իւր : Եւ ընթացեալ դահիճն երիցս եհար զպարանոց սրբոյ եպիսկոպոսին եւ ոչ կարաց հատանել. եւ անդադար օրհնէր զՔրիստոս : Յայնժամ կալեալ բարշեցին չորք արք երկուք զոտից եւ երկուք զձեռաց նորա, եւ հարին զնա սուսերօք ընդ մէջսն, եւ ցերկուս հերձին եւ նա աղօթելով աւանդեաց զհոգին իւր առ Աստուած : Եւ ապա հատին զգլուխ երկուց աբեղայիցն :

Եւ զմարմինս երանելեացն արկին ընդ մարմինս այլոց մահապարտ այլազգեաց զորս նորոգ սպանեալ էին. բայց Աստուած որոշեաց զմարմինս սրբոց ի մարմնոց չարագործաց ծագելով ի վերայ նոցա լոյս պայծառ. մինչեւ նոքին իսկ այլազգիքն տեսին
* B p. 268 a. զսքանչելի լոյսն * եւ զամօթի հարան : Եւ եկեալ հաւատացելոց գողացան եւ տարեալ ամփոփեցին զպատուական նշխարս նոցա :

Եղեւ կատարումն սրբոց վկայիցս Մարգաց ԺԷ եւ Յունիսի ԻԳ :]

arrêter comme conseiller des insurgés, or, si je suis partisan des insurgés, tue-moi; si je suis innocent, libère-moi. »

Cependant l'émir tantôt par des promesses de présents, tantôt par des menaces de mort, les pressait davantage à l'apostasie. Alors, tous trois, unanimement, confessèrent la très sainte Trinité et le Christ, Dieu. Ils dirent ensuite : « Nous ne reconnaissons d'autre religion et nous n'en acceptons pas d'autre que celle-ci seulement, et nous estimons que mourir pour cette religion, c'est vivre. »

Le tyran, irrité, ordonna de leur trancher la tête en sa présence. Le bourreau se précipita et frappa par trois fois le cou du saint évêque, mais il ne put le couper; (l'évêque) ne cessait de bénir le Christ. Alors quatre hommes le saisirent, deux par les pieds et deux par les mains, le frappèrent avec des glaives à la taille et le coupèrent en deux. C'est en priant qu'il rendit son âme à Dieu. On trancha ensuite la tête aux deux moines.

Ils jetèrent les corps des bienheureux parmi les corps d'autres infidèles condamnés à mort qu'ils avaient tués récemment. Mais Dieu sépara les corps des saints des corps des malfaiteurs en faisant jaillir sur eux une lumière
* B p. 268 a. éclatante; les infidèles eux-mêmes virent cette lumière miraculeuse* et en furent honteux. Les fidèles vinrent voler les vénérables restes, les transportèrent et les inhumèrent.

Le martyre des saints martyrs eut lieu le 17 margats, 23 juin.]

Մարգաց ԺԸ եւ Յունիսի ԻԴ ։ Վարք աղախնոյն Աստուծոյ Թայիսայ պոռնկի ։

Այս երանելի կինս յոյժ գեղեցիկ էր տեսլեամբ, եւ մինչդեռ երկոտասան ամաց էր մայր նորա ետ զնա ի մեղս պոռնկութեան, եւ նստոյց ի պանդոկի, եւ բազումք երթային առ նա վասն գեղեցկութեանն ։ Եւ ժողովեաց գանձս բազումս եւ ինչս բազումս ի դառն պոռնկութենէն եւ համբաւեցաւ անուն նորա ընդ ամենայն աշխարհն, որ եւ ի լեռնան ի կրօնաւորսն եհաս, եւ աղաչէին զԱստուած զի մի կորիցէ եւ զբազումս կորուսցէ ։

Իսկ երանելի անապատաւորն Սերապիոն իջեալ ի լեռնէն զգեցաւ զգեստ աշխարհականի, եւ առեալ դահեկան մի գնաց առ * կինն, եւ տուեալ նմա զդահեկանն ելին ի վերնատունն ։ Նստաւ կինն ի վերայ զարդարեալ եւ բարձր բազմականի, եւ կոչեաց զՍերապիոնն զի ելցէ եւ նստցի ընդ նմա ։ Եւ նա ասէ. Ոչ գո՞յ այլ ներքսագոյն սենեակ զի մտցուք անդ եւ ննջեսցուք ։ Ասէ կինն. Եթէ ի մարդկանէ ամաչես, յայսմ տան ոչ ոք տեսանէ զմեզ, ապա եթէ յԱստուծոյ երկնչիս ուր եւ երթիցուք տեսցէ զմեզ ։ Ասէ այրն Աստուծոյ. Եւ գիտե՞ս հաւաստեաւ որ է յերկինս Աստուած, եւ կայ * A fol. 291 v° b.

2 երկոտասան ամաց] երկոտասանամեայ B || 8 իջեալ] ելեալ B | 10 Նստաւ կինն] Նստեալ կնոջն B || 12 ննջեսցուք] Ասէ կինն. Այո ։ Ասէ Սերապիոն. Մտցուք անդ եւ ննջեսցուք *add.* B.

18 MARGATS, 24 Juin.

Vie de la servante de Dieu Thaïs, la prostituée.

Cette bienheureuse femme était très belle de figure. Elle n'avait encore que douze ans lorsque sa mère la livra au péché de corruption, l'installa dans une auberge et beaucoup allaient avec elle à cause de sa beauté. Elle amassa beaucoup d'argent et de biens par cette fatale prostitution. Sa renommée se répandit dans toute la région, arriva jusqu'à la montagne, parmi les moines qui prièrent Dieu de ne pas la laisser se perdre et perdre les autres en grand nombre.

Le bienheureux anachorète Sérapion descendit de la montagne, mit des vêtements laïques, prit un écu et se rendit auprès de la * femme; il lui donna l'écu et ils montèrent à l'étage supérieur. La femme s'assit sur un sofa élevé et garni et invita Sérapion à y monter et à s'asseoir auprès d'elle. Il lui dit : « N'y a-t-il pas une chambre plus retirée pour que nous y allions et couchions ensemble? » La femme répondit : « Si c'est que tu as honte des hommes, il n'y a personne dans cette maison qui nous voie; mais si c'est Dieu que tu crains, où que nous allions Il nous verra. » L'homme de Dieu dit : « Sais-tu vraiment qu'il y a un Dieu au ciel, et qu'il y a un paradis et un enfer? » La femme * A fol. 291 v° b.

արքայութիւն եւ դժոխք ։ Ասէ կինն. Գիտեմ որ Աստուած զոյ յերկինս, եւ հատուցումն ըստ գործոց ։ Ասէ Սերապիոն. Եւ ընդէ՞ր ապա կորուսանես զայնչափ հոգիս մարդկան, եւ կորնչիս եւ դու ընդ նոսա ։

Եւ ընդ բանս զղջացաւ կինն եւ լալով, եւ յարուցեալ անկաւ յոտս նորա եւ ասէ. Գիտեմ որ ապաշխարութեամբ մեղաց թողութիւն լինի,, աղաչեմ զքեզ համբերեա՛ ինձ երիս ժամս, եւ հրամայեա՛ թէ ու՞ր գտից զքեզ եւ արա՛ ընդ իս որպէս Աստուած հրամայէ ։ Եւ արար նմա ժամադիր, եւ հրաժարեալ ի միմեանց գնաց կրօնաւորն ։

Եւ յարուցեալ կինն ժողովեաց զամենայն ինչս իւր զոսկի, զարծաթ, զդիպակ եւ
* A fol. 292 r° a. զամենայն անօթս տանն իւրոյ իբրեւ *չորս կենդինարս, որ է մին կենդինար եօթն հազար եւ երկերիւր դահեկան, եբարձ ի ծառայս եւ յաղախնայս իւր եւ ի ջորիսն եւ յէշսն, եւ տարաւ ի մէջ քաղաքին եւ աղաղակէր մեծաձայն. Եկա՛յք ամենեքեան որք պոռնկեցայք ընդ իս, տեսէք աչօք ձերովք զստացուածս իմ զոր ժողովեցի չարեօք ։ Եւ արկեալ հուր այրեաց զամենայնն, եւ ոչ գնաց ի տեղւոջէն մինչեւ ամենայնն եղեւ մոխիր, եւ զորս գնային յափշտակել ի հրոյն քարիւ եւ փայտիւ հալածէր ։ Եւ եկեալ փախստական գնաց առ Սերապիոն ։

Եւ նորա կալեալ զձեռանէն տարաւ ի կուսանաց վանս, եւ խնդրեաց ի վանաց մօրէն ի նսեմ տեղոջ նեղ խրճիթ, եւ արգել զնա անդ մի փոքր պատուհան թողեալ

6 արա] արարցես B || 15 փախստական] ի քաղաքէն *add.* B.

répondit : « Je sais qu'il y a un Dieu au ciel et qu'il y a une récompense selon les œuvres. » Sérapion dit : « Et pourquoi alors perds-tu tant d'âmes d'hommes et te perds-tu avec eux ? »

A ces mots, la femme se repentit et pleura, puis, se levant, elle tomba à ses pieds et lui dit : « Je sais qu'il y a une absolution des péchés par la pénitence. Je t'en prie, attends-moi pendant trois heures et indique-moi l'endroit où je pourrai te retrouver et tu feras ensuite de moi ce que Dieu t'ordonne de faire. » Il lui donna un rendez-vous, et, s'étant quittés l'un l'autre, le moine s'en alla.

La femme se leva, ramassa tous ses biens, or, argent, étoffes précieuses,
* A fol. 292 r° a. et tous les objets de sa maison, d'environ * quatre talents, au talent de sept mille deux cents écus, les chargea sur ses domestiques et ses servantes, sur des mulets et des ânes, les amena au milieu de la ville et cria à haute voix : « Venez tous, vous qui avez forniqué avec moi, regardez de vos yeux mes biens que j'ai amassés par le mal. » Elle y mit le feu et brûla le tout, et elle ne s'éloigna de cet endroit que lorsque tout fut réduit en cendres, chassant à coups de pierres et de bâtons ceux qui venaient pour piller. Ensuite, elle prit la fuite et se rendit auprès de Sérapion.

Celui-ci la prit par la main et la conduisit dans un couvent de femmes, demanda à la prieure une cellule étroite dans un endroit obscur et l'y

փոքր լուսոյ եւ կերակուր տալոյ ։ Եւ հրամայեաց վանացն մօրն զի տացէ նմա ամենայն աւուր որպէս եցոյց պչակ հացին եւ ջրոյն ի մտանել արեգական ։ Եւ պատուիրեաց Թայիսայ եւ ասէ . Մի համարձակիր անուանել զանուն Տեառն Աստուծոյ պղծ շրթամբքդ, այլ միայն ի ծունկս անկեալ աղօթեա այսպէս . Որ ստեղծեր զիս ողորմեա ինձ ։

Եւ այսպէս արարեալ զերիս ամս մեծաւ ճգնութեամբ, որ եւ մեծին Անտոնի երեւեցոյց Աստուած ի լերինն զթողութիւն մեղաց նորա ։ Տեսանէ եւ Սերապիոն յանապատին, եւթէ. * Յերկինս տեսանէի բազմական զարդարեալ եւ ի վերայ պսակ անպատմելի գեղեցկութեամբ, եւ ասեմ. Այս բազմականս եւ պսակս սրբոյն Անտոնի է հօրն մերոյ ։ Եւ ասէ պատանին ցիս որ պահէր զբազմականն ղամբար ի ձեռին ունելով. Ոչ է Անտոնի այլ Թայիսայ է պոռնիկ կնոջն ։ * A fol. 292 r° b.

Եւ ընդ առաւօտն գնաց ի կուսանաց վանսն մեծաւ խնդութեամբ, եւ երթեալ ի խուցն կամէր քակել եւ հանել զերանելին Թայիսայ ի խաւարային նեղ եւ անձուկ արգելանոցէն, եւ նա ոչ կամեցաւ, ասէր. Աստ մեռայց, քանզի յոյժ բազում են մեղք իմ ։ Ասէ Սերապիոն. Մարդասէրն Աստուած գթացաւ ի քեզ եւ հաճեցաւ յապաշխարութիւնդ քո, եւ ջնջեաց քո արտասուօքդ զմեղսն քո ։ Եւ ասէ կինն. Զամենայն

7 ի լերինն *om.* B || 8 տեսանէի] տեսի B || 12 առաւօտն] յաւուր անկեալ *add.* B || 14 յոյժ *om.* B.

cloîtra, en ne laissant qu'une petite fenêtre pour recevoir le jour et la nourriture. Il ordonna à la prieure de lui donner chaque jour, d'après la mesure qu'il lui prescrivit, du pain et de l'eau au coucher du soleil. Il ordonna à Thaïs en disant : « Ne t'enhardis pas à nommer le nom du Seigneur Dieu avec tes lèvres impures, agenouille-toi seulement et prie ainsi : Toi qui m'as créée, aie pitié de moi. »

Elle fit ainsi durant trois ans et avec une si grande austérité, que Dieu fit connaître le pardon de ses péchés au grand Antoine, à la montagne. Sérapion, au désert, eut aussi une vision et dit : * « J'ai aperçu au ciel un sofa orné et dessus une couronne d'une beauté inénarrable, et je me suis dit : « Ce lit et « cette couronne sont au saint Antoine, notre père. » Mais le jeune enfant qui gardait le sofa, tenant un flambeau à la main, me dit : « Ce n'est pas à Antoine, « mais à Thaïs la prostituée. » * A fol. 292 r° b.

Au matin, Sérapion se rendit avec grande joie au couvent des vierges, alla à la cellule et voulut la détruire pour sortir Thaïs de cette clôture obscure, étroite et resserrée ; mais elle refusa et dit : « Je mourrai ici, car mes péchés sont trop nombreux. » Sérapion lui répondit : « Dieu, qui aime les hommes, a eu pitié de toi et s'est complu en ta pénitence, il a effacé tes péchés par tes larmes. » La femme dit : « J'avais tous les jours mes péchés devant mes yeux

աւուրս զմեղս իմ առաջի աչաց իմոց ունէի եւ ասէի. Ո՛ր ստեղծեր զիս ողորմեա ինձ : Ասէ Սերապիոն. Ոչ միայն վասն այդր բանի թողան քեզ մեղք քո, այլ վասն մտաց քոց որ ամենեւին զխորհուրդս մտաց քոց յԱստուծոյ ոչ շիջուցեր : Եւ հանեալ զնա ի խցէն յանձնեաց զնա ի սուրբ կուսանսն, եւ գնաց յանապատն :

Եւ արարեալ Թայիսայ ընդ նոսա աւուրս հնգետասան հիւանդացաւ, եւ յերիս աւուրս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիսի ԻԴ :

Յայսմ աւուր տօն ծննդեան Յովհաննու Մկրտչին Քրիստոսի եւ Կարապետի ի Ֆռանկաց եւ Հոռոմոց սահմանի :

* A fol. 292 v° a.

* Մարգաց ԺԹ եւ Յունիսի ԻԵ : Վարք եւ վկայութիւն սրբուհւոյն Փեբրոնիայ :

Երանելին եւ բարեյաղթող աղախինն Քրիստոսի Փեբրոնիա էր ի քաղաքէ Նսիբի, որ է ի մէջ Հոռոմոց եւ Պարսից, յաւուրս ամբարիշտ արքային Դիոկղետիանոսի : Եւ ի տղայութենէ կրօնաւոր էր, սնեալ ի վանս կուսանաց ի ձեռն սրբանեալ մօր վանացն Վրիենի, եւ սրբութեամբ վարժեալ առաւել քան զամենայն կուսան կրօնաւորսն :

1 աւուրս] ի խրճիթս *add.* B || 6 Աստուած] Մարգաց ԺԸ եւ *add.* B || 7 Յայսմ... սահմանի *om.* B || 9 Վարք ... Փեբրոնեայ] Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ բազմատանջ. կոյս կրօնաւոր վկային երանելւոյն Փեբրոնեայ B || 10 բարեյաղթող] բարեյաղթ B || 11 արքային] թագաւորին B || 14 կրօնաւորսն] վանացն *add.* B.

et je disais : Toi qui m'as créée, aie pitié de moi. » Sérapion répondit : « Tes péchés ont été absous non seulement à cause de cela, mais à cause de ton esprit, car tu n'as jamais laissé les pensées de ton esprit s'écarter de Dieu. » Il la fit sortir de la cellule, la remit aux vierges saintes et partit pour le désert.

Thaïs vécut quinze jours avec elles, tomba malade, et rendit son âme à Dieu, trois jours après, le 24 juin.

En ce jour fête de la naissance de Jean-Baptiste du Christ et son Précurseur, dans les pays des Francs et des Grecs.

* A fol. 292 v° a.

* 19 MARGATS, **25 Juin.**

Vie et martyre de sainte Fébronie.

Fébronie, cette bienheureuse et victorieuse servante du Christ, était de la ville de Nisibe, qui est entre les Grecs et les Perses, aux jours de Dioclétien, l'empereur impie. Elle était religieuse depuis son enfance, ayant été élevée dans un couvent de vierges par la prieure Briène (*Vrièni*), de sainte vie. Elle acquit une sainteté supérieure à celle de toutes les vierges religieuses.

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ Սիղինոս դատաւորն հալածէր զքրիստոնեայսն հրամանաւ թագաւորին, եւ ամենայն քորք վանացն փախեան ։ Իսկ երանելին հիւանդ էր եւ ոչ կամէր փախչել, այլ անկեալ կայր ի գետնի ի վերայ պրտուեղինի, եկաց առ նմա եւ մայրն վանացն Վրիէնի եւ այլ ոմն կին Հերիա անուն ։

Գնացին զօրականք դատաւորին ի վանսն, եւ մրճօք եւ փայտատօք խորտակեցին զդրունսն, եւ մտին ի ներքս, եւ կամեցան սրով սպանանել զՎրիէնի ։ Եւ կոմսն Պրիմոն արգել եւ ոչ ետ թոյլ զօրականացն վնաս ինչ առնել, քանզի օգնական էր քրիստոնէից ։

Եւ առեալ զՓեբրոնեա քարշելով տարան առաջի Սիղինոսի դատաւորին. գնացին զկնի Վրիէնի եւ Հերիա, եւ պատուիրէին Փեբրոնիայ հաստատուն կալ ի հաւատսն եւ ոչ երկնչել ի տանջանացն * եւ ոչ ի մահուանէ ։ Յիշեցուցանէին նմա զսուրբ * A fol. 292 vº b.
վկայսն որ յաւուրս իւրեանց մարտիրոսացան, զՎերիոս զորոյ հատին զգլուխն, եւ զեղբայրն իւր զԼէոնիդաս որ հրով այրեցաւ, եւ զՏրոպիէ զփոքր պատանեակն որ լուաւ ի մօրէն եթէ. Որդեակ մի փախչիր. եւ տղայն ինքնին կապեաց զձեռս եւ այնպէս խոցեցին զնա, եւ յետոյ հատին զգլուխն ։ Զայս ամենայն յիշեցուցանէին նմա ։ Եւ

3 կամէր] կամեցաւ B || 9 առաջի . . . դատաւորին] առ Սիղինոս դատաւորն B.

En ces jours-là le juge Silène (*Silinos*) persécutait les chrétiens par ordre de l'empereur, et toutes les sœurs du couvent s'enfuirent. Mais la bienheureuse était malade et ne voulut point prendre la fuite, elle resta étendue à terre sur une natte. La prieure Briène demeura auprès d'elle avec une autre femme nommée Héria.

Les soldats du juge, s'étant rendus au couvent, en brisèrent la porte à coups de marteaux et de haches, s'y introduisirent et voulurent tuer Briène par le glaive. Mais le comte Primus en empêcha les soldats et ne leur permit point de causer aucun dégât, car il aidait les chrétiens.

Ils se saisirent de Fébronie et la traînèrent en présence du juge Silène; Briène et Héria suivirent Fébronie en lui recommandant de rester ferme dans la foi et de ne craindre ni les souffrances, * ni la mort. Elles lui rappelèrent les * A fol. 292 vº b.
saints martyrs qui avaient été martyrisés de leurs jours : Lérios, dont on avait tranché la tête, et son frère Léonidas, qui avait été brûlé au feu, Eutropia[1] (*Tropie*), le jeune enfant, qui avait entendu sa mère lui dire : « Mon fils, ne prends pas la fuite, » et l'enfant s'étant attaché les mains lui-même, c'est ainsi qu'il avait été couvert de plaies, puis décapité. Elles lui rappelèrent tout cela,

1. Eutropia est évidemment un nom féminin, et il en est ainsi dans *Syn. Cp.*, col. 769, qui porte, l. 33 : τῆς παιδὸς Εὐτροπίας, mais παιδίον et τέκνον, qui se trouvent aux ll. 35 et 36, conviennent aux deux genres, et l'on comprend que le traducteur s'y soit trompé.

դարձաւ ի վանսն Վրիէնի. եւ աղօթէր վասն նորա. եւ մնաց առ նա Հերիա զգեցեալ առն զգեստ :

Եւ յորժամ եկաց Փեբրոնեա առաջի Սելենոսի դատաւորին, եւ նա եհարց զանուն եւ զազգատոհմն : Եւ սուրբն ասէ. Անուն իմ քրիստոնեայ է, եւ ազգակից իմ Քրիստոս է : Եւ սկսաւ Սելենոս ողոքանօք եւ խոստմամբ պատրել զնա թերեւս ուրասցի զՔրիստոս : Եւ նա որպէս երազի համարէր զբանս նորա, ունելով առաջի աչաց իւրոց զերկնաւոր փեսայն զՓրկիչն Քրիստոս :

Եւ նախ մերկացուցին զպարեգօտն եւ զգեցուցին խորգ, եւ տարածեցին զնա ի վերայ չորս քարի, եւ ի ներքոյ հուր վառեցին, եւ ի վերայ երկու դահիճք բրօք հարկանէին. եւ հուրն եւ հարուածք յոյժ մաշեցին զանձն նորա : Եւ տեսեալ Հերիա
* A fol. 293 r° a. եւ այլք որ ընդ նմա էին նուաղեցան եւ անկան յերկիր. եւ երանելին * Փեբրոնեա աղաչեաց զդահիճսն զի ցանիցեն ջուր յերեսն Հերիայ :

Եւ հրամայեաց դատաւորն հատանել զլեզուն, եւ նա յօժարութեամբ եհան ի բերանոյն. եւ ամբոխն որ մերձ կային ոչ ետուն թոյլ հատանել : Եւ նոքա· կորզեալ եօթն ատամն ի բերանոյն, եւ յոյժ հեղաւ արիւնն յերկիր :

Եւ դարձեալ հարցանէին, եւ սրբուհին Փեբրոնեա ի բազում ցաւագին վշտացն ոչ կարէր տալ պատասխանի : Հատին սրով զստինսն եւ զխոցսն հրով այրեցին : Եւ

6 համարէր] զքաղցր *add.* B || 13 զլեզուն] Փեբրոնեայ *add.* B.

et Briène étant retournée au couvent, où elle priait pour elle, il ne resta auprès d'elle qu'Héria, vêtue d'habits masculins.

Lorsque Fébronie comparut devant le juge Silène, celui-ci lui demanda son nom et sa famille. La sainte répondit : « Mon nom est chrétienne, et le Christ est mon parent. » Silène se mit à la tromper par des supplications et des promesses dans l'espoir qu'elle renierait le Christ. Mais elle considéra ses paroles comme un rêve, car elle avait devant ses yeux son fiancé céleste, le Christ Sauveur.

D'abord on la dépouilla de sa robe et on la revêtit d'un sac ; ensuite on l'étendit sur quatre pierres, on alluma du feu sous elle, tandis que par-dessus deux bourreaux la frappèrent avec des gourdins. Le feu et les coups épuisèrent beaucoup son corps. A cette vue, Héria et d'autres qui étaient avec elle s'éva-
* A fol. 293 r° a. nouirent et tombèrent à terre. La bienheureuse * Fébronie pria les bourreaux d'asperger d'eau le visage d'Héria.

Le juge ordonna de lui couper la langue ; elle la sortit volontiers de la bouche, mais la foule qui assistait ne la laissa point couper. On lui arracha sept dents de la bouche et beaucoup de sang coula à terre.

On l'interrogea de nouveau, mais sainte Fébronie, en raison des atroces douleurs, ne pouvait répondre. On lui coupa les seins avec un glaive, et on

ամբոխն ոչ կարացին տեսանել զայնչափ տանջանսն, գնացին ի տունս իւրեանց եւ անիծանէին զԹագաւորն եւ զկուռսն : Եւ Պրիմոն կոմսն ձեղայրէր դատաւորին ընդ այնչափ անխիղճ տանջանսն : Եւ Լիւսիմաքոս, վասն զի քրիստոնեայ էր մայր նորա, ասէ ցՊրիմոն. Թոյլ տուր սրբուհւոյ կուսիդ քաջութեամբ արիանալ վասն բազմաց փրկութեան :

Իսկ Հերիա գնաց յերեւս դատաւորին, եւ համարձակութեամբ անարգեաց զդատաւորն : Եւ նա բարկացեալ հրամայեաց եւ հատին զՓեբրոնեայ զերկու ձեռսն եւ զերկու ոտսն եւ ապա զգլուխն : Եւ այնպէս բարի խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յունիս ԻԵ : Եւ դատաւորն մինչդեռ երթայր ի տունն իւր ի ճաշ ցնորեցան խելքն եւ հարաւ գլուխն ուժգին ի մարմարիոնեայ սալ, եւ * մեռաւ չար մահուամբ : * A fol. 293 r° b.

Եւ Լիւսիմաքոս եւ Պրիմոն ազդեցին քրիստոնէից, եւ եկեալ բարձին զնշխարսն եւ տարան ի վանսն. զոր տեսեալ Վրիէնի ողբալով զիրկս արկանէր եւ որպէս ընդ կենդանւոյ խօսէր : Լուացին զնշխարսն եւ եդին զամենայն հատեալ անդամսն ի տեղիս իւրեանց, եւ զատամունսն եդին ի վերայ կրծիցն : Եւ ժողովեցան եպիսկոպոսունք եւ քահանայք եւ կրօնաւորք սաղմոսիւք եւ օրհնութեամբ եդին ի տապանի : Եւ Լիւսիմաքոս եւ Պրիմոն մկրտեցան եւ այլք բազումք ի հեթանոսաց :

7 բարկացեալ] բարկութեամբ լցեալ B || 9 Աստուած] Մարգաց ԺԹ եւ *add.* B || 10 չար] չարաչար B || 14 հատեալ *om.* B.

lui brûla les plaies au feu. La foule, ne pouvant plus assister à tant de tortures, rentra dans les maisons, en maudissant l'empereur et les idoles. Le comte Primus (*Primon*) blâma le juge pour tant de tortures impitoyables. Et Lysimaque, qui avait une mère chrétienne, dit à Primus : « Laisse cette vierge sainte lutter avec vaillance pour le salut de beaucoup. »

Héria alla se mettre devant le juge et l'injuria avec hardiesse. Celui-ci, irrité, ordonna de couper les deux mains et les deux pieds à Fébronie et ensuite la tête. Et c'est dans une telle bonne confession qu'elle rendit son âme à Dieu le 25 juin. Lorsque le juge rentra chez lui pour dîner, son esprit s'égara, sa tête donna fortement contre une dalle de marbre et * il mourut d'une mauvaise mort. * A fol. 293 r° b.

Lysimaque et Primus avertirent les chrétiens, qui vinrent, enlevèrent les restes et les emportèrent au couvent ; à leur vue, Briène les entoura de ses bras en sanglotant et leur parla comme à un vivant. On lava les restes, on mit tous les membres coupés à leur place, et on posa les dents sur sa poitrine. Les évêques, les prêtres et les moines, s'étant assemblés, les déposèrent au tombeau avec des psalmodies et des bénédictions. Lysimaque et Primus se firent baptiser, ainsi que d'autres nombreux infidèles.

Իսկ եպիսկոպոսն քաղաքին յետ ժամանակաց շինեաց մեծ եկեղեցի յանուն սրբուհւոյն Փեբրոնեայ, եւ երթեալ ի վանսն զի առցէ մասն ի նշխարացն եւ տարցէ յեկեղեցին զոր շինեաց, եւ որք արկին զձեռս ի տապանն զի առցեն մասն յոսկերացն ցամաքեցան ձեռքն : Եւ մի յատամանցն ետուն եպիսկոպոսին : Եւ յամենայնի ամի ի տօնին իւրում եւ ի գիշերաժամուն երեւի սրբուհին Փեբրոնիա կանգնեալ ի սովորական տեղին իւր ընդ այլ կուսան կրօնաւորսն եւ սաղմոսէր ընդ նոսա. եւ յետ երրորդ կարգի պաշտամանն անյայտ լինի. եւ ոչ ոք իշխէ հարցանել կամ մերձենալ ի նա, քանզի յառաջին ամի յորժամ տեսին զնա կամեցան ունել զնա եւ անկանել յոտս նորա, եւ
* A fol. 293 v° a. անյայտ եղեւ. եւ վասն այնորիկ ոչ իշխէին * մերձենալ կամ հարցանել, զի մի յառաջ քան զերրորդ կանոնն անյայտ լինիցի :

* B p. 270 b. [B * Յայսմ աւուր յիշատակ սուրբ առաքելոյն Տիմոնի եպիսկոպոսին Բոստրայ որ հրով կատարեցաւ. եւ վկայութիւն Փոկասու Երկրորդի որ է մերձ ի Բոմպիուպօլիս ի լերինն, եւ բազում նշանս առնէ ի փառս Քրիստոսի :]

3-4 եւ որք արկին . . . ձեռքն *om.* B || 4-10 եւ յամենայն ամի . . . անյայտ լինիցի] որով բազում բժշկութիւնք եղեն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս : B.

Plus tard, l'évêque de la ville fit construire une grande église au nom de sainte Fébronie, et se rendit au couvent pour prendre une partie des reliques et les transporter dans l'église qu'il avait fait construire; mais les mains de ceux qui touchèrent la tombe pour en retirer une partie des ossements se desséchèrent. On donna à l'évêque une des dents. Et tous les ans, le jour de sa fête et aux offices de la nuit, sainte Fébronie apparaît debout à sa place habituelle avec les autres vierges religieuses et psalmodie avec elles; puis elle disparaît après les offices de la troisième heure. Personne n'ose lui adresser la parole ni l'approcher, car la première année, lorsqu'on la vit, on voulut la
* A fol. 293 v° a. saisir et se jeter à ses pieds, mais elle disparut; c'est pourquoi on n'osa * plus s'approcher d'elle, ni lui adresser la parole, pour qu'elle ne disparaisse pas avant le troisième canon.

* B p. 270 b. [B * En ce jour commémoration du saint apôtre[1] Timon, évêque de Bostra, qui fut martyrisé par les flammes; également martyre du deuxième Phocas, près de Pompéiopolis (*Bompiopolis*) dans la montagne, lequel opère de nombreux prodiges pour la gloire du Christ.]

1. Apôtre, c'est-à-dire l'un des 72 disciples.

Մարգաց Ի եւ Յունիսի ԻԶ ։ Վկայաբանութիւն սրբոյն Զինոնի եւ Զինայ ։

Զինոն զօրական էր Մաքսիմիանոսի կռապաշտ արքային ի Փիլադելփիոյ Արաբացւոց զոր ի հնումն Եման անուանէին ։ Խորհուրդ բարի զմտաւ էած զի վասն անուանն Քրիստոսի մարտիրոսացի քանզի քրիստոնեայ էր ։ Եւ ազատեաց զամենայն ծառայսն իւր տուեալ նոցա բաժինս յընչիցն իւրոց, եւ զայլ ստացուածս իւր բաշխեաց աղքատաց ։ Եւ պատանեակ մի ի ծառայից իւրոց Զինա անուն ոչ կամեցաւ թողուլ զտէրն իւր զԶինոն վասն զի յոյժ սիրէր զնա ։

Իսկ երանելին Զինոն յորժամ գիտաց եթէ Մաքսիմիանոս դատաւորն տօն կատարէր կռոցն եմուտ համարձակ առաջի նորա եւ յանդիմանեաց զանաստուած մոլորութիւնն եւ զկռապաշտութիւնն, եւ պայծառ երեսօք խոստովանեցաւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ։ Զալեցին զնա դալար բրօք ուժգին, եւ յորժամ թողին զնա ընթացաւ տաճար կռոցն եւ ոտիւքն կործանեաց զբագինսն, եւ ասէ. Անօրէնն յանօրէնութեան * իւրում մեռցի, եւ ձեռք իմ անպարտ լիցին ։ * A fol. 293 v° b.

Կախեցին զսուրբն զփայտէ եւ քերեցին. եւ քացախ աղիւ հեղին ի վէրսն եւ արկին

1 Վկայաբանութիւն սրբոցն] Վկայութիւն սրբոց վկայիցն B || 10 եւ զկռապաշտութիւնն] կռապաշտութեան B || 11 բրօք] արջառաջլօք B || 14 քերեցին] քերանօք *add.* B.

20 MARGATS, 26 Juin.

Passion des saints Zénon et Zénas.

Zénon était soldat de Maximien, l'empereur idolâtre, de la ville de Philadelphie en Arabie, qu'autrefois on appelait Ammân (*Eman*). Il conçut la bonne inspiration de devenir martyr pour le nom du Christ, car il était chrétien. Il affranchit tous ses domestiques en leur distribuant des parts de ses biens, il partagea le reste de ses propriétés aux pauvres. Un jeune garçon d'entre ses serviteurs, nommé Zénas (*Zina*), ne voulut point abandonner son maître, car il l'aimait beaucoup.

Lorsque le bienheureux Zénon apprit que le juge Maximien (*Makhsimianos*) célébrait la fête des idoles, il se présenta hardiment à lui et réprouva son erreur athée et le culte des idoles; il confessa d'un visage souriant Notre-Seigneur Jésus-Christ. On le fustigea vigoureusement avec des branches vertes, et lorsqu'on l'eut remis en liberté, il courut au temple des idoles, renversa les autels à coups de pied et dit : « *Que l'impie meure dans son impiété,* * et mes mains en seront innocentes[1]. » * A fol. 293 v° b.

On suspendit le saint à un poteau et on lui déchira le corps, on répandit

1. Prov., xi, 5.

ի բանդ, եւ պատան ի փայտի ոտնեցին : Եւ պատանեակ ծառայն իւր Զենաս մտեալ ի բանդ, գիրկս արկեալ ոտիցն համբուրէր, եւ հառաչմամբ ողբայր, աղաչէր զտէրն իւր զի մի թողցէ զնա :

Եւ ի վաղիւն տարան զերկոսեանն առաջի դատաւորին Մաքսիմեայ, եւ յոյժ բռնադատեաց զնոսա զի ուրասցին զՔրիստոս, եւ ոչ կարաց հաւանեցուցանել : Դան հարին զնոսա ուժգին եւ հրացեալ շամփուրս եդին ի վերայ սրտին Զենոնի, եւ կախեցին զերկոսեանն ի բարձրաւանդակի, եւ ծանր վէմս կապեցին յոտս նոցա, եւ բրօք հարկանէին զսրունսն : Իջուցին ի կախաղանէն եւ ընկեցին ի բորբոքեալ հուր եւ հրամանաւ Աստուծոյ հուրն շիջաւ, եւ սուրբքն ելին ամբողջ : Եւ ապա հատին զգլուխս նոցա Յունիսի ԻԶ :

Եւ հաւատացեալ կուսան կանայքն գնացին գաղտ ի տեղին, եւ գողացան զմարմինս սրբոց վկայիցն եւ թաղեցին ի Փիլադելփիա : Եւ յորժամ դադարեաց հալածումն քրիստոնէից ազգականք սրբոցն Զենոնի եւ Զենայ առին զնշխարսն եւ տարան ի տեղիս նոցա, եւ մեծաւ պատուով եդին ի տապանի :

* A fol. 294 r° a. Յայսմ աւուր եղեւ ժողովն * յԵփեսոս. առաջին սինհոդոսն ընդդէմ ամբարշտին եւ մարդադաւան Նեստորի :

2 արկեալ] արկ B || 8-9 եւ հրամանաւ . . . ամբողջ *om.* B || 9 նոցա] Մարգայ Ի եւ *add.* B || 13 եւ Զենայ *om.* B — զնշխարսն] նոցա *add.* B || 14 նոցա] իւրեանց B || 15-16 Յայսմ աւուր . . . Նեստորի *om.* B.

du vinaigre mélangé de sel sur ses plaies, puis on le jeta en prison, et on attacha ses pieds à un bloc de bois. Son jeune domestique Zénas pénétra dans la prison, entoura ses pieds de ses bras, les embrassa, et, pleurant avec sanglots, pria son maître de ne point l'abandonner.

Le lendemain, on les conduisit tous deux devant le juge Maximien (*Makhsimeay*) qui les pressa beaucoup de renier le Christ, mais il ne parvint pas à les persuader. On les frappa brutalement, on appliqua des broches enflammées sur le cœur de Zénon, et on les suspendit tous deux sur un tertre, on leur attacha aux pieds de lourdes pierres et on leur frappa sur les jambes avec des bâtons. Ensuite on les descendit de la potence et on les jeta dans les flammes d'un grand feu, mais le feu s'éteignit par ordre de Dieu et les saints en sortirent indemnes. On leur trancha ensuite la tête le 26 juin.

Des femmes vierges fidèles se rendirent secrètement à cet endroit, dérobèrent les corps des saints martyrs et les inhumèrent à Philadelphie. Lorsque la persécution des chrétiens eut pris fin, les proches des saints Zénon et Zénas prirent les reliques, les emmenèrent dans leurs localités, et les déposèrent avec de grands honneurs dans un tombeau.

* A fol. 294 r° a. En ce jour eut lieu le concile * d'Éphèse, le premier synode contre Nestorius l'impie, qui professait (le Christ) pur homme.

[B * Յայսմ աւուր վկայութիւն Զաքարիայ կաթողիկոսին Աղթամարայ : * B p. 271 b.

Երանելի վկայն Քրիստոսի Զաքարիա էր ի Վասպուրական աշխարհէն, եւ յաւուրս աշխարհաւեր բռնաւորին Լանկթամուրայ նստէր կաթողիկոս յԱղթամար : Եւ էր այր խոհեմ եւ զգաստ զարդարեալ ամենայն առաքինութեամբ եւ աստուածպաշտութեամբ եւ հովուէր զժողովուրդ իւր օրինակ բարի զանձն ընծայեցուցեալ :

Եւ յաւուր միում եկն առ. սա պարսիկ մի Զաքար անուն, եւ նենգաւոր խորհրդով մատոյց նմա զմախաղ մի եւ ասէ. Առ զսա ի քեզ յաւանդ եւ դիր ի պահեստի ի տան քում, եւ տացես ինձ յորժամ պիտոյ լինիցի : Իմացեալ կաթողիկոսին զխորհուրդս նորա ասէ քաղցրութեամբ. Չիք ի տան իմում ապահով տեղի պահեստի, տացես զսա այլոյ որոյ գոյ տեղի պատշաճաւոր ի պահել :

Իբրեւ գիտաց Զաքար եթէ ծանեաւ կաթողիկոսն զխարդախութիւն իւր որով կամէր յորոգայթ արկանել զնա, շարժեալ ի բարկութիւն խօսեցաւ բանս հայհոյութեան, եւ էած ապտակ յերեսս նորա : Ասէ կաթողիկոսն. Անպատեհ էր քեզ վայելի ինչ առնել ընդ իս որ չեմ ինչ մեղուցեալ քեզ : Իբրեւ տեսին ամենք զոր արարն Զաքար աղաղա՛կ բարձին, եւ կուտեցան անդր բազմութիւնք ժողովրդոց, * եւ ապրեցուցին զկաթողիկոսն ի ձեռաց նորա : * B p. 272 a.

Յայնժամ Զաքար ձգեալ զձեռն պատառեաց զօձիս իւր, եւ փետեաց զմազս ինչ մօրուաց իւրոց, եւ եղնգամբք հերձոտեաց զերեսս իւր եւ ներկեաց արեամբ : Եւ

[B * En ce jour martyre de Zacharie, catholicos d'Aghthamar. * B p. 271 b.

Le bienheureux martyr du Christ Zacharie était du pays de Vaspourakan; il siégeait comme catholicos d'Aghthamar aux jours du tyran Timour-lenk, le désolateur des pays. C'était un homme prudent, avisé, orné de toutes les vertus et de piété; il gouvernait ses ouailles en s'offrant à eux comme un bon exemple.

Un jour, un certain Persan, nommé Tchakar, vint le trouver et, dans un traître dessein, lui présenta un sac en disant : « Prends-le chez toi en dépôt, garde-le dans ta maison et tu me le rendras quand j'en aurai besoin. » Le catholicos, comprenant ses desseins, lui dit avec douceur : « Il n'y a point dans ma maison d'endroit sûr pour le garder, donne-le à un autre qui ait un endroit convenable pour le garder. »

Lorsqu'il vit que le catholicos avait deviné la traîtrise par laquelle il voulait lui tendre un piège, Tchakar se mit en colère, proféra des blasphèmes, et souffleta (le catholicos) au visage. Celui-ci lui dit : « Ce que tu m'as fait n'est pas convenable, car je ne t'ai fait aucun tort. » Mais plusieurs personnes, témoins de ce que Tchakar venait de faire, se mirent à crier, une foule de gens se rassembla et * délivra le catholicos de ses mains. * B p. 272 a.

Alors Tchakar étendit ses mains, saisit son col, le déchira, arracha quelques poils de sa barbe, griffa avec ses ongles son visage et le mit en sang. La

այնպէս ապականեալ դիմօք ել արտաքս յԱղթամարայ եւ գնաց յՈստան քաղաք առ Եզդին ամիրայն, եւ չարախօս եղեւ զհայրապետէն եւ զբնակչացն Աղթամարայ որպէս թէ նոքա արարեալ իցեն զայն :

Եւ Զաքարիա կաթողիկոսն զգացեալ զայն վաղվաղակի գնաց եւ ինքն յՈստան ցուցանել զանմեղութիւն իւր, եւ եգիտ զամիրայն ի բաղանիսն եւ զՉաքար ընդ նմա : Եւ ի չարախօսել նորա թէպէտ եւ յայտնի եցոյց կաթողիկոսն զանմեղութիւն իւր, բայց ամիրայն արհամարհեալ զամենայն բանս նորա ասէ ցնա. Չիք քեզ հնար ազատութեան եթէ ոչ ուրասցիս զՔրիստոս եւ դարձցիս յօրէնս մեր : Ասէ կաթողիկոսն. Ես անմեղ եւ անպարտ եմ եւ չիք իմ յանցուցեալ զմա բայց թէ եւ մեղապարտ գտանէի ոչ ուրանայի զՔրիստոս Աստուածն իմ զարարիչն ամենայնի :

Զայս լուեալ ծառայից ամիրային եւ այլոց այլազգեաց որ անդ կային, զեղան ի վերայ նորա անհնարին բարկութեամբ, եւ անդէն հարին սրով զանակուշտ նորա, եւ հանին ի քարշ ի բաղանեացն. եւ մերկացուցեալ զնա արկին չուան ի պարանոցն եւ քարշէին ընդ փողոցս եւ ընդ հրապարակս քաղաքին : Եւ բազմութիւն խաժամուժ ամբոխին խառնաձայն աղաղակաւ եւ դառն հայհոյութեամբ զհետ երթեալ հարկանէին զնա քարամբք եւ փայտիւ եւ սրով : Եւ խորտակեցան ամենայն ոսկերք նորա

figure ainsi décomposée, il sortit d'Aghthamar, se rendit à la ville d'Ostan auprès de l'émir Yesdin [1] et accusa le pontife et les habitants d'Aghthamar de lui avoir fait tout cela.

Le catholicos Zacharie, ayant pressenti cela, se rendit lui aussi aussitôt à Ostan pour prouver son innocence, et il y trouva l'émir aux bains en compagnie de Tchakar. Sur cette accusation, et bien que le catholicos eût prouvé son innocence, l'émir, méprisant toutes ses paroles, lui dit : « Il n'y a point d'autre moyen pour toi pour obtenir ta liberté, que de renier le Christ et te convertir à notre religion. » Le catholicos lui répondit : « Je suis innocent et non coupable, je n'ai commis aucun délit; et même si je me trouvais avoir été coupable, je ne renierais pas le Christ, mon Dieu, le créateur de toutes choses. »

Ayant entendu cela, les serviteurs de l'émir et d'autres infidèles présents assaillirent (le catholicos) avec une colère exaspérée, le frappèrent aussitôt d'un coup de sabre dans les côtes, l'entraînèrent hors des bains; ils le mirent à nu, lui attachèrent une corde au cou et le traînèrent à travers les rues et les places de la ville. La foule du bas peuple suivait avec des cris discordants et proférant des blasphèmes atroces; on le frappait à coups de pierres, de bâtons et de sabres. Tous ses os furent brisés, tout son corps ne forma qu'une seule

1. Le nom de l'émir manque dans J. MANANDEAN et H. ADJAREAN, Հայոց նոր վկաներ, t. I, Valaršapat, 1903, p. 173.

եւ խորտակեցաւ բոլոր մարմինն, փշրեցաւ գագաթն եւ ցրուեցաւ ուղեղ_ գլխոյն, եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած :

Եւ տարեալ_ անօրինաց զսուրբ մարմին նորա ընկեցին արտաքոյ քաղաքին եւ կամէին այրել. բայց * քրիստոնեայք հաճեալ զամիրայն առին եւ տարան յԱղթամար եւ թաղեցին անդ պատուով : * B p. 272 b.

Կատարեցաւ երանելի կաթողիկոսն Զաքարիա Մարգաց Ի եւ Յունիսի ԻԶ :

Եւ յայսմ աւուր հանգեան ի Քրիստոս աւագ Լեւոն թագաւորի բարեպաշտուհի դստերքն տիկին Զապլոն, տիկին Սպիլն եւ տիկին Փիմին :]

Մարգաց ԻԱ եւ Յունիսի ԻԷ : Վկայութիւն սրբոցն Արիստոկլեայ քահանայի եւ Դիմիտրիանոսի եւ Աթանասի :

Ճշմարիտ քահանայն եւ վկայն Քրիստոսի Արիստոկլէս կիպրացի էր ի քաղաքէն Տամասու, կաթողիկէ եկեղեցւոյն քահանայ. եւ վասն հալածանաց անօրինացն ելեալ ի լեառն թաքչէր այրի : Եւ մինչդեռ աղօթէր ծագեաց լոյս ի սրտի իւրում եօթնպատիկ պայծառ քան զարեգակն, եւ ձայն եղեւ առ նա յերկնից եւ ասէ. Երթիջիր ի քաղաքն Սաղամինիա եւ անդ տաց քեզ_ պսակ մարտիրոսութեան : Եւ առժամայն

9 սրբոցն] սրբոց վկայիցն B || 10 Դիմիտրիանոսի] սարկաւագի *add.* B — Աթանասի] կիսասարկաւագի *add.* B || 13 լոյս] պայծառ *add.* B || 14 եօթնպատիկ ... ասէ] եւ լուաւ հոգւոյն ձայն որ ասէր B || 15 քաղաքն] մայրաքաղաքն B.

plaie, son crâne se brisa et le cerveau se répandit hors de la tête. C'est ainsi qu'il rendit son âme à Dieu.

Les impies emmenèrent son saint corps, le jetèrent hors de la ville, et voulaient le brûler; mais * les chrétiens, ayant obtenu la faveur de l'émir, prirent (le corps), l'emmenèrent à Aghthamar et l'y inhumèrent avec honneur. * B p. 272 b.

Le bienheureux catholicos Zacharie fut martyrisé le 20 margats, 26 juin.

En ce jour également reposèrent dans le Christ les pieuses filles du grand roi Léon, dame Zabloun, dame Sibylle (*Spiln*) et dame Fimie.]

21 MARGATS, 27 Juin.

Martyre des saints Aristoclès le prêtre, Démétrien et Athanase.

Le vrai prêtre et martyr du Christ Aristoclès était chypriote, de la ville de Tamassus, prêtre de l'église principale (*katholikî*); il avait fui à la montagne et s'y tenait caché dans une grotte à cause de la persécution des impies. Pendant qu'il priait, une lumière jaillit dans son cœur, lumière sept fois plus éclatante que le soleil, et une voix du ciel se fit entendre à lui, qui disait : « Rends-toi à la ville de Salamine et là je t'accorderai la couronne du mar-

յարուցեալ գնայր, եւ ի մէջ ճանապարհին իջուանեցաւ յԵղիդրոս ի սրբոյն Բառնաբայ առաքելոյն տունն. եգիտ անդ զԴեմետրիանոս սարկաւագն եւ զԱթանաս կիսասարկաւագն եւ պատմեաց նոցա զծագումն լուսոյ ի սրտին իւրում, եւ զձայնն յերկնից. եւ յօժարեցոյց զնոսա երթալ զկնի եւ մարտիրոսանալ ։ Եւ յուղի անկեալ գնացին երեքեանն ի մայրաքաղաքն Սաղամինիա, եւ ելին ի բարձր տեղի ։ Եւ տեսեալ զնոսա դատաւորին քաղաքին Սաբինոս կոչեաց առաջի իւր ի հարցումն. եւ նոքա համարձակութեամբ խոստովանեցան եթէ Քրիստոնեայ եմք եւ Քրիստոսի ծառայք ։

* A fol. 294 r° b. Եւ զսուրբ քահանայն զԱրիստոկլէս զան * հարին ուժգին, եւ ապա հատին զգլուխն Յունիսի ԻԷ, եւ թաղեցին զնա քրիստոնեայքն ի նշանաւոր տեղւոջ ։

Եւ ի նմին աւուր տարան զսուրբն Դեմետրիանոս սարկաւագն եւ զԱթանաս կիսասարկաւագն առաջի Սաբինոսի դատաւորին, եւ աղօքանօք խրատ տայր ուրանալ զՔրիստոս եւ ոչ չարաչար մեռանել իբրեւ զԱրիստոկլէս ։ Իսկ սուրբ վկայքն Քրիստոսի մեծաբարբառ ձայնիւ եւ պայծառ երեսօք խոստովանեցան զանուն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։ Եւ խիստ տանջանօք չարչարեցին, եւ Աստուած անբիծս եւ անարատս պահեաց զնոսա ։ Եւ դարձեալ միւսանգամ դատաւորն հարցանէր եթէ

3 զձայնն յերկնից] զբարբառն երկնաւոր B || 8 զգլուխն] Մարգաց ԻԸ եւ *add.* B || 14 մերոյ] հրաման ետ եւ *add.* B || 14-15 եւ Աստուած... զնոսա *om.* B.

tyre. » Il se leva aussitôt et partit. En route, il descendit dans la maison du saint apôtre Barnabé à Lédron (*Elydros*)[1], y rencontra le diacre Démétrien et le sous-diacre Athanase, et leur raconta le jaillissement de la lumière dans son cœur et la voix du ciel. Il fit naître en eux le désir de le suivre et de devenir martyrs. Ils se mirent en route tous les trois, se rendirent à la capitale Salamine et montèrent en un endroit élevé. Sabinus, le juge de la ville, les ayant aperçus, les fit venir en sa présence pour les interroger, et ils confessèrent avec hardiesse : « Nous sommes chrétiens et serviteurs du Christ. »

* A fol. 294 r° b. On frappa vigoureusement le saint prêtre Aristoclès* et on lui trancha ensuite la tête le 27 juin. Les chrétiens l'inhumèrent dans un endroit choisi.

Le même jour on conduisit le diacre saint Démétrien et le sous-diacre Athanase devant le juge Sabinus, qui, avec des supplications, les engagea à renier le Christ et à ne point mourir d'une mort violente comme Aristoclès. Mais les saints martyrs du Christ, à haute voix et avec un visage resplendissant, confessèrent le nom du Christ notre Dieu. On les soumit à d'atroces tortures, mais Dieu les préserva intacts et sans blessures. Le juge les interrogea

1. Cette forme dérive du grec ἐν Λέδροις, par réunion de la préposition au substantif.

դառնան ի բանս նորա. եւ յորժամ ոչ կարաց հաւանեցուցանել զնոսա, հրամայեաց եւ հատին զգլուխս նոցա :

Եւ երթեալ քրիստոնեայքն առին զմարմինս նոցա եւ եդին ի տապանի ընդ սրբոյն Արիստոկղէսի :

[B* Տօն է մեծահանդէս Եփեսոսի առաջին սուրբ ժողովոյն : * B p. 274 a.

Երրորդ սուրբ ժողովն եղեւ յԵփեսոս սկիզբն առեալ ի թագաւորութեանն Թէոդոսի Փոքու. Կեղեստինոս պապ Հռոմայ, Կիւրեղ պատրիարք Աղեքսանդրու, Յոհան պատրիարք Անտիոքայ, Յոբնաղ Երուսաղեմի, Մեմնոն Եփեսոսի, եւ էին սուրբ հարքն երկու հարիւր որք եկին ի վերայ Նեստորի մարդապաշտին, որ պատրիարք էր լեալ Կոստանդինուպօլսի, եւ զՔրիստոս հերձէր եւ բաժանէր. բարձրացեալ մարդ զնա ասէր, եւ ոչ Աստուած մարմնացեալ. երկուս որդիս ի վերայ միոյ Քրիստոսի ասէր, եւ երկուս անձնաւորութիւնս. եւ ոչ աստուածածին զսուրբ կոյսն Մարիամ այլ քրիստոսածին դաւանէր զայն որ ծնաւ զԱստուած եւ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս :

Այսր աղագաւ ի սուրբ սինհոդոսն համաձայնեցան եւ զայս հայհոյութիւնս բարձեցին. եւ իբրեւ զհրէախորհ զմարդապաշտն զՆեստոր ցուցին : Եւ զտիրուհին զամենասուրբ կոյսն ճշմարիտ աստուածածին քարոզեցին, եւ զի ի նմանէ ծնեալ անմար-

2 հատին] սրով *add.* B.

à nouveau une autre fois et leur demanda s'ils consentaient à ses propositions, mais ne pouvant les persuader, il ordonna de leur trancher la tête.

Les chrétiens allèrent prendre leurs corps et les déposèrent dans le tombeau avec saint Aristoclès.

[B* Fête avec grande solennité du premier concile d'Éphèse. * B p. 273 a.

Le troisième saint concile eut lieu à Éphèse. Il commença sous le règne de Théodose le Jeune. Célestin, pape de Rome; Cyrille, patriarche d'Alexandrie; Jean, patriarche d'Antioche; Juvénal de Jérusalem; Memnos d'Éphèse, et tous les saints pères, au nombre de deux cents, vinrent contre Nestorius, qui avait été patriarche de Constantinople, et qui professait le Christ (pur) homme, en sectionnant et séparant le Christ en deux, le disant un homme supérieur et non point Dieu incarné. Il disait deux fils en un seul Christ et deux personnes; et ne proclamait pas la sainte vierge Marie mère de Dieu, mais mère du Christ; elle qui avait enfanté Jésus-Christ notre Dieu et Notre-Seigneur.

C'est pour cette raison que dans le saint synode (les pères) se mirent d'accord et anéantirent un tel blasphème; ils démontrèrent que Nestorius, adorateur de l'homme, pensait comme les juifs; ils proclamèrent notre mai-

մնաբար մարմնացեալ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ճշմարիտ Որդի Աստուծոյ դաւանեցին :

Յովհաննէս Անտիոքացին տրտմեալ զի առանց իւր զՆեստոր ի քահանայութենէն լուծին, եւ առեալ ընդ իւր զեկեալ եպիսկոպոսս ընդ որս եւ զԹէոդորիտոս լուծումն արար Կիւրղի, եթէ առանց կանոնաց եկեղեցւոյ արար զժողովն, եւ այսպէս բաժանեցան : Բայց փութանակի յետ այսորիկ հրամանաւ թագաւորին Թէոդոսի համաձայնեցան եւ ի միասին նզովեցին սուրբ հարքն զՆեստորիոս : Եւ խոստովանեցան զՔրիստոս մի անձնաւորութեամբ անբաժանելի միաւորեալ յերկուց բնութեանցն մի Որդի եւ Տէր եւ մի Քրիստոս, եւ զսուրբ կոյսն Մարիամ ճշմարիտ աստուածածին :]

Մարգաց ԻԲ եւ Յունիսի ԻԸ : Վկայութիւն սրբոցն Եւստոքէոսի եւ որդւոյն Ուրբանոսի եւ երից դստերացն Պռոբի եւ Լուլի, եւ Գայանոսի :

Սուրբ վկայն Քրիստոսի Եւստոքէոս քուրմ էր կռոցն քաղաքին Ուսադոնայ, յաւուրս Մաքսիմիանոսի անօրէն արքային եւ Ագրիպպեայ դատաւորին : Եւ տեսանէր զսուրբ վկայսն զի ահագին տանջանացն համբերէին վասն Քրիստոսի . զզջացաւ ի միտս իւր,

10 որդւոյն] իւրոյ *add.* B || 11 եւ] եղբօրորդւոյն իւրոյ *add.* B || 14 տանջանաց] չարչարանաց B:

tresse, la très sainte Vierge, véritable mère de Dieu, et celui qui naquit d'Elle sans semence, et prit corps, Notre-Seigneur Jésus-Christ, vrai Fils de Dieu.

Jean d'Antioche, attristé de ce que sans lui on avait retiré à Nestorius le sacerdoce et s'étant adjoint d'autres évêques parmi lesquels Théodoret, objecta à Cyrille qu'il avait convoqué le synode sans (observer) les canons de l'Église et il y eut une scission. Mais aussitôt après, sur l'ordre de l'empereur Théodose, les saints pères se mirent d'accord et unanimement anathématisèrent Nestorius. Ils confessèrent le Christ ayant dans une seule personne les deux natures inséparablement réunies, un Fils et Seigneur et un seul Christ, et la sainte vierge Marie vraie mère de Dieu.]

22 MARGATS, **28 Juin**.

Martyre des saints Eustochius, Urbain son fils et ses deux [1] filles Probè et Loulou avec Gaïanus.

Le saint martyr du Christ Eustochius était prêtre des idoles dans la ville d'Ousada (*Ousadon*), aux jours de l'empereur impie Maximien et du juge Agrippas. Témoin des atroces tortures endurées par les chrétiens pour le

1. Le manuscrit a երից « trois » que B a corrigé, comme nous le faisons dans la traduction, mais երից dérive directement du grec (manuscrit D de *Syn. Cp.*, col. 766, n. 2) qui a « trois enfants », en y comprenant Urbain.

եւ ծանեաւ զանօտի մոլորութիւն * կռապաշտութեանն ։ Գնաց առ Եւդոքսիոս եպիսկոպոսն Անտիոքու, խոստովանեցաւ զմեղս իւր եւ զամբարիշտ զաւանութիւնն, հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ ։ Եւ մինչդեռ յաւազանին էր եւ ի զարմացումն տեսանէ երիս արս զամբարօք եւ ունէին ի գիրկս իւրեանց զերիս զաւակս նորա սպիտակ զգեստիւք ։ Եւ աղաղակեաց մեծաւ ձայնիւ եւ ասէ. Քրիստոս Աստուած ճշմարիտ է գիտութիւն աստուածութեանդ քո, գոհանամ զքէն արարիչ երկնից եւ երկրի ։ Եւ յորժամ ել յաւազանէն ոչ կարէր խօսել ի զարմացմանէն տեսլեանն, եւ եպիսկոպոսին արարեալ աղօթս վասն նորա բացաւ լեզուն, եւ պատմեաց զտեսիլն ։ Եւ ասէ ցնա եպիսկոպոսն. Պարտ է քեզ ուսուցանել զորդիսն քո եւ լուսաւորել զի եւ նոքա կեցցեն ։ * A fol. 294 v° a.

Եւ յետ ութ աւուր ձեռնադրեաց զնա քահանայ երկրին Սաւրացւոց. եւ երթեալ անդր քարոզէր զբանն եւ զհաւատն Քրիստոսի ։ Գնաց ի գեօղն Լիւտիա ուր էին երեք զաւակքն իւր եւ եղբօրորդին իւր Գայիանոս, ողջոյն ետ նոցա եւ ուսոյց զբանն կենաց, պատմեաց նոցա եւ զտեսիլն, եւ թէ որպէս եղեւ քահանայ, եւ մկրտեաց զնոսա եւ զամենայն ազգականս իւր ։

Եւ երթեալ կռապաշտիցն պատմեցին դատաւորին, եւ տարան զնոսա առ ի հար-

3 հաւատաց ի Քրիստոս *om.* B — եւ ի զարմացումն] եղեւ ի զարմացման B || 4 զերիս] զերեսին B || 13 ողջոյն ետ նոցա] ողջունեաց զնոսա B.

Christ, il se repentit dans son esprit et reconnut la vanité de l'erreur * de l'idolâtrie; il se rendit auprès d'Eudoxe, évêque d'Antioche, lui confessa ses péchés et sa religion impie, crut au Christ et fut baptisé. Pendant qu'il se trouvait dans les fonts baptismaux, il vit dans une extase trois hommes qui tenaient des flambeaux et portaient sur leur sein ses trois enfants en vêtements blancs. Il s'écria à haute voix et dit : « Christ Dieu, la science de Ta divinité est vraie, je t'en rends grâces, Créateur du ciel et de la terre. » Lorsqu'il sortit des fonts il ne pouvait parler à cause de l'extase de la vision, mais l'évêque ayant fait des prières pour lui, il recouvra la parole et raconta la vision. L'évêque lui dit : « Il faut que tu enseignes tes enfants et les illumines, pour qu'ils soient sauvés eux aussi. » * A fol. 294 v° a.

Huit jours après, il l'ordonna prêtre pour le pays des Isauriens. (Eustochius) s'y rendit, y prêcha la parole et la foi du Christ. Ensuite, il se rendit au village de Lystra (*Lytia*), où se trouvaient ses trois enfants et son neveu Gaïanus. Il les salua, leur enseigna la parole de vie et leur raconta sa vision et comment il était devenu prêtre; et il les baptisa en même temps que tous ses proches.

Les idolâtres allèrent le raconter au juge, et les conduisirent pour être

ցուցին. եւ խոստովանեցան զքրիստոնէութիւնն, եւ յանձն առին մեռանել վասն անուան Քրիստոսի : Կախեցին * զԵւստաքէոս մերկ, եւ սրախողխող արարին զանձն :

* A fol. 294 v° b.

Եւ վասն զի երթալոց էր դատաւորն ի գաւառս արեւելից, առաքեաց զնոսա կապանօք ի քաղաքն Անկիւրիա առ Կրիպինոս դատաւորն : Եւ ի ճանապարհին պատուիրէր զաւակացն եւ եղբօրորդւոյն իւրոյ հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի, եւ ոչ վեհերել ի տանջանացն : Եւ յորժամ գնացին կացին առաջի դատաւորին, եւ ամենեւին ոչ աղաչանաց հաւանեցան եւ ոչ ի սպառնալեաց երկեան : Նախ կախեցին զփայտէ զմին ի դստերացն զՊրոբէ, եւ քերթեցին զստինսն, եւ ապա կախեցին զԼուլու եւ զՈւրբանոս ընդդէմ միմեանց, եւ քերթեցին զծնօտսն : Եւ Գայանոս ընդունէր զարիւն նոցա ի ձեռս իւր եւ օծանէր զերեսն եւ զանձն : Մերկացուցին եւ զԳայանոս եւ ձաղկեցին զթիկունսն եւ զլանջսն ուժգին, եւ ձեռք դահճացն գօսացան : Եւ մինչդեռ երեք մանկունքն ի կախաղանին էին տեսին երիս աղաւնիս որ եղեն լուսաւոր հրեշտակք եւ քաջալերէին զնոսա :

Տարան առաջի եւ զսուրբ քահանայն զԵւստոքէոս, եւ յանձն առ չարչարիլ վասն անուանն եւ հաւատոյն Քրիստոսի : Եւ հրամայեաց դատաւորն հատանել զգլուխ նորա : Եւ երթեալ առ զաւակսն համբուրեաց զնոսա եւ աղօթեաց * առ Աստուած

* A fol. 295 r° a.

11-13 եւ ձեռք դահճացն ... զնոսա *om.* B.

interrogés. Ils confessèrent le christianisme et acceptèrent de mourir pour le nom du Christ. On suspendit * Eustochius, nu, et on lui déchira le corps par le glaive.

* A fol. 294 v° b.

Puis, comme le juge devait partir pour les provinces orientales, il les envoya, chargés de chaînes, à la ville d'Ancyre, au juge Agrippinus (*Kripinos*). En route, (Eustochius) recommandait à ses enfants et à son neveu de demeurer fermes dans la foi au Christ et de ne point reculer devant les tortures. Lorsqu'ils furent arrivés, on les mit en présence du juge, mais ils ne consentirent nullement à ses supplications, ni ne craignirent ses menaces. On suspendit à un poteau d'abord l'une des filles, Probè, et on lui déchira les seins; ensuite on suspendit Loulou et Urbain, l'un vis-à-vis de l'autre, et on leur écorcha les mâchoires. Gaïanus recueillait leur sang dans ses mains et s'en frottait le visage et le corps. On mit à nu Gaïanus et on lui fustigea vigoureusement les épaules et la poitrine, mais les mains des bourreaux se desséchèrent. Pendant que les trois enfants étaient sur la potence, ils aperçurent trois colombes qui devinrent trois anges lumineux et les encouragèrent.

On conduisit également le saint prêtre Eustochius devant (le juge) et il accepta de souffrir pour le nom et la foi du Christ. Le juge ordonna de lui trancher la tête. Il se rendit auprès de ses enfants, les embrassa et pria * Dieu

* A fol. 295 r° a.

վասն նոցա. նոյնպէս եւ զեղբօրորդին իւր ։ Եւ նոյնժամայն հատին զգլուխն Գայանոսի ։

Եւ զերիս զաւակս սրբոյն Եւստոքիոսի վասն զի ոչ ուրացան զՔրիստոս կապեցին զերեսեանն ի պղնձակապ անիւ, եւ հոլովեցին մինչեւ կոտորեցան ամենայն մարմինք նոցա, եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զվէրս նոցա ։ Գերծին զհերս գլխոց նոցա եւ բեւեռս հարին ի գագաթն, եւ այպն առնելով անցուցանէին զնոսա ընդ մէջ քաղաքին մերկ, եւ հանին արտաքոյ քաղաքին եւ հատին զգլուխս նոցա ։ Ձայն եղեւ առ նոսա յերկնից եւ ասէ. Զտեղիդ յորում արիւնդ ձեր հեղաւ օրհնեցից եւ լիցի տուն աղօթից, եւ դեղ ամենայն ցաւոց ։

Եւ երթեալ քրիստոնէիցն առին զմարմինս նոցա եւ եդին ի տապանի ընդ հօրն իւրեանց սրբոյն Եւստոքէոսի եւ Գայանոսի ։ Եւ կատարի տօն սոցա Յունիսի ԻԸ ։

Մարգաց ԻԳ եւ Յունիսի ԻԹ ։ Վկայութիւն մեծ եւ փառաւորեալ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի ։

Առաքեալն Քրիստոսի Պետրոս ելեալ յԵրուսաղեմէ ի քարոզել զբանն Աստուծոյ

1 նոցա] եւ կատարեցաւ սուրբն Եւստաքէոս քահանայն Մարգաց ԻԲ եւ Յունիսի ԻԸ B || 4 զերեսեանն] զնոսա B — եւ հրեշտակ ... նոցաom.B || 7-9 Ձայն ... ցաւոց om. B || 11 եւ կատարի ... ԻԸ om. B || 12-13 Վկայութիւն ... Պաւղոսի] Ամենաժողով եւ մեծահանդէս տօն է սուրբ եւ փառաւորեալ եւ օրհնեալ վկայութիւն սրբոց գլխաւորաց առաքելոցն, խաչելութեան մեծին Պետրոսի վիմի, եւ գլխատութեան երկոց երանեալ վարդապետին հեթանոսաց Պօղոսի անօթոյն ընտրութեան, որ ի մեծն Հռոմ կատարեցան ի Ներոնէ կայսերէ B || 14 Քրիստոսի] սուրբ B.

pour eux. Il fit de même à son neveu. On trancha aussitôt la tête à Gaïanus.

Les trois enfants de saint Eustochius, pour ne pas avoir renié le Christ, furent attachés ensemble à une roue à chaînes de bronze, et on les fit tourner jusqu'à ce que tout leur corps fût brisé, mais l'ange du Seigneur guérit leurs plaies. On leur rasa la tête, on enfonça des clous dans leur crâne, et en guise de dérision on les promena nus à travers la ville, puis on les fit sortir hors de la ville et on leur trancha la tête. Une voix du ciel se fit entendre à eux qui dit : « Je sanctifierai l'endroit où votre sang a été répandu et il deviendra une maison de prières, et le remède de tous les maux. »

Les chrétiens allèrent relever leurs corps et les déposèrent dans un tombeau avec leur père saint Eustochius et Gaïanus. Leur fête a lieu le 28 juin.

23 MARGATS, **29 Juin.**

Martyre des grands et glorieux apôtres les saints Pierre et Paul.

L'apôtre du Christ Pierre, en quittant Jérusalem pour prêcher dans le

յերկրի գնաց ի Կապադովկիա եւ ի Գաղատիա, ի Պոնտոս եւ ի Բիւթանիա, եւ ապա ի Հռոմ ընդ Պաւղոսի ։ Եւ գտին անդ զՍիմոն զկախարդն որ զարմացուցանէր մո-

* A fol. 295 r° b. գութեամբն * իւրով զժողովուրդս Հռովմայեցւոց ասէր զանձնէ իւրմէ թէ. Ես եմ Քրիստոսն ։ Եւ ասէին Հռոմայեցիքն ցՊետրոս առաքեալն վասն Սիմոնի եթէ Մեծ ոմն իցէ եւ առնէ նշանս եւ հաւատացուցանէ զժողովուրդն ։

Եւ երթեալ Պետրոս յերեսն Սիմոնի եւ ասէ. Ոչ դու իցես որ խնդրեցեր ի մէնջ առաքելոցս Քրիստոսի ընչիւք ստանալ զշնորհս Հոգւոյն սրբոյ, եւ զի առնիցես եւ դու նշանս իբրեւ զմեզ, եւ մեք նզովեցաք զքեզ, եւ այժմ եկիր աստ կամելով ի մէնջ գաղտ կեալ ։ Ասէ Սիմոն. Ես եմ Քրիստոս եւ դու ոչ ծանեար զիս, եւ արդ տես եթէ որպէս առնեմ նշանս մեծամեծս ։ Եւ առժամայն Սիմոն մոգութեամբ մահացոյց զորդի կնոջ այրւոյ, եւ զպրուիքտոյ զորդին կախարդութեամբ եսպան, եւ խօսեցաւ յունկն ցլոյ եւ յերկուս հերձաւ ։ Իսկ Պետրոս զմեռեալսն եւ զարջառն աղօթիւք կենդանացոյց ։ Եւ զարմացան ժողովուրդն եւ ասեն, Աստուածն Պետրոսի մեծ է որ պարգեւէ կեանս մեռելոց քան զՍիմոնին որ մահացուցանէ եւ կենդանացուցանել ոչ կարէ ։

Լուաւ Ներոն արքայն եւ կոչեաց առաջի իւր զՊետրոս եւ զՍիմոն եւ զՊիղատոս.

6 — p. 1675, l. 13 Եւ երթեալ Պետրոս . . . բարկութեամբ] Իսկ սուրբ առաքեալքն Պետրոս եւ Պօղոս առաջի ամենայն բազմութեանն խայտառակեցին զնա անուամբն Քրիստոսի, եւ որ ամբարտաւան մտօք ի բարձրութիւնս երկնից թռչէր անկաւ զլխակոր եւ յերկիր կործանեցաւ, եւ յամօթ եղեն ամենայն հետեւողք նորա ։ Եւ Ներոն արքայն բարկութեամբ B.

monde la parole de Dieu, se rendit en Cappadoce, en Galatie, dans le Pont, en Bithynie et ensuite à Rome, accompagné de Paul. Ils y rencontrèrent le sor-

* A fol. 295 r° b. cier Simon qui par sa magie étonnait * le peuple romain et disait de lui-même : « Je suis le Christ. » Les Romains disaient à l'apôtre Pierre au sujet de Simon : « C'est quelqu'un de grand, il fait des prodiges et persuade le peuple. »

Pierre se rendit en présence de Simon et lui dit : « N'est-ce pas toi qui nous demandas, à nous les apôtres du Christ, d'obtenir pour de l'argent les grâces du Saint-Esprit, afin de faire, toi aussi, des miracles comme nous? Nous t'avons anathématisé, et maintenant tu es venu ici cherchant vivre à notre insu. » Simon répondit : « Je suis le Christ et tu ne m'as pas reconnu; regarde voir comme je fais de grands prodiges. » Et aussitôt Simon fit, par magie, mourir le fils d'une femme veuve et tua par maléfice le fils du préfet (*privikhtoy*); il parla aussi à l'oreille d'un taureau, qui éclata en deux. Mais Pierre ressuscita par ses prières les morts et le bovin. La population émerveillée dit : « Le Dieu de Pierre qui accorde la vie aux morts est plus grand que celui de Simon, qui tue, mais ne peut point ressusciter. »

L'empereur Néron, ayant appris cela, fit venir en sa présence Pierre, Simon

եհարց Ներոն զՊիղատոս. Ճանաչե՞ս զսոսա : Ասէ Պիղատոս վասն Պետրոսի եթէ Աշակերտ էր Յիսուսի զոր ես ետու ի ձեռս Հրէիցն զի խաչեսցեն զնա. իսկ այրս * այս ոչ է Յիսուսն այն, քանզի յոյժ թաւագլուխ է եւ հաստ անձն : Եւ ելին յերեսաց Ներոնի : Եւ Պետրոս եւ Սիմոն առնէին նշանս հակառակ միմեանց, Սիմոն առ աչօք եւ երեւմամբ, եւ Պետրոս ճշմարտութեամբ եւ յայտնի : Ասէ Սիմոն զՊետրոս. Ասես վասն իմ որ չեմ Քրիստոսն որ համբարձաւն յերկինս : Եւ նոյնժամայն սլացաւ եւ թռչէր ի բարձրութիւնս երկնից : Ասէ Պետրոս. Դիցուք ծունր առ Աստուած եւ աղօթեսցուք : Եւ մինչդեռ յերկիր խոնարհեալ կային եւ աղաչէին զԱստուած զի ընկեսցէ զնա ի բարձրութենէն, եւ ահա Սիմոն գլխիվայր իջանէր ի վերուստ ի վայր, եւ անկաւ ի մէջ քաղաքին ի վերայ քարեայ սալի, եւ խորտակեցաւ ի բազում մասունս : Եւ երթեալ աշակերտքն իւր ժողովեցին զմարմինն եւ եդին ի վերայ պղնձի սեան ի մէջ պօղոտային : Իսկ քարեղէն սալն հերձաւ խաչանման եւ երեւի մինչեւ ցայսօր : * A fol. 295 v° a.

Զայս լուեալ Ներոն արքայն տրտմեցաւ յոյժ ընդ կորուստն Սիմոնի, եւ բարկութեամբ հրամայեաց ըմբռնել զՊետրոս, վասն զի բազում ժողովուրդս եւ չորս հարճս պերեւէքտայ դարձոյց ի Քրիստոս :

Եւ գիտացեալ զայս Պետրոսի փախեաւ, եւ ելեալ ի քաղաքէն դէպ եղեւ Քրիստո-

14 ժողովուրդս] եւ երեւելի արս *add.* B || 15 Քրիստոս] Քրիստոսի հաւատն B || 16 փախեաւ... Քրիստոսի] փախչէր ի քաղաքէն. եւ ետես ի տեսլեան որպէս թէ ինքն ելանէր ի Հռոմայ եւ Տէրն մտանէր ի Հռոմ B.

et Pilate. Néron demanda à Pilate : « Les reconnais-tu? » Pilate répondit au sujet de Pierre : « C'était le disciple de Jésus que j'ai remis entre les mains des Juifs pour le crucifier; quant à cet * homme, ce n'est pas ce Jésus-là, car il a une tête trop chevelue et il est trop gros de taille. » Et ils sortirent de la présence de Néron. Pierre et Simon opéraient des prodiges contradictoirement; Simon les faisait pour les yeux et en apparence; mais Pierre en vérité et en évidence. Simon dit à Pierre : « Tu dis de moi que je ne suis pas le Christ qui est monté au ciel. » Et aussitôt il prit son élan et vola dans les hauteurs du ciel. Pierre dit : « Agenouillons-nous devant Dieu et prions. » Et pendant qu'ils étaient prosternés à terre et priaient Dieu de le faire tomber de la hauteur, voici que Simon la tête la première descendit du haut en bas, tomba au milieu de la ville sur une dalle de pierre et se brisa en plusieurs morceaux. Ses disciples ramassèrent son corps et le déposèrent sur une colonne de bronze au milieu du Palatin (*Polotayin?*). Quant à la dalle de pierre, elle se brisa en forme de croix et on la voit jusqu'à ce jour. * A fol. 295 v° a.

L'ayant appris, l'empereur Néron s'attrista beaucoup sur la perte de Simon, et, irrité, il ordonna de saisir Pierre parce qu'il avait converti au Christ beaucoup de monde et quatre concubines du préfet (*perevekhtoy*).

Pierre, l'ayant appris, prit la fuite; étant sorti de la ville, il rencontra le

սի, եւ ասէ. Յի՞նչ պէտս այդր աստ Տէր : Եւ ասէ Քրիստոս. Մտանեմ ի Հռոմ զի * խաչեցայց : Ասէ Պետրոս. Եւ դարձեալ միւսանգամ խաչիս Տէր : Եւ նա ասէ. Այո, միւսանգամ խաչիմ Պետրէ. եւ զայս ասացեալ վերացաւ յերկինս : Եւ գիտաց Պետրոս զի վասն իւր ասաց Տէրն, եւ դարձաւ խնդութեամբ ի Հռոմ փառաւորելով զԱստուած :

* A fol. 295 v° b.

Եւ յորժամ կալան զնա զպատմուճանն եպիսկոպոսութեանն Հռոմայ ետ յաշակերտն իւր ի Լինոս, զի նա միայն գնաց զհետ Պետրոսի : Եւ յորժամ տանէին զնա ի խաչ հանել աղաչեաց Պետրոս զդահիճսն զի մի խաչեսցեն զնա կանգուն որպէս զՏէրն, այլ գլխիվայր. եւ խաչեցին զնա այնպէս : Եւ ի խաչէն ուսուցանէր ժողովրդեանն զբանն կենաց, եւ աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Դու Տէր հայր մեր, դու եղբայր մեր, դու սիրելի մեր, դու հոգացող մեր, դու ամենայն յամենայնի եւ ոչ այլ իմանալի բայց ի քէն Տէր Աստուած մեր : Գոհանամ զքէն եւ խոստովանիմ զքեզ եւ փառաւորեմ, զի դու միայն ես Աստուած այժմ եւ յաւիտեանս յաւիտենից : Եւ ժողովուրդն ասացին. Ամէն : Եւ առ ժամայն աւանդեաց զհոգին :

Եւ այր մի հաւատացեալ որոյ անուն էր Մարկեղոս իջոյց ի խաչէն եւ անոյշ եղօք եւ սուրբ կտաւօք թաղեաց զմարմինն : Եւ ի գիշերին յայնմիկ հրեշտակ Տեառն տանջեաց զՆերոն արքայն, եւ ասէ. Թող տուր ծառային Աստուծոյ եւ մի հալածեր :

1 Մտանեմ] Գամ B || 3 յերկինս] եւ զարթուցեալ *add.* B || 5 կալան զնա] զինուորքն ըստ հրամանի Ներոնի եւ տարան ի խաչ հանել. եւ նա *add.* B || 15-16 Եւ ի գիշերին... հալածեր *om.* B.

Christ et lui dit : « Pourquoi viens-tu ici, Seigneur ? » Le Christ lui répondit : « J'entre à Rome pour * être crucifié. » Pierre dit : « Viens-tu pour être crucifié de nouveau une deuxième fois, Seigneur? » Celui-ci répondit : « Oui, Pierre, je viens pour être crucifié une deuxième fois, » et il s'éleva au ciel. Pierre comprit que le Seigneur avait dit cela à son intention, il retourna avec joie à Rome en glorifiant Dieu.

* A fol. 295 v° b.

Lorsqu'on l'eut saisi, il remit sa tunique d'évêque de Rome à son disciple Lin (*Linos*), qui seul avait suivi Pierre. Puis, lorsqu'on l'emmena pour être crucifié, Pierre pria les bourreaux de ne point le crucifier debout comme le Seigneur, mais la tête en bas. Et c'est ainsi qu'on le crucifia. De la croix (Pierre) enseigna la parole de la vie à la population, il pria Dieu et dit : « Toi, Seigneur, notre père; Toi notre frère, Toi notre bien-aimé, Toi qui prends soin de nous, Toi qui es tout dans tout, et sans qui personne d'autre n'est compréhensible, Seigneur, notre Dieu. Je Te rends grâces et je Te confesse, je Te glorifie, car Toi seul es Dieu, maintenant et dans les siècles des siècles. » Ceux qui assistaient répondirent : « Amen. » Il rendit aussitôt son âme.

Un fidèle, dont le nom était Marcel, descendit le corps de la croix, et l'enterra enveloppé dans des parfums et du linge propre. Dans la même nuit l'ange du Seigneur avait fait souffrir l'empereur Néron et lui avait dit : « Laisse en paix le serviteur de Dieu et ne le persécute pas. »

*Էր սուրբն Պետրոս *կարճահասակ, հեր գլխոյն գանգուր եւ սպիտակ, մօրուսն թաւ եւ սպիտակ, սպիտակամարմին, երկայնաքիթ, թաւայօն, խստասիրտ եւ երագահաշտ, եւ սքանչելագործ :* * A fol. 296 r° a.

Իսկ երանելին Պօղոս առաքեալն էր ի Տարսոն քաղաքէն, յաւուրս անօրէն արքայիցն Տիբերի եւ Գայոսի եւ Կղաւդիոսի եւ Ներոնի. էր Հրեայ ի Հրեայ ծնողաց, եւ օրինաւոր փարիսեցի եւ նախանձայոյզ հաւատոյն իւրոյ : Եւ առ հրամանս ի քահանայապետիցն հալածել զքրիստոնեայսն, եւ գործակից եղեւ ի մահ Ստեփաննոսի Նախավկային պահելով զհանդերձս քարկոծչացն :

Եւ յորժամ մերձեցաւ ի Դամասկոս եղեւ յերկնից լոյս եւ կուրացոյց զնա, որպէս պատմէ Ղուկաս ի Գործս առաքելոցն : Մկրտեցաւ յԱնանիայէ, եւ դարձաւ յԵրուսաղէմ, եւ ծանոյց զնա Բառնաբաս առաքելոցն զկնի չորից ամաց Համբարձմանն Քրիստոսի, եւ կարգեցին զնա առաքեալքն Քրիստոսի սարկաւագ, եւ ծառայէր սրբոց, եւ քարոզէր ամենեցուն զՔրիստոս :

*Եւ այս են քաղաքք յորս գնաց նա եւ ուսուցանէր զբանն կենաց. ի Դամասկոսէ սկսեալ յԵրուսաղէմ չորիցս անգամ, ի Տարսոն, յԱնտիոք Ասորւոց չորիցս անգամ, ի Սելեւկիա, ի Կիպրոս, ի Պերգէն, յԱնտիոք Պիսիդեայ երկիցս անգամ, ի Լիւկաոնիայ, *ի Պամփիւլեա, յԱտալիա երկիցս անգամ, յԻկոնիոն, ի Լիւստրա, ի Դերբէն երկիցս* * A fol. 296 r° b.

5 եւ Կղաւդիոսի *om.* B || 17 ի Պամփիւլեա *om.* B.

Saint Pierre était * de petite taille, les cheveux de sa tête étaient crépus et blancs, sa barbe épaisse et blanche; il avait la peau blanche, le nez long, les sourcils épais; il avait le cœur dur, mais prompt à la conciliation; il était thaumaturge. * A fol. 296 r° a.

Quant au bienheureux apôtre Paul, il était de la ville de Tarse, aux jours des empereurs impies Tibère et Gaïus (Caligula), Claude et Néron. Il était Juif, de parents juifs, légiste pharisien, et fervent zélateur de sa foi. Il avait obtenu des grands prêtres des ordres pour persécuter les chrétiens; il participa au meurtre d'Étienne le protomartyr, en gardant les vêtements de ceux qui le lapidèrent.

Lorsqu'il approcha de Damas, une lumière venant du ciel resplendit et le rendit aveugle, ainsi que le raconte Luc dans les Actes des Apôtres. Il fut baptisé par Ananie, et retourna à Jérusalem. Barnabé le fit connaître aux apôtres quatre ans après l'ascension du Christ; les apôtres du Christ l'ordonnèrent diacre : il servait les saints et prêchait le Christ à tous.

Voici les villes où il se rendit pour enseigner la parole de la vie : en commençant par Damas, quatre fois à Jérusalem, à Tarse, à Antioche de Syrie quatre fois, à Séleucie, en Chypre, à Pergè, à Antioche de Pisidie deux fois, en Lycaonie, * en Pamphylie, à Attalia deux fois, à Iconium, à Lystras, à * A fol. 296 r° b.

անգամ, ի Բիւրեա, յԱթէնս, ի Կորնթոս, յԵփեսոս երկիցս անգամ, ի Կեսարիա երկիցս անգամ, ի Կրետէ, ի Մակեդոնիա, յԵլլադա, յԱսոն, ի Միտիլենի, ի Քիոս, ի Սամոս, ի Մելիտոն, ի Կայոնիրիդոն, ի Պատարաս, ի Տիւրոս Պտղեմեայայ, ի Փիլիպպիա, եւ ապա կապանօք ի Հռոմ, եւ դարձեալ ի Հռոմայ ի Սիդոն, ի Միւռիս Լիկիացւոց, ի Կնիդոն, ի Նիսոն, ի Սուրակիսոն, յՕրիգն, ի Պոտիէլու, յԱպամիա, ի Տաբերնոն, եւ դարձեալ ի Հռոմ երկրորդ անգամ ։

Եւ բազում ժամանակս շրջագայութեամբ գնաց ի վաթսուն եւ հինգ քաղաքս եւ ի գաւառս քարոզել զանունն Քրիստոսի ։ Եւ բազում վշտաց եւ նեղութեանց վասն սիրոյն եւ հաւատոյն Քրիստոսի համբերեաց ունելով ընկեր իւր զԱրիստարքոս եւ զՂուկաս որ զԳործս Առաքելոցն գրեաց ։ Եւ զերկու ամ պահէին զնա ի Հռոմ ։ Եւ նախ քան զկատարումն իւր գնաց Ղուկաս ի Հռոմայ, եւ վասն այնորիկ ոչ գրեաց ի գիրս իւր զվկայութեամբ մահն Պաւղոսի ։

Իսկ Պաւղոս կացեալ առաջի Ներոնի արքային ըստ արժանեաց պատասխանի առնէր ։ Եւ Ներոն մոլեգնեալ իբրեւ զկատաղի շուն, եւ նախ զԱգրիպինա զմայրն իւր եսպան, եւ զհօրաքոյրն իւր եւ զկին իւր զՕքտաւինա վասն զի հաւատացին ի Քրիստոս,

1. երկիցս] երկրորդ B.

Derbè deux fois, à Bersé, à Athènes, à Corinthe, à Éphèse deux fois, à Césarée deux fois, en Crète, en Macédoine, en Hellade, à Assos, à Mytilène, à Chio, à Samos, à Milet (*Meliton*), à Cos, à Rhodes [1], à Pataras, à Tyr, à Ptolémaïs [2], chez Philippe [3], ensuite à Rome chargé de chaînes, et de nouveau de Rome à Sidon, à Myre en Lycie, à Cnide, à Malte [4], à Syracuse, à Reggio (*Orign*), à Pouzzoles (*Potielou*), au Forum Appii (*Apamia*), aux Trois Tavernes (*Tabernon*) et de nouveau à Rome pour la deuxième fois.

Il circula longtemps, visita soixante-cinq villes et provinces pour y prêcher le nom du Christ. Il endura bien des peines et des souffrances pour l'amour et la foi du Christ. Il était accompagné d'Aristarque et de Luc qui écrivit les Actes des Apôtres. Il fut détenu à Rome deux années. Luc ayant quitté Rome avant son martyre ne put, pour cette raison, écrire dans ses Actes la mort en martyr de Paul.

Paul, mis en présence de l'empereur Néron, lui répondit comme il devait. Néron, devenu furieux comme un chien enragé, commença par tuer sa mère Agrippine, puis sa tante et sa propre femme Octavie (*Okhtavina*) parce qu'elles

1. Le traducteur arménien a réuni ces deux noms en Kaioniridon. — 2. Mot à mot : « à Tyr de Ptolémaïs ». — 3. Texte : « à Philippes ». Le nom du personnage qui reçut Paul à Césarée, *Act.*, XXI, 8, est devenu pour le traducteur arménien un nom de lieu. — 4. Le texte a *Nison,* deuxième partie du groupe Μελίτην νῆσον « l'île de Malte », qui se trouvait dans son original.

եւ այլ բազումս *յազգականաց իւրոց ։ Եւ ապա արար յամենայն երկիր հալածումն քրիստոնէից, եւ փութայր զառաքեալսն սպանանել ։ * A fol. 296 v° a.

Կացոյց առաջի իւր զՊաւղոս եւ քանզի զբազումս դարձոյց վարդապետութեամբ իւրով յաստուածգիտութիւն դատապարտեաց զնա ի մահ ։ Հրամայեաց եւ հատին զգլուխ նորա յորմէ բղխեաց արիւն եւ կաթն ։

Էր սուրբն Պաւղոս անձամբն կարճ եւ հաստ, ճաղատ, ալէխառն, մեծաքիթ, խաժակն, թաւայօն, գուարթերես, երկայնամօրուս, եւ աստուածային շնորհօքն արտափայլեալ, եւ բժիշկ ամենայն ցաւոց ։

Կատարի տօն սուրբ եւ փառաւորեալ առաքելոցն Քրիստոսի գլխաւորացն Պետրոսի եւ Պաւղոսի Յունիսի ԻԹ ։

[B * Յայսմ աւուր վկայութիւն Եւսեբեայ որդւոյ Բասլի եւ կնոջ նորա որ ի սանդի եղեալ մանրեցան, եւ երեք հազար վկայքն որ ընդ նոսա նահատակեցան ։] * B p. 276 b.

Մարգաց ԻԴ եւ Յունիսի Լ ։ Տօն է երկոտասան առաքելոցն Քրիստոսի ։

Առաքելոցն երկոտասանիցն անուանքն եւ կոչումն յայտնի է յաւետարանացն ։

5 յորմէ … կաթն *om.* B || 9 գլխաւորացն *om.* B | 10 Պաւղոսի] Մարգաց ԻԴ եւ *add.* B. 13 Տօն … Քրիստոսի] Տօն է համօրէն նախադասիւ երկոտասան առաքելոցն Քրիստոսի, եւ հաւաքումն ժողովման նոցա եւ ընթրութեան յորժամ եկեալ ի լեառն Սիոնս ի գլուխ հանելով զգիշերն, վաղվն ընթրեաց զնոսա եւ արար երկոտասանս զէ իցեն զնովաւ, որոց եւ տօն է եւ յիշատակ նոցին B.

avaient cru au Christ, puis plusieurs autres * de ses proches. Ensuite il fit dans tout le pays une persécution des chrétiens et avait hâte de tuer les apôtres. * A fol. 296 v° a.

Il fit comparaître Paul, et comme il avait converti beaucoup de monde par sa doctrine à la connaissance de Dieu, il le condamna à mort. Il ordonna de lui trancher la tête; il en coula du sang et du lait.

Saint Paul était petit de taille et gros, chauve, grisonnant; il avait le nez long, les yeux bleus, les sourcils épais, la figure riante, la barbe longue. Il brillait extraordinairement des grâces divines. Il était médecin pour toutes les maladies.

La fête des saints et glorieux apôtres principaux du Christ, Pierre et Paul, a lieu le 29 juin.

[B * En ce jour martyre d'Eusèbe, fils de Basile, de sa femme, qui furent mis dans un mortier et broyés menus, et des trois mille martyrs qui furent martyrisés avec eux.] * B p. 276 b.

24 MARGATS, 30 Juin.

Fête des douze apôtres du Christ.

Les noms et les surnoms des douze apôtres sont connus par l'évangile.

Պետրոս եւ Անդրէաս եղբայր նորա, էին ի Բեթսայիդայ, յազգէն Նեփթաղեմի. եւ էին աշակերտեալք Յովհաննու Մկրտչի ։ Եւ յորժամ լուան ի նմանէ թէ Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ, գնացին * Անդրէաս եւ Յովհաննէս զհետ Յիսուսի, եւ տեսին զօթեվանս նորա ։

* A fol. 296 v° b.

Եւ Անդրէաս գտեալ զՍիմոն զեղբայր իւր ասաց. Զորմէ գրեաց Մովսէս եւ մարգարէքն գտաք զՔրիստոս զորդի Յովսեփայ. եւ ած զնա առ Յիսուս ։ Եւ Յիսուս ասէ ցնա. Դու ես Սիմոն որդի Յունանու, դու կոչեսցիս Կեփաս որ թարգմանի Պետրոս ։

Եւ դարձեալ գնացին առ Յովհաննէս, եւ յորժամ Հերովդէս զՅովհաննէս արկ ի բանդ, գնացին ի տունս իւրեանց եւ որսային ձուկն ։ Եւ կոչեաց զնոսա Յիսուս եւ ասէ. Եկայք զկնի իմ եւ արարից զձեզ որսորդս մարդկան ։ Եւ նոքա թողեալ զամենայն գնացին զհետ նորա ։

Եւ յետ Յարութեանն Քրիստոսի Պետրոս քարոզեաց Հրէիցն եւ Սամարացւոցն, եկն յԱնտիոք եւ ի Փռիւգիա եւ մինչեւ ի Պոնտոս, եւ ապա եկ ի Հռոմ վասն Սիմոնի կախարդի ։ Եւ յետ կործանելոյն զնա շինեաց զեկեղեցին հռոմայեցւոց, եւ կարգեաց քահանայս եւ պաշտօնեայս ։ Եւ ապա խաչեցաւ գլխիվայր ի Ներոնէ արքայէ, հանդերձ Պօղոսիւ որ գլխատեցաւ ի Յունիսի ԻԹ, եւ թաղեցան ի Հռոմ քաղաքին ։

3 Յիսուսի] Քրիստոսի B || 6 զՔրիստոս] զՅիսուս B || 16 գլխատեցաւ] Մարգաց ԻԹ եւ *add.* B.

Pierre et son frère André étaient de Bethsaïda, de la tribu de Nephtali; ils étaient disciples de Jean-Baptiste. Lorsqu'ils l'entendirent dire : « *Voici* le Christ, *l'agneau de Dieu*[1], » André * et Jean suivirent Jésus et *allèrent voir où il demeurait*[2].

* A fol. 296 v° b.

André, ayant rencontré Simon son frère, lui dit : « *Nous avons trouvé le Christ, fils de Joseph*, prédit par Moïse et les prophètes. » *Et il l'amena à Jésus. Jésus lui dit : « Toi, tu es Simon, fils de Jean; tu seras appelé Céphas* », *ce qui se traduit Pierre*[3].

Ils retournèrent auprès de Jean, et lorsque Hérode jeta Jean en prison, ils retournèrent à leur maison et pêchaient des poissons. Jésus les appela et leur dit : « *Suivez-moi, et je vous ferai des pêcheurs d'hommes*[4]. » *Aussitôt ils quittèrent tout et le suivirent.*

Après la Résurrection du Christ, Pierre prêcha aux Juifs et aux Samaritains; il se rendit à Antioche, en Phrygie et jusqu'au Pont, puis partit pour Rome à cause de Simon le magicien. Après l'avoir perdu, il fit construire l'église de Rome et y établit des prêtres et des ministres. Il fut ensuite crucifié la tête en bas par l'empereur Néron, en même temps que Paul qui fut décapité le 29 juin. Ils furent inhumés dans la ville de Rome.

1. Jean, I, 36. — 2. *Ibid.*, 39. — 3. *Ibid.*, 41-43. — 4. Matth., IV, 19.

Իսկ Անդրէաս հրամանաւ Հոգւոյն սրբոյ գնաց յաշխարհն շանագլխաց եւ մարդակերաց եւ դարձոյց զնոսա. քարոզեաց եւ ի ծովեզերեայսն, եւ ի Բիւթանիա եւ ի Նիկիա, եւ երթեալ յԵլլադա եւ ի Պատրաս Աքայեցւոց խաչեցաւ * յԵգիատէ դատաւորէ Նոյեմբերի Լ. : * A fol. 297 rº a.

Իսկ Յակոբոս եւ Յովհաննէս որդիքն Զեբեթեայ էին քաղաքակիցք եւ ուռակիցք Պետրոսի եւ Անդրէի, յազգէ Զաբուղոնի, եւ աշակերտք Յովհաննու, եւ ընդ նոսին կոչեցան ի Քրիստոսէ : Եւ վաղվաղակի թողին զհայրն իւրեանց եւ զվարձկանսն գնացին զհետ նորա, եւ անուանեցան Բանէրգէս որ են որդիք Որոտման :

Եւ յետ յարութեանն Քրիստոսի Յակոբոս քարոզէր Հրէից եւ յանդիմանէր յօրինացն եւ ի մարգարէիցն, եւ կատարէր բազում սքանչելիս անուամբն Քրիստոսի, եւ բազումք նովաւ դարձան ի Հրէից : Մատնեցին զնա Հերովդէի արքայի, եւ նա սպան սրով, եւ զմարմինն ընկէց ի ծով եւ ալիքն տարան զնա ի Սպանիա որ հասեալ էր նմա վիճակ յառաջագոյն, եւ հանեալ ի ցամաք, կատարէր մեծամեծ սքանչելիս : Եւ յորժամ գնաց Պօղոս առաքեալն ի Սպանիա հաւատացին ի Քրիստոս, եւ յայտնի եղեւ եթէ մարմինն Յակոբու է, եւ թաղեցաւ պատուով :

1 շանագլխաց եւ *om.* B || 3 Պատրաս] պարտէզս B || || 4 Նոյեմբերի] Նոյեմբեր ամսոյ B || 8 անուանեցան] անուանեաց զնոսա Յիսուս B || 11 Հրէից] առ Քրիստոս եւ մկրտեցան : Եւ նախանձեալ ընդ նա Հրէից *add.* B || 15 թաղեցաւ] թաղեցին B.

André, par ordre du Saint-Esprit, se rendit au pays des hommes à tête de chien anthropophages et les convertit; il prêcha également sur les bords de la mer et en Bithynie et à Nicée, et étant allé en Grèce et à Patras d'Achaïe, y fut crucifié * par le juge Ægétès, le 30 novembre. * A fol. 297 rº a.

Jacques et Jean, fils de Zébédée, étaient concitoyens et compagnons de pêche de Pierre et André, de la tribu de Zabulon, et disciples de Jean; ils furent appelés en même temps qu'eux par le Christ. *Aussitôt laissant leur père et les mercenaires, ils Le suivirent*[1]. *Ils furent surnommés Boanergès, c'est-à-dire Fils du Tonnerre*[2].

Après la résurrection du Christ, Jacques prêcha aux Juifs et les réfutait par la Loi et les Prophètes. Il accomplissait de nombreux miracles au nom du Christ, et beaucoup parmi les Juifs se convertirent. On le dénonça au roi Hérode qui le fit tuer par le glaive. Son corps fut jeté à la mer, mais les vagues l'emmenèrent en Espagne, qui lui était échue auparavant comme diocèse, et, ayant été déposé sur le rivage, il y accomplit de grands prodiges. Lorsque l'apôtre Paul se rendit en Espagne, (les habitants du pays) crurent au Christ; il fut établi que c'était le corps de Jacques et il y fut inhumé avec honneurs.

1. Marc, I, 20. — 2. Marc, III, 17.

Իսկ Յովհաննէս եղբայր նորա որ սիրելի աշակերտն էր Յիսուսի որ անկաւ զլանջօք նորա եւ մաքրեցաւ որպէս զոսկի ի հուր նմա յանձնեաց Տէրն ի խաչին զաստուածածինն Մարիամ եւ ասաց. Ահա որդի քո, եւ ցաշակերտն. Ահա մայր քո ։ Եւ սպասաւորեաց

* A fol. 297 r° b. սրբոյ կուսին մինչեւ ի * փոխումն նորա յաշխարհէս ։

Եւ ապա չոգաւ յԱսիա եւ քարոզեաց յԵփեսոս, եւ կործանեաց զԱրտեմիդի պատկերն. եւ անտի տուաւ յաքսորս ի Պատմոս կղզի, եւ զամենայն մարդիկ դարձոյց յԱստուած, եւ գրեաց զաւետարանն եւ զաստուածականն յայտնութիւնն ։ Եւ եկն վերստին յԵփեսոս եւ քառասուն հազար մոլորեալ մարդիկ դարձոյց յԱստուած, եւ անդ փոխեցաւ առ Քրիստոս յաւուր կիւրակէի ԻԶ Սեպտեմբերի ։ Եւ յետ երից աւուրց բացեալ զգերեզմանն ոչ գտին զի փոխեալ էր նա առ սիրելին իւր որ ասաց թէ Կամիմ ես զի կացցէ դա մինչեւ ես գամ ։

Իսկ Փիլիպպոս էր ի Բեթսայիդայ, ի քաղաքէ Անդրէի եւ Պետրոսի, ի ցեղէն Նեփթաղիմայ ։ Եւ կոչեաց զնա Յիսուս եւ գնաց զկնի նորա ։ Եւ յետ Յարութեանն Տեառն գնաց յԻերապօլիս քաղաք եւ քարոզեաց անդ, եւ սպան զօձսն զաստուածս քաղաքին ։ Եւ դարձոյց զկին իշխանին զՆիկանովրա ։ Եւ իշխանն կախեաց զՓիլիպպոս գլխիվայր, եւ զԲարդողիմէոս բեւեռեաց յորմն մեհենին, եւ զՄարիամն քոյր Փիլիպպոսի

1 Յիսուսի] Քրիստոսի B || 6 մարդիկ] կղզին B || 9 Սեպտեմբերի] ամսոյ *add.* B || 14 սպան... քաղաքին] արար նշանս մեծամեծս B || 16 — p. 1683, l. 4 եւ զԲարդողիմէոս... առ *om.* B.

Son frère Jean, qui était le disciple aimé de Jésus, qui se pencha sur Sa poitrine et fut purifié comme l'or dans le feu et à qui le Seigneur sur la croix recommanda la mère de Dieu, Marie, en disant à celle-ci : « *Voici votre fils*, *et au disciple* : « *Voici votre mère*[1], » (Jean) servit la sainte Vierge jusqu'à son

* A fol. 297 r° b. * trépas de la terre.

(Jean) se rendit ensuite en Asie, prêcha à Éphèse et y démolit la statue d'Artémis. De là il fut envoyé en exil dans l'île de Patmos; il y convertit tous les habitants à Dieu, y écrivit l'évangile et l'Apocalypse divine. Il retourna de nouveau à Éphèse, convertit à Dieu quarante mille hommes égarés, et y trépassa dans le Christ, le dimanche 26 septembre. Trois jours après, ayant ouvert sa tombe, on ne l'y trouva point, car il avait été transporté auprès de son bien-aimé, qui avait dit : « *Je veux qu'il reste jusqu'à ce que je vienne*[2]. »

Philippe était de Bethsaïda, de la ville d'André et de Pierre, de la tribu de Nephtali. Jésus l'appela et il le suivit. Après la résurrection du Seigneur, il se rendit à la ville de Hiérapolis, y prêcha et y fit mourir les dieux serpents de la ville. Il y convertit Nicanora, la femme du gouverneur. Celui-ci fit suspendre Philippe la tête en bas et fit clouer Barthélemy au mur du temple du

1. Jean, XIX, 27. — 2. Jean, XXI, 23.

մերկացուցին, եւ աղօթեալ Փիլիպպոս ընկղմեցաւ քաղաքն ։ Եւ Տէր երեւեալ յանդիմանեաց զնա, եւ արար խաչ լուսեղէն եւ եհան զամենեսեան բաց յիշխանէն եւ ի քրմաց եւ յվիշապէն ։ Եւ հաւատացին առ հասարակ եւ կամէին իջուցանել զՓիլիպպոս եւ ոչ ետ թոյլ, այլ ի կախաղանին *աւանդեաց զհոգին իւր առ Աստուած եւ անդ թաղեցաւ ։ * A fol. 297 vº a.

Իսկ Թովմաս անուանեալն երկուորեակ անկաւ նմա վիճակ կողմանք Հնդկաց ։ Եւ Յիսուս ծախեաց զնա Անբանէս վաճառականի. եւ երթեալ ի Հնդիկս արար անդ բազում սքանչելիս. ի Մժդէհէ արքայէ սպանաւ աշտէիւք, եւ բերաւ նշխարք նորա ի Հայս ։

Իսկ Բարթողիմէոս առաքեալն յետ յարութեանն Տեառն գնաց ի կողմանս Հնդկաց եւ Պարսից եւ Մարաց եւ Եղիմացոց, եւ եկեալ յերկիրն Հայոց սպանաւ ի Սանատրկէ արքայէ որ սպան զԹադէոս առաքեալն, եւ թաղեցաւ ի տեղւոջն որ կոչի Բարմ մերձ ի Սալամաստ քաղաք ։

Մատթէոս աւետարանիչն էր ի ցեղէ Իսաքարայ, կոչեցեալ ի մաքսաւորութենէ, ականատես լեալ ամենայն գործոց Տեառն ։ Եւ յետ յարութեան նորա քարոզեաց Հրէիցն, եւ ի լեզու հեբրայեցի գրեաց զաւետարանն իւր, եւ ապա գնաց յաշխարհն

7 եւ Յիսուս . . . վաճառականի *om.* B.

feu; on mit à nu Marie, sœur de Philippe, mais sur les prières de Philippe la ville fut engloutie. Le Seigneur lui apparut et le blâma; il fit une croix lumineuse et retira tout le monde, excepté le gouverneur, les prêtres païens et le serpent. Tous les habitants se convertirent et voulurent descendre Philippe de la potence, mais celui-ci refusa, rendit* son âme à Dieu sur la potence et fut enterré là. * A fol. 297 vº a.

A Thomas, surnommé Didyme, échut comme diocèse les contrées des Indes. Jésus le vendit au marchand Anbanès. Arrivé aux Indes, (Thomas) y accomplit de nombreux miracles. Il fut tué à coups de lance par le roi Mazdaï [1] (*Mejdeh*) et ses reliques furent apportées en Arménie.

L'apôtre Barthélemy, après la résurrection du Seigneur, se rendit dans les contrées des Indes, de la Perse, de la Médie et de l'Élam, puis, arrivé en Arménie, il fut tué par le roi Sanatrouk qui avait mis à mort l'apôtre Thaddée; il fut inhumé à l'endroit appelé Barm [2], près de la ville de Salmast.

L'évangéliste Matthieu était de la tribu d'Issachar, il fut appelé des fonctions de publicain et fut le témoin oculaire de tous les actes du Seigneur. Après sa résurrection, il prêcha aux Juifs et écrivit son évangile en langue

1. Forme restituée d'après R. A. Lipsius, *Die apokryphen Apostelgeschichten...*, t. I, Braunschweig, 1883, p. 260. — 2. La forme arménienne originale doit être *Arenpan* ou Arépan, la forme grecque est Ἀρβανόπολις, cf. R. A. Lipsius, *op. cit.*, t. III, 1884, pp. 58 sq.

մարդակերաց եւ ըմբռնեալ հանին զաչս նորա եւ եդին ի բանդի զի զենցեն զնա եւ կերիցեն ։ Եւ առաքեաց Տէր զԱնդրէաս որ լուսաւորեաց զնա եւ եհան ի բանդէն, եւ դարձուցին զաշխարհն մարդակերաց յաստուածգիտութիւն ։ Եւ թագաւորն նոցա Փուլպանոս այրեաց զՄատթէոս հրով ։

* A fol. 297 v° b. Իսկ Յակոբոս Ալփեայ կոչեցեալ ի մաքսաւորութենէ *յաշակերտութիւն, յետ յարութեանն Քրիստոսի քարոզեաց Հրէից եւ հեթանոսաց, եւ զբազումս դարձոյց յաստուածգիտութիւն մեծամեծ նշանօք եւ արուեստիւք ։ Եւ կատարեցաւ վկայութեամբ ի Հնդիկս ի Մարմարիկէս վասն բանին Աստուծոյ ։

Իսկ Շմաւոն նախանձայոյզ՝ որդին Յովսեփայ եւ եղբայր Յակովբայ ի թուոյ երկոտասանիցն, չոգաւ յետ յարութեանն Տեառն յաշխարհն Պարսից եւ Բաբելացւոց, եւ քարոզեաց ի բազում տեղիս եւ արար մեծամեծ սքանչելիս ։ Եւ եկեալ ի Վերինն Հայս ի Վրոփորոն կատարեցաւ նահատակութեամբ յՌուսթուայ որ կայ ի թիկանցն Որմեայ ։

Եւ Յուդա Յակոբեան որ նա ինքն Թադէոս եկեալ քարոզութեամբ յերկիրն Հայոց եւ Ասորոց եւ բժշկեալ զԱբգար թագաւորն, եւ նորին թղթովն եկեալ առ Սանատրուկ

1-3 եւ ըմբռնեալ . . . թագաւոր] եւ քարոզեաց զաւետարանն Քրիստոսի, եւ գործակցութեամբ Անդրէի առաքելոյն լուսաւորեաց զբազումս աստուածգիտութեամբ ։ Եւ յետ բազում եւ ազգի ազգի տանջանաց թագաւորն B || 14 թագաւորն] Ուռհայ *add.* B — եւ նորին թղթովն եկեալ] եւ եկեալ ի Հայս B.

hébraïque. Il alla ensuite au pays des anthropophages et fut saisi par eux; ils lui crevèrent les yeux et le mirent en prison pour l'immoler et le manger. Mais le Seigneur envoya André qui lui rendit la vue et le fit sortir de prison; puis, tous deux convertirent le pays des anthropophages à la science de Dieu. Leur roi, Phulbanus, fit brûler Matthieu par le feu.

* A fol. 297 v° b. Jacques d'Alphée, appelé des fonctions de publicain * à devenir disciple, prêcha, après la résurrection du Christ, aux Juifs et aux Gentils; il en convertit beaucoup à la science de Dieu par de très grands miracles et prodiges. Il mourut par le martyre aux Indes, à Marmarika (*Marmarikès*), pour la parole de Dieu.

Simon le Zélote, fils de Joseph et frère de Jacques, était au nombre des douze; il se rendit, après la résurrection du Seigneur, au pays des Perses et des Babyloniens, y prêcha en de nombreux endroits et y accomplit de très grands prodiges. Arrivé dans la Haute-Arménie, à Veriosphora (*Vrophoron*), il y fut martyrisé à Rousthava, qui se trouve derrière Ourmiah.

Jude (frère) de Jacques, qui est Thaddée, vint en prédication dans le pays d'Arménie et de Syrie et y guérit le roi Abgar; puis avec une lettre de celui ci, il se rendit auprès de Sanatrouk, son neveu, et fut martyrisé par lui [1],

1. Il y a mélange de deux traditions absolument inconciliables : dans l'une Jude est martyrisé par Sanatrouk en Arménie, dans la province d'Artaz; dans l'autre, il est percé de flèches par les Blemmyes à Raphek, dans la péninsule du Sinaï, cf. R. A. Lipsius, *op. cit.*, t. III, pp. 156-160.

եղբօրորդին նորա, եւ ի նմանէ կատարի նահատակութեամբ յՌեսբեկէ ի Բղեմիոն կախեալ եւ նետաձիգ լեալ յԱրտազ գաւառի, եւ կէսք ասեն յՈւրմի քաղաք Հայոց :

Իսկ Մատաթիա փոխանորդն Յուդայի Սկարիովտացւոյ ի ցեղէ Ռուբենի, յետ յարութեանն Տեառն եւ սա չոգաւ յաշխարհն բարբարոսաց եւ քարոզեաց աւետարանն Քրիստոսի, եւ ըզբազումս դարձոյց ի մոլորութենէ, եւ արար բազում նշանս եւ սքանչելիս, եւ վկայութեամբ կատարեալ * ել յաշխարհէս ի Ռիսպարտացւոց քարկոծեալ եւ ընկեցեալ ի ծով, եւ բերաւ ի Բիւրիտոն : Կէսք զսա ասեն որ գնաց յաշխարհն մարդակերաց եւ հրով այրեցաւ : A fol. 298 r° a.

Իսկ մեծն Պաւղոս երեքտասաներորդ առաքեալն քարոզեաց ընդհանուր յամենայն հեթանոսս, ի վաթսուն եւ հինգ քաղաքս եւ սրով գլխատեցաւ ի Ներոնի արքայէ :

Այս են թիւք պատուեալք եւ խորհրդականք յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեալք եւ ի ժամու կոչեցեալք : Որքոք սկսաւ հաւատն եւ շինեցաւ կաթողիկէ եկեղեցի . որոց այսօր կատարեմք զյիշատակս նոցա ծնեալքս եւ լուսաւորեալքս ի նոցունց

1 եղբօրորդին նորա] Թադաւորն B || 10 քաղաքս] քարոզեաց նոցա *add.* B — արքայէ] ի Հռոմ քաղաքի *add.* B || 13 կաթողիկէ *om.* B.

[suspendu et criblé de flèches par les Blemmyes (*Blemion*) à Raphek (*Resbeké*)], province d'Artaz, d'autres disent dans la ville d'Ourmiah en Arménie.

Mathias (*Matathia*), le remplaçant de Judas l'Iscariote, de la tribu de Ruben, se rendit, après la résurrection du Seigneur, au pays des barbares et leur prêcha l'évangile du Christ; il en convertit beaucoup de l'erreur et accomplit de nombreux prodiges et miracles. Il quitta * cette terre par la mort du martyre, lapidé par les Rispartes[1], jeté à la mer, et transporté à Beyrouth (*Biuriton*). D'autres disent de lui, que c'est lui qui s'est rendu au pays des anthropophages et y fut brûlé par le feu. * A fol. 298 r° a.

Quant au grand Paul, le treizième apôtre, il prêcha en général à tous les Gentils, dans soixante-cinq villes, et fut décapité par le glaive sous l'empereur Néron.

Voici le nombre de ceux qui furent honorés et participants du mystère avant que la terre fût créée, et qui furent choisis et appelés en leur temps C'est avec eux que commença la foi et que fut édifiée l'église catholique, eux, dont nous accomplissons aujourd'hui le 30 juin la commémoration, nous les

1. La lapidation paraît empruntée à la légende de saint Matthieu, par une confusion qui est fréquente Le nom « Rispartes » pourrait cacher un nom de lieu, provenant de ἐν ὄρεσι Παρθῶν par exemple ou toute autre formule dérivant de la tradition « parthique », cf. R. A. Lipsius, *op. cit.*, t. III, pp. 124-8.

մանկունքս եկեղեցւոյ Յիսուսի Ք., փառաւորելով զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից ։

* B p. 278 b. [B * Յայսմ աւուր ժողով սուրբ առաքելոյն Պօղոսի. եւ է նաւակատիք սրբոյն Պետրոս Անտիոքայ մեծի եկեղեցւոյն, եւ յիշատակ սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն, եւ ամենայն աշակերտաց առաքելոցն եօթանասնից ։

Ի սմին վկայութիւն սրբուհւոյ կուսին Վառվառեայ նոր վկայուհւոյ, եւ եղբօր նորին Գասպարայ եւ աղախնոյն Քրիստոսի Մարիամայ ։

* B p. 279 a. * Երանելին կոյսն Վառվառեա էր յերկրէն Կարնոյ, ի Դւնիկ գեղջէ, ի տանէ Զուրիկեանց, գեղեցիկ տեսլեամբ եւ նայելի, համեստ եւ երկիւղած յԱստուծոյ, եւ էր ամաց չորեքտասանից ։ Եւ յառաջ քան զերիս ամս եղբարք կուսին խօսեցեալ էին հարսնացուցանել ընդ միոյ ուրուք ի բնակչաց գեղջն, որ անուանեալ կոչի Գուշճի ։

Եւ իբրեւ մերձեցաւ ժամանակ հարսանեաց ծնօղք եւ ազգականք փեսային եկին ի Դւնիկ նշանադրել զօրն հարսանեաց, եւ ըստ սովորութեան երկրին արարին հացկերոյթ ։ Հրաւիրեցին անդր եւ զգլխաւորս այլազգեաց, եւ ոչ յիշեցին կոչել զիշխանն գիւղին ։ Եւ զի էր նա այր ժանտ ոխացաւ ի սրտին իւրում, եւ պարապոյ սպասէր չարիս հասուցանել նոցա ։

Եւ քանզի մի ոմն յայլազգի երիտասարդաց որ դրացի էր տանն Զուրիկեանց,

1 եկեղեցւոյ] Մարգայ ԻԳ եւ *add.* B.

enfants de l'Eglise, engendrés et illuminés par eux, en glorifiant le Père, le Fils et le Saint-Esprit dans les siècles des siècles.

* B p. 278 b. [B * En ce jour, synase du saint apôtre Paul. C'est aussi la dédicace de la grande église de saint Pierre à Antioche, et commémoration de saint Jacques, frère du Seigneur, et de tous les soixante-dix disciples, des apôtres.

En ce (jour) martyre de la vierge sainte Barbe, la nouvelle martyre, de son frère Gaspar et de Marie la servante du Christ.

B * p. 279 a. * La glorieuse vierge Barbe (*Varvarea*) était de la province de Karin, du village de Dwnik, de la famille Zourikiantz, belle de figure, de taille élégante, pudique et craignant Dieu; elle avait quatorze ans. Les frères de cette vierge avaient, trois ans auparavant, promis de la fiancer à l'un des habitants du village dont le nom était Gouchdji.

Lorsque l'époque des fiançailles approcha, les parents et les proches du fiancé vinrent à Dwnik pour décider du jour des fiançailles, et, d'après les coutumes du pays, ils donnèrent un dîner. Ils y invitèrent aussi les notables musulmans, mais ne pensèrent pas à y inviter le chef du village. Et comme c'était un homme méchant, il en tint rancune dans son cœur et attendit l'occasion de leur causer du mal.

Or, il y avait parmi les musulmans un jeune homme qui était voisin des

տեսեալ զսրբուհին Վարվառէ հարեալ էր ի փայելուչ գեղ երեսաց նորին, եւ զօր ամենայն հնարս խորհէր դարձուցանել զնա ի կրօնս իւր, եւ առնել ի կնութիւն ։

Եւ յորժամ գիտաց թէ յայնմիկ աւուրս հանդերձեալ են տանել զնա ի հարսնութիւն, հատաւ ամենայն յոյս նորա, եւ գնեալ սատանայական խորհրդով գնաց առ իշխանն գիւղին եւ ասէ. Աղջիկն Զուրիկեանց ի բազմաց հետէ խոստացեալ էր ինձ դառնալ ի կրօնս մեր եւ ամուսնանալ ընդ իս, որում իրազեկ եղեալ եղբարց նորա փութացան ամուսնացուցանել ընդ այլում համազգեաց իւրեանց ի գիւղն Կուչճի ։ Եւ նա ասէ. Երթ այժմ եւ անհոգ լեր, եւ ես ածից զաղջիկն քեզ ի կնութեան ։

Զայս գիտացեալ եղբարց սրբուհւոյն ազդ արարին մերձաւորաց փեսային իւրեանց, եւ նորա փութապէս եկեալ տարան զՎարվառէ ի գիւղն իւրեանց ։

Յայնժամ անօրէն իշխանն կոչեաց *զամենայն այլազգիս գեղջն ի ժողով, եւ երիտասարդն զրպարտիչ բողոք բարձեալ բազմութեանն զնոյն բան երկրորդեաց, եւ ասէ. Ո՜վ կրօնասէրք, արարէք զոր ինչ կրօնն մեր եւ իրաւունք օրինադրեն ։ Եւ փութապէս միաբանեցան ամենեքեան եւ երդմունս կնքեցին դարձուցանել զաղջիկն ի կրօնս իւրեանց եւ տալ այլազգւոյն. եւ այս յաւէտ ի հրապուրանաց իշխանին, որ կամէր քինախնդիր լինել ։ * B p. 279 b.

Եւ տարածեցաւ համբաւս այս չար ընդ ամենայն գիւղն, եւ եհաս մինչեւ յականջս

Zourikiantz, et qui, à la vue de sainte Barbe, était tombé amoureux de la beauté élégante de son visage et cherchait tous les jours un moyen de l'amener à sa religion et de l'épouser.

Lorsqu'il apprit que ces jours-là on devait la conduire en épouse, tout son espoir s'écroula et, mû par dessein satanique, il se rendit auprès du chef du village et lui dit : « La fille des Zourikiantz m'avait depuis longtemps promis de se convertir à notre religion et de se marier avec moi, ce qu'ayant appris, ses frères se sont empressés de la marier à un autre de leurs connationaux du village, à Gouchdji. » (Le chef) lui répondit : « Va-t'en maintenant et sois sans souci, je t'amènerai la jeune fille en épouse. »

Ayant appris cela, les frères de la sainte en informèrent les proches de leur beau-frère, et ils s'empressèrent de venir chercher Barbe pour la conduire à leur village.

Alors l'impie chef du village appela en conseil * tous les musulmans du village, et le jeune homme calomniateur, protestant devant l'assemblée, y renouvela ses propos et dit : « O vous, qui aimez la religion, faites ce que notre religion et le droit statuent. » Tous se mirent aussitôt d'accord et firent le serment de convertir la jeune fille à leur religion et de la donner en épouse au musulman; ceci fut fait principalement sur l'invitation du chef qui cherchait à tirer vengeance. * B p. 279 b.

Ce méchant bruit, s'étant répandu dans tout le village, parvint jusqu'aux

կուսին ։ Եւ տեսեալ նորա զվտանգն մեծ որ առաջի կայր, առժամայն զիմեաց յեկեղեցին, եւ լալագին զմօք ի ծունկս անկեալ աղօթեաց առ Աստուած յոգունս ժամս, եւ բարւոք խոստովանութեամբ հաղորդեցաւ ի մարմնոյ եւ յարենէ կենարարին, եւ զինուորեալ զգեցեալ զինուորութիւնն դարձաւ ի տուն ։

Իսկ այլազգիք ամբոխ արարեալ գնացին ի Կարին առ բդեաշխ քաղաքին Բահրամ փաշայ, եւ բողոքեցին ըստ բանիցս այսոցիկ, եւ խնդրեցին առնել իրաւունս ըստ օրինաց իւրեանց, եւ տալ զաղջիկն ի կնութիւն այլազգւոյն ։ Եւ նա առաքեաց արս եւ ածին զՎառվառեա. Եկին ընդ նմա եւ երկու ոմանք ի հայկազանց գեղջ ։ Եւ արկին զերեսեան ի բանդի, եւ առեալ տուգանս ի գիւղականացն արձակեցին զնոսա ։

Հրամայեաց եւ հանին զկոյսն յատեան. եհարց զնա եւ ասէ ։ Աղջիկ դու ասա ինձ զճշմարիտն, հաճեա՞լ իցես կամօք եւ խոստացեալ ամուսնութեամբ լծակցիլ ընդ այլազգի երիտասարդին ։ Եւ նա խոնարհութեամբ ետ պատասխանի եւ ասէ. Տէր իմ, սուտ զրպարտութիւն է այդ զոր ասեն, ես ոչ ինչ խոստացեալ եմ ընդ նմա եւ ոչ խորհեալ ի միտ ։ Ասէ ցնա բդեաշխն ողոքանօք. Տեսանեմ զքեզ օրիորդ շնորհաշուք եւ գթամ ։ Ե՛կ դարձիր յօրէնս մեր եւ ամուսնացիր ։ * Եւ խոստանայր նմա բազում

* B p. 280 a.

պատիւս եւ պարգեւս ։ Զնոյն ասէին եւ մեծամեծք որ բազմեալ էին ընդ նմա ։ Ասէ երանելի կոյսն. Եթէ բիւր պարգեւս եւ պատիւս ինձ տայք, ամուսնանալ ընդ այլ-

oreilles de la vierge. Elle aperçut le grand danger auquel elle était exposée; elle se dirigea aussitôt vers l'église et, les larmes aux yeux, elle tomba à genoux et pria Dieu de longues heures, puis, après une bonne confession, elle communia au corps et au sang du Vivifiant, et, armée d'une bonne armure, elle retourna à la maison.

Les musulmans, s'étant réunis, se rendirent à Karin auprès du gouverneur de la ville, Bahram pacha, réclamèrent d'après les paroles ci-dessus, et demandèrent qu'il leur fût fait droit selon leurs lois, et que la jeune fille fût donnée en mariage au musulman. (Le gouverneur) envoya des hommes pour lui amener Barbe, qui vint accompagnée de deux des Arméniens du village. On les jeta tous trois en prison, puis, après avoir fait payer des amendes aux villageois, on les remit en liberté.

(Le gouverneur) ordonna d'amener la vierge au tribunal; il lui demanda et dit : « Jeune fille, dis-moi la vérité, as-tu consenti jadis et promis de t'unir en mariage avec le jeune homme musulman? » Elle répondit humblement et dit : « Mon seigneur, c'est une fausse calomnie, tout ce que disent ceux-ci; je ne lui ai jamais rien promis et n'y ai jamais pensé. » Le gouverneur lui dit avec douceur : « Je vois que tu es une jeune fille pleine de charmes, et j'ai pitié de toi. Allons, convertis-toi à notre religion et marie-toi. » * Il lui pro-

* B p. 280 a.

mit beaucoup d'honneurs et d'argent. Les notables qui siégeaient avec lui disaient de même. La bienheureuse vierge dit : « Même si vous me donniez

այլազգւոյն ոչ երբէք առնում յանձն. թէ և մասն մասն կոտորիցէք զիս զհաւատոն Քրիստոսի զոր ունիմ ի մանկութենէ անտի ոչ ուրացայց :

Յայնժամ բդեաշխն խորհրդակցութեամբ մեծամեծաց յանձն արար զկոյսն դանիշմանին մեծի, զի որով և իցէ կերպիւ հնարեսցի դարձուցանել զնա յօրէնս իւրեանց : Եւ տարեալ ի տուն բազում ողոքանօք խրատ տայր նմա դառնալ ի հաւատոց և ամուսնանալ ընդ այլազգւոյն : Նոյնպէս և կին և զաւակք իւր յորդորէին և կերակուրս համադամս տային, և խոստանային զմեծամեծս :

Իսկ սրբուհի կոյսն զայս միայն ասէր. Եթէ զամենայն մեծութիւն և զփառս աշխարհիս ինձ տայք ոչ ամուսնանամ ընդ այլազգւոյն. և եթէ զամենայն մարմին իմ յօշատիցէք, ոչ ուրացայց զհաւատս իմ : Իբրև եսես դանիշմանն եթէ զամենայն խրատ իւր արհամարհէ, և անխախտ կայ ի քրիստոնէութեան, հրաման ետ դահճաց և մերկացուցին զՎառվառեա, և կապեալ զձեռս և զոտս նորա դալար բրօք ձաղկեցին զնա ժամս ձիգս, և արիւն յոյժ հոսէր ի մարմնոյ նորա, և յորժամ կիսամեռ եղև, տարեալ արկին ի բանդ : Իսկ նա անդադար աղօթիւք աղաչէր զԱստուած զօրացուցանել զնա զի համբերել կարասցէ : Եւ այս եղև սկիզբն չարչարանաց նորա :

Եւ ապա ետ հանել զնա ի պարտէզն իւր որ կոչի Եազլըխ, և էր ձմեռն սաստիկ

argent et honneurs par milliers, je n'accepterais jamais de me marier avec ce musulman; même si vous me coupiez en menus morceaux, je ne renierais pas la foi du Christ que je possède depuis mon enfance. »

Alors le gouverneur, après avoir consulté les notables, remit la vierge entre les mains du grand imâm (*danišman*) [1], pour que de toute façon il trouvât un moyen de la convertir à leur religion. Celui-ci la conduisit à sa maison, l'engagea avec beaucoup de supplications à renier sa foi et à se marier avec le musulman. Sa femme et ses enfants l'engagèrent de même, lui présentèrent des plats succulents, et lui promirent de grandes choses.

La vierge sainte ne disait que ceci : « Même si vous me donniez toutes les grandeurs et les gloires de la terre, je ne me marierais point avec le musulman; et si vous déchiquetez tout mon corps, je ne renierai point ma foi. » L'imâm, voyant qu'elle méprisait tous ses conseils et qu'elle demeurait ferme dans le christianisme, ordonna aux bourreaux de déshabiller Barbe, et après lui avoir attaché les mains et les pieds, on la fustigea de longues heures avec des branches vertes; le sang coula abondamment de son corps et lorsqu'elle fut à demi morte, on l'emmena et on la jeta en prison. Mais elle priait Dieu par d'incessantes prières de la fortifier pour qu'elle pût avoir l'endurance. Ce fut le commencement de sa passion.

(L'imâm) la fit sortir ensuite dans son jardin appelé Iazlik; il faisait un

1. Transcription du persan دانشمند « savant, instruit »; il s'agit ici d'un homme instruit dans la religion, d'un *âlim* ou *imâm*.

յոյժ, եւ շնչէր հողմն բքաբեր ։ Եւ տարեալ կախեցին զսրբուհի կոյսն զհիւսից հերացն ի վերայ լճակին որ էր ի պարտիզին անդ, եւ սրունքն նորա մինչեւ ի ծունկսն կային
* B p. 280 b. մխեալ ի ցրտագին ջուր լճակին ։ Եւ * մնաց կախեալ անսուաղ զօրն ողջոյն եւ զգիշերն ամենայն, եւ գոհանայր եւ օրհնէր զԱստուած ։

Եւ ի գիշերին յայնմիկ տեսիլ երեւեցաւ պահնկացն որք յանկեան ուրեք պարտիզին նստեալ զգուշանային նմա, զի վառեալ կային մոմեղէնք զկուսիւն, եւ ծեր մի փառաւոր մերձ կացեալ խօսէր ընդ նմա ։ Եւ ահեղէն զահի հարեալ մտին խուճապաւ ի տունն, եւ պատմեցին զնշանն զոր տեսին ։ Եւ առժամայն դանիշմանն եւ այլքն ամենայն որ էին անդ դիմեցին ի պարտէզն, եւ ոչ այլ ինչ տեսին բայց միայն զի ջուրք լճակին չէին սառուցեալ, յորժամ այլ ամենայն ջուրք պնդացեալ էին սառուցիւք, եւ գոլորշի եւս իբրեւ յեռանդուն կաթսայէ ելանէր ի նմանէ ։

Ընդ այս ապշեալ ահիւ մեծաւ ընտանիք դանիշմանին աղաչէին զնա եւ ասեն. Հեռացո՛ զաղջիկդ ի տանէ մերմէ, զի ոչ փոքր ինչ էր նշանն զոր լուաք եւ զոր աչօք տեսաք. գուցէ երկնաւոր հարուածս թափեսցուք ի վերայ մեր ։ Իսկ նա լի ցասմամբ արհամարհեալ զբանս նոցա զայլ եւս դժնդակ տանջանս հնարէր ի վերայ անել ։ Եւ իջուցեալ ի կախաղանէն ընկեցին ի բանդ ։ Եւ յետ աւուրց ինչ իբրեւ փոքր մի

hiver très froid et une bise glaciale soufflait. On amena la vierge sainte et on la suspendit par les nattes de ses cheveux au-dessus du petit bassin qui se trouvait dans le jardin, et ses jambes jusqu'à la hauteur des genoux étaient
* B p. 280 b. plongées dans l'eau froide du bassin. Elle* resta suspendue sans nourriture toute la journée et toute la nuit, en rendant grâces et bénissant Dieu.

Cette nuit-là, les gardiens, assis dans un coin du jardin pour la surveiller, eurent une vision : des cierges allumés entouraient la vierge et un vieillard majestueux se tenant près d'elle parlait avec elle. Saisis de frayeur, ils rentrèrent précipitamment dans la maison et racontèrent le prodige qu'ils avaient vu. L'imâm, et tous les autres qui se trouvaient là, coururent aussitôt au jardin et ne virent autre chose que l'eau du petit bassin qui n'était pas gelée, tandis que toutes les autres eaux étaient durcies par la glace; de la vapeur même, comme celle provenant d'un chaudron en ébullition, en sortait.

Les familiers de l'imâm, ahuris par une grande frayeur, le prièrent en disant : « Éloigne cette jeune fille de notre maison, car ce n'est pas un petit prodige, ce que nous avons entendu et ce que nous avons vu de nos yeux ; il se peut que nous attirions des fléaux célestes sur nous. » Mais lui, plein de colère, méprisant leurs paroles, songeait à inventer des souffrances plus cruelles encore pour elle. On la descendit de la potence et on la jeta en prison. Quelques jours après, comme elle avait pris quelque repos, on la mit

ովի էառ, մերկացուցին զնա միւսանգամ եւ ձաղկեցին ։ Այս ձաղկանք կարծրագոյն էին քան զառաջինն, զի անկաւ անշնչացեալ մինչեւ կարծել բազմաց թէ մեռաւ ։

Եւ ապա հրամայեաց եւ հրացեալ պայտս ձիոց եդին ի վերայ կրծոց նորա, բայց առ հրով սիրոյն զոր ունէր ի սրտի առ Քրիստոս ցրտագոյն թուէին նմա շանթքն ։ Ապա եւ նստուցանել ի կաթսայ ինչ մեծ երկաթի որ կայր պատրաստեալ ի վերայ տանեաց իւրոց լի սառուցեալ ջրով, եւ եդին զապախս հրախառն ի վերայ սրտի նորա, եւ թողին անդ զգիշերն ողջոյն ի բացի ։ Բայց վկայն Քրիստոսի իբրեւ ի փափուկ * բաղանիս հեշտանայր ի նմա, եւ զկայծակունսն իբրեւ զփունջս վարդից կրէր ի ծոցի ։ * B p. 281 a.

Եւ ապա հրամայեաց եւ հրացուցին սաղաւարտ երկաթի եւ ադուցին ի գլուխ նորա ։ Իսկ կոյսն սուրբ իբրեւ զպսակ ականակապ ընդունէր զայն, ի նշանակ երկնաւոր անթառամ պսակին որում փափաքէր ։

Տեսեալ դանիշմանին թէ որչափ ինքն սաստկացուցանէր զտանջանսն, նոյնչափ կոյսն սուրբ ամրանայր ի հաւատսն, եւ ոչ բնաւ լքանէր, ահ կալաւ զնա եւ ասէ. Արդարեւ խնամք աստուածայինն գոյ ի սմա, զոր ես յանգէտս թշնամանեմ, ապա թէ ոչ վաղու եւս մեռեալ էր յահագին տանջանացն զոր ածի զնովաւ ։ Նա զի եւ կինն իւր զօր ամենայն թախանձէր զնա, յուշ առնելով զտեսիլն պահնկաց, մինչեւ խնդրել ի նմանէ տալ գիր արձակման իւրոյ ի կապոյ ամուսնութեան եթէ ոչ արձակեսցէ զկոյսն ի տանջանաց, եւ ձեռնթափ լինիցի յիրաց անտի նորա. քանզի եւ կինն բարե-

de nouveau à nu et on la fustigea. Cette flagellation fut plus dure que la première, car elle tomba sans souffle et beaucoup crurent qu'elle était morte.

Il ordonna ensuite de poser des fers à cheval brûlants sur sa poitrine; mais auprès des flammes de l'amour qu'elle avait au cœur pour le Christ, ces fers enflammés lui paraissaient bien froids. Ensuite il la fit asseoir dans un grand chaudron de fer, préparé sur les toits de sa maison, et plein d'eau gelée; on lui mit de la cendre brûlante mêlée de braises sur le cœur et on l'abandonna là toute la nuit à l'air. Mais la martyre du Christ s'y trouva à l'aise comme dans un bain * raffiné et portait les braises comme des bouquets de roses sur son sein. * B p. 281 a.

Il ordonna ensuite de chauffer un casque de fer et de le poser sur la tête de la vierge sainte, et elle le reçut comme une couronne sertie de pierres précieuses en témoignage de la couronne impérissable céleste à laquelle elle aspirait.

L'imâm, voyant que plus il augmentait les tortures, plus la vierge sainte se raffermissait dans la foi, et ne se décourageait nullement, prit peur et dit : « Il y a véritablement en sa faveur une sollicitude divine, que je combats sans le savoir, sinon elle serait morte depuis longtemps des horribles tortures que je lui ai imposées. » D'autant plus que sa femme le suppliait toute la journée en lui rappelant la vision des gardiens; elle alla jusqu'à lui demander de lui délivrer son acte de divorce des liens de mariage, s'il ne cessait les tortures de la jeune fille et n'abandonnait toute action à son égard; car la femme avait

սիրտ որ էր, եւ ի ծածուկ խնամ տանէր կուսին կերակրէր եւ դարմանէր, գիտելով քաջ թէ տարապարտ չարչարի :

Յայնժամ յարուցեալ գնաց դանիշմանն եւ ծանոյց բդեշխին թէ չկարաց հաւանեցուցանել զաղջիկն ոչ քաղցրութեամբ եւ ոչ բռնութեամբ, եւ աղաչեաց ի բաց հանել զնա ի տանէ իւրմէ : Եւ նա հրամայեաց եւ ածին անդրէն զՎառվառեա, եւ յետ բազում հարցափորձի իբրեւ եգիտ զնա մնդագոյն ի սէրն Քրիստոսի յանձնեաց զնա այլոյ ումեմն դանիշմանի զի փոյթ կալցի հաւանեցուցանել :

Եւ նա տարեալ ի տուն իւր եցոյց նմա մարդասիրութիւն, եւ քաղցրութեամբ խրատ տայր դառնալ ի կրօնս իւրեանց եւ ամուսնանալ ընդ այլազգւոյն, յայտ արարեալ զչարաչար մահն որ առաջի կայր նմա եթէ զդժկամակ լինիցի : Եւ եկաց երանելի կոյսն

* B p. 281 b.

ի * տան նորա աւուրս բազումս տկարութեամբ մարմնոյ անմեկնելի ի սիրոյն Քրիստոսի :

Իբրեւ տեսին ոսոխքն կուսին եթէ առանց խոշտանգանաց մնալով ոչ երբեք հաւանեսցի, միաբանեալ բողոքեցին յատենին : Եւ հրամայեաց բդեաշխն եւ ածին զկոյսն, եւ ահագին սպառնալեօք ստիպէր դառնալ ի կրօնս իւրեանց եւ ամուսնանալ : Իսկ կոյսն սուրբ առանց ինչ երկիւղի ասէ. Ոչ բնաւ հնազանդեցայց եմ հրամանի ձերում որ կամիք հանել զիս ի հաւատոյն Քրիստոսի, եւ ոչ երբէք զանգիտեմ ի տանջանաց եւ ի մահուանէ զոր սպառնայք ածել ի վերայ իմ. ահաւասիկ առաջի ձեր եմ արարէք որպէս եւ կամիք :

bon cœur et donnait secrètement des soins à la vierge en la nourrissant et en la soignant, sachant qu'elle était injustement torturée.

Alors, l'imâm se leva et alla prévenir le gouverneur qu'il n'avait réussi à persuader la jeune fille ni par la douceur ni par la pression, et il le pria de la faire partir de sa maison. (Le gouverneur) donna l'ordre de lui amener Barbe de nouveau, et après un long interrogatoire, la trouvant plus ferme encore dans l'amour du Christ, il la remit entre les mains d'un autre imâm pour qu'il s'efforçât à la persuader.

Celui-ci la conduisit à sa maison, lui témoigna beaucoup de bienveillance, l'engagea avec douceur à se convertir à leur religion et à épouser le musulman, en la prévenant de la mort cruelle qui l'attendait, si elle ne consentait

* B p. 281 b.

point. La bienheureuse vierge demeura* dans sa maison de longs jours, affaiblie de corps, mais inséparable de l'amour au Christ.

Les ennemis de la vierge, voyant que sans tortures elle ne consentirait jamais, protestèrent une fois de plus au tribunal. Le gouverneur ordonna alors d'amener la jeune fille, la pressa, sous de terribles menaces, de se convertir à leur religion et de se marier. Mais la vierge sainte lui répondit sans crainte : « Je n'obéirai jamais à vos ordres, vous qui voulez me détourner de la foi au Christ; je ne crains nullement les tortures et la mort, dont vous me menacez; me voici devant vous, faites de moi ce que vous voulez. »

Յայնժամ բդեաշխն ապշեալ ընդ անվեհեր պատասխանի կուսին ասէ ցմեծամեծսն. Զմի ինչ խորհեալ է իմ եւ զայն կամիմ առնել. եւ ծանոյց նոցա զայն, եւ ամենեքեան հաւանեցան։ Եւ ասէ. Աղջիկ դու վասն քո զիր ինչ խորհեալ եմ, եւ զայն հարկաւ պարտիս ընդունել։ Ահա այժմ առաքեմ զքեզ ի տուն այլազգւոյն իբրեւ հարսն Վարվառ անուամբ, եւ կացցես անդ քոյին կրօնիւքդ։

Զայս լուեալ տխրեցաւ յոյժ, եւ մինչ խորհէր ընդ միտս տալ պատասխանի, դանիշմանն որ էած ի տանէ իւրմէ զկոյսն, աղաղակեաց. Հաւանեցաւ աղջիկն հաւանեցաւ. զնոյն ասէին եւ ամենայն բազմութիւնն, եւ ըստ ակնարկելոյ բդեշխին վաղվաղակի արտաքս հանին զնա յատենէն։ Եւ թէպէտ աղաղակէր կոյսն. Ոչ կամիմ, ոչ հաւանիմ բայց վայրապար, զի ի ձայնէ խուժանին ոչ ոք էր որ լսէր նմա։

Եւ վաղվաղակի ամբոխն այլազգեաց ածին զառագաստ հարսանեաց ըստ աւրինութեան իւրեանց զենին։ Եւ զկոյսն բռնութեամբ մուծեալ անդր առեալ տանէին ծափաձայն ցնծութեամբ, որպէս թէ մեծ ինչ յաղթութիւն գործեալ իցեն։ Իսկ սուրբ կոյսն կոծէր զանձն իւր, եւ * լալագին պաղատանօք զԱստուած կոչէր յօգնականութիւն ազատել ի ձեռաց նոցա։ Զայս արար բդեաշխն զի հաճեսցէ զմիտս ամբոխին, եւ * B p. 282 a.

Alors le gouverneur, très étonné de la réponse hardie de la vierge, dit aux notables : « J'ai songé à faire une chose et je veux la faire. » Il leur en fit part et tous y consentirent. Il dit alors : « Jeune fille, j'ai songé à une chose pour toi, et sans doute tu devras l'accepter. Voilà que je t'envoie maintenant dans la maison du musulman comme épouse sous le nom de Varvar [1] et tu y vivras avec ta religion. »

Lorsqu'elle entendit cela, elle en fut très attristée, et pendant que dans sa pensée elle préparait sa réponse, l'imâm qui y avait amené la jeune fille de chez lui s'écria : « La jeune fille a consenti, elle a consenti. » Toute la foule répétait de même, et sur un coup d'œil du gouverneur, on la fit sortir immédiatement du tribunal. Bien que la vierge criât : « Je ne veux pas, je ne consens pas, » ce fut en vain, car personne ne pouvait l'entendre à cause du bruit de la populace assemblée.

Les musulmans apportèrent immédiatement la tente nuptiale d'après leur rite. Ils y introduisirent la vierge de force et l'emmènerent avec accompagnement de battement de mains et des cris de joie, comme s'ils avaient remporté une grande victoire. Mais la vierge sainte se frappait la poitrine, *priait Dieu avec larmes et supplications, l'appelant à son secours pour être délivrée de leurs mains. Le gouverneur avait agi de la sorte pour donner * B p. 282 a.

1. Varvar, au lieu de Varvara, pour arabiser le nom, peut-être avec l'intention de lui enlever son caractère chrétien.

որպէս խոստացաւ յատենի առաջնոյ հրամանագիր առ կոյսն, թէ Վարվառեա անուամբ հարսնացաւ այլազգւոյն պահելով զհայրենի կրօնն իւր :

Եւ այլազգիքն մեծահանդէս պարերգութեամբ տարան զնա ի Դվինի ի տուն այլազգւոյ. եւ նա յերեկոյին եկն առ կոյսն ի սենեակ առագաստին, եւ բազում բանիւք ողոքանօք եւ խոստմամբ պարգեւաց ջանայր հաճել զկամս նորա եւ ննջել ընդ նմա : Բայց նա արհամարհէր զամենայն բանս նորա եւ զխոստմունսն, եւ ոչ իսկ թողոյր հուպ մատչիլ առ ինքն :

Եւ քանզի յանհնարիցն եղեւ այլազգւոյ քաղցրութեամբ յինքն հանկուցանել զնա, ձգեաց զձեռն զի բռնութեամբ կատարեսցէ զկամս անօրէնութեան իւրոյ : Իսկ սրբուհի կոյսն զօրացեալ ի վերին օգնականութենէ ընդդէմ դառնայր նմա, եւ իբրեւ ըմբիշ արի յամենայն նուագի զգետնէր զայրն կորովի իբրեւ զմանուկ մի տկար :

Եւ ընդ առաւօտն տեսեալ մերձաւորաց երիտասարդին եթէ անկարելի է նուաճել զաղջիկն սիրով սկսան նեղել զնա : Երբեմն գանակոծ առնէին, եւ երբեմն բռնցի եւ աքացի հարկանէին եւ ապտակէին. երբեմն անսուաղ պահէին, եւ երբեմն կապանօք ոտից ի ծանր աշխատանս տառապեցուցանէին իբրեւ զգերի. իսկ նա համբերութեամբ տանէր ամենայնի վասն սիրոյն Քրիստոսի :

Եւ հայեցեալ զի եւ բռնութեամբ ոչ կարացին ի հաւանութիւն ածել խորհեցան

satisfaction à la foule, et, comme il l'avait promis au tribunal, il envoya un ordre par écrit à la vierge, (disant) que sous le nom de Varvar elle était devenue l'épouse du musulman, tout en conservant la religion de ses ancêtres.

Les musulmans la conduisirent avec grande pompe, des danses et des chants à Dwnik à la maison du musulman; celui-ci, le soir, vint trouver la vierge dans la chambre nuptiale, et tenta avec beaucoup de paroles, des supplications et des promesses de cadeaux, de la faire consentir et de coucher avec elle. Mais elle méprisa toutes ses paroles et ses promesses et ne lui permit point de s'approcher d'elle.

Le musulman, ne réussissant point à l'amener à lui par la douceur, étendit la main pour accomplir par violence sa volonté inique. Mais la vierge sainte, fortifiée par l'aide d'en Haut, s'y opposa et, comme un vaillant athlète, chaque fois fit rouler à terre, comme un enfant faible, l'homme vigoureux.

Au matin, les proches parents du jeune homme, ayant vu qu'il était impossible de dompter la jeune fille par la douceur, se mirent à la tourmenter. Tantôt ils la rouèrent de coups; tantôt ils lui donnaient des coups de poing et des coups de pied, et la souffletaient; tantôt ils la gardaient sans nourriture; tantôt, les pieds attachés, ils la faisaient peiner comme une esclave à de durs travaux; mais elle supportait tout avec patience pour l'amour du Christ.

Ayant constaté qu'ils ne pouvaient la faire consentir par la force, ils son-

միւսանգամ ողոքել ։ Եւ յաւուր միում կարծելով թէ հաճեալ իցէ մուծին անդրէն յառագաստն, եւ կոյսն հանճարեղ կամելով պատրել զայլազգին զուարթադէմ եւ յօժարամիտ զինքն եցոյց, եւ ետ ըմպել * նմա գինի եւ արբեցոյց մինչ յանզգայս լինել նմա ։ Եւ զհասարակ գիշերաւն մինչդեռ ամենեքին որ ի տանն էին խոր ի քուն ննջէին, որպէս թէ ի վերին տեսչութենէ անկեալ իցէ զնոքօք թմբրութիւն, կոյսն սուրբ կնքեալ զինքն նշանաւ խաչին եբաց զդուրսն, եւ լռելեայն փախուցեալ ի տանէ անտի եհաս ի գետ մի մեծ որ ընդ այն անցանէր, եւ թաքեաւ ի ներքոյ կամրջին զերիս տիւս եւ զերիս գիշերս անտես ի մարդկանէ, ակնկալեալ այցելութեան Տեառն ։ * B p. 282 b.

Եւ ընդ առաւօտն տեսեալ նոցա թէ չէ անդ աղջիկն խռովեցան յոյժ, եւ ցասմամբ մեծաւ եկին առ եղբարս նորա եւ առ դրացիս, եւ խնդրէին ի նոցանէ զաղջիկն, որպէս թէ նոքա փախուցեալ իցեն ։ Եւ նոքա ասեն. Ի տան ձերում խեղդամահ արարեալ զնա, այժմ ի մէնջ խնդրէք ։ Երկուցեալ նոցա ի բանիցս յայսցանէ լուռ եղեն առ ժամն, բայց ոխս քինու պահեցին ի սրտի իւրեանց ։ Եւ արձակեալ յուղարկս ի գիւղօրէս խնդրէին զնա, եւ ոչ կարէին գտանել ։

Նոյնպէս եւ եղբարք կուսին յուղախնդիր լինէին ի բազում տեղիս. եւ յետ երից աւուրց մի յեղբարց նորա որում անուն էր Գասպար գտանէ զնա ի ներքոյ կամրջին յաղօթս ։ Եւ սպասեալ գիշերոյ շալակեալ տանի զաղտագողի ճանապարհաւ ի քաղաքն

gèrent à supplier une autre fois. Et, un jour, persuadés qu'elle consentirait, ils la firent entrer dans la chambre nuptiale; l'habile vierge, voulant tromper le musulman, se montra avec un visage souriant et d'esprit avenant; elle lui fit boire * du vin et l'enivra, au point de lui faire perdre les sens. Au milieu de la nuit, tandis que tous ceux qui se trouvaient dans la maison dormaient d'un sommeil profond, comme si une léthargie les avait saisis par la sollicitude d'en Haut, la vierge sainte fit le signe de la croix sur elle-même, ouvrit la porte, et s'échappant de là silencieusement, parvint à un grand cours d'eau qui passait par là, elle se cacha sous le pont trois jours et trois nuits, sans être vue de personne, en espérant la visite du Seigneur. * B p. 282 b.

Au matin (les musulmans), voyant que la jeune fille n'était plus là, se troublèrent fort, et allèrent, avec une grande colère, trouver ses frères et ses voisins, exigeant d'eux la jeune fille, comme si c'étaient eux qui l'avaient fait fuir. Ils leur répondirent : « Vous l'avez étranglée dans votre maison, et maintenant vous nous la demandez! » A ces paroles, ils furent pris de peur et se turent sur le moment, mais ils gardèrent rancune dans leur cœur. Ils envoyèrent des émissaires dans les villages pour la rechercher, mais ils ne purent la retrouver.

Les frères de la vierge, de même, firent des recherches en beaucoup d'endroits; et trois jours après, un de ses frères, dont le nom était Gaspar, la retrouva, en prières, sous le pont. Il attendit la nuit, et la prenant sur son dos, l'emmena par des chemins détournés, comme un voleur, à la ville de

Կարին, ի տուն բարեպաշտ կնոջ միոյ Մարիամ անուն, եւ փութանակի դառնայ ի Դվնիկ զի մի ոք գիտասցէ ։ Եւ նա կերակրէ զՎառվառէ որ կայր անսուաղ զաւուրս երիս. եւ թաքուցանէ ի մթին ինչ տեղի ներքնատնոր. ուր եկաց աւելի քան զաւուրս քառասուն իբրեւ ի մշտագիշեր բանդի, հանապազորդեալ ի պահս եւ յաղօթս անասելի ճգնութեամբ ։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ փոխեցաւ բդեաշխն Բահրամ փաշայ, եւ եկն
* B p. 283 a. Իպրահիմ փաշայ այր խրոխտ * եւ սէգ, եւ եմուտ ի քաղաքն մեծաւ ամբոխիւ ։ Յայնժամ ատելքն կուսին պատրաստեցան թուղթ ամբաստանութեան մատուցանել զՀայոց, որպէս թէ փախուցեալ իցեն զհարսն իւրեանց ։ Զայն իմացեալ Հայոց փութացան զառաջս առնել չարեացն, եւ յառաջ քան զայլազգիսն մատուցին թուղթ ամբաստանութեան, բողոք բարձեալ զնոցանէ թէ ինքեանք անհետ արարին զաղջիկն, եւ առ ի ծածկել զիրսն զրպարտեն զմեզ թէ նոքա փախուցին ։ Եւ բդեաշխն առաքեալ զօրականս էած զայլազգիսն եւ արկել ի բանդի. եւ տուգանս առեալ արձակեաց ։ Եւ նոքա ի մի վայր ժողովեալ խորհուրդ արարին, եւ երթեալ թուղթ ամբաստանութեան մատուցին թէ Հայք գիշերայն փախուցին զաղջիկն զի մի դարձցի ի կրօնս մեր ։

Եւ խնդութեամբ ընկալեալ զթուղթն, առաքեաց արս յերիս գիւղս եւ կալան զՀայս. զոմանս կապանօք եւ զոմանս զանիւք ածին առաջի ։ Եւ ասէ ցնոսա սպառնալեօք.

Karin, à la maison d'une femme pieuse nommée Marie, puis il retourna rapidement à Dwnik, pour que personne ne sût rien. Cette femme donna à manger à Barbe, qui n'avait rien pris depuis trois jours, et la cacha dans un endroit obscur dans le sous-sol; celle-ci y resta plus de quarante jours comme dans une prison où régnerait une nuit perpétuelle, en jeûnant tous les jours et en priant dans un ascétisme inconcevable.

Or, il arriva en ces jours-là que le gouverneur Bahram pacha reçut son
* B 283 a. changement et que vint Ibrahim pacha, homme orgueilleux * et fier, qui fit son entrée dans la ville accompagné d'une grande multitude. Les ennemis de la vierge se préparèrent alors pour lui soumettre une lettre d'accusation contre les Arméniens comme ayant fait fuir leur épouse. Les Arméniens, prévenus, s'empressèrent d'aller au-devant du mal et présentèrent, avant les musulmans, une lettre d'accusation, en se plaignant de ce que ceux-ci avaient fait disparaître la jeune fille, disant que, pour étouffer la chose, ils les accusaient de l'avoir fait fuir. Le gouverneur envoya des soldats, fit amener les musulmans et les mit en prison; puis leur ayant fait payer des amendes, il les remit en liberté. Ceux-ci, s'étant réunis en un endroit, tinrent conseil, puis allèrent présenter une lettre d'accusation en ces termes : « Les Arméniens ont, nuitamment, fait fuir la jeune fille pour qu'elle ne se convertisse point à notre religion. »

(Le gouverneur) reçut avec allégresse la lettre, envoya des hommes dans trois villages et fit saisir des Arméniens. On les amena les uns sous les

Ով չարք, դուք էք փախուցեալ զաղջիկն, եւ զաղաղեալ զանդատէք. գիտասջիք զի զամենեսին զձեզ չարաչար սպանանեմ, եթէ ոչ հանջիք յերեւան : Եւ ետ դնել զնոսա ի բանդի : Եւ բանդապետն պնդեաց զոտս նոցա ի կոճեղս, եւ արկ շղթայ ի պարանոցս նոցա : Բայց զեղբայր կուսին զԳասպար առաւել քան զամենեսին խոշտանգէին, բրածեծ առնէին, անքուն եւ անսուաղ պահէին : Զնա սաստ սաստ առաջի իւր կոչէր բդեաշխն, եւ սպառնայր նմա գտանել զաղջիկն, եւ նա միշտ զայս առնէր պատասխանի եթէ Աղջիկն ի տան այլազգւոյն էր, նոքա գիտասցեն թէ զինչ արարին : Եւ յաւուր միում ասէ ցնա բդեաշխն. Գիտեա՛ ով դու, չի՛ք բնաւ հնար ապրելոյ բայց եթէ ուրացեալ զհաւատս քո դարձցիս ի կրօնս մեր : Պատասխանի ետ վկայն Քրիստոսի եւ ասէ. Քաւ լիցի ինձ թողուլ զհաւատսն Քրիստոսի զոր ունիմ * ի մանկութենէ, եւ դառնալ ի կրօնս ձեր. բայց զի սպառնաս ինձ մահ, պատրաստ եմ մեռանել ի կեանս աշխարհիս զի կեցից ի յաւիտեան : * B p. 283 b.

Ընդ այս բարկացեալ բդեշխին հրամայեաց հանել զնա ի կախաղան, եւ վաղվաղակի շուրջ պատեալ դահճաց ձգեցին արտաքս, եւ կապեալ զձեռս նորա յետս տանէին ի տեղին կատարման մերկ եւ բոկ եւ գլխիբաց : Եւ ամբոխն զկնի ընթացեալ սաստ սաստ յորդորէին զնա դառնալ ի հաւատոցն եւ ապրել : Իսկ նա աղաղակէր. Ես քրիստոնեայ եմ եւ զՔրիստոս Աստուած պաշտեմ, եւ զայլ որ ոչ ճանաչեմ :

chaînes, les autres à force de coups, devant lui. Il leur dit, en menaçant : « O méchantes gens, c'est vous qui avez fait fuir la jeune fille et vous portez plainte contre des musulmans; sachez que je vous ferai tous mourir d'une mort violente si vous ne la faites pas réapparaître. » Il les fit mettre en prison. Le geôlier leur lia les pieds à des blocs de bois et passa des chaînes à leur cou. On s'acharna plus particulièrement sur le frère de la vierge, Gaspar; on le rouait de coups, on le tenait éveillé et sans nourriture. Le gouverneur, le faisant souvent venir en sa présence, le menaçait pour qu'il fît retrouver la jeune fille, mais il ne répondait que ceci : « La jeune fille se trouvait dans la maison du musulman, c'est à eux de dire ce qu'ils en ont fait. » Un jour le gouverneur lui dit : « Sache bien qu'il n'y a pas d'autre moyen pour toi d'avoir la vie sauve, que si tu renies ta foi et te convertis à notre religion. » Le martyr du Christ lui répondit et dit : « Loin de moi d'abandonner la foi au Christ que je possède* depuis mon enfance, pour me convertir à votre religion; mais puisque tu me menaces de la mort, je suis prêt à mourir de la mort terrestre pour vivre dans l'éternité. » * B p. 283 b.

A ces paroles, le gouverneur, irrité, ordonna de l'emmener à la potence; et aussitôt les bourreaux, l'ayant entouré, le traînèrent dehors, lui attachèrent les mains par derrière et le conduisirent, nu, pieds nus et tête nue, au lieu de l'exécution. La foule, courant après, l'engagea maintes fois à renier la foi pour avoir la vie sauve. Mais il criait : « Je suis chrétien, j'adore le Christ Dieu et je n'en reconnais point d'autre. »

Եւ ածին զնա առ արտաքին դուռն եկեղեցւոյն, եւ դահճին ձգեալ ի վերուստ զպարանն մահու, խրատ տայր դառնալ ի կրօնս իւրեանց եւ ապրիլ ։ Իսկ վկայն Քրիստոսի զաչսն յերկինս համբարձեալ գոչեաց. Տէր Յիսուս քեզ յանձն առնեմ զհոգի իմ ։ Եւ եմոյծ զգլուխ իւր ի խեղդն, եւ այսպէս բարւոք խոստովանութեամբ աւանդեաց զհոգին իւր Յունիսի Լ. յաւուր չորեքշաբաթու ։

Եւ զերիս գիշերսն յորս եկաց ի կախաղանին լոյս ծագեաց ի վերայ նորա, եւ փարէր զբոլոր մարմինն ։ Եւ ապա քրիստոնեայք հրաման առեալ ի բդեշխէն տարեալ թաղեցին զնա ։ Եւ ի նմին գիշերի տեսին վերստին լոյս պայծառ իջեալ յերկնից ի վերայ գերեզմանի նորա, եւ ուրախացեալ փառս ետուն Աստուծոյ ։ Եւ ապա բազում տուգանս առեալ յերից գիւղից արձակեաց զկապեալսն ։

Իսկ կոյսն սուրբ որ կայր թաքուցեալ ի տան Մարիամայ, զկապանաց եւ զմահու եղբօր իւրոյ ինչ ոչ գիտէր, զի ոչ ոք երթեւեկս առնէր առ նա. բայց զայս միայն թէ այլազգիք հետախոյզ են ինքեան, վասն որոյ եւ զգուշանայր անձին ։ Եւ յաւուր միում մինչդեռ Մարիամ կերակրէր զկոյսն, կին մի այլազգի ի դրացեաց նորա որ
* B p. 284 a. կարծիս ունէր զկուսէն թաքուցեալ ի տան նորա, յանկարծակի * եմուտ անդր եւ ետես զնա. եւ առժամայն ընթացեալ ազդ արար բդեշխին ։ Եւ հասեալ վախտ ապաշին զօրականօք կալան զՎարվառէ եւ զՄարիամ, եւ տանէին զնոսա ստիպաւ ։

On l'amena à la porte extérieure de l'église; le bourreau, en laissant glisser d'en haut la corde de la mort, l'engagea à se convertir à leur religion pour avoir la vie sauve. Mais le martyr du Christ, élevant ses yeux au ciel, s'écria : « Seigneur Jésus, je te recommande mon âme. » Il introduisit sa tête dans le nœud, et c'est ainsi qu'en bonne confession il rendit son âme le 30 juin, le jour de mercredi.

Pendant les trois nuits qu'il resta à la potence, une lumière jaillit sur lui, enveloppant tout son corps. Ensuite les chrétiens, ayant obtenu l'autorisation du gouverneur, l'enlevèrent et l'inhumèrent. Cette même nuit, ils aperçurent de nouveau une lumière éclatante descendant du ciel sur sa tombe et avec joie ils rendirent grâces à Dieu. (Le gouverneur), ayant ensuite fait payer de fortes amendes aux trois villages, remit en liberté les détenus.

La vierge sainte, qui se tenait cachée dans la maison de Marie, ne savait rien de l'emprisonnement et de la mort de son frère, car personne ne la fréquentait; elle savait seulement que les musulmans la recherchaient, c'est pourquoi elle prenait des précautions pour sa personne. Un jour que Marie servait à manger à la vierge, une femme musulmane de ses voisines, qui soupçonnait
* B p. 284 a. que la vierge était cachée dans la maison, y entra * inopinément et l'aperçut; aussitôt elle courut en avertir le gouverneur. Les soldats du chef de la police [1] arrivèrent, se saisirent de Barbe et de Marie et les emmenèrent précipitamment.

1. C'est ainsi que l'expression վախտ ապաշի est interprétée par ոստիկանաց պետն dans J. Manandean et H. Adjarean, Հայոց նոր վկաներ, t. I, Valaršapat, 1903, p. 793.

Եւ ի ճանապարհին սուրբ կոյսն քաջալերէր զխանատուր իւր զՄարիամ մի ինչ զանգիտել ի սպառնալեաց բռնաւորին, եւ չևս ընկրկել ի պսակէ մարտիրոսութեան, այլ աւօրեայ կենօք գնոյ առնուլ զկեանսն յաւիտենից :

Եւ իբրեւ ածին յատեան, եհարց դատաւորն զՄարիամ խոժոռ դիմօք եւ ասէ. Կին դու ընդէր թագուցեր զաղջիկն ի տան քում : Եւ նա յահէն դողանի հարեալ կարկեցաւ զլեզուն, եւ ոչ կարաց տալ պատասխանի : Ապա հրացայտ աչօք հայեցեալ առ կոյսն ասէ. Աղջիկ դու յառաջագոյն զդենն մեր ընկալեալ ես, եւ ընդէր արհամարհեալ զայն փախեար :

Եւ պատասխանի կոյսն սուրբ աներկիւղ համարձակութեամբ. Սուտ զրպարտութիւն է այդ, ես ոչ երբեք ընկալեալ եմ զդենն ձեր, այլ իմով հաւատովս էի ի տան այլազգւոյն : Եւ հանեալ եցոյց զհրամանագիրն Բահրամ փաշային եւ աղաղակեաց. Վարվառ է անուն իմ, ես քրիստոնեայ եմ, մեռանիմ ի վերայ հաւատոյս, եւ ոչ լինիմ այլազգի :

Յայնժամ դատաւորն յանձն արար զՎարվառ դանիշմանի ումեմն ուսուցանել զնա եւ խրատել. եւ զՄարիամ առաքեաց ի տուն երիցուն : Եւ դանիշմանն տարեալ զնա ի տուն իւր պահեաց յանդորրու. եւ զօր ամենայն յուշ առնէր նմա զանհրաժեշտ մահն եթէ անհաւան գտանիցի, եւ զմեծամեծ պարգեւսն եթէ հնազանդեսցի հրամանաց դատաւորին. եւ ջան գործէր հանել զնա ի հաւատոյն Քրիստոսի :

En route la vierge sainte encourageait son hôtesse Marie à ne point craindre les menaces du tyran et à ne point reculer devant la couronne du martyre, mais à acheter au prix de la vie courante la vie éternelle.

Lorsqu'on les eut introduites au tribunal, le gouverneur interrogea Marie d'un regard rébarbatif et dit : « Femme, pourquoi as-tu caché la jeune fille dans ta maison ? » De peur elle fut prise d'un tremblement, perdit complètement la parole et ne put répondre. Ensuite regardant la vierge avec des yeux enflammés, il lui dit : « Jeune fille, tu as accepté jadis notre religion, pourquoi, la méprisant, as-tu pris la fuite ? »

La vierge sainte lui répondit sans peur et avec hardiesse : « C'est une fausse accusation, je n'ai jamais accepté votre religion, j'étais dans la maison du musulman avec ma foi. » Puis, l'ayant sorti, elle montra le décret de Bahram pacha, et s'écria : « Mon nom est Varvar, je suis chrétienne, je meurs pour ma foi et je ne deviendrai pas musulmane. »

Le gouverneur la remit alors entre les mains d'un certain imâm pour l'instruire et la conseiller; et il envoya Marie à la maison du prêtre. L'imâm emmena (Barbe) à sa maison et la garda en paix; il lui rappelait tous les jours la mort inévitable, si elle ne consentait point, et de grands présents, si elle obéissait aux ordres du gouverneur; il tentait de l'enlever à la foi du Christ.

Իսկ նա որ զլիովին զգեցեալ էր զՔրիստոս, և պատսպարեալ վահանաւ հաւատոյ, անվնասելի եկաց յամենայն թունաւոր նետից հակառակամարտից, և եռայր հոգւով և աղօթիւք խնդրէր *յԱստուծոյ արժանի առնել վկայական մահուան : Տեսեալ դանիշմանն զհաստատութիւն մտաց կուսին ծանոյց բդեշխին, և ետ նա ածել առաջի իւր զՎառվառեա և զՄարիամ, և սաստիկ բարկութեամբ և սպառնալեօք մահու ետ ընկել զնոսա ի բանդի :

* B p. 284 b.

Անդ Մարիամ լայր հեկեկանօք և կոծէր զանձն, ոչ եթէ դժկամակ էր մեռանել վասն Քրիստոսի, քանզի և նա յորդորեալ ի բանից կուսին ցանկայր մարտիրոսութեան, այլ զի յիշէր զորդիս իւր, թէ գուցէ և նոքա մատնեսցին ի ձեռս այլազգեաց, և երկիւղէ մահուն ուրասցին ի հաւատոյ : Յայնժամ լցեալ շնորհօք սուրբ Հոգւոյն, հայեցաւ յերեսս Մարիամայ և ասէ. Տիկին բարի, քաջ գիտեմ զի ի պատճառս իմ ըմպելոց ես զբաժակ մահուն, բայց դու մի համարիր զայն վասն իմ այլ վասն սիրոյն Քրիստոսի, որ վասն մեր զանտանելի չարչարանս և զմահ առ յանձն : Մերս այս մահ շնորհ մեծ է յԱստուծոյ մեզ տուեալ, որում թէպէտ բազումք ցանկան այլ սակաւք արժանանան : Գոհացուք զՏեառնէ որ արժանի արար զմեզ այսմ մեծի շնորհացս : Իսկ վասն զաւակաց քոց մի ինչ հոգար, այլ յանձն արա զնոսա Աստուծոյ, և նա հոգասցէ վասն նոցա : Եւ դու եկ զկնի իմ, զի ահա հասեալ կամք առ դուրս

Mais elle, qui était complètement revêtue du Christ, et abritée par le bouclier de la foi, ne fut touchée par aucune des flèches empoisonnées de ses adversaires; elle bouillonnait en son âme et, par ses prières, demandait à *Dieu d'être digne de la mort du martyre. L'imâm, ayant vu la fermeté de l'esprit de la vierge, en fit part au gouverneur, qui ordonna d'amener Barbe et Marie en sa présence, et avec une grande colère et des menaces, il les fit jeter en prison.

* B p. 284 b.

Là, Marie pleurait avec des sanglots et frappait sa poitrine, non pas qu'il lui déplût de mourir pour le Christ, car, encouragée par les paroles de la vierge, elle aspirait au martyre, mais parce qu'elle pensait à ses fils et craignait qu'ils ne fussent eux aussi livrés entre les mains des musulmans, et par crainte de la mort ne reniassent leur foi. Alors (la vierge), remplie des grâces du SaintEsprit, regarda le visage de Marie et lui dit : « Bonne dame, je sais bien que c'est à cause de moi que tu vas vider la coupe de la mort, mais ne le considère point comme pour moi, mais pour l'amour du Christ qui a accepté à cause de nous d'atroces souffrances et la mort. Cette mort, à nous, est une grande grâce qui nous est accordée par Dieu, et s'il y a beaucoup qui y aspirent, peu nombreux sont ceux qui en sont dignes. Rendons grâces au Seigneur de nous avoir rendues dignes de cette grande grâce. Quant à tes enfants, ne te soucie en rien, mais recommande-les

ապարանից երկնաւոր արքային, փութասցուք մտանել ընդ նա յուրախութիւն յաւիտենականն :

Եւ Մարիամ մխիթարեալ ի հոգեւորս բանից Վառվառեայ սրբոյ զարտասուս աչաց, եւ զհոգս որդւոց իւրոց ապաւինեալ երկնաւորին խնամոց վառեցաւ սիրովն Քրիստոսի : Եւ այնուհետեւ ոչ զորդիս յիշէր, եւ ոչ ի յղութիւն իւր ակնարկէր որ մերձ էր ի ծնանել, այլ միշտ զերկնայինսն խորհէր : Եւ որչափ մնացին ի բանդի անդ աղօթէին ի միասին ուրախութեամբ, եւ խօսակից լինէին զյաւիտենական կենացն եւ զփառացն արքայութեան :

Եւ յետ աւուրց ինչ հրամայեաց *բդեաշխն եւ ածին առաջի զերկոսին սրբուհիսն : Յառաջ կոչեաց զՎառվառ եւ ասէ. Աղջիկ դու քեզ ասեմ, ընկա՛լ վերստին զդենս մեր եւ կեցցես. ապա եթէ կամակորեալ ընդդէմ դառնցիս, զքեզ եւ զվանատուր քո այդ կորուսից այժմ չարաչար մահուամբ : Աղաղակեաց կոյսն. Մեք քրիստոնեայ եմք եւ վասն Քրիստոսի մեռանիմք. ոչ երբեք ընկալաք եւ ոչ բնաւ ընդունիմք զդենն ձեր. արա՛ զոր ինչ առնելոց ես ընդ մեզ : * B p. 285 a.

Յայնժամ բռնաւորն լի եղեւ բարկութեամբ եւ ասէ. Արկէք զդոսա ի բանդ զի հանցին ի կախաղան : Գոչեաց կոյսն սուրբ. Ես ոչ եմ պոռնիկ զի ի կախաղան հանցեն, այլ ես կոյս եմ անբիծ, թո՛ղ զգլխատեսցեն զիս. զի ցանկայր արեանբ մարտիրոսութեան : Եւ դահիճքն տարան զնոսա ի բանդ. եւ հատաւ ի վերայ նոցա վճիռ մահու :

à Dieu, et Il prendra soin d'eux. Et toi, suis-moi, car nous voici arrivées à la porte du palais du roi céleste, pressons-nous d'y entrer dans la joie éternelle. »

Marie, consolée par les paroles pleines d'esprit de Barbe, essuya les larmes de ses yeux et, confiant le souci de ses fils aux soins du Céleste, elle s'enflamma de l'amour du Christ. Elle ne songea plus, dès lors, ni à ses fils, ni ne fit allusion à sa grossesse, car elle était sur le point de mettre au monde; mais elle ne songeait qu'aux choses du ciel. Tout le temps qu'elles restèrent en prison, elles prièrent ensemble avec joie, ne causant entre elles que de la vie éternelle et de la gloire du paradis.

Quelque temps après, le gouverneur * ordonna d'amener en sa présence les deux saintes. Il appela d'abord Barbe et lui dit : « Jeune fille, je te le dis, accepte de nouveau notre religion et tu auras la vie sauve; mais si tu t'obstines et refuses, je te ferai périr maintenant d'une mort cruelle, toi et ton hôtesse. » La vierge s'écria : « Nous sommes chrétiennes et nous mourrons pour le Christ; nous n'avons jamais accepté, ni n'acceptons votre religion; fais de nous ce que tu veux faire. » * B p. 285 a

Le gouverneur fut alors outré de colère et dit : « Jetez-les en prison pour être pendues à la potence. » La vierge sainte cria : « Je ne suis point une prostituée pour être pendue à la potence, mais je suis une vierge sans tache; qu'on me tranche la tête »; car elle aspirait au sang du martyre. Les bourreaux les emmenèrent à la prison; la sentence de mort fut portée sur elles.

Եւ ի նմին աւուր յութերորդ ժամու գիշերոյն հանեալ զնոսա ի բանդէն տանէին ի դուռն սուրբ Աստուածածնին եկեղեցւոյն, զի անդ հրամայեալ էր կախել : Եւ երթային սուրբքն երկոքին ուրախութեամբ բազմաւ որպէս ի հարսանութիւն որդւոյ թագաւորի : Եւ յորժամ հասին ի տեղին, աղաչեաց Վառվառէս զդահիճն զի նախ կախեսցեն զՄարիամ եւ ապա զինքն, թերեւս կասկածեալ թէ գուցէ երկուցեալ նորա յահագին տեսլենէ մահուան իւրոյ դրդուեսցի ի հաւատոցն զոր մինչեւ ցայն վայր ունէր հաստատուն :

Եւ իբրեւ կախեցին զՄարիամ, երանելին Վառվառէս համբարձ զաչս իւր յերկինս եւ աղաղակեաց . Տէր Յիսուս, որ հաճեցար ընդունիլ եւ զայս վերջին պտուղ օրհնութեան ի բերանոյ իմմէ, հաճեա՛ց արժանի առնել զիս ի դասս վկայից քոց սրբոց : Գոհանամ զքէն բարերար որ փառաւորեցեր զիս յերկրի այսպիսի փառաւոր մահուամբ, փառաւորեա՛ եւ յերկինս յաւիտենական փառօք : Եւ ապա զուարթ դիմօք մատոյց
* B p. 285 b. ինքնին զգլուխն *իւր ի խեղդն : Եւ դահիճքն կախեցին զնա անդէն առ դրամբք եկեղեցւոյն փոքր մի հեռի ի Մարիամայ :

Կատարեցան երկոքին վկայուհիքս ի թուին Հայոց հազար երկու հարիւր եւ վաթսուն, եւ Յուլիսի ԺԶ, յաւուր շաբաթու : Եւ գլխաւորք Հայոց միջնորդութեամբ մեծամեծացն այլազգեաց ի նմին աւուր հրամանաւ բդեշխին իջուցին ի կախաղանէն, եւ ի վաղիւն մեծահանդէս յուղարկաւորութեամբ եւ երգօք հոգեւորօք թաղեցին զնոսա ի գերեզմանս նահատակաց :

Le même jour, à la huitième heure de la nuit, on les fit sortir de la prison et on les conduisit à la porte de l'église de la sainte Vierge, car (le gouverneur) avait ordonné de les pendre là. Les deux saintes y allèrent avec une grande joie comme aux fiançailles d'un fils de roi. Lorsqu'elles furent arrivées à l'endroit, Barbe pria le bourreau de pendre d'abord Marie et elle ensuite; elle doutait peut-être que celle-ci, à la vue de son horrible mort, ne fût ébranlée dans sa foi, qu'elle avait gardée fermement jusque-là.

Lorsqu'on eut pendu Marie, la bienheureuse Barbe leva ses yeux au ciel et s'écria : « Seigneur Jésus, qui as daigné accepter ce dernier fruit de bénédiction de ma bouche, daigne m'admettre dans le chœur de Tes saints martyrs. Je Te rends grâces, bienfaiteur, de m'avoir glorifiée sur la terre d'une mort si glorieuse; glorifie-moi aussi dans le ciel de la gloire éternelle. »
* B p. 285 b. Ensuite, d'un visage souriant, elle avança d'elle-même sa tête* dans le nœud. Les bourreaux la pendirent aussitôt devant la porte de l'église à une petite distance de Marie.

Ces deux martyres furent martyrisées l'an mille deux cent soixante de l'ère arménienne, le 16 juillet, un jour de samedi. Les notables arméniens, par l'entremise des notables musulmans, ayant obtenu l'autorisation du gouverneur, les descendirent le jour même de la potence, et le lendemain, avec un magnifique convoi et des chants spirituels, on les enterra dans le cimetière des martyrs.

Եւ յայնմ եօթնեկի յամենայն գիշերի լոյս ճաճանչաւէտ ցոլանայր յերկնից ի վերայ տապանի սրբոցն, որում ականատես եղեն ոչ միայն քրիստոնեայք այլ եւ այլազգիք բազումք, եւ վկայէին զանմեղութենէ նոցա ։ Եւ բազում նշանք բժշկութեան եղեն յայնժամ, եւ լինին մինչեւ ցայսօր ի տապանէ սրբոց վկայիցս ի նեղեալս եւ ի դիւահարս, եւ յախտաժէտս ի փառս Քրիստոսի ։

Զփառաւոր նահատակութենէ բարեյաղթ վկայիցս Քրիստոսի գրեցին արք արժանահաւատք քաղաքակիցք սրբոյս, տէր Մատթէոս քահանայ, եւ Հաննէ վարժապետ քաղաքին, եւ պարոն Կարապետ որդի Յակոբայ իշխանի Մամիկոնեան ։ Յորոց եւ մեք առեալ եդաք աստանօր ի յիշատակ յաւիտենական ։]

Ամիս Յուլիս աւուրս է ԼԱ ։

Մարգաց ԻԵ եւ Յուլիս Ա ։ Վկայաբանութիւն սրբոց անարծաթ բժշկացն Կոզմայի եւ Դամիանոսի ։

* Սուրբքն Կոզմաս եւ Դամիանոս եղբարք էին հարազատք, եւ ճարտարք յարուեստ * A fol. 298 r° b.
բժշկութեան, յաւուրս կռապաշտ արքային Կարինոսի. եւ ոչ միայն զմարդիկ բժշկէին

11 Վկայաբանութիւն... Դամիանոսի] Վկայութիւն սուրբ եւ սքանչելագործ անարծաթ բժշկացն եւ փառաւորեալ վկայիցն Քրիստոսի Կոզմայի եւ Դամիանոսի որ ի Հռոմ կատարեցան B || 13 Սուրբքն] Քրիստոսի մարտիրոսքս B.

Durant cette semaine-là, toutes les nuits, une lumière rayonnante brilla du ciel sur la tombe des saintes, ce dont furent témoins non seulement les chrétiens mais aussi de nombreux musulmans, qui témoignaient de leur innocence. Bien des prodiges de guérison eurent lieu alors, et ont encore lieu jusqu'aujourd'hui à la tombe des saintes martyres en faveur des affligés, des possédés et des infirmes, pour la gloire du Christ.

Des concitoyens des saintes, dignes de foi, ont décrit le glorieux combat de ces victorieuses martyres du Christ : Ter Matthéos prêtre, Hanné, instituteur de la ville, et le baron Karapet, fils du prince Hakob Mamikonian. C'est d'eux que nous l'avons pris et inséré ici en souvenir éternel.]

Le mois de Juillet a 31 jours.

25 MARGATS, 1er Juillet.

Passion des saints médecins anargyres Cosme et Damien.

* Les saints Cosme et Damien étaient deux frères germains, habiles dans * A fol. 298 r° b.
la profession de la médecine, aux jours de l'empereur idolâtre Carinus. Ils

այլ եւ զանասուն անուամբն Քրիստոսի ։ Եւ յումեքէ ամենեւին ինչ ոչ առնուին, այլ միայն փոխանակ վարձուն դարձուցանէին զբժշկեալսն յաստուածգիտութիւն ։

Եւ նախանձեալք ընդ նոսա այլ բժշկացն որք զՔրիստոս ոչ խոստովանէին զեկուցին թագաւորին եթէ կախարդութեամբ առնեն զբժշկութիւնսն ։ Եւ նա առաքեաց զօրականս զի տարցեն զնոսա առ նա, եւ ժողովուրդն թաքուցին զնոսա յայրս լերինն, եւ զօրականքն կալան փոխանակ նոցա այլս ոմանս՝ այրս եւ զկանայս եւ բռնութեամբ քարշէին առ թագաւորն ։ Եւ լուեալ սրբոցն արագ ընթացեալ հասին զօրականացն, եւ ետուն զինքեանս ի ձեռս նոցա, եւ թողին վասն նոցա զորս կալանն ։ Եւ տեսեալ զնոսա թագաւորին բռնադատէր ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։

Ասեն սուրբքն. Եթէ եւ դու հաւատաս ի Քրիստոս եւ ընկենուս զդիւական կռապաշտութիւնդ բարի լինիցի քեզ, եւ ամենայն ազգականաց քոց, զի մեք ի Քրիստոսի հաւատոյն ոչ հեռանամք ։ Եւ թագաւորն բարկութեամբ սպառնայր նոցա, եւ առ-
* A fol. 298 v° a. ժամայն թիւրեցան * դէմքն, եւ դարձան ծնօտքն ի թիկունս կոյս, եւ աղաղակեաց մեծաւ բարբառով եւ ասէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից, եւ ոչ գոյ այլ Աստուած բայց ի նմանէ ։ Եւ հաւատացին ընդ նմա ամենայն ժողովուրդն որ առաջի կային ։

Եւ յարուցեալ թագաւորն յաթոռոյն զծիրանի քղամիդն զոր զգեցեալն էր արկ

1 այլ եւ] զանբան *add.* B || 8 վասն նոցա] այրս եւ զկանայս *add.* B || 16 զոր զգեցեալն էր *om.* B — արկ] ընկէց B.

guérissaient non seulement les hommes mais aussi les animaux, au nom du Christ. Ils n'acceptaient rien de personne, mais au lieu d'honoraires ils convertissaient ceux qu'ils avaient guéris à la science de Dieu.

D'autres médecins qui ne confessaient point le Christ, devenus jaloux d'eux, avertirent l'empereur qu'ils opéraient les guérisons par sorcellerie. Il envoya des soldats pour les lui amener, mais la population les cacha dans les grottes de la montagne, et les soldats s'emparèrent alors d'autres à leur place, hommes et femmes, qu'ils conduisirent avec violence à l'empereur. Les saints, l'ayant appris, accoururent précipitamment rejoindre les soldats et se livrèrent entre leurs mains. Ces derniers relâchèrent ceux qu'ils avaient saisis à cause d'eux. L'empereur, en les voyant, les pressa de renier le Christ et d'immoler aux idoles.

Les saints lui dirent : « Si tu crois, toi aussi, au Christ et si tu rejettes le culte démoniaque des idoles, ce sera bon pour toi et pour tous tes proches ; quant à nous, nous ne nous éloignerons point de la foi au Christ. » L'empe-
* A fol. 298 v° a. reur en colère se mit à les menacer, mais aussitôt son visage * se déforma, les mâchoires se retournèrent en arrière et il s'écria à haute voix : « Grand est le Dieu des chrétiens, il n'y a point d'autre Dieu que lui. » Tous ceux qui étaient présents se convertirent avec lui.

L'empereur, s'étant levé de son trône, jeta la chlamyde de pourpre dont il

ի վերայ սրբոցն, եւ մկրտեցաւ ամենայն ընտանեօքն եւ սպասաւորօքն. եւ եղեւ ուրախութիւն մեծ : Եւ նոյնժամայն առողջացաւ դէմքն, եւ մեծաւ պատուով եւ պարգեւօք արձակեաց զնոսա ի տունս իւրեանց : Եւ յետ այնորիկ բժշկապետն որ էր վերակացու սրբոցն կռապաշտ էր, նախանձեցաւ ընդ նոսա, եւ նենգութեամբ տարաւ զնոսա ի լեառն ի քաղել վայրենի ծաղիկս եւ բոյս որպէս օրէն է բժշկաց յաղագս դեղոց, եւ անդ քարկոծ արար զսուրբսն եւ սպան, եւ թաքոյց զմարմինս նոցա ի քարայր լերինն. եւ այնպէս կատարեցան ի Քրիստոս Յուլիսի Ա :

Են եւ այլ սուրբ բժիշկք Կոզմաս եւ Դամիանոս եղբարք հարազատք, զորոց հատին զգլուխսն յԱրաբիա վասն հաւատոցն Քրիստոսի :

Են եւ այլ երկու սուրբ եղբարք եւ անարծաթ բժիշկք Կոզմաս եւ Դամիանոս, որդիք հաւատարիմ եւ սուրբ կնոջ մի այրւոյ որոյ անուն էր Թէոդիտի :

[B* Յայսմ աւուր վկայութիւն Ագրիպինեայ մօրն Ներոնի եւ հօրաքեռ նորին որ վասն հաւատոցն Քրիստոսի սպանան ի Ներոնէ կայսերէ, եւ թաղեցան ի Հռոմ : * B p. 2 a.

Ի սմին աւուր ի Հայս յիշատակ նոր սուրբ վկայիցն Գէորգեայ Ակայեցւոյ, եւ մանկանն Քրիստոնէի եւ այլոցն որք յայլազգեաց վասն Քրիստոսի կատարեցան, որք էին ի Հայոց ազգէն եւ յարեւելս նահատակեցան :

7 Քրիստոս] Մարգաց ԻԵ եւ *add.* B || 8 զորոց հատին... Քրիստոսի] զորոց առ Դիոկղետիանոսի հատին զգլուխն յԵգիպտս որք են յԱրաբիոյ վասն անուանն Քրիստոսի B || 10 Դամիանոս] որք սրբապէս ննջեցին *add.* B.

1 տարաւ] գնաց B — նա առեալ] առեալ B' — կնոջն] իւր B || 6 յանկարծակի... Գնայ] երեւեցաւ նմա ի տեսլեան խաչ սառնանման, եւ լուաւ ձայն ի խաչէն որ մահ սպառնայր նմա եթէ երթեալ հակառակօղ լինիցի խաչելոյն Քրիստոսի ։ Եւ դարձաւ Նէանիոս ի Սկիւթապօլիս, եւ կոչեալ զոսկերիչս ետ շինել զնմանութիւն խաչին զոր ետես, եւ գնացեալ B.

Lorsqu'il fut instruit, et fut devenu un jeune homme, la mère prit son fils avec de l'argent et le conduisit à l'empereur, qui accepta l'argent, honora le fils de la femme et l'envoya au duc d'Alexandrie. Celui-ci lui remit deux capitaines avec leurs troupes, Nicostratus et Antiochus, et l'expédia en lui ordonnant de faire périr dans les tortures tous les chrétiens qu'il rencontrerait.

A cause des grandes chaleurs * de l'été, il marchait de nuit. Lorsqu'il fut arrivé à trente lieues de la ville d'Apamée, accompagné de ses troupes, il se fit tout d'un coup un tremblement de terre, avec des coups de foudre terribles et une voix du ciel, qui dit : « Néanias, es-tu devenu, toi aussi, mon adversaire? Où que tu ailles, tu mourras. » Néanias répondit : « Qui es-tu? Montre-toi, Seigneur, car je ne suis pas capable de te voir. » Il lui apparut alors une croix, qui semblait de glace, et une voix de la croix lui dit : « Je suis Jésus le crucifié, Fils de Dieu. » Et le Seigneur lui parla du pieux mystère de la divinité et le convertit à la science de la vérité. * A fol. 303 r° a.

Néanias retourna à Scythopolis, alla trouver les orfèvres et fit faire une croix d'or et d'argent, et lorsqu'elle fut achevée, il y apparut une inscription hébraïque qui se lisait « Emmanuel »; il y apparut aussi trois figures : Jésus

ի մի կողմն Միքայէլի եւ միւսն Գաբրիէլի հրեշտակապետացն ։ Եւ երկիր եպագ խաչին եւ պատկերացն ։

Գնաց յԵրուսաղէմ եւ եգիտ Հագարացիս որ ապականէին զամենայն գաւառն եւ աւերէին ։ Եւ եկեալ Նէանէաս խաչիւն ի պատերազմ յաղթեաց քաջութեամբ Հագարացւոցն, եւ դարձաւ խնդութեամբ ի տուն իւր գոհանալով զՔրիստոսէ եւ զխաչէն եւ զհրեշտակապետացն ։

* A fol. 303 r° b. Եւ ել ընդ առաջ *մայրն իւր, եւ զյաղթութիւն պատերազմին յօգնականութենէ կռոցն համարեցաւ, գոհանայր զդիցն, իսկ Նէանէաս ի Քրիստոսէ եւ ի սրբոյ խաչէն խոստովանէր զյաղթութիւն մարտին ընդդէմ թշնամւոյն ։ Եւ նոյնժամայն գրեաց մայրն իւր առ թագաւորն եթէ Ուրացաւ զկուռսն որդին իմ ։ Եւ առաքեաց թագաւորն հրաման առ Լուկիոս դատաւորն Կեսարիոյ քաղաքին զի քննեսցէ զՆէանէաս ։ Եւ յորժամ կացոյց առաջի իւր զսուրբն խոստովանեցաւ զանուն եւ զհաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Եւ այնչափ չարաչար ձաղկեցին զնա մինչեւ կիսամահ տարան ի բանդն ։

Եւ ի մէջ գիշերին լոյս ծագեաց ի բանդին, եւ երեւեցաւ Քրիստոս հրեշտակա-

5 զՔրիստոսէ... զհրեշտակապետացն] զՅիսուսէ B || 8 ի Քրիստոսէ եւ ի սրբոյ խաչէն] զՔրիստոսէ B || 9 ընդդէմ թշնամւոյն] արարեալ ի ձեռն խաչին B — նոյնժամայն *om.* B || 10 թագաւորն] վասն որդւոյն իւրոյ *add.* B — զկուռսն] զաստուածսն մեր B — որդին իմ] . եւ պաշտէ զխաչեալն Քրիստոս B || 11 Կեսարիոյ քաղաքին *om.* B || 12 զսուրբն] զՆէանէաս B || 13 մերոյ Քրիստոսի *om.* B — չարաչար *om.* B || 15 լոյս ծագեաց] տեսանէր յանուրջսն լոյս մեծ ծագեալ B — երեւեցաւ] եկեալ B.

au milieu, et aux extrémités des branches de la croix les archanges, d'un côté Michel et de l'autre Gabriel. (Néanias) se prosterna devant la croix et les figures.

Il partit pour Jérusalem et y trouva des Sarrasins qui envahissaient toute la province et la dévastaient. Néanias, muni de la croix, leur livra combat, vainquit vaillamment les Sarrasins et retourna joyeusement à sa maison en rendant grâces au Christ, à la croix et aux archanges.

A fol. 303 r° b. Sa mère alla au-devant *de lui et, attribuant la victoire de la bataille à l'aide apportée par les idoles, elle rendit grâces aux dieux; mais Néanias confessa que la victoire de la bataille contre l'ennemi était due au Christ et à la sainte croix. Sa mère écrivit aussitôt à l'empereur : « Mon fils a renié les idoles. » L'empereur envoya ordre au juge de la ville de Césarée, Lucius, d'interroger Néanias. Et lorsque celui-ci fit comparaître le saint devant lui, il confessa la foi et le nom de Notre-Seigneur Jésus-Christ. On le flagella si brutalement, qu'on l'emmena en prison à moitié mort.

Au milieu de la nuit, une lumière jaillit dans la prison et le Christ

պետօքն եւ եղոյծ զնա ի կապանացն, եւ զվէրսն բժշկեաց եւ մկրտեաց զնա եւ ասէ. Յայսմհետէ Պրոկոպիոս անուանեսցիս, եւ յառաջադէմ լինիցիս ի գործս քո եւ բազում գունդս դարձուսցես ի հաւատս :

Եւ յետ սակաւ աւուրց տարան զՊրոկոպիոս ի տաճար կռոցն զի երկիր պագցէ. եւ յորժամ գնաց կործանեաց աղօթիւք երեսուն եւ վեց բագինս, եւ բղխեաց ջուր եւ լցաւ տաճարն : Եւ տեսեալ զքանչելիսն երկու զօրագլուխքն զօրօքն իւրեանց հաւատացին ի Քրիստոս, եւ մկրտեցան ի սրբոյն Ղեւոնդէ եպիսկոպոսէ Կեսարու : Եւ նոյնժամայն հատին զամենեցունց գլուխսն եւ մարտիրոսացան վասն անուանն Քրիստոսի երկու զօրագլուխք * զօրօքն իւրեանց : * A fol. 303 v° a.

Հաւատաց ի Քրիստոս եւ Թէոդոսիա մայր սրբոյն Պրոկոպիոսի եւ այլ երկոտասան կանայք իշխանաց : Եւ զան հարին զնոսա ուժգին, եւ հրով զանթսն այրեցին եւ զստինսն հերձին, եւ ապա հատին զգլուխս նոցա :

Եւ զսուրբն Պրոկոպիոս հրամայեաց եւ արջառաջլօք զմարմինն պլեցին, եւ հեղին ի վերայ քացախ սուր, եւ եդին ի ձեռսն հուր եւ կնդրուկ զի խնկեսցէ ի բագինսն, եւ նա պահեաց ի ձեռսն մինչեւ կնդրուկն այրեցաւ եւ ձեռքն ոչ կիզան :

1 եղոյծ] լուծանէր B — բժշկեաց] բժշկէր B — մկրտեաց] մկրտէր B — ասէ] ասէր B || 2 բազում գունդս] զբազումս B || 5 յորժամ ... աղօթիւք] յանկարծակի եղեւ շարժ մեծ ի տեղւոջն յանձինկ եւ կործանեցան B || 7 եպիսկոպոսէ] եպիսկոպոսապետէ B — Եւ նոյնժամայն] Զայն լուեալ դատաւորն հրամայեաց եւ B || 8 անուանն *om.* B || 13 զմարմինն] զանաձեն արարեալ *add.* B || 14 սուր *om.* B || 15 ոչ *om.* B.

apparut, avec les archanges, le délia de ses chaînes, lui guérit les plaies et le baptisa, en disant : « Tu t'appelleras désormais Procope, tu progresseras dans tes œuvres et tu convertiras à la foi de nombreuses troupes. »

Peu de jours après, on conduisit Procope au temple des idoles pour qu'il s'y prosternât; et lorsqu'il y arriva, il détruisit, par ses prières, trente-six autels; une source jaillit et le temple en fut inondé. Deux capitaines, témoins du miracle, crurent au Christ, avec leurs troupes, et furent baptisés par saint Léonce, l'évêque de Césarée. On leur trancha aussitôt la tête à tous. Ces deux capitaines * furent martyrisés avec leurs troupes pour le nom du Christ. * A fol. 303 v° a.

Théodosie, la mère de saint Procope, crut aussi au Christ avec douze autres femmes, épouses de princes. On les frappa vigoureusement, on leur brûla les aisselles par le feu, on leur déchira les seins et on leur trancha ensuite la tête.

(Le juge) ordonna de déchirer le corps de saint Procope à coups de nerfs de bœuf; on répandit sur ses plaies du vinaigre pur; on lui mit dans les mains du feu et de l'encens pour encenser les autels, et il les garda dans ses mains jusqu'à ce que l'encens fût consumé, mais ses mains ne furent point brûlées.

Եւ դարձեալ կապեցին ծանր վէմ ի ձեռսն եւ ընկեցին ի բորբոքեալ հուր, եւ նա նշանաւ խաչին զվէմն եղոյծ եւ զհուրն շիջոյց ։ Եւ ապա հրամայեաց դահճացն հատանել զգլուխն ։

Եւ յորժամ տանէին ի տեղին տարածեաց զձեռս իւր յերկինս եւ ասէ. Տէր Աստուած իմ արարիչ երկնի եւ երկրի, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, լուր աղաչանաց իմոց եւ կատարեա զխնդրուածս իմ ։ Պահեա զքաղաքս զայս եւ սրբեա ի կռապաշտութենէ, յիշեա եւ զամենայն ժողովուրդս քո եւ սրբեա ի կռապաշտութենէ, եւ բժշկեա զամենայն հիւանդութիւնս նոցա ։ Նեղելոց անդորրիչ լեր, որբոց եւ այրեաց
* A fol. 303 v° b. օգնական, եւ որոց ի բանդին այցելու, զնաւակոծեալս ի ծովու խաղաղութեամբ * հան ի նաւահանգիստն, ճանապարհորդաց ուղեկից, փախուցելոց ի բռնաւորաց ապաւէն, զվտանգեալսն ի ծառայութենէ ազատեա, զդեւս ի մարդկանէ հալածեա, զգլորեալսն կանգնեա, զմոլորեալսն դարձո, մեղաւորաց թողութիւն շնորհեա, զսատանայական խորհուրդս խափանեա, բաց զարքայութիւնդ քո ամենայն հաւատացելոց քոց, եւ որոց յանուն իմ եկեղեցի շինեն կամ յոսկերաց իմոց մասն առնուցուն, կամ զյիշատակս իմ կատարեն, պարգեւեա նոցա զքո անբաւ ողորմութիւնդ, եւ մի եկեսցէ ի վերայ նոցա

1 Եւ դարձեալ ... ձեռսն] Կապեցին զձեռսն B — բորբոքեալ *om.* B — եւ նա նշանաւ ... շիջոյց] եւ խանձարեցաւ ամենայն մարմինն B || 2 դահճացն *om.* B || 4 տանէին] տարան B — յերկինս] առ Աստուած *add.* B || 13 եւ որոց յանուն ... կատարեն] եւ որք աղօթիւք յիշատակեն զիս B.

On lui attacha de nouveau une lourde pierre aux mains, et on le jeta dans les flammes, mais il détacha la pierre par le signe de la croix et éteignit les flammes. (Le juge) ordonna ensuite aux bourreaux de lui trancher la tête.

Pendant qu'on le conduisait au lieu (de l'exécution), il éleva ses mains au ciel et dit : « Seigneur, mon Dieu, créateur du ciel et de la terre, Père de Notre-Seigneur Jésus-Christ, écoute ma prière et exauce ma demande. Conserve cette ville et purifie-la de l'idolâtrie; souviens-toi aussi de tout ton peuple, purifie-le de l'idolâtrie; guéris-les de toutes leurs maladies. Donne la paix aux affligés, sois le soutien des orphelins et des veuves, rends
* A fol. 303 v° b. visite à ceux qui sont en prison, fais arriver en paix * au port ceux qui sont en péril de naufrage; sois le compagnon de route des voyageurs, l'abri de ceux qui fuient les tyrans, donne la liberté à ceux qui sont en danger dans la servitude, chasse les démons des hommes, relève ceux qui sont tombés, convertis les égarés, accorde le pardon aux pécheurs, détruis les desseins de Satan, ouvre ton royaume à tous Tes fidèles et à ceux qui construiront une église en mon nom ou qui prendront une partie de mes reliques, ou qui accompliront ma commémoration, accorde-leur Ta misé-

սատանայական փորձութիւնք, եւ մի բռնութիւնք ի թշնամեաց եւ չիշխանաց, եւ ընկալ զհոգիս իմ խաղաղութեամբ :

Եւ եկեւ ձայն յերկնից առ նա եւ ասէ. Պրոկոպիէ, բացան քեզ դրունք երկնից, եւ գունդ հրեշտակաց մնան քեզ, եւ դասք մարտիրոսացն զորս մատուցեր ընծայս Հօր իմոյ սպասեն քեզ : Եւ զամենայն խնդիրս քո կատարեցից եւ կատարեալ են :

Եւ արարեալ զնշան խաչին յանձն իւր, եւ ապա հատին զգլուխ նորա Յուլիսի Ը : Եւ երթեալ քրիստոնէիցն առին զմարմինն եւ եդին ի նշանաւոր տեղի :

* Հրոտից Գ եւ Յուլիսի Թ : Վկայաբանութիւն սրբուհւոյն Ագնասիայ կուսին : * A fol. 304 r° a.

Աղախինն Քրիստոսի Ագնասիա կոյս եւ սուրբ վկայն էր ի քաղաքէն Հռոմայ : Երթային առ նա բազում կանայք եւ ուսուցանէր զնոսա յաստուածային պատուիրանացն դառնալ ի կռոցն պաշտելութենէ եւ ապաշխարել զմեղս իւրեանց :

Եւ լուեալ իշխան քաղաքին առաքեաց զօրականս եւ յափշտակեցին զնա եւ տարան առաջի նորա : Հրամայեաց նմա կամ զոհել կռոցն կամ երթալ ի պոռնկատունն : Եւ

1 բռնութիւնք] եւ նեղութիւնք *add.* B || 3-5 Եւ եկեւ ձայն... կատարեալ են *om.* B || 6 իւր] մատոյց զպարանոցն *add.* B — նորա] Հրոտից Գ եւ *add.* B || 7 եդին] փառօք *add.* B || 8 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 11 իւրեանց] զի Ագնիան անձանակ թարգմանի. քանզի ի բարուցն ստացաւ եւ զանունն, որով զբազումս ի պոռնիկ կանանց բարշեաց ի չար գործոց, եւ էած ի հաւատն Քրիստոսի եւ ի մաքուր վարս սրբութեան յաղտեղութենէն *add.* B.

ricorde infinie; que les tentations de Satan ne les atteignent point, ni la violence de leurs adversaires ou des tyrans, et reçois mon âme en paix. »

Une voix du ciel se fit entendre à lui et dit : « Procope, les portes du ciel te sont ouvertes, les chœurs des anges t'espèrent, les groupes des martyrs que tu as offerts à mon Père t'attendent. J'exaucerai toutes tes demandes : elles sont déjà exaucées. »

(Procope) fit le signe de la croix sur sa personne, puis on lui trancha la tête, le 8 juillet. Les chrétiens allèrent retirer son corps et le déposèrent dans un endroit choisi.

* 3 HROTITS, 9 Juillet. * A fol. 304 r° a.

Passion de la vierge sainte Agnès.

La servante du Christ, la vierge et sainte martyre Agnès (*Agnasia*), était de la ville de Rome. De nombreuses femmes se rendaient chez elle, et elle leur enseignait par les commandements divins à quitter le culte des idoles et à faire pénitence de leurs péchés.

Le gouverneur de la ville, l'ayant appris, envoya des soldats qui l'enlevèrent et l'amenèrent devant lui. Il lui ordonna ou d'immoler aux idoles ou

նա ասէ. Ոչ զոհեմ եւ ոչ անկանիմ ի պոռնկութիւն ։ Եւ կոչեաց իշխանն զոմն մի պոռնկախառնիչ, եւ ետ ի նա զկոյս կինն զի միով հանդերձիւ անցուցէ զնա ընդ մէջ քաղաքին եւ տարցէ ի պոռնկատունն ։ Եւ յորժամ տարաւ եւ եմոյծ ի տունն տարածեաց զձեռս իւր յերկինս եւ կոչէր զՔրիստոս յօգնականութիւնն ։ Եւ ամենայն պոռնիկք որ մտանէին թուլանային եւ խափանէր ցանկութիւնն, եւ ելանէին նուաղեալք ։

Եւ ոմն մի ամբարտաւան երիտասարդ պարծէր զի մտցէ առ նա եւ կատարեսցէ զկամս իւր. եմուտ եւ կալաւ զաղախինն Քրիստոսի, եւ անկաւ յերկիր եւ մեռաւ ։ Եւ
* A fol. 304 r° b. յորժամ յամեաց եւ ոչ ել, եմուտ պոռնկախառնիչն ի տունն եւ տեսանէ * զերիտասարդն մեռեալ որ ամբարտաւանութեամբն պարծէր, ելեալ արտաքս աղաղակեաց մեծաձայն եւ ասէ. Մեծ է հաւատն Քրիստոսի ։ Եւ մինչեւ ի մէջ քաղաքին երթայր եւ զնոյն աղաղակէր ։

Լուաւ իշխանն եւ տարաւ զերանելին Ագնէսիա առաջի իւր, եւ հարցանէր թէ. Որպէս սպաներ զերիտասարդն . Եւ նա ասէ. Յորժամ հրամայեցեր տանել զիս

1 Եւ նա] Եւ սուրբ կոյսն մերժեալ զանօրէն հրամանն B — անկանիմ] անարգիմ B || 1-4 Եւ կոչեաց... տարածեաց] Յայնժամ հրամայեաց իշխանն եւ բռնութեամբ տարան եւ մուծին ի պոռնկատունն. եւ նա տարածեալ B || 5-9 թուլանային... աղաղակէր] անդր զարհուրեալք յաներեւոյթ զօրութենէ թուլանային. եւ ոչ բնաւ իսկ մօտել կարէին, այլ արտաքս փախչէին նուաղեալք ։ Իսկ երիտասարդ ոմն ամբարտաւան յանդգնաբար բուռն եհար զաղախնոյն Քրիստոսի, եւ առժամայն անկաւ յերկիր անշնչացեալ B || 13 զերանելին *om.* B || 14 սպաներ զերիտասարդն] սպաներ զայդ B — հրամայեցեր տանել] տանէին B.

d'aller dans une maison de prostitution. Elle répondit : « Je n'immole point et je ne tombe point dans la prostitution. » Le gouverneur fit venir un tenancier de prostituées, lui confia la sainte femme, afin qu'il la promenât à travers la ville, vêtue d'un seul vêtement, et la conduisît dans une maison de prostitution. Lorsqu'il l'eut conduite et introduite dans la maison, elle éleva ses mains vers le ciel et appela le Christ à son secours. Tous les débauchés qui entraient se calmaient, leur désir cessait et ils sortaient défaillants.

Un jeune homme orgueilleux se vanta de l'approcher et de satisfaire sa volonté. Il entra et saisit la servante du Christ, mais il tomba à terre et mourut. Comme il tardait et ne sortait pas, le tenancier des prostituées
* A fol. 304 r° b. pénétra dans la maison et trouva mort * le jeune homme qui s'était vanté par orgueil; il sortit, cria à haute voix et dit : « Grande est la foi au Christ. » Il alla jusqu'au milieu de la ville en criant la même chose.

Le gouverneur l'apprit et fit comparaître la bienheureuse Agnès. Il lui demanda : « Comment as-tu tué le jeune homme? » Elle répondit : « Lorsque tu as ordonné de me conduire dans la maison infâme, un jeune homme vêtu

յանուրջանաց տունն, զայր զինի իմ պատանի մի սպիտակազգեստ, եւ եկաց առ իս զամենայն օրն. եւ որք մտանէին զցանկութիւն նոցա խափանէր ։ Այս այս որ մեռաւ վասն յանդգնութեանն զի պարծէր եթէ կատարեսցէ զցանկութեան կամս իւր ։ Ասէ իշխանն ։ Ով իցէ պատանին այն ։ Եւ նա ասէ. Հրեշտակ է զոր առաքեաց Աստուածն իմ փրկել զիս յանարգ մեղացն ։

Ասէ իշխանն. Եթէ կամիս հաւանեցուցանել զմեզ եթէ ճշմարիտ է զոր ասես աղաչեա՛ զԱստուածն քո եւ կենդանացո՛ զմեռեալն ։ Եւ նորա ծունր եղեալ աղաչեաց զԱստուած, եւ առժամայն յարեաւ մեռեալն ։ Եւ զարմանք կալաւ զամենեսեան, եւ ոմանք ի կռապաշտիցն աղաղակեցին առ իշխանն. Սպա՛ն զդա զի դիւթ է եւ կախարդութեամբն խորով առնէ զայդ ։ Հրամայեաց եւ առժամայն հրով այրեցին զսրբուհի կոյս վկայն Քրիստոսի Ագնասիա Յուլիսի Թ ։

* Հրոտից Դ եւ Յուլիսի Ժ ։ Վկայութիւն քառասուն եւ հինգ մարտիրոսացն որ ի Նիկոպօլիս Հայոց կատարեցան ։ * A fol. 304 v° a.

Սուրբ վկայքն Քրիստոսի քառասուն եւ հինգ մարտիրոսքն, որոց գլխաւորքն

1-5 զայր ... յանարգ մեղացն] Աստուածն իմ զոր եսն պաշտեմ առաքեաց ընդ իս զհրեշտակ իւր զոր եւ տեսանէի իբրեւ պատանի լուսազգեստ եկեալ զկնի իմ պահել եւ փրկել զիս ի մեղացն զարշութենէ. եւ այրս այս յանդուգն որ կամեցաւ բռնադատել զպարկեշտութիւն իմ յաչս փառաց զօրութեան նորա անշնչացաւ B || 6 Եթէ կամիս հաւանեցուցանել զմեզ *om.* B || 7 կենդանացո՛ զմեռեալն] յարիցէ այրս եւ հաւատասցուք B || 8 մեռեալն] այրն եւ եկաց կանգուն ի վերայ ոտից իւրոց B || 10 հրով *om.* B || 11 կոյս *om.* B — Ագնասիա] Հրոտից Գ եւ *add.* B — Յուլիսի Թ] Սա յունարէն Ագնիս կոչի, եւ Լատինք Աննէզ կոչեն եւ առեն զսա զլուխ կուսանաց *add.* B || 13 կատարեցան *om.* B.

de blanc m'y suivit et resta auprès de moi toute la journée; il faisait disparaître les désirs de ceux qui venaient chez moi. Cet homme vient de mourir à cause de son audace, car il se vantait d'accomplir le désir de sa volonté. » Le gouverneur dit : « Qui est ce jeune homme? » Elle répondit : « C'est un ange que mon Dieu a envoyé pour me sauver des péchés infâmes. »

Le gouverneur dit : « Si tu veux nous convaincre que ce que tu dis est vrai, prie ton Dieu et fais ressusciter le mort. » Elle se mit à genoux, pria Dieu et aussitôt le mort ressuscita. Tous furent saisis d'étonnement, mais quelques-uns des idolâtres crièrent au gouverneur : « Fais-la tuer, car elle ensorcelle, et fait cela par sorcellerie. » Il ordonna aussitôt de livrer aux flammes la vierge sainte, la martyre du Christ, Agnès, le 9 juillet.

* 4 HROTITS, **10 Juillet.** A fol. 304 v° a.

Martyre des quarante-cinq martyrs qui furent exécutés dans la ville de Nicopolis d'Arménie.

Les quarante-cinq saints martyrs du Christ, dont les principaux sont

Ղեւոնդիոս, Սիսինիոս, Մաւրիկոս, Անիկտոս, Դանիէլ, Անտոնիոս, էին ի ժամանակս Լիկինոսի կռապաշտ արքային, եւ Լիւսիայ դատաւորին ի քաղաքէն Նիկոպօլսի Հայոց ։ Եւ կացեալ առաջի Լիւսիայ դատաւորին յանդիմանեցին զնա ի սնոտի պաշտամունս կռոցն, եւ զՔրիստոս համարձակութեամբ խոստովանեցան եւ զգալուստն եւ զյարութիւն ։

Եւ քարկոծ արարեալ զսուրբսն արգելին յաշտարակ պարսպին, եւ պահէին զնոսա Մենէաս եւ Բելիդէս զօրականք ։ Եւ սուրբն Ղեւոնդէս պատուիրէր այլոց սրբոցն նախանձորդս լինել որք յառաջ նահատակեցան այրք եւ կանայք ։ Եւ ջուր ոչ տային նոցա. եւ կին մի քրիստոնեայ անուն Բասիանէ, աման ջրով ի ծոցի իւր թագուցանէր մտանէր գաղտ եւ արբուցանէր սրբոցն ։

Եւ երեւեցաւ սատանայ Լուսիոս դատաւորին ի կերպարանս Ասկղեպիոսի աստուծոյն իւրոյ, եւ ասէ. Քերթեա զմարմինս նոցա եւ խորտակեա զոսկերս նոցա եւ ընկեա ի Գայլ գետն վասն զի յոյժ անարգեցին զիս ։ Եւ վասն զի ոչ հաւանեցան հրամանաց
* A fol. 304 v° b. դատաւորին, եւ ոչ զոհեցին կռոցն, ետ * զնոսա ի դահճան, եւ նոքա կախեցին զսուրբսն եւ երկաթի եղնգամբք քերթեցին զմարմինս նոցա ։

Եւ սուրբքն աղաչեցին զմի ոմն ի ծածուկ քրիստոնեայ Փիլոն անուն զի տէրն

3 սնոտի] հեթանոսական *add.* B || 4 կռոցն *om.* B || 11 Եւ երեւեցաւ... դատաւորին] Եւ դատաւորն Լիւսիաս ծփէր ի խորհուրդս անօրէնութեան թէ որպէս տանջանօք պատուհասեսցէ զնոսա. եւ անքուն անցուցեալ զգիշերն ընդ առաւօտն անկաւ նիրհումն ի վերայ նորա. եւ յանուրջս երեւեցաւ նմա սատանայ B || 16 անուն] զկնի ումեմն քաղաքացւոյ իշխանի *add.* B.

Léonce, Sisinius, Maurice, Anicet (*Aniktos*), Daniel, Antoine, étaient de la ville de Nicopolis d'Arménie, aux jours de l'empereur idolâtre Licinius et du juge Lucius (*Liusiay*). Introduits devant le juge Lucius, ils le réprouvèrent pour son culte vain des idoles et confessèrent avec hardiesse le Christ, sa venue et sa résurrection.

On lapida les saints et on les enferma dans une tour de la muraille où les soldats Ménéas et Bélidès les gardaient. Saint Léonce recommandait aux autres saints d'être les émules des hommes et femmes qui furent martyrisés auparavant. On ne leur donnait pas d'eau, mais une femme pieuse, du nom de Bassianè, cachait une cruche d'eau dans son sein, pénétrait secrètement et donnait à boire aux saints.

Satan apparut au juge Lucius sous les apparences de son dieu Asclépius et lui dit : « Déchire leurs corps, brise leurs os et jette-les dans le Lycus (*Gaïl*), car ils m'ont trop méprisé. » Comme les saints n'avaient point con-
* A fol. 304 v° b. senti aux ordres du juge et n'avaient point immolé aux idoles, * il les remit entre les mains des bourreaux qui les suspendirent et déchirèrent leurs corps avec des ongles de fer.

Les saints prièrent un homme, chrétien en secret, nommé Philion, pour

իւր միջնորդեսցէ առ Լիւսիոս դատաւորն զի վաղվաղակի կատարեսցէ զնոսա : Եւ Փիլիոն գնաց առ տէրն իւր եւ պատմեաց նմա զխնդրուածս սրբոցն : Եւ ի միում աւուր հրաւիրեցաւ ի ճաշ առ Լիւսիոս, եւ նա պատճառեաց ոչ երթալ, Վասն զի տեսի, ասէ, զորովայնս դատապարտելոցն բացեալս ի քերանացն, տաղտկացայ եւ ոչ յօժարի բնութիւնս ի կերակուրս, եւ եթէ կամիս զի եկից ի սեղան փութապէս կորո՛ զնոսա : Որպէս եւ եղեւ իսկ : Եւ յոյժ ուրախ եղեն յորժամ լուան սուրբքն :

Իսկ զբարեպաշտ կինն Բասիանէ որ սպասաւորէր արգելին ի մտանելոյ առ սուրբսն, եւ ընդ պատուհանն իջուցանէր նոցա զջուրն. եւ նոքա օրհնէին զկինն, եւ հատուցին նմա փոխարէն պայս զի որդիք իւր եւ թոռունք քահանայ լիցին Աստուծոյ :

Եւ մինչդեռ պաշտէին զթաղման սաղմոսն. Երանելի են ամբիծք ի ճանապարհի, երեւեցաւ հրեշտակ Տեառն եւ լուսաւորեաց զնոսա եւ յայտնեաց նոցա եթէ. Մերձեալ է օր կատարման ձերոյ : Մենիաս եւ Բելիդէս լուան զձայն հրեշտակին եւ տեսին զլոյսն, *՝հաւատացին ի Քրիստոս, եւ մտին առ սուրբսն աղաղակելով. Եւ մեք քրիս- * A fol. 305 r° a.

1 զնոսա] քանզի երկնչէր զի մի գուցէ ի սրբոցն ոք առ երկիւղի երկար չարչարանաց պակասեսցի ի հաւատոց *add.* B || 4 դատապարտելոցն] սպանելոցն B || 7 որ սպասաւորէր *om.* B || 9 քահանայ... Աստուծոյ] արժանի լինիցին սրբոյ կարգի քահանայութեան B || 11-13 երեւեցաւ... զլոյսն] ահա հրեշտակ Տեառն եկեալ եկաց առ նոսա եւ լուսաւորեաց զբանդն, եւ ասէ. Ուրախ լերուք զի մերձ է օր կատարման ձերոյ, եւ անուանք ձեր գրեցան ի գիրն կենդանեաց. քաջալերեցարուք զի Տէր ընդ ձեզ է : Մենիաս եւ Բելիդէս որք պահէին զդուրս բանդին իբրեւ տեսին զլոյսն եւ լուան զձայն հրեշտակին B.

que son maître intervînt auprès du juge Lucius, afin de les faire exécuter promptement. Philion alla trouver son maître et lui communiqua la demande des saints. Un jour que ce dernier était invité à dîner par Lucius, il s'excusa de ne pas s'y rendre, « car, dit-il, j'ai vu le ventre des condamnés ouvert par les déchirures, j'en ai été dégoûté, et ma nature se refuse à toute nourriture; mais si tu veux que je vienne à ta table, fais-les périr immédiatement ». Ainsi fut fait; et les saints s'en réjouirent grandement, lorsqu'ils l'apprirent.

On défendit à la pieuse femme Bassianè, qui les servait, de pénétrer auprès des saints; alors elle leur introduisit de l'eau par la fenêtre, et (les saints) la bénirent et la récompensèrent en faisant que ses fils et ses petits-fils devinrent des prêtres de Dieu.

Pendant que (les saints) récitaient le psaume de l'inhumation : *Heureux sont les purs dans la voie*[1], l'ange du Seigneur leur apparut, les illumina et leur révéla : « Le jour de votre exécution est proche. » Ménéas et Bélidès entendirent la voix de l'ange et aperçurent la lumière; *ils crurent au Christ, * A fol. 305 r° a

1. Ps. CXVIII, 1.

տաննայք եմք ։ Կապեցին եւ զնոսա ընդ այլոց սրբոցն, եւ տարան զքառասուն եւ հինգ վկայսն առաջի դատաւորին, եւ նստուցին զնոսա ի գետնի, եւ գաւազանօք կոտորեցին զմարմինս նոցա, եւ բորբոքեցին հուր նման հնոցին Բաբելոնի, եւ արկին զամենեսեան անդ. եւ գոհութեամբ եւ ուրախութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած Յուլիսի Ժ ։

Եւ ժողովեցին զկոտորեալ մարմինս նոցա եւ ընկեցին ի Գայլ գետն որ էր վեց մղոնաւ հեռի ի քաղաքէն ։ Եւ արք ոմանք երկիւղածք գնացեալ հանին ի գետոյն, եւ պահեցին ի ծածուկ ։ Եւ յետ ժամանակաց յաւուրս Կոստանդիանոսի մեծի արքային յայտնեցան նշխարքն, եւ շինեցին վկայարան յանուն քառասուն եւ հինգ վկայիցն ։

* B p. 12 b. [B * Յայսմ աւուր վկայութիւն Մելքիսեթի եւ Կարապետի նոր վկայից ։

Երանելի վկայքս Քրիստոսի էին ի Վան քաղաքէ յաւուրս աշխարհաւեր բռնաւորին Լանկթամուրայ ։ Եւ եղեւ զի Պարսիկք ոմանք որք բնակեալք էին ի Վան քաղաքի բացին զգերեզման աղջկան միոյ այլազգւոյ որ էր ի մեծ տոհմէ, եւ արկին զվնասն ի վերայ քրիստոնէից ։

Եւ այր ոմն ժանտ Սիրանաս անուն որ առ ահի ուրացաւ զՔրիստոս, կամելով հաճոյանալ այլազգեաց մատնեաց ոմանս յանմեղ քրիստոնէից ։ Եւ գնացեալ կալան

1 եմք] Եւ ընդ առաւօտն լուեալ Կիւրիոս զիրս պահապանացն բարկացաւ յոյժ, հրամայեաց եւ *add.* B || 2 առաջի դատաւորին] յատեան B || 5 առ Աստուած] Հրոտից Դ եւ *add.* B || 6 զկոտորեալ մարմինս] զնշխարս մարմնոց B || 9 վկայիցն] սրբոց *add.* B.

et pénétrèrent auprès des saints en criant : « Nous aussi nous sommes chrétiens. » On les attacha également avec les autres saints, et on emmena les quarante-cinq martyrs devant le juge; on les fit asseoir à terre et on leur brisa le corps à coups de gourdins; on alluma un feu semblable à la fournaise de Babylone et on les y jeta tous. Ils rendirent leur âme à Dieu, avec joie et actions de grâces, le 10 juillet.

On recueillit leurs corps brisés et on les jeta dans le Lycus, qui est à six milles de la ville. Quelques hommes, craignant Dieu, s'y étant rendus, les retirèrent du fleuve et les conservèrent secrètement. Après un certain temps, aux jours du grand empereur Constantin, ces reliques furent découvertes et on construisit un oratoire au nom des quarante-cinq martyrs.

* B p. 12 b. [B * En ce jour martyre de Melkhiseth et Karapet les nouveaux martyrs.

Ces bienheureux martyrs du Christ étaient de la ville de Van, aux jours du tyran Timourlenk, le dévastateur des pays. Il arriva que quelques Persans qui habitaient dans la ville de Van avaient ouvert la tombe d'une jeune fille musulmane, qui était d'une noble famille, et avaient rejeté cette profanation sur les chrétiens.

Un homme pervers, nommé Siranas, qui avait, par peur, renié le Christ, voulant plaire aux musulmans, dénonça quelques chrétiens innocents. On

զՄելքիսէթ որ նստեալ կայր ի տան, եւ փոխանակ քննութեան դատաստանի ստիպէին ուրանալ զՔրիստոս եւ դառնալ ի կրօնս իւրեանց ։

Ասէ Մելքիսէթ. Քաւ լիցի ինձ թողուլ զլոյս եւ գնալ ընդ խաւար, դատ արարէք, եթէ յանցաւոր իցեմ, մատնեցէք զիս ի մահ, եւ եթէ անպարտ արձակեցէք զիս. եւ ընդէ՞ր նեղէք զիս տարապարտուց ։ Բայց նոքա բռնապատէին զնա յուրացութիւն սպառնալով զմահ չարաչար ։

*Եւ գտեալ զնա հաստատուն ի հաւատս Քրիստոսի մերկացուցին զնա, եւ հրացեալ շամփուրս խաղացուցանէին ի վերայ մարմնոյն. եւ զայս արարին քսան եւ վեց անգամ ։ Եւ երանելի վկայն առ իւրաքանչիւր նուագ ի դուռն մահու հասանէր, եւ ի դաւանելոյ զՔրիստոս Աստուած ոչ դադարէր ։ * B p. 13 a.

Եւ յորժամ խոցոտեցաւ բոլոր մարմինն եւ ինքն անկաւ յերկիր կիսամեռ, կամէին դնել զնա ի սակառի եւ հանել արտաքոյ քաղաքին զի քարկոծեսցեն ։ Զայն իմացեալ քաջ նահատակին յարեաւ եւ եկաց ի վերայ ոտից իւրոց, եւ թէպէտ կաղ էր եւ տկարացեալ ի տանջանաց, բայց սիրովն Քրիստոսի արիացեալ ինքնին ընթանայր ի տեղի կատարման զուարթ երեսօք եւ խնդամիտ սրտիւ որպէս ի հանդէս խրախճանաց եւ պարու. ուր եւ քարկոծ արարին զնա բազմութիւն ամբոխին, եւ սրով կոտորեցին զմարմին նորա անդամ անդամ, եւ ի հուր այրեցին ։ Կատարեցաւ երանելի վկայն Մելքիսէթ Հրոտից ամսոյ Դ եւ Յուլիսի Ժ ։

alla saisir Melkhiseth qui se trouvait tranquillement dans sa maison et au lieu d'un interrogatoire judiciaire, on le pressa de renier le Christ et de se convertir à leur religion.

Melkhiseth leur dit : « Loin de moi d'abandonner la lumière et de marcher dans les ténèbres. Rendez un jugement, si je suis coupable, condamnez-moi à mort; si je suis innocent, remettez-moi en liberté. Pourquoi me harcelez-vous inutilement? » Mais ils continuèrent à l'obliger au reniement en le menaçant d'une mort cruelle.

*Le trouvant ferme dans la foi au Christ, ils le mirent à nu et promenèrent des broches rougies sur son corps. Ils répétèrent ceci vingt-six fois. Le bienheureux martyr, à chaque fois, arrivait aux portes de la mort, mais ne cessait point de confesser le Christ, Dieu. * B p. 13 a.

Lorsque tout son corps fut criblé de plaies et qu'il fut tombé à terre à moitié mort, on voulut le mettre dans un panier et l'emmener hors de la ville pour le lapider. Ce qu'ayant appris, le brave martyr se releva, se remit sur ses pieds, et bien qu'il fût devenu boiteux et affaibli par les tortures, mais fortifié par l'amour du Christ, il se mit à courir de lui-même au lieu de l'exécution, le visage souriant et le cœur en joie, comme s'il allait à une partie de fête et de danse; et là, la multitude du peuple le lapida; ensuite, on découpa par le glaive son corps en morceaux, qu'on jeta aux flammes. Le bienheureux martyr Melkhiseth fut exécuté le 4 du mois hrotits, 10 juillet.

Կալան եւ զԿարապետ ի ճանապարհի որպէս թէ ընկեր լեալ իցէ Մելքիսեթի, եւ տարան յՈստան քաղաք : Եւ թէպէտ յայտնի ցուցանէր նա զանմեղութիւն իւր, բայց ոչ ունկն մատուցանէին նմա, այլ ահացուցանէին սպառնալեօք տանջանաց եւ մահու եւ ստիպէին յուրացութիւն : Իսկ վկայն Քրիստոսի արիաբար ընդդէմ կացեալ համարձակ խոստովանէր զՔրիստոս Աստուած. վասն որոյ եւ զնա քարկոծ արարեալ այրեցին զմարմինն հրով :]

Հրոտից Ե եւ Յուլիսի ԺԱ : Տօն ծննդեանն Յովհաննու Մկրտչի :

Մեծ քահանայն Զաքարիա ի տօնի քաւութեանն առ աւետիս ի Գաբրիէլ հրեշտակապետէն : Եւ յետ աւուրցն այնոցիկ, որպէս ասէ Ղուկաս, յղացաւ Եղիսաբէթ ի Զաքարիայ զկարապետն Քրիստոսի զՅովհաննէս Սահմի ամսոյ Ա եւ Հոկտեմբերի Ժ : Եւ կատարեալ աւուրց յղութեանն ինն ամիս եւ հինգ օր ծնաւ Եղիսաբէթ զձայնն Բանին, եւ զճրագն ճշմարտութեան զմեծ կարապետն եւ զսուրբ մկրտիչն Քրիստոսի
* A fol. 305 r° b. Յովհաննէս : Որ յանհաւատ լինել * հօրն կապեալ զլեզուն, եւ ի ծնանելն եւ յանուանելն արձակեաց, եւ խնդացին ազգատոհմն նորա ի ծննդեանն նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր առ նոսա :

7 Տօն... Մկրտչի] Տօն է մեծահանդէս եւ ամենահռչակ պատուելի եւ փառաւորեալ ծննդեան յառաջընթաց Կարապետին Քրիստոսի մեծի մարգարէին Յովհաննու Մկրտչի B || 10 Սահմի... Ժ *om.* B || 14 ազգատոհմն] ազգականքն B.

On saisit également sur le chemin Karapet, comme ayant été le compagnon de Melkhiseth, et on le conduisit à la ville d'Ostan. Bien qu'il prouvât avec évidence son innocence, on ne voulut point l'écouter, mais on l'intimida avec des menaces de tortures et de mort et on le pressa d'apostasier. Toutefois le martyr du Christ, s'y opposant vaillamment, confessa avec hardiesse le Christ, Dieu; c'est pourquoi on le lapida aussi et on brûla son corps dans les flammes.]

5 hrotits, **11 Juillet.**

Fête de la naissance de Jean-Baptiste.

Le grand prêtre Zacharie reçut à la fête de l'Expiation l'heureux message de l'archange Gabriel. Quelque temps après, comme dit Luc, Élisabeth conçut, de Zacharie, le précurseur du Christ, Jean, le 1er sahmi, 10 octobre. Les jours de la grossesse, neuf mois et cinq jours, s'étant accomplis, Élisabeth mit au monde la voix du Verbe et la lumière de la vérité, le grand précurseur et saint baptiste du Christ, Jean. Le père, pour avoir douté,
* A fol. 305 r° b. * avait été rendu muet, mais à la naissance (de l'enfant), au moment de le nommer, sa langue fut déliée, toute sa parenté se réjouit de sa naissance, car le Seigneur leur avait manifesté sa grande miséricorde.

Եւ հայր նորա Զաքարիաս լցաւ Հոգւով սրբով եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ այց արար մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ ։ Եւ վասն մանկանն ասէ. Դու մանուկ մարգարէ բարձրելոյն կոչեսցիս եւ գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա ։

Եւ ի կոտորել Հերովդէի զմանկունս Բեթղեհէմի խնդրեաց սպանանել զՅովհաննէս. եւ առեալ զնա Եղիսաբէթ փախեաւ յանապատ. եւ ի հասանել զինուորացն պատառեալ վիմին ընկալաւ զնա հանդերձ մանկամբն. եւ ի գնալ զինուորացն բացեալ վիմին ելին արտաքս ։ Եւ եթող Եղիսաբէթ զմանուկն յանապատին, եւ անդ եկաց նա ամս երեսուն մինչեւ ի ժամանակ մկրտութեանն ։

Եւ Հերովդէս բարկացեալ սպան զԶաքարիաս ընդ մէջ տաճարին եւ սեղանոյն ։ Եւ մարմին նորա կլաւ ի տաճարին եւ արիւնն մածեալ գոչէր առ Աստուած ։

2 այց արար] յայց եկ B || 6 պատառեալ... զնա] մտեալ ի փապար մի վիմին թաքեաւ B || 7 բացեալ վիմին *om.* B || 10 սեղանոյն] Իսկ մեծ կարապետն եւ երանելի մկրտիչն Քրիստոսի որ կատարումն էր մարգարէից եւ սկիզբն առաքելոց աստուածային Յովհաննէս, որ խայտալով յարգանդի մարգարէ ծնաւ, եւ կաքաւելով ի խաղս Հոգեխաղաց մարտիրոս եւ վկայ մեծ կատարեցաւ. զոր մեծ ի ծնունդս կանանց Քրիստոս վկայէր եւ ճրագ զնա լուցեալ ի կատարմանն ժամ քարոզէր ։ Որ յաւուր եկեալ քարոզեաց զգալուստ Փրկչին ի վերայ երկրի, եւ նախ երթեալ աւետարանեաց զերթալ նորա ի դժոխս մահու խաւարի ։ Որ կարապետ եղեւ նախագոյն ծննդեամբ տիրական ծննդեանն, եւ նախընթաց գլխատմամբ նորին ապատարար մահուանն գուշակելով յերկրի զաստուածային յայտնութիւնն, եւ աւետարանելով ի դժոխս զկենդանարար նորին յարութիւնն ։ Որ աւետօքն Գաբրիէլի եւ պայմանաձայնեցն լեզուի ի Զաքարիայէ Եղիսաբեթ յղանայր, եւ լուծմամբ ամլութեան եւ արձակմամբ համրացեալ լեզուին զնոյն սքանչելապէս ծնանէր ։ Որոյ մայրն մինչ յղացեալ ունէր զնա յարգանդի Հոգւով սրբով լցեալ զլինելոյն նախապատմէր. եւ հայրն ի ծնանելն մարգարէացեալ տեսանողապէս զապայս գուշակէր ։ Որ ի մօրն արգանդէ զորբութիւն եւ զանձնական ողջախոհ կուսութեան ողջունելով

Et le père (de Jean), Zacharie, fut rempli de l'Esprit-Saint, et dit : « *Béni soit le Seigneur, le Dieu d'Israël, parce qu'il a visité et racheté son peuple* [1]. » Et pour l'enfant il dit : « *Quant à toi, petit enfant, tu seras appelé prophète du Très-Haut, car tu marcheras devant la face du Seigneur, pour lui préparer les voies* [2]. »

Lorsque Hérode massacra les innocents de Bethléem, il chercha à tuer Jean; mais Élisabeth le prit et s'enfuit au désert. A l'arrivée des soldats, le rocher s'entr'ouvrit et l'accueillit avec l'enfant; les soldats partis, le rocher s'entr'ouvrit et ils en sortirent. Élisabeth laissa l'enfant dans le désert où il vécut trente ans jusqu'à l'époque du baptême.

Hérode, furieux, fit tuer Zacharie entre le temple et l'autel. Son corps fut englouti dans le temple et son sang coagulé cria (vengeance) à Dieu.

1. Luc, I, 68. — 2. Luc, I, 76.

Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբուհւոյ եւ կոյս վկային Եւփիմեայ ։

Սորա է եւ միւս տօնն եւ կատարի յամսեանն Սեպտեմբերի ԺԶ. անդ գրեալ է վկայաբանութիւնն ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Սարապիոնի ։

Յաւուրս ամբարիշտ արքային Սեւերիանոսի կալաւ Ակիղաս իշխանն զսուրբն

մաքուր սրբութեամբ իբրեւ զհրեշտակ մին էր ի մարմնի, եւ յերկրի որպէս յերկինս անտուն, անյարկ, անհանգերձ եւ անկերակուր, հաղորդ անմարմնոց սակաւապիտութեամբ ։ Եւ արտաքոյ բոլոր խորհրդործութեանց արհեստից եւ անպարապահման աշխարհայնոց եւ առ նա կենցաղութեանց ընդ գազանս եւ ընդ վայրենիս մակաղեալ իբր ի քաղաք կայր յանապատի, մարախով եւ վայրենի մեղրով եւ սաեւով ուղտու եւ մաշկեղէն գօտեաւ բաւականացեալ ։ Սրբում Հայր զանձարելիսն յայտնէր, եւ զոր վկայեալ յառաջ զմխածինն իւր Որդի ատաքէր, որպէս սուրբ աւետարանիչն Ղուկաս պատմէ եթէ. Եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարեայ յանապատին. եւ որպէս ասել նմա Յովհաննէս վկայէ. եթէ ասէր Յովհաննէս վասն Քրիստոսի եթէ զի յայտնի լիցի Իսրայելի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել, եւ եթէ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս ջրով մկրտել նա ասաց ցիս, եթէ յոյր վերայ տեսանիցես զհոգին զի իջանիցէ եւ հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ Հոգւով սրբով. եւ ես տեսի եւ վկայեցի եթէ սա է ճշմարիտ փրկիչն աշխարհի ։ Զորմէ գուշակեալ նախ Եսայիաս ասելով. Ձայն բարբառոյ յանապատի ։ Որպէս տատրակ զի բարբառի ի մերձել ձմերայնոյ, եւ կամ հաւ որ խօսի ի լռութեան գիշերոյ, այնպէս եւ նա ի լռութեան անապատին ձայնէր, յորժամ լռեալ էին մարգարէքն առաջինք, եւ սկիզբն էր օրինացն լռութեան, եւ անապատացեալ էին ի բոլոր բարեաց տունն Իսրայելի ։ Որ եւ ի սկիզբն քարոզութեանն ոչ եկն ի մէջ բազմախուռն մարդկան, զի մի կարծիցի իբրու փառաւոր այր այնպիսի ժուժկալութեան կերպարանաւն. այլ նախ յեզեր աշխարհին սկսեալ բարբառել զբան քարոզութեան հուպ ի Յորդանան ուր սակաւ էին բնակիչք զոր եւ անապատ Հրէաստանի կոչէ աւետարանիչն ։ Արդ զի ի համբաւոյն անդր ժողովեսցին ամենեքեան, եւ յօժարագոյնք լիցին յունկնդրութիւն բանին ։ Եւ զինչ էր բան քարոզութեանն. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւնն երկնից ։ Ի վեր քան զմարգարէիցն խօսի բանս, զի ոչ զերկրաւոր ճոխութիւնս աւետարանէ այլ զերկնից արքայութիւնն ։ Նաեւ մերձ ասելով զարքայութիւնն, որպէս եւ Տէրն զինքն արքայութիւն անուանեաց ի մաքուր օգնս բնակեալ յանեղն. Արքայութիւն ի ներքս ի ձեզ է ։ Արդ յայս ասէ եթէ որ կարող է տալ արքայութիւն սիրելեաց իւրոց մերձ է եւ առ դուրս հասեալ. եւ ոչ զառաջին զալստենէն միայն այլ եւ զերկրորդն նշանակեաց արքայութեան անուամբ ։ Բայց Մարկոս եւ Ղուկաս ոչ միայն ապաշխարութիւն ասեն քարոզեալ Յովհաննու այլ եւ թողութիւն մեղաց. այլ որ զկնի նորա գալոցն էր հոգւոյն մկրտութեամբ ասէր առնուլ թողութիւն մեղաց, որպէս յաջորդօքն է ուսանել. Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. գայ զօրագոյն քան զիս, նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ եւ ի հուր ։ *add.* B.

En ce jour passion de la sainte vierge et martyre Euphémie.

Elle a encore une autre fête, qui se célèbre le 16 du mois de septembre, où est écrite sa passion.

En ce jour martyre de saint Sérapion.

Aux jours de l'empereur impie Sévérien, le gouverneur Aquilas saisit

Սարապիոն, այր քրիստոնեայ և բարեպաշտ, և վասն զի խոստովանեցաւ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և զկուռսն անարգեաց ի հուր մատնեաց զնա, և այնպէս կատարեցաւ ի Քրիստոս :

[B * Յայսմ աւուր վկայութիւն սրբոյ և բարեյաղթ կուսի վկային Քրիստոսի Եւփիմեայ երանուհւոյ : * B p. 15 a.

Սուրբ և բարեյաղթ կոյս վկայն Քրիստոսի Եւփիմիա էր ի ժամանակս Դիոկղետիանոսի թագաւորի և Պրիսկոսի անթիպատրին Եւրոպիոյ ի քաղաքէն Քաղկեդոնէ. սնաւ ամենայն մաքրութեամբ պահօք և աղօթիւք ճնշելով զանձն անձուկ և նեղ վարուք, և նուիրեալ զինքն Քրիստոսի հարսնանալ մաքուր և սուրբ զկուսութիւնն անարատ պահելով, և ամենայն բարեգործութեամբ և հաւատով լցեալ եռայր ի սէրն Քրիստոսի և փայլէր իբրև զջահ լուսաւոր :

Վասն որոյ կալեալ զնա դատաւորն դառնագոյն կապանօք եած յատեան, եհարց և ծանեաւ զի էր դուստր Փիլոփրանոսի և Թէոդոսիանայ. և համարձակ խոստովանեցաւ զՔրիստոս : Եւ կապեցին զնա յանիւ սրայեց և հոլովեցին, և ապա հրով կիզեալ խանձատեցին զնա : Այլ և եդին զնա ի տապակ եռացեալ ձիթով, և յայլ զանազան ըլլանս չարչարանաց նեղեցին զնա. և զի դեռ կենդանի էր մուծին զնա ի

3 կատարեցաւ ի Քրիստոս] ի մէջ բորբոքեալ աճիւն հնոցին յօժարութեամբ մտեալ սուրբն, և այրեցաւ բոլոր մարմինն. և եղև ողջակէզ սուրբ Աստուծոյ բարի խոստովանութեամբ B.

saint Sérapion, homme chrétien et pieux, et comme il confessait le nom de Notre-Seigneur Jésus-Christ et injuriait les idoles, il le livra aux flammes. C'est ainsi qu'il fut martyrisé pour le Christ.

[B * En ce jour martyre de la sainte et glorieuse vierge et martyre du Christ, la bienheureuse Euphémie. * B p. 15 a.

La sainte et glorieuse vierge et martyre du Christ Euphémie était de la ville de Chalcédoine, aux jours de l'empereur Dioclétien et de Priscus, proconsul d'Europe. Elle fut élevée en toute pureté, avec jeûnes et prières, se mortifiant par une vie de contrainte et de privation, s'offrant au Christ comme fiancée, conservant sa virginité pure, sainte et sans tache ; remplie de toutes sortes de bonnes œuvres et de foi, elle bouillonnait de l'amour du Christ et brillait comme un lustre lumineux.

C'est pourquoi le juge, l'ayant fait saisir, la fit comparaître au tribunal chargée de dures chaînes, l'interrogea et apprit qu'elle était la fille de Philophronos et de Théodosiana. Elle confessa le Christ avec hardiesse. On l'attacha à une roue armée de lames, que l'on fit tourner; puis on lui brûla le corps avec des flammes. On la jeta dans une chaudière d'huile bouillante, et on lui fit endurer encore d'autres genres de tortures; ensuite, comme elle

թէատրոնն, եւ ձգեցին զնա լինել կերակուր գազանաց, եւ ոչ մերձեցան ի նա գազանքն : Եւ սուրբ կոյսն զմի ի գազանաց ողորմանօք ձգեաց առ ինքն որ եխած զնա . եւ նա աղօթելով առ Աստուած աւանդեաց զհոգին եւ հիւսեաց զպսակն վկայութեան :

Զսորա մարմինն եդին ի տապանի, եւ պահեցին զգուշութեամբ ի քաղաքին Քաղ-
* B p. 15 b. կեդոնի, ուր եւ յետոյ շինեցաւ *եկեղեցի հոյակապ յանուն նորա յորմէ բազում սքանչելիք եղեն ի փառս Քրիստոսի :

Սորա է եւ միւս տօն ի ԺԶ Սեպտեմբերի :]

* A fol. 305 v° a. * Հրոտից Զ եւ Յուլիս ԺԲ : Վկայաբանութիւն սրբոցն Պրոկղի եւ Իղարիոնի :

Յաւուրսն անօրէն արքային Տրայանոսի եւ Մաքսիմոսի դատաւորի·էին սուրբ վկայքն Քրիստոսի Պրոկղոս եւ Իղարիոն, ի գաւառէն Կալիպոյ մերձ յԱնկիւրիա :

Եւ նախ զՊրոկղոս կալան եւ արկին ի բանդ : Եւ վաղիւն կացեալ առաջի դատաւորին յանդիմանեաց զանաստուած մոլորութիւն կռապաշտութեանն : Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց եւ կախեցին զնա եւ քերեցին զմարմինն : Եւ յորժամ կամէր դատաւորն երթալ ի քաղաքն, կապեցաւ ի ճանապարհին եւ ոչ կարաց յառաջ երթալ կամ յետս դառնալ մինչեւ ձեռնագրով խոստովանեցաւ զանունն Քրիստոսի եւ ապա արձակեցաւ :

8 սրբոցն] սրբոց վկայիցն B || 13-16 Եւ յորժամ կամէր... արձակեցաւ *om.* B.

était toujours vivante, on l'introduisit dans le cirque et on la jeta en pâture aux fauves, mais ils ne l'approchèrent point. La vierge sainte attira à elle, en suppliant, l'un des fauves qui la mordit; elle rendit son âme en priant Dieu et tressa sa couronne de martyre.

On déposa son corps dans un cercueil et on le conserva soigneusement dans la ville de Chalcédoine, où, plus tard, fut construite en son nom une magnifique *église, où de nombreux prodiges eurent lieu pour la gloire
* B p. 15 b. du Christ.

Cette (sainte) a encore une autre fête le 16 septembre.]

* A fol. 305 v° a. * 6 HROTITS, **12 Juillet.**

Martyre des saints Proclus et Hilarion.

Les saints martyrs du Christ Proclus et Hilarion vivaient aux jours de l'empereur impie Trajan et du juge Maxime. Ils étaient de la région de Calippes (*Kalipos*), près d'Ancyre.

On saisit d'abord Proclus et on le jeta en prison. Le lendemain, introduit auprès du juge, il blâma l'erreur athée de l'idolâtrie. Le juge, irrité, ordonna de le suspendre et de lui déchirer le corps. Le juge, devant se rendre à la ville, fut arrêté en route, ne pouvant ni avancer ni reculer jusqu'à ce qu'il eût confessé par écrit le nom du Christ; il fut ensuite libéré.

Եւ յորժամ գնաց ի քաղաքն տարան եւ զսուրբն առաջի նորա : Եւ ասէ . Կապեցեր զերիվարս իմ եւ զիս որ ոչ կարէաք շարժել ի տեղւոջէն, կամեցար դարձուցանել զիս ի Քրիստոսն քո . արդ արարից փոխարէնս եւ ես քեզ : Եւ հրամայեաց հրացեալ շանթիւք այրել զորովայնն եւ զկողսն, եւ յորժամ այրեցին նետաձիգ արարին զնա :

Հանդիպեցաւ եղբօրորդին նորա Իղարիոն, եւ գիրկս արկեալ ողջունեաց արտասուօք : Եւ տեսեալ դահճացն կալան զնա եւ տարան ի բանդն :

*Իսկ Պրոկղոս * աղօթեաց առ Աստուած զի արասցէ ողորմութիւն ամենեցուն որք ի ծովու վտանգին եւ կոչեն զանուն նորա : Երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն եւ ասէ . Լուաւ Աստուած աղօթից քոց եւ կատարէ զխնդրուածս քո. եւ դու եկեսջիր ի պատրաստեալ քեզ արքայութիւնն եւ ընկալ զանթառամ պսակն : Եւ նետաձիգ արարեալ ի նա աւանդեաց զհոգին իւր առ Աստուած :* * A fol. 305 v° b.

Եւ յետ երից աւուրց կոչեցին զսուրբն Իղարիոն եւ հարցին : Եւ նա ասէ. Եւ ես քրիստոնեայ եմ, եւ ամենայն ազգն իմ քրիստոնեայ մեռան, եւ ես քրիստոնեայ մեռանիմ : Հրամայեաց եւ զան հարին զնա ուժգին, կապեցին զոտսն եւ մերկ քարշեցին

1-3 եւ ասէ... քեզ *om.* B || 3 հրացեալ] երկաթի B || 4 զնա] ի սուր վկային Քրիստոսի B || 7 Իսկ] սուրբն *add.* B || 7-11 զի արասցէ... առ Աստուած] եւ ազդեցութեամբ Տեառն ընկալաւ զաւետիս հրաւիրանաց ի պատրաստեալ օթեւանս արքայութեանն երկնից եւ ի վայելումն անթառամ պսակին : Եւ դարձեալ նետաձիգ արարեալ ի նա եւ հարին ի սիրտն, ի փորն, ի կողսն եւ ի դէմսն, ի յամենայն մարմինն դատարկս նետիցն ի խոր խոցելով զնա չարաչար. եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած B || 13 հարցին] հարցանէին B.

Lorsqu'il fut arrivé à la ville et qu'on lui eut présenté le saint, il lui dit : « Tu nous as arrêtés, mon cheval et moi, de sorte que nous ne pouvions nous déplacer de là ; tu as voulu ainsi me convertir à ton Christ ; à mon tour de te rendre la pareille en échange. » Et il ordonna de lui brûler le ventre et les côtes avec des broches ardentes ; et après qu'on l'eut brûlé on le cribla de flèches.

Son neveu Hilarion se trouvant à passer, le prit dans ses bras et le salua avec larmes. A cette vue, les bourreaux se saisirent de lui et le conduisirent en prison.

Quant à Proclus, * il pria Dieu d'accorder sa miséricorde à tous ceux qui sont en danger sur mer et ont recours à son nom. L'ange du Seigneur lui apparut et dit : « Dieu a exaucé ta prière et accorde tes demandes. Viens dans le royaume qui t'est préparé et reçois la couronne impérissable. » On lui lança des flèches et il rendit son âme à Dieu. * A fol. 305 v° b.

Trois jours après, on fit venir saint Hilarion et on l'interrogea. Il répondit : « Moi aussi je suis chrétien, toute ma parenté est morte chrétienne et je mourrai chrétien. » (Le juge) ordonna de le frapper violemment ; on lui

զնա ընդ երկիր երեք մղոն, եւ ջախջախեցաւ ամենայն մարմինն եւ արիւնն հեղաւ իբրեւ գետ ։ Եւ սուրբն աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Տէր Աստուած, որք կատարեն զյիշատակս Պրոկղի եւ Իղարիոնի բազմացո զարջառ եւ զհօտս իւրեանց, եւ լից բարութեամբ զշտեմարանս նոցա ։ Եւ ապա հատին զգլուխ նորա Յուլիսի ԺԲ ։ Եւ եդեալ է ի վանսն որ կոչի Հիւպատոսի ի Կոստանդինուպօլիս, ի տապանի ընդ սրբոյն Պրոկղի ։

Հրոտից Է եւ Յուլիսի ԺԳ ։ Վկայութիւն սրբոցն Պերեգրինոյ, Ղուկիանու, Պոմպլիոյ, Իսիքիոյ, Պապիոյ, Սատրնիլոյ եւ Գերմանոսի ։

* A fol. 306 r° a. Այս սուրբ վկայքս Քրիստոսի * էին յԱտալիոյ Պանթէոյ մերձ գետոյն Թերմոյ

2 եւ ասէ... զշտեմարանս նոցա *om.* B || 4 նորա] Հրոտից Զ եւ *add.* B — եդեալ է] մարմին նորա *add.* B || 6 Պրոկղի] Պրոկղեայ B || 7 սրբոցն] սրբոց վկայիցն B || 8 Իսիքիոյ] Իսիւքիոյ B || 9 Թերմոյ] Գերմոյ B.

attacha les pieds et on le traîna nu à terre sur une distance de trois milles, tout son corps fut brisé et le sang coula comme un ruisseau. Le saint pria Dieu et dit : « Seigneur, Dieu, à tous ceux qui accompliront la commémoration de Proclus et d'Hilarion, augmente leur bétail et leur cheptel, et remplis de biens leurs greniers. » On lui trancha ensuite la tête, le 12 juillet. Il est déposé au couvent dit d'Hypatia[1] à Constantinople, dans un même tombeau avec saint Proclus.

7 HROTITS, 13 Juillet.

Martyre des saints Pérégrinus, Lucien, Pompée, Hésychius, Papios, Saturnin (*Satorniloy*)[2] et Germain.

* A fol. 306 r° a. Ces saints martyrs du Christ * étaient d'Atalie Panthée (*Atalioy Panteoy*)[3], près du fleuve Thermus, aux jours de Trajan, l'empereur idolâtre. A

1. Ainsi dans *Syn. Cp.*, p. 815, 1, 5; le texte arménien porte Հիւպատոսի qui supposerait un original grec ὑπάτου « couvent du Consul ».

2. Σατορνίλου dans le manuscrit D de *Syn. Cp.*, tandis que les autres manuscrits ont Σατορνίνου; D est seul à mentionner Παπίος. Il y aurait d'ailleurs beaucoup d'autres rapprochements à signaler entre le manuscrit D et le synaxaire arménien.

3. *Syn. Cp.* fait ces saints originaires d'Italie, ὑπῆρχον ἐξ Ἰταλίας. La similitude entre Ատալիա et Իտալիա est grande; on peut arguer en faveur de *Syn. Cp.* que les noms des saints, sauf Hésychius et Papios, sont nettement latins. D'autre part, il y a un fleuve Thermus en Sicile, PAPE, *Worterbuch der griechischen Eigennamen*, 3e éd., Braunschweig, 1863-1870, t. I, p. 497. Mais le traducteur arménien veut parler d'une Attalie d'Asie, Attalia-Adalia, probablement, puisqu'il fait naviguer les saints vers l'occident pour les amener à Durazzo.

յաւուրս կռապաշտ արքային Տրայիանոսի ։ Եւ վասն հալածմանց անօրինացն թողին զտունն եւ զբնակութիւնն իւրեանց, եւ նաւեցին յարեւմուտս ի քաղաքն Դորաքիոյ ։

Եւ յորժամ մերձեցան ի դուռն քաղաքին՝ տեսին կախեալ զսուրբն Աստիոն զեպիսկոպոսն քաղաքին մերկ ի փայտէ, օծեալ զմարմինն մեղու, եւ ի դռուռղէ եւ ի պիծակէ կրծեալ եւ կերակուր լեալ վասն հաւատոյն Քրիստոսի ։ Փառաւորեցին զԱստուած եւ ասեն. Երանի է քեզ՝ ճշմարիտ վկայ Քրիստոսի ։ Տեսին եւ զամենայն քաղաքն որ տօն կատարէին պղծոյ կռոցն իւրեանց Դիոնիսիոյ ։

Եւ տեսեալ զնոսա մի ոմն ի զօրականացն եթէ օտարք են հարցանէր եթէ ոյք իցեն եւ կամ ուստի ։ Եւ նոքա ասեն եթէ Քրիստոնեայ եմք ։ Եւ կալեալ զնոսա տարաւ առ բդեաշխն քաղաքին Ագրիկողայոս, եւ հրամայեաց նոցա երկիր պագանել Դիոնիսիոյ ։ Եւ նոքա խոստովանեցան եթէ Քրիստոնեայք եմք եւ զարարիչն երկնի եւ երկրի պաշտեմք ։

Եւ ձաղկեցին զնոսա ուժգին գանիւք, եւ ապա արկին ի նաւ, եւ ի խորս ծովու

1 արքային] թագաւորին B || 7 Դիոնիսիոյ] Դիոնէսիոյ B || 12 պաշտեմք] խոստովանիմք B || 13 ուժգին] չարաչար B.

cause de la persécution des impies ils avaient abandonné leurs maisons et leurs habitations et avaient fait voile vers l'occident vers la ville de Dyrrachium [1].

Lorsqu'ils se furent approchés de la porte de la ville, ils aperçurent l'évêque de la ville, saint Astius (*Astion*), suspendu nu à un gibet, le corps enduit de miel, rongé par les guêpes et les frelons et devenu leur proie pour sa foi au Christ. Ils glorifièrent Dieu et dirent : « Tu es heureux, vrai martyr du Christ. » Ils virent également toute la ville célébrant la fête de leur dieu immonde Dionysos.

Un des soldats, ayant remarqué qu'ils étaient étrangers, leur demanda qui ils étaient et d'où ils venaient. Ils répondirent : « Nous sommes chrétiens. » Il les arrêta et les conduisit au gouverneur de la ville Agricolaüs; celui-ci leur ordonna d'adorer Dionysos. Ils confessèrent : « Nous sommes chrétiens et nous adorons le créateur du ciel et de la terre. »

On les flagella vigoureusement à coups de bâtons, on les mit dans un bateau et on les noya au fond de la mer; mais les vagues de la mer les

1. A partir de « Dyrrachium » et jusqu'à « les saints apparurent », le texte ressemble de près au fragment de passion grecque trouvé par M. Edgar J. Goodspeed dans les feuillets détachés d'une reliure à la bibliothèque du Patriarcat grec de Jérusalem. Cf. *American Journal of Philology*, t. XXIII (1902), pp. 68-74 et *Analecta Bollandiana*, t. XXII (1903), pp. 408-410.

ընկղմեցին, զոր ալիք ծովուն հանին ի ցամաք, եւ աւազ ծովուն ծածկեաց զնոսա եւ անյայտ արար :

* A fol. 306 r° b. Եւ յետ իննսուն ամաց * յայտնեցան սուրբքն Աղեքսանդրոսի եպիսկոպոսին, եւ առեալ զամենայն ուխտ եկեղեցւոյն մոմեղինօք եւ խնկօք գնացին ի տեղին որ կոչի Բրտին Կալ, ուր ցուցին սուրբքն. փորեցին զաւազն եւ հանին զնշխարսն, եւ օծին անուշ եղօք պատեալ սուրբ կտաւօք թաղեցին ըստ արժանեաց. եւ շինեցին ի վերայ մատուռն, եւ մեծապայծառ տօն կատարեցին Յուլիսի ԺԳ :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Առէտիսի բժշկի :

Սուրբն Առէտիոս ճարտար բժիշկ էր ի քաղաքէն Տիւանայ, յաւուրս Դիոկղետիանոսի կռապաշտ արքային : Եւ վասն քրիստոնէութեան հաւատոյն իւրոյ կացուցին առաջի Մաքսիմիանու դատաւորին, եւ խոստովանեցաւ զՔրիստոս Աստուած մեր : Մերկացուցին զնա եւ ուժգին գան հարին բրօք մինչեւ բացան ստամոքսն եւ թիկունքն նորա այտուցեալ ոլորեցան :

Տարան զնա ի տաճար կռոցն զի երկիր պագցէ, եւ նա աղաչեաց զԱստուած եւ

3 յայտնեցան] երեւեցան B — սուրբքն] ի տեսլեան *add.* B || 5 օծին] օծեալ B || 7 կատարեցին] Հրաշից է եւ *add.* B || 8 Առէտիսի] Առեստիսի B || 10 քրիստոնէութեան] քրիստոնէական B.

déposèrent sur le rivage et le sable de la mer, les ayant couverts, les fit disparaître.

* A fol. 306 r° b. Quatre-vingt-dix ans * après, les saints apparurent à l'évêque Alexandre, et celui-ci avec tout le clergé se rendit, avec cierges et encens, à l'endroit dit l'Aire du Potier, indiqué par les saints; ils creusèrent dans le sable et en retirèrent les reliques; ils les oignirent de parfums et, après les avoir enveloppées dans des linges propres, ils les inhumèrent dignement; ils construisirent au-dessus un oratoire, et célébrèrent magnifiquement la fête, le 13 juillet.

En ce jour martyre de saint Arestius[1], le médecin.

Saint Arestius (*Arêtios*) était un médecin habile de la ville de Tivan, aux jours de Dioclétien, l'empereur idolâtre. On l'introduisit, à cause de sa foi chrétienne, devant le juge Maximien, à qui il confessa le Christ, notre Dieu. On le mit à nu, et on le frappa brutalement à coups de bâtons, à tel point que l'estomac s'entr'ouvrit, et que le dos enflé se tordit.

On le conduisit au temple des idoles pour qu'il s'y prosternât, mais il pria

1. Corrigé d'après le synaxaire arménien imprimé à Constantinople en 1706.

տէ. Տո՛ւր Քրիստոս զօրութիւն ծառայիս քո, եւ արա՛ առ իս նշան բարութեան, զի տեսցեն ատելիքն իմ եւ ամաչեսցեն ։ Եւ փչեաց ի բագինսն եւ անկան եւ կործանեցան, եւ յորժամ ել կործանեցաւ եւ տաճարն ։ Եւ ընթացեալ անօրինաց յափշտակեցին զսուրբն եւ եդին ի բանդի ։

Եւ յետ ութ աւուր հարին յոտսն երկերիւր բեւեռս, եւ կապեցին զնա յերկուորեակս վայրի ձիոյ եւ թողին, եւ քարշեցաւ սուրբն ի քաղաքէն * Տիւանայ քսան եւ չորս մղոն ընդ ծառս եւ ընդ քարս եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յուլիսի ԺԳ ։ Եւ զմարմինն ընկեցին ի Փիբոն գետն եւ երեւեցաւ այր մի պայծառ երեսօք, մտեալ ի գետն եհան զմարմինն եւ եդ ի վերայ լերինն եւ եկեալ քրիստոնեայք թաղեցին ի նոյն տեղւոջ ։ * A fol. 306 v° a.

[B * Յիշատակ եւ տօն է մեծի հրեշտակապետին Գաբրիէլի ։ * B p. 16 b.

Մեծ եւ աստուածային հրեշտակապետն Գաբրիէլ զառաջինն երեւեցաւ մարգարէին Դանիէլի, եւ ասաց զթիւ ժամանակացն որ կայր մինչ ի գալուստն Քրիստոսի ։ Երեւեցաւ դարձեալ ի լրումն փրկութեան Զաքարիայի քահանայապետին յաջմէ

2 փչեաց ի բագինսն] յանկարծակի շարժեցաւ տեղին B — անկան] բագինքն *add.* B — կործանեցան] խորտակեցան B || 3 Եւ յորժամ... տաճարն *om.* B || 5 հարին] յանձն եւ *add.* B — յերկուորեակս վայրի] ի վայրենի B || 7 Աստուած] Հրոտից է եւ *add.* B || 8 եւ երեւեցաւ... տեղւոջ] եւ յորձանք գետոյն արկին զմարմինն ի ցամաք, եւ տեսեալ քրիստոնէիցն թաղեցին ի նոյն տեղւոջ B.

Dieu et dit : « Christ, donne la force à ton serviteur et fais-moi un signe de bonté pour que ceux qui me haïssent voient et en aient honte. » Il souffla sur les autels, qui se renversèrent et se brisèrent ; et lorsqu'il en fut sorti, le temple lui-même tomba en ruines. Les impies, accourus, enlevèrent le saint et le mirent en prison.

Huit jours après, on lui enfonça aux pieds deux cents clous, on l'attacha aux testicules d'un cheval sauvage qu'on lâcha ; le saint fut traîné de la ville * de Tivan sur une distance de vingt-quatre milles à travers les arbres et les pierres et rendit ainsi son âme à Dieu, le 13 juillet. On jeta son corps dans le fleuve Phibon[1], mais un homme d'une figure resplendissante apparut, qui, entrant dans le fleuve, en retira le corps et le déposa sur la montagne. Les chrétiens, s'y étant rendus, l'inhumèrent au même endroit. * A fol. 306 v° a.

[B * Commémoration et fête du grand archange Gabriel. * B p. 16 b

Le grand et divin archange Gabriel apparut d'abord au prophète Daniel[2] et lui révéla le nombre des temps qu'il y avait jusqu'à la venue du Christ. Il apparut encore à l'accomplissement du salut au grand prêtre Zacharie, à

1. L'édition de 1706 porte Բիոն, *Bion* ou *Bios*. — 2. Dan., IX, 21-27.

սեղանոյն, եւ ասաց. Ես եմ Գաբրիէլ որ կամ առաջի Աստուծոյ. եւ խօսեցաւ վասն Յովհաննու ծննդեանն եւ Քրիստոսի :

Նոյն եւ զամենայն աշխարհի փրկութեան եւ զսկիզբն եւ զհիմն տէրական մարմնաւորութեան եւ զբերկրութեան մերոյ աստուածային աւետիսն սա եբեր սրբոյ Կուսին, եւ եղեւ սպասաւոր եւ աւետաւոր կենաց մարդկան, յառաջ քան զամենայն դասս երկնաւորացն ծանուցեալ զխորհուրդն որ ծածկեալ էր ի բոլոր հրեղինացն : Սա դարձեալ եկաւորեալ առ Կոյսն եբեր նմա հրաւէր եւ բրաբիոն յերկինս փոխման :

Որ եւ նոյն ինքն միշտ բարեկամ եւ պահապան քրիստոնէից. քանզի իշխան եւ հրեշտակապետ ցուցաւ հեթանոսաց յառաջագոյն, որ եւ ի սմին աւուր երեւեալ մեծ սքանչելիս արար :]

Հրոտից Ը եւ Յուլիսի ԺԴ : Վկայութիւն Բագարատայ Տաւոմենոյ եպիսկոպոսին :

Սուրբն Բագարատ աշակերտ էր սրբոց առաքելոցն, եւ առաքեցաւ յարեւմուտս ձեռնադրեալ եպիսկոպոս ի Պետրոսէ առաքելոյ ի քաղաքն Տաւոմենոյ, որ է ի Սիկիլիա

11 վկայութիւն] սուրբ հայրապետին *add.* B — եպիսկոպոսին] եւ լուսաւորչի աշակերտի Պետրոսի *add.* B || 12 սրբոց առաքելոցն] սուրբ առաքելոյն Պետրոսի B || 13 Պետրոսէ] նմին B.

droite de l'autel, et dit : « *Je suis Gabriel qui me tiens devant Dieu*[1] » ; et il lui parla de la naissance de Jean et du Christ.

C'est lui également qui apporta à la sainte Vierge la divine annonciation du salut de toute la terre, le commencement et le fondement de l'incarnation du Seigneur et de notre joie; il fut le serviteur et l'annonciateur de la vie des hommes, ayant connu, avant tous les autres chœurs célestes, le mystère qui était caché à tous les séraphins. C'est lui qui, revenu de nouveau auprès de la Vierge, lui apporta l'invitation et le trophée de son transfert au ciel.

Il reste toujours l'ami et le gardien des chrétiens; car, jadis, il se montra aux gentils comme prince et archange, et en apparaissant, en ce même jour, il fit de grands prodiges.]

8 HROTITS, **14 Juillet.**

Martyre de Pancrace, évêque de Tauromène.

Saint Pancrace (*Bagarat*) était disciple des saints apôtres. Il fut envoyé en occident après avoir été sacré, par l'apôtre Pierre, évêque de la ville de Tauromène (*Toromenoy*), qui se trouve dans l'île de Sicile. S'étant embarqué,

1. Luc, I, 19.

կղզւոջն : Եւ մտեալ ի նաւ դարձոյց զնաւապետն, զղեկավարն եւ զնաւավարսն[1] յաստուածգիտութիւն, որոց անուանքն էին Լիկաոնիտոս, Ագրինոս :

Եւ յորժամ նաւեցին ի տեղին գտին զամենայն կղզին եւ զքաղաքս եւ զգաւառս ի կռապաշտութիւն լեալ : Եւ յոգւոց հանելով հեծեծանօք երանելին Բանկրատ համբարձ զձեռս իւր յերկինս աղաչեաց զԱստուած վասն մոլորեալ ժողովրդեանն : Եւ ասէ ցԼիկաոնիտոս եւ ցԱգրինոս. Եկայք որդեակք, աներկիւղ քարոզեսցուք զանունն Աստուծոյ ի մէջ անօրէն ժողովրդեանս, որպէս առի հրաման ի Պետրոսէ առաքելոյն : * A fol. 306 v° b.
* Եւ սկսաւ սուրբն Բանկրատ քարոզել եւ ուսուցանել, եւ առնել մեծամեծ սքանչելիս, որ եւ քաղաքապետն Վոնիփատոս յորժամ լուաւ հաւատաց յԱստուած գաղտ ի ժողովրդենէն :

Եւ յորժամ գնացին ի քաղաքն Տաւոմենոյ, եւ ի գիշերին գնաց (Բանկրատ) ի տաճարն յորում էր բագինն Փալկոնայ մեծի աստուծոյն քաղաքին այնմիկ : Եւ հայեցեալ ի բագինն ասէ. Ով Փալկոն անզգայ, խուլ, համր եւ կոյր, ո՞վ ես դու եւ զի՞նչ գործես աստ, եւ քանի՞ ամք են որ ես ի տաճարս յայս, եւ մոլորեցուցանես խաբէութեամբ զարարածս Աստուծոյ իմոյ, եւ տաս զոհս մատուցանել քեզ, ո՛վ պիղծ եւ գարշելի դիւապատկեր :

Եւ ասէ բագինն. Երկերիւր եւ վաթսուն ամ է որ բնակեալ եմ աստ, եւ ընդունիմ

1 եւ զնաւավարսն *om.* B.

il convertit à la connaissance de Dieu le capitaine, le timonier et les matelots, dont les noms étaient Lycaonide (*Licaonitos*) et Agrinus [1].

Lorsqu'ils débarquèrent à l'endroit, ils trouvèrent toute l'île, les villes et les provinces, vouées à l'idolâtrie. Le bienheureux Pancrace en soupirant avec sanglots éleva ses mains au ciel et pria Dieu pour le peuple égaré. Il dit ensuite à Lycaonide et à Agrinus : « Venez, mes enfants, nous prêcherons sans crainte le nom de Dieu à ce peuple impie, selon l'ordre que j'ai reçu de l'apôtre Pierre. » * Saint Pancrace se mit à prêcher et à enseigner, fit de grands prodiges, à ce point que le préfet de la ville Boniface (*Voniphatos*), l'ayant entendu, crut à Dieu à l'insu de la population. * A fol. 306 v° b.

Lorsqu'ils se furent rendus à la ville de Tauromène, Pancrace alla de nuit au temple où se trouvait l'autel de Falcon, le grand dieu de cette ville-là. Il dit en regardant la statue : « O Falcon insensé, sourd, muet et aveugle, qui es-tu et que fais-tu ici? combien d'années y a-t-il que tu te trouves dans ce temple, que tu égares, par tromperies, les créatures de mon Dieu et que tu te fais immoler des sacrifices, ô immonde et répugnante image du démon? »

La statue répondit : « Il y a deux cent soixante ans que j'habite ici et

1. *Syn. Cp.;* Romulus.

նուէրս եւ զոհս ի ժողովրդենէս Տորոմենոյ քաղաքիս, յամենայն ամի երիս տղայս անարատս, եւ երեք հարիւր զուարակս փափուկս եւ գեղեցիկս, եւ խոյս եւ նոխազս եւ գառինս բազումս :

Եւ համբարձեալ զձայն իւր երանելին Բագարատ ասէ մեծաւ բարբառով. Երդմնեցուցանեմ զձեզ պիղծ դեւք յանուն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն ժողովեցարուք ի միասին, եւ զխուլ եւ զհամր բագինդ Փալկոնի ընկեցէք ի ծովն երեսուն ասպարիզաւ հեռի ի ցամաքէն, եւ դուք ընդ նմին բնակեսջիք ի յանդունդս խորոցն :

* A fol. 307 r° a. Եւ առժամայն հնչիւն եղեւ * իբրեւ ի սաստիկ հողմոյ, եւ լցաւ տաճարն սեաւ անձեղօք եւ սեաւ ագռաւօք, եւ կալան աղաղակելով զբագինն Փալկոնի եւ ընկեցին ի ծովն : Եւ եղեւ ձայն յերկնից. Քաջալերեաց Բագարատ զի ես ընդ քեզ եմ, եւ ոչ թողից զքեզ մինչեւ կարգեցից ի դասս առաքելոցն : Եւ առժամայն ելեալ գնաց ի տաճարէն :

Եւ ընդ առաւօտն գնացին քուրմքն ի տաճարն գտին դուռն բացեալ եւ զբագինն աստուծոյն իւրեանց ոչ գտին : Եւ ելեալ ի մէջ հրապարակին մեծաւ հառաչմամբ կոծէին եւ ասէին. Վա՜յ մեզ զի քաղաքս մեր կործանի, քանզի մեծ աստուածն Փալկոն անյայտ եղեւ :

Եւ դիմեցին բազում ժողովուրդք ի տաճարն եւ զպիղծ կուռսն ոչ գտին : Գնացին

6 ի միասին *om.* B || 9 անձեղօք] անկեղօք B || 10-13 Եւ եղեւ ձայն . . . տաճարէն] Յայնժամ Բագարատ եւ Վանփիատոս ելեալ ի տաճարէն գնացին ի յարկս իւրեանց B.

que je reçois des offrandes et des victimes de la population de cette ville de Tauromène : tous les ans, trois enfants sans défauts, et trois cents veaux tendres et beaux, et des béliers, des boucs et des agneaux en quantité. »

Le bienheureux Pancrace, élevant sa voix, dit tout haut : « Je vous adjure, immondes démons, au nom du Père, du Fils et du Saint-Esprit, de vous rassembler tous ensemble et de jeter à la mer, à trente lieues de distance de la terre, cette statue sourde et muette de Falcon, et de demeurer avec lui, vous tous, dans les abîmes du fond (de la mer). »

* A fol. 307 r° a. Il se fit aussitôt un bruit * semblable à un vent violent, le temple se remplit de pies noires et de corbeaux noirs qui saisirent en criant la statue de Falcon et la jetèrent à la mer. Une voix du ciel se fit entendre : « Prends courage, Pancrace, car je suis avec toi, je ne t'abandonnerai point jusqu'à ce que je t'aie mis au rang des apôtres. » Il sortit aussitôt et quitta le temple.

Au matin, les prêtres d'idoles, s'étant rendus au temple, en trouvèrent la porte ouverte, mais ne trouvèrent point la statue de leur dieu. Ils se rendirent sur la place publique, gémirent avec de gros sanglots en disant : « Malheur à nous, notre ville va être ruinée, car notre grand dieu Falcon a disparu. »

Une grande multitude accourut au temple, et ils ne retrouvèrent pas

յընթացս ի տունն Բոնիփատոսի դատաւորին, աղաղակէին արտաքոյ դրանն. Ով պատուեալ եւ շինող իշխան, եւ սիրելի մեծ աստուածոցն, եկ եւ տես զկորուստ քաղաքիս :

Եւ նորա խոնարհեալ ի պատուհանէն ասէ. Ով իմաստուն արք եւ քահանայք մեծի աստուածոյն Փալկոնի, զինչ եղեւ ձեզ : Եւ նոքա ողբալով ասեն. Մեծ անցք անցին ընդ մեզ, քանզի բաղձալին Փալկոն կորեաւ. եւ վայելուչ եւ պայծառ բագինն իւր անյայտ եղեւ, եւ սեղանն եւ աւազանն եւ ոսկիազարդ աթոռն իւր ոչ երեւի, եւ ունայն մնացին, եւ * խորանն ոչնչացաւ : * A fol. 307 r° b.

Ասէ Բոնիփատոս. Ով պատուական քահանայք եւ փառաւորեալ տանուտեարք, լուարուք ինձ եւ քննեցէք միթէ ամբարտաւանեցաւ աստուածն մեր, եթող զմեզ եւ գնաց յայլ քաղաք. մի՞ երբեք զսովորական զոհսն լիակատար ոչ մատուցէք, եւ անընդունելի արար զպատարագս ձեր, եւ վասն այնորիկ ատեաց զմեզ եւ փախեաւ ի մէնջ : Արդ գնացէք ի յարկս ձեր եւ ես պարապով քննեցից եւ գտից զպատճառն :

Եւ նոքա ասեն. Մեք զսովորական եւ զհայրենական աւանդն կատարեցաք, եւ ոչ ինչ նուազ կամ պակասութիւն արարաք ի սովորական զոհսն իւր, եւ եթէ վասն էր խռովեցաւ ոչ գիտեմք : Արդ աղաչեմք զքեզ ով փառաւոր եւ պայծառ քաղաքապետ զի պնդութեամբ քննեսցես եւ եթէ խռովեցաւ ի մէնջ եւ գնաց յայլ քաղաք երթիցուք

7 ոչ երեւի *om.* B.

l'idole immonde. Ils se rendirent en courant à la maison du juge Boniface et se mirent à crier au dehors de la porte : « O bâtisseur et gouverneur vénéré, l'aimé de nos grands dieux, viens voir la ruine de cette ville. »

Il se pencha à la fenêtre et dit : « O hommes sages et prêtres du grand dieu Falcon, que vous est-il arrivé? » Ceux-ci répondirent en gémissant : « De grands événements se sont passés chez nous, car Falcon le désirable est perdu; sa statue élégante et illustre a disparu; l'autel, le bassin et son trône garni d'or n'ont plus d'apparence et sont vides, * le sanctuaire est anéanti. » * A fol. 307 r° b.

Boniface dit : « O prêtres vénérables et illustres notables, écoutez-moi et jugez. Peut-être que notre dieu est devenu orgueilleux, nous a abandonnés et s'en est allé vers une autre ville. Peut-être n'avez-vous point immolé complètement les victimes habituelles, ce qui aura rendu vos offrandes inacceptables, et à cause de cela (notre dieu) nous a haïs et s'est enfui de chez nous. Retournez donc à vos logis et moi j'examinerai à loisir et chercherai la cause. »

Ils lui répondirent : « Nous avons accompli les usages habituels tels qu'ils nous ont été confiés par nos ancêtres, nous n'avons rien diminué ni omis des victimes habituelles, et nous ne comprenons pas pour quelle raison (le dieu) se serait troublé. Aussi nous te prions, ô glorieux et éminent préfet de la ville, d'enquêter sérieusement, et si (le dieu) a été troublé par nous et s'il

եւ մեք առ նա եւ երկիր պագցուք նմա, եւ նա հաշտեսցի ընդ մեզ, եւ ասասցէ մեզ զպատճառն, եւ մեք յաւելումք ի զոհսն եւ ի պաշտօնսն :

Ասէ Վոնիփատոս. Ասացի ձեզ գնացէք ի տունս ձեր, եւ եթէ հզօր աստուած է Փալկոն երեւեցուսցէ մեզ զճշմարիտն : Եւ նոքա որպէս ի միոջէ բերանոյ աղաղակէին եւ ասէին. Ով պատուական Վոնիփատոս, որպէս անծանօթ եւ օտար յաստուածոց

* A fol. 307 v° a. մերոց խօսեցար. ո՞չ ճանաչես զերիտասարդ եւ զգեղեցիկ * աստուածն մեր զՓալկոն, զորդի Փալկոնիդայ. ո՞չ յամենայն ժամ ի գինարբուս եւ ի խնդութեան աւուրս դու ինքնին պատմէիր եւ գովէիր զգովելի գործս նորա, եւ այժմ ասես. Եթէ հզօր աստուած է յայտնեսցէ զինքն :

Դարձեալ պատասխանի ետ Վոնիփատոս եւ ասէ. Ասացի ձեզ եթէ համբերեցէք եւ ես զխնդրեցից զկորուստն Փալկոնի : Կարծեմ եթէ զարշեցաւ ի մէնջ քանզի հպարտ աստուած էր : Եւ յորժամ լուան զայս դադարեցին, եւ գնացին ի յարկս իւրեանց :

Եւ Վոնիփատոս կոչեաց զԼիկայոնիտոս, եւ պատմեաց նմա զխռովութիւն ժողովրդեանն, եթէ ո՛րպէս կորեաւ աստուածն իւրեանց, եւ կամ թէ զինչ արարից ոչ գիտեմ : Եւ սկսաւ Լիկայոնիտոս ասել ճշմարտապէս. Լո՛ւր մտադրութեամբ տէր քաղաքապետ եւ դատաւոր : Գիտասջիր զի երեքանձնեայ աստուածութիւնն յանօթ արար

3 գնացէք] եթէ երթիջիք B | 9 յայտնեսցէ] մեզ *add.* B || 10 ձեզ] ո՛վ արք իմաստունք *add.* B || 13 — p. 1755, l. 6 Եւ Վոնիփատոս ... կարէ խաբել *om.* B.

est parti pour une autre ville, nous irons vers lui, et nous nous prosternerons devant lui; il fera la paix avec nous; il nous dira son affaire, et nous ajouterons encore aux victimes et aux usages du culte. »

Boniface dit : « Je vous l'ai dit, retournez à vos maisons, et si Falcon est un dieu puissant, il nous révélera la vérité. » Alors, comme d'une seule bouche, ils se mirent à crier et dirent : « O vénérable Boniface, tu as parlé comme quelqu'un d'inconnu et d'étranger à nos dieux. Ne connais-tu point notre

* A fol. 307 v° a. jeune et beau * dieu Falcon, le fils de Falconida? Ne nous parlais-tu pas toi-même, à tout instant, dans les beuveries de vin et les jours d'allégresse, de ses actes méritants que tu louais? Et voici que maintenant tu dis : « S'il est un « dieu puissant, il se révélera lui-même. »

Boniface répondit de nouveau et dit : « Je vous ai dit de prendre patience et que j'étudierai la perte de Falcon. Je crois qu'il s'est dégoûté de nous, car c'était un dieu orgueilleux. » Après avoir entendu cela, ils se calmèrent et retournèrent à leurs logis.

Boniface fit appeler Lycaonide et lui apprit le trouble de la population, parce que leur dieu se trouvait perdu et qu'ils ne savaient que faire. Lycaonide se mit à lui dire en toute vérité : « Écoute-moi avec bienveillance, seigneur préfet de la ville et juge. Sache que la divinité en trois personnes a jeté la

զզարշելի պաշտօնս ձեր, եւ ոչ այլ եւս մատուցուք զոհս այսց պիղծ դիւացս, այլ միայնոյ Աստուծոյ կենդանւոյ որ մնայ յաւիտեան, եւ այլ ոչ եւս յառաջադիմանայ պաշտամունք կռոցն, եւ ոչ երազք եւ դիւթութիւնք գուշակեն մոլորեալ մարդկան, քանզի երկնաւոր Աստուածն առաքեաց զմիածին Որդի իւր յերկիր եւ մարմնացեալ ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ զի սրբեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ ։ Եւ յայսմհետէ * Փալկոն որդին Փալկոնիդեայ ոչ զոք կարէ խաբել ։ * A fol. 307 v° b.

Եւ երթեալ քրմացն ժողովեցան ի միասին եւ սկսան ողբալ զՓալկոն անզգայ աստուածն իւրեանց, եւ ասէին ողբալով եւ լալագին ձայնիւ. Ո՞ր իցեն գեղ վայելչութեան պատկերին քո, ո՜վ բաղձալի Փալկոն, որպէս անյայտ եղեր ի քոյոց փափաքողացս. արդ երանի եթէ ոչ էաք լեալ քահանայք քո ։ Ամենայն աստուածք խնդութեամբ ընդունին զոհս ի քրմաց իւրեանց, այլ դու միայն անընդունող եղեր եւ ատեցեր զմեզ ։ Եւ Վոնիփատոս մոռացաւ զայնչափ սէրն եւ զգութն քո, եւ քեզ խնդիր ոչ արար ։ Ով կողոպտեաց զքեզ ի մէնջ. ո՞վ նախանձեցաւ ընդ այնչափ սէրն մեր ։ Ով Լիսիոն եւ Դիա փոքր աստուածք, եւ Փալկոնիդայ աստուածուհի դուստր Իրինոսի եւ Արտեմեա քոյր աստուածուհւոյն ընդէ՞ր ոչ ողորմիք մեզ, եւ ողբայք զգեղեցիկ եւ զմեծ աստուածն Փալկոն, ընդէ՞ր լռէք եւ ոչ խնդրէք զկորուսեալն ։

12 Վոնիփատոս] քաղաքապետն մեր *add.* B.

honte sur votre culte répugnant. Nous n'immolerons plus de victimes à ces démons immondes, mais au seul Dieu vivant qui dure éternellement. Le culte des idoles ne progressera plus, les songes et les sorcelleries ne prédiront plus rien aux hommes égarés, car le Dieu céleste a envoyé sur la terre son Fils unique, qui prit chair et naquit de la sainte vierge Marie pour nous sanctifier de toute abomination. Dorénavant * Falcon, le fils de Falconida, ne pourra plus tromper qui que ce soit. » * A fol. 307 v° b.

Les prêtres des idoles allèrent se réunir ensemble et se mirent à gémir sur Falcon, leur dieu insensé, en disant avec gémissements et d'une voix entrecoupée de larmes : « Où sont ta splendeur et la beauté merveilleuse de ta statue, ô désirable Falcon? Comment as-tu disparu de chez nous qui te désirions? Nous aurions été plus heureux si nous n'avions pas été tes prêtres! Tous les dieux acceptent avec joie les victimes de leurs prêtres; toi seul ne les as pas acceptées et nous as haïs. Boniface lui-même a oublié ton si grand amour et ton affection et il ne t'a pas recherché. Qui t'a volé du milieu de nous? Qui donc est devenu jaloux de notre si grand amour? O Lyson (*Liusion*) et Déa, dieux inférieurs, et toi, déesse Falconida, fille d'Irinos, et toi, Artémis, sœur de la déesse, pourquoi n'avez-vous point pitié de nous et ne gémissez-vous point sur le beau et grand dieu Falcon? Pourquoi gardez-vous le silence et ne recherchez-vous pas celui qui est perdu? »

Եւ յորժամ եղեւ գիշեր, զգեցաւ Վոնիփատոս զարքունական պատուոյն իւրոյ զպատմուճանն եւ զքղամիդն, եւ գնաց ի դուռն երանելոյն Բագարատայ : Նոյնպէս եւ նա զգեցաւ զեպիսկոպոսութեան փիլոնն եւ զեմիփորոնն, եւ նստաւ յեպիսկոպոսութեան աթոռն իւր, առեալ ի գիրկս իւր զաւետարանն եւ զխաչն եւ զտէրունական պատկերն զոր ետ նմա Պետրոս առաքեալն :

* A fol. 308 r° a. * *Եւ մտեալ Վոնիփատոս ետես զերանելին Բագարատ իբրեւ զբոց եւ շուրջ զանձամբն հուր : Եւ անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկիր եպագ եւ ասէ ահիւ. Մեծ է Աստուածն քրիստոնէից զոր քարոզէ Բագարատ. հաւատամ զի նա միայն է Աստուած է երկնի եւ երկրի : Եւ ասէ ցսուրբն Բագարատ. Որպէս մերձեցայց առ քեզ, քանզի տեսանեմ շուրջ զքեւ հուր եւ երկնչիմ մի զուցէ այրիմ ես :*

Եւ գիտաց Բագարատ զի ետես զշնորհս Հոգւոյն սրբոյ որ է ի պատարագամատուցի զգեստ քահանայից քանզի սուրբ են : Եւ յարուցեալ եհան զեմիփորոնն, զփիլոնն, զուրարն եւ նստաւ : Եւ այլ ոչ եւս ետես Վոնիփատոս զհուրն : Եւ ողջունեաց զնա ի համբոյր սրբութեան եւ նստոյց մերձ ինքեան, եւ օրհնեաց զնա յոյժ. եւ ճաշակեցին ի միասին յամենայն բարութեանցն զոր տարաւ Վոնիփատիոս ի տանէ իւրմէ :

Եւ յորժամ ուրախացան յարեան ի սեղանոյն եւ զգոհութիւն Տեառն սաղմոսէին : Եւ բացան ձեղունք տանն, եւ պայծառ լոյս ծագեաց ի վերայ նոցա եւ յահի եղեալ

3 յեպիսկոպոսութեան աթոռն] ի թիկնաթոռն B.

Lorsque la nuit fut venue, Boniface se vêtit de son vêtement d'honneur princier et de sa chlamyde, puis il se rendit à la porte du bienheureux Pancrace. Celui-ci, de son côté, avait revêtu le phélonion épiscopal et l'omophorion, et siégeait sur son trône épiscopal, tenant l'évangile dans ses bras avec la croix et l'image du Seigneur que l'apôtre Pierre lui avait donnée.

* A fol. 308 r° a. * Boniface, étant entré, aperçut le bienheureux Pancrace comme une flamme, et sa personne tout entourée de feu. Il tomba la face contre terre, se prosterna devant lui et dit avec grande crainte : « Grand est le Dieu des chrétiens que prêche Pancrace. Je crois qu'Il est le seul Dieu du ciel et de la terre. » Il dit ensuite à saint Pancrace : « Comment pourrais-je m'approcher de toi? car j'aperçois du feu tout autourde toi et j'ai peur de me brûler. »

Pancrace comprit qu'il voyait les grâces du Saint-Esprit, qui se trouvent dans les ornements de célébration du saint sacrifice des prêtres, car ils sont sacrés. Il se leva, retira l'omophorion, le phélonion, l'étole, et se rassit. Boniface n'aperçut plus de flammes. (Pancrace) le salua d'un baiser saint, le fit asseoir près de lui, et le bénit beaucoup. Ils dînèrent ensemble de toutes les bonnes choses que Boniface avait apportées de sa maison.

Après s'être réjouis, ils se levèrent de table et psalmodièrent l'action de grâces au Seigneur. Alors le toit de la maison s'ouvrit, une lumière éclatante

անկան ի վերայ երեսաց իւրեանց ։ Եւ կալեալ զձեռանէ նոցա երանելոյն կանգնեաց եւ նստոյց մերձ առ ինքեան, եւ սկսաւ պատմել նոցա մի ըստ միոջէ ի Հին եւ ի Նոր կտակարանաց, յԱդամայ մինչեւ ի Քրիստոսի մարդեղութիւնն եւ ի * Համբարձումն եւ * A fol. 308 rº b. ի Գալուստ Հոգւոյն սրբոյ յաւուր Պենտակոստէին որպէս է գրեալ ի կատարեալ պատմութիւնն իւր ։ Եւ լուսաւորեաց զամենեսեան որք անդ հանդիպեցան աստուածային վարդապետութեամբն իւրով, եւ ողջունեալ զԲոնիփատոս յուղարկեաց ի տուն իւր ։

Եւ յաւուրն յայնմիկ յերրորդ ժամու գիշերոյն գրեաց երանելին Բագարատ ի քարտիսի ձեռամբ իւրով այսպէս. Առ լեւսոն կռոց բագինն ։ Ես Բագարատ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ծառայ, գրեմ առ քեզ պիղծ եւ զազիր եւ անզգայ Տորոմենոյ փոքր աստուած, զի յորժամ ընդունիս եւ ընթեռնուս զգիրս վաղվաղակի զհրամայեալսն կատարեսցես ։ Երթիջիր եւ դու ի կորստական տեղին գեհենին հրոյ, յորում է քո աւագագոյն աստուածն Փալկոն, եւ ի միասին կոծեցարուք զկորուստն ձեր, զի մի այլ եւս տիրանայք քաղաքիս այսմիկ ։

Եւ տուեալ զթուղթն յԱգրինոս յուղարկեաց ի տաճար կռոցն ։ Եւ նորա երթեալ որպէս թէ ի խնկել եդ զքարտէսն ի բագինն եւ փախեաւ գաղտ, եւ դարձաւ առ երանելին ։

Եւ յետ երկրորդ պահու եղեւ ձայն յաներեւութից եւ ասէ. Բագարատ ծառայ

17 — p. 1758, l. 3 Եւ յետ երկրորդ պահու... լուաւ զձայնն] Եւ յետ երկու պահու իբրեւ ազդ եղեւ նմա կատարումն հրամանի իւրոյ B.

jaillit sur eux, et, saisis de crainte, tous tombèrent la face contre terre. Le bienheureux, les saisissant par la main, les releva et les fit asseoir près de lui; il se mit à leur parler successivement de l'Ancien et du Nouveau Testament, d'Adam à l'Incarnation du Christ, à son * Ascension et à la descente du Saint-Esprit le jour de la Pentecôte, ainsi qu'il est écrit dans l'histoire complète * A fol. 308 rº b. (de Pancrace). Il illumina par sa doctrine divine tous ceux qui se trouvèrent là réunis; et ayant donné le salut à Boniface, il le renvoya à sa maison.

Le même jour, à la troisième heure de la nuit, le bienheureux Pancrace écrivit de sa main sur un papier ce qui suit : « A Lyson, à l'autel des idoles. Moi, Pancrace, serviteur de Notre-Seigneur Jésus-Christ, je t'écris, à toi, impur immonde et insensé petit dieu de Tauromène, pour que, aussitôt après que tu auras reçu et lu cet écrit, tu accomplisses promptement ce qui t'est ordonné. Tu iras, toi aussi, dans l'endroit de perdition des flammes de la géhenne, où se trouve ton supérieur, le dieu Falcon, et tous les deux vous gémirez ensemble sur votre perdition, parce que vous ne dominerez plus cette ville. «

Il remit cette lettre à Agrinus et l'expédia au temple des idoles. Celui-ci s'y rendit comme pour y encenser, posa le papier sur l'autel, s'enfuit secrètement et retourna auprès du bienheureux.

Après la deuxième veille, il se produisit une voix, provenant de (person-

Աստուծոյ բարձրելոյ, զհրամայեալսն մեզ ի քումմէ սրբութենէդ փութով կատարեցաք․ արդ համարձակութեամբ ել ի քաղաքդ զի յայսմհետէ քո է ։

* A fol. 299 v° a. Եւ յորժամ լուաւ զձայնն անկաւ ի վերայ երեսաց իւրոց * եւ գոհացաւ զԱստուծոյ ։ Եւ յարուցեալ առժամայն ել ի փողոց քաղաքին, եւ աստղանշան սիւն առաջնորդեաց նոցա մինչեւ ի տունն Վոնիփատոսի ։ Եւ նորա ելեալ ընդ առաջ եմոյծ զնոսա ի տուն իւր լռութեամբ, զի ոչ ոք ամենեւին գիտաց․ եւ արարին անդ աւուրս քառասուն ։

Եւ ի միում աւուր ժողովեցան պղծ քուրմքն ի դուռն Վոնիփատոսի եւ ասեն․ Ով դատաւոր եւ շինող քաղաքապետ, մերձեալ է տօն աստուծոյն մերոյ Լիւսիայ հրամայեա́ եւ արասցուք մեծաւ պայծառութեամբ զի մի եւ նա խռովեսցի եւ ի մէնջ փախիցէ եւ կորնչիցէ որպէս եւ մեծն Փալկոն, եւ լինիցիմք ծաղր ամենայն մերձակայ քաղաքաց ։ Կարծեմք, ո՛վ դատաւոր եւ իշխան, զի յորմէհետէ եմուտ Լիկաոնիտոս ի քաղաքս յայս, յոյժ բարկացան աստուածքն մեր, եւ զզոհսն մեր ոչ ընդունին ։ Եւ բազում անգամ զխնդրութեամբ հարցանեմք վասն մեծի եւ մաքուր աստուծոյն Փալկոնայ եւ պատասխանի ոչ տան մեզ․ եւ զինչ օգուտ է մեզ զի անուանիմք քուրմք ։

Ասէ Վոնիփատոս․ Ով իմաստուն քահանայք եւ ճշմարիտ պաշտօնեայք աստուածոց

4 ել *om.* B || 5 եւ աստղանշան… նոցա] գնայ B || 7 Լիւսիայ] Լիւսինեայ B || 12 բարկացան] առեցին զմեզ B.

nages) invisibles, qui dit : « Pancrace, serviteur du Dieu Très-Haut, ce que ta sainteté nous a ordonné, nous l'avons promptement accompli ; sors donc dans cette ville avec hardiesse, car elle est à toi désormais. »

* A fol. 299 v° a. Lorsqu'il eut entendu la voix, (Pancrace) tomba la face contre terre * et rendit grâces à Dieu. Il se leva aussitôt, sortit dans les rues de la ville et une colonne en forme d'étoile les guida (lui et ses compagnons) jusqu'à la maison de Boniface. Celui-ci alla à leur rencontre et les fit entrer silencieusement dans sa maison, pour que personne absolument ne le sût. Ils y demeurèrent quarante jours.

Un jour, les immondes prêtres des idoles se rassemblèrent à la porte de Boniface et dirent : « O juge, préfet et constructeur de la ville, la fête de notre dieu Lyson s'approche, donne des ordres pour que nous la célébrions avec grande solennité, pour que lui aussi à son tour ne soit pas troublé et qu'il ne nous fuie pas et se ne perde comme le grand Falcon. Nous deviendrions la risée de toutes les villes voisines. Nous croyons, ô juge et gouverneur, que depuis l'entrée de Lycaonide dans cette ville, nos dieux se sont fortement irrités et n'agréent plus nos victimes. Nous faisons souvent consulter les oracles au sujet de notre grand et pur dieu Falcon ; mais ils ne nous répondent point. A quoi nous sert d'être appelés prêtres d'idoles ? »

Boniface répondit : « O prêtres sages et véritables ministres de nos

մերոց, երթայք պատրաստեցէք զամենայն զենլիս զոհիցն, եւ յաւուր տօնին եկից եւ ես ի զոհսն ։

Եւ ինքն երթեալ պատմեաց Բանկրատայ պատգամսն ի քրմացն ։ * Եւ նորա զձեռս յերկինս համբարձեալ աղաչեաց զԱստուած վասն մնացելոց կռոցն զի կործանեսցին ։ Եւ ի գիշերին յայնմիկ մինչ քուրմքն ի տունս իւրեանց ննջէին կործանեցան բագինքն եւ խորտակեցան ի բազում մասունս ։ * A fol. 308 v° b.

Եւ յորժամ եհաս պիղծ տօնն պատրաստեցին զամենայն զենլիս զոհիցն աւելի քան զՓալկոնին, որդս եւ զուարակս, խոյս եւ նոխազս եւ գառինս ։ Եւ զարդարեալ քրմացն գնացին ի բագինն Ապողոնի, եւ գտին ի բազում մասունս ցնդեալ ։ Սկսան բախել զերեսս իւրեանց մեծաւ հառաչանօք եւ ասեն. Վա՛յ մեզ՝ ո՛վ Ապողոն, որ չար պատերազմ շարժեցաւ ի վերայ քո. չեղեւ մեզ բաւական կորուստ Փալկոնի, այլ եւ դու մեծ չարի դիպեցար, զի եթէ լսիցեն զայս անցս յայլ քաղաք խոտան եւ անարգս համարին զմեզ ։ Ով հզօր եւ պայծառ աստուածդ մեր Ապողոն, ընդէ՞ր կործանեցար եւ փշրեցար եւ ոսկէակապ աթոռն քո ունայն մնաց ։

Եւ ելին անտի սրտաբեկք գնացին ի տաճար կռոցն Դիայ, գտին եւ զայն կործանեալ եւ բեկտեալ ։ Եւ սկսան մեծաձայն հնչմամբ ողբալ որ եւ ի ձայնէն ժողովեցան

5 ննջէին] նիրհէին B || 9 ցնդեալ] փշրեալ B || 10 հառաչանօք] հառաչմամբ B.

dieux, allez préparer toutes les victimes à immoler et le jour de la fête je viendrai, moi aussi, aux sacrifices. »

Il alla raconter à Pancrace ce que les prêtres d'idoles étaient venus lui dire. * (Pancrace) éleva ses mains au ciel et pria Dieu pour que les idoles qui restaient fussent aussi détruites. La même nuit, pendant que les prêtres d'idoles dormaient dans leur maison, les autels se renversèrent et se brisèrent en de multiples morceaux. * A fol. 308 v° b.

Lorsque arriva la fête immonde, ils avaient préparé toutes les victimes à immoler, en plus grand nombre que pour Falcon, des enfants, des veaux, des béliers, des boucs et des agneaux. Les prêtres des idoles, en beaux costumes, se rendirent à l'autel d'Apollon et le trouvèrent réduit en de nombreux morceaux. Ils se mirent à se frapper le visage, et dirent avec de gros soupirs : « Malheur à nous, ô Apollon! Quelle méchante guerre a été livrée contre toi? La perte de Falcon n'avait-elle pas été assez pour nous? voilà que toi aussi tu viens de subir un grand malheur! Si ces événements viennent à être connus dans d'autres villes, on nous considérera comme des gens méprisables et nuls. O Apollon! notre puissant et magnifique dieu, pourquoi as-tu été renversé et réduit en morceaux, et ton trône d'or est-il resté vide? »

Ils sortirent de là, le cœur brisé, et se rendirent au temple de l'idole Déa; ils la trouvèrent également renversée et brisée en morceaux. Ils se

ամբոխ բազում : Եւ ասեն քուրմքն. Լացէք ամենեքեան եւ ողբացէք, ընդ մեզ, քանզի քաղցր եւ իմաստուն եւ հզօր աստուածքն մեր կորեան ի սպառ եւ ջնջեցան, պատառեցէք * զպատմուճանս ձեր, եւ հող եւ մոխիր արկէք ի գլուխս ձեր, եւ զերեսս եւ զճակատս ձեր բախեցէք, եւ սուգ առէք ընդ կործանումն աստուածոց մերոց :

*A fol. 309 r° a.

Եւ սկսան ամենայն ժողովուրդն ողբալ ընդ կործանումն կռոցն եւ դիմեցին ամենեքեան մեծաւ հառաչմամբ ի տունն Բոնիփատոսի, եւ աղաղակէին արտաքոյ դրանն. Ով անարժան իշխան, ի չար ժամանակի եղեր դատաւոր : Տեսանես զաստուածս մեր կործանեալս եւ անփոյթ առնես, եւ ոչ առնես խնդիր եւ քննութիւն վասն մեծ անցիցս որ անցին ընդ մեզ : Ով անհաւատ եւ վատ եւ անպիտան դատաւոր եւ քաղաքաւեր, էջ եւ գնա՛ տես զքո սիրելի եւ զբարեկամ աստուածսն թէ որպէս յաղբս եւ ի կոխանս թաւալին, յայլ տեղի գլուխն եւ յայլ տեղի ձեռքն եւ յայլ տեղի ոտքն : Եւ ո՞չ նոքա մեծացուցին զքեզ եւ փառաւորեցին, եւ լցին զտունս քո ոսկւով եւ արծաթով, եւ դիպակով եւ պատուական ակամբք եւ զշտեմարանս քո ամենայն բարութեամբ :

Իսկ Բոնիփատոս ի բարձր պատուհանէն ասէ մեծաւ բարբառով. Ով իմաստուն եւ պատուական քաղաքացիք զինչ կամիք զի արարից. մի՛ գուցէ շնորհք աստուածայնին շնորհացն եմուտ ի քաղաքս մեր եւ կործանեաց զաստուածսն մեր : Եւ նոքա ասեն.

7 ժամանակի] ժամու B — դատաւոր] քաղաքապետ B || 13 դիպակով] եւ մարգարտով *add.* B.

mirent à gémir à haute voix; leurs cris furent entendus par la foule qui y accourut en grand nombre. Les prêtres des idoles dirent : « Pleurez tous et gémissez avec nous, car nos dieux doux, sages et puissants sont perdus pour toujours et sont anéantis. * Déchirez vos vêtements, mettez de la terre et de la cendre sur vos têtes, frappez vos visages et vos fronts et prenez le deuil pour la ruine de nos dieux. »

A fol. 309 r° a

Toute la population se mit à déplorer la ruine des idoles. Tous les gens se dirigèrent, en soupirant fort, vers la maison de Boniface et crièrent à l'extérieur de la porte : « O gouverneur indigne, tu as été juge dans un mauvais moment. Tu vois nos dieux ruinés et tu ne t'en soucies point; tu ne fais aucune recherche, aucune investigation au sujet des grands événements qui ont eu lieu chez nous. O juge sans foi, lâche et propre à rien, toi le dévastateur de la ville, descends et va voir les dieux qui te sont chers et tes amis, comme ils ont roulé dans la boue et sont foulés aux pieds : la tête d'un côté, les mains d'un autre et les pieds d'un autre. N'est-ce pas eux qui t'ont magnifié et glorifié, qui ont rempli ta maison d'or et d'argent, de riches étoffes et de pierres précieuses, et tes greniers de toutes sortes de biens? »

Boniface d'une haute fenêtre leur répondit en criant fort : « O citoyens sages et excellents, que voulez-vous que je fasse? Ne se pourrait-il pas que les grâces divines soient entrées dans notre ville et aient ruiné nos dieux? »

Զինչ իցէ շնորհք աստուածային շնորհացն, ոչ գիտեմք զինչ ասես ։ Եթէ սիրելի ես աստուածոցն ասա մեզ զի գիտասցուք ։ * Եւ նա ասէ. Շնորհք եւ զօրութիւն ի բարձանց ։ * A fol. 309 r° b.

Եւ նոքա բարկացան յոյժ եւ ասեն. Ով անարժան եւ անպիտան եւ քաղաքաւեր իշխան եւ թշնամի աստուածոց մերոց, կորուստ եւ մահ քո հասեալ է զի այդպէս տաս մեզ պատասխանի ։ Ասէ ցնոսա Վոնիփատոս. Ընդէ՞ր արտմեալ մոլիք ի վերայ իմ բարկութեամբ ։ Եւ նոքա ասեն. Զի ոչ եթէ փոքր ինչ վնաս եղեւ այլ աստուածոցն կորուստ եւ արժան է մեզ առաւել բարկութեամբ բարկանալ եւ ողբալ եւ կոծել ։

Ասէ Վոնիփատոս. Ընտրեցէք արս հանճարեղս եւ իմաստունս եւ ի հասարակ գիշերին ի տաճարին դիւթութիւնս եւ աղանդս արասցեն եւ վիճակս արկցեն, եւ ստուգեալ գիտասցեն եթէ վասն էր կործանեցան եւ խորտակեցան աստուածքն. Թերեւս այլ հզօրագոյն աստուած եկն եւ մարտեաւ ընդ նոսա, եւ վասն զի ոչ կարացին կալ ընդդէմ եւ յահէն կործանեցան ։

Եւ ամենայն հեթանոս ժողովուրդքն հաճեցան ընդ խրատն Վոնիփատոսի, եւ երթեալ ընտրեցին երեսուն այր հմուտ ի դիւթութիւն. եւ նոքա երթեալ մտին ի տաճար Լիւսինեայ, զի բագինն այն միայն չէր կործանեալ, եւ սկսան առնել զաղանդան ի հասարակ գիշերոյ, եւ վիճակս արկանէին անուամբն Լիւսինեայ ։

10 աղանդս] աղանդիւս B || 12 հզօրագոյն] հզօր B || 14 հեթանոս *om.* B || 15 ի դիւթու-թիւն] դիւթութեան B || 16 զաղանդան] զաղանդսն B.

Ils dirent : « Qu'est-ce que les grâces divines? Nous ne comprenons pas ce que tu dis. Si tu es l'ami des dieux, dis-nous afin que nous sachions. » * Il répondit : « La grâce et la puissance d'en Haut. » * A fol. 309 r° b.

Ils furent très irrités et dirent : « O gouverneur indigne, propre à rien, destructeur de la ville et ennemi de nos dieux, ta perte et ta mort sont arrivées puisque que tu nous réponds de cette façon. » Boniface leur répondit : « Pourquoi m'attaquez-vous avec colère et égarement? » Ils dirent : « C'est qu'il ne s'agit pas d'un léger malheur, mais de la perte des dieux; et il nous faudrait avoir encore plus de colère, et gémir et sangloter. »

Boniface répondit : « Choisissez des hommes de talent et sages, qui viendront au temple au milieu de la nuit pour y faire des incantations et des opérations magiques : ils prendront les sorts et apprendront sûrement pour quelles raisons les dieux ont été renversés et brisés. Peut-être un autre dieu plus puissant est venu et a lutté avec eux, et comme ils n'ont pu lui résister, ils ont été renversés par la peur. »

Tous les païens furent satisfaits du conseil de Boniface; ils allèrent choisir trente hommes versés dans l'art des incantations. Ceux-ci se rendirent au temple de Lyson (*Liusineay*) et y pénétrèrent, car c'était le seul temple qui n'eût pas été ruiné, et ils se mirent à faire leurs incantations à minuit, et interrogèrent les sorts par le nom de Lyson.

Եւ յարուցեալ Վոնիփատոս գնաց առ երանելին Բագարատ եւ պատմեաց նմա
* A fol. 309 v° a. զամենայն. եւ նա տարածեալ զձեռս իւր յերկինս աղաչէր զԱստուած * զի արասցէ սքանչելիս ի մոլորեալ ժողովուրդն եւ յաղօթելոյն ոչ դադարեաց ։

Եւ կանայք բազումք ի քաղաքէն ժողովեցան շուրջ պատեալ զտաճարովն եւ ծափս հարկանելով երգէին պարելով զդիւթական երգսն, եւ նոքա ի ներքուստ զդիւթութիւնն առնէին եւ աղաչէին զպատկերն զի խօսեսցի ընդ նոսա ։

Եւ եկեւ ձայն ի կռոցն Լիւսոնեայ եւ ասէ. Ո՛ արք Տաւրոմենոյ քաղաքիս, լուարուք յինէն զճշմարիտն, զի յայսմհետէ մեք ոչինչ կարող եմք առնել կամ գործել ։ Մինչեւ ցայժմ զամենայն գործս ձեր եւ զխնդիրս կատարեցաք, բայց այժմ զօրութիւն ոչ գոյ ի մեզ եւ յոյժ տկարացաք եւ ոչնչացաք, քանզի հզօրագոյն աստուածն երեւեցաւ աստ, եւ յահէ նորա Փալկոն փախեաւ, նոյնպէս եւ Ապողոն եւ Դիա կործանեալ խորտակեցան ։ Եւ գիտասջիք ամենեքեան որ երեքանձնեան աստուածութիւնն զշնորհս ողորմութեան առաքեաց ի քաղաքս ձեր ։

Ասեն ազանդաւոր դիւթքն. Եւ է՞ այլ աստուած որ հզօրագոյն է քան զձեզ, ասա եւ յայտնեա մեզ զճշմարիտն թէ ո՛վ իցէ որ մեծ է քան զՓալկոն եւ զքեզ ։ Ասէ բագինն. Որ արար զերկինս եւ զերկիր, եւ ստեղծ ի սկզբանէ զմարդն, եւ այժմ գթացաւ ի ստեղծուածս իւր, եւ առաքեաց զհրեղէն սուր եւ կորոյս զՓալկոն եւ զայլ

12-15 Եւ գիտասջիք ... ասէ բագինն *om.* B.

Boniface, s'étant levé, se rendit auprès du bienheureux Pancrace et lui
* A fol. 309 v° a. raconta tout; celui-ci étendit ses mains vers le ciel et pria Dieu * de faire des prodiges à ce peuple égaré, et il ne cessa de prier.

De nombreuses femmes de la ville s'étaient rassemblées tout autour du temple et battant des mains chantaient, en dansant, des chants d'incantations. Ceux qui se trouvaient à l'intérieur (du temple) faisaient leurs incantations et priaient l'idole de leur parler.

Une voix se fit entendre de l'idole de Lyson qui dit : « O hommes de la ville de Tauromène, apprenez de moi la vérité, car désormais nous ne pouvons plus rien faire ni exécuter. Nous avons jusqu'à présent exaucé toutes vos requêtes et demandes, mais maintenant nous n'avons plus la force, nous sommes très affaiblis et réduits à néant, car un dieu plus puissant est apparu ici et par crainte de lui Falcon s'est enfui, de même qu'Apollon et Déa se sont renversés et brisés. Sachez tous que la divinité en trois personnes a envoyé ses grâces de miséricorde dans votre ville. »

Les sorciers, qui faisaient les incantations, dirent : « Il y a donc un dieu qui est plus puissant que vous. Dis-nous-le et révèle-nous la vérité : qui donc est-ce qui serait plus grand que Falcon et toi? » Le simulacre répondit : « Celui qui a créé le ciel et la terre, qui a créé l'homme dès le commencement et qui maintenant, ayant pitié de ses créatures, a envoyé une épée de feu et a

աստուածսն կործանեալ * խորտակեալ ։ Եւ այն զոր եբեր Լիկաոնիտոս ի քաղաքս յայս նորա աշակերտ է ։ * A fol. 309 v° b.

Եւ նոքա ասեն. Յորժամ կորեաւ Փալկոն եւ եկաք հարցաք ցքեզ՝ ընդէր ոչ ասացեր մեզ զայդ ։ Ասէ բագինն. Եթէ կամիք զի զօրութիւն ձեր դարձեալ ի մեզ եւ լինիմք որպէս յառաջն, մատուցէք ինձ զոհ զսիրելի եւ զբարեկամն իմ զԲոնիփատոս ։

Եւ նոքա յոյժ ուրախ եղեն, եւ եկեալ զնացին ոստով մրտենեօք ի տունն Բոնիփատոսի աւետիս մատուցանէին նմա եւ ասէին. Երանի է քեզ՝ ով Բոնիփատոս որ աստէն մեծացուցին զքեզ աստուածքն մեր եւ փառաւորեցին, եւ դարձեալ կամին որ զքեզ զոհս մատուցանեմք նմա, եւ լինիս դու աստուած փոխանակ կործանեալ աստուածոցն եւ արասցուք զքո բագինն եւ պաշտեսցուք զքեզ ։

Եւ յորժամ լուաւ Բոնիփատոս զբօթալից աւետիսն որ զենուլ կամէին զինքն եւ զոհս մատուցանել պղծոց կռոցն, փութանակի ելեալ ընդ ծածուկ դուռն տան իւրոյ գնաց ի ժողովրդենէն գաղտ առ Երանելին Պանկրատ եւ լալով անկաւ յոտս նորա ։ Եւ նա ասէ. Ընդէր լաս որդեակ, միթէ բան չարութեան լուար եւ տրտմեցաւ սիրտ քո ։ Ասէ Բոնիփատոս. Երանի թէ չար բան միայն էր, եւ ոչ դառն մահ, քանզի զոհել կամին զիս չար դիւացն ։ Ասէ * Երանելին. Մի երկնչիր որդեակ, երթիջիր ի զենումն, * A fol. 310 r° a.

6 ուրախ եղեն] ուրախացան B.

anéanti Falcon ainsi que les autres dieux en les renversant * et en les brisant. Et l'homme que Lycaonide a amené dans cette ville est son disciple. » * A fol. 309 v° b.

Ils lui dirent : « Lorsque Falcon a été perdu et que nous sommes venus te consulter, pourquoi ne nous as-tu point dit cela? » L'idole répondit : « Si vous voulez que la puissance nous revienne et que nous soyons comme auparavant, offrez-moi en victime mon cher ami Boniface. »

Ils furent tout joyeux et se rendirent, (portant) des branches de myrte, à la maison de Boniface pour lui donner la bonne nouvelle et ils lui dirent : « Tu es heureux, ô Boniface, que nos dieux t'aient magnifié et glorifié ici-bas ; ils veulent maintenant que nous t'offrions en victime à lui (à Lyson) et que tu deviennes dieu à la place des dieux ruinés ; nous t'élèverons une statue et nous t'adorerons. »

Lorsque Boniface entendit la désastreuse nouvelle qu'on voulait l'immoler et l'offrir en victime aux idoles immondes, il sortit en hâte par une porte secrète de la maison, se rendit, en cachette de la foule, chez le bienheureux Pancrace et tomba en pleurant à ses genoux. Celui-ci lui dit : « Pourquoi pleures-tu, mon fils? as-tu appris de mauvaises paroles et ton cœur est-il attristé? » Boniface répondit : « Ce serait à souhaiter qu'il fut question seulement de méchantes paroles et non pas d'une mort cruelle, car ils veulent m'immoler aux méchants démons. » Le bienheureux * lui dit : « N'aie aucune * A fol. 310 r° a.

եւ ես եկից զկնի քո եւ աստուածային շնորհօքն համարձակութեամբ յանդիմանեցից եւ յաղթեցից նոցա անուամբն Աստուծոյ :

Իսկ պիղծ քուրմքն ի ժամ զոհիցն գոչեցուցին փողս մեծահնչիւնս, եւ ժողովեցան ամենայն ժողովուրդք քաղաքին ոստս ծառոց ի ձեռս ունելով վասն տօնին, եւ գնացին միահամուռ եւ կալան զԲոնիփատոս : Եւ վասն զի ողբայր եւ հառաչէր, մերկացուցին զնա եւ կապեցին զձեռսն յետս եւ կացուցին առաջի կռոցն Լիւսինեայ :

Եւ Բոնիփատոս շուրջ ածէր զաչսն զի տեսցէ զերանելին Պանգրատ, եւ ողբալով ասէր դառն արտասուօք. Վա՜յ ինձ թէ յորդորի դառն եւ ի չար մահ մատնեցայ. վա՜յ ինձ որ ի խորս անդնդոց ընկղմեցայ : Ո՞ւր իցես հայր Պանգրատ, եկեսջի՛ր փութով, եկեսջիր որպէս ասացեր թէ. Գամ զկնի քո եւ փրկեցից զքեզ. զիս առաքեցեր եւ դու ոչ եկիր այլ օգնեսցէ ինձ Տէր Յիսուս Քրիստոս յոր հաւատացի եւ փրկեսցէ զիս :

Իսկ սուրբն Պանգրատ տուեալ ի Լիկաոնիտոն զխաչն եւ յԱգրինոս զտէրունական պատկերն, եւ ինքն զգեցեալ զուրարն եւ զփիլոնն եւ զեմփորոնն, առեալ ի ձեռս իւր զաւետարանն, գնաց ի տեղին : Եւ տեսանէ զԲոնիփատոս ի մէջ ամբոխին առաջի

* A fol. 284 r° b. Լիւսինեայ * զգլխիբաց եւ մերկ զձեռս յետս կապեալ : Եւ տարածեալ զձեռս իւր

2 անուամբն Աստուծոյ] եւ եկեալ Բոնիփատոս գնաց ի տունն իւր *add.* B || 9 մատնեցայ] ըմբռնեցայ B || 12 Քրիստոս *om.* B.

crainte, mon fils. Tu iras à l'immolation et moi je te suivrai, et par les grâces divines je les reprendrai avec hardiesse et je les vaincrai au nom de Dieu. »

Quant aux immondes prêtres des idoles, ils firent, à l'heure du sacrifice, retentir des trompettes sonores, et tous les habitants de la ville se rassemblèrent, tenant à la main des branches d'arbres pour la fête; ils allèrent tous ensemble s'emparer de Boniface. Et comme il gémissait et soupirait, ils le mirent à nu, lui attachèrent les mains par derrière et le placèrent devant l'idole de Lyson.

Boniface promenait son regard pour apercevoir le bienheureux Pancrace et, tout en gémissant et versant des larmes amères, il disait : « Malheur à moi pour ce que je suis livré à une mort cruelle; malheur à moi d'être englouti au fond des abîmes. Où es-tu, père Pancrace? viens vite, viens comme tu l'as promis en disant : Je te suivrai et je te sauverai. Tu m'as envoyé ici et tu n'es point venu, mais le Seigneur Jésus-Christ, en qui j'ai cru, m'aidera et me sauvera. »

Saint Pancrace, ayant remis la croix à Lycaonide et l'image du Seigneur à Agrinus, s'était vêtu de l'étole, du phélonion et de l'omophorion; puis tenant l'évangéliaire dans ses mains, il s'était rendu là. Il aperçut, au milieu de la

* A fol. 284 r° b. foule devant Lyson, Boniface nu et * tête nue, les mains attachées par der-

յերկինս պաղատէր առ Աստուած ։ Եւ վաղվաղակի ինքն որպէս զբոց վառեցաւ ։ Եւ տեսեալ զնա ժողովուրդն իբրեւ զհուր՝ բոցեալ, յահէն անկան յերկիր ի վերայ երեսաց իւրեանց, եւ նորա արարեալ զնշան խաչին տէրունական ի վերայ նոցա կանգնեաց զնոսա, եւ ասէ ցքուրմսն . Երդմնեցուցանեմ զքեզ այս պիղծ դեւ յանուն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն փախիր ի տեղւոյս յայսմանէ, եւ գնա ուր Փալկոնն է ի խորս ծովուն ։

Եւ առժամայն եղեւ ճայթիւն մեծ ի կուռսն, եւ վերացաւ բագինն յօդս եւ անկաւ ի մէջ ծովուն ։ Եւ յոյժ երկեան ժողովուրդն եւ անկան յորսայս ։ Եւ արարեալ ի վերայ նոցա զնշան խաչին ասէ . Մի երկնչիք, քանզի պիղծն Լիւսոնս դեւօքն իւրովք ի սպառ կորեաւ ։ Եւ կանգնեցան ժողովուրդն եւ տեսին զահաւոր սքանչելիսն զոր արար Աստուած ի ձեռն ծառային իւրոյ Բագարատայ, աղաղակեցին որպէս ի միոջէ բերանոյ մեծաւ բարբառով եւ ասեն . Օրհնեալ է Աստուածն Բագարատայ, հաւատամք ի նա զոր դու քարոզես ։

Եւ երթեալ լուծին զԲոնիփատոս եւ զգեցուցին եւ շուրջ պատեցան զերանելովն, եւ պշուցեալք հայէին յերեսս նորա ։ Եւ նորա ելեալ ի բարձր տեղի արար աղօթս ի վերայ ամենայն ժողովրդեանն ։ * Եւ ընթացան քուրմք ի տաճարն, եւ զխորտակեալ * A fol. 310 v° a.
կուռսն ընկեցին ի ծովն եւ զսեղանսն եւ զաւազանսն խորտակեցին ։

2 ի վերայ երեսաց իւրեանց *om.* B || 15 պշուցեալք] ապշեալք B.

rière. Il éleva ses mains au ciel et supplia Dieu. Il fut aussitôt embrasé comme une flamme. Les habitants, le voyant flambant comme du feu, tombèrent de frayeur la face contre terre; il fit sur eux le signe de la croix du Seigneur, les releva, et dit devant les prêtres des idoles : « Je t'adjure, démon immonde, au nom du Père, du Fils et du Saint-Esprit, fuis cet endroit et va là où se trouve Falcon, au fond de la mer. »

Il se produisit aussitôt un grand éclatement parmi les idoles, la statue s'éleva en l'air et alla tomber au milieu de la mer. Les habitants furent saisis d'une grande frayeur et tombèrent à la renverse. (Pancrace) fit le signe de la croix sur eux et dit : « Ne craignez point, car l'immonde Lyson et ses démons sont perdus à jamais. » Les habitants se relevèrent et, témoins du prodige terrible que Dieu avait opéré par les mains de son serviteur Pancrace, ils se mirent à crier à haute voix, comme d'une seule bouche, et dirent : « Béni soit le Dieu de Pancrace, nous croyons en celui que tu nous prêches. »

Ils allèrent délier Boniface, le vêtirent, et entourèrent le bienheureux en regardant son visage, les yeux fixés sur lui. Celui-ci monta sur une place élevée et fit des prières sur toute la foule. * Les prêtres des idoles, se préci- * A fol. 310 v° a.
pitant au temple, jetèrent à la mer toutes les idoles brisées, et brisèrent les autels et les bassins à ablutions.

Եւ հրամայեաց երանելին փողս հնչեցուցանել, եւ ժողովեցան անձինք հարիւր հազար ։ Եւ երթեալ նոքօք երանելին ի փոքր մատուռն զոր գաղտ շինեալ էր Վոնիփատոս, եւ կատարեաց զսուրբ խորհուրդն պատարագին, եւ հրամայեաց ժողովրդեանն զեօթն օր սրբել, եւ երախայոյց զնոսա եւ ուսոյց զբանս ճշմարտութեան.

Եւ բերին իւրաքանչիւր ոք ի տանէ իւրեանց, որպէս պատուիրեաց նոցա, սպիտակ հանդերձս նորս եւ մաքուրս եւ մոմեղէնս, եւ տարաւ զնոսա ի գետն եւ մկրտեաց յանուն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն, յաւուր այնմիկ քսան եւ չորս հազար ոգի ։ Եւ զգեցոյց նոցա զնոր սպիտակ հանդերձն, մոմեղինօք լուցելովք, եւ հաղորդեցոյց զնոսա ի սուրբ եւ ի պատուական մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ.

Եւ ամենեքեան որ լուսաւորեցան տեսին զշնորհս սուրբ Հոգւոյն ի նմանութիւն աղաւնոյ զի էջ ի մկրտութեան ջուրսն, եւ դարձեալ վերացաւ յերկինս. եւ եղեւ ուրախութիւն մեծ ի քաղաքին յայնմիկ ։ Եւ զութ աւուրս ուսուցանէր զմկրտեալսն եւ ապա յուղարկեաց զնոսա ի յարկս իւրեանց ։

Եւ առնէր նշանս մեծամեծս առաջի ժողովրդեանն, եւ բժշկէր աղօթիւք զկաղս եւ
* A fol. 310 v° b. զկոյրս եւ զհամերս, * եւ զանդամալոյծս, զցամաքեալս եւ զջրգողեալս եւ զդիւահարս ։ Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն քաղաքս եւ գաւառս կղզւոյն եւ երթային առ նա, եւ նա դարձուցանէր զնոսա յաստուածգիտութիւն եւ լուսաւորէր մկրտու-

8 հանդերձն] զգեստն B || 17 եւ նա] վարդապետութեամբ իւրով *add.* B.

Le bienheureux ordonna de faire retentir des trompettes; cent mille personnes s'assemblèrent. Le bienheureux se rendit avec elles à un petit oratoire que Boniface avait construit en secret et y célébra le saint mystère du sacrifice. Il ordonna à la population de se purifier durant sept jours; il les catéchisa et leur enseigna les paroles de vérité.

Chacun apporta de sa maison, ainsi qu'il l'avait recommandé, des vêtements blancs, neufs et propres et des cierges, puis il les conduisit au fleuve où il les baptisa au nom du Père, du Fils et du Saint-Esprit; ils étaient ce jour-là vingt-quatre mille personnes. Il les revêtit de vêtements blancs, et neufs, (et tandis qu'ils tenaient) des cierges allumés, il les communia au saint et précieux corps et sang du Fils de Dieu.

Tous ceux qui furent illuminés virent les dons du Saint-Esprit sous les apparences d'une colombe qui descendit sur les eaux du baptême et s'éleva de nouveau au ciel. Il y eut une grande joie dans cette ville-là. Durant huit jours (Pancrace) enseigna ceux qui avaient été baptisés et les renvoya ensuite à leur maison.

Il fit de grands miracles devant la population, il guérit, par ses prières,
* A fol. 310 v° b. les boiteux, les aveugles, les muets, * les paralytiques, les desséchés, les hydropiques, et les possédés du démon. Sa réputation s'étendit dans toutes les villes et les cantons de l'île, les habitants venaient à lui; il les convertis-

թեամբ աստուածային : Եւ դարձոյց զամենայն քաղաքս եւ զաւառս Սիկիլիոյ կղզւոյն. եւ յամենայն աւուրս մկրտէր հազարս եւ հազարս որոց ոչ գոյր թիւ, նոյնպէս եւ զկանայս եւ զմանկտիս առանձինն յայլ տեղիս : Էին մկրտեալքն ի քաղաքէն Տաւրոմենոյ աւելի քան զքառասուն հազարս, եւ յայլ քաղաքաց եւ ի գաւառաց հինգ հարիւր հազար :

Եւ ի միում աւուր մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն երեւեցաւ սատանայ որպէս Եթովպացի բազում սեւադէմ զօրօք, եւ եկաց քարընկէց մի հեռագոյն եւ ասէ մեծաւ ձայնիւ. Ո՛վ Պանկրատ, ընդէ՞ր եկիր աստ, կամ ո՞վ ած զքեզ ի քաղաքս իմ եւ զրկեցեր զիս յիմոցն, եւ յափշտակեցեր յինէն զբարեկամս իմ եւ ընծայեցեր Քրիստոսի Աստուծոյն քո, զյարկս իմ աւերեցեր եւ զպաշտելի կուռս իմ ի ծով ընկղմեցեր : Վա՜յ ինձ սիրելիք իմ եւ սպասաւորք զի յորմէհետէ եկն դա աստ զիս գերի արար եւ զսիրելին իմ Վոնիփատոս զոր փառաւորեցի եւ մեծացուցի ինձ թշնամի արար :

Եւ յորժամ լուաւ երանելին Պանկրատ ասէ ցժողովուրդն. Գիտացիք որդեակք իմ որ վասն զի * եկիք ի կոչումն Քրիստոսի կրճտէ սատանայ զատամունս իւր ի վերայ * A fol. 311 r° a.
մեր, եւ որպէս առիւծ ի գարանէ գոչէ ի վերայ մեր, եւ որպէս վիշապ բանայ զբերան իւր յահացուցանել զմեզ, բայց մեք զի զինուորեցաք ի գունդս Քրիստոսի արիաբար կացցուք ընդդէմ թշնամւոյն : Եւ հրամայեաց ժողովրդեանն դառնալ յարեւմուտս

3 զմանկտիս] զտղայս B || 5 — p. 1768, l. 8 Եւ ի միում աւուր ... լուսաւորչէն Պանկրատայ *om.* B.

sait à la science de Dieu et les illuminait par le baptême des fonts. Il convertit toutes les villes et tous les cantons de la Sicile et chaque jour il baptisait des milliers et des milliers sans nombre, les femmes et les enfants à part, en un autre endroit. Ceux qui furent baptisés de la ville de Tauromène étaient plus de quarante mille et ceux des autres villes et provinces cinq cent mille.

Un jour, pendant qu'il prêchait à la population, Satan apparut comme un Éthiopien, accompagné de nombreuses troupes au visage noir, se tint à la distance d'un jet de pierre et lui dit à haute voix : « O Pancrace, pourquoi es-tu venu ici ou bien qui t'a amené dans ma ville? Tu m'as privé des miens, et tu m'as enlevé mes amis que tu as offerts au Christ, ton Dieu; tu as démoli mes demeures et tu as noyé dans la mer mes adorables idoles. Malheur à moi, à mes amis et à mes serviteurs, car depuis que celui-là est venu ici, il m'a fait prisonnier, et de mon ami Boniface, que j'ai magnifié et glorifié, il a fait mon ennemi. »

Lorsqu'il eut entendu cela, le bienheureux Pancrace dit au peuple : « Sachez, mes enfants, que parce que * vous vous êtes rendus à l'appel du * A fol. 311 r° a.
Christ, Satan grince des dents sur nous, et comme un lion rugit de sa tanière contre nous; comme un dragon il ouvre sa bouche, sa gueule, pour nous intimider. Mais nous, puisque nous nous sommes enrôlés dans la milice du Christ, nous tiendrons vaillamment contre l'ennemi. » Et il ordonna au peuple

ընդդէմ սատանայի, եւ ասէ երիցս անգամ. Հրաժարեցէք ի սատանայէ ։ Եւ յորժամ հրաժարեցին երեք անգամ, ասէ. Թքէք յերեսս նորա ։ Եւ յորժամ թքին երեւեցան նոցա հրեղէն նետք, եւ հալածեցին զսատանայ զեւօք իւրովք եւ անյայտ արարին ։ Եւ հրամայեաց ժողովրդեանն դառնալ յարեւելս եւ ասել. Խոստովանիմք զՔրիստոս ճշմարիտ Աստուած, երիցս անգամ ։ Եւ յորժամ խոստովանեցան ասէ ցնոսա. Երկիր պագէք Քրիստոսի Աստուծոյ. եւ նոքա ծունր եդին երիցս անգամ, եւ համբուրեցին զխաչն եւ զաւետարանն եւ զտէրունական պատկերն, եւ լցեալ Հոգւով սրբով գնացին ուրախութեամբ մեծաւ ի տունս իւրեանց լուսաւորեալք ի Լուսաւորչէն Բագարատայ ։

Եւ երանելին ձեռնադրեաց զԱգրինոս քահանայ եւ զԼւկաոնիտոս սարկաւագ ։ Եւ ասէ ցԲոնիփատոս. Յետ իմոյ կատարման առաքեա զԱգրինոս ի Հռոմ առ սուրբ
* A fol. 311 r° b. առաքեալն Պետրոս եւ ձեռնադրեսցէ զնա * փոխանակ իմ յաթոռ եպիսկոպոսութեան քաղաքիս այսմիկ ։ Եւ դարձաւ յԱգրինոս եւ ասէ. Որդեակ, որպէս տեսեր զիս եւ ուսար յինէն, նոյնպէս եւ դու հովուեա զՔրիստոսի նոր հօտս ։

Վասն կատարման սրբոյն Բագարատայ Լուսաւորչին ։

Էր քաղաքացի մեծատուն ոմն որոյ անուն էր Արտագորոն, եւ սատանայ կալեալ

de se tourner vers l'occident contre Satan, et il dit par trois fois : « Renoncez à Satan. » Et lorsque les gens eurent renoncé par trois fois, il leur dit : « Crachez-lui à la figure. » Et lorsqu'ils crachèrent, des flèches de feu leur apparurent, qui mirent en fuite Satan et ses troupes, et les firent disparaître. Il ordonna alors au peuple de se retourner vers l'orient et de dire par trois fois : « Nous confessons le Christ, vrai Dieu. » Lorsqu'ils eurent prononcé cette confession, il leur dit : « Prosternez-vous devant le Christ Dieu. » Ils firent la génuflexion trois fois, puis ils baisèrent la croix, l'évangéliaire et l'image du Seigneur, et, remplis du Saint-Esprit, ils rentrèrent dans leurs maisons avec grande joie, illuminés par Pancrace l'Illuminateur.

Le bienheureux ordonna prêtre Agrinus, et Lycaonide diacre. Et il dit à Boniface : « Après ma mort, tu enverras Agrinus à Rome auprès du saint
* A fol. 311 r° b. apôtre Pierre qui le sacrera * à ma place sur le siège épiscopal de cette ville. » Et se retournant vers Agrinus, il lui dit : « Mon fils, tel que tu m'as vu et as appris de moi, tu gouverneras de même le nouveau troupeau du Christ. »

Du martyre de saint Pancrace l'Illuminateur.

Il y avait un riche citoyen, dont le nom était Artagoron[1], que Satan

1 *Syn. Cp.*, p. 809, l. 20 : Ἀρτάγαλος. Les deux formes, grecque et arménienne, sont également inconnues à Pape, *Worterbuch der griechischen Eigennamen*, et à Justi, *Iranisches Namenbuch*, Marburg, 1895.

դնա եւ գաղտ պաշտէր զկուռս, որ եւ փոքր պատկերկունս արար եւ ի թագուստ պահէր յինքեան, եւ ի միտս իւր սպառնայր յամենայն ժամ քահանայապետին Աստուծոյ սրբոյն Բագարատայ : Եւ գտեալ ի միում աւուր առանձինն զսուրբն Բագարատ յաղօթս հանեալ զսուրն իւր սպան զնա, եւ փախեաւ ի տունն իւր զի մի ոք գիտասցէ : Բայց Աստուած նոյնժամայն յայտնեաց Վոնիփատոսի, եւ կալեալ զանօրէնն Արտագորոն կապեաց զձեռս յետս, եւ այնչափ տանջեաց արջառաջլօք զլանջսն եւ զթիկունսն, մինչեւ ամենայն մարմինն բացաւ եւ մորթեալ եղեւ, եւ արիւնն ելից զերկիր, եւ ապա ինքնին որպէս զանասնոյ եհատ սրով զգլուխն եւ ընկեցին ի ծովն, զմարմինն ետ շանց եւ ագռաւուց :

Եւ արարեալ արծաթի տապան մեծաւ պատուով եւ անուշ խնկօք պատեաց սուրբ կտաւօք, եւ եդ անդ զպատուական մարմինն սուրբ Լուսաւորչին Բագարատայ. եւ է բարեխօս եւ օգնական ոչ միայն Սիկիլիայ կղզւոյն այլ եւ ամենեցուն * որք կատարեն * A fol. 311 v° a.
զյիշատակս նորա :

Եւ քահանայն Ագրինոս ըստ հրամանի սրբոյն Բագարատայ գնաց առ սուրբ առաքեալն Պետրոս, եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս Տաւրոմենոյ քաղաքին յաթոռ սրբոյն Բագարատայ :

Իսկ Վոնիփատոս մինչեւ ի մահ սպասաւորէր եւ ծառայէր նշխարաց սրբոյն Բագարատայ :

5 յայտնեաց] իշխանին *add.* B || 7 բացաւ եւ մորթեալ եղեւ] մորթեցաւ եւ ոսկերքն բացան B || 7 զերկիր] զտեղին B || 17 ի մահ] ցմահն իւր B.

s'était attaché, et qui adorait secrètement les idoles; il avait fabriqué de petites statues et les tenait cachées chez lui; il menaçait continuellement dans son esprit le pontife de Dieu, saint Pancrace. Trouvant un jour saint Pancrace seul en prières, il tira son épée et le tua, puis s'enfuit à sa maison pour que personne ne le sût. Mais Dieu le révéla aussitôt à Boniface, qui, ayant fait arrêter l'impie Artagoron, lui fit attacher les mains par derrière et le fit torturer tellement à coups de nerfs de bœuf sur la poitrine et le dos que tout son corps s'ouvrit et fut broyé; le sang inonda la terre, et Boniface lui-même lui trancha la tête avec son glaive, comme à un animal. On jeta sa tête à la mer et son corps fut donné en pâture aux chiens et aux corbeaux.

Il fit faire un cercueil en argent, ensevelit le précieux corps du saint Illuminateur Pancrace dans du linge propre avec des parfums suaves et l'y déposa avec de grands honneurs. Il est l'intercesseur et l'aide non seulement de l'île de Sicile, mais de tous ceux qui * accomplissent sa commémoration. * A fol. 311 v° a.

Le prêtre Agrinus, suivant l'ordre de saint Pancrace, se rendit auprès du saint apôtre Pierre, et fut sacré évêque de la ville de Tauromène sur le siège de saint Pancrace.

Boniface, jusqu'à sa mort, prit soin des restes de saint Pancrace et les servit.

Յայսմ աւուր վկայութիւն Կիւրղի Գորտինոյ եպիսկոպոսին ի Կրետէս կղզի ։

Սուրբ քահանայապետն Քրիստոսի Կիւրեղ էր յաւուրս ամբարիշտ արքային Մաքսիմիանոսի, այր աստուածապաշտ եւ ի բարի գործս սնեալ եւ վարժեալ, եւ ծերացեալ ալեօք, եւ կատարիչ աստուածային պատուիրանացն եւ լի իմաստութեամբ ։

Իսկ անօրէն կռապաշտքն քարշէին զաստուածապատիւ ծերունին ի խաղս սատանայական պարուց այսպէս առնելով զնա եւ տարեալ կացուցին առաջի իշխանին, եւ համարձակութեամբ խոստովանեցաւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ։ Եւ առժամայն կապեցին զձեռսն եւ զոտսն եւ ընկեցին ի հուր. այրեցան կապանքն եւ փայտն եւ քահանայապետն Աստուծոյ ել անվնաս ի հրոյն ։ Եւ տեսեալ իշխանին զարմացաւ

* A fol. 311 v° b. յոյժ, եւ առաջի մարդկան * մեղադիր եղեւ հրամանաց թագաւորին ։

Եւ յորժամ լուաւ եթէ ի քարոզութենէն բազում քաղաքք եւ գաւառք դարձան ի կռապաշտութենէ եւ հաւատացին ի Քրիստոս բարկացաւ եւ հրամայեաց եւ հատին զպատուական գլուխ նորա Յուլիսի ԺԴ ։

Յայսմ աւուր տօն սրբոյն Ներսէսի Տարսոնոյ եպիսկոպոսին ։

Սքանչելի եպիսկոպոսն Ներսէս Տարսոն քաղաքին էր յաւուրս Լեւոնի Հայոց

1 Կիւրղի... կղզի] սրբոյն Կիւրղի եպիսկոպոսին Գորտինոյ Կռետիս կղզոյն քաղաքի B || 3 աստուածապաշտ] աստուածահաճոյ B || 13 նորա] Հրոտից Ը եւ *add.* B.

En ce jour martyre de Cyrille, l'évêque de Gortyne dans l'île de Crète.

Le saint pontife du Christ Cyrille vivait aux jours de l'empereur impie Maximien. C'était un homme pieux, élevé et exercé dans les bonnes œuvres, vieillard aux cheveux blancs, exécuteur des commandements divins; il était plein de sagesse.

Les impies idolâtres entraînèrent le vieillard honoré de Dieu aux jeux sataniques des danses pour en faire la risée de tous, puis ils l'emmenèrent et l'introduisirent devant le gouverneur; il confessa avec hardiesse Notre-Seigneur Jésus-Christ. On lui attacha aussitôt les mains et les pieds et on le jeta dans les flammes. Les liens et le bois brûlèrent, mais le pontife du Christ sortit indemne des flammes. A cette vue, le gouverneur fut très étonné

* A fol. 311 v° b. et blâma * devant le peuple les ordres de l'empereur.

Mais lorsqu'il apprit qu'à la suite de la prédication (du bienheureux) beaucoup de villes et de cantons avaient renoncé à l'idolâtrie et avaient cru au Christ, il en fut irrité et ordonna de trancher sa précieuse tête, le 14 juillet.

En ce même jour fête de saint Nersès, évêque de Tarse.

Le merveilleux évêque de la ville de Tarse, Nersès, vivait aux jours du

արքային, որ յաշխարհին Կիլիկեցւոց առաջին թագաւորեաց յազգէն Ռուբինեանց. եւ զկնի նորա Հեթում թագաւորեաց եւ որդի նորա Լեւոն ։

Այս Ներսէս որդի էր մեծ իշխանին Օշնի Կիլիկեցւոց, որ տիրէր Լամբրունին եւ բազում գաւառաց, եւ ունէր պատիւ սեբաստոսութեան ։ Եւ եղեւ Ներսէս ուսումնասէր յոյժ ի մանկութենէ իւրմէ, եւ էր հայ ազգաւ ։ Ուսաւ եւ յունարէն գիր ։

Եւ յորժամ ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս Տարսոնի թարգմանեաց նա ի յունական լեզուէն ի հայ լեզու գիրս պատմութեան Գրիգորի Հռոմայ պապուն որ վասն սուրբ հարցն է որք փայլեցին առաքինութեամբ յԻտալիա. եւ զկանոնական գիրս սուրբ հօրն Բենեդիկտոսի որով վարին ամենայն ազգք Հռոմայեցւոց, եւ զմեկնութիւն տեսլեանն Յովհաննու աւետարանչին ։

* Արար եւ ինքն մեկնութիւն սաղմոսացն Դաւթի լուսաւոր եւ առատ միտօք, եւ առակացն Սողոմոնի եւ Ժողովողին եւ Իմաստութեանն Սողոմոնի ։ Մեկնեաց եւ զքարոզս եկեղեցւոյ եւ զպատարագամատոյցն գեղեցիկ եւ իմաստուն բանիւք ։ Գրեաց եւ ճառս ներբողականս ի տօնս տիրամօրն եւ աստուածածնին Մարիամու եւ ի սուրբ խաչն ոտանաւոր չափով ։ Մեկնեաց եւ զաղօթս Յովհաննու աւետարանչի որոյ սկիզբն * A fol. 312 rº a.

1 Կիլիկեցւոց] ի Կիլիկիա B || 4 սեբաստոսութեան] սեւաստութեան B || 5 եւ էր հայ ազգաւ] զօրով աշակերտ եւ եղբօր զաւակ որդի մեծին Ներսէսի երգեցողի Կլայեցւոյն B — գիր] եւ յոյժ հմուտ եղեւ աստուածային գրոց *add.* B || 6 արքեպիսկոպոս] արհիեպիսկոպոս B — յունական] յունարէն B || 10 Յովհաննու] աստուածաբան *add.* B:

roi d'Arménie Léon, de la famille des Roubéniens, premier roi du pays de Cilicie; après qui régnèrent Héthoum et son fils Léon.

Ce Nersès était le fils du grand prince Ošin de Cilicie, qui régnait sur Lambron et sur de nombreuses provinces; il avait le titre de sébaste. Nersès dès son enfance fut très studieux; et bien qu'il fût de race arménienne, il apprit également les lettres grecques.

Lorsqu'il fut sacré archevêque de Tarse, il traduisit du grec en langue arménienne les livres d'histoire de Grégoire, pape de Rome, où il est question des saints pères qui brillèrent par leurs vertus en Italie; et le livre de la règle du saint père Benoît, dont se servent tous les peuples romains, et le commentaire de l'Apocalypse de l'évangéliste Jean.

* Il fit lui-même des commentaires des Psaumes de David dans un esprit lumineux et abondant, des Proverbes de Salomon, de l'Ecclésiaste et de la Sagesse. Il commenta aussi les proclamations (*kharoz*) de l'église et le Missel en termes beaux et pleins de sagesse. Il écrivit également des discours panégyriques en vers sur les fêtes de Marie, Mère du Seigneur et Mère de Dieu, et sur la sainte Croix. Il commenta aussi la prière de l'évangéliste Jean * A fol 312 rº a.

է. Էր ընդ եղբարսն երանելին Յովհաննէս ։ Գրեաց եւ այլ ճառս իմաստալիցս եւ լի գիտութեամբ ։

Կարգաւորեաց յեկեղեցի զառաքելական սահմանն ունել եկեղեցւոյն դպիրս եւ սարկաւագս եւ քահանայս, եւ զգեստաւորիլ ի խորհրդական ժամսն ըստ իւրաքանչիւր աստիճանի, եւ կալ յիւրում կարգի եւ սահմանի, զի երեւեսցի իւրաքանչիւր պատիւ եւ աստիճան ի ձեւ հանդերձիցն, եւ մի լինել խառն ի խուռն որպէս առնէին ի տեղիս տեղիս վասն անհոգութեան եւ պղերգութեան. եւ մի տալ զամենայն աստիճանսն ի միում աւուր, այլ պաշտեսցեն ժամանակօքն զգործսն, եւ ապա ի վեհագոյնսն մատչիցին ։

Կարգեաց եւ յամենայն աւուրսն առնել զտօնսն յորում եւ պատահի ըստ աւանդից
* A fol. 312 r° b. հարցն սրբոց, որ ի ծուլութենէ եւ յանգիտութենէ անփոյթ լեալ * էր, վասն որոյ բամբասեալ լինէր ի տգիտաց ։ Իսկ նա ասէր զառաքելոյն. Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի ապա Քրիստոսի ծառայ ոչ էի ։ Այլ զի սուրբ հարցն էր աւանդս ինքն առնէր անխափան, եւ զայլս ի նոյն յորդորէր ։

Եւ էր ինքն խոնարհ եւ հեզ, եւ անպաճոյճ, ողորմած, աղօթական, արտասուեղ, անապատասէր ։ Բազում անգամ անյայտ լինէր ի մարդկանէ, եւ երթային զտանէին զնա նուաղեալ եւ նիրհեալ ի պահոցն եւ ի քաղցոյն ։

dont le commencement est : Le bienheureux Jean était avec les frères. Il écrivit encore d'autres homélies pleines de sagesse et de science.

Il organisa dans l'église les règlements fixés par les apôtres, l'église devant avoir des clercs, des diacres et des prêtres; chacun devant se revêtir aux heures du mystère selon son ordre, se tenir dans son rang et sa place, pour que la dignité et l'ordre de chacun apparaisse d'après la forme des ornements, et qu'ils ne soient pas mélangés l'un à l'autre comme il se faisait dans certains endroits par négligence et par paresse; de ne pas accorder tous les ordres en un seul jour, mais d'avoir à servir un certain temps les offices avant de passer à l'ordre supérieur.

Il établit pour chaque jour des fêtes à célébrer, quel que soit le jour où ces fêtes tombent, d'après les traditions des saints Pères, ce qu'on avait
* A fol. 312 r° b. négligé de faire par paresse et ignorance, * et c'est pourquoi il fut accusé par les ignorants. Mais il répondait par les paroles de l'apôtre : « *Si je devais encore plaire aux hommes, je ne serais pas le serviteur du Christ*[1] ! » Mais comme c'était une tradition des saints Pères, lui, il les célébrait sans relâche et engageait les autres à faire de même.

Il était humble, doux, simple, charitable, fervent en prières, abondant en larmes, aimant la solitude. Souvent il disparaissait d'avec les hommes et lorsqu'on allait le rechercher, on le trouvait évanoui et affaibli par le jeûne et la faim.

1 Gal., I, 10.

Այլ զի եպիսկոպոս էր եւ կայր նորա հոգ եկեղեցւոյն գնաց նա ի քաղաքն Տարսոն . եւ եւտես անդ մի արբեալ եւ անկեալ ի տղմի, եւ սկսաւ լալ եւ բախել զերեսս իւր, ասէ. Զինչ տաց Աստուծոյ պատասխանի որ հաւատաց զսա ինձ եւ ես ոչ խրատեցի զնա :

Եւ երթեալ յեկեղեցին մեծի սուրբն Սոփիա ի տուէ եւ ի գիշերի խրատէր զնոսա աստուածային օրինօքն եւ պատուիրանօքն կեալ, ցուցանել ըստ հաւատոցն եւ բարի գործս առանց որոյ ոչ ոք տեսանէ զՏէր :

Եւ ըմբռնեալ զնա սաստիկ ցաւոց ապա վախճանեցաւ յերիտասարդական հասակին ամաց երեսուն եւ ութից, յամսեանն Հրոտից Ը եւ Յուլիսի ԺԴ :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Աբդլմսեհի :

Ծառայն Քրիստոսի Աբդլմսեհ որդի էր Հրէի ի Շիգար քաղաքէ, որում անուն էր Ղեւի, եւ էր մեծատուն եւ * ունէր ուստերս եւ դստերս : Եւ առաջին անուն էր մանկանն Ասեր : Եւ արածէր Ասեր զխաշինս հօր իւրոյ ընդ մանկունս քրիստոնէից եւ մոգուց : Իսկ յորժամ լինէր ժամ ճաշոյ առանձինն նստէին մանկունք քրիստոնէիցն, եւ առանձին մանկունք մոգուցն, եւ մնայր Ասէր միայն զի ոչ գոյր ընկեր նմա Հրեայ, * A fol. 312 v° a.

8 սաստիկ] ուժգին B — ապա] ապստամբ ի բժշկական արուեստից B || 9 ԺԴ] ի տօնի սրբոյն Բարսղմոսայ Տոռոմենոյ եպիսկոպոսի, եւ Կիւրղի Գարաինոյ եպիսկոպոսի եւ Աբդլմսեհի վկայի *add.* B || 12 եւ ունէր . . . դստերս *om.* B.

Mais comme il était évèque et avait charge de l'église, il se rendit à la ville de Tarse, et y ayant aperçu un ivrogne tombé dans la boue, il se mit à pleurer et à frapper son visage en disant : « Que répondrai-je à Dieu qui m'avait confié celui-ci, et je ne l'ai pas conseillé. »

Il se rendit à la grande église de Sainte-Sophie et il y enseigna jour et nuit à vivre d'après les lois divines et les commandements, à manifester ses bonnes œuvres d'après sa foi, sans laquelle personne ne peut voir le Seigneur.

Il fut pris de fortes douleurs et mourut jeune à l'âge de trente-huit ans, le 8 hrotits, 14 juillet.

En ce jour martyre de saint Abdelmesih [1].

Le serviteur du Christ Abdelmesih était le fils d'un Juif de la ville de Singar (*Šikhar*), dont le nom était Lévi, homme riche * qui avait des fils et des filles. Le premier nom de l'enfant était Aser. Aser gardait les troupeaux de son père avec les enfants des chrétiens et des mages. A l'heure des repas, les enfants des chrétiens s'asseyaient à part, et les enfants des mages à part, * A fol. 312 v° a.

1. Cf. P. Peeters, *La passion arabe de S. 'Abd al-Masih*, dans *Analecta Bollandiana*, t. XLIV (1926), pp. 270-341.

եւ ցանկայր խառնիլ ի քրիստոնեայ մանկունսն, եւ աղաչէր զնոսա ի խառնել զնա ի քրիստոնեայ մանկունս : Եւ նոքա ասեն . Եթէ լինիս քրիստոնեայ առժամայն խառնեմք զքեզ ի մեզ :

Ասէ Ասեր . Աստ քահանայ չկայ, եւ ի տան երկնչիմ ի հօրէ իմմէ եւ յեղբարցն յայտնի մկրտել . ես հաւատամ ի Քրիստոս որ ի ձեռն քահանային ջրով եւ հոգւով առնէ զմարդ որդի Աստուծոյ, նա կարող է զիս ի ձեռն ձեր առնել քրիստոնեայ : Արիք մկրտեցէք զիս ի ջրհորս այս :

Եւ տեսեալ մանկանցն զհաւատս նորա եւ զյօժարութիւնն յարուցեալ մկրտեցին զնա, եւ ասեն . Դու Քրիստոս Աստուած մեր զոր ինչ ասեն քահանայքն ի ժամ լուսաւոր մկրտութեանն, կատարեա ի վերայ ծառայիս զոր մկրտեցաք յանուն Հօր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն . եւ անուանեցին Աբդլմսեհ որ թարգմանի ծառայ Քրիստոսի : Եւ համբուրեալ զնա նստան յուտել զհացս իւրեանց նովաւ հանդերձ : Եւ լուսաւորեցան
* A fol. 312 v° b.
երեսք նորա, եւ խրատէին մանկունքն * հաստատուն կալ ի հաւատսն : Եւ ծակեցին զականջս նորա եւ զինդս անցուցին ոսկիս զի մի եւս այլ դարձցի ի հրէութիւն :

Եւ իբրեւ երեկոյ եղեւ գնաց Ասեր ի տուն մօր իւրոյ, եւ տեսեալ մօրն զգինդսն յականջս նորա բախեաց զերեսս իւր եւ ասէ . Որդեակ զինչ է այդ, զի այդ ձեւ ծառայի

11 անուանեցին] կոչեցին B.

et Aser restait seul, car il n'avait pas de compagnon juif; il désirait se mêler aux enfants des chrétiens, et les pria de le prendre avec eux. Ceux-ci lui dirent : « Si tu deviens chrétien, nous te prendrons aussitôt avec nous. »

Aser répondit : « Il n'y a point de prêtre ici, et à la maison, j'ai peur de me faire baptiser ouvertement à cause de mon père et de mes frères; je crois au Christ qui par la main du prêtre, par l'eau et par l'esprit, rend l'homme fils de Dieu; Il est capable de me faire chrétien par votre main. Allons, baptisez-moi à ce puits-ci. »

Les enfants, ayant vu sa foi et son désir, se levèrent et le baptisèrent en disant : « Toi, Christ notre Dieu, accomplis ce que les prêtres disent au moment du baptême lumineux sur ce serviteur, qui est tien, et que nous avons baptisé au nom du Père, du Fils et du Saint-Esprit. » Et ils lui donnèrent le nom de Abdelmesih, qui se traduit : Serviteur du Christ. Ils l'embrassèrent et s'assirent pour prendre leur repas avec lui; son visage
* A fol. 312 v° b.
s'illumina et les enfants lui conseillèrent de * demeurer ferme dans la foi. Ils trouèrent ses oreilles et y passèrent des boucles en or afin qu'il ne retournât pas à la religion juive.

Lorsque le soir fut venu, Aser s'en alla à la maison de sa mère; celle-ci, apercevant les boucles à ses oreilles, se frappa le visage et dit : « Mon fils, qu'est-ce que cela? mais c'est la marque d'un serviteur. » Le saint raconta tout

է ։ Եւ պատմեաց սուրբն զամենայն մօր իւրոյ թէ որպէս եղեւ քրիստոնեայ ։ Եւ մայրն զամենայն բանս իւր պահէր ի սրտի իւրում ։

Եւ ետես սուրբն տեսիլ, եւ պատմեաց մօրն եւ ասէ. Էի ես եւ ամենայն Հրէայքն ի գուբ մի խաւարային եւ ժահահոտ լի հրով եւ ծծմբով, եւ երիտասարդ մի որոյ երեսքն փայլէին առաւել քան զճառագայթս արեգականն կալեալ զձեռանէ իմէ եհան զիս ի ժահահոտ գբոյն, եւ ասէ ցիս. Ես եմ Քրիստոս զոր հաւատացերն դու, զոր խաչեցին Հրէայքն ազգատոհմն տան հօր քո, որք կան ի գբին զոր տեսերդ ։ Եւ լուեալ մօրն առաւել հաստատեցաւ ի քրիստոնէութիւնն ։

Եւ յետ աւուրց արար հայրն նորա ճաշ Հրէիցն. կոչեցին եւ զծառայն Քրիստոսի եւ նա ոչ կամէր երթալ եւ տարան բռնութեամբ ։ Եւ իբրեւ տեսին զգինդն յականջս նորա, եւ լուան ի նմանէ եթէ քրիստոնեայ է, բարկացաւ հայրն իւր եւ ամենայն Հրէայքն, եւ կամէին անդէն ի սեղանն սպանանել զնա. եւ թողեալ զնա ծառայիցն * փախեաւ ։ Եւ հայրն առեալ զդանակն ի սեղանոյ անտի ընթացաւ զհետ նորա մինչեւ * A fol. 313 r° a. ի ջրհորն յորում մկրտեցաւ ։ Դարձաւ սուրբն եւ ասէ ցհայրն. Դարձիր ի տեղի քո եթէ աշակերտ ես Մովսէսի, զի շաբաթ է. ապա եթէ քրիստոնեայ ես մի՛ մխեր զձեռն քո յարիւն ծառայի նորա ։

Իսկ նա գազանաբար յարձակեցաւ ի վերայ նորա, եւ սպան զնա եւ ինքն յիմարեալ գնաց ի տուն իւր եւ ասաց եթէ. Սպանի զԱսեր ։ Եւ արարին սուգ մեծ ի վերայ նորա ։

à sa mère et de quelle façon il était devenu chrétien. Sa mère garda toutes ses paroles dans son cœur.

Le saint eut une vision et la raconta à sa mère, en disant : « Je me trouvais, moi et tous les Juifs, dans un puits obscur et puant, plein de flammes et de soufre, lorsqu'un jeune homme, dont le visage brillait plus que les rayons du soleil, m'ayant pris par la main, m'enleva hors de ce puits puant et me dit : « Je suis le Christ en qui tu as cru, qu'ont crucifié les Juifs, de la « race de la maison de ton père, eux qui sont dans le puits comme tu l'as vu. » Sa mère, après avoir écouté, se raffermit davantage dans le christianisme.

Après des jours, son père donna un dîner aux Juifs; le serviteur du Christ y fut aussi invité, mais comme il refusait de s'y rendre, on l'y amena de force. Lorsqu'on aperçut les boucles à ses oreilles et qu'on apprit de lui qu'il était chrétien, son père se mit en colère ainsi que tous les Juifs et ils voulurent le tuer à table même; les domestiques * le délivrèrent et il prit la * A fol. 313 r° a. fuite. Le père, saisissant un couteau sur la table, courut après lui jusqu'au puits où il avait été baptisé. Le saint, s'étant retourné, dit à son père : « Retourne chez toi si tu es le disciple de Moïse, car c'est le sabbat; mais si tu es chrétien, ne plonge point ta main dans le sang du serviteur (du Christ). »

Mais il tomba sur lui férocement et le tua, puis, devenu fou, il rentra chez lui et dit : « J'ai tué Aser. » On fit un grand deuil sur lui. Le lendemain

Եւ ի վաղիւն եկին մանկունքն որ մկրտեցին զնա եւ տեսին զնա սպանեալ եւ մեծ կոծով թաղեցին զնա եւ գային յամենայն աւուր եւ լային :

Եւ վաճառականք ոմանք ի գիշերի ընդ այն անցանելով տեսին լոյս մեծ ի վերայ գերեզմանին, եւ բարձեալ զնշխարս նորա տարան յաշխարհն իւրեանց, եւ անդ բազում սքանչելիս կատարէր : Եւ կին առն որ տարաւ զսուրբն ամուլ էր, եւ յղացաւ եւ ծնաւ որդի : Եւ սուրբն երեւեալ ասէ. Դիր զանուն մանկանդ Աբդլմսեհ, զի այդ է անուն իմ :

Եւ հայր նորա դիւահարեցաւ, եւ ուտէր զմարմին իւր չարաչար. եւ տարեալ զնա ի գերեզման սրբոյն բժշկեցաւ, եւ հաւատաց ամենայն տամբ իւրով եւ մկրտեցաւ :

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Աբդլմսեհ Յուլիսի ԺԴ :

Հրոտից Թ· եւ Յուլիսի ԺԵ : Վկայութիւն սրբոյն Կիւրակոսի եւ մօր նորա Յուղիտեայ :

* A fol. 313 r° b. * Այս երանելի կինս Յուղիտայ էր ի քաղաքէն յԻկոնիոյ յաւուրս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի. եւ վասն զի հալածէին անդ զքրիստոնեայսն առեալ զորդին իւր գնաց ի Սելեւկիա, որում անուն էր Կիւրակոս, ամաց երից եւ անդ նոյնպէս բռնու-

1 սպանեալ] արեամբ զանգեալ B || 5 յղացաւ] առժամայն *add.* B || 6 որդի] արու *add.* B· — երեւեալ] յանուրջս *add.* B || 9 Աբդլմսեհ] Հրոտից Ը եւ *add.* || 10 Վկայութիւն... Յուղիտեայ] Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ շնորհալի եւ պայծառ վկայիցն Կիրակոսի տղայոյ եւ մօր նորա Յուղիտայ սրբուհւոյ որ ի Տարսոն կատարեցաւ B || 11 երանելի] եւ որդեսէր *add.* B.

les enfants qui l'avaient baptisé, étant venus au puits, le trouvèrent tué; ils l'enterrèrent avec de grands sanglots, et ils continuèrent à y venir tous les jours pour y pleurer.

Des marchands qui passèrent par là de nuit aperçurent une grande lumière sur la tombe, et ayant enlevé ses reliques, les emportèrent dans leur pays où elles opérèrent de nombreux prodiges. La femme d'un de ces hommes qui avaient emporté le saint, était stérile; elle conçut et mit au monde un fils. Le saint, lui ayant apparu, lui dit : « Donnez à l'enfant le nom de Abdelmesih, car c'est mon nom. »

Son père devint possédé du démon, il se rongeait cruellement les chairs; on l'emmena sur la tombe du saint et il fut guéri; il se convertit avec toute sa famille et se fit baptiser.

Le saint martyr du Christ Abdelmesih fut martyrisé le 14 juillet.

9 HROTITS, 15 Juillet.

Martyre de saint Ciryce et de sa mère Juliette.

* A fol. 313 r° b. * Cette bienheureuse femme Juliette (*Houlitay*) était de la ville d'Iconium, aux jours de Dioclétien, l'empereur idolâtre; et comme on y persécutait les chrétiens, elle prit son fils, dont le nom était Ciryce (*Kiurakos*), âgé de trois

թիւն էր անօրինացն ի վերայ քրիստոնէիցն. վասն որոյ ելեալ անտի գնայ որդւովն ի Տարսոն քաղաքն Կիլիկեցւոց յորում էր Աղեքսանդրոս դատաւորն, եւ դառնութեամբ նեղէր եւ հալածէր զքրիստոնեայսն :

Եւ գիտացին քաղաքացիքն վասն Յուղիտեայ եթէ քրիստոնեայ է կալան զնա որդւովն իւրով Կիւրակոսիւ, եւ տարան առ Աղեքսանդրոս. եւ նա առ զմանուկն ի մօրն գրկացն եւ նստոյց ի ծունկս իւր : Եւ զՅուղիտա տանջէին ուժգին գաւազանօք, եւ Կիւրակոս հայէր ի մայրն իւր եւ տեսանէր ի հարուածս զմայրն եւ լայր : Եւ Աղեքսանդրոս ողոքէր եւ համբուրէր, եւ տղայն յաղաղակելոյ եւ ի լալոյ ոչ դադարէր, եւ տարածեաց զոտսն եւ եհար զդատաւորն ի կողսն, եւ յոյժ ցաւեցոյց նմա : Եւ նա բարկութեամբ կալեալ զոտից տղային ընկէց ընդ աստիճանսն ի խոնարհ եւ գարկաւ գլուխն ի վէմ եւ ջախջախեցաւ եւ հեղաւ արիւնն, եւ հրեշտակ Տեառն աւանդեաց զհոգին : Եւ տեսեալ մօրն մեծաւ գոհութեամբ փառս ետ Աստուծոյ, եւ ուրախ եղեւ ընդ * մարտիրոսութիւն որդւոյն : * A fol. 313 v° a.

2 Աղեքսանդրոս] չար *add.* B || 5 Աղեքսանդրոս] եւ նա զազանային դէմս եցոյց նմա մռմռեալ, եհարց. եւ խոստովան եղեւ զՔրիստոս համարձակ Յուղիտա եւ Կիրակոս որդին իւր *add.* B || 6 գաւազանօք ... լայր] յոյժ յոյժ եւ այլ կտտանօք : Եւ Կիրակոս ոչ կարէր մնալ անդ այլ հայէր ի մայրն իւր եւ ասէր թէ. Քրիստոնեայ եմ, մեծաձայն լալով, որպէս եւ մայրն իւր ասէր եւ աղաղակէր զանունն Քրիստոսի, եւ բազում իմաստուն պատասխանիս տայր դատաւորին որպէս քրիստոնեայ. թէպէտ եւ տանջէր զնա եւ հարկանէր խիստն, այլ նա խօսէր ոչ միայն ի քարոզութենէ մօրն այլ եւ ի շնորհացն Աստուծոյ, որ անասնոց խօսել ետ, եւ ի վիմէն ջուր բղխեցոյց, եւ ի բերանոյ մանկանց անմեղաց կատարեաց զօրհնութիւն : Այլ եւ զի տեսանէր ի հարուածս զմայրն, եւ լայր դառնապէս B || 10 բարկութեամբ] բարկացաւ ի վերայ տղային B || 11 արիւնն] եւ ուղեղն *add.* B || 12 զհոգին] ի ձեռս Աստուծոյ *add.* B.

ans, et se rendit à Séleucie. Là aussi les impies faisaient violence aux chrétiens; c'est pourquoi elle partit de là avec son fils et se rendit à la ville de Tarse en Cilicie, où se trouvait le juge Alexandre, qui tourmentait cruellement les chrétiens et les persécutait.

Les habitants de la ville, ayant appris que Juliette était chrétienne, la saisirent avec son fils Ciryce et la conduisirent auprès d'Alexandre. Celui-ci prit l'enfant des bras de sa mère et le fit asseoir sur ses genoux. On tortura cruellement Juliette à coups de bâtons, et Ciryce, qui voyait sa mère rouée de coups, se mit à pleurer. Alexandre le calmait et l'embrassait, mais l'enfant ne cessait de crier et de pleurer; il agita ses pieds et en frappa le juge dans les côtes en lui causant beaucoup de douleurs. Celui-ci, irrité, saisit l'enfant par les pieds et l'ayant jeté à bas des degrés, la tête heurta contre une pierre et se brisa, le sang coula et l'ange du Seigneur recueillit son âme. Sa mère, l'ayant vu, rendit gloire à Dieu avec beaucoup d'actions de grâces et se sentit heureuse dans le * martyre de son fils. * A fol. 313 v° a.

Իսկ զսրբուհին Յուղիտա յետ բազում չարչարանացն հրամայեաց զի հատցեն զգլուխն : Եւ նա աղօթեաց առ Աստուած եւ ասէ. Գոհանամ զքէն Տէր Աստուած իմ որ առաջի աչաց իմոց նախ զորդին իմ կոչեցեր առ քեզ, եւ ազատեցեր զնա յայսմ չարամարդ եւ ունայն կենցաղոյս, եւ դասեցեր ընդ սուրբս քո : Ընկալ եւ զիս զանարժան աղախինս քո եւ այսպիսի մեծ շնորհաց հանդիպեցո՛ զիս, զի եւ ես ընդ նմա դասեցայց : Եւ յորժամ կատարեաց զաղօթսն հատին դահիճքն զգլուխ նորա Յուլիսի ԺԵ : Եւ աղախնայքն իւր առին զմարմինն եւ թաղեցին ընդ սրբոյն Կիւրակոսի նահատակին Քրիստոսի :

Հրոտից Ժ եւ Յուլիսի ԺԶ . Վկայութիւն ճգնաւոր եւ սուրբ կրօնաւորացն Պատերմութէոսի եւ Կոպրի եւ Աղեքսանդրոսի :

Յաւուրս ուրացողին Յուլիանոսի պիղծ արքային ի Ռումա Եգիպտացւոց էին ճգնաւոր կրօնաւորքս. եւ լուր եղեւ յականջս արքային եթէ սուրբ կրօնաւոր միայնակեացք են Քրիստոսի հաւատովն ի լերինն, եւ զբազումս խափանեն ի զոհելոյ :

1 յետ բազում չարչարանացն] չարչարեաց զանազան եւ սաստիկ տանջանօք ընդ երկար եւ յոլով յոյժ. եւ նա ոչ հաւանեցաւ զոհել կռոց կամ ուրանալ զՔրիստոս : Եւ հրամայեաց դատաւորն եւ կախեցին զնա, եւ քերէին եղնգամբք ուժգին, եւ յեռացեալ ձիթոյ կաթսայիցն արկանէին ի վերայ վիրացն. եւ բարբառ աղաղակէր առ Յուղիտա. Ողորմեա՛ անձին քո եւ զոհեա՛ եւ զերծի՛ր ի տանջանաց : Եւ սուրբն ասէ. Ես կռոց որ դեւք են ոչ զոհեմ, այլ պաշտեմ զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին : Եւ բարկացեալ դատաւորն B — հատցեն] սրով *add.* B || 6 նորա] Հրոտից Թ եւ *add.* B || 7 թաղեցին] ընդ որդին իւր *add.* B — Կիւրակոսի] ամբիծ պատանւոյն եւ *add.* B || 10 Աղեքսանդրոսի] զօրականին *add.* B || 12 սուրբ] երկու B.

(Le juge), après avoir infligé de nombreuses tortures à sainte Juliette, ordonna de lui trancher la tête. Elle pria Dieu en disant : « Je te rends grâce, Seigneur, mon Dieu, d'avoir d'abord appelé mon fils à Toi, devant mes yeux, et de l'avoir délivré de cette vie vaine à l'humanité méchante et de l'avoir classé parmi les saints. Reçois-moi aussi, ton indigne servante, et rends-moi digne d'une aussi grande grâce, pour que je prenne rang avec lui. » Lorsqu'elle eut achevé la prière, les bourreaux lui tranchèrent la tête, le 15 juillet. Ses servantes prirent son corps et l'inhumèrent avec le saint martyr du Christ, Ciryce.

10 HROTITS, **16 Juillet.**

Martyre des ascètes et saints moines Patermouthios, Copri et Alexandre.

Ces moines ascètes vivaient aux jours de Julien l'Apostat, l'empereur impie, à Rouma d'Égypte. On fit parvenir aux oreilles de l'empereur qu'il se trouvait dans la montagne de saints moines cénobites, fidèles au Christ, qui empêchaient beaucoup de gens d'immoler.

Եւ յորժամ երթայր ի Պարսիկս ի պատերազմ անց ընդ կողմանս * Եգիպտացւոց, առաքեաց զօրականս ի լեառն իջուցանել զնոսա եւ կացուցին առաջի : Եւ նա ասէ ցնոսա. Պաշտեցէք զաստուածսն մեր եւ զոհեցէք նոցա : Եւ սուրբքն նզովեցին զկուռսն եւ զՔրիստոս խոստովանութեամբ օրհնեցին : * A fol. 313 v° b.

Ասէ թագաւորն ցՊատերմութէոս. Որչափ ամաց քահանայ իցես : Եւ նա ասէ. Եօթանասուն եւ հինգ : Եհարց եւ ցԿոպրի. Եւ դու որչափ ամաց իցես : Եւ նա ասէ. Քառասուն եւ հինգ : Հրամայեաց եւ հանին զքահանայսն արտաքս եւ կոչեաց առանձինն զԿոպրի եւ սկսաւ ողոքանօք բարիս խոստանալ, եւ դարձեալ խստութեամբ եւ սպառնալեօք հաւանեցոյց զնա զոհել կռոցն :

Եւ լուաւ Պատերմութէոս եթէ յանձն էառ հաւատալ ի կուռսն եւ անց զպատուիրանաւքն Աստուծոյ, եդեալ ծունր աղաչէր զԱստուած վասն նորա զի մի կորուսանիցէ զայնչափ ժուժկալութիւն ճգնութեանն :

Տարան եւ զնա առաջի թագաւորին, եւ տեսանէ զԿոպրի մերձ առ թագաւորն պայծառ եւ պատուական հանդերձիւք, հայեցաւ ի նա եւ ասէ. Վա՜յ քեզ եղկելի եւ թշուառական Կոպրի, որ եղեր աղբ եւ տիղմ, եւ հալածեցեր ի քէն զհրեշտակս Աստուծոյ եւ խառնեցար ընդ դեւսն. եւ յիշեցոյց նմա զառաջին աստուածային վարսն եւ զանոխակալ մարդասիրութիւնն Աստուծոյ յապաշխարողս : Եւ * առժամայն զղջացաւ * A fol. 314 r° a.

7 եւ հանին] հանել B || 11 ծունր] յերկիր *add.* B || 16 աստուածային վարսն *om.* B.

Lorsqu'il partit en guerre en Perse, il passa par ces contrées * de l'Égypte et expédia des soldats à la montagne, pour les en faire descendre et les faire comparaître devant lui. Il leur dit : « Adorez nos dieux et immolez-leur. » Les saints anathématisèrent les idoles, confessèrent et bénirent le Christ. * A fol. 313 v° b.

L'empereur dit à Patermouthios : « Depuis combien d'années es-tu prêtre? » Il répondit : « Depuis soixante-quinze. » Il demanda à Copri : « Et toi, depuis combien d'années l'es-tu? » Il répondit : « Quarante-cinq. » Il ordonna de faire sortir les prêtres et rappela seul Copri; il se mit ensuite à lui promettre des biens avec supplications; puis, de nouveau, (le traitant) avec dureté et menaces, il lui persuada d'immoler aux idoles.

Patermouthios, apprenant qu'il avait accepté de croire aux idoles et avait transgressé les commandements de Dieu, se mit à genoux et pria Dieu pour lui, pour qu'il ne perdît point (le fruit) de tant de constance et d'ascétisme.

On l'introduisit, lui aussi, devant l'empereur, et ayant aperçu Copri aux côtés de l'empereur, resplendissant et vêtu de riches vêtements, il le regarda et dit : « Malheur à toi, malheureux et misérable Copri, toi qui es devenu fumier et boue, qui as chassé de toi les anges de Dieu et qui t'es mêlé aux démons. » Et il lui rappela sa précédente conduite divine et la miséricorde, sans rancune, de Dieu envers les pénitents. * Copri eut aussitôt des regrets, * A fol. 314 r° a.

Կոպրի եւ նայեցաւ յերկինս եւ ասէ. Ոչ եւս լինեմ Յուլիանոսական, այլ եմ անարժան ծառայ Քրիստոսի. եւ անիծանէր զթագաւորն եւ զկուռսն :

Եւ բարկացաւ թագաւորն յոյժ եւ հրամայեաց երկաթի հրացեալ ակցօք խարել զլեզուն. եւ տարան զնոսա զի տարածեսցեն ի վերայ շանթից. եւ տեսեալ Կոպրի սակաւ մի երկեաւ : Ասէ Պատերմութէոս. Մի երկնչիր, որդեակ, յիշեա որ զքսան օր ի լերինն անսուաղ կացեր եւ ոչ կերար եւ ոչ արբեր, եւ զքառասուն օր յոտն կացեր եւ ամենեւին ոչ նստար, եւ տարածեցար ի վերայ խաչին զերկոտասան օր, եւ այլ բազում ճգնութիւնս յիշեցոյց նմա եթէ որպէս այնչափ նեղութիւնս կրեցեր վասն երկնից արքայութեանն եւ Աստուած պահեաց զքեզ : Եւ անկան երկոքին ի շանթսն, եւ առժամայն հուրն շիջաւ եւ շանթքն ցրուեցան :

Եւ տեսեալ արքային եթէ ոչ այրեցան հրամայեաց եւ բորբոքեցին հուր զի արկցեն անդ զսուրբսն. եւ տեսեալ մի ոմն ի զօրականացն որոյ անուն էր Աղեքսանդրոս հաւատաց ի Քրիստոս եւ գնաց ընդ սրբոցն, եւ յառաջ ինքն եմուտ ի հնոցն, եւ ոչինչ վնասեցան ի հրոյն, եւ գոհացան եւ փառաւորեցին զԱստուած :

* A fol. 314 r° b. Հանին ի հրոյն զնոսա եւ բռնադատեցին ուրանալ զՔրիստոս եւ զոհել * կռոցն,

3 թագաւորն] Յուլիանոս B || 6 ի լերինն . . . զքառասուն օր *om.* B || 10 եւ առժամայն : . . ոչ այրեցան] եւ զօրութեամբն Քրիստոսի այրեցան B || 11 հրամայեաց] թագաւորն *add.* B || 13 եւ ոչինչ : . . զԱստուած] եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած. մտին եւ նոքա ի հնոցն եւ խնամօքն Աստուծոյ մնացին կենդանի B || 15 ուրանալ զՔրիստոս եւ *om.* B.

regarda le ciel et dit : « Je ne suis plus le partisan de Julien, mais je suis l'indigne serviteur du Christ. » Et il injuria l'empereur et les idoles.

L'empereur, fort irrité, ordonna de lui brûler la langue avec des pincettes de fer rougies. Ensuite on les emmena pour les étendre sur des braises, à la vue desquelles Copri eut un peu peur. Patermouthios lui dit : « Ne crains pas, mon fils. Rappelle-toi que tu es resté vingt jours dans la montagne à jeûn, sans rien manger ni boire, et quarante jours debout sans jamais t'asseoir; que tu es resté étendu sur la croix douze jours. » Il lui rappela encore beaucoup d'autres pénitences. « Tant de souffrances que tu as endurées, (lui dit-il), pour le royaume du ciel, toi que Dieu a gardé. » Et tous les deux se jetèrent sur les braises; mais les flammes s'éteignirent aussitôt et les braises se dispersèrent.

L'empereur, voyant qu'ils n'avaient pas été brûlés, ordonna d'allumer un grand feu pour y jeter les saints. A cette vue, un des soldats, dont le nom était Alexandre, crut au Christ et accompagna les saints; il entra le premier dans la fournaise, mais ils ne souffrirent aucunement du feu, rendirent grâces à Dieu et Le glorifièrent.

On les fit sortir des flammes et on les pressa de renier le Christ et

եւ յորժամ ոչ կարացին հաւանեցուցանել զնոսա հրամայեաց զի հատցեն զգլուխս նոցա : Եւ յորժամ տանէին ի կատարումն ձայն եկեւ յերկնից առ Պատերմութէոս եւ ասէ. Դու ի տղայութենէ հաճոյ եղեր ինձ, թողից զմեղսն Կոպրի զի դարձաւ ի զղջումն, դարձուցից եւ ես զբարկութիւնս իմ : Եկեսջիք առ իս եւ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն երկնից : Եւ այնպէս կատարեցան սրով վկայքն Քրիստոսի եւ ճգնաւոր կրօնաւորքն Պատերմութէոս եւ Կոպրի եւ Աղեքսանդրոս Յուլիսի ԺԶ :

Հրոտից ԺԱ եւ Յուլիսի ԺԷ: Վկայութիւն Աթանագինի եպիսկոպոսին Պիտաքտոյ եւ տասն աշակերտաց իւրոց : Զորոյ նշխարսն տարաւ սուրբն Գրիգոր ի Հայս :

Յաւուրս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի սուրբն Աթանագինէս քրիստոնեայ էր ի քաղաքէն Սեբաստիոյ, եւ ունէր որդի յամուսնոյ իւրոյ, որոյ անուն էր Պատրոփիլոս, որ թարգմանի հայրասէր, որ եւ յետոյ քահանայ եւ քորեպիսկոպոս եղեւ :

Եւ ի միում աւուր եսես պատանի մի ընկեցեալ կապանօք ի դուռն այրի մի յորում բնակեալ էր վիշապ. քանզի բնակիչք տեղւոյն վասն ահի վիշապին մատուցանէին նմա պատանի մի, վասն զի սպառեալ * էր զամենայն անասունս տեղւոյն. Եւ երթեալ * A fol. 314 v° a.

2 Եւ յորժամ տանէին . . . երկնից *om.* || 6 եւ Աղեքսանդրոս] Հրոտից Ժ եւ B 7 Վկայութիւն] սուրբ քահանայկային *add.* B || 9 կռապաշտ] ամբարիշտ B || 10 որդի] որ էր *add.* B || 11 թարգմանի] է ի հայ լեզու B.

d'immoler * aux idoles; mais comme on ne pouvait les persuader, (l'empereur) ordonna de leur trancher la tête. Pendant qu'on les emmenait pour l'exécution, une voix du ciel se fit entendre à Patermouthios, qui disait : « Tu m'as été agréable dès ton enfance; j'absous les péchés de Copri puisqu'il est revenu à la contrition, je détournerai moi aussi de lui ma colère. Venez à moi et héritez du royaume des cieux qui vous est préparé. » C'est ainsi que furent martyrisés par le glaive les martyrs du Christ et moines ascètes Patermouthios, Copri et Alexandre, le 16 juillet. * A fol. 314 r° b.

11 HROTITS, 17 Juillet.

Martyre d'Athénogène, évêque de Pédachtoé, et de ses dix disciples.
Ses reliques furent apportées en Arménie par saint Grégoire.

Saint Athénogène était chrétien de la ville de Sébaste, aux jours de Dioclétien, l'empereur idolâtre. Il avait, de sa femme, un fils dont le nom était Patrophilos, nom qui se traduit : qui aime le père; et qui, par la suite, devint prêtre et chorévêque.

Un jour (Athénogène) aperçut un jeune homme chargé de liens, qui avait été jeté à l'entrée d'une grotte où était terré un dragon, car les habitants de la localité, par crainte du dragon, lui sacrifiaient un jeune homme, après

որբոյն եղոյծ զպատանին եւ ի միասին աղաչէին զԱստուած ։ Եւ վիշապն յայրէն եւ գնաց սուրբն Աթանագինէս աներկիւղ համարձակութեամբ ընդդէմ արարեալ զնշան սրբոյ խաչին, եհար գաւազանաւն իւրով զգլուխ վիշապին եւ առժամայն սատակեցաւ ։

Եւ լուաւ Սեբաստիոյ եպիսկոպոսն զսքանչելի գործն զոր արար Աթանագինէս, ձեռնադրեաց զնա եպիսկոպոս Պիտաքտիոյ ։ Եւ երթեալ ի վանսն իւր ել ընդ առաջ իւր եղն մի զոր ինքն սնուցեալ էր, երկիր եպագ նմա, եւ նա օրհնեաց զնա եւ խնդրեաց յԱստուծոյ զի մի ըմբռնեսցի նա ի ձեռս որսողաց, այլ յամենայն ամի տացէ զորթ իւր յաւուր յիշատակի նորա ի զենումն պատարագի. եւ մինչեւ ցայսօր եղն մի ընթանայ ի լեառնէն եւ իջանէ յեկեղեցին, եւ մատուցանեն զնա պատարագ յանուն սրբոյն Աթանագինէի ։

Եւ լուաւ դատաւորն Ագրիկողայոս վասն Աթանագինէի եթէ քրիստոնեայ է, առաքեաց զօրականս եւ տարան զնա տասն աշակերտօքն առաջի, եւ յոյժ բռնադատեաց զնա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Ասէ Աթանագինէս. Մեք քրիստոնեայք եմք, ծնեալք եւ սնեալք հաւատովք, եւ ես եմ վաթսուն ամաց, քսան ամ * եպիսկոպոս
* A fol. 314 v° b. եմ, եւ այլ հաւատ պաշտել ոչ կարեմք ։ Որպէս եմք քրիստոնեայք մեռանիմք քրիստոնեայք ։

2 ընդդէմ *om.* B || 6 Պիտաքտիոյ] Պիտախտոնի B || 7-11 Եւ երթեալ ... Աթանագինէի *om.* B || 13 առաջի] որոց անուանքն են այսոքիկ. Թէոփիլոս, Թէոդորոս, Մաքսիմոս, Պատրոփիլոս, Հերքիոս, Կլիմիկոս, Արիստոն, Հուեգինոս, եւ այլքն *add.* B.

* A fol. 314 v° a. qu'il avait épuisé * tous les animaux de l'endroit. Le saint, s'étant approché, délia le jeune homme et ils prièrent Dieu ensemble. Le dragon étant sorti de la grotte, saint Athénogène se porta sans crainte, hardiment, au-devant de lui, fit le signe de la sainte croix et frappa de son bâton sur la tête du dragon, qui périt aussitôt.

L'évêque de Sébaste, ayant appris l'action miraculeuse qu'Athénogène venait d'accomplir, le sacra évêque de Pidachtoè (*Pitakhtioy*). Comme il allait à sa demeure, un cerf qu'il avait élevé vint au-devant de lui et se prosterna devant lui; il le bénit et demanda à Dieu qu'il ne fût jamais pris par des chasseurs, mais qu'il donnât chaque année son petit, en immolation du saint sacrifice, le jour de sa commémoration. Et jusqu'aujourd'hui un cerf accourant de la montagne descend à l'église, et on l'offre en sacrifice au nom de saint Athénogène.

Le juge Agricolaus, ayant appris qu'Athénogène était chrétien, envoya des soldats qui le lui amenèrent avec ses dix disciples; il les pressa beaucoup de renier le Christ et d'immoler aux idoles. Athénogène lui dit : « Nous sommes chrétiens, nous sommes nés et nous avons été élevés dans la foi; je
* A fol. 314 v° b. suis âgé de soixante ans, je suis évêque * depuis vingt ans, nous ne pouvons avoir d'autre foi. Comme nous sommes chrétiens, nous mourrons chrétiens. »

Եւ հրամայեաց սրով սպանանել զնոսա ։ Եւ յորժամ տանէին զնոսա ի սպանումն հանդիպեցաւ կին մի Եւսեբի անուն, աղաչեաց զի թողութիւն գտցէ մեղաց իւրոց ։ Ասէ ցնա սուրբն. Եթէ զմարմինս իմ տարցես եւ թաղեսցես ի տապանն զոր ես շինեցի եւ եդի զնշխարս սրբոց մարտիրոսացն Թէոփրաստոյ, Պատրոփիլոյ, Կլէոնիկոյ եւ Ռիգինոսի, եւ ես աղաչեցից վասն քո զԱստուած եւ թողցէ քեզ զմեղսն քո ։

Եւ յորժամ գնացին ի տեղին աղօթեաց այսպէս. Տէր Աստուած, ընկա՛լ զհոգիս մեր խաղաղութեամբ, եւ որք զյիշատակս մեր կատարեն կատարեա՛ զխնդրուածս նոցա պարգեւելով նոցա յողորմութենէդ քումմէ ։ Եւ եկեւ ձայն յերկնից որ ասէ. Ուրախ լեր քաջ զօրական իմ Աթանագինէս զի այսօր ընդ իս իցես աշակերտօքդ յարքայութեան իմոյ ։ Եւ ամենայն ոք որ կատարէ զյիշատակս քո եւ ընթեռնու զվկայութիւնս քո ի տօնի ձերում կատարեցից զխնդրուածս նոցա եւ ոչ յիշեցից զմեղս նոցա ։ Եւ ապա հատին զգլուխս նոցա Յուլիսի ԺԷ, եւ զմարմինսն ընկեցին ի հուր ։ Եւ եկեալ Եւսեբիայ ի տեղին ծառայիւքն իւրովք եհան զմարմինս * սրբոցն ի հրոյն. եւ ի մարմնոյ * A fol. 315 rº a.
սրբոյն Աթանագինեայ մազ մի ոչ կորեաւ, եւ եբարձ ի սայլն եւ տարաւ ի տապանն ուր սուրբն հրամայեաց, եդիր պատուով ընդ այլ նշխարացն ։

Եւ յաւուրս տօնի նոցա ի տեղին յայն ճանճ ոչ երեւի, եւ ամենայն ոք որ չար երաղ

6 այսպէս] եւ ասէ B || 7-11 եւ որք զյիշատակս ... զմեղս նոցա *om.* B || 12 զգլուխս նոցա] Հրոտից ԺԱ եւ *add.* B || 13 եւ ի մարմնոյ .. ոչ կորեաւ *om.* B || 16 — p. 1784, l. 2 Եւ յաւուրս ... հայցմամբ նորին *om.* B.

(Le juge) ordonna de les tuer par le glaive. Pendant qu'on les emmenait pour être mis à mort, une femme, du nom d'Eusébie, les ayant rencontrés, implora le pardon de ses péchés. Le saint lui dit : « Si tu emportes mon corps et si tu l'inhumes dans le tombeau que j'ai fait construire et dans lequel j'ai déposé les restes des saints martyrs Théophraste, Patrophile, Cléonice et Riginus, je prierai Dieu pour toi et Il t'absoudra de tes péchés. »

Lorsqu'ils furent arrivés à l'endroit (de l'exécution), il pria en ces termes : « Seigneur Dieu, reçois notre âme en paix, et de tous ceux qui accompliront notre commémoration exauce les prières, en les favorisant dans Ta miséricorde. » Une voix du ciel se fit entendre qui dit : « Réjouis-toi, mon vaillant soldat Athénogène, car tu seras aujourd'hui avec moi dans mon royaume avec tes disciples. J'exaucerai les prières de tous ceux qui célébreront ta commémoration et liront ton martyre, le jour de votre fête, et je ne me souviendrai plus de leurs péchés. » On leur trancha ensuite la tête, le 17 juillet, et on jeta leur corps dans les flammes. Eusébie étant venue, accompagnée de ses domestiques, sortit des flammes les corps* des saints; or, pas un cheveu * A fol. 315 rº a.
n'était perdu du corps de saint Athénogène. Puis les ayant chargés sur un char, elle les emporta au tombeau selon ce que le saint lui avait ordonné, et elle les déposa avec honneurs auprès des autres reliques.

Au jour de leur fête, en cet endroit-là, aucune mouche ne paraît et qui-

տեսանէ եւ աղաչէ զԱստուած յիշելով զանուն սրբոյն Աթանագինեայ երազն ի բարի կատարի հայցմամբ նորին :

Եւ երեւեցաւ սուրբն Եւսեբիայ եւ ասաց եթէ եթող Աստուած զմեղս նորա : Եւ յետոյ եղեւ սքանչելի կին եւ աստուածահաճոյ որ եւ զբազումս ի կռապաշտութենէ դարձոյց յաստուածպաշտութիւն :

Հրոտից ԺԲ եւ Յուլիսի ԺԸ : Վկայութիւն սրբուհւոյ կուսին Մարիանէի :

Կոյս վկայն Քրիստոսի Մարիանեա էր ի քաղաքէն Անտիոքայ Պիսիդեայ, դուստր քրմի կռոցն, որոյ անուն էր Եդեսիոս. եւ վասն զի էր ինքն բարեպաշտ հաւատով կացուցին առաջի եպարքոսին Ողիբրիոյ : Եւ բազում անգամ քննեցին եւ ուժգին տանջեցին, եւ ոչ կարացին տալ նմա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն :

Արկին զնա ի բանդ եւ մինչդեռ աղօթէր սուրբն եղեւ շարժ, եւ սատանայ ի կեր-
* A fol. 315 r° b. պարանս վիշապի լեալ ել յանկիւնէ բանդին, եւ էին պատեալ *ի պարանոց վիշապին բազմութիւն օձից, եւ շնչէր եւ դիմէր ի վերայ աղաւնոյն Աստուծոյ, եւ ժահահոտութիւն յոյժ ելանէր ի նմանէ : Եւ տեսեալ Մարիանեայ երկեաւ եւ առեալ փոքր փայտ

3 Եւսեբիայ] ի տեսլեան *add.* B || 4 կռապաշտութենէ... յաստուածպաշտութիւն] կռապաշտից դարձոյց յաստուածգիտութիւն : Եւ կեցաւ հաստատուն ողխրութիւն, զի յամենայն տարոջ պատարագօք եւ խնկօք եւ անոյշ իւղովք գայր ի տապան սրբոյն եւ պատուէր B.

conque, ayant fait un mauvais rêve, y prie Dieu en rappelant le nom de saint Athénogène, a son rêve changé en bien par son intercession.

Le saint apparut à Eusébie et lui dit que Dieu avait absous ses péchés. Elle devint ensuite une admirable femme, agréable à Dieu, et convertit beaucoup de personnes de l'idolâtrie au culte de Dieu.

12 HROTITS, 18 Juillet.

Martyre de la vierge sainte Marine.

La vierge martyre du Christ Marine (*Marianea*) était de la ville d'Antioche de Pisidie, fille d'un prêtre d'idoles, dont le nom était Édésios. Et comme elle était d'une foi pieuse, on l'introduisit devant l'éparque Olibrius. On l'interrogea à plusieurs reprises et on la tortura brutalement, mais on ne parvint pas à lui faire renier le Christ et à immoler aux idoles.

On la jeta en prison, et pendant que la sainte était en prières, il se fit un tremblement de terre et Satan, sous les apparences d'un dragon, bondit
* A fol. 315 r° b. d'un coin de la prison; le cou du dragon * entouré d'une multitude de serpents, il se lança en soufflant sur la colombe de Dieu, et une forte odeur puante se dégageait de lui. Marine, l'apercevant, eut peur; elle prit un petit morceau

արար խաչ աղաչելով զԱստուած ։ Եւ եկեալ վիշապն զերախն եւ եկուլ զնա, եւ խաչափայտն որ ի ձեռին իւրում էր պատառեաց զորովայնն վիշապին եւ սատակեաց զնա, եւ ել ամբողջ եւ անվնաս, եւ փայլեաց լոյս մեծ ի բանդին ։ Եւ ընդ առաւօտն հատին զգլուխ նորա Յուլիսի ԺԸ ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելի աղախնոյն Քրիստոսի Մակրինեայ ։

Երանելի կինս այս քոյր էր սրբոյն Բարսղի Կեսարացւոյ եւ Գրիգորի Նիւսացւոյ. այրի էր եւ կոյս, եւ երկաթեօք պատեալ զանձն մինչեւ յոսկերսն թաղեալ. եւ արտասուօքն շաղախէր կաւ եւ դնէր ի վերայ ցաւագնեալ աչաց մարդկան, եւ ի վէրս եւ ի խոցս վիրաւորելոց եւ առժամայն ողջանային ։ Եւ մեծ ճգնութեամբ եւ առաքինի վարուք եւ գործովք ըստ աստուածային պատուիրանացն կեցեալ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ։

[B * Վկայութիւն սուրբ եւ ամենապայծառ յաղթող վկային Մարինէ կուսին որ յԱնտիոք ։ * B p. 29 a.

Սուրբն Մարինէ էր դուստր Թեմետոսի կռապաշտ իշխանի. եւ էր նա միածին մօր իւրոյ. եւ ետուն զնա ի դայեակ որ էր քրիստոնեայ սնուցանել զնա ի գեօղ մի որ հնգետասան ասպարիսաւ հեռի էր յԱնտիոքայ Պիսիդեայ ։

de bois, en fit une croix, en priant Dieu. Le dragon ouvrit sa gueule et l'avala avec la croix de bois qu'elle tenait à la main; mais (cette croix) déchira le ventre du dragon et le fit mourir, puis elle sortit saine et sauve; une grande lumière jaillit dans la prison. Au matin on trancha la tête (de Marine), le 18 juillet.

En ce jour commémoration de la bienheureuse servante du Christ Macrine.

Cette bienheureuse femme était la sœur de saint Basile de Césarée et de Grégoire de Nysse; elle était veuve et vierge, avait son corps entouré de chaînes de fer enfoncées jusqu'aux os. De ses larmes elle pétrissait de l'argile qu'elle posait sur les yeux endoloris des gens et sur les plaies et les blessures des blessés qui guérissaient aussitôt. Après avoir vécu avec grand ascétisme, vertus et bonnes œuvres selon les commandements de Dieu, elle reposa en paix dans le Christ.

[B * Martyre de la sainte très illustre et victorieuse martyre la vierge Marine, à Antioche. * B p. 29 a.

Sainte Marine (*Marinè*) était la fille du prince idolâtre Thémétus; elle était fille unique de sa mère; on la donna à une nourrice chrétienne pour l'élever dans un village qui se trouvait à une distance de quinze lieues de la ville d'Antioche de Pisidie.

Եւ իբրեւ մեռաւ մայր նորա կամեցաւ լինել ընդ դայեկին եւ ոչ կամեցաւ երթալ առ հայր իւր. լաւ համարեցաւ զճշմարիտ հաւատն Քրիստոսի զոր խրատեալ եւ ուսեալ էր ի դայեկէն իւրմէ քան ստանալ զմեծութիւն հօր իւրոյ :

Եւ իբրեւ հնգետասանամեայ եղեւ լսէր զամենայն սրբոց զչարչարանսն զի յաւուրսն յայնոսիկ բազում լինէր հեղումն արեան սրբոցն վասն խոստովանելոյ զՔրիստոս Աստուած : Եւ յոգւոց հանեալ ասէր. Ո՜հ եթէ տանջէին զիս վասն Քրիստոսի, ընդունէի բազում տանջանս եւ չարչարանս զի հոգի իմ փրկեսցի ի յաւիտենական տանջանացն :

Յայնժամ առաքեցաւ ի Դէկոսէ արքայէ չար եւ ամբարիշտ եպարքոս մի, որում անուն էր Ողիմպիանոս, բազում զօրօք ի քաղաքն Անտիոք հալածել եւ սպանանել զքրիստոնեայսն : Եւ մատնեալ կացուցին զսրբուհի կոյսն Մարինէ առաջի բռնաւորին : Եւ սուրբն աղաղակէր. Տէր իմ, Յիսուս Քրիստոս մի թողուր զիս, եւ մի տար յապականութիւն զկուսութիւնս իմ որ ես սուրբ եւ անբիծ. եւ առաքեա ինձ իմաստութիւն, եւ ընդարձակեա զխորհուրդս մտաց իմոց զի համարձակութեամբ տաց պատասխանի անօրինիս այսորիկ :

Ողիմպիանոս ասէ. Յորմէ ազգէ ես դու ո՜վ աղջիկ, եւ կամ զինչ է անուն քո : Սուրբն ասէ. Առաջին անուն իմ քրիստոնեայ է, իսկ ի մարդկանէ Մարինէ կոչիմ : Ասէ ցնա բռնաւորն. Եւ զո՞ր Աստուած պաշտես : Մարինէ ասէ. Զարարիչն երկնի

Lorsque sa mère mourut, elle voulut rester auprès de sa nourrice, ne voulant pas retourner auprès de son père; elle préféra la vraie foi du Christ qu'elle avait apprise de sa nourrice et dans laquelle elle avait été élevée, plutôt que d'avoir la richesse de son père.

Lorsqu'elle eut quinze ans, elle apprit toutes les souffrances des saints, car en ces temps-là on faisait beaucoup couler le sang des saints qui avaient confessé le Christ Dieu. Elle disait en soupirant : « Oh! si on me torturait pour le Christ, j'accepterais bien des tortures et des souffrances pour que mon âme soit sauvée des tortures éternelles. »

A cette époque, un éparque méchant et impie, dont le nom était Olympianus, fut envoyé par l'empereur Dèce, avec beaucoup de troupes, à la ville d'Antioche pour y persécuter et tuer les chrétiens. On dénonça la vierge sainte Marine et on l'introduisit devant le tyran. La sainte criait : « Mon Seigneur Jésus-Christ, ne m'abandonne point et ne livre point ma virginité à la corruption, Toi qui es saint et sans tache. Envoie-moi la sagesse et élargis les idées de mon esprit, afin que je puisse répondre avec hardiesse à ce tyran. »

Olympianus lui dit : « De quelle nationalité es-tu, jeune fille, et quel est ton nom? » La sainte répondit : « Mon premier nom est « chrétienne », mais pour les hommes je m'appelle Marine. » Le tyran lui dit : « Et quel dieu

եւ երկրի, եւ զկենդանարարն ամենեցուն զՈրդի նորա միածին, եւ զՀոգին սուրբ որ յիս է բնակեալ ։

* Յայնժամ հրամայեաց Ոլոմպիոս մերկացուցանել զնա, եւ երկաթի գաւազանաւ * B
հարկանել մինչեւ երեւեսցին ոսկերք նորա ։ Իսկ նա առ ոչինչ համարեալ զտանջանսն, p. 29 b.
եւ համբարձեալ զաչս իւր յերկինս ասէ. Ի քեզ Տէր յուսացայ մի՛ կարօտ առներ զիս ի յուսոյ իմմէ, այլ նայեա՛ց յիս եւ ողորմեա՛ ինձ ։

Եւ այնչափ տանջեցին զսուրբն մինչեւ արիւն ելից զամենայն վայրսն ։ Եւ քարոզն աղաղակէր. Հաւատա՛ յաստուածսն եւ գտցես պարգեւս քան զամենայն հասակակիցս քո, զի տեսանեմք զքեզ մերկանդամ, եւ մի՛ զգեղեցկութիւն պատկերի քո ապականել տանջանօք ։

Իսկ երանելին Մարինէ ասէ. Ո՛վ չար խորհրդակիցք սատանայի արք եւ կանայք, ո՞չ իմանայք զի Աստուած օգնական է իմ զի թէպէտ եւ մարմին իմ մահկանացու տանջի, այլ հոգի իմ ընդ իմաստուն կուսանսն դատեսցի ։

Եւ բազում անգամ քննեցին եւ ուժգին տանջեցին, եւ ոչ կարացին տալ նմա ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Արկին զնա ի բանդ. եւ մինչդեռ աղօթէր յափշտակեցաւ մտօք եւ թուէր նմա եթէ շարժեցաւ տեղին յորում էր եւ ել վիշապ յանկիւնէ բանդին, ահագին եւ մեծ յոյժ եւ խոզաձեւ բաշով, նմանութիւն նորա որպէս

adores-tu? » Marine répondit : « Le créateur du ciel et de la terre, le vivificateur de tous, son Fils unique et le Saint-Esprit qui habite en moi. »

* Alors Olympianus (*Olompios*) ordonna de la mettre à nu et de la frapper * B
avec des verges de fer jusqu'à ce que ses os apparussent. Elle ne tint pas p. 29 b.
compte de ces tortures et, les yeux élevés au ciel, elle dit : « *J'ai espéré en toi, Seigneur,* ne me déçois pas dans mon espérance, *mais jette ton regard sur moi et aie pitié de moi* [1]. »

On tortura à tel point la sainte que la place fut tout inondée de son sang. Le hérault criait : « Crois aux dieux et tu obtiendras des présents plus que toutes les autres jeunes filles de ton âge, car nous te voyons nue, ne gâte pas la beauté de ta personne par des tortures. »

La bienheureuse Marine dit : « O méchants conseillers de Satan, vous hommes et femmes, ne comprenez-vous pas que Dieu est mon aide, car si mon corps mortel est torturé, mon âme sera jugée avec les vierges sages. »

On l'interrogea à plusieurs reprises et on la tortura brutalement, mais on ne parvint point à lui faire renier le Christ ni immoler aux idoles. On la jeta en prison, et pendant qu'elle y priait elle fut ravie dans son esprit et il lui parut que l'endroit où elle se trouvait avait tremblé, et qu'un dragon sortait d'un coin de la prison, terrible et énorme avec une crinière de sanglier,

1. Ps. xxx, 2; xxiv, 16 ou lxxxv, 16.

զոսկւոյ, եւ ատամունք նորա ի նմանութիւն փայլատականց, եւ աչք նորա իբրեւ զմարգարիտ փայլէին, եւ ընդ ռնգունս նորա հուր եւ ծուխ ելանէր, եւ լեզու նորա որպէս զարիւն, եւ էին պատեալ ի պարանոցն բազմութիւն օձից, շնչէր եւ գիմէր ի վերայ աղախնոյն Աստուծոյ եւ ժահահոտութիւն յոյժ ելանէր ի նմանէ, եւ շրջեցաւ պատեցաւ շուրջ զմարմնովն Մարինեայ ։

Եւ սուրբ կոյսն զարհուրեալ ահիւ մեծաւ աղօթէր առ Աստուած. որպէս ի զգուշութեան գոլով եւ ասէր. Որ անիմանալիդ ես Աստուած եւ դողան յահէ քումմէ ամենայն արարածք, որ հիմնեցուցեր զերկինս եւ զերկիր, որ զդժոխս աւերեցեր եւ խորտակեցեր

* B p. 30 a. զգլուխ * վիշապին եւ զզօրութիւն նորա, արդ նայեաց յիս եւ ողորմեա ինձ ։

Եւ մինչդեռ զաղօթսն կատարէր վիշապն անդնդային բացեալ զբերան իւր եկուլ զսուրբ կոյսն յորովայն. եւ նա տարածեաց զձեռս իւր ի նմանութիւն սրբոյ խաչին Քրիստոսի ի փոր վիշապին, առժամայն ընդ երկուս հերձաւ վիշապն, եւ ինքն ել ողջանդամ ի փորոյ նորա ։ Եւ փայլեաց լոյս մեծ ի բանդին, եւ տեսանէր զՏէրն փառաց որ ասէր ցնա. Ե՛կ Մարիանէ եւ հանգի՛ր յարքայութիւնս իմ, զի անապական եւ անթառամ պսակին արժանի եղեր ։

Յայնժամ ուշաբերեալ սրբուհի կոյսն ծանեաւ եթէ՝ սատանայ էր որ երեւեցաւ նմա ի նմանութիւն վիշապի, եւ բազմութիւնք օձից որ պատեալ էին զպարանոցաւ

aux reflets d'or; ses dents lançant des éclairs, ses yeux brillaient comme des perles, des flammes et de la fumée s'échappaient de ses narines et sa langue était couleur de sang; il avait son cou entouré d'une multitude de serpents; il se lança sur la servante de Dieu en soufflant, et une odeur puante se dégageait de lui; il tourna autour du corps de Marine et l'enveloppa.

La vierge sainte, effrayée et saisie d'une grande peur, pria Dieu, comme sur ses gardes, et dit : « Dieu, qui es incompréhensible, et devant qui tremblent toutes les créatures; Toi, qui as posé les fondements du ciel et de

* B p. 30 a. la terre, qui as détruit l'enfer et écrasé la tête * du dragon et sa puissance, *jette Ton regard sur moi* maintenant *et aie pitié de moi* [1]. »

Pendant qu'elle terminait sa prière, le dragon des abîmes ouvrit sa gueule et engloutit dans son ventre la vierge sainte, mais elle étendit ses mains en forme de la sainte croix du Christ dans le ventre du dragon, lequel se déchira aussitôt en deux morceaux, et elle sortit saine et sauve de son ventre. Une grande lumière jaillit dans la prison et elle aperçut le Seigneur de la gloire qui lui dit : « Viens, Marine (*Marianè*), et repose-toi dans mon royaume, car tu as mérité la couronne incorruptible et impérissable. »

C'est alors que la vierge sainte, reprenant ses sens, comprit que c'était Satan qui lui était apparu sous la forme d'un dragon et que la multitude de serpents qui entouraient son cou étaient les légions des démons, ses

1. Ps. LXXXV, 16.

նորա գունդք դիւաց էին արբանեակք եւ կամարարք նորա. եւ հերձումն վիշապին զոր արար նշանաւ խաչին Քրիստոսի էր նշանակ առաջակայ յաղթութեան նորա ի վերայ աներեւոյթ թշնամւոյն եւ արբանեկաց նորա ։ Որով եւ քաջալերեալ զօրացաւ եւ գոհութեամբ փառս մատուցանէր Աստուծոյ. մանաւանդ վասն սքանչելի լուսոյն որ երեւեցաւ նմա ծագեալ ի բանդին, եւ տեսանելոյ զՏէրն փառաց որ կոչէր զնա յարքայութիւնն երկնից ։

Եւ ի վաղիւ անդր ածին զսուրբն առաջի դատաւորին եւ տեսեալ զհաստատութիւն հաւատոյն հրամայեաց սպանանել զնա ։ Եւ իբրեւ հանին արտաքոյ քաղաքին ասէ դահիճն ցսուրբն. Յառա՛ջ կալ զպարանոց քո զի հատից զգլուխ քո սուրբ. եւ ինձ աղօթս արա զի տեսանեմ զքեզ երթալ առ Քրիստոս բազում հրեշտակօք ։

Եւ սուրբն աղաչեաց անսալ նմա սակաւիկ մի զի աղօթեսցէ. եւ դահիճն արգել զսուրն եւ ասէ. Աղօթեա՛ որպէս կամիս ։ Եւ սուրբ կոյսն համբարձ զաչս իւր յերկինս եւ աղօթեաց առ Աստուած. ապա մատեան դահիճք եւ հատին զգլուխ նորա ։ Յայնժամ ածին անդր որպէս զոչխար ի զենումն եւ զբազմութիւն արանց եւ կանանց, որք նովաւ հաւատացին * ի Քրիստոս. եւ զամենեցուն հատին զգլուխսն ։ * B p. 30 b.

Կատարի ժողով հանգստի սրբոյն Մարինեայ Հրոտից ԺԲ եւ Յուլիսի ԺԸ, ի փառս Քրիստոսի ։

Եւ յայսմ յաւուր հանգեաւ ի Քրիստոս աստուածասէր եւ բարեբարոյ Մարիւն

satellites et les exécuteurs de ses volontés, que le déchirement du dragon qui eut lieu par le signe de la croix du Christ était le signe de sa proche victoire sur l'ennemi invisible et sur ses satellites. Elle en fut fortifiée, prit courage et avec actions de grâces rendit gloire à Dieu, surtout à cause de la merveilleuse lumière qui lui était apparue jaillissant dans la prison, (qui était le signe) qu'elle allait voir le Seigneur de la gloire qui l'appelait au royaume des cieux.

Le lendemain on introduisit la sainte auprès du juge, qui, vu la fermeté de sa foi, ordonna de la tuer. Lorsqu'on l'eut emmenée hors de la ville, le bourreau dit à la sainte : « Avance ton cou pour que je tranche ta tête sainte, et prie pour moi, car je te vois allant au Christ accompagnée de beaucoup d'anges. »

La sainte le pria d'attendre un peu pour qu'elle pût prier. Le bourreau retint son glaive et dit : « Prie comme tu voudras. » La vierge sainte éleva ses yeux au ciel et pria Dieu. Les bourreaux s'approchèrent ensuite et lui tranchèrent la tête. On y amena alors, comme des moutons au sacrifice, la multitude d'hommes et de femmes qui avaient cru *au Christ par la sainte, et on leur trancha la tête à tous. * B p. 30 b.

La convocation pour la fête de sainte Marine a lieu le 12 hrotits, 18 juillet, pour la gloire du Christ.

En ce jour reposa dans le Christ Tikin Marioun, l'amie de Dieu et de bon

տիկին, որ էր կին բարեմիտ, հեզ, խոնարհ, գթած, ի վերայ աղքատաց եւ կարօտելոց :]

Հրոտից ԺԳ եւ Յուլիսի ԺԹ : Վարք երանելի հօրն մերոյ Դիոսի :

Երանելի հայրն մեր Դիոս էր ի քաղաքէն Անտիոքայ Ասորոց, ի ժամանակս
A fol. 315 v° a. բարեպաշտ արքային մեծին Թէոդոսի : Եւ աշակերտեցաւ ի * մանկութենէ սուրբ հարանցն Եփրատայ կւ Ռոմանոսի, եւ եղեւ ժուժկալ աղօթիւք եւ պահօք եւ տքնութեամբ, եւ խստակրօն ի ճգնութիւնս : Եւ ի շաբաթն ուտէր երկիցս անգամ սակաւ հաց եւ ջուր եւ զայն ոչ յագ :

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ գնացին յԱնտիոք ճգնաւոր կրօնաւորք, եւ ստիպէին եւ յօժարեցուցանէին զերանելին Դիոս գնալ ընդ նոսա ի Կոստանդինուպօլիս, զոր ամենեւին յանձն ոչ առ : Եւ երեւեցաւ նմա Տէր յանուրջս երկիցս եւ երիցս անգամ եւ ասէ. Կամք իմ են գնալ քեզ ի Կոստանդինուպօլիս : Եւ յորժամ գնացին գտին տեղի մի դատարկ յեզր քաղաքին, որ էր դիւաց բնակարան, եւ աղօթիւք զդեւսն հալածեաց եւ կանգնեաց ի տեղին զնռնենի գաւազանն իւր, յիշելով զանուն սուրբ Երրորդութեանն, արմատացաւ եւ արար տերեւ եւ եբեր պտուղ. եւ ծառն կայ մինչեւ

3 երանելի] սուրբ B — Դիոսի] ճգնաւորի *add.* B || 4 Երանելի] Երջանիկ B || 5 արքային] Թագաւորին B || 7 սակաւ] պակաս B || 8 յագ] ցյագ B || 13 որ էր դիւաց ... մինչեւ ցայսօր *om.* B.

caractère, qui fut une femme bienveillante, douce, humble, charitable envers les pauvres et les indigents.]

13 hrotits, 19 Juillet.

Vie de notre bienheureux père Dios.

Notre bienheureux père Dios était de la ville d'Antioche de Syrie, aux
* A fol. 315 v° a. jours du pieux empereur Théodose le Grand. Dès l'enfance * il avait été l'élève des saints pères Euphrasios (*Ephratay*)? et Romanos; il fut persévérant dans les prières, les jeûnes et les veilles, et austère dans son ascétisme. Il ne mangeait que deux fois par semaine un peu de pain et d'eau, et pas à satiété.

En ces jours-là des moines ascètes se rendirent à Antioche; ils prièrent et engagèrent le bienheureux Dios de partir avec eux pour Constantinople, mais il n'accepta point. Alors le Seigneur lui apparut deux et trois fois en rêve et lui dit : « Ma volonté est que tu ailles à Constantinople. » Il alla donc avec eux. Ils trouvèrent un endroit vide aux abords de la ville qui était l'habitation des démons; il en chassa les démons par la prière, et y planta son bâton de bois de grenadier en invoquant le nom de la sainte Trinité; celui-ci prit racine, émit des feuilles et produisit des fruits; l'arbre existe encore

ցայսօր ։ Բնակեցաւ Դիոս ի տեղին յայնմիկ, եւ զբազումս լուսաւորեաց վարդապետութեամբ իւրով ։

Կոչեաց զնա Թէոդոս մեծ թագաւորն, եւ առ զաղօթս իւր, եւ խոնարհութեամբ ողջոյն ետ, տուեալ նմա գանձս զի շինեսցէ վանս ի տեղւոջն յայնմիկ ։ Եւ վասն զի ջուր ոչ գոյր ի տեղին եւ նա առ բահ եւ եհար յերիս տեղիս եւ բղխեաց յերկու տեղւոջէն ուր եհար ջուր յստակ եւ անուշ, եւ միւս տեղին եղեւ գուբ * եւ երկու ականցն ջուրն մտանէր ի գուբն եւ հեռաղոյն ի վանացն ելանէր յայլ տեղի ։ Եւ մի ոմն որ փորէր զջրհորն անկաւ ի հորն եւ մեռաւ, եւ կինն իւր եկեալ առ երանելին Դիոս աղաղակէր բարկութեամբ եւ ասէր. Տո՛ւր ինձ զայրն իմ, զի դու սպաներ որ այնպիսի գործ հրամայեցեր գործել ։ Եւ երանելին աղաչեաց զԱստուած, եւ յարեաւ մեռեալն ։ Եւ ասէ Դիոս. Ես սպանի զքեզ ։ Եւ նա ասէ. Ոչ տէր ։ Եւ ետ զնա ի կինն, եւ գնացին ի միասին այր եւ կինն. եւ իբրեւ հեռացան իբրեւ նետընկէց մի անկաւ այրն եւ մեռաւ ։ * A fol. 315 vº b

Եւ երանելին Դիոս եդ կանոնական կարգս զի կին երբէք ի վանսն ոչ մտցէ, եւ մինչեւ ցայսօր կին ի վանսն յայն ոչ մտանէ ։

Եւ լուաւ Աստիկիոս պատրիարքն զգործսն զոր արար, ձեռնադրեաց զնա

5-14 յերիս տեղիս . . . ոչ մտանէ] երիցս եւ կարդաց առ Տէր, եւ առժամայն բղխեաց ջուր յստակ եւ անոյշ. արար եւ այլ նշանս, եւ ել համբաւ նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն B || 15 զգործսն զոր արար] զսրբութիւն նորա եւ զիմաստութիւն եւ զսքանչելի գործսն զոր առնէր B.

aujourd'hui. Dios habita en cet endroit et il illumina bien des gens par sa doctrine.

Le grand empereur Théodose le fit venir et demanda ses prières, il le salua humblement et lui donna de l'argent pour se construire un couvent en cet endroit. Mais comme il n'y avait point d'eau, (Dios) prit une pelle et en frappa en trois endroits : de deux endroits il jaillit de l'eau douce et claire, mais à l'autre endroit fut fait un puits, * où pénétrait l'eau de ces deux sources, laquelle ressortait ailleurs loin du couvent. Un homme qui creusait le puits, y tomba et mourut; sa femme, étant venue trouver le bienheureux Dios, criait avec colère et disait : « Rends-moi mon mari, car c'est toi qui l'as tué en lui ordonnant de faire ce travail. » Le bienheureux pria Dieu, et le mort ressuscita. Dios lui dit : « Est-ce moi qui t'ai tué? » Il répondit : « Non, seigneur. » Et il le rendit à sa femme; le mari et la femme partirent ensemble, mais lorsqu'ils se furent éloignés à un jet de pierre environ, l'homme tomba et mourut. * A fol. 315 vº b.

Le bienheureux Dios établit des règles canoniques pour qu'aucune femme n'ait accès au couvent, et jusqu'aujourd'hui aucune femme ne pénètre dans ce couvent-là.

Le patriarche Atticus (*Astikios*), ayant appris les œuvres qu'il avait accom-

քահանայ, եւ իբրեւ զմեծն Անտոն եւ զԵւթիմոս եւ զՍաբա պատուէր եւ ընդունէր զնա :

Եւ ի միում աւուր երանելին անշնչացաւ եւ լուր եղեւ ի քաղաքին եթէ սուրբն Դիոս վախճանեցաւ : Գնացին ի թաղումն պատրիարքն եւ ամենայն ուխտ եկեղեցւոյն, եւ յորժամ կատարեցին զպաշտօն մեռելութեանն դարձաւ ի նա շունչն, եբաց զաչսն եւ ասէ. Ո՛վ հարք եւ եղբարք, շնորհեաց ինձ Աստուած այլ հնգետասան ամ ի
* A fol. 316 r° a. կեանս իմ վասն շինելոյ եւ կատարելոյ զեկեղեցիս եւ զվանսն : * Եւ ապրեցաւ երանելին այլ եւս հնգետասան ամ : Եւ յորժամ կատարեցաւ գործն եւ ժամանակն եմուտ ի սենեակ եկեղեցւոյն, յորում սրբութեան անօթքն էին, եւ տեսանէր երիտասարդ մի սպիտակազգեստ որ ասէր. Կատարեալ են թիւ հնգետասան ամաց քոց յերկրի, ննջեա՛ խաղաղութեամբ եւ հանգիր յօթեւանս երկնից արքայութեանն : Եւ սակաւիկ մի հիւանդացաւ եւ հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս Յուլիսի ԺԹ :

Հրոտից ԺԴ եւ Յուլիսի Ի : Վերացումն Եղիայի մարգարէի հրեղէն կառօք :

Եւ ասէ Եղիա ցժողովուրդն. Մատերո՛ւք առ իս : Եւ մատեան առ նա ամենայն ժողովուրդն. եւ ողջացոյց զսեղանն Տեառն զկործանեալն : Եւ ա՛ռ Եղիա երկոտասան

3 երանելին] Դիոս *add.* B || 4 եկեղեցւոյն] եկեղեցեացն B || 9 եւ տեսանէր . . . արքայու-թեանն *om.* B || 11 Յուլիսի ԺԹ] եւ Հրոտից ԺԳ *add.* B || 13 կառօք] յերկինս *add.* B.

plies, l'ordonna prêtre; il l'honora et le reçut à l'instar du grand Antoine, d'Euthyme et de Sabas.

Un jour le bienheureux manqua de souffle, et le bruit se répandit dans la ville que saint Dios était décédé. Le patriarche et tout le clergé vinrent à son enterrement; après qu'ils eurent terminé l'office des morts, (Dios) reprit haleine, ouvrit les yeux et dit : « O pères et frères, Dieu m'a accordé encore quinze années de vie pour que je construise et achève les églises et
* A fol. 316 r° a. les couvents. » * Et le bienheureux vécut encore quinze ans. Lorsque son œuvre et son temps furent achevés, il pénétra dans la pièce de l'église où étaient gardés les vases sacrés et y aperçut un jeune homme vêtu de blanc qui lui dit : « Les quinze années de ta vie sur cette terre sont terminées, dors en paix et repose-toi dans les logis du royaume des cieux. » Il fit une courte maladie et reposa en paix dans le Christ, le 19 juillet.

14 HROTITS, 20 Juillet.

Ascension du prophète Élie dans un char de feu.

Élie dit au peuple : « Approchez-vous de moi. » Tout le peuple s'étant approché de lui, Élie rétablit l'autel du Seigneur qui avait été renversé. Élie prit douze pierres,

քար ըստ թուոյ ցեղիցն Իսրայելի, որպէս խօսեցաւ ընդ նմա Տէր եւ ասէ. Իսրայէլ եղիցի անուն քո ։ Եւ շինեաց զքարինսն յանուն Տեառն սեղան. եւ արար ծով շուրջ զսեղանովն, որ տանէր երկուց գրուաց. եւ եդ շերտսն շուրջ զսեղանովն զոր արար. եւ յօշեաց զողջակէզսն եւ եդ ի վերայ սեղանոյն ։

Եւ ասէ. Առէք ինձ չորս սափորս ջրոյ, եւ հեղէք ի վերայ ողջակիզիդ եւ ի վերայ շերտիցդ ։ Եւ ասէ. Կրկնեցէք ։ Եւ կրկնեցին ։ Եւ ասէ. երեքկնեցէք ։ Եւ * երեքկնե- * A fol. 316 r° b.
ցին ։ Եւ դնայր ջուրն շուրջ զսեղանովն եւ ելից զծովն ջրով ։

Եւ եղեւ ի ժամ մատուցման պատարագին աղաղակեաց Եղիա յերկինս եւ ասէ. Աստուած Աբրահամու եւ Սահակայ եւ Յակոբայ, այսօր ծանիցէ ամենայն Իսրայէլ եթէ դու ես Աստուած Իսրայելի, եւ ես ծառայ քո ։ Լո՛ւր ինձ Տէր, լո՛ւր ինձ հրով, եւ ծանիցէ ժողովուրդս եթէ դու ես Տէր Աստուած, եւ դարձուցանես զսիրտ ժողովըրդեանս այսմիկ ։

Եւ անկաւ հուր ի Տեառնէ յերկնից, եւ եկեր զողջակէզսն եւ զշերտսն. եւ զհողն եւ զջուր ծովուն լափեաց հուրն ։ Եւ իբրեւ տեսին ամենայն ժողովուրդն անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ ասեն ցԵղիա. Արդարեւ Տէր Աստուած քո նա է Աստուած ։ Եւ ասէ Եղիա ցժողովուրդն. կալարո՛ւք զմարգարէսն Բահաղու, եւ մի՛ ոք ապրեսցի ի նոցանէ ։ Եւ կալան զնոսա եւ իջուցին ի հեղեղատն Կիսոնի, եւ անդ կոտորեցին զնոսա ։

8 մատուցման] մատուցանելոյ B || 9 ասէ] Տէր *add.* B || 13 այսմիկ *om.* B || 16 ցԵղիա *om.* B.

selon le nombre des tribus d'Israël, selon ce que le Seigneur lui avait promis en disant : « Israël sera ton nom »; et il bâtit avec ces pierres un autel au nom du Seigneur; puis ayant fait autour de l'autel un fossé de la capacité de deux mesures de semence, il arrangea le bois tout autour de l'autel qu'il avait construit, coupa l'holocauste par morceaux et le plaça sur le bois.

*Puis il dit : « Remplissez quatre amphores d'eau et versez-les sur l'holocauste et sur le bois. » Il dit : « Faites-le une seconde fois »; et ils le firent une seconde fois. Il dit : « Faites-le une troisième fois »; et ils le firent * une troisième fois.* * A fol. 316 r° b.
L'eau coula autour de l'autel et il fit remplir d'eau le fossé.

A l'heure où l'on offre l'oblation, Élie cria au ciel *et dit : « Dieu d'Abraham, d'Isaac et de Jacob, que tout Israël sache aujourd'hui que tu es Dieu en Israël et que je suis ton serviteur. Exauce-moi, Seigneur, exauce-moi par le feu, afin que ce peuple reconnaisse que tu es le Seigneur Dieu et que tu ramènes le cœur de ce peuple. »*

Alors le feu du Seigneur tomba du ciel *et consuma l'holocauste, le bois, la terre et absorba l'eau qui était dans le fossé. Quand tout le peuple vit cela, ils tombèrent sur leur visage et dirent* à Élie : « En vérité ton Seigneur Dieu, *c'est lui qui est Dieu!* » *Et Élie dit au peuple : « Saisissez les prophètes de Baal; que pas un d'eux n'échappe! » Ils* les *saisirent et les firent descendre au torrent de Cison où on les tua.*

Եւ ասէ Եղիա ցԱքաաբ. Ել, կեր եւ արբ, զի ոտնաձայն անձրեւի է ։ Եւ ել Աքաաբ ուտել եւ ըմպել. եւ Եղիա ել ի գլուխ լերինն Կարմեղայ, եւ խոնարհեցաւ յերկիր, եդ զգլուխ իւր ի մէջ ծնկաց իւրոց, եւ ասէ Եղիա ցպատանեակն իւր. Ել եւ հայեաց ընդ ճանապարհ ծովուն ։ Ել եւ հայեցաւ եւ ասէ. Ոչինչ է ։ Եւ ասէ Եղիա. Դարձիր դու եօթն անգամ ։ Եւ եղեւ յետ եօթներորդում նուագին, եւ ահա ամպ մի փոքրիկ իբրեւ զթաթ առն հանէր ջուր ։

* A fol. 316 v° a. *Եւ ասէ. Երթ եւ * ասա ցԱքաաբ. Լծեա զկառս քո եւ էջ արագ, զուցէ հասանիցէ քեզ անձրեւ ։ Եւ եղեւ մինչդեռ նա այսր անդր դառնայր երկինք մթացան ամպով եւ հողմով, եւ եղեւ անձրեւ սաստիկ. եւ լայր Աքաաբ եւ երթայր յԵզրայէլ ։ Եւ ձեռն Տեառն եղեւ ի վերայ Եղիայի, եւ պնդեաց զմէջ իւր եւ ընթացաւ առաջի Աքաաբու մինչեւ մտանել նորա յԵզրայէլ, եւ պատմեաց Աքաաբ Յեզաբելի կնոջ իւրում զոր արար Եղիա ։*

Յաղագս Եղիայի թէ ուստի էր կամ յորմէ ցեղէ ։

Եղիա Թեզբացի էր ի ցեղէն Ահարոնի եւ բնակեալ էր ի Գաղաադ, քանզի Թեզբի տուրք էին քահանայից ։ Եւ յորժամ ծնաւ Եղիա տեսե մայր նորա Սոբոքա, զի արք

7 արագ *om.* B || 15 Սոբոքա] Սոբոքորա B

Élie dit à Achab : « Monte, mange et bois, car j'entends le bruissement de la pluie. » Achab monta pour manger et pour boire; mais Élie monta au sommet du Carmel, et, se penchant vers la terre, il mit sa tête entre ses genoux et il dit à son serviteur : « Monte, regarde du côté de la mer. » Il monta et, ayant regardé, il dit : « Il n'y a rien. » Élie dit : « Retourne sept fois. » A la septième fois, il dit : « Voici un petit nuage, comme la paume d'un homme, qui s'élève de la mer. »
* A fol. 316 v° a. *Élie dit : « Va * et dis à Achab : Attelle ton char et descends promptement afin que la pluie ne te surprenne pas. »* Il arriva que pendant qu'il tournait d'un côté et de l'autre, *les cieux furent obscurcis par la nuée et le vent, et il y eut une forte pluie. Achab* pleurait *et retournait à Jezrahel. Et la main du Seigneur fut sur Élie; il se ceignit les reins et courut devant Achab jusqu'à l'entrée de Jezrahel. Et Achab rapporta à Jézabel,* sa femme, *tout ce qu'Élie avait fait* [1].

Au sujet d'Élie, d'où et de quelle tribu il était.

Élie le Thesbite était de la famille d'Aaron; il habitait Galaad, car Thisbé (*Ṭezbi*) était un douaire des prêtres. A la naissance d'Élie, sa mère Sobacha (*Sobokha*)[2] aperçut des hommes vêtus de blanc qui l'embrassaient et l'enve-

1. III Reg., XVIII, 30-XIX, 1. — 2. Σοβαχα avec les manuscrits C et D du Pseudo-Épiphane, cf. Theodor Schermann, *Propheten und Apostellegenden,* dans *Texte und Untersuchungen,* t. 31, Leipsig, 1907, p. 109. Seul le ms. C fait de Sobacha la mère

սպիտակք ողջագուրէին զնա եւ ի հրեղէն խանձարուրս պատէին, եւ բոց հրոյ տային նմա ուտել : Եւ եկեալ հայր նորա Ասովմ պատմեաց յԵրուսաղէմ : Եւ ասէ քահանայն հրամանաւ Տեառն . Մի երկնչիր քանզի եղեցի բնակութիւն նորա ի լոյս, եւ բան նորա ի վճիռ, եւ կեանքն նորա ընդ հրեշտակս, եւ նախանձ նորա հաճոյ Աստուծոյ, եւ դատեսցէ զԻսրայէլ սրով եւ հրով :

Եւ վերացաւ Եղիա շարժմամբ եւ հրեղէն կառօք յերկինս :

Հրոտից ԺԵ եւ Յուլիսի ԻԱ : Վարք Սիմէոնի որ վասն Քրիստոսի աղուաշ եղեւ,
եւ Յովհաննու անապատականի :

Սիմէոն եւ Յովհաննէս էին յԱսորոց յԵդեսեայ քաղաքէն * եւ Սիմէոն մայր միայն ունէր, իսկ Յովհաննէս միայն հայր ունէր որ ի տարւոջն յայնմիկ ետ նմա կին : * A fol. 316 v° b.

Եւ ծնօղքն առին զորդիս իւրեանց եւ գնացին յԵրուսաղէմ յաղօթս ի Սեպտեմբերի ԺԴ երկիր պագանել պատուական եւ սուրբ խաչին Քրիստոսի : Եւ շրջեալ ի

6 Եւ վերացաւ... յերկինս] Սա մարգարէացաւ ամս քսան եւ հինգ. եւ էր յառաջ քան զգալուստ Քրիստոսի ամս ութ հարիւր եւ վեշտասան. որ հուր յերկնից երիցս անգամ իջոյց, եւ զանձրեւ արգել, եւ զմեռեալս յարոյց. եւ ի Քորէբ լերինն զԱստուած ետես, եւ զՅորդանան բաժանեաց որ եւ հրեղէն կառօք յերկինս համբարձաւ Հրոտից ԺԴ եւ Յուլիսի Ի B || 7 Վարք... անապատականի] Յիշատակ սուրբ ճգնաւորացն եւ եղբարցն Յովհաննու եւ Սիմէոնի որ վասն Քրիստոսի աղուաշանայր B.

loppaient dans des langes de feu, et ils lui donnaient des flammes de feu à manger. Son père Asom, était allé à Jérusalem, le raconta. Le prêtre lui dit par l'ordre de Dieu : « Ne crains pas, car son habitation sera dans la lumière, sa parole sera en proverbe et sa vie avec les anges, son zèle sera agréable à Dieu et il jugera Israël par l'épée et le feu [1]. »

Élie s'éleva dans les cieux dans une commotion, sur un char de feu.

15 HROTITS, **21 Juillet.**

Vie de Siméon, qui se fit sot pour le Christ, et de Jean l'anachorète.

Siméon et Jean étaient de la ville d'Édesse de Syrie. * Siméon n'avait plus que sa mère et Jean que son père, qui dans cette année-là lui donna une épouse. * A fol. 316 v° b.

Les parents, ayant pris leurs enfants, se rendirent à Jérusalem pour y prier, le 14 septembre, et se prosterner devant la précieuse et sainte croix du

d'Élie; le texte correct attribue la vision au père du prophète Σωβάχ. Le ms. C est aussi le seul qui mentionne le voyage du père qu'il appelle Asom. Le texte arménien suit donc le ms. C = Vat. gr. 1974.

1. Cf. Is., LXVI, 16.

վանորայս Երիքովի եւ Յորդանանու հրաժարեցին ի ծնողացն Սիմէոն եւ Յովհաննէս, եւ գնացին յայնկոյս Յորդանանու ի վանսն երանելոյն Գերասիմոսի, եւ գտին զդուռն ի բաց ։ Եւ յառաջագոյն երեւեցոյց Աստուած Գերասիմոսի զգալուստն Սիմէոնի եւ Յովհաննու, եւ մնայր նոցա ։ Եւ տեսեալ զնոսա ասէ. Բարի եկիք գառինք Աստուծոյ եւ եդեալ զձեռս իւր ի վերայ նոցա արար զնոսա կրօնաւորս ։

Եւ յետ եօթն աւուր ողջունեալ զաստուածազգեաց հայր վանացն գնացին ի լեառն, եւ հրեշտակ Տեառն առաջնորդեաց նոցա մինչեւ յանապատն, եւ բնակեցան անդ որպէս անմարմինք ի մարմնի եւ մարմնաւոր հրեշտակք ։ Եւ երեւեցոյց Աստուած զմահ ծնողացն իւրեանց զմօրն Սիմէոնի եւ զհօրն Յովհաննու եւ զամուսնոյն, եւ գոհացան զԱստուծոյ ։ Այլ վասն ճգնութեան նոցա զոր արարին զքառասուն ամ յանապատին գրեալ են ի գիրս կենացն յաւիտենից ։

Եւ եղեւ յետ այնորիկ ազդեցութիւն յԱստուծոյ առ Սիմէոն, եւ խորհեցաւ գնալ
* A fol. 317 rº a. * յաշխարհ եւ Աստուծով յիմարութեամբ զարձուցանել զմոլորեալսն ի գիտութիւն ճշմարտութեան եւ ի զղջումն ապաշխարութեան ։ Իսկ Յովհաննէս բազում անգամ աղաչեաց զնա զի մի ելցէ յանապատէն. եւ նա ոչ կամեցաւ նմա լսել, եւ ա՛ռ ի նմանէ

4 Աստուծոյ] Քրիստոսի B || 6 զաստուածազգեաց] զաստուածազգեստ B || 7 եւ հրեշտակ . . . առաջնորդեաց նոցա] եւ հասին B || 8 եւ երեւեցոյց . . . զամուսնոյն] եւ զգացոյց Աստուած Սիմէոնի զմահ մօր իւրոյ եւ Յովհաննու զմահ ամուսնոյն B || 13 ի գիտութիւն ճշմարտութեան եւ *om.* B.

Christ. Siméon et Jean, après avoir pris congé de leurs parents, visitèrent les couvents de Jéricho et du Jourdain, et se rendirent au delà du Jourdain au couvent du bienheureux Gérasime, dont ils trouvèrent la porte ouverte. Dieu avait fait connaître auparavant à Gérasime l'arrivée de Siméon et de Jean, et il les attendait. Lorsqu'il les vit, il leur dit : « Soyez les bienvenus, agneaux de Dieu, » et leur ayant imposé les mains, il les fit moines.

Sept jours après, ayant salué le prieur du couvent revêtu de Dieu, ils se rendirent à la montagne et l'ange du Seigneur les guida jusqu'au désert, où ils établirent leur demeure, vivant comme des incorporels dans un corps et des anges corporels. Dieu leur fit connaître la mort de leurs parents, à Siméon celle de sa mère et à Jean celle de son père et de sa femme; et ils rendirent grâces à Dieu. La vie d'ascétisme qu'ils menèrent pendant quarante ans dans le désert est inscrite dans le livre de la vie éternelle.

* A fol. 317 rº a. Ensuite Siméon eut une inspiration de Dieu et songea à rentrer * dans le monde afin de convertir les égarés par la folie, avec l'aide de Dieu, à la science de la vérité et à la contrition de la pénitence. Jean, cependant, le pria plusieurs fois de ne pas quitter le désert, mais il ne voulut point l'écouter : il lui demanda de prier pour lui et le salua. Jean se mit à pleurer. Siméon

աղօթս, եւ ողջունեաց զնա ։ Եւ սկսաւ Յովհաննէս լալ ։ Ասէ Սիմէոն. Մի՛ լար Յովհաննէս եղբայր իմ, զի երթամ ես վասն խաղ առնելոյ երկրի ։ Էջ ի լեառնէն եւ գնաց յԵրուսաղէմ, երկիր եպագ սուրբ գերեզմանին Տեառն եւ սուրբ տեղեացն, եւ խնդրեաց յԱստուծոյ զի զգործս իւր ոչ յայտնեսցէ, զի խաղայր ընդ մանկունս, եւ անուանեցաւ ապուշ ։

Գնաց յԵրուսաղէմ ի քաղաքն, եւ եգիտ մեռեալ շուն ի գետնի. կապեաց լար յոտսն եւ քարշէր ընդ մէջ քաղաքին եւ ասէր. Քարշեցէք մանկտի, քարշեցէք ։ Եւ մանկունքն զկնի երթային եւ ծափս հարկանէին ասէին. Քարշեա՛ ապուշ, քարշեա՛ զմախաղդ եւ զկնկուղդ ։ Եւ նա երթեալ ընկէց զմեռեալ շունն առաջի խանութի ։ Եւ ելեալ վաճառականն զան եհար զնա ուժգին գաւազանօք, եւ կապեաց զշունն ի պարանոցն մինչեւ հանեալ ընկէց արտաքոյ քաղաքին ։

Եւ դարձեալ ի միում աւուր առեալ * ընկոյզ յոլով եմուտ յեկեղեցին, եւ ելեալ յամբիոնն ձգէր մի մի ի վերայ կանանցն եւ ի կանթեղսն եւ շիջուցանէր եւ հեղոյր զձէթն ։ Եւ ելեալ եկեղեցպանն իջոյց զնա յամբիոնէն եւ քարշեաց արտաքս, եւ սաստիկ հարուածով գանեաց ։ * A fol. 317 r° b.

Եւ երանելի յիմարն Աստուծոյ Սիմէոն յամենայն շաբաթ մի օր ճաշակէր. եւ յորժամ գիտացին վասն պահոցն գնաց ի կիւրակէ աւուր ընդ առաւօտն առեալ միս

9 զմախաղդ] քարշեա խուժմր *add.* B — զմեռեալ] զմեռելոտի B || 10 արտաքոյ քաղաքին] արտաքս B.

lui dit : « Ne pleure pas, Jean, mon frère, car je pars pour mettre la paix sur la terre. » Il descendit de la montagne, se rendit à Jérusalem, se prosterna devant le saint tombeau du Seigneur et devant les autres lieux saints et demanda à Dieu de ne point révéler ses œuvres, car il s'était mis à jouer avec les enfants et fut appelé sot.

Il se rendit à la ville de Jérusalem et trouva à terre un chien crevé; il lui attacha une corde aux pieds et le traîna par la ville en disant : « Tirez, enfants, tirez. » Les enfants accoururent derrière lui, battirent des mains et dirent : « Tire, sot, tire ta besace et ton capuchon. » Il alla jeter le chien crevé devant une boutique. Le boutiquier sortit, le frappa durement avec un bâton, puis il lui attacha le chien au cou jusqu'à ce que, l'ayant porté, il le jetât hors de la ville.

Un autre jour, ayant pris un grand nombre * de noix, il entra dans l'église, et montant à l'ambon, il les jeta l'une après l'autre sur les femmes et sur les lampes, les éteignant et en répandant l'huile. Le sacristain arriva, le fit descendre de l'ambon, l'entraîna dehors et le frappa à coups redoublés. * A fol. 317 r° b.

Le bienheureux sot de Dieu, Siméon, ne mangeait qu'une fois par semaine; lorsqu'on eut appris qu'il jeûnait, il alla un dimanche matin prendre de la

երթայր ընդ մէջ քաղաքին եւ ուտէր : Եւ յաւուրս քառասնորդաց պահոցն զամենայն անսուաղ եկաց, եւ ի մեծի հինգշաբաթին ուտէր հաց եւ գինի առաջի ամենայն ժողովրդեանն զի մի գիտասցեն վասն պահոցն : Եւ ամենեքեան ասէին թէ աղուաշ է :

Եւ ոմն սարկաւագ Յովհաննէս անուն ասէ ցՍիմէոն. Եկեսջիր ընդ իս ի բաղանիսն եւ լուասցուք զգլուխս մեր եւ զանձինս : Եւ յորժամ մերձեցան ի դուռնն էր բաղանիքն երկուորեակ մի կողմն արանց եւ միւսն կանանց, եւ եհան զմազեղէն պարեգօտն իւր Սիմէոն եդ ի վերայ գլխոյն եւ գնաց ի դուռն բաղանեաց կանանցն : Ասէ Յովհաննէս. Ո՛վ աղուաշ այդ կանանց է : Ասէ Սիմէոն. Անմիտ այր անդ ջերմն ջուր ոչ գոյ, իսկ աստ բազում է, եւ եմուտ մերկ առ կանայսն խցեալ աչօք : Եւ տեսեալ զնա կանանցն
* A fol. 294 v° a. ընկեցին ի խոնարհ, եւ այնչափ տանջեցին զնա * մինչ զի ամենայն մարմինն արիւնախառն կապուտակ եղեւ, եւ կալեալ զոտիցն քարշեցին արտաքս :

Եւ ոմն մի շնացաւ ընդ առնակին եւ այսահարեցաւ. եւ տեսեալ զնա Սիմէոն զի երթայր բացաւ գլխով եւ խայտառակեալ ընթացեալ զկնի ապտակեաց զնա եւ ասէ. Մի եւս այլ շնասցիս ով գերի : Եւ նա անկաւ յերկիր եւ փրփրայր. եւ կալեալ զձեռանէ նորա յարոյց եւ ողջացաւ : Եւ ասէ այրն. Տեսանէի զի սեաւ շուն հանէիր ի բերանոյս փայտախաչիւ :

1 Եւ յաւուրս ... աղուաշ է *om.* B || 8 Ասէ] ցՅովհաննէս *add.* B || 12 ոմն մի ... առնակին] այր ոմն մեղաւսէր B || 14 շնասցիս] մեղանչէր B || 15 Եւ ասէ այրն ... երթալոց են *om.* B.

viande et la mangea en se promenant dans la ville. Il passa tout un carême de quarante jours sans rien manger, mais le jeudi saint il mangea du pain avec du vin devant toute la population afin qu'on ne sût pas qu'il avait jeûné. Tout le monde disait de lui qu'il était un sot.

Un certain diacre nommé Jean dit à Siméon : « Viens avec moi au bain, et nous nous laverons la tête et le corps. » Ils arrivèrent à la porte des bains. Il y avait deux entrées, l'une pour les hommes, l'autre pour les femmes, Siméon ôta sa tunique de poils, la posa sur sa tête et pénétra par la porte d'entrée du côté des femmes. Jean lui dit : « O sot, c'est le côté des femmes. » Siméon répondit : « Homme insensé, de l'autre côté il n'y a point d'eau chaude, mais de ce côté-ci il y en a beaucoup. » Et il entra nu auprès des femmes en fermant ses yeux. Les femmes, l'apercevant, le jetèrent à terre et
* A fol. 294 v° a. le frappèrent tellement * que son corps saignant était devenu bleu, puis elles le saisirent par les pieds et l'entraînèrent dehors.

Un homme avait forniqué avec une femme mariée et était devenu possédé du démon. Siméon, l'ayant aperçu s'en allant tête nue et ridicule, courut après lui et le souffleta en disant : « Tu ne forniqueras plus, esclave. » L'autre tomba à terre et se mit à écumer. (Siméon) le prit par la main, le releva et il fut guéri. L'homme lui dit alors : « Je voyais que tu retirais, avec une croix de bois, un chien noir de ma bouche. »

Եւ յաւուր միոջ գիտաց Սիմէոն զի շարժ կամէր լինել ։ Առեալ փոկ հարկանէր զսիւնսն եւ ասէր. Այսպէս ասէ Տէր կացջիր. եւ այլ սեանց ասէր. Այսպէս ասէ Տէր մի կայցես եւ մի անկցիս ։ Եւ յորժամ եղեւ շարժն սիւնքն զոր ասաց. Կացջիք, կացին անշարժ. եւ որոց ասաց թէ. Մի կայցես եւ մի անկցիս հերձան, կորացան եւ ոչ անկան ։

Մահ անկաւ ի քաղաքն. գնաց ի դպրոցն եւ զմանկունսն որ վախճանելոց էին համբուրէր եւ ասէր. Երթիջիք խաղաղութեամբ ։ Եւ ասէ ցվարդապետն. Ով ապուշ, մի հարկաներ զմանկունսդ զայդ զի մեծ ճանապարհ երթալոց են ։

Մտանէր եւ ի տունս մեծատանցն, եւ որպէս զապուշ խաղ առնէին զնա ։ Եւ մի յաղախնացն պոռնկացաւ եւ յղացաւ, եւ զրպարտէր զՍիմէոն թէ ի նմանէ է ։ Ասէ տիկին աղախնոյն ցՍիմէոն. * Ով ապուշ, զինչ է այդ որ գործեցեր ընդ աղախինն իմ ։ * A fol. 317 v° b.
Ասէ Սիմէոն. Այո, արարի զի լինիցի քեզ փոքրիկ Սիմէոն ։ Եւ յոյժ քնքշեցուցանէր Սիմէոն զաղախինն զայն կերակրովք եւ ըմպելեօք, եւ ասէր. Կեր եւ արբ ամուսին իմ ։ Եւ յորժամ լցան աւուրքն յերկարեցաւ յերկունսն, եւ ասէ տիկինն իւր ցՍիմէոն. Արա աղօթս, ով ապուշ, զի ծնանիցի կինս քո ։ Եւ ասէ Սիմէոն իբրեւ երդմամբ. Եւ իմ Յիսուս Քրիստոսն որ ոչ ելցէ մանուկն յարգանդէն, մինչեւ խոստովանեսցի

11 ով ապուշ *om.* B || 12 Այո] ճշմարիտ է *add.* B || 15 աղօթս] առ Աստուած *add.* B.

Un jour Siméon pressentit qu'un tremblement de terre devait se produire. Il prit une lanière, en frappa des colonnes en disant : « Voici ce que dit le Seigneur, vous resterez debout, » et à d'autres colonnes il dit : « Voici ce que dit le Seigneur, vous ne resterez pas debout, mais vous ne tomberez point. » Et lorsque le tremblement se produisit, les colonnes auxquelles il avait dit : « Vous resterez debout » demeurèrent fermes, et les autres auxquelles il avait dit : « Vous ne resterez pas debout et ne tomberez point », se fendirent, se penchèrent, mais ne tombèrent point.

La mort envahit la ville. (Siméon) alla à l'école et embrassa les enfants qui devaient mourir, en leur disant : « Allez en paix. » Et il dit au maître : « O sot, ne bats pas ces enfants, car ils s'en vont pour un long voyage. »

Il entrait dans les maisons des riches, qui se moquaient de lui comme d'un sot. Une des servantes, ayant forniqué, devint enceinte et accusa Siméon, (disant) que c'était de lui. La maîtresse de la servante dit à Siméon : * « O sot, * A fol. 317 v° b.
qu'as-tu fait avec ma servante? » Siméon répondit : « Oui, je l'ai fait pour que tu aies un petit Siméon. » Siméon se mit à gâter beaucoup la servante avec de bonnes chères et des boissons, en lui disant : « Mange et bois, mon épouse. » Lorsque le terme arriva, les douleurs d'enfantement se prolongèrent; la maîtresse dit à Siméon : « Mets-toi à prier, ô sot, pour que ta femme accouche. » Et Siméon de répondre comme en jurant : « Par mon Jésus-Christ, l'enfant ne sortira des entrailles que quand la mère aura avoué

մայրն զհայր մանկանն ։ Եւ լուեալ աղախնոյն խոստովանեցաւ յանուանէ զյղացուցիչն, եւ ապա ծնաւ զմանուկն ։

Եւ ոմն մի կորոյս հինգ հարիւր դահեկան, եւ աղաչեաց զերանելին զի արասցէ աղօթս եւ գտցէ զգանձն իւր ։ Ասէ Սիմէոն. Երդուիր զի այլ զոք ոչ հարկանես եւ գտանես զգանձն քո ։ Եւ նա երդուաւ ։ Եւ Սիմէոն եցոյց զծառայն որ գողացեալ էր, եւ առ ի նմանէ զհինգ հարիւր դահեկանն ։ Եւ յետ սակաւ ժամանակաց մոռացաւ այրն զերդումն, եւ յորժամ կամէր հարկանել զոք չորանային ձեռքն ։

Կին մի էր կախարդ ի քաղաքին, եւ կամեցաւ Սիմէոն խափանել զգործ կախարդութեանն զի մի վնասեսցէ զոք ։ Ասէ ցնա. Կամիս զի արարից քեզ պահպանորդս
* A fol. 318 rº a. զի մի ականահարիս *յումեքէ ։ Եւ նա ասէ. Կամիմ ։ Եւ առեալ Սիմէոն փոքր մագաղաթ եւ գրեաց ի նմա մանր գրով այսպէս. Աստուած խափանեսցէ զքեզ. Աստուած դադարեցուսցէ զքեզ յանաստուած գործոյդ, զի ամենայն մարդ ի քէն դառնայ ։ Եւ կապեաց ի պարանոցն ։ Եւ յայնմ օրէ խափանեցաւ կախարդութիւն նորա ։

Եւ հրէի միում ապակեգործի նստաւ Սիմէոն հանդէպ դրացն ընդ այլ աղքատսն, եւ որչափ գործէր Հրէայն եթէ բաժակ, եթէ կանթեղ եւ եթէ այլ ինչ խաչ հանէր

3-5 Եւ ոմն մի ... չորանային ձեռքն *om.* B || 14 Եւ հրէի ... դրացն] Յառաջագոյն ծանոյց Սիմէոն եւ զշարժն որ լինելոց էր. նոյնպէս կանխաւ գիտաց զժանտամահն որ անկաւ ի քաղաքն. եւ զհրեայ ոմն ապակեգործ դարձոյց ի հաւատս Քրիստոսի, քանզի նստաւ երանելին Սիմէոն հանդէպ դրանց խանութի B || 16 խաչ հանէր ... բեկանէր] սա խաչակնքէր ընդդէմ անօթոյն եւ առժամայն բեկանէին B.

le père de l'enfant. » La servante, l'ayant entendu, fit connaître par son nom celui qui l'avait rendue enceinte, puis l'enfant vint au monde.

Un homme avait perdu cinq cents écus, et vint demander au bienheureux de prier pour qu'il retrouvât son argent. Siméon lui dit : « Jure-moi de ne plus battre personne et tu retrouveras ton argent. » Il jura. Siméon lui fit connaître le domestique qui avait volé, et il reprit les cinq cents écus. Peu de temps après, l'homme oublia son serment, et comme il voulait battre quelqu'un, ses mains se desséchèrent.

Il y avait une femme sorcière dans la ville et Siméon, voulant empêcher ses œuvres de sorcellerie pour qu'elle ne fît du tort à personne, lui dit : « Veux-tu que je te fasse des amulettes, afin que tu ne sois plus touchée
* A fol. 318 rº a. du mauvais œil* de personne? » Elle répondit : « Je le veux bien. » Siméon prit un petit bout de parchemin, et y écrivit ainsi en menus caractères : « Que Dieu t'entrave! Que Dieu mette fin à tes œuvres athées, car tout le monde est détourné par toi! » — Et il l'attacha au cou (de la femme). Depuis ce jour-là sa sorcellerie s'arrêta.

Siméon s'assit avec d'autres pauvres devant la porte d'un verrier juif, et tandis que le juif fabriquait soit une coupe, soit une lampe, soit autre

երանելին ընդդէմ գործոյն եւ բեկանէր ։ Եւ զխտացեալ Հրէին հալածեաց զերանելին ի տեղւոջէն, եւ այրեաց շանթիւքն զձեռն ։ Ասէ Սիմէոն. Ո՛վ պիղծ եւ աղուաշ, եթէ ոչ հանցես խաչ ի ճակատդ զամենայնն բեկանես ։ Եւ յորժամ սկսաւ գործել՝ բեկանէին անօթքն, եւ այնչափ նեղեցաւ մինչեւ եհան խաչ յերեսն, եւ ապա գործն հաստատեցաւ. եւ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ ։

Եւ երկու աւուրբք յառաջ քան զվախճանն իւր պատմեաց նմա Յովհաննէս սարկաւագն երազ՝ եթէ. Տեսանէի ի տեսլեան զեղբայր քո զՅովհաննէս, որ յանապատին է, ունելով ի գլուխն պսակ յորում գրեալ էր. Պսակ համբերութեան յանապատին ։ Եւ մի ոմն մերձ կայով ասէր. Կոչեցէք զաղուաշն Սիմէոն զի առցէ պսակ, ոչ մի այլ բազում, զի * զբազումս դարձոյց ի մեղաց յապաշխարութիւն ։ Եւ ես ասացի. Աղուաշ * A fol. 318 rº b.
մարդ այսպիսի՞ բարեաց արժանաւորի ։ Եւ պատուիրեաց նմա Սիմէոն առեալ երդումն զի մի ումեք պատմեսցէ զերազն ի կենդանութեան իւրում ։

Եւ յորժամ եհաս օր կատարման իւրոյ եմուտ ի խուղն իւր եւ անկեալ վախճանեցաւ Յուլիսի ԻԱ ։ Եւ ասացին ոմանք ծիծաղելով եթէ. Աղուաշի մահն փաղփաղելով եղեւ ։ Եւ երթեալ երկու աղքատք բարձին զնա առանց մաքրելոյ, առանց քահանայի, առանց պաշտաման եւ խնկոյ, եւ տանէին զնա ի թաղել ։ Եւ յորժամ անցուցանէին

3 հանցես խաչ] արասցես նշան խաչի B || 4 եհան խաչ] արար նշան խաչի B — հաստատեցաւ] որով ծանեաւ զզօրութիւն խաչելոյն B || 6 իւր] երանելոյն Սիմէոնի B || 13 վախճանեցաւ] Հրոտից ԺԵ եւ *add.* B.

chose, le bienheureux faisait le signe de la croix contre l'objet, qui se brisait. Le juif, s'en étant aperçu, chassa de là le bienheureux en lui brûlant la main avec des braises. Siméon lui dit : « O immonde et sot, si tu ne fais point le signe de la croix sur ton front, tu casseras tout. » L'autre se remit à travailler, mais les objets se brisaient, et il en fut tellement vexé qu'il finit par faire le signe de la croix sur son visage; alors le travail alla convenablement. Il crut au Christ et se fit baptiser.

Deux jours avant sa mort, le diacre Jean lui raconta un rêve qu'il avait eu et dit : « J'ai vu dans une vision ton frère Jean qui est au désert, portant sur sa tête une couronne où il était écrit : « Couronne de patience dans le « désert. » Et quelqu'un qui se trouvait présent disait : « Appelez le sot « Siméon pour qu'il reçoive une couronne, pas une seule, mais plusieurs, car « * il a converti de nombreuses personnes des péchés à la pénitence. » Et moi * A fol. 318 rº b.
je lui ai dit : « Un homme aussi sot peut-il mériter de tels bienfaits? » Siméon lui recommanda de ne raconter ce rêve à personne de son vivant.

Lorsque le jour de sa mort arriva, il se retira dans sa hutte et tomba mort, le 21 juillet. D'aucuns dirent en riant : « La mort du sot a été galopante. » Deux pauvres allèrent l'enlever, sans le nettoyer, sans prêtre, sans office ni encens, l'emportèrent et l'enterrèrent. Lorsqu'ils le transportaient par les

զնա ընդ փողոցն ետես զնա ապակեգործ հրէայն որ մկրտեցաւ, եւ ասէր երդմամբ եթէ. Տեսանեմ ամբոխ բազում ջահիւք որք երգեն քաղցրաբարբառ ձայնիւ, եւ ասեն. Երանի է քեզ Սիմէոն ապուշ, զի վասն ոչ ունելոյ քեզ ի մարդկանէ որ պաշտեն եւ յղարկեն զքեզ, երկնային զօրք սպասաւորեն քեզ, որ եւ նոքա իսկ թաղեցին զնա պատուով :

Եւ ի միւսում աւուրն Յովհաննէս սարկաւագն ետես ի տեսլեան զի հրեշտակք իջեն յերկնից եւ բարձին զմարմին երանելոյն Սիմէոնի, եւ տարան յանապատն առ Յովհաննէս : Եւ բազումք ի քաղաքացեացն երթեալ ի գերեզմանն ընդ առաւօտն, եւ բացեալ ոչ գտին զմարմին երանելոյն անդ, եւ փառս ետուն Աստուծոյ : Եւ երթեալ
A fol. 318 v° a. շինեցին ի * վերայ դատարկ գերեզմանին մատուռն, եւ կարգեցին կանթեղս անշիջանելի :

* B p. 32 b. [* B Յիշատակ Եզեկիելի քահանայի եւ մարգարէի :

Սուրբ քահանամարգարէն Եզեկիել էր որդի Բուզեայ ի քահանայիցն. եւ մարգարէացաւ ամս քսան յառաջ քան զմարդանալն Քրիստոսի ամս չորեքհարիւր եւ եօթանասուն եւ եօթն :

Գնաց ի գերութիւն ընդ ժողովրդն յերկիրն Քաղդէացւոց. եւ անդ ետես ի վերայ Քոբար գետոյ զսոսկալի տեսիլն. եւ զչորեքկերպեան աթոռոցն զյօրինուած, եւ

4 որ եւ նոքա իսկ թաղեցին զնա *om.* B || 6 ետես ... Աստուծոյ] եւ բազումք ի քաղաքակցաց տեսին ի տեսլեան զմեծ փառս նորա առ Աստուած B || 10 դատարկ *om.* B — անշիջանելի] իսկ ընկեր Սիմէոնի Յովհաննէս յանապատի վճարեաց զկեանս իւր առաքինի եւ խստամբեր վարուք, եւ էառ զպսակ համբերութեան անապատաւորաց *add.* B.

rues, le verrier juif qui s'était fait baptiser l'aperçut et dit avec serment : « Je vois une grande foule tenant des flambeaux qui chantent d'une voix douce en disant : « Tu es heureux, Siméon le sot, de n'avoir personne parmi « les hommes pour te rendre service et t'enterrer, ce sont les milices célestes « qui te rendent ce service. » Et ce furent elles qui l'enterrèrent avec honneur.

Le jour suivant, le diacre Jean vit en vision que des anges descendus du ciel enlevaient le corps du bienheureux Siméon et l'emportaient au désert auprès de Jean. De nombreux citoyens de la ville, s'étant rendus le matin à la tombe et l'ayant ouverte, n'y trouvèrent point le corps du bienheureux;
* A fol. 318 v° a. ils rendirent gloire à Dieu. Ils allèrent construire sur le * tombeau vide un oratoire et y installèrent des lampes qui ne devaient point s'éteindre.

* B p. 32 b. [B * Commémoration du prêtre et prophète Ézéchiel. Le saint prêtre et prophète Ézéchiel était le fils de Buzi; il prophétisa quatre cent soixante-dix-sept ans avant l'incarnation du Christ, pendant vingt ans.

Il alla en captivité avec le peuple au pays des Chaldéens, et là il vit, sur le fleuve Chobar, la vision terrible, la disposition des trônes quadriformes,

զբազմաչեայս եւ զվեցթեւեան քերովբէսն, եւ զփառս բազմեցելոյն Աստուծոյ ի վերայ նոցա ։

Զսա ի Բաբելոնէ տեսիլն աստուածային յԵրուսաղէմ եւ ի տաճարն էած, եւ եցոյց զոր ինչ Հրէայքն անդանօր ի ծածուկ չարիս ի տաճարին գործէին, եւ յոյժ տրտմէր ընդ գերութիւնն եւ ընդ պատուհաս ժողովրդեանն, որով եւ եցոյց նմա Աստուած զի արժանաւորքն էին այնմ ամենայնի ։

Սա ամբարձեալ Հոգւովն Տեառն եդաւ ի մէջ դաշտի որ լի էր ոսկերօք մեռելոց. եւ մարգարէացեալ նաեւ զնոսա յարուցեալս, եւ ծանեաւ զխորհուրդս հասարակաց յարութեանն ։ Սա ըստ Մովսէսի ի ցուցմանէ աստուածային տեսեան նաեւ զօրինակ շինութեան տաճարին, եւ զդուռն փակեալ մտից եւ ելից Աստուծոյ ի խորհուրդ սրբուհւոյ Աստուածածնին անկոյծ կուսութեանն ։ Գուշակեաց եւ զսրբոյ խաչէն թռուցեալ չորեքկուսի տեսանելով զտաճարն ։

Սա դատեաց ի Բաբելոն զցեղն Դանայ եւ զԳադայ զի ամպարշտեցան ի Տեառնէ կարծելով պահել զօրէնս ։ * Եւ արար նոցա նշանս զի օձք սատակէին զտղայս * B p. 33 a.
նոցա եւ զանասունս, ուստի ի նոցանէ սպանաւ, քանզի ընդդէմ կային նմա զամենայն աւուրս կենաց իւրեանց ։ Եւ սպան զնա որ առաջնորդէր Իսրայէլի անդ, յանդիմանեալ լինելով ի նմանէ վասն պաշտելոյ զկուռս ։

Եւ թաղեցին զնա ժողովուրդն Իսրայէլի յագարակն Մեթուր ի գերեզմանն Արփաք-

les chérubins aux yeux multiples et aux six ailes et la splendeur du Dieu assis sur eux.

Il apporta cette vision divine de Babylone à Jérusalem et au temple, montra ce que les Juifs commettaient de mal en secret dans le temple, et il était très triste de la captivité et de la punition du peuple, parce que Dieu lui avait montré qu'ils méritaient tout cela.

Il fut enlevé par l'Esprit du Seigneur et déposé dans la plaine remplie des ossements des morts; il y prophétisa et les vit ressusciter, et comprit le mystère de la résurrection générale. Il vit, à l'instar de Moïse, par une vision divine, la forme de la construction du temple, la porte fermée pour l'entrée et la sortie de Dieu dans le mystère de la sainte Mère de Dieu, dont la virginité ne fut point atteinte. Il prédit aussi au sujet de la sainte croix en voyant le temple à quatre côtés volant.

Il jugea à Babylone les tribus de Dan et de Gad, qui avaient commis des impiétés vis-à-vis du Seigneur, tout en croyant conserver les lois. * Il fit * B p. 33 a.
des prodiges en leur faveur, alors que les serpents tuaient leurs enfants à la mamelle et leur bétail; malgré cela il fut tué par ceux-ci qui avaient continué de s'opposer à lui tous les jours de leur vie. Il fut tué par celui qui était le chef d'Israël, parce qu'il l'avait réprimandé de ce qu'il adorait les idoles.

Le peuple d'Israël l'enterra dans le champ de Methour, dans le tombeau

սադայ որդւոյն Սեմեայ, որ էր նախահայր հարցն Աբրահամու, որոյ էր գերեզման նորա այր կրկին ։ Եւ էր տիպ մարգարէին այսպէս. գլուխն երկայն եւ չափաւոր, տրտմերես, սակաւ եւ երկայն ունելով զմօրուսն ։]

Հրոտից ԺԶ եւ Յուլիսի ԻԲ ։ Վկայաբանութիւն սրբուհւոյն Գերանդխտոյ պարսկի ։

Կինս այս կին էր մոգպետի ի Պարսիկս, յաւուրս թագաւորին Հոռոմոց Մօրկայ, եւ Պարսից արքային Խոսրովայ ։ Եւ եղեւ ի միում աւուր ի զարմացման թմրութիւն եւ տեսանէ հրեշտակս որ ցուցանեն նմա խաւարային տեղի եւ հուր յորում էին ծնողքն իւր զի էին կռապաշտք. ցուցին նմա եւ այլ տեղի լուսաւոր եւ դրախտ յորում զուարճանային դասք քրիստոնէից, եւ գնաց ինքն զի մտցէ առ նոսա, եւ արգել զնա հրեշտակն եւ ասէ. Ոչ ոք առանց մկրտութեան մտանել կարէ ի լոյսն ։

Եւ յարուցեալ առժամայն գնաց առ քրիստոնեայսն եւ մկրտեցաւ ։ Եւ լուացեալ այրն իւր բարկացաւ, եւ երթեալ պատմեաց Խոսրովու արքային, եւ դատապարտեցին զԳերանդուխտ, եւ առաքեցին զնա ի հեռաւոր եւ ի մոռանալի բանդ, յորում էր խոր

4 Վկայաբանութիւն] Վկայութիւն B — պարսկի] որ Մարիամ անուանեցաւ B || 6 զարմացման թմրութիւն] զարմացուածս թմրութեան B || 7 ցուցանեն] ցուցին B || 10 հրեշտակն] Տեառն *add.* B || 11 մկրտեցաւ] եւ անուանեցաւ Մարիամ *add.* B || 13 ի մոռանալի] յանյայտ B.

d'Arphaxad, fils de Sem, le premier des ancêtres d'Abraham, dont le tombeau avait deux grottes. Telle était la physionomie du prophète : tête longue et moyenne, figure triste, barbe peu fournie et longue.]

16 hrotits, 22 Juillet.

Martyre de sainte Gérandoukht[1], la persane.

Cette femme était l'épouse d'un chef des mages en Perse, aux jours de l'empereur des Grecs, Maurice, et du roi de Perse, Chosroès. Elle tomba un jour dans une torpeur d'extase et vit des anges qui lui montrèrent un endroit obscur avec des flammes, où se trouvaient ses parents qui étaient idolâtres; ils lui montrèrent aussi un autre endroit lumineux, un jardin où les chœurs des chrétiens se réjouissaient; elle s'avança pour y entrer et être avec eux, mais l'ange l'en empêcha en disant : « Personne ne peut entrer dans la lumière sans le baptême. »

Elle se leva aussitôt, se rendit auprès des chrétiens et se fit baptiser. Son mari, l'ayant appris, se mit en colère et alla la dénoncer au roi Chosroès. On condamna Gérandoukht et on l'envoya dans une prison lointaine dans une oubliette, dans laquelle se trouvait un puits profond avec un dragon. On

1. La forme Gorandoukht, plus correcte (Justi, *Iranisches Namenbuch*, Marburg, 1895, p. 121), se trouve dans l'édition de Constantinople de 1706.

վիրապ եւ վիշապ. Թողին զնա անդ զամս տասն եւ ութ : Եւ հրեշտակ Տեառն սանձեաց զվիշապն եւ որպէս գառն ընդելացաւ եւ դնէր զգլուխ իւր առ ոտս Գերանդխտոյ : Եւ հրեշտակ Տեառն մերձեցաւ ի բերան նորա եւ ասէ. Յայսմհետէ ոչ տիրեսցէ քեզ սով եւ * այնչափ ժամանակս ոչ քաղցեաւ, ուսաւ անդ զասորի լեզուն եւ զսաղմոսարանն : * A fol. 318 v° b.

Եւ յետ մահուանն Խոսրովու որդի իւր Որմզդան եհան զԳերանդուխտ ի խոր բանդէն, եւ այնչափ տանջեցին զնա մինչեւ ստինքն հատան եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա : Եւ դարձեալ լցին ի քուրձ հնոցի մոխիր կայծախառն, արկին անդ զգլուխն եւ կապեցին աւուրս բազումս եւ զՔրիստոս ոչ ուրացաւ, եւ արկին ի բանդ : Ապա հրամայեաց անառակ արանց զի պոռնկեսցին ընդ նմա, եւ յորժամ հայէին ի նա ոչ եւս տեսանէին զնա : Հանին ի բանդէն եւ տարան ի հեռաւոր տեղի զի հատցեն զգլուխն եւ կապարեայ մատանեաւ կնքեցին զպարանոցն զի յետ կտրելոյ զգլուխն տարցեն զմատանին առ թագաւորն : Եւ յորժամ տանէին զերանելի կինն հրեշտակ Տեառն հրամայեաց զօրականին արձակել զնա, եւ նա վասն մատանւոյն երկեաւ եւ ասէ. Եթէ ոչ տարայց զմատանին թագաւորն փոխանակ նորա զիս սպանցէ : Եւ հրեշտակն աներեւոյթաբար եհան զմատանին ի պարանոցէն առողջ, եւ ետ ի զօրականն

1 եւ վիշապ] եւ օձք եւ թունաւոր զեռունք ի նմա B — Եւ հրեշտակ... ոչ քաղցեաւ *om.* B || 4 զսաղմոսարանն] որով անդադար օրհնէր զԱստուած *add.* B || 5 իւր Որմզդան] նորա որ նստաւ B || 6 բանդէն] եւ տեսեալ զհաստատութիւն հաւատոյ նորա հրամայեաց *add.* B || 7 տանջեցին] զան հարին B — եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա *om.* B || 9 — p. 1806, l. 4 Ապա հրամայեաց ... երեւէր] Եւ ապա ետուն ցզօրականն մի եւ առաքեցին աքսորս ի հեռաւոր տեղի մեռանիլ անդ իբրեւ զգլխապարտ. եւ ի ճանապարհին հրեշտակ Տեառն երեւեալ զօրականին յանուրջս հրամայեաց արձակել զնա : Եւ երանելի կինն B.

l'y abandonna dix-huit années. Mais l'ange dompta le dragon qui se familiarisa comme un agneau et venait poser sa tête aux pieds de Gérandoukht. L'ange du Seigneur s'approcha de sa bouche et lui dit : « Désormais la faim ne te dominera plus, » et * elle n'eut pas faim pendant tout ce temps-là; elle apprit la langue syriaque et le psautier. * A fol. 318 v° b.

Après la mort de Chosroès, son fils Hormizd (*Ormizden*) fit sortir Gérandoukht de la prison profonde, et on la tortura à tel point que ses seins se détachèrent, mais l'ange du Seigneur la guérit. Ensuite on remplit un sac avec de la cendre de four mêlée à de la braise ardente, et on y introduisit sa tête, on l'y attacha de longues journées, mais elle ne renia point le Christ. On la jeta en prison. (Le roi) ordonna ensuite à des hommes débauchés de forniquer avec elle, mais lorsqu'ils la regardaient, ils ne la voyaient plus. On la fit sortir de la prison et on l'emmena à un endroit éloigné pour lui trancher la tête; on lui scella le cou avec un sceau de plomb afin qu'après lui avoir tranché la tête, on apportât le sceau au roi. Pendant qu'on emmenait la bienheureuse femme, l'ange du Seigneur ordonna au soldat de la mettre en liberté, mais celui-là eut peur pour le sceau, et dit : « Si je

եւ ապա արձակեաց զնա ։ Եւ Գերանդուխտ յոյժ տրտմեցաւ զի ոչ արժանաւորեցաւ
A fol. 319 rº a. վասն Քրիստոսի նահատակութեանն, եւ հրեշտակ Տեառն կամելով կատարել * զփափաքումն նորա սրով մերձեցաւ ի պարանոցն եւ եհերձ զմորթն, եւ հեղաւ արիւնն եւ ներկեաց զհանդերձն եւ խոցն յայտնապէս երեւէր ։

Ապա գնաց յԵրուսաղէմ եւ երկիր եպագ սուրբ տեղեացն, եւ դարձաւ ի քաղաքն Մելիտինէ ։

Իսկ զօրականն որ արձակեաց զերանելին Գերանդուխտ արկին ի բանդ վասն նորա, եւ գիտացեալ Գերանդխտոյ ասէ ցԴոմետիանոս մետրապօլիտն. Եթէ ոչ արձակի զօրականն որ վասն իմ ի մահ մատնեցաւ դարձայց ես անդրէն ի Պարսիկս, եւ տաց զանձն իմ փոխանակ նորա ։ Յայնժամ մետրապօլիտն գրեաց առ Որմզդան Պարսից արքայն, եւ նա արձակեաց զզօրականն, եւ հրամայեաց զի ամենայն քրիստոնեայքն խաղաղութեամբ կացցեն ։

Եւ աղաչեաց զԳերանդուխտ մետրապօլիտն զի երթիցէ ի Կոստանդինուպօլիս եւ օրհնեսցէ զթագաւորն, եւ աղօթս արասցէ վասն նորա եւ վասն քաղաքին, եւ նա ոչ կամեցաւ ասելով եթէ. Մերձեալ է կատարումն կենաց իմոց ։ Գնաց յեկեղեցին սուրբն մերձ ի Մծբին քաղաքն, եւ գոհացաւ զԱստուծոյ եւ աղօթեաց յերկար, եւ հիւանդացաւ

7 զերանելին *om.* B || 8 մետրապօլիտն] քաղաքին *add.* B — արձակի] ազատի B || 12 խաղաղութեամբ] ի խաղաղութեան B.

n'apporte pas le sceau au roi, il me fera tuer à sa place. » Alors l'ange invisiblement enleva du cou le sceau intact, le remit au soldat, et celui-ci délivra Gérandoukht, qui fut très attristée de n'avoir pas été digne d'être martyrisée
A fol. 319 rº a pour le Christ. L'ange du Seigneur, voulant accomplir * son désir, s'approcha de son cou avec une épée et lui coupa la peau, le sang coula et teignit ses vêtements en laissant apparaître la blessure avec évidence.

Elle se rendit ensuite à Jérusalem et se prosterna devant les lieux saints, puis retourna à la ville de Mélitène.

Le soldat qui avait remis en liberté la bienheureuse Gérandoukht, ayant été jeté en prison à sa place et à cause d'elle, Gérandoukht à cette nouvelle dit au métropolite Dométianus : « Si le soldat qui est condamné à mort à cause de moi, n'est pas remis en liberté, je retournerai de nouveau en Perse et me livrerai à sa place. » Alors le métropolite écrivit au roi des Perses, Hormizd, qui relâcha le soldat, et ordonna de laisser vivre en paix tous les chrétiens.

Le métropolite pria Gérandoukht de se rendre à Constantinople, d'y bénir l'empereur, de prier pour lui et pour la ville; mais elle ne consentit point, en disant : « La fin de ma vie est proche. » La sainte se rendit à une église près de la ville de Nisibe, rendit grâces à Dieu et pria longuement; elle fut

աւուրս սակաւս եւ խաղաղութեամբ հանգեաւ ի Քրիստոս Յուլիսի ԻԲ։ Եւ յորժամ մկրտեցաւ Գերանդուխտն Մարիամ անուանեցաւ։

[B * Տօն եւ յիշատակ սուրբ առաքելուհւոյն իւղաբեր հետեւողին Քրիստոսի երանելոյն Մարիամու Մագդաղենացւոյն, ըստ ամենայն ազգաց։ * B p. 35 a.

Սրբուհի աղախինն Քրիստոսի Մարիամ Մագդաղենացին որ մի էր յիւղաբեր կանանցն, սա յառաջագոյն մատուցեալ առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս հետեւեցաւ նմա, զի էր ի Մագդաղեայ ի սահմանացն Ասորոց։ Եւ զոլով նախ ըմբռնեալ ի չեօթն դիւաց յորոց չարչարէր ի լսել զհամբաւս սքանչելեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մինչ շրջէր մարմնով յերկրին Իսրայէլի գնաց առ նա, եւ Տէրն բժշկեալ զնա եհան ի նմանէ զեօթն դեւսն։

Իսկ նա այլ ոչ եւս բաժանեցաւ ի Տեառնէ, այլ թողեալ զտուն եւ զազգականս եւ զամենայն զոր ինչ ունէրն աշակերտեցաւ Տեառն եւ ժուժկալութեամբ ընդ նմա շրջէր, հետեւելով կենարարին մերոյ ի լսել զաստուածային վարդապետութիւնն, եւ յընչից իւրոց պաշտելով զՏէրն եւ զաշակերտսն սպասաւորէր պիտոյից աղքատացն։

Եւ այնպէս ամենայն ուրեք անմեկնելի հետեւելով Փրկչին մերոյ մինչեւ ի կենարար չարչարանսն եւս, որ եւ հանդէպ նստէր ի մահուն, եւ սպասաւոր եղեւ կենարար գերեզմանին յետ որոյ եւ պատրաստելով խունկս եւ եղս բերէր առ ի յօծանել

1 Քրիստոս] Հրոտից ԺԶ եւ *add.* B — Եւ յորժամ . . . անուանեցաւ *om.* B.

malade très peu de jours et reposa en paix dans le Christ, le 22 juillet. Lorsque Gérandoukht s'était fait baptiser elle avait pris le nom de Marie.

[B * Fête et commémoration, selon toutes les nations, de la bienheureuse Marie-Madeleine, la sainte femme apôtre, la myrophore, qui suivit le Christ. * B p. 35 a.

La sainte servante du Christ Marie-Madeleine, qui fut l'une des myrophores, s'était auparavant présentée à Notre-Seigneur Jésus-Christ et l'avait suivi, car elle était de Magdala aux confins de la Syrie. Comme elle avait été auparavant possédée de sept démons, dont elle souffrait, ayant appris la renommée des miracles de Notre-Seigneur Jésus-Christ pendant qu'Il circulait corporellement dans le pays d'Israël, elle s'était rendue auprès de Lui, et le Seigneur l'avait guérie et chassé d'elle les sept démons.

Depuis, elle ne se sépara plus du Seigneur, et ayant quitté sa maison, les membres de sa famille et tout ce qu'elle possédait, elle se fit le disciple du Seigneur et circulait avec persévérance avec lui, suivant notre vivificateur pour écouter son enseignement divin, servant le Seigneur et les disciples de ses biens et pourvoyant aux besoins des pauvres.

C'est ainsi que, suivant partout inséparablement notre Sauveur jusque dans sa passion vivifiante, assise devant Lui à sa mort, elle prit soin du tombeau vivifiant. Puis, ayant préparé des aromates et des parfums, elle les apporta

զմարմինն Տեառն ։ Ուր եւ ետես իսկ զերկուս հրեշտակսն սպիտակազգեստ ի գերեզմանին ի սնարից եւ յանոտից նստեալ ։ Յետոյ ետես եւ զնոյն ինքն զՏէրն ի կերպարանս պարտիզպանի, եւ խօսակցեցաւ ընդ նմա եւ լուեալ ուսաւ ի նմանէ զճշմարիտ ծանօթութիւն յարութեանն զոր ընթացեալ աշակերտացն պատմեաց ։ Եւ այնպէս նախ քան զայլսն զՏէրն յարուցեալ տեսանել արժանի եղեւ վասն առաւել սիրոյն զոր ունէր առ նա ։

Եւ յետ համբառնալոյն Քրիստոսի եւ ընդունելոյ զՀոգին սուրբ գնաց ի Եփեսոս առ սուրբն Յովհաննէս աստուածաբան աւետարանիչն, եւ առ նմա լինելով ճգնէր անդ. որ եւ կացեալ մեծաւ ճգնութեամբ ննջեաց սրբաբար, եւ եդաւ ի մուտս այրին յորում յետոյ ննջեցին եօթն սուրբ մանկունքն ։

Իսկ յետոյ Լեւոնտիոս թագաւորն զսուրբ նշխարս նորա եբեր ի Կոստանդինուպօլիս, եւ եդ ի վանսն Ղազարու զոր ինքն շինեաց. յորում կատարի տարեւոր յիշատակ նորա հանապազ, եւ ի Կուրատորան մերձ Զուարակին ։

Ի սմին աւուր ի Հայք կատարեցաւ վկայութեամբ վասն Քրիստոսի սուրբն Շահապ Արծրունի յազգէն Հայոց եւ այր մի ընդ նմա ի Բաբիլոն, որք յԱմիրմունէ ի գետն արկան վասն Քրիստոսի հաւատոյն ։]

pour en embaumer le corps du Seigneur. C'est là qu'elle vit les deux anges, vêtus de blanc, assis au sépulcre, l'un à la tête, l'autre aux pieds. Elle vit ensuite le Seigneur lui-même sous les apparences d'un jardinier et conversa avec Lui, et elle apprit de Lui la vraie nouvelle de la résurrection qu'elle alla, en courant, transmettre aux disciples. C'est ainsi qu'elle fut digne de voir, avant les autres, le Seigneur ressuscité, en raison de la grande affection qu'elle avait pour Lui.

Après l'Ascension du Christ et après avoir reçu le Saint-Esprit, elle se rendit à Éphèse auprès de l'évangéliste saint Jean le théologien, et, restant près de lui, elle pratiqua l'ascétisme. Après avoir vécu en grand ascétisme elle s'endormit saintement, et fut déposée à l'entrée de la grotte où s'endormirent plus tard les sept saints enfants.

Plus tard l'empereur Léonce fit apporter ses saintes reliques à Constantinople et les déposa dans le couvent de Lazare, qu'il avait fait bâtir; c'est là qu'a toujours lieu la célébration annuelle de sa commémoration et à Curatoron près du Veau.

En ce même jour, en Arménie, périt par le martyre pour le Christ saint Shahap Artzrouni, de nationalité arménienne, avec un autre homme à Babylone; ils furent jetés dans le fleuve pour la foi au Christ par Amirmouni[1].

1. Amirmouni = Amir al-mouminin, l'émir des croyants.

* Հրոտից ԺԷ եւ Յուլիսի ԻԳ ։ Տօն է սուրբ եպիսկոպոսացն Փոկասու եւ Ստեփաննոսի Սիւնեաց ։

* A fol. 319 r° b.

Կացուցին զսուրբն Փոկաս առաջի Ափրիկանոս եպարքոսին, եհարց զնա վասն հաւատոյն իւրոյ եւ նա աստուածային վարդապետութեամբն պատմեաց զխորհուրդս քրիստոնէութեան, եւ վասն մարդեղութեանն Քրիստոսի ։ Եւ զարմացաւ եպարքոսն ընդ հանճարս իմաստութեան նորա եւ ասէ. Թո՛ղ զայդ ամենայն եւ կատարեա՛ զկամս թագաւորին, եւ սկսաւ բանս հայհոյութեան խօսել ։

Եւ եղեւ յանկարծակի ձայն որպէս ի սաստիկ անձրեւէ, եւ շարժ մեծ եւ ահագին, եւ յահէն անկաւ Ափրիկանոս յերկիր եւ այլ զօրականքն, եւ էին որպէս մեռեալք անշունչ ։ Եւ ծագեաց լոյս մեծ առաւել քան զարեգակն, եւ երեւեցան յերկնից չորս հրեշտակք երիվարօք որք խօսեցան ընդ սրբոյն Փոկասու եւ ելին յերկինս ։

Իսկ Տերենտինա կինն Ափրիկանոսի եպարքոսի ընթացաւ հերարձակ, եւ անկաւ յոտս Փոկասու, աղաչէր յարուցանել զայր իւր. եւ նա աղօթեաց առ Աստուած եւ յարոյց զնա ։ Եւ նա երթեալ պատմեաց զամենայն Տրայանոսի արքային եւ նա

1 Տօն ... Սիւնեաց] Տօն եւ վկայութիւն սուրբ եպիսկոպոսին Փոկասու B || 7 զկամս] զհրամանս B || 10 Եւ ծագեաց ... յերկինս *om.* B || 12 անկաւ] անկեալ B || 14 — p. 1810, l. 4 Եւ նա երթեալ ... երեւեցան] Լուեալ թագաւորն Տրայանոս կոչեաց զսուրբն առաջի իւր, եւ յետ բազում հարցման եւ պատասխանւոյ իբրեւ եգիտ հաստատուն ի հաւատն Քրիստոսի հրամայեաց եւ կախեցին զնա, եւ քերեցին ուժգին զմարմին նորա, եւ ապա եդին ի բանդի եւ նա գոհանալով փառաւորէր զԱստուած ։ Եւ յանկարծակի երեւեցան ի բանդի B.

* 17 HROTITS, **23 Juillet.**

* A fol. 319 r° b.

Fête des saints évêques Phocas et Étienne de Siunikh.

On introduisit saint Phocas devant l'éparque Africanus, qui l'interrogea au sujet de sa foi, et il répondit, en expliquant avec une doctrine divine les mystères du christianisme et l'incarnation du Christ. L'éparque fut surpris du talent de sa sagesse, mais il lui dit : « Abandonne tout cela et exécute la volonté de l'empereur » ; puis il se mit à proférer des paroles de blasphème.

Il se produisit tout d'un coup un bruit, comme celui d'une averse, accompagné d'un grand et terrible tremblement de terre ; Africanus, de peur, tomba à terre, ainsi que les autres soldats, et ils furent comme morts, sans souffle. Une grande lumière, plus forte que celle du soleil, jaillit et quatre anges du ciel apparurent, montés sur des chevaux, qui conversèrent avec saint Phocas et remontèrent au ciel.

Terentina, femme de l'éparque Africanus, accourut, les cheveux épars, et tombant aux pieds de Phocas, le pria de ressusciter son mari. Il pria Dieu et le ressuscita. Puis elle alla raconter le tout à l'empereur Trajan, qui fit

կոչեաց առաջի իւր եւ հարցանէր ։ Եւ սուրբ վկայն Քրիստոսի մի ըստ միոջէ, նոյնպէս պատմեաց զամենայն սքանչելիսն Աստուծոյ ։ Եւ հրամայեաց կախել զնա եւ քերեցին

* A fol. 319 v° a.

զմարմին նորա եւ ձայն յերկնից զօրացոյց զնա ։ Եդին զսուրբն ի * բանդ, եւ գոհանալով փառաւորէր զԱստուած ։ Եւ յանկարծակի բացաւ բանդն, եւ երեւեցան ղամպարք եւ ջահք լուսաւորք, եւ որք տեսին հաւատացին եւ մկրտեցան ։

Եւ դարձեալ կացուցին զսուրբն առաջի թագաւորին, եւ անխախտելի եկաց ի հաւատսն Քրիստոսի ։ Արկին զսուրբն ի նոր այրեցեալ կիր զերիս ժամս, եւ Աստուած անարատ պահեաց զնա ։ Եւ ապա ջեռուցին բաղանիս եւ արգելին զնա անդ, եւ համբարձեալ զձեռս իւր յերկինս աղօթեաց առ Աստուած, եւ յորժամ կատարեաց զաղօթսն եւ ասաց զամէնն, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յուլիսի ԻԳ ։ Եւ յորժամ հանին զմարմինն անուշահոտ լեալ իբրեւ զնարդոս ։

Կամեցաւ թագաւորն ելանել ի քաղաքէն, եւ երեւեցաւ նմա սուրբն Փոկաս ի դուռն քաղաքին եւ ասէ. Տրայանոս բռնաւոր, երթիջիր ի պատրաստեալն քեզ տեղի ի հուրն յաւիտենական. ինձ բացան դրունք արքայութեան երկնից ։ Եւ յետ սակաւ աւուրց չարաչար մահուամբ մեռաւ Տրայիանոս ։

8 անարատ] անվնաս B — արգելին զնա] արկին զսուրբն B || 10 Աստուած] Հրամից ժէ եւ *add.* B || 10-13 Եւ յորժամ ... եւ ասէ] Եւ երեւեցաւ սուրբն Փոկաս թագաւորին յանուրջս եւ ասէ B.

venir en sa présence (Phocas) et l'interrogea. Le saint martyr du Christ raconta, à son tour, en détail, tous les miracles de Dieu. (L'empereur) ordonna de le suspendre et de déchirer son corps; mais une voix du ciel le fortifia.

* A fol. 319 v° a.

On jeta le saint * en prison. Tandis qu'il en glorifiait et remerciait Dieu, la prison s'étant ouverte tout d'un coup, des lampes et des flambeaux lumineux apparurent, et tous ceux qui en furent témoins crurent et se firent baptiser.

On introduisit de nouveau le saint devant l'empereur, mais il demeura inébranlable dans la foi au Christ. On jeta le saint dans de la chaux fraîchement cuite, on l'y tint pendant trois heures, mais Dieu le conserva intact. On fit ensuite surchauffer un bain et on l'y enferma, mais il éleva ses mains au ciel et pria Dieu, et tandis qu'il terminait sa prière et disait Amen, il rendit son âme à Dieu, le 23 juillet. Lorsqu'on sortit son corps, il dégageait un parfum comme celui du nard.

L'empereur voulut sortir de la ville; saint Phocas lui apparut à la porte de la ville et lui dit : « Trajan, tyran, tu iras à l'endroit qui t'est préparé, dans les flammes éternelles; pour moi les portes du royaume des cieux se sont ouvertes. » Peu de jours après Trajan mourut d'une mort cruelle.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի ։

Երանելին Ստեփաննոս եպիսկոպոս էր Սիւնեաց, եւ էր վարժ աստուածային գրոց գիտութեան ։ Գնաց ի Կոստանդինուպօլիս, եւ ուսաւ յունարէն լեզու եւ գիր, եւ եղեւ թարգմանիչ ։ Եւ թարգմանեաց զգիրսն Դիոնէսիոսի Աթենացւոյ աշակերտին Պօղոսի. արար եւ ինքն *լուծմունս նմին ։ Թարգմանեաց եւ զգիրսն Գրիգորի Նիւսացւոյն * A fol. 319 v° b. եղբօր Բարսղի որ վասն բնութեան եւ կազմութեան մարդոյն ։ Գնաց եւ ի Հռոմ, եւ եբեր անտի գիրս երիս վասն ճշմարիտ հաւատոյ ։

Եւ պատրիարքն Կոստանդինուպօլսի Գերմանոս գրեաց թուղթ ի Հայս թէ. Ընդէ՞ր ոչ ասէք Քրիստոսի երկու բնութիւն յայտնապէս, եւ ընդունիք զժողովն Քաղկեդոնի ։ Եւ ի ձեռն Ստեփաննոսի առաքեաց ի Հայս ։

Եւ եկեալ Ստեփաննոսի յերկիրն Հայոց, Բաբգէն կաթողիկոսն Հայոց ձեռնադրեաց զնա արքեպիսկոպոս մեծ աթոռոյն Սիւնեաց, հրամանաւ Քուրդոյի իշխանին Սիւնեաց ։ Եւ հրամայեաց Բաբգէն կաթողիկոսն Հայոց Ստեփաննոսի գրել պատասխանի թղթոյն Գերմանոսի պատրիարքին ։ Եւ գրեաց յոյժ գեղեցիկ գրոց վկայութեամբ եւ սուրբ

1 աւուր] տօն եւ *add.* B || 2 եպիսկոպոս էր Սիւնեաց] աշակերտ էր Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսին B || 4 Աթենացւոյ] եւ Արիսպագացւոյ *add.* B || 8 թէ... Քաղկեդոնի] վասն հաւատոյ B.

En ce jour martyre de saint Étienne, l'évêque de Siunikh.

Le bienheureux Étienne était évêque de Siunikh; il était versé dans la science des écritures divines. Il se rendit à Constantinople et y apprit la langue et la littérature grecques, et devint traducteur. Il traduisit les œuvres de Denys l'Athénien, disciple de Paul, et en fit lui-même des explications. *Il traduisit aussi les ouvrages de Grégoire de Nysse, frère de Basile, sur la nature et la formation de l'homme. S'étant rendu à Rome, il en rapporta trois ouvrages sur la vraie foi. A fol. 319 v° b.

Germain, patriarche de Constantinople, avait écrit aux Arméniens : « Pourquoi n'attribuez-vous pas explicitement deux natures au Christ, et acceptez-vous le concile de Chalcédoine? » Il envoya cette lettre par l'intermédiaire d'Étienne aux Arméniens.

Étienne étant arrivé en Arménie, le catholicos des Arméniens, Babgen, le sacra archevêque du grand diocèse de Siunikh, avec l'autorisation de Khourto, prince de Siunikh. Babgen, catholicos des Arméniens, ordonna à Étienne de répondre à la lettre du patriarche Germain. Il écrivit une très belle (lettre) avec le témoignage des Écritures et de la profession de foi des

հարցն դաւանութեանս, զոր իբրեւ ընթերցան իմաստունքն Յունաց յոյժ գովեցին զհաւատս Հայոց ճշմարիտ եւ առանց հերձուածոյ :

Արար եւ մեկնութիւնս համառօտ չորից աւետարանացն եւ արարածոցն, եւ Յոբայ, եւ այլ գրոց : Արար եւ շարականս ձայնաւորս եւ կցուրդս քաղցր եղանակաւ : Եւ սրբէր զճիւաղաբարոյ երկիրն Սիւնեաց յամենայն պղծութենէ, եւ քարոզէր սրբու-

* A fol. 320 r° a. թեամբ եւ * պարկեշտութեամբ կեալ որպէս վայել է քրիստոնէից :

Եւ էր կին մի իշխանի միոյ պոռնիկ եւ ազգապիղծ ի գեօղ մի որ կոչի Մոզ, զոր բազում անգամ խրատէր սուրբն ի բաց կալ ի պիղծ գործոյն, եւ կինն առաւել լրբէր : Դէպ եղեւ սրբոյն գալ ի գեօղն յայն եւ զի էր ժամն տօթ պատրաստեցին զմահիճան նորա ի վերայ ուռի ծառի միոյ : Եւ կինն պոռնիկ ստիպէր զայր իւր երթալ սպանանել զնա, եւ այրն առեալ զդանակն գնայ ի ծառն ուր ննջէր սուրբն զի սպանցէ զնա, եւ տեսանէր զի ընդ շնչոյն բոց հրոյ ելանէր ի բերանոյ նորա, եւ երկուցեալ ոչ սպան զնա եւ կնոջն առեալ զսուրն եհար ի սիրտն նորա : Եւ երկիրն առ հասարակ ճչեաց մարդկաբար եւ ասէ. Վա՜յ : Եւ կոչի մինչեւ ցայսօր Վայոց ձոր :

Եւ աշակերտքն նորա բարձեալ զմարմին նորա տարան յԱրկազեան սենեակն, եւ անտի ի Թանատի վանքն, եւ թաղեցին ի դուռն եկեղեցւոյն, ուր բազում բժշկութիւնք լինին մինչեւ ցայսօր :

13 Եւ երկիրն ... Վայոց ձոր *om.* B.

saints pères, et lorsque les sages Grecs l'eurent lue, ils firent de grands éloges sur l'orthodoxie des Arméniens, exempte d'hérésie.

Il fit également les commentaires abrégés des quatre évangiles, de la Genèse, de Job et d'autres livres. Il composa aussi des hymnes chantées et des antiennes d'une douce mélodie. Il purifia le pays de Siunikh aux mœurs monstrueuses de toutes les abominations et y prêcha la vie sainte

* A fol. 320 r° a. et * pudique telle qu'elle convient aux chrétiens.

Il y avait une femme de prince, fornicatrice et incestueuse, dans un village appelé Moz, que le saint avait maintes fois engagée à abandonner ses œuvres immondes; mais la femme avait augmenté son insolence. Il arriva que le saint passant par ce village, on lui prépara, à cause de l'heure du grand hâle, une couchette sur les branches d'un arbre. La femme impudique pressa son mari d'aller tuer (le saint). Le mari, armé d'un couteau, se rendit à l'arbre où reposait le saint avec l'intention de le tuer, mais ayant aperçu qu'avec le souffle il sortait des flammes de sa bouche, il eut peur et ne le tua point. La femme, saisissant le couteau, en frappa le cœur (du saint). La terre entière se mit à crier comme un homme et dit : « Malheur. » Et cet endroit s'appelle jusqu'aujourd'hui Vaïotzor[1].

Ses disciples enlevèrent son corps, l'emportèrent à la chambre d'Arkazean, et de là au couvent de Thanat, où ils l'inhumèrent à la porte de l'église; de nombreuses guérisons ont lieu en cet endroit jusqu'aujourd'hui.

1. Mot à mot à « la Vallée de Malheur. »

Իսկ միայնակեաց մի Նոյ անուն տեսանէր զսուրբն Ստեփաննոս առաջի Քրիստոսի, եւ զող նորա լի արեամբ եւ ասէր. Տես Տէր զի քո է վրէժխնդրութիւն ։ Եւ ազդեաց գաւառին ապաշխարել ։ Եւ ահա մէգ եւ մառախուղ պատեաց զերկիրն եւ եղեւ շարժ սաստիկ եւ ընկղմեաց բազում մարդիկ եւ անասուն ։

* Կատարեցաւ սուրբն Ստեփաննոս Յուլիսի ԻԳ ։ * A fol. 320 r° b.

Յայսմ աւուր տօն է Մարիամայ Մագդաղենացւոյն ։

Աղախինն Քրիստոսի Մարիամ էր ի սահմանացն Մագդաղեայ Ասորոց, յորմէ ելին եօթն դեւքն, աշակերտեցաւ Քրիստոսի, եւ ի գերեզմանն անուշ եղօք եւ խնկօք օծ զմարմին Տեառն, եւ ի Յարութեանն նախ քան զայլ կանայսն ընդ Մարիամու Աստուածածնին ետես զՔրիստոս յարուցեալ ի մեռելոց, եւ զկնի Համբարձմանն Տեառն գնաց յԵփեսոս առ Յովհաննէս աւետարանիչն ։ Եւ մեծ ճգնութեամբ կացեալ հանգեաւ ի տեղւոջն ։

[B * Յայսմ աւուր ի Հայս յիշատակ Սամուելի իշխանի աշակերտի Թադէոսի առաքելոյ, եւ այլ եւս եօթն վկայիցն ընդ նմա, որք կատարեցան ի Սանատրուկ արքայէն ։ * B p. 37 a.

Ի սմին աւուր վկայութիւն Ապողինարի եպիսկոպոսի զոր Պետրոս առաքեալն

1-4 Իսկ միայնակեաց . . . անասուն *om.* B || 5 Ստեփաննոս] Հրոտից ԺԷ եւ *add.* B.

Un cénobite du nom de Noé vit saint Étienne, devant le Christ, sa poitrine pleine de sang, qui disait : « Regarde, Seigneur, car la vengeance t'appartient »; et il avertit la province de faire pénitence. Et voilà que le brouillard et la brume enveloppèrent le pays, il se fit un violent tremblement de terre qui engloutit beaucoup de personnes et d'animaux.

* Saint Étienne fut martyrisé le 23 juillet. * A fol. 320 r° b.

En ce même jour fête de Marie-Madeleine.

La servante du Christ Marie, de qui sept démons furent chassés, était de la contrée de Magdala de Syrie. Elle devint disciple du Christ, et c'est elle qui, au tombeau, oignit le corps du Seigneur avec des huiles suaves et des aromates. A la Résurrection c'est elle qui, avant toutes les autres femmes, vit avec Marie, mère de Dieu, le Christ ressuscité des morts; et après l'Ascension du Seigneur, elle se rendit à Éphèse auprès de l'évangéliste Jean. Après avoir vécu en grand ascétisme, elle reposa dans cet endroit.

[B * En ce jour, en Arménie, commémoration du prince Samuel, disciple de l'apôtre Thaddée, et de sept autres martyrs avec lui, qui furent martyrisés par le roi Sanatrouk. * B p. 37 a.

En ce même jour martyre de l'évêque Apollinaire, que l'apôtre Pierre

կարգեաց եպիսկոպոս Ռաւեննիոյ, որ հրով կատարեցաւ ի Վեսպիանոսէ թագաւորէ :

Ի սոյն աւուր հանգեաւ ի Քրիստոս սոսկալի տանջանօք եւ նահատակութեամբ մեծ եւ ամենագովելի պարոն եւ թագաւորահայրն Հայոց Թորոս, եւ թաղեցաւ ի գամբարանի հարց իւրոց ի սուրբ ուխտն Դրազարկ :

Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս պարոն Թորոս որդի Լեւոն թագաւորին Հայոց, որ սպանաւ ի Բարձրբերդ :]

Հրոտից ԺԸ եւ Յուլիսի ԻԴ : Տօն եւ վկայութիւն սրբուհւոյն Քրիստինեայ :

Սոյս վկայն Քրիստոսի Քրիստինեա էր ի Տիւրոս քաղաքէն, դուստր Ուրբանոսի դատաւորի, որ շինեալ աշտարակ բարձր եմոյծ զդուստր իւր անդ, եւ զկուռս իւր արծաթեղէնս կանգնեաց ի սենեակ աշտարակին :

Եւ ի միում աւուր լուսաւորեցան միտք կուսին Հոգւով սրբով, եւ ընդ պատուհան սենեկին հայեցաւ յերկինս, եւ զմտաւ ած զարարողն ամենեցունց, եւ հաւատաց յամենասուրբ Երրորդութիւնն, եւ զամենայն կուռս հօր իւրոյ խորտակեաց եւ բաշխեաց

7 Տօն ... Քրիստինեայ] Վկայութիւն սրբուհւոյ կուսին Քրիստինեայ B || 9 դատաւորի ... աշտարակին] տորատեղատի եւ կռապաշտի : Եւ էր վայելուչ կերպարանաւ եւ յոյժ գեղեցիկ տեսլեամբ, զոր բազումք ի մեծամեծաց ցանկային հարսնացուցանել որդւոց իւրեանց : Այլ հայր նորա շինեաց աշտարակ բարձր եւ եմոյծ զդուստր իւր անդ. եւ զկուռս իւր զարծաթեղէն եւ զոսկեղէն կանգնեաց ի սենեակ աշտարակին, եւ կարգեաց զդուստրն ի սպասաւորութիւն կռոցն իւրոց զի առաւել սիրելի լիցի աստուածոց իւրոց B || 13 յամենասուրբ Երրորդութիւնն] ի ճշմարիտն Աստուած B.

avait établi évêque de Ravenne, et qui fut martyrisé par les flammes sur l'ordre de l'empereur Vespasien (*Vespianos*).

En ce même jour reposa dans le Christ, après avoir été martyrisé dans d'horribles tortures, le grand baron digne de tous éloges, et père du roi d'Arménie, Thoros. Il fut enterré dans le caveau de ses ancêtres dans le saint monastère de Drazark.

En ce jour également reposa dans le Christ le baron Thoros, fils du roi Léon d'Arménie, qui fut tué à Bartzerberd.]

18 HROTITS, **24 Juillet**.

Fête et martyre de sainte Christine.

La vierge martyre du Christ Christine était de la ville de Tyr, fille du juge Urbain, qui, ayant fait bâtir une haute tour, y enferma sa fille, et plaça ses idoles en argent dans la salle de la tour.

Un jour, l'esprit de la vierge se trouva illuminé par le Saint-Esprit et, regardant le ciel par la fenêtre de sa chambre, en contemplation du créateur de toutes choses, elle crut à la très sainte Trinité, brisa toutes les idoles

կարօտելոց : Եւ գիտացեալ հօրն տանջեաց զնա ուժգին եւ արկ * զնա ի բանդ : Եւ ի գիշերին իջին հրեշտակք յերկնից եւ ողջացուցին զվէրսն եւ զնա կերակրեցին : * A fol. 320 v° a.

Եւ յետ աւուրց հանին ի բանդէն եւ տարեալ ընկեցին ի ծովն, եւ հրեշտակ Տեառն իջեալ եհան եւ կանգնեաց զնա ի վերայ ջրոյն որպէս ի ցամաքի : Եւ իջեալ Տէրն յերկնից մկրտեաց զնա ի ծովն, եւ Միքայէլ հրեշտակապետն եհան զնա ի ցամաքն : Եւ գտեալ հօր իւրոյ զնա եդ ի բանդի : Եւ ի գիշերին յայնմիկ ի հրեշտակէ խոցեալ Ուրբանոս հայր իւր չար մահուամբ մեռաւ :

Իսկ Դիոն դատաւորն խստագոյն եւ դառն չարչարանօք տանջեաց զՔրիստոսի որոջն, եւ առաւել հաստատուն արար զնա ի հաւատսն Քրիստոսի, եւ բազում սքանչելիս արար, եւ մեռեալս յարոյց զոր տեսին անհաւատք եւ հաւատացին ի Քրիստոս անձինք երեք հազարք :

Եւ փոխեցաւ դատաւորն այն եւ եկեւ Յուլիանոս ոմն, հրամայեաց եւ արկ զաղախինն Քրիստոսի ի հնոց հրոյ, եւ ոչ այրեցաւ : Ընկեցին զնա ի գազանս, եւ ոչ մերձեցան ի

2 Եւ ի գիշերին ... կերակրեցին *om.* B || 3-8 Եւ յետ աւուրց ... չարչարանօք] Եւ յետ աւուրց հրամայեաց եւ հանին ի բանդէն եւ տարեալ ընկեցին ի ծովն. եւ քանզի փափաք մեծ ունէր մկրտութեան, տեսանէր սուրբ կոյսն որպէս թէ Տէրն ինքնին իջեալ յերկնից մկրտէր զնա անդ : Եւ մինչ կարծէր հայր իւր թէ հեղձամահ եղեւ, եգիտ զնա ի ցամաքի. քանզի հրեշտակ Աստուծոյ ապրեցոյց զնա. եւ կալեալ զնա հայրն եդ ի բանդի, եւ խորհէր գլխատել զնա եւ ի գիշերին յայնմիկ ինքն եղեւ յանկարծամահ : Ապա եկն Դիոն դատաւորն եւ խստագոյն տանջանօք չարաչար B || 9 հաստատուն արար] հաստատեաց B || 10 եւ մեռեալս յարոյց *om.* B || 13 եւ ոչ այրեցաւ] եւ պահեցաւ կենդանի զօրութեամբն Քրիստոսի B.

de son père et les distribua aux indigents. Son père, l'ayant appris, la tortura beaucoup et la jeta * en prison. La nuit, des anges descendirent du ciel, guérirent ses plaies et la nourrirent. * A fol. 320 v° a.

Après quelques jours, on la fit sortir de la prison et, l'ayant emmenée, on la jeta à la mer. Mais l'ange du Seigneur, étant descendu, l'en retira et la dressa debout sur les eaux comme sur terre ferme. Le Seigneur, descendu du ciel, la baptisa dans la mer, puis l'archange Michel l'emmena et la déposa sur le rivage. Son père, l'ayant retrouvée, la fit mettre en prison. Cette nuit-là, son père Urbain, blessé par l'ange, mourut d'une mort cruelle.

Le juge Dion infligea à la brebis du Christ des tortures plus dures et plus cruelles encore qui la raffermirent davantage dans la foi au Christ. Elle fit beaucoup de prodiges et ressuscita des morts. A cette vue, les infidèles crurent au Christ, au nombre de trois mille.

Ce juge ayant été changé, il vint un certain Julien, qui ordonna de jeter la servante du Christ dans une fournaise, mais elle ne fut pas brûlée. On la jeta aux fauves, qui ne s'approchèrent point d'elle; on lui coupa les seins

նա, հատին զստինսն եւ զլեզուն եւ փոխանակ արեանն կաթն բղխեաց ։ Եւ եղեւ ձայն յերկնից եւ ասէ. Քրիստինէ անբիծ եւ անարատ կոյս, բազում չարչարանաց համբերեցեր վասն իմ, եւ ամենայն հրեշտակք օրհնեցին զՀայրն իմ եւ զիս վասն քո, որ մանկութեամբ քո այնչափ ժուժկալեցեր, զօրացիր զի բացան քեզ երկինք * եւ արքայութիւնն իմ պատրաստեալ է քեզ, եկեսցես եւ տեսցես զպսակս անապականս ։

* A fol. 320 v° b.

Եւ մի ոմն ի զօրականացն եհար զսուրն ի սիրտն եւ ի կողն Քրիստինեայ, եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յուլիսի ԻԴ ։

Յայսմ աւուր յիշատակ է երանելի աղախնոյն Աստուծոյ Ողոմբիա ։

Սա էր ի Կոստանդնուպօլիս յաւուրս բարեպաշտ թագաւորացն Մեծին Թէոդոսի եւ որդւոցն իւրոց Արկադիոսի եւ Ոնորիոսի, եւ սրբոյն Յոհաննու Ոսկեբերանին, որ եւ ներբողական գովասանութեամբ ճառս գրեաց վասն նորա ։ Եւ վանքն նորա մերձ է մեծի եկեղեցւոյն Կոստանդնուպօլսի ։

* B p. 39 a.

[B * Եւ յայսմ աւուր վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ վկայիցն Քրիստոսի Ռոմանոսի եւ Դաւթի, որք ի յՌուսք կատարեցան յանօրէն եղբօրէն իւրեանց ։

1 ի նա] եւ ապա հրամայեաց եւ *add.* B — եւ փոխանակ ... անապականս] եւ նա աղօթէր առ Քրիստոս, եւ ուրախ էր ընդ բազում չարչարանսն զի քաջայոյս էր հասանել նոքօք յարքայութիւնն երկնից, եւ առնուլ զպսակն անապական B || 8 Աստուած] Հրամից ժԸ եւ *add.* B || 8 Աստուծոյ Ողոմբիա] Քրիստոսի Ոլոմբիայի ճգնաւոր մօր մերոյ B || 10 սրբոյն *om.* B || 11 որ եւ ներբողական ... վասն նորա] անդադար պարապեալ յաղօթս եւ ի պահս առաքինի վարուք եւ խստամբեր ճգնութեամբ. որ եւ զմեծ մասն ընչից իւրոց բաշխէր աղքատաց եւ եկեղեցեաց ։ Արտաքսման եղեւ վասն ճշմարտութեան հրամանաւ Եւդոքսիայ թագուհւոյն, ուր եւ կատարեցաւ ամենայն բարեպաշտութեամբ Յուլիսի ԻԴ ։ Զսա ներբողական գովասանութեամբ ճառագրեաց ի դարձի իւրում երանելին Յովհան Ոսկեբերան B.

et la langue, mais au lieu de sang, il coula du lait. Une voix du ciel se fit entendre, qui dit : « Christine, vierge pure et sans tache, tu as enduré bien des tortures pour moi; tous les anges ont béni mon Père et Moi, à cause de toi, parce que, étant jeune, tu as si bien persévéré; prends courage, car le ciel est ouvert pour toi * et mon royaume t'est préparé; tu viendras et tu verras des couronnes impérissables. »

* A fol. 320 v° b.

Un des soldats frappa Christine de son glaive au cœur et au flanc et c'est ainsi qu'elle rendit son âme à Dieu, le 24 juillet.

En ce jour commémoration de la bienheureuse servante de Dieu Olympe.

Elle vivait à Constantinople aux jours des pieux empereurs Théodose le Grand et ses fils Arcadius et Honorius, et de saint Jean Chrysostome qui écrivit sur elle un discours panégyrique. Son couvent se trouve proche de la grande église de Constantinople.

* B p. 39 a.

[B * Et en ce jour martyre des saints et glorieux martyrs du Christ Romanos et David, qui furent martyrisés en Russie par leur frère impie.

Աշխարհն Ռուզաց յանհաւատութեան էր մինչեւ ի ժամանակս ինքնակալութեանն Հոռոմոց Ալեքսի, յորոյ աւուրս նստաւ նոցա թագաւոր Փռամերոս անուն. եւ սա հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ յորոյ ձեռն դարձաւ եւ ամենայն * աշխարհն ի ճշմարիտ հաւատս Քրիստոսի ։ Իսկ նախ քան զհաւատալն ծնեալ էր թագաւորն երկոտասան որդի յայլ եւ այլ կանանց, յորոց վերայ բաժանեաց զտէրութիւն աշխարհին ։ * B p. 39 b.

Իսկ սոքա երկոքին համամայր գոլով որք կոչեցան յաւազանէն Ռոմանոս եւ Դաւիթ բարեբարոյ էին եւ աստուածասէր քան զամենայն եղբարսն. որ եւ միշտ զհանդերձեալ կեանսն խոկային յերիտասարդական հասակին մինչեւ սիրելի լինել ամենեցուն ։ Եւ անկեալ հայր նոցա ի հիւանդութիւն ասպատակեցին յայնժամ ազգն Պիծանկաց յաշխարհն, եւ առաքեաց թագաւորն զՌոմանոս զօրօք ընդդէմ նոցա, եւ յայնժամ վախճանեալ իւր ուղիղ հաւատով ի Քրիստոս ։

Անդրանիկն յորդւոցն որում անուն էր Եւսդապօլկաս մերձ հանդիպեցաւ, որ էր այր ժանտ եւ մախայր ընդ սուրբն Ռոմանոս եւ ընդ Դաւիթ ։ Եւ յորժամ դարձաւ սուրբն Ռոմանոս ի մարտէն, թագուցանէր ի նմանէ զվախճան հօրն եւ հնարէր թէ որպէս կորուսցէ զնա զի ինքն առանց հակառակութեան տիրեսցէ ։

Այլ Ռոմանոս լուեալ զվախճան հօրն ողբայր, եւ ծանուցեալ զօրացն Ռոմանոսի զնենգութիւն եղբօրն թախանձէին զնա յառնել ի վերայ նորա ։ Իսկ սուրբն ոչ կամեցաւ վասն աւագութեանն այլ ասէ. Ատեցի ես զունայնութիւն կենցաղոյս, եւ պատրաստ

Le pays des Russes fut sans foi jusqu'à l'époque du règne d'Alexis sur les Grecs, aux jours duquel un nommé Vladimir (*Phrameros*) devint leur roi; celui-ci crut au Christ et se fit baptiser, et par lui tout * le pays se convertit à la vraie foi du Christ. Mais avant de croire, le roi ayant eu douze fils de plusieurs femmes, il avait partagé entre eux le gouvernement du pays. * B p. 39 b.

Les deux, nés de la même mère, qui furent appelés sur les fonts baptismaux, Romanos et David, furent de meilleures mœurs et plus amis de Dieu que tous leurs frères; ils songèrent continuellement dans leur jeunesse à la vie future et furent aimés de tout le monde. Leur père étant tombé malade, les Byzantins en profitèrent pour envahir le pays. Le roi envoya Romanos contre eux à la tête des troupes, puis mourut dans la vraie foi du Christ.

L'aîné des fils, dont le nom était Sviatopolk (*Eusdapolkas*), se trouvait là; c'était un homme méchant qui jalousait les saints Romanos et David. Lorsque saint Romanos revint de la guerre, il lui cacha la mort de leur père et s'efforça de le faire périr, afin de régner sans conteste.

Romanos, ayant appris la mort de son père, gémit, et les troupes de Romanos, ayant reconnu la traîtrise de son frère, le supplièrent de marcher contre lui. Mais le saint n'y consentit point à cause de sa situation d'aîné, et dit : « J'ai haï la vanité de la vie, et je suis prêt à mourir pour l'espérance

եմ ի մահ վասն յուսոյն Քրիստոսի ։ Եւ մինչդեռ էր ի խորանն իւր արտաքոյ քաղաքին Կիլայոյ, եւ կատարէին առաջի նորա զառաւօտին աղօթսն քահանայքն, յանկարծակի հասին զինուորք առաքեալք յանօրէն եղբօրէն Եւստապօլկայ, եւ հարին սրով զերանելին ։

Իսկ նա զի ունէր առաջի զնկարագիր տէրունական պատկերին, աղաղակեաց առ նա. Ի քեզ Տէր անձկամ գալ, զի թէպէտ եւ գեղ մարմնոյ իմոյ ի սրոյս թառամի, այլ հոգի իմ փութայ տեսանել զքեզ ցնծութիւն իմ ։ Դու գիտես Տէր զի անպարտ
* B p. 40 a. մեռանիմ, * եւ վասն նախանձու որպէս զԱբէլն ի Կայենէ. այց արա ինձ վրէժխնդիր Աստուած ։

Եւ մինչդեռ փութային զխոցոտեալ մարմին սրբոյն սպանանել, խնդրեաց սակաւիկ մի յաղօթս կալ, եւ ասէ. Փառք քեզ Տէր որ զերծուցեր զիս յունայնութենէ կենցաղոյս ։ Լային որ շուրջն կային զգրկիլն իւրեանց ի բարի տեառնէն եւ ասէին. Ո՞վ քրիստոսասէր զիա՞րդ ոչ կամեցար զփառս աշխարհիս, այլ կամաւ մատնեցեր զանձն անիրաւ մահուդ ։

Եւ հարին ընդ սրբոյն զմի ի պաշտօնէիցն որում անուն էր Գէորգէոս. բարձին ապա զերանելին ի սայլ եւ տանէին ի բերդն Վեսոլռատոն ։ Եւ մինչդեռ կենդանի էր, եկին այլ զինուորք առաքեալք յանօրինէն, եւ բացին սրով զկողս նորա. եւ յանժամ

au Christ. » Pendant qu'il se trouvait sous sa tente, hors de la ville de Kila [1], et que les prêtres célébraient en sa présence l'office du matin, les soldats envoyés par son frère impie Sviatopolk (*Eustapolkas*) survinrent à l'improviste et frappèrent le bienheureux par l'épée.

Mais lui, qui avait devant soi l'image du Seigneur, cria vers elle : « Seigneur, j'aspire à venir vers toi, bien que la beauté de mon corps soit fanée par l'épée; mon âme a hâte de Te voir, Toi qui es ma joie. Tu sais,
* B p. 40 a. Seigneur, que je meurs innocent, * et pour cause de jalousie comme Abel par Caïn. Rends-moi visite, Dieu vengeur. »

Pendant qu'ils se hâtaient de massacrer le corps blessé du saint, celui-ci demanda à prier un instant, et dit : « Gloire à Toi, Seigneur, qui m'as délivré de la vanité de cette vie. » Tous ceux qui l'entouraient, pleuraient d'être privés de leur bon maître et dirent : « O ami du Christ, pourquoi as-tu refusé la gloire de la terre et as-tu livré volontiers ta personne à cette mort injuste? »

En même temps que le saint, on avait frappé un de ses serviteurs dont le nom était Georges; puis on avait hissé le bienheureux sur un chariot pour le conduire à la forteresse de Vysegrad (*Vesolraton*). Pendant qu'il était encore en vie, arrivèrent d'autres soldats envoyés par l'impie, qui lui ouvrirent les flancs par l'épée; il rendit alors son âme, comme de l'encens suave,

1. La ville s'appelle « Alta » dans *Acta SS.* Sept., t. II, p. 641.

աւանդեաց զհոգին իւր որպէս զխունկ անոյշ ի ձեռս Աստուծոյ, եւ զմարմինն մուծին ի բերդն, եւ եդին յեկեղեցի սրբոյն Բարսղի :

Ապա առաքեաց հրեշտակս եւ առ համամայր եղբայր սրբոյն Դաւիթ եթէ. Հայրն քո կոչէ զքեզ : Որոյ եկեալ մերձ ի քաղաքն, եւ լուաւ զմահ հօրն եւ զինքնայօժար սպանումն եղբօրն, լայր դառնապէս եւ աղիողորմ բանս խօսէր առ եղբայրն. Վա՜յ ինձ եղբայր իմ սուրբ, ո՞րպէս զրկեցայ ի քէն տարապարտուց. այլ դու որ ունիս համարձակութիւն առ Տէր, խնդրեա՛ առնուլ զիս քեզ չարչարակից եւ փառացդ հաղորդ :

Եւ մինչդեռ գայր նաւակաւ ընդ գետն ողբալով, եկին զինուորք յանօրէն եղբօրէն Սւատապօլկայ, կալան զսուրբն, եւ մինչդեռ աղօթէր հատին զգլուխն որ մատեաւ Աստուծոյ պատարագ անբիծ : Եւ առեալ զմարմին երանելոյն ձգեցին ի յանապատ տեղի ի քարանձաւս վիմաց. այլ Աստուած ոչ ծածկեաց զպատուական գանձն, զի մնաց մարմինն ամբողջ բազում ժամանակս եւ անմերձ ի գազանաց, այլ եւ սիւն լուսոյ տեսանէին ի տեղին ուր էր, * եւ ձայն հրեշտակաց լսէին : Զայս եկեալ միանգամ եւ * B p. 40 b. երկիցս հովիւք պատմեցին, եւ անփոյթ եղեւ ի լսողացն որչափ էր իշխանութիւն անօրինին Սւատապօլկայ զի երկնչէին ի նմանէ :

Իսկ ապա ոչ ի սպառ երկայնամտեաց անօրինին ներողութիւնն Աստուծոյ, այլ վրէժխնդիր եղեւ արեան արդարոցն ի նմանէ. եւ գործեցաւ այս ի ձեռն եղբօրն իւրեանց

entre les mains de Dieu. On introduisit le corps dans la forteresse et on le déposa dans l'église de saint Basile.

(Sviatopolk) envoya ensuite des ambassadeurs au frère utérin (de Romanos), saint David, disant : « Ton père t'appelle. » Arrivé près de la ville, (David) y apprit la mort de son père, et le sacrifice bénévole de son frère; il versa beaucoup de larmes et adressa des paroles touchantes à son frère : « Malheur à moi, mon saint frère, qui suis privé de toi sans raison; mais toi qui as libre accès auprès du Seigneur, demande-Lui de m'accepter comme partenaire de tes tortures et de ta gloire. »

Et pendant qu'en gémissant il arrivait par le fleuve sur un bateau, les soldats envoyés par son frère impie Sviatopolk arrivèrent, saisirent le saint et, pendant qu'il priait, lui tranchèrent la tête, tandis qu'il s'offrait à Dieu comme une victime sans tache. On emporta le corps du bienheureux et on le jeta dans un endroit désert parmi les cavernes des rochers; mais Dieu ne tint point caché le précieux trésor, car le corps demeura intact de longs jours et ne fut point approché par les fauves; on apercevait même à l'endroit où il se trouvait une colonne de lumière et on entendait * la voix des anges. B * p. 40 b
Des bergers vinrent raconter ceci une et deux fois, mais ceux qui l'apprirent le négligèrent, tant que l'impie Sviatopolk fut au pouvoir, car ils le craignaient.

Cependant la tolérance de Dieu ne dura pas toujours à l'égard de l'impie, mais elle tira vengeance de lui pour le sang des justes, et ceci fut fait par

բարեպաշտի որում անուն էր Ռոստլաւուս. որոյ եկեալ բազում զօրօք ի տեղի նահատակութեան սրբոյն Դաւթի, մարտեաւ ընդ անօրէն եղբայրն եւ փախստական արար, որ սատակեցաւ չարաչար ։

Եւ սա բարեպաշտս Ռոստլաւուս տիրեաց ամենայն աշխարհին. որ եւ խուզեալ զնշխարս երանելեացն ցուցին նմա եւ ելեալ յանապատն գտին զմարմին սրբոյն Դաւթի որպէս ի քուն ։ Բարձին սաղմոսիւք եւ օրհնութեամբ եւ բերին եդին յեկեղեցին մերձ յերանելին Ռոմանոս ։

Սոցա ետ Աստուած մեծ շնորհս սքանչելագործութեան, եւ զնորահաւատ աշխարհն Ռուսաց պէսպէս նշանօք որ լինի յերանելեացն մինչեւ ցայժմ, հաստատեաց ի գիտութիւն ճշմարտութեան ։ Զի սոքա երկոքեանս որպէս լուսաւորք ճառագայթեցին ի նոսա զհաւատս Քրիստոսի ամենահամբաւ սքանչելեօքն իւրեանց, յորոց զնեմք կարճառօտ ի կարգ պատմութեանս ։

Ա. Եկին երբեմն զինուորք յեկեղեցի սրբոյն Բարսղի յաղօթել, եւ մի ի նոցանէ անզգուշաբար ել ի վերայ տապանի սրբոցն ուր էին մարմինք նոցա, զի չէին դեռ եւս հռչակեալ երանելիքն եւ առժամայն խարշատեցան ոտք առնն որպէս ի հրոյ, եւ յայնմհետէ ամենեքեան զգուշանային տապանին ։

Բ. Յետ այսր սքանչելեաց սակաւ աւուրք անցին երեւեցաւ հուր վառեալ յեկե-

les mains de leur pieux frère, dont le nom était Rostislav (*Rostlavous*). Étant arrivé à la tête de nombreuses troupes à l'endroit où avait été exécuté saint David, il livra combat à son frère impie, qui fut mis en fuite et mourut ensuite d'une mort cruelle.

Ce pieux Rostislav régna sur tout le pays; il fit rechercher les restes des bienheureux et on les lui montra; puis on se rendit dans le désert et on y retrouva le corps de saint David, qui paraissait dormir. On l'enleva avec des psalmodies et des bénédictions, on le porta et on le déposa dans l'église près du bienheureux Romanos.

Dieu donna (à ces bienheureux) de grandes grâces de thaumaturgie; par les prodiges qui s'accomplissent jusqu'aujourd'hui par les bienheureux, Il affermit le pays des Russes, nouvellement converti, dans la connaissance de la vérité. Car ces deux (saints), comme des luminaires, firent rayonner la foi au Christ, par des miracles retentissants, dont nous mentionnerons brièvement quelques-uns au cours de cette histoire.

I. Il arriva que des soldats étant venus à l'église de saint Basile pour y prier, l'un d'eux avait marché imprudemment sur la tombe où se trouvaient les corps des saints, alors les bienheureux n'étaient pas encore célèbres, et ses pieds furent brûlés comme par des flammes; depuis lors tous firent attention au tombeau.

II. Quelques jours étaient passés depuis ce miracle lorsqu'un feu allumé

դեցին սրբոյն Բարսղի ի վերայ տապանի սրբոցն, պատմեցին եպիսկոպոսին Յովհաննու պայս, եւ նա փութացաւ ազդեաց արքային եւ եղբօրն իւրոյ Ռոստլաւու, որ եկեալ հանդերձ եպիսկոպոսաւն եբաց զտապան վկայիցն, բացին երկիւղածութեամբ զպատուական նշխարս նոցա, եւ փոխեցին յայլ փոքր մատուռն մերձ յեկեղեցին, եւ եդին բարձրագոյն յերկրէ ։

Գ. Այր ոմն որոյ ոտն իւր ախտացեալ էր ախտ անբժշկելի Մեռոնէոս անուն յեցեալ ի փայտ առաջի նշխարաց նոցա հաւատով ։ Երեւեալ սրբոցն ի տեսլեանն ասեն ցնա. Մեռոնէ, զինչ խնդրես ։ Եւ ցուցեալ զոտն ասէ. Տեարք, զբժշկութիւն ։ Զոր կնքեալ սրբոցն, եւ նա զարթեաւ բժշկեալ, վազէր խնդութեամբ եւ ասէր. Տեսի զսուրբ վկայսն եւ զԳէորգ առաջի նոցա լապտերօք ։

Դ. Զայս լուեալ զաչացու ոմն որ ոչ կարէր տեսանել զնաց յեկեղեցին, եւ մերձեցուցեալ զաչսն հաւատով ի տապան սրբոցն, առժամայն ետես եւ փառս տայր Աստուծոյ ։

Իսկ նախասացեալն Մեռոնէոս առեալ զլուսաւորեալն աչօք ընդ ինքեան գնաց պատմեաց զսքանչելիս թագաւորին. եւ նա գոհացեալ զԱստուծոյ եւ կոչեցեալ զեպիսկոպոս տեղւոյն զՅովհաննէս, անդէն վաղվաղակի շինեաց յանուն սրբոցն տաճար վայելուչ հինգգմբեթեայ, եւ անդ փոխեցին զնշխարսն, եւ հաստատեցին տօն մեծ սրբոցն Յուլիսի ԻԴ, ամ յամէ կատարելով ։

ayant apparu dans l'église de saint Basile sur la tombe des saints, on en avertit l'évêque Jean. Il s'empressa de le faire savoir au roi et à son frère Rostislav. Étant allés en compagnie de l'évêque, et ayant ouvert la tombe des martyrs, ils en enlevèrent pieusement les précieux restes et les transportèrent dans une autre petite chapelle, proche de l'église, et les déposèrent dans un endroit plus élevé du sol.

III. Un homme, nommé Méronius, dont le pied avait une plaie inguérissable, vint se présenter avec foi devant leurs reliques, appuyé sur un bâton. Les saints lui apparurent en vision et lui dirent : « Méronius, que demandes-tu? » Il leur montra son pied et dit : « Seigneurs, la guérison. » Les saints ayant fait le signe de la croix sur le pied, il se réveilla guéri, se mit à courir de joie et dit : « J'ai vu les saints martyrs et (saint) Georges devant eux avec des torches. »

IV. A cette nouvelle, un aveugle, qui ne voyait point du tout, se rendit à l'église et ayant approché ses yeux avec foi du tombeau des saints, il recouvra aussitôt la vue et rendit gloire à Dieu.

Le susdit Méronius, prenant avec lui l'aveugle qui avait recouvré la vue, se rendit auprès du roi et lui raconta les miracles; celui-ci rendit grâces à Dieu et ayant fait venir l'évêque de l'endroit, Jean, il fit aussitôt construire sur les lieux au nom des saints un temple élégant à cinq coupoles. On y transporta leurs reliques et on établit une grande fête de ces saints le 24 juillet, qu'on célèbre chaque année.

Ե. Մինչդեռ զխորհուրդս պատարագին ի նաւակատիք տաճարին յաւուրս տօնին կատարէին, հասեալ անդ անդամալոյծ մի մերձեցաւ ի տապանն, եւ առժամայն բժշկեցաւ, որոյ ականատես եղեւ թագաւորն, եւ ամենայն հանդէսն միաձայն փառս տային Աստուծոյ որ սքանչելի է ի սուրբս իւր ։

Զ. Այր մի համրացեալ լեզուաւ եւ անդամալոյծ ոտիւք որ ոչ կարէր եւ խօսիլ եւ գնալ, եկն ի տաճար սրբոցն եւ կերակրէր ընդ աղքատսն յողորմութենէ հաւատացելոցն ։ Սա ի տօնի սրբոյն Նիկողայոսի գնաց ի դրունս պատուողին զտօնն եւ ոչ եգիտ ողորմութիւն, անդէն ի քուն եմուտ եւ տեսանէր զինքն որպէս յեկեղեցին, եւ զսուրբ վկայսն զի եկեալ արտաքս ի խորանէն կնքէին զբերանն եւ զոտսն ։ Տեսեալ զնա մարդկան մինչդեռ կայր ի զարհուրանս տեսլեան եւ կարծէին ի դիւէ լեալ, բարձին եւ տարան յեկեղեցի սրբոցն իբրեւ զմեռեալ, յայնժամ եղեւ նշան սքանչելի, զի ակներեւ ամենայն մարդկանն բժշկեցաւ ոտիւք եւ լեզուաւ, եւ պատմեաց զտեսիլն ։

Է. Յայլ քաղաք ի նոյն աշխարհն այր ոմն ախտացեալ աչօք պակասեալ ի տեսութենէ, օր ըստ օրէ գնայր ի տաճար սրբոյն Գէորգայ, եւ խնդրէր հաւատով զբժշկութիւն ։ Երեւեալ ապա նմա սուրբն ի տեսլեանն եւ ասէ. Այր դու զի՞ թախանձես զիս, ո՞չ գիտես թէ յաշխարհս Ռուսաց Աստուած սրբոցն Ռոմանոսի եւ Դաւթի ետ շնորհս բժշկութեան ։ Եւ զարթուցեալ ի տեսլենէն փութապէս եկն ի տաճար երանելեացն,

V. Pendant qu'on célébrait le mystère du sacrifice à l'inauguration du temple aux jours de la fête, un paralytique qui y était venu s'approcha du tombeau et fut aussitôt guéri; le roi en fut témoin et toute l'assistance présente à la cérémonie rendit grâces à Dieu, qui est admirable dans ses saints.

VI. Un homme muet de langue et paralysé des pieds, qui ne pouvait ni parler ni marcher, vint au temple des saints et se faisait nourrir avec les pauvres de la charité des fidèles. A la fête de saint Nicolas, cet homme alla frapper aux portes de ceux qui célébraient la fête, mais n'ayant reçu aucune charité, il s'endormit et se vit comme dans une église, où des saints martyrs sortant de l'autel signaient sa bouche et ses pieds du signe de la croix. Des gens qui le virent dans les spasmes de la vision et le crurent possédé du démon, l'enlevèrent et l'emmenèrent comme un mort à l'église des saints, et là se produisit alors un miracle merveilleux, car à la vue de tout le monde, il fut guéri de ses pieds et de sa langue et il raconta sa vision.

VII. Dans une autre ville du même pays, un homme affligé d'une maladie des yeux, sa vue baissant, se rendait tous les jours au temple de saint Georges, et lui demandait avec foi la guérison. Le saint, par la suite, lui ayant apparu en vision, lui dit : « O homme, pourquoi me supplies-tu? Ne sais-tu pas que Dieu a donné, dans le pays des Russes, les grâces de guérison aux saints Romanos et David? » (L'homme), réveillé de la vision, se rendit promptement

եւ մերձեցեալ հաւատով ի տապանն առժամայն եգիտ զբժշկութիւն, տեսանէր եւ օրհնէր զԱստուած ։

Են եւ այլ բազում սքանչելիք սրբոցս գրեալ ի կատարեալ պատմութեանն իւրեանց, որով բազումք ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ պատմեն մեզ ։

Եւ թագաւորեալ յետ Փղոստաւրոս մահուանն որդիք իւր Եւփլատիմոս եւ Մոնոմախ, որ առաւել քան զհայրն պատուեցին զսուրբսն ։ Սոքա պաճուճեցին զտապան սրբոցն ոսկւով եւ արծաթով, եւ զտաճարն նորոգ շինեալ առաւել պայծառացուցին ի թուոյ Հոռոմոց ի վեց հազար եւ ի վեց հարիւր եւ քսան եւ մի ։ Եւ մեծաւ հանդիսիւ կատարեն զտօն նոցա ամենայն Ռուսք բազում անգամ ի տարւոջն, զի յամենայն տօն զեղու շնորհք բժշկութեան առ ամենայն ախտաժէտս ։]

Հրոտից ԺԹ եւ Յուլիսի ԻԵ ։ Հանգիստ ննջման սրբուհւոյն Աննայի մօր ամենօրհնեալ Աստուածածնին Մարիամայ ։

Սրբուհին Աննա էր յազգէն Ղեւեայ, դուստր Մատթան քահանային եւ Մարիամայ կնոջ իւրոյ, ի Բեթղահէմ Հրէաստանի ։ Եւ Մատթան քահանայն էր յաւուրս Կղէոպատ-

11 Հանգիստ ... Մարիամայ] Տօն է եւ հանգիստ ամենասուրբ նախամօրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երանուհւոյն եւ սրբոյն Աննայի մօր սրբոյ Աստուածածնին B.

au temple des bienheureux et, s'approchant avec foi du tombeau, trouva aussitôt la guérison; il recouvra la vue et bénit Dieu.

Il y a encore beaucoup d'autres miracles de ces saints qui sont écrits dans leur vie complète, que bien des gens de notre pays, témoins, nous ont racontés.

A la mort de Philostavros (*Phlostavros*)[1], ses fils Euphlatimos et Monomaque, ayant régné, honorèrent les saints plus que leur père. Ceux-ci ornèrent le tombeau des saints d'or et d'argent et embellirent davantage le nouveau temple, l'an de l'ère grecque six mille six cent vingt et un[2]. Tous les Russes célèbrent leur fête en grande solennité plusieurs fois dans l'année, car à chaque fête des grâces de guérison abondent en faveur de tous les infirmes.]

19 HROTITS, **25 Juillet.**

Repos et dormition de sainte Anne, mère de la toute bénie Marie, mère de Dieu.

Sainte Anne était de la tribu de Lévi, fille du prêtre Mathan (*Maṭṭan*) et de sa femme Marie, à Bethléem de Judée. Le prêtre Mathan vivait

1 Aucun nom analogue ne paraît dans la série des princes russes. — 2. Correspond à 1112-3 de notre ère.

րեայ, եւ Սաբուհիոսի թագաւորին Պարսից, նախ քան զՀերովդէս արքայ որդի Անտիպատրայ :

Այս Մատթան քահանայս երիս դստերս ունէր. առաջինն Մարիամ, եւ ամուսնացաւ
*A fol. 321 rº a. ի Բեդղահէմ, եւ ծնաւ զՍողովմի զմանկաբարձն Քրիստոսի, եւ * երկրորդն Սովվի, որ ամուսնացաւ ի Բեդղեհէմ եւ ծնաւ զԵղիսաբեթ զմայրն Յովհաննու Մկրտչին, եւ երրորդն Աննա, որ ամուսնացաւ յերկրին Գալիլեացւոց ընդ Յովակիմայ, եւ ծնաւ զԱստուածածինն : Եւ էին Սողովմի եւ Եղիսաբեթ եւ Աստուածածինն երեք քերց դստերք :

Արդ երրորդ դուստր էր Մատթանի սրբուհին Աննա, եւ ամուսնացաւ Յովակիմայ արդարոյն որ էր ի թագաւորական տոհմէն Յուդայի, եւ էր փառաւոր եւ մեծատուն յոյժ : Եւ պարկեշտ ամուսնութեամբ կեցեալք, եւ երկիւղիւ եւ յօժարութեամբ ծառայէին Աստուծոյ, եւ անկեղծաւոր զթով սիրէին զմիմեանս : Եւ բազում ժամանակս կեցեալ ի միասին զաւակ ոչ եղեւ նոցա, վասն զի ամուլ էր Աննա, եւ եթէ որպէս ծնաւ զԱստուածածինն գրեալ է ի Սեպտեմբերի Ը :

Եւ այնպէս զամենայն աւուրս կենաց իւրեանց սպասաւորութեամբ եւ երկիւղածութեամբ եւ սրբութեամբ ծառայէին տաճարին Տեառն, միշտ պահօք եւ աղօթիւք պաշտէին զԱստուածն Իսրայելի :

1 եւ՛ Սաբուհիոսի թագաւորին Պարսից *om.* B || 3 դստերս] որդիս B || 5 Յովհաննու *om.* B || 7 Աստուածածինն] Մարիամ *add.* B || 10 տոհմէն] ազգէն B || 13 զԱստուածածինն] զաւակ զամենօրհնեալն Աստուածածինն B || 16 Իսրայելի] ի տաճարին B.

aux jours de Cléopâtre et du roi des Perses Sapor, avant le roi Hérode fils d'Antipater.

Ce prêtre Mathan avait trois filles : la première, Marie, qui se maria à
*A fol. 321 rº a. Bethléem et donna le jour à Salomé, la sage-femme du Christ; * la deuxième, Sobè (*Sovvi*) [1], qui se maria à Bethléem et donna le jour à Élisabeth, mère de Jean-Baptiste; et la troisième, Anne, qui se maria dans le pays de Galilée avec Joachim et donna le jour à la Mère de Dieu. Salomé, Élisabeth et la Mère de Dieu étaient les filles de trois sœurs.

Or, sainte Anne était la troisième fille de Mathan, qui épousa Joachim le juste, lequel était de la race royale de Juda, homme magnifique et fort riche. Ils vivaient en un pudique mariage, servaient Dieu avec crainte et amour et s'aimaient d'une affection sincère. Ils vécurent ensemble de longues années, mais n'eurent point d'enfant, car Anne était stérile. Il est décrit, au 8 septembre, comment elle mit au monde la Mère de Dieu.

C'est ainsi que tous les jours de leur vie ils servirent, avec crainte et sainteté, dans le temple du Seigneur, et adorèrent continuellement le Dieu d'Israël avec jeûnes et prières.

1. Σοϐή, cf. *Syn. Cp.*, p. 26 sq.

Եւ տեսեալ Աննա զամենագովելի դուստրն իւր Մարիամ յառաջադէմ լեալ հանճարով եւ իմաստութեամբ, եւ զի վարժէր յերկիւղ եւ ի սէրն Աստուծոյ զուարճանայր եւ ուրախանայր յոյժ, որ եւ յետոյ հաճեցաւ Աստուած ծնանիլ ի զաւակէ նորա, եւ արժանի եղեւ տեսանել զԹոռն իւր զՔրիստոս ։ * Եւ բարիոք կեցեալ հանգեաւ Յուլիսի ԻԵ ։ * A fol. 321 r° b.

Յայսմ աւուր յիշատակ է աղախնոյն Աստուծոյ Եւպրաքսիայ կուսին ։

Սա դուստր էր մեծի իշխանի ի Կոստանդինուպօլիս, ի թագաւորական տոհմէ, եւ յորժամ մեռաւ հայրն յանձնեաց զդուստրն իւր ի բարեպաշտ թագաւորն Թէոդոս, զի տացէ զնա առն, թողեալ եւ ինչս բազումս դստերն իւրոյ ։

Եւ յետ մահուանն իշխանին առեալ զԵւպրաքսիա մայրն իւր, երթայր տեսանէր զագարակս ժառանգութեան իւրոյ զոր եթող հայրն դստերն իւրում, եւ ի ճանապարհին մտին ի վանս կանանց վասն աղօթից, յորում էին հարիւր եւ չորք կանայք կրօնաւորք խարազնազգեստք եւ հրեշտակակարգք, ցանկացաւ վարուց նոցա երանելին Եւ-

3-5 ծնանիլ ... ԻԵ] ծնանիլ ի նոյն Մարիամայ ի զաւակէ նորին ։ Այս սրբուհիս Աննա ամենայն առաքինութեամբ հաճոյացեալ Աստուծոյ, եւ բնակարան լեալ սուրբ Հոգւոյն շնորհաց, եւ զբոլոր բարեգործութիւնս բերելով յինքեան կատարեալ, լի էր ամենայնիւ ։ Այլ եւ հաւատովք եւ իմաստութեամբ եւ աստուածպաշտութեամբ առաւել գոլով լի ի շնորհաց ի յաւետեաց հրեշտակին որ առ ինքն եւ ի յառաջադիմութենէ ամենօրհնեալ դստերն իւրոյ, նկատէր հոգւով, եւ ապանայր ի սիրտ նորա հաւատով, եւ իմանայր ազդմամբ զլինելոյ փրկութեան շնորհ ըստ խոստմանն առ Դաւիթ եւ ըստ գուշակութեան մարգարէիցն, զի կիրթ էր սուրբ գրոց, որով եւ յուսով մխիթարէր, արժանի եղեւ տեսանել զԹոռն իւր զՔրիստոս եւ բարիոք կացեալ հանգեաւ Յուլիսի ԻԵ, եւ փոխեցաւ յանստուեր լոյսն ։ B || 8 մեռաւ] մեռանէր B.

Anne, voyant que sa fille Marie, digne de tous les éloges, progressait en intelligence et en sagesse et s'exerçait dans la crainte et l'amour de Dieu, en fut ravie et dans une grande joie. Plus tard, Dieu se plaisant à naître de son enfant, elle fut digne de voir son petit-fils le Christ. * Après une bonne vie elle reposa le 25 juillet. * A fol. 321 r° b.

En ce jour commémoration de la servante de Dieu la vierge Euphrasie.

Elle était la fille d'un grand prince à Constantinople, de la famille impériale. Lorsque son père mourut, il confia sa fille au pieux empereur Théodose, afin qu'il la mariât; il laissa à sa fille beaucoup de biens.

Après la mort du prince, la mère, prenant sa fille avec elle, alla visiter les terres que le père avait laissées en héritage à sa fille; en route, étant entrées pour y prier dans un couvent de femmes, où il y avait cent quatre femmes religieuses vêtues de bure et d'un ordre angélique, la bienheureuse Euphrasie aspira à leur vie et ne sortit plus du couvent. Elle avait alors

պրաքսիա, եւ այլ ի վանացն ոչ ել ։ Եւ էր յայնժամ ամաց երկոտասանից ։ Եւ կացեալ առ նոսա մեծ եւ առաքինի գործովք կրօնաւորեցաւ, զձեռս եւ զմիտս յերկինս ունելով, եւ ի խոնարհ ոչ իջուցանէր ։ Եւ նախ յերկուս աւուրս միանգամ ճաշակէր, եւ ապա յերիս աւուրս. եւ յետոյ ի շաբաթն մի օր ի կիւրակէի հաղորդէր հաց եւ ջուր, եւ զայն
* A fol. 321 vº a. ոչ ի յագուրդ ։ Եւ յորժամ * չար խորհուրդք անկանէին ի միտս իւր զձեռս եւ զաչսն յերկինս համբարձեալ լինէր մինչեւ պատերազմ դադարէր ։ Եւ խստակրօն վարուք եւ աստուածահաճոյ գործովք ծերացաւ եւ հանգեաւ խաղաղութեամբ Յուլիսի ԻԵ ։

Հրոտից Ի եւ Յուլիսի ԻԶ ։ Վկայութիւն սրբոյն Երմողայ քահանային եւ այլոցն որք ընդ նմա ։

Սուրբ քահանայն Երմողայոս էր ի Նիկոմիդեայ քաղաքէն յաւուրս անօրէն արքային Մաքսիմիանոսի ։ Էին ընդ նմա եւ այլ երկու քրիստոնեայք Երմիոպոս եւ Երմիոկրատէս, որք մնացին յայրեցելոցն յեկեղեցին յաւուր Ծննդեանն Քրիստոսի եւ էին ի թաքստի վասն նեղութեան բռնաւորին ։

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ Եւստորգիոս իշխանն զորդին իւր զՊանդալէոն, որ դեռ եւս պատանեակ էր, յանձնեաց ի ճարտար բժշկապետն Եփրոսինոս զի ուսուսցէ

5 Եւ յորժամ... դադարէր *om.* B || 7 խաղաղութեամբ] ի Քրիստոս Հրոտից ԺԹ եւ *add.* B || 8 եւ այլոցն... նմա *om.* B || 13 Եւստորքիոս] հեթանոս *add.* B — զՊանդալէոն] զՊանդալեւոն B.

douze ans. Elle vécut avec elles, religieuse, accomplissant de grandes œuvres de vertu, ayant toujours les mains et l'esprit élevés au ciel, sans les abaisser. Elle commença par ne prendre de la nourriture qu'une fois tous les deux jours, puis tous les trois jours, ensuite qu'une fois par semaine, le dimanche,
* A fol. 321 vº a. ne prenant que du pain et de l'eau et pas à satiété. Lorsque * des mauvaises pensées venaient à son esprit, elle élevait ses mains et ses yeux au ciel jusqu'à ce que la lutte fût terminée. Elle vieillit dans une vie austère et d'œuvres agréables à Dieu, et reposa en paix, le 25 juillet.

20 hrotits, **26 Juillet.**

Martyre du saint prêtre Hermolaüs et d'autres avec lui.

Le saint prêtre Hermolaüs était de la ville de Nicomédie, aux jours de Maximien, l'empereur impie. Il y avait avec lui deux autres chrétiens, Hermippos (*Ermiopos*) et Hermocrate (*Ermiokratès*), survivants de ceux qui avaient été brûlés dans l'église, le jour de la Nativité du Christ, lesquels se tenaient cachés à cause de la persécution du tyran.

En ces jours-là, le prince Eustorge (*Eustorgios*) avait confié son fils Pantaléon, qui était encore jeune enfant, à l'habile chef médecin Euphro-

նմա զարուեստ բժշկութեան ։ Եւ քանզի ստէպ անցանէր Պանդալէոն ընդ յարկսն յորում թագուցեալ էին սուրբքն, եւ մտադիւրութեամբ ունկն դնէր վարդապետութեանն Երմողայոսի, եւ որպէս երկիր բարի ընկալաւ զբանն ճշմարտութեան, եւ պտղաբերեաց արդիւնս բազումս, եւ ի միոջ սքանչելագործութենէ հաւատաց ի Քրիստոս ։ Եգիտ զայր մի մեռեալ ի * ճանապարհին որ ի թունից օձի վախճանեցաւ, կալաւ զձեռանէ * A fol. 321 v° b. նորա եւ զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ անուանեաց եւ յարոյց ի մեռելոց. եւ ընթացաւ առ սուրբն պատմեաց նոցա որ անուամբն Քրիստոսի յարոյց զմեռեալն ։ Եւ գնացին զկնի նորա, եւ տեսին զկենդանացեալ այրն եւ փառս ետուն Աստուծոյ ։

Եւ առժամայն մկրտեաց Երմողայոս զմանուկն Պանդալէոն, եւ ընկալան զնա յաւազանէն սուրբքն Երմիպոս եւ Երմոկրատէս ։ Եւ յայնմհետէ սկսաւ Պանտալէոն առնել նշանս անուամբ Տեառն ի հիւանդս եւ յախտաժէտս, ի կոյրս եւ ի խուլս ։ Եւ ոմանք նախանձաւորք պատմեցին վասն նորա Մաքսիմիանոսի արքային, եւ կալեալ զՊանտալէոն տարան առաջի նորա, եւ նա խոստովանեցաւ զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ վասն սքանչելեացն զոր արար եւ եթէ որպէս մկրտեցաւ ի քահանայէն Երմողայոսէ պատմեաց նմա ։ Եւ յոյժ բարկացաւ անօրէն բռնաւորն,

2 սուրբքն] յերեսաց հալածանաց Մաքսիմիանոսի արքայի *add.* B || 3 Երմողայոսի] եւ յաւուր միում զՊանտալեոն կոչեաց սուրբ քահանայն, եւ նստոյց մօտ առ ինքն. եւ լուեալ ի նմանէ եթէ ուսանի զԱսկղեպիոսի եւ զԻպոկրատեայ եւ զԳաղիանոսի ճարտարութիւնն, ասէ. Որդեակ ոչինչ է Ասկղեպիոս եւ ոչ Իպոկրատէս եւ ոչ Գաղիանոս, այլ եկ հաւատա ի Քրիստոս, եւ անուամբ նորա զամենայն հիւանդութիւնս բժշկես. եւ Պանտալեոն *add.* B || 5 վախճանեցաւ] հարեալ եւ անշնչացեալ, եւ օձն կայր մերձ առ նա. յիշեաց զբանս Երմողայոսի B || 6 յարոյց ի մեռելոց] առժամայն յարեաւ այրն B || 7 որ անուամբն... զմեռեալն] զսքանչելիսն B.

synus (*Ephosinos*) pour lui apprendre l'art de la médecine. Et comme Pantaléon passait souvent par le logis où les saints se tenaient cachés, il écoutait avec attention la doctrine d'Hermolaüs et reçut, comme une bonne terre, la parole de vérité et porta des fruits nombreux : par un miracle il crut au Christ. Il avait trouvé sur la route un homme mort, * tué par le poison d'un * A fol. 321 v° b. serpent; il l'avait pris par la main et en prononçant le nom du Christ notre Dieu, il l'avait ressuscité des morts; puis courant vers le saint, il raconta à lui et aux autres qu'il avait ressuscité le mort au nom du Christ. Ils partirent à sa suite et virent l'homme ressuscité et ils rendirent grâces à Dieu.

Hermolaüs baptisa aussitôt le jeune Pantaléon, et ce furent les saints Hermippe et Hermocrate qui le reçurent des fonts baptismaux. Depuis, Pantaléon se mit à opérer des prodiges au nom du Seigneur sur les malades, les infirmes, sur les aveugles et les sourds. Quelques jaloux allèrent le dénoncer à l'empereur Maximien; on lia Pantaléon et on l'introduisit devant lui; il confessa le nom de Notre-Seigneur Jésus-Christ, raconta les miracles qu'il avait opérés et comment il avait été baptisé par le prêtre

եւ առաքեաց զօրականս զի տարցեն կապանօք զԵրմողայոս եւ զերկու սուրբսն առ նա :

Իսկ Պանդալէոն յառաջեաց եւ պատմեաց զառաքումն զօրականացն : Եւ ասէ Երմողայոս. Օրհնեալ է Աստուած որ այսպէս հաճեցաւ, զի եւ ի գիշերիս յայսմիկ երեւեցաւ ինձ Տէր եւ ասէ. Կայոց էք առաջի բռնաւորին եւ խոստովանիք զանուն
*A fol. 322 r° a. *իմ, եւ սրով ընդունիք զկատարումն : Երթիցուք որդեակք մեծաւ ուրախութեամբ յառաջիկայ հանդէսն : Եւ յարուցեալ գնացին զկնի զօրականացն եւ ի ճանապարհին ուսուցանէր նոցա եւ ոմանք ի նոցանէ հաւատացին ի Քրիստոս :

Եւ յորժամ կացին յատենին խոստովանեցան համարձակ զՔրիստոս եւ զկրկնակի գալստեանն ճշմարիտ յոյսն, եւ զբարի վայելումն ի հանդերձեալ կեանսն : Եւ բարկութեամբ լցեալ Մաքսիմիանոս հրամայեաց չարաչար տանջել զսուրբսն, եւ ապա հատանել զգլուխս նոցա. որպէս եւ արարին իսկ : Եւ յետ չարչարանացն կատարեցան սրով Յուլիսի ԻԶ : Եւ թաղեցին զնոսա ի Նիկոմիդիա ի նշանաւոր տեղւոջ :

B * p. 44 a. [B* Յայսմ աւուր յիշատակ սուրբ եւ մեծ վկայուհւոյն եւ առաքինուհի սքանչելագործ կուսին եւ երջանիկ վկային Օրէազիլու որ թարգմանի գեղեցկանախանձ, եւ երկու ընկերաց իւրոց :

1 սուրբսն] վկայսն B || 10 եւ զբարի . . . կեանսն *om.* B || 12 Եւ յետ . . . ԻԶ] եւ խնդրեալ ժամս կացին չորեքեանն յաղօթս առ Աստուած, եւ յափշտակեցան ծաօք, եւ երեւեցաւ նոցա Յիսուս Քրիստոս եւ զօրացոյց զնոսա : Եւ դարձեալ տանջեցին զնոսա յոյժ յոյժ, եւ յետ չարչարանացն հատին զգլուխս նոցա Հրատից Ի եւ Յուլիսի ԻԶ B.

Hermolaüs. L'impie tyran, fort irrité, envoya des soldats pour lui amener, chargés de fers, Hermolaüs et les saints qui étaient avec lui.

Pantaléon, ayant pris les devants, alla les avertir de l'envoi des soldats. Hermolaüs dit : « Béni soit Dieu qui s'est plu à faire ainsi, car cette nuit même, le Seigneur m'est apparu et me dit : « Vous allez comparaître devant le
*A fol. 322 r° a. « tyran, confesser * mon nom et recevoir par le glaive votre martyre. » Allons, mes enfants, avec grande joie au martyre prochain. » Ils se levèrent et suivirent les soldats, auxquels (Hermolaüs) enseigna chemin faisant, et dont quelques-uns crurent au Christ.

Lorsqu'ils furent introduits au tribunal, ils confessèrent avec hardiesse le Christ, le véritable espoir de la deuxième venue, et la bonne jouissance de la vie future. Maximien, plein de colère, ordonna de torturer cruellement les saints, puis de leur trancher la tête. Ce qui fut ainsi fait. Après avoir été torturés, ils furent exécutés par le glaive, le 26 juillet. On les inhuma à Nicomédie dans un endroit distingué.

* B p. 44 a. [B * En ce jour commémoration de la sainte et grande martyre la vertueuse vierge thaumaturge et bienheureuse martyre Oraiozélè (*Orēazilou*), nom qui se traduit « d'un beau zèle », et de ses deux compagnes.

Սա աշակերտ էր նախակոչ առաքելոյն Անդրէի, եւ մեծ տանջանօք կատարեցաւ ի Մաքսիմիանոսէ ի Գաւառնիաս կոչեցեալ :]

Հրոտից ԻԱ եւ Յուլիսի ԻԷ : Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ անվրէպ բժշկին Պանդալէոնի, որ թարգմանի ամենառիւծ :

Քրիստոսի սիրելին Պանդալէոն էր ի Նիկոմիդեայ քաղաքէն, որդի հօր կռապաշտի որոյ անունն էր Ստորգիոս, եւ քրիստոնեայ մօր որում անուն էր Եւուղեա : Եւ ուսեալ էր զարուեստ բժշկութեան յԵփրոսինէ բժշկապետէ թագաւորին : Եւ սուրբն Երմողայոս քահանայն նախ քան զմարտիրոսանալն ուսոյց նմա զբանն կենաց :

Եւ երթեալ ի * ճանապարհին Պանտալէոն եգիտ զայր մի մեռեալ եւ Քրիստոսի * A fol. 322 rº b. անուամբն զայրն կենդանացոյց. եւ ինքն հաստատեցաւ ի հաւատն Քրիստոսի զոր տեսեալ հայրն հաւատաց եւ մկրտեցաւ ամենայն ընդանեօքն եւ այլք բազումք ընդ նոսա : Եւ երթեալ ի տունն իւր զամենայն կուռս հօրն խորտակեաց : Եւ զկուրի միոյ զաչսն եբաց :

3 Վկայութիւն... ամենառիւծ] Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ բժշկին եւ վկային Քրիստոսի Պանտալեոնի, որ եւ Պանտալէիմոն կոչեցաւ որ թարգմանի ամենողորմ զոր մկրտեաց Երմողայոս, եւ ի հայ լեզու Պանտալեւոն ամենառիւծ թարգմանի B || 5 Նիկոմիդեայ] Նիկոմիդացւոց B || 9 մեռեալ... Քրիստոսի] որ խայթեալ յօձէ կայր անշնչացեալ, եւ Քրիստոսի անուամբն յարոյց զայրն եւ զօձն սատակեաց. եւ ինքն հաստատեցաւ ի հաւատսն Քրիստոսի, եւ մկրտեցաւ ի քահանայէն Երմողայոսէ. եւ ապա լուսաւորեաց զաչս կուրացելոյն զոր ճարտարքն բժշկաց ոչ կարացեալ էին բժշկել B || 12 Եւ զկուրի... եբաց *om.* B.

Elle fut disciple du premier apôtre appelé André, et fut martyrisée avec de grandes tortures par Maximien à l'endroit appelé Gavarnias (?)]

21 HROTITS, **27 Juillet.**

Martyre du saint, glorieux et irréprochable médecin
Pantaléon, (nom) qui se traduit « tout lion ».

L'ami du Christ Pantaléon était de la ville de Nicomédie, fils d'un père idolâtre dont le nom était Eustorge (*Storgios*) et d'une mère chrétienne dont le nom était Euboulè (*Evouléa*). Il avait appris l'art de la médecine d'Euphrosynè, le médecin en chef de l'empereur Maximien. Le saint prêtre Hermolaüs, avant d'être martyrisé, lui avait enseigné la parole de vie.

Chemin * faisant, Pantaléon avait rencontré un homme mort et avait * A fol. 322 rº b. ressuscité cet homme au nom du Christ, ce qui l'avait confirmé dans la foi au Christ; ce que voyant, son père crut, lui aussi, et se fit baptiser avec toute sa famille et d'autres nombreuses personnes avec eux. Rentré chez lui, (Pantaléon) b risa toutes les idoles de son père. Il fit recouvrer la vue à un aveugle.

Եւ անօրէն նախանձաւորքն կալան զայրն որ երբեմն կոյրն էր, տարան առ Թագաւորն եւ եհարց. Ով եբաց զաչս քո ։ Եւ նա ասէ. Պանդալէոն, այլ եւ ես ծառայ Քրիստոսի եմ, որ ի ձեռն ծառային իւրոյ Պանդալէոնի եբաց զաչս իմ ։ Եւ նոյնժամայն հրամայեաց եւ հատին զգլուխ նորա ։

Տարան առաջի զսուրբն Պանդալէոն եւ բազում խոստումն արարեալ աղաչանօք եւ քաղցրութեամբ ոչ կարաց դարձուցանել զնա ի սիրոյն Քրիստոսի ։ Գան հարին զնա ուժգին, եւ ղամբարս մատուցին յանձն ։ Եւ երեւեցաւ նմա Տէր ի կերպարանս Երմողայոսի քահանային եւ քաջալերեաց զնա ։ Եւ կապեցին յոտսն նորա վէմ եւ ընկեցին ի ծովն եւ հրեշտակ Տեառն ելոյծ զվէմն, եւ եհան զնա ամբողջ ի ծովէն ։ Թողին ի նա գազանս եւ ոչ մերձեցան ի նա ։ Եւ տեսեալ ժողովրդեանն աղաղակեցին առ Թագաւորն եւ ասեն. Արձակեա՛ զծառայն Աստուծոյ ։

* A fol. 322 v° a. Եւ բարկացեալ յոյժ Մաքսիմիանոս * հրամայեաց եւ գլխատեցին ի ժողովրդենէն որ աղաղակեցին արս հազարս, սպանին եւ զգազանսն որ ոչ մերձեցան ի վկայն Քրիստոսի ։

Ապա կապեցին զնա ի սրալից անիւ, եւ հոլովեցին ընդ զառի վայր, եւ անիւն սպան

1 որ երբեմն կոյրն էր] զորոյ զաչսն լուսաւորեաց B || 2 եբաց] լուսաւորեաց B || 3 եբաց] լուսաւորեաց B — Եւ նոյնժամայն... զգլուխ նորա *om.* B || 7 Տէր] ի տեսլեան *add.* B || 9 Եւ հրեշտակ... ի ծովէն] եւ խնամօքն Աստուծոյ լուծաւ վէմն եւ սուրբն ել ի ցամաք B || 10 ժողովրդեանն] ժողովրդոցն B || 15 եւ անիւն... զսուրբն] եւ զօրութեամբն Քրիստոսի ապրեցաւ B.

Des impies, jaloux, saisirent l'homme qui était auparavant aveugle, le conduisirent auprès de l'empereur qui lui demanda : « Qui a ouvert tes yeux? » Il répondit : « Pantaléon; mais moi aussi je suis le serviteur du Christ, qui m'a rendu la vue par l'intermédiaire de Son serviteur Pantaléon. » (L'empereur) ordonna aussitôt de lui trancher la tête.

On conduisit Pantaléon devant (l'empereur), qui lui fit beaucoup de promesses, mais ne parvint ni par les supplications ni par la douceur à le détourner de l'amour du Christ. On le frappa vigoureusement, on appliqua des torches à son corps. Le Seigneur lui apparut sous les ressemblances du prêtre Hermolaüs et l'encouragea. On lui attacha une pierre aux pieds et on le jeta à la mer; mais l'ange du Seigneur détacha la pierre et le retira sain et sauf de la mer. On lâcha des fauves contre lui, mais ils ne s'en approchèrent point. A cette vue, la population cria à l'empereur en disant : « Rends la liberté au serviteur de Dieu. »

* A fol. 322 v° a. Maximien, très irrité, * ordonna de trancher la tête à ceux qui avaient crié, environ mille personnes; on tua aussi les fauves qui ne s'étaient point approchés du martyr du Christ.

On l'attacha ensuite à une roue armée de lames, et on la fit rouler sur

ի դահճացն եւ ի զօրականացն զբազումս ։ Եւ հրեշտակ Տեառն անարատ պահեաց զսուրբն ։ Եւ հրամայեաց թագաւորն հատանել զգլուխն նորա ․ եւ նա տարածեաց զձեռս իւր յերկինս աղաչեաց զԱստուած վասն ամենայն աշխարհի, եւ եղեւ ձայն առ նա յերկնից եւ ասէ․ Կատարեցաւ ցանկութիւն քո եւ դրունք երկնից բացան քեզ, եւ զօրք երկնից անսան քեզ եւ պսակք պատրաստեցան քեզ, շնորհք բժշկութեան տուան ոսկերաց եւ անուան քո, եւ ոչ եւս անուանեսցիս Պանդալէոն, այլ Պանդալէիմոն, որ թարգմանի ամենողորմ, զի բազումք յանուանէդ քումէ գտցեն ողորմութիւն․ դու լիցիս նաւահանգիստ ալէկոծելոց, օգնական անտէրանց, հիւանդաց բժիշկ, դիւաց հալածիչ ։

Եւ համբարձեալ դահիճն զձեռն իւր սրովն զի հատցէ զգլուխն, եւ սուրն իբրեւ զմոմ շրջեցաւ, եւ զօրականքն որք ի տեղին էին հաւատացին ի Քրիստոս ։ Իսկ սուրբն Պանդալէիմոն կամաւորութեամբ խոնարհեցոյց զպարանոցն, եւ այլ դահիճ եհատ *զգլուխ նորա Յուլիսի ԻԷ ։ Եւ փոխանակ արեան ջուր բխեաց ։ Եւ փայտն որ ի (* A fol. 322 v° b.) տեղւոջն էր արմատացաւ, եւ եղեւ ձիթենի պտղալից ։

Լաւրէնտիոս եւ Բազոս եւ Պրովիանոս դրակիցք եւ սննդակիցք սրբոյն Պանդա-

3 աղաչեաց ... եւ ասէ] աղօթեաց առ Աստուած․ եւ լուաւ հոգւովն զի B || 4 քո] նորա B || 5 քեզ] նմա B || 5-12 շնորհք ... Քրիստոս] եւ այսու աւետօք մխիթարեցաւ յոյժ B || 13 կամաւորութեամբ] խնդամիտ սրտիւ B — այլ *om.* B || 14 նորա] հրոտից ԻԱ եւ *add.* B — Եւ փոխանակ ... պտղալից *om.* B || 15 Բազոս] Բասոս B — դրակիցք] դրացիք B.

une pente, mais la roue tua beaucoup de bourreaux et de soldats. L'ange du Seigneur conserva le saint intact. L'empereur ordonna de lui trancher la tête; il éleva ses mains au ciel, pria Dieu pour toute la terre, et une voix du ciel se fit entendre à lui qui disait : « Ton désir est exaucé, les portes du ciel te sont ouvertes, les milices célestes t'attendent, des couronnes te sont préparées, des grâces de guérison sont accordées à tes os et à ton nom, tu ne seras plus appelé Pantaléon, mais Pantéléimon, nom qui se traduit « tout miséricordieux », car beaucoup trouveront la miséricorde par ton nom; tu seras un port pour les naufragés, un aide pour ceux qui n'ont point de maître, le médecin des malades, l'expulseur des démons. »

Le bourreau ayant levé la main armée du glaive pour lui trancher la tête, le glaive se tordit comme un cierge, et les soldats qui se trouvaient présents crurent au Christ. Mais saint Pantéléimon ayant volontairement baissé le cou, un autre bourreau lui trancha * la tête, le 27 juillet. Au lieu de sang il (* A fol. 322 v° b.) coula de l'eau. Le gibet qui se trouvait à cet endroit prit racine et devint un olivier chargé de fruits.

Laurent, Bassus (*Bazos*) et Probianus (*Provianus*)[1], les voisins de saint

1. L'édition du synaxaire de 1706, Constantinople, donne : Laupitos, Basos et Rufin (*Romphinos*).

լէիմոնի զկնի երթային նահատակութեան նորա յառաջնմէ մինչեւ կատարեցաւ, եւ գրեցին զնահատակութիւն սրբոյ վկային ։ Եւ մինչեւ ցայսօր դատարկ տապան սրբոյն Պանդալէիմոնի ջուր օրհնութեան բղխէ ի Նիկոմիդիա քաղաքն ։

* B p. 45 a. [B* Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ եւ աստուածասէր եւ ողորմածն Կոստանդին Հայոց թագաւորին մայրն տիկին Մարիւն եւ կայ յԱնարզաբայ ։]

Հրոտից ԻԲ եւ Յուլիսի ԻԸ ։ Վկայաբանութիւն սրբոյն Կալինիկոսի ։

Քրիստոսի վկայն Կալինիկոս էր քրիստոնեայ եւ երկիւղած յԱստուծոյ եւ վասն հալածանաց քրիստոնէից ի կռապաշտից եղեւ ճանապարհորդ որպէս վաճառական, եւ տեսանէր զբազումս ըմբռնեալս ի մոլորութենէ ամբարշտացն զի կորնչէին, մերձենայր եւ ուսուցանէր եւ խրատ տայր ի բաց կալ ի սնոտի խաբէութենէ կռոցն, եւ հաստատուն կալ ի հաւատսն Քրիստոսի ։

* A fol. 323 r° a. Եւ կալեալ * զնա տարան առ Սակերդոն դատաւորն, եւ նա բազում պատրանօք եւ ողոքանօք խրատ տայր զոհել կռոցն, եւ ոչ կարաց խախտել զնա յԱստուծոյ ճշմարիտ հաւատոցն ։ Չարչարեաց զնա պէսպէս տանջանօք, եւ երկաթի կօշիկս

2 Եւ մինչեւ ցայսօր] Եւ որպէս ի կենդանութեան իւրում բազում սքանչելիս արար անուամբն Քրիստոսի, նոյնպէս եւ յետ մահուանն իւրոյ մինչեւ ցայսօր առնէ անպակաս եւ B || 3 սրբոյն Պանդալէիմոնի] նորա B || 6 Վկայաբանութիւն] Վկայութիւն B || 7 վկայն] սուրբն *add.* B || 8 քրիստոնէից ի *om.* B.

Pantéléimon qui avaient été élevés avec lui, et l'avaient suivi au cours de son martyre du premier jour jusqu'à l'exécution, écrivirent le combat du saint martyr. Jusqu'aujourd'hui du tombeau vide de saint Pantéléimon jaillit une eau de bénédiction dans la ville de Nicomédie.

* B p. 45 a. [B* En ce jour reposa dans le Christ la pieuse amie de Dieu et charitable mère du roi d'Arménie Constantin, Tikin Marioun; elle repose à Anazarbe.]

22 hrotits, **28 Juillet.**

Passion de saint Callinique.

Le martyr du Christ Callinique était chrétien et craignant Dieu. En raison des persécutions des chrétiens par les idolâtres, il se fit voyageur comme commerçant, et voyant que beaucoup se perdaient, trompés par l'erreur des impies, il s'approchait d'eux, les enseignait et les engageait à abandonner la vaine tromperie des idoles et à être fermes dans la foi au Christ.

* A fol. 323 r° a. On le * saisit et on le conduisit au juge Sacerdon, lequel lui conseilla d'immoler aux idoles, avec beaucoup de paroles trompeuses et de supplications; mais il ne réussit point à l'ébranler de la vraie foi à Dieu. Il le fit

բեւեռեցին յոտս նորա, եւ առաջի երիվարացն ընթացուցանէին զնա մինչեւ ի քաղաքն Գանգրեա եօթանասուն մղոն, եւ զօրականքն ի խորշակէն տօթացան եւ ի ծարաւոյն նուաղեցան զի անջրդիք էին տեղիքն, աղաչէին զսուրբն Կալինիկոս զի աղօթեսցէ առ Աստուած իւր եւ հանցէ ջուր յերկրէ եւ նա զձեռս եւ զաչս յերկինս համբարձեալ աղօթեաց առ Աստուած արտասուօք, եւ հերձաւ վէմն որպէս երբեմն առ Մովսէսիւ ի լերինն, եւ բղխեցին ջուրք յոյժ, եւ եղեն աղբիւրք եւ են մինչեւ ցայսօր, արբին զօրականքն եւ յագեցան ։ Եւ տարան զսուրբ վկայն այլ եւս տասն մղոն մինչեւ ի Գանգրեա, եւ անդ պատրաստեալ հուր ընկեցին անդր զսուրբն Կալինիկոս, եւ փառաւորելով զԱստուած աւանդեաց զհոգին իւր Յուլիսի ԻԸ ։ Կալինիկոս բարի յաղթող թարգմանի ։

Յայսմ աւուր յիշատակ Ապողոնիոսի ։

Սա էր ի Սարդիս քաղաքէն * հաւատով քրիստոնեա եւ տարան զնա ի քաղաքն * A fol. 323 r° b.
Ցիկոնիոյ, եւ կացեալ առաջի Պերինիոս իշխանին խոստովանեցաւ զքրիստոնէութեան հաւատն իւր ։

Ասէ իշխանն. Երդուիր յանձն թագաւորին ։ Ասէ Ապողոնիոս. Ոչ է պարտ երդնուլ մեզ յապականացու թագաւոր, մանաւանդ յայն որ զարարիչն իւր ոչ ճանաչէ ։ Մեք

2-7 եւ զօրականքն... յագեցան *om.* B || 9 զհոգին իւր] Հրոտից ԻԲ եւ *add.* B || 10 յիշատակ] սրբոյն *add.* B || 11 Սարդիս] Մարդիս B || 12 իշխանին] եւ համարձակ *add.* B.

soumettre à des tortures variées; on lui cloua aux pieds des chaussures en fer et on le fit courir devant des chevaux jusqu'à la ville de Gangres, à soixante-dix milles. Les soldats eurent très chaud et défaillirent de soif, car il n'y avait point d'eau dans ces endroits-là; ils demandèrent à saint Callinique de prier Dieu afin qu'Il fît jaillir de l'eau de terre; (le saint) éleva ses mains et ses yeux au ciel, pria Dieu avec larmes, et le rocher s'entr'ouvrit, comme au temps de Moïse à la montagne, et de nombreuses eaux jaillirent, qui devinrent des sources et qui existent jusqu'aujourd'hui; les soldats en burent à satiété. Ils emmenèrent le saint martyr dix milles plus loin jusqu'à Gangres et là, ayant allumé un feu, ils y jetèrent saint Callinique, qui rendit son âme en glorifiant Dieu, le 28 juillet. Callinique se traduit « bon vainqueur ».

En ce jour commémoration d'Apollonius.

Il était de la ville de Sardes, * de foi chrétienne; on le conduisit à la ville * A fol. 323 r° b.
d'Iconium, où, introduit devant le gouverneur Perinius, il confessa sa foi chrétienne.

Le gouverneur lui dit : « Jure par la personne de l'empereur! » Apollonius répondit : « Nous ne devons point jurer par un empereur corruptible, surtout par celui qui ne reconnaît point son créateur. Nous jurons par le créateur

երդնումք յարարչին եւ ի Թագաւորն որ յառաջ քան զյաւիտեանս Աստուածն է, եւ արար զերկինս եւ զերկիր եւ ստեղծ զԹագաւորս երկրի :

Եւ հրամայեաց եւ խաչեցին զնա եւ գեղարդեամբն խոցեցին, եւ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Յուլիսի ԻԸ ։

* B p. 45 a [B* Տօն սրբոց առաքելոցն Պրոխորոնի, Տիմոնի, Նիկանորայ եւ Պարմենայ նախասարկաւագացն :

Սուրբ առաքեալքս ընտրեցան ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ ի կարգ եօթանասուն աշակերտացն. եւ ականատես եղեն նմին Աստուծոյ եւ մարդացելոյ տնօրէնական գործոցն, եւ ականջալուր աստուածախօս վարդապետութեանն զոր ընդ սրբոյ նախավկային Ստեփաննոսի ընտրեցին առաքեալքն ի սպասաւորութիւն այրեացն եւ աղքատաց, եւ ձեռնադրեցին սարկաւագունս :

* B p. 45 b. * Առաջին զի էին նմանեալք Ստեփաննոսի լի հաւատովք եւ Հոգւով սրբով, ընդ գլխաւորագոյն առաքեալսն սպասաւորեցին յաւետարանն : Որ եւ Պրոխորոն աշակերտեալ սրբոյ առաքելոյն Յովհաննու աւետարանչի եւ աստուածաբանի, յասելն նորա. Գրեաց զաւետարանն սուրբ : Եւ յետոյ ձեռնադրեալք եպիսկոպոսք զանազան տեղեաց բազում նշանօք քարոզեցին զՔրիստոս եւ զյոլովս դարձուցին, եւ համբերելով զանազան չարչարանաց կատարեցան ի Քրիստոս :

1 յարարչին եւ *om.* B.

et par le roi qui est avant tous les siècles, Dieu, qui a créé le ciel et la terre, qui a créé les rois de la terre. »

Sur l'ordre (du gouverneur) on crucifia (le saint) et on le frappa de la lance. Il rendit son âme à Dieu, le 28 juillet.

* B p. 45 a. [B * Fête des saints apôtres Prochore, Timon, Nicanor et Parménas, les premiers diacres.

Ces saints apôtres furent élus par le Christ notre Dieu au rang des soixante-dix disciples; ils furent les témoins oculaires de Dieu même et des actes du Seigneur incarné, et les témoins auriculaires de sa doctrine aux paroles divines, eux, que les apôtres choisirent avec saint Étienne le protomartyr pour le service des veuves et des indigents, et qu'ils ordonnèrent diacres.

* B p. 45 b. * En premier lieu, parce qu'ils étaient semblables à Étienne, pleins de foi et du Saint-Esprit, ils servirent les principaux apôtres dans l'évangélisation. Prochore avait été le disciple du saint apôtre et évangéliste Jean le théologien, qui dit de lui : « Il écrivit le saint évangile. » Ils furent ensuite sacrés évêques en différents endroits, prêchèrent le Christ en opérant beaucoup de prodiges, convertirent des multitudes, et après avoir enduré des tortures variées furent martyrisés dans le Christ.

Քանզի Պրոխորոն եղեւ եպիսկոպոս Նիկոմիդեայ Բիւթանացւոց, եւ խաղաղութեամբ հանգեաւ ։ Եւ Նիկանորս ի նմին աւուր յորում քարկոծեցաւ սուրբն Ստեփաննոս սպանաւ ի Հրէիցն ընդ հազարաւոր սուրբ հաւատացելոց ։ Իսկ այլք ասեն թէ խաղաղութեամբ կատարեցաւ ։ Եւ Տիմոն եղեւ եպիսկոպոս Բոստրայ Արաբացւոց, եւ հրով այրեցաւ ի հեթանոսաց վասն Քրիստոսի ։ Եւ Պարմենա առաջի երեսաց առաքելոցն մեռաւ ի սպասաւորութեանն իւրում ։

B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտուհի տիկնաց տիկինն Կեռան թագուհէմայրն, որ խնամածու էր որբոց եւ այրեաց եւ առատապարգեւ տրովք մխիթարէր զկարօտեալս ։] * B p. 46 a.

Հրոտից ԻԳ եւ Յուլիսի ԻԹ ։ Վկայութիւն սրբոցն Թէոդոտեայ եւ երից որդւոց նորա ։

Բարեպաշտ կինն Թէոդոտիա այրի էր ի քաղաքէն յԻկոնիոյ, եւ կատարէր պահօք եւ աղօթիւք զպատուիրանս Աստուծոյ, ուսուցանէր եւ զորդիսն իւր պարկեշտ եւ աստուածահաճոյ գործովք կեալ ։ Եւ յաւուրսն յայնոսիկ էր սրբուհի վկայն Քրիստոսի Անաստասիա, եւ քաջալերէր զԹէոդոտի հաստատուն կալ ի հաւատն Քրիստոսի եւ ի տանջանաց ոչ երկնչել ։

Եւ ոմն մի իշխան որոյ անուն էր Լեւկադիոս խնդրեաց զԹէոդոտի իւր ի կնու-

10 սրբոցն] սրբուհւոյն B — նորա] իւրոց B.

Ainsi Prochore devint évêque de Nicomédie en Bithynie, et reposa en paix. Nicanor, le jour où fut lapidé saint Étienne, fut mis à mort par les Juifs avec des milliers de saints fidèles. D'autres disent qu'il reposa en paix. Timon devint évêque de Bostra, en Arabie, et fut livré aux flammes par les païens pour le Christ. Parménas mourut en présence des apôtres dans les fonctions de son service.

B* En ce jour reposa dans le Christ la pieuse reine des reines, la reine-mère Kéran, qui s'était chargée des soins des orphelins et des veuves et consolait les indigents par de généreuses largesses.] * B p. 46 a.

23 HROTITS, 29 Juillet.

Martyre de sainte Théodote et de ses trois fils.

La pieuse femme veuve Théodote était de la ville d'Iconium; elle accomplissait les commandements de Dieu avec jeûnes et prières, et enseignait à ses fils à mener une vie modeste dans des actions agréables à Dieu. En ces jours vivait la sainte martyre du Christ Anastasie, qui encourageait Théodote à demeurer ferme dans la foi au Christ et à ne point craindre les tortures.

Un certain comte, du nom de Leucadius, demanda Théodote en mariage,

թիւն, եւ նա պատրանօք խաբեաց զնա ասելով. Համբերեա ինձ սակաւ աւուրս զի
* A fol. 323 v° a. զմտաւ ածից եւ * ժողովեցից զինչս իմ : Եւ նա թոյլ ետ նմա : Իսկ ամենօրհնեալ կինն Թէոդոտի զամենայն ինչս իւր բաշխեաց աղքատաց եւ ի բանդարգել քրիստոնեայս, եւ երթեալ առ սրբուհին Անաստասիա պատմեաց նմա զամենայն :

Իսկ իշխանն Լեւկադիոս գնաց առ Թէոդոտի, եւ լուաւ եթէ զամենայն ինչս իւր բաշխեաց, եւ զՔրիստոսի հաւատն հաստատուն ունի, ետ զսրբուհին Անաստասիա ի պատողական ատենին, որ եւ մարտիրոսացաւ ի Դեկտեմբերի ԻԲ : Եւ զԹէոդոտի յանձնեաց ի զօրականս եւ յուղարկեաց առ Նիկիտոս դատաւորն Բիւթանացւոց, եւ բազում ողոքանօք խրատ տայր եւ ասէր. Ողորմեա անձին քում եւ զաւակաց քոց եւ զոհեա կռոցն :

Եւ նա ասէ. Ես վասն զի յոյժ սիրեմ զանձն իմ եւ զզաւակս իմ ոչ ուրանամ զԱստուածն իմ, եւ ոչ զոհեմ օտարոտի չաստուածոց զի ճշմարիտ հաւատով զՔրիստոս խոստովանիմ : Եւ բերին առաջի մեքենայս չարչարանաց զի տեսցեն եւ երկիցեն : Իսկ առաջին որդին իւր Եւոդիոս եթուք ի մեքենայսն եւ խօսեցաւ յաւետարանէն Քրիստոսի բանս առ դատաւորն :

Եւ հրամայեաց զան հարկանել գաւազանօք զերիս եղբարսն առաջի մօրն իւրեանց

3 ինչս] ստացուածս B — բանդարգել] բանդարկեալ B || 5 Թէոդոտի] մայր նոցա *add.* B.

mais elle usa de ruse en lui disant : « Prends patience quelques jours pour
* A fol. 323 v° a. que je réfléchisse et que * je réunisse mes biens. » Il le lui accorda. Quant à Théodote, la femme toute-bénie, elle distribua tous ses biens aux pauvres et aux chrétiens détenus, puis s'étant rendue auprès de sainte Anastasie, elle lui raconta tout.

Le comte Leucadius se rendit chez Théodote, mais, ayant appris qu'elle avait distribué tous ses biens et qu'elle était de foi chrétienne, il mena sainte Anastasie devant le tribunal de justice, où elle fut martyrisée le 22 décembre. Il remit Théodote entre les mains des soldats et l'envoya auprès de Nicétius, juge de Bithynie, lequel l'engagea avec beaucoup de supplications en ces termes : « Aie pitié de ta personne et de tes enfants et immole aux idoles. »

Elle répondit : « Comme j'aime beaucoup ma personne et mes enfants, je ne renie point mon Dieu, et je n'immolerai point à des dieux étrangers; car je confesse le Christ dans la vraie foi. » On apporta devant elle des engins de tortures, afin qu'à leur vue, (elle et ses fils) prissent peur. Mais son premier fils Evodius cracha sur les engins et adressa au juge des paroles de l'évangile du Christ.

Il ordonna de frapper à coups de bâtons les trois frères en présence de

եւ Թէոդոտի քաջալերէր զորդիսն ի հաւատան զի համբերեսցեն ցաւոցն ։ Եւ * դատաւորն յոյժ բարկացաւ եւ ետ զԹէոդոտի ի Յուրտակի զօրականն զի տարցէ ի տունն իւր եւ շնասցի ընդ նմա ։ Եւ յորժամ տարաւ քարշելով ի տուն իւր եւ կամէր մերձենալ ի նա, լուծան երակք ռնգացն եւ հոսէր արիւնն անդադար եւ աղաղակեաց մեծաձայն եթէ. Տեսի այր մի ոսկէհանդերձ եւ ած ինձ ապտակ, եւ լուծան հոտոտելիքս ։ * A fol 323 v° b.

Եւ լուեալ դատաւորին զեղեալ գործն Յուրտակի, հրամայեաց դահճացն եւ արկին զաղախինն Քրիստոսի երեք որդւովքն ի բորբոքեալ հուր. եւ աղօթեաց այսպէս. Օրհնեալ է անուն Բարձրելոյն, որ ոչ եւ յայսմ կենցաղս որոշեաց զիս ի լաւակաց իմոց եւ ոչ ի հանդերձեալ կեանսն ։ Եւ այսպէս աւանդեցին զհոգիս իւրեանց ի մէջ հրոյն Յուլիսի ԻԹ ։

Հրոտից ԻԴ եւ Յուլիսի Լ ։ Վկայութիւն սրբոյն Եւստաթէոսի ։

Սուրբն Եւստաթէոս զօրական էր Քրիստոսի հաւատովն, եւ տեսեալ զզօրականսն որ երթային յըմբռնել զնա, ամրացոյց զամենայն անդամ իւր նշանաւ սրբոյ խաչին, եւ գնաց զկնի նոցա առ դատաւորն Անկուրիոյ քաղաքին որոյ անուն էր Կոռնելիոս, եւ

2 Յուրտակի] անառակ *add.* B || 10 հրոյն] Հրոտից ԻԴ եւ *add.* B || 11 Եւստաթէոսի] Անկիւրացոյն *add.* B.

leur mère; Théodote encouragea ses fils dans la foi à endurer * les douleurs. Le juge, fort irrité, remit Théodote au soldat Hirtacus (*Yourtaki*) afin qu'il l'emmenât à sa maison et forniquât avec elle. Lorsqu'il l'eut emmenée chez lui en la traînant et qu'il voulut s'approcher d'elle, les veines de ses narines s'ouvrirent et le sang coula sans cesser. Il cria à haute voix : « J'ai aperçu un homme en vêtements d'or, qui m'a souffleté, et mes narines se sont rompues. » * A fol. 323 v° b.

Le juge, apprenant ce qui était arrivé à Hirtacus, ordonna aux bourreaux de jeter la servante du Christ et ses trois fils dans une fournaise enflammée. (Théodote) pria en ces termes : « Béni soit le nom du Très-Haut, qui ne m'a point séparée de mes enfants, ni en ce monde ni dans la vie future. » C'est ainsi qu'ils rendirent leur âme dans les flammes, le 29 juillet.

24 HROTITS, 30 Juillet.

Martyre de saint Eustathe.

Saint Eustathe était soldat, croyant au Christ. Lorsqu'il vit les soldats qui venaient le saisir, il fortifia tous ses membres par le signe de la sainte croix et les suivit auprès du juge de la ville d'Ancyre, dont le nom était

Նախ քան զհարցանելն խոստովանեցաւ զանուն եւ զգալուստ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Գան հարին զնա եւ քերեցին զմարմինն ուժգին, եւ ծակեցին զկճղունս ոտիցն եւ * A fol. 324 r° a. անցուցին * պարան, եւ քարշեցին զնա ի քաղաքէն Անկուրիոյ մինչեւ ի գետն Սագարիս, եւ ընկեցին զնա կենդանի անդ. եւ հրեշտակ Տեառն եհան զնա անվնաս եւ ողջ ի գետոյն, եւ դարձաւ անդրէն յԱնկուրիա սաղմոսելով զՂ բնակեալն է յօգնութիւն ։ Եւ լուեալ Կոռնելիոսի եթէ կենդանի է, մոլեգաւ եւ ցնորեցան խելքն, եւ առեալ սուր եհար յանձն իւր եւ չար մահուամբ սատակեցաւ

Իսկ քրիստոնեայքն առին զգիրս սրբոյն Յովհաննու առաքելոյն եւ գնացին ի միասին ընդ սրբոյն Եւստաթէոսի յեկեղեցի սրբոյն Պղատոնի, եւ տարածեալ զձեռս իւր յերկինս սուրբ վկայն Քրիստոսի աղօթեաց այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, կատարեա զխոստումն քո ի ծառայս քո Եւստաթէոս, եւ առաքեա քաղցր հրեշտակս զի հաղորդեսցեն զիս պարգեւաց քոց, եւ աւանդեսցեն զհոգիս իմ խաղաղութեամբ ։ Եւ նոյնժամայն եղեն շարժք եւ խոնարհեցան ամպքն, եւ ել աղաւնի յամպոյն եւ էջ հրեշտակ լուսեղէն ի վերայ նորա, եւ աղաւնին կերակրեաց զնա, եւ հրեշտակն

5 անդ] ի գետն B. — եւ հրեշտակ Տեառն եհան զնա] եւ խնամօք Աստուծոյ ել B || 6 յօգնութիւն] բարձրելոյն *add.* B || 9 սրբոյն *om.* B || 10 Պղատոնի] որ նահատակեցաւ ի քաղաքի անդ *add.* B || 13 զի հաղորդեսցեն զիս պարգեւաց քոց *om.* B || 14 խաղաղութեամբ] առ քեզ *add.* B 14-15 նոյնժամայն... հրեշտակն *om.* B.

Corneille, et, avant que celui-ci l'eût interrogé, il confessa le nom et l'avènement du Christ notre Dieu.

On le frappa vigoureusement et on lui déchira le corps; on lui troua * A fol. 324 r° a. les chevilles des pieds et on y passa une * corde, puis on le traîna de la ville d'Ancyre jusqu'au fleuve Sakaria, et on l'y jeta vivant; mais l'ange du Seigneur le retira du fleuve sain et sauf. Il retourna de nouveau à Ancyre, en psalmodiant : *Celui qui habite dans le secours* [1]. Corneille, apprenant qu'il était vivant, devint furieux, ses esprits s'égarèrent, et saisissant une épée il s'en frappa et mourut d'une mort cruelle.

Les chrétiens prirent les livres du saint apôtre Jean et se rendirent ensemble avec saint Eustathe à l'église de saint Platon; le saint martyr du Christ éleva ses mains au ciel et pria ainsi : « Seigneur, Jésus-Christ, Fils de Dieu, accomplis ta promesse, que tu as faite à ton serviteur Eustathe, et envoie de doux anges, afin qu'ils me fassent participer à tes bienfaits et prennent mon âme en paix. » Il se produisit aussitôt un tremblement de terre, les nuages s'abaissèrent, une colombe s'élança des nuages, un ange lumi-

1. Ps. xc, 1.

աւանդեաց զհոգին խաղաղութեամբ Յուլիսի Լ : Եւ թաղեցին զմարմին նորա ի նոյն քաղաքին Անկուրիա :

Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Մարթայի մօր Սիմէոնի Սիւնակեցոյն որ ի սքանչելի լեառն Անտիոքայ :

Սուրբն Սիմէոն զերանելին Մարթա * զաղախինն Քրիստոսի առ խարսխի սեանն իւրոյ հրամայեաց թաղել. յորժամ երթային հիւանդք եւ նեղեալք ի տապանն յայտնապէս երեւէր Քրիստոսի աղախինն Մարթա եւ դնէր ձեռս եւ աղօթիւք բժշկէր զդիւահարս եւ զխեղս եւ զամենայն հիւանդս, եւ ապա անյայտ լինէր : * A fol. 324 r° b.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոց Գոհարինեանցն նոր վկայիցն որք ի Սեբաստիա կատարեցան :

Պատուական վկայքս այսոքիկ սուրբն Գոհարինէ եւ եղբարք իւր Ռատիոս եւ Ծամիդէս եւ Տունկիոս էին յերկրէն Սեբաստիոյ Հայոց : Հայրն իւրեանց Դաւիթ գերեալ ի Տաճկաց որ եւ դարձուցին զնա ի կրօնս իւրեանց, եւ զանդրանիկ որդի նորա :

1 խաղաղութեամբ] առ Աստուած Հրոտից ԼԴ եւ *add.* B. — 6 յայտնապէս] ի տեսլեան *add.* B || 7 եւ աղօթիւք... անյայտ լինէր] եւ աղօթէր. եւ այնպէս դիւահարք եւ խեղք եւ ամենայն հիւանդք բժշկէին. եւ յարուցեալ փառս տային Աստուծոյ, եւ դառնային ուրախութեամբ իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց B || 9-10 Յայսմ... կատարեցան] Ի սմին աւուր ի Փոքր Հայս ի Սեբաստիա քաղաք վկայութիւն նոր վկայիցն Գոհարինէի, Ռատիոսի, Տունկիոսի եւ Ծամիդոսի B || 11-12 սուրբն... Տունկիոս *om.* B || 13 ի Տաճկաց] յայլազգեաց B.

neux descendit sur lui, la colombe lui donna à manger et l'ange prit son âme en paix, le 30 juillet. On inhuma son corps dans la même ville d'Ancyre.

En ce jour commémoration de la bienheureuse Marthe, mère de Siméon le stylite dans la merveilleuse montagne d'Antioche.

Saint Siméon ordonna d'inhumer sa mère, la bienheureuse * Marthe, servante du Christ, au pied de sa colonne. Elle brilla par divers prodiges, car lorsque les malades et les souffrants se rendaient à sa tombe, la servante du Christ apparaissait manifestement, leur imposait les mains et par ses prières guérissait les possédés, les estropiés et tous les malades, puis disparaissait. * A fol. 324 r° b.

En ce jour, martyre des saints Gohariniankh, les nouveaux martyrs, qui furent martyrisés à Sébaste.

Ces véritables martyrs, sainte Goharinė et ses frères Ratios, Dsamidès et Tounkios étaient du pays de Sébaste d'Arménie. Leur père David fut emmené captif par les Musulmans qui le convertirent à leur religion ainsi

Իսկ մայրն իւրեանց հաստատուն եկաց ի հաւատսն որ ի Քրիստոս, եւ բարեպաշտութեամբ սնոյց զորդիս իւր. եւ վասն արիութեանն իւրեանց զինուորեցան բռնաւորին Տաճկաց Ալի Բասանայ, յազգէ Դանիշմանացն որ տիրէր Սեբաստիոյ եւ կողմանցն Պոնտոսի, այր գազանաբարոյ եւ արիւնախանձ մոլեալ ընդդէմ քրիստոնէից ։

Զրախօսեցին ոմանք զսրբոց Գոհարինեանցն առաջի Ալի Բասանայ եւ ասեն. Նոքա որդիք են տաճկի եւ թողեալ զօրէնս մեր կան քրիստոնէութեամբ, գարշին ի
* A fol. 324 v° a. կերակրոց մերոց, եւ ոչ կան յաղօթս * ընդ մեզ ։ Եւ նա առաքեաց զինուորս եւ հրամայեաց ածել առաջի իւր եւ գնացեալ զինուորացն կոչէին զնոսա ստիպով առաջի թագաւորին ։ Եւ նոքա գիտացեալ զգաղտնի նետաձգութիւն չարին ողջունեալ զընտանիս իւրեանց չոգան խնդութեամբ, եւ ասէին. Զօգուտն մեր Աստուած գիտասցէ եւ հոգասցէ ։

Եւ կացեալ առաջի բռնաւորին եհարց զնոսա վասն քրիստոնէութեանն ։ Իսկ երէց եղբայր նոցա ոչ եթող սրբոցն տալ պատասխանի, այլ ինքն ասէ ցթագաւորն. Հաւատ զոր դու պաշտես, եւ մեք զնոյն պաշտեմք ։ Եւ արձակեաց զնոսա եւ գնացին ի տունս իւրեանց տրտմութեամբ, զի ոչ խոստովանեցան զՔրիստոս ։ Եւ մեղադրէին եղբարքն եղբօրն զի ոչ թողացոյց նոցա խոստովանել զքրիստոնէութիւնն իւրեանց,

1 իւրեանց] նոցա B ||. 3 Տաճկաց] այլազգեաց B — Դանիշմանացն] Դանիշմնեաց B || 6 տաճկի] այլազգւոյ B || 10 գիտասցէ եւ *om.* B || 16 եղբարքն *om.* B.

que son fils aîné. Mais leur mère demeura ferme dans sa foi au Christ, et éleva pieusement ses enfants; ceux-ci à cause de leur courage s'enrôlèrent dans l'armée du tyran musulman Ali Bassan, de la race des Danishmends, qui régnait à Sébaste et sur les contrées du Pont; homme d'un naturel bestial, assoiffé de sang, et fou furieux contre les chrétiens.

Certains allèrent dire du mal à Ali Bassan contre les saints Goharinianklı en ces termes : « Ce sont les enfants d'un musulman, qui ont abandonné notre religion, vivent en chrétiens, répugnent à nos mets et ne prient point
* A fol. 324 v° a. * avec nous. » Il envoya des soldats avec ordre de les amener devant lui; les soldats, y étant allés, les appelèrent, en les pressant, pour paraître devant le prince. Ayant compris le secret trait de flèche du méchant, ils saluèrent leurs familles et partirent avec joie en disant : « Dieu connaît ce qui est bien pour nous, Il en prendra soin. »

Lorsqu'ils eurent été introduits devant le tyran, celui-ci les interrogea au sujet du christianisme. Le frère aîné ne laissa pas les saints répondre, mais dit lui-même au prince : « La religion que tu suis, nous la suivons également. » Il les remit en liberté et ils rentrèrent chez eux, tristes de ne pas avoir confessé le Christ. Les frères blâmèrent leur aîné pour ne pas les avoir laissés confesser leur foi chrétienne; ils firent pénitence en versant

եւ ապաշաւէին լալով եւ կոծելով ։ Եւ Ռատիոս գնաց ի վանքն եւ եղեւ կրօնաւոր ։

Յետ աւուրց դարձեալ մատնեցին բռնաւորին չարախօսք եթէ. Որքան արձակեցեր զնոսա առաւել եւս անարգեն զՄահմէտ եւ զկրօնս մեր ։ Եւ գնաց Ալի Բասան յԵկեղեաց գաւառն եւ առ աւար եւ գերութիւն բազում, եւ եկեալ ի Սեբաստիա բանակեցաւ առ ափն Ալիս գետոյն ։ Եւ առաքեաց զոմն անօրէն որ չարախօսեաց զսրբոցն եւ բազում զօրս ընդ նմա ածել զսուրբսն առաջի իւր ։ Եւ նոցա * կալեալ զերանելիսն կապեալ շղթայիւք ածին առաջի բռնաւորին ի բանակն· եւ եհարց զնոսա վասն քրիստոնէութեանն ։ Եւ սուրբն Ռատիոս ասէ համարձակութեամբ. Քրիստոնեայք էաք եւ եմք եւ եղիցուք. եւ սկսաւ անարգել զՄահմէտ ։

* A fol. 324 v° b.

Եւ հրամայեաց բռնաւորն հարկանել զբերան նորա եւ հատանել զլեզուն ։ Եւ նա գոհանայր զԱստուծոյ ի հարկանելն, բայց զլեզուն ոչ հատին ։ Եւ հարցեալ զմի մի ի սրբոցն եւ նոքա յայտնապէս խոստովանեցան զՔրիստոս Աստուած եւ Որդի Աստուծոյ ։ Եւ այլ բազում եւ պէս պէս հարցումս արարեալ եւ պարգեւս խոստացեալ ոչ կարաց հաւանեցուցանել զնոսա, հրամայեաց փորել զերկիր եւ թաղել զԳոհարինէ մինչեւ ի մէջսն, եւ նետաձիգ լինել ի նա ամենայն բազմութիւնն ։

Եւ մինչդեռ պատրաստէին զայն եկին զինուորքն եւ բերին զկանայս եւ զմանկունս

3 զՄահմէտ] զմահմանս B || 9 զՄահմէտ] զմահմանս եւ զկրօնս նոցա B || 13 արարեալ] հարցեալ B.

des larmes et en se frappant la poitrine. Ratios se retira dans un couvent et se fit religieux.

Un certain temps après, les dénonciateurs les livrèrent de nouveau au tyran, en disant : « Depuis que tu les as relâchés ils méprisent davantage Mahomet et notre religion. » Ali Bassan se rendit à la province de Ekelikh, fit un grand butin et prit de nombreux captifs; il revint à Sébaste et établit sa résidence au bord du fleuve Halys. Il envoya un des infidèles, qui avait calomnié les saints, avec de nombreux soldats pour amener les saints en sa présence. Ceux-ci, * ayant saisi les bienheureux, les conduisirent chargés de fers auprès du tyran, dans son camp. Celui-ci les interrogea au sujet du christianisme. Saint Ratios répondit avec hardiesse : « Nous étions chrétiens, nous le sommes et le serons, » et il se mit à injurier Mahomet.

* A fol. 324 v° b.

Le tyran ordonna de le frapper sur la bouche et de lui couper la langue. Pendant qu'on le frappait il rendit grâces à Dieu; on ne lui coupa point la langue. (Le tyran) interrogea les saints l'un après l'autre; ils confessèrent ouvertement le Christ Dieu et Fils de Dieu. Après leur avoir adressé différentes questions et leur avoir promis des présents, ne réussissant point à les persuader, il ordonna de creuser la terre et d'y enterrer Gohariné jusqu'à la taille, et commanda à toute la foule de lui lancer des flèches.

Pendant qu'on préparait cela, les soldats arrivèrent, amenant les femmes

նոցա եւ զինչս եւ զստացուածս. եւ նոքա լային առ միմեանս սաստիկ գթով : Եւ աղաչեցին իշխանքն զբռնաւորն ներել նոցա զի թերեւս դարձցին վասն գթոյ կանանցն եւ մանկանցն : Եւ իբրեւ թողացոյց նոցա նոքա համբուրեալ զմիմեանս քաջալերէին հաստատուն կալ ի հաւատսն Քրիստոսի :

Եւ բարկացեալ անօրէնն հրամայեաց զԳոհարինէ հեղձամղձուկ առնել ի ջուրն
* A fol. 325 r° a. հեղեղատին. * եւ զՏունկիոս եւ զԾամիդէս ածել զառաջեաւ, եւ զՌատիոս ըրկել փոկովք եւ հարկանել : Եւ ասէ ցսուրբսն Տունկիոս եւ զԾամիդէս. Այդ ամենայն ստացուածք զոր տեսանէք եւ այլ բազումս յաւելից, եւ ձեզ լիցի եթէ լուէք ինձ. եւ զԳոհարինէ փառաւորեցից իշխանութեամբ եւ զՌատիոս թողից ըստ կամաց իւրոց կեալ : Ասեն սուրբքն. Այդ ամենայն քեզ (լիցի) եթէ թողուս մեզ կեալ քրիստոնէութեամբ, եւ քեզ ծառայեսցուք միամտութեամբ, ապա թէ ոչ այլ իրք մի հարցաներ ընդ մեզ. քրիստոնէայք եմք, զոր ինչ առնելոց ես արա :

Եւ բարկացեալ բռնաւորն հրամայեաց ջալոտիւք տանջել զնոսա, եւ ետ ածել զԳոհարինէ եւ զՌատիոս. եւ էին երեսք նոցա եւ ամենայն մարմինն արիւնռուշտ յողորաձեձն առնելոյ, եւ Գոհարինէ ամենեւին նուաղեալ ի ջրաձեձն առնելոյ անտի :

13 բռնաւորն] թագաւորն B || 15 ջրաձեձն առնելոյ] ջրձեձոյ B.

(des saints) et leurs enfants, leurs biens et tout ce qu'ils possédaient; tous pleuraient par leur grande affection mutuelle. Les notables prièrent le tyran de leur pardonner dans l'espoir de voir (les saints) se convertir par l'amour pour leurs femmes et leurs enfants. Lorsqu'il les eut relâchés, ils s'embrassèrent mutuellement et s'encouragèrent à demeurer fermes dans la foi au Christ.

L'infidèle, irrité, ordonna de noyer Gohariné dans les eaux du torrent
* A fol. 325 r° a. * et d'introduire en sa présence Tounkios, Dsamidès, puis d'enserrer fortement Ratios dans des lanières et de le frapper. Il dit aux saints Tounkios et Dsamitès : « A tous ces biens que vous voyez j'en ajouterai d'autres plus nombreux encore qui seront à vous, si vous m'écoutez, je glorifierai Gohariné par une haute situation et je laisserai Ratios vivre à sa guise. » Les saints répondirent : « Que tout cela soit à toi; si tu nous laisses vivre en chrétiens, nous te servirons fidèlement; dans le cas contraire, ne nous fais plus de questions : nous sommes chrétiens; fais ce que tu as à faire. »

Le tyran, irrité, ordonna de les torturer avec des verges. Il fit venir Gohariné et Ratios; leur figure et leur corps étaient inondés de sang des coups de verges d'osier qu'ils avaient reçus; et Gohariné était défaillante de la torture [1].

1. Au lieu de ջրաձեձ, l'édition de 1706 porte յոլորաձեձ expliqué par յողորաձեձ dans le grand dictionnaire հայկազեան, t. II, Venise, 1837, pp. 503 sq.

Ասէ բռնաւորն. Զի ոչ լուարուք ինձ պատահեցին ձեզ այդ ամենայն տանջանք. եւ Քրիստոսն ձեր ոչ կարաց փրկել զձեզ : Եւ հրամայեաց զկանայսն եւ զմանկունսն եւ զինչսն նոցա առաջի նոցա բաշխել իշխանաց իւրոց. եւ նոքա լային առ միմեանս եւ Աստուծոյ յանձն առնէին :

Եւ բռնաւորն բարկացեալ եհան զսուրն պողովատիկ, ետ ի դահճապետն եւ ասէ. Այդու բարձցես զգլուխս * նոցա, անողորմաբար, եւ նախ զՌատիոսին, զի նա եղեւ պատճառ կորստեան վատաբաղդացդ : Եւ տարեալ ի տեղի կատարմանն հատին զգլուխ երանելոյն Ռատիոսի : Եւ հատեալ գլուխն խօսէր եւ քաջալերէր զեղբարսն մի երկնչել ի մահուանէ : Եւ այնպէս կատարեցան սրով երեքին եղբարքն աղօթելով եւ գոհանալով զԱստուծոյ : * A fol. 325 r° b.

Իսկ հաւատացեալքն որք անդ դիպեցան առին զմարմինս նոցա, ի նոյն յարեալ եւ զգլուխսն, եւ պատեալ մաքուր կտաւօք թաղեցին ի մարգմակին, ի տեղւոջն յորում կատարեցան հուպ ի ճանապարհն քառակուսի, եւ տօն մեծ կատարեցին զօրն զայն Յուլիսի Լ : Եւ բազում բժշկութիւնք լինին ի տեղւոջն հանգստեան սրբոցն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն :

[B * Յայսմ աւուր տօն սրբոց առաքելոցն Շիղայի եւ Սիղուանոսի, Կրիսկենդոսի եւ Եպենտոսի, Արիստարքոսի եւ Արիստաբուլայ, եւ Յուդայի որ Բարսաբայն կոչեցաւ : * B p. 47 a.

11 առին] զպատուական *add.* B || 14 Յուլիսի Լ.] որ օր ԻԴ էր Հրոտից եւ Լ Յուլիսի ամսոյ : Եղեւ կրս այս ի հինգ հարիւր եւ քսան եւ չորս թուականիս Հայոց *add.* B.

Le tyran leur dit : « Toutes ces souffrances vous sont arrivées parce que vous ne m'avez pas écouté; votre Christ n'a pu vous sauver. » Et il ordonna de distribuer à ses notables en leur présence leurs femmes, leurs enfants et leurs biens. Ils pleurèrent l'un pour l'autre et se recommandèrent à Dieu.

Le tyran, irrité, tira son épée d'acier, la remit au chef bourreau et lui dit : « Tu trancheras impitoyablement avec cela leur * tête, et d'abord à Ratios, car c'est lui la cause de la perte de ces gens au sort malheureux. » Les ayant menés au lieu de l'exécution, ils tranchèrent la tête au bienheureux Ratios. Mais la tête tranchée parla à ses frères et les encouragea à ne point craindre la mort. C'est ainsi que les trois frères furent martyrisés par l'épée en priant Dieu et en Lui rendant grâces. * A fol. 325 r° b.

Les fidèles qui se trouvèrent là enlevèrent leurs corps, en y joignant les têtes, et les ayant ensevelis dans du linge propre, les inhumèrent dans la prairie, à l'endroit où ils avaient été exécutés, près d'un carrefour; puis ils célébrèrent une grande fête ce jour-là, le 30 juillet. De nombreuses guérisons ont lieu à l'endroit où reposent les saints pour la gloire de la très sainte Trinité.

[B * En ce jour fête des saints apôtres Silas et Silvain, Crescent et Épainétos (*Epentos*), Aristarque et Aristobule et Jude, surnommé Barsabas. * B p. 47 a.

Եւ այլ յիշատակ սրբոց վկայիցն Ապտոնոսի եւ Սենէոսի, որք էին փոքրագոյն թագաւորք, եւ մարտիրոսացան ընդ այլոց բազում վկայից ի Պարսս :

Յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս երանելի Գէորգ վարդապետն Մեղրիկ կոչեցեալ :

* B p. 49 b. * Էր սա ծննդեամբ ի Վասպուրական աշխարհէ յԱնալիւր գեղջէ, այր բարեբարոյ քաղցրաբան եւ իմաստուն. այլ կրօնաւորեալ ի Սեւան կղզի զամս յիսուն Սեւանեցի կոչեցաւ, եւ էր ճգնազգեաց եւ պահեցող, եւ ունէր սովորութիւն զի զամենայն գիշերս կիւրակամտից ոտընկաց տքնութեամբ անցուցանէր : Եւ զնոյն կարգ սահմանեաց յետ ժամանակաց ի Դրազարկ վանս ի Կիլիկիա եւ յանապատն Սսոյ :

Եւ կատարեալ զկեանս իւր սուրբ եւ աստուածահաճոյ վարուք փոխեցաւ առ Տէր ի հասակի եօթանասուն ամաց, եւ թաղեցաւ ի Դրազարկ ի թուականիս Հայոց հինգ հարիւր վաթսուն եւ երկու Հրոտից ԻԴ եւ Յուլիսի Լ :]

Հրոտից ԻԵ եւ Յուլիսի ԼԱ : Վկայութիւն սուրբ կուսին Լուկիայ
եւ սրբոյն Ռիկսոնի եւ այլ ընկերացն :

Աղախինն Քրիստոսի Լուկիա էր ի Կամպանիոյ գաւառէն մերձ ի Հռոմ : Եւ կալաւ

12 Վկայութիւն... ընկերացն] Վկայութիւն սրբուհւոյ եւ կուսին վկային Լուկիայ, եւ սրբոյ վկային Ռիկսոնի եւ այլ ընկերացն : Էր եւ այլ Լուկիա ի Սիկիլիա, եւ տօնն կատարի Հոկտեմբերի ԼԱ B.

Également commémoration des martyrs Aphtonius (*Aptonos*) et Sénéos, qui étaient des rois secondaires et qui furent martyrisés avec beaucoup d'autres martyrs en Perse.

En ce jour reposa dans le Christ le bienheureux vardapet Georges, surnommé Mégrik[1].

* B p. 49 b. * Il était par la naissance du pays de Vaspourakan, du village d'Analiur, homme d'un bon naturel, au langage doux et sage; pour avoir été moine cinquante années dans l'île de Sévan, il fut surnommé Sevanétsi. Il menait une vie d'ascète, était jeûneur et avait l'habitude de passer toutes les nuits du samedi au dimanche debout, sans dormir. Il institua plus tard cette pratique au couvent de Drazark en Cilicie et dans le désert de Sis.

Ayant accompli sa vie saintement et avec une conduite agréable à Dieu, il trépassa auprès du Seigneur à l'âge de soixante-dix ans et fut enterré à Drazark, l'an de l'ère arménienne cinq cent soixante-deux[2], le 24 hrotits, le 30 juillet.]

25 HROTITS, 31 Juillet.

Martyre de la vierge sainte Lucie, de saint Rixos et d'autres compagnons.

La servante du Christ Lucie était de la province de Campanie, près de

1. Mot à mot : miel. — 2. Correspond à 1113-4 de notre ère.

զնա Ռիկսոն իշխանն, եւ յոյժ նեղեաց զոհս մատուցանել կռոցն, եւ ոչ հաւանեցաւ այլ խոստովանեցաւ թէ. Պաշտօնեայ եւ աղախին եմ Քրիստոսի :

Եւ վասն զի տարփացաւ ցանկութեամբ ի գեղեցկութիւն նորա Ռիկսոն խոստանայր նմա գանձս եւ ինչս եւ մեծութիւն եթէ ամուսնանայ նմա. եւ նա հրաժարէր ի պարգեւացն եւ ասէր. * Ես հանդերձեալ եմ Քրիստոսի հարսնանալ, եւ ի մահկանացու * A fol. 325 v° a. մարդ ոչ յուսամ :

Եւ Ռիկսոն աստուածային շնորհօքն զղջացաւ, եւ տարաւ զնա ի տուն իւր, եւ պատրաստեաց նմա սենեակ առանձինն եւ անկողինս փափուկս եւ մեծագինս, եւ կացոյց նմա աղախնայս ի ծառայութիւն, եւ թոյլ ետ նմա պահօք եւ աղօթիւք պաշտել զհաւատն իւր եւ իբրեւ զմի յաստուածոց իւրոց համարէր եւ պատուէր զնա :

Եւ յորժամ կամէր ի պատերազմ երթալ աղաչէր զերանելին Լուկիա զի աղօթեսցէ վասն նորա. եւ նորին աղօթիւքն յաղթէր ի պատերազմին եւ դառնայր ուրախութեամբ : Եւ այսպէս բնակեցաւ առ նա ամս քսան :

Եւ ի միում աւուր աղաչեաց Լուկիա զՌիկսոն իշխանն զի երթիցէ ի Կամբանիա, եւ անդ առցէ մարտիրոսական պսակ. նոյնպէս եւ Տէր երեւեցոյց նմա ի տեսլեան. իսկ Ռիկսոն ոչ յօժարանայր որոշիլ ի նմանէ, եւ յահէն Աստուծոյ եւ ի գթոյն Լուկիայ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ : Եւ եթող զտունն եւ զորդիս, զկինն եւ զծառայս, զինչս եւ զագարակս, եւ գնաց զկնի նորա ի Կամբանիա, եւ անդ կացին առաջի անօրէն

Rome. Le gouverneur Rixos (*Rikson*) la fit saisir et la pressa beaucoup d'offrir des victimes aux idoles, mais elle ne consentit point et confessa : « Je suis diaconesse et servante du Christ. »

Rixos, épris passionnément de sa beauté, lui promit de l'argent, des biens et des honneurs si elle voulait l'épouser, mais elle rejeta les présents en disant * : « Je suis sur le point de me fiancer au Christ, je n'ai point d'espoir * A fol. 325 v° a. en l'homme mortel. »

Rixos, se repentant par la grâce de Dieu, la conduisit à sa maison, lui fit préparer une chambre à part, avec une literie douillette et de grand prix, mit des servantes à son service, et la laissa suivre sa foi avec jeûnes et prières. Il la considéra comme l'un de ses dieux et la tint en honneur.

Lorsqu'il devait partir en guerre, il priait la bienheureuse Lucie de prier pour lui; il gagnait la bataille par ses prières et revenait avec joie. C'est ainsi qu'elle habita chez lui vingt ans.

Un jour, Lucie pria le gouverneur Rixos de la laisser aller en Campanie pour y obtenir la couronne du martyre; de même le Seigneur le lui fit voir en vision; mais Rixos ne voulait pas se séparer d'elle : par crainte de Dieu et par affection envers Lucie, il crut au Christ et se fit baptiser. Il abandonna sa maison et ses enfants, sa femme et ses domestiques, ses biens et ses terres, et la suivit en Campanie, où ils furent introduits devant le juge

դատաւորին եւ խոստովանեցան ուղիղ հաւատով զՔրիստոս եւ հատին զգլուխս նոցա Յուլիսի ԼԱ ։

* A fol. 325 v° b. Կատարեցան սրով եւ այլ վկայք յաւուրն յայնմիկ ընդ սրբոյն * Լուկիայ եւ Ռիկոսի սուրբն Անտոնիոս, Լիկիոս, Սատարոս, Նէաս, Սիրինոս, Դիոդորոս, Ապողոնիոս, Ապամոս, Պապիանոս, Կոտայոս, եւ այլ ինն վկայքն որոց անուանքն գրեալ են յերկինս ի գիրն կենաց ։

* B p. 50 a. [B * Յայսմ աւուր կատարեցան ի Հայք սուրբ աշակերտք եւ ընկերք սուրբ քահանայիցն Ղեւոնդեանց սուրբ քահանայքն Սամուէլ եւ Աբրահամ, եւ սուրբ մոգպետն որ տեսեալ զլուսափայլութիւն սքանչելեաց նոցին քահանայիցն, հաւատայ ի Քրիստոս եւ մարտիրոսութեամբ կատարեցաւ ։

Ի սոյն նահատակեցաւ բազում չարչարանօք եւ մահուամբ վասն Քրիստոսի խոստովանութեանն սուրբ վկայն Քրիստոսի Գելասիոս ։

* B p. 50 b. Եւ այլ տօն եւ վկայութիւն սրբոյն * Սաբինէ վկայի Կեսարացւոյ, եւ սուրբ հօրն Եւդոկիմոսի արդարոյ Կապուտկեցւոյ, եւ Գերմանոսի եպիսկոպոսի ։

Յայսմ աւուր վկայութիւն սրբուհւոյն Յուլիտայ ։ Սրբուհիս Յուլիտա էր ի Կեսարիոյ քաղաքէն Քրիստոսի հաւատովն եւ սրբութեամբ պայծառացեալ ։ Եւ դատ ունելով առ ումն ընչասէր այր եւ բռնաւոր, որ զերկիր կալուածոց նորա յափշտակեալ էր, եւ ագարակս եւ գեղս եւ պաճարս եւ ծառայս եւ զամենայն պատրաստութիւն կենաց

1 նոցա] Հրոտից ԻԵ եւ *add.* B || 5 Պապիանոս] Որոնոս, Պապիկոս, Բիքտոր *add.* B — անուանքն] զանունն գիտէ Քրիստոս եւ *add.* B.

impie; ils confessèrent le Christ avec vraie foi, et on leur trancha la tête, le 31 juillet.

D'autres martyrs encore furent exécutés par le glaive ce jour-là avec

* A fol. 325 v° b. sainte * Lucie et Rixos : saint Antoine, Lucius (*Likios*), Satyre, Néas, Sirinus, Diodore, Apollonius, Apamus, Papianus, Cotyïos et neuf autres martyrs dont les noms sont inscrits au ciel dans le livre de la vie.

* B p. 50 a. [B * En ce jour furent martyrisés en Arménie les saints disciples et compagnons des saints prêtres Léonteankh, les prêtres Samuel et Abraham et le saint chef des mages qui, témoin de l'éclat des miracles de ces prêtres, crut au Christ et mourut en martyr.

En ce jour fut martyrisé après beaucoup de tortures et mourut pour la confession du Christ le saint martyr du Christ Gélase.

* B p. 50 b. Également fête et martyre de saint * Sabinus (*Sabinē*) le martyr de Césarée, du saint père Eudocimus le juste de Cappadoce, et de l'évêque Germain.

En ce jour martyre de sainte Julitte. Cette sainte Julitte était de la ville de Césarée, de foi chrétienne et renommée pour sa sainteté. Elle eut un procès avec un homme avide de biens et tyrannique, qui lui avait ravi les terres de ses domaines, champs, villages, animaux et serviteurs, les avait

սրբուհւոյն լինքն էր շրջեալ եւ առեալ, արհամարհելով զարդարն եւ մանաւանդ զԱստուած, եւ սուտ վկայս զրպարտողս եւ յափշտակողս ի վերայ կացուցանէր նորա ։

Յայնժամ իբրեւ սկսաւ սրբուհին պատմել զբռնաւորութիւն առն, եւ զոր ի նմանէ գործէր իսկ նա չարախօսեաց զսրբուհին առ իշխանն եթէ քրիստոնեայ է, եւ ոչ հասարակաց օրէնս պատուէ, եւ ոչ պաշտէ զաստուածս թագաւորացն ։ Իսկ սրբուհին առ ոչինչ համարելով զաժամանակեայսն, այլ զամենայնն արհամարհեաց եւ խոստովան լինէր եթէ զամենեցուն հրաշագործողն եւ զարարիչն ոչ ուրանամ ։

Իսկ դատաւորն ստիպեաց զնա ողոքանօք եւ սպառնալեօք զոհել կռոցն. եւ իբրեւ ոչ ուրացաւ սրբուհին, այլ վկայէր զՔրիստոս համարձակ, այնուհետեւ հրոյ մատնեաց զնա, եւ հուրն պարփակեալ զսրբուհին մարմինն եւ որպէս ի մէջ լուսաւոր եւ ցօղաւոր դրախտի հրճուելով երանելին զհոգին օրհնութեամբ առ Աստուած աւանդեաց. եւ մարմինն ամբողջ մնաց ի հնոցէն ։

Զոր տեսեալ արք երկիւղածք թաղեցին ի նշանաւոր տեղւ, յորմէ բազում բժշկութիւնք եղեն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Զորմէ զսորա առաքինահանդէս վկայութեամբն արիական եւ զովելի քաջութենէն կատարելապէս զրուցեալ պատմէ սուրբն Բասիլիոս արժանապէս ներբողական արտաձառութեամբ ։]

transférés à son nom et avait accaparé tout ce que la sainte avait préparé pour sa subsistance, au mépris de la justice et surtout de Dieu; il avait encore suscité des faux témoins, calomniateurs et pillards.

Lorsque la sainte entreprit de faire connaître la tyrannie de cet homme et ce qu'il avait commis, lui, il dénonça la sainte au gouverneur comme étant chrétienne, n'honorant pas la religion commune, n'adorant pas les dieux des empereurs. La sainte, négligeant tout ce qui est temporel et méprisant tout, confessa : « Je ne renie point le créateur, qui a créé toutes les choses par miracle. »

Le juge la pressa par supplications et par menaces d'immoler aux idoles, et comme la sainte ne reniait point mais confessait avec hardiesse le Christ, il la condamna au feu; les flammes enveloppèrent le corps de la sainte, et la bienheureuse, se réjouissant comme au milieu d'un jardin lumineux et plein de rosée, rendit son âme à Dieu avec bénédiction. Son corps fut retiré intact de la fournaise.

A cette vue, des hommes craignant Dieu l'inhumèrent dans un endroit distingué, où beaucoup de guérisons eurent lieu pour la gloire du Christ, notre Dieu.

Saint Basile fit le récit complet avec éloges de son martyre plein de vertus, de courage et de louable vaillance dans un discours panégyrique, tel qu'elle le méritait.]

Ամիս Օգոստոս աւուրս է ԼԱ ։
Ի Հրոտից ԻԶ եւ Օգոստոսի Ա ։ Վարք Տիտոսի առաքելոյն
եւ եպիսկոպոսին Գորտինոս քաղաքին

Զենաս զոր յիշէ Պօղոս ի թուղթս իւր, նա գրեաց զպատմութիւն սրբոյն Տիտոսի ։ Սա էր ի Կրիտիսոյ կղզւոյն, եւ էր ազգակից Մինոյոսոյ արքային, եւ ցանկայր ուսանել զհելլենական զպրութեան հանճարս, զՀոմերոսի եւ զՊղատոնայ եւ զայլոց իմաստասիրացն (* A fol. 326 r° a.) ստորոգութիւնս, եւ էր յայնժամ ամաց քսանից ։ Եւ լուաւ *ձայն յաներեւութիցն որ ասէր. Տիտոս պարտ է քեզ աստի ելանել եւ կեցուցանել զհոգիդ, զի ոչ ինչ օգուտ է քեզ ուսանել զոր խորհեալդ ես ։ Եւ սկսաւ ընթեռնուլ զգիրս Հրէիցն եւ զԵսայի մարգարէն, եւ եգիտ զտեղին յորում գրեալ էր. Նորոգեցարուք առ իս կղզիք բազումք ։

Իսկ իշխանն կղզոյն Կրիտիսոյ հօրեղբայր էր Տիտոսի. լուաւ զՔրիստոսէ եւ զսքանչելեացն զոր առնէր յԵրուսաղէմ եւ յայլ տեղիս զարմանայր եւ խորհուրդ արարեալ ընդ այլ իշխանսն Կրիտիսոյ առաքեաց զՏիտոս յԵրուսաղէմ զի երթիցէ եւ տեսցէ եւ դարձցի զստոյգն պատմեսցէ ։

2 Վարք] Յիշատակ եւ տօն սրբոյն B || 3 քաղաքին] ի Կրիտիս կղզւոջն B || 4 Զենաս... սրբոյն Տիտոսի *om.* B || 5 եւ էր] գոլով B — արքային] Կրիտիսոյ *add.* B || 7-9 Եւ լուաւ... եւ սկսաւ] Բայց ազդեցութեամբն Աստուծոյ սկսաւ B.

LE MOIS D'AOÛT A 31 JOURS.

26 HROTITS, 1er **Août**.

Vie de l'apôtre Tite, évêque de la ville de Gortyne.

Zénas, que Paul mentionne dans ses épîtres[1], a écrit l'histoire de saint Tite. Celui-ci était de l'île de Crète, il était descendant du roi Minos, il désirait étudier les chefs-d'œuvre de la littérature hellène, d'Homère et de Platon ainsi que les productions d'autres philosophes. Il était alors âgé de vingt ans. Mais il entendit (* A fol. 326 r° a.) * la voix des invisibles, qui lui dit : « Tite, tu dois partir d'ici et sauver ton âme, car ce que tu penses apprendre ne te sera d'aucun profit. » Il se mit à lire les Écritures des Juifs et le prophète Isaïe, et trouva le passage qui dit : « *Renouvelez-vous pour moi, îles*[2] nombreuses. »

Le gouverneur de l'île de Crète était l'oncle de Tite; ayant entendu parler du Christ et des miracles qu'il opérait à Jérusalem et ailleurs, il en était émerveillé, et ayant consulté d'autres notables de Crète, il envoya Tite à Jérusalem, pour qu'il allât voir et revînt en rapportant la vérité.

1. Tit., III, 13. — 2. Isaïe, XLI, 1.

Եւ յորժամ գնաց ետես զՔրիստոս եւ երկիր եպագ նմա եւ ականատես եղեւ սքանչելեացն եւ չարչարանացն եւ թաղմանն եւ յարութեանն եւ համբարձմանն եւ գալստեան սուրբ Հոգւոյն ։ Եւ հաւատաց ի Քրիստոս եւ դասեցաւ ի թիւս հարիւր եւ քսանից եւ երեք հազարացն որք հաւատացին ի Քրիստոս ։

Եւ ի Կեսարիա Պաղեստինացւոց ձեռնադրեցին առաքեալքն զՏիտոս, եւ առաքեցին զհետ Պօղոսի ի քարոզութիւն ։ Եւ երթեալ յամենայն քաղաքս եւ ի գաւառս քարոզէին ի միասին զբանն կենաց, եւ բազում տանջանաց համբերեցին, եւ անբաւ բազմութիւնս յանհաւատիցն դարձուցին ի լուսաւորութիւն առնելով նշանս եւ *արու- *A fol. 326 r° b.
եստս ։ Եւ երթեալ Պօղոսի ի Կրիտիս ձեռնադրեաց զՏիտոս եպիսկոպոս Գորտինու քաղաքին ։ Եւ ելեալ ի կղզւոյն գնացին յԱսիա եւ յԵփեսոս, եւ քարոզութեամբն իւրեանց դարձուցին ի Հրէից եւ ի հեթանոսաց երկոտասան հազար անձն ։ Եւ ոչ եթող զՊօղոս մինչեւ ի Ներոնէ արքայէն սրով կատարեցաւ, եւ դարձաւ Տիտոս ի Կրիտիս, եւ ընկալան զնա մեծաւ խնդութեամբ իբրեւ զիւրեանց ազգակից ։

Եւ ի գալստեան նորա տօն կատարեցին եւ զարդարեցին զտաճար կռոցն, եւ տարան զՏիտոս անդ, եւ մտեալ սաղմոսէր եբրայեցերէն. Աստուած մեր ողորմեա՛ մեզ եւ օրհնեա՛ զմեզ ։ Եւ յաղօթելն նորա անկաւ ինքնին Արտեմիդեա բագինն եւ

7 տանջանաց] եւ նեղութեանց *add.* B || 8 դարձուցին ի լուսաւորութիւն] լուսաւորեցին B || 15 մեր *om.* B

(Tite), s'y étant rendu, vit le Christ, se prosterna devant Lui et fut témoin de ses miracles, de la passion, de l'ensevelissement, de la résurrection et de l'ascension, enfin de la descente du Saint-Esprit. Il crut au Christ, et fut admis au nombre des cent vingt-trois mille qui avaient cru au Christ.

Les apôtres ordonnèrent Tite à Césarée de Palestine et l'envoyèrent à la suite de Paul pour la prédication. Ils visitèrent toutes les villes et les provinces, prêchèrent ensemble la parole de vie, endurèrent bien des souffrances et convertirent des foules innombrables à la lumière en opérant des miracles et des *prodiges. Paul, s'étant rendu en Crète, y sacra Tite évêque de la *A fol. 326 r° b.
ville de Gortyne. Ils quittèrent ensuite l'île, se rendirent en Asie et à Éphèse et par leur prédication ils convertirent douze mille personnes, Juifs et païens. (Tite) ne quitta pas Paul jusqu'à ce qu'il eût été martyrisé par le glaive sous l'empereur Néron; Tite revint alors en Crète où il fut reçu avec grande joie comme compatriote.

A son arrivée on célébra une grande fête, on décora le temple des idoles et on y conduisit Tite, qui en pénétrant psalmodia en hébreu : « *O notre Dieu, aie pitié de nous et bénis-nous*[1]. » Pendant qu'il priait, l'idole d'Artémis tomba d'elle-même et se brisa; il fit encore d'autres miracles dans le temple, et

1. Ps. LXVI, 2.

խորտակեցաւ, եւ այլ եւս արար սքանչելիս ի տաճարին, եւ հաւատացին ոգիք իբրեւ հինգ հարիւր եւ աղաղակէին. Մի է Աստուած որ երեւեցաւ մեզ այսօր :

Կերակուր էր Տիտոսի բանջար ի պարտիզէ, եւ հանգչէր ի գետնի ի վերայ խորգոյ եւ մոխրոյ : Եւ ձեռնադրեաց ի Կրետիս ինն եպիսկոպոսունս, ի յինն քաղաքսն, ի Կնոսոյ, յԵւապիւտնի, ի Կիւդոնիա, ի Քերոնիսոն, յԵլեւթերոնի, ի Լամպիս, ի Կիսամոյ, ի Կամբանա. եւ արար զԳորտինոյ մետրապօլիս, որ թարգմանի մայրաքաղաք : Եւ զվեց ամ ուսուցանէր զժողովուրդսն, եւ հաստատէր ի հաւատս, եւ բազում սքանչելիս * արար :

* A fol. 326 v° a.

Եւ եղեն ամք կենաց իւրոց այսչափ. քսանամեայ գնաց յԵրուսաղէմ եւ ետես զՔրիստոս, եւ արար առ նմա ամ մի, եւ ի շրջագայութեանն ընդ Պօղոսի ի քարոզութեանն ամս երեսուն եւ ութ, եւ ի Կրետիս յաթոռն իւր ամս վեց եւ երթեալ ի գաւառն իւրում եկաց ամս ինն. եւ էին աւուրք կենաց իւրոց եօթանասուն եւ չորս ամ :

Եւ յորժամ հանդերձեալ էր փոխիլ առ Քրիստոս ետես զհրեշտակս որք իջին յաւանդել զհոգին, եւ տունն լի եղեւ անուշահոտ ծխով, եւ ամպ լուսաւոր հովանի եղեւ, եւ պայծառ երեսօք ժպտեցաւ եւ զձեռսն յերկինս տարածեաց եւ ասէ. Տէր, զհաւատս քո անշարժ պահեցի, եւ զժողովուրդս քո անդրդուելի զգուշացուցի, եւ դու անխախտելի պահեա զժողովուրդս քո ի հաւատս հաստատունս, եւ զհոգիս իմ ի ձեռս

2 այսօր *om.* B || 6 որ թարգմանի] որ է ի հայ լեզու B || 9 ամք] աւուրք B || 16 զգուշացուցի] զգուշացայ B || 17 անխախտելի] հաստատեա եւ *add.* B — ի հաւատս հաստատունս *om.* B.

cinq cents personnes environ crurent et crièrent : « Il n'y a qu'un Dieu, c'est celui qui nous a été manifesté aujourd'hui. »

Tite ne prenait pour nourriture que les légumes de jardin, il couchait par terre sur un sac et sur de la cendre. Il consacra en Crète neuf évêques pour neuf villes, à Cnossos, à Hierapytna (*Erapiutni*), à Cydonia, à Chersonèsus (*Kheronison*), à Eleutherna (*Elevtheron*), à Lampa (*Lampis*), à Cisamus, à Centanus, (*Kambana*); il fit de Gortyne la métropole, nom qui se traduit ville-mère. Il enseigna le peuple pendant six ans, le confirma dans la foi
* A fol. 326 v° a. et opéra de * nombreux miracles.

Voici le compte de ses années : à vingt ans il se rendit à Jérusalem et y vit le Christ, auprès de qui il resta une année; il circula avec Paul pour la prédication trente-huit années, il siégea sur son trône en Crète six ans, et, rentré dans sa province, il y vécut neuf ans; les jours de sa vie furent soixante-quatorze ans.

Lorsqu'il fut sur le point d'être transporté auprès du Christ, il aperçut des anges qui descendaient prendre son âme, la maison fut remplie d'une fumée suave, un nuage lumineux le couvrit; il sourit avec un visage resplendissant et, élevant ses mains au ciel, il dit : « Seigneur, j'ai conservé ta foi intacte, j'ai conservé ton peuple inébranlable; Toi aussi, conserve ton

քո յանձն առնեմ ։ Եւ յասելն ամէն աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ։ Եւ զմարմինն անուշահոտ եղօք եւ խնկօք եւ սուրբ կտաւօք պատեցին, եւ յորժամ տանէին ի թաղել ամենայն մնացեալ բագինքն ի կղզոջն անկեալ խորտակեցան, եւ յորժամ եդին ի տապանին բազում եւ անթիւ սքանչելիք եղեն ։

Յայսմ աւուր յիշատակ է սրբոց Մակաբայեցւոցն Եղիազար քահանայի եւ սրբուհւոյն Շամունեայ եւ եօթն որդւոց իւրոց ։

* Անտիոքոս անօրէնն որ կոչէր Եբեւելի սա գերեաց զԵրուսաղէմ եւ պղծեաց զտաճարն, եւ բերին յԱնտիոք զգերիսն հանդերձ աւարաւն, եւ էր ընդ գերեալսն քահանայ մի ծեր անուն Եղիազար եւ կին մի Շամունէ եօթն որդւովք ։ Զնոսա ածին առաջի Անտիոքայ եւ բռնադատէր զնոսա ուրանալ զհրէութիւնն եւ ուտել միս խոզենի եւ լինել հեթանոս ։ * A fol. 326 v° b,

Եւ նախ ածեալ գայլ ի բերան ծեր քահանային Եղիազարու ստիպէին զնա ուտել

4 սքանչելիք եղեն] Զկատարումն փառաց սրբոյն Տիտոսի գրեաց Զինաս, զոր յիշէ Պօղոս ի թուղթս իւր *add.* B || 5 Յայսմ աւուր ... որդւոց իւրոց] Յայսմ աւուր նահատակութիւն սրբոց Մակաբայեցւոցն, Եղիազարոսի ծերունոյ քահանային, եւ սրբուհւոյն Շամունեայ, եւ եօթն որդւոց իւրոց որոց անուանքն են այսոքիկ. Ամլիմ, Անտոնինոս, Զուրիա Եղիազարոս, Եվսեվոնա, Սամոնա եւ Մարկելոս B || 7 Անտիոքոս անօրէնն] Սոքա էին առ Անտիոքոսիւ անօրինի B || 11 հեթանոս] եւ նոքա անհաւան եղեալ բռնաւորին զհայրենի օրէնսն պահէին *add.* B.

peuple inébranlable dans la foi ferme; je remets mon âme entre Tes mains. » En disant amen, il rendit son âme à Dieu. On ensevelit son corps avec des parfums suaves et des aromates dans du linge propre, et, lorsqu'on l'emporta pour l'enterrer, toutes les idoles qui restaient encore dans l'île tombèrent et se brisèrent : de nombreux et innombrables miracles eurent lieu lorsqu'on le mit au tombeau.

En ce jour commémoration des saints Macchabées;
du prêtre Éléazar, de sainte Shamounè et de ses sept fils [1].

* L'impie Antiochus, surnommé Épiphane, s'empara de Jérusalem et souilla le temple; les captifs furent emmenés à Antioche avec le butin; parmi les captifs se trouvait un vieux prêtre du nom d'Éléazar et une femme, Shamounè, ayant sept fils. On les introduisit auprès d'Antiochus, qui les pressa de renier la foi juive, de manger de la chair de porc et de se faire païens. * A fol. 326 v° b.

On mit d'abord un frein dans la bouche du vieux prêtre Éléazar, pour

1. Cf. II Macch., vi, 18-vii, 41.

զխոզենին, եւ նա ոչ հաւանէր ։ Եւ նոքա ասեն. Միայն յանձն առ, եւ մեք քեզ այլ միս տացուք ։ Եւ նա ասաց. Քաւ լիցի եթէ այս համբաւ ելցէ զինէն եթէ Եղիազար իննսնամեայ յայլազգութիւն դարձաւ, եւ վասն իմ գայթակղին մանկունք ։ Եւ ինքնակամ դիմեաց ի տանջանսն ։ Եւ բարկացեալ տանջեցին զնա մինչեւ ի չարչարանսն աւանդեաց զհոգին ։

Եւ ածին զՇամունէ եօթն որդւովքն առաջի Թագաւորին, եւ ստիպէին զնոսա ուտել զմիս խոզենի ։ Եւ երէց եղբայրն ասէ. Զի՞ կայք կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք, պատրաստ եմք ի մեռանել քան ընդ հայրենի օրէնսն անցանել ։ Եւ բարկացեալ Անտիոքոս հրամայեաց ջեռուցանել տապակս եւ կաթսայս եւ անիւս, եւ այլեւայլս
* A fol. 327 r° a. գործիս * տանջանաց պատրաստել ։ Եւ հրամայեաց զնահատակն յեռանդն կացուցանել. նախ զլեզուն հատին, եւ զգլխոյն մորթն զերեսօք շրջեցին, ապա զձեռսն եւ զոտսն առաջի մօրն եւ եղբարցն ծայրաքաղ առնէին, եւ ապա կենդանւոյն ի տապակս ջեռուցեալս արկին եւ ծուխն եւ ճենճերն ծառացեալ ելանէր ։ Մայրն եւ եղբարքն մխիթարէին զնա ասելով. Քաջութեամբ մեռցուք եւ զանուն եւ զոգիս ժառանգեսցուք ։ Եւ նա աւանդեաց զհոգին ։

Եւ մատուցին մի մի զմանկունսն ի նոյն տանջանսն, առաջնոյն տանջանօքն սպանին

11 հատին] կտրեցին B || 12 եւ եղբարցն *om.* B.

l'obliger à manger de la chair de porc; mais il n'y consentit point. On lui dit : « Accepte seulement, et nous te donnerons une autre viande. » Il répondit : « Loin de moi d'accepter qu'une telle réputation soit faite à mon sujet qu'Éléazar à quatre-vingt-dix ans s'est converti à la foi païenne, et que de jeunes gens soient scandalisés. » Et il marcha droit vers l'instrument du supplice. De colère on le tortura jusqu'à ce qu'il eût rendu l'âme dans les supplices.

On introduisit Shamounè et ses sept fils devant le roi, et on les pressa de manger de la chair de porc. Le frère aîné dit : « Qu'attendez-vous et que voulez-vous apprendre de nous? Nous sommes prêts à mourir plutôt que de transgresser la loi de nos pères. » Antiochus, irrité, commanda de chauffer des poêles, des chaudrons et des roues, et de préparer divers instruments
* A fol. 327 r° a. * de supplice. Il ordonna d'approcher du feu le martyr; d'abord on lui coupa la langue, puis on lui enleva la peau de la tête qu'on retourna sur sa figure, ensuite on lui trancha les extrémités des mains et des pieds en présence de sa mère et de ses frères, puis on le jeta vivant dans la poêle enflammée; la fumée et la vapeur de graisse montaient comme des arbres. Sa mère et ses frères l'exhortaient en disant : « Nous mourrons avec courage et nous hériterons de notre nom et de nos âmes. » Il rendit son âme.

On amena l'un après l'autre les jeunes enfants pour le même supplice, et on fit mourir tous les sept dans les mêmes tortures que le premier; la

զեօթնեսին, եւ երանելի մայրն սրտապնդէր եւ քաջալերէր զմի մի ի նոցանէ. ապա եւ ինքն նովին տանջանօք կատարեցաւ .

Եւ Անտիոքոս դիւահարեալ գնաց յերկիրն Եղմայ բժշկիլ յաստուածուհւոյն իւրոյ, եւ ասացին նմա. Եթէ ոչ տաս բերել զոսկերս սրբոցն զոր սպաներ եւ անկանիս առաջի նոցա, ոչ բժշկիս ։ Եւ առաքեաց բերել զնոսա սակառօք եւ մինչդեռ գային ի մէջ ճանապարհին լուան եթէ քարկոծեցաւ թագաւորն ի տան աստուածուհւոյն եւ դարձան ի Հայթախ, եւ թաղեցին զսուրբսն ի ներքոյ կաղնոյ ։

* Վասն սոցա գրեաց Գրիգոր աստուածաբանն զներբողական ճառն, որոյ սկիզբն * A fol. 327 r° b.
է. Զինչ են մանկունքս Մակաբայեցիքս, զի վասն սոցա է մերձաւոր տօնս ։

Հրոտից ԻԷ եւ Օգոստոսի Բ ։ Վերադարձումն նշխարաց Ստեփաննոսի նախավկային ։

Նախավկայն Քրիստոսի սուրբ Ստեփաննոս քարկոծեալ ի Հրէիցն սպանաւ յԵրուսաղէմ, եւ թաղեցին զնա Գամաղիէլ եւ Նիկոդիմոս յագարակին որ կոչի Կապար Գամաղիայ ։

9 մանկունքս *om.* B || 10 Վերադարձումն . . . նախավկային] Վերադարձումն պատուական նշխարաց սրբոյն Ստեփաննոսի նախավկային յԵրուսաղեմէ ի Կոստանդինուպօլիս B.

bienheureuse mère exhorta et encouragea chacun d'eux, puis elle fut exécutée, elle aussi, dans les mêmes supplices.

Antiochus, possédé du démon, se rendit au pays d'Élam pour y trouver la guérison auprès de sa déesse. On lui dit : « Si tu ne fais pas venir les os des saints que tu as mis à mort, et si tu ne te prosternes pas devant eux, tu ne guériras pas. » Il les envoya prendre dans des paniers; tandis qu'ils venaient, (les porteurs) apprirent en cours de route que le roi avait été lapidé dans la maison de la déesse. Ils retournèrent à Haïthakh[1] et enterrèrent les saints sous un noyer.

* Grégoire le théologien écrivit sur eux le discours panégyrique qui * A fol. 327 r° b.
commence ainsi : « Que sont les jeunes gens Macchabées, car la fête proche est pour eux[2]. »

27 HROTITS, 2 Août.

Translation des reliques d'Étienne le protomartyr.

Le protomartyr du Christ, saint Étienne, mourut à Jérusalem lapidé, par les Juifs; Gamaliel et Nicodème l'inhumèrent dans le champ appelé Kaphar-gamala (*Kapar Gamaliay*).

1. Édition de 1706 : Աթախ (Atah). — 2. *P. G.*, t. XXXV, col. 911-934.

Ի նմին աւուր սպանին Հրէայքն եւ զՊարմենա զընկերն Ստեփաննոսի երկու հազար հաւատացելովք, որպէս ի Գործս Առաքելոցն գրեաց Ղուկաս թէ. Յաւուր յայնմիկ եղեւ հալածումն ի վերայ եկեղեցւոյն, եւ ամենեքեան ցրուեցան ի գեօղս Հրէաստանի բայց յառաքելոցն եւ բարձին զՍտեփաննոս արք երկիւղածք եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա ։ Իսկ Գամաղիէլ եւ որդին իւր Աբիբաս եւ Նիկոդիմոս, մկրտեալք յառաքելոցն, եւ վախճանեալք հաւատով եդան ընդ սրբոյն Ստեփաննոսի ։

Իսկ յետ բազում ժամանակաց յաւուրս Արկադէոսի եւ Ոնորիոսի թագաւորաց Հռոմայեցւոց եւ Յովհաննու Երուսաղեմայ հայրապետին, երեւեցաւ ի տեսլեան սուրբն Գամաղիէլ Ղուկիանոսի երիցու, եւ եցոյց զնշխարս սրբոցն զՍտեփաննոսի եւ զիւրեանցն,
A fol. 327 v° a. * եւ հրամայեաց հանել յագարակէն, եւ զնախավկային եւ՝ տանել յԵրուսաղէմ, եւ զիւրեանցն դնել յագարակի եկեղեցւոյն որում սպասաւորէր Ղուկիանոս ։ Եւ արարեալ ըստ տեսլեանն ցուցելոյ տարան զնշխարս սրբոյն Ստեփաննոսի յԵրուսաղէմ, եւ կայր յեկեղեցին ։

Եւ յետ աւուրց մեծազգի եւ բարեպաշտ տիկին մի Եղեւթեռ անուն, որ թարգմանի ազատ, զայր իւր զԱղեկսանդրոս թաղեաց յեկեղեցւոջն ուր էին նշխարք սրբոյն Ստեփաննոսի նախավկային ։ Եւ զի մեծատուն պաւակ էր ի Կոստանդինուպօլսէ

3 Հրէաստանի] եւ ի Սամարիա *add.* B || 9 Ղուկիանոսի] Ուղկիանոսի B || 16 նախավկային *om.* B.

Le même jour, les Juifs tuèrent aussi Parménas, le compagnon d'Étienne, avec deux mille fidèles, ainsi que l'écrit Luc dans les Actes des apôtres : « *Le même jour, une violente persécution éclata contre l'Église, et tous, sauf les apôtres, se dispersèrent dans les campagnes de la Judée. Des hommes pieux ensevelirent Étienne et firent sur lui de grandes lamentations*[1]. » Gamaliel et son fils Abibas ainsi que Nicodème, baptisés par les apôtres, et morts dans la foi, furent déposés près de saint Étienne.

Longtemps après, aux jours des empereurs romains Arcadius et Honorius, et de Jean le patriarche de Jérusalem, saint Gamaliel apparut en vision au
* A fol. 327 v° a. prêtre Lucien et lui indiqua les restes de saint Étienne et les leurs; * il ordonna de les enlever du champ avec ceux du protomartyr et de les transporter à Jérusalem, et de déposer leurs reliques dans la terre de l'église, que Lucien desservait. On fit ce que la vision avait indiqué et on transporta les restes de saint Étienne à Jérusalem, où ils furent (conservés) dans l'église.

Un certain temps après, une dame noble et pieuse, nommée Éleuthère, nom qui se traduit « libre », fit enterrer son mari Alexandre dans l'église où se trouvaient les reliques de saint Étienne, le protomartyr. Et comme

1. Act. des Apôtres, VIII, 1.

կամեցաւ գնալ առ ծնօղսն իւր, եւ խնդրեաց հրաման ի հայրապետէն Երուսաղեմի զի առցէ զոսկերս առն իւրոյ եւ տարցէ ընդ իւր ։ Եւ նա ասէ. Ի միասին կան նշխարք նախավկային եւ առն քո, գուցէ ոչ գիտիցես զոսկերս առն քոյ եւ առնուցուս զսրբոյն ։ Եւ նա ասէ. Ես զտապան առն իմոյ ստոյգ գիտեմ ։

Եւ յորժամ գնաց յեկեղեցին մոլորեցաւ ի տապանէ առն իւրոյ, եւ եբարձ զնշխարս սրբոյն Ստեփաննոսի, եւ նաւեաց ի Կոստանդինուպօլիս եւ եղեւ անուշահոտութիւն յոյժ ի նաւին ։ Եւ երեւեալ սուրբն Ստեփաննոս կնոջն եւ ասաց. Ուրախացի՛ր ընդ պարգեւդ Աստուծոյ որ ետ քեզ փոխանակ առն քոյ ։ Ես եմ նախավկայն Քրիստոսի Ստեփաննոս, որ քարկոծեալ ի Հրէից * սպանայ յԵրուսաղէմ ։ Եւ ուրախացեալ * A fol. 327 v° b.
կնոջն ետ փառս Աստուծոյ ։ Եւ ընդ որ անցանէր զիւահարքն բժշկէին եւ դեւքն ասէին. Վա՜յ մեզ զի եկն նախավկայն հալածել զմեզ ։

Եւ հասեալ ի Կոստանդինուպօլիս ել ամենայն քաղաքն ընդ առաջ նորա, քանզի լու եղեւ յամենայն սահմանս համբաւ գալստեան նորա ։ Եւ ջահիւք եւ լապտերօք լուցելովք տարեալ հանգուցին յեկեղեցւոջն որ յանուն նորա շինեալ էր, եւ տօն մեծ կատարեցին զօրն զայն յՕգոստոսի Բ ։

4 գիտեմ] եւ թոյլ ետ նմա *add.* B || 10 եւ դեւքն ... հալածել զմեզ *om.* B || 13 յամենայն սահմանս ... նորա] ի քաղաքն B || 15 զօրն զայն] որ օր ԻԷ էր Հրոտից ամսոյ եւ *add.* B.

elle était fille de parents riches de Constantinople, elle voulut aller auprès de ses parents et demanda l'autorisation au patriarche de Jérusalem de prendre les restes de son mari et de les emporter avec elle. Il lui dit : « Les restes du protomartyr et ceux de ton mari se trouvent ensemble, il se pourrait que tu ne reconnusses point les restes de ton mari et que tu emportasses ceux du saint. » Elle répondit : « Je connais parfaitement bien le cercueil de mon mari. »

Lorsqu'elle se fut rendue à l'église, elle se trompa au sujet du cercueil de son mari, prit les restes de saint Étienne et s'embarqua pour Constantinople. Le navire fut envahi d'une odeur très suave. Saint Étienne apparut à la femme et lui dit : « Réjouis-toi de ce présent de Dieu qu'il t'a donné à la place de ton mari. Je suis le protomartyr du Christ, Étienne, qui fus lapidé par les Juifs * et tué à Jérusalem. » La femme, réjouie, rendit grâces à Dieu. * A fol. 327 v° b.
Là où il passait, les possédés du démon guérissaient et les démons de crier : « Malheur à nous que le protomartyr soit venu pour nous chasser. »

A l'arrivée à Constantinople, toute la ville vint au-devant, car la nouvelle de sa venue s'était répandue dans toute la région. On le transporta avec des torches et des flambeaux allumés à l'église qui avait été construite en son nom et on l'y déposa. On célébra une grande fête ce jour-là, le 2 août.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոց Ղեւոնդեանց առաջնորդացն Հայոց ։

Յետ վախճանի սուրբ հայրապետին Հայոց Սահակայ մեծին, առնու տեղապահութիւն սուրբ աթոռոյն Գրիգորի վարդապետն Մեսրոպ, եւ ի նոյն ամի վախճանեալ նորա տան զիշխանութիւն կաթողիկոսութեան մեծին Յովսեփայ որ էր ի Վայոց Ձորոյ, ի գեղջէ Խողոցմանց այր գիտնական եւ սուրբ եւ լի աստուածային հանճարով եւ իմաստութեամբ ։

Եւ մինչ կամէին ձեռնադրել զնա Յազկերտ Պարսից արքայն բռնադատէր զիշխանսն Հայոց ուրանալ զՔրիստոս, եւ արկ զնոսա ի մեծ նեղութիւնս, եւ զօր
* A fol. 328 r° a. * բազում գումարեալ երթալ աւերել գերել զաշխարհն Հայոց, Վրաց, եւ Աղուանից ։ Իսկ սուրբն Յովսէփ ժողովեալ զամենայն եպիսկոպոսունս աշխարհին եւ զերիցունսն եւ զմնացեալ իշխանսն ուխտ եդ նոքօք հաստատուն կալ ի հաւատսն Քրիստոսի, եւ մեռանել յօժարութեամբ վասն նորա, եւ անուն նահատակութեան ժառանգել, կռուել ընդ զօրս Պարսից, սպանանել յանխնայ զուրացողսն, ոչ խնայել հայր յորդի, կամ եղբայր յեղբայր, կամ ազգական յազգական այր եւ կին ։

1 վկայութիւն ... Հայոց] Վկայութիւն սուրբ հարցն մերոց եւ առաջնորդացն եւ քահանայիցն Հայոց Յովսեփայ կաթողիկոսի, Սահակայ եւ Թաթկայ եպիսկոպոսաց եւ քահանայիցն Մուշէի, Արշէնի եւ Քաջաջայ սարկաւագի, եւ ընկերաց նոցա B || 9 Վրաց եւ Աղուանից *om.* B || 13 զուրացողսն] զուրացեալսն B.

En ce jour martyre des saints Léonciens, les chefs religieux (*aratchnord*) des Arméniens.

Après la mort du saint patriarche des Arméniens, le grand Sahak, le vicariat du saint siège de Grégoire passa au vardapet Mesrop. Comme celui-ci mourut dans la même année, le pouvoir du catholicosat fut remis au grand Joseph, qui était de Vayots Tsor [1], du village de Khoghosmankh [2], homme érudit et saint, plein d'esprit divin et de sagesse.

Pendant qu'on songeait à le sacrer, Yezdedjerd, roi des Perses, pressa les princes arméniens à renier le Christ et les mit dans de grandes tribu-
* A fol. 328 r° a. lations; il rassembla * de nombreuses troupes pour venir envahir, détruire et faire des captifs dans les pays des Arméniens, des Ibères et des Aghouans. Saint Joseph rassembla tous les évêques du pays et les prêtres et les princes qui y étaient restés, fit le serment avec eux de demeurer fermes dans la foi au Christ, de mourir volontiers pour Lui et d'hériter du nom de martyr; de lutter avec les troupes des Perses, de tuer impitoyablement les renégats; le père n'épargnant pas son fils, ni le frère son frère, ni le parent son parent, ni homme ni femme.

1. Mot à mot : « La Vallée des Malheurs. » — 2. Mot à mot : « Les Tueries. »

Իսկ իշխանքն Հայոց որոց զօրավար եւ գլխաւոր էր սուրբն Վարդան յազգէն Մամիկոնէից, թոռն Սահակայ հայրապետին, խաբեալ զարքայն Պարսից, առեալ զերեք հազար մոգս եւ այլ զօրս եկին յաշխարհն Հայոց միաբան ընդ ուխտ եկեղեցւոյն, եւ յարեան ի վերայ մոգացն եւ զօրացն Պարսից, եւ կոտորեցին առ հասարակ :

Եւ լուեալ Յազկերտի տրտմեցաւ յոյժ, եւ գումարեալ զօր բազում, ետ ի ձեռն Միհրներսեհի, որ հոգացող էր ամենայն թագաւորութեանն Պարսից եւ եկն ի Փայտակարան քաղաք : Չոգաւ առ նա իշխանն Սիւնեաց ուրացեալն Վասակ զատեալն ի միաբանութենէն Հայոց, եւ այլ իշխանքն * ընդ նմա : Եւ Միհրներսեհ տայ զամենայն A fol. 328 r° b. զօրսն ի ձեռն առն միոյ որում անուն էր Մուշկան Իսալաւուրտ, եւ առաքէ ի վերայ սրբոյ Վարդանայ եւ զօրացն Հայոց :

Եւ սուրբն Վարդան ել ընդդէմ նոցա վաթսուն հազարաւ, ընդ նոսա էր եւ մեծն Յովսէփ եւ Ղեւոնդ երէց, եւ այլք բազումք յեպիսկոպոսաց եւ յերիցանց : Եւ մարտեան զօրեղապէս, զբազումս կոտորեցին ի Պարսից զօրացն եւ ինքեանք նահատակութեամբ կատարեցան ի դաշտն Արտազու :

Եւ զի սուրբն Վարդան ի մէջ փղացն սպանաւ ի պատերազմին հանդերձ նահատակակից ընկերօքն, մնացեալքն ցանեալ ցրուեցան ի լերինս եւ ի դաշտս, եւ ի

10 զօրացն *om.* B.

Les princes arméniens, dont le général et le chef était saint Vardan, de la famille des Mamikoniens, petit-fils du patriarche Sahak, ayant trompé le roi des Perses, et ayant pris trois mille mages et d'autres troupes avec eux, retourna au pays d'Arménie; ils s'unirent au clergé et assaillirent avec eux les mages et les troupes des Perses et les exterminèrent tous.

A cette nouvelle, Yezdedjerd fut très attristé, et, ayant rassemblé de nombreuses troupes, il les remit entre les mains de Mihrnersèh, qui était le curateur de tout le royaume des Perses; celui-ci arriva à la ville de Paytakaran. Le prince de Siunikh, le renégat Vasak, qui s'était séparé de l'union des Arméniens, alla le trouver, accompagné * d'autres princes. Mihrnersèh A fol. 328 r° b. remit toutes ses troupes entre les mains d'un homme, dont le nom était Moushkan Isalavourt, et l'envoya contre saint Vardan et les troupes arméniennes.

Saint Vardan marcha contre eux avec soixante mille hommes, parmi lesquels se trouvaient le grand Joseph et le prêtre Léonce, et de nombreux autres évêques et prêtres. Ils combattirent vigoureusement, tuèrent de nombreux hommes des troupes des Perses, mais moururent, eux-mêmes, en martyrs, dans la plaine d'Artaz.

Comme saint Vardan avait trouvé la mort dans le combat au milieu des éléphants avec ses compagnons, martyrs comme lui, le reste de ses troupes se dispersa dans les montagnes, les plaines, les fourrés et les forteresses.

մացառս եւ ի բերդս ։ Եւ զօրն Պարսից հետամուտ լեալ հանդերձ ուրացողաւն Վասակաւ երդմամբ իջուցանէին զնոսա յամրոցացն, եւ ստեալ երդմանն սպանանէին ։

Իջին եւ սուրբն Յովսէփ եւ Ղեւոնդ երէց եւ այլք ընդ նոսա, եւ բողոք կարդացին ի դրան արքունի, վասն որոյ եւ ոչ իշխեցին սպանանել զնոսա, այլ զան հարեալ սաստիկ կապեցին զնոսա, եւ զերկու հարիւր եւ երեքտասան արան սպանին ։

Ածին եւ զսուրբն Սահակ զեպիսկոպոսն Ռշտունեաց եւ զՍամուէլ եւ զԱբրահամ երիցունս Արտաշատու, եւ զԽաչաչ սարկաւագ, եւ զԱրշէն, եւ զԽորէն եւ
* A fol. 328 vº a. զԱբրահամ, եւ, * զՄուշէ երէց, խաղացուցին զնոսա կապանօք եւ տարան յերկիրն Պարսից ։

Եւ ի ճանապարհին պատահեաց նոցա ուրացեալն Վասակ եւ ետ ողջոյն նոցա խոնարհութեամբ ։ Ասէ ցնա Ղեւոնդ երէց. Սիւնեաց Տէր, ո՞ւր երթաս ։ Եւ ասէ. Երթամ ընդունել զվարձս վաստակոց իմոց յարքայէ ։ Եւ ասէ Ղեւոնդ. Եթէ դու կենդանի դառնաս յաշխարհս Հայոց ապա Տեաւն ընդ իս չէ խօսեցեալ ։ Եւ սրտաբեկեալ անօրէնն գնաց զճանապարհս իւր տրտում ։

Եւ զսուրբսն զի կապանօք տանէին յետ երկու ամսոց եւ քսան աւուր հասին ի ձմերոցն արքունի ։ Ածին եւ զնախարարսն Հայոց զոր առաքեաց մարզպանն Ատրորմիզդ ։ Եւ թագաւորն հրաման ետ Միհրներսեհի հազարապետի եւ այլ մեծամեծացն Պարսից

1 ուրացողաւն] ուրացեալն B || 4 արքունի] արքային B || 17 մեծամեծացն] մեծացն B.

Les troupes des Perses, accompagnées du renégat Vasak, leur donnèrent la chasse, les firent, après serment, descendre des forteresses, et, parjures à leur serment, les tuèrent.

Saint Joseph et le prêtre Léonce, et d'autres avec eux, se rendirent également, mais ayant protesté au palais royal, on n'osa point les tuer, mais on les frappa cruellement, on les lia, et on tua deux cent treize (autres) hommes.

On amena saint Sahak, l'évêque des Reshtounikh, les prêtres Samuel et Abraham d'Artashat, le diacre Khatchatch, Arshèn, Khorène et Abraham
* A fol. 328 vº a. et le * prêtre Mousbé, et on les mit en route, chargés de chaînes, pour les emmener au pays des Perses.

Chemin faisant, le renégat Vasak, les ayant rencontrés, les salua humblement. Le prêtre Léonce lui dit : « Seigneur de Sinnikh, où vas-tu? » Il répondit : « Je vais recevoir du roi la récompense de mes œuvres. » Léonce lui dit : « Si tu retournes vivant au pays d'Arménie, Dieu n'aura point parlé par moi. » L'impie, le cœur brisé, continua son chemin tristement.

Comme on emmenait les saints chargés de chaînes, ils n'arrivèrent que deux mois et vingt jours après au palais d'hiver du roi. On y avait amené également les satrapes arméniens envoyés par le marzban Atrormizd. Le roi donna l'ordre au chiliarque Mihrnersèh et à d'autres notables persans de

քննել եթէ յումմէ եղեւ աւեր աշխարհին Հայոց ։ Եւ պարտաւորեցաւ կողմ ուրացելոյն, եւ կուտեցաւ վնասն ամենայն ի գլուխն Վասակայ ։

Եւ հրաման ետ թագաւորն հանել ի նմանէ զամենայն պատիւն, եւ ձաղկել ի մեծ հրապարակին, եւ տարան ի բանդ մահապարտացն, եւ ի սաստիկ ձաղանացն եւ ի խիստ նեղութենէն տորորեցաւ ամենայն մարմինն, եւ որդնալից լեալ սատակեցաւ զառնամահ եւ անզեղջ ։

Իսկ զսուրբ քահանայսն եւ զնախարարսն * Հայոց տարան ի Նիւշապուհ քաղաքն, * A fol. 328 v° b.
եւ յանձնեցին ի մոգպետ քաղաքին, եւ նա արկ զնոսա ի բանդ, եւ նեղէր քաղցիւ եւ ծարաւով, եւ բռնադատէր ուրանալ զՔրիստոս եւ արձակել ի կապանացն ։ Եւ նոքա հաստատուն կացեալ ի հաւատսն Քրիստոսի խնդութեամբ տանէին չարչարանացն ։

Եւ զարմացեալ մոգպետն գնաց գիշերի միայն տեսանել թէ զինչ գործեն սուրբքն ։ Եւ հայեցեալ ընդ ծերպ մի ի ներքս ետես զնոսա ի քուն, եւ փառեալ լուսով յարեան սուրբքն յաղօթս ։ Դարձաւ մոգպետն ի տուն իւր եւ ոչ ումեք պատմեաց զտեսիլն ։ Եւ երթեալ ի միւսում գիշերին ետես նոյնպէս լուսաւորս զսուրբսն, եբաց զդուրս բանդին եւ անկաւ յոտս նոցա, եւ հաւատաց ի Քրիստոս, եւ նա պատմեաց նոցա զտեսիլն եւ նոքա ուսուցին նմա զհաւատս ճշմարտութեան եւ զբանս փրկութեան ։

13 եւ փառեալ լուսով յարեան] եւ լոյս պայծառ ծագեալ ի բանդին եւ յարեան B.

rechercher à qui incombait la ruine du pays d'Arménie; c'est le groupe du renégat qui fut reconnu coupable et tout le tort fut accumulé sur la tête de Vasak.

Le roi ordonna de lui retirer tous les honneurs, de le fustiger sur la grande place et de le conduire à la prison des condamnés à mort; tout son corps se recroquevilla après la vigoureuse fustigation et à la suite des grandes peines subies; il fut rempli de vers et mourut d'une mort cruelle et sans repentir.

Quant aux saints prêtres et aux satrapes * arméniens, on les conduisit * A fol. 328 v° b.
à la ville de Nushapouh, et on les confia au chef des mages de la ville, qui les fit mettre en prison, les fit souffrir de la faim et de la soif, pour les obliger à renier le Christ afin d'être délivrés de leurs liens. Mais ils demeurèrent fermes dans la foi au Christ et endurèrent les tortures avec joie.

Le chef des mages, étonné, alla de nuit, seul, pour voir ce que faisaient les saints. Il regarda à l'intérieur par un trou et les aperçut endormis; puis les saints, enveloppés de lumière, s'étant levés, se mirent en prières. Le chef des mages retourna à sa maison sans rien dire à personne de cette vision. Étant allé de nouveau la nuit suivante, il vit semblablement les saints lumineux, il ouvrit la porte de la prison, tomba à leurs pieds et crut au Christ; il leur raconta la vision; ils lui enseignèrent la vraie foi et les paroles du salut.

Եւ տարեալ զնոսա ի տուն իւր լուաց ի վիրացն անոր, եւ զջուր լուացմանն արկանէր զանձամբն : Եւ մկրտեալ զնա եւ զամենայն տուն նորա կոչեաց եւ զնախարարսն որ էին ի բանդի ի նոյն քաղաքին, եդ առաջի նոցա սեղան եւ ուրախ արար զնոսա աւուր ուռճկօք, եւ ընդարձակեաց նոցա մարմնական պիտոյիւք, զի իշխան էր քաղաքին :

* A fol. 329 r° a. Արդ ի վեշտասաներորդ ամի * թագաւորութեան իւրոյ Յազկերտ գնաց յերկիրն Քուշանաց ի պատերազմ, եւ ընդդէմ նորա տէր երկրին, եհար սատակեաց զբազումս, եւ զնա փախստական եհան յերկրէն իւրմէ : Եւ նա ի խոր խոցեալ յոյժ ոչ գիտէր յո՛ թափեսցէ զթոյնս դառնութեան իւրոյ : Իսկ մոգքն ասեն. Արքայ քաջ, գլխաւորքն Հայոց որ ի բանդին են անիծանեն զքեզ հանապազ, եւ աստուածքն բարկացեալ ոչ օգնեցին քեզ, զի մինչեւ ցայսօր կենդանի պահեցեր զանարգիչս նոցա :

Եւ հրաման ետ թագաւորն Դենշապուհ ումեմն մեծի եւ այլ իշխանօք երթալ ի քաղաքն Նիւշապուհ եւ չարչարել զսուրբ քահանայսն եւ եթէ ոչ երկիր պագանեն աստուածոցն սպանանել զնոսա սրով : Եւ եկեալ Դենշապուհ ի քաղաքն եւտես զմոգպետն ընդ նոսա, եւ զարմացաւ, զի երեւելի էր այրն այն : Եւ հարցեալ զնա եւ նա խոստովանեցաւ զքրիստոնէութիւնն : Եւ առեալ հրաման ի թագաւորէն անյայտա-

7 տէր երկրին] արքայն Քուշանաց B || 12 հրաման ետ] հրամայեաց B — այլ] մեծ *add.* B || 16 զքրիստոնէութիւնն] վասն քրիստոնէութեանն B.

Il les emmena à sa maison, lava leurs plaies, et répandit sur sa personne l'eau du lavage. On le baptisa ainsi que toute sa maison. Il fit venir également les satrapes qui se trouvaient en prison dans la même ville, leur offrit un dîner et les réjouit par une nourriture abondante; et comme il était le gouverneur de la ville, il pourvut amplement à leurs besoins corporels.

* A fol. 329 r° a. Jezdedjerd, la seizième année * de son règne, partit en guerre dans le pays des Koushans; le seigneur du pays marcha contre lui, le battit en lui tuant beaucoup de monde et, le mettant en fuite, le chassa hors du pays. (Jezdedjerd), profondément vexé, ne savait sur qui répandre le venin de son amertume. Les mages lui dirent : « Roi vaillant, les chefs arméniens qui sont en prison te maudissent tous les jours et les dieux courroucés ne t'ont point aidé parce que tu as conservé en vie jusqu'aujourd'hui ceux qui les insultent. »

Le roi commanda à un de ses grands, Denshapouh, et à d'autres princes d'aller à la ville de Nushapouh et d'y torturer les saints prêtres, et dans le cas où ils n'adoreraient point les dieux, de les tuer par le glaive. Denshapouh, arrivé dans la ville, voyant le chef des mages en leur compagnie, en fut étonné, car c'était un homme considérable. Il l'interrogea, et celui-ci confessa sa foi chrétienne. (Denshapouh) se fit donner du roi secrètement l'ordre de faire des recherches, à son sujet, de l'autre côté de Kouraïn et de Makou-

բար խորատոյց առնել զնա յայնկոյս քան զՆուրայն եւ զՄակուրայն, եւ զերկու երիցունս որ էին ի կարաւանին զՍամուէլ եւ զԱբրահամ, հրամայեաց անդէն սպանանել վասն հաւատոյն Քրիստոսի, ահ արկանելով քրիստոնէիցն :

Իսկ Դենշապուհ ի գիշերի առեալ զսուրբն Յովսէփ ընկերօքն զի մի ոք * գիտասցէ * A fol. 329 rº b.
եհան արտաքոյ քաղաքին երկոտասան պարսիկ փարսախաւ : Եւ հարցեալ զմի մի ի սրբոցն եւ գտեալ հաստատուն ի հաւատսն Քրիստոսի, հրամայեաց դահճացն կապել զձեռս եւ զոտս նոցա, եւ անցուցանել չուանս երկայնս, եւ երկու երկու լծեցան եւ առին ի քարշ ընդ ապառաժ տեղիսն մինչ զի ոչ մնաց խայծ ի մարմինս նոցա եւ ապա ածին առաջի իշխանացն ասելով. Կակղեցաւ խստութիւն սրտից ձերոց : Եւ սուրբքն ի գոհանալոյ զՏեառնէ ոչ դադարէին :

Դարձեալ եհարց Դենշապուհ թէ առնե՞ն զկամս թագաւորին, եւ երկիր պագանեն արեգականն եւ հրոյ : Ասեն սուրբքն. Մեք զԱստուածն մեր ոչ ուրանամք, եւ տարերաց երկիր ոչ պագանեմք. դուք կուրացեալք հոգւով, այլ եւ թագաւորին ձերոյ ընդ հոգւոյն կուրութեանն եւ մարմնոյն նորա մի ակն կոյր է :

Իբրեւ լուաւ Դենշապուհ զթշնամանս թագաւորին զայրացաւ որպէս զառիւծ, եւ հանեալ զսուսերն յարձակեցաւ ի վերայ սրբոցն, եւ եհար զուսոյ եպիսկոպոսին զաջոյ

9 կակղեցաւ խստութիւն] կակղեցաք զխստութիւն B || 12 եւ հրոյ *om.* B || 15 որպէս] իբրեւ B.

raïn; il ordonna de tuer sur place les deux prêtres qui se trouvaient dans la caravane, Samuel et Abraham, à cause de leur foi au Christ, et pour intimider les chrétiens.

Denshapouh prit avec lui saint Joseph et ses compagnons, de nuit pour que personne * ne s'en aperçût, et les conduisit à une distance de douze * A fol. 329 rº b.
parasanges persanes hors de la ville. Après avoir interrogé les saints, l'un après l'autre, et les ayant trouvés fermes dans la foi au Christ, il ordonna aux bourreaux de leur lier les mains et les pieds, de les attacher à de longues cordes, de les accoupler deux par deux et de les traîner par les endroits pierreux, jusqu'à ce qu'il ne restât pas un point intact sur leur corps; puis ils les introduisirent devant les princes qui leur demandèrent : « La dureté de vos cœurs s'était-elle adoucie? » Les saints ne cessèrent de rendre grâces au Seigneur.

Denshapouh renouvela sa demande, s'ils voulaient accomplir la volonté du roi, adorer le soleil et le feu. Les saints lui répondirent : « Nous ne renions point notre Dieu, nous n'adorons point les éléments terrestres; vous autres, vous êtes aveuglés dans l'âme, même votre roi est aveuglé d'un œil, par la cécité de l'âme et du corps. »

Denshapouh, en entendant les insultes (adressées) au roi, s'irrita comme un lion; tirant son épée, il s'élança sur les saints, et en frappa l'épaule droite

ուսն, եւ զձեռն հանդերձ թիկամբքն ի վայր ընկէց ։ Եւ նա քաջալերէր զընկերսն եւ ասէր. Ահա տեսանեմ զգունդս հրեշտակաց եկեալ առ մեզ, եւ վեց պսակս ի ձեռին հրեշտակապետին ։

Եւ զայն լուեալ սրբոցն ասէ սուրբն Ղեւոնդ ցսուրբն Յովսէփ. Մատիր, յառաջեա՛ A fol. 329 v° a. ընդդէմ սրոյն, զի դու * աստիճանաւ ի վեր ես քան զամենեսեան եւ այսպէս նոյնժամայն հատան վեց երանելեացն գլուխքն, որոց անուանքն են մեծն Յովսէփ, Սահակ եպիսկոպոսն, Ղեւոնդ երէց ի Վանանդայ, Մուշէ երէց յԱղբագոյ, Արշէն երէց ի Բագրեւանդայ, ի գեղջէ Եղեգիկայ, Խաչաչ սարկաւագ յՌշտունեաց ուստի եպիսկոպոսն էր, մոգպետն ի Նիւշապուհ քաղաքէ ։

Իսկ Սամուէլ երէց յԱյրարատայ, ի գեղջէ Այրածոյ, Աբրահամ սարկաւագ ի նոյն գեղջէ, եւ Թադիկ եպիսկոպոս կատարեցան յԱսորեստան եւ երկու որ ի Վարդէսն կատարեցան Սամուէլ եւ Աբրահամ ։

Կատարեցան սուրբքս յամսեան Հրոտից ԻԷ եւ Օգոստոսի Բ ։

Եւ այր մի Խուժիկ քրիստոնեայ որ էր ընդ Դենշապհոյ եբարձ գաղտ զմարմինս սրբոցն եւ տարեալ բաշխեաց քրիստոնէիցն ։

7 յԱղբագոյ, Արշէն երէց *om.* B || 13 Հրոտից] որ օր *add.* B.

du saint évêque, lui détachant du dos l'épaule droite et la main qui tombèrent à terre. Mais celui-ci encouragea ses compagnons en disant : « Voici que je vois les groupes des anges venant à nous; il y a six couronnes dans la main de l'archange. »

Comme les saints entendaient cela, saint Léonce dit à saint Joseph : * A fol. 329 v° a. « Approche, avance-toi vers l'épée, car en dignité, * tu nous es supérieur à tous. » C'est ainsi que furent aussitôt tranchées les têtes des six bienheureux, dont les noms sont : Joseph le grand, l'évêque Sahak, le prêtre Léonce de Vanand, le prêtre Moushé d'Albag, le prêtre Arshen de Bagrévand, du village Elégik, le diacre Khatchatch de Reshdounikh où il était évêque, et le chef des mages de la ville de Nushapouh.

Quant au prêtre Samuel d'Ararat, du village d'Aïradz, et au diacre Abraham, du même village, ainsi que l'évêque Thadik, ils furent martyrisés en Assyrie; les deux qui furent martyrisés à Vardès sont Samuel et Abraham.

Ces saints furent martyrisés le 27 du mois de hrotits, le 2 août.

Un chrétien, Khoujik, qui était avec Denshapouh, enleva secrètement les corps des saints, les emporta et les distribua aux chrétiens.

Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Կենդիոսի քահանայի ։

Սրբասնեալ քահանայն Կենդիոս էր ի գեղջէն Տալմենիոյ, ի Սիդիս քաղաքին Պամփիւլեայ, յաւուրս Դիոկղետիանոսի անօրէն արքային եւ տարան զնա առաջի Ստրատոնիկոսի դատաւորին, եւ համարձակութեամբ * խոստովանեցաւ զՔրիստոս ։ * A fol. 329 v° b.

Ագուցին նմա երկաթի կօշիկս եւ բեւեռեցին յոտսն, եւ ընթացուցանէին ընդ մէջ քաղաքին ։ Եւ գտին այր մի որ ունէր փայտ եւ կամէր վաճառել, եւ զօրականքն կամեցան առնուլ զփայտն առանց գնոյ զի այրեսցեն զսուրբ քահանայն. զոր տեսեալ սուրբ վկայն ետ զգին փայտին երեսուն փող. եւ կալեալ զայլ ոմն այր կամէին բառնալ զփայտն նմա եւ առեալ ինքնին ի թիկունս իւր քահանայն տարաւ ի տեղին ։

Եւ յորժամ բորբոքեցին զհուրն ընկեցին զսուրբն ի մէջ. եւ նա կանգուն կացեալ ուսուցանէր եւ պատուիրէր ժողովրդեանն հաստատուն պահել եւ հաւատալ ի Քրիստոսի հաւատն, եւ ի բաց կալ ի կռոցն պաշտամանէն եւ ել ամբողջ ի հրոյն, եւ յաղօթս եկաց առ Աստուած, եւ աւանդեաց զհոգին ։

Իսկ քուրմն կռոցն տեսեալ զսքանչելիսն հաւատաց ի Քրիստոս, եւ դարձոյց զկին

6 որ ունէր] բարձեալ B || 8 սուրբ] Քրիստոսի B || 13 եւ ել ամբողջ ի հրոյն *om.* B || 14 Իսկ քուրմն... զսքանչելիսն] Յայնժամ լոյս աստուածային շնորհաց ծագեաց ի սիրտ քրմին կռոց, որ կացեալ անդ եւ տեսանէր զհանդէս նահատակութեան սրբոյն B.

En ce jour martyre de saint Kindaios, le prêtre.

Le prêtre Kindaios, de sainte vie, était du village de Talméni, près de la ville de Sidè, en Pamphylie, aux jours de Dioclétien, l'empereur impie. On l'introduisit auprès du juge Stratonicus et il confessa le Christ * avec hardiesse. * A fol. 329 v° b.

On le chaussa de chaussures de fer qu'on cloua à ses pieds, et on le fit courir à travers la ville. Ayant rencontré un homme qui avait du bois à vendre, les soldats voulurent s'approprier du bois sans le payer, pour brûler le saint prêtre; à cette vue, le saint martyr paya le prix du bois, trente sous. Ils saisirent encore un autre homme qu'ils voulurent charger du bois; mais le prêtre le prit lui-même sur son dos et le porta au lieu (de l'exécution).

Lorsqu'ils eurent allumé le feu, ils jetèrent au milieu le saint, qui, restant debout, prêcha à la foule et lui recommanda de croire et de conserver fermement la foi au Christ, abandonnant le culte des idoles. Il sortit des flammes intact, pria Dieu et rendit son âme.

Le prêtre des idoles, témoin du miracle, crut au Christ, convertit sa

իւր եւ զաղախինն, եւ երթեալք անուշահոտութեամբ եւ մաքուր կտաւօք թաղեցին զմարմին սրբոյ քահանային եւ վկային Քրիստոսի, եւ ապա մկրտեցան :

Եւ սարկաւագն Առեստիոս առ զպատուական գլուխ սրբոյն Կենդիոսի, եւ որպէս երբեմն Ամբակում վերացաւ յօդս, գնաց անտի ի Մանդուս ի գաւառն իւր, եւ այլովք քահանայիւք եդ պատուով ի մարմարոնեայ տուփ :

* B p. 56 b. [B * Եւ յայսմ աւուր հանգեաւ ի Քրիստոս մանուկն Ալինախ որդի Օշին թագաւորին, եւ եղեւ պարակից վերին զուարթնոցն :]

* A fol. 330 r° a. * Հրոտից ԻԸ եւ Օգոստոսի Գ : Վկայաբանութիւն սրբոյն Դաղմատիոսի :

Երանելի հայրն մեր Դաղմատիոս զօրական էր յերկրորդ գունդս խոզարաց Թէոդոսի բարեպաշտ արքային ի Կոստանդնուպօլիս, բարի վարուք կացեալ ամուսնաւն իւրով, եւ երկու զաւակ լեալ նորա մին ուստր եւ միւսն դուստր :

Եւ յաւուր միում լուաւ եթէ մեծ եւ առաքինի ծառայն Աստուծոյ Սահակ անուն

1 անուշահոտութեամբ] անուշահոտ խնկօք B || 3 որպէս ... յօդս *om.* B || 4 Մանդուս] Մանգունս B || 8 Վկայաբանութիւն սրբոյն] Վարք երանելոյն B.

femme et sa servante, puis ils allèrent enterrer avec des parfums suaves et des linges propres le corps du saint prêtre et martyr du Christ; enfin, ils se firent baptiser.

Le diacre Arestius prit la vénérable tête de saint Kindaios, et comme jadis Habacuc, il fut enlevé dans les airs; il partit de là pour Mandous[1], sa province, où, accompagné d'autres prêtres, il la déposa avec honneur dans une cassette de marbre.

* B p. 56 b. [B* En ce jour l'enfant Alinach, fils du roi Ochin, reposa dans le Christ et fit partie du chœur des veilleurs célestes.]

* A fol. 330 r° a

* 28 HROTITS, 3 Août.

Confession [2] de saint Dalmatius.

Notre bienheureux père Dalmatius était soldat de la deuxième section des scolaires du pieux empereur Théodose à Constantinople; il menait une vie de bonne conduite avec son épouse, et eut deux enfants, un fils et une fille.

Un jour, ayant appris qu'un grand et vertueux serviteur de Dieu, ana-

1. Correspond aux formes Οὐμαναδεύς, Umanadensis de *Acta SS.* Jul., t. III, p. 186.
2. Au lieu de « passion », traduction habituelle de վկայաբանութիւն, car S. Dalmatius n'est pas martyr.

անապատաւորն եմուտ ի Կոստանդինուպօլիս, գնաց մեծաւ հաւատով ողջոյն տալ նմա երկիր եպագ : Եւ յորժամ ետես զնա Սահակ ասէ. Աստուած ծանոյց վասն քո, ով Դաղմատիոս, որ կրօնաւոր լինիցիս եւ կեցցես ընդ իս :

Եւ լուեալ Դաղմատիոս դարձաւ յետ եօթն աւուր ի տուն իւր, հրաժարեաց ի կնոջէն իւրմէ տուեալ նմա յընչից իւրոց, եւ զդուստր իւր յղարկեաց ի վանս կուսանաց ի յարեւելս, եւ զմնացեալ ինչսն վաճառեաց եւ բաշխեաց աղքատաց, առեալ զորդին իւր փոքրիկ պատանեակ գնաց առ երանելին Սահակ, եւ առաքինի եւ աստուածահաճոյ վարուք ճգնէին ի միասին :

Եւ յաւուրս քառասներորդ պահոցն ոչինչ ճաշակեաց բայց միայն ի կիւրակէի սակաւ հաց եւ ջուր, եւ ի մեծի հինգշաբաթի աւուրն հաղորդեցաւ ի Քրիստոսի անմահական *խորհրդոյն. կերաւ... յաթոռն իւր ննջեաց, եւ եղեւ նմա յերկնից թմրու- * A fol. 330 rº b.
թիւն զքառասուն եւ երիս աւուրս : Եւ յաւուր համբարձման Տեառն գնաց առ նա երանելին Սահակ եւ ձայնեաց երիցս անգամ. Դաղմատիէ, զարթիր, մինչեւ յե՞րբ ննջես : Եւ նա եբաց զաչս իւր եւ ասէ. Տէր, պաշտեցի՞ն եղբարքս զերրորդ ժամն : Կարծէր եթէ յաղուհացսն են դեռ : Ասէ երանելին Սահակ. Եւ դու ո՞ւր էիր որ ոչ գիտացեր

4 հրաժարեաց] հրաժարեցաւ B || 9 ճաշակեաց] ճաշակէր B || 10 հաղորդեցաւ] հաղորդէր B || 11 — p. 1866, l. 4 կերաւ ... եկեղեցւոյն *om.* B.

chorète, nommé Isaac, était arrivé à Constantinople, il alla, avec une grande foi, lui donner le salut, et se prosterna devant lui. Lorsque Isaac le vit, il lui dit : « O Dalmatius, Dieu m'a fait connaître à ton sujet que tu deviendras moine et que tu vivras auprès de moi. »

Dalmatius, apprenant cela, retourna sept jours après à sa maison, prit congé de sa femme en lui donnant une partie de ses biens, envoya sa fille dans un couvent de vierges en Orient, vendit le reste de ses biens, qu'il distribua aux pauvres, et prenant avec lui son fils, jeune enfant, il se rendit auprès du bienheureux Isaac. Ils firent ensemble de l'ascétisme avec une vie de vertus et une conduite agréable à Dieu.

Pendant le carême des quarante jours il ne prit aucune nourriture, excepté un peu de pain et d'eau le dimanche seulement; et le jour du jeudi saint il communia au mystère immortel du Christ; il mangea... [1] s'endormit sur son siège, et eut une torpeur du ciel pendant quarante-trois jours. Le * A fol. 330 rº b.
jour de l'Ascension, le bienheureux Isaac alla auprès de lui et cria par trois fois : « Dalmatius, réveille-toi; jusqu'à quand dormiras-tu? » Il ouvrit ses yeux et dit : « Seigneur, les frères ont-ils dit les offices de la troisième heure? » Il se croyait encore en carême. Le bienheureux Isaac lui dit : « Et toi, où étais-tu, pour que tu ignores l'office de la troisième heure? » Dalmatius

1. Lacune.

զերրորդ ժամու պաշտօնն . Ասէ Դաղմատիոս. Ի սուրբ Մակաբայեցիսն էի ընդ Ատտիկոս պատրիարքն ի պատարագամատուցին, եւ նստոյց զիս մերձ յաթոռն իւր, տեսի եւ երեք կրօնաւորս ի վանացդ մին կայր առաջի բեմին, եւ մին մերձ յամբիոնն եւ միւսն առաջի դրան եկեղեցւոյն :

Եւ ծանեաւ երանելին Սահակ որ Դաղմատիոս հաւատարիմ ծառայ լինելոց էր Աստուծոյ : Եւ յորժամ երանելոյն Սահակայ մերձեցաւ վախճանն զԴաղմատիոս հայր եթող վանացն, եւ ինքն խաղաղութեամբ հանգեաւ ի Քրիստոս :

Իսկ երանելին Դաղմատիոս էր խոնարհամիտ, հանդարտ, պարկեշտ, ողորմած, եւ մեծ առաքինի, եւ արդարադատ ի դատաստան : Երկուք ոմանք ընդ միմեանս
* A fol. 330 v° a. դատախազ լինէին, եւ թագաւորն Թէոդոս առաքեաց զնոսա առ * երանելին Դաղմատիոս, եւ կացին առաջի նորա ասէ Դաղմատիոս. Որ զրկողն է եւ անիրաւ համր եղիցի : Եւ նոյնժամայն անիրաւն պապանձեցաւ, եւ անկեալ մեռաւ :

Եկաց երանելին Դաղմատիոս ի վանս յարգելական խցին ամս քառասուն երեք. եւ յետ փոխելոյն Ատտիկոսի պատրիարքի նստաւ յաթոռն Սիսինոս, եւ յետ Սիսինոսի եղեւ պատրիարք Նեստորիոս Անտիոքացին, որ յետոյ հերձուածող եղեւ : Եւ ի միում աւուր գնաց առ երանելին Դաղմատիոս, եւ նա գիտացեալ հոգւովն յուղարկեաց ընդ առաջ նորա եւ ասէ. Մի աշխատիր, զի ոչ տեսցես զիս, եթէ ոչ նախ սրբեսցես զմիտ

12 եղիցի] լիցի B — եւ անկեալ մեռաւ *om.* B.

répondit : « J'étais aux saints Macchabées avec le patriarche Atticus à la célébration du sacrifice; il me fit asseoir près de son siège, et j'ai vu trois moines de ce couvent-là, dont l'un se tenait devant le chœur, le deuxième près de l'ambon et l'autre devant la porte de l'église. »

Le bienheureux Isaac comprit que Dalmatius allait devenir le serviteur fidèle de Dieu. Et lorsque la fin du bienheureux Isaac approcha, il installa Dalmatius prieur du couvent et reposa en paix dans le Christ.

Le bienheureux Dalmatius fut d'esprit humble, paisible, modeste, charitable et d'une grande vertu, rendant justice dans les jugements. Deux hommes
A fol. 330 v° a. s'intentaient un procès, et l'empereur Théodose les renvoya au * bienheureux Dalmatius. Introduits devant lui, Dalmatius dit : « Que celui qui est usurpateur et injuste, devienne muet. » Aussitôt l'homme injuste perdit la parole et tomba mort.

Le bienheureux Dalmatius vécut au couvent, cloîtré dans sa cellule, quarante-trois années, et à la mort du patriarche Atticus, ce fut Sisinius qui siégea sur le trône, et après Sisinius ce fut Nestorius l'Antiochien qui fut patriarche, et devint par la suite schismatique. Celui-ci se rendit un jour auprès du bienheureux Dalmatius, qui, le sachant par l'esprit, envoya quelqu'un au-devant de lui et lui fit dire : « Ne te dérange point, car tu ne me

քո ի չար խորհրդոցդ զոր զմտաւ ածեալ ես ։ Եւ երանելին ծանոյց ամենեցունց զոր ի Նեստորէ հանդերձեալ էր լինել․ եւ յետ երից ամաց յայտնեցաւ անօրէնութիւնն նորա ։

Եւ հրամայեաց թագաւորն Թէոդոս սիւնհոդոս լինել յԵփեսոս, եւ ժողովեցան երկերիւր եպիսկոպոսք․ Կեղեստինոս Հռոմայ հայրապետն, Կիւրղոս Աղեկսանդրու հայրապետն, եւ այլք յիւրաքանչիւր վիճակաց, եւ նզովեցին զոր սահմանադրութիւն Նեստորի, որ ոչ խոստովանեցաւ աստուածածին զամենասրբուհի կոյսն Մարիամ, եւ զմի Քրիստոս յերկուս բաժանեաց * յայլ եւ յայլ դէմս․ եւ գրեցին զուղղափառ * A fol. 330 v° b.
հաւատսն զոր սահմանեցին ի տումար ։

Եւ յորժամ կամեցան յուղարկել առ թագաւորն, գիտաց Նեստորիոս եւ կալաւ զզուշութեամբ զճանապարհս ծովու եւ ցամաքի, զի մի երթիցէ խորհուրդ տումարին նշանագրով, եւ եդին ապա ի մէջ եղեգան եւ պնդեցին սոսնձով, եւ ետուն ի մուրող աղքատ եւ ի տկար ծերունի որպէս ցուպ, եւ յուղարկեցին առ երանելին Դաղմատիոս ։

Եւ ծերն եմուտ ի Կոստանդնուպօլիս եւ գնաց առ սուրբն Դաղմատիոս, ետ զեղեգնեայ ցուպն եւ նա աղաչեաց զԱստուած որ եթէ հաճոյ է նմա ելանել յարգելական խցէն, եւ Աստուած ի ձեռն հրեշտակի հրամայեաց նմա ելանել ։ Եւ կոչեաց զառաջնորդս վանացն եւ զճգնաւոր կրօնաւորս եւ բազում քահանայս, գնաց նոքօք առ

6 եւ այլք յիւրաքանչիւր վիճակաց *om.* B || 12 եւ եդին … պնդեցին] վասն որոյ հնարս գտեալ պնդեցին B || 14 սուրբն] երանելին B || 16 եւ Աստուած … ելանել] եւ ազդեցութիւն եղեւ նմա յԱստուծոյ ելանել B.

verras pas avant d'avoir purifié ton cœur des mauvais desseins que tu nourris dans ton esprit. » Et le bienheureux fit connaître à tous ce qui devait advenir de Nestorius; trois ans après son impiété se fit jour.

L'empereur Théodose ordonna de convoquer un synode à Éphèse ; deux cents évêques se réunirent : Célestin le patriarche de Rome, Cyrille le patriarche d'Alexandrie et d'autres de chaque diocèse, qui anathématisèrent la profession de Nestorius, qui ne confessait point la toute sainte Vierge Marie mère de Dieu, et qui séparait le Christ un, en deux, * sous différentes * A fol. 330 v° b.
figures; ils mirent par écrit la foi orthodoxe et l'inscrivirent dans un tome.

Lorsqu'ils voulurent l'adresser à l'empereur, Nestorius, le sachant, fit occuper soigneusement les voies de mer et de terre pour que la décision explicite du tome ne parvînt point (à destination); alors ils l'introduisirent dans un roseau, après l'avoir assurée avec de la colle forte, la remirent à un pauvre mendiant et faible vieillard pour qu'il s'en servît comme d'un bâton et ainsi l'envoyèrent au bienheureux Dalmatius. Le vieillard fit son entrée à Constantinople, alla trouver saint Dalmatius et lui remit le bâton de roseau. (Dalmatius) pria Dieu pour savoir s'il Lui était agréable qu'il quittât la cellule cloîtrée, et Dieu, par l'intermédiaire d'un ange, lui ordonna d'en sortir. Il appela alors les chefs des couvents, les moines ascètes et de nombreux

թագաւորն, եւ ղեղէգն եւ բացեալ ընթերցան ։ Եւ յոյժ բարկացաւ ի վերայ Նեստորիոսի եւ ընկէց յաթոռոյն, եւ աքսորեաց ի Պարսիկս ։ Եւ ինքն իւր ձեռնագրովն հաստատեաց զսահմանադրութիւն սուրբ ժողովոյն ։ Եւ ձեռնադրեցին Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսապետ զՄաքսիմոս, եւ յետ նորա Պրոկղոս, եւ յաւուրս նորա
* A fol. 331 r° a. երանելին Դաղմատիոս հանգեաւ խաղաղութեամբ * յՕգոստոսի Դ, եւ եդաւ ի նոյն վանսն որ կոչի Դաղմատիոսի ։

Հրոտից ԻԹ եւ Օգոստոսի Դ ։ Վկայութիւն սրբոյն Սոփիայ եւ երից դստերացն որ են Պիստիս, Ելպիս, Ագապիս, որ թարգմանի Հաւատ Յոյս, Սէր, եւ Սոփիա իմաստութիւն ։

Աղախինն Քրիստոսի Սոփիա ի մեծատանց եւ ի փառաւոր ազգէ էր յերկրէն Իտալացւոց, եւ առեալ զերիս դստերս իւր գնաց ի Հռոմ առնուլ զդրոշմն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զաւակօքն իւրովք զոր սնուցեալ եւ ուսուցեալ էր բարեպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ եւ սոքա վարժէին աստուածիմաստ հանճարով ։

Եւ տեսանէր Սոփիա զդստերս իւր յօժար յաստուածսիրութիւնն եւ ցնծայր յոյժ ։ Էր առաջին դուստր իւր Պիստիս ամաց երկոտասանից, եւ երկրորդն Ելպիս ամաց

5 խաղաղութեամբ] Հրոտից ԻԸ եւ *add.* B || 7 սրբոյն] երանելոյն B — որ են] որոց անուանք են B || 9 թարգմանի] ի հայ լեզու *add.* B.

prêtres, et se rendit avec eux auprès de l'empereur. Il lui remit le roseau; on l'ouvrit et on lut. (L'empereur) fut très irrité contre Nestorius, le destitua de son siège et l'envoya en exil en Perse. Il confirma lui-même de sa signature le statut du saint concile. On sacra Maxime archevêque de Constantinople; après lui ce fut Proclus, aux jours duquel le bienheureux Dalmatius
* A fol. 331 r° a. reposa en paix, * le 3 août, et fut déposé dans le même couvent qui porte le nom de Dalmatius.

29 hrotits, 4 Août.

Martyre de sainte Sophie et de ses trois filles, qui sont Pistis, Elpis, Agapè, noms qui se traduisent : Foi, espérance, charité; et Sophie, sagesse.

La servante du Christ Sophie était d'une famille riche et glorieuse du pays d'Italie; elle prit ses trois filles et se rendit à Rome pour recevoir le sceau de Notre-Seigneur Jésus-Christ avec ses enfants qu'elle avait élevées et instruites dans la piété et la pudeur, et qui s'étaient exercées dans les pensées divines.

Sophie voyait ses filles très disposées à l'amour de Dieu et s'en réjouissait beaucoup. Sa fille aînée, Pistis, avait douze ans; la deuxième, Elpis,

տասանց, եւ երրորդն Ագապիս ամաց ինունց, եւ ի բերան ուսան զամենայն առաքելական եւ մարգարէական գիրս :

Եւ մի ոմն Անտիոքոս անուն տեսեալ զնոսա զի երթային յեկեղեցին յաւուր կիւրակէի ցանկացաւ գեղոյ կուսանացն, եւ խնդրեաց իւր զմի ի նոցանէ : Եւ ասէ Սոփիա. Մեք քրիստոնեայք եմք, եւ զկուսութիւն իբրեւ զոսկի եւ զմարգարիտ հաստատուն *եւ զգուշութեամբ պահեմք : Եւ նա երթեալ առ կռապաշտ թագաւորն Ադրիանոս եւ ասէ. Կին մի օտար երեք դստերօք եթէ ուստի եկեալ իցէ աստ ոչ գիտեմք, խրատ տան կանանց եւ դստերաց մերոց ի բաց կալ ի պաշտամանէն կռոցն, եւ որոշեն ի սեղանոյ զոհիցն եւ յանկողնոց մերոց, եւ ուսուցանեն նոցա պաշտել զմի Աստուած զհայրն Յիսուսի Քրիստոսի : * A fol. 331 r° b.

Եւ առաքեաց թագաւորն զօրագլուխ մի զի տարցէ զնոսա առաջի. եւ եկեալ կալան զերիս քոյրսն, եւ նոքա կալեալ զձեռանէ միմեանց որպէս ի պար երթային խնդութեամբ : Գնաց զկնի եւ մայրն իւրեանց Սոփիա : Եւ յորժամ գնացին ի դուռն ապարանիցն զանձինս իւրեանց ամրացուցին նշանաւ սրբոյ խաչին, եւ մտին առաջի թագաւորին :

Եւ տեսեալ զնոսա զարմացաւ ընդ ահագին գեղեցկութիւն երեսաց նոցա : Եհարց զմայրն. Յորմէ գաւառէ էք եւ կամ զինչ անուն քո եւ դստերացդ : Եւ նա ասէ. Անուն իմ քրիստոնեայ է, եւ իմոց դստերացս միոյն հաւատ, միոյն յոյս, միոյն սէր. եւ մեր

3 ոմն] անօրէն *add.* B || 6 թագաւորն] արքայն B || 7 երեք] երկու B || 12 զձեռանէ] զձեռացն B.

dix, et la troisième, Agapè (*Agapis*), neuf; elles avaient appris par cœur tous les écrits des apôtres et des prophètes.

Un certain Antiochus, les voyant aller à l'église au jour de dimanche, fut épris de la beauté des vierges et demanda l'une d'elles pour lui. Sophie lui dit : « Nous sommes chrétiennes, et nous conservons la virginité fermement * et soigneusement comme l'or et les perles. » Il alla trouver l'empereur idolâtre Adrien et lui dit : « Une femme étrangère avec ses trois filles, venues on ne sait d'où, conseillent à nos femmes et à nos filles d'abandonner le culte des idoles; elles les écartent de la table des victimes et de nos lits et leur enseignent à adorer un seul Dieu, père de Jésus-Christ. » * A fol. 331 r° b.

L'empereur envoya un officier pour les amener devant lui; ils allèrent et saisirent les trois sœurs, qui, se tenant par la main, s'en furent joyeusement comme si elles allaient à un bal. Leur mère, Sophie, les suivit. Lorsqu'elles arrivèrent à la porte du palais, elles se fortifièrent par le signe de la sainte croix, et furent introduites devant l'empereur.

Celui-ci fut ébloui de l'immense beauté de leur visage. Il demanda à la mère : « De quelle contrée êtes-vous? Quel est ton nom et celui de tes filles? » Elle répondit : « Mon nom est chrétien; quant à ceux de mes filles,

հաւատ, յոյս եւ սէր Քրիստոս է, բայց ի ծնողաց իմոց Սոփիա է անուն իմ, եւ եմք յերկրէն Իտալացւոց ։ Եւ առաջնորդեաց ինձ Աստուած եւ եկի ի քաղաքս յայս զի զտղայ զաւակքս իմ Աստուծոյ ընծայեցից ։

* A fol. 331 v° a.

Եւ հրամայեաց ումեմն իշխանի մեծի որոյ *անուն էր Պալատիոս զի պահեսցէ զնոսա ի տան իւրում ։ Եւ յորժամ գնացին պատուիրէր Սոփիա դստերաց իւրոց հաստատուն կալ ի Քրիստոսի հաւատն, եւ համբերել տանջանացն, եւ ի մահուանէն չերկնչել ։

Եւ յետ երից աւուրց կոչեաց առաջի իւր, եւ բազում ողոքանօք խրատ տայր տղայոցն ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն ։ Եւ նոքա ասեն. Առանց տանջանաց պատասխանի ի մէնջ ոչ լուիցես. չարչարեա զմեզ որպէս եւ կամիս, եւ տեսցես զահեղ զօրութիւնն Քրիստոսի ։

Եհարց թագաւորն ցՍոփիա. Քանի՞ ամաց են դստերքդ քո ։ Եւ նա ասէ. Առաջին զաւակս իմ Պիստիս երկոտասան ամաց է, եւ երկրորդն Ելպիս տասն ամաց, եւ երրորդն Ագապիս ինն ամաց է ։ Կոչեաց առաջի իւր զՊիստիս եւ սպառնացաւ յոյժ. եւ նա թշնամանեաց զթագաւորն եւ բարկացաւ յոյժ եւ հրամայեաց կախել զնա, եւ գաւազանօք հարին զնա ։ Եւ ամենեւին ոչ զգաց ցաւոցն, եւ ոչ վիրաւորեցաւ, եւ ոչ այլ-

15 կախել] եւ կախեցին B || 16 այլագունեցաւ] այլագունեաց B.

l'un est foi, le deuxième est espérance, et l'autre est charité; notre foi, notre espérance et notre charité, c'est le Christ; mais de mes parents j'ai le nom de Sophie; nous sommes du pays d'Italie. Dieu m'a conduite et je suis en cette ville pour offrir mes jeunes enfants à Dieu. »

* A fol. 331 v° a.

(L'empereur) ordonna à un des grands dignitaires dont *le nom était Palatios de les garder dans sa maison. Lorsqu'elles y furent arrivées, Sophie recommanda à ses filles de demeurer fermes dans la foi au Christ, d'endurer les tortures et de ne point craindre la mort.

Trois jours après, (l'empereur) les fit venir en sa présence et engagea les enfants avec beaucoup de supplications à renier le Christ et à immoler aux idoles. Elles répondirent : « Tu n'obtiendras point de réponse de notre part sans nous torturer. Tu peux nous torturer comme tu voudras, mais tu verras la formidable puissance du Christ. »

L'empereur demanda à Sophie : « Quel âge ont tes filles? » Elle répondit : « Ma fille aînée Pistis a douze ans; la seconde, Elpis, dix ans, et la troisième, Agapè, neuf ans. » Il fit venir en sa présence Pistis et la menaça beaucoup. Celle-ci insulta l'empereur, qui, fortement irrité, ordonna de la suspendre et de la frapper à coups de bâtons. Elle ne ressentit aucune douleur, ne fut point blessée, son corps ne changea point de couleur. On lui frappa

ագունեցաւ մարմինն ։ Եւ ապա սրով հարկանէին զմարմինն, եւ ընկեցին ի շանթս հրացեալս, եւ հուրն շիջաւ, եւ շանթքն որպէս սառն ցուրտ եղեն ։

Եւ հրամայեաց սրով հատանել զգլուխն ։ Եւ երթեալ առ մայրն եւ առ քոյրսն իւր, * գիրկս արկեալ համբուրեաց, եւ ասէ ցքոյրսն. Մի երկնչիք, զի ամենեւին * A fol. 331 v° b. տանջանացն ոչ զգացի. փութացիք եւ եկայք զկնի իմ ։ Եւ երթեալ դահիճն եհատ զգլուխ նորա ։ Նոյնպէս եւ զայլ երկու քոյրսն նոյն տանջանօք փորձեցին, եւ ոչ կարացին ի Քրիստոսի հաւատոցն դարձուցանել. ապա հատին եւ զնոցա զգլուխսն ։ Եւ յոյժ ուրախ եղեւ Սոփիա զի երիս անարատ հարսունս ետ պարգեւս Քրիստոսի ։

Կատարեցան սուրբ կուսանքն Օգոստոսի Դ ։ Եւ ժողովեաց Սոփիա զմարմինս դստերացն իւրոց, եւ եդ զգլուխսն յիւրաքանչիւր տեղիս, եւ պատեաց մաքուր կտաւովք, օծեալ եւ խնկեալ եդ ի սայլս, մեծաւ փառօք եհան ի քաղաքէն ութ եւ տասն մղոնաւ, եդ ի մարմարիոնեայ տապան ։ Եւ շինեաց ի վերայ եկեղեցի ըստ արժանեաց եւ անկեալ ի վերայ տապանին արտասուօք աղաչէր զՔրիստոս եւ զդստերսն իւր եւ ասէր. Ո՛վ բարի զաւակք իմ, յիշեցէք զծնունդ, զսնունդ, եւ զքաջալերութիւնն, որպէս ծնայ եւ սնուցի եւ յօժարեցուցի յերկնից արքայութիւնն. նոյնպէս եւ դուք կոչեցէք զիս առ ձեզ ։ Եւ աղօթելով առ Աստուած աւանդեաց զհոգին. եւ քրիստոնեայ կանայք եդին զմարմին նորա ի տապանի ընդ դստերս իւր ։

2 որպէս . . . եղեն] ցրտացան B || 9 սուրբ կուսանքն] կուսան տղայքն հրոտից ԻԹ եւ B.

ensuite le corps avec une épée, et on la jeta sur des braises ardentes. Le feu s'éteignit et les braises devinrent froides comme de la glace.

(L'empereur) ordonna de lui trancher la tête par le glaive. Elle s'élança vers sa mère et ses sœurs, * leur tendit les bras, les embrassa, et dit à ses * A fol. 331 v° b. sœurs : « Ne craignez point, je n'ai point ressenti les tortures, dépêchez-vous de me suivre. » Le bourreau arriva et lui trancha la tête. On soumit les autres deux sœurs aux mêmes tortures, mais on ne parvint pas à les détourner de la foi au Christ; on leur trancha ensuite la tête. Sophie fut grandement réjouie d'avoir offert trois fiancées pures au Christ.

Les vierges saintes furent martyrisées le 4 août. Sophie recueillit les corps de ses filles, plaça les têtes chacune en son lieu, les ensevelit dans du linge propre, avec des parfums et des aromates, les plaça sur des chars, et les emmena, avec de grands honneurs, à dix-huit milles de la ville, où elle les déposa dans un tombeau de marbre. Elle fit construire sur les reliques une église comme il convenait, et, se jetant sur leur tombeau, elle pria avec larmes le Christ et ses filles en disant : « O mes bons enfants, souvenez-vous de votre naissance, de votre éducation et de l'encouragement que je vous ai donnés, de quelle façon je vous ai mises au monde, vous ai élevées, et vous ai inspiré le désir du royaume du ciel. Et maintenant à vous de m'appeler auprès de vous. » Tout en priant Dieu elle rendit son âme. Des femmes chrétiennes déposèrent son corps dans le tombeau auprès de ses filles.

* B p. 59 a.

[B* Յայսմ աւուր վկայութիւն Գերդուլէնի վկայի ի Հռոմ, զորոյ զմի կողմն խորովեցին մինչ կենդանի էր, եւ յետ յոլով տանջանաց սպանին ի ժամանակս Աւրելիանոս կայսեր :]

* A fol. 332 r° a.

* Հրոտից Լ եւ Օգոստոսի Ե ։ Նախատօնակ է Քրիստոսի Այլակերպութեան ի Թափորական լերինն ։ Եւ նահատակութիւն սուրբ Վարդանանցն ի Հայք ։

Ի բառնալ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, եւ ի վախճանել սուրբ հայրապետին Սահակայ, Պարսիկք տիրեցին Հայոց ։ Եւ ի ժամանակին յայնմիկ զօրավար էր Հայոց Վարդան յազգէն Մամիկոնէից, թոռն մեծին Սահակայ հայրապետին ։ Եւ էին նորա երկու եղբարք Հմայեակ եւ Համազասպ ։

Եւ Յազկերտ որդին Վռամայ արքայն Պարսից բռնադատէր զքրիստոնեայսն ուրանալ զՔրիստոս եւ զոհել արեգականն եւ հրոյ եւ յոյժ ցասուցեալ էր ընդ անունն Քրիստոսի, այպանելով նախատէր խաչեալ եւ մեռեալ եւ թաղեալ կոչելով ։

Եւ մի ոմն իշխան յազգէն Հայոց մանկագոյն տիօք, ասէ ցթագաւորն . Արքայ քաջ, դու ուստի՞ գիտես զայդ ։ Եւ նա ասէ . Իմ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ ։

4 Քրիստոսի] Աստուծոյ մերոյ *add.* B || 5 Եւ նահատակութիւն . . . Հայք] Եւ վկայութիւն սուրբ իշխանացն Հայոց եւ զօրագլխոյն մեծ քաջ նահատակին Վարդանայ սպարապետին եւ որոց ընդ նմա հազար երեսուն եւ վեց ընկերացն B || 8 Հայոց] սուրբն *add.* B || 9 Համազասպ] Համազասպեան B || 12 այպանելով] այպն առնելով B.

* B p. 59 a.

[B* En ce jour martyre à Rome de Gerdulin le martyr, dont on avait rôti un côté pendant qu'il était vivant, et qu'on mit à mort après de nombreuses tortures aux jours de l'empereur Aurélien.]

* A fol. 332 r° a.

* 30 HROTITS, 5 Août.

Vigile de la fête de la Transfiguration du Christ sur la montagne du Thabor; et martyre des saints Vardaniens en Arménie.

Lorsque le royaume d'Arménie fut enlevé à la race des Archakounis, et à la mort du saint patriarche Sahak, les Perses s'emparèrent de l'Arménie. A cette époque le général des Arméniens était Vardan, de la race des Mamikoniens, petit-fils du grand Sahak le patriarche. Il avait deux frères : Hémaïak et Hamazasp.

Le roi des Perses Yezdedjerd, fils de Vahram, pressait les chrétiens de renier le Christ et d'adorer le soleil et le feu; il était très courroucé par le nom du Christ, il l'insultait en l'appelant le crucifié, le mort et l'enterré.

Un des princes de la nation arménienne, le plus jeune d'âge, dit au roi : « Roi vaillant, d'où sais-tu tout cela? » Il répondit : « On a donné devant moi

Ասէ զինուորն Քրիստոսի. Եւ զայն ընդէր ոչ ուսար եւ առեր ի միտ. զյարութիւնն եւ զհամբարձումն եւ զնստիլն ընդ աջմէ Հօր, զմիւսանգամ գալուստն : Եւ նա ասէ. Այդ ամենայն առասպելք են : Եւ հրամայեաց կապել ոտիւք եւ ձեռօք զերանելին, եւ երկու ամ չարչարեալ սրով կատարեցաւ :

Յայնժամ անօրէն թագաւորն խրատեալ * ի մոգուցն, գրեաց հրովարտակ յամենայն ազգս քրիստոնէից որ էին ընդ տէրութեամբ Պարսից ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս, ի Լփինս, ի Ծաւդէս, ի Կորդուս, յԱղձնիս, եւ յայլ բազում տեղիս հեռաւորս, զի ամենայն իշխանք գաւառաց հանդերձ զօրօք իւրեանց վաղվաղակի առ նա հասցեն : Եւ չոգան առ նա յիւրաքանչիւր աշխարհաց երիցամբք եւ սարկաւագօք եկեղեցոյ կարգօք, որպէս յառաջագոյն սովոր էին երթալ : * A fol. 332 r° b.

Եւ տեսեալ անօրինին ի խոր խոցեցաւ : Եւ կոչեցեալ առաջի իւր խոստանայր նոցա պարգեւս եւ պատիւս եթէ թողցեն զքրիստոնէութիւնն եւ յանձն առցեն զօրէնս մոգուցն : Իսկ նոքա առ հասարակ խոստովանեցան զՔրիստոս ճշմարիտ Աստուած, եւ յանձն առին մեռանել քան թէ ուրանալ զՔրիստոս : Եւ առաւել եւս իշխանքն Հայոց պնդեցան ի սէրն Քրիստոսի, եւ յորդորէին զամենայն քրիստոնեայսն յօժարութեամբ մեռանել եւ ոչ ուրանալ զՔրիստոս :

1 ուսար եւ *om.* B || 2 եւ զնստիլն ... Հօր] յերկինս եւ *add.* B || 4 կատարեցաւ] վկայութեամբ *add.* B.

lecture des écrits de votre erreur. » Le soldat du Christ lui dit : « Et pourquoi n'as-tu pas appris et retenu dans ton esprit le reste : la Résurrection, l'Ascension, son intronisation à la droite du Père et son avènement futur? » Il répondit : « Tout cela, ce sont des contes. » Et il ordonna de lier les pieds et les mains du bienheureux, qui, après avoir été torturé pendant deux ans, fut mis à mort par le glaive.

Alors le roi impie, conseillé * par les mages, écrivit un décret à tous les peuples chrétiens qui se trouvaient sous la domination des Perses, aux Arméniens, aux Ibères, aux Aghouans, aux Lépins, aux Dsautès, aux Kurdes, aux Altsnikh et en beaucoup d'autres lieux lointains, afin que tous les gouverneurs de provinces vinssent promptement auprès de lui, escortés de leurs troupes. Ils arrivèrent auprès de lui de tous les pays, accompagnés de leurs prêtres et diacres et des ordres de l'église, ainsi qu'autrefois on avait coutume d'aller. * A fol. 332 r° b.

A cette vue, l'impie fut profondément blessé. Il les convoqua en sa présence, leur promit des présents et des honneurs s'ils abandonnaient le christianisme et acceptaient la religion des mages. Mais tous ensemble confessèrent le Christ vrai Dieu, et préférèrent mourir plutôt que de renier le Christ. Ce furent principalement les princes arméniens qui s'obstinèrent dans l'amour au Christ et engagèrent tous les chrétiens à mourir volontiers et à ne pas renier le Christ

Իսկ անօրէն թագաւորն բարկացեալ յոյժ հրաման ետ կապել զձեռս յետս եւ անարգանօք չարչարել զնոսա ։ Եւ զոմանս ի նոցանէ սրով եսպան, եւ զոմանս առաքէր յերկիր հեռաւոր ի գործ պատերազմի, զի այլ մի եւս դարձցին յերկիրն իւրեանց ։ Եւ ինքն խորհէր զօր բազում հաւաքել յերկիրն Հայոց, զի առ հասարակ աւերեալ
* A fol. 332 v° a. զերկիրն, եւ քակեալ զեկեղեցիսն գերեսցեն * զերկիրն ամենայն ։

Իսկ հաւատացեալքն Քրիստոսի թէպէտ եւ ուրախ էին ընդ վկայութեամբ մահն, սակայն տրտմէին ընդ աւերումն երկրին, եւ ընդ քակումն եկեղեցեացն ։ Եւ մի ոմն յաւագացն ի խորհրդակցացն արքային քրիստոնեայ հաւատով ուսոյց նոցա հնարս խաբել զարքայն առ ժամանակ մի մինչեւ երթիցեն յաշխարհն իւրեանց. եւ ինքն գնաց առ թագաւորն որպէս թէ կատարեսցեն զկամս նորա ։

Եւ ուրախացեալ թագաւորն արձակեաց զնոսա ի կապանացն, եւ կոչեաց զառաջեաւ խօսեցաւ քաղցրութեամբ, ետ պարգեւս, աւանս, գեօղս, ագարակս, ոսկի, արծաթ, գահս պատուոյ, մեծութիւնս եւ աւագութիւնս, եւ եօթն հարիւր մոգս վարդապետս եւ ուսուցիչս աշխարհին, եւ զօր բազում ընդ նոսա ։

Եւ լուեալ եպիսկոպոսաց աշխարհին եւ վարդապետաց ի մի վայր ժողովեցան, եւ եդին ուխտ առ հասարակ իշխանքն եւ աղքատք եւ շինականք, եկեղեցականք եւ միայնակեացք, կռուել ընդ նոսա, սպանանել եղբայր զեղբայր, եւ հայր զորդի,

2 առաքէր] առաքեաց B || 7 աւերումն] աւեր B || 10 կատարեսցեն] կատարիցեն B.

Le roi impie, fort irrité, ordonna de leur lier les mains par derrière et de les torturer avec mépris. Il fit tuer certains par le glaive, en envoya d'autres dans des pays lointains pour faire la guerre afin qu'ils ne retournassent plus dans leur pays. Quant à lui, il médita de concentrer beaucoup de troupes dans le pays d'Arménie, pour qu'après avoir ruiné tout le pays
* A fol. 332 v° a. et détruit les églises elles pussent prendre * tout le pays comme butin.

Certes, les chrétiens fidèles, tout en se réjouissant de la mort du martyre, ne pouvaient pas ne pas s'attrister de la ruine du pays et de la destruction des églises. Un des plus hauts dignitaires parmi les conseillers du roi, et de foi chrétienne, leur suggéra un moyen de tromper le roi momentanément jusqu'à ce qu'ils fussent revenus dans leur pays; et il alla trouver le roi pour lui dire que (les chrétiens) accompliraient sa volonté.

Le roi, réjoui, les délivra des liens, les fit venir en sa présence, leur adressa la parole avec douceur, leur remit des présents, des bourgs, des villages, des terres, de l'or, de l'argent, des sièges d'honneur, des grandeurs et des principautés, avec sept cents mages, lettrés et instituteurs pour le pays, accompagnés de nombreuses troupes.

A cette nouvelle, les évêques du pays et les vardapets se rassemblèrent en un endroit et tous firent le serment, princes, pauvres et ruraux, ecclésiastiques et moines, de lutter contre eux, le frère de tuer son frère, le père

ծառայ զտէր, եւ կին զայր իւր. զի ոչ գիտէին զխորհուրդս իշխանացն։ Որոց գլխաւոր մեծն Յովսէփ որ զկաթողիկոսութեան պատիւ ունէր, եւ այլ եպիսկոպոսունք ընդ նմա, եւ ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս նովին խորհրդով։

Իսկ զունդն Հայոց *հանդերձ մոգովքն եւ օգնականօքն յամսեանն չորրորդի եկին * A fol. 332 v° b.
յաշխարհն Հայոց, ի քաղաքագեօղն Անկղ եւ յամենայն կողմանց անդր ժողովեցան անթիւ բազմութիւնք։ Եւ մոգպետն կամեցաւ զփորձ առնուլ իրացն յոր եկեալ էր, եւ սուրբն Ղեւոնդ երէց ի տեղւոջն դիպեցաւ, յորժամ կամէր մոգպետն զդուռն եկեղեցւոյն քակել, եւ բազում ամբոխիւ հասեալ ի վերայ մոգպետին եւ մոգուցն զկատափունս նոցա ջարդեալ բրօք եւ գլօքն փախստեայ ի բանակն արկանէին։

Եւ սուրբն Վարդան սպարապետն Հայոց այլ միաբան իշխանօքն եւ զօրօքն անկեալ յոտս եպիսկոպոսացն, եւ համբուրեալ զսուրբ աւետարանն յայտնեցին զխորհուրդս իւրեանց։ Եւ վերստին ընկալեալք յառաքինութիւն, կազմեալք եւ պատրաստեալք ի գիշերին ընդ ծագել արեգականն յարձակեցան ի վերայ զօրացն Պարսից եւ մոգացն, եւ կոտորեցին անխնայաբար եւ ժողովեցին առին զառ եւ զաւար բանակին։

Իսկ ուրացեալն Վասակ եկեալ անկանէր յոտս եպիսկոպոսացն, բուռն հարկանէր

7 եւ սուրբն... քակել] կամեցաւ քակել զդուռն եկեղեցւոյն, եւ սուրբն Ղեւոնդ երէց ի տեղւոջն դիպեցաւ B || 14 ժողովեցին առին] ժողովեալ B.

son fils, le serviteur son maître et la femme son mari; car ils ignoraient les desseins des princes. Le principal de ceux-là fut Joseph le Grand, qui avait les honneurs du catholicosat, et d'autres évêques avec lui, et tous se dispersèrent dans cette intention, chacun dans sa localité.

La troupe arménienne, * accompagnée des mages et des renforts, arriva * A fol. 332 v° b.
au pays d'Arménie le quatrième mois, au bourg d'Ankl. Une multitude innombrable vint s'y rassembler de tous côtés. Et le chef des mages voulut avoir la preuve de la chose pour laquelle il était venu. Le prêtre saint Léonce survint, au moment où le chef des mages s'apprêtait à démolir la porte de l'église, et se jetant, accompagné d'une grande foule, sur le chef des mages et sur les mages, ils leur brisèrent le crâne avec des bâtons et des gourdins et les mirent en fuite vers le camp.

Saint Vardan, le généralissime des Arméniens, d'accord avec tous les autres princes et les troupes, tombèrent aux pieds des évêques, baisèrent le saint évangéliaire, et révélèrent leurs desseins cachés. Ils furent réintégrés dans la vertu, et s'étant organisés et préparés pendant la nuit, ils assaillirent, au lever du soleil, les troupes des Perses et les mages, les tuèrent sans pitié, et ramassèrent le butin du camp.

Le renégat Vasak vint lui aussi se jeter aux pieds des évêques, prit

պաւետարանէն, երդնոյր կեալ ի քրիստոնէութիւնն եւ նոքա թէպէտ եւ գիտէին զնորա չարութիւնն ոչ ետուն թոյլ սպանանել զնա ։

* A fol 333 r° a.

Եւ լուեալ թագաւորին Յազկերտի ի խոր խոցեցաւ. եւ ժողովեալ *զօր բազում տայ ի ձեռն Միհրներսեհի հազարապետին Պարսից, եւ եկեալ ի Փայտակարան քաղաք, չոգաւ առ նա ուրացեալն Վասակ այլ ուրացելովքն, եւ ուսոյց նմա հնարս խորամանկութեան ։ Եւ Միհրներսեհ տուեալ զամենայն զօրսն ի ձեռն առն միոյ որոյ անուն էր Մուշկան Իսալաւուրտ, եւ բազում փիղս ընդ նմա, եւ եկն ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառ ։

Իսկ սուրբն Վարդան զօրավարն Հայոց ժողովեալ զսուրբ զօրսն ամենայն յԱրտաշատ քաղաք հանդերձ մեծամեծ իշխանօքն, որ են այսոքիկ. Մերշապուհ Արծրունի, Խորէն Խորխոռունի, եւ ինքն սպարապետն, Վահան Ամատունի, Արտակ Պալունի եւ գունդն Վահեւունի, Թաթուլ Դիմաքսեան, Ատոմ Գնունի, Խոսրով Գաբեղեան, Արշաւիր Արշարունի, Շմաւոն Անձեւացի, Տաճատ Գնթունի, Հմայեակ Դիմաքսեան, Կարէն Սահառունի, Գազրիկ Դիմաքսեան, Ներսէս Քաջբերունի, Փարսման Մանդակունի. Արսէն Ընծային, Այրուկ Սղկունի, Վրէն Տաշրացի, Ապրսամ Արծրունի, Շաւ ախոռապետ արքունի, Խոսրով Սրուանձտայ, Քոլեանքն, Ակէացիքն, Տրպատունիքն, եւ զօրքն Ռշտունեաց, եւ ամենայն գործակալք արքունի զօրօքն

5 ուրացելովքն] ուրացեալ ընկերօքն B || 9 զսուրբ *om.* B.

l'évangéliaire et jura de vivre en chrétien, et bien qu'ils connussent sa méchanceté, ils ne permirent point de le tuer.

Le roi Yezdedjerd, à cette nouvelle, fut profondément blessé; il rassembla

* A fol. 333 r° a.

* de nombreuses troupes, qu'il remit entre les mains de Mihrnersèh le chiliarque des Perses. Celui-ci étant arrivé à la ville de Phaïtakaran, le renégat Vasak, accompagné d'autres renégats, alla le trouver et lui indiqua les moyens de ruser. Mihrnersèh remit toutes les troupes entre les mains d'un homme, dont le nom était Moushkan Isalavourt, et lui donna beaucoup d'éléphants; celui-ci arriva dans la province de Her et de Zarévand.

Saint Vardan, le généralissime des Arméniens, réunit alors toutes les troupes saintes dans la ville d'Artachat, avec les grands princes, qui sont les suivants : Mershapouh Ardzrouni, Khorèn Khorkhorouni, lui le généralissime, Vahan Amatouni, Artak Palouni, le groupe de Vahévouni, Thatoul Dimaksian, Atom Gnouni, Khosrow Gabélian, Arshavir Arsharouni, Shmavon Antsévatsi, Tadjat Genthouni, Hemaïak Dimaksian, Karèn Saharouni, Gazrik Dimaksian, Nersès Khatchbérouni, Pharsman Mandakouni, Arsèn Entzaïn, Aïrouk Selkouni, Vrèn Tashratsi, Apersam Ardzrouni, Shav le chef des écuries royales, Khosrow Serouantzta, les Kholéankh, les Akéatzikh, les Derpatounikh et les troupes des Reshtounikh, tous les procureurs royaux

իւրեանց, * ընդ ամենայն վաթսուն եւ վեց հազար ընդ հեծելոյ եւ ընդ հետեւակ ։ * A fol. 333 r° b.
Եկին ընդ նոսա եւ մեծն Յովսէփ եւ Ղեւոնդ եւ այլ բազում եպիսկոպոսք եւ քահանայք ։

Եւ սկսաւ մեծն Վարդան քաջալերել զզօրսն, եւ ասէր. Մի երկնչիք յահագին սրոյ առն մահկանացուի, մեռցուք քաջութեամբ, զի զանուն եւ զոգիս ժառանգեսցուք ։ Եւ տայր երիվարս եւ զէնս ում պիտոյ լինէր, եւ ուրախ առնէր զամենեսեան առատ ռոճկօք եւ հաղորդեալք մարմնոյ եւ արեան Տեառն, եւ մկրտեցին եթէ կայր ոք երեխայ ։

Եւ լուան եթէ զօրն Պարսից եկին ի դաշտն Արտազու, գնաց զօրն Հայոց ի վերայ նոցա, եւ ի չորս գունդս բաժանեալ զզօրսն ամենայն յարձակեցան ի միմեանս ահագին զայրացմամբ, անցեալ ընդ գետն Տղմուտ զբազումս կոտորեալ ի գնդէն Պարսից բազումք դիաթաւալ խաղային յերկոցունց կողմանցն ։

Յայնժամ քաջն Վարդան ի վեր հայեցեալ տեսանէր զի զձախ թեւ գնդին Հայոց շարժեցին Պարսիկքն, մեծաւ ուժով յարձակեալ ի տեղին զաջ թեւ գնդին Պարսից կոտորեալ արկանէր զգազանօքն, եւ շրջան առեալ կոտորէր մինչեւ ի նոյն տեղին, եւ քակէր զգունդն մատեան, եւ ի փախուստ դարձուցանէր ։

1 եւ վեց *om.* B || 7 մկրտեցին] մկրտէին B.

avec leurs troupes, * le tout ensemble soixante-six mille hommes, cavaliers et fantassins. Avec eux marchèrent Joseph le Grand et Léonce et beaucoup d'autres évêques et prêtres. * A fol. 333 r° b.

Le grand Vardan se mit à encourager les troupes et leur dit : « Ne craignez point l'épée terrible de l'homme mortel; nous mourrons vaillamment, pour hériter d'un nom et de nos âmes. » Il distribua des chevaux et des armes à ceux qui en avaient besoin, réjouit tout le monde par d'abondantes rations; ils communièrent au corps et au sang du Seigneur et baptisèrent ceux qui étaient encore catéchumènes.

Les troupes arméniennes, ayant appris que les troupes perses étaient parvenues dans la plaine d'Artaz, marchèrent contre elles, l'armée entière étant divisée en quatre groupes, et elles donnèrent avec une furie terrible, passèrent le fleuve Telmout et tuèrent nombre d'hommes parmi les troupes des Perses; de nombreux combattants tombèrent morts des deux côtés.

C'est alors que le vaillant Vardan, levant ses yeux, aperçut que les Perses avaient enfoncé l'aile gauche des troupes arméniennes. Il s'y porta et attaqua avec une grande impétuosité l'aile droite des troupes perses, la battit et la refoula vers les animaux (éléphants), puis, faisant le tour, il la rejeta sur ses premières positions; il dispersa la légion *madian* et la mit en fuite.

Զայն իբրեւ ետես Մուշկան Իսալաւուրտ որ նստէր ի վերայ գաղանացն իբրեւ
* A fol. 333 v° a.
յամուր քաղաք, ի ձայն մեծագալար փողոյն * զիւր գունդն ստիպէր եւ զնա ի մէջ փակէր ։ Իսկ կորովին Վարդան իւր քաջ զինակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործէր, յորում տեղւոջ եւ ինքն արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւն ։

Եւ երկարեալ գործ պատերազմին մինչեւ յերեկոյն, եւ զի գարնանային էր ժամանակն ծաղկալից դաշտքն դառնային ի գոյն վարդատեսակ յորդահոս արեանցն, զի ոչ թէ մի կողմ էր որ յաղթեաց կամ յաղթեցաւ, այլ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան ։ Եւ զի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ցանեալ ցրուեցան զօրքն ամենայն, եւ ամրացան յամուրս աշխարհին ։

Եւ այս են անուանք քաջ նահատակացն որ անկան ի մեծ պատերազմին յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան եւ Հմայեակ եղբայր իւր հարիւր յիսուն եւ երեք արամբք, Խորէն կորովի տասն եւ ինն արամբք, արին Արտակ տասն եւ հինգ արամբք, իմաստունն Հմայեակ քսան արամբք, զարմանալին Տաճատ տասն եւ ինն արամբք, մանուկն Վահան երեք արամբք, արդարն Արսէն եօթն արամբք, յառաջադէմն Գարեգին եւ երկու եղբարքն նորա տասն եւ ութ արամբք, ինն այր ի մեծամեծ նախարարացն, եւ
* A fol. 333 v° b.
միահամուռ ամենայն որ անկան ի մեծ պատերազմին * հազար երեսուն եւ վեց նահատակք ։ Իսկ ի կողմանէ ուրացելոցն եւ Պարսից երեք հազար հինգ հարիւր քառասուն

6 վարդատեսակ *om.* B || 12 կորովի] եւ խոհեմ *add.* B.

A cette vue, Moushkan Isalavourt, qui se tenait sur les animaux comme
* A fol. 333 v° a.
dans une ville fortifiée, poussa sa légion au son de grandes trompettes * et encercla (Vardan); mais le vaillant Vardan, à l'aide de ses courageux frères d'armes, ne continua pas moins à faire des carnages à l'endroit où il fut digne d'obtenir le parfait martyre.

L'action du combat se poursuivit jusqu'au soir, et comme c'était la saison de printemps, les plaines fleuries se changèrent en couleur rose de sang abondamment répandu, car ce ne fut point un côté qui vainquit ou qui perdit la bataille, mais ce furent les deux côtés qui furent battus. Et comme le généralissime des Arméniens était tombé dans la grande bataille, toute l'armée se dispersa et alla s'abriter dans les forts du pays.

Voici les noms des vaillants martyrs qui tombèrent dans la grande bataille : de la race des Mamikoniens, le brave Vardan et son frère Hémaïak avec cent cinquante-trois hommes; le vigoureux Khorèn avec dix-neuf hommes; le courageux Artak avec quinze hommes; le sage Hémaïak avec vingt hommes; le superbe Tadjat avec dix-neuf hommes; le jeune Vahan avec trois hommes; le juste Arsèn avec sept hommes; le champion Garégin et ses deux frères avec dix-huit hommes; neuf hommes parmi les grands
* A fol. 333 v° b.
satrapes, et ceux qui tombèrent dans la grande bataille, * furent au nombre de mille trente-six martyrs. Du côté des renégats et des Perses trois mille

եւ չորս այր եւ ինն ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էին զորս յակնէ յանուանէ ճանաչէր թագաւորն ։ Իսկ ուր ուրեք սպանան վասն հաւատոցն Քրիստոսի անուանք նոցա գրեալ են ի դպրութիւն կենաց ։ Եւ կատարի տօն սրբոց Վարդանանցն Հրոտից Լ եւ Օգոստոսի Ե ։

Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Եւսիգնիոսի ծերունւոյ ։

Քրիստոսի վկայն Եւսիգնիոս ազգաւ անտիոքացի էր, հզօր զօրական լեալ, եւ առ սրբով Կոստանդիանոսիւ եւ առ որդւովք իւրովք մինչեւ յուրացողն Յուլիանոս թագաւորն էր ի զօրականութեանն իւրում, եւ բազում քաջութիւնս եցոյց ի պատերազմունս զվաթսուն ամ, եւ եկաց հարիւր եւ տասն ամ եւ յոյժ ծերացաւ ։

Եւ յորժամ հաւատաց ի Քրիստոս մեծն Կոստանդիանոս, հաւատաց եւ սա եւ մկրտեցաւ ։ Եւ յաւուր տօնի պիղծ կռոցն բռնադատեաց զնա Յուլիանոս զի զոհեսցէ կռոցն, եւ երանելին Եւսիգնիոս * հեզաբար ըստ պատշաճի պատասխանի արար, եւ յանդիմանեաց զնորա անօրէնութեամբ ուրացութիւնն ։ * A fol. 334 r° a.

Եւ Յուլիանոս ի մեծ բարկութիւն շարժեալ՝ ասէ սուրբն Եւսիգնիոս առաջի ամենայն հրապարակին. Սուրբ Կոստանդիանոս մեծ թագաւորն ի պոռնկութենէ էր

6 զօրական լեալ] Կոստանդինոսի Խլաւրոսի հօր մեծի եւ որդոյն Կոստանդիանոսի ։ Նոյնպէս պատուեալ էր *add.* B || 8 իւրում] կայր մինչեւ ի նորա թագաւորելն *add.* B || 14 մեծ *om.* B.

cinq cent quarante-quatre hommes (tombèrent), dont neuf étaient de hauts dignitaires et que le roi connaissait par leur nom. Mais tous ceux qui en divers endroits furent tués pour la foi au Christ, ont leur nom inscrit dans le livre de vie.

La fête des saints Vardaniens a lieu le 30 hrotits, le 5 août.

En ce jour passion du saint vieillard Eusignius.

Le martyr du Christ Eusignius était Antiochien de nationalité, soldat courageux; il avait servi dans la milice du temps de saint Constantin et de ses fils jusqu'aux jours de l'empereur Julien l'Apostat: il avait montré beaucoup de courage dans les batailles pendant soixante ans, et vécut très vieux, jusqu'à cent dix ans.

Lorsque le grand Constantin avait cru au Christ, il avait cru, lui aussi, et s'était fait baptiser. Au jour d'une fête des idoles immondes, Julien le pressa d'immoler aux idoles, mais le bienheureux Eusignius * lui répondit calmement ce qu'il fallait lui répondre et blâma son reniement impie. * A fol. 334 r° a.

Julien ayant montré une grande colère, saint Eusignius lui dit devant toute l'assemblée : « Saint Constantin, le grand empereur, était né de la

ծնեալ, եւ կռապաշտից զաւակ, եւ պահեաց հաստատուն զՔրիստոսի հաւատն, եւ դու յօրինաւոր ամուսնութենէ ծնեալ եւ մկրտեալ եւ ուսեալ աստուածաշունչ գիրս, ուրացար զՔրիստոս : Եւ սկսաւ պատմել զԿոստանդիանոսի զծնունդն եւ զսնունդն եւ զհաւատալն յԱստուած մի ըստ միոջէ ճառաբանեաց, եւ ամենեքեան որ լսէին զիմաստութիւն ծերոյն զարմանային եթէ որպէս զհին զվաղուց գործն պատմէր :

Իսկ Յուլիանոս արհամարհեալ անարգեաց զբանս նորա, հրամայեաց եւ առժամայն հատին զգլուխ նորա յՕգոստոսի Ե : Եւ սարկաւագն Ստոքիոս զաղտ թաղեաց զնա, եւ գրեաց զպատմութիւնս վասն զի Յուլիանոս սպանանէր զայնոսիկ որ գրէին զպատմութիւնս սրբոց վկայիցն :

Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Պապիլայ եւ Պաւղոսի եւ սրբուհի երկ: ւ քերց կանանցն Վալենտինայ եւ Թէիսի :

* A fol. 334 r° b. Սոքա էին Եգիպտացիք, եւ * բնակէին ի քաղաքին Նէոկեսարիոյ քրիստոնեայ հաւատով : Եւ միաբանեցան քաղաքին Հրէայքն եւ մատնեցին զնոսա առ Փիլմերիանոս իշխանն, եւ կացեալ առաջի նորա խոստովանեցան զանուն ճշմարիտ Աստուծոյն մերոյ :

6 անարգեաց] եւ անգոսնեաց *add.* B || 7 նորա] Հրաւիր Է եւ *a ld.* B || 9 վկայիցն] Քրիստոսի *add.* B || 10 սրբոցն] սրբոց վկայիցն B || 13 Փիլմերիանոս] Փիլմիանոս կռապաշտ B.

fornication, il était fils d'idolâtres, mais il conserva fermement la foi chrétienne; toi qui es né d'un mariage légal, qui as été baptisé, qui as appris les écritures inspirées de Dieu, tu as renié le Christ. » Et il se mit à faire le récit de la naissance de Constantin, de son éducation et de sa conversion à Dieu; il parla avec détails et tous ceux qui écoutaient la sagesse du vieillard furent étonnés de son récit des choses anciennes et passées.

Mais Julien, ne tenant point compte de ses paroles, les méprisa; il ordonna de lui trancher aussitôt la tête, le 5 août. Le diacre Eustochius (*Stokhios*) l'enterra et écrivit secrètement sa vie, car Julien faisait tuer ceux qui écrivaient les vies des saints martyrs.

En ce jour martyre des saints Babylas (*Papilay*) et Paul,
et les deux sœurs, les saintes femmes Valentine et Théa (*Ṭeisi*).

* A fol. 334 r° b. C'étaient des Égyptiens et ils * habitaient dans la ville de Néocésarée [1], ils étaient de foi chrétienne. Les Juifs de la ville, s'étant rassemblés, les dénoncèrent au gouverneur Firmilien (*Philmerianos*); introduits devant celui-ci, ils confessèrent le nom de notre vrai Dieu.

1. Certaines autorités ont Diocésarée, mais il s'agit de Césarée de Palestine, cf. *Acta SS.* Jul., t. VI, p. 163 sq.

Եւ նա հրամայեաց եւ այրեցին զահեակ ոտս նոցա եւ հանին զաջոյ աչս նոցա, եւ սրով եւ հրով մաշեցին զամենայն մարմինս նոցա եւ զայլոց բազմաց որք հաւատացին ի Քրիստոս արանց եւ կանանց ։ Եւ զսուրբ կանայսն զՎաղենտինեա եւ զԹէխիա կախեցին զփայտէ եւ քերեցին զմարմինս նոցա, եւ կատարեցան ի Քրիստոս ։

Իսկ սուրբ վկայքն Քրիստոսի Պաղիլա եւ Պաւղոս աղօթեցին առ Աստուած վասն քրիստոնէից եւ Հրէից եւ հեթանոսաց որք հաւատան ի Քրիստոս եւ վասն դադարելոյ հալածանաց ի քրիստոնէից եւ ապա հատին զգլուխս նոցա Օգոստոսի Ե ։

[* Յայսմ աւուր վկայութիւն երանելոյն Սիրունի նոր նահատակին ։ * B

Սա էր ի Վասպուրական աշխարհէ, ի գաւառէն Գնունեաց որ է յԱմուկ, ի գեղջէն որ կոչի Ալիւր ։ Եւ գնաց ի Վան քաղաք վասն պիտոյից եւ մատնեցաւ ի ձեռս այլազգեաց եւ ածին յատեան եւ ստիպէին ուրանալ զՔրիստոս, սպառնացեալ նմա զտանջանս եւ զմահ եւ նա ոչ հաւանէր ամենեւին եւ խոստովանէր զՔրիստոս ։ p. 62 b

Բարկացեալ դատաւորն մատնեաց զնա ի ձեռս դահճաց, եւ ոլորեցին սաստիկ պնդութեամբ բարակ չուան զերկաքանչիւր բազկօք նորա յուսոցն մինչեւ ի ձեռս որով ճարճատեալ հերձան մատունք նորա, եւ հոսէր արիւն յորդ ։ Եւ ապա քարշեցին զնա պարանաւ ընդ գետին ձգձգելով ընդ քարինս, որով չարաչար վիրաւորեցան անդամք մարմնոյ նորա, եւ տարեալ արկին ի կալանս պահելով անսուաղ ուր եւ չարչարեցին զնա ազգի ազգի չարչարանօք ։

Il ordonna de leur brûler le pied gauche et de leur crever l'œil droit, d'abîmer tout leur corps par le glaive et les flammes, ainsi qu'à d'autres nombreuses personnes qui avaient cru au Christ, hommes et femmes. On suspendit à un poteau les saintes femmes Valentine et Théa (*Teisia*), on leur déchira le corps et elles moururent dans le Christ.

Les saints martyrs du Christ Babylas et Paul prièrent Dieu pour les chrétiens, les Juifs et les païens qui croiraient au Christ et pour que la persécution des chrétiens prît fin, et on leur trancha ensuite la tête, le 5 août.

[B* En ce jour martyre du bienheureux Siroun, le nouveau martyr. * B

Il était du pays de Vaspourakan, de la province de Gnounikh, c'est-à-dire Amouk, du village appelé Aliur. S'étant rendu à la ville de Van pour affaires, il fut dénoncé aux musulmans qui le déférèrent au tribunal, en le pressant de renier le Christ, sous menaces de tortures et de mort, mais il ne consentit nullement et confessa le Christ. p. 62 b.

Le juge, irrité, le livra entre les mains des bourreaux, qui entourèrent très fortement avec une mince ficelle ses deux bras, de l'épaule aux mains, ce qui fit éclater les doigts; le sang coula abondamment. Ensuite ils le traînèrent à terre, avec une corde, à travers les pierres, ce qui blessa cruellement tous les membres de son corps; puis ils l'emmenèrent en prison en l'abandonnant sans nourriture, et là on le soumit à diverses tortures.

Եւ տեսեալ զի ոչ հաւանի մի ոմն ի դահճացն եհար զնա աշտէիւ ընդ սնակուշտն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր եւ այլ ոմն կալեալ զվէմ մի մեծ էարկ ի վերայ գլխոյ նորա եւ խորտակեաց, որով ցնդեցաւ ուղեղ նորա եւ աւանդեաց զհոգին ։ Ապա քարշեալ տարան զմարմին նորա արտաքոյ քաղաքին խուռն բազմութեամբ, եւ քարկոծ արարին մինչեւ ծածկիլ ընդ քարամբ եւ ելեալ գնացին ։ Եւ ի գիշերին ծագեաց լոյս մեծ ի վերայ նորա, եւ ի վաղիւն երթեալ քրիստոնէից հրաման առին ի բդեշխէն եւ տարեալ թաղեցին ։]

Comme il ne consentait point, un des bourreaux le frappa d'une lance entre les côtes, et le (saint) tomba à terre sur la figure; un autre, saisissant une grosse pierre, la lança sur sa tête et la brisa, le cerveau en jaillit et il rendit son âme. Ils traînèrent ensuite son corps hors de la ville, suivis d'une grande foule, et le lapidèrent jusqu'à ce qu'il fût couvert de pierres, puis s'en allèrent. La nuit, une forte lumière jaillit sur lui et le lendemain les chrétiens, s'étant rendus auprès du gouverneur et en ayant obtenu l'autorisation, prirent (le corps) et l'enterrèrent.]

ERRATA

Page [1736], ligne 1, *lire* Մաւրիկոս.
Page [1749], note 1, *lire* բագինան.
Page [1760], note 1, *lire* մարգարտով.
Page [1763], ligne 11, *lire* զքօթալից.
Page [1764], l. 14, *lire* տուեալ.
Page [1772], l. 15, *lire* անպաճոյճ.
Page [1774], l. 1, *lire* զնոսա խառնել.
Page — l. 13, *lire* մանկունքն.
Page [1775], l. 15, *lire* քրիստոնեայ.
Page [1777], l. 11, *lire* աւանդեաց.
Page [1782], note, *lire* Պիտարտիոյ.
Page [1783], l, 14, *lire* մաղ.

LE SYNAXAIRE ARMÉNIEN

DE TER ISRAEL

PUBLIÉ ET TRADUIT

PAR

Le Dr G. BAYAN

JOURS AVÉLEATS

A = Paris, Bibliothèque Nationale, Fonds arménien,
N° 180, fol. 334 v° a à fol. 339 v° b.

B = Édition officielle du Synaxaire arménien de
Ter Israël de Constantinople, 1834 :

Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց
Տէր Իսրայէլի ։ Կոստանդնուպօլիս, 1834 ։

L'exemplaire dont nous nous sommes servi est
celui des RR. PP. Bollandistes.

Աւելեաց Ա եւ Օգոստոսի Զ ։ Տօն Պայծառակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Թաբորական լերինն ։

Աւանդապահք խորհրդոցն Քրիստոսի որք հաստատեցին զկարգ եւ զկրօնս եկեղեցւոյ եւ նոքա ուսուցին մեզ՝ եթէ տօն Այլակերպութեանն Քրիստոսի ի Թաբոր լերինն որ ունի զօրինակ նորոգման մարդկային բնութեանս կենդանեաց եւ մեռելոց, քառասուն աւուրբք յառաջ է * քան զաւագ ուրբաթն յորժամ խաչեցաւ Քրիստոս եւ * A fol. v° a. արար փրկութիւն կենդանեաց եւ մեռելոց եւ պատահի պատկեր աւուր տօնիս յառաջին կիւրակէն աղուհացիցն ։

Այլ զի ասաց Քրիստոս աշակերտացն մինչ իջանէին ի լեառնէն թէ Մի ումեք ասիցէք զտեսիլդ մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ, վասն այնորիկ ոչ կարգեցին ի նմին աւուր, այլ յետ Պենտակոստէին սահմանեցին յիսուն օր պահել, եւ ապա զկիւրակէն տօնել զտօն Վարդավառին, որպէս առնեն եկեղեցիք Հայաստանեայց ։

Զի յայնմ աւուր փոխեցին առաքեալքն զհին քահանայութիւնն ի նորս եւ ձեռնադրեցին զՅակոբոս եղբայր Տեառն առաջին եպիսկոպոս Երուսաղեմի, եւ մատոյց

1er AVÉLEATS[1], 6 Août.

Fête de la Transfiguration du Christ notre Dieu sur la montagne du Thabor.

Les dépositaires des mystères du Christ qui ont établi l'ordre et le culte dans l'Église, nous ont enseigné que la fête de la Transfiguration du Christ sur la montagne du Thabor, et qui est le symbole de la régénération de la nature humaine pour les vivants et les morts, précède de quarante jours * le vendredi saint, jour où le Christ fut crucifié et opéra le salut des vivants et des morts. La date du jour de cette fête tombe le premier dimanche du carême. * A fol. 334 v° a.

Mais, comme le Christ avait dit aux disciples en descendant de la montagne : « *Ne parlez à personne de cette vision, jusqu'à ce que le Fils de l'homme soit ressuscité des morts*[2] », ils n'établirent point (cette fête) ce jour-là, mais décidèrent de jeûner cinquante jours après la Pentecôte et de célébrer le dimanche suivant la fête de Vardavar, ainsi que le fait l'église arménienne.

Car, en ce jour-là, les apôtres transformèrent l'ancien sacerdoce en un nouveau, et sacrèrent Jacques, le frère du Seigneur, premier évêque de Jéru-

1. Avéleats : Epagomènes. — 2. Matth., XVII, 2.

զառաջին հոգեւոր պատարագն զմարմինն եւ զարիւնն Քրիստոսի, եւ տեսին առաքեալքն զՀոգին սուրբ իջեալ ի պատարագն եւ օրհնեցին աղ, որպէս ասէ սուրբն Յուստոս որ երրորդ եպիսկոպոս էր Հռոմայ, եւ զի խափանեսցի հեթանոսական սովորութիւնն, զի յայնմ աւուր տօնէին Ափրոդիտեայ, զի ասէին զնա կոյս, եւ յարենէ եւ ի փրփրոյ ծովոյ ծնեալ, եւ կոչէին զնա վարդամատն եւ ոսկեծղի եւ զվարդն նմա ընծայ մատուցանէին, եւ անուանեցին զտօնս զայս Վարդավառ եւ թէ արդ ... է արքայութիւնն յայսմհետէ ։

* A fol. 334 v° b * Եւ զի խորհուրդ տօնիս զօրինակ միւսանգամ գալստեանն Քրիստոսի բերէ որ գայ աստուածական փառօք եւ սուրբք ամենայն ընդ նմա աստուածացեալք եւ թագաւորեալք որպէս ասաց Տէրն. Յայնժամ ծագեսցեն արդարքն որպէս զարեգակն յարքայութեանն երկնից որպէս տեսանէին առաքեալքն Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս որ ընդ նմա իսկ էին ի սուրբ լերինն զփառսն Ադամայ զորս ի դրախտին ունէր, եւ ի յարութեանն սուրբքն զգենուն որպէս տեսին զՄովսէս եւ զԵղիա երեւեալ փառօք ։ Մովսէս ի մեռելոց յարուցեալ զօրինակ մեռելոցն բերելով որ ի Քրիստոսի գալստեանն յառնելոց են փառօք որպէս Մովսէս եւ Եղիա իջեալ յերկրէն կենդանեաց փառօք յօրինակ կենդանեացն որ լինին յայնժամ ի գալստեանն Քրիստոսի զի ոչ մեռանին այլ փոխին կենաց ի կեանս որպէս տեսին զԵղիա փառօք զարդարեալ ։

salem. Celui-ci offrit le premier sacrifice spirituel du corps et du sang du Christ; les apôtres virent le Saint-Esprit descendant sur le sacrifice, et ils bénirent du sel, comme le dit saint Juste[1], troisième évêque de Rome. Ensuite, ils appelèrent cette fête Vardavar[2] afin de détruire l'usage des païens qui, en ce même jour, fêtaient Aphrodite, laquelle ils disaient vierge née du sang et de l'écume de mer, en la surnommant « celle qui a des doigts de rose et un rameau d'or », et lui offraient des roses. Et depuis lors, c'est[3]... le royaume des cieux.

* A fol. 334 v° b. * Le mystère de cette fête annonce tout à la fois l'avènement du Christ qui viendra dans sa gloire divine et tous les saints divinisés et régnant avec lui, selon que le dit le Seigneur : « *Alors, les justes brilleront comme le soleil dans le royaume des cieux*[4]. » Car, à la résurrection, les saints seront revêtus de la gloire qu'Adam avait eue dans le paradis suivant ce que contemplaient les apôtres Pierre, Jacques et Jean, étant avec (le Christ) sur la montagne lorsqu'ils virent Moïse et Élie apparus dans la gloire. Moïse ressuscité d'entre les morts est le symbole de ceux qui à la venue du Christ ressusciteront avec gloire comme Moïse, tandis qu'Élie descendu avec gloire du pays des vivants est le symbole des vivants qui à la venue du Christ ne mourront point mais seront transférés de la vie à la vie, ainsi que (les apôtres) ont vu Élie entouré de gloire.

1. Il s'agit de l'apologiste saint Justin. — 2. « Resplendissant de roses. » — 3. Lacune. — 4. Matth., XIII, 43.

Եւ զի երեւեսցի եթէ Քրիստոս տէր է կենդանեաց եւ մեռելոց եւ չէ մի ոք ի մարգարէիցն որպէս Հրէայքն ասէին, այլ տէր եւ առաքիչ մարգարէիցն, եւ ոչ լուծիչ օրինացն եւ հակառակ մարգարէիցն, այլ լցուցիչ օրինացն եւ վրէժխնդիր որպէս Մովսէս եւ Եղիա եւ զի ուսցին վարդապետք նորոյս * զառաջնորդութիւն եկեղեցւոյ * A fol. 335 r° a. ի վարդապետաց հնոյն, եւ փայլեսցեն յառաջագոյն շնորհք յարութեանն ճանաչելով զմիմեանս առաքելոցն եւ մարգարէիցն, եւ շինեսցի եկեղեցի կուսանօք եւ սուրբ ամուսնացելովք ոչ երկու եւ երեք վկայիւք այլ հինգ նորովքս եւ հնովքն եւ շինեսցի եկեղեցի ըստ նմանութեան երկնից ունելով դասս իննեակ խորհրդով ըստ նմանութեան երկնայնոցն ունելով առաջինս եւ միջինս եւ վերջինս ։

Իսկ այլ ազգ քրիստոնէից յայսմ աւուր տօնեն, որ է Աւելեաց Ա եւ Օգոստոսի Զ, եւ այս եւս խորհրդեամբ է զի քառասուն աւուրբք յառաջ էր Այլակերպութիւնն Քրիստոսի քան զխաչելութիւնն, եւ այս քառասուն աւուրբք յառաջ է քան զտօն սրբոյ խաչին որ ի Սեպտեմբեր ԺԴ ։

[B * Տօն է Փոխակերպութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յորժամ լուսակերպեցաւ * B p. 63 a. ի Թաբորական լեառն, եւ վկայեցաւ լուսափայլ ամպով եւ ձայնիւ Հօր ի բարձանց եւ ութ օր կատարի ։

Ceci afin qu'il soit manifeste que le Christ est le Seigneur des vivants et des morts; non pas l'un des prophètes comme disaient les Juifs mais celui qui les envoie; non celui qui détruit la Loi et s'oppose aux prophètes mais l'observateur et le zélateur de la Loi, comme Moïse et Élie; afin que les docteurs de la nouvelle Église en apprennent le * gouvernement des * A fol. 335 r° a. docteurs de l'ancienne; afin qu'à l'avance resplendissent les grâces de la résurrection tandis qu'apôtres et prophètes se reconnaissaient mutuellement; afin que l'Église soit édifiée par les vierges et par ceux qui sont saintement mariés, non pas devant deux ou trois témoins mais devant cinq[1], nouveaux et anciens; afin que l'Église soit édifiée comme les cieux, ayant une hiérarchie à neuf degrés à la ressemblance des (chœurs) célestes, ayant des premiers, des moyens et des derniers[2].

D'autres nations chrétiennes célèbrent cette fête en ce jour du premier avéleats, 6 août; et cela aussi a sa signification : la Transfiguration du Christ eut lieu quarante jours avant la crucifixion, et cette fête a lieu quarante jours avant la fête de la Croix qui tombe le 14 septembre.

[B * Fête de la Transfiguration du Christ notre Dieu lorsqu'il fut trans- * B p. 63 a. formé en lumière sur la montagne du Thabor et qu'il lui fut rendu témoignage d'en-haut, à travers un nuage lumineux, par la voix du Père. (Cette fête) dure huit jours.

1. Allusion aux cinq témoins de la Transfiguration, les « nouveaux » qui sont les trois apôtres et les « anciens », Moïse et Élie. — 2. Allusion à la répartition des neuf chœurs célestes en trois ordres.

* B p. 63 b

Տէր եւ Աստուածն մեր Յիսուս Քրիստոս ի մարդ լինելն իւրում, յետ մկրտելոյն ի Յովհաննէ եւ շրջելոյն յաշխարհի աստուածագործ նշանօքն եւ վարդապետութեամբն, յորժամ հանդերձեալ էր գալ ի կամաւոր չարչարանս կամեցաւ նախ * եւ յառաջագոյն յայտնել զոր ծածկեալն էր մարմնով զփառս աստուածութեան իւրոյ եւ զզօրութիւն ընտրելագոյն եւ գլխաւորագոյն աշակերտացն երից, եւ Հօր վկայութեամբ ի բարձանց զնոյն հաւաստարիմ առնել որպէս զի յետոյ ի տեսանելն զկամաւորն չարչարանսն, եւ զանօրինաբար տկարանալն նորա մարմնով, եւ զանարգանս արհամարհանացն ի Հրէիցն, մի ամենեւին գայթակղեալ ի սպառ գլորիցին :

Ուստի եւ զի այն նախ էր քան զխաչելութիւնն Տեառն քառասուն աւուրբք, եւ առաքեալքն պատուէր ընկալան մի ումեք ասել զնոյն նախ քան զյարութիւն նորա ի մեռելոց, նմին իրի որպէս եւ յետ Յարութեանն Տեառն պատմեցին զնոյն առաքեալքն, այսպէս եւ եկեղեցի սուրբ աւանդութիւն ընկալաւ յետ տօնելոյ զՅարութիւն Տեառն տօնել զնոյն յայսմ աւուր, որ ըստ համեմատութեան եղելոյ պատշաճեցաւ յարմարել զի որպէս այն նախ էր քան զխաչելութիւնն Տեառն քառասուն աւուրբք, այսպէս եւ տօն Պայծառակերպութեան Քրիստոսի քառասուն աւուրբք յառաջ եղաւ քան զտօն սրբոյ խաչին :

Ղուկաս յետ ութ աւուր ասէ, եւ Մատթէոս յետ վեց աւուր եւ ոչ հակառակ միմեանց այլ միաբան զի Մատթէոս զառաջին օրն յորում զբանն ասաց, եւ զվերջինն յորում

* B p. 63 b.

Notre-Seigneur et Dieu, Jésus-Christ, pendant son incarnation après avoir été baptisé par Jean et avoir circulé sur terre (en manifestant) ses prodiges divins et sa doctrine, tandis qu'il se préparait à sa Passion volontaire, voulut d'abord * révéler, ce qu'il avait jusqu'alors caché par son corps, la gloire de sa divinité et sa puissance à ses trois disciples principaux, élus les premiers, et la leur confirmer par un témoignage du Père (venu) d'en-haut, afin qu'ensuite en voyant sa Passion volontaire, l'affaiblissement mystérieux de son corps et les mépris injurieux des Juifs, ils ne se scandalisent nullement et ne trébuchent pas.

Or, ceci ayant eu lieu quarante jours avant la crucifixion du Seigneur, les apôtres reçurent l'ordre de n'en parler à personne avant sa résurrection d'entre les morts, et n'en parlèrent en fait qu'après la résurrection du Seigneur. C'est pourquoi la sainte Église accepta la tradition de célébrer cette fête après la célébration de la Résurrection du Seigneur, en ce jour-ci, qui, par rapport à l'événement, s'y prêtait convenablement. Car, si (la Transfiguration) précéda de quarante jours la crucifixion du Seigneur, de même la fête de la Transfiguration du Christ fut instituée quarante jours avant la fête de la sainte Croix.

Luc dit *après huit jours*[1] et Matthieu *après six jours*[2], non en se contredisant l'un l'autre, mais d'accord. Car Matthieu ne met pas en compte

1. Luc, IX, 28. — 2. Matth., IX, 1.

գործն կատարեցաւ ոչ առնու ի կիր այլ զմիջոցն որ աստի անդ է թուելով վեց աւր, իսկ Ղուկաս զերկոսինն զառաջինն եւ զվերջինն արկանելով ի կարգ, համարի ութ զի այսու ծանիցես թէ ոչ ի մի վայր եկեալ խորհեցան ըստ կամաց այլ յայլ եւ յայլ տեղիս եւ ի ժամանակս գրեցին ըստ տալոյ Հոգւոյն, եւ միաբանին առ ճշմարտութիւնն, զի եւ երկուքն ի խորհուրդ են :

Քանզի այլակերպիլն ի Թափոր յայտնութեան արքայութեան նորա օրինակ էր եւ խորհուրդ : Եւ արքայութիւն կրկնակի ասի. մի որ աստ տնօրէնութեամբն * եւ * B p. 64 a.
աւետարանին վարդապետութեամբն էառ իշխանութիւն ի վերայ բնութեան մերոյ, զոր նորոգեաց լուսով ի վեց հազարեան դարիս զոր նշանակէ վեց աւուրբն Մատթէոս եւ միւսն որ ի հանդերձեալն, որ է ութեակ յետ եօթներորդ դարուց կենցաղոյս որ եօթն ամք չափի եւ բերի յայտնելոց է ճշմարիտ արքայութիւն նորա ամենեցուն, զոր ութ աւուրբքն ակնարկէ Ղուկաս :

Առնու ընդ իւր. ընդէ՞ր զամենայն աշակերտսն ոչ տարեալ ի լեառն այլ զերիսն միայն : Առաջին զի չէր պարտ հրապարակագոյն լինել իրացն, զի մի Հրէայքն զայն առնուցուն պատճառ մահու նորա զի թէ լոկ բանիցն զոր խօսէր Տէրն ոչ կարէին տանել, այլ բազում անգամ սպանանել ջանային, զի՞նչ ոչ գործէին եթէ լուեալ էին

le premier jour où il prononça les paroles et le dernier jour où l'événement eut lieu; mais il tient compte seulement du temps passé entre l'un et l'autre et dit : six; tandis que Luc met en compte tant le premier que le dernier et compte huit jours, pour qu'on reconnaisse par là qu'ils ne se sont point concertés quelque part pour en décider à leur gré, mais qu'ils ont écrit en différents lieux et en différents temps selon l'impulsion de l'Esprit, unanimes dans la vérité, bien qu'ils soient deux dans la pensée.

La Transfiguration au Thabor était le signe et le symbole de la révélation du royaume (du Christ). Royaume est employé dans un double sens : d'une part, c'est l'autorité qu'il prit par ses actes de Seigneur * et par la doctrine * B p. 64 a.
de l'évangile sur notre nature, qu'il renouvela par la lumière dans le sixième millénaire; et c'est ce que Matthieu indique en disant six jours; et, d'autre part, c'est (l'autorité) dans la vie future, qui est la huitième (époque) après la septième époque de cette vie, laquelle est limitée et portée à sept ans, (après lesquels) sera révélé à tous son véritable royaume; c'est à cela que Luc fait allusion par les huit jours.

Il prit avec lui; pourquoi n'a-t-il pas conduit tous les disciples à la montagne, mais trois seulement? En premier lieu, c'est qu'il ne convenait point de rendre la chose trop publique. de peur que les Juifs n'en prissent prétexte pour sa mort; car, s'ils ne pouvaient tolérer les seules paroles prononcées par le Seigneur et avaient plusieurs fois cherché à le tuer, que n'auraient-ils point fait s'ils avaient appris le bruit de ce prodige miraculeusement divin et de cette gloire, l'apparition de Moïse et d'Élie en serviteurs? Poussés par la

զայնպիսի աստուածահրաշ սքանչելեացն եւ զփառացն հռչակ, եւ զՄովսէսի եւ զԵղիայի ծառայաբար երեւումն զի անդէն ի նախանձ զրգեալ զայն առնուին պատճառս մահու նորա : Եւ Տէրն չկամէր տալ պատճառս, վասն այն ոչ զամենեսեան զի մի համբաւեսցի ի հռչակ իրքն, այլ զայնոսիկ որ պահել կարէին տանի :

Դարձեալ ոչ տանի զամենայն առաքեալսն զի Յուդա ընդ նոսա էր, որ ոչ էր արժանի աստուածային յայտնութեանն զի որպէս ասացաք խորհուրդ էր իրքն, եւ չէր պարտ առժամայն յայտնել, ըստ որում ասաց մի ումեք յայտնել զտեսիլն : Իսկ նա մատնիչ էր եւ չէր պահելոց. վասն որոյ տանել ընդ այլոցն չէր պարտ եւ միայն թողուլն անպատշաճ : Նախ զի մի տրտմիցի եւ զայն առցէ պատճառս իւրոյ կորստեանն եւ մատնելոյ զՏէրն. զի Քրիստոս չկամէր պատճառս տալ, այլ մանաւանդ միշտ դարձուցանել ջանայր. Նա եւ զի առ մարդիկ իբրեւ զկատարեալ էր եւ չեւ էր յայտնեալ չարութիւն նորա կարծիք ատելութեան թուէր. բայց Տէրն զի գիտէր ի սկզբանէ զորս՝ ոչ հաւատացին եւ զայն որ մատնելոցն էր զնա որպէս ասէ
* B p. 64 b. * Յովհաննէս, նմին իրի ծածկէ, ի պատճառս նորա թողու եւ զայլսն :

Նա եւ զի որպէս զոքա միայն գրեցին զաւետարանն ճշգրտիւ, եւ ընդունելի եղեւ ընկալեալ լսողացն, քան թէ ամենեքեան էին գրեալ. այսպէս եւ երիցն միայն

jalousie, ils en auraient immédiatement pris prétexte pour sa mort. Mais le Seigneur ne voulut point leur fournir ce prétexte, c'est pourquoi il emmena, non pas tous (les disciples) pour que la chose ne fût trop divulguée, mais seulement ceux qui étaient capables de la garder.

De même, il n'emmena point tous les apôtres, parce que Judas était parmi eux et n'était point digne de la révélation divine; car, comme nous l'avons dit, la chose était secrète et il ne convenait point qu'elle fût immédiatement divulguée; c'est pourquoi il dit de ne révéler la vision à personne. Or, (Judas) était un traître et n'aurait rien gardé; c'est pourquoi il ne fallait ni l'emmener avec les autres, ni le laisser seul. Afin, d'abord, qu'il ne s'attristât point et n'en prît prétexte pour sa propre perdition et pour trahir le Seigneur; car le Christ ne voulait point lui donner un prétexte, au contraire, Il cherchait toujours à le convertir. Et comme (Judas) passait, aux yeux des hommes, pour parfait, sa méchanceté n'étant pas encore révélée, cela aurait pu être interprété comme une raison de haine. Mais le Seigneur, *qui connaissait dès le commencement ceux qui ne crurent pas en lui et celui qui devait*
* B p. 64 b. *le trahir,* comme le dit * Jean [1], c'est pour cela qu'il veut tenir la chose secrète et à cause de lui il laisse aussi les autres.

De même que certains seulement écrivirent l'évangile scrupuleusement, lequel fut accepté volontiers par ceux qui l'avaient entendu, et (cela valut)

1. Jean, vi, 65.

տեսանելովն եւ ի ժամանակի պատմելովն հաւատացոյն լինէր ընկալեալ իրքն : Զի ի դէպ էր թէ յամենեցուն պատմելն շփոթումն լինէր եւ անհաւատալի թուէր իրքն որպէս եւ զամենեցուն զկանանցն պատմելն շաղփաղփութիւն համարէին : Եւ զերիսն առնէ եւ ոչ պակաս, զի աներկբայ եւ հաւատարիմ լիցի վկայելն ի նոցանէ, քանզի ըստ օրինացն երկուց եւ երից վկայութիւն ճշմարիտ եւ ընդունելի համարեալ էր :

Արդ զի բերելոց էր երկուս ի մարգարէիցն տանի երիս յառաքելոցն, զի կատարեսցէ զբան օրինացն որ գուշակէր զայս, եւ զաւելութիւն առաքելոցն ցուցանէ քան զմարգարէիցն, զի ոչ աղօտ կամ ի մի ազգն Իսրայելի, այլ ընդարձակ եւ յամենայն աշխարհի էին քարոզելոց. յաղագս որոյ ի նոցանէ երիս տանի որ ի մարգարէիցն երկուս բերելոց էր :

Իսկ զՊետրոս եւ զՅովհաննէս եւ զՅակոբոս եւ ոչ զայլ ոք զի սոքա գլխաւորագոյնք էին եւ կատարեալք քան զայլսն, որով եւ բաւականք առ ի խորհուրդն :

ԶՊետրոս եւ զորդիսն Որոտման հանէ, զի Պետրոս յոյժ վասն ջերմին սիրոյն երկնչէր եւ խուսայր ի մահուանէն, որպէս զի տեսլեամբ փառացն հաստատեալ քաջալերեսցի, եւ լսելով զելսն որ յԵրուսաղէմ մի վհատեսցի ի խաչին իրաց : Իսկ զորդիսն Որոտման, զի ի թանձրամիտ մարմնաւոր խորհրդոցն որով մարմնական փառս խնդրէին յաջ

mieux que si tous l'avaient écrit —; de même, trois seulement l'ayant vu et l'ayant racontée en son temps, la chose fut acceptée avec plus de foi. Car si tous avaient raconté l'événement, il aurait pu y avoir de la confusion et il eût pu paraître incroyable, comme fut tenu pour babillage ce que toutes les femmes (porteuses d'huiles) avaient raconté. Il en emmène trois et pas moins, afin que leur témoignage fût incontestable et certain, car d'après la Loi, le témoignage de deux et trois (personnes) était reconnu vrai et agréé[1].

Or, comme Il devait faire apparaître deux d'entre les prophètes, (le Christ) emmena trois d'entre les apôtres pour accomplir la parole de la Loi qui prédisait cela, et il montre le nombre des apôtres supérieur à celui des prophètes pour indiquer qu'ils allaient prêcher non pas obscurément et au seul peuple d'Israël mais largement et à toute la terre. C'est pour cela qu'il en emmène trois d'entre eux tandis qu'il ne fait apparaître que deux des prophètes.

Et ce sont Pierre, Jean, Jacques et personne autre, parce qu'ils étaient les principaux et plus parfaits que les autres, par conséquent, suffisants pour ce mystère.

Il emmène Pierre et les Fils du Tonnerre, afin que Pierre, qui à cause de l'ardeur de son amour craignait et fuyait la mort, à la vue de la gloire se raffermît et prît courage, et qu'en apprenant la montée à Jérusalem, il ne se laissât pas abattre par l'œuvre de la croix. Quant aux Fils du Ton-

1. Cf. Deut., xvii, 6.

եւ յահեակ կարծելով զնա մարմնով թագաւորել, ի տեսանել զաստուածային փառսն յայնմանէ զգաստասցին, եւ կատարեալ հոգեւոր փառացն ցանկասցին որում արժան * B p. 65 a. էր ցանկալ, * զի զանկատարութիւն նոցա յայտնէ անկատար խնդիրն, որ չեւոյ զոր տարաւ թերեւս կատարեսցին : Նա եւ զՅակոբոս, վասն առաւել սիրոյ ջերմութեանն զոր ունէր ի Քրիստոս վաղվաղակի սպանանել ետուն Հերովդէի Հրէայքն :

Վասն որոյ ամենայն ուրեք զերիսն միայն առնոյր ի խորհուրդ յայլոցն զատեալ, զի եւ զայլսն շարժեսցէ ի նոցին նմանօրինակ առաքինութեան կատարումն, որպէս ի յարութիւն դստեր հարիւրապետին, եւ ի ժամ չարչարանացն յորժամ հոգայր եւ տրտմէր, եւ յԵրուսաղէմ զՊետրոս եւ զՅովհաննէս առաքէր, որք եւ ի գերեզմանն նորա յառաջէին :

Նա եւ զի երեքանձնական աստուածութեանն խորհուրդ յայտնելոց էր, Հայր ձայնիւ, եւ Որդի լուսովն, եւ Հոգին հովանի լինելովն. եւ զի զմեզ ուսուսցէ զերիս մասունս զմարմին եւ զհոգի եւ զմիտս միաբանել յաստուածայնոցն հաղորդութիւն :

Բայց դու տես զխոնարհութիւնն Մատթէոսի, զի թէպէտ եւ ինքն յերկոտասանիցն էր եւ ոչ տարեալ եղեւ ի լեառնն, սակայն ոչ մեծամտեալ թաքուցանէր զորս

nerre, c'est afin de leur enlever leurs pensées épaisses, corporelles, à eux qui recherchaient la gloire corporelle à la droite et à la gauche (du Seigneur), croyant qu'il allait régner dans son corps; et afin qu'en voyant la gloire divine ils revinssent à de meilleurs sentiments et aspirassent à la gloire * B p. 65 a. spirituelle plus parfaite, à laquelle il convenait d'aspirer, * car leur demande imparfaite indique leur imperfection, alors que peut-être ils deviendraient parfaits après qu'Il les aurait emmenés. Les Juifs en effet firent bientôt mettre Jacques à mort par Hérode, à cause de son ardent amour pour le Christ.

C'est pour cela que partout Il tenait conseil avec ces trois seulement, les séparant des autres, pour inciter les autres à la perfection des vertus semblables aux leurs, par exemple à la résurrection de la fille du centurion et aux heures de la Passion lorsqu'il fut dans les angoisses et dans la tristesse et lorsqu'il envoya Pierre et Jean à Jérusalem. Et ce sont ces derniers également, qui arrivèrent les premiers au tombeau.

Ceci aussi parce que le mystère de la divinité en trois personnes devait se révéler, le Père par la voix, le Fils par la lumière et le Saint-Esprit par l'ombre, afin de nous enseigner à réunir les trois parties, le corps, l'âme et l'esprit, dans la communion des choses divines.

Mais, toi, considère l'humilité de Matthieu, qui, bien qu'étant lui-même l'un des douze et n'ayant pas été emmené à la montagne, n'a pas caché, par orgueil, ceux que (le Seigneur) avait choisis parmi eux; et il a préféré

ընտրեաց չինքեանց եւ նախամեծար համարեցաւ, որպէս եւ ի բազում տեղիս զՊետրոսի առաքելութիւնն, եւ զպատուելն ի Տեառնէ առանց նախանձու ճառէ, քանզի այսպէս ազատ էին յախտից սրբոցն դասք ։

Հանէ զնոսա ի լեառն. զի պարտ էր առ ժամն ծածուկ եւ անյայտ լինել խորհրդական յայտնութեանն ։ Դարձեալ եւ զի չէր պարտ ի մէջ անմաքուր բազմութեանն անարժանիցն աստուածավայելուչ փառացն երեւիլ. վասն այնորիկ որոշեալ ի լեառն հանէ զարժանաւոր աշակերտսն զատ եւ առանձինն ի խառն ամբոխէն, քանզի անմաքուրք վնասին մանաւանդ քան թէ շահին անարժանութեամբ եւ առանց նախապատրաստութեան հպիլն ի գերագոյնսն, որպէս եւ ճայրատ աչք ի լուսատու արեւուդ ։

Վասն այնր ի լերինն տանի * զաշակերտսն զի խաղաղասցին միտք նոցա, եւ հանդարտեսցին խորհուրդքն յամբոխէ եւ ի զբաղմանց մարդկան, եւ ի զանազան հոգոց եւ յաշխարհական խուճապից, եւ յինքեանս եղիցին մտաւորապէս ։ * B p. 65 b.

Դարձեալ ի լեառն տանի զնոսա առանձինն, եւ ապա յայտնէ զփառսն, զի ուսցին զկամաւոր խոնարհութիւն նորա վասն մերոյ փրկութեան, որ թէպէտ ունէր զգերագոյն փառս աստուածութեանն, սակայն ծածկէր մարմնով եւ ոչ յայտնէր զամենայն ի մէջ բազմութեանն ։ Եւ յորժամ պէտք եղեւ յայտնել զաստուածութեան լոյս զմեծութիւն փառացն ոչ առաջի ամբոխին առ փառաւորիլ արար Տէրն, այլ առանձինն յանքոյթ

raconter, sans jalousie, comme en bien d'autres endroits, la haute mission de Pierre et comment il était honoré par le Seigneur; car c'est ainsi que cette compagnie de saints était exempte de vices.

Il les conduisit à la montagne, car il fallait que, pour le moment, restât caché et secret le mystère de la révélation. Il fallait aussi que la gloire qui convenait à la divinité n'apparût point aux yeux de la multitude impure et indigne; c'est pourquoi il choisit ses disciples méritants, les sépare de la promiscuité de la foule et les conduit à part sur la montagne, car les impurs perdent plutôt qu'ils ne gagnent en approchant des choses sublimes indignement et sans préparation, tels les yeux offusqués par le soleil illuminateur.

Aussi conduisit-il * ses disciples sur la montagne pour que leur esprit s'apaisât, pour que leurs pensées se calmassent loin de la foule et des occupations humaines, des soucis multiples et du fracas du monde, et pour qu'ils s'appartinssent spirituellement. * B p. 65 b.

En outre, il les conduisit seuls sur la montagne puis leur révéla sa gloire, afin qu'ils apprissent son humilité volontaire pour notre salut; car, tout en possédant la gloire suprême de la divinité, il la cachait cependant par son corps et ne la révélait point entièrement à la multitude. Et lorsqu'il fut nécessaire de révéler la lumière de la divinité et la grandeur de la gloire, le Seigneur ne le fit point aux yeux de la foule pour en être glorifié, mais il

լերինն եհան զաշակերտսն եւ երեւեցաւ նոցա ։ Ի ձեռն առնելոյն զայն նոցին աշակերտացն, եւ նոքօք մեզ սահման եւ օրինակ առաքինութեան տալով, ոչ յայտնել եւ հրապարակել զանձանց լաւութիւն, եւ հռչակել զփառս ի մէջ բազմութեան մարդկան փառասիրութեան ախտի, այլ յամենայն սնապարծիկ անձնգովութենէ ազատ լինել ուսանելով ի նմանէ որոյ սեպհական է ամենայն փառք ։

Զի յաղօթիցն ժամ մեկնէր զանձն ի բազմութենէն յանապատս եւ ի լերինս, նոյն եւ այժմ ի լուսակերպելոյն ժամ առնէր զնոյն ։ Քանզի եւ Ղուկաս պատմէ յայսմ վայրի թէ առանձնացեալ յաղօթս կայր որպէս սովորն էր, եւ նոյնպէս յայտնեաց զփառսն ասելով. Եւ եղեւ ի տեղոջ ուրեք կալ նմա յաղօթս ։

Ապա ուրեմն չիք ոք երանելի քան զառաքեալսն եւ մանաւանդ քան զերիսն որք ընդ ամպովն արժանի եղեն յարակից լինել Քրիստոսի ։ Այլ թէ կամիմք եւ մեք տեսանել զՔրիստոս, ոչ որպէս նոքա յայնժամ այլ եւս առաւել լուսաւորագոյն, քանզի ոչ այնպէս գայցէ ի վախճանի որպէս առաքելոցն երեւեցաւ, այլ փառօք Հօր իսկ եկեսցէ, ոչ միայն Մովսէսիւ եւ Եղիայիւ այլ անեզր հրեշտակօք եւ հրեշտակա-
* B p. 66 a. պետօք, ոչ * թէ ամպ հովանի ի վերայ գլխոցն ունիցին, այլ եւ երկինք իսկ ամփոփեսցին յինքեանս ։

le fit à part dans la paix de la montagne où il conduisit ses disciples et où il se révéla à eux. En agissant ainsi avec ses disciples et en nous donnant, par eux, les limites et l'exemple de la vertu (il nous enseigne) à ne point faire montre et à ne point étaler nos qualités personnelles, à ne point rechercher la gloire au milieu de la multitude humaine par le vice de l'ambition, mais, au contraire, à nous libérer de tout éloge vain, en apprenant de Lui qui possède proprement toute gloire.

De même qu'il s'éloignait de la multitude aux heures de la prière et se retirait dans le désert ou sur la montagne, ainsi fit-il dans cette circonstance, à l'heure de la Transfiguration. Luc dit au sujet de cet endroit que s'étant isolé, il se mit en prière comme d'habitude, et il révèle également la gloire par ces paroles : « *Un jour qu'il priait dans un lieu solitaire*[1]. »

Aussi n'y a-t-il point d'hommes plus heureux que les apôtres et surtout que ces trois-là qui furent dignes d'être près du Christ sous le nuage. Or, si nous voulons, nous aussi, voir le Christ, nous ne le verrons point comme ils l'ont vu à ce moment-là, mais d'une manière plus lumineuse encore, car il ne viendra pas à la fin (des temps) tel qu'il apparut aux apôtres, mais il viendra dans la gloire du Père, accompagné non des seuls Moïse et Élie,
* B p. 66 a. mais d'innombrables anges et archanges, qui * n'auront point l'abri d'un nuage au-dessus de la tête mais renfermeront en eux le ciel même.

1. Luc, ix, 18.

Զոր օրինակ թագաւորք յորժամ հրապարակաւոր առնիցեն, սպասաւորք վարա-հանկսն ի բաց ձգիցեն յերեսաց զի ամենեցուն ցուցանեն զնոսա. նոյնպէս եւ նա յորժամ նստիցի, ամենեքեան տեսանիցեն, եւ ամենայն բնութիւնք առաջի կացցեն, եւ ինքն անձամբ առնէ պատասխանի նոցա, ցկէսն ասիցէ. Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զկեանսն յաւիտենից. եւ ցկէսն. Երթա՛յք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից :

Յայսմ աւուր կատարեցան երկու հարիւր վկայք ի Հայք ի դղեակ մի :

Յետ աւերման աշխարհին Հայոց եւ կատարման սրբոց Վարդանանցն, գնացին անօրէն զօրքն Պարսից ի դղեակ մի յաշխարհն Հայոց եւ պաշարեցին զնա, յորում էին ամրացեալ բազում հաւատացեալք : Եւ նեղեալ զնոսա յոլով յոյժ երդուեալ խաբէութեամբ զի թէ տայցեն զբերդն արձակեսցեն զնոսա անվնաս, եւ նոքա հաւատացեալ իջին առ նոսա :

Եւ Պարսկացն կալեալ զնոսա ասեն. Եթէ ուրանայք զՔրիստոս եւ երկրպագէք հրոյ արձակեմք զձեզ եւ պատուեմք պարգեւօք, ապա թէ ոչ չարաչար սպանանեմք : Եւ սուրբքն զՔրիստոս խոստովանելով յանձն առին զմահ, զորս չարաչար կոտորեցին սրով, անձինս երկու հարիւր, որք վկայութեամբ Քրիստոսի պսակեցան :]

De même que quand les rois veulent se montrer en public, les serviteurs écartent le rideau qui cache leur visage afin de le montrer à tous; ainsi, lorsque (le Christ) siégera, tout le monde le verra, tous les êtres seront présents devant lui et il leur répondra personnellement; il dira à la moitié : « *Venez, les bénis de mon père, prenez possession de la vie éternelle* »; et à (l'autre) moitié : « *Retirez-vous de moi, maudits,* (allez) *au feu éternel* [1]. »

En ce jour furent martyrisés deux cents martyrs dans un château-fort en Arménie.

Après la destruction du pays d'Arménie et le martyre des saints Vardaniens, les troupes impies des Perses se dirigèrent vers un château fort du pays de l'Arménie et y mirent le siège. Beaucoup de fidèles y étaient abrités. Après les avoir réduits à une grande gêne, (les Perses) les trompèrent par des serments de les laisser partir en liberté sans aucun mal s'ils leur livraient le fort. Ceux-là, les ayant crus, descendirent vers eux.

Les Perses les saisirent et leur dirent : « Si vous reniez le Christ et adorez le feu, nous vous rendrons la liberté et vous honorerons de présents; dans le cas contraire, nous vous tuerons cruellement. » Les saints, confessant le Christ, acceptèrent la mort, et (les Perses) les tuèrent cruellement par le glaive au nombre de deux cents personnes environ qui furent couronnées de la couronne des martyrs par le Christ.]

1. Matth., xxv, 34-41.

Աւելեաց Բ եւ Օգոստոսի Է ։ Վկայութիւն սրբոյն Դոմետիանոսի ։

Յաւուրս մեծին Կոստանդիանոսի որդւոյ սրբուհւոյն Հեղինեայ Դոմետիանոս մոգ եւ աղանդաւոր էր ի Պարսիկս ։ Եւ ոմն մի քրիստոնեայ Աբգարոս անուն ուսոյց նմա զքրիստոնէութիւնն. եւ նա եթող զհայրենի դաւանութիւնն, եւ զտուն եւ զծնօղս եւ զազգակիցս իւր, գնաց ի Մծբին քաղաք որ է ի մէջ Հոռոմոց եւ Պարսից, եւ եմուտ ի վանս, մկրտեցաւ, եւ եղեւ կրօնաւոր եւ մեծ ճգնաւոր ։ * Զոր նախանձեցան այլ կրօնաւորքն եւ տրտնջէին վասն նորա հօր վանացն եթէ. Առաւել քան զմեզ պահօք եւ աղօթիւք եւ տքնութեամբ փութայ ժուժկալ լինել ։

* A fol. 335 r° b.

Եւ գիտացեալ Դոմետիանոսի գաղտ փախեաւ ի վանացն, եւ գնաց ի Թէոդոսուպօլիս որ է Կարնոյ քաղաք, ի վանս սրբոյն Սարգսի եւ Բագոսի ։ Եւ էր հայր վանացն երանելի Նուրբէն, որ զվաթսուն ամ ոչ նստաւ, եւ ոչ ի մահիճս հանգեաւ, եւ ոչ ինչ որ ընդ հուր անցանէր եկեր ։ Եւ Դոմետիանոս նախանձեցաւ ընդ վարս նորա, եւ եղեւ նորա նմանող, եւ պահօք եւ աղօթիւք եւ անհանգիստ տքնութեամբ յոտն կալով հանապազ չարչարէր զանձն իւր ։

3 ի Պարսիկս] Պարսիկ ազգաւ B || 11 Նուրբէն] զոր Ուրվէլ կոչեն *add.* B || 12 անցանէր] էանց B.

2 AVÉLEATS, 7 Août.

Martyre de saint Dométianus.

Aux jours du grand Constantin, fils de sainte Hélène, vivait en Perse le mage et incantateur Dométianus. Un chrétien, nommé Abgar, lui enseigna le christianisme; il abandonna la religion de ses ancêtres, sa maison, ses parents et ses proches, se rendit à la ville de Nisibe qui se trouve entre les Grecs et les Perses, entra dans un couvent, fut baptisé, devint religieux et grand ascète. *Les autres moines devinrent jaloux et se plaignirent de lui au prieur du couvent, disant : « Il aspire à être plus austère que nous par des jeûnes, des prières et des veilles. »

* A fol. 335 r° b.

Dométianus, l'ayant appris, s'enfuit secrètement du monastère, se rendit à Théodosioupolis, qui est la ville de Karin [1], au couvent des saints Serge et Bacchus. Le prieur du couvent était le bienheureux Nourbên, qui ne s'était point assis durant soixante années, ne s'était point reposé dans un lit et n'avait rien mangé de ce qui avait cuit au feu. Dométianus envia une telle vie, devint son imitateur et tortura quotidiennement son corps par des jeûnes, des prières et des veilles incessantes, se tenant toujours debout.

1. Erzeroum.

Ձեռնադրեցին զնա սարկաւագ ։ Եւ ի միում կիւրակէի պատարագ մատուցանէր երանելին Նուրբէն հայրն, եւ ունէր Դոմետիանոս զպատուական քշոցսն, եւ տեսանէր աղաւնի զի թռչէր ի վերայ սուրբ խորհրդոյն, եւ կարծէր եթէ մարմնաւոր աղաւնի է քշոցօքն հալածէր ։ Եւ զկնի պատարագին արձակմանն պատմեաց հօրն զտեսիլ աղաւնոյն. եւ նա այլ ինչ ոչ ասաց ցնա բայց միայն ասէ. Եթէ դարձեալ տեսցես զաղաւնին ցոյց ինձ ։

Եւ ի միւս այլ կիւրակէն դարձեալ ետես զաղաւնին, եւ ցուցանէր հօրն, եւ նա տեսանել ոչ կարաց, աղաչեաց զԱստուած զամենայն շաբաթն * զի ցուցցէ նմա զաղաւնակերպ Հոգին սուրբ ։ Եւ ի միւս այլ կիւրակէն մատոյց զաստուածային խորհուրդ պատարագին եւ ետես զաղաւնին եւ փառաւորեաց զԱստուած ։ * A fol. 335 v° a.

Եւ կոչեաց զեպիսկոպոսն զի ձեռնադրեսցէ զԴոմետիանոս քահանայ եւ յորժամ գիտաց փախեաւ ի վանացն եւ գնաց ի լեառն աւազուտ, եւ խոտաճարակ եղեւ անդ ամս երկուս ։

Եւ ի տօթոյ խորշակէն ծարաւեցաւ, եւ երթեալ ի գետն զի արբցէ ջուր, ետես անդ կին մի անառակ, որ մերկացաւ անառակութեամբ եւ անամօթ եւ երանելին տրտմեցաւ յոյժ, աղաչեաց զԱստուած եւ ակունք գետոյն ցամաքեցան ։ Եւ ընդ առաւօտն

2 հայրն *om.* B || 3 խորհրդոյն] խորհրդեանն B || 4 պատարագին] ժամուն B || 14 Եւ ի տօթոյ... կոփեալ] Եւ տուան նմա յԱստուծոյ շնորհք սքանչելեաց, եւ առնէր նշանս մեծամեծս, որով յայտնի եղեւ անուն նորա առ ամենայն բնակիչս տեղւոյն ։ Եւ զի ի լեառն յայն յոյժ խորշակ լինէր յամարայնի եւ ի ձմերայնի սաստիկ սառնամանիք երթեալ բնակչաց կոփեցին B.

On l'ordonna diacre. Un jour de dimanche, pendant que le bienheureux père Nourbên offrait le sacrifice et que Dométianus tenait le précieux flabellum, celui-ci aperçut une colombe qui survolait le saint mystère, et croyant que c'était une colombe corporelle, il la chassa avec son flabellum. Après l'achèvement du sacrifice, il raconta au prieur la vision de la colombe. Celui-ci ne lui répondit que ceci : « Si tu vois encore une fois la colombe, montre-la-moi. »

Le dimanche suivant, (Dométianus) aperçut de nouveau la colombe et la montra au prieur; mais celui-ci ne parvint point à la voir, et il pria Dieu toute la semaine * de lui faire voir le Saint-Esprit en forme de colombe. Le dimanche suivant, il offrit le mystère divin du sacrifice, aperçut la colombe et rendit gloire à Dieu. * A fol. 335 v° a.

Il fit donc venir l'évêque pour ordonner prêtre Dométianus, mais lorsque celui-ci l'apprit, il s'enfuit du couvent, se rendit sur une montagne sablonneuse et s'y nourrit d'herbes pendant deux années.

Ayant eu soif par la chaleur du vent chaud, il se rendit à un cours d'eau pour y boire de l'eau; il y aperçut une femme de mauvaise vie qui se mit à nu sans honte et sans pudeur. Le bienheureux, très attristé, pria Dieu et les

ամենայն բնակիչք տեղւոյն այնորիկ, արք եւ կանայք եւ մանկունք, գնացին առ նա եւ անկան յոտս նորա, եւ նա աղաչեաց զԱստուած եւ դարձեալ բղխեցին աղբիւրքն ։ Եւ յետ երից ամացն ելին ի լեառն, զի յոյժ խորշակ լինէր յամարայնի եւ ի ձմերայնի սաստիկ սառնամանիք եւ նոքա կոփեալ զքար լերինն արարին այր մի, եւ անդ դադարեաց երանելին ։ Եւ բժշկէր աղօթիւք զամենայն հիւանդս եւ զախտաժէտս որք երթային առ նա, եւ զդեւսն հալածէր ի մարդկանէ եւ ի տեղեացն, եւ զամլութիւն կանանց յորդէծնութիւն փոխէր աղօթիւք ։

* A fol. 335 v° b. Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ուրացող * արքայն Յուլիանոս անցանէր ընդ այն, լուաւ վասն երանելոյն Դոմետիանոսի թէ որպէս դանդամալոյծսն ողջացուցանէ եւ զկուրաց աչս բանայ, եւ զկռապաշտսն դարձուցանէ ի Քրիստոսի հաւատն եւ մկրտէ. բարկացաւ յոյժ եւ առաքեաց զօրականս, եւ այնչափ քարկոծեցին զնա երկու աշակերտօքն զի քարակոյտն իբրեւ զբլուր եղեւ ի վերայ նոցա. եւ այնպէս աւանդեցին զհոգիս իւրեանց առ Աստուած Օգոստոսի Է ։

Եւ յետ աւուրց ուղտոյ միոյ բեկեալ ոտն եւ երթեալ մերձ ի քարակոյտն անկաւ եւ ողջացաւ. եւ գնաց տէր ուղտոյն առ քահանայս եւ քրիստոնեայ ժողովուրդսն եւ

7 աղօթիւք] որով եւ քաղուծք ի կռապաշտից դարձան առ Տէր *add.* B || 13 Օգոստոսի Է] եւ Աւեյեաց Բ *add.* B || 14 Եւ յետ աւուրց... գտին] Եւ յետ ժամանակաց նշանօք ինչ յայտնեցաւ, եւ երթեալ քրիստոնէից քահանայիւք եւ ժողովրդովք ցրուեցին զքարինս եւ բարձեալ B.

sources du cours d'eau se desséchèrent. Au matin, tous les habitants de la localité, hommes, femmes et enfants, vinrent à lui et se jetèrent à ses pieds. Alors il pria Dieu et les sources jaillirent de nouveau. Trois ans après, ils (les habitants) montèrent à la montagne, car il faisait trop chaud l'été et il y avait trop de gelées l'hiver; ils creusèrent dans le rocher de la montagne et firent une grotte, où habita le bienheureux. Par ses prières, il guérissait tous les malades et les infirmes qui venaient à lui, il chassait les démons du corps des hommes et des localités, et par ses prières changeait la stérilité des femmes en fécondité.

* A fol. 335 v° b. En ces jours-là, l'empereur * Julien l'Apostat vint à passer par là, et ayant appris que le bienheureux Dométianus guérissait les paralytiques, rendait la vue aux aveugles, convertissait les idolâtres à la foi du Christ et les baptisait, il en fut très irrité et envoya des soldats qui le lapidèrent si cruellement avec deux de ses disciples que le monceau de pierres entassées sur eux forma comme un tertre. C'est ainsi qu'ils rendirent leur âme à Dieu, le 7 août.

Longtemps après, un chameau qui avait une jambe brisée s'étant approché du monceau de pierres, y tomba et fut guéri. Le maître du chameau se rendit auprès des prêtres et des chrétiens et leur raconta le fait. Ceux-ci

տաց. եւ նոքա ցրուեցին զքարինսն եւ գտին զնշխարս Դոմետիանոսի եւ երկու աշակերտացն, եւ տարեալ թաղեցին յեկեղեցին :

[B * Յայսմ աւուր վկայութիւն սուրբ եւ մեծ վկային Տոնատի եպիսկոպոսի որ ի Տուսկիա, ի քաղաքն Արեցիու, մինչ պատարագէր ի խորանին, ի ժամանակս յանցողին Յուլիանոսի սպանին : * B p. 67 a.

Ի սմին աւուր մեծ սքանչելեօք եղեւ փրկութիւն թագաւորական քաղաքին յանաստուած զօրացն Պարսից ի ձեռն ամենասրբուհւոյ աստուածածնին Մարիամու ի ժամանակս Հերակլի կայսեր :]

Աւելեաց Գ եւ Օգոստոսի Ը : Վերստին տօն Այլակերպութեան : Եւ յայսմ աւուր վկայութիւն Մարինոսի ծերոյ :

Սուրբ վկայն Քրիստոսի Մարինոս էր ի քաղաքէն Անազարբայ, յաւուր Դիոկղետիանոսի կռապաշտ արքային եւ Լիւսիայ Տարսոնոյ դատաւորին : Եւ կացեալ առաջի խոստովանեցաւ զՔրիստոս եւ դատաւորն բազում խոստմունս արարեալ * եթէ * A fol. 336 r° a.
զոհեսցէ կռոցն, պատիւս եւ մեծութիւնս եւ պարգեւս ընկալցի ի թագաւորէն : Ասէ Մարինոս. Զարժամանակեայ զսէր եւ զպատիւ արհամարհեմ, քանզի զմին զՔրիստոս յոյս փրկութեան որում ես ցանկամ եւ փափաքեմ, եւ կռոց ոչ զոհեմ զի

écartèrent les pierres et découvrirent les restes de Dométianus et de ses deux disciples, ils les emportèrent et les inhumèrent dans l'église.

[B * En ce jour martyre du saint et grand martyr l'évêque Donat (*Tonadi*), qui fut mis à mort aux jours de Julien l'Apostat, dans la ville d'Arezzo (*Aretsiau*) en Toscane (*Douskia*), au moment où il célébrait le sacrifice sur l'autel. * B p. 67 a.

En ce même jour, par un grand miracle, la ville impériale fut sauvée des troupes des Perses athées par l'intercession de la très sainte Mère de Dieu, Marie, aux jours de l'empereur Héraclius (*Herakli*).]

3 avéleats, 8 Août.

De nouveau fête de la Transfiguration. Et en ce jour martyre du vieillard Marinus.

Le saint martyr du Christ Marinus était de la ville d'Anazarbe; il vivait aux jours de l'empereur idolâtre Dioclétien et de Lucius (*Liousia*), juge de Tarse. Introduit auprès de celui-ci, il confessa le Christ. Le juge lui fit beaucoup de promesses * s'il immolait aux idoles et lui promit qu'il recevrait * A fol. 336 r° a.
de l'empereur des honneurs, des dignités et des présents. Marinus lui répondit : « Je méprise l'affection et les honneurs temporaires, car je ne connais que le Christ, l'espérance du salut, vers lequel je tends et auquel j'aspire; je ne sacrifie point aux idoles, car elles sont l'œuvre des mains des

ձեռագործք են մարդկան ։ Ասէ դատաւորն. Յալիս քո խնայեմ, եւ ի ծերութենէն պատկառիմ, եւ աստուածք իմ անարգին. եւ սպառնայր տանջել զնա եթէ ոչ զոհեսցէ ։ Մարինոս ասէ. Աստուծոյ սէրն ի սպառնալեաց եւ ի սրոյ ոչ զարհուրեցուցանէ, զգեցեալ եմ զՔրիստոս եւ արհամարհեմ զչարչարանս ։

Մերկացուցին զհանդերձսն եւ տարածեցին զնա յերկիր, եւ դալար գաւազանօք տանջեցին զերանելի ծերունին, եւ ծանր շղթայիւք արկին ի բանդ ։ Եւ ի միւսում աւուրն կացուցին յատենի, եւ ասէ դատաւորն. Անսա ինձ, ով ալեւոր, զաւուրս կենաց քոց անցուցեր, եւ ի դրունս դժոխոց հասին ոտք քո, եւ ոչ ողորմիս հնացեալ մարմնոյդ որ ի ժամ մահու հանգչի ։ Ասէ Մարինոս. Ի մանկութենէ մինչեւ ի ծերութիւնս զԱստուած պաշտեցի, եւ ի ժամանակ մահու զդեւս ոչ զոհեմ. երկիր պագանեմ Աստուծոյն իմոյ, եւ պատուեմ զնա որ արար զերկինս եւ զերկիր, որ յոչնչէ զամենայն

* A fol. 336 r° b. գոյացոյց, եւ մարդասիրութեամբ հոգայ * զարարածս իւր ։

Ասէ դատաւորն. Անլուր եղաւ ծերունիդ հրամանաց մերոց. եւ հրամայեաց դահճացն կախել զնա զփայտէ եւ սրով խողխողել զմարմինն եւ հրով այրել զխոցսն ։ Եւ ասէ սուրբն. Նայեաց Տէր եւ տես զտառապեալ անձնս, եւ տուր ինձ համբերութիւն կատարել զընթացս ճգնութեանս ։ Եւ յորժամ ամենայն տանջանացն ժուժկալեաց

3 սպառնալեաց] ոչ թուլացուցանէ *add.* B — զարհուրեցուցանէ] երկեցուցանէ B || 8 հասին] հասեալ են B

hommes. » Le juge lui dit : « J'ai pitié de tes cheveux blancs et je respecte ta vieillesse, mais mes dieux sont insultés. » Et il le menaça de tortures s'il ne sacrifiait point. Marinus lui répondit : « L'amour de Dieu ne me laisse craindre ni les menaces ni le glaive, je suis revêtu du Christ et je méprise les tortures. »

On dépouilla de ses vêtements le bienheureux vieillard et on l'étendit par terre, on le frappa avec des bâtons de bois vert et on le jeta en prison chargé de lourdes chaînes. Le lendemain, on le fit comparaître devant le tribunal et le juge lui dit : « Écoute-moi, ô vieillard. Tu as rempli les jours de ton existence et tes pieds sont arrivés aux portes de l'enfer, et tu n'as pas pitié de ton corps vieilli pour le laisser se reposer à l'heure de la mort? » Marinus répondit : « J'ai adoré Dieu depuis mon enfance jusqu'à ma vieillesse, et je ne sacrifierai point aux démons à l'heure de ma mort. J'adore mon Dieu, je l'honore, Lui, qui a créé le ciel et la terre, qui a tiré du néant toutes les

* A fol. 336 r° b. choses et qui prend soin avec bonté * de toutes ses créatures. »

Le juge dit : « Ce vieillard n'a pas prêté l'oreille à nos ordres » ; et il ordonna aux bourreaux de le suspendre à un poteau, de lui taillader le corps avec un glaive et d'appliquer le feu à ses plaies. Le saint dit : « Regarde, Seigneur, et vois ma misérable personne; donne-moi la patience pour achever ma carrière d'ascétisme. » Lorsqu'il eut enduré toutes sortes de tortures sans en

եւ ոչ մեռաւ յամօթ եղեւ դատաւորն եւ հրամայեաց հանել զնա արտաքոյ քաղաքին եւ հատանել զգլուխն նորա, որպէս եւ արարին յՕգոստոսի Ը. եւ ընկեցին զմարմինն շանց եւ թռչնոց ։

Եւ ի մէջ գիշերին եղեն որոտք եւ կայծակունք եւ անձրեւք ։ Գնացին սուրբքն Քսանթիոս եւ Սապրիկոս գողացան զմարմինն եւ փութով տարան ի յարկս իւրեանց, եւ զգուշութեամբ պահեցին յայրի մի ի լերինն, եւ ինքեանք յետոյ մարտիրոսացան եւ եդան ընդ նմա յայրին ։

Գրեալ է յայլ պատմութիւնս վասն սրբոյն Մարինոսի եթէ կրօնաւոր էր ։

[B * Յայսմ աւուր հանգեաւ սուրբ հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս Վկայասէրն, * B p. 68 a.
եւ միւս Տէր Գրիգոր ։ Յիշատակ եւ օրհնութիւն եւ աղօթք նոցա ի վերայ մեր ։

Սուրբ հայրապետքս էին յազգէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Պարթեւական տոհմէ ։ Գրիգորիս որդի էր Գրիգորի Մագիստրոսի, եւ էր անուն նորա ի ծնողաց Վահրամ, որ է անձրեւ ։ Եւ իբրեւ ձեռնադրեցաւ կաթողիկոս անուանեցաւ Գրիգորիս որ է հսկող եւ արթուն. եւ կացեալ ի կաթողիկոսութեանն ժամանակս ինչ հովուէր
* զհօտն իւր ուղղափառութեամբ ըստ իւրոց նախնեացն կարգի, եւ նորոգեաց զամենայն * B p. 68 b.

2 յՕգոստոսի Ը] եւ Ահեկեաց Գ *add.* B || 8 Գրեալ ... կրօնաւոր էր *.om.* B.

mourir, le juge fut saisi de honte, il ordonna de l'emmener hors de la ville et de lui trancher la tête. Ce qui fut fait le 8 août; puis on jeta son corps en pâture aux chiens et aux oiseaux.

Au milieu de la nuit, il y eut tonnerre, foudre et pluie. Les saints Xanthe (*Khsanthios*) et Sapricus allèrent dérober le corps et l'emportèrent hâtivement à leur maison; ils le gardèrent secrètement dans une grotte de la montagne. Eux-mêmes plus tard, ayant été martyrisés, furent déposés dans la même grotte auprès de lui.

Il est écrit dans une autre biographie que Marinus était moine.

[B * En ce jour reposa le saint patriarche des Arméniens Ter Grégoire * B p. 68 a.
(*Grigoris*) Vkayasēr[1], et l'autre Ter Grégoire[2]. Que leur souvenir, leur bénédiction et leurs prières soient sur nous!

Ces saints patriarches étaient de la race de saint Grégoire l'Illuminateur, de la famille des Parthes. Grégoire était le fils de Grégoire Magistros; il tenait de ses parents le nom de Vahram, qui signifie « pluie ». Lorsqu'il fut sacré catholicos, il prit le nom de Grégoire, nom qui veut dire « vigilant » et « éveillé ». Il occupa un certain temps le catholicosat, gouverna * ses * B p. 68 b.
ouailles avec orthodoxie, selon la règle de ses ancêtres, et renouvela toutes les prescriptions négligées ou abandonnées. Comme il aimait les martyrs

1. C'est-à-dire « Martyrophile », catholicos de 1065 à 1105. — 2. Grégoire III, catholicos de 1113 à 1167.

կարգս եղծեալս եւ զխանգարեալս ։ Եւ զի էր սիրող վկայից Աստուծոյ մեծարէր եւ տօնէր զյիշատակս նոցա անխափան, եւ կարգէր զիրս տօնից նոցա մարգարէականս եւ առաքելականս, եւ աւետարանս խորհրդաւորս ։

Կամեցաւ գնալ ի Կոստանդնուպօլիս զի թարգմանեսցէ զպատմութիւնս սրբոցն ի հայ լեզու, եւ զճառս ներբողականս որ ոչ գտանիւր առ մեզ, եւ ձեռնադրեաց զԳէորգ վարդապետն փոխանորդ իւր, եւ ինքն գնաց ի թագաւորեալ քաղաքն, եւ ընկալեալ ի թագաւորէն եւ ի պատրիարքէն Յունաց բազում մեծարանօք ։

Եւ իբրեւ կատարեաց զգործն յոր երթեալն էր եւ զգիրս թարգմանեալս ի յազգականն իւր եւ ի համանուն Գրիգոր եպիսկոպոսն յառաջ քան զնա երթալ յաշխարհն Գերմանիկոյ առ իշխանն Վասիլ ։ Եւ նաւարկեալ նորա զալ ուժգնակի հողմոյ շրջեցեալ եւ տարաւ զնա յԵգիպտոս. եւ ելեալ ի ցամաք խալիֆայն Եգիպտոսի մեծարանօք պատուեաց զեպիսկոպոսն Գրիգոր, եւ ոչ ետ դառնալ ի տուն իւր առ կաթողիկոսն ։

Եւ եկեալ կաթողիկոսն եւ լուեալ եթէ յԵգիպտոսէ գնաց յԵրուսաղէմ եւ անտի յԵգիպտոս, եւ ձեռնադրեաց անդ կաթողիկոս. եւ նա բազմացոյց զքրիստոնեայսն որ անդ ։

Եւ Տէր Գրիգորիս առեալ զթարգմանեալ գիրսն եկն ի Քեսուն ի Կարմիր վանքն. եւ անդ կացեալ յոլով ժամանակս անկեալ ի հիւանդութիւն կոչեաց առ ինքն զՏէր

de Dieu, il les honorait et célébrait sans cesse leur commémoration, et il établit pour leurs fêtes des lectures appropriées, tirées des prophètes, des apôtres et des évangiles.

Il voulut se rendre à Constantinople pour y traduire, en langue arménienne, les vies des saints et les homélies panégyriques qui ne se trouvaient point chez nous. Il sacra le vardapet Georges [1] pour le remplacer; puis il partit pour la ville impériale où il fut reçu avec beaucoup de déférence par l'empereur et le patriarche des Grecs.

Lorsqu'il eut terminé l'œuvre pour laquelle il était allé, il remit ses ouvrages traduits à son parent et homonyme, l'évêque Grégoire, pour qu'il le précédât dans son voyage au pays de Germanicie [2], auprès du prince Basile (*Vasil*) [3]. Celui-ci s'étant embarqué, un vent violent se leva pendant la route et le poussa vers l'Égypte, où il débarqua. Le calife d'Égypte accueillit avec de grands honneurs l'évêque Grégoire, mais ne lui permit point de retourner chez lui auprès du catholicos.

Le catholicos étant arrivé et ayant appris qu'il était parti d'Égypte pour Jérusalem et de là pour l'Égypte, y sacra un catholicos, lequel augmenta le nombre des chrétiens dans ce pays.

Ter Grégoire, muni des œuvres traduites, vint à Qessoun [4], au Couvent Rouge (*Karmir*). Il y séjourna longtemps; puis étant tombé malade, il manda

1. Georges de Lori. — 2. Maraš. — 3. Basile le Voleur. — 4. Entre Sis et Maraš.

Բարսեղ ազգականն իւր, զոր ետ ձեռնադրել կաթողիկոս, եւ յանձնեաց ի նա զհօտ իւր եւ զերկուս մանկունսն քուերորդիս զԳրիգոր եւ զՆերսէս, եւ ինքն աւանդեաց զսուրբ հոգին ի ձեռս Աստուծոյ ։

Իսկ Տէր Գրիգորիս յետ Տէր Բարսղի ընկալեալ զկաթողիկոսութիւնն բարիոք ամս յիսուն ։ Սա գրեաց գիրս ուղղափառ դաւանութեան, զոր եւ ընկալաւ եկեղեցին ։ Եւ էր ինքն այր անարատ եւ սուրբ, եւ այնպէս փոխեցաւ ի Քրիստոս ։]

Աւելեաց Դ եւ Օգոստոս Թ ։ Վերստին տօն Պայծառակերպութեան Տեառն ։ Եւ վարք սրբոյն Միւռոնայ սքանչելագործ եպիսկոպոսին ի Կրիտէ ։

Երանելին Միւռոն էր ի Կրիտէ կղզոյն, ի Ռաւկիայ քաղաքէն, պատուական եւ մեծատուն քրիստոնէից զաւակ, յաւուրս Դիոկղետիանոսի ամբարիշտ արքային ։ Եւ ծնողքն * իւր ետուն նմա կին, եւ կացեալ ամուսնովն իւրով պարկեշտ եւ աստուածա- * A fol. 336 vº a.
հաճոյ վարուք, եւ ի վաստակոց արմտեաց իւրոց առնէր ողորմութիւն բազմաց, եւ որչափ բաշխէր ցորեան կամ գինի կամ ձէթ կամ ունդ աւաւելոյր ի շտեմարանս իւրեանց ։

7 սրբոյն *om.* B || 8 ի Կրիտէ] Կրիտոս կղզւոյն B || 10 էր] լեալ էր B — Ռաւկիայ] Ռաւլկիայ B.

auprès de lui son parent Ter Basile (*Barsegh*) qu'il fit sacrer catholicos. Il lui confia ses ouailles et les deux enfants, fils de sa sœur, Grégoire (*Grigor*) et Nersès[1]; puis il rendit son âme sainte entre les mains de Dieu.

Ter Grégoire ayant, après Ter Basile, reçu le catholicosat, l'occupa en bien durant cinquante ans[2]. Il a écrit des traités sur la confession orthodoxe, que l'Église a acceptés. Il fut un homme sans tache et saint, et c'est ainsi qu'il trépassa au Christ.]

4 AVÉLEATS, 9 Août

De nouveau fête de la Transfiguration du Seigneur. Et vie de saint Myron l'évêque thaumaturge de Crète.

Le bienheureux Myron était de l'île de Crète, de la ville de Raucia (*Hraukia*), fils d'une excellente famille riche et chrétienne, aux jours de l'empereur impie Dioclétien[3]. Ses parents * le marièrent, et il mena avec son épouse * A fol. 336 vº a.
une vie pudique et agréable à Dieu; il faisait l'aumône à beaucoup sur les produits de ses récoltes, et plus il distribuait de blé, de vin, d'huile ou de légumes, plus ils augmentaient dans ses greniers.

1. Nersès le Gracieux, qui succéda comme catholicos à son frère Grégoire III (1166-1173). — 2. Exactement cinquante-quatre ans. — 3. Dans *Syn. Cp.*, éd. Delehaye, col. 875, Myron naît sous Dèce. Ici d'ailleurs, il est parlé ensuite de la mort de Dèce. La chronologie de notre auteur est de haute fantaisie, puisque Dèce a régné avant Dioclétien, et deux ans seulement (246-8).

Եւ ի միում գիշերի կամէին գողք երթալ յարտ սիսռան, ցնորեցան եւ մտին ի մէջ փշոցն ։ Եւ դարձեալ երկոտասան գողք գնացին ի կալն, եւ այնչափ լցին զքուրձս զի ոչ կարէին բառնալ եւ յանկարծակի Միւռոն եգիտ զնոսա, եւ ինքնին եբարձ Միւռոն զիւրաքանչիւր քուրձն յուս նոցա, եւ պատուիրեաց զի մի ումեք ասասցեն, եւ այլ գողութիւն ոչ արասցեն եւ եղեն յայնմ տարւոջ բազում արմտիք Միւռոնայ ։

Եւ տուաւ նմա շնորհք յԱստուծոյ զի ձեռն դնելով ողջացուցանէր զամենայն հիւանդս. եւ եթէ զարտ կամ զայգի օրհնէր բազմապատիկ պտղաբերէր ։

Եւ յաւուրսն յայնոսիկ մարտիրոսացան Փղաբիանոս հայրապետն եւ Բաբիլաս Անտիոքայ, եւ Աղեկսանդրոս Կեսարիոյ եպիսկոպոսապետն, եւ այլ տասն վկայք ի Կրետէ, եւ այլ բազումք ։ Յանկայր եւ Միւռոն վկայութեամբ կատարել ։ Եւ շինէր եկեղեցիս յանուն սրբոցն ։

* A fol. 336 v° b. Եւ եպիսկոպոս քաղաքին ձեռնադրեաց զնա քահանայ. * եւ քաջալերէր զամենեսեան եւ յօժարեցուցանէր ի մարտիրոսութիւնն, եւ բազումք ի բանից եւ ի վարդապետութենէ նորա երթային եւ վասն Քրիստոսի հաւատոցն մեռանէին. եւ ոչ մեռան այլ մանաւանդ կենդանացան ։

Եւ յորժամ խորհեցաւ եւ ինքն երթալ ի մարտիրոսութիւն մեծաւ փափաքանօք, Դեկոս արքայն մեռաւ, եւ Թագաւորեաց Գաղիոս, եւ դադարեցոյց զհալածումն

1 միում] աւուր ի *add.* B || 10 կատարել] մեռանել B.

Une nuit, des voleurs, ayant essayé de pénétrer dans les champs de pois-chiches, se trompèrent et tombèrent sur des épines. Une autre fois, douze voleurs pénétrèrent sur l'aire et remplirent leurs sacs à tel point qu'ils ne pouvaient plus les charger. Myron, les ayant surpris, chargea lui-même le sac sur l'épaule de chacun d'eux, en leur recommandant de ne le dire à personne et de ne plus commettre de vol. Cette année-là il y eut pour Myron abondance de céréales.

Il lui fut accordé par Dieu des grâces, par lesquelles en imposant ses mains il guérissait tous les malades; et lorsqu'il bénissait un champ ou une vigne, ils produisaient bien davantage.

En ces jours-là furent martyrisés Flavien (*Flabianos*), patriarche (de Rome); Babylas, patriarche d'Antioche; Alexandre, archevêque de Césarée; dix autres martyrs en Crète et d'autres en grand nombre. Myron aspirait aussi à mourir martyr, et il construisait des églises au nom des saints.

* A fol. 336 v° b. L'évêque de la ville l'ordonna prêtre. * (Myron) encourageait tous (les fidèles) et les engageait au martyre. Beaucoup, touchés par ses paroles et sa doctrine, allèrent mourir pour le Christ, ou plutôt ils ne moururent pas, ils entrèrent dans la vie.

Lorsque (Myron) se proposa d'aller, lui aussi, au martyre, avec un grand désir, l'empereur Dèce mourut et Gallien, qui régna, arrêta la persécution

ի քրիստոնէից ։ Եւ Աստուծոյ ընտրութեամբ եւ հաճութեամբ ամենայն ժողովրդեանն ձեռնադրեցաւ Միւռոն եպիսկոպոս, եւ առաւելապէս ետ նմա շնորհս Աստուած յեպիսկոպոսութեանն իւրում ի սքանչելագործութիւնս ։

Ի միում աւուր երթայր երանելի եպիսկոպոսն Միւռոն ի ճանապարհ, ետես զնա վիշապ վնասիչ տեղւոյն այնմիկ, որպէս առու հեղուին արտասուքն յաչացն, խոնարհեցոյց զգլուխն իւր առաջի քահանայապետին Աստուծոյ յերկիր. եւ կապեաց զնա երանելին բանիւն Աստուծոյ եւ ասէ. Կացջիր ի տեղւոջդ մեծ տանջանօք մինչեւ ես դարձայց ։ Եւ որպէս ի մէջ հրոյ տապէր եւ զգլուխն ի գետինն հարկանէր եւ զհողն լիզէր ։ Եւ յորժամ դարձաւ հալածեաց զնա ի սահմանացն յայնմանէ ։

Կամեցաւ երանելին գնալ ի քաղաքն Կնիւսոն ի տեսանել եւ ի մխիթարել զեղբարսն. եւ յորժամ * եհաս ի գետն Տրետոն, եւ էր անհուն, եւ երթայր դարիւ եւ * A fol. 337 r° a.
դարիւ, արար զնշան խաչին եւ եմուտ երիվարաւն, եւ դադարեցին հոսանքն մինչեւ անց ինքն եւ ժողովուրդքն. եւ յորժամ դարձաւ նոյնպէս էանց ։

Եւ ի միում գիշերի տեսանէ յանուրջս զհրեշտակ գետոյն կապեալ զձեռս յետս, եւ

2 շնորհս *om.* B || 4-9 Ի միում աւուր ... սահմանացն յայնմանէ] Եւ ի միում աւուր երթայր երանելի եպիսկոպոսն Միւռոն ի ճանապարհ, եւ էր վիշապ օձ մի որջացեալ ի յայն կողմն կղզոյն վնասակար տեղեացն այնոցիկ յորմէ սարսէին ամենայն բնակիչք ։ Յորժամ ետես զնա վիշապն առժամայն մեղմացաւ ի զազանութենէն, խոնարհեցոյց զգլուխն իւր յերկիր եւ ցուցանէր նշանս աղաչանաց առ սուրբ քահանայապետն, որպէս թէ մի կորուսցէ զնա ։ Եւ սպառնացաւ նմա սուրբն Աստուծոյ եւ ասէ. Կացջիր ի տեղւոջս յայսմիկ մինչեւ ես դարձայց ։ Եւ նա կապեալ մնաց անդ, զգետինն հարկանէր եւ զհողն լիզէր. եւ յորժամ դարձաւ հալածեաց զնա բանիւն Աստուծոյ ի սահմանացն յայնցանէ ։ B || 12 դադարեցին] սաստիկ *add.* B || 14 — p. 1908, l. 4 Եւ ի միում գիշերի ... գնացից քոց *om.* B.

des chrétiens. Myron fut, par l'élection de Dieu et par le consentement de tout le peuple, sacré évêque, et Dieu lui accorda des grâces plus nombreuses encore de thaumaturgie pendant son épiscopat.

Un jour que le bienheureux évêque Myron cheminait sur la route, un dragon, qui désolait cet endroit, l'aperçut; des larmes lui coulèrent des yeux comme un ruisseau et il baissa la tête à terre devant le pontife de Dieu; le bienheureux le lia par la parole de Dieu et lui dit : « Tu resteras en cet endroit dans de grandes souffrances, jusqu'à mon retour. » (Le dragon) brûlait comme au milieu des flammes, frappait le sol de sa tête et léchait la poussière. Lorsque (le bienheureux) fut de retour, il le chassa de ces parages.

Le bienheureux voulut se rendre à la ville de Cnossos (*Knuison*) pour y visiter les frères et les consoler. Arrivé * au fleuve Triton (*Treton*), comme il * A fol. 337 r° a.
n'y avait point de gué et que le fleuve coulait à plein bord, il fit le signe de la croix et entra avec son cheval dans l'eau; le courant s'arrêta jusqu'à ce qu'il fût passé, lui et ceux qui l'accompagnaient. Au rétour, il repassa le fleuve de la même manière.

Une nuit, il vit en rêve l'ange du fleuve qui, les mains liées derrière le

աղաչէր զերանելին արձակել զնա ։ Եւ զարթուցեալ գիտաց զնեղութիւն գետոյն, եւ առաքեաց սպասաւորս գաւազանաւն իւրով, եւ երթեալ հարկանէին զջուր գետոյն եւ ասէին. Արձակեցար, ջուր, ի կապանաց, երթիջիր խաղաղ ընդ տեղի գնացից քոց ։

Իսկ երանելին Միւռոն յորժամ եղեւ հարիւր ամ կենաց իւրոց, անխափան կատարէր զյիշատակս ամենայն սրբոց, եւ ընթեռնոյր զպատմութիւն մարտիրոսութեան նոցա ։ Եւ եղեւ նմա հիւանդանալ, կոչեաց զամենայն ուխտ եկեղեցւոյն եւ զաշակերտս իւր, եւ ասէ. Որդեակք, ես գնալոց եմ զկնի մարտիրոսացն սրբոցն Անտոնինեայ եւ Լաւրէնդիոսի. եւ պատուիրեմ ձեզ, զի անխափան զամենայն սրբոց զյիշատակս առնէք յիւրաքանչիւր աւուր կատարմանն, զի ամենայն սուրբք յաւուր տօնի իւրեանց առաւել համարձակութիւն ունին առ Քրիստոս բարեխօսել վասն

* A fol. 337 r° b.

տօնողացն ։ Եւ մեծաւ ուրախութեամբ զաչս եւ * զձեռս յերկինս համբարձեալ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած Օգոստոսի Թ, եւ եդաւ յիւրում տապանին. եւ բազում սքանչելիք լինին ի նշխարաց սրբոյ քահանայապետին Միւռոնեայ ։

* B p. 69 a.

[B * Վերստին տօն է Պայծառակերպութեանն Տեառն ։ Եւ յայսմ աւուր նահատակութիւն սրբոյ եւ փառաւորեալ առաքելոյն Մատաթեայ ։

5 եղեւ] անց ընդ B || 13 Աստուած] Աւեկեաց Դ եւ *add.* B.

dos, pria le bienheureux de le délivrer. A son réveil, il comprit la gêne du cours d'eau, et il envoya des serviteurs munis de sa crosse pour aller battre l'eau du fleuve en lui disant : « Eau, tu es délivrée de tes liens, suis maintenant ton cours paisiblement. »

Le bienheureux Myron, parvenu à l'âge de cent ans, continuait à célébrer sans cesse la commémoration de tous les saints, et faisait la lecture des récits de leur martyre. Étant tombé malade, il manda tout le corps du clergé et ses disciples et leur dit : « Mes enfants, je vais m'en aller à la suite des saints martyrs Antonin[1] et Laurent. Je vous recommande de célébrer sans cesse la commémoration de tous les saints, au jour de la fête de chacun, car tous les saints au jour de leur fête ont plus de hardiesse pour intercéder auprès du Christ pour ceux qui célèbrent leur fête. » Il éleva ensuite avec beaucoup

* A fol. 337 r° b.

de joie ses yeux * et ses mains vers le ciel et rendit son âme à Dieu, le 9 août. Il fut déposé dans son tombeau. De nombreux miracles ont lieu par les reliques du saint pontife Myron.

* B p. 69 a.

[B * De nouveau fête de la Transfiguration du Seigneur. Et en ce jour, martyre du saint et glorieux apôtre Mathias.

1. Antonin d'Alexandrie, mentionné ce jour par *Syn. Cp.*, col. 881, ou la veille par plusieurs autres synaxaires grecs, *ibid.*, col. 875-877.

Սուրբն Մատաթիաս էր յեօթանասուն աշակերտացն զոր ընտրեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս : Բանզի յետ Յարութեան Տեառն մերոյ յորժամ կամեցան առաքեալքն ընտրել զոք ի տեղի Յուդայի որ անկաւ զի լցցի պակասեալ թիւ երկոտասանիցն, եւ աղօթելով առ սրտագէտն Աստուած Պետրոս այլովք մետասանիւքն արկին վիճակ, եւ ի Հոգւոյն սրբոյ ընտրեցաւ Մատաթիա, զի ել վիճակն ի նա, եւ համարեցաւ ընդ մետասան առաքեալս երկոտասան :

